ԺԱՆ-ԺԱԿ ՌՈՒՍՈ

ԷՄԻԼ
ԿԱՄ
ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Sanabilibus aegrotamus malis; ipsaque nos in rectum genitos natura, si emendari velimus, juvat.

SENEC., de Ira, II, 13.

Չարքից, որով մենք տառապում ենք, բուժելի է, և բնությունը, որ մեզ ստեղծել է անպարսավ գոյության համար, օգնում է մեզ, եթե մենք ցանկանում ենք բուժվել:

Սենեկա, Զայրույթի մասին, II, 13։

ՀԵՂԻՆԱԿԻ ԱՌԱՋԱԲԱՆԸ

Առանց դասավորության և գրեթե անկապ խորհրդածությունների ու դիտողությունների այս ժողովածուն գրել ձեռնարկեցի՝ հաճելի լինելու համար մի բարի ու դատել իմացող մարդ։ Սկզբում իմ նպատակն էր գրել միայն մի քանի էջից բաղկացած դիտողություններ, քանի նյութը ակամա ինձ հեռու տարավ, և աչքիս, ժողովածուն աննկատելիորեն դարձավ խիստ ծավալուն՝ համեմատած իր բովանդակությանը, սակայն և շատ համառոտ՝ համեմատած այն նյութի հետ, որի մասին այնտեղ խոսվում է։ Ես երկար տատանվեցի, մինչև որոշեցի գիրքը հրատարակել. և հաճախ, նրա վրա աշխատելիս, կգում էի, որ գիրք ստեղծելու համար դեռևս բավական չէ մի քանի բրոշյուրներ գրելը։ Ավելի լավը գրելու զուր փորձերից հետո հարկ համարեցի այն հրատարակել այնպես, ինչպես կա, մտածելով, որ ամենից առաջ կարևոր է հասարակության ուշադրությունը հրավիրել շոշափված նյութի վրա. իմ մտքերը նույնիսկ ճիշտ չլինելու դեպքում՝ ես ժամանակս բոլորովին զուր վատնած չեմ համարի, եթե նրանցով կարողանամ ուրիշների մեջ ավելի ճիշտ մտքեր արթնացնել։ Մի մարդ, որ իր մենաստանից հասարակությանն է ներկայացնում գրած էջերը, չունենալով ո՛չ գովերգողներ և ո՛չ էլ դրանք պաշտպանող որևէ պարտիա, առանց նույնիսկ իմանալու, թե ինչ են մտածում կամ ինչ են խոսում այդ մասին ուրիշները, այդպիսի մարդը, եթե անգամ սխալվի, չպետք է վախենա, որ նրա սխալները երբևէ կընդունվեն առանց քննարկման։

Ես քիչ պիտի խոսեմ լավ դաստիարակության կարևորության մասին. ոչ էլ պիտի ջանամ ապացուցել, թե ներկայումս կիրառվող դաստիարակությունը վատ է. ինձնից առաջ հազա-

բավորներ են արել այդ, իսկ ես չեմ սիրում գիրքը ծանրաբեռնել այնպիսի բաներով, որոնք վաղուց ծանոթ են բոլորին։ Պետք է նկատեմ միայն, որ անհիշելի ժամանակներից ի վեր սոսկ բողոքներ են լսվում սահմանված կարգի դեմ, բայց ոչ ոք լավագույնը չի առաջարկում։ Մեր դարաշրջանի գրականությունն ու գիտությունը ավելի շուտ ձգտում են քանդելու, քան թե կառուցելու։ Ամեն ոք քննադատում է խրատականի եղանակով, իսկ առաջարկ անելու համար այլ ձև է պետք, որը այնքան էլ հաճելի չէ մեր փիլիսոփայական արժանապատվությանը։ Հակառակ այն բոլոր գրքերի, որոնք, ինչպես ասում են, ուրիշ նպատակ չունեն, բացի հասարակական օգուտից, այնուամենայնիվ, դեռևս մոռացության է տրված ամենաօգտակարը՝ մարդկանց կրթելու արվեստը։ Իմ նյութը շատ այժմեական է նույնիսկ Լոբի[1] գրքից հետո. վախենում եմ, որ նա այդպիսին էլ մնա նաև իմ գրքից հետո։

Ոչ ոք չի ճանաչում մանկությունը. նրա մասին եղած թյուր գաղափարները մեզ ավելի ու ավելի են մոլորեցնում։ Ամենից իմաստունները կառչում են այն բանից, ինչ մարդկանց հարկավոր է իմանալ, առանց նկատի ունենալու այն, ինչ երեխաներն ի վիճակի են սովորել։ Նրանք միշտ երեխայի մեջ որոնում են հասունացած մարդուն, առանց խորհելու, թե ինչ է նա նախքան հասունացած մարդ լինելը։ Ահա թե ամենից առաջ ինչ խնդրի ուսումնասիրությամբ զբաղվեցի ես, որպեսզի այն դեպքում, եթե իմ ամբողջ մեթոդը ցնորական ու սխալ գտնվի, համենայն դեպս, ուրիշները կարողանան օգտվել իմ դիտողություններից։ Գուցե ես շատ սխալ եմ հասկանում, թե ինչ պետք է անել. բայց ինձ թվում է, որ լավ եմ գիտակցում այն նյութը, որի վրա պետք է աշխատել։ Սկսե՛ք, ուրեմն, լավ ուսումնասիրել ձեր սաներին. անկասկած, դուք նրանց քնավ չեք ճանաչում. հետևապես, եթե այդ տեսակետից կարգաք այս գիրքը, կարծում եմ, որ անօգուտ չի լինի ձեզ համար։

Ինչ վերաբերում է այն բաժնին, որը կոչվելու է սիստեմատիկ մաս, և որը այս դեպքում ոչ այլ ինչ է, բայց եթե բնության ընթացքը, դա է ամենից ավելի շփոթության մատ-

---

[1] «Մտքեր երեխաների դաստիարակության մասին», 1721 թ.։

նելու ընթերցողին, և հենց դրա համար էլ ինձ պիտի քննադատեն, գուցե և իրավացիորեն։ Իմ գրքի ընթերցողը պիտի կարծի, թե կարդում է ցնորամիտ մարդու երազանքները և ոչ թե մի ձեռնարկ՝ դաստիարակության մասին։ Ինչ արած։ Ես ոչ թե ուրիշների, այլ իմ սեփական գաղափարների համաձայն եմ գրում։ Ես իրերը չեմ տեսնում այնպես, ինչպես ուրիշները. վաղուց է, որ ինձ մեղադրում են դրա համար։ Բայց մի՞թե ինձնից է կախված ունենալ տարբեր աչքեր և յուրացնել տարբեր գաղափարներ։ Ո՛չ։ Ինձնից է կախված չհամաձայնել իմ մըտքերի վրա, չկարծել երբեք, թե աշխարհի ամենախելոք մարդը ես եմ. ես չեմ կարող փոխել իմ զգացմունքները, բայց կարող եմ չվստահել իմ մտքերին։ Ահա այն ամենը, ինչ կարող եմ անել և անում եմ։ Եթե երբեմն վճռողական տոն եմ վերցնում, ապա դա ոչ թե ընթերցողի վրա ազդելու, այլ նրա հետ խոսելու համար է, նրան ասելու այն, ինչ մտածում եմ։ Ինչո՞ւ տարակուսանքի ձևով առաջարկեմ այն, որին ինքս ամենևին չեմ կասկածում։ Ես ճշտությամբ ասում եմ այն, ինչ անցնում է մտքովս։

Ազատորեն արտահայտելով իմ մտքերը, ես բնավ հավակնություն չունեմ, որ դրանք անառարկելի են, և միշտ դրանց միացնում եմ իմ դատողությունները, որպեսզի կշռեն դրանք և դատեն ինձ. թեև երբեք չեմ ցանկանում համառորեն պաշտպանել իմ մտքերը, բայց և այնպես, պարտք եմ համարում շարադրել դրանք, որովհետև այն հիմնական հարցերը, որոնցում ես ուրիշների հետ տարակարծիք եմ, բնավ անկարևոր չեն։ Նրանք այնպիսիք են, որոնց ճիշտ կամ սխալ լինելը հարկավոր է իմանալ, և որոնք մարդկային ցեղին երջանկություն կամ դժբախտություն են բերում։

Ինձ շարունակ պնդում են. «Առաջարկեցե՛ք իրագործելի մտքեր»։ Այդ նշանակում է ասել. «Առաջարկեցե՛ք անել այն, ինչ արվում է. կամ, առնվազն, առաջարկեցե՛ք այնպիսի լավը, որ համատեղելի լինի գոյություն ունեցող վատի հետ»։ Որոշ հարցերի մասին ոմանց ունեցած այդպիսի ծրագիրը ավելի ցնորական է, քան իմը, որովհետև այդ երկուսի միակցության մեջ լավը կփչանա, իսկ վատը չի դարմանվի։ Ես գերադասում եմ ամեն ինչում հետևել հաստատված կարգին, քան

քե լավը վերցնել կիսով չափ միայն. այդպիսով, մարդու մեջ ավելի քիչ հակասություն կլինի։ Նա չի կարող միաժամանակ երկու հակադիր նպատակների ձգտել։ Հայրե՛ր և մայրե՛ր, ինչ որ կարելի է իրականացնել, այդ այն է, որ դո՛ւք եք ցանկանում անել։ Մի՞թե ես պետք է ընդդիմանամ ձեր կամքին։

Բոլոր տեսակի նախագծերում պետք է նկատի ունենալ երկու բան. առաջինն՝ նախագծի բացարձակ արժանիքը. երկրորդ՝ նրա կատարման դյուրությունը։

Ինչ վերաբերում է առաջինին, որպեսզի նախագիծը լինի ընդունելի և ինքնըստինքյան իրագործելի, բավական է, որ նրա մեջ, համապատասխանի առարկայի էությանը. օրինակ, տվյալ դեպքում առաջարկված դաստիարակությունը պետք է պիտանի լինի մարդուն և լավ համապատասխանի մարդկային սրտին։

Երկրորդ նկատառումը կախված է որոշ իրադրություններում առկա հարաբերություններից, իրերի պատահական հարաբերություններ, որոնք, հետևապես, քանավ էլ անհրաժեշտ չեն և կարող են անվերջ փոփոխվել։ Այսպիսով, պատմության որևէ եղանակ կարող է իրագործելի լինել Շվեյցարիայում, բայց ոչ՝ Ֆրանսիայում, մի ուրիշը իրագործելի է բուրժուազիայի, մի երրորդը՝ ազնվականների համար։ Իրագործման ավելի կամ նվազ դյուրությունը կախված է հազար ու մի պայմաններից, որ անհնար է որոշել այլ կերպ, քան մեթոդի յուրահատուկ կիրառումով այս կամ այն երկրում, այս կամ այն պայմաններում։ Արդ, այս մասնահատուկ կիրառումները նյութիս համար էական չլինելով, չեն մտնում իմ ծրագրի մեջ։ Ուրիշները կարող են զբաղվել դրանցով, եթե կամենում են, յուրաքանչյուրն իր նկատի ունեցած երկրի կամ տերության համար։ Ըստ իս՝ բավական է, որ ամեն տեղ, ուր մարդիկ են ծնվում, հնարավոր լինի իրագործել իմ առաջարկը և, մարդկանց դարձնելով այնպիսին, ինչպիսին ես եմ առաջարկում, արվի այն, ինչ որ լավագույն է քե՛ իրենց և քե՛ ուրիշների համար։ Եթե ես չեմ կարողացել կատարել այս պարտավորությունը, անկասկած մեղքն իմն է, իսկ եթե կատարել եմ, ապա իրավացի չի լինի ավելին պահանջել ինձնից, որովհետև ես դրանից ավելին չեմ խոստացել։

ԳԻՐՔ ԱՌԱՋԻՆ

Ամեն ինչ անթերի է դուրս գալիս արարչի ձեռքից. ամեն ինչ այլասերվում է մարդու ձեռքում։ Մարդն ստիպում է հողին սնունդ տալ մի ուրիշ հողի արգասիքին, ծառին՝ արտադրել մի այլ ծառի համար պատրաստված պտուղներ, խառնաշփոթում է կլիմաները, տարրերը, տարվա եղանակները. խեղում է իր շանը, իր ձիուն, իր սարուկին. տակնուվրա է անում և այլափոխում ամեն ինչ. սիրում է տգեղն ու այլանդակը. չի սիրում տեսնել իրերն այնպես, ինչպես բնությունն է ստեղծել, նույնիսկ մարդուն, որին վարժեցնում է կրկեսի ձիու պես՝ իրեն ծառայեցնելու համար. նրան ձևավորում է այնպես, ինչպես ինքն է ցանկանում, իր պարտեզի ծառի նման այլանդակում է ըստ վերջին նորաձևության։

Առանց դրան ամեն ինչ է՛լ ավելի վատ կընթանար. մարդկային ցեղը չի ցանկանում կիսատ-պռատ ձևավորվել։ Իրերի ներկա վիճակում, եթե մարդուն ծնված օրից թողնեն իր բախտի քմահաճույքին, ուրիշ մարդկանց մեջ, ապա նա բոլորից այլանդակը կլինի։ Նախապաշարմունքը, հեղինակությունը, անհրաժեշտությունը, օրինակը, այն բոլոր հասարակական հիմնարկությունները, որոնց մեջ խրվել ենք մենք, մարդու մեջ կսպանեն բնությունը՝ առանց այն մի ուրիշ բանով փոխարինելու։ Նա այնտեղ կլինի որպես մի տունկ, որը պատահմամբ աճել է ճանապարհի եզրին և որին անցորդները, շատ շուտով, ոչնչացնում են, երան դիպչելով ամեն կողմից և ծռելով ամեն ուղղությամբ։

Ուրեմն, քե՛զ եմ դիմում, գորովագին և կանխատես մայր[1], *որ կարողացար հեռանալ մեծ ճանապարհից ու պաշտպանել աճող բույսը մարդկային կարծիքների բախումից։ Մշակի՛ր, ջրի՛ր դալար տունկը, քանի նա դեռ չի չորացել։ Մի օր դու կվայելես նրա պտուղները։ Վաղօրոք պարսպապատի՛ր քո*

[1] Սկզբնական դաստիարակությունը ամենից կարևորն է, և այս առաջին դաստիարակությունը անվիճելիորեն կանանց է պատկանում։ Եթե բնության ստեղծողը ցանկացած լիներ, որ սկզբնական դաստիարակությունը տղամարդկանց պատկաներ, ապա վերջիններիս կաթ կտար երեխաներին կերակրելու համար։ Ուստի, դաստիարակության մասին գրված ձեռնարկների մեջ միշտ պետք է դիմել հատկապես կանանց, որովհետև, բացի այն, որ նրանք կոչված են ավելի մոտիկից հսկելու երեխաներին, քան տղամարդիկ, և այդ տեսակետից ավելի մեծ ազդեցություն ունեն. հենց գործի հաջողությունը նրանց շատ ավելի է շահագրգռում, քանի որ այրի կանանցից շատերը գրեթե կախման մեջ են գտնվում իրենց զավակներից, և վերջիններս, համաձայն նրանցից ստացած դաստիարակության, լավ կամ վատ վերաբերմունք ցույց կտան դեպի իրենց մայրերը։ Օրենքները, որոնք այնքան շատ են զբաղվում ունեցվածքով, ու այնքան քիչ՝ անհատով, քանի որ նկատի ունեն անդորրությունը, այլ ոչ թե առաքինությունը, բավականաչափ հեղինակություն չեն տալիս մայրերին։ Բայց և այնպես, մայրերի դրությունն ավելի որոշակի է, քան հայրերինը. նրանց պարտականություններն ավելի ծանր են. նրանց հոգատարությունը ավելի շատ կնպաստի ընտանիքում կարգ-կանոնի պահպանմանը. ընդհանրապես մայրերն ավելի են կապված իրենց երեխաներին։ Որոշ դեպքերում, երբ ոչ ոք հոր նկատմամբ հարգանքի թերացում է ունենում, կարելի է գուցե նրան ներել, իսկ եթե, ինչպիսի պայմաններում ուզում է լինի, երեխան այնքան այլասերված է, որ հարգանքով չի վերաբերվում մորը, որը նրան կրել է իր արգանդում, սնուցել է իր կաթով, տարիներ շարունակ, ինքն իրեն մոռացած, միայն նրան է նվիրվել, պետք է շտապ ոչնչացնել այդ թշվառականին, որպես մի հրեշի, որն արժանի չէր ծնվելու։ Ասում են, թե մայրերը շփացնում են իրենց երեխաներին։ Իհարկե, դրանում նրանք մեղավոր են, բայց թերևս նվազ մեղավոր, քան նրանք, ովքեր նրանց ապականում էն։ Մայրը ցանկանում է, որ իր զավակը երջանիկ լինի հենց այժմվանից։ Դրանում նա իրավացի է. իսկ եթե նա սխալվում է միջոցների մեջ, պետք է այդ նրան հասկացնել։ Հայրերի փառասիրությունը, ժլատությունը, բռնակալությունը, կեղծ կանխահոգությունը, ինչպես նաև նրանց անփութությունը, դաժան անտարբերությունը երեխաների համար հարյուր անգամ ավելի վնասակար են, քան թե մայրերի կույր գուրգուրանքը։ Բայց և այնպես, պետք է բացատրել, թե ես ինչ եմ հասկանում մայր տալով այդ է, որ պիտի անեմ հետագա էջերում։

երեխայի հոգին։ Շրջագիծը կարող է մի ուրիշը սահմանել, բայց դու ինքդ միայն պետք է կառուցես պատվարը[1]։

Բույսերը ձևավորվում են մշակվելով, իսկ մարդիկ՝ դաստիարակությամբ։ Եթե մարդը ծնվեր խոշորագլուխ և ուժեղ, այդ կազմն ու ուժը նրան անօգուտ կլինեին այնքան ժամանակ, մինչև նա չսովորեր դրանք օգտագործելու կերպը. դրանք նույնիսկ վնասակար կլինեն նրան, արգելք հանդիսանալով ուրիշների՝ նրան օգնության հասնելու[2]. և, լքված իր բախտին, նա թշվառությունից կմեռներ, նախքան իր կարիքները ճանաչելը։ Բողոքում են մանկության վիճակից, բայց չեն տեսնում, որ մարդկային ցեղը կկործանվեր, եթե մարդն աշխարհ չգար նախ և առաջ որպես երեխա։

Մենք ծնվում ենք տկար, կարիք ունենք ուժի։ Մենք ծնվում ենք ամեն ինչից զուրկ, կարիք ունենք օգնության։ Մենք ծնվում ենք անմիտ, կարիք ունենք դատողության։ Այն ամենը, ինչ մենք չունենք ծնելիս, և որոնց մենք կարիքն ենք զգում մեծանալիս, ստանում ենք դաստիարակության միջոցով։

Այդ դաստիարակությունը մենք ստանում ենք կա՛մ բնությունից, կա՛մ մարդկանցից, կա՛մ իրերից։ Մեր ընդունակությունների ու մեր օրգանիզմի ներքին զարգացումը բնությունից ստացած դաստիարակության գործն է. այդ զարգացումը օգտագործելու կերպը մեզ սովորեցնում է մարդկանց դաստիարակությունը. իսկ մեզ շրջապատող առարկաների նկատմամբ ունեցած մեր սեփական փորձառությունը իրերի դաստիարակությունն է։

Ուրեմն, մեզնից յուրաքանչյուրին ձևավորում են երեք տարբեր ուսուցիչներ։ Աշակերտը, որի մեջ այդ ուսուցիչների տարբեր դասերը հակադրվում են միմյանց, վատ է դաստիարակվում և երբեք համաձայն չի լինի ինքն իր հետ. իսկ աշա-

---

1 Ինձ հավաստիացրին, որ պ. Ֆորմեյը կարծում է, թե ես այստեղ նկատի եմ ունեցել իմ մորը, և որ նա այդ մասին հիշել է իր մի գրքում։ Այդ նշանակում է դաժանորեն ծիծաղել Ֆորմեյի կամ ինձ վրա։

2 Արտաքինով նրանց նման, բայց զուրկ լինելով խոսքից և զաղափարներից, որոնք արտահայտում է այդ խոսքը, երեխան ի վիճակի չէր լինի հասկացնելու, որ ինքը նրանց օգնության կարիք ունի, և նրա մեջ ոչինչ չէր արտահայտի այդ կարիքը։

կերտը, որի մեջ այդ դասերը ամբողջապես համընկնում են իրար և միևնույն նպատակին են ձգտում, նա՝ միայն դիմում է իր նպատակին և ապրում դրան համապատասխան։ Սա՛ է միայն լավ դաստիարակվածը։

Արդ, այս երեք տարբեր դաստիարակությունից բնության դաստիարակությունը ամենևին մեզնից կախում չունի. իրերի դաստիարակությունը մասամբ միայն կախում ունի։ Մարդկանց դաստիարակության վրա է միայն, որ մենք իրոք իշխում ենք, թեև իշխում ենք ենթադրաբար միայն, որովհետև ո՛չ ոք վստահ չէ, թե կարող է լիովին ղեկավարել երեխային շրջապատող մարդկանց խոսքերն ու գործերը։

Եթե, ուրեմն, դաստիարակությունն արվեստ է, ապա համարյա անկարելի է, որ նա հաջողություն ունենա, քանի որ նրա հաջողության համար անհրաժեշտ աջակցությունը ոչ ոքից կախում չունի։ Ամենայն ջանադրությամբ միայն կարելի է առավել կամ նվազ չափով մոտենալ նպատակին, իսկ այդ նպատակին հասնելու համար պետք է բախտ ունենալ։

Ո՞րն է դաստիարակության նպատակը. դա հենց բնության նպատակն է, ինչպես արդեն ապացուցեցինք։ Եվ որովհետև երեք տեսակ դաստիարակության համագործակցությունը հարկավոր է նրանց կատարելագործման համար, ապա նրանցից մեկի՝ բնության դաստիարակության վրա, որի հանդեպ մենք անզոր ենք, պետք է ուղղենք մյուս երկուսը։ Թերևս բնությունը բառը շատ տարտամ իմաստ ունի. այստեղ փորձենք ավելի ճիշտ սահմանում տալ նրան։

Բնությունը, ասում են մեզ, ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ սովորություն։ Ի՞նչ է նշանակում այդ։ Մի՞թե չկան սովորություններ, որոնք բնությամբ են ձեռք բերվում, և որոնք երբեք

---

1 Պ-ն Ֆորմեյը մեզ հավատացնում է, որ այդ բանը ոչ ոք չի ասում։ Սակայն ինձ թվում է, որ հենց այդ է ասված հետևյալ բանաստեղծության մեջ, որին և ես մտադրվել եմ պատասխանել.

«La nature, crois-moi, n'est rien que l'habitude». (*«Բնությունը, հավատա՛ ինձ, նույն ինքը սովորությունն է»։*)

Պ-ն Ֆորմեյը, որը չի ուզում, որ իր նմանները գոռոզանան, ձեզ համեստորեն տալիս է իր իմացականության չափը որպես մարդկային ըմբռնողության աստիճան։

բնավորությանը չեն ճնշում։ Այդպես է, օրինակ, բույսերի այն սովորությունը, որոնց ուղղահայաց դիրքով աճելուն մարդիկ արգելք են լինում։ Արգելքը վերանալուց հետո, ազատ թողնվածբույսը պահում է այն թեքությունը, որ նրան տվել են մարդիկ. սակայն բուսահյութը դրանով չի փոխում երբեք իր սկզբնական ուղղությունը, և եթե բույսը չի դադարում աճել, նրա շարունակությունը դարձյալ ուղղահայաց դիրք է ընդունում։ Այդպես է լինում նաև մարդկանց հակումների հետ։ Քանի դեռ մարդը մնում է միևնույն վիճակում, կարելի է պահպանել այն հակումները, որոնք հետևանք են սովորության, և որոնք նրա համար նվազ բնական են. բայց հենց որ դրությունը փոխվում է, սովորությունը կորցնում է իր ազդեցությունը, վերադառնում են բնական հակումները։ Կարելի է վստահորեն ասել, որ դաստիարակությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ սովորության Բայց մի՞թե չկան այնպիսի մարդիկ, որոնք մոռանում և կորցնում են իրենց դաստիարակությունը, և այնպիսիք, որոնք պահպանում են այն։ Ինչի՞ց է առաջանում այս տարբերությունը։ Եթե բնություն բառը պետք է սահմանափակվի բնությանը համապատասխանող սովորություններով, այդ դեպքում ավելորդ է այս ամբողջ անմիտ դատարկաբանությունը։

Մենք զգայունակ ենք ծնվում և ծնված օրից զանազան միջոցներով կրում ենք մեզ շրջապատող իրերի ազդեցությունը։ Այն րոպեից, երբ սկսում ենք դիտակցել, այսպես ասած, մեր զգացողությունները, մենք տրամադրվում ենք կրկին որոնելու այն իրերը, որոնք առաջացնում են մեր մեջ այդ զգացողությունները, կամ խուսափելու դրանցից, նայած, առաջին՝ հաճելի՞ են մեզ նրանք թե անհաճո, երկրորդ՝ համապատասխանությանը կամ անհամապատասխանությանը, որ գտնում ենք մեր և այդ իրերի միջև և, վերջապես, նայած մեր ունեցած դպտողություններին երջանկության և կատարելության գաղափարի մասին, մեզ տալիս է բանականությունը։ Որքան ավելի զգայուն դառնում և լուսավորվում, այնքան այս հակումներն ընդարձակվում և ամրապնդվում են. բայց մեր սովորությունների հարկադրանքով նրանք առավել կամ նվազ չափով փոփոխվում են՝ նայած թե ինչ կարծիքի ենք

մենք։ Հենց այն, ինչ գոյություն ունի նախքան այդ փոփոխությունը, ես անվանում եմ բնություն։

Ուրեմն, այս նախնական հակումների հետ կարելի է կապել ամեն ինչ. այդ հնարավոր կլիներ, եթե մեր երեք տեսակ դաստիարակությունները միայն տարբեր լինեին միմյանցից. բայց ի՞նչ անել, երբ նրանք իրար հակադիր են, երբ ուզում են մարդուն դաստիարակել ոչ թե իր, այլ ուրիշների համար։ Այս դեպքում համաձայնությունը անհնար է։ Ստիպված լինելով պայքարել բնության կամ հասարակական կազմակերպությունների դեմ, պետք է ընտրություն կատարենք՝ կա՛մ մարդ պատրաստել, կա՛մ քաղաքացի, որովհետև չի կարելի միաժամանակ անել և՛ մեկը, և՛ մյուսը։

Յուրաքանչյուր մասնավոր հասարակություն, եթե նա սահմանափակ է և միաձույլ, օտարանում է ընդհանուր հասարակությունից։ Ամեն մի հայրենասեր խիստ է դեպի օտարերկրացիները, վերջիններս սոսկ մարդիկ են, նրանք ոչինչ չեն ներկայացնում նրա աչքին[1]։ Այս անպատեհությունը անխուսափելի է, բայց աննշան։ Էականը բարի լինելն է այն անձանց հանդեպ, որոնց հետ ապրում ենք։ Դրսում սպարտացին փառասեր էր, ագահ, անարդար, բայց անշահախնդրություն, արդարասիրություն, համերաշխություն էր իշխում քաղաքի պարիսպներից ներս։ Զգուշացե՛ք այն կոսմոպոլիտներից, որոնք իրենց գրքերում հեռուներն են գնում որոնելու այնպիսի պարտականություններ, որ չէին ուզենա կատարել իրենց շրջապատում։ Կան այնպիսի փիլիսոփաներ, որոնք սիրում են թպթպարներին, որպեսզի չսիրեն իրենց հարևաններին։

Բնական մարդը ամեն ինչ է ինքն իր համար. նա թվական միավոր է, բացարձակ ամբողջություն, որը միմիայն ինքն իր կամ իր նմանի հետ է հարաբերվում։ Մարդ-քաղաքացին կոտորակային միավոր է, որը կախում ունի հայտարարից, և որի արժեքը կայանում է ամբողջի, այսինքն՝ հասարակության հետ նրա ունեցած հարաբերության մեջ։ Հասարակական լավ

---

[1] Այդ պատճառով էլ ռեսպուբլիկաները [illegible]րազմները ավելի դաժան են, քան միապետություններինը։ Բայց երբ թագավորների պատերազմը չափավոր է, նրանց խաղաղությունն է սոսկալի. ավելի լավ է լինել նրանց թշնամին, քան հպատակը։

հիմնարկությունները նրանք են, որոնք ամենից լավ են այլափոխում մարդու բնությունը, նրան՝ բացարձակ գոյության փոխարեն հարաբերական գոյություն են տալիս ու նրա եսը միաձուլում ընդհանուր միավորի մեջ, այնպես որ, յուրաքանչյուր անհատ այլևս իրեն որպես առանձին միավոր չի զգում, այլ՝ ամբողջի մի մասը և է՛լ ավելի զգալի է դառնում ամբողջի մեջ։ Հռոմի քաղաքացին-ո՛չ Գայոս էր, ո՛չ էլ Լուկիոս. նա լոկ հռոմեացի էր. նա հայրենիքը նույնիսկ սիրում էր որպես բացարձակապես իրը։ Ռեգուլոսը իրեն կարթագենացի էր համարում, ընդունելով, որ ինքն իր տերերի սեփականությունն է։ Իբրև օտարերկրացի, նա հրաժարվում էր մասնակցել Հռոմի սենատին. հարկ եղավ, որ մի կարթագենացի հրամայեր նրան այդ անել։ Նա զայրացավ, երբ կամենում էին նրա կյանքը փրկել։ Նա հաղթեց և վերադարձավ փառքով՝ դժնդակ մահով մեռնելու համար։ Ինձ թվում է, որ այս բանը շատ քիչ է վերաբերում այն անձանց, որոնց մենք ճանաչում ենք։

Լակեդեմոնացի Պեդարետոսը ցանկանում է ընդունվել Երեքհարյուրակի խորհրդի անդամ։ Նրան մերժում են։ Նա հեռանում է ուրախ, որ Սպարտայում գտնվեցին երեք հարյուր մարդ, որոնք իրենից ավելի արժանավոր են։ Ենթադրում եմ, որ նրա այս վարմունքը անկեղծ էր. հիմք կա կարծելու, որ այդ այդպես էլ եղել է։ Ահա՛ իսկական քաղաքացին։

Սպարտացի մի կին բանակում հինգ որդի ուներ և լուր էր սպասում պատերազմի դաշտից։ Գալիս է մի ստրուկ. կինը դողալով տեղեկություն է հարցնում պատերազմից։

— Ձեր հինգ որդիներն սպանվեցին,— ասում է ստրուկը։

— Ա՛նա՛րգ ստրուկ, մի՞թե քեզ այդ մասին եմ հարցնում։

— Մենք հաղթություն տարանք։

Մայրն անմիջապես գնում է տաճար և շնորհակալություն հայտնում աստվածներին։ Ահա՛ իսկական քաղաքացուհին։

Այն մարդը, որը քաղաքացիական իրավակարգում ուզում է պահել բնական զգացմունքների առաջնությունը, չգիտե, թե ինչ է ուզում։ Նա շարունակ հակասության մեջ է ինքն իր հետ, շարունակ տատանվում է իր հակումների ու պարտականությունների միջև։ Նա երբեք չի կարող լինել ո՛չ մարդ, ո՛չ քաղաքացի, պիտանի չի լինի ո՛չ իրեն, ո՛չ էլ ուրիշներին։ Նա կլի-

նի մեր օրերի մարդկանցից մեկը՝ մի ֆրանսիացի, մի անգլիացի, մի բուրժուա. նա ոչինչ չի լինի։

Մի բան լինելու, ինքնուրույն և միշտ եզակի լինելու համար պետք է գործել այնպես, ինչպես խոսում են. որեէ որոշում ընդունելիս պետք է միշտ վճռական լինել, ընդունել համարձակորեն և անդադար հետևել դրա կատարմանը։ Սպասում եմ, որ ինձ ցույց տան այդ հրաշքը, որպեսզի իմանամ՝ մա՞րդ է նա, թե քաղաքացի, կամ ի՞նչ միջոցների է դիմում՝ թե՛ մեկը և թե՛ մյուսը դառնալու համար։

Այս անխուսափելիորեն հակոտնյա շարժառիթներից բխում են դաստիարակության երկու ներհակ ձևեր. մեկը՝ հասարակական ու համայնական, մյուսը՝ մասնավոր ու ընտանեկան։

Ուզո՞ւմ եք գաղափար կազմել հասարակական դաստիարակության մասին, կարդացեք Պլատոնի «Ռեսպուբլիկա»-ն։ **Քաղաքական գիրք չէ այն, ինչպես կարծում են նրանք, ովքեր գրքի բովանդակությունը դատում են նրա վերնագրից, այլ՝ դաստիարակության մասին գրված մի հոյակապ ձեռնարկ։**

Երբ ուզում են արտացոլել ցնորքների աշխարհը, սովորաբար հիշատակում են Պլատոնի դաստիարակչական ուսմունքը։ Եթե Լիկուրգոսը իր ուսմունքը միայն գրավոր ավանդած լիներ, ես այն շատ ավելի ցնորական կհամարեի։ Պլատոնի գործը եղավ մարդկային սիրտը մաքրել, իսկ Լիկուրգոսը այն խեղաթյուրեց։

Հասարակական դաստիարակություն այլևս գոյություն չունի և չի կարող գոյություն ունենալ, քանի որ այնտեղ, որտեղ չկա հայրենիք, չեն կարող գոյություն ունենալ նաև քաղաքացիներ։ Այս երկու բառերը՝ հայրենիք և քաղաքացի, պետք է ջնջվեն ժամանակակից լեզուներից։ Թե ինչու համար, ես այդ շատ լավ գիտեմ, սակայն ասել չեմ ուզում. դա իմ նյութին չի վերաբերում։

Ես որպես հասարակական հիմնարկ չեմ ընդունում հասարակական այն ծիծաղելի հաստատությունները, որոնց կոչ[1] են անվանում։ Ոչ էլ հաշվի եմ առնում բարձրաշխարհիկ

[1] Բազմաթիվ դպրոցներում, և հատկապես Փարիզի համալսարանում,

դաստիարակությունը, որովհետև այդ դաստիարակությունը Երկու հակառակ նպատակ հետապնդելով՝ ոչ մեկին չի հասնում։ Նա ընդունակ է միայն պատրաստել երկերեսանի մարդիկ, որոնք կարծես ամեն ինչ անում են ուրիշների համար, մինչդեռ իրականում միայն իրենց շահը նկատի ունեն։ Բայց նման ցուցարարությունները, հանրածանոթ լինելով բոլորին, ոչ ոքի չեն կարող խաբել։ Իզուր են դրանք։

Այս հակասություններից առաջանում է մի ուրիշը, որը մենք անընդհատ զգում ենք մեր մեջ։ Բնությունն ու մարդիկ մեզ քարշ են տալիս տարբեր ուղղություններով, և մենք ստիպված տարուբերվում ենք այդ այլազան մղումների միջև, ընտրելով այնպիսի մի ճանապարհ, որը մեզ չի տանում ո՛չ մեկ և ո՛չ մյուս նպատակներին։ Եվ այսպես, ներքին պայքարով և տատանումներով անցկացնելով մեր ամբողջ կյանքը, այն ավարտում ենք, չկարողանալով երբևէ հաշտվել ինքներս մեզ հետ և առանց օգտակար լինելու ո՛չ մեզ, ո՛չ ուրիշներին։

Մնում է, վերջապես, ընտանեկան դաստիարակությունը, կամ բնության դաստիարակությունը։ Բայց ի՞նչ կարող է դառնալ ուրիշների համար մի մարդ, որը միմիայն իր համար է դաստիարակվել։ Եթե առաջադրված կրկնակի նպատակները երբևէ կարելի լիներ միացնել մեկի մեջ, մարդու հակասությունները վերացնելով, կվերացվեր նրա երջանկությունն արգելակող մի մեծ խոչընդոտ։ Այս մասին դատելու համար պետք է մարդուն տեսնել լիովին կազմակերպված, զննել նրա հակումները, տեսնել նրա առաջադիմությունները, հետևել նրա քայլերին, մի խոսքով՝ ճանաչել բնական մարդուն։ Ես կարծում եմ, որ սույն գիրքը կարդալուց հետո մի քանի քայլ առաջ անցած կլինեն այդ պրպտումների մեջ։

Ի՞նչ պետք է անել այս հազվագյուտ մարդուն ձևավորելու

կան պրոֆեսորներ, որոնց ես սիրում ու չափազանց հարգում եմ և կարծում եմ, որ նրանք շատ ընդունակ կլինեին լավ դաստիարակելու երեսասարդությանը, եթե ստիպված չլինեին հետևելու սահմանված սովորությանը։ Ես հորդորում եմ նրանցից որևէ մեկին՝ հրապարակել իր մտահղացած բարեփոխությունները։ Գուցե, վերջապես, փորձեն բուժել չարիքը, տեսնելով, որ այն անբուժելի չէ։

համար։ Անտարակույս, շատ բան. նշանակում է պետք է կատարել ինչ որ անհրաժեշտ է։ Երբ կարիք է լինում քամուն դեմ գնալ, պետք է առաջ շարժվել՝ նավարկելով մերթ մեկ, մերթ մյուս ուղղությամբ, բայց երբ շատ է ալեկոծ ծովը, և ուզում ենք կանգ առնել տեղում, պետք է խարիսխ գցել։ Զգուշացի՛ր, երիտասարդ նավավար, որ քո պարանը ջուրը չտանի, որ քո խարիսխը ծովի հատակը չակոսե, որ նավդ չխոտորի, նախքան դու կնկատես այն։

Հասարակական իրավակարգում, որտեղ բոլոր տեղերը նշված են, յուրաքանչյուր ոք պետք է դաստիարակված լինի իր տեղի համար։ Եթե որևէ անհատ դուրս գա իր համար պատրաստված տեղից, նա այլևս ոչ մի բանի պիտանի չէ։ Դաստիարակությունը օգտակար է այնքանով, որքանով որ ճակատագիրը համընկնում է ծնողների ունեցած կոչմանը։ Մյուս բոլոր դեպքերում նա վնասակար է սանի համար, թեկուզ այն նախապաշարումների պատճառով, որոնցով համակում են նրան։ Եգիպտոսում, որտեղ որդին պարտավոր էր ընտրել հոր կոչումը, դաստիարակությունը գոնե մի կայուն նպատակ ուներ. իսկ մեզ մոտ, որտեղ միայն աստիճաններն են մնայուն, և ուր մարդիկ շարունակ փոփոխվում են, ոչ ոք չգիտի, թե որդուն դաստիարակելով իր աստիճանի համար, չի՞ աշխատում արդյոք նրան ի վնաս։

Քանի որ բնական կարգերում բոլոր մարդիկ հավասար են, ապա նրանց համայնական կոչումը մարդկային վիճակն է, և որևէ մեկը, եթե լավ է դաստիարակված այդ բանի համար, չի կարող վատ կատարել դրա հետ կապված գործերը։ Թո՛ղ իմ աշակերտը կոչված լինի ռազմական գործի, եկեղեցու, դատարանի համար, այդ կարևոր չէ։ Մնողների կոչումից առաջ բնությունն է նրան կանչում դեպի մարդկային կյանքը։ Կյանքն է այն արվեստը, որ ես ուզում եմ նրան սովորեցնել։ Ես համոզված եմ, որ իմ ձեռքի տակից դուրս գալով՝ նա ո՛չ դատավոր կլինի, ո՛չ զինվոր, ո՛չ քահանա. նա, առաջին հերթին, կլինի մարդ՝ մարդ լրիվ առումով, նա կարող է, եթե հարկ լինի, դառնալ այնպիսին, ինչպիսին որևէ մեկ ուրիշը։ Եվ ճակատագիրը զուր կջանա նրան տեղափոխել տեղից տեղ. նա միշտ իր տեղում կլինի։ Occupavi te, fortuna, atque

cepi; omnesque aditus tuos interclusi, ut ad me aspirare non posses *.

*Մեր իսկական գիտությունը մարդկային վիճակի ուսումնասիրությունն է։ Իմ կարծիքով, մեզնից նա է ամենից ավելի լավ դաստիարակված, ով կարող է ավելի լավ տանել կյանքի բարին ու չարը։ Սրանից հետևում է, որ իսկական դաստիարակությունը կայանում է գործնական աշխատանքների մեջ, քան թե հրահանգների։ Մենք սկսում ենք սովորել՝ ապրել սկսելով։ Մեր դաստիարակությունը մեզ հետ է սկսվում. մեր առաջին դաստիարակը մեր դայակն է։ Այդ րսկ պատճառով դաստիարակություն բառը հների մոտ այլ նշանակություն ուներ, որը մենք այժմ չենք տալիս նրան. այն նշանակում էր սնունդ։ «Educit obstetrix,— ասում է Վառոնը,— educat nuitrix, instituit paedagogus, docet magister» **։ Այսպիսով, դաստիարակությունը, ուսուցումը, կրթությունը, իրենց նպատակներով, երեք նույնքան տարբեր բաներ են, ինչքան դայակը, դաստիարակը և ուսուցիչը։ Բայց այս տարբերությունները սխալ են ըմբռնված. լավ կրթվելու համար երեխան միայն մեկ առաջնորդ պետք է ունենար։*

Հարկավոր է, ուրեմն, ընդհանրացնել մեր տեսակետները և դնել մեր սանի մեջ մարդն ընդհանրապես, որը ենթակա է մարդկային կյանքի բոլոր պատահարներին։ Եթե մարդիկ ծնվեին ընդմիշտ կապված միևնույն երկրի հողին, եթե կլոր տարին միայն մեկ եղանակ ունենար, եթե յուրաքանչյուր անձ կապված լիներ իր բախտին այնպես, որ այլևս երբեք չկարողանար այն փոխել, այդ դեպքում ներկայիս կիրառվող դաստիարակությունը որոշ չափով պիտանի կլիներ։ Երեխան, իր վիճակին համապատասխան դաստիարակվելով ու նրանից երբեք դուրս չգալով, չէր ենթարկվի մի այլ դրության անհարմարություններին։ Սակայն, նկատի ունենալով մարդկային գործերի փոփոխությունը, մեր դարի անհանգիստ ու

---

* *Նվաճեցի՛ քեզ, ո՛վ ճակատագիր, և ամուր պահել եմ քեզ. հարձակվեցի քո ուղիները փակելու համար. դու այլևս չես կարող ինձ հասնել ու վնասել։* — Ս. Բ.

** «Մանկաբարձն ընդունում է, դայակը՝ սնում, դաստիարակը՝ առաջնորդում, ուսուցիչը՝ սովորեցնում»։ — Ս. Բ.

հարաշարժ միտքը, որ յուրաքանչյուր սերնդի կյանքում հեղաշրջում է ամեն ինչ, կարելի՞ է արդյոք ընդունել մի ավելի անմիտ մեթոդ, քան այն, որը նրեխային դաստիարակելիս, ասես նա երբեք սենյակից դուրս չի գալու և շարունակ շրջապատված է լինելու յուրայիններով։ Եթե խեղճ երեխան ոտքը դուրս դնի, կամ եթե մի աստիճան ցած իջնի, կորած է։ Խնդիրն այն չէ, որ երեխային վարժեցնենք ցավին դիմանալ, այլ այն, որ նրան սովորեցնենք ղրալ այդ ցավը։ Մարդիկ միայն մտածում են իրենց երեխայի պահպանության մասին։ Բայց դա բավական չէ. նրան պետք է սովորեցնել, որ կարողանա ինքն իրեն պահպանել մեծանալուց հետո, տոկուն լինի ճակատագրի հարվածների հանդեպ, արհամարհի ճոխությունն ու թշվառությունը, եթե հարկ լինի, կարողանա ապրել Իսլանդիայի սառույցներում և Մալթայի կիզիչ ժայռերի վրա։ Դուք իզուր միջոցներ ձեռք կառնեք, որ նա չմեռնի. նա մի ԵՐ մահանալու է, և եթե նույնիսկ նրա մահը ձեր խնամքի հետևանք չէ, համենայն դեպս, այդ խնամքը սխալ հասկացված խնամք կլինի։ Կարևորը նրան ապրել սովորեցնելն է, քան թե մահից ազատելը։ Ապրել չի նշանակում շնչել, այլ՝ գործել, աշխատեցնել մեր մարմնի օրգանները, մեր զգայարանները, մեր ընդունակությունները, մեր էության բոլոր մասերը, որոնք մեզ տալիս են մեր գոյության զգացողությունը։ Ամենից լիակատար ապրողը նա չէ, որ շատ տարիներ է ապրել, այլ նա, ով ամենից ավելի է զգացել կյանքը։ Ծղել են մարդիկ, որոնց թաղել են հարյուր տարեկան հասակում, բայց մնացած են եղել ծնված օրից։ Գերազանցելի կլիներ, որ նրանք գերեզման իջնեին երիտասարդ հասակում, գոնե մինչև այդ ապրած կլիներին։

Մեր ամբողջ իմաստությունը կայանում է սարկական նախապաշարմունքների մեջ. մեր բոլոր սովորությունները լոկ սարկացում են, ճնշում և բռնակալություն։ Մարդ-քաղաքացին ծնվում, ապրում ու մեռնում է սարկության մեջ. ծնվելուն պես նրան փաթաթում են խանձարուրի մեջ, մեռնելուց հետո՝ փակում դագաղի մեջ. քանի դեռ պահում է իր մարդկային կերպարանքը, նա կաշկանդված է հասարակական հաստատություններով։

Ասում են, թե շատ տատմայրեր նորածին երեխայի գլուխը սեղմում են՝ նրան ավելի պատշաճ ձև տալու նպատակով, և մենք էլ հանդուրժում ենք այդ։ Ուրեմն, մեր գլուխները լավ չեն այնպես, ինչպես նրանց ձևավորել է բնության ստեղծողը։ Նրանց պետք է ձևավորեն դրսից՝ տատմայրերը և ներսից՝ փիլիսոփաները։ Այս տեսակետից կարաիբները կիսով չափ ավելի երջանիկ են, քան մենք։

«Հազիվ է երեխան մոր արգանդից դուրս գալիս ու իրեն ազատ զգում շարժումներ անելու և անդամները մեկնելու, նրան կրկին նոր կապանքների մեջ են դնում։ Երեխային բարուրում են՝ գլուխն անշարժ դիրքով, ոտքերը ձգած, ձեռքերը մարմնի ուղղությամբ երկարած, այնուհետև փաթաթում ու կապկպում են ամեն տեսակի ոտնաշորերով ու թաթաշորերով, որոնք արգելակում են նրա շարժումները։ Նա դեռ բախտավոր է, եթե նրան չեն սեղմել այն աստիճան, որ չկարողանա շնչել, և մտածել են նրան պառկեցնել կողքի վրա, որպեսզի բերանում հավաքվող հեղուկը ինքն իրեն դուրս հոսի, քանի որ նա ազատություն չունի գլուխը որևէ կողմ շրջելու՝ նրա հոսքը դյուրացնելու համար»[1]։

Կծիկի պես հավաքված իր անդամների երկարատև թմրությունը թոթափելու համար նորածինը պահանջ է զգում դրանք երկարելու և շարժելու։ Այժմ, ճիշտ է, ձգում են նրա ձեռքն ու ոտքը, բայց չեն թողնում, որ նա ազատ շարժումներ անի. գլուխն անդամ ճնշում են գլխակապերով, կարծես վախենում են, որ չլինի թե երեխան իրեն ապրող էակի տեսք ունենա։

Այսպիսով, մարմնի ներքին մասերի զարգացման ձգտումը անհաղթելի արգելքների է հանդիպում, երբ երեխան դրա համար անհրաժեշտ շարժումներ կատարելու փորձ է անում։ Նա անընդհատ ապարդյուն ճիգեր է գործադրում, որոնք սպառում են նրա ուժերը կամ դանդաղեցնում նրանց զարգացումը։ Երեխան ավելի քիչ էր սեղմված, ավելի քիչ էր նեղվում, ավելի քիչ էր ճնշված սաղմնաթաղանթի մեջ, քան թե այժմ իր բարուրի մեջ. չես հասկանում, թե նա ի՞նչ շահեց աշխարհ գալով։

---

[1] Բյուֆոն, Բնական պատմություն, հատ. IV, էջ 190։

Այն անշարժությունն ու ճնշվածությունը, որում պահում են երեխայի մարմինը, անկասկած խանգարում են արյան և մարմնահյութերի շրջանառությանը, արգելք են հանդիսանում նրա ամրանալուն և աճելուն, վնասում են նրա կազմվածքին։ Այն երկրներում, որտեղ այս անհեթեթ կանխազգուշությունները չեն կիրառվում, բոլոր մարդիկ բարձրահասակ են, թիկնեղ, ուժեղ և մարմնով համաչափ։ Իսկ այն երկրներում, որտեղ երեխաներին խանձարուրում են, մեծ թիվ են կազմում սապատավորները, կաղերը, ծուռոտանիները, խեղանդամները, ոսխոտիկները և ամեն տեսակ այլանդակ մարդիկ։ Վախենալով, որ երեխաների մարմինները ազատ շարժումներից կարող են այլանդակվել, մարդիկ ավելի շուտ իրենք են նրանց այլանդակում՝ մամլելով։ Նրանք կնախընտրեն երեխաներին անդամալույծ դարձնել, որպես թե խեղանդամությունը կանխելու համար։

Նման դաժան բռնապետությունը չի կարող չանդրադառնալ երեխայի բնավորության վրա։ Նրա առաջին զգացումը ցավի ու տանջանքի զգացումն է. նրա յուրաքանչյուր անհրաժեշտ շարժումը արգելքի է հանդիպում. շղթայակապ կալանավորից էլ ավելի դժբախտ՝ մանուկը զուր ճիգեր է թափում, ղայրանում է ու ճչում։ Կարող են ասել, թե երեխայի առաջին ձայնը լացն է։ Հավատում եմ, որովհետև ծնվելու րոպեից նրան նեղացնում են։ Նրա ստացած առաջին նվերը շղթան է, առաջին խնամքը՝ տանջանքը։ Երեխայի միայն ձայնն է ազատ, որից նա օգտվում է բողոքելու համար։ Երեխան ճչում է այն ցավերից, որ պատճառում են նրան։ Թող դուք էլ նրա նման կապկպված լինեիք, թերևս ավելի բարձր աղաղակեիք։

Ո՞րտեղից է առաջանում այս անմիտ սովորությունը. մի անբնական սովորությունից։ Այն օրվանից, երբ մայրերը, արհամարհելով իրենց առաջին պարտականությունը, չցանկացան կաթ տալ իրենց երեխաներին, հարկ եղավ նրանց հանձնել վարձու կանանց, որոնք օտարածին երեխային մայր դառնալով ու նրա նկատմամբ ոչ մի բնական զգացմունք չտածելով, աշխատում էին իրենց բեռը թեթևացնել։ Ազատ թողնված երեխային պետք է միշտ հսկել, իսկ եթե նա լավ է կապկպված, կարելի է նրան մի անկյուն գցել, ուշադրություն

չպարձնելով նրա ալաղակներին։ Բավական է, որ դայակի անհոգության ապացույցներ չլինեն, բավական է, որ երեխայի ձևրքն ու ոտքը չկոտրվեն. էլ ո՞վ է հետաքրքրվում, թե երեխան հյուծվում է կամ դատապարտված է թուլակազմ մնալու ամբողջ կյանքում։ Երեխայի մարմնի անդամները պահպանում են մարմնի հաշվին, և ինչ էլ պատահի, դայակին չեն մեղադրի։

Այն փափկասուն մայրերը, որոնք իրենց երեխաների հոգուց ազատված՝ հաճույքով հանձնվում են քաղքենի զվարճությունների, գիտե՞ն արդյոք, թե գյուղում ինչպիսի խնամք են ստանում իրենց երեխաները խանձարուրների մեջ։ Ամենափոքր սրտնեղության դեպքում երեխային կախում են մի մեխից՝ լվացքի մի կապոցի նման, ու մինչդեռ դայակն առանց շտապելու իր գործերով է զբաղվում, խեղճ մանկիկը մնում է այդպես խաչված։ Այդ դիրքում գտնվող երեխայի դեմքը կապտում է. ուժեղ սեղմված կուրծքը արգելակում է արյան շրջանառությունը, որի հետևանքով արյունը դեպի գլուխն է բարձրանում, ու երեխան չկարողանալով ճչալ, թվում է շատ հանգիստ վիճակում։ Չգիտեմ, երեխան քանի՞ ժամ կդիմանա այդպես՝ առանց կյանքից զրկվելու, բայց չեմ կարծում, որ դա կարող է երկար տևել։ Ահա, իմ կարծիքով, բարուրելու ամենամեծ անհարմարություններից մեկը։

Ենթադրում են, թե ազատ թողնված երեխան կարող է իր մարմնին այնպիսի վատ դիրք տալ ու այնպիսի շարժումներ անել, որոնք վնասակար են նրա անդամների կանոնավոր զարգացմանը։ Դա մեր կեղծ իմաստության դատարկ դատողություններից մեկն է, որը ոչ մի փորձով չի հաստատված։ Մեզնից ավելի խելացի ժողովուրդների երեխաների մեջ, որոնք մեծանում են ազատ թողնված անդամներով, ոչ մի վիրավոր կամ խեղանդամ չի նկատվում։ Երեխան չի կարող այնպիսի ուժեղ շարժումներ կատարել, որ վտանգավոր լինեն, իսկ եթե նույնիսկ մի բուռն շարժում անի, դրանից առաջացող ցավն իսկույն նրան կստիպի հանդարտվել։

Մենք դեռևս չենք փորձել բարուրել շան կամ կատվի ձագերին. ո՞վ է տեսել, որ այս անփութության հետևանքով որևէ վնաս հասնի նրանց։ Ճիշտ է, երեխան ավելի ծանր է,

բայց նույն համեմատությամբ էլ՝ ավելի տկար։ Հազիվ կարողանալով շարժվել, նա ի՞նչպես կարող է իրեն խեղել։ Եթե նրան երկար ժամանակ պառկեցնեք մեջքի վրա, նա այդ դիրքում էլ կմահանա, ինչպես կրիան, առանց շրջվել կարողանալու։

Կանայք ոչ միայն չեն բավարարվում իրենց երեխաներին կրծքով չկերակրելով, այլև չեն ցանկանում երեխա ունենալ. հետևանքը ըստինքյան բնական է։ Գտնելով, թե մայրական դրությունը ծանր է, իսկույն դիմում են նրանից բոլորովին ազատվելու միջոցին. այդպիսով ուղում են մի անօգուտ գործ կատարել, շարունակ այն վերսկսելու նպատակով, և մարդկային ցեղի բազմացման տված հաճույքը վեր է ածվում նրան վնասելու պատճառի։ Այս սովորությունը, ավելանալով բնակչության նվազման մյուս պատճառներին, պարզորեն կանխագուշակում է Եվրոպայի մոտիկ ապագան։ Գիտությունը, արվեստը, փիլիսոփայությունն ու սրանցից բխած բարքերը շուտով կամայացնեն Եվրոպան, որտեղ կբնակվեն գիշատիչ գազաններ. ասենք՝ դրանով բնակիչների մեծ փոփոխություն չի լինի։

Ես երբեմն ականատես եմ եղել, թե երիտասարդ կանայք ինչպիսի խորամանկություն են բանեցնում, ձևացնելով, որ իրր ցանկանում են կրծքով սնել իրենց երեխաներին։ Նրանք գիտեն միջոցը դրանից ազատվելու. հնարամտորեն օգնության են կանչում ամուսիններին, բժիշկներին ու, մանավանդ, մայրերին։ Այն ամուսինը, որը կհամաձայնի, որպեսզի իր կինը կրծքով կերակրի երեխային, կհամարվի կորած մարդ. նա կլինի մի մարդասպան, որը ցանկանում է ազատվել կնոջից։ Եթե կամիս ամուսի՛ն, դու հայրական սերը պետք է զոհես ընտանեկան համերաշխության սիրուն։ Բարեբախտաբար, գյուղերում ձեր կանանցից ավելի՛ զգաստ կանայք կան. բայց դուք առավել բախտավոր կլինեք, եթե ձեր կանայք իրենց խնայած ժամանակը ձեզնից բացի ուրիշներին չեն հատկացնում։

Կանանց պարտականությունը կատարի առարկա չէ. բայց հարց է ծագում. երանց արհամարհանքը դեպի այն չի՞ ազդում արդյոք երեխաների վրա. արդյո՞ք երեխաների համար

միևնույնն է՝ մո՞ր կաթով են սնվում, թե ուրիշի։ Ես գտնում եմ, որ այս հարցը վճռված է բժիշկների կողմից կանանց[1] ցանկության համաձայն, ու, իմ կարծիքով, ավելի լավ է երեխան ծծի առողջ դայակի, քան վատառողջ մոր կաթը, եթե վտանգ է սպառնում, որ մանուկը նոր հիվանդություն ստանա այն արյունից, որից ինքը սերված է։

Սակայն խնդրին միայն ֆիզիկական տեսակետից չպետք է մոտենալ. երեխան նվազ կարիք չունի մոր խնամքին, քան նրա կրծքին։ Այն կաթը, որ մերժում է տալ մայրը, նրան կարող են տալ ուրիշ կանայք, նույնիսկ անասունները. բայց մայրական խնամքը անփոխարինելի է։ Այն կինը, որ իր երեխայի փոխարեն ուրիշի երեխային է սնում, վատ մայր է. ի՞նչպես կարող է նա լավ դայակ լինել. գուցե հետագայում **աչքի ընկնի**, բայց **ապահովություն** չունի։ Պետք է, որ սովորությունը փոխի բնությունը, իսկ վատ խնամված երեխան այդ ժամանակաընթացքում կարող է հարյուր անգամ ոչընչանալ՝ մինչև դայակը նրա նկատմամբ մայրական զորովանքով տոգորվի։

Ուրեմն, վերոհիշյալ առավելությունից իսկ առաջանում է մի անպատեհություն, որպիսին բավական է, որպեսզի ամեն մի զգայուն մայր հրաժարվի իր երեխային ուրիշի կաթը ծծել տալուց, այն է՝ մայրական իրավունքի բաժանումը կամ կորուստը, տեսնել, որ իր զավակը իրեն չափ, գուցե և իրենից ավելի մի ուրիշին է սիրում, զգալ, որ երեխայի՝ իր իսկական մոր հանդեպ ունեցած սերը ողորմություն է, իսկ ստնտուի հանդեպ ունեցածը՝ պարտականություն, որովհետև երեխան որդիական սիրով է կապվում այն կնոջ հետ, ում մոտ մայրական խնամք և փաղաքշանք է գտել։

Որպես այս անպատեհությունը դարմանելու միջոց, երեխաներին սովորաբար համակում են արհամարհանքով դեպի իրենց դայակները, որոնց հետ վարվում են իբրև աղախին-

---

[1] Կանանց և բժիշկների դաշնակցությունը ես միշտ համարել եմ Փարիզի ամենից ավելի զավեշտական յուրօրինակություններից մեկը։ Կանանց շնորհիվ է, որ բժիշկները հռչակ են ստանում, և բժիշկների միջոցով է, որ կանայք կատարում են իրենց կամքը։ Սրանով կարելի է գաղափար կազմել, թե ինչպիսի՜ համբույրներ պետք է ունենա բժիշկը Փարիզում՝ հռչակվելու համար։

ներին։ Երբ նրանց ծառայությունն ավարտված են համարում, երեխային ետ են վերցնում, կամ նրանց ազատում աշխատանքից։ Հաճախ, ծնողների վատ վերաբերմունքի հետևանքով, դայակը չի ցանկանում գալ տեսնել իր սանիկին։ Երեխան մի քանի տարուց հետո այլևս չի տեսնում, չի ճանաչում նրան։ Այն մայրը, որ կարծում է, թե փոխարինում է դայակին ու դաժան վերաբերմունքով քավում է իր անտարբերությունը, սխալվում է։ Խորթացած ծծկերից մի քնքուշ զավակ պատրաստելու փոխարեն, նրան մղում է դեպի ապերախտություն, սովորեցնում է արհամարհել նրան, ով իրեն կաթ է տվել։

Ինչքա՜ն երկար կարող էի խոսել այս կետի շուրջ, եթե օգտակար նյութերի մասին զուր երկարաբանելը ձանձրալի չլիներ։ Այս հարցը շատ ավելի բարդ է, քան կարծում են։ Եթե ուզում եք ամեն մեկին վերադարձնել իր առաջնահերթ պարտականություններին, սկսեցե՛ք մայրերից. դուք կզարմանաք ձեր առաջացրած փոփոխություններից։ Ամեն ինչ ծագում է հաջորդաբար առաջին այլասերումից՝ ամբողջ բարոյական կարգը խաթարվում է. բնական հակումները մարում են սրտերում, ընտանեկան ներքին կյանքը ավելի անհրապույր է դառնում. նոր կազմակերպվող ընտանիքի հուզիչ տեսարանը այլևս ամուսիններին չի գրավում և օտարներին ոչ մի հարգանք չի ներշնչում. չեն հարգում այն մայրերին, որոնց մոտ չեն տեսնում նրանց զավակներին. ընտանիքը դադարում է մշտական բնակավայր լինել. սովորությունն այլևս չի ամրապնդում արյան կապերը. էլ չկան ո՛չ հայրեր, ո՛չ մայրեր, ո՛չ երեխաներ, ո՛չ եղբայրներ, ո՛չ քույրեր. սրանք հազիվ են իրար ճանաչում։ Ի՞նչպես կարող են սիրել միմյանց։ Յուրաքանչյուրը միայն իր մասին է մտածում։ Երբ ընտանիքը այլևս տխուր մենության վայր է դառնում, բնական է, որ զվարճությունը ուրիշ տեղ են փնտրում։

Իսկ եթե մայրերը հանձն առնեն իրենց կաթով սնել իրենց երեխաներին, այն ժամանակ բարքերը ինքնաբերաբար կբարեփոխվեն, բոլոր սրտերում կարթնանան բնական զգացումները. պետության բնակչությունը կաճի։ Այս առաջին քայլը, այս քայլը միայն կարող է ամեն ինչ վերամիավորել։ Ընտա-

նեկան կյանքի հրապույրը վատ բարքերի դեմ ամենաազդու հակաթույնն է։ Երեխաների աղմուկը, որը տաղտկալի է թվում, հաճելի է դառնում. հայրն ու մայրը միմյանց ավելի պիտանի, ավելի սիրելի կլինեն, նրանց ամուսնական կապն ավելի կամրապնդվի։ Երբ ընտանիքում տիրում է աշխույժ ու կենսուրախ կյանք, տնային աշխատանքը դառնում է կնոջ ամենասիրելի գործը, իսկ ամուսնու՝ ամենահաճելի զբաղմունքը։ Այսպիսով, վատ բարքերի վերացումով ընտանիքում կարող է կատարվել մի ընդհանուր բարեփոխություն, և քիչ հետո բնությունը նորից կտիրանա իր բոլոր իրավունքներին։ Մի անգամ որ կանայք վերստին մայր դառնան, այրերը չեն հապաղի դարձյալ հայր և ամուսին լինել։

Ավելո՞րդ շաղակրատանք. աշխարհիկ հաճույքներից առաջացող ձանձրույթն անգամ երբեք այդպիսի արդյունքի չի հանգեցնում։ Կանայք դադարել են մայր լինելուց. նրանք այլևս այդպիսին չեն լինելու. էլ չեն ուզում այդպիսին լինել։ Եթե նույնիսկ ցանկանային, հազիվ թե կարողանային. այսօր, երբ հակառակ սովորույթներ են հաստատվել, նրանցից ամեն մեկը պարտավորված կլիներ հալածահարել իրեն շրջապատող կանանց դիմադրությունը, կանանց, որոնք իրար հետ դաշնակցում են մի փորձի դեմ, ոմանք՝ որովհետև իրենք դրա օրինակը չեն տվել, ուրիշները՝ որովհետև չեն ուզում այն ընդօրինակել։

Բայց և այնպես, երբեմն կան ողջամիտ դեռատի կանայք, որոնք համարձակվում են այս բանում դեմ դուրս գալ աշխարհիկ կարգերին, արհամարհել իրենց սեռակիցների ճիչերը և անբասիր խիզախությամբ կատարում են բնության կողմից իրենց վրա դրված այդ քաղցր պարտականությունը։ Երանի թե նրանց սպասող երջանկությունն ու հաճույքները կարենային հրապուրել ավելի մեծ թվով կանանց։ Հիմնվելով ամենապարզ դատողությունից բխող հետևությունների և մինչև հիմա անժխտելի դիտողությունների վրա, ես ինձ թույլ եմ տալիս հավաստիացնել այդ արիասիրտ մայրերին, որ նրանք կապահովեն իրենց ամուսինների անխախտ ու տևական համակրանքը, իրենց զավակների որդիական անկեղծ սերը և հասարակության հարգանքն ու գնահատանքը, բարեհաջող

ծննդաբերություն՝ առանց վտանգի ու հետևանքների, կայուն ու ամուր առողջություն, վերջապես, այն բավարարությունը, որ հետագայում նրանց աղջիկները կհետևեն իրենց մորը և օրինակ կհանդիսանան ուրիշ աղջիկների։

Որտեղ չկա մայր, այնտեղ չկա և երեխա։ Նրանց պարտականությունները փոխադարձ են, և եթե մի կողմը այդ պարտականությունները վատ է կատարում, մյուս կողմն էլ դրանց նկատմամբ անփութություն է ցուցաբերում։ Երեխան մորը պետք է սիրի նախքան իմանալը, թե պարտավոր է սիրել նրան։ Եթե արյան ձայնը չի ուժեղանում սովորությունով ու խնամքներով, առաջին տարիներում իսկ լռում է այդ ձայնը, և սիրտը մեռնում է, այսպես ասած, իր ծնվելուց առաջ։ Այսպիսով, հենց առաջին քայլերից մենք բնությունից դուրս ենք ընկնում։

Բնությունից դուրս են գալիս նաև հակառակ կողմից, երբ կինը, մայրական հոգատարությունը անտես առնելու փոխարեն, այս անգամ չափազանցության է հասցնում այն, երբ նա իր երեխային կուռք է դարձնում, երբ ավելացնում ու հրահրում է նրա թուլություններ այն աստիճան, որ նա չդիմա այն, և հուսալով երեխային զերծ պահել բնության օրենքներից, նրան հեռու է պահում ծանր տպավորություններից, առանց մտածելու, թե նրան ժամանակավորապես պաշտպանելով որոշ նեղություններից, ինչքան պատահարներ ու վտանգներ է կուտակում, ապագայում, երեխայի գլխին, և որքան բարբարոս կանխահոգություն է, երբ ուզում են մանկական թուլությունը երկարաձգել հասուն տարիքում մարդկանց վերապահված տվայտանքներով։ Ըստ ավանդության, Թետիսը իր որդուն ընկղմեց Ստիքսի ջրերի մեջ՝ նրան անխոցելի դարձնելու նպատակով։ Այս այլաբանությունը պարզ է և գեղեցիկ։ Դաժան մայրերը, որոնց մասին է խոսքս, այլ կերպ են վարվում. նրանք իրենց զավակներին անընդհատ ընկղմելով մեղկության մեջ՝ նրանց նախապատրաստում են տանջվելու։ բաց են անում նրանց մաշկի ծակոտիները ամեն տեսակ չարիքների առաջ, որոնց կուլ կգնա երեխան, երբ մեծանա։

Դիտեցե՛ք բնությունը և ընթացե՛ք նրա նշած ճանապարհով։ Բնությունն անընդհատ վարժեցնում է երեխաներին, ամ-

փում նրանց բնավորությունը ամեն տեսակ փորձություններով, մանուկ հասակից սովորեցնում է, թե ինչ է ցավն ու տառապանքը։ Երեխան առաջ հանելիս տենդում է, սուր փորացավերից գալարվում, կարկամում է, տևական հազը շընչահեղձ է անում նրան, ճիճուները տանջում են, և հյութերի հորդությունը փչացնում է նրա արյունը, զանազան թթվուտներ խմորումներ են առաջացնում նրա մարմնի մեջ և մաշկի բորբոքումներ պատճառում։ Մանկան կյանքի համարյա ամբողջ առաջին շրջանը լի է հիվանդություններով ու վտանգներով. ծնվող երեխաների կեսը մահանում է մինչև ութ տարեկան հասակը։ Այդ փորձություններից երեխան դուրս է գալիս արդեն ուժեղացած, և շարունակելով ապրել, հետզհետե ավելի է ամրապնդում իր կյանքի հիմքը։

Այս է բնության օրենքը։ Ինչո՞ւ եք դուք նրան հակադրվում, չե՞ք տեսնում, որ ցանկանալով ուղղել բնությունը, դուք քանդում եք նրա գործը և արգելակում նրա օգտակար ջանքերը։ Մի կարծեք, թե դրսից անելով այն, ինչ ընության է անում ներսից, վտանգը կարող է կրկնապատկվել. ընդհակառակն, այդպիսով վտանգը նվազում է և ի վերջո անհետանում։ Փորձը ցույց է տվել, որ քնքուշ մեծացած երեխաներն ավելի շատ են մահանում, քան մյուսները։ Երեխաներին ավելի քիչ են վտանգի ենթարկում նրանց գործի դնելով, քան թե խնայելով, եթե, իհարկե, չեն չարաշահում նրանց ուժերը։ Ուրեմն, վարժեցրե՛ք նրանց ապագա վտանգները դիմագրավելու։ Կոփեցե՛ք նրանց մարմինը տոկալու տարփա եղանակների, կլիմաների, տարերքի խստություններին, դիմանալու անօթության, ծարավի, հոգնածության։ Ջրդեղե՛ք նրանց Ստիքսի ջրով։ Քանի դեռ մարմինը որևէ սովորություն չի ընդունել, կարելի է աներկյուղ ուզածդ սովորությունը տալ նրան. իսկ եթե մեկ անգամ սովորությունը մտնի նրա կազմվածքի մեջ, ամեն մի նոր փոփոխություն արդեն վտանգավոր կլինի նրա համար։ Մանուկը մեծահասակից ավելի լավ է տանում կյանքի փոփոխությունները. նրա փափուկ ու ճկուն նյարդերին հնշտությամբ կարող եք տալ ձեր ցանկացած ձևը, իսկ չափահասների նյարդերը, որոնք ավելի կարծրացած են լինում, միայն ուժի միջոցով կարելի է փոխել։

Կարելի է, ուրեմն, երեխային դարձնել ամրակազմ, առանց վտանգելու նրա կյանքն ու առողջությունը։ Իսկ եթե նույնիսկ որևէ վտանգ գոյություն ունենար, դարձյալ չպետք է տատանվել։ Քանի որ այդ վտանգները մարդկային կյանքից անբաժան են, ավելի լավ է դրանք փոխադրել կյանքի այն ժամանակաշրջանը, երբ նվազ վնասակար են։

Երեխան որքան մեծանում է, այնքան ավելի քանկ է դառնում։ Նրա անձի արժեքին ավելանում է նրա վրա թափված խնամքի գինը։ Նրա կյանքի կորստյանը միանում է մահվան զգացմունքը։ Ուրեմն, հոգ տանելով հանդերձ նրա պահպանմանը, առավել ևս պետք է մտածել նրա ապագայի մասին։ Հատկապես երիտասարդական մոլութիւնների դեմ է, որ պետք է զինել նրան, նախքան երիտասարդ տարիքին հասնելը, որովհետև, եթե մարդկային կյանքի գինը բարձրանում է մինչև այն հասակը, երբ կարելի է այն օգտավետ դարձնել, ապա ի՞նչպիսի անմտութիւն է մանկանը մի քանի ցավեր խնայել, բազմապատկելով դրանք խելահաս տարիքում։ Մի՞թե չորանք են ուսուցչի դասերը։

Մարդու ճակատագիրն է՝ տանջվել բոլոր ժամանակներում։ Իր գոյության պահպանման հոգսն անգամ չարչարանքների հետ է կապված։ Երջանիկ է նա, ով մանուկ հասակում միայն ֆիզիկական ցավեր է զգացել, ցավեր, որոնք շատ ավելի նվազ դաժան են, շատ ավելի նվազ տանջալի, քան մյուսները, և որոնք վերջիններից ավելի հազվադեպ են ստիպում մեզ հրաժարվել կյանքից։ Հոգեցավի պատճառով մարդ երբեք ինքնասպան չի լինում. միայն հոգեկան ցավերն են, որ հուսահատության են հասցնում նրան։ Մենք մանկան վիճակի վրա ենք ողբում, մինչդեռ ավելի շուտ մեր վիճակն է ողբալի։ Մեր ամենամեծ չարիքների աղբյուրը մենք ինքներս ենք։

Մանկիս մանուկը ճչում է։ Մանկության առաջին շրջանը լացով է անցնում։ Մերթ օրորում են նրան, գգվում՝ հանգստացնելու համար. մերթ սպառնում, ծեծում են՝ լռեցնելու համար։ Մենք կա՛մ անում ենք այն, ինչ նրան հաճույք է պատճառում, կա՛մ պահանջում ենք այն, ինչ մեզ հաճելի է. կա՛մ մենք ենք ենթարկվում նրա քմահաճույքին, կա՛մ նրան

ենք ենթարկում մեր քմահաճույքին. ոչ մի միջին ճանապարհ չկա. նա կա՛մ հրամաններ պետք է տա, կա՛մ հրամաններ ստանա։ Այսպիսով, նրա առաջին մտածողությունը իշխելու և հպատակվելու մասին է։ Նախքան խոսել սովորելը նա հրամայում է. մինչև գործել կարողանալը նա հնազանդվում է։ Երբեմն նրան պատժում են նախքան իր հանցանքն իմանալը, կամ ավելի լավ է ասել՝ նախքան հանցանք գործելը։ Այսպես, նախօրոք նրա մատաղ սիրտը համակում են այնպիսի կրքերով, որոնք հետագայում վերագրելու են բնությանը. ամեն ջանք թափում են նրան չար մարդ դարձնելու, հետո էլ գանգատվում են, որ նա այդպիսին է։

Երեխան այսպես է անցկացնում իր կյանքի վեց-յոթ տարին՝ կանանց ձեռքի տակ, զոհ գնալով նրանց ու իր քմահաճույքին։ Այնուհետև, երբ նրան սովորեցնում են այս կամ այն բանը, այսինքն՝ երբ նրա հիշողությունը ծանրաբեռնում են կա՛մ նրա համար միանգամայն անհասկանալի բառերով, կա՛մ նրան բոլորովին անօգուտ մտքերով, նրա մեջ առաջացրած կրքերով խլացնում են իր բնական հակումները, այդ շինծու էակին հանձնում են մի դաստիարակի ձեռքը։ Իսկ սա է՛լ ավելի է զարգացնում արդեն պատրաստի արհեստական սաղմերը՝ գտնելով դրանք լիովին ձևավորված, սովորեցնում է նրան ամեն ինչ, բացի ինքնաճանաչողությունից, իր ընդունակությունները լրիվ օգտագործելու, ապրելու և երջանկություն ձեռք բերելու համար։ Վերջապես, երբ այս միաժամանակ ստրուկ և բռնակալ երեխան, գիտական պաշարով զինված, քայց առողջ դատողությունից զուրկ, թե՛ մարմնով և թե՛ հոգով տկար, նետվում է կյանքի հորձանուտը, այնտեղ ցուցադրելով իր դատարկամտությունը, հիմարությունն ու բոլոր մոլությունները, այն ժամանակ մեզ ստիպում են ողբալ մարդկային թշվառության ու ապականության վրա։ Սակայն մենք սխալվում ենք. դա մեր քմահաճույքի ստեղծած մարդն է. բնության ստեղծածը բոլորովին տարբեր է։

Իսկ եթե ուզում եք, որ մարդ-արարածը պահի իր սկզբնական կերպարանքը, պահպանեցե՛ք այն՝ մանկան աշխարհ գալու օրից սկսած, ծնված րոպեից զբաղվեցե՛ք նրանով ու

ձեռքից բաց մի՛ թողնք մինչև նրա չափահաս դառնալը, այլապես, երբեք հաջողություն չեք ունենա։ Ինչպես որ իսկական դայակը մայրն է, այնպես էլ իսկական դաստիարակը հայրն է։ Թո՛ղ նրանք համաձայնության գան աշխատանքի կարգի ու սիստեմի մասին, թո՛ղ երեխան մեկի ձեռքից անցնի մյուսի ձեռքը։ Նրան ավելի լավ կդաստիարակի խելոք, քեպետև սահմանափակ գիտելիքների տեր հայրը, քան քե աշխարհի ամենաբանիմաց ուսուցիչը, որովհետև եռանդը ավելի լավ է փոխարինում զարգացմանը, քան քե զարգացումը՝ եռանդին։

Իսկ գործե՛րը, պաշտո՛նը, պարտականությունե՛րը... Ա՛խ, այդ պարտականությունները. իհարկե, այդ պարտականություններից վերջինը հայրականն է[1]։ Ջանանք է զարմանալ, որ մի մարդ, որի կինը չի ցանկանում իրենց միության պտուղին սնել, ինքն էլ չի կամենա դաստիարակել նրան։ Ընտանիքից ավելի հրապուրիչ պատկեր չկա. սակայն միայն մի անհաջող գիծ փչացնում է մնացած բոլորը՝ երբ մայրը առողջությամբ շատ է թույլ դայակ լինելու համար, իսկ հայրն էլ այնքան զբաղված՝ որ ժամանակ չունի դաստիարակ լինելու։ Երեխաները, տանից հեռանալով, ցրվելով գիշերօթիկ ուսումնարանները, վանքերը, կոլեջները, ուրիշ տեղ են տանում հայրական տան սերը, կամ ավելի ճիշտ ասած՝ վերադառնալով իրենց հետ բերում են ոչ մի բանի հետ չկապվելու սովորությունը։ Ծղրայրներն ու քույրերը հաղիվ են իրար ճանաչում։ Երբ մի հանդիսավոր օր նրանք բո-

---

[1] Երբ Պլուտարքոսի մոտ կարդում ենք, որ ցենզոր Կատոնը, որն այնպիսի մեծ փառքով էր կառավարում Հռոմը, ինքն անձամբ է դաստիարակել իր որդուն՝ օրորոցից սկսած և այն էլ այնպիսի հոգատարությամբ, որ ամեն ինչ թողնում էր, որպեսզի ներկա գտնվի այն ժամին, երբ դայակը, այսինքն՝ մայրը, լողացնում և բարուրում էր երեխային։ Երբ կարդում ենք Սվետոնիոսի մոտ, թե ինչպես Օգոստոս կայսրը, տերը աշխարհի, որին ենթը տիրել և միահեծան իշխում էր, անձամբ ինքն էր իր թոռներին սովորեցնում գրել, լողալ, գիտությունների տարերքը և նրանց շարունակ իր մոտն էր պահում, չենք կարող չծիծաղել այն ժամանակվա այդ մանր մարդկանց վրա, որոնք զվարճանում էին նման անոտի բաներով։ Երևի, նրանք այնքան սահմանափակ մտքի տեր մարդիկ էին, որ չէին կարող կրաղվել մեր օրերի «մեծ մարդկանց» գործերով։

լորը միասին հավաքվեն, կարող են շատ քաղաքավարի լինել իրար հանդեպ, բայց՝ որպես օտարներ։ Այն րոպեից, երբ դադարում է ծնողների միջև մտերմությունը, այն րոպեից, երբ ընտանեկան միջավայրը կորցնում է կյանքի հրապուրը, հարկ կլինի անշուշտ այն փոխարինել վատ-կենցաղային բարքերով։ Կա՞ արդյոք այնպիսի մի անմիտ մարդ, որը չըմբռնի այս բոլորի միջև եղած կապը։

Հայրը, որ աշխարհ է բերում ու կերակրում իր զավակներին, իր պարտականության մեկայն մի երրորդ մասն է կատարում։ Նա պարտավոր է մարդկային ցեղին տալ մարդիկ, հասարակությանը՝ ընկերական մարդիկ, պետությանը՝ քաղաքացիներ։ Այն մարդը, որ կարող է հատուցել այս երեակի պարտքը ու չի կատարում, հանցավոր է, գուցե և ավելի հանցավոր, երբ կիսով-չափ է հատուցում։ Այն մարդը, որ հայրական պարտականությունները չի կարող կատարել, իրավունք չունի հայր դառնալու։ Ո՛չ աղքատությունը, ո՛չ աշխատանքը, ո՛չ մարդկային հարգանքը չեն կարող ազատել նրան իր զավակներին կերակրելու և անձամբ դաստիարակելու պարտականությունից, հավատա՛ ինձ, ընթերցող։ Ես նախազգուշացնում եմ նրան, ով զգացմունք ունի, բայց և արհամարհում է այս սուրբ պարտականությունները, որ երկար ժամանակ դառն արտասուք կթափի իր սխալի համար և երբեք մխիթարություն չի գտնի։

Իսկ ի՞նչ է անում այդ հարուստ մարդը, ընտանիքի այդքան զբաղված հայրը, որ, ինչպես ինքն է ասում, ստիպված է երեխաներին երեսի վրա թողնել։ Նա վարձում է մի ուրիշին՝ իր վրա դրված պարտականությունները կատարելու համար։ Վաճառակա՛ծ հոգի, կարծում ես, թե փողով կարո՞ղ ես քո զավակի համար մի ուրիշ հայր ճարել։ Երբե՛ք չխաբես ինքդ քեզ։ Դու քո որդուն նույնիսկ ուսուցչի չես տալիս, այլ մի սպասավորի։ Նա շուտով քո երեխային իր նմանը կդարձնի։

Շատ են խոսում լավ դաստիարակի հատկությունների մասին։ Առաջին հատկությունը, որ ես կպահանջեի նրանից, այդ այն է, որ նա ծախու մարդ չլինի։ Կան այնպիսի ազնիվ զգացմունքներ, որոնք չի կարելի կատարել փողի համար՝

առանց այդ գործին անարժան լինելու։ Այդպիսին է դինվորականի և դաստիարակի գործը։ — Ո՞վ, ուրեմն, պիտի կրթի իմ երեխային։ — Արդեն քեզ ասել եմ՝ դու ինքդ։ — Ես անկարող եմ։ — Դու անկարո՞ղ ես... Այդ դեպքում մի բարեկամ որոնիր քեզ համար. ուրիշ միջոց չգիտեմ ես։

Դաստիարա՜կ. օ՜, ի՜նչ վեհ հոգի է նա... Իսկապես, մարդ պատրաստելու համար կա՛մ հայր պետք է լինել, կա՛մ ավելին քան ինքը մարդը։ Ահա այն գործը, որ դուք հանդիստ սրտով հանձնարարում ու վստահում եք վարձկաններին։

Որքան ավելի ենք մտածում այդ մասին, այնքան նորանոր դժվարություններ ենք նկատում։ Պետք է, որ դաստիարակը ինքը դաստիարակված լինի իր սանիկի համար, որ սրա ծառաները պատրաստված լինեն իրենց տիրոջ համար, որ երեխային շրջապատողները իրենք ստացած լինեն այն սպավորությունները, որ հաղորդելու են նրան։ Պետք է, որ դաստիարակությունից դաստիարակություն բարձրանալով՝ մարդը հասնի չգիտես մինչև ու։ Ինչպե՞ս կարող է երեխային դաստիարակել մի մարդ, որն ինքը լավ չի դաստիարակված։

Չի՞ կարելի արդյոք գտնել այդ հազվադյուտ մահկանացուին։ Չգիտեմ։ Ստորացման այս ժամանակներում դժվար է իմանալ, թե մարդկային հոգին դեռևս առաքինության որ աստիճանին կարող է բարձրանալ։ Բայց ենթադրենք, թե այդ հրաշք-մարդը գտնվել է։ Քննարկելով նրա անելիք գործը, մենք կտեսնենք, թե ինչպիսին պետք է լինի նա։ Նախապես կարող եմ ասել, թե որևէ հայր, երբ զգում է լավ դաստիարակի արժիքը, ավելի շուտ կհրաժարվի նրանից, որովհետև նրա համար ավելի դժվար կլինի նման մի դաստիարակ գտնելը, քան թե ինքը այդպիսին դառնալը։ Իսկ եթե ցանկանում է իր համար մի բարեկամ ձեռք բերել, թո՛ղ իր զավակին այնպես դաստիարակի, որ նա ապագայում հոր բարեկամը դառնա։ Այդպիսով նա կազատվի ուրիշ տեղ բարեկամ որոնելուց, և բնությունն արդեն կատարած կլինի գործի կեսը։

Մի մարդ, որի միայն հասարակական դիրքին եմ ծանոթ, ինձ առաջարկեց դաստիարակել իր որդուն։ Իհարկե, դրանով

նա ինձ մեծ պատիվ արեց. բայց փոխանակ գանգատվելու իմ մերժումից, պետք է շնորհակալ լիներ խոհեմությանս համար՝ եթե ընդունեի նրա առաջարկն ու մոլորվեի դաստիարակության իմ մեթոդի մեջ, դա մի անհաջող դաստիարակություն կլիներ, իսկ եթե հաջողություն ունենայի, նրա համար ավելի վատ կլիներ. որդին կհրաժարվեր իր տիտղոսից ու այլևս չէր ցանկանա իշխան լինել։

Ես խորապես գիտակցում եմ, թե որքան վեհ են դաստիարակի պարտականությունները, լիովին զգում եմ իմ անկարողությունը այդպիսի մի գործ ստանձնելու համար, ում կողմից էլ որ այն առաջարկված լինի։ Եվ հենց ինքը՝ բարեկամության շահը ինձ իրավունք է տալիս այն մերժելու։ Ես կարծում եմ, որ այս գիրքը կարդալուց հետո շատ քչերը կփորձեն նման առաջարկ անելու ինձ. իսկ եթե կան այդպիսիք, **նրանց խնդրում եմ զերծ նեղություն չկրել։** Ես մեկ անգամ փորձել եմ այդ մասնագիտությունը և համոզվել, որ դրա համար պիտանի չեմ. և եթե նույնիսկ ընդունակ լինեի, ապա իմ վիճակը կուզատեր ինձ այդ գործից։ Կարծում եմ, որ այս հրապարակային հայտարարությունը պարտավոր էի անել նրանց համար, ովքեր, թվում է թե, ինձ այնքան էլ չեն համակրում ու չեն հավատում իմ որոշումների հիմնավորված և անկեղծ լինելուն։

Անկարող լինելով կատարել ամենաօգտակար գործը, ես կցանկանայի գոնե փորձել ամենից հեշտը. ուրիշ շատերի նման իմ ձեռքը չեմ մեկնում դեպի գործը, այլ դեպի գրիչը, ու փոխանակ կատարելու այն, ինչ պետք է, կաշխատեմ ասել այն, ինչ պետք է կատարել։

Գիտեմ, թե նման ձեռնարկների մեջ հեղինակը, որն իրեն միշտ ազատ է զգում զարգացնելու դաստիարակության այնպիսի սիստեմներ, որոնք ինքը կարող է և չկիրառել կյանքում, ամենայն հեշտությամբ տալիս է այնպիսի գեղեցիկ պատվիրաններ, որոնց անհնար է հետևել, և թե, մանրամասնությունների ու օրինակների բացակայության պատճառով, նույնիսկ այն, ինչը, նրա ասելով, կիրառելի է, չի գործադրվում, եթե նա չի ցույց տալիս այն կիրառելու ձևակերպը։

Այդ իսկ պատճառով ես որոշեցի ինձ համար մի երևակայական սան վերցնել, ներթաղրել նրա տարիքը, առողջական վիճակը, գիտելիքները, մտավոր կարողություններն ու այն բոլոր ընդունակությունները, որոնք անհրաժեշտ են նրա դաստիարակությամբ զբաղվելու համար, և առաջնորդել նրան ծնված րոպեից մինչև այն տարիքը, երբ, արդեն չափահաս դարձած, նա իրենից բացի ուրիշ ոչ մի առաջնորդի կարիք չի ունենա։ Ինձ թվում է, որ այս մեթոդն օգտակար է ինքն իր վրա վստահություն չունեցող հեղինակի համար, որպեսզի նա չմոլորվի ցնորքների մեջ. որովհետև, հենց որ նա հեռանում է սովորական գործելակերպից, բավական է, որ իր մեթոդը փորձի իր սանի վրա, իսկույն նա, կամ նրա փոխարեն ընթերցողը կզգա, թե արդյոք ինքը հետևո՞ւմ է մանկության զարգացմանն ու մարդկային սրտի բնական ընթացքին։

Ահա թե ինչ փորձեցի անել, չնայած ծառացած բոլոր դժվարություններին։ Գրքի ծավալը զուր չմեծացնելու համար, բավականացա այն հիմունքները առաջ քաշելով, որոնց ճշմարտացիությունը ակնհայտ կլինի յուրաքանչյուրին։ Գալով այն կանոններին, որոնց համար հավանաբար փաստեր են անհրաժեշտ, ես դրանք բոլորը փորձարկեցի իմ էմիլի կամ ուրիշ օրինակների վրա և շատ ընդարձակ մանրամասնություններով ցույց տվեցի, թե իմ սկզբունքները որքան կիրառելի են գործնականում։ Գոնե այդպիսին է այն ծրագիրը, որին ես մտադրվել եմ հետևել։ Բո՛ղ ընթերցողը դատի՝ հաջողվե՞լ է ինձ այդ, թե ոչ։

Այդ է պատճառը, որ ես սկզբում էմիլի մասին քիչ խոսեցի, քանի որ իմ առաջին դաստիարակչական սկզբունքները, թևև հակառակ են արդեն հաստատված սկզբունքներին, այնքան բացահայտ են, որ դժվար թե առողջ բանականության տեր մարդը չհամաձայնի նրանց հետ։ Բայց, որքան ես առաջ եմ գնում, իմ սանը, որը համեմատած ձեր սանի հետ՝ բոլորովին այլ սկզբունքներով է առաջնորդվել, այլևս սովորական երեխա չէ. նրան անհրաժեշտ է յուրահատուկ մի ապրելակերպ։ Աստիճանաբար նա ավելի հաճախ հրապարակ կգա, և վերջում ես նրան ոչ մի րոպե աչքաթող չեմ անի այնքան

ժամանակ, մինչև որ նա, ինչ էլ ուզում է անի, իմ օգնության կարիքն ամենևին չի ունենա։

Այստեղ ես չեմ խոսում յավ դաստիարակի հատկությունների մասին. դրանք պատկերացնում եմ և ինձ համարում եմ օժտված բոլոր այդ հատկություններով։ Այս գրքի ընթերցողները կտեսնեն, թե որքան առատաձեռն եմ ես իմ նկատմամբ։

*Ես միայն պիտի շեշտեմ, հակառակ ընդհանուրի կարծիքին, որ երեխայի դաստիարակը պետք է լինի երիտասարդ և նույնիսկ այնքան երիտասարդ, որքան կարող է լինել խելացի մարդը։ Իմ ցանկությունն է, որ նա ինքն էլ երեխա լինի, եթե հնարավոր է, ընկերակիցը իր սանի, և նրա վստահությունը գրավի՝ մասնակցելով նրա բոլոր զվարճություններին։ **Մանկության ու հասունացած տարիքի միջև այնքան քիչ ընդհանուր կապեր կան, որ դժվար թե նրանց միջև ամուր մտերմություն հաստատվի՝ տարիքների այդպիսի տարբերության պայմաններում։** Երեխաները երբեմն փաղաքշում են ծերերին, սակայն նրանց երբեք չեն սիրում։*

Ոմանք կցանկանային, որ դաստիարակը արդեն դաստիարակած լիներ մի երեխայի։ Այդ չափազանցություն է. միևնույն մարդը միայն մեկին կարող է դաստիարակել։ Եթե գործի հաջողության համար երկուսն են հարկավոր, ապա ի՞նչ տվյալներով մի դաստիարակ պիտի կարողանար ստանձնել առաջին երեխայի դաստիարակության գործը։

Առավել մեծ փորձառությամբ անշուշտ գործն ավելի հաջող գլուխ կգար, բայց այլևս ուժ չէր մնա երկրորդը ձեռնարկելու։ Ով մի անգամ բավական լավ է կատարել այդ գործը ու ծանոթ է նրա դժվարություններին, չի կամենա երկրորդ անգամ փորձել այն. իսկ եթե առաջին անգամ լավ չի արել, այդ արդեն վատ դրավական է երկրորդ անգամ կրկնելու համար։

Համաձայն եմ, որ մեծ տարբերություն կա չորս տարի մի երիտասարդի հետևելու և ամբողջ քսանհինգ տարի նրան առաջնորդելու միջև։ Դուք ձեր որդուն հանձնում եք դաստիարակին արդեն բոլորովին կազմավորված հասակում։ Իսկ իմ ցանկությունն է, որ երեխան նրան հանձնեին տակավին ծընվելուց առաջ։ Ձեր մարդը յուրաքանչյուր հինգ տարին մեկ

կարող է նոր սան ունենալ. իմը միայն մեկը կունենա։ Դուք տարբերում եք ուսուցիչը դաստիարակից. ահա՛ մի ուրիշ անհեթեթություն ևս։ Մի՞թե դուք տարբերում եք աշակերտը սանից։ Միայն մեկ գիտություն պետք է սովորեցնել երեխաներին՝ մարդկային պարտականությունների գիտությունը։ Այս գիտությունը միակն է. ինչ էլ որ ասած լինի Քսենոֆոնը պարսիկների դաստիարակության մասին, այս գիտությունը անբաժանելի է։ Ըստ որում ես ավելի շուտ դաստիարակ կանվանեմ այս գիտությունն ավանդողին, քան թե ուսուցիչ, որովհետև այստեղ նրա համար ավելի շատ առաջնորդելու գործ կա, քան ուսուցանելու։ Դաստիարակը ոչ թե պետք է կանոններ տա իր սանին, այլ այնպես անի, որ սանը ինքը դտնի դրանք։

Եթե այդքան մեծ խնամքով և ուշադրությամբ են ընտրում դաստիարակին, ապա նրան էլ պետք է թույլ տալ ընտրել իր սանին, մանավանդ որ խնդիրը օրինակելի սան պատրաստելու մասին է։ Այդ ընտրությունը չի կարող վերաբերել տղայի ո՛չ իմացականությանը և ո՛չ էլ բնավորությանը, քանի որ նրան կարելի է ճանաչել միայն գործն ավարտվելուց հետո, իսկ ես նրան վերցնում եմ ծնվելուց առաջ։ Եթե ընտրել կարողանայի, ապա կվերցնեի միայն սովորական ընդունակություններով տեր երեխայի, ինչպիսին ենթադրում եմ, որ կլինի իմ սանը։ Միայն հասարակ մարդկանց պետք է կրթել. միայն նրանց դաստիարակությունը կարող է իրրև նմուշ ծառայել նրա նմանների դաստիարակության համար։ Մյուսներն էլ կկրթվեն՝ անկախ իրենց ունեցած դաստիարակությունից։

Մարդկանց դաստիարակության գործում նշանակություն ունի նաև այն երկիրը, որտեղ ապրում են նրանք։ Միայն բարեխառն կլիմաներում է, որ մարդիկ կարող են կատարեագործվել։ Ծայրահեղ կլիմաներում աննպաստ հանգամանքներն ակներև են։ Մարդը ծառի նման չի տնկվում մի երկրում՝ մշտնջենապես այնտեղ մնալու համար. և այն մարդը, որ աշխարհի մի ծայրից մեկնում է մյուս ծայրը հասնելու համար, ստիպված է կրկնակի ճանապարհ կտրել, քան այն

մարդը, որ նույն նպատակին հասնելու համար միջին կետից է մեկնում։

Երբ բարեխառն կլիմա ունեցող երկրի բնակիչը հերթականորեն ճանապարհորդում է աշխարհի երկու ծայրամասերը, նրա առավելությունները դարձյալ ակնհայտ են, որովհետև, չնայած նույն փոփոխություններին է ենթարկվում, որոնց ենթարկվում է ծայրամասից ծայրամաս գնացողը, այնուամենայնիվ, նա կիսով չափ պակաս է հեռանում իր բնական կյանքի պայմաններից։ Մի ֆրանսիացի կարող է ապրել Գվիննեայում կամ Լապլանդիայում, բայց մի նեգր չի կարող ապրել նույնիսկ Տորնեայում, ոչ էլ սամոյեդը՝ Բրնեռում։ Եվ ինչպես երևում է, աշխարհի ծայրամասերում ապրողների ուղեղն ավելի քիչ է զարգացած։ Ո՛չ նեգրերը, ո՛չ *լապլանդացիները, եվրոպացիների իմացականությունը չունեն։ Եթե, ասենք, ցանկանում եմ, որ իմ սանը երկրագնդի բնակիչ դառնա, ապա ես նրան ավելի շուտ կընտրեմ բարեխառն կլիմա ունեցող մի գոտուց, օրինակի համար՝ Ֆրանսիայից, քան թե մի ուրիշ տեղից։

Մարդիկ հյուսիսում, ապրելով անբերրի հողի վրա, շատ են սպառում։ Հարավում քիչ են սպառում, ապրելով բերքատու հողի վրա։ Այստեղից էլ մի նոր տարբերություն, որը նրանց մի մասին աշխատասեր է դարձնում, մյուսին՝ մեղկ։ Միևնույն վայրի բնակչության մեջ էլ չքավորների և հարուստների միջև երևում է այս տարբերության պատկերը՝ առաջիններն ապրում են ամուլ հողի վրա, երկրորդները՝ արգավանդ։

Չքավորը դաստիարակության կարիք չունի. այն, որ նա ստանում է իր դրությունից, պարտադրված է. ուրիշ դաստիարակություն ստանալու հնարավորություն չունի։ Ընդհակառակն, այն դաստիարակությունը, որ ստանում է հարուստն իր դրությունից, ամենևին ձեռնտու չէ ո՛չ իրեն և ո՛չ էլ հասարակությանը։ Բայց և այնպես, բնական դաստիարակությունը մարդուն պետք է ընդունակ դարձնի հարմարվելու մարդկային բոլոր պայմաններին։ Ուրեմն, նվազ տրամաբանական է դաստիարակել չքավորին՝ հարուստ դառնալու, քան թե հարուստին՝ աղքատ լինելու, որովհետև երկու դասա-

Հարգի թվական համեմատությամբ ավելի շատ կործանվողներ կան, քան վիր բարձրացողներ։ Ուրեմն, ընտրենք մի հարուստի երեխա. այդպիսով վստահ կլինենք, որ գոնե մի հարդ կավելացնենք աշխարհում, մինչդեռ չքավորը ինքն իրեն հարդ կդառնա։

Ելնելով նույն պատճառներից, ես հակառակ չեմ, որ Էմիլը բարձր դասակարգից լինի։ Այդպիսով մի գոհ ևս խլած կլինենք նախապաշարման ձեռքից։

Էմիլը որբ է։ Կարևոր չէ, թե նա հայր ու մայր ունի։ Հանձն առնելով կատարել նրանց պարտականությունները, ես ժառանգում եմ նրանց բոլոր իրավունքները։ Էմիլը պետք է հարգի իր ծնողներին, բայց պետք է լսի միմիայն ինձ։ Սա իմ առաջին, ավելի ճիշտ՝ միակ պայմանն է։

Պետք է ավելացնեմ նաև մի բան, որն առաջինի շարունակությունն է. մեզ միմյանցից չպետք է բաժանեն առանց մեր համաձայնության։ Այս պայմանը էական նշանակություն ունի, և ես նույնիսկ կցանկանայի, որ սանն ու դաստիարակը իրենց այն աստիճան անբաժան համարեին իրարից, որ նրանց ճակատագրի պայմանները երկուսի համար էլ միշտ ընդհանուր լինեին։ Հենց որ նրանք կանխատեսեն իրենց ապագա անջատումը, զգան, որ մի օր պետք է օտարանան իրարից, այդ րոպեից արդեն նրանք օտարներ են. նրանցից յուրաքանչյուրն իր առանձին ուղին կընտրի, և երկուսի համար էլ, նկատի ունենալով շարունակ այն ժամանակը, երբ այլևս միասին չեն լինելու, համակեցությունը կլինի ակամա։ Աշակերտը ուսուցչին կնայի որպես մանկության ցուցանակ ու պատուհաս. ուսուցչի համար աշակերտը կլինի մի ծանր բեռ, որից կուզենա ամեն գնով ազատվել։ Երկուսն էլ միաժամանակ կերազեն այն րոպեն, երբ պետք է ազատվեն իրարից։ Եվ որովհետև նրանց միջև երբեք իրական կապ չի եղել, ապա մեկն ավելի քիչ զգոնություն կցուցաբերի, մյուսը՝ ավելի քիչ հնազանդություն։

Եվ ընդհակառակն, երբ նրանք տեսնեն, որ իրենց օրերը միշտ միասին են անցկացնելու, անհրաժեշտորեն պետք է իրար սիրեն և կսիրեն։ Աշակերտը երբեք չի ամաչի մանուկ հասակում հետևելու նրան, ում չափահաս տարիքում ունենալու

է որպես բարեկամ։ Դաստիարակը շահագրգռված է այն խրնամքով ու հոգատարությամբ, որոնց պտուղները պիտի քաղի հետագայում, եվ այն բոլոր արժանիքները, որոնցով օժտում է իր սանին, մի դրամագլուխ է, որ նա կուտակում է հօգուտ իր ծերության օրերի։

Նախօրոք կնքված այս դաշինքը ենթադրում է բարեհաջող ծննդաբերություն, բարեկազմ, առույգ ու առողջ երեխա։ Հայրը չի կարող և չպետք է խորություն դնի իր ընտանիքում, որ աստված տվել է նրան. բոլոր զավակներն էլ հավասարապես նրանն են. նրանց բոլորի նկատմամբ պարտավոր է ցույց տալ նույն խնամքն ու գուրգուրանքը։ Անկախ նրանից՝ նրանք խեղանդամ են, թե ոչ, թուլակազմ են, թե ամրակազմ, միևնույնն է, ամեն մեկը մի ավանդ է, որի համար հաշիվ պետք է տա նրան, ումից ստացել է։ Ամուսնությունն էլ մի պայմանագիր է՝ կնքված բնության հետ, որքան և երկու ամուսինների միջև։

Բայց երբ որևէ մեկն ստանձնում է մի այնպիսի պարտավորություն, որ բնությունը չի դրել նրա վրա, ապա այդ մարդը առաջին հերթին պետք է ապահովի այն կատարելու անհրաժեշտ միջոցները, այլապես նա պատասխանատու կլինի նույնիսկ այն բանի համար, որ ինքն անկարող է եղել կատարել։ Ով իր վրա է վերցնում ցավագար ու վատառողջ երեխայի դաստիարակությունը, նա դաստիարակի պաշտոնը փոխարինում է հիվանդապահի պաշտոնով, այդպիսով, նա մի անօգուտ կյանք խնամելու վրա զուր կկորցներ այն ժամանակը, որ պիտի հատկացներ դրա արժեքը բարձրացնելուն. այսպիսով, նա մի օր կարժանանա վշտահար մի մոր մեղադրանքին, որ պատճառ է դարձել նրա որդու մահվան, այնինչ ինքը այնքան երկար ժամանակ պահպանել է այդ որդուն մոր համար։

Ես ոչ մի դեպքում չէի ստանձնի հիվանդոտ ու հյուծված երեխայի դաստիարակության գործը, եթե նույնիսկ նա ութսուն տարի ապրեր։ Ինձ պետք չէ այնպիսի սանը, որն անպետք է թե՛ իրեն և թե՛ ուրիշների համար, որը միմիայն իր կյանքի պահպանությամբ է զբաղված, և որի մարմինը արգելակում է հոգու դաստիարակությունը։ Ապարդյուն հոգ տանելով նրա

դաստիարակությանը, ես ուրիշ բան չէի անի, բայց եթե կըրկնապատկել հասարակության կորուստը, մեկի փոխարեն երկու մարդ խլելով նրանից: Եթե մեկ ուրիշը իմ փոխարեն իր վրա վերցնի այս ցավագարի հոգատարությունը, ես համաձայն կլինեմ ու կգովեմ նրա ողորմածությունը: Բայց դրան ես ընդունակ չեմ. ես երբեք չեմ կարող ապրել սովորեցնել նրան, ով մտածում է միայն մահից խուսափելու մասին:

Մարմինը պետք է այնքան ուժեղ լինի, որ կարողանա հնազանդվել հոգուն: Լավ ծառան պարտավոր է ուժեղ լինել: Գիտեմ, որ անժուժկալությունը գրգռում է կրքերը և ի վերջո հյուծում մարմինը: Խստակեցությունն ու ծոմապահությունն էլ շատ անգամ նույն հետևանքին են հասցնում, թեպետև հակադիր պատճառներով: Ինչքան մարմինը տկար է, այնքան ավելի է նա հրամայում. ինչքան ուժեղ է, այնքան ավելի է հպատակվում: Սեռական բոլոր կրքերը լույն են դնում քընքուշ մարմինների մեջ և այնքան ավելի են գրգռում, ինչքան ավելի քիչ են բավարարվում:

Տկար մարմինը թուլացնում է հոգին: Դա է տիրապետող դարձնում բժշկությունը, որն ինքնին ավելի վտանգավոր է մարդկանց համար, քան այն բոլոր հիվանդությունները, որոնք իբր նա բուժում է: Անկեղծ ասած, ինքս էլ չգիտեմ, թե ինչ հիվանդություններ են բուժում բժիշկները. բայց գիտեմ, որ նրանք շատ աղետալի հիվանդությունների պատճառ են դառնում՝ երկչոտություն, փոքրոգություն, դյուրահավատություն, մահվան սարսափ: Եթե բժիշկները ապաքինում են մարմինը, ապա սպանում են արիությունը: Մեզ ի՞նչ օգուտ, որ նրանք դիակներ են ոտքի կանգնեցնում: Մեզ մարդիկ են հարկավոր, բայց նրանց ձեռքից մարդիկ չեն դուրս գալիս:

Բժշկությունը մեզ մոտ նորաձևություն է: Այդպես էլ պետք է լինի: Դա մի զբոսանք է անգործ ու դատարկապորտ մարդկանց համար, որոնք չիմանալով ինչպես անցկացնել ժամանակը, ինքնապահպանմամբ են զբաղվում: Եթե անմահ ծրնված լինելու դժբախտությունն ունենային, նրանք ամենաթըշվառ էակները կլինեին աշխարհում. կյանքը ոչ մի արժեք չէր ունենա նրանց համար, եթե այն կորցնելու երկյուղը չունենային: Այդ մարդկանց այնպիսի բժիշկներ են հարկավոր, որոնք

Նրանց շողոքորթելու համար ամեն օր մահով են սպառնում և ամեն օր նրանց պատճառում են միակ հրճվանքը, որի նկատմամբ նրանք հատկապես զգայուն են՝ դեռևս մահացած չինելու հրճվանքը։

Այստեղ բնավ չեմ ցանկանում ծանրանալ բժշկության ունայնության վրա։ Իմ նպատակն է միայն հարցին մոտենալ բարոյական տեսակետից։ Չեմ կարող, սակայն, չնկատել, որ մարդիկ նրա կիրառման մասին նույն սուիեստություններն են անում, ինչ որ անում են ճշմարտությունը որոնելու մասին։ Նրանք միշտ ենթադրում են, որ երբ դարմանում են հիվանդին, բուժում են նրան. երբ որոնում են ճշմարտությունը, գտնում են այն։ Այդ մարդիկ չեն մտահոգվում այն մասին, որ հարկ է զգուշակշռել բժշկի մի հաջող բուժման առավելությունը մահվան հետ այն հարյուրավոր հիվանդների, որոնց նա սպանել է, և բացահայտված ճշմարտության օգտակարությունը՝ սխալների հետևանքով առաջացած վնասների հետ։ Այն գիտությունը, որ սովորեցնում է, և այն բժշկությունը, որ բուժում է, անշուշտ շատ լավ են. բայց այն գիտությունը, որ խաբում է, և այն բժշկությունը, որ սպանում է, վատ են։ Սովորենք, ուրեմն, դրանք տարբերել իրարից. այս է խնդրի էությունը։ Եթե մեզ հնարավոր լիներ անգիտանալ ճշմարտությունը, երբեք խաբեության զոհ չէինք գնա. եթե կարողանայինք հրաժարվել բնությանը հակասող բժշկությունից, երբեք չէինք մեռնի բժշկի ձեռքով։ Այս երկու դեպքում էլ ձեռնպահ մնալը խելացի վարմունք է. անտարակույս մենք շատ կշահեինք, եթե դրան հետևեինք։ Ուրեմն, ես չեմ ժխտում, որ բժշկությունը օգտակար է որոշ մարդկանց համար, բայց ասում եմ, որ նա աղետալի է մարդկային ցեղի համար։

Գուցե ինձ առարկեն, ինչպես այդ անում են հաճախ, թե սխալների մեղքը բժիշկներինն է, իսկ բժշկությունն ըստինքյան անսխալական է։ Շատ բարի. բայց այդ դեպքում բժշկությունը թո՛ղ գա առանց բժշկի. քանի դեռ նրանք միասին են հանդես գալիս, ապա պիտի հարյուրապատիկ ավելի վա-

խենալ արվեստագետի սխալներից, քան թե հույս դնել արվեստի օգնության վրա։

Այս կեղծ արվեստը, որ ստեղծված է ավելի շուտ հոգեկան, քան թե մարմնական հիվանդությունների համար, նույնքան անօգուտ է առաջինների համար, որքան և՝ երկրորդների։ Նա ոչ այնքան մեր հիվանդություններն է բուժում, որքան մեզ սարսափ է ներշնչում նրանց նկատմամբ. նա ոչ այնքան մահն է հեռացնում մեզնից, որքան նրա կանխազգացումն է տալիս մեզ. նա մաշում է կյանքը, փոխանակ այն երկարաձգելու։ Եթե նույնիսկ նա երկարացներ մեր կյանքը, դա ավելի շուտ կլիներ ի վնաս մարդկային ցեղի, որովհետև նրա կողմից պարտադրված խնամքը մեզ կհեռացներ հասարակությունից, իսկ նրա ներշնչած սարսափները՝ մեր պարտականություններից։ Վտանգների հանդեպ մեր վախը գալիս է հենց դրանց գիտակցումից։ Այն մարդը, որ իրեն անխոցելի է համարում, ոչնչից չի վախենում։ Աքիլլեսին զինելով վտանգների դեմ, բանաստեղծը խլում է նրանից խիզախության արժանիքը։ Նրա փոխարեն մի ուրիշը կարող է լինել նույնարժեք Աքիլլես։

Եթե դուք ցանկանում եք իսկապես քաջակորով մարդիկ գտնել, որոնեցե՛ք նրանց այնտեղ, որտեղ բժիշկներ չկան, որտեղ մարդիկ գաղափար չունեն հիվանդությունների հետևանքների մասին և որտեղ բնավ չեն մտածում մահվան մասին։ Բնությունից մարդն օժտված է ցավերին արիաբար դիմանալու կարողությամբ և մեռնում է հանգիստ։ Միայն բժիշկներն են իրենց դեղատոմսերով, փիլիսոփաներն իրենց պատվիրաններով ու քահանաներն իրենց քարոզներով նսեմացնում մարդու սիրտն ու նրան մոռացնել տալիս մեռնելու քաջությունը։

Ինձ պետք է այնպիսի մի սան, որն այս մարդկանց կարիքը չունենա, այլապես կհրաժարվեմ նրանից։ Ես չեմ ցանկանում, որ ուրիշները փչացնեն իմ գործը։ Ես կա՛մ ինքս մենակ կդաստիարակեմ նրան, կա՛մ բոլորովին ձեռնամուխ չեմ լինի գործին։ Իմաստուն Լոքը, որն իր կյանքի մի

մասը նվիրեց բժշկության ուսումնասիրությանը, խստորեն արգելում էր որևէ դեղ տալ երեխաներին՝ ո՛չ որպես նախազգուշական միջոց, ո՛չ էլ թեթև հիվանդությունների դեպքում։ Ես ավելի հեռուն եմ գնում ու հայտարարում, որ ինքս ինձ համար ոչ մի բժշկի չդիմելով, իմ էմիլի համար էլ բժիշկ չեմ հրավիրի, բացի այն դեպքից, երբ նրա կյանքը ակնհայտ վտանգի տակ կլինի, որովհետև նա այդ դեպքում նրան մեռցնելուց ավելի վատ բան չի կարող անել։

Ես լավ գիտեմ, որ բժիշկը օգուտ կքաղի այս ուշացումից։ Եթե երեխան մեռնի, կպատճառաբանի, որ իրեն ուշ են կանչել, իսկ եթե առողջանա, ապա ուրեմն ինքն է փրկել նրան։ Թո՛ղ այդպես լինի, թո՛ղ բժիշկը հաղթանակի, բայց թո՛ղ նրան հրավիրեն միայն ծայրահեղ դեպքում։

Ջիմանալով բուժվելու կերպը, թո՛ղ երեխան իմանա տանել հիվանդությունը. այս արվեստը փոխարինում է առաջինին և հաճախ՝ ավելի հաջող. բնության արվեստն է այդ։ Երբ կենդանին հիվանդանում է, նա լռությամբ տանում է ցավը և հանգիստ սպասում. դեռևս ոչ ոք չի նկատել, որ թույլ անասուններ ավելի շատ լինեն, քան թույլ մարդիկ։ Ինչքա՞ն մարդկանց են սպանել անհամբերությունը, երկյուղը, մտահոգությունն ու, մանավանդ, դեղորայքը։ Հիվանդությունը գուցե կխնայեր այդ մարդկանց, և ժամանակն ինքը նրանց կբուժեր։ Ինձ պիտի առարկեն, որ անասունները բնությանն ավելի մոտիկ կյանք վարելով, մեզնից նվազ ենթակա են հիվանդություններին։ Դե՛, ես էլ հենց այդպիսի կյանք եմ ուզում տալ իմ սանին։ Այն ժամանակ նա կօգտվի այդ առավելություններից։

Բժշկության միակ օգտակար գործը առողջապահությունն է, թեպետև առողջապահությունը ավելի շուտ առաքինություն է, քան թե գիտություն։ Ժուժկալությունն ու աշխատանքը մարդու միակ ճշմարիտ բժիշկներն են։ Աշխատանքը սրում է մարդու ախորժակը, իսկ ժուժկալությունը արգելում է ի չարը գործ դնել այն։

Որպեսզի գիտենանք, թե ինչպիսի ապրելակերպն է օգտակար կյանքի և առողջության համար, բավական է ծանո-

թանալ, թե ինչ ապրելակերպի են հետևում այն ժողովուրդները, որոնք ամենից ավելի ամրակազմ են ու երկարակյաց։ Սթե ընդհանուր դիտողություններով չի կարելի հաստատել, որ բժշկությունը մարդուն ավելի կայուն առողջություն և ավելի երկար կյանք է տալիս, հենց այն պատճառով, որ նա որևէ օգուտ չի բերում, բժշկությունը վնասակար է, քանի որ բոլորովին աննպատակ կերպով զբաղեցնում է ժամանակը, մարդկանց և իրերը։ Մեր կյանքից պետք է հանել, որպես կորած, այն ժամանակամիջոցը, որն զբաղեցնում ենք այդ նույն կյանքը պահպանելու համար. իսկ եթե այդ ժամանակը օգտագործվել է մեզ տանջելու համար, ապա այն ավելի վատ է, քան ոչինչ չանելը։ Եվ որպեսզի հաշիվը ճիշտ լինի, պետք է նույնքան էլ հանենք մեզ մնացած ժամանակից։ Մի մարդ, որ տասը տարի ապրում է առանց բժշկի, շատ ավելի է ապրում թե՛ իրեն և թե՛ ուրիշների համար, քան թե ա՛յն մարդը, որը երեսուն տարի ապրում է բժիշկների զոհը լինելով։ Ունենալով թե՛ մեկ և թե՛ մյուս փորձը, ես ուրիշներից ավելի իրավունք ունեմ եզրակացություն անելու։

Ահա թե ինչու եմ ցանկանում առողջ և ուժեղ սան ունենալ, ահա թե որոնք են նրան այդ վիճակում պահելու իմ սկզբունքները։ Ես երկար կանգ չեմ առնի ապացուցելու խառնրվածքի և առողջության ամրապնդման գործում ձեռքի աշխատանքի ու մարմնամարզության օգտակարության վրա։ Ոչ ոք այդ չի հերքում. ամենից ավելի երկար ապրողները գրեթե միշտ նրանք են, ովքեր ավելի շատ են զբաղվել մարմնամարզությամբ և ավելի շատ են դիմացել հոգնության ու աշխատանքի [1]։ Ես հանգամանորեն կանգ չեմ առնի նաև այն

---

[1] *Ահա մի օրինակ՝ քաղված անգլիական թերթերից, որը ցանկանում եմ այստեղ մեջ բերել, որովհետև իմ նյութի վերաբերյալ շատ դիտողություններ է առաջացնում.*

«Մի ոմն Պատրիկ Օնեյլ, ծնված 1647 թվականին, յոթերորդ անգամ ամուսնանում է 1760 թվականին։ Կարլոս II-ի թագավորության տասնյոթերորդ տարում նա ծառայում էր բանակի դրագունդի գնդում և այլ զորաբաժիններում մինչև 1740 թվականը, երբ նա թողեց ծառայությունը։ Նա մասնակցել է Գիլոմ թագավորի և Մալբորու դուքսի բոլոր պատերազմներին։ Այդ մարդը ոչ մի ուրիշ խմիչք չէր գործածում, բացի սովորական

միջոցառումների մանրամասնությունների վրա, որոնք պետք է ձեռնարկեմ այս միակ նպատակի համար։ Կարելի է նկատել, որ դրանք այնքան անհրաժեշտորեն են մտնում իմ գործնական աշխատանքների մեջ, որ բավական է նրանց ոգին ըմբռնել, որպեսզի ուրիշ բացատրության կարիք չզգացվի։

Կյանքի հետ սկսվում են պահանջմունքները։ Նորածին մանկանը դայակ է պետք։ Եթե մայրը համաձայն է կատարելու իր մայրական պարտականությունը, ավելի լավ. նրան պիտի տալ գրավոր հրահանգներ, որովհետև այս առավելությունն ունի իր հակադիր կողմը և դաստիարակին մի քիչ ավելի հեռու կպահի իր սանից։ Բայց կարելի է հավատալ, որ երեխայի շահը և հարգանքը դեպի այն մարդը, որին մայրը ուզում է այդքան քանկարժեք մի ավանդ վստահել, նրան ավելի ուշադիր կդարձնի դեպի ուսուցչի կարծիքները. և ինչ որ ցանկանա անել, անկասկած կանի շատ ավելի լավ, քան մի ուրիշը։ Իսկ եթե անհրաժեշտ է մի օտար դայակ, ամենից առաջ պետք է խիստ ընտրություն կատարել։

Հարուստ մարդկանց դժբախտություններից մեկն էլ այն է, որ նրանք ամեն ինչում խաբվում են։ Զարմանալի չէ, որ նրանք մարդկանց մասին վատ կարծիք ունեն։ Հարստությունն է, որ փչացնում է նրանց, և որպես արդար հատուցում, նրանք առաջինն են զգում իրենց ծանոթ այդ միակ գործիքի թևրությունը։ Նրանց մոտ ամեն ինչ վատ է կատարվում, բացառությամբ այն բանի, որ անձամբ իրենք են կատարում, իսկ իրենք համարյա ոչինչ չեն անում։ Երբ հարկավոր է ծծմայր գտնել, մանկաբարձին են հանձնարարում որոնել։ Ի՞նչ է լինում հետևանքը։ Այն, որ լավագույն ծծմայր համարվում է նա, ով մանկաբարձին ամենից շատ է վճարել։

գարեջրից. ամբողջ կյանքում բանջարեղենով էր սնվում, բացառիկ դեպքերում էր միս ուտում, այն էլ, երբ ճաշկերույթ էր տալիս ի պատիվ իր ընտանիքիւ նա սովորություն ուներ պառկել ու վեր կենալ արևի մայր մտնելու և ծագելու հետ միասին, բացի այն դեպքերից, երբ պարտականությունները նրան չէին թույլատրում։ Այժմ նա հարյուր տասներեք տարեկան է, լավ լսում է, առողջ է և քայլում է առանց ձեռնափայտի։ Ջնայած խոր ծերությանը, ոչ մի բոպե անգործ չի մնում, ամեն ճիրակի եկեղեցի է գնում՝ շրջապատված իր որդիներով, թոռներով ու ծոռներով։

Այդ պատճառով էլ էմիլի ծծմոր համար ոչ մի մանկաբարձի խորհրդին չեմ դիմելու. ինքս կզբաղվեմ նրա ընտրությամբ։ Դուցե այդ գործի առթիվ ես չկարողանամ տրամաբանել վիրաբույժի պերճախոսությամբ, բայց, անկասկած, ավելի անկեղծ կլինեմ, ու իմ եռանդն ինձ ավելի քիչ կխաբի, քան թե նրա ընչասիրությունը։

Այս ընտրությունն այնքան էլ մեծ գաղտնիք չունի, նրա կանոնները հայտնի են. բայց ինձ թվում է, թե որոշ ուշադրություն պետք է դարձնել կաթի խտության, ինչպես նաև նրա որակի վրա։ Նոր կաթը բոլորովին ջրալի է, համարյա թե լուծիչ հատկություն ունի և լուծում է նորածին երեխայի աղիքներում կուտակված կղկղանքի մնացորդները։ Աստիճանաբար կաթն ավելի է խտանում ու ավելի ուժեղ սնունդ է տալիս երեխային, որ, հետզհետե զորանալով, կկարողանա մարսել այդ կաթը։ Անշուշտ զուր չէ, որ բնությունը փոխում է բոլոր տեսակի էգերի կաթի խտությունը ծծկերի հասակի համեմատ։

Ուրեմն, նորածին մանկանը պետք է տալ մի ծծմայր, որ նոր է երեխա ծնել։ Այդպիսին գտնելը դժվար է, գիտեմ. բայց հենց որ մարդ դուրս է գալիս բնության կանոններից, ամեն ինչ դժվար է դառնում, երբ ցանկանում է լավը կատարել։ Ամենից հեշտ բանը վատ գործ կատարելն է. ահա թե ինչու մարդիկ միշտ այդ են ընտրում։

Անհրաժեշտ է ունենալ և՛ սրտով, և՛ մարմնով առողջ ծծմայր. հույզերի, ինչպես նաև հյութերի աննորմալությունը կարող է փչացնել կաթը։ Բացի այդ, երբ մենք ուշադրություն ենք դարձնում լոկ ֆիզիկական կողմին, խնդրի միայն կեսն ենք նկատի ունենում։ Կաթը կարող է լավ լինել, ծծմայրը՝ վատ։ Լավ բնավորությունը նույնքան կարևոր է, որքան լավ խառնվածքը։ Եթե վերցնենք մի արատավոր կին, չեմ ասում, թե ծծկերը կյուրացնի նրա մոլությունները, բայց դրանցից կտուժի։ Չէ՞ որ, բացի կաթից, ծծմորից պահանջվում է նաև խնամք, որի համար անհրաժեշտ են եռանդ, համբերություն, հեզություն, քնքշություն, մաքրություն։ Եթե նա որկրամոլ է և անզուսպ, նրա կաթը շատ շուտ կփչանա. իսկ եթե նա անհոգ է ու դյուրագրգիռ, ի՞նչ կդառնա նրա ձեռքին մի խեղճ

երեխա, որը չի կարողանում ո՛չ պաշտպանվել, ո՛չ բողոքել։ Ջարից, ինչ ուզում է լինի, երբեք լավ մարդ դուրս չի գա։

Ծծմոր ընտրության նշանակությունը մեծանում է նրանով, որ ծծկերը նրանից բացի ուրիշ խնամակալուհի չպետք է ունենա, ինչպես և չպետք է ունենա այլ ուսուցիչ, բացի իր դաստիարակից։ Այդ սովորությունը մեր նախնիներից է մնացել, որոնք, թեև մեզնից ավելի քիչ էին տրամաբանում, բայց ավելի իմաստուն էին։ Անցյալում ծծմայրերը, իրենց սեռակիցներին՝ աղջիկներին, կուրծք տալուց հետո, այլևս չէին բաժանվում նրանցից։ Հենց այդ է պատճառը, որ նախնիների թատերական երկերում կանանց մտերիմն ու խորհրդատուն մեծ մասամբ դայակներն են։ Անկարելի է, որ երեխան հաչորդաբար ձեռքից-ձեռք անցնելով լավ դաստիարակվի։ Ամեն մի դայակի փոփոխության դեպքում երեխան ներքուստ համեմատություններ է անում, որի հետևանքով նվազում է նրա հարգանքը դեպի իր խնամակալները և, հետևապես, վերջինների հեղինակությունը նրա վրա։ Հենց որ երեխան սկսեց մտածել, թե կան չափահաս մարդիկ, որոնք ավելի խելոք չեն, քան մանուկները, չափահասների ամբողջ հեղինակությունը կկորչի, և դաստիարակությունը կմատնվի անհաջողության։ Երեխան, բացի հորից ու մորից, իսկ նրանց բացակայության դեպքում, բացի դայակից ու դաստիարակից, ուրիշ խնամակալ չպետք է ճանաչի։ Վերջին երկուսից նույնիսկ մեկնումեկը ավելորդ է։ Բայց այս բաժանումն անխուսափելի է, և դրանից խուսափելու միակ միջոցն այն է, որ երեխային դաստիարակող երկու սեռի անձերի միջև ստեղծվի այնպիսի սերտ համաձայնություն, որ այդ երկուսը երեխայի համար մեկ անձնավորություն լինեն։

Դայակը պետք է մի քիչ ավելի հանգստավետ պայմաններում ապրի, ավելի աննդարար կերակուրներ ուտի, առանց, սակայն, իր ապրելակերպը լրիվ փոխելու, որովհետև արագ և ամբողջական փոփոխությունը, նույնիսկ վատից դեպի լավը, միշտ էլ վտանգավոր է առողջության համար. և քանի որ սովորական ռեժիմը նրան առողջ ու ամրակազմ է պահել, ի՞նչ կարիք կա այն փոփոխության ենթարկել։

Գյուղացի կանայք ավելի քիչ միս ու ավելի շատ բանջա-

ըեղեն են ուտում, քան քաղաքի կանայք։ Այս բուսական կերակուրը, ըստ երևույթին, նրանց ու նրանց զավակներին ավելի օգտակար է, քան վնասակար։ Երբ նրանք դառնում են քաղաքի ծծկերի դայակ, նրանց տալիս են մսով ապուր, համոզված լինելով, թե մսաջուրը և ապուրը նրանց լավագույն սնունդ ու առատ կաթ կտան։ Ես բոլորովին այդ կարծիքին չեմ ու փորձով գիտեմ, որ այդպես սնված երեխաները ավելի են ենթակա փորլուծության ու այլ ախտերի, քան մյուսները։

Այստեղ զարմանալու ոչինչ չկա, որովհետև կենդանական նյութի մեջ վխտում են ճիճուները, մինչդեռ բուսական նյութն այդպիսին չէ։ Կաթը, թեև պատրաստվում է կենդանու մարմնի մեջ, բուսական նյութ է, ինչպես ցույց է տալիս երա տարրալուծումը [1]։

Խոտակեր էգի կաթը ավելի քաղցր է և ավելի առողջարար, քան մսակեր էգինը։ Կազմված լինելով իր բաղադրությամբ համանման նյութերից, կաթը իր բնական հատկությունը ավելի լավ է պահպանում ու ավելի քիչ է ենթարկվում քայքայման։ Ինչ վերաբերում է քանակին, ապա բոլորին հայտնի է, որ ալրային կերակուրներն ավելի շատ արյուն են արտադրում, քան միսը, հետևապես և ավելի շատ կաթ կտան։ Դժվարանում եմ հավատալ, որ այն երեխան, որին ժամանակից շուտ չեն կտրում կաթից, կամ որին, կաթից կտրելուց հետո, միայն բուսական սննդով են կերակրում, և որի դայակը նույնպես միայն բուսական նյութերով է կերակրվում, կարող է ճիճուներ ունենալ։

Գուցե բուսական սննդի տված կաթը ավելի շուտ է թթվում, սակայն, իմ կարծիքով, թթված կաթը ամենևին էլ վատ սնունդ չէ. մի ամբողջ շարք ժողովուրդներ կաթը գորի են ածում միայն թթված վիճակում և իրենց շատ լավ են զգում։ Թթվուններ ներծծող նյութերի ամբողջ սարքավորումը, ինձ թվում է, զուտ շռայլատանություն է։ Օրգա-

---

[1] *Կանայք ուտում են հաց, կանաչեղեն, կաթնեղեն. շների ու կատուների էգերն էլ ուտում են դրանցից։ Էգ գայլերն անգամ արածում են։ Ահա բուսական նյութ նրանց կաթի համար։ Մնում է ուսումնասիրել այն տեսակների կաթը, որոնք բացառապես մսով են կերակրվում։ Ես կասկածում եմ, թե կան այդպիսիները։*

նիզմներ կան, որոնք կաթ ամենևին չեն վերցնում։ Նման դեպքում ոչ մի մարսեցուցիչ չի կարող այն տանելի դարձնել. մյուսները կաթը մարսում են առանց նման միջոցների դիմելու։ Ընդհանրապես մարդիկ խուսափում են մակարդված կաթից. դա անմտություն է, որովհետև հայտնի է, որ կաթը միշտ էլ մակարդվում է ստամոքսում։ Այս ձևով է, որ կաթը բավականին ուժեղ սնունդ է դառնում երեխաների ու կենդանիների ձագերի համար. եթե չմակարդվեր, ստամոքսից կանցներ՝ առանց սնունդ տալու[1]։ Ջուր տեղն են կաթից հազար ձևի խառնուրդ պատրաստում, հազար տեսակ մարսեցուցիչներ գործածում. ով կաթ է ուտում, նա պանիր է մարսում. այստեղ ոչ մի բացառություն գոյություն չունի։ Ստամոքսն այնքան լավ է հարմարեցված կաթը մակարդելուն, որ հորթի ստամոքսից են պատրաստում պանրի մակարդը։

Այսպիսով, ուրեմն, փոխանակ դայակի սովորական սնունդը փոխելու, բավական է նրան տալ նույն տեսակի, բայց ավելի առատ ու լավորակ սնունդ։ Պասուց կերակուրները իրենց սննդի բնույթով չէ, որ գրգիռ են առաջացնում, համեմունքն է միայն հակառողջապահական դարձնում դրանք։ Բարեփոխեցե՛ք ձեր խոհանոցի կանոնները, հրաժարվեցե՛ք սոուսներից ու տապակած ուտելիքներից. յուղը, աղն ու կաթնեղենը երբեք մի՛ դրեք կրակին. ջրի մեջ եփված ձեր բանջարեղենը համեմեցե՛ք՝ տաք-տաք սեղան բերելուց հետո միայն։ Այդպիսով, պասուց կերակուրները, փոխանակ դայակին գրգիռ պատճառելու, նրան մեծ քանակությամբ ու բարձր որակի[2] կաթ կտան։ Մի՞թե կարող է կենդանական սնունդը լավագույն լինել ստնտուի համար, այն դեպքում, երբ բուսականը ճանաչված է որպես ամենալավ ուժիմը երե-

---

[1] Թեև մեզ սնող հյութերը հեղուկ են, բայց նրանք հաստատուն սննդով պետք է արտահայտվեն։ Աշխատող մարդը, եթե միայն մսաջրով կերակրվեր, շատ շուտ կհյուծվեր։ Նա ինքն իրեն շատ ավելի լավ կպահի կաթով, որովհետև կաթը մերվում է։

[2] Նրանք, ովքեր ուզում են ավելի երկար վիճել պյութագորյան ռեժիմի առավելությունների ու թերությունների շուրջը, կարող են կարդալ բժիշկ Գոլիի ու նրա հակառակորդ Բիանչիի գործերը այս կարևոր նյութի մասին։

խայի համար։ Այստեղ հակասությունը բացահայտ է։

Երեխայի կյանքի առաջին տարիների ընթացքում է, որ օդն առանձնապես ազդում է նրա կազմվածքի վրա։ Թարմ ու փափուկ մաշկի ծակոտիների միջով օդը մտնում է մարմնի մեջ, ուժեղ կերպով օժանդակում է այդ կազմավորվող մարմիններին ու այնպիսի հետքեր է թողնում, որոնք երբեք չեն ջնջվի։ Պարզ է, ուրեմն. ես համամիտ չեմ, որ գեղջկուհուն դուրս բերեն գյուղից, նրան փակեն մի սենյակում ու երեխային տանը մեծացնեն։ Ես կնախընտրեմ, որ երեխան շնչի գյուղի առողջ, քան թե քաղաքի ապականված օդը։ Երեխան կհարմարվի իր նոր մոր դրությանը, կապրի նրա գյուղական տան մեջ, և իր դաստիարակը ևս կհետևի նրան այնտեղ։ Ընթերցողն անշուշտ չի մոռանա, որ այդ դաստիարակը վարձու մարդ չէ, այլ երեխայի հոր բարեկամը։ Իսկ երբ այդպիսի բարեկամ չի գտնվում, երբ այդ տեղափոխությունը դժվարությունների հետ է կապված, երբ տրված խորհուրդներից և ոչ մեկը գործադրելի չէ, ի՞նչ պետք է անել, կհարցնեն ինձ... Ես արդեն այդ ասել եմ. կանեք այն, ինչ որ անում եք. դրա համար խորհրդի կարիք չկա։

Մարդիկ չեն ստեղծվել միմյանց վրա խռնվելու, ինչպես մրջնանոցում, այլ ցրվելու երկրի վրա, մշակելով նրա հողը։ Ինչքան նրանք խմբվում են, այնքան ավելի են ապականվում։ Մարմնական խեղանդամությունները, ինչպես նաև հոգեկան արատները խիտ բնակեցության հետևանք են։ Բոլոր կենդանիներից մարդն ամենից քիչ է ընդունակ խմբովին ապրելու։ Ոչխարների նման խռնված մարդիկ ամենակարճ ժամանակաընթացքում իսպառ կկոտորվեն։ Մարդու շունչը մահացու է իր նմանների համար. սա նույնքան ճշմարիտ է իր իսկական, որքան և փոխաբերական իմաստով։

Քաղաքները մարդկային ցեղի անդունդն են։ Մի քանի սերունդ անցնելուց հետո ցեղերը ոչնչանում են կամ այլասերվում. պետք է նրանց վերանորոգել, ու միշտ էլ գյուղն է, որ օժանդակում է այս վերանորոգմանը։ Ուղարկեցե՛ք, ուրեմն, ձեր երեխաներին վերանորոգվելու, այսպես ասած, իրենք իրենց, ու բաց դաշտերում վերստանալու այն կայտառությունը, որ կորցնում են գերբնակված քաղաքների վատ-

առողջ օդում։ Գյուղում գտնվող հղի կանայք շտապում են ծննդաբերության համար քաղաք վերադառնալ. այնինչ բոլորովին հակառակը պետք է աներ, մանավանդ նրանք, ովքեր ուզում են իրենք սնել իրենց երեխաներին։ Նրանք դրա համար ավելի քիչ կզղջային, քան կարծում են. և, մարդկային սեռի համար ավելի բնական միջավայրում, բնության պարտավորությունների հետ կապված հաճույքները շուտով նրանց մոռացնել կտային ճաշակը այն հաճույքների, որոնք դրանց հետ չեն առնչվում։

Սկզբում, ծննդաբերությունից անմիջապես հետո, երեխային պետք է լվանալ փոքր-ինչ գոլ ջրով, որի մեջ սովորաբար գինի են խառնում։ Իմ կարծիքով, գինի ավելացնելու այդ սովորությունը այնքան էլ անհրաժեշտ չէ։ Քանի որ բնությունը ոչ մի խմորված նյութ չի արտադրում, ուրեմն հավասարապես հավասարապես չէ, որ արհեստական որևէ հեղուկի գործածությունը անհրաժեշտ լինի բնության ստեղծած արարածների համար։

Միևնույն նկատառումով գոլ ջրի գործածությունը նույնպես անհրաժեշտ չէ. և իրոք, բազմաթիվ ժողովուրդներ իրենց նորածիններին լողացնում են ուղղակի գետի կամ ծովի ջրի մեջ. բայց մեր երեխաները, որոնք մեղկացած հայրերի ու մայրերի պատճառով թույլ են դեռևս ծնվելուց առաջ, աշխարհ են գալիս արդեն քայքայված օրգանիզմով, որը հնարավոր չէ իսկույն ենթարկել նրա վերականգնմանը սատարող փորձերին։ Միայն աստիճանաբար կարելի է վերականգնել երեխայի սկզբնական կայտառությունը։ Սկսեցե՛ք, ուրեմն, սովորական ձևերից ու քիչ-քիչ հեռացե՛ք նրանցից։ Երեխային հաճախ լողացրե՛ք. նրանց անմաքրությունն է հենց թեւլադրում լվանալու անհրաժեշտությունը։ Երբ միայն շորով եք սրբում, երեխայի մարմնի վրա վերքեր են առաջանում։ Բայց երբ հետզհետե մարմինն ուժեղանում է, աստիճանաբար իջեցրե՛ք ջրի ջերմաստիճանը, մինչև որ ձե՛մառը և ձե՛մեռը նրան կարողանաք լվանալ պաղ, նույնիսկ սառը ջրով։ Նրբորայրն չմրսելու համար ջրի ջերմաստիճանի իջեցումը պետք է կատարել դանդաղ, աստիճանաբար ու անզգալի կերպով։ Ջրի ջերմաստիճանը ճշգրիտ չափելու համար կարելի է ջերմաչափ գործածել։

Հենց որ լոդանալը դարձավ սովորություն, այլևս չպետք է այն ընդհատել, այլ պետք է շարունակել մինչև կյանքի վերջը։ Ես լոգանքը դիտում եմ ոչ միայն որպես մաքրության ու առողջապահության անմիջական կանոն, այլև որպես փրկարար նախազգուշություն, որպեսզի մաշկի հյուսվածքներն ավելի ճկուն դառնան և այդպիսով հեշտ ու անվտանգ հարմարվեն թե՛ տաքի և թե՛ ցրտի ազդեցությանը։ Այդ նպատակով ես կցանկանայի, որ երեխան, մեծանալիս, կամաց-կամաց սովորեր լոդանալ, երբեմն՝ տանելի բոլոր աստիճանների տաք ջրերում և հաճախ՝ հնարավոր բոլոր աստիճանների սառը ջրերում։ Այսպես, երբ մարմինը վարժվում է ջրի տարբեր ջերմաստիճաններին, ջուրը, որպես ավելի խիտ հաանդուտ մարմին, ամեն կողմից շփվում է մեզ հետ, ավելի շատ է ազդում մեզ վրա, և մենք հզանակի ազդեցությունների նկատմամբ համարյա անզգա կդառնանք։

Այն միջոցին, երբ երեխան, դուրս գալով իր պատյանից, ազատ շունչ է քաշում, չպետք է թույլ տալ, որ նրան նոր կապանքներով ավելի սեղմեն։ Ո՛չ մի գլխակապ, ո՛չ մի բարուր, ո՛չ մի փաթաթան։ Տվե՛ք նրան թույլ և լայն խանձարուր, որի մեջ ազատ լինեն մանկան մարմնի բոլոր անդամները, և որը լինի ո՛չ այնքան ծանր, որպեսզի չկաշկանդի նրա ազատ շարժումները, և ո՛չ էլ այնքան տաք, որպեսզի երեխայինչարգելի զգալուօդի ազդեցությունը[1]։ Երեխային դրե՛ք հարմարավետ ընդարձակ օրորոցի[2] մեջ, որտեղ նա կարողանա ազատ ու անվտանգ շարժվել։ Երբ երեխան սկսում է մեծանալ, թույլ տվե՛ք, որ նա սենյակում չորեքթաթ մանգա, զարգացնի ու երկարի իր մարմնի փոքրիկ անդամները. դուք կտեսնեք, թե ինչպես է նա օր-օրի ամրանում։ Համեմատե-

---

[1] Քաղաքներում երեխաներին խեղդում են՝ նրանց փակված ու հագնված պահելով։ Նրանց խնամակալները դեռևս չգիտեն, որ սառն օդը, փոխանակ վնասելու, ուժեղացնում է նրանց, իսկ տաքը՝ թուլացնում, տենդ ու մահ պատճառում։

[2] «Օրորոց» եմ ասում՝ սովորական դարձած մի բառ գործածելու համար, որովհետև ուրիշը չկա։ Բացի այդ, համոզված եմ, որ ոչ մի կարիք չկա երեխաներին օրորելու՝ այդ սովորությունը հաճախ վտանգավոր է նրանց համար։

ցե՛ք նրան միևնույն հասակի՝ պինդ բարուրված մի ուրիշ երեխայի հետ և կզարմանաք նրանց զարգացման տարբերության վրա[1]։

Պետք է սպասել, որ դայակները դրան մեծ դիմադրություն ցույց կտան, որովհետև լավ կապկպված երեխան ավելի քիչ նեղություն է պատճառում, քան արձակ թողնվածը, որին պետք է շարունակ հսկել։ Բացի այդ, արձակ թողնված երեխայի սպիտակեղենի վրա կեղտը ավելի պարզ է երևում, ուրեմն հաճախակի պետք է փոխել ու լվանալ։ Վերջապես, սովորությունը այնպիսի փաստարկ է, որ որոշ երկրներում, ի հաճույս ժողովրդի ամեն դասի, երբեք չեն հերքում։

Դայակների հետ երբեք մի՛ վիճեք. հրամայեցե՛ք ու միայն հսկեցեք, որպեսզի ձեր կարգադրությունները կատարվեն, ոչինչ մի՛ խնայեք, որպեսզի հեշտացնեք դրանց կատարումը։

---

[1] «Հին պերուցիները լայն խանձարուրի մեջ ազատ էին թողնում երեխաների թևերը, իսկ երբ նրանց հանում էին խանձարուրից, ազատ էին թողնում՝ անդավոթելով հողի մեջ փորված ու շորերով պատած մի փոսի մեջ, մինչև մարմնի կնսրբ։ Այս կերպ նրանց թևերն ազատ էին մնում, կարողանում էին ցանկացած դեպքում շարժել գլուխը և ճկել մարմինը, առանց ընկնելու և վնասվելու։ Հենց որ երեխան կարողանում էր մի քայլ անել, մայրը քիչ հեռվից ցույց էր տալիս իր ստինքը՝ որպես խայծ, ստիպելու համար նրան, որ քայլի։ Փոքրիկ նեգրերը, կաթը ծծելիս, երբեմն ավելի հոգնեցուցիչ դիրքում են գտնվում. նրանք իրենց ծնկներով ու ոտքերով գրկում են մոր ազդրերից մեկն ու այնպես ամուր փաթաթվում, որ կարողանում են առանց մոր օգնության մնալ այդ դիրքում։ Նրանք իրենց թաթիկներով փարվում են մոր ստինքներին, անդուլ ծծում կաթը, առանց խանգարման և առանց վայր ընկնելու, չնայած որ մայրը, այդ ժամանակ շարունակելով զբաղվել իր սովորական գործերով, զանազան շարժումներ է անում։ Այս երեխաները երկու ամսականից սկսում են քայլել, ավելի ճիշտ կլիներ ասել՝ կարողանում են սողալ ծնկների ու ձեռքերի վրա։ Շնորհիվ այս վարժության, նրանք հետագայում կարողանում են այդ դիրքով նույնքան արագ վազել, որքան նորմալ դիրքով։ (Բյուֆոն, Բնական պատմություն, հատ. IV, էջ 192։)*

Այս օրինակներին պ. դը Բյուֆոնը կարող էր ավելացնել ամերիկացիների օրեցօր վերանում է։ Այս մասին տե՛ս նաև Լա Լուբերի «Ուղևորություն Սիամում», Լը Բոյի «Ուղևորություն Կանադայում» և այլն։ Ես կարող էի քսան էջ լցնել քաղվածքներով, եթե այս բանը փաստերով ապացուցելու կարիք լիներ։

Ինչո՞ւ դուք էլ չմասնակցեք դրանց իրագործմանը։ Սովորական սննդառության հարցում, ուր ընդհանրապես երեխայի միայն ֆիզիկական կողմն են նկատի առնում, բավական է, որ երեխան ապրի ու չհյուծվի, մնացյալը նշանակություն չունի։ Բայց այստեղ, ուր դաստիարակությունն սկսվում է կյանքի հետ, երեխան ծնվելու րոպեից արդեն ոչ թե դաստիարակի, այլ բնության աշակերտն է. դաստիարակը սոսկ ուսումնասիրում է այս առաջին ուսուցչի ձեռքի տակ և հետևում, որպեսզի ապարդյուն չանցնի բնության հոգածությունը։ Նա հսկում է ծծկեր երեխային, աչալուրջ դիտում նրա թույլ իմացականության առաջին նշույլները, այնպես, ինչպես լուսնի առաջին քառորդը մոտենալիս մահմեդականներն սպասում են նրա ծագմանը։

Մենք ծնվում ենք՝ ընդունակ սովորելու, առանց ոչինչ իմանալու, առանց ոչինչ ճանաչելու։ Հոգին, կաշկանդված անկատար ու կիսով չափ ձևավորված օրգաններով, իր սեփական գոյության զգացումն իսկ չունի։ Նորածին մանկան շարժումները, ճիչերը զուտ մեքենական գործողությունների հետևանք են, զուրկ գիտակցությունից ու կամքից։

*Ենթադրենք, թե երեխան ծնվելիս չափահաս մարդու կառուցվածք և ուժ ունենար, որ նա մոր արգանդից դուրս գար, այսպես ասած, կազմ ու պատրաստ, ինչպես Պալլասը՝ Յուպիտերի ուղեղից։ Այդ մարդ-երեխան կլիներ կատարյալ մի անխելք, մի ավտոմատ, անշարժ մի արձան, համարյա անզգա։ Նա ոչինչ չէր տեսնի, ոչինչ չէր լսի, ոչ ոքի չէր ճանաչի, նույնիսկ չէր կարողանա աչքերը դարձնել դեպի այն իրը, որը տեսնելու կարիքն ունի։ Նա ոչ միայն իրենից դուրս ոչ մի առարկա չէր տեսնի, այլև չէր կարողանա որևէ առարկա անդրադարձնել իր այն զգայարանի մեջ, որի միջոցով այն ընկալել էր. աչքերը բնավ չէին տեսնի գույները, ականջը չէր լսի ձայները, ոչինչ չէր զգա շոշափած մարմինների շփումից, նույնիսկ չէր էլ գիտակցի, որ ինքը մարմին ունի։ Նրա ձեռքերի շոշափումը տեղի կունենար ուղեղում, բոլոր զգայությունները կկենտրոնանային մի կետում. դա գոյություն կունենար միայն ընդհանուր սանսոռիումում *. նրա միակ գա-*

* *Զգայությունների կենտրոնակետ։— Ս. Բ.*

պափարը կլիներ Նա-ի գաղափարը, որի հետ կհամաձայնեցներ իր լոլոր զգայությունները, և այդ գաղափարը կամ ավելի շուտ՝ այդ զգացումը միակ բանը կլիներ, որը կտարբերեր նրան սովորական երեխայից։

Միանգամից կազմակերպված այս մարդը չէր էլ կարողանա ոտքի վրա կանգնել. երկար ժամանակ կպահանջվեր, մինչև նա կարողանար սովորել պահել իր հավասարակշռությունը. գուցե ամենևին էլ փորձ չաներ ոտքի կանգնելու, ու դուք կտեսնեիք այս մեծ, ուժեղ և պնդակազմ մարմինը՝ քարի նման մի տեղում ընկած, կամ շան լակոտի պես սողալով քարշ գալիս։

Նա կզդար իր կարիքների պատճառած անհանգստությունը, առանց այդ կարիքները գիտակցելու և առանց պատկերացնելու դրանք բավարարելու այս կամ այն միջոցը։ Ջկա ոչ մի անմիջական հաղորդակցություն ստամոքսի մկանների և թևերի ու սրունքների մկանների միջև, որն ստիպեր նրան, նույնիսկ եթե շրջապատված լիներ ուտելիքներով, մի քայլ անել սրանց մոտենալու կամ ձեռքը երկարել վերցնելու համար. և քանի որ նրա մարմնի՝ արդեն աճած, անդամները միանգամայն զարգացած կլինեն, հետևաբար և չի ունենա երեխաների ո՛չ անհանգստությունները, ո՛չ անընդհատ շարժումները, ուստի և նա կարող է սովածությունից մեռնել՝ նախքան իր ուտելիքը գտնելու համար տեղից շարժվելը։ Եթե փոքր-ինչ մտածենք մեր գիտելիքների ձեռքբերման կարգի և զարգացման մասին, չենք կարող ժխտել, որ մոտավորապես այդպիսին եղած կլինի տգիտության ու անմտության նախնական վիճակը, որը հատուկ է մարդուն՝ մինչև անձնական փորձառությամբ կամ իր նմաններից որևէ բան սովորելը։

Ուրեմն, մենք ճանաչում ենք կամ կարող ենք ճանաչել այն առաջին կետը, որտեղից մեկնում է մեզնից յուրաքանչյուրը՝ իմացականության սովորական աստիճանին հասնելու համար. իսկ ո՞վ գիտե մյուս ծայրակետը։ Յուրաքանչյուրն առավել կամ նվազ չափով առաջ է գնում ըստ իր հանճարի, ճաշակի, կարիքների, ընդունակությունների, եռանդի, դրանք դրսևորելու համար ունեցած առիթների։ Ես դեռ չգիտեմ որևէ փիլիսոփա, որը բավական համարձակություն ունեցած

լինի ասելու՝ «Ահավասիկ այն սահմանը, որին մարդ կարող է հասնել և որից այն կողմը ի վիճակի չէ անցնել»։ Մենք չգիտենք, թե մեր բնությունը ի՞նչ թույլ կտա մեզ լինել. մեզնից ոչ ոք չի չափել այն տարածությունը, որ կարող է գոյություն ունենալ երկու մարդու միջև։ Ո՞րն է այն ստոր հոգին, որը երբեք չի ոգևորվել այս գաղափարով և որը երբեմն հայտարատյած չի ասել ինքն իրեն. «Քանիսի՞ց եմ ես անցել, քանիսի՞ն դեռևս կարող եմ հասնել. ինչու՞ համար ինձ հավասարը պետք է առաջ անցնի ինձնից»։

Կրկնում եմ. մարդու դաստիարակությունը իր ծնված օրից է սկսվում. խոսելուց, լսելուց առաջ նա արդեն սովորում է։ Փորձը նախորդում է դասերին։ Այն րոպեին, երբ երեխան ճանաչում է դայակին, նա արդեն շատ բան գիտե։ Մեզ կարող են զարմացնել ամենաանտաղ մարդու գիտելիքները, եթե հետևենք ծնված օրից մինչև այն օրը նրա կատարած առաջադիմությանը։ Եթե մարդկային ամբողջ գիտությունը երկու մասի բաժանենք, մեկն ընդհանուր՝ բոլորի համար, մյուսը՝ հատուկ միայն գիտուններին, ապա վերջինս շատ ավելի փոքր կլիներ՝ համեմատած առաջինին։ Բայց մենք երբեք չենք մտածում ընդհանուր գիտելիքների մասին, որովհետև ձեռք ենք բերում առանց դրանց մասին խորհելու, նույնիսկ բանականության տարիքին հասնելուց առաջ, որովհետև գիտելիքը նկատվում է միայն իր տարբերություններով, այնպես, ինչպես հանրահաշվային հավասարությունների մեջ մեծության հայտարարներն անտեսվում են։

Նույնիսկ անասունները շատ բան են յուրացնում։ Նրանք էլ զգացողություն ունեն և պետք է սովորեն գործածել դրանք. նրանք կարիքներ ունեն, պետք է իմանան բավարարել դրանք. պետք է սովորեն ուտել, քայլել, թռչել։ Ձորքուտանիները, որ ծնվելիս անմիջապես ոտքի են կանգնում, չի նշանակում, թե կարող են ման գալ. առաջին իսկ քայլից նկատվում է, որ փորձ չունեն։ Վանդակից նոր աղատված դեղձանիկը չի կարող թռչել, որովհետև դեռ ոչ մի անգամ չի թռչել։ Շնչավոր և զգացող էակների համար ամեն ինչ վարժություն է։ Եթե բույսերն ընդունակ լինեին պրոգրեսիվ շարժման, նրանք ևս

պետք է զգայարաններ ունենային և գիտելիքներ ձեռք բերեին. այլապես տեսակները շուտով կոչնչանային։

Երեխաների առաջին տպավորությունները զուտ զգացողական են. նրանք միայն հաճույք կամ ցավ են զգում։ Չկարողանալով ո՛չ քայլել, ո՛չ բռնել, նրանց շատ ժամանակ է հարկավոր, որպեսզի կարողանան կամաց-կամաց այնպիսի մտապատկերներ կազմել, որոնք նրանց ցույց տան շրջապատի իրերը։ Բայց մինչև այդ առարկաները տարածվեն, այսպես ասած՝ հեռանան նրանց աչքերից և նրանց համար ծավալ ու ձև ստանան, զգացողական տպավորությունների կրկնումը արդեն սկսում է նրանց ենթարկել սովորության տիրապետությանը։ Մենք տեսնում ենք, որ նրանց աչքերը անընդհատ դեպի լույսն են ուղղվում, և եթե լույսը գալիս է կողքից, աչքերն անզգալիորեն դեպի այն կողմն են դարձնում. այդ պատճառով էլ նրանց դեմքը միշտ պետք է դեպի լույսը դարձնել, որպեսզի շիլ չլինեն կամ չսովորեն շեղ նայել։ Անհրաժեշտ է նույնպես, որ նրանք վաղ հասակից վարժվեն մթությանը, հակառակ դեպքում, եթե հանկարծ մթության մեջ ընկնեն, կսկսեն լալ ու ճչալ։ Ճիշտ չափավորված սնունդն ու քունը նրանց համար անհրաժեշտ են դառնում օրվա միշտ նույն ժամերին։ Այսպիսով, պահանջը գալիս է ոչ թե կարիքից, այլ սովորությունից, կամ ավելի շուտ՝ սովորությունը մի նոր կարիք է ավելացնում բնական պահանջին։ Բայց պետք է կանխել այդ։

Միակ սովորությունը, որ պետք է թույլ տալ երեխային ունենալ, ոչ մի սովորություն ձեռք չբերելն է. երբեք չպետք է նրան գրկել. պետք է արգելել, որ նա շարունակ նույն ձեռքը մեկնի, հաճախակի նույն ձեռքը գործածի, ցանկանա ուտել, քնել, գործել միշտ նույն ժամերին, վերջապես, չպետք է թույլ տալ, որ վախենա մենակ մնալուց՝ և՛ գիշերը, և՛ ցերեկը։ Վաղօրոք պատրաստեցե՛ք նրան իր ազատությունը ղեկավարելու և իր ուժերն օգտագործելու, նրա մարմնին թողնելով բնական սովորությունը, նրան ի վիճակի դարձնելով շարունակ իր անձի տերը լինել և ամեն ինչում իր կամքը գործադրել, երբ որ այդպիսին ունենա։

Հենց որ երեխան սկսում է իրերը ճանաչել, պետք է խիստ

ընտրություն կատարել նրան ցույց տրվելիք առարկաների մեջ։ Բնական է, որ բոլոր նոր առարկաները հետաքրքրում են մարդուն։ Նա իրեն այնքան թույլ է զգում, որ վախենում է ամեն մի անծանոթ առարկայից։ Առանց նրանցից ազդվելու նոր իրեր տեսնելու սովորությունը չքացնում է այդ վախը։ Այն երեխաները, որոնք ապրում են մաքուր տներում, որտեղ սարդ գոյություն չունի, վախենում են սարդերից, և այդ երկյուղը հաճախ շարունակում է մնալ նրանց մեջ, նույնիսկ չափահաս դառնալուց հետո։ Ես չեմ տեսել ոչ մի գյուղացի, լինի տղամարդ, կին, թե երեխա, որը սարդից վախենա։

Ինչու՞, ուրեմն, մանկան դաստիարակությունը չսկսել նրա խոսելուց և ըմբռնելուց առաջ, քանի որ ցույց տրվող առարկաների ընտրությունն անգամ կարող է նրան երկչոտ կամ քաջ դարձնել։ Ես ցանկանում եմ, որ նրան սովորեցնեն նորանոր առարկաներ տեսնել, տգեղ, զզվելի ու անսովոր կենդանիներ, բայց ոչ միանգամից, այլ կամաց-կամաց, աստիճանաբար, մինչև որ երեխան նրանց վարժվի։ Տեսնելով, թե ինչպես ուրիշները ձեռք են տալիս դրանց, ի վերջո ինքն էլ ձեռք կտա։ Եթե երեխան մանկությունից առանց երկյուղի տեսնի դողդոշներ, օձեր, խեցգետիններ, մեծանալուց հետո առանց սարսափի կարող է տեսնել ուզածդ կենդանուն։ Ոչ մի առարկա սարսափելի չի լինի, երբ այն տեսնում ես ամեն օր։

Բոլոր երեխաները վախենում են դիմակներից։ Ես կսկսեմ էմիլին ցույց տալով հաճելի տեսքով մի դիմակ. ապա մեկը նրա մոտ այդ դիմակը կդնի իր դեմքին. ես կսկսեմ ծիծաղել, բոլոր ներկաները կծիծաղեն, երեխան նույնպես կծիծաղի մյուսների պես։ Հետզհետե ես նրան կընտելացնեմ նվազ հաճելի դիմակների ու, վերջապես, զարհուրելի դեմքերի։ Եթե ինձ հաջողվի լավ դասավորել իմ փորձի աստիճանականությունը, փոխանակ վախենալու վերջին դիմակից, երեխան կծիծաղի այնպես, ինչպես ծիծաղել էր առաջին դիմակը տեսնելիս։ Դրանից հետո ես այլևս երկյուղ չեմ ունենա, որ երբևէ կարող են նրան վախեցնել դիմակներով։

Երբ, Անդրոմաքի և Հեկտորի հրաժեշտի պահին, փոքրիկ Աստիանաքսը, վախենալով հոր սաղավարտի վրա ծածանվող փետուրից, չի ճանաչում նրան և լալով նետվում է դայա-

կի գիրկը, առաջացնելով մոր արտասվախառն ժպիտը, ի՞նչ պետք էր անել՝ նրա այդ երկյուղը փարատելու համար։ Ճիշտ այն, ինչ արեց Հեկտորը՝ սաղավարտը դնել գետին ու ապա գուրգուրել երեխային։ Մի ավելի հանգիստ ժամանակ դրանով չէին բավարարվի. կմոտենային սաղավարտին, կխաղային փետուրի հետ ու այն կտային երեխայի ձեռքը. վերջապես, դայակը սաղավարտը կվերցներ ու ծիծաղելով կդներ իր գլխին, եթե, իհարկե, որևէ կին կհամարձակվեր ձեռքով դիպչել Հեկտորի զենք ու զրահին։

Եթե ուզենամ էմիլին ընտելացնել հրազենի ձայնին, նախ և առաջ վառոդով լցված ատրճանակով կկրակեմ։ Այդ հանկարծակի ու վաղանցուկ բոցը, այդ յուրատեսակ շանթը նրան զվարճություն կպատճառի. նույն բանը կկրկնեմ փոքրը-ինչ վառոդի քանակն ավելացնելով, այնուհետև պատրճանակի մեջ կավելացնեմ մի փոքր լիքը առանց խծուծի, հետո ւարձյալ՝ մի քիչ ավելի, վերջապես կվարժեցնեմ հրացանի կրակոցին, ականների, բնդանոթների, մի խոսքով՝ ամենաահարկու պայթյուններին։

Ես նկատել եմ, որ երեխաները սակավ են վախենում շանթից, եթե, անշուշտ, պայթյունները շատ ուժեղ չեն և իսկապես չեն վնասում լսողության զգայարանին. երեխաները վախենում են միայն այն ժամանակ, երբ գիտակցում են, որ շանթը վիրավորում կամ, երբեմն, սպանում է։ Երբ գիտակցությունն սկսում է նրանց երկյուղ պատճառել, պետք է այնպես անել, որ սովորությունը նրանց հանգստացնի։ Դանդաղ ու աստիճանական վարժեցոմով կարելի է մարդկանց ու երեխաներին անվեհեր դարձնել ամեն ինչի դեմ։

Կյանքի սկզբնական շրջանում, երբ հիշողությունն ու երեվակայությունը դեռևս չեն գործում, երեխայի ուշադրությունը գրավում է միայն այն, ինչ ազդում է նրա զգայարանների վրա։ Քանի որ զգացողությունները հանդիսանում են նրա ճանաչողության առաջին նյութերը, այդ զգացողությունները նրան մատուցելով պատշաճ դասավորությամբ, նրա հիշողությունը նախապատրաստում ենք, որպեսզի հետագայում դրանք նույն դասավորությամբ ներկայացնի բանականությանը։ Բայց որովհետև երեխան միայն իր զգացողություն-

ներին է ուշադրություն դարձնում, ապա որպես սկիզբ բավական է նրան որոշակի ցույց տալ այդ նույն զգացողությունների ու դրանք առաջացնող պատճառների կապը։ Նա ցանկանում է ամեն ինչ շոշափել, ամեն ինչ բռնել ձեռքով. չպետք է ընդդիմանալ նրա այդ անհանգիստ շարժումներին. դրանք շատ օգտակար վարժություններ են երեխայի համար։ Այդպիսով նա վարժվում է զգալ իրերի ջերմությունը, սառնությունը, կարծրությունը, փափկությունը, ծանրությունը, թեթևությունը, գաղափար կազմում նրանց չափի, ձևի ու զգացական բոլոր հատկությունների մասին՝ դիտելով, շոշափելով [1], լսելով, մանավանդ համեմատելով տեսանելին շոշափելիի հետ, աչքով որոշելով այն զգացողությունը, որ առաջանում է մատների ծայրին։

Մենք միայն շարժումով ենք գիտակցում, որ մեղնից դուրս իրեր կան և միայն մեր սեփական շարժումով ենք ընկալում տարածության գաղափարը։ Տարածության մասին գաղափար չունենալու պատճառով է, որ երեխան ձեռքը երկարում է թե՛ այն առարկային, որն անմիջականորեն իրեն է հավում և թե՛ իրենից հարյուր քայլի վրա գտնվողին։ Նրա այդ շարժումը ձեզ թվում է հրամայողական մի շարժում՝ ուղղված առարկային, որպեսզի իրեն մոտենա, կամ ձեզ, որպեսզի այն իրեն մոտեցնեք։ Սակայն այդ այդպես չէ. պարզապես բանն այն է, որ այդ նույն իրերը, որ նա նախ իր ոտքերումն է տեսնում, ապա աչքերի մեջ, այժմ տեսնում է իր մատների ծայրին և ուրիշ հեռավորություն չի պատկերացնում, քան այն, որին ինքը կարող է հասնել։ Պետք է, ուրեմն, նրան հաճախ մանածել, մի վայրից տեղափոխել մյուսը, տեղի փոփոխությունը զգալի դարձնել նրան, որպեսզի սովորի որոշել հեռավորությունները։ Երբ նա արդեն սկսի տարբերել տարածություններըլ, հարկավոր է մեթոդը փոխել ու տանել նրան ոչ թե իր, այլ ձեր ցանկությամբ, որովհետև այն րոպեից, երբ երե-

[1] Երեխայի մոտ ամենից ուշ զարգացող զգայարանը հոտոտելիքն է։ Մինչև երկու կամ երեք տարեկան հասակը նա, ըստ երևույթին, լավ կամ վատ հոտի զգացողություն չունի. այս տեսակետից բազմաթիվ կենդանիների նման երեխաները անտարբեր կամ ավելի ճիշտ՝ անզգա են հոտի հանդեպ։

խան այլևս չի խաբվում իր զգայություններից, նրա ցանկությյան ու ճիգերի դրդապատճառները փոխվում են։ Այդ փոփոխությունը նշանակալի է ու բացատրության կարոտ։

Կարիքներից առաջացած անհանգստության զգացումն արտահայտվում է նշաններով, երբ նրանք բավարարելու համար անհրաժեշտ է ուրիշի օգնությունը։ Դա է երեխաներին ստիպում ճչալ։ Նրանք շատ են լալիս, և այդպես էլ պետք է լինի։ Քանի որ նրանց բոլոր զգայությունները զգացողական են, ուստի, երբ դրանք հաճելի են, երեխաները լուռ վայելում են, իսկ երբ անհաճո են, իրենց դժգոհությունը արտահայտում են իրենց լեզվով՝ լացով, ու սփոփանք պահանջում։ Արթուն ժամանակ երեխաները համարյա հանգիստ չեն կարողանում մնալ. նրանք կա՛մ քնում են, կա՛մ շարժվում և հուզվում։

***Մեր բոլոր լեզուները արվեստի գործ են։** Երկար ժամանակ մարդիկ հետաքրքրվել են, թե արդո՞ք բնական ու բոլոր մարդկանց համար ընդհանուր մի լեզու գոյություն չունի. անտարակույս կա այդպիսին. դա այն լեզուն է, որով մանուկները խոսում են՝ խոսել սովորելուց առաջ։ Այդ լեզուն հոդավորված չէ, բայց շեշտավորված է, հնչեղ է և դյուրըմբռնելի։ Մեր լեզուների գործածոմով մենք այն անտես ենք արել ու բոլորովին մոռացել։ Եթե ուսումնասիրենք մանուկներին, շատ շուտով կրկին կսովորենք այդ լեզուն։ Դայակները այդ լեզվի մեր ուսուցիչներն են. նրանք հասկանում են իրենց ծծկերների բոլոր ասածները, նրանց պատասխանում են և հետները կարգին զրույցներ են ունենում։ Դայակները թևև բառեր են արտասանում, բայց դա միանգամայն ավելորդ է, որովհետև մանուկները լսած բառերի իմաստը չէ, որ հասկանում են, այլ նրանց ուղեկցող շեշտը։*

Ջայնի լեզվին միանում է շարժումների՝ նշանացի խոսելու լեզուն, որը պակաս արտահայտիչ չէ։ Այդ շարժումը երեխայի ձեռքերի մեջ չէ, այլ նրա դեմքի վրա։ Ջարմանալի է, որ այդ դեռևս չձևավորված դեմքերը կարողանում են այդպես արտահայտվել. նրանց դիմագծերը մի ակնթարթից մյուսը փոխվում են անասելի արագությամբ. դուք կտեսնեք, թե ինչպես երեխայի դեմքի վրա ժպիտը, ցանկությունը, վա-

խը ծնվում և անհետանում են կայծակի պես, և ամեն անգամ ձեզ թվում է, թե մի նոր դեմք եք տեսնում։ Անկասկած, երեխաների դեմքի մկաններն ավելի խոսուն են, քան մերը։ Դրա փոխարեն, նրանց աղոտ աչքերը համարյա ոչինչ չեն ասում։ Այդպիսին պետք է լինի նրանց նշանների լեզուն այն տարիքում, երբ մարդը սոսկ մարմնական կարիքներ է զգում։ Զգացողությունները արտահայտվում են միմիկաներով, զգացումները՝ հայացքներով։

Այնպես, ինչպես մարդու գոյության առաջին վիճակը կազմում են թշվառությունն ու տկարությունը, նրա առաջին ձայնն էլ ողբն ու լացն են։ Մանուկն զգում է իր կարիքները, բայց չի կարողանում բավարարել. նա իր ճիչերով ուրիշներից օգնություն է խնդրում. եթե սոված է կամ ծարավ, լաց է լինում, մրսում է կամ շոգում, լաց է լինում, շարժման կարիք է զգում, բայց նրան կաշկանդում են, լաց է լինում, եթե ուզում է քնել, բայց նրան շարժում են, լաց է լինում։ Քանի երեխան չի կարողանում ազատ տնօրինել իր գոյավիճակը, այնքան ավելի հաճախ է պահանջում այն փոխել։ Նա միայն մեկ լեզու ունի, որովհետև, այսպես ասած, միայն մեկ տեսակ անհանգստություն ունի. իր զգայարանների անկատարության պատճառով նա չի զանազանում դրանց տարբեր տպավորությունները։ Բոլոր տեսակի չարիքները նրա մեջ միայն մեկ զգացողություն են առաջացնում՝ ցավի զգացողություն։

Այս լացերից, որոնք այնքան քիչ են ուշադրության արժանի համարվում, ծնունդ են առնում մարդու սկզբնական հարաբերությունները իր շրջապատի հետ. այդտեղ է դարբնվում այն երկար շղթայի առաջին օղակը, որից կազմված է հասարակական կարգը։

Երբ երեխան լաց է լինում, նշանակում է՝ նա անհանգիստ է, մի որևէ կարիք ունի, որը չի կարողանում գոհացնել. պետք է քննել, որոնել այդ կարիքը, գտնել ու բավարարել։ Երբ չեք գտնում ու բավարարում այն, լացը շարունակվում է, դուք չղայնանում եք, զգվում եք երեխային, օրորոցում՝ լռեցնելու համար, երգում՝ որպեսզի քնի։ Եթե համառում է, համբերությունից դուրս եք գալիս ու սպառնում. կոպիտ դայակները

նույնիսկ ծեծում են երեխային։ Ահա թե ինչպիսի տարօրինակ դասեր է ստանում մանուկը կյանքի շեմքին։

Երբեք չեմ մոռանա այն պատկերը, թե ինչպես մի դպրոցական հարվածեց տղտկալիորեն արտասվող երեխային։ Երեխան իսկույն լռեց. թվաց, թե վախեցավ։ Ինքս ինձ ասացի. «Սա մի ստրկական հոգի կլինի, որին միայն խստությունը կարող է ազդել»։ Ես սխալվում էի. խեղճ երեխան դպրությից շնչասպառ էր լինում և սկսում էր կապտել։ Մի րոպե անց՝ սուր ճիչեր լսվեցին, որոնք արտահայտում էին այդ տարիքի արտմտության, զայրույթի և հուսահատության բոլոր նշանները։ Վախեցա, թե երեխան կարող է շունչը փչել այդ հուզմունքից։ Եթե կասկածում էի, որ արդարության ու անարդարության զգացումը բնածին է մարդկային սրտի համար, հենց միայն այս օրինակը բավական էր, որ փարատեր կասկածս։ Ես համոզված եմ, որ պատահմամբ այս երեխայի ձեռքի վրա ընկած կրակի կտորը այնքան զգալի չէր լինի նրա համար, որքան այն թեթև հարվածը, որ, սակայն, տվել էին նրան վիրավորելու բացահայտ դիտավորությամբ։

Երեխայի այս հակումը դեպի բունկումը, նյարդայնությունը, բարկությունը, պահանջում է ծայրահեղ զգույշ վերաբերմունք։ Հերման Բոերհաավի կարծիքով, մանկական հիվանդությունների մեծ մասը ջղաձգություններ կարպին է պատկանում, որովհետև համեմատարար երեխաների գլուխն ավելի մեծ է ու նյարդային համակարգությունն ավելի ծավալուն, քան մեծահասակներինը, այդ պատճառով էլ նրանց ջղերն ավելի հակամետ են գրգռվելու։ Ամենայն հոգածությամբ հեռացրե՛ք նրանց անհանգստացնող, գրգռող, համբերությունից հանող սպասավորներին։ Սրանք երեխաների համար հարյուր անգամ ավելի վտանգավոր են, քան օդի ու եղանակների վնասները։ Որքան երեխաները կհանդիպեն սուկ իրերի և ոչ թե ուրիշի կամքի դիմադրությանը, նրանք ո՛չ համառ կլինեն, ո՛չ բարկացկոտ, ու նրանց առողջությունը լավ կպահպանվի։ Ահա թե ինչու հասարակ ժողովրդի զավակները, որոնք ավելի ազատ ու անկախ են, ընդհանրապես ավելի քիչ հիվանդոտ են, նվազ քնքուշ, ավելի ամրակազմ, քան թե նրանք, որոնց կարծում են, թե ավելի լավ են դաս-

տիարակում անընդհատ նրանց հակառակվելով։ Այնուամենայնիվ, չպետք է մոռանալ, որ մեծ տարբերություն կա երեխաների կամքին հպատակվելու և նրանց չհակառակվելու միջև։

Երեխաների առաջին լացը խնդրանք է արտահայտում։ Եթե ուշադրություն չդարձնեք, շուտով այդ լացը հրաման կդառնա։ Նրանք սկսում են ձեր օգնությանը դիմելով և վերջացնում՝ ձեզ իրենց ծառայեցնելով։ Այդպիսով, իրենց սեփական տկարությունից, որն սկզբում նրանց մեջ կախման զգացում է առաջացնում, ծնվում է այնուհետև տիրապետելու և իշխելու միտքը։ Բայց որովհետև այդ միտքը բխում է ոչ այնքան նրանց կարիքից, որքան մեր օգնությունից, ապա այստեղ սկսում են զգալի դառնալ այն բարոյական հետևանքները, որոնց անմիջական պատճառը բնության մեջ չէ։ Հետևաբար, հասկանալի է, թե ինչու այս վաղ տարիքից սկսած պետք է պարզել այն զաղտնի դիտավորությունը, որ մանկանը դրդում է շարժումներ անել ու ճչալ։

Երբ երեխան, ճիգ գործ դնելով, երկարում է ձեռքը, առանց ոչինչ ասելու, կարծում է, թե հասավ առարկային, որովհետև տարածության մասին գաղափար չունի. անշուշտ նա սխալվում է։ Բայց երբ ձեռքը երկարելիս լաց է լինում ու աղաղակում, նշանակում է նա արդեն պատկերացում ունի հեռավորության մասին, և առարկային հրամայում է մոտենալ, կամ ձեզ՝ որ մոտեցնեք առարկան։ Առաջին դեպքում դանդաղ, փոքրիկ քայլերով երեխային տարեք առարկայի մոտ, երկրորդ դեպքում այնպես ձևացրեք, թե ոչինչ չեք լսում. ինչքան ավելի ճչա, այնքան քիչ լսեք նրան։ Անհրաժեշտ է փոքր հասակից սովորեցնել երեխային՝ չհրամայել ո՛չ մարդկանց, որովհետև նա նրանց տերը չէ, ո՛չ էլ առարկաներին, որովհետև, միևնույն է, նրանք ոչինչ չեն լսում։ Այսպես ուրեմն, եթե երեխան ցանկանում է ունենալ այն իրը, որը տեսնում է և որը դուք ուզում եք տալ նրան, ավելի լավ է երեխային տանեք իրի մոտ, քան թե իրը մոտեցնեք նրան. դրանից նա իր տարիքին համապատասխան հետևություն կանի. իսկ այդ բանը նրան հասկացնելու ուրիշ միջոց չկա։

Սեն-Պիեռ աբբան մարդկանց անվանում էր մեծ երեխաներ։ Փոխադարձաբար երեխաներին կարելի է անվանել փոքրիկ մարդիկ։ Այս մտքերը ճշմարիտ են որպես առած, իսկ որպես սկզբունք, նրանք կարոտ են լուսաբանման։ Բայց երբ Հոբսը չար մարդուն անվանում էր հուժկու երեխա, նա բացարձակ հակասական միտք էր արտահայտում։ Ամեն մի չարություն տկարությունից է առաջ գալիս. երեխան չար է, որովհետև տկար է. ուժեղացրե՛ք նրան, և նա բարի կլինի։ Այն մարդը, որ կարողանում է ամեն ինչ անել, երբեք չարություն չի անի։ Ամենակարող ոստծու բոլոր հատկություններից բարությունն է այն հատկությունը, առանց որի նրան չի կարելի պատկերացնել։ Այն բոլոր ժողովուրդները, որոնք նրկու սկիզբ են ընդունել, միշտ էլ վատը ստորադասել են լավին, այլապես մի անմիտ ննջաղություն արած կլինեին։ Այս մասին կտեսնենք հետագա էջերում, սավոյացի քահանայի Հավատո հանգանակում։

Միայն բանականությունն է մեզ սովորեցնում ճանաչել բարին ու չարը։ Դիտակցությունը, որ մեզ սովորեցնում է սիրել բարին և ատել չարը, չի կարող զարգանալ առանց բանականության, թեև անկախ է վերջինից։ Բանական տարիքից առաջ մենք բարի ու չար գործ ենք կատարում անգիտակցաբար. մեր գործերի մեջ ոչ մի բարոյականության տարր չկա, թեև երբեմն դա կա մեր զգացման մեջ ուրիշների գործերի նկատմամբ, որոնք կապ ունեն մեզ հետ։ Երեխան ցանկանում է խառնշտել իր տեսած բոլոր իրերը. կոտրում, ջարդում է ամեն ինչ, որ ընկնում է իր ձեռքի տակ. նա թռչունին բռնում է այնպես, ինչպես կբռներ մի քարի կտոր, ու խեղդում է նրան առանց հաշիվ տալու, թե ինչ է անում։

Ի՞նչն է սրա պատճառը։ Նախ և առաջ փիլիսոփայությունը այն պիտի վերագրի բնական մոլուցիններին, հպարտությանը, տիրապետելու հոգեբանությանը, ինքնասիրությանը, մարդկային չարությանը, սեփական տկարության զգացմանը, կարող է ավելացնել նաև, որ երեխայի մեջ անհագ ցանկություն է առաջանում բռնի ուժի գործողություններ կատարելու, գիտակցելու իր սեփական ուժն ու կարողությունը։ Բայց նայեցե՛ք այս թուլլ ու հիվանդոտ ծերուկին,

որը մարդկային կյանքի շրջապտույտով հասել է մանկական անզորության. նա ոչ միայն հանգիստ ու անշարժ է մնում, այլև կամենում է իր շուրջն էլ ամեն ինչ նույն վիճակում տեսնել. ամենափոքր փոփոխությունը նրան հուզում ու անհանգստացնում է. նա ցանկանում է տեսնել համատարած անդորրություն։ Ինչպես, ուրեմն, միևնույն կրքերին միացած միևնույն անկարողությունը այդ երկու տարբեր հասակներում այդքան տարբեր հետևանքների կարող էր հանգեցնել, եթե սկզբնական պատճառը փոխված չլիներ։ Եվ ո՞րտեղ կարելի է որոնել պատճառների այս տարբերությունը, եթե ոչ երկու անհատների ֆիզիկական դրության մեջ։ Գործելու ձգտումը, որ երկուսի համար էլ ընդհանուր է, զարգանում է մեկի մեջ ու մարում մյուսի մոտ, մեկը կազմավորվում է, մյուսը՝ կործանվում. մեկը դեպի կյանքն է գնում, մյուսը՝ դեպի մահը։ Մեքունու սրտի մեջ եռանդը թուլանում է, իսկ երեխայի սրտում այն զերառատ է ու դուրս է հորդում. երեխան, այսպես ասած, իր մեջ բավականին կյանք է զգում իր ամբողջ շրջապատը ջարժման մեջ դնելու համար։ Կարևոր չէ, թե նա շինո՞ւմ է, թե քանդում, բավական է, որ փոխում է իրերի դրությունը, իսկ ամեն մի փոփոխություն գործունեություն է։ Եթե երեխան ավելի շատ քանդելու հակամետ է, այդ նրա չարությունից չէ, այլ նրանից, որ շինելու գործողությունը միշտ դանդաղ է տեղի ունենում, այնինչ քանդելը, ավելի արագ կատարվելով, ավելի է համապատասխանում նրա աշխուժությանը։

Բնության ստեղծողը, երեխաներին այս եռանդը շնորհելով հանդերձ, հոգ է տարել, որ նրանք քիչ վնաս պատճառեն, նրանց օժտելով ֆիզիկական փոքր ուժով։ Բայց հենց որ նրանք իրենց շրջապատող մարդկանց համարեն որպես մի զենք, որը կարող են գործողության մեջ դնել ըստ իրենց քմահաճույքի, օգտվում են դրանից իրենց ցանկությունները բավարարելու և իրենց թուլությունը փոխհատուցելու համար։ Ահա թե ինչպես են երեխաները դառնում ձանձրացուցիչ, բռնակալ, հանդուգն, չար, անզուսպ։ Այս առաջադիմությունը իշխելու բնածին ոգու հետևանք չէ, այլ ինքն է այն տալիս երեխաներին, որովհետև երկար փորձառություն պետք չէ զգալու համար, թե ինչքան հաճելի է ուրիշի ձեռքով գործ

կատարելն ու միմիայն լեզվի մի շարժումով ամբողջ տիեզերքը շարժման մեջ դնելը։

Մարդը, մեծանալով, ուժեղանում է, դառնում ավելի հանգիստ ու զգաստ և ավելի ինքնամփոփ։ Նրա հոգին ու միտքը, այսպես ասած, հավասարակշռվում են, ու բնությունը պահանջում է նրանից միայն այնքան շարժումներ, որքան անհրաժեշտ են ինքնապահպանության համար։ Սակայն հրամայելու ցանկությունը չի անհետանում այն առաջացնող կարիքի չքացումով։ Իշխելու ցանկությունն արթնացնում ու շոյում է ինքնասիրությունը, իսկ սովորությունը ուժեղացնում է այն։ Այսպիսով, կարիքին հաջորդում է քմահաճույքը, իրենց առաջին արմատներն են զգում նախապաշարմունքներն ու կարծիքները։

Մի անգամ, որ մենք ճանաչենք այս սկզբունքային ճշմարտությունը, հստակ կերպով կտեսնենք այն կետը, որտեղից շեղվում ենք բնության ճանապարհից։ Այժմ տեսնենք, թե ինչ պետք է աննել այդ կետի վրա մնալու համար։

Երեխաները չունեն ոչ միայն ավելորդ, այլ նույնիսկ բավականաչափ ուժ այն ամենի համար, ինչ նրանցից պահանջում է բնությունը. պետք է, ուրեմն, թույլ տալ նրանց գործածելու այն ամբողջ ուժը, որ իրենց տվել է բնությունը և որը նրանք չեն կարող ի չարը գործադրել։ Առաջին կանոն։

Պետք է նրանց օգնել ու լրացնել այն, ինչը նրանց պակասում է, թե՛ մտավոր կարողության, թե՛ ուժի տեսակետից, ֆիզիկական բոլոր տեսակի կարիքներում։ Երկրորդ կանոն։

Երեխաներին ցույց տրվող օգնության մեջ պետք է սահմանափակվել միմիայն իսկական օգտակարով, առանց տուրք տալու նրանց քմահաճույքին կամ անհիմն ցանկություններին, որովհետև չգոհացված քմահաճույքը նրանց բնավ չի տանջի, եթե դուք ինքներդ այն չառաջացնեք, քանի որ դա բնությունից չի տրվում։ Երրորդ կանոն։

Ուշադրությամբ պետք է ուսումնասիրել մանկան լեզուն ու շարժումները, որպեսզի այն տարիքում, երբ նրանք ընդունակ չեն կեղծելու, իմանանք, թե նրանց ցանկություննե-

րից ո՞րն է անմիջականորեն բնությունից բխում, որը՝ քմահաճույքից։ Չորրորդ կանոն։

Այս կանոնների նպատակն է երեխաներին ավելի շատ իրական ազատություն և ավելի քիչ իշխանություն տալ, թողնել նրանց ավելի շատ գործել իրենց սեփական միջոցներով ու քիչ պահանջել ուրիշներից։ Այդպիսով, վաղ հասակից վարժվելով իրենց ցանկությունները համաձայնեցնել սեփական ուժերին, նրանք ավելի քիչ կզգան իրենց ուժերի սահմաններից դուրս եղած բաների պակասությունը։

Ահա, ուրեմն, մի նոր ու շատ կարևոր պատճառ երեխաների մարմինն ու անդամները բոլորովին ազատ թողնելու, զգուշանալով միայն, որ նրանք զերծ լինեն վայր ընկնելու վտանգից ու հեռու այն ամեն ինչից, որ կարող է նրանց վնասել։

Վստահորեն կարելի է ասել, որ այն երեխան, որի մարմինն ու անդամները ազատ են, ավելի քիչ է լաց լինում, քան խանձարուրի մեջ փաթաթվածը։ Այն երեխան, որ սոսկ ֆիզիկական կարիքներն է հասկանում, լաց կլինի միայն այն դեպքում, երբ ցավ է զգում. սա արդեն շատ մեծ առավելություն է, որովհետև այդ դեպքում ճշտությամբ կարելի է իմանալ, թե երեխան երբ կարիք ունի օգնության, և, եթե հնարավոր է, պետք է անմիջապես օգնել։ Բայց եթե չեք կարող երեխայի վիճակը թեթևացնել, մնացե՛ք հանգիստ, առանց նրան զգվելու. ձեր դուրգուրանքը չի կարող բուժել նրա փորլուծությունը. իսկ երեխան կհիշի, թե ինչ պետք է անի, որպեսզի դուք նրան գ֊վեք. բավական է, որ, թեկուզ մեկ անգամ, նա կարողանա ստիպել ձեզ զբաղվել իրենով, նա արդեն ձեր տերն է, և ահա ամեն ինչ կորած է։

Որքան քիչ դիմադրեք երեխաների շարժումներին, այնքան նրանք քիչ լաց կլինեն. որքան քիչ ձանձրանաք նրանց լացից, այնքան քիչ կտանջվեք նրանց լռեցնելու համար. որքան քիչ նրանց սպառնաք կամ փայփայեք, այնքան ավելի քիչ երկյոտ ու կամակոր կլինեն և ավելի լավ կմնան իրենց բնական վիճակում։ Երեխաներին ավելի շատ եք անհանգստություն պատճառում, երբ աշխատում եք նրանց լռեցնել, քան երբ թողնում եք, որ լաց լինեն։ Իմ անձնական փորձով

գիտեմ, որ անփույթ թողնված երեխաները ավելի քիչ լացկան են, քան մյուսները։ Սրանով չեմ ուզում բնավ ասել, թե հարկավոր է նրան բոլորովին անուշադրության մատնել. ընդհակառակն, հարկավոր է կանխել նրանց հուզմունքը և չսպասել, որ նրանք իրենց ճիչերով այն ազդարարեն ձեզ։ Բայց նաև չէի ցանկանա, որ սխալ հասկացված խնամքներ տաք նրանց։ Ինչո՞ւ չպետք է լաց լինեն երեխաները, քանի որ տեսնում են իրենց արցունքներից ստացած արդյունքը։ Զգալով, թե ինչ գին եք վճարում նրանց լռեցնելու համար, անվերջ կչարաշահեն։ Վերջիվերջո այնքան շատ կպահանջեն լռելու համար, որ այլևս անհնար կլինի բավարարել. նման դեպքում, երկար, ապարդյուն լաց լինելուց հետո, ուժասպառ կլինեն, կհյուծվեն ու կհիվանդանան։

Տևական լացը այն երեխայի, որը ո՛չ կապկպված է, ո՛չ հիվանդ, և որը, ըստ ամենայնի, բավարարված է, զուտ սովորությունից և համառությունից թելադրված լաց է։ Այստեղ ոչ թե բնությունն է մեղավոր, այլ դայակը, որը չկարողանալով տանել այդ ձանձրալի ճիչերը, իր վարվելակերպով ավելի է սաստկացնում դրանք, առանց մտածելու, որ այսօր լռեցնելով մանկանը, նրան մղում է վաղն ավելի շատ լաց լինելու։

Այս սովորությունը բուժելու կամ կանխելու միակ միջոցը նրան անուշադրության մատնելն է։ Ոչ ոք, նույնիսկ երեխաները, չեն ցանկանում զուր տեղը տանջվել։ Երեխաները համառ են իրենց փորձերի մեջ, բայց եթե դուք նրանցից ավելի հաստատակամ լինեք, նրանք կվհատվեն և այլևս չեն կրկնի։ Այս ձևով միայն կարելի է նրանց փրկել արտասվելուց ու սովորեցնել լաց լինել միայն ցավից հարկադրված։

Բայց և այնպես, երբ լաց են լինում քմահաճույքից կամ համառությունից, նրանց լացը դադարեցնելու համար կա ամենավստահ մի միջոց, այն է՝ նրանց տալ հաճելի ու աչքի ընկնող մի բան, որը մոռացության կտա լաց լինելու իրենց ցանկությունը։ Դայակների մեծ մասը խիստ վարպետ են այս բանում։ Լավ գործադրվելու դեպքում դա շատ օգտակար է, սակայն ծայրաստիճան կարևոր է, որ մանուկը չնկատի, թե ուզում են իրեն զրաղեցնել, և զվարճանա առանց ուշք

դարձնելու, թե իր մասին մոռածող կա։ Սրանում ահա բոլոր դժբախտներն էլ անշնորհք են։

Երեխաներին առհասարակ շատ շուտ են կրծքից կտրում։ Հարկավոր է կտրել, երբ սկսում են ատամ հանել. սրանք դուրս են գալիս ընդհանրապես ցավ և անհանգստություն պատճառելով երեխաներին, որոնք մեքենական մի բնազդով հաճախակի իրենց բերանն են տանում ձեռքն ընկածը, որպեսզի ծամեն։ Այդ գործողությունը հեշտացնելու համար երեխային, որպես խաղալիք, տալիս են որևէ կարծր մարմին, ինչպես՝ փղոսկր և այլն։ Ըստ իս, սա սխալ է։ Կարծր իրերը, քսվելով լնդերին, դրանք ոչ միայն չեն փափկացնում, այլ ընդհակառակն, կոշտացնում, պնդացնում են, այդպիսով ուշի տաժանելի ու ցավագին դարձնելով ատամների բսնումը։ Որպես օրինակ միշտ պետք է վերցնել բնազդը։ Ոչ ոք դեռևս չի նկատել, որ շան լակոտները իրենց նոր բսնող ատամները քսեն քարին, երկաթին, ոսկորին, այլ քսում են փայտին, կաշվին, փալասներին և այլ փափուկ նյութերի, որոնց մեջ ատամը խրվում է։

Մարդիկ մոռացել են պարզ լինել, նույնիսկ երեխաների մոտ։ Ակծաթյա, ոսկյա և մարջանե բոժոժներ, բազմանիստ բյուրեղներ, ամեն դնի և ամեն տեսակի խաղալիքներ, որոնք բոլորը անօգուտ ու վտանգավոր պաճուճանքներ են։ Հրաժարվեցե՛ք դրանցից։ Ո՛չ մի բոժոժ, ո՛չ մի խաղալիք։ Ծառի փոքրիկ ճյուղեր իրենց պտուղներով ու տերևներով, խաշխաշի մի գլուխ, որի մեջ լսվում է սերմերի ձայնը, մատուտակի մի արմատիկ, որ երեխան կարող է ծծել ու ծամել, նույնքան հաճույք կպատճառեն նրան, որքան շքեղ սնոտիքը. բացի այդ, վերծ կլինեն վերջինների անպատեհություններից՝ երեխան չի սովորի պերճանքի ու շռայլության հենց ծնված օրից։

Հաստատված է, որ կաթի ու ալյուրի շփոթը այնքան էլ առողջարար սնունդ չէ։ Սփած կաթն ու հում ալյուրը շատ ավելի դժվարամարս են ու վնասում են ստամոքսին։ Շփոթի մեջ ալյուրն ավելի քիչ է եփվում, քան հացի մեջ. բացի այդ, չի էլ խմորվում. հացաթանն ու բրնձի շիլան ես ավելի օգտակար եմ գտնում։ Եթե անպայման ուզում եք կաթի ու ալյուրի շփոթ պատրաստել, պետք է նախապես ալյուրը մի քիչ բո-

վել։ Իմ ծննդավայրում այսպես բոված ալյուրից շատ առողջարար ու համեղ ապուր են պատրաստում։ Մաջուրն ու ապուրները նույնպես միջակ որակի սնունդ են, որից պետք է խուսափել, որքան հնարավոր է։ Կարևորն այն է, որ երեխաները նախ ծամել սովորեն. սա ատամների բսնելը հեշտացնող լավագույն միջոցն է. և երբ սկսում են ծամածը կուլ տալ, լորձունքը խառնվելով կերակրին, դյուրամարս է դարձնում այն։

Երեխաներին ես ամենից առաջ ծամելու կտայի չոր պտուղներ ու հացի կեղև։ Խաղալու համար կտայի չոր հացի փոքրիկ շերտեր ու Պիեմոնտի հացին նմանվող բիսկվիտ, որը այդ երկրում անվանում են գրիս։ Աշխատելով բերանում փափկացնել հացը, ի վերջո երեխաները նրանից մի փոքրիկ մաս կուլ կտան. նրանց ատամները այսպիսով դուրս կգան, ու երեխաներն աննկատելիորեն կկտրվեն կաթից։ Դյուրի երեխաներն ընդհանրապես առողջ ստամոքս ունեն, և նրանց կրծքից կտրելիս ուրիշ ձևականության չեն դիմում, քան այն, ինչ վերը հիշեցի։

Մնված օրից երեխաներն սկսում են խոսակցություն լսել. մարդիկ նրանց հետ խոսում են ոչ միայն նախքան նրանց կողմից հասկացվելը, այլև իրենց լսած ձայնը կրկնել կարողանալուց առաջ։ Նրանց խոսելու զգայարանը, որ դեռևս ընդարմացած է, միայն աստիճանաբար է սովորում կրկնել թելադրվածը հնչյունները, և դեռևս վստահ չենք, թե արդյո՞ք այդ հնչյունները նրանց ականջի համար նույնքան պարզ լսելի են, ինչքան մեր։ Ես դեմ չեմ, որ դայակը երեխային զվարճացնի շատ ուրախ և շատ այլազան երգերով ու եղանակներով, բայց համամիտ չեմ, որ նա անվերջ երեխայի կլուխը լցնի բազմաթիվ անօգուտ խոսքերով, որոնցից նա ոչինչ չի ընկալում, բացի հնչյուններից։ Ես կուզենայի, որ երեխային սովորեցրած առաջին հնչյունները լինեն սահմանափակ, հեշտ, հասկանալի, ստեպ-ստեպ կրկնված, և որ նրանց արտահայտած բառերը վերաբերեն այնպիսի շոշափելի իրերի, որոնք նախապես կարելի է ցույց տալ մանկանը։ Այն չարաբաստիկ սովորությունը, որով մենք հեշտությամբ յուրացնում ենք մեզ համար անհասկանալի բառերը,

ավելի շուտ է երևան գալիս, քան մենք կարծում ենք։ Աշակերտը դասարանում լսում է ուսուցչի շատախոսությունը այնպես, ինչպես խանձարուրի մեջ լսել էր դայակի դատարկախոսությունը։ Ինձ թվում է, շատ ավելի օգտակար կլիներ, եթե երեխային այնպես դաստիարակեին, որ նա ոչինչ չհասկանար այդ խոսակցություններից։

Եթե որևէ մեկը ցանկանար զբաղվել երեխաների լեզվի ու առաջին խոսքերի կազմությամբ, բազմաթիվ խորհրդածություններ կծագեին նրա մեջ։ Ինչ էլ անեն, երեխաները միշտ միևնույն ձևով խոսել կսովորեն, և այս դեպքում փիլիսոփայական մտահայեցողությունը բացարձակապես ոչինչ անելիք չունի այստեղ։

Նախ և առաջ, երեխաներն ունեն, այսպես ասած, իրենց տարիքին համապատասխան քերականություն, որի շարադասությունը մերինից ավելի ընդհանուր կանոններ ունի, և եթե լավ ուշադրություն դարձնենք դրա վրա, մեզ զարմանք կպատճառի այն ճշտությունը, որով նրանք հետևում են մի շարք նմանությունների, գուցե և շատ քերի կողմերով, բայց և շատ կանոնավոր կերպով, որոնք աչք են ծակում միայն իրենց կոպտությամբ կամ այն բանով, որ սովորական խոսակցության մեջ գործ չեն ածվում*։ Անտանելի իմաստակություն և բոլորովին ավելորդ աշխատանք կլիներ՝ ի հակադրություն եղած սովորության, ջանալ ուղղել երեխայի թույլ տված այն բոլոր սխալները, որոնք ժամանակի ընթացքում նա ինքը անպայման կուղղի։ Երեխաների մոտ միշտ ուղիղ խոսեցե՛ք։ Արե՛ք այնպես, որ նրանք ոչ ոքից այնքան հաճույք չզգան, որքան ձեզնից, և համոզված եղե՛ք, որ աննկատելիորեն նրանց լեզուն կմաքրվի ձեր օրինակով, առանց ձեր հանդիմանությունների։

Բայց կա բոլորովին այլ նշանակություն ունեցող մի սխալ, որը կարելի է նույնքան հեշտությամբ վերացնել. այդ այն է, որ մենք ընդհանրապես սաստիկ շտապում ենք շուտ խոսել

---

* Այստեղ հեղինակը մեջ է բերում մի քանի ֆրանսերեն բառերի անալոգիաներ, որոնք թարգմանության մեջ կորցնում են իրենց նշանակությունն իբրև նմուշներ։ Այդ պատճառով էլ մենք ավելորդ համարեցինք թարգմանել։ — Ս. Բ.

տալ երեխաներին, ասես վախենալով, որ նրանք չկարողանան ինքնաբերաբար խոսել։ Այս անխոհեմ շտապողականությունը մեր ցանկացածի բոլորովին հակառակ արդյունք է տալիս։ Երեխաներն ավելի ուշ և ավելի խառնաշփոթ են խոսում։ Այն ծայրահեղ ուշադրությունը, որով մենք լսում ենք նրանց, արգելք է լինում, որ նրանք ավելի պարզ արտասանեն բառերը, և որովհետև հազիվ են բարեհաճում բաց անել բերանները, նրանցից շատերը ամբողջ կյանքում պահում են արտասանության այնպիսի մի թերություն և խառնաշփոթ խոսելու այնպիսի մի սովորություն, որ գրեթե դժվար է լինում նրանց հասկանալը։

Ես շատ եմ ապրել գյուղացիների մեջ և դեռ չեմ լսել, որ նրանցից մեկնումեկը՝ մարդ թե կին, աղչիկ թե տղա, ո տառը ղ արտասաներ։ Այդ ինչի՞ց է։ Գյուղացիների զգայարանները մի՞թե այլ կերպ են կառուցված, քան մերը։ Ո՛չ, բայց նրանք այլ կերպ են վարժվում։ Իմ լուսամուտի դիմաց մի բլրակ կա, որտեղ հավաքվում են տեղի երեխաները՝ խաղալու համար։ Չնայած, որ նրանք ինձնից բավական հեռու են, բայց ես պարզ լսում եմ նրանց խոսակցությունը և հաճախ այս գրքի համար հետաքրքիր նյութեր եմ քաղում։ Հաճախ ականջս ինձ խաբում է նրանց տարիքի վերաբերյալ։ Ինձ թվում է, թե խոսողները տասը տարեկան երեխաներ են. նայում եմ ու տեսնում երեք-չորս տարեկան մանուկների հասակ ու դեմքեր։ Մենակ ես չեմ, որ ենթարկվում եմ այս փորձությանը. այն քաղաքացիները, որոնք գալիս են ինձ այցելության և որոնց հարցնում եմ այդ մասին, միևնույն սխալի մեջ են ընկնում։

Սրա պատճառն այն է, որ քաղաքում երեխաները, մինչև 5—6 տարեկան հասակը դաստիարակվելով սենյակում և վերակացուհու թևի տակ, լսելի լինելու համար բավարարվում են շշնջալով. հազիվ են շարժում շրթերը, լսողները մեծ դժվարությամբ են որսում նրանց խոսքերը. նրանք վատ են կրկնում այն բառերը, որ նրանց թելադրում են, և միմիայն երկարատև ուշադրության շնորհիվ, շարունակ նրանց շրջապատում ապրող անձինք ավելի շուտ կարողանում են գուշակել նրանց ասելիքը, քան ասածը։

Գյուղում բոլորովին այլ է. գեղչկուհին շարունակ իր զավակի կողքին չի լինում. երեխան էլ ստիպված է սովորել շատ պարզ ու շատ բարձր արտասանել այն ամենը, որ ուզում է մորը հասկացնել. դաշտում երեխաները, ցրիվ եկած և հեռացած հորից, մորից ու մյուս երեխաներից, վարժվում են հեռվից խոսել, չափելով իրենց ձայնի ուժը այն տարածությամբ, որը նրանց բաժանում է իրենց լսողներից։ Ահա թե ինչպես իրականում սովորում են պարզ արտասանել բառերը, այլ ոչ թե լսողության դարձած դաստիարակչուհու ականջին մի քանի ձայնավորներ թոթովել։ Ճիշտ է, երբ գյուղացու երեխային մի բան եք հարցնում, նա ամաչելուց գուցե դժվարանա պատասխանել, բայց ասելիքը պարզ կասի. մինչդեռ քաղաքի երեխայի համար աղախինը պետք է թարգմանչի դեր կատարի, այլապես անկարելի է հասկանալ, թե նա ինչ է մոմոում ատամների արանքից [1]։

Մեծանալուց հետո տղաները դպրոցներում, իսկ աղջիկները վանքերում հնարավորություն ունեն ուղղելու այս պակասությունը։ Իսկապես, և՛ առաջինները, և՛ երկրորդները ավելի պարզ են խոսում, քան թե նրանք, որոնք շարունակ իրենց հայրական տանն են դաստիարակվել։ Բայց այն, որ նրանց արգելք է լինում յուրացնելու նույնքան հստակ մի առոգանություն, որքան գյուղացիներինը, շատ բան անգիր սովորելու և սովորածը բարձրաձայն արտասանելու անհրաժեշտությունն է, որովհետև դասը սերտելիս նրանք սովորում են վրանցուկ անել, անհոգ ու վատ արտասանել բառերը։ Իսկ պատմելու ժամանակ է՛լ ավելի վատ է. նրանք մեծ ջանք են գործադրում բառերը գտնելու, ձգձգում ու երկարացնում են

---

[1] Կան, իհարկե, բացառություններ. շատ անգամ այն երեխաները, որոնց արտասանած բառերը սկզբում վատ են լսվում, հետագայում խլացնելու աստիճան բարձրախոս են դառնում։ Թե՛ ես անդրադառնայի այդ մանրամասնություններին, աշխատությունս երբեք չէի կարող վերջացնել։ Ծուրաքանչյուր գիտակից ընթերցող կնկատի, որ չափազանցությունն ու թերությունը միևնույն պակասությունից են առաջ գալիս և հավասարապես ուղղվում են իմ մեթոդով։ Ինձ համար հետևյալ երկու ճշմարտությունները՝ «Միշտ բավարար, երբեմն շատ», անբաժանելի են։ Լավ հատատված առաջինին անհրաժեշտորեն հետևում է երկրորդը։

վանկերը, և անհնար է, որ լեզուն չկաղի, երբ հիշողությունը դավաճանում է։ Այսպես են առաջանում կամ պահպանվում առոգանության թերությունները։ Հետագայում կտեսնենք, որ էմիլը զերծ է այդ թերություններից, կամ, եթե ունի էլ, դրանք չեն բխում համանման պատճառներից։

Ես ընդունում եմ, որ հասարակ ժողովուրդն ու գյուղացիներն ընկնում են մի այլ ծայրահեղության մեջ՝ որ նրանք համարյա թե միշտ պետք եղածից ավելի բարձր են խոսում, որ բառերը շատ ճիշտ արտասանելով, նրանց հնչյունները չափազանց ուժեղ են ու կոպիտ, որ խոսում են խիստ շեշտված ձևով, որ բառերը վատ են ընտրում և այլն։

Բայց, նախ, այդ չափազանցությունն ինձ համար ավելի փոքր թերություն է, քան մյուսը, քանի որ խոսելու առաջին պայմանը լսելի լինելն է, և ամենամեծ աքսալը, որ կարելի է գործել, դա առանց լսելի լինելու խոսելն է։ Պարծենալ, թե առանց ամենափոքր շեշտի ենք խոսում, այդ հավասար է պարծենալուն, թե նախադասություններից վերացնում ենք նրանց դեղեցկությունն ու ուժը։ Շեշտը խոսքի հոգին է, նրան տալիս է զգացմունք և ճշմարտացիություն։ Շեշտը ավելի քիչ է ստում, քան խոսքը, գուցե և այդ է պատճառը, որ կրթված մարդիկ այնքան վախենում են դրանից։ Ամեն ինչ միևնույն տոնով ասելու սովորությունից է գալիս աննկատելի կերպով մարդկանց հեգնելու սովորությունը։ Արտաքսված շեշտին հաջորդում են նորաձևության մեջ մտած ծիծաղելի, շինծու ձևերը, որ առանձնապես նկատելի են պալատական երիտասարդների շրջանում։ Խոսքի և ձևերի այս արհեստականությունն է, որ ֆրանսիացու հետ մտերմությունը ընդհանրապես տհաճ ու վանողական է դարձնում մյուս ազգերի համար։ Նա փոխանակ իր խոսքի մեջ շեշտ դնելու, ձև է դնում։ Այսպիսով չի կարելի համակրանք շահել։

Լեզվի այս բոլոր մանր թերությունները, որոնցով շատերն անհանգստանում են, թե երեխաները կարող են վարակվել, դատարկ բաներ են. դրանք հեշտությամբ կարելի է կանխել կամ ուղղել։ Բայց այն թերությունները, որ մենք տալիս ենք երեխաներին, նրանց խոսելակերպը դարձնելով խուլ, շփոթ, երկչոտ, անընդհատ քննադատելով նրանց առոգանությունը,

խծբծելով նրանց բոլոր բառերը, երբեք չեն կարող ուղղվել։ Այն մարդը, որ հյուրասրահներում է միայն խոսել սովորել, չի կարող լսելի լինել մի զորագնդի առաջ ու չի կարող ազդել ժողովրդի վրա որևէ ապստամբության ժամանակ։ Ամենից առաջ երեխաներին սովորեցրե՛ք խոսել տղամարդկանց հետ։ Կանանց հետ նրանք խոսել կսովորեն, երբ որ կարիք լինի։

Եթե ձեր երեխաները գյուղում մեծանան, գեղչկական կյանքի հասարակ պայմաններում, նրանք ավելի հնչեղ ձայն կունենան ու չեն յուրացնի քաղաքի երեխաների անորոշ բոթովանքը։ Նրանք չեն էլ յուրացնի գյուղացիների առոգանությունն ու խոսելաձևը. իսկ եթե յուրացնեն էլ, շուտով կթոթափեն այդ թերությունը, բավական է, որ ծնված օրից նրանց հետ ապրող ուսուցիչը կանխի կամ իր լեզվի ճշտությամբ վերացնի գյուղական բարբառի ազդեցությունը։ Էմիլը ֆրանսերեն կխոսի նույնքան մաքուր, ինչքան ես կարող եմ խոսել, բայց ավելի հստակ ու լավ առոգանությամբ, քան ես։

Երեխան, որ ուզում է խոսել, պետք է լսի միայն իրեն հասկանալի բառերը, արտասանի միայն այն բառերը, որոնք կարող է արտասանել։ Այդ նպատակով գործադրած ջանքերը նրան կմղեն բազմիցս կրկնելու միևնույն վանկը, կարծես ցանկանալով ավելի հստակ արտասանելու փորձ կատարել։ Երբ երեխան սկսում է բոթովել, այնքան էլ մի չարչարվեք գուշակելու, թե ինչ է ասում։ Միշտ լսելի լինելու պահանջկոտությունը նույնպես իշխելու յուրահատուկ տենչ է, իսկ երեխան ոչ մի իշխանություն չպետք է ունենա։ Բավական է, որ ամենայն ուշադրությամբ հոգաք ամենաէականը, նրան մնում է ձեզ հասկացնել, թե որը այդպիսին չէ։ Երբեք չպետք է շտապել ու պահանջել, որ երեխան խոսի. նա ի՛նքը կխոսի, երբ որ զգա խոսելու օգտակարությունը։

Ճիշտ է, սակայն, որ այն երեխաները, որոնք շատ ուշ են սկսում խոսել, երբեք մյուսների նման այնպես հստակ չեն խոսում։ Բայց և այնպես, ուշ խոսել սկսելու պատճառով չէ, որ նրանց խոսելու զգայարանը շուտ չի զարգանում. ընդհակառակն, նրանք ուշ են սկսում խոսել, որովհետև ծնվելուց են խոսելու ոչ-զարգացած զգայարանով, այլապես ինչո՞ւ պետք է մյուսներից ավելի ուշ խոսեին։ Մի՞թե ավելի քիչ առիթ

ունեն խոսելու, կամ նրանց ավելի քի՞չ են դրդում խոսելու։ Ընդհակառակն, հենց որ նկատում են, թե երեխայի խոսելն ուշանում է, ավելի շատ են չարչարվում այդ երեխային մի բան թոթովել տալու, քան թե նրան, որն ավելի շուտ է սկսել խոսել։ Այս անիմաստ շտապողականությունը կարող է նպաստել նրանց լեզվի անհասկանալի դառնալուն. մինչդեռ նվազ շտապելով, ժամանակ կունենային ավելի կատարելագործվելու։

Այն երեխաները, որոնց շատ եք ստիպում խոսել, ժամանակ չունեն ո՛չ բառերի լավ արտասանությունը սովորելու, ո՛չ էլ իրենց ասածը լավ հասկանալու, այնինչ, եթե նրանց ինքնուրույն թողնեք, նրանք նախ փորձ կանեն վարժվել ամենից հեշտ արտասանելի վանկերի վրա, և հետզհետե սրանց միացնելով այս կամ այն նշանակությունը, որ կարելի է հասկանալ նրանց շարժումներից, նրանք ձեզ կտան իրենց բառերը, ձերը յուրացնելուց առաջ։ Այդպիսով, նրանք այս վերջիններն սովորում են դրանք հասկանալուց հետո։ Ջշտապելով բառերը գործածել, նրանք նախօրոք ուշադրություն են դարձնում, թե դուք ի՞նչ իմաստ եք տալիս այդ բառերին, և ապահով լինելուց հետո միայն յուրացնում են դրանք։

Երեխաներին ժամանակից առաջ խոսել շտապեցնելու ամենամեծ չարիքն այն չէ, որ նրանց հետ մեր ունեցած առաջին զրույցը և նրանց արտասանած առաջին բառերը ոչ մի իմաստ չունեն նրանց համար, այլ այն, որ այդ բառերը մերից տարբեր իմաստ ունեն, իսկ մենք այդ չենք նկատում. այնպես որ, մինչդեռ մեզ թվում է, թե նրանք մեզ ճիշտ են պատասխանում, իրականում մեզ հետ խոսում են առանց մեզ հասկանալու, ոչ էլ մենք ենք նրանց հասկանում։ Սովորաբար, այսպիսի երկդիմությունից է գալիս այն անսպասելի զարմանքը, որ մեզ պատճառում են երեխաների խոսքերը, որոնց մենք վերագրում ենք նրանց ասածի հետ ոչ մի կապ չունեցող մտքեր։ Ինձ թվում է, թե այն անտարբերությունը, որով մենք վերաբերվում ենք բառերի իսկական իմաստին, որն այնքան նշանակություն ունի երեխաների համար, հենց նրանց առաջին սխալների պատճառն է. և այս սխալները, նույնիսկ դրանցից ազատվելուց հետո էլ, ազդում են նրանց

մտքերի ընթացքի վրա ամբողջ կյանքում։ Հետագայում շատ առիթներ կունենամ ասածս օրինակներով լուսաբանելու։

Սեղմեցե՛ք, ուրեմն, ինչքան կարելի է, երեխաների բառապաշարը։ Խիստ մեծ անպատեհություն է, եթե երեխան ավելի շատ բառեր գիտե, քան մտքեր ունի, ու կարող է ավելի շատ բան ասել, քան մտածել։ Ես կարծում եմ, որ եթե գյուղացիներն ընդհանրապես ավելի ճիշտ մտքեր են արտահայտում, քան թե քաղաքացիները, դա նրանից է, որ նրանց բառապաշարը ավելի սահմանափակ է։ Նրանք ավելի քիչ մտքեր ունեն, բայց դրանք ավելի լավ են շարադրում։

Մանկության զարգացման համարյա բոլոր առաջին քայլերը կատարվում են համընթաց։ Երեխան սովորում է խոսել, ուտել, քայլել մոտավորապես միաժամանակ։ Այդ է, իսկապես, նրա կյանքի առաջին շրջանը։ Մինչև այդ նա ավելին չէ, քան այն, որ եղել էր մոր արգանդում. նա չունի ո՛չ զգացմունք, ո՛չ միտք. նա հազիվ զգացողություններ ունի։ Նա չի զգում անգամ իր սեփական գոյությունը.

«Vivit, et est vitae nescius ipse suae» *.

---

* «Ապրում է, բայց հազիվ է զգում, թե ապրում է»— Ե. Բ.

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ

Այստեղ է սկսվում կյանքի երկրորդ շրջանը, և այստեղ էլ իսկապես վերջանում մանկությունը, որովհետև infans *և* puer* *բառերը հոմանիշ չեն։ Առաջինը պարփակվում է երկրորդի մեջ ու նշանակում է՝ «որ չի կարող խոսել». այդ է պատճառը, որ Վալերիուս Մաքսիմուսը գրել է՝* puerum infantem։ *Բայց ես կշարունակեմ գործածել այս բառը այնպես, ինչպես ընդունված է մեր լեզվում, մինչև այն տարիքը, որի համար նա ուրիշ անուններ ունի։*

Երբ մանուկներն սկսում են խոսել, նրանք ավելի քիչ են լաց լինում։ Այս առաջադիմությունը բնական է. մի լեզվին փոխարինում է մի ուրիշը։ Երբ կարող են խոսքով հայտնել, թե տանջվում են, ինչու՞ պիտի այն արտահայտեին ճիչ ու լացով, բացի այն դեպքից, երբ ցավն այնքան է ուժեղ, որ հնարավոր չէ խոսքով հայտնել։ Եթե դրանից հետո էլ երեխան տակավին շարունակում է իր լացը, դրանում նրան շըրջապատողներն են մեղավոր։ Հենց որ Էմիլը ասի՝ «Այսինչ տեղս ցավում է», պետք է հասկանալ, որ խիստ ուժեղ ցավն է ստիպում նրան լաց լինել։

Եթե երեխան փափկակազմ է ու զգայուն և բնականից տրամադրված է ամեն առիթով լաց լինելու՝ անօգուտ ու անհետևանք ճիչեր արձակելով, ես իսկույն կվերացնեմ դրա սկզբնապատճառը։ Քանի դեռ շարունակում է լացը, ես նրա մոտ չեմ գնա, բայց հենց որ լռեց, իսկույն մոտ կվազեմ։ Շատ չանցած՝ երեխան ինձ իր մոտ կանչելու համար կա՛մ

---

* «Մանուկ և երեխա»։— Ե. Բ.

կլուի, կա՛մ, ամենաշատը, մի անգամ կճչաս։ Երեխաները նշանների իմաստն ըմբռնում են միայն նրանցից կրած իրենց տպավորությամբ, նրանց համար ուրիշ չափանիշ գոյություն չունի. ինչքան էլ երեխան ցավ զգա, շատ հազվադեպ լաց կլինի, եթե մենակ է և հույս չունի, որ կլսեն իր ձայնը։

Երբ երեխան վայր է ընկնում, գլուխն է ջարդում, քթից արյուն է հոսում, մատն է կտրում, փսխանակ խուճապահար նրա մոտ վազելու, ես հանգիստ մնում եմ իմ տեղում, գոնե մի որոշ ժամանակ։ Փորձանքը արդեն տեղի է ունեցել, և անհրաժեշտ է, որ երեխան դիմանա դրան։ Իմ անհանգիստ փութկոտությունը սոսկ կծառայեր նրան առավել վախեցնելուն և ցավի զգացողությունը աստիճանելուն։ Իրականում, պատահած դժբախտությունից ավելի վախն է տանջում վիրավորվածին։ Գոնե ես նրան կազատեմ այս վերջին տագնապից, որովհետև, անտարակույս, մանուկն իր ցավի մասին զաղափար կկազմի համաձայն իմ ցույց տված վերաբերմունքի. տեսնելով, որ ես հուզված օգնության եմ վազում, մխիթարում, ցավակից եմ լինում, նա արդեն իրեն կորած կհամարի։ Իսկ եթե տեսնի, որ ես սառնարյուն եմ, ինքն էլ շուտով կհանգստանա և, այլևս ցավ չզգալով, իրեն բուժված կկարծի։ Այդ տարիքում է, որ ստանում են արիության առաջին դասերը և, աներկյուղ տանելով թեթև ցավերը, աստիճանաբար սովորում են դիմանալու նաև ուժեղ ցավերին։

Ես ոչ միայն չեմ անհանգստանում, որ էմիլը կսրդղ է երբևէ վիրավորվել, այլ, ընդհակառակն, ինձ նույնիսկ հաճելի չէր լինի, եթե նա ոչ մի անգամ չվիրավորվեր ու մեծանար՝ առանց ճանաչելու ցավը։ Ցավի զգացումը առաջին բանն է, որ նա պետք է սովորի և անպայման իմանա։ Կարելի է ենթադրել, թե երեխաները փոքր ու թույլ են հենց նրա համար, որպեսզի անվտանգ այսպիսի կարևոր դասեր առնեն։ Եթե երեխան ընկնի իր հասակի բարձրությունից, նրա ոտքը չի ջարդվի, եթե փայտով ինքն իրեն հարվածի, ձեռքը չի կոտրվի. եթե մի սուր երկաթ ձեռքն առնի, ուժեղ չի սեղմի և ձեռքը շատ խոր չի կտրվի։ Երբեք չեմ լսել, որ ազատ թողնված երեխան ջարդվի, ծանր վիրավորվի կամ լուրջ վնասվի, բացի այն դեպքից, երբ նրան անխոհեմաբար դրել են մի

բարձր տեղ կամ կրակին մոտ, կամ նրա մոտ թողել են վտանգավոր գործիքներ։ Ի՞նչ անուն տալ բոլոր այն զանազան իրերին, որ դարսում են երեխայի շուրջը, որպես թե նրան ցավի դեմ ոտից գլուխ զրահապատելու համար, այնինչ, չափահաս դառնալով, նա կմնա բոլորովին անպաշտպան, զուրկ՝ քաջությունից ու փորձառությունից, և առաջին խայթոցից իրեն մեռած կհամարի, կամ կուշաթափվի՝ տեսնելով իր արյան առաջին կաթիլը։

Մենք՝ երեխաներին ուսուցանելու անիմաստ մոլուցքով բռնված, նրանց սովորեցնում ենք այն ամենը, ինչ նրանք ինքնուրույն ավելի լավ կսովորեին, և մոռանում ենք այն, ինչ միայն մենք կարող էինք նրանց սովորեցնել։ Կա՞ արդյոք ավելի հիմար բան, քան այն ջանքերը, որ մենք ենք գործադրում մանկանը քայլել սովորեցնելու համար, ասես երբևէ պատահել է, որ երեխան չափահաս տարիքում չկարողանա քայլել իր դայակի մեղքով։ Ընդհակառակն, որքա՜ն մեծ է թիվն այն մարդկանց, որոնք ամբողջ կյանքում վատ են քայլել, որովհետև մանուկ հասակում նրանց վատ են սովորեցրել քայլել։

Էմիլը ո՛չ ծակ բարձիկ է ունենալու, ո՛չ գլորվող կողով, ո՛չ սայլակ, ո՛չ նեցուկ. ամենաշատը, երբ նա կսկսի ոտքերը հերթով առաջ գցել, նրան կօգնեն սալահատակների անհարթություններով անցնելիս [1]։ Փոխանակ երեխային սենյակի նեխած օդում թառամեցնելու, նրան ամեն օր պետք է դաշտ տանել։ Թո՛ղ այնտեղ նա վազվզի, խաղա, թո՛ղ օրական հարյուր անգամ վայր ընկնի, ավելի լավ. ավելի շուտ կսովորի վեր կենալ։ Ազատության պատճառած բավարարությունը շատ վերքեր է դարմանում։ Իմ սանը հաճախ չարդվածքներ կստանա, սակայն փոխարենը միշտ զվարթ կլինի։ Իսկ եթե ձեր սաները քիչ չարդվածքներ են ունենում, նրանք միշտ էլ դժգոհ կլինեն, ճնշված, տխուր։ Կասկածում եմ, ուրեմն, որ օգուտը սրանց կողմը լինի։

---

[1] Ավելի ծիծաղելի ու ավելի անհաստատ բան չկա, քան այն մարդկանց քայլվածքը, որոնց թևից բռնած քայլեցրել են մանուկ հասակում. այս էլ այն հասարակ, բայց արդար դիտողություններից մեկն է, որոնք ճիշտ են շատ տեսակետներից։

Նրանց զարգացման ևս մի հանգամանք նույնպես սակավաուիթ է դարձնում երեխաների դանգատը. դա նրանց ուժի զարգացումն է։ Հետզհետե ամեն ինչ ինքնուրույն կատարելով, նրանք ավելի քիչ են կարիք զգում դիմելու ուրիշի օգնությանը։ Նրանց ուժի հետ միաժամանակ զարգանում է գիտակցությունը, որը նրանց ի վիճակի է դարձնում ղեկավարելու այդ ուժը։ Այս երկրորդ ատիճանով է, որ իսկապես սկսվում է անհատի կյանքը, այժմ է մարդը ճանաչում ինքն իրեն։ Հիշողությունը ինքնության զգացումը տարածում է նրա կյանքի բոլոր ժամանակների վրա։ Նա իրոք դառնում է ինքնուրույն, հետևապես և արդեն ընդունակ՝ լինելու երջանիկ կամ դժբախտ։ Ուրեմն, անհրաժեշտ է, որ այստեղ սկսենք նրան դիտել որպես մի բարոյական էակ։

Թեև մոտավորապես կարելի է որոշել մարդկային կյանքի ամենաերկար տևողությունը և յուրաքանչյուր հասակում նրա սահմանին հասնելու հավանականությունները, բայց ոչինչ այնքան անորոշ չէ, որքան մարդու, առանձին վերցրած, կյանքի տևողությունը։ Շատ քչերն են հասնում այդ ամենաբարձր տարիքին։ Կյանքի ամենավտանգավոր տարիները սկզբնական շրջանումն են։ Մարդը որքան փոքր է, այնքան քիչ հույս պետք է ունենա ապրելու։ Մնված երեխաների հազիվ կեսն է հասնում պատանեկության տարիքին, և հավանական է, որ ձեր սանը չապրի մինչև չափահասություն։

Ի՞նչ պետք է մտածել, ուրեմն, այն դաժան դաստիարակության մասին, որը ներկան զոհաբերում է մի անորոշ ապագայի, երեխային կաշկանդում է ամեն տեսակ շղթաներով ու նախօրոք դժբախտացնում է նրան՝ ապագա ինչ-որ կարծեցյալ երջանկության նախապատրաստելու պատրվակով, երջանկություն, որը, հավանորեն, նա երբեք չի էլ արժանանա վայելելու։ Եթե ընդունենք մի րոպե, որ նպատակը արդարացնում է այսօրինակ դաստիարակությունը, ապա ի՞նչպես կարող ենք առանց ղայրության նայել այն խեղճ մարդկանց, որոնք տնքում են անտանելի լծի տակ և տաժանակիրների նման դատապարտված են անդով աշխատանքի՝ առանց վստահ լինելու, որ թափված այդքան ջանքերը կարող են նրանց օգտակար լինել։ Ուրախության տարիներն անց-

նում են արցունքի, պատիժների, սպառնալիքների, ստրկության մեջ։ Հեղձ երեխային շարչարում են իբր թե նրա բարիքի համար և չեն նկատում, որ մահն են կանչում, որը կգա նրա վրա դնելու իր ձեռքը այս տխուր շրջապատի մեջ։ Ով գիտի, ինչքա՞ն երեխաներ են ոչնչանում մի հոր կամ մի դաստիարակի արատավոր խոհեմության պատճառով։ Նրանք երջանիկ են, որ փրկվում են այդ դաժան խոհեմությունից և միակ առավելությունը, որ քաղում են նրա պատճառած տառապանքներից, դա առանց ափսոսանքի հեռանալն է մի կյանքից, որի միայն վշտերն են ճանաչել։

Մարդի՛կ, եղե՛ք մարդկային, այդ է ձեր առաջին պարտականությունը։ Եղե՛ք մարդկային ամեն տեսակ դրության, ամեն հասակի, այն ամենի նկատմամբ, որ բնորոշ է մարդուն։ Ձեզ համար մարդկայնությունից դուրս իմաստություն գոյություն չունի։ Սիրեցե՛ք մանկությունը, նպաստեցե՛ք նրա խաղերին, հաճույքներին, նրա բարեհամբույր բնազդներին։ Ձեզանից ո՞վ երբեմն սրտի ցավով չի հիշում ու ափսոսում իր այն տարիքը, երբ ժպիտը միշտ խաղում է շուրթերին և հոգին լի է անդորրությամբ։ Ինչո՞ւ եք ուզում իլել փոքրիկ անմեղներից կարճատև ու արագորեն նրանցից խույս տվող կյանքի և այն թանկագին բանի՝ մանկական հասակի վայելքը, որն անկարող են նրանք չարաշահել։ Ինչո՞ւ եք ուզում դառնությամբ ու վշտով լցնել այս այնքան արագավազ առաջին տարիները, որոնք, ինչպես նրանց, այնպես էլ ձեզ համար, այլևս չեն վերադառնա։ Հայե՛ր, գիտե՞ք արդյոք, թե երբ և որ պահին է գալու ձեր զավակների մահը։ Նրանցից խլելով այն կարճ ժամանակամիջոցը, որ բնությունն է պարգևում, դուք ձեզ կնախապատրաստեք զղջման ու վշտի։ Այն րոպեից, երբ նրանք զգում են ապրելու հաճույքը, արե՛ք այնպես, որ նրանք վայելեն այն, արե՛ք այնպես, որ երբ մի օր մահը գա նրանց տանելու, նրանք չմեռնեն կյանքի քաղցրությունը չճաշակած։

Ինչքա՜ն ձայներ պիտի բարձրանան իմ դեմ։ Ես արդեն հեռվից լսում եմ այն կեղծ զգոնության աղաղակները, որ անդադար մեզ դուրս է մղում մեր ինքնությունից, որ ներկան միշտ ոչինչ է համարում և, անընդհատ հետամտելով մի ա-

պագայի, որը ինչքան մենք առաջանում ենք, այնքան ավելի է հեռանում, մեզ տանում է այնտեղ, որտեղ մենք չենք լինելու երբեք, ջանալով տանել այնտեղ, որտեղ մենք չկանք։

Ինձ կպատասխանեք, թե հենց այդ ժամանակ էլ պետք է ուղղել մարդկանց վատ հակումները. մանուկ հասակում, երբ պատիժները սակավ են ազդում, պետք է բազմապատկել դրանք, որպեսզի բանականության տարիքում դրանց կարիքը չզգան։ Իսկ ո՞վ է ասում, որ ամբողջապես ձեզնից է կախված այս կարգադրությունը, և որ այն բոլոր գեղեցիկ պատվիրանները, որոնցով ծանրաբեռնում եք երեխայի մատաղ միտքը, նրան հետագայում ավելի շատ վնասակար չեն լինի, քան օգտակար։ Ո՞վ է ձեզ հավատացրել, թե դուք նրանց վիշտ պատճառելով կարող եք հեռու պահել չարիքից։ Ինչո՞ւ եք դուք նրանց այնպիսի նեղությունների ենթարկում, որ նրանք ի վիճակի չեն տանելու, եթե վստահ չեք, որ այսօրվա այդ նեղությունները կարող են թեթևացնել նրա վաղվա կյանքը։ Եվ ի՞նչպես կարող եք ապացուցել, որ այն վատ հակումների պատճառը, որոնցից դուք կարծում եք, թե կփրկեք նրանց, ավելի շուտ ձեր արատավոր հոգածությունը չէ, քան թե բնությունը։ Ողորմելի կանխատեսություն, որն այսօր դժբախտացնում է մի էակի, վաղը նրան երջանկացնելու հիմնավոր կամ անհիմն հույսով։ Եթե այս գռեհիկ ընդդիմախոսները սանձարձակությունը շփոթում են ազատության հետ, իսկ երջանիկ երեխային՝ շփացած երեխայի հետ, ապա սովորեցնենք այդպիսիներին՝ տարբերել մեկը մյուսից։

Ցնորքների հետևից չընկնելու համար չմոռանանք այն, ինչ համապատասխանում է մեր դիրքին։ Մարդկությունը իր տեղն ունի իրերի համակարգության մեջ. մանկությունն էլ ունի իրը՝ մարդկային կյանքի համակարգության մեջ։ Չափահաս մարդու մեջ պետք է դիտել մարդուն, երեխաների մեջ՝ երեխային, յուրաքանչյուրին որոշել իր տեղն ու նրան ամրացնել այդ տեղին, մարդկային կրքերը կարգավորել՝ համաձայն մարդու կազմվածքին, ահա այն ամենը, ինչ մենք կարող ենք անել նրա բարեկեցության համար։ Մնացածը կախում ունի կողմնակի պատճառներից, որոնք դուրս են մեր իշխանությունից։

Մենք չգիտենք, թե ինչ է բացարձակ երջանկությունը կամ դժբախտությունը։ Ամեն ինչ խառն է այս կյանքում, ուր մենք ոչ մի անխառն զգացում չենք վայելում և երկու րոպե չենք գտնվում միևնույն վիճակում։ Մեր հոգեկան զգացմունքները, ինչպես և մեր մարմնի փոփոխությունները հարատև մակընթացության մեջ են։ Ջարն ու բարին ընդհանուր են մեզ բոլորիս համար, սակայն տարբեր չափերով։ Ամենից երջանիկը նա է, ով ավելի քիչ է տանջվում վշտերից։ Ամենից թշվառը նա է, ով ամենից քիչ է հաճույք զգում։ Միշտ էլ տառապանքն ավելի շատ է, քան հաճույքը. ահա այն տարբերությունը, որ ընդհանուր է բոլորի համար։ Այսպես ուրեմն, աշխարհում մարդու երջանկությունը միայն բացասական մի վիճակ է. այն պետք է չափել նրա կրած տանջանքների նվազագույն քանակով։

Ցավի ամեն մի զգացմունք անբաժան է այդ ցավից ազատվելու ցանկությունից. հաճույքի ամեն մի գաղափար անբաժան է այն վայելելու ցանկությունից. ամեն մի ցանկություն զրկանք է ենթադրում, ու մեր զգացած բոլոր զրկանքները ծանր են. ուրեմն, մեր դժբախտությունը կայանում է մեր ցանկությունների և ընդունակությունների անհամապատասխանության մեջ։ Այն զգայուն էակը, որի ընդունակությունները հավասար են նրա ցանկություններին, կատարելապես երջանիկ մարդ է։ Ինչու՞մն է, ուրեմն, մարդկային իմաստությունը, կամ այլ կերպ ասած՝ երջանկության իսկական ուղին. ոչ, իհարկե, մեր ցանկությունների սահմանափակման մեջ, որովհետև, եթե նրանք մեր կարողությունից ցածր լինեին, մեր ընդունակությունների մի մասը կմնար անզբաղ ու մենք լիովին չէինք վայելի մեր ամբողջ գոյությունը, ոչ էլ մեր ընդունակությունների ծավալման մեջ, որովհետև, եթե մեր ցանկությունները ծավալվեին միաժամանակ ավելի մեծ չափով, մենք դրանից է՛լ ավելի թշվառ կլինեինք։ Պետք է սահմանափակել մեր ցանկությունները ըստ մեր ընդունակությունների և կատարյալ հավասարության մեջ դնել կամքն ու կարողությունը։ Միայն այն ժամանակ, երբ բոլոր ուժերը կլինեն գործուն վիճակում, հոգին կպահի իր անդորրությունը, և մարդը կլինի միանգամայն հավասարակշռված։

Բնությունը, որ ամեն ինչ լավագույն ձևով է կատարում, նախօրոք այդպես է ստիպել մարդուն։ Նա նրան անմիջականորեն տալիս է միայն իր ինքնապահպանման համար անհրաժեշտ ցանկությունները և դրանք բավարարելու համար բավականաչափ ընդունակություններ։ Մնացած բոլորը բնությունը ի պահ է դնում մարդու հոգու խորքում, ուր նրանք կզարգանան, երբ կարիք լինի։ Միայն այս նախնական դրության մեջ է, որ հանդես է գալիս ցանկության ու կարողության հավասարակշռությունը, և մարդը դժբախտ չի լինում։ Հենց որ այդ թաքնված ուժերն սկսում են գործել, դրանցից ամենաեռանդունը՝ երևակայությունը, արթնանում է ու բոլորից առաջ անցնում։ Երևակայությունն է, որ ընդարձակում է մեզ համար հնարավորությունների սահմանը՝ թե՛ բարու և թե՛ չարի ուղղությամբ, հետևապես, գրգռում ու աճեցնում է ցանկությունները՝ նրանց բավարարելու հույսով։ Բայց այն նպատակը, որն անդրում մոտ է թվում, ավելի արագ է փախչում մեզնից, քան մենք կարող ենք նրան հասնել. երբ կարծում ենք, թե արդեն հասել ենք նրան, նա կերպարանափոխվում է ու երևում հեռվում՝ մեր առջև։

Այլևս չտեսնելով մեր անցած տարածությունը, ոչինչ ենք համարում այն, իսկ այն տարածությունը, որ մնում է մեզ անցնել, անդադար մեծանում է և ընդարձակվում։ Եվ այսպես, մենք ուժասպառ ենք լինում՝ առանց նպատակին հասնելու, և ինչքան մոտենում ենք վայելքին, այնքան երջանկությունը հեռանում է մեզնից։

Ընդհակառակն, որքան մարդ քիչ է հեռանում իր բնական վիճակից, այնքան փոքր է լինում իր ընդունակությունների ու բաղձանքների միջև եղած խզումը և, հետևապես, այնքան ավելի է մոտենում երջանկությանը։ Մարդ ավելի սակավ թշվառ է, երբ թվում է, թե զրկված է ամեն ինչից, որովհետև դժբախտությունը իրերից զրկված լինելը չէ, այլ դրանց կարիքն զգալը։

Իրական կյանքն ունի իր սահմանները. երևակայական կյանքը անսահման է։ Եթե չենք կարող ընդարձակել մեկը, պետք է սահմանափակենք մյուսը, որովհետև միայն այդ երկուսի տարբերությունից են ծագում այն բոլոր վշտերը, որոնք

իսկապես դժբախտ են դարձնում մեզ։ Վերացրե՛ք ուժը, առողջությունը, ինքնության լավագույն վկայությունը, այս կյանքի բոլոր բարիքները մտացածին կլինեն։ Եթե հեռացնեք մարմնի ցավերն ու խղճի խայթը, մեր բոլոր ցավերը երևակայական կլինեն։ Ինձ կասեն, թե սա մի սովորական սկզբունք է։ Համաձայն եմ, սակայն նրա գործնական կիրառումը սովորական չէ։ Իսկ այստեղ խնդիրը միմիայն գործնական կիրառման մասին է։

Երբ ասում են, թե մարդը թույլ է, ի՞նչ են ուզում դրանով ասել։ Այս «թույլ» բառը ցույց է տալիս մի հարաբերություն, հարաբերությունը այն էակին, որին այն վերաբերում է։ Այն էակը, որի ուժը գերազանցում է նրա կարիքները, լինի դա որդ թե միջատ, ուժեղ էակ է։ Իսկ այն էակը, որի կարիքները գերազանցում են նրա ուժը, լինի դա փիղ թե առյուծ, աշխարհակալ, հերոս թե աստված, նա մի տկար էակ է։ Ըմբռոստ հրեշտակը, որը չէր ճանաչել իր բնությունը, ավելի տկար էր, քան այն երջանիկ մահկանացուն, որը խաղաղ ապրում է համաձայն իր բնության։ Մարդը շատ ուժեղ է, երբ գոհ է նրանով, ինչ որ է. բայց շատ թույլ է, երբ ցանկանում է վեր բարձրանալ մարդկությունից։ Մի՛ երևակայեք, ուրեմն, որ զարգացնելով ձեր ընդունակությունները, ավելացնում եք նաև ձեր ուժերը. ընդհակառակն, դուք դրանք եվազեցնում եք, եթե ձեր մեծամտությունը նրանց սահմաններից այն կողմն է անցնում։ Չափենք մեր շրջանի շառավիղը և մնանք նրա կենտրոնում, այնպես, ինչպես սարդը՝ իր ոստայնում։ Այդպիսով, մենք միշտ էլ բավարարված կլինենք ու պատճառ չենք ունենա գանգատվելու մեր անզորությունից, որովհետև այն երբեք չենք զգա։

Բոլոր կենդանիներն էլ ունեն իրենց ինքնապահպանման համար անհրաժեշտ ընդունակություններից ոչ ավելին։ Միայն մարդն է, որ ունի ավելին։ Տարօրինակ չէ՞, որ այդ ավելցուկը նրա դժբախտության պատճառ է հանդիսանում։ Բոլոր երկրներում մարդու ձեռքերն ավելի արժեն, քան իր ապրուստը։ Եթե մարդը բավականին խելացի լիներ և այդ ավելցուկը ոչինչ համարեր, նա միշտ էլ կունենար այն, ինչ անհրաժեշտ է, որովհետև երբեք ոչինչ ավելի չէր ունենա։ «Մեծ պահանջ-

ները,— ասում է Ֆավորինոսը,— առաջանում են մեծ բարիքներից. և հաճախ չունեցածն ստանալու լավագույն միջոցը ունեցածից զրկվելն էր։ Ջարդարար աշխատելով՝ մեր երջանկությունը ավելացնելու համար, այն վեր ենք ածում դժբախտության։ Այն մարդը, որ միայն ապրել է ցանկանում, երջանիկ է ապրում, հետևապես և բարի մարդ կլինի, որովհետև ոչ մի օգուտ չի ունենա չար լինելուց։

Եթե մեզ անմահություն տրվեր, ապա մենք ամենադրժբախտ արարածները կլինեինք։ Կասկած չկա, որ մեռնելը դաժան բան է, սակայն քաղցր է հույս ունենալ, որ հավիտյան չենք ապրելու, որ լավագույն մի կյանք պիտի գա վերջ դնելու մեր տանջանքներին։ Եթե երկրի վրա մեզ անմահություն առաջարկեին, ո՞վ կընդուներ այդ տխուր նվերը[1], էլ ի՞նչ միջոց, ի՞նչ հույս, ի՞նչ մխիթարություն կմնար մեզ՝ պայքարելու համար բախտի հարվածների ու մարդկանց անարդարությունների դեմ։ Տգետը, որ ոչ մի կանխատեսություն չունի, քիչ է զգում կյանքի արժեքն ու քիչ է երկյուղ կրում այն կորցնելուց։ Ջարդացած մարդը ավելի մեծարժեք բարիքներ է տեսնում և դրանք գերադասում է կյանքի արժեքից։ Միայն թերուսությունն ու կեղծ իմաստությունն են, որ մեր հայացքներն ուղղելով դեպի մահը, և ոչ թե նրանից այն կողմ, մեզ համար մահը դարձնում են ամենավատ չարիքը։ Մեռնելու անհրաժեշտությունը իմաստուն մարդու համար կյանքի դժվարություններին դիմանալու հենարան է։ Եթե մարդիկ համոզված չլինեին, որ մի օր բաժանվելու են կյանքից, երբեք չէին ջանա պահպանել այն։

Մեր բոլոր բարոյական ցավերը մտացածին են, բացի մեկից՝ ոճրից, որը մեզնից է կախված։ Ֆիզիկական ցավերը կա՛մ ոչնչանում են, կա՛մ մեզ են ոչնչացնում։ Մեզ բուժողը ժամանակն է կամ մահը, բայց մենք այնքան ավելի ենք տանջվում, որքան ավելի քիչ գիտենք տանջվել. մենք ավելի շատ ենք տանջվում մեր հիվանդությունները բուժելու, քան թե կարող էին մեզ տանջել այդ հիվանդությունները։ Ապրի՛ր բնության համաձայն, համբերող եղի՛ր, հեռու կա՛ց բժիշկ-

[1] Հասկանալի է, որ իմ խոսքը խելամիտ մարդկանց մասին է և ոչ թե բոլոր մարդկանց մասին։

ներից. այդպիսով դու մահից չես խուսափի, բայց միայն մեկ անգամ կզգաս այն, մինչդեռ բժիշկներն ամեն օր մահվան գաղափարն են ներկայացնում քո զգացած երևակայությանը, ու նրանց կեղծ արվեստը, փոխանակ քո կյանքի օրերը երկարացնելու, քեզ զրկում է դրանք վայելելու հաճույքից։ Ես ինձ միշտ հարց եմ տալիս, թե ի՞նչ իրական բարություն է արել մարդկանց այս արվեստը։ Ճիշտ է, ոմանց երբեմն նա չզուժեր, կմեռնեին, բայց միլիոնավորներ, որոնց նա մեռցնում է, կարող էին ապրել։ Եթե խելոք մարդ ես, մի՛ մասնակցիր այդ վիճակախաղին, որի հնարավորությունների մեծ մասը քո դեմ է։ Տառապի՛ր, մեռի՛ր կամ բժշկվի՛ր, բայց մանավանդ ապրի՛ր մինչև քո կյանքի վերջին ժամը։

Մարդկային հաստատությունների մեջ ամեն ինչ հիմարություն ու հակասություն է։ Ինչքան մեր կյանքը կորցնում է իր արժեքը, այնքան ավելի ենք մենք անհանդստանում նրա մասին։ Մերունիները ավելի շատ են դողում կյանքի վրա, քան երիտասարդները։ Նրանք չեն ուզում բաժանվել այն պատրաստություններից, որ արել էին հետագա կյանքը վայելելու համար։ Շատ ծանր է մեռնել վաթսուն տարեկան հասակում, տակավին ապրել չկասած։ Ընդհանրապես կարծում են, թե մարդը խիստ շատ է սիրում պահպանել իր կյանքը, և դա ճիշտ է. սակայն չեն տեսնում, որ այդ սերը, այնպես ինչպես մենք ենք զգում, մեծ մասամբ մարդկանց գործն է։ Մարդը բնականից իր պահպանման համար մտահոգվում է այնչափով, որչափով դրա համար միջոցներ ունի։ Այդ միջոցներն սպառվելուն պես նա հանդստանում է և մեռնում առանց զուր տանջվելու։ Ճակատագրին համակերպվելու առաջին օրենքը բնությունը ինքն է մեզ տալիս։ Վայրենի մարդիկ, ինչպես և կենդանիները, շատ քիչ են պայքարում մահվան դեմ և անտրտունջ ընդունում են այն։ Այս օրենքը ոչնչանալուց հետո նրան փոխարինում է մի ուրիշը, որը բխում է դատողությունից։ Այս օրենքից, սակայն, քչերն են կարողանում օգտվել։ Ճակատագրին ենթարկվելու այս կեղծ համակերպությունը այնպես լրիվ ու ամբողջական չէ, ինչպես առաջինը։

Հապա կանխատեսությո՞ւնը։ Կանխատեսությունն է, որ անընդհատ մեզ հեռուներն է տանում ու շատ անգամ

առաջնորդում է այնտեղ, ուր երբեք չենք հասնի. ահա մեր բոլոր թշվառությունների իսկական պատճառը։ Ուրեմն, ինչպիսի խելագարություն է մարդու նման մի անցավոր էակի համար աչքերը շարունակ հառել մի հեռավոր ապագայի, որին շատ հազվադեպ են հասնում, ու աչքաթող անել ներկան, որն ապահով է։ Այդ խելագարությունը, անընդհատ աճելով մարդու տարիքի հետ, է՛լ ավելի վնասակար է դառնում։ Ծերունիները, որ միշտ կասկածոտ, կանխատես և ագահ են, նախընտրում են զրկվել այսօրվա անհրաժեշտից, քան մի դար հետո լինելիք ավելորդից։ Այսպես, մենք կառչում ենք ամեն ինչից՝ ժամանակից, վայրից, մարդկանցից, իրերից. ինչ որ կա, ինչ որ պետք է լինի, նշանակություն ունի մեզնից յուրաքանչյուրի համար. մեր անձն այլևս մեր ինքնության ամենաչնչին մասն է։ Ամեն մեկը տարածվում է, այսպես ասած, բովանդակ երկրի վրա ու այդ ամբողջ ընդարձակ տարածության մեջ դառնում է զգայուն։ Զարմանալի չէ, ուրեմն, որ մեր ցավերը բազմապատկվում են այն բոլոր կետերում, որտեղից կարող է մեզ վնաս հասնել։ Քանի՜-քանի՜ վհհապետներ ողբում են այն երկրի կորուստը, որ երբեք չեն տեսել։ Ինչքա՜ն վաճառականներ կան, որոնք Փարիզում աղմուկ-աղաղակ կբարձրացնեն, եթե մեկը ձեռք տա Հնդկաստանին։

Արդյոք բնությո՞ւնն է մարդուն այդքան հեռացնում ինքն իրենից։ Մի՞թե նա ցանկանում է, որ յուրաքանչյուր անհատ ուրիշից տեղեկանա իր ճակատագրի մասին և այն էլ՝ երբեմն շատ ուշ։ Այսպիսով, շատերը մեռնում են երջանիկ կամ դյուբախտ, առանց այդ մասին որևէ բան իմանալու։ Իմ առաջ տեսնում եմ թարմ, ուրախ, կայտառ, առողջ մի մարդ։ Նրա ներկայությունը ուրախություն է պատճառում. նրա աչքերը շողում են գոհունակությունից. նա իր վրա կրում է երջանկության պատկերը։ Բայց ահա ինչ-որ նամակ են բերում փոստից, այդ երջանիկ մարդը նայում է նամակին, որ իրեն է հասցեագրված, բաց է անում ծրարն ու կարդում։ Րոպեապես փոխվում է նրա կերպարանքը, գունատվում է և ուշաթափվում։ Ուշքի գալով, լաց է լինում, հուզվում, ողբում, մազերն է փետում, օդը լցնում է իր աղաղակներով, կարծես ահռելի

չղաճգութիւնների նոպայով բռնված լինի։ Ո՛վ անմիտ մարդ, ի՞նչ վնաս հասցրեց քեզ այդ թղթի կտորը, ո՞ր անդամդ պոկեց, ի՞նչ պատահեց, ի՞նչ ոճիր գործելու դրդեց քեզ, վերջապես, ներքին ի՞նչ փոփոխություն առաջացրեց քո մեջ, որ այդ դրութեան մատնվեցիր։

Եթե նամակը կորչեր, եթե ողորմած մի ձեռք այն հանձնած լիներ կրակին, այս երջանիկ ու միաժամանակ դժբախտ մահկանացուի վիճակը, իմ կարծիքով, տարօրինակ մի հանելուկ կլիներ։ Գուցե կասեք, որ նրա դժբախտությունը իրողություն էր։ Շատ լավ, բայց չէ՞ որ նա այդ չէր զգում։ Ո՞րտեղ էր, ուրեմն, այդ դժբախտությունը։ Նրա երջանկությունը երևակայական էր։ Ուզում եմ ասել՝ առողջությունը, զվարթությունը, բարեկեցությունը, հոգեկան բավարարությունը սոսկ տեսիլք են։ Մենք այլևս այնտեղ չենք, որտեղ կանք, այլ այնտեղ ենք, որտեղ չկանք։ Մի՞թե արժե այդքան սարսափել մահից, երբ այն, ինչում ապրում ենք, մնում է։

Ո՛վ մարդ, ամփոփվի՛ր ինքդ քո մեջ և դու այլևս դժբախտ չես լինի։ Մնա՛ այնտեղ, որ բնությունը հատկացրել է քեզ արարածների շղթայում. ոչ մի բան քեզ այնտեղից չի կարող հանել. մի՛ ըմբոստանա անհրաժեշտության բիրտ օրենքի դեմ ու նրան դիմադրելու նպատակով մի՛ սպառիր այն ուժերը, որ բնությունը տվել է քեզ ոչ թե ընդարձակելու և երկարացնելու քո գոյությունը, այլ միայն պահպանելու այնպես և այնքան ժամանակ, ինչպես և որքան նրան հաճելի է։ Քո իշխանությունը, քո աղատությունը տարածվում են մինչև քո բնական ուժերի սահմանը, բայց ոչ դրանից ավելի. մնացած բոլորը ստրկություն, ցնորք ու պատրանք է։ Իշխանությունն անգամ ստրկական է, եթե մարդկանց կարծիքի վրա է հիմնված, որովհետև դու կախում ունես նրանց նախապաշարմունքներից, որոնց կառավարում ես նախապաշարմունքներով։ Որպեսզի ըստ քո ցանկության ղեկավարես նրանց, հարկավոր է, որ դու վարվես համաձայն նրանց ցանկության։ Բավ է, որ նրանք փոխեն իրենց մտածելակերպը, դու հարկադրված կլինես փոխելու քո գործելակերպը։ Քեզ շրջապատողներին մնում է միայն գիտենալ կառավարել

այն ժողովրդի կարծիքները, որ դու պիտի կառավարես, կամ քեզ կառավարող քո մտերիմների, կամ քո ընտանիքի, կամ, վերջապես, քո սեփական կարծիքները. այդ վեզիրներն ու պալատականները, այդ քահանաները, զինվորները, սպասավորները, շաղակրատները և անգամ մանուկները, եթե դու Թեմիստոկլեսի տաղանդն իսկ ունենաս [1], քեզ, քո լեգեոնների մեջ, կառաջնորդեն ինչպես մի երեխայի։ Ինչ էլ անես, երբեք քո իրական իշխանությունը իրական ընդունակություններիդդ ավելի չի կարող լինել։ Այն րոպեից, երբ հարկ կլինի ուրիշների աչքերով դիտել, ստիպված կլինես նրանց կամքով կամենալ։ «Իմ ժողովուրդները իմ հպատակներն են», կասես դու հպարտությամբ։ Լա՛վ, իսկ դու ինքդ ո՞վ ես. քո մինիստրների հպատակը։ Մինիստրներն էլ, իրենց հերթին, ովքե՞ր են, իրենց պաշտոնյաների, սիրուհիների հպատակները, իրենց սպասավորների սպասավորները։ Ամեն ինչ վերցրե՛ք, ամեն ինչ հափշտակեցե՛ք և ապա դրամը լիաբուռ վատնեցե՛ք, մարտկոցներ ու քնդանոթներ սարքեցե՛ք, կախաղաններ, տանջանիվներ կանգնեցրե՛ք, օրենքներ, հրովարտակներ հրատարակեցե՛ք, բազմապատկեցե՛ք լրտեսների, զինվորների, դահիճների, բանտերի, շղթաների քանակը. խե՜ղճ մարդիկ, ինչի՞ են ձեզ պետք այս բոլորը. այդպիսով նրանք ո՛չ ավելի լավ կծառայեն ձեզ, ո՛չ սրակաս կգողանան, ո՛չ ավելի քիչ կխաբեն և ո՛չ էլ դուք ավելի կամրապնդեք ձեր տիրակալությունը։ Դուք միշտ կասեք. «Մենք կամենում ենք», բայց միշտ անում ենք այն, ինչ ուրիշներն են կամենում։

Նա է միայն կատարում իր կամքը, ով դրա համար կարիք չունի օտար ձեռքի օգնության. սրանից հետևում է, որ բարիքներից ամենագլխավորը ոչ թե իշխանությունն է, այլ՝

---

[1] «Այս փոքրիկ տղան, որին դուք տեսնում եք,— ասում էր Թեմիստոկլեսը իր բարեկամներին,— Հունաստանի տիրակալն է, որովհետև նա իշխում է իր մոր վրա, մայրը՝ ինձ, ես՝ աթենացիների և աթենացիները՝ հույների վրա»։ Օ՜, երբեմն ինչքա՜ն փոքրիկ ղեկավարներ կարելի է գտնել խոշոր պետություններում, եթե իշխողից սկսած աստիճանաբար իջնենք մինչև այն ձեռքը, որն աննկատելիորեն ընթացք է տալիս գործին։

ազատությունը։ Իսկական ազատ մարդը ցանկանում է սոսկ այն, ինչ կարող է անել, և անում է այն, ինչ նրան հաճելի է։ Ահա իմ հիմնական միտքը։ Պետք է միայն այդ բանը հարմարեցնել մանկության տարիքին, և դաստիարակության բոլոր կանոնները կբխեն դրանից։

Հասարակությունը մարդուն թուլացրել է ոչ միայն այն բանով, որ նրանից խլել է իր սեփական ուժերի վրա ունեցած իրավունքը, այլև, մանավանդ, այն բանով, որ այդ ուժերը նրա համար անբավարար է դարձրել։ Ահա թե ինչու նրա ցանկություններն ավելանում են նրա թուլությանը զուգահեռ, և ահա թե ինչով է բացատրվում մանկության տարիքի թուլությունը չափահասների հետ համեմատած։ Թե չափահաս մարդը մի ուժեղ էակ է, իսկ երեխան՝ թույլ, դա նրանից չէ, որ առաջինն ավելի բացարձակ ուժ ունի, քան երկրորդը, այլ նրանից, որ առաջինը ի բնե կարողանում է ինքն իրեն բավարարել, իսկ երկրորդը՝ ոչ։ Ուրեմն, չափահաս մարդը պետք է ունենա ավելի կամք, իսկ երեխան՝ ավելի քմահաճույք. քմահաճույք ասելով ես հասկանում եմ այն բոլոր ցանկությունները, որոնք իսկական կարիք չեն ներկայացնում, և որոնք կարելի է բավարարել միմիայն ուրիշի օգնությամբ։

Ես արդեն ասել եմ, թե որն է այս թույլ վիճակի պատճառը։ Բնությունը հոգում է այդ մասին հոր ու մոր բնական կապով, բայց այդ կապը կարող է ունենալ իր ծայրահեղությունները, իր պակասությունները, իր չարաշահումները։ Այն ծնողները, որոնք քաղաքացիական կենցաղ են վարում, իրենց զավակներին ժամանակից շուտ են փոխադրում այնտեղ։ Երեխայի մեջ չափից ավելի բաղձանքներ զարթեցնելով, ոչ թե նվազեցնում են նրա թուլությունը, այլ, ընդհակառակն, ավելացնում են։ Այդ թուլությունը ավելացնում են նաև նրանով, որ երեխայից պահանջում են այն, ինչ բնությունը չի պահանջում, իրենց կամքին ենթարկելով այն չնչին ուժը, որն անհրաժեշտ է նրա սեփական կամքի գործադրման համար, երկուստեք ստրկության փոխելով այն փոխադարձ կախվածությունը, որի սկզբնապատճառը մեկի թուլությունն է և մյուսների նվիրվածությունը։

Խելահաս մարդը գիտե իր տեղում մնալ, բայց երեխան,

որ չի ճանաչում իր տեղը, չի կարող մնալ այնտեղ. մեր շրջապատում նա հազարավոր ելքեր ունի այդտեղից դուրս գալու. դաստիարակողների գործն է պահել նրան իր տեղում, իսկ դա հեշտ գործ չէ։ Երեխան չպետք է լինի ո՛չ անասուն, ո՛չ էլ չափահաս մարդ, այլ՝ լոկ մանուկ. նա պետք է զգա իր թույլ լինելը, բայց չտանջվի նրանից. պետք է կախում ունենա, բայց չենթարկվի. պետք է ուզի, բայց չհրամայի։ Երեխան ուրիշներին ենթարկվում է իր կարիքների պատճառով, որովհետև նրանք ավելի լավ են գիտակցում, թե ի՞նչն է երեխային օգտակար, ի՞նչը կարող է նրա գոյության պահպանմանը նպաստել կամ վնասել։ Ոչ ոք, նույնիսկ հայրը, իրավունք չունի հրամայելու այնպիսի մի բան, որ նրան ոչնչով պիտանի չէ։

Քանի դեռ մարդկային նախապաշարումներն ու սովորությունները չեն աղավաղել մեր բնական հակումները, երեխաների, ինչպես նաև մարդկանց երջանկությունը կայանում է իրենց ազատությունը գործադրելու մեջ։ Բայց երեխաների համար այդ ազատությունը սահմանափակվում է իրենց թուլությամբ։ Ով անում է այն, ինչ ցանկանում է, երջանիկ է, եթե բավարարում է ինքն իրեն։ Այդպիսին է բնական վիճակում ապրող մարդը։ Բայց երջանիկ չէ նա, ով անում է այն, ինչ կամենում է, եթե նրա կարիքները գերազանցում են իր ուժերը։ Այդպես է նաև նույն վիճակում եղող երեխան։ Սա նույնիսկ բնական վիճակում անկատար ազատություն է վայելում, այնպես, ինչպես չափահաս մարդը՝ քաղաքացիական կենցաղում։ Մեզնից յուրաքանչյուրը, այլևս չկարողանալով հրաժարվել ուրիշների օգնությունից, դրանով իսկ իրեն դարձնում է թույլ ու թշվառ։ Մենք ստեղծված էինք մարդ լինելու համար, օրենքներն ու հասարակությունը մեզ վերադարձրին երեխայության։ Հարուստները, մեծամեծները, քաղավորները երեխաներ են, որոնք տեսնելով, թե ինչպես են մարդիկ շտապում թևթևացնել իրենց թշվառությունը, դրանից էլ երեխայական անապարձություն են ձեռք բերում ու չափազանց հպարտ են այն հեզաճոխության համար, որը նրանց չէր շնորհվի, եթե կատարյալ մարդ լինեին։

Այս նկատառումները կարևոր են և օգնում են լուծելու

հասարակական վիճակի բոլոր հակասությունները։ Կա կախում ունենալու երկու ձև՝ մեկն իրերից, որը բնությունն է, մյուսը մարդկանցից, որը հասարակությունն է։ Իրերից կախում ունենալը, ոչ մի բարոյական բնույթ չունենալով, չի վնասում ազատությանը և մոլություններ չի առաջացնում. մարդկանցից կախում ունենալը կարգավորված չլինելով, առաջ է բերում բոլոր տեսակի մոլությունները և հենց դրանով է, որ տերն ու ստրուկը փոխադարձաբար ապականում են իրար։ Եթե հասարակության այս չարիքը դարմանելու որևէ միջոց կա, այդ այն է, ոլ. օրենքը գա փոխարինելու մարդուն, և ընդհանուրի կամքը զինվի մի այնպիսի իրական ուժով, որը գերազանց լինի բոլոր տեսակի մասնավոր կամքերի գործունեությանց։ Եթե ժողովուրդների օրենքները, բնական օրենքների նման, այնպես ամուր լինեին, որ ոչ մի մարդկային ուժ չկարողանար խախտել, այդ դեպքում կախումը կլիներ ոչ թե մարդկանցից, այլ՝ իրերից. ռևսպուբլիկայում կմիավորվեին քաղաքացիական դրության և բնական դրության բոլոր առավելությունները. մարդուն մոլություններից պահպանող ազատությանը կզուգորդվեր այն բարոյականությունը, որը նրան մինչև առաքինության է բարձրացնում։

Պահեցե՛ք երեխային միմիայն իրերից կախման մեջ, և դուք նրա դաստիարակման գործում հետևած կլինեք բնության կարգ ու կանոնին։ Նրա անխորհուրդ կամայականություններին դիմադրեցե՛ք միայն այնպիսի ֆիզիկական արգելքներով ու պատիժներով, որոնք հենց գործողություններից են բխում և որոնց նա կհիշի պատեհ առիթին։ Առանց արգելելու, որ նա չարություն անի, կարելի է նրան վատ արարքներից ետ կանգնեցնել։ Փորձը կամ անզորությունը միայն պետք է նրան ծառայեն որպես օրենք։ Երեխայի ցանկություններին ընդառաջեցե՛ք ոչ թե նրա համար, որ նա պահանջում է, այլ որովհետև նա դրանց կարիքն ունի։ Եթե երեխան մի բան է անում, չպետք է իմանա, որ դա հնազանդություն է, ինչպես և չպետք է գիտենա, որ երբ նրա համար են գործում, դա հրամանի հետևանք է։ Թո՛ղ նա ազատությունն զգա հավասարապես թե՛ իր և թե՛ ձեր գործերի մեջ։ Լրացրե՛ք նրան պակասող ուժը այնչափով միայն, որչափով

անհրաժեշտ է ազատ լինելու և ոչ թե իշխելու համար. Թո՛ղ նա, ընդունելով ձեր ծառայությունները մի տեսակ խոնարհությամբ, տեղնյա այն րոպեին, երբ այլևս դրանց կարիքը չի զգա և արդեն ինքն իրեն ծառայելու հպարտությունը կունենա։

Մարմինն ամրացնելու և զարգացնելու համար բնությունն ունի միջոցներ, որոնց չպետք է հակառակ գնալ։ Երբեք չպետք է հարկադրել երեխային մնալ իր տեղում, երբ նա ցանկանում է գնալ, և ոչ էլ հարկադրել, որ գնա, երբ ուզում է մնալ իր տեղում։ Թող երեխաների կամքը մեր մեղքով չի աղարտված, նրանք ղուր տեղը ոչ մի բան չեն ցանկանա։ Նրանք պետք է ցատկեն, վազեն, բղավեն, երբ որ ուզենան։ Նրանց բոլոր շարժումները բխում են իրենց կազմվածքի կարիքներից, կազմվածք, որը ձգտում է ամրանալ. սակայն պետք է զգուշանալ, երբ նրանք ցանկանում են իրենց ուժից վեր բաներ անել, որոնք ուրիշներն են ստիպված լինում նրանց համար կատարել։ Այդ դեպքում հարկավոր է խնամքով տարբերել իսկական, բնական կարիքը քմահաճույքից, որն սկսում է ծնունդ առնել, կամ այն կարիքից, որն առաջանում է միայն կյանքի զեղումներից, որոնց մասին վերը խոսեցի։

Ես արդեն ասել եմ, թե ինչ պետք է անել, երբ երեխան լաց է լինում այս կամ այն բանն ստանալու համար։ Ավելացնեմ միայն, որ երբ նա արդեն կարողանում է իր ցանկացածը խոսքով պահանջել ու ավելի արագ ստանալու կամ մերժման դեմ բողոքելու համար սկսում է լաց լինել, պետք է անպայման մերժել պահանջը. իսկ նրա արցունքներին տեղի տալ նշանակում է նրան լացի դրդել, նշանակում է նրան սովորեցնել կասկածել ձեր բարի կամքին ու կարծել, թե ձանձրացնելը ձեր վրա ավելի կազդի, քան թե բարեհոժարությունը։ Թող երեխան ձեզ բարի չհամարի, շուտով ինքը չար կդառնա։ Թող ձեզ Թույլ համարի, շուտով ինքը կամակոր կլինի. պետք է իսկույն կատարել այն պահանջը, որը չեք ուզում մերժել նրան։ Մերժումների մեջ շռայլ չլինեք, բայց մերժվածը երբեք չկատարեք։

Առանձնապես զգուշացե՛ք երեխային պատարկ քաղաքավարական ձևեր սովորեցնելուց. նա կարող է դրանք օգտա-

գործել որպես կախարդական խոսքեր՝ ամբողջ շրջապատն իր կամքին ծառայեցնելու և իսկույն իր ցանկացածն ստանալու համար։ Հարուստների մոտ՝ ձևամոլ դաստիարակության ընթացքում երեխաներին անխուսափելիորեն քաղաքավարի հրամայողներ են դարձնում, սովորեցնելով այնպիսի դարձվածքներ, որպեսզի դրանք գործածելու դեպքում ոչ ոք չհամարձակվի մերժել նրանց։ Այդ երեխաները չունեն խնդրելու՝ ո՛չ շեշտը, ո՛չ ձևը. նրանք նույնքան ավելի ամրարտավան են խնդրելու, որքան հրամայելու դեպքում, կարծես այդպիսով ավելի ապահով են, որ նրանց անպայման կհնազանդվեն։ Առաջին հերթին երևում է, որ «եթե հաճեք»-ը նրանց համար նշանակում է «ինձ հաճելի է», «խնդրում եմ»-ը նշանակում է «հրամայում եմ»։ Հիանալի՜ քաղաքավարություն, որը նրանց համար ծառայում է միայն բառերի իմաստը փոխելու, և ոչ այլ կերպ, քան միայն հրամայական տոնով խոսելու միջոց։ Իսկ ես, որ ավելի քիչ եմ վախենում, թե էմիլը կարող է կոպիտ լինել, քան սմբարտավան, դերադասում եմ, որ նա խնդրելու ձևով ասի՝ «տո՛ւր այս բանը», քան թե հրամայելով ասի՝ «խնդրում եմ»։ Ինձ համար նշանակություն ունի ոչ թե նրա գործածած դարձվածքը, այլ այդ դարձվածքի հետ կապված միտքը։

Պետք է հավասարապես խուսափել թե՛ ծայրահեղ խստությունից և թե՛ ծայրահեղ ներողամտությունից։ Եթե թույլ տաք, որ երեխաները շատ վրդովվեն, դուք կվտանգեք նրանց առողջությունը, նրանց կյանքը, հենց սկզբից կդժբախտացնեք նրանց։ Իսկ եթե մեծ ղգուշությամբ նրանց հեռու պահեք ամեն մի նեղությունից, նրանց համար մեծ տառապանքներ կնախապատրաստեք, նրանց կդարձնեք փափկասուն, դյուրազգաց, նրանց կհանեք մարդկային դրությունից, որին նրանք մի օր կվերադառնան՝ հակառակ ձեր կամքի։ Բնության մի քանի չարիքներից նրանց հեռու պահելու ձեր ջանքերով դուք կդառնաք պատճառն այնպիսի չարիքների, որոնք բնությունը չի սահմանել։ Դուք ինձ կասեք, թե ես վարվում եմ այնպես, ինչպես այն վատ հայրերը, որոնց մեղադրում էի, թե իրենց երեխաների երջանկությունը զոհաբերում են մի ինչ-որ հեռանկարի, որը թերևս երբեք չի կատարվելու։ Ոչ

երբեք, քանի որ այն ազատությունը, որ ես եմ տալիս իմ սանին, լիովին վարձատրում է նրան այն չնչին դժվարությունների փոխարեն, որոնց թողնում եմ, որ նա ենթարկվի։ Ես տեսնում եմ, որ իմ առաջ, ձյունի մեջ խաղում են չարաճճիներ, ցրտից կապտած, փայտացած, հազիվ կարողանալով մատները շարժել։ Ոչ ոք չի արգելում նրանց, որ գնան տաքանան, բայց այդ չեն անում։ Եթե նրանց ստիպենք գրնալ տաքանալու, ապա այդ հարկադրանքը հարյուր անգամ ավելի անտանելի կլիներ նրանց համար, քան թե ինքը՝ ցուրտը։ Ուրեմն ինչի՞ց եք գանգատվում։ Մի՞թե ձեր երեխային թշվառացնում եմ՝ նրան ենթարկելով այնպիսի նեղությունների, որոնք նա սիրով է տանում։ Ես այժմ հօգուտ երեխային եմ գործում՝ ազատ թողնելով նրան. նույնպես ես նրան լավություն եմ անում՝ զինելով ապագայում իր կրելիք չարիքների դեմ։ Եթե նա կարողանար ընտրություն կատարել, թե ո՞ւմ տանը կցանկանար լինել ինքը՝ ի՞մ, թե ձեր, կարծո՞ւմ եք մի րոպե կտատանվեր։

Կարո՞ղ եք որևէ էակի համար իր խառնվածքից դուրս իսկապես հնարավոր մի երջանկություն երևակայել, և մի՞թե նրան իր խառնվածքի սահմաններից դուրս բերել չի նշանակում, երբ ցանկանում են նրան հեռու պահել հավասարապես մարդկային ցեղի բոլոր չարիքներից։ Այո՛, պնդում եմ՝ մեծ բարիքներն ըգալու համար մարդ պետք է ճաշակի փոքր չարիքներից. այդպես է նրա բնությունը։ Եթե նա ֆիզիկապես շատ լավ վիճակումն է, ապա բարոյապես կապահանվի։ Այն մարդը, որ չգիտե, թե ինչ է ցավը, չի ճանաչի ո՛չ մարդկային խնդաղատանքը, ո՛չ կարեկցությամբ քաղցրությունը. նրա սիրտը ոչ մի բանից չի հուզվի, նա ընկերական չի լինի, այլ կլինի մի հրեշ իր նմանների մեջ։

Գիտե՞ք որն է ձեր երեխային թշվառացնելու ամենաապահով միջոցը։ Դա ամեն լսան առանց մերժման ստանալու սովորությունն է, որովհետև նրա ցանկությունները անընդհատ կավելանան, երբ նրանք հեշտությամբ բավարարվեն. վաղ թե ուշ անկարողությունը ձեզ կստիպի ակամայից դիմել մերժման միջոցին, և այդ անսովոր մերժումը նրան ավելի կտանջի, քան ցանկացածից զրկվելը։ Սկզբում կուզի

ձեր բռնած ճեռնափայտը, քիչ հետո՝ ձեր ժամացույցը, ապա՝ թռչող թռչունը, երկնքում փայլող աստղը, մի խոսքով՝ այն ամենը, ինչ կտեսնի. ինչպե՞ս կարող եք գոհացում տալ այդ բոլոր պահանջներին, քանի որ դուք աստված չեք։

Մարդը բնականից հակված է իրենը համարել այն ամենը, ինչ իր տիրապետության տակ է գտնվում։ Այս իմաստով Հոբսի սկզբունքը որոշ չափով ճիշտ է՝ բազմապատկեցե՛ք նրանց ցանկությունների հետ դրանք բավարարելու միջոցները, և մեզնից յուրաքանչյուրն ամեն ինչի տերը կդառնա։ Ուրեմն, այն երեխան, որ ստանում է ցանկացածը, իրեն տիեզերքի տերն է կարծում, բոլոր մարդկանց համարում է իր ստրուկները. երբ, վերջապես, ստիպված ենք լինում որևէ բանում մերժել նրան, նա, որ կարծում էր, թե ամեն ինչ հնարավոր է, միայն բավական է, որ հրամայի, այդ մերժումը լմբռստություն կհամարի. նրան բերված բոլոր պատճառաբանություննները, այնպիսի մի հասակում, որ անընդունակ է դատելու, նրա համար կհանդիսանան միայն մերժման պատրվակ. նա ամեն տեղ չկամություն կտեսնի, կարծեցյալ մի անարդարության զգացում կդառնացնի նրան, ավելի կոպիտ կդարձնի նրա բնավորությունը, նա կսկսի ատել բոլորին և առանց երբեք շնորհակալ լինելու ցույց տրվող հաճոյակատարություններից, կզայրանա ամեն անգամ դիմադրության հանդիպելիս։

Ինչպե՞ս կարելի է ենթադրել, որ այդպիսի բարկությամբ բորբոքված ու այդպիսի ցասկոտ կրքերով համակված երեխան երբևիցե կարող է երջանիկ լինել։ Նա երջանի՞կ, երբե՛ք. նա բռնակալ է, միաժամանակ ստրկից գծուծը ստրուկների մեջ և արարածներից ամենաողորմելին։ Ես հանդիպել եմ այդ կերպ դաստիարակված երեխաների, որոնք ցանկանում էին ուսի մի հարվածով քանդել բնակարանը, ստանալ այն աքաղաղը, որ նշմարում էին զանգակատան գագաթին, թմբուկների ձայնն ավելի երկար լսելու համար կանգնեցնել անցնող զորագունդը. նրանք իրենց ճիչերը երկինք էին հասցնում ու ոչ ոքի չէին լսում, երբ ուշանում էին նրանց հնազանդվել։ Ջուր էին բոլոր կողմերից շտապում նրանց կամքը կատարելու, որովհետև նրանց ցանկություններն ավելի էին բոր-

բոլորում ուշածն ստանալու հնշտությունից: Նրանք այնուհետև պահանջում էին անհնարին բաներ և ամենուր հանդիպում էին միայն դիմադրության ու արդելքի, ապրում վիշտ ու տառապանք: Անվերջ տրտնջացող, միշտ ըմբոստ, միշտ զժգոհ, միշտ զրգռված, նրանք իրենց օրն անց էին կացնում ճչալով ու ողբալով: Կարելի՞ է այդպիսիներին երջանիկ էակներ համարել: Անզորությունն ու տիրապետելու զգացումը միասին առաջացնում են խելահեղություն ու թշվառություն: Երես առած երկու երեխայից մեկը կհարվածի սեղանին, մյուսը մորակել կտա ծովը, և այդպես նրանք երկար կհարվածեն ու կմտրակեն, քանի դեռ գոհ չեն ապրում:

Եթե տիրակալության և բռնակալության այս տրամադրությունները նրանց դժբախտացնում են մանուկ հասակում, հապա ի՞նչ կլինի, երբ նրանք չափահաս դառնան և զարգանան ու ընդարձակվեն նրանց հարաբերությունները ուրիշ մարդկանց հետ: Վարժված լինելով բոլորին տեսնել խոնարհված իրենց առաջ, ինչպիսի՞ հուսախաբություն կզգան, երբ, մտնելով մարդկանց շրջապատը, կտեսնեն, Որ բոլորը նրանց դիմադրում են և իրենք ահա փշրվում են այն տիեզերքի ծանրության տակ, որը կարծում էին շարժել ըստ իրենց քմահաճույքի: Նրանց անպատկառ տեսքը, մանկական մեծամտությունը սոսկ վիրավորանք, արհամարհանք ու ծաղր են առաջացնում. նրանք ստիպված են կուլ տալ բոլոր անարդանքները. շատ չանցած, դաժան իրականությունը նրանց ցույց է տալիս, որ իրենք չեն ճանաչում ո՛չ իրենց դրությունը, ո՛չ էլ ուժը. ի վիճակի չլինելով ամեն ինչ անել, կարծում են, թե ոչ մի բանի ընդունակ չեն: Այդքան անսպասելի խոչընդոտները վհատեցնում են նրանց, այդքան արհամարհանքները նվաստացնում են նրանց. նրանք դառնում են ցածոգի, երկչոտ, քծնող և այնքան ավելի են գլորվում ցած, որքան ավելի ճն ցանկանում վեր բարձրանալ:

Վերադառնանք նախնական կանոնին: Ինչո՞ւ է Աստված երեխաներին ստեղծել, որպեսզի նրանց սիրենք և օգնենք. բայց մի՞թե ստեղծել է, որպեսզի հնազանդվենք ու վախենանք նրանցից. մի՞թե տվել է նրանց պատկառելի տեսք, խոժոռ հայացք, խիստ, սպառնագին ձայն՝ մեզ վախ ազդելու հա-

մար, Ես հասկանում եմ, երբ առյուծի մռնչյունը սարսափեցնում է կենդանիներին և վերջիններս դողում են՝ տեսնելով նրա ահարկու գլուխը. բայց չկա ավելի խայտառակ, ավելի զզվելի ու ծիծաղելի տեսարան, քան խումբն այն բարձր պաշտոնակալների, որոնք իրենց գլխավորի առաջնորդությամբ, հանդիսավոր զգեստավորված, խոնարհվում են խանձարուրով բարուրված երեխայի առաջ և ճոճուն ճառեր են ասում, մինչդեռ երեխան պատասխանի փոխարեն ճչում ու լորձունք է թափում բերանից։

Եթե մանկությունը դիտենք ինքն իր մեջ, կտեսնենք, որ աշխարհում չկա ավելի թույլ, ավելի ողորմելի, ուրիշների շնորհից ավելի կախում ունեցող մի էակ, որն այնքան կարիք ունենա գթության, խնամքի, պաշտպանության, ինչքան մանուկը։ Թվում է, թե երեխան միայն նրա համար է այնքան քաղցր դեմք, այնքան սրտաշարժ տեսք ընդունում, որպեսզի շուրջինները հետաքրքրվեն իր տկարությամբ և օգնության փութան։ Չկա, ուրեմն, ավելի անհաճո, ավելի հակաբնական երևույթ, քան այն, երբ մեծամիտ ու ըմբոստ երեխան հրամայում է իր ամբողջ շրջապատին և անամոթաբար տիրական ձևով է վարվում այն անձանց հետ, որոնք եթե լքեին նրան, ինքն իսկույն կոչնչանար։

Մյուս կողմից, սակայն, ակներև է, որ սկզբնական տարիքի անզորությունը երեխաներին կաշկանդում է այնքան տարբեր ձևերով, որ բարբարոսություն կլիներ այս բռնադատությանն ավելացնել մեր քմահաճույքների պարտադրանքը, զրկելով նրանց այն սահմանափակ ազատությունից, որից նրանք առանց այն էլ շատ քիչ են օգտվում. զրկելով այդ ազատությունից՝ հավատացյալ ոչ մի օգնություն չենք տալիս ո՛չ նրանց, ո՛չ մեզ։ Եթե մեծամիտ երեխայից ավելի ծաղրի արժանի էակ չկա, ապա չկա երկչոտ երեխայից ավելի գթության արժանի արարած։ Քանի որ հասուն տարիքի հետ սկսվում է քաղաքացիական ստրկությունը, ինչու՞ կանխել այն՝ անհատական ստրկությամբ։ Պետք է հանդուրժել, որ կյանքի մի պահը ազատ լինի այն լծից, որ բնությունը չի դրել մեզ վրա, ու թողնել երեխային օգտվելու բնական ազատությունից, որը նրան գոնե միաժամանակ հեռու կպահի այն մա-

լութիւններից, որ նա յուրացնում է ստրկութեան մէջ։ Ո՛ղ դան այն խստապահանջ ուսուցիչները և իրենց երեխաներին ատելի դարձած հայրերը, իրենց սնամէջ առարկութիւններով, և, իրենց մեթոդները դովարանելուց առաջ, մի անգամ դնեն ուսումնասիրեն բնութեան մեթոդը։

Վերադառնում եմ գործնականին։ Ես արդեն ասել եմ, որ ձեր երեխան ցանկացածը պետք է ստանա ոչ թե նրա համար, որ պահանջում է, այլ որովհետև դրա կարիքն ունի[1]։ Ոչինչ չպետք է անել հնազանդվելով, այլ միմիայն անհրաժեշտութիւնից դրդված։ Եվ այսպես «հնազանդվել» ու «հրամայել» բառերը պիտի դուրս գան նրա բառարանից, առավել ևս՝ «պարտականութիւն» և «պարտավորութիւն» բառերը, իսկ «ուժ», «անհրաժեշտութիւն», «անկորութիւն» և «հարկադրանք» բառերը պետք է մեծ տեղ ունենան այնտեղ։ Բանական տարիքից առաջ մարդը ոչ մի գաղափար չի կարող ունենալ բարոյական էակների և ոչ էլ հասարակական հարաբերութիւնների մասին։ Ուրեմն, պետք է խուսափել, ինչքան հնարավոր է, այդ գաղափարներն արտահայտող բառեր գործածելուց, որպեսզի չլինի թե երեխան առաջին առթիվ այդ բառերը կապի այնպիսի մարքերի հետ, որոնք հետագայում հնարավոր չի լինի կամ շատ դժվար կլինի ջնջել։ Առաջին սխալ գաղափարը, որ մուտք է գործում երեխայի գլխի մեջ, դա մոլորութեան ու մոլութեան սերմն է. հատկապես այս առաջին քայլի վրա է, որ պետք է առանձին ուշադրութիւն դարձնել։ Արե՛ք այնպես, որ քանի դեռ երեխան զգացողական էևութիւններին է ենթարկվում, նրա բոլոր գաղափարներն զգացողական տպավորութիւնների սահմանից այն կողմ չանցնեն. արե՛ք այնպես, որ բոլոր կողմերից իր շուրջը միայն

[1] Պետք է զգալ, որ ինչպես վիշտը հաճախ անհրաժեշտութիւն է, այնպես էլ երբեմն հաճույքը պահանջ է։ Ուրեմն, երեխաների միայն մեկ ցանկութիւնը երբեք չպետք է կատարել, դա ուրիշներին իրենց կամքին հնազանդեցնելու ցանկութիւնն է։ Սրանից հետևում է, որ նրանց ամեն մի պահանջի մեջ հարկավոր է առանձնապես ուշադրութիւն դարձնել դրա շարժառիթի վրա։ Տվե՛ք, հնարավորութեան սահմաններում, այն ամենը, ինչ նրանց իրական հաճույք կարող է պատճառել, բայց մերժեցե՛ք միշտ այն բոլորը, ինչ պահանջում են քմահաճույքից կամ իրենց իշխանութիւնն արտահայտելու զգացումից դրդված։

ֆիզիկական աշխարհը տեսնի. այլապես, հավատացած եղե՛ք, նա ձեղ երբեք չի լսի, կամ բարոյական աշխարհի վերաբերյալ, որի մասին խոսում եք նրա հետ, այնպիսի ցնորական գաղափարներ կկազմի, որոնք դուք այլևս չեք կարող ջնջել նրա ամբողջ կյանքում։

Երեխաների հետ դատողություն անելու լոքի մեծ սկզբունքը այսօր մեծ ընդունելություն է գտել. բայց և այնպես, նրա հաջողությունը այնքան էլ նշանակալից չի դարձնում այն։ Իմ կարծիքով, երեխաների հետ երկար դատողություններ անելուց ավելի հիմար բան չկա։ Մարդկային բոլոր ընդունակություններից դատողությունը, որ, այսպես ասած, հանդիսանում է բոլոր մյուսների միացությունը, ամենից դժվար ու ամենից ուշ է զարգանում, և տարօրինակ է, որ դատողությունն են ուզում օգտագործել առաջին ընդունակությունները զարգացնելու համար։ Լավ դաստիարակության գլուխ-գործոցը խոհական մարդ պատրաստելն է, մինչդեռ ցանկանում են երեխային դաստիարակել դատողությամբ։ Սա ուրիշ բան չէ, բայց եթե գործն սկսել վերջից, գործից գործիք սարքել։ Եթե երեխաները կարողանային դատողությամբ մտածել, կարիք չէր լինի նրանց դաստիարակել. բայց երբ առաջին տարիներից իսկ նրանց հետ խոսում են անհասկանալի լեզվով, նրանք սովորություն են դարձնում ճոռոմ բառեր գործածել, քննադատության ենթարկել բոլոր լսածները, իրենք իրենց նույնքան իմաստուն են համարում, որքան իրենց ուսուցիչներին, դառնում են վիճաբանող և ըմբոստ։ Այն ամենը, ինչ ակնկալում ենք նրանցից ստանալ իրավախոհությամբ, կստանանք ցանկասիրության օգնությամբ, որին շարունակ ստիպված ենք լինում միացնել վախի կամ անապարծության միջոցները։

Ահավասիկ այն ֆորմուլան, որը մոտավորապես իր մեջ խտացնում է այն բոլոր բարոյական դասերը, որ տալիս ենք ու կարող ենք տալ երեխաներին.

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Չի կարելի այդպես անել։

ԵՐԵՒԱՆ

Իսկ ինչո՞ւ չի կարելի։

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Որովհետև դա վատ բան է։

ԵՐԵՒԱՆ

Վատ բան է՞։ Իսկ ի՞նչ է վատ բանը։

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Այն, որ արգելվում է քեզ անել։

ԵՐԵՒԱՆ

Ի՞նչ վատ բան կլինի, որ անեմ այն, ինչն ինձ արգելում են։

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Քեզ կպատժեն չհնազանդվելուդ համար։

ԵՐԵՒԱՆ

Իսկ ես այնպես կանեմ, որ նրանք չեն իմանա։

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Քեզ կհսկեն։

ԵՐԵՒԱՆ

Ես կթաքնվեմ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Քեզ կհարցաքննեն։

ԵՐԵՒԱՆ

Ես կստեմ։

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Չպետք է ստել։

ԵՐԵՒԱՆ

Ինչո՞ւ չպետք է ստել։

ՈՒՍՈՒՑԻՉԸ

Որովհետև ստելը վատ բան է, և այլն...

Ահա անխուսափելի շրջանակը։ Հենց որ դուրս գաք այս շրջանակից, երեխան ձեզ այլևս չի լսի։ Մի՛թե սրանք չափազանց օգտակար հրահանգներ չեն։ Ես շատ կցանկանայի իմանալ, թե ինչո՞վ կարելի է փոխարինել այս երկխոսությունը։ Նույնիսկ ինքը՝ Լոքը, անկասկած, շատ կդժվարանար այդ հարցում։ Ճանաչել չարն ու բարին, կամ ղդալ մարդկային պարտականությունների պատճառը, երեխայի գործը չէ։

Բնության պահանջն է, որ երեխան երեխա լինի նախքան մարդ լինելը։ Եթե մենք կամենանք խանգարել այս կարգը, կստանանք միայն վաղահաս մրգեր, որոնք տհաս կլինեն, համ չեն ունենա և շուտով կփչանան։ Մենք կունենանք պատանի գիտնականներ ու ծեր երեխաներ։ Մանուկները տեսնելու, մտածելու, զգալու յուրահատուկ ձև ունեն, և այն մեր սեփականով փոխարինելու ցանկությունից ավելի հիմար բան չկա։ Տասը տարեկան երեխայից դատողություն պահանջել, միևնույնն է, թե նրանից պահանջել, որ նրա հասակը հինգ ոտնաչափ բարձրություն ունենա։ Եվ իսկապես, նրա ինչի՞ն է պետք դատողությունը այդ տարիքում։ Դատողությունը ուժի արգելակն է, իսկ երեխան այդ արգելակի կարիքը չունի։

Փորձելով ձեր սաներին համոզել, որ հնազանդվելը պարտականություն է, ձեզ թվում է, թե համոզելուն միացնում եք նաև սպառնալիքը, իսկ որ ավելի վատն է՝ շողոքորթությունն ու խոստումը։ Այդպես ուրեմն, խոստումով հրապուրված կամ բռնադատությանը տեղի տալով, նրանք այնպես են ձևացնում՝ իբր դատողությունն է համոզել իրենց։ Նրանք շատ լավ են տեսնում, որ հնազանդությունը նպաստավոր է իրենց համար, իսկ ըմբոստությունը՝ վնասակար, հենց որ դուք նկատում եք մեկը կամ մյուսը։ Բայց որովհետև դուք նրանցից պահանջում եք իրենց համար տհաճ բաներ, իսկ միշտ էլ ծանր է կատարել ուրիշների կամքը, նրանք թաքուն են կատարում իրենց ցանկությունները՝ համոզված, որ լավ են անում թաքցնելով իրենց անհնազանդությունը։ Բայց երբ հանցանքը հայտնաբերվում է, վախենալով ավելի մեծ պատիժ կրելուց, պատրաստ են խոստովանել, որ վատ են անում անհնազանդ գտնվելով։ Պարտականության զգացումը չի համապատասխանում նրանց տարիքին, և աշխարհում չկա մի

մարդ, որ կարողանա ստիպել նրանց իսկապես զգալ այդ. բայց պատժի վախը, ներողամտության հույսը, ձանձրալի լինելը, պատասխանելու դժվարությունը ստիպում են նրանց խոստովանել այն ամենը, ինչ պահանջվում է նրանցից, և մարդիկ կարծում են, թե համոզել են նրանց, այնինչ միայն ձանձրացրել ու վախեցրել են։

Ի՞նչ է լինում սրա հետևանքը։ Նախ՝ պարտադրելով այնպիսի մի պարտականություն, որ նրանք չեն զգում, դուք նրանց տրամադրում եք ձեր բռնության դեմ ու ստիպում չսիրել ձեզ։ Երկրորդ՝ նրանց սովորեցնում եք կեղծել, ստել՝ վարձատրություն կորզելու կամ պատժից խուսափելու համար։ Վերջապես, նրանց սովորեցնելով թաքուն շարժառիթը շարունակ քողարկել մի բացահայտ պատճառով, դուք ինքներդ եք նրանց միջոց տալիս, որպեսզի անվերջ չարաշահեն ձեզ, թաքցնեն ձեզնից իրենց իսկական բնավորությունը, ձեզ և ուրիշներին խաբեն հարմարադիր դատարկ խոսքերով։ Դուք ինձ կասեք, որ թեև օրենքները պարտադիր են խղճի համար, սակայն չափահաս մարդկանց հանդեպ նույնպես հարկադիր միջոցներ են գործադրում։ Համաձայն եմ. բայց ովքե՞ր են այդ չափահաս մարդիկ, եթե ոչ դաստիարակությամբ խաթարված երեխաներ։ Ահա թե, արդարև, ինչից պետք է խուսափել։ Գործադրեցե՛ք ուժը՝ երեխաների, իսկ դատողությունը՝ չափահասների նկատմամբ. այդպես է բնության կարգը՝ իմաստունը կարիք չունի օրենքների։

Ձեր սանի հետ վարվեցե՛ք նրա տարիքի համաձայն։ Նախ նրան դրե՛ք իր պատշաճ տեղն ու այնպես լավ պահեցե՛ք, որ չփորձի այնտեղից հեռանալ։ Այն ժամանակ, նախքան իմանալը, թե ինչ բան է իմաստությունը, նա գործադրած կլինի դրա լավագույն դասը։ Նրան ոչ մի դեպքում ոչինչ մի՛ հրամայեք, բացարձակապես ոչինչ։ Արե՛ք այնպես, որ նույնիսկ նա չկասկածի, թե երբևէ ոգում եք նրա կամքին բռնանալ։ Թո՛ղ միայն հասկանա, որ ինքը թույլ է, իսկ դուք՝ ուժեղ, որ իր և ձեր դրության բերումով, ինքը անխուսափելիորեն կախում ունի ձեզնից. թո՛ղ նա այդ բանը գիտենա, սովորի, զգա. թո՛ղ հենց սկզբից իր գոռոզ կախի վրա զգա այն բիրտ լուծը, որ բնությունը դրել է մարդու վրա, անհրա-

ժեշտության ծանր լուծը, որի տակ պետք է խոնարհվի ամեն մահկանացու. թո՛ղ այդ անհրաժեշտությունը տեսնի իրերի, բայց ոչ երբեք մարդկանց քմահաճույքի[1] մեջ, իսկ այն արգելակը, որ նրան զսպում է, թո՛ղ լինի ուժը և ոչ թե հեղինակությունը։ Այն բանը, որ չպետք է անի, մի՛ արգելեք նրան, այլ պարզապես մի՛ թողեք, որ անի, առանց բացատրությունների և առանց դատողությունների։ Եթե դուք նրան մի բան եք տալիս, ապա տվեք առաջին ուզելուն, առանց թախանձանքի, առանց խնդրանքի, մանավանդ՝ առանց որևէ պայմանի։ Թույլ տվե՛ք հաճույքով, մերժեցե՛ք դժկամությամբ, բայց ձեր բոլոր մերժումները թո՛ղ վերջնական լինեն, թո՛ղ երեխայի համառությունը ձեզ չկոտրի, թո՛ղ ձեր արտասանած «ոչ»-ը պողպատե պատնեշ լինի, որի դեմ երեխան մի քանի անգամ ուժերը փորձելուց հետո, այլևս չփորձի այն խորտակել։

Այդպիսով դուք նրան կդարձնեք համբերատար, հավասարակշռված, խոնարհ, հանդարտաբարո, նույնիսկ այն դեպքում, երբ նա իր փափագածը չի ստանում, որովհետև մարդը բնությունից օժտված է իրերի անհրաժեշտությունը, բայց ոչ երբեք ուրիշների չկամությունը, համբերությամբ տանելու հատկությամբ։ «Այլևս չկա» խոսքը այնպիսի պատասխան է, որի դեմ ոչ մի երեխա չի ըմբոստանում, բացի այն դեպքից, երբ կասկածում է, որ նրան խաբում են։ Այստեղ միջին ճանապարհ չկա. կա՛մ ոչինչ չպետք է պահանջել երեխայից, կա՛մ նախապես նրան պետք է վարժեցնել կատարյալ հնազանդության։ Ամենավատ դաստիարակությունն այն է, երբ երեխային հնարավորություն չեք տալիս կողմնորոշվել, թե ում կամքը կատարի՝ ի՞ր թե ձեր, անվերջ վիճում եք նրա հետ, թե ում կամքն է վճռորոշ։ Իսկ ես հարյուր անգամ կնախընտրեմ այդպիսի դեպքում միշտ զիջել նրան։

Շատ տարօրինակ է, որ այն օրից, երբ մարդիկ սկսեցին զբաղվել երեխաների դաստիարակությամբ, նրան առաջնոր-

[1] Պետք է համոզված լինել, որ երեխան, առանց հասկանալու, իր կամքին հակառակվող ամեն մի կամք համարում է քմահաճույք։ Երեխան ոչինչ բնական չի տեսնում այն ամենի մեջ, ինչ հակադրվում է իր քմահաճույքին։

դելու համար նպատակահարմար գտան միայն մրցակցությունը, նախանձը, ցանկությունը, անապարծությունը, աչքածակությունը, գծուծ վախկոտությունը, բոլոր տեսակի ամենավտանգավոր ու ամենից արագ բորբոքվող կրքերը, որոնք կարող են ապականել հոգին, նույնիսկ, երբ մարմինը դեռևս ձևավորված չէ։ Ամեն անգամ, երբ ցանկանում են մի վաղահաս պատվիրան մտցնել նրա գլուխը, միևնույն ժամանակ մի մոլություն են արմատավորում նրա սրտում։ Որոշ անմիտ ուսուցիչներ մտածում են հրաշքներ գործել՝ երեխաներին չար դարձնելով, որպեսզի նրանց ցույց տան, թե ինչ բան է բարությունը, և ապա լրջությամբ ասում են մեզ. «Այսպիսին է մարդը»։ Այո՛, այդպիսին է այն մարդը, որ դուք էլ պատրաստել։

Մարդիկ փորձել են բոլոր միջոցները, բացի մեկից, այն միակ միջոցից, որով հենց կարելի է հաջողության հասնել՝ լավ կարգավորված ազատությունը։ Ամենևին չպետք է փորձել դաստիարակել երեխային, երբ չգիտեք առաջնորդել նրան ցանկացած ուղղությամբ, միայն հնարավորի և անհնարի օրենքներով։ Ե՛վ մեկի, և՛ մյուսի շրջանակը հավասարապես անծանոթ լինելով նրան, կարելի է այն ընդարձակել կամ սեղմել երեխայի շուրջը՝ ըստ ցանկության։ Նրան կարելի է կաշկանդել, առաջ մղել, ետ պահել միայն անհրաժեշտության կապանքով, առանց շարժելու նրա դժգոհությունը. նրան կարելի է ճկուն ու հլու դարձնել սոսկ իրերի ուժով, առանց որևէ մոլության մղելու նրան, որովհետև կրքերն այն ժամանակ են միայն բորբոքվում, երբ անզոր են։

Ձեր սանին ոչ մի տեսական դաս մի՛ տվեք, սովորեցրե՛ք նրան միայն իր անձի փորձով. ոչ մի պատժով չպատժե՛ք նրան, որովհետև երեխան չգիտի, թե ինչ բան է սխալվելը. նրան երբեք չստիպե՛ք ներողություն խնդրել, որովհետև նա չի կարող ձեզ վիրավորանք հասցնել։ Երեխան, որի արարքը զուրկ է ամեն բարոյական հիմքից, անընդունակ է բարոյապես այնպիսի վատ գործ կատարելու, որն արժանի լինի պատժի ու հանդիմանության։

— Ես տեսնում եմ արդեն, որ ահաբեկված ընթերցողը սույն երեխային կդատի, համեմատելով մեր այժմյան երեխաների

հետ. նա սխալվում է։ Շարունակ ճնշված պահելով ձեր սաներին, զրգռում եք նրանց եռանդը։ Ինչքան նրանք զուսպ են ձեզ մոտ, այնքան անհանդարտ են ձեզնից հեռու։ Չէ՞ որ պետք է ի վերջո մի կերպ, եթե կարող է, հատուցում ստանա այն բռնության համար, որին դուք ենթարկում եք նրան։ Քաղաքի երկու դպրոցական որևէ վայրում ավելի վնաս կպատճառեն, քան թե գյուղի ամբողջ պատանեկությունը։ Փակեցե՛ք սենյակում մի փոքրիկ պարոնիկի և մի գյուղացի տղայի. առաջինն ամեն ինչ կտապալի, կջարդի, նախքան մյուսի տեղից շարժվելը։ Ի՞նչն է սրա պատճառը, եթե ոչ այն, որ մեկն շտապում է օգտվել իր ազատության մի պահից, իսկ մյուսը, վստահ իր ազատության վրա, երբեք չի աճապարում նրանից օգտվել։ Ճիշտ սակայն, գյուղի երեխաները, որոնց հաճախ շփացնում կամ հակառակվում են, դեռևս շատ հեռու են այն վիճակից, որ ես ցանկանում եմ նրանց համար։

Որպես անվիճելի ճշմարտություն, պետք է ընդունենք, որ առաջին բնական շարժումները միշտ ճիշտ են. մարդկային սրտում ոչ մի վաղնջական ապականություն չկա. չկա ոչ մի մոլություն, որի մասին կարելի չլինի ասել, թե այն ինչպես կամ որտեղից է թափանցել երեխայի սիրտը։ Մարդու միակ բնական կիրքը ինքնասիրությունն է, կամ արժանապատվությունը՝ բառիս ամենալայն առումով։ Այդ ինքնասիրությունն ինքն իր համար կամ մեր հարաբերությամբ՝ լավ է և օգտակար, բայց որովհետև ուրիշի հետ ոչ մի անհրաժեշտ առնչություն չունի, այս տեսակետից բնականորեն զուրկ է որևէ նշանակությունից։ Ինքնասիրությունը լավ կամ վատ կարող է լինել նայած, թե ինչպես է գործադրվում և ինչ առիթով։ Մինչև այն ժամանակ, երբ վերջապես ծնվում է ինքնասիրության ղեկավարը՝ բանականությունը, անհրաժեշտ է, որ երեխան անի այն, ինչ անում է, ոչ թե նրա համար, որ նրան տեսնում և լսում են, մի խոսքով՝ չանի ուրիշներին նկատի ունենալով, այլ միմիայն բնության պահանջով, և այն ժամանակ ոչինչ չի անի, բացի լավից։

Սրանով ես չեմ ուզում ասել, թե նա ոչ մի վնաս չի պատճառելու, թե ինքն իրեն երբեք չի վիրավորելու, թե, գուցե, իր ձեռքի տակ գտնված որևէ բանկագին իր չի կոտրելու։ Նա

կարող է շատ վնասներ պատճառել՝ առանց վատ բան անելու, որովհետև վատ գործը կախված է վնասելու մտադրությունից, այնինչ երեխան այդ մտադրությունը երբեք չի ունենա։ Եթե գեթ մեկ անգամ նա այդպիսի մտադրություն ունենար, ամեն ինչ կորած կլիներ՝ նա համարյա անբուժելի չար կլիներ։

Կան բաներ, որոնք վատ են ժլատության տեսանկյունից, բայց վատ չեն դատողության տեսակետից։ Տալով երեխաներին բացարձակ ազատություն՝ անելու իրենց փոքրիկ չարաճճիությունները, միաժամանակ անհրաժեշտ է հեռացնել նրանցից այն ամենը, ինչ թանկարժեք է, չթողնել նրանց մոտ ոչ մի դյուրաբեկ ու թանկագին առարկա։ Նրանց սենյակում դրեք միայն կոշտ ու դիմացկուն իրեր. ո՛չ մի հայելի, ո՛չ մի հախճապակյա իր, ո՛չ մի շքեղ գույք։ Գալով իմ Էմիլին, որին ես դաստիարակում եմ գյուղում, նրա սենյակում չպետք է գտնվեն այնպիսի իրեր, որոնք այդ սենյակը տարբերեն գյուղականից։ Ի՞նչ միտք ունի նրա սենյակը զարդարել այդքան խնամքով, քանի որ քիչ ժամանակ է մնալու այնտեղ։ Բայց ես սխալվում եմ. երեխան ինքը կզարդարի իր սենյակը, ու մենք շուտով կտեսնենք, թե ինչպես։

Եթե, չնայած ձեր նախազգուշական միջոցառումներին, երեխան որևէ անկարգություն է անում, մի պետքական իր է կոտրում, մի՛ պատժեք նրան ձեր անհոգության համար, մի՛ հանդիմանեք բնավ, թո՛ղ ոչ մի մեղադրական խոսք լսի ձեզնից, նույնիսկ ցույց մի՛ տաք, որ ձեզ վշտացրել է, այնպես ձևացրե՛ք, որ իբր թե առարկան ինքն իրեն է կոտրվել. վերջապես, համարեցե՛ք, որ շատ բան եք արել, եթե կարող եք ոչինչ չասել։

Ջեմ համարձակվում այստեղ պարզել ամբողջ դաստիարակության ամենամեծ, ամենակարևոր և ամենաօգտակար կանոնը. դա կլիներ ոչ թե ժամանակ շահել, այլ ժամանակ կորցնել։ Հասարակ ընթերցողը թո՛ղ ինձ ների իմ պարադոքսների համար. երբ մարդ մտածում է, պարտավոր է պարադոքսների դիմել. և ինչ կուզեք ասեք, նախընտրում եմ լինել պարադոքսային՝ տարօրինակ մարդ, քան թե նախապաշարմունքների մարդ։ Մարդկային կյանքի ամենավտանգավոր

շրջանը՝ երեխայի ծնվելուց մինչև տասներկու տարեկան հասակն է։ Այդ այն ժամանակամիջոցն է, երբ ծլում են սխալներն ու արատները, և մենք դեռևս ոչ մի միջոց չունենք դրանք արմատախիլ անելու, իսկ երբ միջոց ենք ունենում, արմատներն արդեն այնքան խորացած են լինում, որ հնարավոր չէ պոկել։ Եթե երեխաները կարողանային ծծկերությունից հանկարծ հասնել հասունության տարիքին, այդ դեպքում մեր տված դաստիարակությունը նրանց հարմար կլիներ, սակայն, բնության առաջընթացի համաձայն, բոլորովին դրա հակառակն է պահանջվում։ Պետք է հանգիստ թողնել նրա հոգին, մինչև որ նա ձեռք բերի իր բոլոր ընդունակությունները, որովհետև անկարելի է, որ հոգին նշմարի ձեր՝ իրեն ներկայացրած չափը, քանի դեռ կույր է նա, և մտքերի ընդարձակ դաշտում հետևի մի ճանապարհի, որ գաղտնիությունը դեռևս անհնարելի ձևով է գծում, նույնիսկ ամենաստուր աչքի համար։

Առաջին դաստիարակությունը, ուրեմն, պիտի լինի զուտ բացասական։ Այն կայանում է ոչ թե առաքինությունն ու ճշմարտությունն ուսուցանելու, այլ սիրտը մոլության, իսկ միտքը մոլորության դեմ պաշտպանելու մեջ։ Եթե դուք կարողանայիք ինքներդ ոչինչ չանել ու թույլ չտալ նրան ոչինչ անելու, եթե կարողանայիք ձեր սանին առողջ և ուժեղ վիճակում հասցնել մինչև տասներկու տարիքը, երբ նա տակավին չկարողանա աջ ձեռքը զանազանել ձախից, այն ժամանակ ձեր առաջին դասերն իսկ դատողության առաջ կբացեին նրա գիտակցության աչքերը. առանց նախապաշարումների, առանց կանխակալ սովորույթների, նա իր մեջ ոչինչ չի ունենա ձեր ջանքերի արդյունքին հակասող։ Շուտով նա ձեր ձեռքի տակ կդառնա ամենահմայուն մարդը, և դուք, չկսելով ոչինչ չանելուց, դաստիարակության մի հրաշք կատարած կլինեք։

Գնացե՛ք սովորականին հակառակ ուղղությամբ, և համարյա միշտ էլ լավ արած կլինեք։ Որովհետև երեխայից ոչ թե երեխա են ուզում պատրաստել, այլ գիտնական, այդ պատճառով էլ հայրերն ու ուսուցիչները շատ վաղ են սկսում կշտամբել, ուղղել, հանդիմանել, շողոքորթել, սպառնալ, խոստանալ, հրահանգել, պատճառաբանել։ Դուք ավելի լավն

արե՛ք, եղե՛ք ողջամիտ և երբեք դատողություններ մի՛ անեք ձեր սանի հետ, առավել ևս մի՛ ստիպեք հավանել այն, ինչ նրան դուր չի գալիս։ Երբ այսպես անհաճո նյութերի մեջ ա.նվերջ դատողություն եք մտցնում, դրանով երեխայի համար այն դարձնում եք ձանձրալի և վաղօրոք այն վարկաբեկում եք նրա՝ դեռևս այն ըմբռնելու անկարող մտքի մեջ։ Վարժեցրե՛ք նրա անդամները, զգայարանները, ուժը, բայց հոգին թողե՛ք ազատ, որքան կարելի է երկար ժամանակ։ Զգուշացե՛ք այն բոլոր զգացմունքներից, որոնք ծնվում են ավելի վաղ, քան այդ զգացմունքները գնահատող դատողությունը։ Ետ պահեցե՛ք, հեռացրե՛ք խորթ տպավորությունները և, չարի ծնունդը խափանելու նպատակով, մի՛ շտապեք բարին անել, որովհետև բարին միայն այն ժամանակ է բարի, երբ այն լուսավորում է դատողությունը։ Բոլոր հնարագումները համարեցե՛ք որպես առավելություն, քանի որ դրանով գնում եք դեպի նպատակը՝ առանց կորուստի շատ բան շահելով. թողե՛ք, որ մանկությունը հասունանա երեխաների մեջ։ Մի խոսքով, եթե որևէ դաս կարևոր է նրանց համար, զգուշացե՛ք այն ուսուցանել այսօր, եթե կարող եք անվտանգ հետաձգել վաղվան։

Այս մեթոդի օգտակարությունը, հաստատող ձյուն հանգամանքը՝ դա երեխայի առանձնահատուկ ոգին է, որը պետք է լավ ճանաչել, իմանալու համար, թե ինչ բարոյական ուժիմ է հարկավոր նրան։ Յուրաքանչյուր միտք ունի իր սեփական կառուցվածքը, որի համաձայն էլ պետք է ղեկավարել նրան, և այդ առնչությամբ, ձեռք առնված միջոցների հաջողության համար անհրաժեշտ է նրան առաջնորդել այդ և ոչ թե մի այլ ձևով։ Շրջահայաց մա՛րդ, երկար ժամանակ ուսումնասիրի՛ր բնությունը, լավ հետևի՛ր քո սանին, նախքան նրան քո առաջին խոսքն ասելը, թո՛ղ, որ նախ նրա բնավորության սաղմը դրսևորվի լիակատար ազատությամբ, ոչ մի բանում նրան մի՛ հակառակվի, որպեսզի նրան ամբողջությամբ ավելի լավ տեսնես։ Մի՞թե կարծում եք, թե ազատության այդ ժամանակը կորած կլինի նրա համար. ընդհակառակն, ավելի լավ օգտագործված կլինի, որովհետև այդպիսով դուք կսովորեք առավել թանկագին ժամանակից ոչ մի րոպե չկորցնել. մինչ-

դեռ, եթե դուք սկսեք գործել՝ առանց իմանալու, թե ի՞նչ պետք է անեք, ապա կգործեք պատահականորեն. դուք կարող եք սխալվել և ստիպված կլինեք ետ դառնալ. այդպիսով ավելի կհետանաք նպատակից, քան եթե ավելի քիչ շտապեիք: Մի՛ վարվեք, ուրեմն, այն ժլատի նման, որը ցանկանալով ոչինչ չկորցնել, ավելի շատ է կորցնում: Սկզբնական տարիքում զոհեցե՛ք ժամանակը, որպեսզի ավելիով ետ ստանաք հասուն տարիքում: Եթե այդ բժիշկը առաջին իսկ հայացքից դեղատոմս գրելու հիմարություն չի անի, այլ նախ ուսումնասիրում է հիվանդի վիճակը, ապա կարգադրություններ անում: Այդպիսի բժիշկը ուշ է սկսում դարմանել, բայց բժշկում է. մինչդեռ շտապող բժիշկը սպանում է:

Բայց ո՞ւր պետք է տեղավորենք դաստիարակելու համար այս երեխային, որն ասես մի անեզր էակ է կամ մի ավտոմատ: Պահե՞լ նրան լուսնի վրա, թե մի ամայի անապատում: Մեկուսացնե՞լ նրան մարդկանցից: Արդյոք նա մարդկանց շրջապատում շարունակ չի՞ տեսնելու ուրիշների մոլությունների օրինակը: Չի՞ տեսնելու իր ծնողներին, հարևաններին, դայակին, խնամակալին, սպասավորին, հենց իր դաստիարակին, որը, վերջին հաշվով, մի հրեշտակ չի լինելու:

Այս առարկությունը զորավոր է և հիմնավոր: Իսկ ո՞վ ասաց, թե բնական դաստիարակությունը հեշտ գործ է: Ո՛վ մարդիկ, մի՞թե ես եմ մեղավոր, որ դուք դժվարացրիք այն ամենը, ինչ լավ է: Ես զգում եմ այդ դժվարությունները, ընդունում եմ. գուցե նրանք անհաղթահարելի են, բայց և այնպես, վստահորեն կարելի է ասել, որ եթե աշխատեք նրանցից խուսափել, դա ձեզ որոշ չափով կհաջողվի: Ես ցույց եմ տալիս այն նպատակը, որ պետք է նկատի ունենալ. չեմ ասում, թե կարելի է հասնել նրան, բայց կասեմ, որ ով ամենից ավելի կմոտենա նպատակին, նա առավել հաջողած կլինի:

Հիշեցե՛ք, որ մարդուն ձևավորելու փորձից առաջ, պետք է ինքներս մեզ մարդ դարձնենք, պետք է ինքներս լինենք այն օրինակը, որով ուրիշն է առաջնորդվելու: Երբ դեռևս երեխան անգիտակից է, մենք ժամանակ ունենք իրերն այնպես դասավորելու նրա շուրջը, որ նա առաջին հերթին տեսնի այն,

ինչ պետք է տեսնի։ Եղե՛ք այնպիսին, որ բոլորը հարգեն ձեզ, եղե՛ք սիրելի, որպեսզի ամեն մարդ ջանա ձեզ հաճելի լինել։ Դուք չեք կարող երեխայի վրա իշխել, եթե չեք իշխում նրա շրջապատի վրա, և այդ հեղինակությունը բավարար չի լինի, եթե հիմնված չէ առաքինության հարգանքի վրա։ Խնդիրը քսակը դատարկելու և փողը առատաձեռնորեն ծախսելու մեջ չէ. ես երբեք չեմ տեսել, որ դրամի ուժով կարելի լինի ուրիշներին սիրելի դառնալ։ Ջպետք է երբեք ժլատ ու քարսիրտ լինել, ոչ էլ ողբալ այն թշվառության վրա, որը կարելի է ամոքել. բայց դուք իզուր եք բաց անում ձեր դրամարկղը, եթե ձեր սիրտը չեք բացում. այդ դեպքում ուրիշների սիրտը միշտ էլ փակ կմնա ձեզ համար։ Հարկավոր է նվիրաբերել ձեր ժամանակը, ձեր հոգատարությունը, ձեր համակրանքը, նույնիսկ ձեր անձը, այլապես, ինչ էլ անեք, միշտ զգալի կլինի, որ այդ ոչ թե դուք եք անում, այլ ձեր դրամը։ Կարեկցության և հոգածության այնպիսի արտահայտություններ կան, որոնք ավելի մեծ ազդեցություն են թողնում և իրոք ավելի օգտակար են, քան բոլոր պարգևները։ Ինչքա՜ն հիվանդներ ու թշվառներ կան, որոնք ավելի շուտ սփոփանքի կարիք ունեն, քան թե ողորմության. ինչքա՜ն ճնշվածներ կան, որոնց համար պաշտպանությունն ավելի կարևոր է, քան թե դրամը։ Հաշտեցրե՛ք գժտված մարդկանց, կանխեցե՛ք դատական գործերը, զավակներին ներշնչեցե՛ք պարտականության զգացում, հայրերին՝ ներողամտություն, սատարեցե՛ք երջանիկ ամուսնություններ կնքելուն, արգելեցե՛ք կեղեքումները, ձեր սանի ծնողների կարողությունն ու վարկը գործադրեցե՛ք ի նպաստ այն դժբախտի, որին մերժում են արդարությունը, ճնշում են զորեղները։ Դուք ձեզ համարձակ հայտարարեցե՛ք թշվառների պաշտպան։ Եղե՛ք արդար, մարդկային, բարեգործ։ Մի՛ լինեք սոսկ ողորմած, այլև՝ գթասիրտ։ Բարեգութ գործերն ավելի շատ են չարիքներ թեթևացնում, քան թե դրամը. սիրեցե՛ք ուրիշներին, և նրանք կսիրեն ձեզ, օգնեցե՛ք նրանց, և նրանք կօգնեն ձեզ, եղե՛ք նրանց եղբայրները, և նրանք կլինեն ձեր զավակները։

Ահա այն պատճառներից մեկը, որի համար ես ցանկանում եմ էմիլին դաստիարակել գյուղում, հեռու սպասավոր-

ների խաժամուժից, որոնք, իրենց տերերից հետո, ամենազզվելի մարդիկն են, հետու քաղաքների սև բարքերից, որոնց արտաքին փայլը երեխաների համար հրապուրիչ ու վարակիչ է, այնինչ գյուղացիների անսքող մոլությունները իրենց կոպտությամբ ավելի վանող են, քան թե գրավիչ, երբ առանձնապես շահագրգռված չենք դրանք ընդօրինակելու։

Գյուղում դաստիարակն ավելի ինքնուրույն կարող է իր ցանկացածը ցույց տալ երեխային. նրա համբավը, նրա խոսքերը, նրա օրինակը ավելի հեղինակություն կունենան այստեղ, քան քաղաքում. քանի որ նա բոլորի համար օգտակար է, ապա ամեն ոք կաշխատի նրան հաճոյանալ, նրա հարգանքին արժանանալ, սակի հանդեպ լինել այնպես, ինչպես դաստիարակն է կամենում. և եթե մոլություններից չեն հրաժարվում, գոնե կխուսափեն գայթակղություններից. հենց մեզ էլ այդ է հարկավոր մեր նպատակին հասնելու համար։

Դադարեցե՛ք ձեր սխալների համար ուրիշներին մեղադրելուց. երեխաները ավելի քիչ են փչանում իրենց տեսած վատ բաներից, քան այն ամենից, որ դուք եք նրանց սովորեցնում։ Լինելով միշտ խրատող, միշտ բարոյախոս, միշտ ծծախնդիր, մի միտք տալու համար, որը կարծում եք, թե լավն է, դուք նրանց միաժամանակ տալիս եք այլ քսան մտքեր, որոնք ոչ մի արժեք չունեն. միայն ձեր գլխով անցածով սարված, չեք տեսնում, թե ինչպիսի ազդեցություն եք գործում նրանց մտքի վրա։ Խոսքերի այն մեծ տարափի մեջ, որով դուք անվերջ հեղեղում եք նրանց, չե՞ք կարծում, թե կարող է գտնվել այնպիսին, որը նրանք սխալ ըմբռնեն։ Չե՞ք կարծում, որ ձեր խառնափնթոր բացատրությունները նրանք կարող են մեկնաբանել իրենց ուզածի պես և դրանցում գտնել ինչ-որ բան՝ իրենց համար մատչելի մի սիստեմ դարձնելու, որը, հարմար առիթին, կօգտագործեն ձեր դեմ։

Լսեցե՛ք փոքրիկ մի մարդուկի, որին նոր են վարդապետել, թողե՛ք, որ նա շաղակրատի, հարցաքննի, ուզած ցնդաբանությունները ասի, և դուք կապշեք, նկատելով, թե ձեր դատողությունները ինչպիսի անսովոր փոփոխություններ են կրել նրա մտքում. նա ամեն ինչ շփոթում է, շուտ է տալիս, համբերությունից հանում է ձեզ ու երբեմն էլ անսպասելի

դատողություններով վհատեցնում։ Դուք ստիպված եք լինում կա՛մ լռել, կա՛մ նրան լռեցնել։ Իսկ ի՞նչ կմտածի նա այն մարդու լռության մասին, որն այնքան սիրում է խոսել։ Եթե պատահեց, որ երեխան շահեց այդ առավելությունն ու զրաց այդ, այն ժամանակ մնա՛ս բարով, դատարկություն. հենց այդ րոպեից ամեն ինչ վերջացած է. երեխան այլևս չի հետաքրքրվի ուսումով ու միշտ կաշխատի վիճել ձեզ հետ։

***Նախանձախնդիր** ուսուցիչնե՛ր, եղե՛ք պարզ, համեստ, չափավո՛ր. միայն այն ժամանակ շտապեցե՛ք դատել, երբ հարկավոր է ուրիշներին արգելել գործելուց. ես միշտ պիտի կրկնեմ՝ եթե հնարավոր է, դեն շպրտեցե՛ք մի լավ ուսուցման ձև, որպեսզի հանկարծ վատը չավանդեք։ Այս երկրի վրա, ուր բնությունը կարող էր մարդու առաջին դրությունը կատուցել, զգուշացե՛ք մոլորեցնողի դերն ստանձնել՝ ուզենալով անմեղությանը տալ բարու և չարի ճանաչողություն, և քանի որ դուք անկարող եք արգելել երեխային, ոչ չընդօրինակի ուրիշներին, ապա ձեր ամբողջ աշխատությունը թո՛ղ ծառայի այդ օրինակները նրա մտքում նպատակահարմար ձևով տպավորելու գործին։*

Երեխայի ներկայությամբ բոնկվող բուռն կրքերը մեծ տպավորություն են գործում նրա վրա, որովհետև այդ կրքերը անչափ զգալի են և ստիպում են ուշադրություն դարձնել իրենց վրա։ Հատկապես զայրույթը այնքան աղմկալի է իր բորբոքումներով, որ անհնար է անուշադրության մատնել, երբ այդ մեզ մոտ է տեղի ունենում։ Կարիք չկա հարցնելու, թե արդյոք սա գեղեցիկ ճառ ասելու մի առի՛թ է մանկավարժի համար։ Բնա՛վ երբեք. ոչ մի դեղեցիկ ճառ, ոչ մի խոսք, ոչ մի բան։ Թողե՛ք, որ երեխան գործի. զարմացած այդ տեսարանով, նա կշտապի ձեզ հարցեր տալ։ Պատասխանը պարզ է և բխում է այն պատճառներից, որոնք նրա զգացումներն են շոշափում։ Նա տեսնում է մի բորբոքված ու այլայլված դեմք, փայլատակող աչքեր, սպառնագին շարժումներ, լսում է աղաղակներ՝ այն ամենը, ինչ ցույց է տալիս, թե մարմինը բնական վիճակում չէ։ Ասացե՛ք երեխային բացեիբաց, առանց ձևականության և առանց խորհրդավորության. «Այս խեղճ մարդը հիվանդ է, տենդում էր։ Դուք կարող եք առիթից

•գտվել ու մի քանի խոսքով նրան գաղափար տալ հիվանդությունների ու նրանց հետևանքների մասին, որովհետև սա էլ բնությունից է բխում և մեկն է անհրաժեշտության այն կապերից, որոնցով նա իրեն պետք է կաշկանդված զգա։

Կարո՞ղ է պատահել, որ երեխան, այս ակներև փաստից հետո, վաղ հասակից որոշ զզվանք չզգա կրքերի չափանզանցություններից, համարելով դրանք որպես հիվանդություն։ Չե՞ք կարծում, որ հարմար առիթով տրված նման մի ծանոթություն ավելի փրկարար ազդեցություն կթողնի, քան ամենաձանձրալի բարոյական քարոզը։ Բայց տեսեք, թե ապագայում ինչ կլինի այդ ծանոթության հետևանքը. դուք իրավունք կունենաք, երբ ստիպված լինեք, ըմբոստ երեխայի հետ վարվել որպես մի հիվանդի հետ՝ նրան փակել սենյակում, պառկեցնել անկողնում, եթե կարիք կա, ուժիմի ենթարկել, վախեցնել իր մեջ սաղմնավորվող մոլություններով, հասկացնել, որ դրանք որքան գարշելի ու սարսափելի են, և այս ամենը պետք է կատարել այնպես, որ երեխան այդ խրսուտությունը չընկալի որպես պատիժ, որ դուք թերևս ստիպված կլինեք գործադրել նրան բռնելու համար։ Իսկ եթե պատահի, որ բորբոքման մի րոպեի դուք ինքներդ կորցնեք ձեր սառնասրտությունն ու զսպվածությունը, որ պետք է ձեր ուսուցման հիմքը լինի, ապա մի՛ ջանաք ձեր սխալը ծածկել երեխայից, այլ անկեղծորեն, մեղմ հանդիմանությամբ ասե՛ք նրան. «Սիրելի՛ բարեկամս, դուք ինձ ցավ պատճառեցիք»։

Բայց և այնպես, չպետք է երեխայի ներկայությամբ բացահայտել այն բոլոր պարզամտությունները, որոնց կարող են ծնունդ տալ նրա մեջ՝ նրան ավանդվող հասարակ մտքերը, ոչ էլ հիշատակել դրանք այնպես, որ նա կարողանա այդ հասկանալ։ Մի անզգույշ ծիծաղի պոռթկում կարող է ձեր վեց ամսվա աշխատանքը ջուրը գցել և ամբողջ կյանքում անդարմանելի վնաս հասցնել։ Ես պետք է մի անգամ ևս հիշատակեմ, որ երեխայի ուսուցիչը լինելու համար նախ պետք է մեր ուսուցիչը լինենք։ Ես պատկերացնում եմ իմ փոքրիկ Էմիլին, որը երկու հարևանուհիների կռվի ամենատաք պահին մոտենում է նրանցից առավել կատաղածին ու կրեկցական ձայնով ասում նրան. «Սիրելի՛ս, դուք հիվանդ եք,

ես ձեզ շատ եմ ցավում»։ Անկասկած, այս վարմունքը անհետևանք չի մնա ականատեսների ու նույնիսկ հենց իրենց՝ կովողների համար։ Նախքան նա կկատեր այդ բանը, և կամ գոնե կմտածեր այդ մասին, ես, առանց ծիծաղելու, առանց հանդիմանելու, առանց զովելու, նրան կտանեմ այդտեղից, իր հոժարությամբ քե հակառակ իր կամքի, ու կշտապեմ նրան զբաղեցնել ուրիշ բաներով, որպեսզի մոռացության տա այդ տեսարանը։

Ես նպատակ չունեմ մտնել բոլոր մանրամասնությունների մեջ, այլ միայն ուզում եմ պարզել ընդհանուր սկզբունքներ և դժվարին պարագաներում՝ տալ օրինակներ։ Ես անհնար եմ դտնում, որ հասարակության մեջ կարելի է մի երեխայի հասցնել տասներկու տարեկանին, առանց նրան գաղափար տալու մարդկանց միմյանց հետ ունեցած հարաբերությունների և մարդկային գործողությունների բարոյականի մասին։ Պետք է բավականանալ այդ անհրաժեշտ գիտելիքները որքան կարելի է ուշ նրան տալով, կամ, անխուսափելիության դեպքում, դրանք սահմանափակել իրենց ներկայի օգտակարությամբ, լոկ նրա համար, որ երեխան ինքն իրեն չհամարի աւերը ամեն ինչի և ուրիշին չարիք չհասցնի առանց խղճահարության և առանց գիտակցելու կան այնպիսի մեղմ ու հանդարտ բնավորություններ, որոնց սկզբնական անմեղությունը կարելի է անվտանգ պահպանել երկար ժամանակ։ Բայց կան նաև այնպիսի բուռն խառնվածքներ, որոնց վայրագությունը վաղ է զարգանում և որոնց հարկավոր է շտապ մարդ դարձնել, որպեսզի ստիպված չլինեն մի օր շղթայելու։

Մենք առաջին հերթին պարտականություններ ունենք մեր հանդեպ. մեր նախնական զգացմունքները մեր մեջ են կենտրոնանում. մեր բոլոր բնական շարժումները ամենից առաջ վերաբերում են մեր ինքնապահպանմանն ու մեր բարեկեցությանը։ Այսպես, մեր մեջ արդարության առաջին զգացումը չէ այն, որ մենք պարտական ենք ուրիշներին, այլ այն, որ ուրիշներն են մեզ պարտական. և ահա՛ դարձյալ հասարակ դաստիարակության անխմասո կողմերից մեկը՝ երեխաների հետ նախ նրանց պարտականությունների մասին են խոսում, իսկ իրավունքների մասին՝ երբեք, այսինքն՝ սկսում են նրանց

ասելով ճիշտ հակառակը, այն, ինչ նրանք չեն կարող հասկանալ ու նրանց չի հետաքրքրում։

Ուրեմն, եթե ես դաստիարակելու լինեի նրանցից որևէ մեկին, որ վերը հիշեցի, ինքս ինձ կասեի. «Երեխան ձեռք է բարձրացնում ոչ թե անձերի [1], այլ իրերի վրա և իսկույն փորձով կսովորի հարգել նրանց, ովքեր և՛ տարիքով, և՛ ուժով իրենից բարձր են»։ Սակայն իրերն իրենք իրենց չեն կարող պաշտպանվել։ Առաջին դաղափարը, որ պետք է տալ երեխային, ոչ թե աղատության գաղափարն է, այլ ավելի շուտ՝ սեփականության գաղափարը։ Եվ որպեսզի կարողանա ըմբռնել սեփականության գաղափարը, նա պետք է որևէ սեփականություն ունենա։ Նրան հիշեցնել իր զգեստները, կահույքը, խաղալիքները՝ ոչինչ չի նշանակում, որովհետև, թեև այդ իրերը պատկանում են նրան, բայց չգիտի, թե ինչու և ինչպես դրանք ձեռք բերել։ Եթե նրան ասենք, թե ինքն այդ ամենն ունի, որովհետև իրեն տվել են, ավելի լավ արած չենք լինի, քանի որ տալու համար պետք է ունենալ։ Այսպիսով ստացվում է, որ իրենից առաջ եղել է մի այլ սեփականատեր, իսկ մենք ուզում ենք սեփականության սկզբունքը բացատրել նրան՝ առանց հաշվի առնելու, որ ընծայելը մի համաձայնություն է, իսկ երեխան դեռևս չգիտի, թե ինչ բան է համաձայնությունը [2]։ Ընթերցողնե՛ր, խընդ-

---

[1] Երբեք չպիտք է թույլ տալ, որ երեխան մեծերի հետ վարվի այնպես, ինչպես իրենից ցածրի կամ նույնիսկ հավասարի հետ։ Եթե նա հանդարտակի լուրջ կերպով խփել մեկին, թեկուզ իր սպասավորին կամ դահճին, պետք է միշտ նրան պատժել, այն էլ շատ խիստ, որպեսզի ուրիշ անգամ կրկնել չհամարձակվի։ Ես տեսել եմ այնպիսի անխոհեմ դաստիարակչուհիներ, որոնք զրկել են երեխայի ըմբոստությունը, նրան խրախուսել ծեծելու ուրիշին, նույնիսկ հենց իրեն՝ դաստիարակչուհուն, և ծիծաղել են այդ թույլ հարվածների վրա, առանց իրենց հաշիվ տալու, որ փոքրիկ կատաղածի դիտավորության մեջ դրանք նույնքան ոճիրներ են, որ նա, ով փոքր հասակում ծեծում է, մեծանալուց հետո կարող է սպանել։

[2] Այդ է պատճառը, որ երեխաները մեծ մասամբ ուզում են ետ տանել՝ ինչ որ ավել են և չար են լինում, երբ չեն տանում։ Այդ բանն այլևս չեն անում, երբ հասկանում են, թե ինչ է նվերը. միայն, այդ դեպքում ավելի զգույշ են լինում մեկին նվեր տալու մեջ։

րում եմ, այս և հարյուր-հազարավոր ուրիշ օրինակներից համոզվե՛ք, թե ինչպես երեխաների գլուխը լցնելով նրանց համար անիմաստ բառերով, մեզ թվում է, թե նրանց շատ լավ ենք ուսուցանել։

Ուրեմն, պետք է վերադառնալ մինչև սեփականությ:ան ծագումը, որովհետև այդտեղից է, որ պիտի ծնվի դրա սկզբունական գաղափարը։ Ապրելով գյուղում, երեխան որոշ ծանոթություն ձեռք կբերի դաշտային աշխատանքների մասին, բավական է, որ ունենա աչքեր, ազատ ժամանակ. իսկ նա այդ երկուսն էլ կունենա։ Ստեղծելու, նմանվելու, արտադրելու, ուժի ու գործունեության նշաններ ցույց տալու ցանկությունը հատուկ է բոլոր տարիքներին, հատկապես՝ մանուկներին։ Երեխան, մեկ-երկու անգամ տեսնելով, թե ինչպես են մշակում այգին, ինչպես են ցանում, խնամում, աճեցնում բանջարեղենը, իսկույն ինքն էլ կուզենա այգի և բանջարանոց մշակել։ Ելնելով վերը նշած սկզբունքներից, ես չեմ հակառակվի նրա այդ ցանկությանը. ընդհակառակն, կքաջալերեմ, կխրախուսեմ նրա հակումը, կաշխատեմ նրա հետ ոչ թե իր, այլ իմ հաճույքի համար. գոնե նա թող այդպես կարծի. ես կլինեմ նրա այգու մշակը։ Մինչև որ նա ուժեղանա, հողը ես կհերկեմ նրա փոխարեն, իսկ նա այգու սեփականատեր կդառնա, երբ մի բակլա ցանելու ի վիճակի կլինի. և, անկասկած, այս սեփականությունը ավելի հարգելի է ու նվիրական, քան Նունեց Բարլոյի ձեռքով հանուն Իսպանիայի թագավորի՝ Հարավային Ամերիկայի գրավումն ու Հարավային օվկիանոսի ափերին իսպանական դրոշակի պարզումը։

Դրանից հետո, երեխայի հետ ամեն օր գալիս-ջրում ենք բակլաները, մեծ հրճվանքով հետևելով դրանց աճմանը։ Ես նրան ավելի շատ կուրախացնեմ՝ ասելով՝ «Այդ ձեզ է պատկանում» ու բացատրելով պատկանել բառի իմաստը, ես նրան կհասկացնեմ, որ նա իր ժամանակը, իր աշխատանքը, հոգնությունը և, վերջապես, իր անձը դրել է այդ գործի վրա, որ այդ հողի մեջ մի բան կա իր էությունից, և որ կարող է այն որպես իր սեփականությունը պահանջել որևէ մեկից, այն-

պես, ինչպես պիտի ապատեր իր թևը նրա ձեռքից, ով կփորձեր այն բռնի պահել։

Մի գեղեցիկ օր երեխան շտապ այգի կգնա՝ ցնցուղը ձեռքին և ի՞նչ ցավալի տեսարանի առջև կգտնվի հանկարծ. բոլոր բակլաները արմատախիլ են արված, ամբողջ հողը տրորված է, և ցանած տեղն իսկ անհնար է որոշել։ «Ա՜հ, ի՞նչ Նղավ իմ աշխատանքը, իմ գործը, իմ քրտինքի ու խնամքների քաղցր պտուղը։ Ո՞վ է հափշտակել իմ սեփականությունը, ո՞վ է պոկել իմ բակլաները»։ Վրդովվում է երեխայի մատաղ սիրտը, ուր անարդարության առաջին զգացումը իր դաժան դառնությունն է կաթեցնում. արցունքները հոսում են հեղեղի նման. անվախիթար տղան բարձրաձայն հեկեկում է ու ճչում։ *Բաժանում ենք նրա վիշտը, նրա զայրույթը, հետաքրքրվում ենք, տեղեկություններ ենք քաղում, հետախուզություններ ենք կատարում։* Վերջապես պարզվում է, որ արարքի հեղինակը այգեպանն է. կանչում ենք նրան։

Բայց խնդիրը բոլորովին այլ բնույթ է ստանում։ Այգեպանը, լսելով բողոքի պատճառը, սկսում է մեզնից ավելի ուժեղ բողոքել. «Ինչպե՞ս, պարոններ, դո՞ւք եք ուրեմն փչացրել իմ այգին։ Ես այստեղ ցանել էի Մալթայի սեխի սերմեր, որոնք ինձ համար այնքան թանկ էին, և հույս ունեի ձեզ հյուրասիրել, երբ հասունանային. բայց ահա՛, ձեր ողորմելի բակլաների պատճառով, դուք ոչնչացրիք արդեն ծլած իմ սեխերը, որոնք այլևս անհնար է վերականգնել։ Դուք ինձ անդարմանելի վնաս հասցրիք, իսկ ինքներդ զրկվեցիք սքանչելի սեխ ուտելու հաճույքից»։

ԹԱՆ–ԹԱԿ

Մեզ ներեցե՛ք, սիրելի Ռոբեր. դուք իրոք այդտեղ ճիգ ու աշխատանք էիք թափել։ Արդարև, մենք մեղավոր ենք, որ փչացրինք ձեր գործը, բայց մենք ձեզ համար բերել կտանք Մալթայի սեխի նոր սերմեր և մյուս անգամ հողին ձեռք չենք տա, մինչև չհամոզվենք, որ մեզնից առաջ որևէ մեկը չի մշակել այն։

ՌՈԲԵՐ

Օ՜, ոչինչ, պարոննե՛ր, եթե այդպես է, դուք կարող եք չանհանգստանալ, որովհետև այլևս ոչ մի տեղ անմշակ հող չկա։ Ես աշխատում եմ այն հողի վրա, որ հորիցս եմ ժառանգել. ամեն մեկը այդպես է անում. ձեր տեսած բոլոր հողերը տեր ունեն։

ԷՄԻԼ

Պարոն Ռոբե՛ր, ուրեմն սեխի սերմերը հաճա՞խ են փչանում։

ՌՈԲԵՐ

Ոչ երբեք, երիտասարդ պարո՛ն, որովհետև ձեզ նման անմիտ պատանիներ հաճախ չեն երևում մեզ մոտ. ոչ ոք հարևանի այգուն ձեռք չի տալիս. ամեն մարդ հարգում է մյուսի աշխատանքը, որպեսզի իրենն էլ ապահոված լինի։

ԷՄԻԼ

Բայց ես այդի չունեմ։

ՌՈԲԵՐ

Հետո՞ ինչ. եթե դուք իմ այգին փչացնեք, այլևս ինչ չեմ սա, որ այնտեղ զբոսնեք, որովհետև չեմ ուզում, որ իմ աշխատանքը ոչնչանա։

ԺԱՆ–ԺԱԿ

Արդյոք չի՞ կարելի բարի Ռոբերին մի առաջարկ անել։ Գուցե դուք համաձայնեիք իմ փոքրիկ բարեկամին ու ինձ մշակելու համար մի անկյուն հատկացնել ձեր այգում, երբ կեսն ստանալու պայմանով։

ՌՈԲԵՐ

Ես համաձայն եմ՝ առանց պայմանի։ Բայց լավ իմացե՛ք, ձեր բակլաները կոչնչացնեմ, եթե ձեռք տաք իմ սեխերին։

Սեփականության մասին սկզբնական ծանոթություններ երեխաների ուղեղի մեջ դրոշմելու այս փորձից կարելի է

տեսնել, թե ինչպես այդ հասկացողությունը բնականորեն ծագում է առաջին անգամ աշխատանքով հողին տիրելու իրավունքից։ Այս բանը շատ պարզ է, որոշակի ու հստակ և երեխային միշտ էլ մատչելի։ Այստեղից մինչև սեփականության իրավունքն ու փոխանակությունը մի քայլ է, որից հետո պետք է իսկույն կանգ առնել։

Կարող է պատահել, որ իմ երկու էջում շարադրած բացատրությունները գործնականում մի տարվա աշխատանք պահանջեն, որովհետև բարոյական մտքերի զարգացման բնագավառում պետք է շատ դանդաղ առաջանալ և հնարավորին չափ հաստատուն քայլերով։ Երիտասարդ ուսուցիչնե՛ր, խնդրում եմ, մտածեցե՛ք այս օրինակի մասին ու հիշեցե՛ք, որ բոլոր ասպարեզներում ձեր դասերը պետք է ավելի շուտ գործնական լինեն, քան տեսական, որովհետև երեխաները շատ հեշտ են մոռանում իրենց ասածներն ու լսածները, բայց ոչ երբեք՝ իրենց արածներն ու տեսածները։

Այսպիսի խորհուրդները պետք է տրվեն, ինչպես ասել եմ, ավելի վաղ կամ ավելի ուշ, նայած աշակերտի հանգիստ կամ անհանգիստ բնավորությանը, որի համապատասխան պետք է արագացնել կամ դանդաղեցնել դրանք։ Դրանց օգտագործման անհրաժեշտությունն այնքան բացահայտ է, որ իսկույն աչքի է ընկնում։ Բայց որպեսզի այս դժվարին հարցերում ոչինչ չմոռացվի, բերենք ևս մի օրինակ։

Ձեր կամակոր երեխան փչացնում է այն ամենը, ինչին ձեռք է տալիս. դրա համար մի՛ բարկանաք, միայն նրանից հեռացրեք դրանք։ Եթե կոտրում է իր գործածած առարկաները, մի՛ շտապեք դրանք փոխարինել նորերով. թողե՛ք, որ երեխան զգա զրկվելու վնասը։ Եթե ջարդում է իր սենյակի լուսամուտի ապակին, թողե՛ք, որ քամին գիշեր ու ցերեկ թափանցի սենյակից ներս, չանհանգստանա՛ք, որ նա կմրսի, որովհետև ավելի լավ է երեխան հարբուխ լինի, քան խելագար. երբեք չդանդաղե՛ք այն նեղությունների համար, որ նա պատճառում է ձեզ, բայց արե՛ք այնպես, որ ինքը առաջինն զգա այդ։ Ի վերջո, նորոգել տվե՛ք ապակին, բայց առանց նրան հայտնելու։ Եթե դարձյալ կոտրի, փոխեցեք ձե՛ր մեթոդը. խոսեցե՛ք նրա հետ խիստ, բայց առանց բարկության,

ասելով՝ «Լուսամուտներն իմն են. ապակիները իմ չանքերով են գցվել. պետք է հսկեմ, որ չկոտրվեն»: Սպա դուք երեխային կփակեք մութ, առանց լուսամուտի մի սենյակում: Այս բոլորովին նոր վարվելակերպը նրան անշուշտ կզայրացնի. նա կսկսի աղաղակել, աղմկել. ոչ ոք ուշադրություն չի դարձնի նրան: Շուտով նա կհոգնի ու տոնը կփոխի. կսկսի գանգատվել, ողբալ. մի սպասավոր կներկայանա նրան, և ահա ըմբոստացողը կխնդրի փրկել իրեն այդ խավար սենյակից: Սպասավորը առանց պատճառաբանության կհրաժարվի ու կասի. «Ես էլ ապակիներ ունեմ պահպանելու» և կհեռանա: Վերջապես, մի քանի ժամ այնտեղ մնալուց հետո, որի ընթացքում նա կձանձրանա, իսկ դեպքը լավ կտպավորվի հիշողության մեջ, մեկը նրան խորհուրդ կտա, որ ձեզ հաշտություն առաջարկի, որպեսզի դուք նրան ազատ արձակեք, իսկ ինքը խոստանա այլևս ապակիներ չջարդել: Նրա ուզածն էլ հենց այդ է: Նա կխնդրի, որ իր մոտ գնաք, և դուք կգնաք: Նա կանի իր առաջարկը. դուք իսկույն կբնդունեք ու կասեք նրան. «Լավ եք մտածել, այս համաձայնությունը երկուսիս համար էլ ձեռնտու է, ի՞նչպես այդ մասին ավելի շուտ չմտածեցիք»: Եվ ապա, առանց պահանջելու, որ հաստատի իր խոստումը, դուք իսկույն ուրախությամբ կգրկեք նրան ու կտանեք իր սենյակը, ընդունելով այդ համաձայնությունը որպես մի սրբազան ու անխախտելի դաշինք, ասես երդումով հաստատված: Ի՞նչ եք կարծում, երեխան ի՞նչ կմտածի այդ գործի մասին, համաձայնության արժանահավատության և օգտակարության մասին: Ես սխալված կլինեմ, եթե աշխարհում գտնվի մի՝ դեռևս չփչացած երեխա, որ այսպիսի վարմունքից հետո կրկին հանդգնի դիտավորյալ ապակի կոտրել: Հետևեցե՛ք՝ այս ամենը իրար կապող շղթայի օղակներին: Փոքրիկ չարաճճին իր բակլան սերմանելու համար փոսիկ փորելով, բոլորովին էլ չէր մտածում, թե իր համար բանտի խցիկ էր պատրաստում, ուր շուտով պիտի ընկներ՝ շնորհիվ իր գիտության[1]:

---

[1] Եթե պարտավորությունը կատարելու զգացումը երեխայի մտքի մեջ համրապնդվեր նրա օգտակարության գիտակցումով, շուտով ծնունդ առնող

Ահավասիկ, մենք արդեն բարոյական հարաբերությունների աշխարհումն ենք, և ահա ասց է մոլության դուռը։ Համաձայնությունների ու հանձնառությունների հետ միասին առաջ են գալիս կեղծիքն ու խաբեությունը. հենց որ սկսում են անել այն, ինչ չպետք է անել, սկսում են արդեն թաքցնել այն, ինչ չպետք է աննին։ Մի ավելի մեծ շահ կարող է դրժել տալ այն խոստումը, որ տվել էին մի որևէ օգուտ ապահովելու համար։ Խնդիրը միայն անպատիժ դրժելու մեջ է. միջոցը սովորական է. կա՛մ թաքցնում են, կա՛մ ստում։ Ջկարողանալով մոլությունը կանխել, ահա մենք ստիպված ենք լինում այն պատժել։

Սրանք են՝ մարդկային կյանքի թշվառությունները, որոնք ակսվում են նրա մոլորությունների հետ։

Ես արդեն բավական հասկանալի ձևով բացատրեցի, որ պատիժը որպես պատիժ չպետք է տրվի երեխաներին, այլ այն պետք է լինի նրանց վատ ընթացքի բնական հետևանքը։ Ուրեմն, կարիք չկա ճառ ասել ստախոսության դեմ. չլինի թե սուտ խոսելու համար պատժեք նրանց, այլ արե՛ք այնպես, որ ստելու բոլոր վատ հետևանքները, ինչպես օրինակ՝ նրանց խոսքին չհավատալը, երբ նույնիսկ ճշմարտությունն են ասում, հակառակ իրենց բողոքին՝ նրանց ամբաստանելը մի վատ բանի համար, որը չեն արել, կուտակվեն նրանց գլխ-

---

ներքին զգացմունքը նրան կպարտադրեր այդ պարտավորությունը կատարել որպես խղճի օրենք, որպես մի բնածին սկզբունք, որը զարգանալու համար սոսկ կարիք ունի այն ծանոթություններին, որոնք ձգտում է ստանալ։ Այս առաջին հատկանիշը մարդկային ձեռքի գործը չէ, այլ դրոշմված է մեր սրտերի մեջ բոլոր արդարությունների հեղինակի կողմից։ Վերցրե՛ք համաձայնությունների այս պրիմիտիվ օրենքն ու նրանից բխող պարտավորությունները, և մարդկային հասարակության մեջ ամեն ինչ ոնայն ու խարուսիկ կդառնա։ Ով միայն շահից դրդված է կատարում իր վերցրած պարտավորությունները, հազիվ թե իրեն ավելի շատ պարտավորված ղրա, քան նա, ով ոչ մի խոստում չի տվել։ Կամ գոնե իրավունք կունենա խոստմնաղանց լինելու, այնպես, ինչպես խաղամոլը հարմար բոպեն կօգտագործի իր հակառակորդին ավելի մեծ առավելությամբ տանելու համար։ Այս սկզբունքը չափազանց կարևոր է և արժանի խոր ուսումնասիրության, որովհետև հենց այստեղ է, որ մարդն սկսում է հակասել իրեն։

խին, եթե սուտ են խոսել։ Բայց բացատրենք, թե ինչ բան է ստախոսությունը երեխաների համար։

Գոյություն ունի երկու տեսակ ստախոսություն. իրական սուտ, որը անցյալին՝ փաստին է վերաբերում, և իրավական սուտ, որը ապագային՝ մտադրությանն է վերաբերում։ Առաչինն այն է, որ մենք հերքում ենք մեր արածը, կամ պնդում ենք, թե արել ենք այն, ինչ չենք արել, և, ընդհանրապես, գիտակցորեն խոսում ենք իրական փաստերին հակառակ։ Երկրորդը՝ իրավական սուտը, այն է, երբ խոստանում ենք մի բան, որը մտադրություն չունենք կատարելու, և, ընդհանրապես, երբ արտահայտում ենք մի դիտավորություն, որ իրականում չունենք։ Այս երկու ստերը երբեմն կարող են միանալ, մեկ սուտ դառնալ[1], բայց ես այստեղ դրանք նկատի ունեմ տարբերությունների։

Ով ուրիշների օգնության կարիքն է զգում և միշտ նրանց բարյացակամության է վայելում, ոչ մի շահ չունի նրանց խաբելու. ընդհակառակն, նա շահագրգռված է, որ նրանք իրազեկությունները տեսնեն այնպես, ինչպես կան, որպեսզի չխաբվեն ի վնաս իրեն։ Պարզ է, ուրեմն, որ իրական սուտը երեխաների համար բնական չէ. բայց հնազանդության օրենքն է, որ ստելու կարիք է առաջացնում. քանի որ հնազանդությունը դժնդակ բան է, ապա թաքուն խուսափում են նրանից, որքան հնարավոր է պատժից կամ հանդիմանությունից զերծ մնալու անմիջական շահը գերադասում են ճշմարտությունն ասելու հեռավոր շահից։ Բնական ու ազատ դաստիարակության դեպքում երեխան ինչո՞ւ պետք է ստի, ի՞նչ ունի ձեզնից թաքցնելու։ Դուք նրան չեք հանդիմանում, չեք պատժում, նրանից ոչինչ չեք պահանջում։ Ինչո՞ւ նա իր յուրաքանչյուր արարքը ձեզ չհայտնի նույնքան անկեղծորեն, որքան իր փոքր ընկերոջը։ Թե՛ մեկ և թե՛ մյուս կողմից այս խոստովանությունը նրան ոչ մի վտանգի չի ենթարկում։

Իրավական սուտը է՛լ ավելի անբնական է, որովհետև կատարելու կամ չկատարելու խոստումները պայմանական

[1] *Այնպես, ինչպես վատ արարքի մեջ մեղադրվողը պաշտպանվում է, ասելով, թե ինքը պարկեշտ մարդ է։ Այդպիսով ինքը ստում է թե՛ իրապես և թե՛ իրավապես։*

գործողություններ են, որոնք դուրս են բնության շրջանակներից և խափանում են ազատությունը։ Ավելին. երեխաների վերցրած բոլոր պարտավորություններն ըստինքյան անվավեր են, որովհետև նրանց սահմանափակ հայացքը ներկայից այն կողմ չի կարող տարածվել. հետևապես, խոստումներ տալու ժամանակ նրանք չեն հասկանում, թե ինչ են անում։ Երեխան հավիվ թե կարողանա ասել, երբ պարտավորվում է սուտ չխոսել, որովհետև, մտածելով սոսկ անմիջական դժվարությունից դուրս գալու մասին, այն ամենը, ինչ անմիջական հետևանք չունի, անարժեք է նրա համար. ապագայի համար խոստում տալով, նա ոչինչ չի խոստանում, ու նրա նիրհող երևակայությունը չի կարող ընդգրկել միասին երկու բոլորվին տարբեր ժամանակներ։ Թե մտրակից ազատվելու կամ քաղցրավենիք ստանալու համար նրան հարկ լինի խոստանալ, թե հաջորդ օրը իրեն պատուհանից ցած կգցի, իսկույն կանի։ Ահա թե ինչու օրենքները ոչ մի ուշադրություն չեն դարձնում երեխաների խոստումներին։ Հայրերն ու ուսուցիչները ավելի խիստ և պահանջկոտ պետք է լինեն երեխաների այն պարտավորությունների նկատմամբ, որ նրանք պետք է կատարեն, նույնիսկ առանց խոստացած լինելու։

Երեխան խոստանում է առանց իմանալու, թե ինչ է անում և, ուրեմն, խոստում տալով չի էլ կարող ստել։ Միևնույնը չէ, երբ նա իր խոստումը չի կատարում, որը դեռևս մի տեսակ հետադարձ սուտ է, որովհետև նա շատ լավ է հիշում, որ տվել է այդ խոստումը, բայց չի հասկանում այն կատարելու կարևորությունը։ Անկարող լինելով ապագան գուշակել, նա չի կարող կանխատեսել իրերի հետևանքները. երբ խախտում է իր պարտավորությունները, նա իր տարիքի տրամաբանությանը հակառակ չի վարվում։

Սրանից հետևում է, որ մանուկների ստախոսությունը ուսուցիչների գործն է. նրանց ճշտախոսություն սովորեցնել փորձելով, ուրիշ բան չեն անում, բայց եթե ստախոսություն սովորեցնել։ Երեխաների կյանքը կարգավորելու, նրանց դաստիարակելու և ուսուցանելու շտապողականության մեջ երբեք բավականաչափ միջոցներ չեն գտնում իրենց նպատակին հասնելու համար։ Ցանկանում են երեխաների հոգու վրա

նոր ալդեցություններ ձեռք բերել անհիմն սկզբունքներով, անտրամաբանական պատվիրաններով, և նախամեծար են համարում, որ երեխաները դասերը սովորեն ու ստեն, քան թե թերուս ու ճշմարտախոս լինեն։

Մենք, որ մեր աշակերտուհիներին միայն գործնական դասեր ենք տալիս ու նախընտրում ենք, որ նրանք գիտուն լինելուց ավելի բարի լինեն, նրանցից երբեք ճշմարտություն չենք պահանջում, վախենալով, որ չլինի թե ճշմարտությունը թաքցնեն, և չենք պահանջում այնպիսի խոստումներ, որ նրանք գուցե չուզենային կատարել։ Եթե իմ բացակայության ժամանակ մի վատ բան է կատարվել, և ես չգիտեմ, թե ով է մեղավոր, ապա կղդուշանամ էմիլին մեղադրելուց, կամ նրան չեմ հարցնի. «Դո՞ւք ևս արել»[1], քանի որ այդպիսով նրան ուրիշ բան չեմ սովորեցնի, եթե ոչ՝ ուրանալ։ Այն դեպքում, երբ նրա դժվարահաճ բնավորությունն ինձ ստիպեր որևէ համաձայնության եզր գտնել իր հետ, ես այնպիսի միջոցների կդիմեի, որ առաջարկ անողը միշտ նա լիներ, իսկ ես՝ բնավ երբեք, որ խոստումներ տալիս՝ նա միշտ էլ անմիջական ու բացարձակ շահ ունենա կատարելու իր պարտավորությունները, և եթե խոստմնազանց լինի, այդ դրժումից այնպես տուժի, որ հասկանա, թե դրանք իրերի բնական ընթացքի հետևանք են և ոչ թե դաստիարակի վրեժխնդրության։ Սակայն, առանց ստիպված լինելու այդպիսի դաժան հնարքների դիմելու, ես համարյա վստահ եմ, որ էմիլը շատ ուշ կսովորի, թե ինչ է նշանակում ստեն խոսել, և երբ հասկանա այդ, շատ կզարմանա ու չի կարող ըմբռնել, թե ում է օգտակար ստելը։ Հասկանալի է, որ ինչքան ես նրա բարեկեցությունը ուրիշների կամքից անկախ դարձնեմ, այնքան կզրկեմ նրան ստախոսությունից օգտվելու հնարավորությունից։

Եթե չենք շտապում սովորեցնել, չենք էլ շտապում պա-

---

[1] Մեծ անխոհեմություն է այդպիսի հարց տալը, մանավանդ, երբ երեխան հանցավոր է, որովհետև, եթե նա կասկածի, թե դուք գիտեք իր մեղավորության մասին, կհասկանա ձեր լարած թակարդը ու կլարվի ձեր դեմ։ Իսկ եթե այդպես չի կարծում, ինքն իրեն կասի. «Ինչո՞ւ հայտնեմ գաղտնիքս։ Այդպես է առաջանում ստելու առաջին փորձը, որը ձեր անզգույշ քայլի հետևանքն է։

հանջել և համբերությամբ կսպասենք հարմար առիթի՝ պահանջելու համար։ Այսպիսով, հրեխան կազմավորվում է առանց փչանալու վտանգի։ Իսկ եթե մի տխմար ուսուցիչ, չիմանալով վարվելու ձևը, ամեն րոպե, անխտիր, այս կամ այն խոստումն է կորզում երեխայից, վերջինս այդ խոստումներով ծանրաբեռնված ու ձանձրացած, անուշադիր է թողնում, մոռանում ու արհամարհում է դրանք և, վերջապես, համբոում է որպես դատարկ ձևականություն, խաղում է իր խոսումների հետ, երբեմն կատարելով, երբեմն խախտելով։ Ուզո՞ւմ եք, որ նա իր խոստումը կատարի, խոհեմաբար պահանջեցեք այն։

Մտի մասին իմ տված մանրամասնությունները շատ կողմերով կարող են վերաբերել նաև մի շարք այլ պարտականությունների, որոնք դրվում են երեխաների վրա, դարձնելով դրանք ոչ միայն ատելի, այլև անգործադրելի։ *Հանդես գալով որպես առաքինության քարոզիչներ, երեխաներին ներշնչում ենք բոլոր տեսակի մոլությունների սերը. աշխատելով նրանց հեռու պահել դրանցից, հակառակ արդյունք ենք ստանում։ Երեխաներին բարեպաշտ դարձնելու ցանկությամբ նրանց եկեղեցի ենք տանում այնքան հաճախ, որ սկսում են ձանձրանալ. ստիպելով անվերջ աղոթքներ մրմնջալ, նրանց դրդում ենք տենչալու այն երջանիկ րոպեն, երբ ազատ կլինեն աստծուն աղոթելուց։ Իրր թե նրանց մեջ գթության զգացումն արթնացնելու համար, ողորմություն անել ենք սովորեցնում, կարծես արհամարհելով այն ինքներս անել։ Այնինչ, ոչ թե երեխան պետք է ողորմություն տա, այլ ուսուցիչը. ինչքան էլ կապված լինի իր աշակերտին, նա այդ պատիվը իրեն պետք է վերապահի, նրան հասկացնելով, որ դեռևս չունի նման պատվի արժանանալու տարիքը։ Ողորմությունը այնպիսի մարդու գործ է, որը գիտե տվածի արժեքը և այն, թե ինչի կարիք ունի իր նմանը։ Երեխան, որ այդ բոլորից ոչինչ չի հասկանում, զուրկ է տալու արժանիքից։ Նա տալիս է առանց գթության, առանց բարեգործության. ողորմություն տալիս՝ նա համարյա ամաչում է, երբ իր և ձեր օրինակի վրա հիմնվելով, կարծում է, թե միայն երեխաներն են ողորմություն տալիս, իսկ մեծահասակները՝ ոչ։*

Պետք է նկատի ունենալ, որ երեխաները մեր թելադրանքով որպես ողորմություն տալիս են այնպիսի բաներ, որոնց արժեքը անգիտանում են, օրինակ՝ դրպանում ունեցած մետաղյա դրամները, որոնք միայն այդ նպատակին են ծառայում։ Երեխան կնախընտրի հարյուր ոսկի տալ, քան մի կարկանդակ։ Ապա փորձեցե՛ք շռայլորեն դրամ բաժանող այդ փոքրիկին հանձնարարել որպես ողորմություն տալ իրեն համար արժեքավոր իրերից, ինչպիսիք են՝ խաղալիքները, քաղցրավենիքը, իր նախաճաշը և իսկույն կտեսնեք, թե որքան է ձեզ հաջողվել նրանց առատաձեռն դարձնել։

Սրա համար կա ևս մի միջոց. այն է՝ երեխային անմիջապես վերադարձնել այն իրերը, որ նա տվել է. այդպիսով, նա կսովորի տալ այն ամենը, ինչ համոզված է, թե ետ կստանա։ Ես երեխաների մեջ միայն հետևյալ երկու առատաձեռնությունն եմ տեսել. տալ այն, որ իրենց համար պիտանի չէ, կամ այն, որ վստահ են, թե ետ կստանան։ Այնպես արե՛ք, ասում է Լոքը, որ նրանք փորձով համոզվեն, թե ամենից առատաձեռնը միաժամանակ նաև ամենահարուստն է։ Սակայն դրանով մանկան առատաձեռն ենք դարձնում երևութապես, իսկ իրականում՝ ժլատ։ Լոքը ավելացնում է, թե երեխաներն այդպիսով սովորում են առատաձեռն լինել։ Ճիշտ է, բայց դա առատաձեռնությունն է այն վաշխառուի, որը մի ձու է տալիս, փոխարենը մի եզ առնելու համար։ Բայց երբ խնդիրը վերաբերում է անվերադարձ տալուն, մնա՛ս բարով, առատաձեռնություն. հենց որ դադարեցնենք վերադարձնել նրանց այն, ինչ տալիս են, նրանք էլ կդադարեն տալուց։ Պետք է կարևորություն տալ սրտի և ոչ թե ձեռքի առատաձեռնությանը։ Երեխային սովորեցրած մյուս բոլոր առաքինություններն էլ նման են դրան։ Եվ այս անխախտ առաքինությունները քարոզելո՞ւ համար է, որ նրանց կյանքը մաշում ենք ձանձրույթի մեջ։ Ինչպիսի՞ իմաստուն դաստիարակություն։

Ուսուցիչնե՛ր, թողե՛ք սեթևեթանքը, եղե՛ք առաքինի ոգ քարի. թող ձեր օրինակը դրոշմվի ձեր աշակերտների հիշողության մեջ, մինչև որ ներթափանցի նրանց սիրտը։ Փոխանակ շտապելու իմ աշակերտից գթության գործ պահանջելու, նախընտրում եմ ինքս այդ անել նրա ներկայությամբ և

նույնիսկ նրան թույլ չտալ հետևելու իմ օրինակին, որպես նրա տարիքին անհամապատասխան մի պատիվ, քանի որ նրեխաները չպետք է վարժվեն չափահասների պարտականությունները համարել միայն իրենցը։ Նրբ երեխան, տեսնելով, որ ես օգնում եմ աղքատներին, այդ մասին ինձ հարցում ա՞ս, և եթե ես գտնեմ, թե ժամանակը հարմար է պատասխանելու[1], կասեմ. «Բարեկա՛մս, բանն այսպես է. երբ աղքատները համաձայնեցին, որ հարուստներ լինեն, հարուստները խոստացան կերակրել բոլոր նրանց, ովքեր անկարող կլինեն ապրել իրենց սեփականությամբ կամ իրենց աշխատանքով»։ «Ուրեմն, դո՞ք ևս խոստացել եք», կշարունակի հարցնել նա։ «Անկասկած, որովհետև ես իմ ձեռքով անցած ինչքի տերն եմ միայն այն դեպքում, եթե դա պայմանավորված է իմ սեփականության իրավունքով»։

Այս զրույցը լսելուց հետո (իսկ մենք տեսանք վերը, թե ինչպես կարելի է երեխային հասկանալի դարձնել այդ) մի ուրիշը (ոչ թե էմիլը) կփորձեր հետևել իմ օրինակին ու վարվել հարուստ մարդու նման։ Այդպիսի դեպքում ես կաշխատեմ, որ այդ լինի առանց ցուցամոլության. ես կնախընտրեի, որ երեխան խլեր ինձնից իմ իրավունքը և ինձնից թաքուն ողորմություն տար։ Այդ կլիներ իր տարիքին հատուկ միամիտ կեղծիքը, որը ես կներեի։

Գիտեմ, որ այս բոլոր ընդօրինակած առաքինությունները կապկած առաքինություններ են, և որ ամեն մի բարի գործ սոսկ այն ժամանակ է բարոյապես բարի, երբ կատարվում է որպես այդպիսին և ոչ թե որովհետև ուրիշներն են անում։ Բայց այնպիսի տարիքում, երբ սիրտը դեռևս ոչինչ չի զգում, պետք է երեխաներին թույլ տալ ընդօրինակելու այն գործերը, որ ցանկալի է նրանց համար սովորություն դաթձնել, ապասելով, որ նրանք այդ նույնը անեն գիտակցաբար ու դեպի բարին ունեցած սիրով։ Մարդն ընդօրինակող է, այդպես են

---

[1] Հասկանալի է, որ ես այդ հարցերը լուծում եմ ոչ թե նրա կամքով, այլ երբ ես եմ ցանկանում։ Հակառակ դեպքում ես ինձ դնեմ ամենից վտանգավոր կախման մեջ, որ մի դաստիարակ կարող է երբևիցե ունենալ իր աշակերտից։

նույնիսկ կենդանիները։ Ընդօրինակելու հակումը բնության խելացի կարգն է, սակայն հասարակության մեջ այդ հակումն այլասերվում է, փոխվում մոլության։ Կապիկն ընդօրինակում է մարդուն, որից վախենում է, բայց չի ընդօրինակում անասուններին, որոնց արհամարհում է. նա ավելի բարձր է գնահատում այն, ինչ իրենից կատարյալ էակն է անում։ Մեզ մոտ, ընդհակառակն, ամեն կարգի խեղկատակներ գեղեցիկը ընդօրինակում են այն փչացնելու և ծիծաղելի դարձնելու համար։ Գիտակցելով իրենց ապաշնորհությունը, նրանք ուզում են նույն աստիճանին իջեցնել իրենցից լավագույնին, կամ եթե փորձում են ընդօրինակել այն, ինչով հիանում են, իրերի բնության մեջ նկատում է նրանց կեղծ ճաշակը. նրանք ավելի շուտ ցանկանում են ուրիշի աչքին երևալ կամ իրենց տաղանդը ծափահարել տալ, քան լինել ավելի լավ կամ ավելի իմաստուն։ Միմյանց ընդօրինակելու հիմնական պատճառը մեզ մոտ առաջանում է մեր էության սահմաններից դուրս գալու ցանկությունից։ Եթե իմ ձեռնարկը հաջողվի, էմիլը, ապահովաբար, զերծ կլինի այդ ցանկությունից։ Ուրեմն, մենք պետք է հրաժարվենք այն կործեցյալ բարիքից, որ նա կարող է բերել մեզ։

Խորամուխ եղե՛ք ձեր դաստիարակության բոլոր կանոններին և կտեսնեք դրանց բովանդակ անմտությունը, մանավանդ առաքինությունների ու բարքերի տեսակետից։ Այն միակ բարոյական դասը, որ հարմար է երեխային ու ամենակարևորը բոլոր տարիքների համար, դա ուրիշին երբեք չարիք չպատճառելն է։ Նույնիսկ բարություն անելու պատվիրանը, եթե չի ստորադրվում վերոհիշյալին, վտանգավոր, կեղծ ու հակասական է։ Ո՞վ չի լավություն անում. բոլորը՝ մյուսների նման նաև չար մարդը, բայց սա մեկին երջանկացնում է հարյուր թշվառի հաշվին. ահա դրանից են առաջանում մեր բոլոր աղետները։ Ամենավսեմ առաքինությունները բացասական են. նրանք միաժամանակ ամենադժվարինն են, որովհետև զուրկ են ցուցամոլությունից, և նույնիսկ ավելի, քան մարդկային սրտի համար այնքան քաղցր այն հաճույքը՝ երբ մենք մի ուրիշին ճանապարհ ենք դնում մեզնից բավարարված։ Օ՜, ինչքան բարություն է անում իր նմաննե-

րին այն մարդը, եթե նա այդպիսին, ում նրանց երբեք վատություն չի անում, Հոգու ինչպիսի՞ անվեհերություն, բնավորության ինչպիսի՞ ուժ պետք է ունենալ դրա համար: Ոչ թե այս սկզբունքի վրա վիճելով, այլ գործնականում այն կիրառելով է, որ կզգանք, թե որքան մեծ դժվարություններով կարելի է այդպիսի հաջողության հասնել [1]:

Ահա մի քանի հպանցիկ մտքեր այն նախազգուշությունների առթիվ, որոնք, իմ կարծիքով, կարելի է կիրառել երեխաներին խրատելիս, այն դեպքում, երբ հնարավոր չէ խուսափել դրանից, որպեսզի երեխաները չվնասեն ո՛չ իրենք իրենց, ո՛չ ուրիշներին և, մանավանդ, չվարժվեն այնպիսի վատ սովորությունների, որոնք հազիվ հնարավոր լինի ուղղել հետագայում. բայց կարող ենք վստահ լինել, որ այդպիսի անհրաժեշտության կարիքը հազվադեպ կլինի պատշաճ դաստիարակություն ստացած երեխաների համար, որովհետև անհնար է, որ նրանք լինեն անհնազանդ, չար, ստախոս, ընչաքաղց, եթե նրանց հոգու մեջ չենք սերմանել այն արատները, որոնք նրանց այդպիսիք են դարձնում: Ուրեմն, ինչ որ ասացի այդ մասին, ավելի շուտ բացատրությունների կարգին է վերաբերում, քան ընդհանուր կանոնի: բայց այս բացատրություններն ավելի հաճախակի են դառնում, քանի երեխաներն ավելի շատ առիթներ են ունենում իրենց վիճակից

---

[1] *Ուրիշին ոչ մի դեպքում չվնասելու պատվիրանին հետևում է մարդկային հասարակության հետ հնարավորին չափ քիչ հաղորդակից լինելու պատվիրանը, որովհետև հասարակական կարգի մեջ մեկի լավությունը անպայմանորեն չարիքի աղբյուր է դառնում մյուսի համար: Այս հարաբերությունը ծնվում է իրերի էությունից, և ոչ մի բան չի կարող փոխել այն: Այս սկզբունքից ելնելով, պետք է փնտրել, թե ով է լավագույնը՝ հասարակությա՞ն մարդը, թե մեկուսացած մարդը: Մի նշանավոր հեղինակ ասում է, թե միայն չարն է լինում մեկուսացած. իսկ ես ասում եմ, որ միայն բարին է այդպիսին: Եթե այս ենթադրությունը սակավ վճռական է, համենայն դեպս, նախորդից ավելի ճշմարտացի է ու ավելի տրամաբանական: Եթե չարը մնար միայնակ, ի՞նչ չարություն կարող էր անել: Հասարակության մեջ է, որ նա իր դավերն է սարքում՝ ուրիշներին վնասելու համար: Եթե այս փաստարկումն ուղղեն բարի մարդու դեմ, ես դրան կպատասխանեմ այն հատվածով, որին վերաբերում է այս ծանոթությունը:*

դուրս դալու և մարդկանց արատները յուրացնելու։ Հետևապես, մարդկանց մեջ դաստիարակվող երեխաներին անհրաժեշտ է ավելի վաղ ուսուցում, քան նրանց, որոնք առանձին են կրթվում։ Այս մեկուսացած կրթությունը, ուրեմն, նախընտրելի է, քանի որ երեխային ժամանակ է տալիս հասունանալու։

Կան և այլ տեսակի, ճիշտ հակառակ բացառություններ նրանց համար, որոնց բացառիկ խառնվածքն օգնում է իրենց տարիքից վեր բարձրանալու։ Այնպես, ինչպես կան մարդիկ, որոնք մանկությունից դուրս չեն գալիս, այնպես էլ կան մարդիկ, որոնք, այսպես ասած, շրջանցում են մանկությունը, համարյա մարդ են ծննդյան օրից։ Վատն այն է, որ այս վերջին բացառությունը շատ սակավադեպ է ու շատ դժվար ճանաչելի, և յուրաքանչյուր մայր, կարծելով, թե մի երեխա կարող է հրաշք լինել, չի կասկածում, որ հենց իր զավակն է այդպիսին։ Դեռ ավելին. նրանք սովորական նշաններն ընդունում են որպես արտակարգ երևույթներ՝ աշխուժությունը, եռանդը, անխոհեմությունը, խայթող միամտությունը, տարիքի բոլոր այն առանձնահատուկ նշանները, որոնք առավել ևս հաստատում են, որ երեխան միայն երեխա է։ Մի՞թե զարմանալի է, որ այն անձնավորությունը, ում շատ են խոսեցնում, ում թույլ են տալիս ամեն ինչ ասել, որը ոչ մի հայացքից, ոչ մի պատշաճությունից չի քաշվում, պատահաբար մի սրախոսություն աներ։ Զարմանալին այն կլիներ, որ այդպիսին երբեք չաներ, ինչպես զարմանալի կլիներ, եթե մի աստղագետ հազարավոր աստղերի մեջ մի ճշմարտություն չասեր։ «Այնքան պիտի ստեն,— ասում էր Հանրի IV-ը,— որ ի վերջո պիտի ճշմարիտն ասեն»։ Ով ուզում է մի քանի լավ բան ասել, պետք է շատ հիմարություններ դուրս տա։ Աստված պահի փորձանքից այն մոդային մարդկանց, որոնք գնահատության արժանի ոչ մի ուրիշ արժանիք չունեն։

Կարող է երեխայի ուղեղը թափանցել ամենափայլուն մտքերը, կամ նրա շուրթերից ամենաընտիր խոսքեր լսվեն, այնպես, ինչպես ամենաթանկագին ադամանդները կարող են նրա ձեռքն ընկնել, սակայն այդ դեռ չի նշանակում, որ մտքերը կամ ադամանդները նրան են պատկանում։ Այդ տարիքի

համար ոչ մի տեսակի իրական սեփականություն գոյություն չունի։ Երեխայի ասածները իրեն համար այն նշանակությունը չունեն, ինչ որ ունեն մեզ համար. նա նրանց մեջ միևնույն նշանակությունը չի դնում։ Այդ մտքերը, եթե երեխան իրոք ունի այդպիսիք, նրա ուղեղում ո՛չ հետևողականություն ունեն, ո՛չ կապ. նրա մտածածի մեջ ոչ մի հաստատուն, ոչ մի վստահելի բան չկա։ Ուսումնասիրեցե՛ք ձեր կարծեցյալ հրաշքը։ Երբեմն նրա մեջ կգտնեք բացառիկ եռանդ, մտքի բացառիկ պայծառատեսություն։ Ավելի հաճախ այդ միևնույն միտքը ձեզ կթվա քույլ ու կակուղ, կարծես մի քանձր մշուշով պատած։ Նա մերթ ձեզնից առաջ է անցնում, մերթ էլ մնում անշարժ։ Առաջին րոպեին կասեք. «Սա մի հանճար է», իսկ հետևյալ րոպեին՝ «Մի տխմար է»։ Դուք միշտ էլ սխալվեք. նա սոսկ մի երեխա է։ Նա մի արծվիկ է, որ մի րոպե ճախրում է օդում ու հետո իսկույն իր բույնն է ընկնում։

Դաստիարակեցե՛ք, ուրեմն, երեխային իր տարիքի համեմատ, հակառակ արտաքին երևույթների, և զգուշացե՛ք, որ չսպառնք նրա ուժերը՝ չափից ավելի մարզելով։ Եթե այդ մասին ուղեղը սկսում է տաքանալ, եթե տեսնում եք, որ նա սկսում է եռալ, սկզբում թողե՛ք, որ նա անարգել բորբոքվի, բայց առանց գրգռվելու, որպեսզի զայրույթը չհորդի. և երբ առաջին հուզումներն անցնեն, ջանացե՛ք պահել, խտացնել մնացածը, մինչև որ, տարիների ընթացքում, դրանք փոխակերպվեն կենսատու ջերմության և իսկական ուժի։ Այլապես, դուք իզուր կկորցնեք ձեր ժամանակը, հոգատարությունն ու խնամքը և կքանդեք ձեր իսկ սեփական գործը և անխոհեմաբար այս դյուրավառ գոլորշիներից արբենալով, կստանաք միայն անպետք տականք։

Հախուռն երեխաներից գեհենիկ մարդիկ են դուրս գալիս. սրանից ավելի ընդհանուր և ավելի ստույգ դիտողություն ես չգիտեմ։ Ոչինչ այնքան դժվար չէ, ինչքան մանկանց մեջ զանազանելը իրական բթամտությունը այն երևութական ու խաբուսիկ բթամտությունից, որ ուժեղ հոգիների հայտնությունն է։ Սկզբում տարօրինակ կարող է թվալ, որ երկու հակառակ ծայրեր այնքան նմանօրինակ նշաններ ունեն, բայց և այնպես, ուրիշ կերպ չի լինի, քանի որ այնպիսի մի տարիքում,

երբ մարդ դեռևս ճշգրիտ ու ստույգ գաղափարներ չունի, հնարավոր ունեցողի և չունեցողի միջև եղած ամբողջ տարբերությունը հենց այն է, որ վերջինս միայն սխալ գաղափարներ է ընդունում, իսկ առաջինը, միայն այդպիսիները գտնելով, դրանցից ոչ մեկը չի ընդունում: Սա էլ, ուրեմն, նմանվում է իրական բժամտին, այն տարբերությամբ, որ մինչդեռ առաջինը ոչնչի պիտանի չէ, մյուսի համար ոչ մի պիտանի բան չկա: Այս երկուսին միմյանցից տարբերող միակ նշանը կախում ունի պատահականությունից, որը վերջինին կարող է մի որևէ համապատասխան միտք թելադրել, մինչդեռ առաջինը ամենուրեք մնում է նույնը: Պատանի Կատոնը մանուկ հասակում հիմար էր համարվում իր ընտանիքում: Նա սակավախոս և կամաչկոտ էր. սա էր միակ տպավորությունը, որ ստացել էին նրանից: Միայն Սուլլայի նախասենյակումն էր, որ իր հորեղբայրը կարողացավ ճանաչել նրան: Եթե չմտներ այդ նախասենյակը, գուցե մինչև գիտակցական տարիքը նրան անբանի տեղ դնեին: Եթե Կեսարը երբեք ապրած չլիներ, գուցե այդ նույն Կատոնին, որ թափանցել էր նրա դաժան հանճարի մեջ և վաղուց նախատեսել նրա բոլոր ծրագրերը, միշտ էլ ցնորամիտ համարեին: Օ՜, ի՜նչ հեշտությամբ են խաբվում նրանք, ովքեր շտապում են մանուկների մասին վաղաժամ կարծիք հայտնել: Նրանք չատ անգամ երեխայից ավելի երեխա են: Իր բարեկամությամբ ինձ պատվող բանական տարեց մի մարդ գիտեմ, որին հարազատներն ու բարեկամները համարում էին սահմանափակ մտքի տեր: Այնինչ, այս հրաշալի գլուխը լուռումունջ հասունանում էր: Եվ հանկարծ նա փիլիսոփա դարձավ, և ես չեմ կասկածում, որ ապագա սերունդները նրան պատվավոր ու նշանակալի տեղ կտան իր դարաշրջանի լավագույն մտածողների ու ամենախորիմաստ մեսաֆիլիկների շարքում:

Հարգեցե՛ք մանկությունը և մի՛ շտապեք նրա մասին դատողություններ ու եզրակացություններ անել՝ թե՛ լավ և թե՛ վատ իմաստով: Թույլ տվե՛ք, որ բացառությունները հայտնվեն, ապացուցվեն, հաստատվեն տարիների ընթացքում՝ նրանց համար հատուկ մեթոդներ կիրառել որոշելուց առաջ: Որքան կարելի է երկար ժամանակ տվեք բնությանը գործե-

յու՝ նախքան նրա փոխարեն ձեր գործի անցնելը, որպեսզի ժամանգարեք նրա գործողությունները։ Պիտի ասեք, որ գիտենալով ժամանակի արժեքը, չեք ուզում կորցնել այն։ Բայց դուք չեք նկատում, որ ավելի շատ ժամանակ է կորչում, երբ այն վատ եք գործադրում, քան այն դեպքում, երբ ոչինչ չեք անում. այդպես էլ վատ դաստիարակված երեխան շատ ավելի է հեռու իմաստությունից, քան նա, ով ամենևին չի դաստիարակված։ Դուք վրդովվում եք այն մտքից, որ երեխան իր առաջին տարիներն անց է կացնում առանց ոչինչ անելու։ Ինչպե՞ս, մի՞թե երջանիկ լինելը ոչինչ է. մի՞թե ոչինչ են ցատկելը, խաղալը, ամբողջ օրը վազվզելը։ Իր ամբողջ կյանքում նա այնքան ղբաղված չի լինի։ Պլատոնը իր «Ռեսպուբլիկա» աշխատության մեջ, որն այնքան խիստ են համարում, երեխաներին դաստիարակում է միայն հանդեսներում, խաղերով, երգերով և վարժություններով, ասես ամեն ինչ լրիվ արել է, երբ նրանց սովորեցրել է լավ վարճանալ։ Սենեկան, խոսելով հռոմեական նախկին պատանեկության մասին, ասում է. «Նա շարունակ կանգնած էր, նրան այնպիսի բաներ չէին ուսուցանում, որ ստիպված լիներ նստած սովորել»։ Այդ պատանեկությունը, առնականանալով, նվազ արժեքավոր չէր։ Ուրեմն, այնքան էլ չպետք է վախենալ այդ կարծեցյալ անգործությունից։ Ի՞նչ կարծիք կունենայիք այն մարդու՝ մասին, որ իր կյանքը լրիվ օգտագործելու համար երբեք քնել չցանկանար։ Դուք կասեիք, անտարակույս, որ այդ մարդն անխելք է։ Նա ոչ թե վայելում է իր ժամանակը, այլ իրեն զրկում է դրանից. քնից խուսափելու համար մահվան ճիրկն է ընկնում։ Մտածեցե՛ք, որ այստեղ էլ միևնույնն է՝ մանկությունը բանականության քունն է։

Սովորելու առերևույթ հեշտությունը երեխաների կորըստյան պատճառն է։ Ձեն նկատում, որ այս հեշտությունը ապացույց է այն բանի, որ նրանք ոչինչ չեն սովորում։ Երեխաների հարթ ու ողորկ ուղեղը հայելու նման արտացոլում է նրանց ներկայացված իրերը, սակայն ոչինչ չի մնում, ոչինչ չի թափանցում նրա մեջ։ Երեխան պահում է խոսքերը, իսկ մտքերն արտացոլվում են։ Նրանց լսողները հասկանում են այդ մտքերը, միայն երեխան է, որ չի հասկանում դրանք։

Թեև հիշողությունն ու դատողությունը էապես երկու, միանգամայն տարբեր հատկություններ են, սակայն մեկն առանց մյուսի չի զարգանում։ Գիտակցական տարիքից առաջ երեխան ընկալում է ոչ թե մտքեր, այլ պատկերներ. և այդ երկուսի միջև տարբերությունն այն է, որ պատկերները միմիայն զգացողական իրերի բացարձակ նկարներն են, մինչդեռ մտքերը՝ իրերի ըմբռնումը, որ որոշվում է հարաբերություններով։ Պատկերը կարող է առանձին գոյություն ունենալ նրան ընկալող մտքի մեջ, բայց յուրաքանչյուր գաղափար ուրիշ գաղափարներ է ենթադրում։ Երբ երևակայում ենք, տեսնում ենք միայն, բայց երբ հղրակացնում ենք, համեմատում ենք։ Մեր զգացողությունները դուռ կրավորական են, մինչդեռ մեր բոլոր ըմբռնումները կամ գաղափարները ծագում են մի գործող սկզբունքից, որը դատում է։ Այդ մենք կապացուցենք հետագա տողերում։

Ես ասում եմ, ուրեմն, որ երեխաները, դատելու ընդունակ չլինելով, օժտված չեն իսկական հիշողությամբ։ Նրանք պահում են ձայները, պատկերները, զգացողությունները, հազվագյուտ դեպքերում՝ գաղափարները և ավելի քիչ՝ գաղափարների կապակցությունները։ Առարկելով ինձ, թե նրանք սովորում են երկրաչափական մի քանի սկզբունքներ, կարծում են, թե հերքում են իմ ասածները, այնինչ, ընդհակառակն, հաստատում են դրանք և ցույց են տալիս, որ երեխաները ոչ միայն զուրկ են սեփական դատողությունից, այլև ուրիշների դատողությունն էլ չեն կարողանում ըմբռնել, որովհետև, եթե հետևեք այս փոքրիկ երկրաչափների մեթոդին, իսկույն կտեսնեք, որ նրանք սոսկ պատկերի ճշգրիտ տպավորությունն ու բացատրության տերմիններն են պահել հիշողության մեջ։ Ամենափոքրիկ նոր դատողության դեպքում նրանք շփոթվում են։ Շրջեցեք գծագրված պատկերը, և նրանք ոչինչ չեն հասկանա։ Նրանց ամբողջ գիտելիքն զգացողական է, ոչինչ չի հասնում նրանց գիտակցությանը։ Նրանց հիշողությունն էլ մյուս հատկություններից ավելի կատարյալ չէ, քանի որ, երբ մեծանան, համարյա միշտ պետք է դարձյալ սովորեն այն բաները, որոնց անուններն էին միայն սովորել մանկության տարիներին։

Այնուամենայնիվ, ես հեռու եմ այն մտքից, թե երեխաները զուրկ են դատելու ընդունակությունից[1]։ Ընդհակառակն, ես տեսնում եմ, որ նրանք շատ ճիշտ են դատում այն ամենի մասին, ինչ հասկանում են և ինչ վերաբերում է նրանց անմիջական ու շոշափելի շահերին։ Բայց մենք սխալ պատկերացում ունենք նրանց գիտելիքների մասին, վերագրելով նրանց այնպիսիք, որ չունեն, և նրանցից պահանջելով դատել այնպիսի բաների մասին, որ նրանք չեն կարող հասկանալ։ Սխալվում ենք նաև այն բանում, որ ցանկանում ենք նրանց ուշադրությունը գրավել իրենց բնավ չհետաքրքրող հարցերի վրա, ինչպիսիք են, օրինակ, նրանց ապագա շահերը, նրանց՝ որպես մարդու երջանկությունը, այն հարգանքը, որ պետք է վայելեն մեծահասակ դառնալուց հետո։ Այս ամենը այնպիսի խոսքեր են, որ նրանց համար գրեթե ամենևին իմաստ չունեն։ Մինչդեռ այս անբախտ խեղճերին տրված հարկադիր ուսմունքը հետապնդում է նրանց մտքերի համար միանգամայն օտար նպատակներ։ Այստեղից կարելի է հետևցրնել, թե երեխան ինչպիսի ուշադրություն պետք է հանդես բերի դրանց նկատմամբ։

---

[1] Գրելու ընթացքում ես շատ անգամ մտածել եմ, որ անկարելի է մի մեծ աշխատության մեջ միևնույն բառերի միշտ միևնույն առումները տալ։ Չկա բավականին հարուստ մի լեզու, որ ունենա այնքան բառեր, դարձվածքներ ու նախադասություններ, ինչքան փոփոխություններ կարող են ունենալ մեր մտքերը։ Բոլոր խոսքերը որոշելու և շարունակ սահմանյալը սահմանումով փոխարինելու մեթոդը լավ է, բայց ոչ գործնական, որովհետև այդ դեպքում ինչպես խուսափել փակ շրջանից։ Սահմանումները կարող էին ճիշտ լինել, եթե դրանք անելու համար բառեր գործածելու կարիք էլ չլիներ։ Չնայած դրան, ես համոզված եմ, որ կարելի է միտքը պարզ արտահայտել, նույնիսկ մեր աղքատ լեզվով։ Դա կլինի ոչ թե շրունակ նույն բառերին նույն առումները տալով, այլ յուրաքանչյուր բառին, ամեն անգամ այն գործածելիս, տալով համապատասխան մտքերով բավականին ճիշտ սահմանված առումը, և այդ բառը պարունակող ամեն մի պարբերություն պետք է ինքը ծառայի որպես դրա որոշիչը։ Երբեմն ես ասում եմ, որ երեխաներն ընդունակ չեն դատելու, և երբեմն էլ նրանց մղում եմ դատելու՝ բավական նուրբ ձևով։ Չեմ կարծում, որ այդպիսով ես հակասում եմ իմ մտքերին, բայց ընդունում եմ, որ հաճախ ինձ հակասում եմ իմ արտահայտությունների մեջ։

Այն մանկավարժները, որոնք շոնդալից կերպով մեր առաջ ցուցադրում են իրենց աշակերտներին տված գիտելիքները, շահագրգռված են ուրիշ լեզու գործածել, սակայն նրանց վերաբերմունքից երևում է, որ հենց ինձ նման են մտածում: Որովհետև, վերջիվերջո ի՞նչ են սովորեցնում նրանց՝ բառեր, նորից բառեր և միշտ բառեր: Այն զանազան գիտություններից, որ պարծենում են, թե սովորեցնում են երեխաներին, նրանք խուսափում են ընտրել այնպիսիք, որոնք իրոք կարող են օգտակար լինել նրանց, որովհետև դրանք իրերի գիտություն են, որի մեջ իրենք հաջողություն չեն ունենա: Նրանք ընտրում են այնպիսի գիտություններ, որոնց սոսկ տերմիններն իմանալով, կարծում են, թե դրանք յուրացրել են, ինչպես օրինակ՝ հերալդիկան (blason), աշխարհագրությունը, ժամանակագրությունը, լեզուները և այլն, գիտություններ, որոնք այնքան հեռու են մարդկանցից և, մանավանդ, երեխաներից, որ հրաշք կհամարեինք, եթե դրանցից մեկնումեկը գոնե մի անգամ կյանքում օգտակար լիներ նրանց:

Կարող է ձեզ զարմանալի թվալ, որ ես լեզուների ուսուցումն էլ կրթության համար անօգուտ առարկաների շարքն եմ դասում. բայց չպետք է մոռանալ, որ ես այստեղ խոսում եմ միայն առաջին տարիների ուսուցման մասին. ինչ էլ որ ասեն, չեմ կարծում, որ մինչև տասներկու կամ տասնհինգ տարեկան հասակը երեխան, բացի հրաշք-երեխաներից, իրոք կարողանա երբևէ երկու լեզու սովորել:

Ես ընդունում եմ, որ եթե լեզվի ուսուցումը միայն բառերի ուսուցում, այսինքն՝ պատկերների կամ դրանք արտահայտող ձայների ուսուցում լիներ, դա հարմար կլիներ երեխաներին, սակայն լեզուները, նշանները փոխելով, փոխում են նաև սրանց արտահայտած մտքերը: Գլուխները ձևավորվում են համաձայն լեզուների, մտքերն ստանում են բարբառների դրոշմը: Դատողությունն է միայն ընդհանուր: Մտածողությունը յուրաքանչյուր լեզվի մեջ իր առանձնահատուկ ձևն ունի: Այս տարբերությունը կարող էր մասամբ աղգային բնորոշ հատկությունների պատճառը կամ հետե-

վանքը լինել։ Իմ այս կարծիքը հաստատվում է այն բանով, որ աշխարհի բոլոր ազգությունների լեզուները հետևում են բարքերի փոփոխություններին ու նրանց նման պահպանվում կամ այլափոխվում են։

Այս տարբեր ձևերից, ըստ գործածության, երեխան միայն մեկն է վերցնում ու պահում մինչև գիտակցական տարիքը։ Որպեսզի կարողանա երկու ձև յուրացնել, պետք է իմանա մտքերը համեմատել, իսկ ի՞նչպես կարող է համեմատել, երբ հազիվ է կարողանում հղանալ դրանք։ Յուրաքանչյուր իր կարող է հազար ու մի ձևով հայտնվել նրան, սակայն յուրաքանչյուր միտք միայն մեկ ձև կարող է ունենալ, հետևապես, երեխան միայն մեկ լեզու կարող է սովորել։ Բայց և այնպես, ասում են, թե երեխան բազմաթիվ լեզուներ է սովորում. չեմ ժխտում։ Ես տեսել եմ այնպիսի հրաշք-երեխաների, որոնք կարծում էին, թե հինգ-վեց լեզվով են խոսում։ Ես լսել եմ, թե ինչպես նրանք գերմաներեն էին խոսում՝ հաջորդաբար լատիներեն, ֆրանսերեն, իտալերեն դարձվածքներով. իրականում նրանք հինգ-վեց լեզվի բառապաշար ունեին, բայց միշտ միայն գերմաներեն էին խոսում։ Մի խոսքով, երեխաներին ինչքան ուզում եք հոմանիշներ տվեք, դուք կփոխեք միայն բառերը, սակայն ոչ երբեք լեզուն. նրանք միայն մեկը կիմանան։

Այս գործում երեխաների անընդունակ լինելը թաքցնելու համար առաջնությունը տալիս են մեռած լեզուների ուսուցմանը, քանի որ այլևս չկան այնպիսի քննողներ, որոնց չկարողանային ժխտել։ Դրանց առօրյա գործածությունը վաղուց վերացած լինելով, ուսուցիչները բավարարվում են գրքերի մեջ եղածն ընդօրինակելով, և դա կոչվում է այդ լեզուներով խոսել։ Թե այդպիսին է ուսուցիչների լատիներենը կամ հունարենը, արդեն կարելի է երևակայել, թե ինչ կլինի աշակերտներինը։ Մի կերպ նրանք անգիր են անում այդ լեզուների նախագիտելիքները, որոնցից բացարձակապես ոչինչ չեն հասկանում, նրանց սովորեցնում են նախ ֆրանսերեն մի ճառ լատիներեն թարգմանել, ապա, երբ մի քիչ ավելի են առաջադիմում, սկսում են արձակ շարահյուսել Կիկերոնից ֆրազներ և հետո՝ Վիրգիլիոսից չափածո քերթվածներ։

Այսպիսով կարծում են, թե լատիներեն են խոսում. ո՞վ կարող է հակաճառել նրանց։

Որ գիտությունն ուզում է լինի, առանց ներկայացված իրերի գաղափարն ըմբռնելու՝ դրանք ներկայացնող նշանները ոչինչ չարժեն։ Այնուամենայնիվ, երեխայի միտքը միշտ էլ սահմանափակում են այդ նշաններով, չկարողանալով նրան օգնել հասկանալու ներկայացված իրերից գոնե մեկնումեկը։ Կարծելով, թե նրան սովորեցնում են երկրագնդի նկարագրությունը, սովորեցնում են միայն քարտեզներ ճանաչել. նրանց սովորեցնում են քաղաքների, երկրների, գետերի անունները, որոնց գոյության մասին նա գաղափար է ստանում միայն այն թղթով, որի վրա նրան ցույց են տալիս դրանք։ Ես հիշում եմ աշխարհագրության մի գիրք, որ այսպես էր սկսվում. «Ի՞նչ է աշխարհը։ Խավաքարտից շինված մի գունդ»։ Ճիշտ այդպես է երեխաների աշխարհագրությունը։ Ես փաստերով կապացուցեմ, որ երկու տարի աշխարհագրություն ու տիեզերագիտություն սովորելուց հետո, ոչ մի տասնամյա երեխա, իր սովորած կանոնների հիման վրա, չի կարող Փարիզից հասնել Սեն-Դրնի *։ Կհաստատեմ նույնպես, որ մի երեխա, հետևելով իր հոր այգու հատակագծին, առանց մոլորվելու չի կարողանա գնալ նրա շրջապատությանդրուվ։ Ահա սրանք են այն գիտնականները, որոնք կարող են կետ առ կետ որոշել, թե որտեղ են գտնվում Պեկինը, Իսպահանը, Մեքսիկան ու աշխարհի բոլոր երկրները։

Ասում են, թե երեխաները պետք է այնպիսի գիտելիքներով զբաղվեն, որի համար միայն աչք է հարկավոր։ Այդ ճիշտ կլիներ, եթե գոյություն ունենար մի այնպիսի գիտություն, որի համար միայն աչքի կարիք լիներ, բայց ես այդպիսին չգիտեմ։

Առավել զավեշտական ձևով են երեխաներին պատմություն սովորեցնում. կարծում են, թե պատմությունը նրանց ուժերից վեր չէ, քանի որ հանդիսանում է իրողությունների մի ժողովածու։ Իսկ ի՞նչ են հասկանում իրողություն բառի տակ։ Մի՞թե կարծում են, թե այն հարաբերությունները,

---

* Փարիզի մոտակա քաղաք։— Ե. Բ.

որոնք որոշում են պատմական իրողությունները, այնքան հեշտ է ըմբռնել, որ դրանց գաղափարները առանց դժվարության կարող են ձևավորվել երեխայի մտքում։ Մի՞թե կարծում են, թե դեպքերի իսկական ճանաչողությունը կարելի է բաժանել նրանց պատճառների և հետևանքների ճանաչողությունից, թե պատմականը այնքան հեռու է բարոյականից, որ կարելի է մեկը ճանաչել առանց մյուսի։ Եթե դուք մարդկանց գործերի մեջ տեսնում եք միայն արտաքին, զուտ ֆիզիկական շարժումները, ապա ի՞նչ եք սովորում պատմությունից։ Բացարձակապես ոչինչ։ Եվ այսպիսի գիտությունը, որ զուրկ է որևէ հետաքրքրությունից, ո՛չ հաճույք է տալիս ձեզ, ո՛չ էլ գիտելիքներ։ Եթե դուք ուզում եք այս գործողությունները գնահատել բարոյական հարաբերությունների տեսակետից, փորձեցե՛ք այդ հարաբերությունները բացատրել ձեր երեխաներին, և այն ժամանակ կտեսնեք, թե արդյո՞ք պատմությունը հարմար է նրանց տարիքին։

Ընթերցո՛ղ, միշտ հիշի՛ր, որ քեզ հետ խոսողը ո՛չ գիտնական է, ո՛չ փիլիսոփա, այլ մի պարզ մարդ, ճշմարտության բարեկամ, առանց կողմնակալության, առանց սիսեմի, մի մենակյաց, որ մարդկանց հետ քիչ ապրելով, ավելի քիչ ուրիշ ունի տոգորվելու նրանց նախապաշարմունքներով, շատ ավելի ժամանակ՝ մտածելու այն ամենի մասին, ինչ իր ուշադրությունն է գրավում նրանց հետ հարաբերվելու դեպքում։ Իմ դատողություններն ավելի շատ իրողությունների վրա են հիմնված, քան սկզբունքների, և կարծում եմ, որ դրանց մասին ավելի լավ գաղափար կկազմեք, եթե ես հաճախ մեջ բերեմ օրինակներ իմ սեփական փորձառությունից։

Ես մի քանի օրով գյուղ էի գնացել հանգստանալու մի ընտանիքի բարի մոր մոտ, որը մեծ հոգ էր տանում իր զավակներին ու նրանց դաստիարակությանը։ Մի առավոտ, երբ ես ներկա էի անդրանիկ որդու դասին, նրա դաստիարակը, որ շատ լավ էր ավանդել նրան հին ժողովուրդների պատմությունը, խոսելով Ալեքսանդրի մասին, կանգ առավ բժիշկ Փիլիպոսի* հայտնի դեպքի վրա։ Այս տեսարանի նկարը կա

* Ալեքսանդրը Պարմենիոնից մի նամակ է ստանում, որից տեղեկա-

և իսկապես արժանի է դրան։ Դաստիարակը, որ արժանիքների տեր մարդ էր, Ալեքսանդրի անվեհերության մասին մի շարք դիտողություններ արեց, որոնց ես հավանություն չէի կարող տալ, բայց ոչինչ չասացի՝ նրա հեղինակությունը աշակերտի աչքում չգցելու համար։ Ճաշի ընթացքում, ըստ Ֆլյանսիական սովորության, թույլ տվեցին, որ փոքրիկը շաղակրատի։ Նրա տարիքին հատուկ բնական աշխուժությունն ու գովասանք լսելու վստահությունը նրան դրդեցին հազար ու մի հիմարություններ դուրս տալ, որոնց մեջ երբեմն առևլս յծում էին մի քանի հաջող խոսքեր, որոնք մոռացնել էին տալիս մնացածը։ Ի վերջո հերթը հասավ բժիշկ Փիլիպոսի պատմությանը։ Նա այդ դեպքը պատմեց շատ ճիշտ և մեծ վարպետությամբ։ Սովորական գովասանական վարձատրությունից հետո, որ մայրը պահանջում էր, իսկ որդին՝ սպասում, սկսեցին դատողություններ անել նրա պատմածի մասին։ Ներկա եղողների մեծամասնությունը դատապարտեց Ալեքսանդրի անվեհերությունը, մի քանիսը, հետևելով դաստիարակին, հիանում էին նրա հաստատակամությամբ ու արիությամբ։ Այդ բոլորից ես եզրակացրի, որ ներկա պտնվողներից ոչ մեկը չէր ըմբռնել այդ դեպքի իսկական գեղեցկությունը։ «Իմ կարծիքով,— ասացի ես նրանց,— եթե Ալեքսանդրի արարքի մեջ մի փոքր արիություն կամ հաստատակամություն կա, համենայն դեպս, դա լոկ անհեթեթության է»։ Իսկույն բոլորն եկան մի ընդհանուր համաձայնության՝ թե նրա արարքը իրոք անհեթեթություն էր։ Ես ուզում էի շարունակել և արդեն սկսել էի տաքանալ, երբ կողքիս նստած մի կին, որը մինչ այդ ոչ մի խոսք չէր արտասանել, թեքվեց ականջիս և կամացուկ ասաց. «Լռի՛ր, ժան-ժակ, սրանք քեզ չեն հասկանա»։ Նայեցի նրան, ապշած մնացի ու լռեցի։

Մի շարք նշաններից կասկածելով, որ իմ պատանի գիտնականը իր այնքան լավ պատմած նյութից ոչինչ չէր հաս-

---

նում է, որ իր ամենասիրելի բժիշկը՝ Փիլիպոսը, Դարեհից կաշառվել է իրեն թունավորելու համար։ Այդ նամակը նա տալիս է Փիլիպոսին կարդալու ու հենց նույն րոպեին, առանց նրանից հայացքը կտրելու, խմում նրա պատրաստած ըմպելիքը։— Ս. Ֆ.

կացել, ճաշից հետո ես նրա ձեռքը բռնած դուրս տարա պարտեզում զբոսնելու։ Զրուցելով նրա հետ, տեսա, որ նա չափազանց հիացած է Ալեքսանդրի այդքան փառաբանված արիությամբ։ Իսկ գիտե՞ք, թե ինչումն էր գտնում նա այդ արիությունը. միմիայն նրանում, որ առանց վարանման, առանց ամենափոքր դժկամության՝ նա մեկ ումպով դատարկել էր զզվելի համ ունեցող հեղուկը։ Խեղճ տղան, որին մի տասնհինգ օր առաջ դեղ էին տվել խմելու, և որը մեծ դժկամությամբ էր ընդունել այն, դեռևս դրա տհաճ համն զգում էր բերանում։ Թունավորումն ու մահը նրա համար սոսկ անհաճո զգացումներ էին, ու նա, բացի իր խմած դեղից, ուրիշ ոչն երևակայել չէր կարող։ Սակայն պետք է խոստովանել, որ հերոսի հաստատակամությունը նրա մատաղ սրտին մեծ սպասվորություն էր թողնել, և նա որոշել էր, մի ուրիշ անգամ գեղն ընդունելիս, Ալեքսանդր լինել։ Առանց բացատրությունների մեջ մտնելու, որոնք, իհարկե, վեր էին նրա ըմբռնողությունից, ես խրախուսեցի նրա գովելի տրամադրություններն ու տուն վերադարձա, ինքս ինձ ծիծաղելով հայրերի և ուսուցիչների բարձր իմաստության վրա, որոնք կարծում են, թե երեխաներին պատմություն են ուսուցանում։

Հեշտ է երեխաներին սովորեցնել թագավոր, կայսրություն, պատերազմ, նվաճում, հեղափոխություն, օրենք բառերը։ Բայց երբ խնդիրը գալիս է այս բառերին ճշգրիտ գաղափարներ կապակցելուն, ապա բավականին տարբերություն կլինի պարտիզպան Ռոբերի զրույցի ու այս բացատրությունների մեջ։

Ընթերցողներից ոմանք, ինչպես գուշակում եմ, գոհ չմնալով «Լսի՛ր, Ժան-Ժակ» խոսքերից, անշուշտ կհարցնեն, թե ի՞նչ գեղեցկություն եմ գտել ես Ալեքսանդրի վարմունքի մեջ։ Ժլրախտնե՛ր, եթե կարիք կա, որ այն ասեմ ձեզ, հապա ի՞նչպես պիտի հասկանաք։ Խնդիրն այն է, որ Ալեքսանդրը հավատում էր առաքինությանը, հավատում էր իր գլխով, իր կյանքի գնով, որ նրա մեծ հոգին ստեղծված էր այդ հավատքի համար։ Օ՛, հավատքի որպիսի՛ վեհ վկայություն էր այդ դեղը խմելը։ Ո՛չ, երբեք որևէ մահկանացու

այդքան վսեմ չի եղել։ Եթե գոյություն ունի ժամանակակից մի Ալեքսանդր, թող ցույց տան նրա այդպիսի գործերը։

Եթե բառերի գիտություն չկա, ապա ուրեմն չկա և երեխաներին հարմար ուսմունք։ Եթե նրանք ճշմարիտ մտքեր չունեն, չունեն նաև ճշմարիտ հիշողություն, որովհետև ես հիշողություն չեմ համարում այն, որ միայն զգացողություններն է պահում։ Ինչի՞ է ծառայում նրանց գլխում մի անվանացուցակ խցկելը, որից նրանք ոչ մի բան չեն հասկանա։ Վախենում եք, որ իրերին ծանոթանալով, նրանք չծանոթանա՞ն դրանց անուններին։ Ի՞նչ կարիք կա զուր տեղը միևնույն բանը սովորեցնել երկու անգամ։ Եվ սակայն, ինչպիսի՞ վտանգավոր նախապաշարումներ ենք սկսում նրանց ներշընչել, որպես գիտություն ընդունել տալով նրանց համար ոչ մի իմաստ չունեցող բառեր։ Այն առաջին բառից, որ երեխան լսում է, այն առաջին բառից, որ նա սովորում է ուրիշի խոսքերով, առանց հասկանալու նրանց օգտակարությունը, նա կորցնում է իր դատողությունը. նա երկար ժամանակ կփայլի հիմարների աչքին, մինչև կկարողանա այդ կորուստը վերստանալ [1]։

Ո՛չ, եթե բնությունը երեխայի ուղեղին տալիս է այն ճկունությունը, որը նրան ընդունակ է դարձնում ամեն տեսակ տպավորություններ ընդունելու, դա նրա համար չէ, որ այն-

---

[1] Գիտնականների մեծ մասը երեխաների նման են։ Բազմակողմանի հմտությունը նրանց մոտ ավելի շատ պատկերների շատությունից է առաջանում, քան մտքերի առատությունից։ Տարեթվերը, հատուկ անունները, վայրերի անունները, բոլոր առանձին կամ զաղափարազուրկ իրերը միայն նշանների հիշողությամբ են պահվում մտքում, և շատ քիչ է պատահում, որ հիշեն դրանցից որևէ մեկը, առանց միևնույն ժամանակ նայելու բուն էջին (recto) կամ հակառակ էջին (verso), ուր այն կարդացել են, կամ այն նկարը, որի միջոցով դրան ծանոթացել են առաջին անգամ։ Այսպես էր մոտավորապես վերջին դարերում ընդունված գիտությունը։ Իսկ մեր դարի գիտությունը այլ է՝ այժմ մարդիկ այլևս չեն ուսումնասիրում, չեն դիտում, այլ երազում են ու շատ լրջորեն մեզ որպես փիլիսոփայություն են հրամցնում մի քանի վատ գիշերների երազները։ Գուցե ինձ ասեն, որ ես էլ եմ երազում. համաձայն եմ, բայց ես անում եմ այն, ինչ որ ուրիշները չեն անում՝ իմ երազները տալիս եմ որպես երազ, թողնելով ընթերցողին որոշելու, թե արդյոք դրանց մեջ որևէ օգտակար բան կա՞ արթուն մարդկանց համար։

տեղ տպավորվեն թագավորների, տարեթվերի, տոհմական տերմինների, աշխարհագրական ու ամեն տեսակ անուններ, որոնք ոչ մի իմաստ չունեն այդ հասակի և ոչ մի օգտակարություն՝ բոլոր հասակների համար։ Նրանք միայն ծանրաբեռնում են երեխայի տխուր և ամուլ մանկությունը։ Դրա նպատակն այն է, որ երեխային ըմբռնելի և նրան օգտակար բոլոր մտքերը, որոնք առնչվում են նրա երջանկության հետ ու մի օր պետք է պարզաբանեն նրա պարտականությունները, սկզբից ևեթ անջնջելիորեն դրոշմվեն նրա ուղեղում և օգնեն նրան կյանքում առաջնորդվելու իր էության ու իր ընդունակությունների հարմար ձևով։

Հիշողության այն տեսակը, որով կարող է օժտված լինել երեխան՝ առանց դրքեր կարդալու, դրանով երբեք անգործ չի մնա։ Այն ամենը, ինչ նա տեսնում ու լսում է, տպավորում է նրան ու մնում նրա հիշողության մեջ։ Մարդկանց խոսքերի ու գործերի մի մասյան է պահում նա իր մեջ. նրա ամբողջ շրջապատը այն գիրքն է, որի շնորհիվ նա, առանց զգալու, անընդհատ հարստացնում է իր հիշողությունը, մինչև այն ժամանակ, երբ իր դատողությունը կկարողանա օգուտ քաղել դրանից։ Ընտրել այդ իրերը, հոգ տանել նրան շարունակ ցույց տալու այն, ինչ կարող է ըմբռնել, և թաքցնելու այն, ինչ չպետք է գիտենա, ահա սրանումն է երեխայի մեջ այդ առաջին ընդունակությունը՝ հիշողությունը զարգացնելու իսկական արվեստը։ Պետք է աշխատել հենց այս ձևով կազմել նրա գիտելիքների պաշարը, որը երիտասարդ հասակում կօգնի նրա դաստիարակությանը և կառաջնորդի նրան իր ամբողջ կյանքում։ Ճիշտ է, այս մեթոդը հրաշք-երեխաներ չի ծնում, ոչ էլ փառքի հռչակ է բերում դաստիարակներին և ուսուցիչներին, սակայն երեխայից պատրաստում է ողջամիտ, ուժեղ, մարմնով ու մտքով առողջ այն մարդը, որը եթե պատանի հասակում չի հիացրել, ապա հասուն տարիքում ընդհանուրի հարգանքին է արժանանում։

Էմիլը ոչինչ չպետք է անգիր անի, ոչ իսկ առակները, նույնիսկ Լաֆոնտենի առակները, որքան էլ նրանք պարզունակ և սքանչելի լինեն, որովհետև առակների խոսքերը առակներ չեն, ինչպես պատմության խոսքերը պատմություն

չեն։ Ի՞նչպես կարելի է այնքան կույր լինել, որպեսզի առակները երեխաների մորալը համարեն, առանց մտածելու, որ առակի իրատեսականը, նրանց զվարճացնելով հանդերձ, մոլորության մեջ է գցում։ Ստից հրապուրված, նրանք անտես են առնում ճշմարտությունը. և այն, ինչ դուք անում եք կրթությունը հաճելի դարձնելու համար, նրանց արգելք է հանդիսանում օգտվելու դրանից։ Ախակնդրը կարող են կրթել չափահասներին. իսկ երեխաներին պետք է ասել մերկ ճշմարտությունը։ Հենց որ քողարկեք այն, երեխան բնավ նեղություն չի քաշի քողը հեռացնելու։

Լաֆոնտենի առակները սովորեցնում են բոլոր երեխաներին, բայց նրանցից ոչ մեկը դրանք չի հասկանում։ Իսկ եթե հասկանային, ավելի վատ նրանց համար, որովհետև այդ առակների բարոյախոսությունը այնքան շփոթ է ու անհամատեղելի նրանց տարիքին, որ երեխաներին ավելի շոշտ դեպի մոլություն կտանի, քան դեպի առաքինություն։ «Դարձյալ պարադոքսներ», կասեք դուք։ Թո՛ղ այդպես լինի. բայց տեսնենք՝ իրո՞ք այդպես է։

Ես ասում եմ՝ երեխան ոչինչ չի հասկանում առակներից, որովհետև ինչքան աշխատենք դրանք պարզեցնել, նրանցից խրատներ քաղելու ցանկությունը կստիպի մեզ այնտեղ այնպիսի մտքեր մտցնել, որոնք երեխան չի կարող ըմբռնել, իսկ չափածո ձևն էլ, որը հեշտացնում է առակը հիշողության մեջ պահելու, դժվարացնում է նրա ըմբռնումը։ Այսպիսով, հեշտությունը ձեռք է բերվում ի հաշիվ պարզության։ Չհիշատակելով այն մի շարք առակները, որոնք երեխաներին ո՛չ հասկանալի են, ո՛չ էլ օգտակար, և որոնք անխոհեմաբար սովորեցնում են մյուսների հետ միասին, սահմանափակվենք միայն այն առակներով, որ թվում է, թե հեղինակը կազմել է հատկապես երեխաների համա՛ր։

Լաֆոնտենի առակների ամբողջ ժողովածուի մեջ ես միայն հինգը կամ վեցը գիտեմ, որոնք իսկապես փայլում են մանկական անմեղությամբ։ Դրանցից, իբրև օրինակ, ես վերցնում եմ «Ագռավն ու աղվեսը», որովհետև նրա բարոյախոսությունը ամենից շատ է պատշաճում բոլոր հասակներին, ու երեխաներն ավելի լավ են ըմբռնում այն, ավելի հաճույքով են սո-

վորում, և, վերջապես, հեղինակն էլ, այդ իսկ պատճառով, այն վետեղել է հենց գրքի սկզբում։ Եթե ընդունենք, որ, իրոք, այս առակը երեխաներին հասկանալի է, նրանց հաճույք է պատճառում ու դաստիարակում, այդ դեպքում, անտարակույս, նրա գլուխգործոցն է։ Ուրեմն, թո՛ղ ինձ ներվի մի քանի խոսքով վերլուծել այդ առակը։

ԱԳՌԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ
Առակ

Վարպետ Ագռավը՝ մի ծառի բառած*,

***Վարպետ:** Այս բառը ինքնըստինքյան ի՞նչ է նշանակում. ի՞նչ է նշանակում, երբ մի հատուկ անվան առաջ է դրված. ի՞նչ իմաստ ունի ներկա դեպքում։*

Ի՞նչ է ագռավը։

Ի՞նչ ասել է մի ծառի բառած *(un arbre perché)։ Ֆրանսերենով չեն ասում՝* մի ծառի բառած, *այլ՝* բառած մի ծառի վրա։ *Հետևապես, պետք է բացատրել, թե բանաստեղծության մեջ ինչ է բառերի տեղափոխությունը, պետք է ասել, թե ինչ է արձակը և ինչ՝ չափածոն։*

Իր կտցում բռնել էր մի կտոր պանիր։

Ի՞նչպիսի պանիր՝ շվեյցարակա՞ն, Բրիի՞, թե՞ հոլանդական։ Եթե երեխան կյանքում ագռավ չի տեսել, ի՞նչ օգուտ նրա մասին խոսելուց, իսկ եթե տեսել է, ի՞նչպես կըմբռնի, որ ագռավը կտցով կարող է պանիր բռնել։ Պետք է միշտ պատկերները բնական ձևով տալ։

Վարպետ Աղվեսը՝ հոտից գմայլված,

Դարձյալ մի վարպետ, բայց այս անգամ արդեն ըստ արժանվույն է տրված. աղվեսը հայտնի վարպետ է ամեն տե-

---

* *Թարգմանությունը ֆրանսերենից կատարված է տողացի— Ս. Բ.*

սակ հնարքների մեջ։ Այստեղ պետք է ասել, թե ինչ է աղվեսն ու տալ նրա իսկական նկարագիրը, անջատ՝ առակների մեջ ունեցած պայմանական բնավորությունից։

Ձմայլված (alléché)։ Սա գործածական բառ չէ։ Պետք է բացատրել, որ միայն չափածոյի մեջ է գործածվում։ Երեխան կարող է հարցնել, թե ինչու՞ ոտանավորներում ուրիշ լեզվով են խոսում, արձակում՝ ուրիշ։ Ի՞նչ կպատասխանեք։

Պանրի ճոտից զմայլված։ Պանիրը, որ բռնել է ծառին թառած ագռավն իր կտցում, շատ ուժեղ հոտ պետք է ունենար, որպեսզի թավուտում կամ որջում նստած աղվեսը կարողանար զգալ։ Մի՞թե այդպես եք վարժեցնում ձեր աշակերտին՝ ունենալ խելացի քննադատական ոգի, որը տեղի է տալիս միայն ուժեղ փաստերի առաջ և գիտե ուրիշների պատմվածքների մեջ զանազանել ճշմարտությունը ստից։

Երաց մոտավորապես այս խոսքերն ասաց.

Այս խոսքերն ասաց։ *Ուրեմն, աղվեսը խոսում է և խոսում այն լեզվով, որ խոսում են ագռավնե՞րը։ Ճոհական ուսուցի՛չ, զգույշ եղի՛ր, լավ մտածի՛ր պատասխանելուց առաջ. այդ պատասխանից շատ բան է կախված։*

Ճ՛յ, բարի օ՛ր, պարո՛ն ագռավ.

Պարոն։ *Երեխան տեսնում է, որ այս տիտղոսը ծաղրանքի է վերածվում, նախքան իմանալը, որ պարոն բառը պատվաբեր տիտղոս է։*

Ի՞նչ սիրուն եք դուք, ի՞նչ գեղեցիկ եք թվում ինձ.

Դատարկ խոսքեր, ավելորդաբանություն։ Երեխան, տեսնելով, որ միևնույն բանը կրկնվում է տարբեր ձևերով, սովորում է շատ վատ խոսել։ Թե՛ դուք կասեք, որ այս ավելորդաբանությունը հեղինակի արվեստն է բացահայտում, որ մղոնում է աղվեսի դիտավորության մեջ, ցանկանալով ցույց տալ, որ բառերով ավելացնում է գովաստանքը, այդ պատճառաբանությունը կբավարարի ինձ, բայց ոչ իմ սանիկին։

Առանց կեղծելու, ձեր գայլայլիկը

Առանց կեղծելու: *Ուրեմն, երբեմն կեղծու՞մ են: Ի՞նչ կմտածի երեխան, երբ դուք նրան ասեք, որ աղվեսը նրա համար է ասում «առանց կեղծելու», որովհետև կեղծում է:*

Համապատասխան է ձեր փետրավոքմանը,

Համապատասխան է: *Ի՞նչ է նշանակում այս խոսքը: Փորձեցե՛ք երեխային սովորեցնել՝ համեմատել ձայնի և փետրավորման նման տարբեր հատկություններ, տեսնենք, թե ինչպես կհասկանա ձեզ:*

Փառք այս անտառների հյուրերի փյունիկը կլինեիր:

Փյունի՞կը: *Ի՞նչ է փյունիկը: Ահա՛, մենք արդեն հանկարծ տեղափոխվում ենք վաղեմի առասպելաբանության մեջ:*

Այս անտառների հյուրե՞րը: *Ի՞նչ պատկերավոր դարձվածք: Շողոքորթը զարդարում է իր խոսքը՝ նրան ավելի արժանավորություն և ավելի ազդեցություն տալու համար: Երեխան կհասկանա՞ արդյոք այս նրբությունը: Նա գիտե՞ արդյոք կամ կարո՞ղ է գիտենալ, թե ինչ է բարձր ոճը, ինչ՝ հասարակը:*

Այս խոսքերի վրա ագռավն ուրախությունից իրեն կորցրեց,

Մարդն արդեն շատ ուժեղ հուզումներ պետք է ապրած լինի՝ առած դարձած այս արտահայտությունը հասկանալու համար:

Եվ իր գեղեցիկ ձայնը ցույց տալու համար,

Հիշեցե՛ք, որ այս տողն ու ամբողջ առակը հասկանալի լինելու համար, երեխան նախ պետք է իմանա, թե ինչ բան է ագռավի գեղեցիկ ձայնը:

Գաց է անում լայն կտուցը, գցում իր ավարը:

Այս տողը հրաշալի է, միայն դրա ներդաշնակությունը մի պատկեր է: Ես տեսնում եմ մի մեծ, անճոռնի կտուց բաց արած, լսում եմ ճյուղերի միջով ընկնող պանրի ձայնը: Բայց

այսպիսի գեղեցկությունները չեն ընկալվում երեխաների կողմից։

Աղվեսը հափշտակում է պանիրն ու ասում.
«Իմ հիմար պառա՛ճ»,

Եվ ահա արդեն բարեսրտությունը՝ փոխված հիմարության։ Արդյո՞ք մեր ժամանակը զուր չենք վատնում երեխաներին դաստիարակելու համար...

Գիտեք՛ք, որ յուրաքանչյուր շողոքորթ
Սովորական խոսքեր, կարիք չկա բացատրության։

Ապրում է նրա հավին, ով լսում է իրեն։
Երբեք տասը տարեկան երեխան չի հասկանա այս տողը։

Այս գաղը մի կտոր պանիր արժե անկասկած։
Սա հասկանալի է, ու միտքն էլ՝ շատ գեղեցիկ։ Սակայն դեռևս շատ քիչ երեխաներ կան, որոնք կկարողանան խրատը պանրի հետ համեմատել ու պանիրը խրատից չգերադասել։ Պետք է, ուրեմն, բացատրել նրանց, որ այս նախադասությունը ծաղր է միայն։ Ինչպիսի՜ նրբություն մանուկների համար։

Աղռավը՝ ամօթահար ու շփոթված,
Նորից ավելորդաբանություն, բայց այս անգամ աննշանելի։

Երդվեց, բայց մի քիչ ուշ, որ էլ չի խաբվի։
Երդվեց։ Ո՞ր ուսուցիչն այնքան հիմար կգտնվի, որ բացատրի երեխային, թե ինչ է երդումը։

Ահավասիկ մանրամասնություններ, որոնք ավելի քան բավական են այս առակի բոլոր մտքերը վերլուծելու համար և դրանք վերածելու այնպիսի պարզ ու տարրական մտքերի, որոնցից կազմված է դրանցից յուրաքանչյուրը։ Բայց պատանիներին հասկանալի դարձնելու համար ո՞վ է այդպիսի վերլուծման կարիք զգում։ Մեզնից ոչ մեկն այնքան փիլիսոփա չէ, որ ինքն իրեն երեխայի տեղ դնի։ Անցնենք այժմ բարոյախոսությանը։

Հարց եմ տալիս՝ արդյո՞ք պետք է սովորեցնել վեց տարեկան երեխաներին, թե կան մարդիկ, որոնք շողոքորթում, կեղծում, ստում են իրենց շահերի համար։ Ամենաշատը նրանց կարելի է սովորեցնել, թե ծաղրասերներ կան, որոնք հեգնում են փոքրիկներին ու մտքում ծիծաղում նրանց հիմար սնապարծության վրա։ Բայց պանիրը ամեն ինչ փչացնում է։ Նրանց ավելի շուտ սովորեցնում է պանիրը ուրիշի բերանից վայր գցել տալը, քան թե իրենց բերանից բաց թողնելը։ Սա. իմ երկրորդ հակառակ, ոչ-պակաս կարևոր կարծիքն է։

Հետևեցե՛ք երեխաներին առակները սովորելիս, և դուք կտեսնեք, որ երբ նրանք ի վիճակի կլինեն կյանքում կիրառել այդ առակները, գրեթե միշտ հեղինակի դիտավորության հակառակը կանեն, ու փոխանակ նկատելու իրենց այն սխալները, որոնք կանխելու կամ ուղղելու նպատակով են գրված այդ առակները, երեխաներն առավելապես հակված կլինեն սիրելու այն մոլությունը, որի շնորհիվ կարելի է օգտվել ուրիշի սխալից։

Վերևի առակում երեխաները հեգնում են ագռավին, իսկ նրանց համակրանքը աղվեսի կողմն է։ Մի երկրորդ առակով դուք նպատակ ունեք որպես օրինակ տալ ճպուռը։ Բայց և այնպես, նրանք մրջյունին կընտրեն. ոչ ոք չի սիրում ստորանալ. միշտ դրական դերն են ուզում ստանձնել նրանք. դա ինքնասիրության ընտրությունն է և շատ բնական մի ընտրություն։ Ուրեմն ի՞նչ սարսափելի դաս երեխայի համար։ Բոլոր տեսակի հրեշների մեջ ամենազզվելին այն ագահ և խստասիրտ երեխան կլիներ, որը կհասկանար, թե նրանից ինչ են խնդրում և ինքը ինչ է մերժում։ Մրջյունը ավելին է անում. նա երեխային սովորեցնում է մերժել՝ ծաղրելով։

Այն բոլոր առակներում, ուր առյուծն է հանդես գալիս, և ընդհանրապես ամենից ավելի փայլուն դերում, երեխան միշտ համակրում է առյուծին, և եթե գլխավորում է մի բան բաժանելու գործը, հետևելով առյուծի օրինակին՝ աշխատում է բոլորն իրեն վերապահել։ Բայց երբ մոծակը առյուծին գետին է տապալում, այդ արդեն այլ բան է. այդ դեպքում երեխան այլևս առյուծ դառնալ չի ցանկանում, նա արդեն մոծակ

է։ Մի օր նա կսովորի ասեղի ծակոցներով սպանել նրանց, որոնց վրա չի համարձակվի հարձակվել ճակատ-ճակատի։

Նիհար գայլի ու գեր շան առակով չափավորության օրինակի փոխարեն, որ ուզում են տալ երեխային, սանձարձակության դաս են տալիս։ Երբեք չեմ մոռանա, թե ինչպես էր լաց լինում մի փոքրիկ աղչիկ, որին ձանձրացրել էին այս առակով, շարունակ նրան հնազանդության քարոզելով։ Նրանից շատ դժվարությամբ կարողացան վերջապես իմանալ լացի պատճառը։ Խեղճ երեխան ձանձրացել էր շարունակ շղթայված մնալուց. նրան թվում էր, թե քերթվել էր պարանոցի կաշին. լալիս էր, թե ինչու ինքը գայլ չէ։

Այսպես ուրեմն, առաջին առակի բարոյախոսությունը երեխայի համար ստոր շողոքորթության մի դաս է, երկրորդը սովորեցնում է անմարդկայնություն, երրորդը՝ անարդարություն, չորրորդը՝ հեգնանք, հինգերորդը՝ անկախություն։ Վերջինը որքան ավելորդ է իմ աշակերտի, նույնքան և անհարմար է ձեր աշակերտների համար։ Եթե դուք իրար հակասող խրատներ եք տալիս նրանց, ի՞նչ արդյունք եք սպասում ձեր աշխատանքից։ Բայց, դուցե, հակառակ այս բոլորին, նույն բարոյախոսությունը, որի օգնությամբ եմ ես առարկում առակների դեմ, այնպիսի հիմունքներ է տալիս, որոնք անհրաժեշտ են դարձնում նրանց պահպանումը։ Հասարակության մեջ անհրաժեշտ է մի բարոյախոսություն՝ խոսքի, մի ուրիշը՝ գործի համար։ Իսկ այդ երկուսը իրար ամենևին չեն նմանվում։ Առաջինը քրիստոնեական ուսմունքի մեջ է, այնտեղ էլ մնում է. երկրորդը Լաֆոնտենի առակներումն է՝ երեխաների համար և Լաֆոնտենի հեքիաթներում՝ մայրերի համար։ Միևնույն հեղինակը բոլորին էլ բավարարում է։

Սկե՛ք համաձայնենք, պարոն դը Լաֆոնտեն. ես իմ կողմից խոստանում եմ ընտրությամբ կարդալ ձեր գրվածքները, սիրել ձեզ, սովորել ձեր առակներից, հույս ունենալով, որ չեմ սխալվի նրանց նպատակների մեջ։ Սակայն, ինչ վերաբերում է իմ սանին, թույլ տվե՛ք, որ ձեր առակներից ոչ մեկը նրան չսովորեցնեմ, մինչև դուք ինձ չապացուցեք, թե նրա համար լավ է սովորել այնպիսի բաներ, որոնց մի քառորդն անգամ չի հասկանա, որ հասկացածներից սխալ գաղափար չի

կազմի և որ, փոխանակ ուղղվելու խաբվածի օրինակով, խաբեբային չի ընդունի որպես օրինակելի։

Այսպես, երեխաներին հեռու պահելով բոլոր պարտականություններից, նրանցից վերցնում եմ նաև ամենամեծ դժբախտության գործիքները, այսինքն՝ գրքերը։ Ընթերցանությունը երեխաների միակ պատուհասն է, և սակայն՝ համարյա միակ զբաղմունքը, որ կարողանում են տալ նրանց։ Հազիվ թե տասներկու տարեկան հասակում էմիլը իմանա, թե ինչ է գիրքը։ Բայց, համենայն դեպս, կասեք ինձ, երեխան պետք է գոնե կարդալ գիտենա։ Համաձայն եմ, պետք է գիտենա կարդալ այն ժամանակ, երբ կարդալը նրան օգտակար կլինի, իսկ մինչև այդ՝ ընթերցանությունը կձանձրացնի նրան։

Եթե հանուն հետաքրքրության չէ, որ երեխաներից որևէ բան պիտի պահանջենք, ապա նրանք ոչինչ չեն կարող սովորել, եթե չզգան դրա անմիջական առավելությունը՝ թե՛ հաճույքի և թե՛ օգուտի տեսակետից. այլապես ի՞նչը նրանց պիտի դրդեր սովորելու։ Բացականների հետ խոսելու և նրանց լսելու, հեռվից, ստանց միջնորդի, նրանց մեր զգացմունքները, մեր կամքը, մեր ցանկությունները հաղորդելու արվեստը մի այնպիսի արվեստ է, որի օգտակարությունը կարելի է զգալի դարձնել բոլոր տարիքների համար։ Այդ ի՞նչ հնարքով է, որ մի այսպիսի օգտակար և հաճելի արվեստ տանջանք է դարձել երեխաների համար։ Որովհետև նրանց ստիպում են դրանով զբաղվել հակառակ իրենց կամքի և այդ արվեստը կիրառել այնպիսի դեպքերում, երբ նա ոչինչ չի հասկանում։ Երեխային երբեք հետաքրքիր չէ կատարելագործել այն միջոցը, որով տանջում են իրեն, իսկ եթե դուք այդ միջոցը ծառայեցնեք նրա հաճույքին, ապա նա իսկույն կհետաքրքրվի դրանով՝ հակառակ ձեր կամքի։

Շատ մեծ աշխատանք է տարվում կարդալ սովորեցնելու համար լավագույն մեթոդներ գտնելու. գրասեղաններ, քարտեր են հնարում, երեխայի սենյակը տպագրական [illegible] է դարձնում։ Լոքը ցանկանում է, որ երեխան կարդալը խորանարդիկներով սովորի։ Ինչպիսի՜ հիանալի գյուտ, այնպես չէ՞։ Բայց և որքա՜ն ողորմելի։ Այս բոլորից ամենա-

ապահով միջոցը, որ միշտ աչքաթող են անում, սովորելու ցանկությունն է։ Տվե՛ք երեխային այդ ցանկությունը և մի կողմ թողեք ձեր գրասեղաններն ու խորանարդիկները. այդ դեպքում բոլոր մեթոդները նրան օգտակար կլինեն։

Երեխայի անմիջական շահագրգռվածություն. ահա այն մեծ շարժիչ ուժը, միակը, որ ապահով է և հեռու կտանի։ Էմիլը երբեմն իր հորից, մորից, ազգականներից, բարեկամներից հրավիրատոմս է ստանում ճաշի, շրջագայության, ջրային զբոսանքի կամ որևէ հասարակական տոնակատարության ներկա գտնվելու համար։ Այդ տոմսերը համառոտ բովանդակություն ունեն, գրված են պարզ, մաքուր և գեղեցիկ։ Պետք է մի մարդ գտնել, որ կարդա հրավիրատոմսը, բայց այդպիսի մարդ կա՛մ միշտ չի գտնվի ուզածդ ժամին, կա՛մ, եթե գտնվի էլ, նա երեխայի նախընթաց մի անբարյացակամ վերաբերմունքը կփոխադարձի անբարյացակամությամբ։ Այդպիսով անցնում են առիթն ու ժամանակը։ Ի վերջո նրան կարդում են տոմսը, բայց արդեն ուշ է։ Ա՜խ, երանի թե ինքը կարդալ կարողանար։ Ստացվում են ուրիշ գրություններ ևս, շատ կարճ, որպիսի՜ հետաքրքիր բովանդակությամբ։ Նա փորձում է դրանք ընթերցել։ Նրան մերթ օգնում են, մերթ մերժում։ Մեծ ջանքերից հետո միայն երեխային վերջապես հաջողվում է կարդալ տոմսի կեսը՝ հրավիրում են նրան հաջորդ օրը կրեմ ուտելու... բայց ու՞ր և ու՞մ հետ։ Ինչքա՜ն ջանք է գործադրում մնացածը կարդալու համար։ Չեմ կարծում, որ էմիլը գրասեղանի կարիք ունենա։ Արժե՞ արդյոք խոսել այժմ գրելու մասին։ Ո՛չ, ես ամաչում եմ դաստիարակության մասին խոսող մի ձեռնարկում զբաղվել այդպիսի ոչնչություններով։

Ավելացնեմ միայն մի խոսք, որը ինքնին կարևոր մի սկզբունք է, այն, որ երբ չենք շտապում մի բան ստանալ, ընդհանրապես ավելի շուտ և ավելի վստահորեն ենք ստանում։ Ես համոզված եմ, որ էմիլը տասը տարին չլրացրած կկարողանա շատ լավ կարդալ ու գրել իմանալ, հենց այն պատճառով, որ ես առանձնապես շահագրգռված չեմ, որ նա տասնհինգ տարեկանից շուտ ձեռք բերի այդ ընդունակությունը։ Բայց ես ավելի շուտ կցանկանայի, որ նա երբեք կար-

դալ չսովորեր, քան թե այդ գիտելիքը ձեռք բերեր այն բոլորի գնով, որ կարդալը օգտակար կդարձներ։ Ի՞նչ օգուտ ընթերցանությունից, երբ նրանից պետք է հրաժարվել ընդմիշտ։ Id imprimis cavere oportebit, ne studia, qui amare nondum potest, oderit, et amaritudinem semel perceptam etiam ultra rudes annos reformidét *։

Որքան շատ եմ ես պնդում իմ անգործության մեթոդի կիրառման վրա, այնքան ավելի եմ զգում նրա դեմ կուտակվող առարկությունները։ Կարող են ասել. «Եթե ձեր սանը ոչինչ չսովորի ձեզնից, կսովորի ուրիշներից։ Եթե սխալը չկանխենք ճշմարտությամբ, նա ստախոսություն կսովորի։ Այն նախապաշարումները, որ դուք չեք ուզում նրան սովորեցնել, նա կստանա շրջապատից՝ իր բոլոր զգայարանների միջոցով։ Այդ նախապաշարումները կա՛մ նրա զարգացումը կխոչընդոտեն, նույնիսկ նախքան դրա կազմավորվելը, կա՛մ նրա միտքը, երկար ժամանակ անգործությունից թմրած, կլուծվի նյութի մեջ։ Եթե նա մտածել չվարժվի մանուկ հասակում, ապա մտածելու ընդունակությունը կկորցնի իր ամբողջ կյանքում»։

Ինձ թվում է, որ հեշտությամբ կարող էի պատասխանել այս առարկություններին, բայց ինչ կարիք կա ամեն անգամ պատասխանելու։ Եթե իմ մեթոդն ինքնին պատասխանում է առարկություններին, լավ. եթե չի պատասխանում, ուրեմն այն ոչինչ չարժե։ Ես շարունակում եմ։

Եթե, հենվելով այն նախագծին, որը ես սկսել եմ շարադրել, ընթանաք հաստատված կանոններին բոլորովին հակառակ ուղղությամբ, եթե ձեր աշակերտի միտքը, փոխանակ հնռուները տանելու, փոխանակ շարունակ ման ածելու ուրիշ վայրերում, ուրիշ կլիմաների տակ, տարբեր դարերի մեջ, երկրագնդի զանազան ծայրամասերում, նույնիսկ երկընքում, պահեք միշտ ինքն իր մեջ, ուշադիր՝ միայն անմիջականորեն իրեն վերաբերող խնդիրներին, այդ դեպքում

---

* *«Ամենից առաջ պետք է զգուշանալ, որ երեխան, քանի դեռ չի կարող սիրել ուսումը, չատե այն, և մի անգամ արդեն նրա դառնությունը ճաշակելուց ու առաջին տարիներն անցնելուց հետո, չխորշի նրանից»։*

դուք նրան կդտնեք ընդունակ՝ ըմբռնելու, հիշելու և նույնիսկ դատելու։ Այդ է բնության օրենքը։ Ինչքան զգացական էակն սկսում է գործել, այնքան նա ձեռք է բերում իր ուժերին համապատասխան ճանաչողություն, և միայն իր ինքնապահպանման համար անհրաժեշտ ուժի գերառատությունն է նրա մեջ զարգացնում զննողական ընդունակությունը, որն օգտագործում է ուժերի այդ ավելցուկը ուրիշ նպատակների համար։ Ուրեմն, եթե ուզում եք ձեր սանի իմացականությունը զարգացնել, զարգացրե՛ք այն ուժերը, որոնց նա պետք է դեկավարի։ Մարզեցե՛ք անդուլ նրա մարմինը, դարձրե՛ք այն առողջ և ուժեղ, որպեսզի լինի խելացի և տրամաբանող։ Թո՛ղ երեխան վազի, գործի, աշխատի, թո՛ղ շարունակ շարժման մեջ լինի. թո՛ղ նա մարդ լինի իր եռանդով և շուտով մարդ կդառնա նաև բանականությամբ։

Ճիշտ է, այս մեթոդով դուք կարող եք նրան բթամիտ դարձնել, շարունակ դեկավարելով, անվերջ նրան ասելով՝ «Գնա՛, արի՛, կա՛ց, այս բանն արա՛, այն բանը մի՛ անի»։ Եթե շարունակ ձեր գլխով պետք է դեկավարվեն նրա ձեռքերը, էլ ինչու՞ է պետք նրա գլուխը։ Բայց հիշեցե՛ք մեր պայմանը. եթե դուք բծախնդրի մեկն եք, այդ դեպքում չարժե, որ իմ գիրքը կարդաք։

Շատ ողբալի սխալ է երևակայել, թե մարմնի մարզանքը վնասում է մտքի գործունեությանը. կարծես այս երկու գործունեությունները համընթաց չպետք է գնան, այլ միշտ մեկի դեկավարը պետք է մյուսը լինի։

Աշխարհում կան երկու տեսակ մարդիկ, որոնց մարմինն անընդհատ մարզվում է և որոնք ամենևին չեն մտածում իրենց հոգու զարգացման մասին. դրանք գյուղացիք են ու վայրենիները։ Առաջինները կոպիտ են, դեհիկ, ձախավեր. մյուսները հայտնի են իրենց բարձր զգացողությամբ ու է՛լ ավելի՝ իրենց մտքի ճկունությամբ։ Ընդհանրապես, գյուղացուց ավելի բթամիտ ու վայրենուց ավելի սրամիտ արարածներ չկան։ Ինչի՞ց է առաջանում այս տարբերությունը. նրանից, որ առաջինը կատարում է միշտ այն, ինչ նրան հրամայում են, կամ այն, ինչ տեսել է իր հորից, կամ շարունակ արել է երիտասարդ հասակից, միշտ առաջնորդվում է հին սովորույ-

թով և իր գրեթե մեքենայական կյանքում անընդհատ զբաղված է միևնույն աշխատանքով. ուստի և սովորությունն ու հնազանդությունը փոխարինում են նրա դատողությանը։

Ուրիշ բան է վայրենին։ Նա ոչնչով չի կաշկանդված, ոչ մի առաջադրանք չի կատարում, ոչ ոքի չի ենթարկվում. բացի իր կամքից, ուրիշ ոչ մի օրենք չի ճանաչում, հետևապես, իր կյանքի յուրաքանչյուր գործողության ժամանակ նա ստիպված է դիմել իր դատողությանը. ոչ մի շարժում, ոչ մի քայլ չի անում՝ առանց նախապես դրա հետևանքների մասին մտածելու։ Այսպիսով, ինչքան նրա մարմինը մարզվում է, այնքան միտքը պայծառանում է։ Նրա ֆիզիկական ուժն ու բանականությունը զուգահեռ են աճում ու մեկը մյուսով է զարգանում։

Գիտուն ուսուցի՛չ, տեսնենք, թե մեր սաներից որն է նման վայրենուն և որը՝ դյուզացուն։ Ձեր աշակերտը, ամեն բանում ենթարկվելով անընդհատ սովորեցնող մի հեղինակության, ամեն ինչ անում է ուրիշի թելադրանքով. նա չի համարձակվում ուտել, երբ սոված է, ծիծաղել, երբ ուրախ է, լաց լինել, երբ տխուր է, չի կարող մի ձեռքը մյուսի փոխարեն երկարել, ոչ էլ շարժել իր ոտքը առանց հրահանգի. շատ չանցած՝ կսկսի շնչել միայն ձեր կարգադրությամբ։ Էլ ի՞նչ կարիք կա, որ նա մտածի, քանի որ դուք նրա փոխարեն մտածում եք ամեն բանի մասին։ Ապահովված՝ ձեր կանխատեսությամբ, ի՞նչ կարիք ունի, որ նրանից ինքն էլ ուննա։ Տեսնելով, որ դուք ձեզ վրա եք վերցնում նրա ինքնապահպանությունը, նրա բարեկեցությունը, ինքն իրեն աղատ է զգում այդ հոգսից. նրա դատողությունը հիմնված է ձեր դատողության վրա. այն ամենը, ինչ նրան չեք արգելում անել, նա կատարում է առանց խորհելու, քաջ գիտենալով, որ ոչ մի վտանգի չի ենթարկվի։ Ի՞նչ կարիք ունի նախատեսելու անձրևը, քանի որ գիտե, թե դուք հետազոտում եք երկինքը նրա փոխարեն։ Ի՞նչ կարիք ունի իր զբոսանքի ժամը կարգավորելու, քանի վստահ է, որ դուք չեք թողնի նրա ճաշի ժամանակն անցնի։ Քանի դուք նրան չեք արգելի՝ նա կուտի, իսկ եթե արգելեք՝ չի ուտի, որովհետև կենթարկվի ոչ թե իր ստամոքսի պահանջին, այլ ձեր հրահանգին։ Որքան էլ անգործությամբ քնքշացնեք նրա

մարմինը, դուք նրա իմացականությունը դրանով չեք սրի։ Ընդհակառակն, նրա աչքում վերջնականապես կնսեմացնեք գատողության դերը, և նա իր փոքր ի շատե ունեցած դատողությունն էլ կսպառի այնպիսի գործերի վրա, որոնք նրան ամենևին պիտանի չեն թվում։ Ջիմանալով, թե իր ինչին է պետք դատողությունը, նա ի վերջո գալիս է այն եզրակացության, որ դա ոչ մի բանի պետք չէ։ Իսկ սխալ դատողության ամենավատ հետևանքը հանդիմանություն ստանալը կլինի։ Բայց որովհետև նրան շատ հաճախ են հանդիմանում, դա նրա համար մի սովորական բան է դառնում, այսպիսի հասարակ վտանգը նրան չի սարսափեցնում. այդ մասին չի էլ մտածում։

Այսպես թե այնպես, երեխան խելք ունի։ Նվ իրոք, նա այնքան խելք ունի, որ կարողանում է շաղակրատել կանանց հետ այն ձևով, որի մասին արդեն ասել եմ։ Բայց բավ է, որ նա ստիպված լինի դիմել ինքնապաշտպանության, կամ մի գժվար դրությունից դուրս գալու ելք գտնել, այդ դեպքում նա հարյուր անգամ ավելի հիմար դուրս կգա, քան ամենաանտաշ չինականի որդին։

Իսկ իմ սանը կամ ավելի ճիշտն ասած՝ բնության սանը, շատ վաղուց վարժված լինելով հնարավորին չափ ինքն իրեն բավարարել, սովոր չէ անվերջ ուրիշի օգնությանը դիմել, ավելի քիչ՝ նրանց առաջ ցուցադրել իր ամբողջ մտավոր կարողությունը։ Դրա փոխարեն, նա դատում, նախատեսում, տրամաբանում է անմիջականորեն իրեն վերաբերող բոլոր խնդիրների մասին։ Նա չի շաղակրատում, այլ գործում է. ոչ մի տեղեկություն չունի աշխարհի անցուդարձից, բայց շատ լավ գիտի կատարել այն, ինչ իրեն ձեռնտու է։ Անդադար շարժման մեջ գտնվելով, հարկադրված է շատ բան դիտել, շատ տպավորություններ ստանալ. այդպիսով, վաղօրոք մեծ փորձառություն է ձեռք բերում։ Նա իր դասերը վերցնում է ոչ թե մարդկանցից, այլ բնությունից։ Նա այնքան ավելի լավ է սովորում, որքան ավելի է համոզվում, որ ինքը սովորեցնող չունի։ Այդպիսով, նրա մարմինն ու միտքը միաժամանակ էն մարզվում։ Միշտ գործելով իր սեփական խելքով, այլ ոչ թե ուրիշի, անվերջ երկու գործողություն է կատարում. որքան

ուժեղ և դիմացկուն է դառնում, այնքան ավելի խելացի ու ողջամիտ է լինում։ Միմիայն այս միջոցով է, որ մի օր կարելի է ձեռք բերել այն, ինչը անհամատեղելի են կարծում և որը գրեթե բոլոր մարդկանց մոտ համատեղվել է՝ մարմնի ուժը և հոգու ուժը, իմաստունի դատողությունն ու ըմբշի վարքությունը։

Երիտասարդ դաստիարա՛կ, ես ձեզ մի դժվարին արվեստ եմ քարոզում. դաստիարակել՝ առանց հրահանգների ու ամեն ինչ անել՝ ոչինչ չանելով։ Ընդունում եմ, որ այս գործը համապատասխան չէ ձեր տարիքին. նախ՝ նա փայլ չի տալիս ձեր տաղանդին, ոչ էլ ձեր արժեքն է բարձրացնում աշակերտի հոր աչքին, սակայն հաջողության հասնելու միակ միջոցն այս է։ Ձեզ երբեք չի հաջողվի ձեր սանից գիտուն մարդ առաջնալ, եթե նախապես ստահակ չդարձնեք նրան։ Այդպիսին էր սպարտացիների դաստիարակությունը. փոխանակ աշակերտներին գրքերի առաջ գամելու, նրանց սկզբում սովորեցնում էին իրենց ճաշը գողանալ։ Մի՞թե սպարտացիները դրա պատճառով տգետ էին մնում հասուն տարիքում։ Ո՞վ չգիտի նրանց պատասխանների ուժն ու սրամտությունը։ Մնված լինելով միշտ հաղթելու համար, նրանք հակառակորդին զգետնում էին բոլոր տեսակի մարտերում։ Շատախոս աթենացիք նույնքան վախենում էին նրանց խոսքերից, որքան հարվածներից։

Լավագույն դաստիարակության դեպքում ուսուցիչը հրամայում է և կարծում է, թե ինքն է ղեկավարում. մինչդեռ իրականում երեխան է ղեկավարում։ Նա օգտվում է այն հանգամանքից, որ դուք որևէ բան եք պահանջում նրանից, որպեսզի ինքը ձեզնից պահանջի այն, ինչ նրան դուր է գալիս, և կարողանում է մի օրվա փութաջանության փոխարեն ձեզ վճարել տալ ութը օրվա զիջողությամբ ու համբույակատարությամբ։ Ամեն րոպե հարկ կլինի նրա հետ համաձայնության գալ։ Այդ համաձայնությունները, որ առաջարկում եք ձեր հայեցողությամբ, իսկ նա կատարում է ըստ իր հայեցողության, միշտ էլ նրա քմահաճույքներին են ծառայում, մանավանդ, երբ անշնորհք եք գտնվել հօգուտ նրա պայմանավորվելու մի բանի մասին, որ ինքը բոլորովին վստահ է, թե

կատանա, անկախ նրանից՝ կատարո՞ւմ է թե չի կատարում փոխադարձ պարտադրված պայմանը։

Ընդհանրապես, երեխան ավելի լավ է կարդում ուսուցչի միտքը, քան թե ուսուցիչը՝ աշակերտի սիրտը։ Եվ այդպես էլ պետք է լինի, որովհետև այն ամբողջ մտքի ուժը, որ ինքն իրեն թողնված երեխան պետք է հանդես բերի իր գոյությունը պահպանելու, գործ է ածում իր բնական ազատությունը բռնակալի շղթաներից ազատելու համար։ Մինչդեռ վերջինը, նրա ներքինը թափանցելու հրամայական պահանջ չլգալով, երբեմն ավելի լավ է համարում հանդուրժել նրա ծուլությունն ու անպատրաստությունը։

Գնացե՛ք ձեր սանին հակառակ ուղղությամբ։ Թո՛ղ նա շարունակ կարծի, թե ինքն է տերը, այնինչ իրականում միշտ դուք կլինեք։ Ոչ մի հնազանդություն այնքան լիակատար չէ, որքան այն, որ պահում է ազատության արտաքին տեսքը. այդպիսով նույնիսկ կամքն է զսպվում։ Խեղճ երեխան, որ ոչինչ չգիտի, ոչինչ չի կարող անել, ոչինչ չի ճանաչում, մի՞թե ձեր իշխանության տակ չէ։ Չէ՞ որ նրա համար դուք եք օգտագործում այն ամենը, ինչ շրջապատում է նրան։ Մի՞թե դուք բացարձակ իշխանություն չունեք նրան ձևավորելու ձեր ցանկության համեմատ։ Չէ՞ որ նրա աշխատանքը, խաղերը, հաճույքը, վիշտը ամբողջովին ձեր ձեռքում են գտնվում՝ առանց նրա գիտության։ Անշուշտ, նա պետք է անի այն, ինչ որ կամենում է, բայց պետք է կամենա միայն այն, որ դուք եք կամենում. նա ոչ մի քայլ չպետք է անի, եթե դուք այդ չեք նախատեսել, նա բերանը չպետք է բաց անի, եթե դուք չգիտեք, թե ինչ պետք է ասի։

Այդ ժամանակ է, որ երեխան իր տարիքի համեմատ կարող է ձեռնարկել մարզելու իր մարմինը՝ առանց միտքը քթացնելու. այնժամ կտեսնեք, որ փոխանակ իր հնարագիտությունը սրելու՝ խուսափելու համար տաղտկալի իշխանությունից, նա կսկսի իր շրջապատից վերցնել միայն այն, ինչ անհրաժեշտ է իր ներկայի բարեկեցության համար։ Ահա այն ժամանակ դուք կզարմանաք նրա նուրբ հնարագիտությամբ, որով նա յուրացնում է այն ամենը, ինչ գտնվում է իր

հաստղության սահմաններում և իսկապես օգտվում դրանցից՝ առանց կողմնակի օգնության։

Այսպիսով, երբ դուք նրան ազատ կթողնեք գործադրելու իր սեփական կամքը, բնավ չեք հրահրի նրա քմահաճույքները։ Եթե երեխան կատարում է սոսկ այն, ինչ նրան ձեռնտու է, շուտով կանի միայն այն, ինչ անհրաժեշտ է, և թեկուզ նրա մարմինը անվերջ շարժման մեջ լինի, ինչքան ժամանակ իմդիրը նրա անմիջական ու շոշափելի շահին է վերաբերում, դուք կտեսնեք, թե ինչպես նրա դատողությունը ավելի լավ ու իր տարիքին ավելի նպատակահարմար ձևով է զարգանում, քան զուտ վերացական ուսումնասիրությունների միջոցով։

Այսպիսով, նկատելով, որ դուք երբեք չեք հակված նրան հակառակվելու, լիովին վստահելով ձեզ և չունենալով ոչ մի գաղտնիք ձեզնից թաքցնելու, երեխան ձեզ չի խաբի կամ չի ստի, առանց վախենալու կգուցաբերի իրեն այնպես, ինչպես որ է։ Դուք հանգիստ կարող եք ուսումնասիրել երեխային և պատրաստել այն ամենը, ինչ վերաբերում է նրա դասերին՝ առանց այդ բանն զգացնելու նրան։

Նա այլևս ձեր սովորություններին չի հետևի նախանձոտ հետաքրքրասիրությամբ և ձեր սխալները տեսնելիս թաքուն հաճույք չի ղգա։ Այն անպատեհությունը, որ այսպիսով կանխում ենք, շատ մեծ է։ Երեխաների առաջին մտահոգությունների մեկը, ինչպես ասել եմ, ուսուցիչների թույլ կողմը որսալն է։ Այդ հակումը տանում է դեպի չարություն, բայց չի բխում դրանից, այլ իրենց ճնշող լծից ազատվելու պահանջից։ Նրանք փորձում են թոթափել այդ լուծը, և այդ խմաստով ուսուցիչների սխալները հարմար միջոց են ծառայում նրանց ձևրքին։ Այնուհանդերձ, մարդկանց մասին սոսկ իրենց թերություններով դատելը դառնում է սովորություն, իսկ նրանց սխալները գտնելը՝ հաճելի։ Պարզ է, որ էմիլի սրտում այս մոլության համար նույնպես տեղ չկա։ Ոչ մի շահ չունենալով իմ սխալները գտնելու մեջ, չի որոնի դրանք և սակավ հակված կլինի ուրիշների սխալները փնտրելու։

Այս բոլոր գործնական աշխատանքները դժվարքին են թվում, որովհետև չենք փորձում կիրառել կյանքում. սակայն իրականում բոլորովին դժվար չպետք է լինեն։ Իրավունք

ունենք ենթադրելու, որ ձեր ընտրած գործի համար դուք ժամանակ եք բոլոր անհրաժեշտ գիտելիքներով. պետք է հավատալ, որ դուք ճանաչում եք մարդկային սրտի բնական զարգացման ընթացքը, որ դուք կարող եք ուսումնասիրել մարդուն և անհատին ու նախօրոք գիտեք, թե ձեր սանին ներկայացրած և նրա տարիքին համապատասխանող իրերից որին կձգտի նա։ Իսկ ունենալ միջոցներ և լավ իմանալ նրանց գործածման ձևը, մի՞թե դրության տեր լինել չի նշանակում։

Դուք ինձ կարող եք հակադրել երեխաների քմահաճույքը, բայց իրավացի չեք լինի։ Երեխաների քմահաճույքը երբեք բնության գործը չէ, այլ՝ վատ դաստիարակության հետևանք։ Անդիրն այն է, որ նրանք կա՛մ ենթարկվել են, կա՛մ հրամայել։ Իսկ ես հարյուր անգամ կրկնել եմ, որ պիտանի չէ ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը։ Չեր սանը կունենա միմիայն այն քմահաճույքները, որ դուք եք թելադրում նրան։ Արդար կլիներ, որ դուք կրեիք ձեր սխալների պատիժը։ Բայց դուք կհարցնեք, թե ինչպես ուղղել այդ սխալները։ Դրան կարելի է հասնել լավ ղեկավարությամբ ու մեծ համբերատարությամբ։

Պատահեց, որ ինձ խնդրեցին մի քանի շաբաթ խնամել մի երեխայի, որը սովոր էր ոչ միայն իր սեփական կամքը կատարել, այլև այդ կամքը ուրիշին թելադրել. ուստի և շատ քմահաճ էր։ Առաջին իսկ օրից, իմ հաճոյակատարությունը փորձելու համար, ցանկացավ կեսգիշերին վեր կենալ։ Իմ ամենախոր քնի ժամանակ անկողնից ցատկում է հատակին, հագնվում ու ինձ ձայն տալիս։ Ես վեր եմ կենում և մոմը վառում։ Նրա ցանկացածն էլ հենց այդ էր։ Քառորդ ժամից հետո նրա քունը տանում է, նա կրկին պառկում է ու քնում, զոհ այդ փորձից։ Երկու օրից հետո նա այդ բանը կրկնում է նույն հաջողությամբ, իսկ ես անհամբերության ոչ մի նշույլ դույլ չեմ տալիս։ Երբ քնելուց առաջ ինձ համբուրեց, ես նրան ուսացի բոլորովին լուրջ ձայնով. «Փոքրիկ բարեկա՛մս, այս ամենը շատ լավ է, բայց այլևս չկրկնես»։ Այս խոսքը նրա հետաքրքրությունը շարժեց ու հաջորդ օրն իսկ, ցանկանալով տեսնել, թե ես ինչպես կհամարձակվեմ նրա կամքը չկատարել, միևնույն ժամին վեր կացավ ու դարձյալ ինձ ձայն տվեց։ Ես հարցին, թե ինչ է կամենում, պատասխանեց, որ չի կարո-

դանում քնել։ «Ինչ անենք», պատասխանեցի ու տեղիցս չշարժվեցի։ Նա խնդրեց, որ մոմը վառեմ։ «Ինչի՞ համար», հարցրի, դարձյալ չշարժվելով։ Իմ այս լակոնական ոճը նրան անհանգստություն պատճառեց։ Նա խարխափելով սկսեց որոնել հրահանն ու այնպես ձևացրեց, որ իբր թե կրակ է վառում։ Ես հազիվ էի ծիծաղս զսպում, լսելով, թե ինչպես նա մատնիները իրար է խփում։ Վերջապես համոզվելով, որ ոչինչ չի ստացվում, հրահանը մոտեցրեց աննկողնիս. ես նրան ասացի, որ այդ ինձ հարկավոր չէ, և շուռ եկա մյուս կողմը։ Այն ժամանակ նա սկսեց գժի պես վազվզել սենյակում, աղաղակել, երգել, աղմկել, խփելով սեղանին ու աթոռներին. թեև աշխատում էր հարվածները չափավորել, բայց շարունակում էր ուժգին աղաղակել, հույս ունենալով այդպիսով անհանգստություն պատճառել ինձ։ Բայց այդ բոլորը ապարդյուն էր անցնում, և ես նկատեցի, որ նա, հույսը դնելով գեղեցիկ հորդորների կամ բարկության վրա, բոլորովին չէր սպասում այսպիսի սառնարյունության։

Բայց և այնպես, որոշած լինելով հաղթահարել իմ համբերությունը իր համառությամբ, նա շարունակեց աղմկել այնպիսի հաջողությամբ, որ, վերջապես, ես չդիմացա և, զգալով, որ անտեղի ելույթով ամեն ինչ կփչացնեմ, որոշեցի այլ կերպ վարվել։ Առանց որևէ խոսք ասելու, անկողնից վեր կացա, գնացի հրահանը վերցնելու, բայց չգտա. նրանից ուզեցի, իսկույն տվեց՝ ինձ վերջապես հաղթահարած լինելու հրճվանքից խայտալով։ Հրահանի կրակով մոմը վառեցի. փոքրիկ շարաճճու ձեռքից բռնելով, ամենայն հանդարտությամբ, տարա հարևան սենյակը, որի լուսամուտն ու փեղկերը ամուր փակված էին, և որտեղ ոչինչ չկար կոտրելու։ Նրան թողեցի այնտեղ, մթության մեջ, ապա դուրս վրայից բանալիով փակելով, վերադարձա իմ սենյակը՝ առանց մի խոսք ասելու նրան։ Պարզ է, թե սկզբում ինչպիսի աղմուկ բարձրացավ, որին ես սպասում էի, և ամենևին չհուզվեցի։ Վերջապես, աղմուկը դադարեց, լսում եմ, որ պատրաստվում է պառկելու. հանգստանում եմ։ Հաջորդ օրը, արևածագին, մտնում եմ սենյակը, տեսնում եմ՝ փոքրիկ ըմբոստը պառկել է բալմոցին ու թաղվել այնպիսի խոր քնի մեջ, որի կարիքը

անկասկած նա շատ էր զգում այդքան մեծ հոգնությունից հետո։

Սակայն, խնդիրը դրանով չվերջացավ։ Մայրն իմացավ, որ երեխան գիշերվա երկու երրորդ մասն անց էր կացրել ոչ իր սենյակում։ Հետևանքն այն եղավ, որ ամեն ինչ փչացավ. երեխան համարյա մեռած համարվեց։ Տեսնելով, որ ինձնից վրեժ լուծելու առիթը ներկայացել է, հիվանդ ձևացավ, առանց մտածելու, որ դրանից ոչինչ չէր շահի։ Կարծում էին, թե նա մահվան դուռն է հասել. բժիշկ կանչեցին, սակայն, մոր չար բախտից, բժիշկը կատակասեր մարդ էր, որը, հեգնելու համար նրա վախը, է՛լ ավելի էր գրգռում այն, մինչդեռ իմ ականջին փսփսաց. «Թույլ՛ք, որ ես իմ խմացածն անեմ, խոստանում եմ, որ երեխան երկար ժամանակ այլևս չի ցանկանա հիվանդանալ»։ Արդարև, նա նշանակեց դիետա, մի շարք դեղեր և արգելեց սենյակից դուրս գալ։ Ես խղճում էի երեխայի մորը. բացի ինձնից, ամբողջ շրջապատը խաբում էր նրան։ Իսկ ինձ նա ատեց, որովհետև ես նրան չէի խաբում։

Բավական կոպիտ հանդիմանություններ անելուց հետո, տիկինն ինձ ասաց, թե իր տղան փափկասուն է, թե նա ընտանիքի միակ ժառանգն է, որին ամեն գնով պետք է պահպանել, և թե ինքը չէր ցանկանա, որ երեխայի կամքին հակառակ գնային։ Այս կետում ես նրա հետ լիովին համաձայն էի, բայց նրա տեսակետով՝ կամքին հակառակ գնալ նշանակում էր, որ երեխայի կամքը կատարվեր ամեն ինչում։ Հասկացա, որ մոր հետ էլ պետք էր վարվել այնպես, ինչպես տղայի հետ։ «Տիկի՛ն,— ասացի նրան սառնորեն,— ես չգիտեմ, թե ինչպես են դաստիարակում ժառանգին ու չեմ էլ ցանկանում գիտենալ. վարվեցե՛ք այնպես, ինչպես կամենում եք»։ Մի որոշ ժամանակ նրանք դեռևս իմ կարիքն ունեին, այդ պատճառով էլ հայրը մեզ հաշտեցրեց. մայրը դաստիարակին գրեց փութացնել իր վերադարձը. իսկ երեխան, տեսնելով, որ իմ քունը խանգարելով ու հիվանդանալով ոչինչ չի շահում, որոշեց հանգիստ քնել և առողջ լինել։

Կարող եք պատկերացնել, թե այդ փոքրիկ բռնակալը իր քմահաճույքներով ինչքան ֆ տանջել իր ուսուցչին, որովհետև դաստիարակությունը կատարվում էր մոր ներկայու-

թյամբ, իսկ մայրը ցանկանում էր, որ միշտ տղայի կամքը կատարվեր։ Որ ժամին ցանկանար դուրս գալ, պետք էր պատրաստ լինել նրան առաջնորդելու կամ ավելի ճիշտ՝ նրան հետևելու, և նա միշտ այնպիսի ժամանակ էր ընտրում, երբ դաստիարակը ամենից շատ էր զբաղված։ Նա կամեցավ նույն բռնությունն ինձ վրա էլ գործադրել և, որպես փոխհատուցում գիշերը հանգիստ թողնելու համար, հանգստի օրը տանջել ինձ։ Ես հաճույքով ամեն ինչ տանում էի և նրա աչքերի արտահայտությունից նկատում, որ դուր էի գալիս նրան. դրանից հետո, երբ խնդիր եղավ բուժել նրա քմահաճույքները, ես ուրիշ կերպ վարվեցի։

Նախ և առաջ պետք էր այնպես անել, որ նա մի սխալ գործեր. դա առանձնապես դժվար չէր։ Գիտենալով, որ երեխաները միայն ներկայի մասին են մտածում, ես իմ կողմն ունեցա կանխատեսության առավելությունը։ Տանը նրա համար կազմակերպեցի մի խաղ, որը, ինչպես ինձ հայտնի էր, նրան շատ էր դուր գալիս, և նրա ամենահափշտակված րոպեին առաջարկեցի դուրս գալ զբոսնելու։ Նա մերժեց, ես պնդեցի, իսկ նա ինձ չենթարկվեց, պետք եղավ տեղի տալ, ու նա ինքն իր մեջ ուրախացավ այս հաղթանակի առթիվ։

Հաջորդ օրը հերթն իմն էր։ Նա ձանձրանում էր, իսկ ես, ընդհակառակն, ցույց էի տալիս, որ չափազանց զբաղված եմ։ Նրան էլ հենց այդ էր պետք։ Նա ցանկացավ խանգարել իմ գործը, որպեսզի նրան իսկույն զբոսնելու տանեմ։ Ես մերժեցի. նա համառեց։ «Ո՛չ,— ասացի նրան,— շարունակ ձեր կամքը կատարելով, դուք ինձ սովորեցրիք, որ ես էլ իմ կամքը կատարեմ, ես չեմ ուզում դուրս գալ»։ — «Լավ,— պատասխանեց երեխան,— ես մենակ կգնամ»։ — «Ինչպես ցանկանում եք»։ Ես շարունակեցի իմ զբաղմունքը։

Նա հագնվեց, մի քիչ մտահոգված, որ ես նրան չէի խանգարում և ես էլ չէի հագնվում։ Դուրս գալու պահին մոտեցավ ինձ հրաժեշտ տալու, ես սիրով ընդունեցի. նա ցանկացավ ինձ անհանգստացնել, պատմելով իր գնալիք տեղերի մասին։ Նրան լսելիս՝ թվում էր, թե աշխարհի ծայրն է գնալու։ Առանց վրդովվելու ես նրան բարի ճանապարհ մաղթեցի։ Նա ավելի հուզվեց, բայց իրեն չկորցրեց ու, պատրաստվելով դուրս

գնալ, ծառային հրամայեց հետևել իրեն։ Սպասավորը նախազգուշացված լինելով, պատասխանեց, որ զբաղված է իմ հանձնարարությունները կատարելով, որ ինքը ավելի չուտ ինձ պետք է ենթարկվի, քան նրան։ Այս հարվածը, անշուշտ, անսպասելի էր երեխայի համար։ Ինչպե՞ս, ուրեմն միայնակ դուրս գա զբոսանքի, մինչդեռ իրեն բոլորից ավելի կարևոր անձ էր կարծում. չէ՞ որ երկինքն ու երկիրը շահագրգռված են նրա պահպանումով։ Բայց և այնպես, սկսում է զգալ իր տկարությունը,-հասկանում է, որ մենակ կմնա այնպիսի մարդկանց մեջ, որոնք նրան չեն ճանաչում, և նախօրոք տեսնում է այն վտանգները, որոնց կարող է ենթարկվել։ Բայց համառությունը դեռևս տիրում է նրան։ Ահա նա սկսում է իջնել սանդուղքից՝ դանդաղ ու խիստ շփոթված։ Վերջապես փողոց է դուրս գալիս՝ մի քիչ մխիթարված այն մտքով, որ եթե իրեն հետ մի վատ բան պատահի, պատասխանատվությունը կընկնի ինձ վրա։

Ես էլ այդ էի սպասում։ Ամեն ինչ նախապես պատրաստված էր, և որովհետև դա մի տեսակ հրապարակային ներկայացում պետք է լիներ, ես ստացել էի հոր համաձայնությունը։ Հազիվ երեխան փողոցում մի քայլ է անում, ամեն կողմից խոսքեր է լսում իր հասցեին. «Հարևա՛ն, այս գեղեցիկ պարոնը ու՞ր է գնում մեն-մենակ, կարող է ճանապարհին մոլորվել, նրան կխնդրեմ գալ մեր տունը»։ — «Հարևանուհի՛, այդպիսի բան չանեք։ Չե՞ք տեսնում, մի անառակ տղա է, որին հոր տանից դուրս են արել, որովհետև անպետքի մեկն է։ Չպետք է պահել ստահակներին, թո՛ղ գնա, ուր ուզում է»։ — «Համենայն դեպս, թո՛ղ աստված պահի, ցավալի կլինի, եթե նրան որևէ դժբախտություն պատահի»։ Մի քիչ այն կողմ նա հանդիպում է համարյա իրեն հասակակից մի քանի ստահակների, որոնք սկսում են նրան ծաղրել ու նեղացնել։ Ինչքան առաջ է գնում, այնքան տհաճությունների է հանդիպում։ Մենակ, անպաշտպան, նա զգում է, որ բոլորի խաղալիքն է դարձել, և մեծ զարմանքով նկատում է, որ իր ուսադրիներն ու ոսկեզօծ արդուզարդը ոչ մի տպավորություն չեն թողնում շրջապատի վրա։

Սակայն իմ բարեկամներից մեկը, որին երեխան չէր ճա-

նաչում և որին ես հանձնարարել էի հսկել նրա վրա՝ առանց ուշադրությունը գրավելու, քայլ առ քայլ հետևում էր և մոտեցավ նրան, հենց որ հարմար առիթը ներկայացավ։ Այս դերը, որ նմանվում է «Պուրսոնյակ»-ի մեջ Աբրիգանիի դերին, շատ դժվար էր կատարել, բայց բարեկամս մեծ հաջողությամբ տարավ։ Առանց երեխային վախեցնելու, ահաբեկելու, նա մեծ հմտությամբ նրան հասկացրեց, որ իր արածը շատ անխոհեմ արարք էր, և կես ժամ չանցած երեխային ետ բերեց՝ ամոթահար, խոնարհ ու շփոթված, աչքերը գետնին հառած։

Այդ դժբախտ ելույթը ավարտվեց նրանով, որ հենց այն միջոցին, երբ տուն էր մտնում, հայրը ցած էր իջնում աստիճաններից՝ դուրս գալու համար. որդուն հանդիպեց սանդուղքի վրա։ Նա պարտավոր էր ասել հորը, թե ո՞րտեղից էր գալիս և ինչո՞ւ ես նրան չեմ ընկերակցում [1]։ Եթե երեխան կնախընտրեր հարյուր ոտնաչափ գետնի տակ մտնել։ Առանց երկարաբարակ հանդիմանություններ կարդալու, հայրը, հակառակ իմ սպասածին, շատ խիստ ձայնով ասաց նրան. «Երբ ուզում ես տանից դուրս գալ մենակ զբոսնելու, ազատ ես, բայց որովհետև ես չեմ ցանկանում, որ իմ տանը մի շրջմոլիկ բնակվի, ուրիշ անգամ, այսպիսի դեպքում, բարի եղիր այլևս տուն չվերադառնալ»։

Իսկ ես նրան ընդունեցի առանց հանդիմանության և առանց հեգնանքի, բայց մի քիչ լուրջ դեմքով. ու որպեսզի չկասկածի, թե այս բոլորը սարքովի է եղել, այդ օրը նրան չտարա զբոսանքի։ Հաջորդ օրը հաճույքով նկատեցի, որ հաղթական տեսքով ինձ հետ անցնում էր այն մարդկանց կողքով, որոնք նախորդ օրը նրա վրա ծիծաղել էին մենակ լինելու համար։ Պարզ է, որ դրանից հետո երեխան այլևս ինձ չսպառնաց մենակ դուրս գալ զբոսանքի։

Այդ և նմանօրինակ միջոցներով, այն կարճ ժամանակամիջոցում, երբ ես նրա հետ էի, ինձ հաջողվեց նրան ստիպել կատարելու այն, ինչ ես էի ցանկանում, առանց հրամայելու,

---

[1] Այսպիսի դեպքերում վստահ կարելի է երեխայից պահանջել ճշմարտությունը, որովհետև նա լավ է հասկանում, որ ոչինչ չի կարելի թաքցնել, իսկ եթե ճիշտը չասի, ստուն խայտառակ կդառնա։

առանց արգելելու, առանց հորդորի, առանց ավելորդ դասերով նրան ձանձրացնելու։ Այդպիսով, քանի դեռ ես խոսում էի, նա գոհ էր, իսկ իմ լռությունը նրան վախեցնում էր. նա հասկանում էր, որ այստեղ մի ինչ-որ բան կա, և միշտ դաս էր առնում ոչ թե ինձնից, այլ իրենից և իրողություններից։ Բայց, վերադառնանք բուն խնդրին։

Սոսկ բնության ղեկավարությամբ կատարվող այս հարատև մարզանքները, մարմինն ուժեղացնելով հանդերձ, չեն բթացնում միտքը, այլ, ընդհակառակն, առաջացնում են դաստողության այն միակ տեսակը, որին ընդունակ է մանկական տարիքը, և որն ամենաօգտակարն է բոլոր հասակների համար։ Նա մեզ սովորեցնում է նպատակահարմար ձևով ճանաչել մեր ուժերը գործադրելու ձևը, մեր մարմնի հարաբերությունները շրջապատի իրերի հետ, մեր տրամադրության տակ գտնվող և մեր զգայարաններին հարմարվող բնական միջոցների կիրառման ձևը։ Չկա ավելի մեծ տխմարություն, քան այն, երբ երեխան, մեծանալով անընդհատ մի սենյակում ու մոր խնամքի տակ, չիմանալով, թե ինչ բան է քաշն ու դիմադրությունը, կամենում է ծառը պոկել կամ ժայռը բարձրացնել։ Առաջին անգամ, երբ ծնևից դուրս եկա, կամենում էի հասնել քառասմբակ վազող ձիուն, քարեր էի նետում Սալև լեռանը, որը երկու մղոն հեռու էր ինձնից։ Ես խաղալիք էի դարձել գյուղի երեխաների համար, որոնք ինձ դիտում էին որպես մի կատարյալ ապուշի։ Տասնութ տարեկանում փիլիսոփայության ուսումնասիրող մարդիկ սովորում են, թե ինչ է լծակը։ Գյուղում չեք գտնի տասներկու տարեկան մի երեխայի, որը չկարողանա նույնքան վարժ կերպով գործածել լծակը, որքան Ակադեմիայի առաջին մեքենագետը։ Այն դասը, որ դպրոցականներն ստանում են իրարից դպրոցի բակում, նրանց համար հարյուր անգամ ավելի օգտակար է, քան երբևիցե դասարանում լսածները։

Նայեցե՛ք կատվին, որ առաջին անգամ սենյակ է մտնում։ Նա ման է գալիս, նայում է, հոտոտում, մի րոպե հանգիստ չի մնում, ոչնչի չի վստահում, մինչև ամեն ինչ չզննի, ամեն ինչ չճանաչի։ Այդպես է վարվում քայլել սկսող, այսպես ասած, աշխարհ մտնող երեխան։ Ամբողջ տարբերությունը

կայանում է նրանում, որ տեսնելու ընդհանուր ունակությանը, որ ունեն և՛ երեխան, և՛ կատուն, առաջինը որպես օժանդակ միջոց գործ է ածում բնությունից ստացած ձեռքերը, երկրորդը՝ սուր հոտառությունը։ Շնորհիվ մարմնի այս կազմվածքի, նայած ինչպես է մշակված՝ լա՞վ թե վատ, երեխան լինում է ճարպիկ կամ դանդաղաշարժ, թանձրամիտ կամ ուշիմ, անխոհեմ կամ խոհեմ։

Ուրեմն, մարդու առաջին բնական շարժումները ծառայում են շրջապատի բոլոր իրերի հետ չափվելու և իր տեսած յուրաքանչյուր իրի մեջ փորձելու այն բոլոր զգայուն հատկությունները, որոնք առնչվում են իր հետ։ Նրա առաջին ուսումնասիրությունը մի տեսակ փորձառական ֆիզիկա է՝ իր ինքնապահպանման վերաբերյալ, որից նրան շեղում են տեսական ուսուցումներով, նախքան այս աշխարհում իր տեղը գտնելը։ Քանի դեռ մարդու նուրբ ու ճկուն զգայարանները կարող են հարմարվել այն իրերին, որոնց վրա պետք է ներգործեն, քանի դեռ նրա՝ դեռևս մաքուր զգացումները զերծ են ցնորքներից, հարմար առիթ է թե՛ մեկը և թե՛ մյուսը գործադրելու դրանց հատուկ աշխատանքի մեջ, սովորելու ճանաչել իրերի ու մեր միջև եղած նրբին հարաբերությունները։ Որովհետև մարդկային իմացականության հիմքը զգացողությունն է, մարդու առաջին դաստիարակությունը զգացողական դաստիարակությունն է։ Նա է որպես հիմք ծառայում մտավոր զգացողությանը։ Փիլիսոփայության մեր առաջին ուսուցիչները մեր ոտքերը, մեր ձեռքերը, մեր աչքերն են։ Այս բոլորը փոխարինել գրքերով՝ նշանակում է ոչ թե դաստիարակություն ձեռք բերել, այլ ուրիշի դաստիարակությունը մեր օգտին ծառայեցնել, մեզ սովորեցնել շատ բանի հավատալ և ոչինչ չգիտենալ։

Որևէ արհեստ կյանքի մեջ կիրառելու համար նախ պետք է անհրաժեշտ գործիքներ ձեռք բերել. իսկ այդ գործիքները օգտակար կերպով գործածելու համար պետք է դրանք բավականաչափ ամուր պատրաստել, որպեսզի ավելի երկար դիմանան։ Ուրեմն, մտածել սովորելու համար պետք է գործածել մեր անդամները, զգայարանները, գործարանները, որոնք մեր իմացականության գործիքներն են, և այդ գործիքներից առավելագույն չափով օգտվելու համար անհրա-

ժեշտ է, որ դրանք հայթայթող մեր մարմինը լինի տոկուն, ուժեղ և առողջ։ Այսպիսով, մարդու իսկական դատողությունը կազմվում է ոչ թե մարմնից անկախ, այլ մարդու առողջ կազմվածքն է, որ մտքի գործողությունները դարձնում է հեշտ ու ապահով։

Ցույց տալով, թե ինչի վրա պետք է գործածել մանկության երկարատև ազատ ժամանակը, ես մտնում եմ այնպիսի մանրամասնությունների մեջ, որոնք կարող են ծիծաղելի թվալ։ «Չվարճալի՞ դասեր են ձեր դասերը,— կասեն ինձ,— որոնք ընկնելով հենց ձեր սեփական քննադատության տակ, սահմանափակվում են սովորեցնելով այն, ինչ ոչ ոք կարիք չունի սովորելու։ Ի՞նչ միտք ունի ժամանակ վատնել այնպիսի գիտելիքների վրա, որոնք միշտ իրենք իրենց են գալիս, առանց հոգս ու նեղություն պատճառելու մեզ։ Այդ ո՞ր տասներկու տարեկան երեխան չգիտի այն ամենը, որ դուք նոր ուզում սովորեցնել ձեր սանին և, մանավանդ, այն ամենը, որ ուսուցիչներն են սովորեցրել նրանց։

Պարոննե՛ր, դուք սխալվում եք. ես իմ սանին սովորեցնում եմ մի այնպիսի երկար և ծանր աշխատանք պահանջող արվեստ, որը, վստահաբար, չեն սովորում ձեր սանները։ Դա անգիտակ լինելն է, որովհետև նա, ով գիտի միայն այն, ինչ գիտի, շատ չնչին բան գիտի։ Դուք գիտություն եք ուսուցանում, դա շատ լավ է. իսկ ես զբաղվում եմ այն միջոցներով, որոնցով կարելի է ձեռք բերել այն։ Պատմում են, որ վենետիկցիները մի օր Սուրբ Մարկոսի թանկարժեք իրերը մեծ հանդիսավորությամբ ցույց էին տալիս Իսպանիայի դեսպանին։ Վերջինս, գովասանքի փոխարեն, սեղանների տակը նայելով, ասաց. «Qui non c'é la radice» *։ Ես չեմ ճանաչում իր աշակերտի գիտելիքները ցուցադրող մի որևէ ուսուցչի, որին չփորձվեմ նույնն ասել։

Բոլոր նրանք, ովքեր ուսումնասիրել են մեր նախնիների ապրելակերպը, մարմնամարզությանն են վերագրում մարմնական ու հոգեկան այն ուժը, որը նրանց այնքան զգալիորեն տարբերում է ժամանակակից մարդկանցից։ Այնպես,

* «Այստեղ արմատներ չկան»— Ե. Բ.

ինչպես Մոնտեյնը պաշտպանում է այդ կարծիքը, ցույց է տալիս, որ նա էլ լրիվ համոզված էր դրանում։ Նա այդ մասին խոսում է անվերջ և բազմաթիվ ձևերով։ Խոսելով երեխայի դաստիարակության մասին, Մոնտեյնը ասում է, որ նրա հոգին զորացնելու համար պետք է ամրապնդել մկանները. երեխային աշխատանքի վարժեցնելով, սովորեցնում ենք դիմադրել ցավին։ Երեխան պետք է դիմանա մարմնամարզական ծանր վարժություններին, որպեսզի կարողանա տոկալ օրգանիզմի հիվանդություններին ու բոլոր ցավերին։ Իմաստուն Լոքը, բարի Ռոլենը, գիտուն Ֆլյորին, պեդանտ դը Կրուզասը, որոնք այնքան տարբեր տեսակետներ ունեին բոլոր խնդիրների վերաբերյալ, համաձայնվում էին այս միակ կետում, այն է՝ լավ մարզել երեխայի մարմինը։ Այդ նրանց ամենաարժեքավոր պատգամն է, բայց և է ու կմնա ամենից շատ անտեսվածը։ Ես արդեն բավական խոսել եմ դրա կարեվորության մասին. և որովհետև այդ մասին չի կարելի ավելի լավ պատճառներ ու ավելի խելոք կանոններ շարադրել, քան ինչ որ կա Լոքի գրքում, ես կբավարարվեմ ընթերցողին հանձնարարելով այդ գիրքը, ինձ թույլ տալով ավելացնել մի քանի դիտողություններ։

Զարգացող մարմնի անդամները հագուստի մեջ պետք է շատ ազատ վիճակում լինեն. ոչինչ չպետք է խանգարի նրանց շարժումներին ու աճմանը. հագուստի ոչ մի մասը չպետք է լինի նեղ, մարմնին կպած ո՛չ մի փաթաթան։ Ֆրանսիական հագուստը, որ չափահաս մարդկանց համար ճնշող ու հակառողջապահական է, վնասակար է հատկապես երեխաներին։ Մարմնի հյութերը, որոնք, անշարժության մատնվելով, շրջանառություն չեն կատարում, նստակյաց ու անգործ կյանքի հետևանքով է՛լ ավելին են լճանում, նեխվում են ու ընդախտ առաջացնում, մի հիվանդություն, որը հետզհետե ավելի հաճախակի է հայտնվում մեզ մոտ, այնինչ մեր նախնիքը բոլորովին անծանոթ էին դրան, շնորհիվ իրենց հագուստների և ապրելակերպի։ Հուսարական հագուստը փոխանակ այս անպատեհությունը վերացնելու, ընդհակառակն, ավելացնում է. թեև դա երեխային ազատում է մի քանի փաթաթաններից, սակայն, դրա փոխարեն, սեղմում է նրա

մարմնի բոլոր մասերը։ Ամենից լավը երեխային բաճկոնակով թողնելն է՝ որքան կարելի է երկար ժամանակով, ապա հագցնել շատ լայն հագուստներ ու երբեք չսեղմել նրանց իրանը, որը սոսկ այլանդակում է մարմինը։ Նրանց մարմնական ու հոգեկան համարյա բոլոր թերությունները միևնույն պատճառից են ծագում՝ երեխաներին ցանկանում են չափահաս մարդ դարձնել ժամանակից առաջ։

Աշխարհում գոյություն ունի երկու տեսակ գոսյն՝ ուրախ և տխուր։ Առաջիններըր երեխաներին ավելի հաճույք են պատճառում ու ավելի սազոմ. իսկ ինձ համար անհասկանալի է, թե ինչու այս հարցում նկատի չեն առնվում բնական պատշաճություններր։ Եվ քանի որ նրանք ավելի շատ ուշադրություն են դարձնում կտորի ճոխության վրա, նրանց սրտերը ենթարկվում են պերճանքին ու հասարակական քմայքին. իսկ այդ ճաշակը, անշուշտ, ինքն իրեն չի առաջացել։ Դժվար է ասել, թե հագուստների ընտրությունն ու այդ ընտրության շարժառիթները որքան են ազդում դաստիարակության վրա։ Ոչ միայն կուրացած մայրերն են երեխաներին որպես նվեր խոստանում զանազան զարդարանքներ, այլև կան այնպիսի անխելք դաստիարակներ, որոնք, որպես պատիժ, երեխաներին սպառնում են նրանց ավելի կոպիտ ու ավելի պարզ հագուստ հագցնել՝ «Եթե լավ չսովորեք և ձեր դպեստները լավ չպահեք, ձեզ կհագցնեն այս գյուղացի տղայի նման»։ Այդ միևնույնն է, թե նրանց ասեն. «Լավ իմացեք, մարդն իր հագուստով է մարդ, ձեր արժեքը միայն հագուստի մեջ է»։ Էլ ինչո՞ւ զարմանալ, որ այսքան իմաստուն դասերից օգտվում են պատանիները, որոնք միայն պճնանքի հետևից են ընկնում և մարդու արժանիքը միայն արտաքինից են դատում։

Եթե ինձ վիճակվեր վերադաստիարակել այդպիսի մի երես առած երեխայի, ես այնպես կանեի, որ նրա ամենաշքեղ հագուստը ամենաանհարմարը լիներ, որ նա նեղվեր դրա մեջ, իրեն զգար միշտ անհանգիստ ու կաշկանդված հազար ձևով. ես այնպես կանեի, որ այդ հագուստի շքեղության հանդեպ չքնար ազատությունն ու հրճվանքը։ Եթե նա ցանկանար ավելի պարզ հագնված երեխաների հետ խաղալ, նույն րոպեին

ամեն խաղ դադարեր, ամեն ինչ անհետանար։ Վերջապես, ես նրան այնքան կձանձրացնեի, կհագեցնեի իր պերճանքով, այնքան գերի կդարձնեի իր ոսկեճամուկ հագուստին, որ դա նրա կյանքին փորձանք դառնար, և նա նվազ երկյուղով նայեր ամենամռայլ զնդանին, քան իր զգեստի արդուզարդին։ Քանի դեռ մենք երեխային չենք ենթարկել մեր նախապաշարումներին, նրա առաջին ցանկությունը կլինի՝ իրեն թողնել ազատ, իր կամքին։ Ամենապարզ, ամենահարմար հագուստը, որ նրան ամենից քիչ կկաշկանդի, կդառնա նրա ամենաթանկարժեք զգեստը։

Մարմնի մի ունակությունը հարմար է շարժումներին, մի ուրիշը ավելի հարմար է անգործունեությանը։ Վերջինը, մարմնի հյութերին թույլ տալով հոսել հավասար ու միատեսակ, այն պահպանում է օդի փոփոխությունների ազդեցությունից, իսկ մյուսը, անդադար մարմինը տարուբերելով շարժման և հանգստի, ջերմության ու ցրտի միջև, նրան ընտելացնում է օդի այդ փոփոխություններին։

Այստեղից հետևում է, որ փակ ու նստակյաց կյանքի սովոր մարդիկ ամեն ժամանակ պետք է տաք հագնվեն՝ մարմինը միօրինակ ջերմաստիճանի մեջ պահելու համար, որը համարյա միևնույնը պետք է լինի տարվա բոլոր եղանակներին ու օրվա բոլոր ժամերին։ Իսկ նրանք, ովքեր անընդհատ ներս ու դուրս են անում՝ քամու, անձրևի, արևի տակ, որոնք ավելի շատ շարժումներ են անում ու ժամանակի մեծ մասը անց են կացնում բաց օդում, միշտ էլ պետք է թեթև հագնված լինեն, որպեսզի ընտելանան կլիմայական փոփոխություններին, օդի բոլոր ջերմաստիճաններին։ Թե՛ մեկին և թե՛ մյուսին իմ խորհուրդն է՝ երբեք հագուստը չփոխել եղանակի համաձայն։ Այս կլինի իմ էմիլի մշտական սովորությունը։ Սրանով ես չեմ ուզում ասել, որ նա ամառը ձմեռվա հագուստ է հագնելու նստակյաց մարդկանց նման, այլ ձմեռը՝ ամառվա զգեստներ աշխատող մարդկանց նման։ Այդպես էր անում Նյուտոնը իր ամբողջ կյանքում և այդպիսով ապրեց մինչև ութսուն տարեկան հասակը։

Տարվա որևէ եղանակին հաղվադեպ պետք է գլխարկ կրել կամ բնավ չկրել։ Հին եգիպտացիները գլուխները միշտ բաց

էին պահում, իսկ պարսիկները ծածկում էին մեծ խուլրեր և մինչև այսօր էլ փաթաթվում են երկար չալմաներով, որոնց գործածությունը, ըստ Շարդենի, թելադրված է տեղի կլիմայական պայմաններով։ Ես մի ուրիշ առիթով նշել եմ այն տարբերությունը, որ նկատել էր Հերոդոտը պարսիկների և Եգիպտացիների գանգերի միջև՝ մի ռազմաճակատում։ Քանի որ անհրաժեշտ է, որ գլխի ոսկորները ավելի ամուր ու ավելի հաստ լինեն, ավելի քիչ դյուրաբեկ ու ծակոտկեն, ուղեղը ոչ միայն հարվածներից, այլև հարբուխից, զանազան բորբոքումներից և օդի ամեն տեսակ ազդեցությունից պաշտպանելու համար, սովորեցրե՛ք ձեր երեխաներին ամառ թե ձմեռ, գիշեր թե ցերեկ գլխաբաց ման գալ։ Եթե մաքրության և նրանց մազերը կարգին պահելու համար ուզում եք գիշերը նրանց գլուխը ծածկել որևէ գլխանոցով, տվեք նրանց մի նուրբ գլխանոց, լայն ծակոտիներով, նման այն ցանցերին, որով բասկերը փաթաթում են իրենց մազերը։ Ես գիտեմ, որ մայրերի մեծամասնությունը, ավելի Շարդենի դիտողություններից, քան իմ դատողություններից ազդված, ամեն տեղ Պարսկաստանի կլիմա կգտնեն։ Բայց ես եվրոպացի սանին չեմ ընտրել նրան ասիացի դարձնելու համար։

Ընդհանրապես երեխաներին շատ տաք են հագցնում, մանավանդ առաջին տարիներում։ Բայց պետք է նրանց ավելի շուտ ցրտին վարժեցնել, քան տաքին. ամենաուժեղ ցուրտը նրբեք նրանց չի վնասի, եթե նրանք մանկությունից վարժվում են դրան. բայց նրանց մաշկի հյուսվածքը, որ դեռևս շատ նուրբ է և նոսր, քրտնաթորման համար շատ ազատ ծակոտիներ ունենալով, ուժեղ շոգերին երեխաներին կենթարկի անխուսափելի հյուծման։ Նկատել են, որ երեխաները ավելի շատ մեռնում են օգոստոսին, քան մյուս ամիսներին։ Բացի այդ, հյուսիսի և հարավի ժողովուրդների համեմատությունը գալիս է հաստատելու, որ մարդիկ ավելի ամրակազմ ու դիմացկուն են դառնում՝ ուժեղ ցրտին ենթարկվելով, քան տաքին։ Բայց քանի երեխան մեծանում է, ու նրա մարմնի հյուսվածքներն ամրանում են, աստիճանաբար նրանց սովորեցրեք դիմանալ արևի ճառագայթներին. այդպիսով դուք նրան

կկոփեք առանց վտանգի, այնպես որ կարող է դիմանալ տաք կոտու ծայրահեղ շոգերին։

Լոքը այն առողջ և իմաստուն դատողությունների հետ միասին, որ տալիս է մեզ, ընկնում է այնպիսի հակասությունների մեջ, որ անսպասելի է նրա նման ճիշտ դատողության տեր մարդուց։ Այդ նույն մարդը, որ ցանկանում է ամառը երեխաներին լողացնել սառցաջրի մեջ, չի ուզում, որ սառը ջուր խմեն, երբ շոգում են, կամ պահանջում է խոնավ գետնին[1]։ Իսկ քանի որ ցանկանում է, որ երեխաների կոշիկները ջուր ծծեն ամեն եղանակին, արդյո՞ք դրանք ավելի քիչ ջուր կծծեն, երբ երեխան շոգում է. և մի՞թե չէր կարելի մարմնի համար, ոտքերի համեմատությամբ, անել այն նույն հետևությունները, ինչ լոքն անում է ոտքերի համար՝ ձեռքերի համեմատությամբ՝ ու մարմնի համար՝ դեմքի համեմատությամբ։ Մթե դուք, կասեի ես նրան, միևնույն նկատառումներով եք մոտենում դեմքին ու ամբողջ մարմնին, ինչո՞ւ եք ինձ կշտամբում, որ ես միևնույն նկատառումներով եմ մոտենում ոտքերին և ամբողջ մարմնին։

Արգելելով երեխաներին ջուր խմել, երբ շոգում են, լոքը խորհուրդ է տալիս սովորեցնել, որ ջուր խմելուց առաջ մի կտոր հաց ուտեն։ Ավելի քան տարօրինակ է երեխային ուտելու բան տալ, երբ նա ծարավ է։ Ես, ընդհակառակն, խորհուրդ կտայի ջուր տալ նրան, երբ սոված է։ Որքեք ինձ չեն կարող համոզել, որ մեր առաջին ցանկությունները այնքան անկանոն են, որ չի կարելի դրանք բավարարել, առանց մեր կյանքը վտանգի ենթարկելու։ Մթե այդ այդպես լիներ, մարդկային ցեղը հարյուր անգամ ոչնչացած կլիներ, նախքան սովորելը, թե ինչ պետք է անել կյանքը պահպանելու համար։

Ամեն անգամ, երբ էմիլը ծարավ զգա, պետք է նրան ջուր տալ, այն էլ մաքուր ջուր, առանց որևէ նախազգուշական միջոցի, նույնիսկ առանց գոլացնելու, թեկուզ երեխան քրտ-

---

[1] Կարծես գյուղի երեխաները ընտրում են չոր հողը՝ գետնին նստելիս կամ պառկելիս, կամ լաված բան է, որ խոնավությունը վնասեր նրանցից մեկնումեկին։ Մթե այդ կապակցությամբ լսենք բժիշկներին, պետք է բոլոր վայրենիները հոդացավից անդամալույծ լինեին։

տինքի մեջ կորած լինի, թեկուզ ամեռ ժամանակ։ Միայն պետք է ուշադրություն դարձնել ջրի որակին։ Եթե գետի ջուր եք տալիս երեխային, ապա անմիջապես տվեք այն, իսկ աղբյուրի ջուրը թողեք որոշ ժամանակ բաց օդում, հետո տվեք խմելու։ Ձաք եղանակներին գետի ջուրը տաք է, այդպես չէ, սակայն, աղբյուրի ջուրը, որը չի ենթարկվում օդի ազդեցությանը։ Պետք է սպասել մինչև նա ստանա օդի ջերմությունը։ Ձմեռը, ընդհակառակն, աղբյուրի ջուրը ավելի քիչ վնասակար է, քան գետի ջուրը։ Բայց ձմռանը մարդկանց քրտնելը ո՛չ բնական է, ո՛չ էլ հաճախադեպ, մանավանդ բաց օդում, որովհետև սառն օդը, անդադար մաշկի հետ շփվելով, ետ է մղում քրտինքը ու թույլ չի տալիս, որ ծակոտիները բավականաչափ բացվեն՝ ազատ քրտնաթորման համար։ Իսկ ես կարծում եմ, որ էմիլը ձմեռը վառարանի մոտ չի անցկացնի, այլ դրսում, բաց օդում, սառույցների վրա։ Քանի նա տաքանում է ձնագնդակ խաղալով, թո՛ղ իմի հենց որ ծարավ զգա, թո՛ղ շարունակի խաղալ ջուր խմելուց հետո, նա ոչ մի վտանգի չի ենթարկվի։ Եթե մի այլ խաղի ժամանակ քրտնի ու ծարավ զգա, դարձյալ թողե՛ք, որ սառը ջուր խմի։ Միայն այնպես արե՛ք, որ երեխան ջուր խմելու համար փոքր քայլերով մի որոշ տարածություն անցնի։ Ենթադրելով, որ եղանակը ցուրտ կլինի, մինչև ջրի վայրը հասնելը նա բավականին կհովանա և անվտանգ կարող է խմել ջուրը։ Մանավանդ ուշադիր եղեք, որ ձեր ձեռք առած այս զգուշությունները նա չնկատի։ Իմ կարծիքով, ավելի լավ է, որ երբեմն հիվանդանա, քան թե շարունակ հետևի իր առողջությանը։

Երեխաներին անհրաժեշտ է երկարատև քուն, որովհետև նրանք չափազանց շատ են մարզվում օրվա ընթացքում։ Մեկը մյուսի ամոքիչն է, պարզ է, որ երկուսն էլ անհրաժեշտ են։ Հանգստի ժամանակը դիշերն է, բնությունից այդպես է սահմանված։ Հաստատված իրողություն է, որ քունն ավելի հանգիստ է ու ավելի քաղցր, երբ արևը մայր է մտել. արևի ճառագայթներից տաքացած օդը մեր զգայարանները կատարյալ հանգստության մեջ չի պահում։ Ուրեմն ամենաառողջարար սովորությունը, անկասկած, արևի հետ արթնանալն ու արևի մայր մտնելու հետ քնելն է։ Սրանից հետևում է, որ մեր կլի-

մանների տակ մարդիկ և բոլոր կենդանիները ձմեռն ընդհանրապես ավելի երկար կարիք ունեն քնելու, քան ամառը։ Բայց քաղաքային կյանքը բավականաչափ պարզ ու բնական չէ, բոլորովին զերծ չէ վերուվայրումներից ու արկածներից, որպեսզի կարելի լինի մարդուն ընտելացնել այս միակերպությանը, մինչև որ դա նրան անհրաժեշտ չդառնա։ Անշուշտ, պետք է համակերպվել կարգ ու կանոնին, սակայն գլխավորն այն է, որ կարելի լինի նրանից խուսափել առանց վտանգի, եթե այդ պահանջի անհրաժեշտությունը։ Ուրեմն, զգուշացե՛ք անխոհեմաբար ձեր սանին քնքշացնել հանգիստ ու չընդհատվող քնի մեջ։ Նախ և առաջ, առանց երկյուղի հանձնեցե՛ք նրան բնության օրենքին, բայց մի՛ մոռանաք, որ մեր միջավայրում երեխան պետք է այդ օրենքից վեր լինի. նա պետք է ընտելանա ուշ պառկելուն, շուտ վեր կենալուն, հանկարծակի զարթնելուն, դիշերը ոտքի վրա անցկացնելուն՝ առանց նեղություն զգալու։ Եթե ժամանակին ձեռնամուխ լինենք այս դործին և աստիճանաբար ու դանդաղորեն գործենք, կարող ենք նրա խառնվածքը ընտելացնել այն ամենին, ինչ նրան վտանգավոր կլինեն կյանքի հասուն տարիներին։

Նախ և առաջ պետք է երեխային սովորեցնել կոշտ անկողնում պառկել. սա ամենալավ միջոցն է, որպեսզի նրա համար այլևս երբեք վատ անկողին գոյություն չունենա։ Ընդհանրապես, դժվար կենցաղը մի անգամ որ սովորություն է դառնում, կյանքն ավելի հաճելի է դարձնում, մինչդեռ փափկակենցաղ ապրելակերպը բազմաթիվ տհաճություններ է առաջացնում։ Փափուկ կյանքի սովոր մարդիկ միայն աղվամազով լցված ներքնակի վրա կարող են քնել, իսկ տախտակի վրա քնել վարժվածները տախտակ ամեն տեղ կգտնեն։ Կոշտ անկողին չկա այն մարդու համար, որ քնում է պառկելուն պես։

Փափուկ անկողնում, որտեղ մարդիկ թաղվում են փետուրի կամ աղվամազի մեջ, մարմինը մեղկանում ու, այսպես ասած, հալչում, քայքայվում է։ Շատ պինդ փաթաթված երիկամները տաքանում են. դրանից և հաճախ առաջանում են քարերը կամ այլ անպատեհություններ և, անխուսափելիորեն, նաև մի ուրիշ վտանգավոր հիվանդություն, որ դրանց բոլորի անուցիչն է։

Ամենալավ անկողինն այն է, որի մեջ հանգիստ են քնում։ Ահա այդպիսին է, որ ես և էմիլը պատրաստում ենք օրվա մեջ։ Մենք կարիք չունենք մեր անկողինները պատրաստելու համար Պարսկաստանից ստրուկներ բերել տալ։ Հերկելով հողը, մենք սովորում ենք նաև փափկացնել մեր անկողինը։

Ես փորձով գիտեմ, որ եթե երեխան առողջ է, նրան կարելի է ուշաձգ ժամին քնեցնել ու արթնացնել։ Երբ երեխան պառկած է ու իր շատախոսությամբ ձանձրացնում է դայակին, վերջինս երեխային ասում է՝ «Քնի՛ր», այնպես, ինչպես նրա հիվանդ եղած ժամանակ պիտի ասեր՝ «Առողջացի՛ր»։ Նրան քնեցնելու ամենաճիշտ միջոցը հենց նրան ձանձրացնելն է։ Այնքան խոսեցի՛ք, որ նա ստիպված լինի լռել, ու շուտով կքնի։ Խրատները անօգուտ չեն անցնում, ավելի լավ է նրա գլխին քարոզ կարդալ, քան թե օրորել։ Սակայն այս թմրեցուցիչը լավ է գիշերը օգտագործել. զգուշացե՛ք այն ցերեկը գործադրելուց։

Ես երբեմն էմիլին կարթնացնեմ ոչ թե վախենալով, որ նա երկար քնել կսովորի, այլ որպեսզի նա ամեն ինչի վարժվի, նույնիսկ հանկարծակի արթնանալուն։ Սակայն ես այս գործի համար անհրաժեշտ տաղանդ չէի ունենա, եթե չգիտենայի ստիպել նրան ինքնուրույն արթնանալ ու վեր կենալ, այսպես ասած, իմ կամքով, առանց նրան մի խոսք ասելու։

Եթե բավականաչափ չի քնում, ես աշխատում եմ նրան հասկացնել, որ առավոտը շատ ձանձրալի է լինելու, և նա այդ հեռանկարից հնարավորին չափ խուսափելու համար կաշխատի ավելի երկար քնել։ Եթե, ընդհակառակն, շատ է քնում, նրան հասկացնում եմ, որ զարթնելիս մի հաճելի անակնկալ է սպասում իրեն։ Յանկանալով, որ նա որոշած ժամին արթնանա, ասում եմ. «Վաղն առավոտյան, ժամը վեցին, ձուկ որսալու ենք գնում, այսինչ տեղը կգնանք զբոսնելու. կուզենա՞ր մասնակցել»։ Անշուշտ համաձայնում է և խնդրում, որ իրեն արթնացնեմ։ Ես խոստանում եմ կամ ոչ, նայած պարագաներին. եթե շատ ուշ է արթնանում, ես արդեն մեկնած եմ լինում։ Այդպիսով, նա շուտով կսովորի ինքնուրույն և ժամանակին արթնանալ։

Իսկ եթե պատահի, ինչը հազվադեպ է լինում, որ մի

անհոգ երեխա հակում ունենա նեխվելու ծուլության մեջ, նրան չպետք է թողնել, որ անձնատուր լինի այդ հակումին, որի մեջ նա կարող է բոլորովին թմրել, այլ նրան պետք է ենթարկել որևէ սթափեցնող միջոցի, որպեսզի աշխուժանա։ Հասկանալի է, որ այստեղ բռնություն գործադրելու հարկ չկա. պետք է միայն նրա մեջ ցանկություն առաջացնել իրեն հաճելի բաների նկատմամբ։ Եվ բնության կարգի համաձայն ընտրված այդ ցանկությունը մեզ միաժամանակ կհասցնի երկու նպատակի։

Ես չեմ պատկերացնում այնպիսի մի բան, որի նկատմամբ փոքր ինչ հմտություն գործադրելով, անհնար լիներ սեր, նույնիսկ կիրք ներշնչել երեխային, առանց դիմելու պարծենկոտության, նախանձի, մրցակցության օգնությանը։ Դրա համար բավ է նրանց աշխուժությունը, ընդօրինակելու շնորհքը և, հատկապես, բնական զվարթությունը։ Զվարթության դերն այս դեպքում շատ մեծ է, բայց ոչ մի ուսուցիչ այդ հանգամանքը չի գիտակցում։ Բոլոր խաղերի մեջ, երբ քաջ համոզված են դրանց խաղ լինելուն, նրանք ցավը տանում եմ անտրտունջ, նույնիսկ ծիծաղելով, մի բան, որը բնավ չէին անի այլ պայմաններում՝ առանց արցունքի հեղեղ թափելու. երկարատև սովածությունը, վերքը, այրվածքը, ամեն տեսակ հոգնությունը զվարճություններ են պատանի վայրենիների համար. փաստ է, որ ամեն ցավ ունի իր համեմունքը, որը վերացնում է նրա պատճառած դառնությունը. բայց ամեն ուսուցչի գործը չէ այս համեմունքը գտնել ու օգտագործել, ոչ էլ ամեն աշակերտի գործն է այն ճաշակել առանց դեմքը ծամածռելու։ Բայց ես աննկատելիորեն դարձյալ նյութից շեղվեցի և ընկա բացառությունների մեջ։

Սակայն այն, ինչ ամենից ավելի անտանելի է, մարդու ենթարկվելն է ցավին, իր տեսակին հատուկ հիվանդություններին, արկածներին, կյանքի վտանգներին, վերջապես՝ մահվան։ Ինչքան շատ մարդուն հաշտեցնենք այս բոլոր մտքերի հետ, այնքան ավելի կրուժենք նրան այն անտեղի զգայությունից, որ ցավին ավելացնում է նրան դիմադրելու տագնապը։ Ինչքան նրան ընտելացնենք այն տառապանքներին, որ կարող են սպառնալ, այնքան նրանցից կվերացնենք, ինչ-

պես կասեր Մոնտեյնը, «անսովորության գիծը», այնքան ավելի ոգով անխոցելի ու տոկուն կդարձնենք նրան, մարմինը զրահի պես կպաշտպանի նրա կյանքը բոլոր վտանգներից։ Մահվան մոտիկությունն անգամ, չլինելով բուն մահը, հազիվ թե զգալի լինի նրան որպես այդպիսին։ Նա մեռնելու զգացում չի ունենա, այլ, այսպես ասած, կլինի ողջ կամ մեռած և ուրիշ ոչինչ։ Սրա մասին է, որ նույն Մոնտեյնը կասեր, ինչպես ասել է Մարոկկոյի մի թագավորի հասցեին՝ «Ոչ մի մարդ այդքան երկար չի ապրել մահվան մեջ»։ Անդրդվելիությունն ու հաստատամտությունը, մյուս առաքինությունների նման, մանկության առաջին վարժություններն են, սակայն չպետք է սովորեցնել սոսկ անուններ տալով, այլ շոշափելի ձևով, առանց նրանց զգացնելու, թե ինչ են դրանք։

Բայց, խոսելով մահվան մասին, պետք է իմանալ ինչպես վարվել մեր սանի հետ՝ ծաղկախտի վտանգը կանխելու համար։ Պե՞տք է նրան պատվաստել փոքր հասակից, թե սպասել, որ ինքը բնական կարգով ծաղիկ հանի։ Առաջին միջոցը, որ ավելի է գործածական, վտանգից պաշտպանում է այն հասակը, որի համար կյանքն ամենից թանկ է, միաժամանակ վտանգելով այն տարիքը, որի համար այն նվազ թանկ է, եթե, սակայն, վտանգել կարելի է համարել զգուշությամբ կատարված պատվաստը։

Բայց երկրորդ միջոցը ավելի մոտ է մեր ընդհանուր սկզբունքներին, այսինքն՝ թողնել, որ բնությունն ինքը ձեռք առնի անհրաժեշտ նախազգուշությունները, որոնցից նա իսկույն հրաժարվում է, հենց որ մարդն է միջամտում։ Բնության մարդը միշտ նախապատրաստված է. թողնենք, որ նրան այդ վարպետը՝ բնությունը պատվաստի. նա մեզնից լավ գիտի, թե երբ է հարմար ժամանակը։

Սրանից չպետք է եզրակացնել, որ ես դեմ եմ պատվաստին, որովհետև այն պատճառը, որի հիման վրա պատվաստից ազատում եմ իմ սանին, կարող է գոյություն չունենալ ձեր սանների համար։ Ձեր տված դաստիարակությամբ, վտանգի դեպքում նրանք չեն կարող խուսափել ծաղկից, իսկ եթե դուք գործը թողնեք դիպվածին, հավանական է, որ երեխան մահանա։ Ես նկատել եմ, որ տարբեր երկրներում, ինչքան

պատվաստն անհրաժեշտ է դառնում, այնքան մարդիկ հակառակում են դրան. դրա պատճառը շատ հեշտ է հասկանալ։ Հաղիվ թե էմիլի կապակցությամբ ես այդ հարցը քննության առնեմ։ Նա կպատվաստվի թե չի պատվաստվի՝ նայած ժամանակին, տեղին, պայմաններին, այդ համարյա միևնույնն է նրա համար։ Եթե մենք նրան վարակենք ծաղկով, այն առավելությունը կունեննանք, որ նախապես տեղյակ կլիննենք հիվանդության մասին. դա մի բան է. իսկ եթե ծաղիկը բնական կարգով հայտնվի, մենք նրան բժշկից ազատած կլիննենք. իսկ դա էլ ավելի կարևոր է։

Արտոնյալ դաստիարակությունը, որ ձգտում է միայն հասարակ ժողովրդից տարբերելու նրանց, ովքեր ստացել են այդ դաստիարակությունը, միշտ գերադասում է ամենանքանակ ուսմունքը ամենահասարակից և դրանով իսկ՝ ամենաօգտակարից։ Այսպես, հատուկ հոգատարությամբ կրթված երիտասարդները սովորում են ձի նստել, որովհետև դա շատ քանկ արժե, բայց համարյա ոչ մեկը նրանցից լողալ չի սովորում, որովհետև ոչինչ չարժե և մի արհեստավոր էլ կարող է նույնքան լավ լողալ իմանալ, ինչքան որևէ մեկ ուրիշը։ Բայց և այնպես, առանց ակադեմիական ուսման կարիք ունենալու, ամեն մի ճամփորդ կարող է ձի նստել ու մի կերպ ճանապարհ գնալ, իսկ լողալ չգիտցողը ջրում կխեղդվի, և անհնար է լողալ, առանց նախապես այն սովորելու։ Վերջապես, մարդիկ հարկադրված չեն ձի նստել կյանքը վտանգելու գնով, մինչդեռ ոչ ոք չի կարող վստահ լինել որևէ վտանգից խուսափելու, երբ այնքան հաճախ է ենթակա դրան։ Էմիլը ջրում իրեն պետք է զգա այնպես, ինչպես ցամաքի վրա։ Ափսոս, որ մարդիկ չեն կարողանում ապրել բոլոր տարերքների մեջ։ Եթե հնարավոր լիներ թռչել, ես էմիլից մի արծիվ կշինեի, մի սալամանդր՝ եթե կարողանար կրակին դիմանալ։*

Մարդիկ ընդհանրապես վախենում են, որ երեխան կարող է խեղդվել լողալ սովորելիս։ Խեղդվում է նա սովորելու ժամանակ թե լողալ չգիտենալու պատճառով, միշտ էլ դուք կլինեք

* Անցյալում կարծում էին, թե սալամանդրը կարող է ապրել կրակի մեջ։— Ս. Բ.

մեղավոր։ Միայն սնապարծությունն է մեզ հանդուգն դարձնում. եթե մեր շուրջը մեզ դիտող չկա, մենք լինավ հանդուգն չենք լինի։ Իսկ էմիլը ոչ մի պարծենկոտություն չի ցուցաբերի, եթե նույնիսկ ամբողջ տիեզերքը դիտեր նրան։ Քանի որ վարժությունները վտանգից կախում չունեն, նա իր հոր պուրակի ջրանցքներից մեկում Հելեսպոնտոսն անցնել կսովորի, սակայն հարկավոր է նաև համարձակություն դաստիարակել նրա մեջ, որպեսզի նա իրեն չկորցնի վտանգի պահին. դա կարևոր հանգամանքներից է - այն նախնական ուսուցման, որի մասին ես քիչ առաջ խոսեցի։ Եվ քանի որ ես միշտ հոգ կտանեմ որևէ վտանգ չափել նրա ուժերով ու այն բաժանել նրա հետ, ապա ոչ մի անզգուշության երկյուղ չեմ ունենա՝ նրա կյանքի պահպանության միջոցառումները համաձայնեցնելով իմ սեփական կյանքի պահպանման միջոցառումներին։

Երեխան ավելի փոքր է, քան չափահաս մարդը, նա չունի ո՛չ նրա ուժը, ո՛չ նրա դատողությունը, բայց տեսնում և լսում է նույնքան կամ գրեթե նույնքան, որքան նա. նրա ճաշակելիքը նույնքան զգայուն է, թեև ոչ այնքան նրբազգաց, և նույնքան լավ է որոշում հոտը, թեև ոչ այնքան զգայուն կերպով։ Այն սկզբնական հատկությունները, որոնք առաջանում ու կատարելագործվում են մեր մեջ, զգայություններն են։ Ուրեմն դրանք պետք է զարգացնել առաջին հերթին, մինչդեռ կա՛մ մոռացվում են բոլորովին, կա՛մ անտես են առնվում։

Վարժեցնել զգայարանները՝ չի նշանակում միայն գործածել դրանք, այլև նշանակում է սովորել դրանց միջոցով լավ դատել, այդ նշանակում է սովորել, այսպես ասած, լավ զգալ, որովհետև մենք զգում, տեսնում, լսում ենք միայն այնպես, ինչպես սովորել ենք։

Գոյություն ունի մի վարժություն, որը զուտ բնական ու մեքենական է, և որի նպատակն է մարմինը տոկուն դարձնել՝ առանց ենթարկելու դատողության ազդեցությանը. վազել, ցատկել, քար նետել, հոլ խաղալ, այս բոլորը շատ լավ են. բայց մի՞թե մենք միայն թևեր ու սրունքներ ունենք, մի՞թե չուննենք նաև աչք, ականջ և մի՞թե այս գործարանները աչքի լրդ են առաջինների օգտագործման համար։ Ուրեմն, չպետք մարզել միայն ուժերը, այլև այն բոլոր զգայարանները,

որոնք ղեկավարում են պրանց. նրանց յուրաքանչյուրից օգտվեցեք հնարավորին չափ լրիվ, ապա ստուգեցե՛ք մեկի գործունեության արդյունքը մյուսով։ Չափեցե՛ք, հաշվեցե՛ք, կշռեցե՛ք, համեմատեցե՛ք։ Ուժ գործադրեցե՛ք միայն այն ժամանակ, երբ գնահատել եք դիմադրության աստիճանը. արե՛ք այնպես, որ միշտ արդյունքի գնահատումը նախորդի միջոցների գործածությանը։ Երեխային սովորեցրե՛ք երբեք անրավարար կամ ավելորդ ճիգ չվատնել։ Եթե դուք նրան վարժեցնեք այդպես նախատեսել իր բոլոր շարժումների հետևանքն ու փորձով ուղղել սխալները, պարզ չէ՞, որ ինչքան շատ գործի, այնքան խոհեմ կլինի։

Եթե պետք է մի ծանր զանգված տեղից շարժել, և եթե երեխան երկար լծակ է վերցնում, շատ չանք կթափի. եթե կարճ լծակ վերցնի, ուժը չի պատի. միայն փորձը նրան ցույց կտա, թե ինչ երկարության ձող է պետք իրեն։ Այս իմաստությունն ուրեմն վեր չէ նրա տարիքից։ Եթե պետք լինի մի ծանր բեռ վերցնել, ու ցանկանա նախօրոք փորձել նրա ծանրությունը՝ առանց վերցնելու, ստիպված է այն որոշել աչքաչափով։ Եթե գիտե համեմատել միևնույն նյութից, բայց տարբեր մեծության մարմինները, թո՛ղ ընտրի միևնույն մեծությամբ, բայց տարբեր նյութերից կազմված մարմինների միջից. հարկավոր է, որ նա սովորի համեմատել մարմինների տեսակարար կշիռը։ Ես տեսել եմ շատ լավ դաստիարակված մի պատանի, որը միայն փորձից հետո համոզվեց, թե կաղնու փայտի տաշեղով լցված մի դույլ ավելի թեթև է, քան նույն դույլը՝ ջրով լցված։

Մենք հավասար չափով չենք իշխում մեր բոլոր զգայարանների գործածմանը։ Նրանցից մեկը՝ շոշափելիքը, որի գործունեությունը ոչ մի րոպե կանգ չի առնում, եթե մենք քնած չենք, տարածված է մեր մարմնի ամբողջ մակերևույթի վրա, ինչպես մի արթուն պահակ՝ բոլոր վտանգների մասին մեզ ահազանգելու համար։ Այդ նույն զգայարանն է, որի փորձառությունը, կամա թե ակամա, մենք ձեռք ենք բերում ամենից առաջ՝ շնորհիվ այս տևական վարժության և, հետևաբար, կարիք չունենք այն հատուկ մշակելու։ Սակայն, մենք նկատում ենք, որ կույրերը մեզնից ավելի ապահով ու նուրբ շոշափելիք ունեն, որովհետև, զուրկ լինելով տեսողությունից,

Նրանք ստիպված են միայն առաջինից օգտվել՝ ստանալու համար այն դատողությունը, ինչ մեզ տալիս է երկրորդը։ Իսկ ինչո՞ւ չսովորել կույրերի նման քայլել մթության մեջ, շոշափելով ճանաչել մեր բռնած իրերը, զգաստիար կազմել մեզ շրջապատող իրերի մասին, մի խոսքով՝ առանց լույսի, մթության մեջ կատարել այն ամենը, ինչ նրանք անում են ցերեկը, լույսով, առանց տեսողության։ Ինչքան ժամանակ, որ արևը փայլում է, մենք կույրերի նկատմամբ առավելություն ունենք, իսկ մթության մեջ նրանք են մեզ առաջնորդում։ Մենք մեր կյանքի կես մասը կույրեր ենք, միայն այն տարբերությամբ, որ իսկական կույրերը միշտ էլ մենակ կարող են առաջնորդվել, իսկ մենք մթության մեջ մի քայլ անգամ չենք կարող անել։ «Մենք լույս ունենք», կասեն ինձ։ Հետո ի՞նչ. շարունակ օժանդակ միջոցներ։ Ո՞վ կարող է վստահեցնել, որ բոլոր կարիքների դեպքում դրանք մեզ հետ են լինելու։ Ես կնախընտրեի, որ էմիլը աչքեր ունենա մատների ծայրերին, քան թե մոմավառ ճառի կրպակում։

Եթե դուք գիշերը փակված եք մի սենյակում, ծափ տվե՛ք, և արձագանքից կհասկանաք՝ սենյակը մե՞ծ է թե փոքր, սենյակի մեջտեղու՞մ եք գտնվում թե անկյունում։ Պատից կես ոտնաչափ հեռավորության վրա օդը համեմատաբար նոսր է և ուժեղ է արձագանքում, դոանից էլ ձեր դեմքը տարբեր զգացողություն է ստանում։ Մնացե՛ք ձեր տեղում ու հաջորդաբար շուռ եկեք բոլոր կողմերով. եթե բաց դուռ կա, ապա մի թեթև քամու հոսանք կմատնի այդ։ Եթե նավի վրա եք, ձեր դեմքին փչող քամուց կիմանաք ոչ միայն, թե ինչ ուղղությամբ եք գնում, այլ նաև՝ թե ինչ արագությամբ է գնում նավը։ Այս և նման հաղարավոր դիտողություններ հաջող կարող են կատարվել միայն գիշերը։ Օր-ցերեկով, ինչքան էլ ուշադիր լինենք, մեր տեսողությունը մեզ որևէ կերպ կխանգարի։ Սակայն այս բոլորը կատարվում է առանց ձեռքերի կամ գավազանի օգնության։ Ինչքա՜ն տեսողական ունակություններ կարելի է ձեռք բերել շոշափումով, նույնիսկ ոչնչի ձեռք չտալով։

Հաճախ կազմակերպեցե՛ք գիշերային խաղեր։ Այս խորհուրդը ավելի մեծ կարևորություն ունի, քան թվում է։ Իհար-

կե, փիշերվա խավարը սարսափեցնում է մարդկանց, երբեմն էլ՝ անասուններին [1]։ Դատողությունը, գիտակցությունը, մտածողությունը, արիությունը շատ քչերին են ազատում այդ վախից։ Ես տեսել եմ դատողության, ուժեղ մտքի տեր մարդիկ, փիլիսոփաներ, անվեհեր զինվորականներ, որոնք անվախ են ցերեկով, բայց կնոջ նման դողում են փիշերը՝ ծառի մի տերևի շրշյունից։ Այս սարսափը սովորաբար վերագրում են դայակների հեքիաթներին։ Այդ կարծիքը սխալ է, այստեղ մի բնական պատճառ կա. ո՞րն է այդ պատճառը, այն, որ խուլերին դարձնում է կասկածամիտ և ժողովրդին՝ անապաշտ. դա մեզ շրջապատող իրերի և մեր շուրջը կատարվող դեպքերի անծանոթ լինելն է [2]։ Սովոր լինելով հեռվից

---

[1] Այս սարսափը ավելի բացահայտ է դառնում արևի լրիվ խավարման ժամանակ։

[2] Ահա ևս մի ուրիշ պատճառ, այնքան լավ բացատրված մի փիլիսոփայի կողմից, որի գիրքը ես հաճախ եմ հիշատակում և որի լայն մրտքերն ինձ ավելի ու ավելի են լուսավորում. «Երբ, հատուկ պայմանների պատճառով, հեռավորության մասին ճշգրիտ գաղափար չենք կարողանում կազմել և իրերը դատում ենք միայն այն անկյան կամ, ավելի շուտ, պատկերների մեծությամբ, որ արտացոլվում են մեր աչքերի մեջ, անկասկած մենք կսխալվենք այդ իրերի մեծության մասին մեր կազմած գաղափարի մեջ։ Ամեն մարդ փորձով գիտե, որ փիշերը ճամփորդելիս՝ մոտիկ մացառը բնդունվել է հեռավոր ծառի փոխարեն, կամ հեռավոր ծառը՝ հարևան մացառի փոխարեն. այդպես էլ, եթե իրերը չենք ճանաչում իրենց ձևերից ու այդ իսկ պատճառով նրանց հեռավորության մասին ոչ մի գաղափար չենք կարողանում ունենալ, անշուշտ կրկին կսխալվենք՝ ճաներ, որ մեր տեսողությունից մի քանի մատնաչափ հեռավորության վրա արագ թռչում-անցնում է, մեզ կթվա մի մեծ թռչուն, որը մեզնից շատ հեռու է գտնվում։ Ջին, որ անշարժ կանգնած է դաշտի մեջ, օրինակ՝ մի ոչխարի դիրքում, մեզ կթվա մի մեծ ոչխար, մինչև չիմանանք, որ դա ձի է։ Բայց հենց որ իմանանք, թե դա ձի է, վայրկյանական նա մեր աչքին կերևա ձիու մեծությամբ, և մենք իսկույն կփոխենք մեր առաջվա կարծիքը։

Ամեն անգամ, երբ փիշերով կգտնվենք անծանոթ վայրերում, որտեղ չենք կարողանում որոշել տարածությունը, ինչպես և, մթության պատճառով, իրերի ձևերը, միշտ էլ կսխալվենք մեզ երևացող իրերի մասին մեր դատողության մեջ։ Այստեղից է առաջանում այն սարսափն ու այն մի տնսակ ներքին վախը, որ փիշերվա մթության մեջ զգում է համարյա ամեն մարդ. սրա վրա է հենց հիմնված ցնորական տեսիլքների և ուրվականների հայտնվելը, որոնց մասին շատ մարդիկ ասում են, թե իբր տեսել են։ Ընդ-

նկատել իրերն ու կանխազուշակել նրանց տպավորությունը, ի՞նչպես կարող է պատահել, որ իմ շրջապատում այլևս ոչինչ չտեսնելով, չերևակայեմ հազարավոր էակներ, հազարավոր շարժումներ, որոնք կարող են ինձ վնասել և որոնց դեմ ես չեմ կարող պաշտպանվել։ Ոչնչով չի օգնի իմ գիտենալը, թե

հանրապես նրանց պատասխանում են, որ այդ պատկերները իրենց երևակայության արդյունքն են, սակայն նրանք իրականում կարող են լինել և աչքի մեջ, ու շատ հավանական է, որ իսկապես տեսել են այն, ինչ ունդում են, թե տեսել են. որովհետև, շատ բնականորեն, ամեն անգամ, երբ մարդ մի առարկայի մասին գազափար է կազմում միայն իր աչքի մեջ նրա կազմած անկյունով, այդ անծանոթ առարկան կմեծանա, կխոշորանա այնչափով, որչափով նա կմոտենա նրան և, եթե առաջին անգամն է երևացել դիտողին, որ տակավին չի կարող ո՛չ ճանաչել տեսածը և ո՛չ էլ դատել, թե ինչ հեռավորության վրա է գտնվում այն. ասում եմ, նթե այդ իրը սկզբում երևացել է մի քանի ոտնաչափ բարձրության վրա, գտնվելով քսան կամ երեսուն քայլ հեռու, այդ նույն իրը նրան պիտի թվա շատ ավելի բարձր, երբ գտնվի միայն մի քանի քայլ հեռավորության վրա, որից, բնականաբար, նա պիտի զարմանա ու վախենա, մինչև, վերջապես, չշոշափի ու չճանաչի այն. որովհետև այն բոպեից, երբ հասկանա, թե ինչ բան է այն, որը նրան հակայական էր թվում, առարկան իսկույն կփոքրանա ու կստանա իր իսկական մեծությունը։ Իսկ եթե փախչի ու չհամարձակվի մոտենալ դրան, պարզ է, որ նա դրանից ուրիշ պատկերացում չի ունենա, քան այն, որ առարկան կազմել էր նրա աչքի մեջ, և իրոք տեսած կլինի իր մեծությամբ և ձևով վիթխարի կամ ահարկու մի տեսիլք։ Ծնորապատկերների նախապաշարումը, ուրեմն, հիմնավորված է բնության մեջ, և, հետևաբար, այդ տեսիլքները կախում չունեն լոկ երևակայությունից, ինչպես փիլիսոփաներն են կարծում» («Բնական պատմություն», հ. 6, էջ 32*) *։

Ես աշխատեցի իմ բնագրի մեջ ցույց տալ, թե ինչպես նախապաշարումը մասամբ կախում ունի երևակայությունից, իսկ ինչ վերաբերում է այս հատվածում հիշված պատճառին, ապա դա հաստատում է, որ գիշերով ման գալու սովորությունը մեզ կվարժեցնի որոշել այն արտաքին երևույթները, որ, իրրև հետևանք ձևերի նմանության ու հեռավորությունների տարբերության, տպավորվում են մեր աչքերում՝ մթան մեջ։ Սա էլ բացատրվում է նրանով, որ քանի դեռ այնքան լույս է, որ մենք կարողանում ենք տեսնել իրերի շրջագծերը, ապա դրանք մեր աչքին այնքան ավելի աղոտ կերևան, որքան կհեռանան մեր տեսողությունից, քանի որ առարկայի հեռացումով մեծանում է մեր և առարկայի միջև ընկած տարածությունը։ Այդ բավական է, որպեսզի վարժության շնորհիվ խուսափենք այն սխալից, որի մասին այստեղ խոսում է պ. Բյուֆոնը։ Ինչպիսի բացատրու-

* Բյուֆոն։ — Ե. Բ.

հս ապահով տեղ եմ գտնվում. ես միայն այն ժամանակ ապահով կզգամ ինձ, երբ սեփական աչքով կտեսնեմ և կհամոզվեմ։ Ուրեմն, ես միշտ վախի մի պատճառ ունեմ, որը չունեի ցերեկը։ Ճիշտ է, ես դիտեմ, որ ոչ մի օտար մարմին չի դիպչի ինձ առանց նախապես որևէ աղմուկ առաջացնելու. այդ պատճառով էլ ստիպված եմ ամբողջ գիշերը լարված պահել լսողությունս։ Ամենափոքր աղմուկի դեպքում, որի պատճառը չեմ կարող պարզել, ինքնապահպանման անհրաժեշտությունն առաջին հերթին ինձ դրդում է ենթադրել այն յոլոր վտանգները, որոնք ամենից ավելի կթելադրեն ինձ զգույշ լինել, և, հետևապես, ամենից շատ են սարսափեցնում ինձ։

Եթե ոչինչ լսեմ, դարձյալ չեմ հանգստանա, որովհետև չէ՞ որ առանց աղմուկի էլ կարող են հանկարծ ինձ անակնկալի բերել։ Պետք է, որ ես պատկերացնեմ իրերը այնպես, ինչպես եղել են առաջ, այնպես ինչպես դարձյալ պետք է լինեն, որ տեսնեմ այն, ինչ չեմ տեսնում։ Այսպիսով, ստիպված լինելով լարել իմ երևակայությունը, շուտով այլևս չեմ կարող դրան տիրապետել, և ինչ որ արել եմ ինձ հանգստացնելու համար, է՛լ ավելի մեծ տագնապի մեջ է գցում ինձ։ Երբ աղմուկ եմ լսում, կարծում եմ, թե գողեր են. երբ ոչ մի ձայն չեմ լսում, ուրվականներ եմ տեսնում։ Այն, որ ես ստիպված եմ իմ անվտանգության պահպանման համար աշխուժ լինել, ինձ ավելի է վախ պատճառում։ Այն, ինչ պետք է ինձ ապահովություն ներշնչի, միայն իմ դատողության մեջ է. սակայն, բնազդը, որ ավելի ուժեղ է, քան դատողությունը, բոլորովին այլ բան է թելադրում։ Ի՞նչ օգուտ մտածելուց, թե վախենալու կարիք չկա, երբ այլևս ոչինչ չեմ կարող անել։

Երբ գտնում են ցավի պատճառը, ինքնին հայտնի է դառնում նաև հիվանդության դարմանը։ Ամեն ինչում սովորությունը սպանում է երևակայությունը. միայն նոր առարկաներն են վերակենդանացնում այն։ Ամեն օր տեսած իրերի մեջ այլևս երևակայությունը չէ, որ գործում է, այլ՝ հիշողու-

---

թյուն էլ որ գերազանցեն, իմ մեթոդը միշտ էլ զորավոր է, փորձն էլ կատարելապես հաստատում է այդ։

թյունը։ Ահա թե ինչի վրա է հիմնված հետևյալ առածը. Ab assuetis non fit passio*, *որովհետև միայն երևակայության բոցերից են բորբոքվում կրքերը։ Ուրեմն, դատողություններ մի՛ արեք մի մարդու հետ, որին ուզում եք ազատել խավարի սարսափներից. հաճախ տարե՛ք նրան մութ տեղեր եւ համոզված եղե՛ք, որ փիլիսոփայական բոլոր փաստարկումները չեն արժենա այդ տպավորությանը։ Տանիք ծածկողների գլուխը երբեք պատույտ չի գա. այդպես էլ մթության ընտելացածը խավարում ոչ մի վախ չի զգա։*

Ահա մեր գիշերվա խաղերի առավելության ամենամեծ մի ուրիշ առավելություն ևս։ Բայց որպեսզի այս խաղերը հաջողություն ունենան, անհրաժեշտ է վարպետ լինել։ Խավարից տխուր բան չկա. ձեր երեխային մի՛ պահեք մութ խցիկում։ Թողե՛ք նա ծիծաղի մութ տեղ մտնելիս, թո՛ղ վերստին ծիծաղի այնտեղից դուրս գալիս, և քանի դեռ խավարի մեջ է, այն միտքը, որ ինքը շուտով ճաշակելու է ընդհատված զվարճությունը, նրան հեռու կպահի անհեթեթ երևակայություններից, որոնք կարող էին հետապնդել նրան այնտեղ։ Կա կյանքի մի սահմանագիծ, որից այն կողմ մարդիկ հետադիմում են՝ առաջ գնալով։ Ես զգում եմ, որ անցել եմ այդ գիծը։ Ես թևակոխել եմ, այսպես ասած, մի այլ տպարեզ։ Հասուն տարիքի դատարկությունը, որ արդեն զգալ է տալիս իրեն, հիշողությանս մեջ վերականգնում է առաջին տարիների քաղցր շրշյանը։ Մերանալով՝ ես երեխա եմ դառնում՝ ավելի հաճույքով եմ հիշում այն, ինչ արել եմ տասը տարեկան հասակումս, քան այն, ինչ արել եմ երեսուն տարեկանում։ Ընթերցողնե՛ր, ներողամիտ եղեք, ուրեմն, որ երբեմն ես ինձ եմ օրինակ բերում, որովհետև այս գիրքը լավ գրելու համար, պետք է, որ հաճույքով շարադրեմ մտքերս։

Ես գյուղում գիշերօթիկ էի պ. Լամբերսիե անունով մի քահանայի մոտ։ Ինձ հետ էր նաև իմ զարմիկը, որն ավելի հարուստ էր, քան ես, և որին համարում էին ժառանգորդ, մինչդեռ ես, հորիցս հեռացած լինելով, սոսկ մի խեղճ որբ էի։ Իմ մեծ զարմիկ Բեռնարը տարօրինակորեն վախկոտ էր,

---

* «Սովորական իրերը կիրք չեն առաջացնում»— Ա. Բ.

մանավանդ գիշեր ժամանակ։ Ես այնքան էի ծաղրում նրա երկչոտությունը, որ պ. Համբերսիեն, իմ ինքնագովությունից ձանձրացած, կամեցավ փորձել քաջությունս։ Աշնան մի մութ գիշեր նա ինձ տվեց եկեղեցու բանալին և ասաց, որ գնամ ու այնտեղից բերեմ Աստվածաշունչը, որ թողել էին ամբիոնի վրա։ Իմ ինքնասիրությունը շոյելու համար մի քանի խոսք ավելացրեց, որից հետո ես անկարող եղա մերժել։

Գնացի առանց լույսի. եթե լույս ունենայի, դուցե ավելի վատ լիներ։ Եկեղեցի գնալու համար պետք էր անցնել գերեզմանատան միջով. ես այնտեղից անցա քաջարար, որովհետև քանի բաց օդումն էի, ոչ մի վախ չէի զգում։

Եկեղեցու դուռը բաց անելիս՝ կամարի տակ մարդկային ձայնի նման ինչ-որ աղմուկ լսեցի, որն սկսեց խախտել իմ հոռմեական արիությունը։ Դուռը բաց անելով՝ ուզեցի ներս մտնել. բայց հազիվ մի քանի քայլ էի արել, ստիպված եղա կանգ առնել։ Տեսնելով այս ընդարձակ տարածության վրա տիրող խավարը, այնպիսի սարսափ պատեց ինձ, որ մազերս բիզ-բիզ կանգնեցին։ Նահանջեցի, դուրս եկա ու դողալով սկսեցի վազել։ Բակում պատահեցի Սուլթան անունով շնիկին, որի զվանքն ինձ հանգստացրեց։ Իմ երկյուղից ամոթահար՝ ես կրկին գնացի եկեղեցի, չանալով այս անգամ ինձ հետ ներս տանել նաև Սուլթանին, որը չուզեց ինձ հետևել։ Ես միանգամից դռնից անցա ու մտա եկեղեցի։ Հազիվ էի ներս մտել, երբ երկյուղը կրկին տիրեց ինձ և այնպիսի ուժով, որ գրեթե կորցրի։ Թեպետ ամբիոնն աջ կողմումն էր, և այդ ինձ լավ հայտնի էր, առանց զգալու անցել էի դրա մոտով և երկար ժամանակ փնտրում էի ձախ կողմում, զարնվում էի նստարաններին, էլ չգիտեի, թե որտեղ եմ գտնվում ու, չկարողանալով որոշել ո՛չ խորանի, ո՛չ էլ դռան տեղը, ես ընկա մի անասելի շփոթության մեջ։ Վերջապես նշմարելով դուռը, հազիվ կարողացա դուրս պրծնել ու հեռացա ինչպես առաջին անգամ, որոշելով այլևս մենակ չգալ այստեղ։ Իսկ եթե գամ էլ, միայն ցերեկով։

Վերադառնում եմ տուն։ Երբ պատրաստվում էի ներս մտնել, լսեցի պ. Համբերսիեի բարձրաձայն ծիծաղը։ Կաթծելով, թե ինձ վրա է ծիծաղում ու չհամարձակվելով նրանց

աչքին երևալ, դուռը բաց չեմ անում։ Այդ միջոցին լսում եմ ձայնը օրիորդ Լամբերսիեի, որը մտահոգվում է իմ մասին ու կարգադրում աղախնին՝ վերցնել լապտերը, իսկ պ. Լամբերսիեն պատրաստվում է գնալ ինձ որոնելու իմ «աներկյուղ» զարմիկի ընկերակցությամբ, որին և, անտարակույս, հետո կվերագրեին հաջողության ամբողջ պատիվը։ Բոլոր պատրաստիները չքացան, մնաց փախուստս մասնելու վախը։ Ես սլանում, վազում, թռչում եմ դեպի եկեղեցի, առանց շփոթվելու, առանց խարխափելու հասնում եմ ամբիոնին, բարձրանում եմ, վերցնում Աստվածաշունչը, ցատկում եմ ցած, երեք ոստումով դուրս եմ պրծնում եկեղեցուց, մոռանալով նույնիսկ դուռը փակել։ Տուն հասնելով, շնչասպառ ներս եմ մտնում սենյակ, նետում գիրքը սեղանի վրա, հուզված, բայց գոհ, որ կանխեցի ինձ համար պատրաստվող օգնությունը։

Գուցե հարցնեն ինձ, թե արդյո՞ք այս դեպքը բերում եմ որպես հետևելու արժանի և ուրախ տրամադրության օրինակ, որպիսին ես պահանջում եմ նման փորձերի ընթացքում։ Ո՛չ, բայց բերում եմ որպես ապացույց այն բանի, որ ոչինչ այնպես չի հանգստացնում գիշերվա ստվերներից սարսափողներին, քան այն, երբ նա լսում է հարևան սենյակում հավաքված մարդկանց ծիծաղն ու հանգիստ զրույցը։ Ես կցանկանայի, որ դաստիարակը, փոխանակ առանձին զվարճանալու իր աշակերտի հետ, երեկոները հավաքեր ուրախ տրամադրությամբ տոգորված բազմաթիվ երեխաների, որ նրանց սկզբում առանձին-առանձին չուղարկեր, այլ՝ մի քանիսին միասին, որ նրանցից ոչ մեկին բոլորովին մենակ փորձության չենթարկեր, մինչև չհամոզվեր, որ նա շատ չի վախենա։

Ես այդպիսի խաղերից ավելի հաճելի և օգտակար բան չեմ երևակայում, միայն թե դրանք լինեն հմտորեն կազմակերպված։ Մի մեծ սրահում ես մի տեսակ լաբիրինթոս կսարքեմ սեղաններից, բազկաթոռներից, աթոռներից, հողմապահներից (paravent)։ Այս լաբիրինթոսի անանցանելի ոլորաններուն մեջ կդնեմ ութ կամ տասը տուփ, որոնցից միայն մեկը լրիվ լցված կլինի քաղցրավենիքով։ Հստակ, բայց կարճ բացատրությամբ, ես կհայտնեմ լիքը տուփի տեղը։ Իմ

բացատրությունը բավարար կլինի երեխաներից առավել ուշիմ և նվազ թեթևամիտների համար[1]. ապա փոքրիկ մրցակիցներին վիճակ հանել տալով, բոլորին հերթով կուղարկեմ փնտրելու, մինչև նրանցից մեկնումեկը գտնի լիքը տուփը։ Այն գտնելը կդարձնեմ դժվարին կամ հեշտ՝ նայած յուրաքանչյուր երեխայի ճարպկությանն։

Պատկերացրե՛ք մի փոքրիկ Հերկուլեսի, որը վերադառնում է տուփը ձեռքին, հպարտ՝ իր հաղթանակով։ Տուփը դնում են սեղանին, բաց են անում հանդիսավորությամբ։ Ես այստեղից լսում եմ ծիծաղի ձայները, ուրախ խմբակի բացականչությունները, երբ սպասված քաղցրավենիքի փոխարեն, տուփի մեջ գտնում են, մամուռի կամ բամբակի վրա խնամքով դասավորված, մի բզեզ, մի խխունջ, մի կոտոր ածուխ, մի շաղգամ կամ նմանօրինակ որևէ բույս։ Մի ուրիշ անգամ, նոր սպիտակեցրած մի սենյակում, պատին մոտ կախում են որևէ խաղալիք, որևէ իր, որը պետք է գնալ-բերել առանց պատին քսվելու։ Պայմանի ամենափոքր խախտումը՝ գլխարկի կամ կոշիկների ծայրին, կամ հագուստի փեշի, թևքի վրա նկատված սպիտակությունը կմատնի անճարակությունն այն երեխայի, որին հաջողվել է բերել խաղալիքը կամ իրը։ Այսքանն էլ թերևս ավելի քան բավական է նման խաղերի նշանակությունը բացահայտելու համար։ Եթե հարկավոր է, որ ես ձեզ ամեն ինչ ասեմ, լավ կանեք, որ իմ գիրքը երբեք չկարդաք։

Այսպես դաստիարակված մարդը մյուսների նկատմամբ ինչպիսի՞ առավելություններ կունենա գիշեր ժամանակ խավարում վստահ քայլելու վարժված ոտքերը, շրջապատի իրերը հեշտությամբ շոշափող ձեռքերը առանց գժվարության նրան կառաջնորդեն ամենամութ վայրերով։ Պատանեկան գիշերային խաղերի հուշերով տարված նրա երևակայությունը հազիվ թե անդրադառնա սարսափազդու իրերին։ Եթե

---

[1] Երեխաների ուշադրությունը սրելու համար, նրանց ասացե՛ք միայն այնպիսի բաներ, որ նրանք իրոք և անմիջականորեն շահագրգռված լինեն իմանալու. մանավանդ խուսափեցե՛ք երկարաբանություններից և ավելորդ բառերից։ Բոլոր դեպքերում, ձեր պատմածում չպետք է լինի ոչ մի մութ կետ, ոչ մի երկդիմի բառ։

որևէ քրքիջ լսի, այն կվերագրի իր վաղեմի ընկերներին, և ոչ թե չար ոգիներին։ Եթե երևակայության առաջ պատկերանա մի հավաքույթ, չարքերի ժողով չի համարի այդ, այլ՝ իր դաստիարակի սենյակը։ Դիշերը, նրան սոսկ ուրախ մտքեր հուշելով, երբեք զարհուրելի չի լինի. փոխանակ նրանից սարսափելու, կսիրի այն։ Եթե հարկ է գնալ ռազմական արշավի, ապա նա ամեն ժամ պատրաստ կլինի մեկնելու մենակ կամ խմբովին։ Նա կմտնի Սավուղի * բանակատեղը, առանց մոլորվելու կշրջի այնտեղ, կհասնի արքայի վրանի մոտ՝ առանց որևէ մեկին քնից արթնացնելու, և կվերադառնա աննկատ։ Եթե ուզում եք Ռեզուսի ձիու մասին իմանալ, առանց երկյուղի նրան դիմեցե՛ք։ Այլ կերպ դաստիարակված մարդկանց մեջ դժվար թե մի Ոդիսևս գտնեք։

Ես մարդիկ գիտեմ, որոնք կամենում են անակնկալներով ժարժեցնել երեխաներին՝ գիշերը չվախենալ ոչնչից։ Այդ մեթոդը շատ վատ է. դա սպասածի բոլորովին հակառակ արդյունքն է տալիս և երեխաներին է՛լ ավելի վախկոտ է դարձնում։ Ո՛չ դաստողությունը, ո՛չ էլ սովորությունը չեն կարող ապահովություն ներշնչել անմիջական վտանգի գաղափարի դեմ, որի ո՛չ մեծությունը գիտեն, ո՛չ տեսակը, չեն էլ կարող ղերծ պահել հաճախակի պատահող անակնկալների վախից։ Բայց ի՞նչպես կարող ենք մեր սանին ապահովել նման արկածներից։ Ահա այն լավագույն խորհուրդը, որ, իմ կարծիքով, կարող է օգնել նրան. «Դու այդ դեպքում,— կասեմ Էմիլին,— ինքնապաշտպանության քո արդար իրավունքի մեջ ես, որովհետև հարձակվողը քեզ ժամանակ չի տա դատելու՝ վնասե՞լ թե վախեցնել է ցանկանում ինքը, և քանի որ նա արդեն միջոցներ է ձեռք առել, փախուստն անգամ չի փրկի քեզ։ Ուրեմն, համարձակ կերպով բռնի՛ր նրան, ով քեզ վրա կհարձակվի գիշերով, մարդ է թե կենդանի՝ նշանակություն չունի, ճղմի՛ր ամբողջ ուժովդ, սեղմի՛ր նրան բազուկներիդ մեջ. եթե դիմադրի, հարվածի՛ր անխնա ու ինչ էլ ասի կամ անի, երբեք բաց չթողնես ձեռքիցդ, մինչև չիմանաս, թե ինչումն է բանը։ Եթե ամեն ինչ պարզվի, թերևս

---

* Իսրայելացիների առաջին թագավորը մ. թ. ա. XI դարում։— Ս. Թ.

նոր զգաս, որ այնքան էլ վախենալու բան չկար, ու նման կատակներ սարքողի հետ այդ կերպ վարվելը նրան կխրատի, որ մյուս անգամ նույնը չկրկնի»։

Թեև շոշափելիքը մեր զգայարանների մեջ ամենից շատ գործածականն է, սակայն նրա ընձեռած զգացումները, ինչպես ասել եմ, ավելի անկատար ու կոպիտ են, քան մյուս զգայարաններինը. որովհետև շոշափելիքի հետ միասին մենք շարունակ օգտվում ենք նաև տեսողությունից, աչքը ձեռքից ավելի շուտ է առարկային հասնում, ու միտքը համարյա միշտ դատում է առանց ձեռքի օգնության։ Դրան հակառակ, շոշափելիքի միջոցով ստացվող դատումները ավելի հաստատ են հենց այն պատճառով, որ ավելի սահմանափակ են, որովհետև, մեր ձեռքի հասողությունից այն կողմը չանցնելով, նրանք ուղղում են մյուս զգայարանների սխալները, որոնք սլանում են հեռուները՝ դեպի հաղիվ նշմարելի առարկաները, այնինչ շոշափելիքը, եթե մի բան ղգում է, լավ է զգում։ Դրան պետք է ավելացնել նաև այն, որ ցանկացած ժամին, երբ միացնում ենք մկանների ուժը նյարդերի ուժին, մենք, համատեղ զգացողությունների շնորհիվ, ջերմաստիճանի, մեծության, ձևերի զգացողություններին միացնում ենք ծանրության և ամրության զգացողությունները։ Այսպես, բոլոր զգայարաններից շոշափելիքը լինելով միակը, որ ավելի լավ է մեզ հաղորդում օտար մարմինների՝ մեր մարմնի վրա ունեցած ազդեցության մասին, ամենից հաճախ ենք օգտագործում այն, և անմիջականորեն նա է մեզ տալիս մեր գոյության պահպանման համար անհրաժեշտ գիտակցությունը։

Շոշափելիքը ինչպես որ փոխարինում է տեսողությանը, ինչո՞ւ չի կարող որոշ չափով փոխարինել նաև լսողությանը, քանի որ ձայնը հնչուն մարմինների մեջ ստացացնում է այնպիսի թրթռումներ, որոնք զգալի են նաև շոշափելիքին։ Եթե ձեռքներս դնենք թավջութակի վրա, առանց աչքի կամ ականջի օգնության, միայն գործիքի փայտի թրթռացումից ու դողդողումից կարելի է որոշել՝ առաջացած ձայնը բութ է թե սուր։ Մարզելով մեր զգայարանները այս տարբերությունների զգացողությամբ, ես հավատացած եմ, որ ժամանակի

ընթացքում մատներով կարելի կլինի լսել մի ամբողջական երգ։ Այս ենթադրությունից ելնելով, ակներև է, որ հեշտությամբ խուլերի հետ կարելի է խոսել նվագի միջոցով, որովհետև տոներն ու տեմբրերը, նույնքան ենթակա լինելով կանոնավոր զուգակցումների, որքան հնչյուններն ու ձայները, կարող են համարվել որպես խոսքի տարրեր։

Կան այնպիսի վարժություններ, որոնք շոշափման զգայարանը թմրեցնում ու ավելի են բթացնում, և այնպիսիք, որոնք, ընդհակառակն, նրանց սրում ու ավելի փափուկ, ավելի նուրբ են դարձնում։ Առաջինները, կարծր մարմինների հետ մշտական շփումին միացնելով ավելի շատ շարժումներ և ուժ, մաշկը դարձնում են կոշտ, պինդ, նրանից խլելով բնական ղգայնությունը։ Մյուսները այդ նույն ղգայնությունը փոփոխում են թեթև ու հաճախակի հպումներով, այնպես որ բանականությունը, անընդհատ կրկնվող տպավորությունների ազդեցության տակ, այդ փոփոխությունների մասին հեշտությեն դատելու ընդունակություն է ձեռք բերում։ Այս տարբերությունը զգալի է երաժշտական գործիքներ նվագելիս. թավջութակի, կոնտրաբասի, նույնիսկ չութակի կոպիտ ու ցավ պատճառող շոշափումը, մատներն ավելի ճկուն դարձնելով հանդերձ, կոշտացնում է մատնածայրերը։ Դաշնամուրի ողորկ ու կոկ ստեղնաշարի շոշափումը մատները դարձնում է միաժամանակ և՛ ճկուն, և՛ ավելի զգայուն։ Այդ տեսակետից, իհարկե, դաշնամուրը գերադասելի է։

Անհրաժեշտ է, որ մաշկը օդի ազդեցության տակ կարծրանա ու կարողանա դիմադրել նրա փոփոխություններին, որովհետև մաշկն է պաշտպանում մարմնի ամբողջ մնացած մասը։ Այսուհանդերձ, բնավ էլ ցանկալի չէ, որ ձեռքը, շատ ստրկորեն միևնույն աշխատանքները կատարելով, կարծրանա, ու նրա մաշկը, համարյա ոսկրանալով, կորցնի այն հրաշալի զգայնությունը, որ օգնում է մարդուն ճանաչելու այն բոլոր մարմինները, որոնց հպվում է և, նայած շփման ձևին, երբեմն, մթության մեջ, տարբեր ձևերով ասրսուռ է պատճառում մեզ։

Ինչո՞ւ իմ սանը ստիպված պետք է լինի շարունակ իր ոտքերի տակ եզան կաշի ունենալ։ Ի՞նչ վնաս կլիներ, եթե,

կարիքի դեպքում, իր սեփական կաշին նրա համար որպես ներքնա ծառույթ։ Պարզ է, որ այդ մասում մաշկի ներքուծյունը ոչ մի բանի պետք չէ և հաճախ կարող է նույնիսկ վնասակար լինել։ Ծնևի բնակիչները, որ ձմռանը, կեսգիշերին, քշնամու հարձակումից զարթնելով, ավելի շուտ իրենց հրացանները վերցրին, քան կոշիկները, եթե վարժված չլինեին ոտաբոբիկ քայլելու, ով կարող է ասել, թե Ժնևը գրավված չէր լինի քշամու կողմից։

Մարդկանց միշտ պետք է զինել անակնկալ արկածների դեմ։ Թո՛ղ էմիլը տարվա բոլոր եղանակներին ոտաբոբիկ մանի գա սենյակում, սանդուղքների վրա, պարտեզում. փոխանակ հանդիմանելու, ես կհետևեմ նրա օրինակին. միայն կզգուշանամ, որ հատակին ապակու կտորտանքներ չլինեն։ Շուտով ես նրան կպատմեմ ձեռքի աշխատանքի ու խաղերի մասին։ Մինչ այդ, թո՛ղ նա սովորի անել այն, ինչ նպաստում է նրա մարմնի զարգացմանը. թո՛ղ սովորի բոլոր դիրքերում լինել ազատ ու ինքնավստահ. թո՛ղ սովորի ցատկել երկարությամբ, բարձրությամբ, ծառ մագլցել, անցնել պատի վրայով. թո՛ղ շարունակ պահի իր հավասարակշռությունը. թո՛ղ նրա բոլոր շարժումները կարգավորված լինեն հավասարակշռության օրենքների համաձայն, նախքան կշռագիտությունը բացատրի նրան այդ օրենքները։ Ոտքը գետին դնելու և մարմինը սրունքների վրա հենելու ձևից նա պետք է իմանա՝ լա՞վ թե վատ է կատարել գործողությունը։ Ինքնավստահ դիրքը միշտ էլ իր հատուկ գեղեցկությունն ունի, և մարմնի ամենավստահ կեցվածքներն ամենից վայելուչն են։ Եթե ես պարի ուսուցիչ լինեի, ոչ մի դեպքում չէի անի Մարսելի [1] կապկությունները, որոնք լավ են այն երկրի համար, որ-

[1] Մարսելը Փարիզում նշանավոր պարի վարպետ էր, որը, իր շրջապատը լավ ճանաչելով, խորամանկորեն անհեթեթություններ էր անում ու իր արվեստին մեծ նշանակություն տալիս։ Թեև ծիծաղելի էին գտնում այդ, բայց և այնպես, ներքնապես խոր հարգանք էին տածում նրան։ Ոչ նվազ անպետք մի ուրիշ արվեստում այսօր իսկ տեսնում ենք մի կատակերգակ դերասանի, որը միաժամանակ թե՛ լուրջ և թե՛ հմայիչ ձևեր է բանեցնում ու նվազ հաջողություն չունի։ Այս մեթոդը միշտ էլ հարգի է Ֆրանսիայում։ Ճշմարիտ տաղանդը, որը ավելի պարզ է ու նվազ պոռ-

տնկ դրանք անում է. բայց փոխանակ իմ սանին անվերջ ցատկրոտուքներ անել տալու, նրան կտանեի մի ժայռի ստորոտը, այնտեղ ցույց կտայի, թե ինչ դիրք պետք է ընդունել, ինչպես պետք է պահել մարմինն ու գլուխը, ինչպիսի շարժում պետք է անել, ինչ դիրքով պետք է հերթականորեն դնել մեկ ոտքը, մեկ ձեռքը, թեթևորեն քայլելու համար ուղղաձիգ, անհարթ ու թեք արահետներով, ցատկել մի գագաթից մյուսը՝ բարձրանալիս թե իջնելիս։ Ես նրան ավելի շուտ մի այծյամի մրցակից կդարձնեմ, քան օպերայի պարող։

Ինչքան շոշափելիքը կենտրոնացնում է իր գործողությունները մարդու անմիջական շրջապատում, այնքան տեսողությունը իր գործողությունները տարածում է նրանից հեռու. այդ է պատճառը, որ այս վերջինը ավելի խարուսիկ է։ Մի հայացքով մարդն ընդգրկում է հորիզոնի կեսը։ Հետևապես, միաժամանակ ծնվող այս բազմաթիվ զգացումների և նրանցից բխող դատողությունների մեջ անհնար է չսխալվել դրանցից որևէ մեկի մասին։ Այսպես, մեր բոլոր զգայարաններից տեսողությունը ամենից ավելի խարուսիկն է ճիշտ այն պատճառով, որ ամենից ավելի ծավալունն է, և որովհետև նրա գործողությունները շատ ավելի արագ են տեղի ունենում և ավելի մեծ տարածություն են ընդգրկում, քան մյուս զգայարանները, չեն կարող ուղղվել վերջիններից։ Դեռ ավելին. հեռանկարի ակնախաբկանքներն իսկ մեզ համար անհրաժեշտ են, որպեսզի կարենանք ճանաչել տարածությունը և համեմատել նրա մասերը։ Առանց այս թյուր երևույթների, մենք հեռավորության մեջ ոչինչ չէինք տեսնի. առանց մեծության ու լույսի աստիճանավորման, մենք ոչ մի տարածություն ի վիճակի չէինք լինի որոշել, կամ ավելի լավ է ասել՝ ոչ մի տարածություն գոյություն չէր ունենա մեզ համար։ Եթե երկու հավասար մեծության ծառերից մեկը, որ մեզնից հարյուր քայլի վրա է գտնվում, մեր աչքին նույնքան մեծ ու պարզ երևար, որքան մի ուրիշը, որ տասը քայլի վրա է գտնվում, մենք դրանց կտեղավորեինք իրար

տախտա, այստեղ հաջողություն չունի։ Համեմատությունն այստեղ հիմարների առաքինություն է։

կողքի։ Եթե առարկաների բոլոր ծավալները իրենց իսկական չափերով երևային մեզ, ապա մենք ոչ մի տարածություն չէինք տեսնի, և ամեն ինչ մեզ կթվար մեր աչքի վրա գետեղված։

Տեսողության զգայարանը իրերի մեծությունն ու հեռավորությունը որոշելու համար ունի միայն մի չափանիշ. դա մեր աչքի հետ նրանց կազմած անկյան բացվածքն է. և որովհետև այդ բացվածքը մի բարդ պատճառի պարզ հետևանքն է, ուստի մեր մեջ նրա առաջացրած դատողությունը ամեն մի մասնակի պատճառ թողնում է անորոշ, կամ անպայմանորեն լինում է սխալ։ Հակառակ դեպքում ի՞նչպես կարելի է պարզ տեսողությամբ որոշել, թե այն անկյունը, որի տակ ես մի առարկա մի ուրիշից ավելի փոքր եմ տեսնում, այդպիսին է։ Արդյո՞ք նրա համար, որ այդ առաջին առարկան իսկապես փոքր է, թե՞ որովհետև ավելի հեռու է։

Ուրեմն, այստեղ պետք է հետևել նախորդի հակառակ մեթոդին. փոխանակ զգացողությունը պարզեցնելու, պետք է այն կրկնապատկել, ստուգել միշտ մի ուրիշով, տեսողության զգայարանը ենթարկել շոշափելիքի զգայարանի հակակշռին և, այսպես ասած, զսպել առաջինի թափը երկրորդի կշռված ու չափված ընթացքով։ Առանց այս գործողության, գնահատման միջոցով մեր կատարած չափումները շատ անճիշտ կլինեն։ Մենք աչքաչափով չենք կարող ճշգրտորեն չափել բարձրությունները, երկարությունները, խորությունները, տարածությունները. իսկ որ դրա հանցանքը ոչ այնքան զգայարանինն է, որքան նրա կիրառությանը, ապացուցվում է նրանով, որ ճարտարագետները, ճարտարապետները, հողաչափները, որմնադիրները, նկարիչները, ընդհանրապես, ավելի անսխալ աչքաչափ ունեն, քան մենք, և նրանք ավելի մեծ ճշտությամբ են որոշում տարածության չափերը, որովհետև շնորհիվ իրենց արհեստի ավելի մեծ փորձառությամբ են օժտված։

Երեխաներից միշտ հեշտ է ստանալ այն ամենը, ինչ մարմինը շարժման է մղում՝ առանց հարկադրանքի։ Հազար ու մի տեսակ միջոց կա երեխաներին շահագրգռելու, որպեսզի չափեն, ճանաչեն, որոշեն հեռավորությունները։ Ահա մի շատ

բարձր կեռասենի, ի՞նչպես աննկատ, որ կեռաս հավաքենք. շտեմարանի ելարանը արդյոք հարմա՞ր է դրան։ Ահա մի խիստ լայն առվակ. ի՞նչպես անցնենք. տան բակի տախտակներից մեկը կհասնի՞ արդյոք առվակի մի ափից մյուսը։ Մենք կցանկանայինք մեր լուսամուտից ձուկ որսալ դղյակի ջրափոսում. քանի՞ գրկաչափ երկարություն պետք է ունենա մեր կարթի լարը։ Այս երկու ծառերի միջև ես ցանկանում եմ ճոլորթի կապել. երկու ձողաչափ երկարությամբ մի պարան կհերիքի՞ արդյոք։ Ինձ ասում են, որ մյուս բնակարանում մեր սենյակը կունենա քամհինգ քառակուսի մետր տարածություն. ի՞նչ եք կարծում, հարմա՞ր է մեզ, արդյոք սրանից մե՞ծ կլինի։ Մենք չափազանց սոված ենք. այդ երկու երևացող դյուղերից ո՞ր մեկին ավելի շուտ կհասնենք, որպեսզի ճաշենք, և այլն։

Մի անփույթ ու ծույլ երեխայի պետք էր վազել սովորեցնել։ Նա ո՛չ այդ և ո՛չ էլ մի ուրիշ մարզանքի սեր չուներ, չնայած նրան զինվորական ասպարեզի էին պատրաստում։ Չգիտեմ ինչու, այդ երեխան համոզված էր, որ իր դասակարգի մարդը ոչինչ չպետք է անի, ոչինչ չպետք է սովորի, որ ազնվական լինելը նրա համար և՛ բազուկ է, և՛ սրունք, և՛ ամեն տեսակ արժանիք։ Քիրոնի* իմաստությունն իսկ հազիվ կարողանար այդ ազնվականից մի թեթևաշարժ Աքիլլես դարձնել։ Հարցը է՛լ ավելի դժվարին էր այն պատճառով, որ ես ոչինչ չէի ուզում նրան առաջարկել, որովհետև ես հրաժարվել էի հորդորելու, խոստում տալու, սպառնալու, նրա մեջ բարի նախանձ և փայլելու ցանկություն արթնացնելու իրավունքներից։ Ի՞նչպես աննի, որ առանց նրան մի բան ասելու, ստիպեի վազել։ Իմ վազելը ապահով միջոց չէր ու կարող էր անպատեհությունների տեղիք տալ։ Բացի այդ, անհրաժեշտ էր նույն մարզանքն օգտագործել որպես նրան դաստիարակելու ափթ, որպեսզի մարմինն ու դատողությունը միաբան գործեին։ Ահա թե ես ինչպես վարվեցի, ես, այսինքն՝ նա, ով մեջ է բերում այս օրինակը։

---

* Այն կենտավրոսը, որին, ըստ դիցաբանության, հանձնված էր Աքիլլեսի դաստիարակությունը— Ս. Բ.

Կեսօրից հետո նրա հետ զբոսանքի[1] դուրս գալիս՝ երբեմն գրպանս դնում էի մի երկու կտոր նրա սիրած թխվածքից։ Զբոսանքի ժամանակ մի-մի հատ ուտում էինք ու գոհ սրտով տուն վերադառնում։ Մի օր էլ նա նկատեց, որ երեք կտոր թխվածք եմ վերցրել (նա կարող էր վեց հատ ուտել առանց անհանգստանալու). շտապ կերավ իր բաժինը՝ երրորդը պահանջելու համար։ «Ո՛չ,— ասացի ես,— ինքս էլ կարող եմ այն ուտել. կամ արի բաժանենք մեր մեջ. բայց ես ուզում եմ վաղքի մրցում կազմակերպել, ա՛յ, այն երկու երեխաների միջև»։ Կանչում եմ այդ երեխաներին, ցույց եմ տալիս թխվածքն ու անում իմ առաջարկը։ Նրանք ավելի լավ բան չէին կարող ուզել։ Թխվածքը դրինք մի մեծ քարի վրա, որը պետք է որպես նպատակակետ ծառայեր։ Սահմանները որոշվեցին. վազքի նշանը տրվեց, ու մրցումն սկսվեց։ Երկու երեխաներից նա, ով հաղթող հանդիսացավ, վերցրեց թխվածքը և առանց խղճի խայթի կերավ պարտված ընկերոջ ու մեր աչքի առաջ։

Այս հաճույքը թխվածքից ավելի արժեր, սակայն սկզբում ապարդյուն անցավ և ոչ մի ազդեցություն չթողեց։ Ես չվհատվեցի ու չշտապեցի։ Երեխաների դաստիարակությունը մի այնպիսի գործ է, որում պետք է իմանալ ժամանակ կորցնել, հետագայում այն շահելու համար։ Մենք շարունակեցինք մեր պտույտները։ Հաճախ վերցնում էինք երեք թխվածք, երբեմն չորս և երբեմն էլ մեկ կամ նույնիսկ երկու հատ էինք ունենում մրցման դուրս եկող երեխաների համար։ Եթե պարգևը մեծ չէր, ապա իրենք՝ մրցակիցները այնքան էլ պահանջկոտ չէին. հաղթողին գովաբանում, օվացիա էինք սարքում. ամեն ինչ հանդիսավոր ձևով էր կատարվում։ Մրցմանն ավելի մեծ թափ տալու և հետաքրքրությունն ուժեղացնելու համար

[1] Այդ մի դաշտային պտույտ էր, ինչպես քիչ հետո կտեսնենք։ Քաղաքում կատարված հասարակական զբոսանքները վնասակար են երկու սեռի երեխաների համար էլ։ Այդտեղ է, որ երեխաները սնափառություն են սովորում և ցանկանում զրավել ուրիշների ուշադրությունը։ Լյուքսեմբուրգում Տյուիլրիի այգիներում և, հատկապես, Պալե-Ռուայալում է, որ Փարիզի գեղեցիկ պատանկությունը ձեռք է բերում այն լիրբ ու ինքնահավան հավերը, որ նրանց ամբողջ Եվրոպայում ծաղրուծանակի և արհամարհանքի նշավակ է դարձնում։

վազքի սահմաններն ավելի հեռացրի, ընդունեցի ավելի մեծ քվով մրցողներ։ Երբ նրանք մոնում էին մրցման վայրը, բոլոր անցորդները կանգ էին առնում նրանց դիտելու համար. հավանության աղաղակները, բացականչությունները, ծափահարություններն ավելի էին ոգևորում նրանց. երբեմն նկատում էի, որ մեր փոքրիկն էլ էր հուզվում, վեր-վեր ցատկում, բացականչում, երբ երեխաներից մեկնումեկը հասնելու մոտ էր լինում կամ առաջ էր անցնում մի ուրիշից. սրանք նրա համար օլիմպիական խաղեր էին։

Բայց և այնպես, մրցողները երբեմն դիմում էին խարդախությունների. իրար բռնում էին նետ պահելու համար, վայր էին գցում կամ թե չէ՝ միմյանց ոտքի տակ քարեր էին նետում։ Այդ ինձ ստիպեց նրանց վազեցնել տարբեր կետերից, որոնք նպատակակետից նույն հեռավորության վրա էին գտնվում. քիչ հետո կտեսնենք այդ կանխազգուշության շարժառիթը, քանի որ ես պետք է լիակատար մանրամասնությամբ խոսեմ այս կարևոր գործի մասին։

Մեր ասպետիկին վերջիվերջո ձանձրացրեց այն, որ ուրիշները իր աչքերի առաջ ուտում էին իր ախորժակը գրգռող թխվածքները։ Նա սկսեց մտածել, որ գուցե վազքն իրոք մի բանի պետք գա, ու տեսնելով, որ ինքն էլ երկու ոտք ունի, սկսեց ծածուկ փորձեր անել։ Ես ձևացնում էի, թե ոչինչ չեմ տեսնում, բայց հասկանում էի, որ իմ հնարքը հաջողվել էր։ Երբ նա իրեն բավական ուժեղ զգաց (ես նրանից շուտ հասկացա իր միտքը), խնդրեց մնացած թխվածքը, իսկ ես մերժեցի։ Նա անընդհատ պնդում էր և ի վերջո ցասկոտ ասաց. «Լա՛վ, որ այդպես է, դրե՛ք թխվածքը քարի վրա, գծեցե՛ք սահմանը, և կտեսնենք»։ «Լա՛վ,—ասում եմ ծիծաղելով,— բայց մի՞թե ազնվականը կարող է վազել։ Դուք ավելի շուտ ձեր ախորժակը կգրգռեք, քան կբավարարեք այն»։ Խայթված իմ հեգնանքից, նա է՛լ ավելի է ոգևորվում ու հեշտությամբ տանում է հաղթանակը, որովհետև արշավի տարածությունը դիտավորյալ կարճ էի գծել ու լավագույն վազողին մրցումից հեռացրել։ Դժվար չէ հասկանալ, թե ինչպես, այս առաջին քայլից հետո, ինձ հաջողվեց նրա եռանդը միշտ վառ պահել։ Քիչ ժամանակ անց՝ այնքան տարվեց այդ

մարզանքով, որ, առանց իմ կողմնակի օգնության, նա գրեթե միշտ վստահ էր, թե կարող է հաղթել իմ ստահակներին, ինչքան էլ մեծ լիներ արշավի երկարությունը։

Ձեռք բերված այս հաջողությունից առաջացավ մի ուրիշը, որը բոլորովին մտքովս չէր անցել։ Այն ժամանակ, երբ հազվադեպ էր շահում մրցանակը, գրեթե միշտ մենակ էր ուտում, ինչպես անում էին իր մրցակիցները. բայց երբ սկսեց ավելի հաճախ հաղթանակ տանել, ավելի վեհանձն դարձավ՝ շատ անգամ թխվածքը բաժանելով մրցակիցների հետ։ Այս երեւույթն ինձ համար էլ բարոյական բնույթի մի դիտողություն եղավ, ու ես դրանով սովորեցի, թե որն է վեհանձնության ճշմարիտ սկզբունքը։

Նրա հետ շարունակելով տարբեր տեղեր նշաններ դնել, որտեղից յուրաքանչյուր մրցող պետք է սկսեր վազքը, ես նշանները, աննկատելիորեն, դնում էի անհավասար հեռավորությունների վրա. այդպիսով, քանի որ վազողներից մեկն ավելի երկար հանապարհ պետք է անցներ նույն տեղը հասնելու համար, նա, ակներեւաբար, ավելի աննպաստ պայմաններումն էր. այնուամենայնիվ, ինչքան էլ իմ սանին էի թողնում ընտրել իր վազքի մեկնակետը, նա չէր կարողանում օգտվել այդ առավելությունից։ Առանց ուշադրություն դարձնելու հեռավորության վրա, նա միշտ ընտրում էր ավելի հարթ ճանապարհը, այնպես որ ես, հեշտությամբ նախատեսելով իր ընտրությունը, մոտավորապես կարող էի այնպես անել, որ նա շահեր կամ կորցներ մրցանակը. այս հնարամտությունը մի քանի նպատակ էր հետապնդում։ Բայց որովհետեւ իմ դիտավորությունն էր, որ նա նկատեր տարբերությունը, ես աշխատում էի, որ զգա այդ. բայց չնայած, որ հանգստի ժամանակ նա անտարբեր էր, խաղերի ընթացքում այնքան էր աշխուժանում ու այնքան էր հավատում իմ ազնվությանը, որ շատ մեծ ճիգերից հետո միայն կարողացա նրան հասկացնել իմ խարդախությունը։ Վերջապես, հակառակ նրա բթամտությանը, հասա իմ նպատակին. նա ինձ մեղադրեց դրանում։ Ես նրան ասացի. «Ինչո՞ւ եք գանգատվում. մրցանակը ես եմ տալիս, մի՞թե իրավունք չունեմ իմ ուզած պայմանները դնելու. ո՞վ է ձեզ ստիպում վազել. մի՞թե ես խոստացել էի հա-

վասար տարածություններ նշել. չէ՞ որ ընտրությունը ձեզ եմ թողել. վերցրե՛ք ամենակարճ ճանապարհը, ոչ ոք ձեզ չի արգելում։ Չե՞ք տեսնում, որ ես ձեր օգտին եմ գործում, և որ այն անհավասարությունը, որի համար դուք տրտնջում եք, ի նպաստ ձեզ է, եթե դուք կարողանաք նրանից օգտվել»։ Իմ ասածը շատ պարզ էր. նա հասկացավ, և ճանապարհն ընտրելու համար հարկ եղավ ավելի մոտիկից նայել։ Նախ որոշեցինք քայլերով չափել. բայց երեխայի քայլերով չափելը դանդաղ կընթանար ու սխալ կլիներ. բացի այդ, ես ծրագրել էի մի օրվա մեջ մի քանի մրցում կազմակերպել. և որովհետև այդ զվարճությունը մի տեսակ մոլություն դարձավ, գտանք, որ անմտություն էր վալքուղիների չափելու վրա կորցնել այն ժամանակը, որ կարող էինք օգտագործել վազելու վրա։ Երեխայի աշխուժությունը շատ վատ է հարմարվում այս դանդաղկոտությանը. ուստի ջանացինք սովորել աչքաչափով ավելի լավ ու ավելի ճիշտ որոշել որևէ հեռավորություն։ Արդարև, ինձ համար դժվար չեղավ երեխայի մեջ ծավալել և ուժեղացնել այս ցանկությունը։ Ի վերջո, մի քանի ամսվա փորձով ու սխալների ուղղումով, նրա տեսողական կարկինը այն աստիճան զարգացավ, որ երբ ես երևակայական մի թխվածք էի դնում հեռավոր մի բարձրության վրա, նա աչքաչափով այդ հեռավորությունն այնքան ճիշտ էր որոշում, ինչքան հողաչափը՝ իր գործիքով։

Քանի որ բոլոր զգայարաններից տեսողությունը ամենից դժվար է բաժանել մտքի գործողությունից, ապա շատ ժամանակ է հարկավոր տեսնել սովորելու համար. երկար ժամանակ պետք է տեսողությունն ստուգել շոշափելիքով, որպեսզի նրանցից առաջինը վարժվի մեզ ճշգրիտ գաղափար տալ պատկերների ու տարածությունների մասին. առանց շոշափելիքի, առանց պրոգրեսիվ շարժման, աշխարհի ամենասուր աչքն անգամ չի կարող երբեք մեզ տալ ճշգրիտ գաղափարը տարածության։ Ամբողջ տիեզերքը ոստրեի համար մի կետ է միայն. դրանից ավելին չի կարող լինել, նույնիսկ եթե մարդկային մի հոգի այդ մասին ծանոթություններ տար նրան։ Միայն քայլելու, շոշափելու, հաշվելու, չափելու շնորհիվ կարելի է տարածությունները որոշել. մյուս կողմից,

եթե անվերջ չափենք, զգայարանը, հենվելով գործիքի վրա, ոչ մի ճշգրտություն չի ստանա։ Բայց և այնպես, երեխան չպետք է միանգամից չափելուց անցնի աչքով գնահատելուն. նախ պետք է մաս առ մաս համեմատի այն, ինչ չի կարող համեմատել միանգամից, ստույգ համամասնությունը փոխարինի գնահատման համամասնությամբ և փոխանակ միշտ ձեռքով չափելու, վարժվի այն միայն աչքով չափել։ Ինձ համար ցանկալի կլիներ, սակայն, որ մարդիկ իրենց առաջին գործողություններն ստուգեին իրական չափերով, որպեսզի ուղղեին իրենց սխալները, և եթե զգայարանի մեջ մի որևէ խարուսիկ երևույթ է նկատվել, նրանք սովորեին այն ուղղել լավագույն դատողությամբ։ Գոյություն ունեն այնպիսի բնական չափեր, որոնք ամենուրեք միևնույնն են, ինչպես՝ մարդու քայլը, նրա թևերի տարածությունը, հասակի բարձրությունը։ Եթե երեխան մի հարկի բարձրությունն է ուզում որոշել, նրա դաստիարակը կարող է որպես ձողաչափ ծառայել. եթե զանգակատան բարձրությունն է ցանկանում իմանալ, թո՛ղ տները վերցնի որպես այդպիսին. եթե փափագում է իմանալ ճանապարհի երկարությունը, թո՛ղ հաշվի, թե քանի ժամում կարելի է անցնել այդ տարածությունը։ Կարևորն այն է, որ այդ բոլորը նա ինքն անի, ինքնուրույն կերպով, և ոչ թե ուրիշները՝ նրա համար։

Դժվար կլինի ճշգրիտ գաղափար կազմել մարմինների տարածության և մեծության մասին՝ առանց սովորելու ճանաչել նրանց ձևն ու, նույնիսկ, առանց ընդօրինակելու նրանց, որովհետև իրականում այդ ընդօրինակումը բացարձակապես կապված է հեռապատկերի օրենքների հետ, և չենք կարող տարածությունները որոշել իրենց երևույթների հիման վրա, եթե որոշ չափով պատկերացում չունենք այդ օրենքների մասին։ Երեխաները, որոնք մեծ ընդօրինակողներ են, ամեն ինչ փորձում են նկարել. ես կցանկանայի, որ իմ երեխան զարգացներ այս արվեստը, ոչ թե իսկապես արվեստի համար, այլ որպեսզի իր տեսողությունը ճշգրիտ ու ձեռքը ճկուն դառնան. և, առհասարակ, շատ քիչ նշանակություն ունի, որ նա այս կամ այն վարժությունն իմանա, բավական է, որ նա ձեռք բերի սուր զգայություն ու մարմնի այն լավա-

գույն հատկությունը, որ ստացվում է այդ վարժությամբ։ Ուստի ես կխուսափեմ նրան հանձնարարել նկարչության այնպիսի մի ուսուցչի, որը ընդօրինակել կտար միայն ընդօրինակություններ և նկարել կտար միայն նկարներից. իմ ցանկությունն է, որ նա բնությունից բացի ուրիշ ուսուցիչ, իրերից բացի ուրիշ օրինակ չունենա։ Իմ ցանկությունն է, որ նա աչքի առաջ ունենա իրականը և ոչ թե այն պատկերող թուղթը, որ նա տունը գծագրելու համար որպես օրինակ ունենա տունը, ծառ՝ ծառը գծագրելու, մարդ՝ մարդը գծագրելու համար, որպեսզի նա վարժվի ճիշտ դիտել մարմիններն ու նրանց երևույթները և ոչ թե որպես իրական ընդօրինակություններ ընդունի կեղծ ու պայմանական նմանողություններ։ Ես նույնիսկ կարգելեմ նրան որևէ բան հիշողությամբ, առանց առարկաների նկարել, մինչև որ հաճախակի դիտումներով դրանց մտապատկերը մի լավ չտպավորվի նրա մտքի մեջ. հակառակ դեպքում, ճշմարտության տեղ ընդունելով արտաքուստ և մտացածին պատկերները, նա կկորցնի համեմատությունների գիտակցությունն ու բնության գեղեցկությունների ճաշակը։

Ես լավ եմ հասկանում, որ այդպես նա դեռ երկար ժամանակ պետք է թուղթ մրոտի, առանց մի կարգին բան տալու, որ նա կուշանա ձեռք բերել նկարիչներին հատուկ շրջագծերի շքեղությունը և ուրվագծերի նրբությունը, գույն և երբեք չի ունենա նկարագեղ տպավորությունների ճանաչողությունն ու նկարչական գեղեցիկ ճաշակը. սակայն, դրա փոխարեն, նա անպայման կունենա ավելի ճշգրիտ աչքաչափ, ավելի ամուր ձեռք, մեծության ու պատկերի ավելի ճիշտ հարաբերությունների գիտակցում, հարաբերություններ, որ գոյություն ունեն կենդանիների, բույսերի, բնական մարմինների միջև, և հեռապատկերի խաղերի ավելի արագ փորձառություն ձեռք կբերի։ Ահա իրոք այն, ինչին ես ձգտում եմ։ Եվ՝ իմ նպատակը ոչ այնքան իրերը ընդօրինակել սովորեցնելն է, որքան դրանք ճանաչելը։ Ես ավելի շուտ կցանկանայի, որ նա ինձ ցույց տար ականթ բույսը և նվազ հաջող նկարեր մի սյունագլխի դրասանգները։

Բայց և այնպես, այս և մյուս բոլոր վարժություններում

իմ նպատակը միայն այն չէ, որ իմ սանը մենակ զվարճանա։ Ես ուզում եմ այդ զվարճությունն է՛լ ավելի հաճելի դարձնել նրան, շարունակ անձամբ մասնակցելով դրան։ Ես չեմ ցանկանում, որ նա, բացի ինձնից, մի ուրիշ մրցակից էլ ունենա, բայց կլինեմ մշտական ու անվախ մրցակից. դա կշահագրգռի նրան առանց մեր միջև նախանձ առաջացնելու։ Ես մատիտը կբռնեմ նրա պես, սկզբում նույնքան վատ կնկարեմ, ինչքան ինքը։ Ես եթե Ապելլեսն * էլ լինեմ, դարձյալ հազիվ մի մրոտող կդառնամ։ Կսկսեմ մարդ նկարել այնպես, ինչպես սպասավորներն են նկարում պատերին՝ թևերի ու սրունքների փոխարեն մի-մի ձող ու մատները ձեռքերից ավելի երկար։ Բավական ժամանակ հետո մեզնից մեկը կամ մյուսը կնկատի այս անհամաչափությունը. մենք կնկատենք, որ սրունքներից մեկը հաստ է, որ այդ հաստությունը համաչափ չէ, որ բազուկը իրանի համեմատությամբ որոշակի երկարություն ունի։ Այս առաջադիմության մեջ ես ամենաշատը կդնամ նրա հետ կողք-կողքի, կամ նրանից այնքան քիչ առաջ կանցնեմ, որ նա հեշտությամբ կարողանա ինձ հասնել և հաճախ գերազանցել։ Մենք կունենանք ներկ, վրձին. կաշխատենք ընդօրինակել իրերի գույները և ամբողջ նրանց կերպարանքը, ինչպես նաև ձևը։ Մենք կերփնագրենք, կնկարենք, կմրոտենք, բայց մեր բոլոր մրոտումների մեջ ոչ մի անգամ չենք շեղվի բնությունից. մենք ամեն ինչ կանենք վարպետ-բնության աչքի առաջ։

Մենք երկար ժամանակ չէինք կարողանում որոշել, թե ինչպես զարդարենք մեր սենյակը. և ահա հնարը գտանք։ Ես մեր նկարները շրջանակի մեջ եմ դնել տալիս, ծածկել եմ տալիս գեղեցիկ ապակիով, որպեսզի այլևս դրանց ձեռք չտրվի, և տեսնելով, որ նրանք այդ դրության մեջ լավ են պահպանվում, յուրաքանչյուրը ավելի ուշադիր կվերաբերվի իր նկարներին։ Այդ նկարների տասնյակ տարբերակները խնամքով կդասավորեմ սենյակում, յուրաքանչյուր օրինակով ցույց տալով հեղինակի կատարած աստիճանական առաջադիմությունը՝ սկսած այն կետից, երբ, օրինակ, տունը հա-

* Հույն հռչակավոր նկարիչ մ. թ. ա. 4-րդ դարում։— Ե. Թ.

մարյա մի տձև քառակուսի է, մինչև այն նկարը, որի վրա սան ճակատը, պրոֆիլը, համեմատականությունը և ստվերները արդեն տրված են իրենց ամբողջ ճշտությամբ։ Այս աստիճանական զարգացումը մեզ կտա այնպիսի նկարներ, որոնք կշահագրգռեն մեզ և կհետաքրքրեն ուրիշների, ավելի ու ավելի բորբոքելով մեր մրցությունը։ Այդ նկարներից առաջինները, ամենից կոպիտները, ես կդնեմ փայլուն, ոսկեզօծ շրջանակների մեջ, որոնք նրանց արժեքը կբարձրացնեն։ Բայց երբ ընդօրինակումն ավելի ճշգրիտ ու նկարն իսկապես հաջող է, այն կզետեղեմ մի պարզ ու սև շրջանակի մեջ։ Այդպիսի նկարն այլևս կարիք չունի ուրիշ զարդարանքի, բացի իր սեփական արժեքից, և ափսոս է, որ շրջանակին էլ բաժին ընկնի այն ուշադրությունից, որ նկարին է պատկանում։ Այսպիսով, մեզնից յուրաքանչյուրը կձգտի ունենալ պարզ շրջանակ, և եթե մեկն ուզենա արհամարհել մյուսի որևէ մի նկարը, այն կդատապարտի ոսկեզօծ շրջանակի։ Կգա մի օր, երբ այդ ոսկեզօծ շրջանակները գուցե առակի նյութ դառնան, և մենք հիանանք այն մտքով, թե ինչքան մարդիկ միշտ գնահատված կլինեն, եթե իրենց դնեն այդպիսի շրջանակների մեջ։

Ես ասել եմ, որ երկրաչափությունը երեխաներին մատչելի գիտություն չէ, բայց դրա մեղավորը մենք ենք։ Մենք չենք կզում, որ նրանց ու մեր մեթոդները նույնը չեն, որ այն, ինչ մեզ համար դատողության արվեստ է, նրանց համար պետք է լինի տեսնելու արվեստ։ Փոխանակ մեր մեթոդը նրանց տալու, ավելի լավ կանեինք, եթե մենք նրանցը վերցնեինք, որովհետև երկրաչափություն սովորելու մեր ձևը որքան երեվակայության, նույնքան էլ դատողության գործ է։ Երբ առաջադրանքը տրված է, պետք է պատկերացնել նրա ապացույցումը, այսինքն՝ գտնել, թե այդ առաջադրանքն ուրդեն նախապես ծանոթ ո՛ր առաջադրանքի հետևությունն է, և այդ միևնույն առաջադրանքից բխող բոլոր հետևություններից ընտրել հենց այն, ինչ հարկավոր է տվյալ դեպքում։

Այսպիսով, ամենաճիշտ տրամաբանողը, եթե հնարագետ չէ, պարտավոր է հակիրճ լինել։ Իսկ ի՞նչ է հետևում դրանից. փոխանակ թույլ տալու, որ մենք ինքներս կատարենք

ապացուցումը, մեզ այն թելադրում են. փոխանակ մեզ դատողություն անել սովորեցնելու, դասատուն ինքն է մեր փոխարեն դատողություն անում ու միայն մեր հիշողությունն է մարզում։

Գծագրեցե՛ք ճշգրիտ ձևեր, զուգադրեցե՛ք դրանք, դրե՛ք մեկը մյուսի վրա, քննեցե՛ք նրանց հարաբերությունները. դուք կգտնեք տարրական երկրաչափությունը՝ գնալով դիտողությունից դիտողություն, չդիմելով ո՛չ սահմանումների, ո՛չ խնդիրների, ո՛չ էլ ցուցադրական որևէ ուրիշ ձևի, բացի պարզ մակադրությունից։ Իսկ ինչ վերաբերում է ինձ, ես չեմ փորձի Էմիլին երկրաչափություն սովորեցնել, նա ինքը ինձ կսովորեցնի. ես կփնտրեմ հարաբերությունները, իսկ նա կգտնի դրանք, որովհետև ես այնպիսի եղանակով կփնտրեմ, որ նա գտնի։ Օրինակ, մի շրջանակ գծելու համար, փոխանակ կարկին գործածելու, ես կօգտագործեմ թելի ծայրին կապված մեխ, որը կպտտվի իր առանցքի շուրջը։ Դրանից հետո, երբ ես ուզենամ շառավիղները միմյանց հետ համեմատել, Էմիլը ինձ վրա կծիծաղի ու ինձ հասկանալ կտա, որ անընդհատ ձգված միևնույն թելը չի կարող անհավասար տարածություններ գծած լինել։

Եթե ես ուզում եմ վաթսուն աստիճանի մի անկյուն չափել, այդ անկյան գագաթից ոչ թե մի աղեղ եմ գծում, այլ մի ամբողջ շրջագիծ, որովհետև, երբ գործ ունենք երեխաների հետ, ոչինչ չպետք է անել ենթադրաբար։ Ես գտնում եմ, որ շրջագծի՝ անկյան երկու կողմերի միջև գտնվող հատվածը սյդ շրջագծի մեկ վեցերորդին է հավասար։ Այնուհետև, միևնույն գագաթից մի ուրիշ ավելի մեծ շրջագիծ եմ քաշում ու գտնում եմ, որ այս երկրորդ աղեղը նույնպես իր շրջագծի մեկ վեցերորդ մասն է կազմում։ Մի երրորդ համակենտրոն շրջագիծ եմ քաշում, որի վրա միևնույն փորձն եմ կատարում. և այսպես շարունակում եմ փորձը նոր շրջագծերի վրա, մինչև որ Էմիլը, իմ տխմարությունից գրգռված, ինձ հայտնում է, որ յուրաքանչյուր աղեղ, մեծ կամ փոքր, միևնույն անկյունաչափով, միշտ էլ իր շրջագծի մեկ վեցերորդ մասը կկազմի և այլն։ Եվ ահա արդեն հասանք անկյունաչափի գործածությանը։

Ապացուցելու համար, որ կից անկյունները միշտ հավասար են երկու ուղիղ անկյան, մի շրջագիծ են գծում. ես, ընդհակառակն, այնպես կանեմ, որ էմիլը առաջին անգամ այդ նկատի շրջագծի մեջ, ապա նրան հարց կտամ. «Երբ շրջագիծը վերացնենք և թողնենք ուղիղ գծերը, արդյո՞ք փոփոխվում է անկյունների մեծությունը» և այլն։

Ընդհանրապես կարևորություն չեն տալիս ձևերի ճշտությանը, մոտավոր ենթադրություն են անում և չանում ապացուցել։ Մենք, ընդհակառակն, ապացուցումների հետևից երբեք չենք ընկնի։ Մեր առավել կարևոր գործը կլինի բոլորովին ուղիղ, հավասար և ճշգրիտ գծեր քաշել, շատ կատարյալ մի քառակուսի, շատ կլոր մի շրջագիծ գծել։ Ձևի ճշտությունը ստուգելու համար մենք այն կքննենք նրա բոլոր հայտնի հատկություններով, և այդ մեզ առիթ կծառայի ամեն օր նոր հատկություններ հայտնաբերելու։ Մենք տրամագծով կծալենք երկու կիսաշրջագծերը, անկյունագծով՝ քառակուսու երկու կեսերը. ապա կհամեմատենք մեր երկու ձևերը, որպեսզի տեսնենք, թե որի՞ եզրերն են ամենից ճիշտ հանդիպում իրար, հետևաբար և ամենից լավ են գծված։ Մենք կվիճենք այն մասին, թե արդյո՞ք այս բաժանման հավասարությունը միշտ կլինի զուգահեռագծերի, տրապեզների մեջ և այլն։ Երբեմն հարկավոր է նախատեսել փորձի հաջողությունը՝ այն կատարելուց առաջ, աշխատել գտնել պատճառներ և այլն։

Երկրաչափությունը իմ սանի համար սոսկ քանոնն ու կարկինը ճիշտ օգտագործելու արվեստ է։ Երկրաչափությունը նա չպետք է շփոթի նկարչության հետ, որի համար կարիք չկա գործածելու այդ գործիքներից և ոչ մեկը։ Քանոնն ու կարկինը պետք է պահել փականքի տակ. նրանց գործածությունը թույլ կտրվի միայն հազվագյուտ դեպքերում ու կարճ ժամանակով, որպեսզի երեխան չսովորի մրոտել։ Բայց մեր գծագրությունները կարող ենք երբեմն մեզ հետ տանել, երբ գնում ենք զբոսնելու, և խոսել, թե ինչ ենք արել և ինչ ենք ուզում անել։

Երբեք չեմ մոռանա Տուրինում տեսածս այն պատանուն, որին երեխա ժամանակ սովորեցրել էին շրջագծերի ու մակերևույթների գծագրությունը՝ ամեն օր նրան ընտրել տալով,

երկրաչափական բոլոր ձևերի մեջ, գուգաշրջագծային մեղրալրլիթներ։ Փոքրիկ շատակերը ըստ երևույթին անգիր էր արել Արքիմեդի օրենքը՝ ընտրելու համար այն ձևը, որի մեջ ավելի թխվածք կարող էր տեղավորվել [1]։

Երբ երեխան օդապարուկ է խաղում, նա իր աչքն ու ձեռքը վարժեցնում է ճշգրտության. երբ հոլին է մտրակում, նա իր ուժն է ավելացնում, բայց ոչինչ չի սովորում։ Ես քանիցս հարցրել եմ՝ ինչո՞ւ երեխաներին չեն թույլ տալիս խաղալու ճարպկություն մարզող այնպիսի խաղեր, ինչպիսիք խաղում են մեծերը, օրինակ՝ գնդախաղ, մականախաղ, բիլիարդ, աղեղնախաղ, փետրագունդ, նվագել երաժշտական գործիքների վրա։ Ինձ պատասխանել են, թե այդ խաղերից մի քանիսը երեխաների ուժից վեր են, իսկ մյուսների համար նրանց անդամներն ու գործարանները բավականաչափ կազմակերպված չեն։ Այս պատճառաբանությունները ըստ իս հիմնավորված չեն. երեխան թեև չափահաս մարդու բարձրությունը չունի, բայց և այնպես չի հրաժարվում մեծերի հագուստ կրելուց, քանի որ այն նման է իրենին. սրանով չեմ ուզում ասել, որ երեխան մեզ հետ բիլիարդ խաղա երեք ոտնաչափ բարձրությամբ բիլիարդի վրա, գունդ գցի մեր խաղարաններում, ոչ էլ նրա փոքրիկ ձեռքը տան գնդախաղի մի ռակետ. բայց թո՛ղ նա խաղա մի սրահում, որի լուսամուտներն ապահով են. թո՛ղ նախ միայն փափուկ գնդիկներ գցի. թո՛ղ նրա առաջին ռակետները փայտից լինեն, ապա կաշվից ու, վերջապես, աղիքից պատրաստված լարից՝ նայած նրա առաջադիմությանը։ Դուք գերադասում եք փետրագունդը, որովհետև քիչ է հոգնեցնում և անվտանգ է։ Սխալվում եք։ Փետրագունդը կանացի խաղ է, բայց չկա մի կին, որին չփախցնի թռչող գնդակը։ Նրանց սպիտակ մորքը չպետք է կոպտանա հարվածներից, ոչ էլ դեմքերը ճմլվածքներ ստանան։ Բայց մենք, որ ստեղծված ենք չարքաշ լինելու համար, կարծո՞ւմ եք, որ առանց դժվարության կհասնենք դրան, և

[1] Դրանք այն ձևերն են, որոնց շրջանակները կամ շրջագծերը հավասար երկարություն ունեն։ Հաստատված է, որ բոլոր ձևերի մեջ շրջանն ամենից մեծ մակերեսույթն ունի։ Երեխան, ուրեմն, ընտրած պետք է լիներ շրջանակաձև խմորեղենը։

ի՞նչպես կարող ենք պաշտպանվել, եթե ոչ մի ժամանակ հարձակման չենք ենթարկվել։ Միշտ էլ ալարկոտ ենք խաղում այն խաղերը, որոնք մեջ անհաջողությունից որևէ վտանգ չի գա։ Ընկնող փետրագունդը ոչ ոքի վնաս չի պատճառում, բայց ոչինչ բազուկներն այնպես չի աշխուժացնում, ինչպես գլուխը պահպանելու գործողությունը, ոչինչ հայացքն այնպես չի սրում, ինչպես աչքերը պաշտպանելու կարիքը։ Ցատկել սրահի մի ծայրից մյուսը, որոշել դեռևս օդում գտնվող գնդակի թռիչքը, այն ետ մղել ձեռքի դիպուկ ու շեշտակի հարվածով՝ նման խաղերը ոչ այնքան համապատասխանում են մարդուն, որքան օգնում նրա կազմավորմանը։

Երեխայի նյարդերը, ասում են, շատ փխրուն են։ Նրանք նվազ առաձգականություն ունեն, բայց ավելի ճկուն են. նրա բազուկը թույլ է, բայց վերջապես բազուկ է. համեմատությունները պահպանելով, երեխան իր բազուկով պետք է կատարի այն ամենը, ինչ կատարում են նմանօրինակ ուրիշ գործիքով։ Երեխաների ձեռքերը բացարձակ զուրկ են ճարպկությունից։ Այդ պատճառով էլ ես ցանկանում եմ, որ նա ձեռք բերի այն։ Եթե որևէ մեծահասակ նրանց նման քիչ մարզված լիներ, ավելին չէր կարող ունենալ. մեր օրգանների աշխուժությունը կարող ենք ճանաչել միայն դրանք կիրառելուց հետո։ Երկարատև փորձարկությամբ միայն կարող ենք իմանալ, թե ինչի ենք մենք ընդունակ, և այդ փորձն է այն իսկական դիտությունը, որով ինչքան կարելի է շուտ պետք է զբաղվել։

Այն ամենը, ինչ կատարվում է, կարելի է կատարել։ Ուրեմն, չի կարելի անսովոր համարել այն, որ ճարպիկ ու համարձակ երեխաների անդամները նույնքան դյուրաշարժ են, ինչքան չափահասներինը։ Գրեթե բոլոր տոնավաճառներում տեսնում ենք, թե ինչպես երեխաները հավասարակշռության փորձեր են անում, քայլում ձեռքերի վրա, ցատկում, պարում են պարանի վրա։ Քանի տարի է «Իտալական կոմեդիա» թատրոնում երեխաների բալետային խումբը բազմաթիվ հանդիսականներ է գրավում։ Ո՞վ չի լսել Գերմանիայում և Իտալիայում հռչակավոր Նիկոլինիի մնջկատակի (պանտոմիմա) խումբը։ Մի՞թե այս երեխաների շարժումները նվազ զարգացած

են ու նվազ շնորհալի. մի՞թե նրանք ավելի վատ լսողություն ունեն, պարելու ժամանակ ավելի քիչ թեթևաշարժ են, քան չափահաս պարողները։ Ի՞նչ նշանակություն ունի, որ սկզբնական շրջանում մատները հաստ են, կարճ, նվազ ճկուն, ձեռքերը փափկիկ են ու անկարող մի բան բռնելու. մի՞թե այդ խանգարում է, որ բազմաթիվ երեխաներ գրում ու նկարում են այն տարիքում, երբ ուրիշները դեռևս ո՛չ մատիտ կարող են բռնել, ո՛չ էլ գրիչ։ Ամբողջ Փարիզը դեռ մինչև օրս հիշում է այն փոքրիկ անգլուհուն, որը տասը տարեկան հասակում հրաշքներ էր կատարում դաշնամուրի վրա։ Ես տեսել եմ մի բարձր պաշտոնատարի ութ տարեկան երեխայի, որին դնում էին ճաշասեղանի վրա, ինչպես մի արձան սպասների մեջտեղ, և որ իր մեծությամբ մի ջութակի վրա նվագում էր՝ իր տաղանդով զարմացնելով նույնիսկ արտիստներին։

Այս և հարյուր-հազարավոր այլ օրինակներ վկայում են, որ սխալ է այն կարծիքը, թե երեխաները անընդունակ են կատարելու մեծահասակների մարզանքները։ Եվ եթե մի քանի փորձերի մեջ նրանք հաջողություն չեն ունենում, այդ այն պատճառով է, որ վարժված չեն։

Ինձ կարող են ասել, որ մարմնի վաղաժամ զարգացման հարցում ես սխալվում եմ, քանի որ դա հակասում է իմ մեթոդին՝ նույնը չպահանջելով երեխայի մտավոր զարգացման համար։ Տարբերությունը շատ մեծ է։ Մի դեպքում հաջողությունը երևութական է, իսկ մյուսում՝ իրական։ Ես ապացուցեցի, որ այն խելքը, որ թվում է, թե ունեն երեխաները, իրականում չունեն. մինչդեռ այն ամենը, ինչ կարծես թե կատարում են, իրոք կատարում են։ Բացի այդ, միշտ պետք է հիշել, որ այս բոլորը միայն խաղ է կամ սոսկ այդպիսին պետք է լինի, այսինքն՝ շարժումների կամավոր ու հեշտ ղեկավարում, որ նրանցից պահանջում է բնությունը, զվարճությունների ավելի հետաքրքիր դարձնելու արվեստ, դրանք ավելի հաճելի դարձնելու համար, առանց երբեք ամենափոքր հարկադրանքով այդ զվարճությունները աշխատանքի վերածելու։ Չէ՞ որ, վերջիվերջո, ինչով էլ զվարճանան, այն կարելի է դարձնել դաստիարակության միջոց։ Իսկ եթե այդպես էլ չլինի, բավական է, որ նրանք անվնաս զվարճանան ու ժամանակ

անցկացնեն, իսկ նրանց բոլոր տեսակի առաջադիմությունները կարևոր չեն ներկայի համար. մինչդեռ, երբ հարկ կլինի նրանց սովորեցնել այս կամ այն բանը, ինչ էլ ուզում է լինի, անկարելի է, որ գործը գլուխ գա առանց հարկադրման, դժվարության ու ձանձրույթի։

Այն, ինչ ես ասացի երկու զգայարանների մասին, որոնց գործածությունը ավելի տևական ու ավելի կարևոր է, կարող է օրինակ ծառայել նաև մյուս զգայարանները մարզելու համար։ Տեսանելիքն ու շոշափելիքը հավասարապես գործում են քե՛ հանգստի և քե՛ շարժման մեջ եղող մարմինների վրա. բայց որովհետև միայն օդի տատանումներն են, որ գրգռում են լսողությունը, հետևապես, միայն շարժվող մարմինը կարող է աղմուկ կամ ձայն առաջացնել. և եթե ամեն ինչ հանդարտ լիներ, ապա մենք ոչինչ չէինք լսի։ Այսպիսով, քանի որ գիշերը մենք շարժվում ենք այնքան, ինչքան կարիք ենք զգում, կվախենանք, ուրեմն, միայն շարժվող մարմիններից, ապա և մեր ականջը միշտ պետք է սրած պահենք ու մեր զգացածից դատենք, թե ձայն առաջացնող մարմինը մե՞ծ է թե փոքր, հեռո՞ւ է թե մոտիկ, նրա առաջացրած շարժումը ուժե՞ղ է թե թույլ։ Տատանվող օդը, արգելքի հանդիպելով, անդրադառնում է և արձագանք տալիս, այնպես որ մարմնի աղմուկը կամ ձայնը մեզ է հասնում ոչ այնտեղից, ուր իսկապես գտնվում է, այլ ուրիշ տեղից։ Եթե դաշտում կամ ձորում ականջներս հպենք գետնին, մարդկանց ձայնը, ձիերի դոփյունը հեռվից շատ ավելի լավ կլսենք, քան եթե կանգնած լինենք։

Ինչպես որ տեսանելիքը համեմատեցինք շոշափելիքի հետ, լավ կլինի, եթե այն համեմատենք նաև լսողության հետ և իմանանք, թե երկու տպավորություններից ո՞րը միաժամանակ միևնույն մարմնից բխելով, ավելի շուտ կհասնի իր համապատասխան զգայարանին։ Երբ տեսնում ենք թնդանոթի բոցը, գեռևս կարելի է հարվածից խուսափել, բայց հենց որ ձայնը լսեցինք, արդեն ուշ կլինի. անմիջապես կհասնի նաև ռումբը։ Կայծակի հեռավորությունը կարելի է որոշել շանթի երևալու ու որոտի միջև ընկած ժամանակի տևողությամբ։ Արե՛ք այնպես, որ երեխան բոլոր այս փորձերին ծանոթ լինի,

որ նա ինքը կատարի բոլոր հնարավոր փորձերը, իսկ մնացածներն ըմբռնի ինդուկցիայով. բայց հարյուր անգամ ավելի լավ է չիմանա դրանք, քան թե դուք նրան թելադրեք։

Մենք մի այնպիսի օրգան ունենք, որը համապատասխանում է լսողությանը, դա ձայնի օրգանն է. սակայն այդպիսի օրգան չկա տեսողության համար. չենք կարող գույներ արտադրել, ինչպես որ ձայներ ենք արտադրում լսողության համար։ Ձայնի օրգանը առավել մի միջոց է առաջին զգայությանը՝ լսողությունը զարգացնելու համար. մենք կարող ենք մարզել ակտիվ օրգանն ու պասսիվ օրգանը՝ մեկը մյուսի օգնությամբ։

Մարդը երեք տեսակ ձայն ունի՝ խոսքի կամ արտասանության ձայն, երգի կամ քաղցրահնչյուն ձայն, հոգեհուզ կամ շեշտավորիչ ձայն, որը արտահայտում է կրքերը և որը աշխուժացնում է երգն ու խոսքը։ Երեխան, ինչպես չափահաս մարդը, ունի այդ երեք տեսակ ձայները, սակայն նա դեռևս չի կարողանում միավորել դրանք. նա մեզ պես ծիծաղում, ճչում, աղերսում, բացականչում, հեծեծում է, բայց անկարող է դրանց դյուրադարձությունները միաձուլել մյուս երկու ձայներին։ Կատարյալ է համարվում այն երաժշտությունը, որը լավագույն կերպով միաձուլում է այս երեք տեսակ ձայները։ Երեխաները ընդունակ չեն այդպիսի երաժշտության, ու նրանց երգը երբեք սրտառուչ չէ։ Այդպես էլ, խոսքի ձայնի մեջ, նրանց լեզուն անարտահայտիչ է. նրանք աղաղակում են, բայց չեն շեշտավորում, և քանի որ նրանց խոսքերի մեջ քիչ շեշտադրություն կա, նրանց ձայնն էլ անարտահայտիչ է։ Մեր սանի խոսքը ավելի միատեսակ, ավելի պարզ կլինի, որովհետև կրքերը, դեռևս զարթնած չլինելով նրա մեջ, իրենց ձայնը երբեք չեն միացնում նրա ձայնին։ Ուրեմն սխալ է նրան ողբերգական կամ կատակերգական դերեր տալը, ինչպես նաև սխալ է սովորեցնել, ինչպես ասում են, ճարտասանություն անել։ Դժվար թե նա կարողանա մի տոն տալ այնպիսի բառերի, որոնք անկարող է ըմբռնել, և արտահայտել այնպիսի զգացումներ, որոնք երբեք չեն հուզել նրան։

Սովորեցրե՛ք նրան խոսել միօրինակ, պարզ, լավ հոդավորել, արտասանել ճիշտ ու առանց արվեստականության,

ճանաչել ու հետևել քերականական շեշտին, առոգանությանը, խոսել միշտ բավական բարձր ձայնով, որպեսզի լսելի լինի, բայց ոչ ավելի բարձր, քան պետք է, մի թերություն, որը հաճախ է կոլեկտիվներում դաստիարակված աշակերտներին. վերջապես, ամեն ինչում պետք է չափավոր լինել։

Երգի մեջ էլ նրա ձայնը դարձրե՛ք ճիշտ, հավասար, ճկուն, հնչեղ. նրա ականջը դարձրե՛ք զգայուն՝ չափի ու ներդաշնակության նկատմամբ, բայց դրանից ոչ ավելի։ Նմանողական ու թատերական երաժշտությունը անհամապատասխան է նրա տարիքին. ես նույնիսկ չէի կամենա, որ նա բառերով երգեր. նրա համար հատուկ երգեր հորինել, նրա տարիքին համապատասխան ու նույնքան պարզ, ինչքան նրա մտքերը։

Պարզ է, որ եթե ես չեմ շտապում նրան տառերը կարդալ սովորեցնել, չեմ էլ շտապի սովորեցնել նոտաները կարդալ։ Նրա ուղեղից պետք է հեռացնել ամեն մի ճիգ պահանջող ուշադրություն, չպետք է շտապել նրա միտքը կենտրոնացնել պայմանական նշանների վրա։ Այս բանը թերևս ունի, խոստովանում եմ, իր դժվարությունը. որովհետև, եթե նոտաների ծանոթությունը սկզբում այնքան անհրաժեշտ չի թվում՝ երգել կարենալու համար, ինչքան տառերի ծանոթությունը՝ խոսել իմանալու համար, համենայն դեպս, կա մի տարբերություն՝ խոսելու ժամանակ մենք մեր անփոփոխ մտքերն ենք արտահայտում, մինչդեռ երգելու ժամանակ՝ միայն ուրիշների մտքերը։ Իսկ վերջիններն արտահայտելու համար կարդալ է հարկավոր։

Բայց նախքան կարդալը, կարելի է երգը լսել, իսկ այն ականջին ավելի հարազատ ձևով է հասնում, քան աչքին։ Բացի այդ, երաժշտություն լավ գիտենալու համար բավական չէ այն արտահայտել, պետք է և հորինել. մեկը պետք է սովորել մյուսի հետ, առանց որի երբեք չի կարելի լավ երգել իմանալ։ Ձեր փոքրիկ երաժշտին վարժեցրե՛ք նախ կազմել շատ կանոնավոր, լավ չափավորված դարձվածքներ. ապա դրանք միմյանց հետ կապել շատ պարզ եղանակավորումով, վերջապես, դրանց տարբեր հարաբերությունները նշել մեծ ճշգրտությամբ, որին կարելի է հասնել չափերի և ընդհա-

աումների լավ ընտրությամբ. մանավանդ զգուշացե՛ք տարօրինակ, պաթետիկ ու զգայացունց երգերից։ Տվե՛ք նրան շարունակ քաղցրահնչյուն ու պարզ եղանակներ, որոնք բխեն ձայնի էական լարերից և բասը միշտ այնպես ընդգծեն, որ նա այն զգա ու ձայնակցի առանց դժվարության, որովհետև ձայնն ու ականջը մշակելու համար Երեխան միայն դաշնամուրի նվագակցությամբ պետք է երգի։

Ձայները լավ նշելու համար, արտասանելիս դրանք պետք է հոդավորել. այստեղից է առաջանում մի շարք վանկեր երգելով արտասանելու սովորությունը։ Ձայնաստիճանները որոշելու համար պետք է անուններ տալ թե՛ այդ աստիճաններին և թե՛ նրանց միջև տարբեր անփոփոխ միջոցներին. սրանից էլ առաջանում է ինտերվալների անունների անհրաժեշտությունը, ինչպես նաև այբուբենի անունների, որոնցով նշում են դաշնամուրի ստեղները և գամմայի նոտաները։ C և A *ցույց են տալիս կայուն ու անփոփոխ ձայներ, որոնք միշտ արտահայտվում են միևնույն ստեղներով։* Ut և la *ուրիշ բան են։* Ut*-ն մաժոր եղանակի մշտական սկզբնաձայնն (*toniqne*) է կամ մինոր եղանակի միջնակը (*médiante*)։* La*-ն մինոր հնչյունաշարի մշտական սկզբնաձայնն է, կամ վեցերորդ նոտան՝ մաժոր հնչյունաշարի։ Այսպիսով, գրերը նշում են մեր երաժշտական սիստեմի հարաբերությունների անփոփոխ ձևերը, իսկ վանկերը՝ տարբեր տոներում նման հարաբերությունների նմանակից (*homologue*) ձևերը։ Գրերը ցույց են տալիս դաշնամուրի ստեղները, իսկ վանկերը՝ եղանակի աստիճանները։ Ֆրանսիացի երաժշտագետները տարօրինակ ձևով խառնել են այս տարբերությունները։ Նրանք շփոթել են վանկերի իմաստը գրերի իմաստի հետ, և զուր տեղը կրկնելով նտեզների նշանները, ոչինչ չեն թողել լարերի ձայնն արտահայտելու համար, այնպես որ նրանց համար* ut*-ն և* C*-ն միշտ էլ միևնույն բանն են. մինչդեռ այդպես չէ ու այդպես չպետք է լինի, այլապես ինչի՞ է ծառայում* C*-ն։ Ուրեմն, նրանց կարդալու ձևը չափազանց դժվար է, առանց որևէ օգտակարության, առանց մտքին որևէ հստակ գաղափար ներելու, քանի՞ որ այդ մեթոդով այս երկու վանկերը՝* ut *և* mi*, օրինակ, կարող են հավասարապես նշանակել մի տերցա-*

յին մաժոր, մինոր, ավելացրած կամ պակասեցրած։ Որքան տարօրինակ է, որ աշխարհի մի երկրում, ուր գրվում են երաժըշտական ամենագեղեցիկ գրքերը, հենց ամենից դժվար են սովորում երաժշտությունը։

Մեր սանի հետ մենք կկիրառենք ավելի պարզ ու հստակ միջոց. նրա համար թո՛ղ լինի երկու հնչյունաշար՝ միատեսակ հարաբերություններով, որոնք միշտ որոշված լինեն նույն վանկերով։ Երգելիս լինի թե երաժշտական գործիք նվագելիս, թո՛ղ նա իմանա իր հնչյունաշարը հաստատել այն տասներկու ձայներից յուրաքանչյուրի վրա, որոնք նրան որպես հիմք կարող են ծառայել, և ինչպիսին էլ տոնայնության փոփոխությունը (մոդուլյացիա), D-ով, C-ով, G-ով և այլն, ֆինալը միշտ էլ լինի la կամ ut, համաձայն հնչյունաշարի։ Այդ կերպով նա միշտ էլ ձնզ կըմբռնի. հնչյունաշարի էական հարաբերությունները՝ ճիշտ երգելու և նվագելու համար, նա չի մոռանա երբեք. նրա կատարումը ավելի հստակ և առաջադիմությունը ավելի արագ կլինեն։ Ոչինչ այնքան տարօրինակ չէ, ինչքան այն, որ ֆրանսիացիները անվանում են նոտաները բնականորեն կարդալ. դա նշանակում է մտքերն անջատել առարկայից, որպեսզի փոխարինեն ուրիշ մտքերով, որոնք միայն շփոթություն են առաջ բերում, և ոչինչ այնքան բնական չէ, ինչքան ձայնափոխությամբ կարդալը՝ երբ հնչյունաշարը ձայնափոխած է։ Բայց բավական է ինչքան խոսեցի երաժշտության մասին, սովորեցրե՛ք այն ինչպես ուզում եք, միայն թե սովորեցրե՛ք որպես զվաճալիք։

Մենք արդեն բավականաչափ տեղյակ ենք օտար մարմինների՝ մեր մարմնի համեմատ ունեցած վիճակի մասին, նրանց ծանրության, ձևի, գույնի, ամրության, մեծության, հեռավորության, ջերմաստիճանի, հանգստի, շարժման մասին։ Մենք գիտենք, թե նրանցից որը պետք է մոտեցնենք մեզ, որը հեռացնենք մեզնից, թե ինչպես պետք է վարվենք նրանց դիմադրությունը խորտակելու կամ նրանց այնպիսի դիմադրություն հակադրելու համար, որ մեզ պաշտպաներ նրանց հարձակումից. բայց դա բավական չէ. մեր սեփական մարմինը անվերջ մաշվում է, նա կարիք ունի անընդհատ վերականգնման։ Որ-

քան որ մենք ընդունակ ենք ուրիշ կենսանյութերը վերածել անփական կենսանյութերի, սակայն ընտրությունը կարևոր է. մարդու համար ամեն ինչ սնունդ չէ. և այն կենսանյութերի մեջ, որոնք կարող են օգտագործվել որպես սնունդ, կան առավել կամ նվազ նպատակահարմարները, նայած իր կազմվածքին, ապրած միջավայրին, հատուկ խառնվածքին և այն ապրելակերպի, որ թույլ է տալիս նրա վիճակը։

Մենք քաղցից կամ թունավորումից կմեռնեինք, եթե սնունդն ընտրելու համար հարկ լիներ սպասել մինչև փորձը մեզ սովորեցներ ճանաչել և ընտրել այն։ Սակայն գերբազում նախախնամությունը, որ հաճույքը դարձրել է զգայուն էակների գոյության միջոց, մեզ ազդարարում է, որ այն, ինչ դուր է գալիս մեր քիմքին, հարմար է նաև մեր ստամոքսին։ Բնականաբար, մարդու համար ավելի լավ բժիշկ չկա, քան նրա սնփական ախորժակը, և եթե վերցնենք մարդկային կյանքը իր նախնական վիճակում, բնավ չեմ կասկածում, որ նրա համար ամենահաճելի ուտելիքը եղել է նաև ամենաառողջարարը։

Դեռ ավելին. բնությունը հոգում է ոչ միայն այն կարիքները, որ ինքն է տալիս մեզ, այլ նաև այն, ինչ մենք ինքներս ենք մեզ տալիս, և որպեսզի ցանկությունն ու կարիքը միշտ միասին լինեն, նա այնպես է անում, որ մեր ճաշակները փոփոխվում ու աղավաղվում են՝ համաձայն մեր ապրելակերպի։ Ինչքան մենք հեռանում ենք բնական վիճակից, այնքան կորցնում ենք մեր բնական ճաշակը. կամ, ավելի ճիշտ, սովորությունը մեզ համար դառնում է երկրորդ բնավորություն, որն այնպես է փոխարինում առաջինին, որ այլևս բոլորովին անճանաչելի է դառնում։

Դրանից հետևում է, որ ամենաբնական ճաշակը պետք է լինի նաև ամենից պարզը, որովհետև այն ամենից հեշտ է փոփոխվում։ Փոխանակ սրվելու և զգուվելու մեր քմահաճույքներից, ճաշակն այնպիսի ձև է ստանում, որն այլևս փոփոխության չի ենթարկվում։ Այն մարդը, որ դեռևս ոչ մի երկրի չի ընտելացել, առանց դժվարության կարող է հարմարվել մի որևէ երկրի. սակայն որևէ երկրի սովորած մարդը այլևս մի ուրիշ երկրի մարդ դառնալ չի կարող։

Այս բանը ինձ ճիշտ է թվում բոլոր տեսակետներով, և դեռ ավելին. դա առանձնապես վերաբերում է իսկական ճաշակին։ Մեր առաջին սնունդը կաթն է. մենք աստիճանաբար ենք վարժվում սուր ճաշերին։ Սկզբում նրանցից խորշում ենք։ Պտուղ, բանջարեղեն, խոտ և, վերջապես, մի քանի տեսակ խորոված միս՝ առանց համեմի ու աղի, սրանք են եղել նախամարդկանց ճաշերը։ Առաջին անգամ, երբ վայրենին գինի է խմում, դեմքը թթվեցնում է ու ետ է տալիս. նույնիսկ մեզնից նա, ով մինչև քսան տարեկան հասակը ոգելից ըմպելիք չի գործածել, չի կարող դրան ընտելանալ. մենք բոլորս հակակոհոլականներ կլինեինք, եթե փոքր հասակում մեզ գինի չտային։ Վերջապես, ինչքան մեր ճաշակները պարզ են, այնքան նրանք համընդհանուր են. առհասարակ բարդ ուտելիքներն են միշտ ամենից ավելի զզվանք առաջացնում։ Տեսե՞լ եք երբևէ, որ մեկը զզվի հացից կամ ջրից։ Այդ է բնության ուղին, ուրեմն և այդ է մեր կանոնը։ Ջանանք պահպանել երեխաների նախնական ճաշակը՝ կարելի եղածի չափ երկար ժամանակով. թո՛ղ նրա ուտելիքը լինի պարզ ու հասարակ, թո՛ղ նրա քիմքը չընտելանա բարկ համերին, և նա բնավ բացարձակ ճաշակ չստանա։

Ես այստեղ չեմ ուզում քննել, թե այս ապրելակերպն ավելի առողջարար է թե ոչ։ Ես դրան ոչ մի տեսանկյունից չեմ մոտենում։ Իմ նախընտրությունը կատարելու համար բավական է, որ ես գիտենամ, թե դա ամենից ավելի է համապատասխանում բնությանը և ավելի հեշտ է հարմարվում մյուս ապրելաձևերին։ Նրանք, ովքեր ասում են, որ երեխաներին պետք է սովորեցնել այնպիսի սննդի, որ ստանալու են հասուն տարիքում, ինձ թվում է, որ ճիշտ չեն դատում։ Ինչո՞ւ նրանց սնունդը պիտի միևնույնը լինի, երբ ապրելակերպը այնքան տարբեր է։ Ջափահաս մարդը, որ ուժասպառ է լինում աշխատանքից, մտածմունքից, հոգսերից, կարիք ունի սննդարար կերակրի, որպեսզի ուղեղը նոր ուժ ստանա. երեխան, որ ամբողջ օրը շարժման մեջ է, որի մարմինը զարգանում է, առատ սննդի կարիք ունի, որը նրան շատ կենսանյութ է հայթայթում։ Հասունացած մարդն ունի արդեն իր կյանքը, իր գործը, իր բնակարանը. իսկ ո՞վ կարող է գուշակել, թե ինչ

ճակատագիր է սպասում երեխային ապագայում։ Համենայն դեպս, չպետք է այնքան որոշակի ձև տալ նրա ապրելակերպին, որպեսզի, երբ հարկ լինի այն փոխել, մեծ դժվարություններ չկրի։ Այնպես չանենք, որ սովից մեռնի օտար երկրում, եթե ամեն տեղ իր հետ չի տանում ֆրանսիացի մի խոհարարի, և մի օր չասի, որ միայն Ֆրանսիայում գիտեն ուտել։ Ահա, ի միջի այլոց, մի քահանաճ դավասանք։ Իմ կարծիքով, ընդհակառակն, միայն ֆրանսիացիք են, որ ուտել չգիտեն, քանի որ այնքան դժվար է կերակուրները նրանց ուտելի դարձնել։

Մեր տարբեր զգացողություններից ընդհանրապես համն է, որ ամենից ավելի է ներգործում մեզ վրա։ Ուրեմն, մենք ավելի ենք շահագրգռված այն նյութերով, որոնք մեր էության մասը պիտի կազմեն, քան նրանցով, որոնք մնում են միայն մեր շրջապատում։ Հազար տեսակ բաներ կան, որոնց նկատմամբ անտարբեր են շոշափելիքը, լսողությունը, տեսողությունը, սակայն գրեթե չկա ոչինչ, որին ճաշակելիքը անտարբեր լինի։ Բացի այդ, այս զգայարանի գործունեությունը բացառապես ֆիզիկական ու նյութական է. նա միակն է, որ ոչինչ չի թելադրում երևակայությանը, կամ գոնե այն զգայարանն է, որի զգացողությունների մեջ երևակայությունը քիչ մաս ունի, մինչդեռ համողությունն ու երևակայությունը հաճախ որոշ բարոյականություն են խառնում մյուս զգայարանների տպավորությանը։ Այսպիսով, ընդհանրապես, քնքուշ ու հեշտասեր սրտերը, կրքոտ ու իսկապես զգայուն բնավորությունները, որոնք հեշտությամբ են ազդվում մյուս զգայարաններից, բավականին անտարբեր են ճաշակելիքի հանդեպ։ Հենց այս պատճառով, որը կարծես ճաշակելիքը ստորադասում է մյուս զգայարաններից և արհամարհելի դարձնում մեր հակումը դեպի այն, ես, ընդհակառակն, եզրակացնում եմ, որ երեխաներին դաստիարակելու ամենահարմար միջոցը նրանց իրենց որկորով դեկավարելն է։ Նախընտրելի է որկրամոլության, քան մեծամտության շարժառիթը, որովհետև առաջինը բնության պահանջն է և անմիջականորեն կապված է զգացողության հետ, մինչդեռ երկրորդը մարդկային կարծիքի գործն է, ենթակա՝ մարդկանց քմա-

հաճույքին և ամեն տեսակ չարաշահության։ Որկրամոլությունը մանկության մոլություն է. այդ մոլությունը չի կարող դիմանալ որևէ այլ մոլության. ամենափոքր մրցման դեպքում անհայտանում է։ Է՛հ, հավատացե՛ք ինձ, որ երեխան չատ շուտ կդադարի ուտելիքի մասին մտածել. երբ նրա սիրտը սաստիկ զբաղված լինի, քիմքը այլևս նրան չի զբաղեցնի։ Երբ երեխան մեծանա, այլ բազմաթիվ ուժեղ զգացումներ կփոխարինեն նրա որկրամոլությանն ու կգրգռեն ավելի շատ նրա մեծամտությունը, որովհետև միայն այս վերջին մոլությունն է օգտվում բոլոր մյուսներից և, վերջիվերջո, նրանց բոլորին կուլ կտա։ Ես երբեմն ուսումնասիրել եմ այն անձնավորություններին, որոնք մեծ նշանակություն էին տալիս ուտելիքի լավ սպասառներին և որոնք արթնանալուն պես մտածում էին, թե ինչ պետք է ուտեն օրվա մեջ. ճաշը այնպիսի ճշտությամբ էին նկարագրում, ինչպես Պոլիբը* նկարագրում է ճակատամարտը։ Ես գտնում եմ, որ բոլոր այս մարդ կարծեցյալները քառասուն տարեկան երեխաներ են՝ առանց կամքի ու անկայուն. fruges consumere nati**։ Որկրամոլությունը թերությանն է այն պատճառով, որ նրանք բոլորովին զուրկ են արժանիքից։ Որկրամոլի հոգին ամբողջապես իր քիմքի մեջ է, որկրամոլն ստեղծված է միմիայն ուտելու համար. իր տիմար անճարակությամբ, նա իր տեղումն է միայն սեղանի մոտ ու միայն ճաշի մասին կարող է դատողություն անել։ Թողնենք նրան այդ գործը՝ առանց ափսոսանքի. նրան ավելի ձեռնտու է այդ զբաղմունքը, քան մի ուրիշը, թե՛ իրեն և թե՛ մեզ համար։

Միայն կարճամիտները կարող են երկյուղ կրել, որ որկրամոլությունը երբևէ կարմատավորվի ընդունակ երևույթի մեջ։ Մանուկ հասակում են մտածում ուտելու մասին. պատանի հասակում այդ մասին այլևս չեն մտածում, ամեն մի ուտելիք նրանց համար լավ է, և, բացի այդ, կան նաև շատ ուրիշ անելիքներ։ Համենայն դեպս, ես չէի կամենա որկրամոլության նման մի ստոր բնազդ անխոհեմաբար օգտագործել, ոչ էլ մի համեղ պատառի օգնությամբ ամրապնդել

* Հույն պատմիչ մ. թ. ա. II դարում։— Ս. Թ.

** «Որ ամեն օր կուշտ ուտենքա»։— Ս. Թ.

մի լավ գործ կատարելու արժանիքը։ Բայց մի բան ես չեմ հասկանում. քանի որ ամբողջ մանկությունը սոսկ խաղ և ուրախ ժամանց պետք է լինի, ինչո՞ւ զուտ մարմնական մարզանքները նյութական ու զգացական արժեք չպետք է ունենային։ Եթե փոքր մայրկացին պարսատիկի հարվածով վայր է գցում ծառի կատարին դրված մի զամբյուղ, մի՞թե արդար չէ, որ դրանից օգտվի ու մի լավ նախաճաշով վերականգնի այն ուժը, որ գործադրել է նախաճաշը ձեռք բերելու համար[1]։ Եթե մի սպարտացի, մտրակի հարյուր հարվածի սպառնալիքի տակ, ճարպկորեն մտնում է խոհանոց, գողանում մի կենդանի աղվեսուկ և իր հագուստի տակ թաքցրած տանելիս՝ նրանից ճանկի հարվածներ է ստանում, կծվում, արյունաթաթավում և, որպեսզի բռնվելու ամոթանքին չենթարկվի, թույլ է տալիս իր փորոտիքը պատառոտել՝ առանց դեմքը ծամածռելու, առանց մի ճիչ արձակելու, մի՞թե արդար չէ, որ ի վերջո նա օգտվի այն ավարից, որը նախապես իրեն մի լավ կծոտել էր։ Ոչ մի ժամանակ լավ ճաշը վարձատրություն չպետք է լինի. բայց երբեմն ինչո՞ւ չտանալ՝ այն ձեռք բերելու համար կրած նեղությունների արգասիքը։ Էմիլը քարին դրած կարկանդակը չի համարում որպես իր լավ վաստկելու վարձատրություն. բայց գիտի, որ այդ կարկանդակն ստանալու միակ միջոցը ուրիշներից շուտ նրա մոտ հասնելն է։

Սա, անշուշտ, չի հակասում այն սկզբունքներին, որ ես նախօրոք առաջ էի քաշում ճաշի պարզության մասին. որովհետև, երեխաների ախորժակը բացելու համար, չպետք է զրգռել նրանց զգայնությունը, այլ միայն բավարարել այն. սրան կարելի է հասնել աշխարհի ամենասովորական բաներով, եթե մենք չաշխատենք նրանց ճաշակը նրբացնել։ Ահելու կարիքը զրգռում է նրանց անդադրում ախորժակը, որը մի այնպիսի համեմունք է, որ կարող է փոխարինել բազմաթիվ այլ համեմունքների։ Ջանադան տեսակի պտուղներ, կաթնեղեն, սովորական հացից մի քիչ ավելի լավ թխվածք, մանավանդ այդ բոլորը ժուժկալ ձևով գործածելու արվեստը, ահա

---

[1] Արդեն վաղուց է որ, մայրկացիները կորցրել են այս սովորությունը. այդ այն ժամանակ էր, երբ նրանց պարսատիկավորները հռչակված էին

այն բոլորը, ինչ որ պետք է երեխաների բանականները մինչև աշխարհի ծայրը առաջնորդելու՝ առանց տալու նրանց սուր համեմունքների ճաշակը, ոչ էլ քիմքը հափրացնելու։

Որ մարդը մսի նկատմամբ բնական նախասիրություն չունի, այդ երևում է այն անտարբերությունից, որ կա երեխաների մոտ դեպի այդ ուտելիքը, ու այն նախապատվությունից, որ նրանք բոլորն են տալիս բուսական կերակուրներին, կաթնեղենին. քիվածքներին, պտուղներին և այլն։ Կարևորն այն է, որ չլլանդակեն այս նախնական ճաշակն ու երեխաներին մսակեր չդարձնեն, եթե ոչ նրանց առողջության, գոնե նրանց խառնվածքի համար, որովհետև, ինչպես էլ որ բացատրեն երևույթը, ստույգ է, որ մոլի մսակերները մյուսներից ավելի դաժան ու կատաղի են լինում. այդ դիտողությունը վերաբերում է բոլոր ժամանակներին ու բոլոր ցեղերին։ Անգլիացիների բարբարոսությունը հայտնի է [1]. գուրերը, ընդհակառակն, մարդկանց մեջ ամենահանդարտներն են [2]։ Բոլոր վայրենիներն էլ դաժան են. այդ դաժանությունը առաջանում է ոչ թե նրանց բարքերից, այլ նրանց սննդից. նրանք պատերազմի են գնում այնպես, ինչպես որսորդության, և մարդկանց հետ վարվում են, ինչպես արջերի հետ։ Անգլիայում մսագործներին, ինչպես և վիրաբույժներին, որպես վկա չեն ընդունում [3]։ Մեծ չափազործները ոճրի մեջ կոփվում են արյուն խմելով։ Հոմերոսը կիկլոպներին մսակներ, զարհուրելի մարդիկ է անվանում, իսկ լոտոֆագներին՝ այնպիսի համակրելի ժողովուրդ, որ նրանց հետ չփվող-

---

[1] Ես գիտեմ, որ անգլիացիները շատ են պարծենում իրենց մարդկայնությամբ ու իրենց ազգի լավ բնավորություններով և իրենց անվանում են good natured prople (լավ բնավորության տեր ժողովուրդ). սակայն, Ք՛ո՛ղ ինչքան ուզում են այդ մասին գոռան. ոչ ոք չի կրկնի նրանց ասածը։

[2] Բանիանները գուրերից ավելի են խուսափում մարդ ու նրանց չափ հանգիստ ժողովուրդ են, բայց որովհետև նրանց բարոյականը նվազ մաքուր է, և կուլտուրան՝ ավելի քիչ զարգացած, նրանք այնքան էլ ազնիվ չեն։

[3] Սույն գրքի երկու անգլիական թարգմանիչներից մեկը այս կետում նշեց իմ սխալը, և երկուսով ուղղեցին այն։ Մսագործներն ու վիրաբույժներն ընդունվում են որպես վկա, սակայն առաջինները, ոճրագործներին գատելու համար, որպես առենակալ և երդվյալ չեն ընդունվում, իսկ վիրաբույժներն ընդունվում են։

ները մինչև իսկ իրենց երկիրն էին մոռանում՝ նրանց հետ ապրելու համար։

«Դու ինձ հարցնում ես,— ասում էր Պլուտարքոսը,— թե ինչո՞ւ Պյութագորոսը կենդանիների միս չէր ուտում. իսկ ես փոխարենը հարցնում եմ քեզ, թե ի՞նչպիսի քաջություն ունեցավ այն մարդը, որն առաջինն իր բերանը տարավ մորթված միսը, որն իր ատամներով կոտրատեց մեռնող կենդանու ոսկորները, որն իր առջև դնել տվեց մեռածների մարմիններ, դիակներ ու իր ստամոքսը լցրեց այն մարմինների մասերով, որոնք քիչ առաջ մայում, մռնչում, քայլում ու տեսնում էին։ Ի՞նչպես նրա ձեռքը կարողացավ մի զգայուն էակի սրտի մեջ խրել սուր երկաթը. ի՞նչպես նրա աչքերը կարողացան տեսնել սպանությունը. ի՞նչպես կարողացավ նայել այն անպաշտպան կենդանուն, որին մաշկում էին, անդամահատում, որը արյունաքամ էր լինում։ Ի՞նչպես կարողացավ տանել դողդոջուն մսերի տեսքը, ի՞նչպես նրանց հոտից չխառնեց իր սիրտը, ի՞նչպես չզզվեց, չգարշեց, չսարսափեց, երբ եկավ այդ վերքերի աղբոտիքը տանելու, սև ու լերդացած արյունը մաքրելու։

«Սողում էին երկրի վրա կաշինները քերքված,
Մռնչում էին ճենճեր մսերն շամփրոտված,
Ի՞նչպես ուտել նրանց առանց սարսուռի,
Երբ ընդերքումդ ձայնն է լսվում նրանց ողբի»։

«Ահա թե ինչ երևակայած ու զգացած պետք է լինի մարդն առաջին անգամ, երբ, հաղթահարելով բնությունը, այս զզվելի ճաշը կերավ, երբ առաջին անգամ կենդանի անասունի կաթիքն զդաց, ցանկացավ սնվել դեռևս արածող մի կենդանու մսով և մտածեց, թե ինչպես պետք է մորթել, հոշոտել, եփել այն գառնուկը, որը նրա ձեռքն էր լիզում։ Պետք է զարմանալ նրանց վրա, ովքեր սկիզբ դրին այդ վայրագ խնջույքներին, և ոչ թե նրանց վրա, ովքեր հրաժարվում են դրանցից. դեռևս առաջինները կարող են արդարացնել իրենց բարբարոսությունը այնպիսի չքմեղանքներով, որ մենք չունենք և որոնց հենց բացակայությունը մեզ դարձնում է հարյուր անգամ ավելի բարբարոս, քան նրանք էին։ «Աստվածների սիրելի մարդկանացունե՛ր,— կասեին մեզ այդ առաջին մարդիկ,— հա-

Մեծատեցե՛ք ժամանակները, տեսե՛ք, թե որքան երջանիկ եք դուք ու որքան դժբախտ էինք մենք։ Նոր կազմավորված հողն ու գոլորշիով հագեցած օդը դեռևս չէին հպատակվում եղանակներին. գետերի անկայուն ընթացքը նրանց դուրս էր շպրտում իրենց ափերից, ջրավազանները, լճերը, խոր ճահիճները ողողում էին աշխարհի մակերևույթի երեք քառորդը, իսկ մնացած մի քառորդը ծածկված էր անպտուղ պուրակներով ու անտառներով։ Հողը ոչ մի լավ բերք չէր տալիս. մենք ոչ մի գործիք չունեինք վար անելու, չգիտեինք դրանք աշխատեցնելու եղանակը. հնձի ժամանակն էլ երբեք չէր գալիս նրա համար, ով չէր ցանում։ Այսպիսով, սովը շարունակ հալածում էր մեզ։ Ձմեռը մամուռն ու ծառի կեղևներն էին մեր սովորական ուտելիքը, մի քանի մոլախոտերի ու թփերի կանաչ արմատներն էին մեր խնջույքը, և եթե մարդիկ երբեմն կաղին, ընկույզ կամ խոզկաղին էին գտնում, ուրախությունից պար էին բռնում մի կաղնու կամ մի հաճարենու շուրջը՝ գեղչկական երգի ձայնի տակ, երկիրը անվանելով իրենց դայակը կամ մայրը. դա նրանց միակ տունն էր, միակ ուրախությունը. մարդու մնացած կյանքը ամբողջությամբ ցավ, վիշտ ու թշվառություն էր։

«Վերջապես, երբ մերկացած ու ամայացած երկիրն սկսեց այլևս մեզ ոչինչ չտալ, ստիպված եղանք շեղվել բնությունից՝ մեզ պահպանելու համար. մենք կերանք թշվառության մեջ խախտակից մեր ընկերոջը, որպեսզի նրա հետ ինքներս էլ չոչնչանանք։ Բայց ձեզ, անգո՛ւթ մարդիկ, ի՞նչն է ստիպում արյուն թափել։ Տեսե՛ք, թե ինչ առատություն է ձեզ շրջապատում, ինչքան բարիք է տալիս ձեզ հողը, ինչքան հարստություն եք ստանում արտերից ու այգիներից, ինչքան կենդանիներ ձեզ կաթ են տալիս՝ սնվելու և բուրդ՝ հագնելու համար։ Դրանից ավելի էլ ի՞նչ եք ուզում նրանցից, և այդ ի՞նչ կատաղություն է, որ ձեզ մղում է այդքան ոճիրների, այն ժամանակ, երբ բարիքներով ու սննդամթերքով հագեցած եք։ Ինչո՞ւ եք զրպարտում մեր մայր-հողին՝ ասելով, թե նա չի կարողանում ձեզ կերակրել։ Ինչո՞ւ եք մեղանչում սրբազան օրենքներն ստեղծող Կերեսի դեմ ու մարդկանց մխիթարող բարեշնորհ Բաքոսի դեմ։ Մի՞թե նրանց պարգևած առատ

Նվերները բավական չեն մարդկային ցեղը պահպանելու համար։ Ի՞նչպես եք սիրտ անում ձեր սեղանի քաղցր պտուղներին խառնել կենդանիների ոսկորները և կաթի հետ խմել նրանց արյունը։ Հովազն ու առյուծը, որոնց դուք գիշատիչ կենդանիներ եք անվանում, իրենց բնազդին են հետևում ու մյուս անասուններին սպանում են ապրելու համար։ Բայց դուք նրանցից հարյուր անգամ ավելի վայրագ եք, քանի որ առանց անհրաժեշտության բնազդի դեմ եք պայքարում՝ ձեր անողոք հեշտանքներին հանձնվելու համար։ Այն կենդանիները, որոնց ուտում եք, իրենք մյուսներին չեն ուտում, դուք չեք ուտում մսակեր կենդանիներին, դուք նրանց ընդօրինակում եք, դուք ծարավի եք միայն անմեղ ու հեզ կենդանիների արյան, որոնք ոչ ոքի վատություն չեն անում, որոնք կապված են ձեզ հետ, օգնում են ձեզ և որոնց դուք հոշոտում եք որպես հատուցում նրանց ծառայության։

«Ո՛վ դու, հակաբնական ոճրագո՛րծ, եթե համառում ես պնդել, թե բնությունը քեզ ստեղծել է հոշոտելու համար քո նմաններին, որոնք մսից ու արյունից են շինված, զգում են ու ապրում քեզ նման, խեղդի՛ր ուրեմն քո մեջ այն սարսափը, որ նա պատճառում է քեզ այդ ահռելի ճաշերով. դու ինքդ սպանի՛ր կենդանիներին քո սեփական ձեռքերով, առանց դանակի, պատառոտի՛ր քո եղունգներով, ինչպես անում են առյուծն ու արջը, կրծոտի՛ր այս եզանն ու կտոր-կտոր արա՛, խրի՛ր ճիրաններդ նրա մորթու մեջ, ողջ-ողջ կե՛ր այդ գառնուկին, բզկտի՛ր նրա տաք միսը, խմի՛ր նրա հոգին արյան հետ։ Ա՛հ, դու սոսկա՞ում ես, չե՞ս ուզում ատամներիդ տակ ղրալ այդ դողդոջուն միսը։ Ողորմելի մա՛րդ, դու նախ սպանում ես կենդանուն ու ապա ուտում, կարծես երկու անգամ նրան սպանելու համար։ Այդ բավական չէ. սպանված միսը դեռևս քեզ ղրվեցնում է, քո փորոտիքը չեն կարող այն ընդունել. պետք է կերպարանափոխել կրակի ուժով, եփել, տապակել, համեմել զանազան համեմունքներով՝ սքողելու համար քեզ պետք է երշիկագործ, խոհարար, խորտկարար, մարդիկ, որոնք քեզնից հեռացնեն սպանության սարսափը և քեզ զգեստավորեն մեռած մարմիններով, որպեսզի քո հաշակելիքը, խաբվելով այդ դիմակավորումներով, չմերժի այն, ինչ նրա

համար անբնական է, և հրճվանքով ըմբոշխնի այն դիակները, որոնց տեսքը աչքն անգամ դժվարությամբ պիտի հանդուրժեր»։

Թեև այս հատվածը իմ նյութին չի վերաբերում. սակայն ես չկարողացա դիմադրել նրան այստեղ վերարտադրելու փորձությանը և կարծում եմ, որ ընթերցողներից քչերն ինձ կմեղադրեն դրա համար։

Համենայն դեպս, ինչպիսի ռնժիմի էլ ենթարկենք երեխաներին, բավական է, որ նրանց սովորեցնենք սովորական և պարզ ճաշերի, թողե՛ք, որ նրանք ուտեն, վազեն ու խաղան՝ ինչքան կամենան. վստահ եղե՛ք, որ երբեք չատ չեն ուտի ու անմարսողություն չեն ունենա. բայց եթե օրվա կեսը նրանց սոված պահեք, ու նրանք առիթ գտնեն ձեր հսկողությունից խուսափելու, այդ դեպքում նրանք դա ավելիով կհատուցեն՝ կուտեն մինչև կոկորդը, մինչև պայթելը։ Մեր ախորժակը չափ ու սահման չունի միայն այն պատճառով, որ մենք դա՝ նրան ոչ-բնական օրենքների տակ ենք ուզում դնել։ Շարունակ կարգավորելով, կարգադրելով, ավելացնելով, պակասեցնելով, մենք ամեն ինչ անում ենք կշեռքը մեր ձեռքին, բայց այդ կշեռքը մեր քմահաճույքի չափանիշն է, և ոչ թե մեր ստամոքսի։ Ես կրկին վերադառնում եմ իմ օրինակներին։ Գյուղացիների մոտ հացատուն ու մառանը միշտ բաց են, և երեխաները, ինչպես և մարդիկ, այնտեղ երբեք չգիտեն, թե ինչ բան է անհարսողությունը։

Եթե, սակայն, պատահի, որ երեխան շատակեր է, թեև չեմ կարծում, թե դա հնարավոր է իմ մեթոդը գործադրելու դեպքում, ապա նրան իր ցանկացած զվարճություններով այնքան հեշտ է զբաղեցնել, որ կարելի կլինի վարժեցնել սակավակերության՝ առանց երբեք զգացնելու։ Այդ ի՞նչպես է, որ այնքան ապահով ու այնքան հեշտ այս միջոցները խուսափում են ուսուցիչների ուշադրությունից։ Հերոդոտը պատմում է, որ լիդիացիները, ծայրահեղ սովից հարկադրված, մտածեցին հնարել խաղեր ու այլ զվարճություններ, որոնց շնորհիվ մոռանում էին քաղցն ու ամբողջ օրեր անց էին կացնում առանց ուտելու մասին մտածելու [1]։

[1] Հին պատմաբանները այնպիսի հայացքներ են արտահայտել, որոնք

Ձեր գիտնական ուսուցիչները գուցե հարյուր անգամ կարդացել են այս հատվածը, բայց չեն հասկացել, թե ինչպես կարելի է այն օգտագործել երեխաների համար։ Նրանցից մեկնումեկը գուցե ինձ ասի, թե երեխան հոժարակամ չի թողնի իր ճաշը՝ իր դասը սովորելու համար։ Վարպե՛տ, դուք իրավացի եք. ես չէի մտածել այդ զվարճալիքի մասին։

Հոտառության զգայարանը նույնն է ճաշակելիքի համար, ինչ որ տեսողությունը՝ շոշափելիքի. նա ճաշակելիքին հաղորդում է, թե ինչպես է այս կամ այն նյութը ազդելու նրա վրա, ու տրամադրում դրանից խուսափել կամ դրան մոտենալ՝ ըստ նախօրոք ստացած տպավորության։ Լսել եմ, որ վայրենիները բոլորովին տարբեր հոտառություն ունեն, քան մենք, ու բոլորովին այլ կերպ են զգում լավ կամ վատ հոտը։ Ես ինքս դրան հավատում եմ։ Հոտն ինքնին թույլ զգացողություն է, դա ավելի շուտ երևակայությունն է գրգռում, քան թե զգայարանը, և ազդում է առավելապես նրանով, որ մի բան է նախազգալ տալիս, քան թե իսկապես տալիս է։ Ելնելով այս ենթադրությունից, ոմանց ճաշակները, հենց իրենց ապրելակերպի պատճառով, ուրիշների ճաշակներից այնքան տարբեր լինելով, նրանց հոտոտելիքը բոլորովին տարբեր գաղափար պետք է տա համի մասին, հետևապես և դրան ընկերացող հոտի մասին։ Մի թաթար նույնքան հաճույք կզգա ձիու նեխած մսի հոտից, ինչքան մեր որսորդներից որևէ մեկը՝ կիսով չափ փչացած կաքավի հոտից։

Մեր անգործուն զգացողությունները, ինչպես մի ածուի ծաղիկների բուրմունքը ներշնչելն է, ըստ երևույթին, չեն ունենում այն մարդիկ, ովքեր, շատ ուժի վրա մնալուց, չեն սիրում զբոսնել և ովքեր բավականաչափ չեն աշխատում, որպեսզի վայելեն հանգստանալու հեշտանքը։ Անվերջ քաղցած

կարելի է կիրառել, նույնիսկ եթե դրանք ներկայացնող իրողություններն ճիշտ չեն։ Սակայն մենք պատմությունից ոչ մի ճիշտ հետևություն անել չգիտենք. գիտական քննադատությունը կլանում է ամեն ինչ, կարծես շատ կարևոր է, որ մի իրողություն ճիշտ լինի՝ նրանից մի օգտակար ուսում ստանալու համար։ Իմաստուն մարդիկ պատմությունը պետք է ընդունեն որպես առակների մի հյուսվածք, որի բարոյականը շատ հարմար է մարդկային սրտին։

մարդիկ մեծ հաճույք չեն կարող ստանալ այն բուրմունքնե-
րից, որոնք ուտելու ոչինչ չեն ազդարարում նրանց։

Հոտառությունը երևակայության զգայարանն է։ Ջղերին
տալով ավելի ուժեղ լարում, նա շատ է աշխուժացնում ուղեղի
աշխատանքը. այդ է պատճառը, որ մի պահ բարձրացնելով
մեր ինքնազգացումը՝ ի վերջո հյուծում է այն։ Հոտառու-
թյունը սիրո մեջ բավական հայտնի ազդեցություններ ունի.
կնոջ զուգասենյակի անուշ բուրմունքը այնպիսի փոքր թա-
կարդ չէ, ինչպես կարծում են։ Եվ չգիտեմ, շնորհավորե՞լ թե
խղճալ այն խելոք ու սակավ զգայուն մարդուն, որի սիրտը
իր սիրուհու կրծքի ծաղիկների բուրմունքից երբեք չի տրոփել։

Ուրեմն, հոտառությունը այնքան էլ գործուն չպետք է
լինի առաջին տարիներում, երբ երևակայությունը, որին
դեռևս քիչ կրքեր են համակել, հուզվելու բնավ ենթակա չէ, և
երբ տակավին նա բավականաչափ փորձառություն չունի՝ մի
զգայարանով կանխատեսելու այն, ինչ երկրորդն է խոստա-
նում։ Ըստ որում, այս հետևությունը կատարելապես հաս-
տատված է դիտողությամբ, և ստույգ է, որ հոտառությունը
դեռևս բութ ու դրեթե անզգա վիճակումն է երեխաների մեծա-
մասնության մոտ։ Եվ սա ոչ թե որովհետև զգացողությունը
նրանց մոտ նույնքան ու գուցե ավելի նուրբ չէ, քան մեծա-
հասակների մոտ, այլ որովհետև հոտառությունը չի կապված
ուրիշ ոչ մի մտապատկերի հետ, երեխաները հեշտությամբ
չեն ունենում հաճույքի կամ ցավի զգացմունքը և մեզ նման
նրանով ո՛չ շոյվում են, ո՛չ էլ վիրավորվում։ Ես կարծում եմ,
որ առանց միևնույն սիստեմից դուրս գալու և առանց երկու
աեռերի համեմատական անատոմիային դիմելու, շատ հեշ-
տությամբ կարելի է պնդել պատճառը այն բանի, թե ինչու
կանայք բնդհանրապես ավելի ուժեղ են զգում հոտը, քան
տղամարդիկ։

Ասում են, թե կանադայի բնիկները մատաղ տարիքից
այնքան նուրբ հոտառություն են ձեռք բերում, որ, չնայած
շուն ունեն, նրանց որսի չեն տանում ու իրենք են կատարում
շան դերը։ Ես ենթադրում եմ, որ եթե երեխաներին վարժեց-
նեն որոնել իրենց ճաշը, ինչպես շներն են փնտրում որսը,
գուցե կարելի լիներ նրանց հոտառությունը հասցնել շան

հոտառության աստիճանին. սակայն, ճիշտն ասած, չգիտեմ, թե այդ զգայարանից ինչ մի մեծ օգուտ կարելի է քաղել, եթե ոչ այն, որ նրանք կհասկանան հոտառության և ճաշակելիքի փոխհարաբերությունները։ Բնությունը մեզ ստիպել է քափանցել այդ հարաբերությունների խորքը։ Բնությունը այս վերջին զգայարանի գործը համարյա անբաժան է արել մյուսից՝ նրանց գործարանները հարևան դարձնելով ու բերանում դնելով մի անմիջական հաղորդակցություն այդ երկուսի միջև, այնպես որ մենք ոչինչ չենք ճաշակում՝ առանց հոտոտելու։ Միայն թե ես կուզենայի, որ մարդիկ չայլանդակեն այս բնական հարաբերությունները՝ երեխային խաբելու համար, օրինակ՝ բժշկի պատվիրած դեղը ինչ-որ դուրեկան բուրմունքով պարուրելով, որովհետև այդ դեպքում նրկու զգայարանների հակասությունը այնքան մեծ կլինի, որ դժվար թե նա խաբվի. ամենից գործուն զգայարանը կյուրացնի մյուսի տպավորությունը, և այդ պատճառով էլ երեխան պակաս զզվանքով չի ընդունի դեղը, այդ զզվանքը կտարածվի այն բոլոր զգացողությունների վրա, որ նա ընկալում է միևնույն ժամանակ. ամենից քույլ զգացողության առկայության դեպքում, երևակայությունը նրան հիշեցնում է նաև մյուսը. ամենաքաղցր բուրմունքը նրա համար այլևս կդառնա մի գարշելի հոտ. և այսպես մեր անխոհեմ նախազգուշություններն ավելացնում են տհաճ զգացումների քիվը՝ ի հաշիվ հաճելիների։

Հաջորդ գրքերում ինձ մնում է խոսել այսպես ասած վեցերորդ զգայարանի զարգացման մասին, որ կոչվում է ընդհանուր զգայարան, ոչ այնքան նրա համար, որ հատուկ է բոլոր մարդկանց, այլ որովհետև հետևանք է մյուս զգայարանների լավ կարգավորված գործունեության և որը մեզ սովորեցնում է իրերի բնության մասին՝ նրանց բոլոր երևույթների օգնությամբ։ Հետևապես, այս վեցերորդ զգայարանը չունի մի առանձին, հատուկ գործարան, այլ նրա կենտրոնը գտնվում է սոսկ ուղեղում, և նրա զուտ ներքին զգացողությունները կոչվում են ըմբռնողություն կամ մտքեր։ Այդ մտքերի քանակով է չափվում մեր գիտելիքների ծավալը, նրանց հստակությամբ, պայծառությամբ է պայմանավոր-

վում մեր մտածողության ճշտությունը, դրանք միմյանց հետ համեմատելու արվեստն է, որ կոչվում է մարդկային բանականություն։ Այսպես, այն, ինչ անվանում էի զգացողական կամ մանկական դատողություն, նշանակում է կազմել պարզ մտքեր՝ բազմաթիվ զգացողությունների օգնությամբ. և այն, ինչ ես անվանում եմ իմացական կամ մարդկային բանականություն, նշանակում է կազմել բարդ մտքեր՝ բազմաթիվ պարզ մտքերի օգնությամբ։

Ենթադրելով, ուրեմն, որ իմ մեթոդը բնությունից է բխում, և ես չեմ սխալվում նրա գործադրության մեջ, մենք մեր սանին զգացողությունների բնագավառի միջով բերում-հասցնում ենք մանկական դատողության սահմանը. հաջորդ առաջին քայլը, որ պետք է աննենք այդ սահմանից այն կողմ, պետք է լինի մեծահասակի քայլը. բայց այդ նոր ասպարեզը թևակոխելուց առաջ մի րոպե հետադարձ հայացք գցենք մեր անցած ուղու վրա։ Ցուրաքանչյուր տարիք, կյանքի յուրաքանչյուր դրություն իր նպատակահարմար կատարելագործումն ունի, հասունացման իր տեսակը, որ նրան է հատուկ։ Մենք հաճախ ենք լսել կատարյալ մարդու մասին, այժմ տեսնենք, թե ինչ ասել է կատարյալ երեխա. այս տեսարանը մի մեծ նորություն կլինի մեզ համար, գուցե և ոչ նվազ հաճելի նորություն։

Իրենց վերջնական ձևն ստացած էակների գոյությունն այնքան աղքատ ու սահմանափակ է, որ երբ տեսնում ենք ստեղ այն, ինչ առկա է, բոլորովին էլ չենք հուզվում։ Միայն պատրանքներն են գեղեցկացնում իրական առարկաները, և եթե երևակայությունը որևէ հմայք չի ավելացնում մեր զգացմունքներին, այն չնչին հաճույքը, որ ստանում ենք նրանցից, միայն զգայարանով է սահմանափակվում, իսկ սիրտը միշտ սառն է թողնում։ Երկիրը աշնանը զարդարվում է գանձերով, սփռում է իր հարստությունը մեր հիացած աչքերի առաջ, սակայն այդ հիացումը չի հուզում. դա ավելի շուտ իմհական հիացում է, քան զգացական։ Գարնանը, համարյա մերկ դաշտը դեռևս ոչնչով չի ծածկված, անտառները ոչ մի տերև չեն տալիս, կանաչը նոր է բուսնում, բայց սիրտը հուզվում է այդ տեսարանից։ Տեսնելով

բնության այս վերածնունդը, մարդը կարծես զգում է իր վերակենդանացումը, հաճույքի պատկերն է մեզ շրջապատում։ Բերկրանքի ընկերակիցները, այն քաղցր արցունքները, միշտ պատրաստ խառնվելու ամեն մի հեշտալի զգացման, արդեն մեր կոպերի ծայրին են։ Սակայն այգեկութի պատկերը, ինչքան էլ աշխույժ, կենդանի ու հաճելի լինի, միշտ էլ չոր աչքով ենք դիմավորում։

Ի՞նչից է այս տարբերությունը։ Այդ նրանից է, որ գարնան տեսարանին երևակայությունը միացնում է այն եղանակների հեռանկարը, որոնք պիտի հաջորդեն. այն քնքուշ բողբոջներին, որոնց աչքը նշմարում է, երևակայությունը ավելացնում է ծաղիկներ, պտուղներ, սավեքներ, երբեմն այնպիսի գաղտնիքներ, որ թաքնված են նրանց տակ։ Նա մի կետում. միացնում է այն ժամանակները, որ պիտի գան, և իրերը տեսնում է ոչ այնպես, ինչպես լինելու են, այլ այնպես, ինչպես ինքն է ցանկանում, որովհետև նրանից է կախված այդ րնտրությունը։ Աշնանը, ընդհակառակն, տեսնում ենք այն, ինչ արդեն կա։ Երբ ուզում ենք հասնել գարնանը, ձմեռը մեզ կանգնեցնում է, ու սառած երևակայությունը հանգում է ձյան ու եղյամի վրա։

Այդպես է նաև ակունքը այն հմայքի, որ վայելում ենք՝ գերադասելով դիտել գեղեցիկ մանկությունը, քան կատարելագործված հասուն տարիքը։ Ե՞րբ ենք մենք իսկական հաճույք զգում մի մարդ տեսնելիս. երբ նրա գործերի մտաբերումը մեզ տանում է ետ՝ դեպի նրա անցյալ կյանքը ու նրան, այսպես ասած, երիտասարդացնում է մեր աչքին։ Իսկ եթե մենք բավարարվում ենք տեսնելով նրան այնպես, ինչպես որ կա, կամ երևակայում ենք այնպես, ինչպիսին պիտի լինի ծերության տարիքին, ապա մեռնող բնության մտապատկերը չնչում է մեր բովանդակ հաճույքը։ Երբեք հաճելի չէ տեսնել, թե ինչպես է մարդը արագ քայլերով դեպի գերեզման գնում. իսկ մահվան պատկերը ամեն ինչ այլանդակում է։

Բայց երբ ես ինձ պատկերացնում եմ տասից-տասներկու տարեկան մի երեխա, առողջ, կայտառ, իր տարիքին համեմատ ամրակազմ, իմ մեջ միայն հաճելի միտք է ծագում՝ թե՛

ներկայի և թե՛ ապագայի համար. ես նրան տեսնում եմ եռանդուտ, ժիր, կենտրոնախ՝ առանց սրտմաշուքի, առանց երկար ու տաժանելի կանխատեսության, նվիրված ամբողջովին իր ներկա գոյությանը, վայելելով կյանքի այնպիսի լիություն, որը կարծես թե ուզում է դուրս հորդել իրենից։ Ես նրան երևակայում եմ մի ուրիշ հասակում, գործադրելով իր զգացումները, միտքը, ուժը, որոնք օր-օրի զարգանում են նրա մեջ և որոնց ամեն բոպե նորանոր նշաններն է ցույց տալիս։ Երբ նրա մանկությունն եմ դիտում, ինձ դուր է գալիս. երբ նրան երևակայում եմ որպես չափահաս մարդ, է՛լ ավելի է դուր գալիս. նրա ջերմ արյունը կարծես իմ արյունն էլ է տաքացնում։ Ինձ թվում է, թե ապրում եմ նրա կյանքով ու նրա կենսունակությունը երիտասարդացնում է ինձ։

Ժամը հնչում է. ի՜նչ փոփոխություն։ Վայրկյանապես երեխայի հայացքը աղոտանում է, զվարթությունն անհետանում, մնա՛ք բարով ուրախություն, խոլական խաղեր։ Խստադեմ մի մարդ բռնում է նրա ձեռքից ու ծանրակշիռ ձայնով ասում. «Գնա՛նք, պարո՛ն», և տանում է նրան։ Այն սենյակում, ուր նրանք մտնում են, ես նշմարում եմ գրքեր։ Գրքե՛ր, ի՜նչ տխուր կահավորում նրա տարիքի համար։ Խեղճ տղան թույլ է տալիս, որ իրեն տանեն։ Ափսոսանքով լի մի տխուր ակնարկ է նետում իր շուրջը, լռում է ու գնում՝ աչքերը արցունքով լի, որոնք չի համարձակվում թափել, սիրտը հառաչանքներով լեցուն, որոնք չի համարձակվում արտաբերել։

Իսկ դո՛ւ, որ այդպիսի կյանքի երկյուղը չունես. դո՛ւ, որի կյանքում նեղության և ձանձրույթի ոչ մի ժամ չկա. դո՛ւ, որ օրվա բացվելը տեսնում ես՝ առանց մտահոգության, գիշերվա հասնելը՝ առանց անհամբերության, ու ժամերը հաշվում ես քո հաճույքներով, ե՛կ, իմ երջանիկ, իմ սիրելի տղաս, ե՛կ մխիթարվենք քեզ հետ այս դժբախտ տղայի հեռանալու համար, ե՛կ... Նա գալիս է, ու նրա մոտենալուց ես զգում եմ իմ մեջ ուրախության մի սարսուռ և տեսնում, որ նա մասնակից է այդ ուրախությանը։ Նա մերձենում է իր բարեկամին, իր ընկերոջը, իր խաղակցին։ Ինձ տեսնելով՝ վստահ է, որ շուտով կսկսի զվարճանալ. մենք երբեք միմյանցից կտխում

չունենք, բայց միշտ համերաշխ ենք և ոչ ոքի հետ այնպես լավ չենք զգում մեզ, ինչպես իրար հետ։

Նրա դեմքը, նրա կեցվածքը, կերպարանքը արտահայտում են ապահովություն ու բավականություն. առողջություն է կաթում նրա դեմքից, հաստատուն քայլերը նրան կորովի տեսք են տալիս, նրա դեռևս նուրբ, բայց ոչ-անդուրեկան դիմագծերը շատ հեռու են կանացի քնքշությունից. օդն ու արևը արդեն նրա դեմքին դրել են իր սեռի պատվավոր դրոշմը. նրա դեռևս կլոր մկաններն սկսում են դրսևորել նոր կազմավորվող կերպարի որոշ նշանները. նրա աչքերը, որոնց մեջ դեռևս զգացումների հուրը չի բոցավառվել, գոնե պահում են իրենց բնածին պարզությունը, երկարատև վշտերը երբեք չեն մթագնել դրանք, չգտադարող արցունքները չեն ակոսել նրա դեմքը։ Նկատեցե՛ք, արագ, բայց վստահ շարժումների մեջ, նրա հասակի աշխուժությունը, անկախության կամքը, բազմազան մարզումների փորձը։ Նա անկեղծ է ու անկաշկանդ, բայց ոչ երբեք ժպիրհ ու անապարծ. նա դեմքը, որը չի բևեռել գրքերին, երբեք չի կախում իր կրծքին. կարիք չունեն նրան ասելու՝ «Գլուխդ բարձրացրու», ո՛չ ամոթը, ո՛չ էլ վախը երբեք չեն խոնարհեցրել նրա գլուխը։

Խոսել տվե՛ք նրան ժողովներում, պարոննե՛ր, ուսումնասիրեցե՛ք նրան, հարցաքննեցե՛ք ամենայն վստահությամբ, մի՛ վախեցեք ո՛չ նրա տարտամ պատճառելուց, ո՛չ նրա շատախոսությունից, ո՛չ էլ անտեղի հարցերից։ Չվախեցեք, թե ամրողջովին կգրավի ձեզ, որ ձեզնից կպահանջի միմիայն իրենով զբաղվել, և որ այլևս չեք կարողանա նրանից ազատվել։

Նրանից մի՛ սպասեք նաև հաճելի ճառեր, մի՛ սպասեք, որ ձեզ վերապատմի իմ ասածները. սպասեցե՛ք միայն միամիտ ու պարզ ճշմարտություն՝ անպաճույճ, առանց գունազարդման, առանց սնափառության։ Նա ձեզ կասի իր արած կամ անելիք սխալի մասին, նույնքան ազատ, ինչպես պիտի ասեր լավ արարքի մասին, առանց մտահոգվելու, թե իր ասելիքը ինչ-պիսի տպավորություն կթողնի ձեր վրա. նա բառերը կգործածի իրենց սկզբնական նշանակության պարզությամբ։

Ընդհանրապես սիրում ենք լավը գուշակել երեխաների

մասին ու միշտ ցավ ենք զգում անմտությունների տարափից, որ գրեթե միշտ գալիս է խորտակելու այն հույսերը, որ ներշնչել է մեզ երեխայի որևէ պատահական հաջող խոսքը։ Եթե իմ սանը այդպիսի հույսեր հաճախ չի տա, բայց և ոչ մի ժամանակ այդպիսի հիասթափություններ չի պատճառի, որովհետև երբեք ոչ մի ավելորդ բառ չի ասի ու զուր տեղը չի դատարկաբանի, գիտենալով, որ ոչ ոք իրեն չի լսի։ Նրա մտքերը թեև սահմանափակ, բայց հստակ են. եթե անգիր ոչինչ չգիտի, բայց շատ բան գիտի փորձով. եթե մեր գրքերը մի ուրիշ երեխայից վատ է կարդում, ավելի լավ է կարդում բնության գիրքը. նրա խելքը ոչ թե լեզվի, այլ գլխի մեջ է. ավելի շատ դատողություն ունի, քան հիշողություն. միայն մի լեզվով է խոսում, բայց հասկանում է իր ասածը, և եթե ուրիշների նման լավ չի խոսում, բայց, դրա փոխարեն, ուրիշներից ավելի լավ է գործում։

Նա չգիտի, ինչ բան է սովորամոլությունը, վարժությունը, սովորույթը. երեկվա կատարածը չի ազդում այսօրվա արածի վրա[1]. երբեք ֆորմուլայի չի հետևում, երբեք չի խոնարհվում հեղինակության, ոչ էլ օրինակի առաջ, և գործում ու խոսում է այնպես, ինչպես ինքն է ուզում։ Ուրեմն, նրանից մի սպասեք ո՛չ թելադրված ճառեր, ո՛չ էլ սերտած վարվելակերպեր, այլ միշտ իր մտքերի հարազատ արտահայտություն ու իր հակումներից բխող վարմունք։

Դուք նրա մոտ կգտնեք մի քանի բարոյական հասկացողություններ, որոնք կապված են իր ներկա վիճակի հետ, բայց չեք գտնի ոչ մի հասկացողություն մարդկանց հարաբերությունների մասին. և իսկապես, ինչի՞ կծառայեն դրանք,

---

[1] Սովորության հմայքը առաջանում է մարդու բնական ծուլությունից. այդ ծուլությունը հետզհետե ավելանում է մի անգամ սկավելուց հետո, արված գործը կրկնելը ավելի հեշտ է. ավելի հեշտ է տրորված ուղիով ընթանալը։ Դրանից է, որ սովորություններին ավելի շատ են ենթարկվում ծերուներն ու թուլամորթները, շատ ավելի քիչ՝ երիտասարդներն ու ժիր մարդիկ։ Այս ուժիմը թույլ մարդկանց համար է և աստիճանաբար նրանց ավելի ու ավելի է տկարացնում։ Երեխաներին օգտակար միակ սովորությանը՝ առանց դժվարության բանականությանը ենթարկվելն է։ Որևէ այլ սովորություն արատ է։

քանի որ երեխան դեռևս հասարակության գործուն անդամը չէ։ Նրա հետ խոսեցե՛ք աղատության, սեփականության, նույնիսկ պայմանականության մասին. նա միայն այդքանը կարող է գիտենալ. նա գիտե, թե այն, ինչ իրեն է պատկանում՝ ինչու է պատկանում, իսկ այն, ինչ իրեն չի պատկանում՝ ինչու չի պատկանում. դրանից այն կողմ նա ոչինչ չգիտի։ Խոսեցե՛ք նրա հետ պարտականության, հնազանդության մասին. նա չի հասկանա, թե ինչ եք ուզում ասել. հրամայեցե՛ք նրան մի որևէ բան, նա ձեզ չի լսի, բայց ասացե՛ք նրան. «Եթե այսինչ բանը ինձ համար անեք, մի ուրիշ առիթով ես կփոխադարձեմ», իսկույն նա կշտապի ձեզ հաճելի լինել, որովհետև նրա ցանկությունն էլ այն է, որ ընդարձակի իր հեղինակության շրջանակը ու ձեզ վրա ձեռք բերի այնպիսի իրավունքներ, որ նա գիտի, թե անդրժելի են։ Գուցե և նա դժգոհ չէ, որ մի տեղ է գրավում, որ թիվ է կազմում, որ նրան հաշվի են առնում. բայց եթե այս վերջին շարժառիթով է առաջնորդվում, արդեն բնությունից դուրս եկած կլինի ու դուք նախապես խցանած չեք լինի սնափառության բոլոր անցքերը։

Իր կողմից, եթե օգնության կարիք ունենա, անխտիր կդիմի առաջին պատահած մարդուն. նա հավասարապես կդիմի թե՛ արքային և թե՛ նրա սպասավորին. բոլոր մարդիկ դեռևս հավասար են նրա աչքին։ Նրա խնդրելու ձևից հասկացվում է, որ նա զգում է, թե ոչ ոք նրան պարտական չէ, նա գիտի, որ իր խնդիրքը կատարում են որպես շնորհ։ Գիտի նաև, որ մարդասիրությունն է թելադրում նրա խնդիրքը կատարել։ Նրա արտահայտությունները պարզ ու լակոնական են։ Նրա ձայնը, հայացքը, շարժուձևը հատուկ են այնպիսի մի մարդու, որը վարժված է թե՛ հաճոյակատարության և թե՛ մերժման։ Նա ո՛չ ճորտի ստորաքարշ ու սորկական հնազանդությունն ունի, ո՛չ էլ տիրոջ ամբարտավան շեշտը։ Դա համեստ վստահությունն է իր նմանի հանդեպ, ազնիվ ու հուզիչ հեզությունն է մի ազատ, բայց զգայուն ու թույլ էակի, որն օգնություն է խնդրում մի ազատ, բայց ուժեղ և բարեգործ մարդուց։ Եթե դուք կատարեք նրա խնդիրքը, նա ձեզ շնորհակալություն չի հայտնի, բայց կզգա, որ ձեր հանդեպ պարտա-

կան է։ Թե մերժեք, չի դժգոհի, չի պնդի, պիտի, որ արդ անօգուտ է, մտքում երբեք չի ասի՝ «Ինձ մերժեցին», այլ կասի՝ «Ուրիշ կերպ չէր կարող լինել», և ինչպես արդեն ասել եմ, երբեք բացահայտ անհրաժեշտության դեմ չի ընդվզի։

Նրան մենակ, ազատ թողե՛ք, հետևեցե՛ք նրան՝ առանց որևէ խոսք ասելու. նայեցե՛ք, թե ինչ է անում և ինչպես է անում։ Կարիք չունենալով ինքն իրեն ապացուցելու, թե ազատ է, ոչինչ չի անի թեթևամտությամբ, հենց այնպես ինքն իր վրա իշխելու փորձ կատարելու համար։ Մի՞թե նա չգիտի, որ ինքը միշտ էլ իր գլխի տերն է։ Նա ժիր է, թեթև, կայտառ. նրա շարժումներն իր տարիքի ամբողջ աշխուժությունն ունեն, բայց ոչ մի շարժում չեք գտնի, որ աննպատակ լինի։ Ինչ էլ ուզի անել, երբեք իր ուժերից վեր բան չի անի, որովհետև շատ լավ փորձել և ճանաչում է իր ուժերը. նրա միջոցները միշտ համաձայնեցված են նպատակներին, և հաղվադեպ որևէ գործ կձեռնարկի՝ առանց վստահ լինելու հաջողության վրա։ Նրա հայացքը ուշիմ է ու դատող, նա անմտություն չի ունենա ուրիշներին հարցնելու այն բանի մասին, որ պարզ երևում է, այլ, ուրիշներին հարցնելուց առաջ, ինքը կքննի ու ինքը կտքնի՝ ցանկացածն իմանալու համար։ Անակընկալ որևէ դժվարություն սակավ շփոթության կմատնի նրան, քան մեկ ուրիշի, և որևէ վտանգի դեպքում ավելի քիչ կտարտափի։ Քանի դեռ նրա երևակայությունը չի գործում, և քանի որ այն գործունեության մղելու նպատակով ոչինչ չի արված, նա տեսնում է միայն այն, ինչ որ կա, վտանգները գնահատում է իրենց իսկական արժեքով և երբեք չի կորցնում իր սառնարյունությունը։ Կարիքն ու անհրաժեշտությունը այնքան հաճախ են նրա վրա ծանրանում, որ նա ի վերջո ըմբռնտանում է դրանց դեմ. ծնված օրից կռելով կարիքի լուծը, նա արդեն սովորել է ու պատրաստ է ամեն ինչի։

Նրա համար զբաղմունքն ու զվարճությունը նույն բանն են։ Խաղերը նրա զբաղմունքներն են, նրանց միջև ոչ մի տարբերություն չի տեսնում։ Նա ամեն ինչ անում է այնպիսի շահագրգռվածությամբ, որ ծիծաղ է առաջացնում, և այնպիսի ազատությամբ, որ հաճույք է պատճառում, միաժամանակ

ցույց տալով իր հնարամտությանն ու գիտելիքների շրջանակը։ Ինչքա՞ն հրապուրիչ ու քաղցր է մանկական այս հաւակի տեսարանը՝ տեսնել մի գեղեցիկ երեխա, ժիր և ուրախ հայացքով, գոհ ու պայծառ դեմքով, անկեղծ ու ծիծաղկոտ արտահայտությամբ, որ խաղալիս ամենալուրջ բաներն է անում, կամ խորապես զբաղված է ամենաերեխայական զվարճություններով։

Յանկանո՞ւմ եք այժմ նրա մասին գաղափար կազմել ուրիշների հետ համեմատելով։ Դրե՛ք նրան այլ երեխաների կողքին և թողե՛ք, որ ուզածն անի։ Շատ շուտով կտեսնեք, թե ով է ամենից ավելի իրեն տարիքին համապատասխան կատարելության հասած, լավ կազմակերպված երեխան։ Քաղաքի երեխաների մեջ ոչ ոք նրա չափ ճարպիկ չէ, և միևնույն ժամանակ բոլորից ուժեղն է։ Մարմնական ուժով նա չի պիղում գյուղի տղաներին և ճարպկությամբ նրանց գերազանցում է։ Այն բոլոր խնդիրներում, որոնք մատչելի են երեխաներին, նա դատում, տրամաբանում, կանխատեսում է ավելի լավ, քան մյուսները։ Եթե պետք լինի գործել, վաղել, ցատկել, իրեր տեղահան անել, ծանրություններ բարձրացնել, հեռավորությունները մոտավորապես չափել, խաղեր հնարել, մրցանակ շահելու համար մրցել, այնպիսի հեշտությամբ է ամեն ինչ հպատակեցնում իր կամքին, որ կարծես բնությունը ենթարկվում է նրան։ Նա ստեղծված է իր նմաններին առաջնորդելու, ղեկավարելու համար, ընդունակությունն ու փորձառությունը նրա մոտ փոխարինում են իրավունքին և հեղինակությանը։ Ինչպիսի հագուստ հագցնեք և ինչպիսի անուն էլ տաք նրան, միևնույնն է, նա ամեն դեպքում առաջին տեղը կգրավի, միշտ ուրիշների ղեկավարը կլինի, բոլորը կզգան նրա գերազանցությունը. առանց հրամայել ուզելու նա նրանց պետը կլինի, իսկ նրանք առանց զգալու կենթարկվեն իրեն։

Նա հասել է արդեն հասուն մանկության, ապրել է երեխայի կյանքով, իր կատարելագործումը չի գնել ի հաշիվ իր երջանկության, ընդհակառակն, մեկն օգնել է մյուսին։ Ձեռք բերելով իր տարիքին համապատասխան ամբողջական գաղտնիքը, նա երջանիկ ու ազատ է եղել այնչափով, որչափով թույլ է տվել նրա մարմնի կառուցվածքը։ Եվ երբ պա-

տահի, որ ճակատագրական գերանդին գա հնձելու մեր հույսերի ծաղիկը, մենք պատճառ չենք ունենա ողբալու թե՛ նրա կյանքը և թե՛ մահը, մեր վշտերը չեն դառնանա այն ցավերի հիշողությամբ, որ նրան պատճառել ենք. մենք մեզ կասենք. «Գոնե նա վայելեց մանկությունը, մենք բնության տված ոչ մի պարգևից չզրկեցինք նրան»։

Այս առաջին դաստիարակության ամենամեծ բացասական կողմն այն է, որ նրան հասկանում են միայն հստակատես մարդիկ, և որ այնքան մեծ խնամքով դաստիարակված երեխայի մեջ հասարակ աչքերը տեսնում են սոսկ մի ստահակի։ Ուսուցիչը ավելի շուտ իր, քան թե աշակերտի շահի մասին է մտածում. նա կջանա ապացուցել, թե ժամանակը իզուր չի անցկացնում ու արժանի է իր ստացած վարձատրության. նա իր սանին օժտում է հեշտ ցուցադրվող հմտությամբ, որն ուշածդ ժամանակ կարելի է հանդես բերել. նրա համար նշանակություն չունի, որ սովորեցրածը օգտակար լինի, բավական է, որ այն ուրիշները տեսնեն առաջին ակնարկով։ Առանց ընտրության, առանց դատողության՝ նա երեխայի հիշողությունը լցնում է հարյուրավոր դատարկաբանություններով. նրբ հարկ է լինում քննել երեխային, նրան րացել են տալիս իր կապոցը, նա ցուցադրում է, բոլորը գոհ են մնում, ապա հավաքում է իր բեռն ու հեռանում։ Իմ սանը այդքան հարուստ չէ, ցուցադրելու ոչ մի կապոց չունի, բացի իրենից՝ ուրիշ ոչինչ չունի ցույց տալու։ Արդ, երեխան, ինչպես նաև մարդը, մի րոպեում չի դրսևորում իրեն։ Ո՞ւր են այն դիտողները, որոնք կարողանային մի ակնարկով տեսնել նրան բնորոշող գծերը։ Այդպիսիք կան, բայց շատ քիչ, հարյուր հազար հայրերից մեկը չի լինի այդպիսին։

Հաճախակի կրկնված հարցերը ձանձրացնում և վհատեցնում են բոլորին, առավել ևս՝ երեխաներին։ Մի րոպեից հետո նրանց ուշադրությունը թուլանում է, նրանք այլևս չեն լսում, թե ինչ է հարցնում համառ հարցաքննողը, ու միայն պատահական պատասխաններ են տալիս։ Այդ ձևի հարցաքննությունը ապարդյուն է և խմաստակություն. շատ անգամ, թուղթիկ մի խոսք ավելի լավ է նկարում նրանց միտքն ու հոգին, քան թե երկար ճառերը. բայց պետք է ուշադիր լինել,

որ դա չլինի ո՛չ թելադրված, ո՛չ էլ պատահական անիմաստ ինչ-որ բառ։ Մարդ պետք է ինքը հարուստ դատողություն ունենա՝ երեխայի դատողությունը չափելու համար։

Հանգուցյալ լորդ Հայդը մի անգամ ինձ պատմել է, որ իր բարեկամներից մեկը, երեք տարվա բացակայությունից հետո Իտալիայից վերադառնալով, ցանկացել է քննել, թե ինչպիսի առաջադիմություն է արել իր ինը-տասը տարեկան երեխան։ Մի երեկո նրանք, դաստիարակի հետ, գնում են դաշտ զբոսնելու, որտեղ երեխաները օդապարուկներ էին թռցնում։ Հայրը ի միջի այլոց հարցնում է որդուն. «Ո՞րտեղ է այն օդապարուկը, որի ստվերը ահա այստեղ տեսնում ենք։ Առանց տատանվելու, առանց գլուխը բարձրացնելու՝ երեխան ասում է. «Մեծ ճանապարհի վրա»։ Լորդ Հայդը ափսոսացրեց, որ, որդուն, մեծ ճանապարհը արևի և իրենց միջտեղն էր։ Հայրը, այդ խոսքի վրա, համբուրում է որդուն և, քննությունը դրա-նով ավարտելով, վերադառնում է՝ առանց մի բառ ասելու։ Հաջորդ օրը դաստիարակին նշանակում է ցմահ կենսաթո-շակ, անկախ ոռճիկից։

Ինչպիսի՜ հայր և ինչպիսի՜ խոստմնալից որդի։ Հարցը իսկապես ըստ տարիքի է տրված, և պատասխանը շատ պարզ է, բայց տեսե՛ք, թե մանկական դատողության ինչպիսի ճըշ-տություն է հայտնաբերում այն։ Այդպես է, որ Արիստոտելի աշակերտը ընտելացնում էր այն նշանավոր երիվարին, որին ոչ մի ձիավոր չէր կարողացել զսպել։

ԳԻՐՔ ԵՐՐՈՐԴ

Թեև մինչև պատանեկություն կյանքի ամբողջ ընթացքը տկարության մի շրջան է, սակայն այս ստաջին տարիքում կա մի սահմանակետ, երբ ուժերի զարգացումը, գերազանցելով կարիքի պահանջները, աճող կենդանի էակը, որ դեռևս բոլորովին տկար է, համեմատաբար ավելի ուժեղ է դառնում։ Նրա բոլոր պահանջները դեռևս զարգացած չլինելով, այժմյան ուժերը ավելի քան կբավարարեն այդ պահանջներին։ Որպես մարդ՝ նա շատ թույլ կլինի, որպես երեխա՝ շատ ուժեղ։

Ո՞րտեղից է առաջանում մարդու տկարությունը։ Այն տարաերությունից, որ գոյություն ունի նրա ուժերի և ցանկությունների միջև։ Մեր տենչերն են, որ մեզ տկար են դարձնում, որովհետև նրանց բավարարելու համար ավելի ուժ է պետք, քան տվել է բնությունը։ Պակասեցրե՛ք ցանկությունները, այդ միևնույնն է, թե ավելացնեք ուժերը։ Նա, ով իր ցանկացածից ավելին կարող է անել, անկասկած, կունենա և ուժի ավելցուկ. նա, ապահովաբար, շատ զորավոր մի էակ է։ Այս է մանկության երրորդ շրջանը, որի մասին պիտի խոսեմ հիմա։ Ես շարունակում եմ այդ շրջանը մանկություն անվանել, քանի որ ուրիշ բառ չկա այն բացատրելու համար, որովհետև այդ տարիքը մոտենում է պատանեկությանը, առանց դեռևս հասունության տարիքին հասնելու։

Տասներկու կամ տասներեք տարեկան հասակում երեխայի ուժերը շատ ավելի արագ են զարգանում, քան նրա կարիքները. նրա մեջ դեռևս իրեն զգալ չի տալիս ամենից բուռն, ամենից սոսկալի պահանջը, համապատասխան գործարանն

իսկ դեռևս չի կատարելագործված, և թվում է, թե այդ դրությունից դուրս գալու համար սպասում է նրա կամքին։ Սակավ զգայուն լինելով օդի և կլիմայի խստություններին, նա նրանց դիմադրում է առանց դժվարության. նրա անող չերմությունը փոխարինում է հագուստին, ախորժակը համեմունքի դեր է կատարում։ Այդ տարիքում այն ամենը, ինչ անում է, նրա տարիքի համար լավ է. եթե քնել է ուզում, պառկում է գետնին ու քնում. ինքն իրեն շրջապատված է զգում բոլոր անհրաժեշտ իրերով, ոչ մի երևակայական կարիք չի տանջում նրան, ուրիշների կարծիքը նշանակություն չունի նրա համար. նրա ցանկությունները բազուկների կարողությունից այն կողմ չեն անցնում, ոչ միայն կարող է ինքն իրեն բավարարել, այլև պետք եղածից ավելի ուժ ունի։

Ես նախազգում եմ, թե ինձ ինչ են առարկելու։ Թևև չեն ասի, որ երեխան ավելի շատ պահանջ ունի, քան այն, որ ես ենթադրում եմ, բայց կժխտեն, որ նա այնքան ուժ ունի, ինչքան որ ես եմ նրան վերագրում. չեն մտածի, որ խոսքս իմ սանի մասին է և ոչ թե այն շրջիկ տիկնիկների, որոնք մի սենյակից մյուսն են անցնում, մի արկղի մեջ են հողը վարում ու իսավաքարտե ծանրություններ են բարձրացնում։ Ինձ կասեն, թե առնական ուժը առնականության հետ է միայն հայտնվում, թե կենսական ոգին է միայն, մշակվելով համապատասխան հյուսվածքների մեջ ու տարածվելով ամբողջ մարմնում, տալիս է մկաններին այն ամրությունը, աշխուժությունը, ընթացքը, մղումը, որից առաջանում է իսկական ուժը։ Սա կաբինետային փիլիսոփայություն է, իսկ ես գիմում եմ փորձնականին։ Ես ձեր գյուղերում տեսնում եմ պատանիներ, որոնք հերկում, փոցխում, գութանով վարում են, գինու տակառ են բեռնում, քշում են սայլը՝ ինչպես իրենց հայրերը, և որոնց կարելի էր մեծահասակ մարդկանց տեղ դնել, եթե նրանց ձայնը չմատներ։ Մեր քաղաքներում իսկ, դևռատի բանվորները, սայլապանները, երկաթագործները, պայտառները համարյա նույնքան հուժկու են, ինչքան նրանց վարպետները, և նույնքան ընդունակ կլինեին, եթե ժամանակին սովորեցնեին նրանց։ Եթե կա տարբերություն,— ընդունում եմ, որ կա,— ապա շատ ավելի քիչ

է, կրկնում եմ, քան չափահաս մարդու բուռն ցանկությունների և երեխայի սահմանափակ ցանկությունների միջև։ Համենայն դեպս, այստեղ հարցը միայն ֆիզիկական ուժի մասին չէ, այլ, մանավանդ, մտավոր ուժի և ընդունակության, որ լրացնում կամ ղեկավարում են առաջինը։

Այս ժամանակաշրջանը, երբ անհատը իր ցանկացածից ավելին կարող է անել, թեև նրա բացարձակ ամենամեծ ուժի շրջանը չէ, բայց, ինչպես ասացի, գոնե նրա հարաբերական մեծ ուժի շրջանն է։ Դա կյանքի ամենաթանկագին շրջանն է, մի ժամանակաշրջան, որ միայն մեկ անգամ է գալիս, շատ կարճ մի շրջան, այնքան ավելի կարճ, որ, ինչպես հետագայում կտեսնենք, մարդ այն պետք է ամենից ավելի լավ ձևով օգտագործի։

Ի՞նչ պետք է անի, ուրեմն, երեխան ընդունակությունների և ուժի այդ ավելցուկը, որ այժմ այնքան առատ է նրա մոտ, բայց որի պակասն զգալու է մի ուրիշ տարիքում։ Նա կջանա այն գործածել այնպիսի պետքերի համար, որոնք նրան օգտակար կլինեն կարիքի դեպքում. այսպես ասած՝ նա իր ներկա գոյության ավելցուկը կնետի ապագայի մեջ. ուժեղ երեխան պաշար կկուտակի ապագայի թույլ մարդու համար. բայց նա իր պաշարը չի տեղավորի ա՛չ արկղներքի մեջ, որտեղից կարող են գողանալ, ա՛չ էլ պահեստներում, որոնք նրան խորթ են. իր աշխատանքի իսկական տերը լինելու համար, իր թևերի, իր գլխի, ինքն իր մեջ կտեղավորի այն։ Ահա՛, ուրեմն, աշխատանքի, ուսմունքի, ուսումնասիրությունների ժամանակը, և, նկատեցե՛ք, ես չէ, որ կամայականորեն անում եմ այս ընտրությունը, դա բնությունը ինքն է ցույց տալիս։

Մարդկային իմացականությունն իր սահմաններն ունի, և մի մարդ ոչ միայն չի կարող ամեն ինչ իմանալ, այլ նույնիսկ չի կարող ամբողջովին իմանալ այն քիչը, որ գիտեն մյուս մարդիկ։ Քանի որ յուրաքանչյուր սխալ առաջադրանքի հակառակը ճշմարտությունն է, ուրեմն ճշմարտությունների թիվը սխալների թվի նման անսպառ է։ Ուստի պետք է ընտրություն կատարել այն բաների մեջ, որ պիտի ուսուցանենք, ինչպես նաև դրանք ուսուցանելու ժամանակի մեջ։

Մեր ստացած գիտելիքների մի մասը կեղծ է, մյուսը՝ անօգուտ, երրորդն էլ ծառայում է անցպարծությունը բավարարելուն։ Գիտելիքների այն փոքր գումարը, որ իրոք ծառայում է մեր բարեկեցությանը, արժանի է ուսումնասիրվելու որևէ խելոք մարդու, հետևապես և երեխայի կողմից, որին ուզում ենք խելոք մարդ դարձնել։ Հարցը այն չէ, որ գիտենանք, թե ինչ բան է այս կամ այն առարկան, այլ այն, թե ինչն է իրոք օգտակար։

Այս փոքր գումարից պետք է նաև բացառենք այն ճշմարտությունները, որոնք հասկանալու համար պահանջվում է արդեն կազմակերպված ըմբռնողություն, այնպիսի ճշմարտություններ, որոնք ենթադրում են մարդկային հարաբերությունների ճանաչողություն, որը երեխան չի կարող ընկալել, և այնպիսիներ, որոնք թեև ինքնին ճշմարիտ են, բայց անփորձ բնավորությանը տրամադրում են սխալ մտածել ուրիշ նյութերի մասին։

Այսպիսով, իրերի գոյության վերաբերյալ մենք շատ փոքրիկ մի շրջանակ ունենք, բայց և այնպես, երեխայի մտքի տարողության համար այդ շրջանակը դեռևս շատ ընդարձակ է։ Ո՛վ մարդկային իմացականության խավար, ո՞ր հանդուգն ձեռքը համարձակվեց վերցնել քո քողը։ Ինչքա՜ն վիհեր է փորել այս դժբախտ պատանու շուրջը մեր սին գիտությունը։ Ո՜վ դու, որ նրան պիտի առաջնորդես այս վտանգավոր կածաններով, նրա աչքերի առջևից հեռացնես բնության նվիրական վարագույրը, զգուշացի՛ր։ Նախ և առաջ ապահովի՛ր նրա և քո գլուխների ամրությունը, որպեսզի գլխապտույտ չունենաք մեկդ կամ մյուսդ, գուցե և երկուսդ միասին։ Զգուշացի՛ր ճշմարտանման ստի հրապույրից ու մեծամտության արբեցնող բույրից։ Հիշի՛ր, մի՛շտ հիշիր, որ անգիտությունը երբեք վնաս չի պատճառել, որ սխալանքն է միայն աղետաբեր, և որ մարդիկ մոլորվում են ոչ թե նրա համար, որ չգիտեն, այլ նրա համար, որ կարծում են, թե գիտեն։

Երկրաչափության մեջ երեխայի ունեցած հաջողությունները ձեզ որպես փորձ ու հուսալի չափանիշ կարող էին ծառայել՝ դատելու համար նրա մտավոր կարողությունների զարգացման մասին. բայց հենց որ նա կսկսի տարբերել, թե

որն է օգտակար և որը՝ ոչ, պետք է շատ զգուշություն ու վարպետություն գործադրել՝ նրան դեպի հայեցողական գիտությունները մղելու համար։ Թե, օրինակ, դուք ցանկանում եք, որ նա գտնի միջին համեմատականը երկու գծերի միջև, այնպես արե՛ք, որ նրան պետք լինի գտնել տվյալ ուղղանկյան հավասար քառակուսին։ Թե խնդիրը երկու միջին համեմատականների մասին է, ապա պետք է նախ նրան տալ խորանարդների բազմացման խնդիրը և այլն։ Տեսե՛ք, թե ինչպես ենք աստիճանաբար մոտենում բարոյական գիտելիքներին, որոնք որոշում են չարն ու բարին։ Մինչև այժմ մենք միայն կարիքի օրենքն ենք ճանաչել, այժմ մենք ուշադրության կառնենք այն, ինչ օգտակար է, մենք շուտով կհասնենք այն բանին, թե ո՛րն է նպատակահարմարն ու լավը։

Միևնույն բնազդը կյանքի է կոչում մարդու տարբեր հատկություններ։ Արդեն զարգանալ սկսող մարմնի գործունեությանը հաջորդում է մտքի գործունեությունը, որը ցանկանում է սովորել։ Սկզբում երեխաները միայն անհանգիստ են, շարժուն, ապա հետաքրքիր են դառնում, և լավ ղեկավարվող այս հետաքրքրությունը շարժիչ ուժն է այն հասակի, որին մենք հիմա մոտեցել ենք։ Միշտ պետք է տարբերել բնատուր հակումները ընդհանուր կարծիքից առաջացած հակումներից։ Սովորելու եռանդի մի տեսակը հիմնված է միայն գիտուն համարվելու ցանկության վրա, մի ուրիշը ծնվում է բնական հետաքրքրությունից դեպի այն ամենը, ինչ մարդուն մոտիկից թե հեռվից շահագրգռում է։ Բարեկեցության բնածին ցանկությունն ու այդ ցանկությունը լրիվ բավարարելու անկարելիությունը մարդուն ստիպում են անդադար նորանոր միջոցներ որոնել դրան հասնելու համար։ Այդպիսին է հետաքրքրության առաջին սկզբունքը՝ մարդկային սրտի համար բնական մի սկզբունք, որի զարգացումը, սակայն, մեր տեղերին ու մեր գիտելիքներին հարաբերաբար է ընթանում։ Ննջադրեցե՛ք, թե որևէ փիլիսոփա ընկել է մի ամայի կղզի՝ իր գործիքների ու գրքերի հետ միասին. վստահ լինելով, որ իր կյանքի մնացած օրերն այնտեղ կանցկացնի, նա այլևս չի հետաքրքրվի աշխարհի վիճակով, ձգողական օրենքներով, տարբերականության հաշվով, գուցե ամբողջ կյանքում ոչ մի

գիրք էլ չկարդա, բայց նա չի հրաժարվի իր կղզու ամենահեռավոր անկյուններն այցելել, ինչքան էլ այդ կղզին ընդարձակ լինի։ Ուրեմն, դեն նետենք մեր նախնական ուսմունքից նաև այն գիտելիքները, որոնց ձգտումը բնական չէ մարդու համար, և սահմանափակվենք նրանցով, որ բնազդն է ստիպում փնտրել։

Մարդկային ցեղի կղզին երկրագունդն է. մեր աչքին ամենից ավելի զարկող իրը արևն է։ Հենց որ սկսենք մենք մեզնից հեռանալ, մեր առաջին դիտողությունները կընկնեն մեկի և մյուսի վրա։ Այդ պատճառով էլ համարյա բոլոր վայրենի ժողովուրդների փիլիսոփայությունն ընդգրկում է միայն երկրի մտացածին բաժանումներն ու արեգի աստվածության զաղափարը։

«Ինչպիսի՞ թռիչք» գուցե կասեն։ Քիչ առաջ մենք զբաղվում էինք միայն մեզ վերաբերող, անմիջականորեն մեզ շրջապատող խնդիրներով և ահա հանկարծ չափչփում ենք ամբողջ երկրագունդն ու ցատկում տիեզերքի մեկ ծայրից մյուսը։ Այդ ոստնումը մեր ուժերի զարգացման ու մեր մտքի հակումների հետևանքն է։ Թուլության ու անկարողության պայմաններում՝ ինքնապահպանման կարիքը մեզ մղում է ինքնակենտրոնացման. ուժի և կարողության պայմաններում՝ մեր էությունը ընդարձակելու ցանկությունը մեզ ավելի հեռուն է տանում. բայց որովհետև իմացական աշխարհը մեզ դեռևս անծանոթ է, մեր միտքը մեր տեսողության սահմաններից այն կողմ չի անցնում, ու մեր հասկացողությունն ընդարձակվում է միայն իր ընդգրկած տարածության չափով։

Վերածեցե՛ք ձեր զգացողությունները մտքերի, բայց զգայական իրերից միանգամից թռիչք չկատարեք դեպի մտահայեցողական իրերը. առաջինների միջոցով է, որ դուք կհասնեք վերջիններին։ Մտքի առաջին գործողությունների մեջ թո՛ղ զգացողությունները միշտ լինեն առաջնորդող. ոչ մի դիրք պետք չէ՝ բացի աշխարհից, ոչ մի ուսուցում՝ բացի եղելություններից։ Կարդացող երեխան չի մտածում, նա սոսկ կարդում է. չի զարգանում, այլ միայն բառեր է սովորում։

Ձեր աշակերտը թո՛ղ ուշադիր լինի դեպի բնության երևույթները, շուտով դուք նրան հետաքրքրասեր կդարձնեք.

բայց նրա հետաքրքրությունը գոհացնելու համար երբեք մի՛ շտապեք այն բավարարել։ Հարցերը դրե՛ք նրան մատչելի ձևով ու թողե՛ք, որ ինքը լուծի։ Ո՛չ նա ոչինչ չիմանա ձեր միջոցով, այլ ինքն իրեն. ոչ թե սովորի գիտությունը, այլ հնարի այն։ Եթե երբևէ դուք նրա մտքում դատողությունը փոխարինեք հեղինակությամբ, նա այլևս չի դատի, այլ կդառնա միայն ուրիշների կարծիքի խաղալիքը։

Դուք ուզում եք այդ երեխային աշխարհագրություն սովորեցնել, ու նրա առաջ դնում եք երկրագունդը, քարտեզներ, ինչքա՜ն ավելորդ բաներ։ Ի՞նչ կարիք կա բոլոր այդ ներկայացումներին։ Ավելի լավ է սկսել նրան ցույց տալով առարկան, որպեսզի նա գոնե իմանա, թե ինչի մասին եք նրա հետ խոսում։

Մի գեղեցիկ երեկո կգնաք զբոսնելու որևէ հարմար տեղ, ուր բոլորովին պարզ հորիզոնը լրիվ ցույց է տալիս մայր մտնող արևը, և կդիտեք այն իրերը, որոնք ճանաչելի կդարձնեն մայրամուտի վայրը։ Հաջորդ օրը, զով օդ ծծելու համար, նույն վայրը կվերադառնաք նախքան արևի ծագելը։ Ահա հեռվից կհայտնվի նա իրեն մատնող ճաճանչներով։ Հրդեհը ավելանում է, արևելքը կարծես բոցերի մեջ է։ Այդ հրաշքը ստիպում է ձեզ սպասել արևին՝ իր երևալուց շատ առաջ. ձեզ թվում է, թե ահա ուր որ է կհայտնվի, և, վերջապես, հայտնվում է։ Մի փայլուն կետ ջահի նման դուրս է ժայթքում և խոկույն լուսով ողողում ամբողջ տիեզերքը. խավարի վարագույրը անհետանում, կորչում է։ Մարդը ճանաչում է իր բնակավայրն ու այն գտնում զուգված, զարդարված։ Կանաչը գիշերվա ընթացքում մի նոր թարմություն է ստացել. ծագող արևը, որ նրան լուսավորում է, առաջին ճառագայթները, որ նրան ոսկեզօծում են, ցույց են տալիս նրան՝ ցողի շողշողուն ցանցով պատած, որի մեջ ցոլանում են լույսն ու գույները։ Թռչուններն իրենց համերգով ողջունում են կյանքի Հորը. այդ պահին նրանցից ոչ մեկը չի լռում. նրանց դեռևս թույլ ծլվլոցը ավելի մեղմ ու ավելի քաղցր է, քան օրվա մյուս ժամերին, զգացվում է խաղաղ զարթոնքի հեշտանքը։ Այս բոլորի համագործակցությունից զգացումներն ստանում են թարմության այնպիսի տպավորություն, որ կարծես թափանցում է

*մինչև հոգու խորքը։ Այդ անդիմադրելիորեն համայիլ աէսա-
րանի աոջև, որր հազիվ կես ժամ է տևում, ոչ ոք չի կարող
անտարբեր ու սառնասիրտ մնալ։*

*Ուսուցիչը իրեն համակող խանդավառ զգացումներին
ցանկանում է հաղորդակից դարձնել իր աշակերտին և կար-
ծում է, թե կկարողանա նրան հուզել՝ նրա ուշադրությունը
հրավիրելով այն զգացումների վրա, որոնցով ինքն է հուզ-
վել։ Բացարձակ հիմարությո՜ւն։ Մարդու սրտի մեջ է ապրում
բնության տեսարանը, նրան տեսնելու համար պետք է զգալ
այն։ Երեխան տեսնում է իրերը, բայց չի կարող նշմարել
նրանց իրար կապող հարաբերությունները, չի կարող լսել
նրանց համերգի քաղցր ներդաշնակությունը։ Զգալու համար
այն բարդ տպավորությունը, որ բխում է միաժամանակ բոլոր
այդ զգացողություններից, նրան հարկավոր են՝ փորձառու-
թյուն, որ դեռ չի ստացել, վշտացումներ, որ երբեք չի ունեցել.
եթե նա երկար ժամանակ չի շրջել անջրդի դաշտերով, նթե
կիզիչ ավազը չի այրել նրա ոտքերը, եթե արևից շիկացած
ժայռերի հեղձուցիչ անդրադարձումը նրան երբեք չի ճնշել,
ի՞նչպես կարող է ճաշակել գեղեցիկ առավոտյան չինչ օրը։
Ծաղիկների բուրմունքը, դալարիքի հրապույրը, ցողի խոնավ
դյուրշին, մարգագետնի վրա հեզիկ ու հաճելի պտույտը ի՞նչ-
պես կկարողանան համայել նրան։ Ի՞նչպես կարող է թռչուն-
ների դայլայլը հեշտալի հուզմունք պատճառել նրան, եթե
սիրո և հաճույքի լեզվին դեռևս անծանոթ է նա։ Կարո՞ղ է
նա հափշտակվել այսպիսի մի օրվա ծնունդով, եթե նրա
իրևակայությունն անկարող է պատկերել այն հրապույրները,
որոնցով կարելի է լցնել այդ օրը։ Վերջապես, բնության գե-
ղեցիկ տեսարանը ի՞նչպես կարող է հուզել մարդուն, եթե
չգիտի, թե ո՞ւմ ձեռքն է նրան այդպես զարդարել։*

*Երեխայի գլխին մի՛ կարդաք այնպիսի ճառեր, որոնք նա
չի կարող հասկանալ։ Ո՛չ մի նկարագրություն, ո՛չ մի պերճա-
խոսություն, ո՛չ մի պատկերում, ո՛չ մի բանաստեղծու-
թյուն։ Այժմ հարցը զգացումի ու ճաշակի մասին չէ։ Շարու-
նակեցե՛ք լինել հստակ, պարզ և սառը. շուտով կգա ժամա-
նակը, երբ ուրիշ լեզու պետք է գործածել։*

Դաստիարակված՝ մեր սկզբունքների ոգով, սովորած լի-

նելով բոլոր միջոցները գործադրել սեփական նախաձեռնությամբ, ուրիշի օգնությանը դիմելով միայն այն դեպքում, երբ զգում է իր անկարողությունը, երեխան տեսած ամեն մի նոր իրը երկար քննության կենթարկի՝ առանց որևէ խոսք ասելու։ Նա մտածկոտ է և ոչ թե հարցասեր։ Գոհացե՛ք, ուրեմն, նրան բացատրելով իրերի մասին. ապա, երբ կտեսնեք, որ նրա հետաքրքրությունը բավականաչափ լարված է, ա՛վե՛ք որևէ լակոնական հարց, որը նրան դներ այն լուծելու ճանապարհի վրա։

Երբ նրա հետ երկար դիտել եք արևածագը, նրան նույն կողմից ցույց եք տվել լեռները ու հարևան մյուս առարկաները, այդ բոլորի մասին նրան թույլ տալով, որ ազատ խոսի, մի քանի րոպե լուռ մնացե՛ք, այն մարդու նման, որ երազում է, և ապա ասացե՛ք նրան. «Մտածում եմ, որ երեկ երեկոյան արևը մայր մտավ այնտեղ, իսկ այս առավոտ ծագեց այդ տեղից։ Ի՞նչպես է պատահում այդ։ Ուրիշ ոչինչ չավելացնեք, եթե հարցեր տա, չպատասխանեք. խոսեցե՛ք ուրիշ բանի մասին։ Թողե՛ք նրան ինքն իրեն ու վա՛ռահ եղե՛ք, որ նա կմտածի այդ մասին։

Որպեսզի երեխան սովորի լինել ուշադիր և որպեսզի որևէ զգալի ճշմարտություն ազդի նրա վրա, պետք է, որ այդ ճշմարտությունը նրան մի քանի օր անհանգստացնի՝ նախքան այն գտնելը։ Եթե այս ձևով երեխան չկարողանա այդ ըմբռնել, ուրիշ միջոց կա նրան այդ բանն ավելի զգալի դարձնելու համար. այդ միջոցը՝ հարցը չուտ տալն է։ Եթե նա չգիտի, թե ինչպես է արևը արևմուտքից հասնում արևելքը, համենայն դեպս գիտի, թե ինչպես է նա արևելքից հասնում մինչև մայրամուտ։ Դա՝ նրա աչքերն են սովորեցնում։ Բացատրեցե՛ք, ուրեմն, առաջին հարցը երկրորդով. եթե ձեր աշակերտը բոլորովին բթամիտ չէ, նմանությունն այնքան բացահայտ է, որ իսկույն կըմբռնի։ Ահա տիեզերագիտության նրա առաջին դասը։

Որովհետև մենք դանդաղ ենք գործում, անցնելով զգալի մի գաղափարից մի ուրիշ զգալի գաղափարի, միևնույն մտքի հետ ընտելանում ենք երկար ժամանակով, մինչև մի ուրիշին անցնելը. վերջապես, քանի որ մենք երբեք մեր աշակերտին

չենք հարկադրում ուշադրության, երկար ժամանակ է պետք, մինչև այս առաջին դասից անցնենք արևի ընթացքի ու երկրի ձևի ծանոթացմանը. բայց որովհետև երկնային մարմինների բոլոր տեսանելի շարժումները միևնույն սկզբունքին են հարում, և առաջին դիտողությունը տանում է դեպի մյուսները, ավելի քիչ ջանք է պետք, թեև ավելի երկար ժամանակ, հասնելու համար երկրի օրական պտույտից մինչև խավարումների հաշիվները, քան թե օրվա և գիշերվա մասին դաղափար կազմելու համար։

Քանի որ արևը պտտվում է երկրի շուրջը *, ուրեմն նա մի շրջան է անում, իսկ յուրաքանչյուր շրջան պետք է մի կենտրոն ունենա։ Մենք արդեն գիտենք այդ։ Այդ կենտրոնը, գտնվելով երկրի ընդերքում, տեսանելի չէ, սակայն մակերևույթի վրա կարելի է նշել երեք հակադիր կետեր, որոնք համապատասխանում են նրան։ Թեև մի ձող անցկացնենք երեք կետերով ու հասցնենք մինչև երկինք մեկ և մյուս կողմից, կստանանք երկրի ու արևի օրական շարժման առանցքը։ Իր սուր ծայրին պտտվող հոլը կներկայացնի իր առանցքի շուրջը պտտվող երկինքը, հոլի երկու ծայրերը կներկայացնեն երկու բևեռները։ Նրեխան շատ հեշտությամբ կարող է նրանցից մեկը ճանաչել, ես նրան այդ ցույց կտամ Փոքր Արջ համաստեղության պոչի վրա։ Ահա ձեզ մի գիշերային զվարճություն. հետզհետե կարելի է ծանոթանալ աստղերին. դրանից առաջանում է առաջին ցանկությունը՝ ծանոթանալ մոլորակներին ու դիտել համաստեղությունները։

Մենք արևի ծագումը տեսանք Սուրբ Հովհաննեսի օրը։ Նորից կդիտենք այն Ծննդյան օրը կամ Ամեռվա ուրիշ մի գեղեցիկ օր. պարզ է, որ մենք ծուլլեր չենք, և մեզ հաճելի է ցրտին տոկալ։ Ես այնպես եմ անում, որ մենք նոր դիտումը կատարենք այն նույն տեղից, և հնարամիտ ձևով նախապատրաստելով դիտումը, ես հավատացած եմ, որ դիտողներից որևէ մեկը կբացականչի. «Օ՜, օ՜, ի՜նչ տարօրինակ է, արևը այս

---

* Ըստ երևույթին, հեղինակը, իր այս հակագիտական օրինակով. նկատի ունի արևի այն պտույտը, որ մենք տեսնում ենք օրվա ընթացքում— Ե. Բ.

անգամ միևնույն տեղից չի ծագում. ահա մեր նախկին տեղեկությունները. անցյալ անգամ արևն այստեղից էր ծագում, իսկ այս անգամ տեսնք որտեղից է ելնում և այլն... Ուրեմն, մի արևելք կա ամառը, մի արևելք՝ ձմեռը... և այլն»։ Երիտասարդ ուսուցի՛չ, դուք արդեն լավ ճանապարհի վրա եք։ Այս օրինակները բավական են, որպեսզի դուք ամենայն հստակությամբ բացատրեք երկնակամարը, դիտելով երկիրը որպես երկիր, արևը՝ որպես արև։

Առհասարակ իրո՞ւն ժամանակ միայն փոխարինեցեք նշանով, եթե անհնար է ցույց տալ այն, որովհետև նշանը կլանում է երեխայի ուշադրությունը և մոռացնել է տալիս իրականությունը։

Մանեկագունդը * ինձ թվում է վատ կառուցված ու անհամապատասխանով մի մեքենա։ Շրջանագծերի այդ խառնաշփոթությունը և այնտեղ նշված տարօրինակ ձևերը նրան մի կախարդագրքի տեսք են տալիս ու խրտնեցնում երեխայի միտքը։ Երկիրը շատ փոքր է այնտեղ, շրջագծերը՝ շատ մեծ ու բազմաթիվ, դրանցից մի քանիսը, ինչպես գնդածրերը, բոլորովին ավելորդ են. յուրաքանչյուր շրջագիծ երկրից ավելի լայն է. խավաքարտի հաստությունը նրանց այնպիսի կարծրություն է տալիս, որ կարծես նրանք իսկապես գոյություն ունեցող կլոր զանգվածներ են, և երբ երեխային տանում եք, թե այդ շրջագծերը մտացածին են, նա չգիտե, թե ինչ է տեսնում, այլևս ոչինչ չի հասկանում։

Մենք երբեք չգիտենք երեխաների տեղը դնել մեզ. չենք թափանցում նրանց մտքի մեջ, այլ մերն ենք տալիս նրանց. և շարունակ հետևելով մեր սեփական դատողություններ, նրանց գլուխը լցնում ենք միայն անհեթեթ ու սխալ մտքերով։

Ընդհանրապես, գիտությունները ուսումնասիրելու համար վիճում ենք անալիզի կամ սինթեզի ընտրության մասին։ Սակայն հարկ չկա միշտ ընտրություն կատարել։ Երբեմն միևնույն ուսումնասիրության մեջ կարելի է և՛ լուծել, և՛

---

* Մանեկագունդը մետաղից, փայտից կամ ստվարաթղթից շինված բազմաթիվ շրջանակների մի ամբողջություն է, որի կենտրոնում դրված է փոքրիկ գունդ՝ երկիրը պատկերելու համար և որից հնում օգտվում էին աստղագիտական ուսումնասիրություններ կատարելու համար։— Ա. Բ.

բաղադրել ու երեխային առաջնորդել ուսուցման մեթոդով, երբ նա կարծում է, թե սոսկ անալիզ է անում։ Եվ այն ժամանակ, երբ թե՛ մեկը և թե՛ մյուսն ենք գործադրում, նրանք կծառայեն որպես փոխադարձ ապացույցներ։ Միաժամանակ երկու հակադիր կետերից մեկնելով, առանց մտածելու, թե միևնույն ճանապարհով ենք գնում, երեխան կզարմանա, որ իրար ենք հանդիպում, և այդ զարմանքը անպայման շատ հաճելի կլինի։ Ես, օրինակ, կցանկանայի աշխարհագրությունը վերցնել իր երկու նպատակներով ու երկրագնդի պատյտի ուսումնասիրությանը միացնել նրա մասերի չափումը, սկսելով այն վայրից, որտեղ բնակվում ենք։ Փոխանակ թույլ տալու երեխային՝ ուսումնասիրել երկնակամարն ու այդպիսով երկինքը բարձրանալ, վերցրե՛ք նրան երկիր և առաջին հերթին քույլ տվե՛ք նրա սեփական բնակավայրը։

Նրա աշխարհագրական առաջին երկու կետերը պիտի լինեն իր ապրած քաղաքը և քաղաքից դուրս հոր ամառանոցը. այնուհետև միջանկյալ տեղերը, հետո շրջակա գիտերը, վերջապես արևի տեսքը, շրջապատում կողմնորոշելու միջոցը։ Այստեղ է միացման կետը։ Թողե՛ք ինքը կազմի այս բոլորի քարտեզը. մի շատ պարզ քարտեզ, սկզբում կազմված միայն երկու իրից, որոնց հետզհետե կավելացնի ուրիշները, աստիճանաբար իմանալով կամ գնահատելով նրանց հեռավորությունն ու դիրքը։ Դուք արդեն տեսնում եք, թե ինչպիսի առավելություն ենք նրան տվել, նախօրոք օժտելով ճշգրիտ աչքաչափով։

Սրա հետ մեկտեղ, անկասկած, պետք է նրան մի քիչ առաջնորդել, բայց շատ քիչ, այնպես, որ ինքն այդ չնկատի։ Եթե սխալվում է, թողե՛ք որ սխալվի, մի՛ ուղղեք նրա սխալները, լուռթյամբ սպասեցե՛ք, որ ինքն ի վիճակի լինի դրանք նկատելու և ուղղելու, կամ, ամենաշատը, նպաստավոր պահին դիմեցե՛ք մի այնպիսի գործողության, որ նա զգա իր սխալը։ Եթե երեխան ոչ մի սխալ չգործեր, չէր կարողանա այդքան լավ սովորել։ Կարևորը իր ապրած երկրի տեղագրությունն իմանալը չէ, այլ այն ուսումնասիրելու միջոցը։ Կարևոր չէ, որ նա գլխում քարտեզներ ունենա, բավական է միայն ըմբռնի, թե ինչ են ներկայացնում դրանք, ու պարզ գաղափար

ունենա, թե ինչպես են կազմում դրանք։ Արդեն դուք տեսնում եք այն տարբերությունը, որ կա ձեր աշակերտների գիտությյան ու իմ աշակերտի տգիտության միջև։ Նրանք ճանաչում են քարտեզները, իսկ իմ աշակերտը պատրաստում է դրանք։ Ահա նոր զարդարանքներ նրա սենյակի համար։

Հիշեցե՛ք միշտ, որ իմ դաստիարակության նպատակը չէ նրեխային շատ բան սովորեցնել, այլ թույլ տալ, որ նրա ուղեղն ընդունի միայն ճիշտ և հստակ մտքեր։ Թեև նա ոչինչ էլ չգիտենա, նշանակություն չունի ինձ համար, բավական է, որ չսխալվի, և ես նրան ճշմարտություններ եմ սովորեցնում սոսկ նրան պաշտպանելու համար այն սխալներից, որոնք նա պիտի սովորեր դրանց փոխարեն։ Բանականությունն ու դատողությունը դանդաղ են աճում, իսկ նախապաշարումները խուժում են նրամներով։ Վերջիններից է, որ պետք է երեխային պաշտպանել։ Դիտել գիտությունն ինքն իր մեջ՝ նշանակում է թաղվել մի անհատակ, անեզր, խութերով լի ծովի մեջ, որտեղից անհնար է դուրս գալ։ Երբ ես տեսնում եմ գիտելիքների փորով տոգորված մի մարդ, որ տարվում է նրանց հրապույրով և ոստոստում մի գիտելիքից մյուսը՝ առանց մեկի վրա կանգ առնելու, ինձ թվում է, թե ծովի եզերքին խեցիներ հավաքող մի երեխա եմ տեսնում, որ թեև շատ է հավաքել, բայց ցանկանում է վերցնել ուրիշները, որ իրեն ավելի գեղեցիկ են թվում։ Այսպիսով, թափում է հավաքածը, նորից հավաքում, մինչև որ նրանց ծանրությունից կքած ու չիմանալով, թե որն ընտրի, որը թողնի, բոլորը միանգամից թափում է ու դատարկ ձեռքով վերադառնում տուն։

Վաղ հասակում ժամանակը երկար էր թվում. մենք աշխատում էինք մի կերպ անցկացնել այդ ժամանակը, վախենալով վատ գործադրել այն։ Այժմ բոլորովին այլ է. բավականաչափ ժամանակ չունենք՝ բոլոր օգտակար գործերը կատարելու համար։ Մտածեցե՛ք, որ կրքերը մուտենում են, և հենց որ դրանք դուռը բախեն, ձեր աշակերտի ուշադրությունը կկենտրոնանա միայն դրանց վրա։ Իմացականության խաղաղ շրջանը այնքան կարճ է, այնքան շուտ է անցնում, այնքան ուրիշ անհրաժեշտ աննելիքներ ունի, որ խելագարություն կլիներ ցանկանալ, որ այդ ժամանակաշրջանը բավարարեր երե-

խային գիտուն դարձնելուն։ Խնդիրը նրան գիտություն տալը չէ, այլ՝ գիտությունը սիրելու ճաշակ ու ցանկություն պատվաստելը, նրան այնպիսի մեթոդներ տալը, որոնց միջոցով կարողանա ուսումնասիրել գիտությունը, երբ բավականին զարգացած կլինի ճաշակը։ Այդ է, անշուշտ, ամեն մի լավ դաստիարակության հիմնական սկզբունքներից մեկը։

Արդեն հասունացել է նաև ժամանակը նրան վարժեցնելու, որպեսզի աստիճանաբար իր ուշադրությունը կենտրոնացնի միևնույն առարկայի վրա։ Սակայն այդ չպետք է կատարել հարկադրանքի ճանապարհով, այլ միշտ հաճույքն ու ցանկությունը պետք է առաջացնեն այդ ուշադրությունը։ Պետք է հոգ տանել, որ նա դրանից շուտ չհոգնի ու ձանձրանա։ Ուրեմն, միշտ զգաստ եղե՛ք, և ինչ գնով էլ ուզում է լինի, թողե՛ք ամեն ինչ, նախքան նրա ձանձրանալը, որովհետև կարևորը ոչ այնքան սովորելն է, որքան իր կամքին հակառակ ոչինչ չանելը։

Եթե ինքն է ձեզ հարց տվողը, պատասխանեցե՛ք միայն իր հետաքրքրությունը բավարարելու չափով, և ոչ թե նրան հագեցնելու աստիճան. մանավանդ, երբ տեսնում եք, որ փոխանակ սովորելու նպատակով հարցեր տալու, ժամանակ է ուզում անցկացնել և դատարկ հարցեր է տալիս, իսկույն պատրաստեցե՛ք պատասխանել, եթե համոզված եք, որ տվյալ դեպքում նա ոչ թե այդ խնդրով է մտահոգված, այլ ուզում է միայն իր հարցերով ձեզ տաղտկացնել։ Ավելի քիչ ուշադրություն պետք է դարձնել նրա արտասանած բառերին, քան նրան խոսեցնել տվող դրդապատճառներին։ Այս նախազգուշությունը, որ մինչև այդ սակավ անհրաժեշտ էր, մեծ նշանակություն է ստանում այն պահից, երբ երեխան սկսում է դատողություններ անել։

Գոյություն ունի ընդհանուր ճշմարտությունների մի շղթա, որի միջոցով բոլոր գիտությունները կապվում են միասնական սկզբունքներով ու զարգանում հաջորդաբար։ Այդ շղթան փիլիսոփայական մեթոդն է։ Սակայն այստեղ խնդիրն այդ մասին չէ։ Կա բոլորովին մի այլ ձև, որի շնորհիվ յուրաքանչյուր առանձին առարկա մի ուրիշին է քաշում իր հետևից և միշտ ցույց է տալիս այն, ինչ իրեն է հետևում։ Այս կարգը, որ տևական հետաքրքրությամբ լարված է պահում բոլորի կողմից

պահանջված ուշադրությունը, այն է, որին հետևում է մարդկանց մեծամասնությունը և որը հատկապես անհրաժեշտ է երեխաների համար։ Երբ մենք կողմնորոշվում էինք՝ քարտեզի վրա մեր տեղը նշանակելու համար, հարկ եղավ միջօրեականներ գծել։ Առավոտվա և երեկոյան հավասար ստվերների միջև երկու կետերի հատման տեղը սքանչելի միջօրեական է մեր տասներեքամյա աստղագետի համար։ Բայց այդ միջօրեականները չնշվում են, ժամանակ է պետք դրանք գծելու համար. նրանք հարկադրում են մշտապես միևնույն վայրում աշխատել։ Այդքան աշխատանքն ու այդքան նեղությունը վերջի-վերջո կարող են ձանձրացնել նրան։ Մենք այդ նախատեսել ենք և վաղօրոք նախապատրաստվել դրան։

Ահավասիկ, ես դարձյալ ընկնում եմ երկար ու բարակ մանրամասնությունների մեջ։ Ների՛ր, ես լսում եմ ձեր տրտունջը և անտեսում դրանք. ես քնավ չեմ ուզում ձեր անհամբերությանը զոհաբերել այս գրքի ամենաօգտակար մասը։ Ուստի ներեցե՛ք իմ երկարաբանությունը, որովհետև ես իմ կողմից արդեն որոշել եմ հանդուրժել ձեր տրտունջները։

Իմ սանն ու ես վաղուց ենք նկատել, որ սաթը, ապակին, կնքամոմը, զանազան շփվող մարմիններ դեպի իրենց են ձգում հարդի շյուղը, իսկ ուրիշ մարմինները՝ ոչ։ Պատահմամբ մի մարմին գտանք, որն ավելի եղակի հատկություն ունի՝ իրեն է ձգում երկաթի խարտուքն ու այլ մնացուկներ։ Որքա՜ն երկար ժամանակ զվարճացանք այդ հատկությամբ, ուրիշ ոչինչ չնկատելով։ Վերջապես, մենք գտանք, որ այդ հատկությունը փոխանցվում է նույնիսկ երկաթին, եթե որոշ ուղղությամբ շփենք մագնիսով։ Մի օր մենք տոնավաճառ գնացինք[1]. մի ձեռնածու հացի կտորով իրեն էր քաշում ավա-

---

[1] Ես չկարողացա ծիծաղս զսպել, կարդալով այս միջադեպի մասին պ. Ֆորմեյի սուր քննադատությունը. «Այս ձեռնածուն,— ասում է նա,— որ մրցում է մի երեխայի հետ ու լուրջ խրատներ է կարդում նրա դաստիարակի գլխին, էմիլների տեսակի մի անձնավորություն է»։ Սրամիտ պ. Ֆորմեյը չի կարողացել մտածել, որ այս փոքր տեսարանը սարքովի էր, և որ այդ ձեռնածուին նախօրոք սովորեցրել էին, թե նա ինչ պետք է անի. ես իրոք որ չեմ ասել այդ մասին։ Բայց քանիցս հիշել եմ, որ ես չեմ գրում այն մարդկանց համար, որոնց ամեն ինչ պետք է ասել։

վանի ջրի երեսին լողացող մոմից շինված բադին։ Շատ ենք զարմանում, բայց չենք ասում, որ նա կախարդ է, որովհետև չգիտենք, թե ինչ բան է կախարդը։ Անընդհատ զարմացած այնպիսի երևույթներից, որոնց պատճառները չգիտենք, չենք շտապում որևէ դատողություն անել ու անվրդով հանդուրժում ենք մեր տգիտությունը՝ մինչև կգտնենք դրանից դուրս գալու ուղիները։

Տուն վերադառնալով, այնքան ենք խոսում տոնավաճառի բադի մասին, որ ի վերջո որոշում ենք մենք էլ նույնը փորձել։ Վերցնում ենք լավ մազնիսացած մի ասեղ, այն պատում ենք սպիտակ մոմով ու, որքան կարող ենք, նրան տալիս ենք բադի ձև, այնպես որ ասեղը անցնում է նրա մարմնի միջով, և նրա բութ ծայրը լինում է բադի կռունկը։ Բադը դնում ենք ջրի վրա, կռունկին մոտեցնում բանալու մի օղակ և շատ հասկանալի ուրախությամբ տեսնում, որ բադը հետևում է բանալուն ճիշտ այնպես, ինչպես տոնավաճառի բադը հետևում էր հացի կտորին։ Դիտել, թե բադը ինչ ուղղությամբ է կանգնում ջրի երեսին, երբ նրան հանգիստ ենք թողնում, այդ մենք կանենք մի ուրիշ անգամ։ Իսկ այժմ, զբաղված լինելով մեր նյութով, ավելին մեզ հարկավոր չէ։

Հենց նույն օրը երեկոյան մենք դարձյալ գնացինք տոնավաճառ, պատրաստի հացը մեր գրպանը դրած։ Երբ Ձեռնածուն իր խաղն ավարտեց, մեր փոքրիկ գիտնականը, որ հազիվ էր իրեն զսպում, նրան ասաց, որ այդ փորձը մի դժվար բան չէր, որ ինքն էլ կարող է նույնն անել։ Եվ իսկույն գործի է անցնում. գրպանից հանում է հացի պատառը, որի մեջ պահված է երկաթի կտորը, սրտատրոփ մոտենում սեղանին, համարյա դողալով ցույց է տալիս հացի կտորը, բադը լողում է և հետևում նրան։ Երեխան աղաղակում է և ուրախությունից ցնծվում։ Հասարակության բացականչությունների ու ծափահարությունների տակ նա հուզվում է, իրեն կորցնում։ Ձեռնածուն, շփոթված, այնուամենայնիվ նրան գրկում, շնորհավորում է ու խնդրում հաջորդ օրը կրկին պատիվ անել իր ներկայությամբ, ավելացնելով, որ կջանա ավելի շատ բազմություն հավաքել՝ նրա հնարագիտությունը ծափահարելու համար։ Իմ փոքրիկ բնագետը, հպարտացած, ցանկանում է շատախոսել, բայց ինձ

կույն փակում եմ բերանն ու նրան տուն տանում գովասանքի տարափի տակ։

Երեխան մինչև հաջորդը օրը ծիծաղաշարժ անհանգստությամբ րոպեներն է հաշվում։ Հրավիրում է ում որ պատահում է, ցանկանում է, որ ամբողջ մարդկությունը ներկա լինի իր փառքին, դժվարությամբ է սպասում որոշված ժամին, շտապում է մեկնել։ Ժամանակից շուտ թռչում ենք դեպի ժամադրավայրը, սրահն արդեն լեցուն է մարդկանցով։ Ներս մտնելիս՝ նրա մատաղ սիրտը թրթռում է։ Նախապես ուրիշ խաղեր պետք է կատարվեին. ձեռնածուն ինքն իրեն գերազանցում է ու զարմանալի բաներ անում։ Երեխան ոչինչ չի տեսնում, տեղում ևս է գալիս, քրտնում ու հաղիվ է շնչում, ժամանակն անց է կացնում զրպանում եղած հացի կտորը տրորելով անհամբերությունից դողացող ձեռքով։ Վերջապես, նրա հերթն է. ձեռնածուն մեծ հանդիսավորությամբ հայտնում է հաստարակությանը երեխայի մասին։ Վերջինս, փոքր ինչ ամաչելով, մոտենում է ու դուրս հանում հացի կտորը... Մարդկային գործերի ինչպիսի՜ անսպասելի փոփոխություն. բաղը, որ նախորդ օրն այնքան հլու էր, այսօր վայրենի է դարձել. փախանակ կտուցը ցույց տալու, պոչն է դարձնում ու փախչում. նա հացից ու հացը մատուցող ձեռքից խուսափում է այնպես, ինչպես գրանց հետևում էր երեկ։ Բազմաթիվ անօգուտ փորձերից հետո, հաստարակության աղաղակների տակ, երեխան գանգատվում է և ասում, թե նրան խաբել են, որ մի նոր բաղ են գրել նախորդի տեղը, ու առաջարկում՝ է ձեռնածուին, որ նա ինքը ձգի այս նոր բաղին։

Ձեռնածուն, առանց պատասխանելու, վերցնում է մի կտոր հաց ու մոտեցնում բաղին, իսկույն բաղը հետևում է հացին ու մոտենում ձեռքին։ Երեխան վերցնում է նույն հացի կտորը, սակայն դարձյալ ձախողվում է. բաղը նրան ծաղրում է ու ավազանի շուրջը պտույտներ անում. վերջապես, երեխան չփոթված հեռանում է ու այլևս չի համարձակվում դիմադրավել ծաղրական բացականչություններր։

Այդ ժամանակ, ձեռնածուն վերցնում է երեխայի բերած հացն ու այն օգտագործում նույնքան հաջողությամբ, որքան իրը. հաստարակության առաջ հանում է նրա միջից հրկաթի

կտորիկը, որը մի նոր քրքիջ է առաջացնում մեր հասցեին. ապա այդ դատարկ հացի կտորով առաջվա նման բաղը դեպի իրեն է քաշում։ Նույնը կրկնում է՝ բոլորի առաջ մի կտոր հաց կտրելով մի երրորդ անձնավորության ձեռքով, ապա շարունակում է նույն հաջողությամբ փորձել ձեռնոցով, մատի ծայրով, վերջապես գնում է սենյակի մեջտեղն ու այդպիսի մարդկանց հատուկ հանդիսավոր ձայնով ասում, թե բաղը կունկնդրի իր ձայնին այնպես, ինչպես իր շարժումներին, ու սկսում է խոսել նրա հետ. և իսկապես, բաղը հնազանդվում է։ Նա ասում է՝ աջ գնա, բաղը աջ է գնում, վերադառնալ՝ վերադառնում է, պտույտ գալ՝ պտույտ է գալիս. շարժումը կատարվում է նույնքան արագությամբ, ինչքան հրամանն է արագ։ Բուռն ծափահարությունները նույնքան նախատինք են մեզ համար։ Մենք աննկատ ծլկում ենք ու գնում-փակվում սենյակում, փորձանակ մեր հաղթանակի մասին բոլորին հայտնելու, ինչպես մատրռվել էինք։

Հաջորդ առավոտ դուռը թխկացնում են. բաց եմ անում, ձեռնածուն է։ Նա համեստորեն դանգատվում է մեր վարմունքից՝ ինքն ի՞նչ էր արել մեզ, որ ցանկացանք նրա խաղերը վարկաբեկել ու խլել նրա ապրուստի միջոցը։ Ի՞նչ մի հրաշալի բան կար մոմե բաղը իրեն ձգելու արվեստի մեջ, որ արժեր այդ պատիվը գնել՝ ի վնաս մի պարկեշտ մարդու աշխատավոր հացի։ Ներողություն եմ, պարոննե՛ր,— ասում է նա,— եթե ես ներելու համար ուրիշ որևէ շնորհք ունենայի, երբեք դրանով չէի ղբաղվի։ Դուք պետք է համոզված լինեք, թե մի մարդ, որ կյանքն անց է կացրել այդ ողորմելի արհեստի մեջ, ավելի շատ բան գիտի դրա մասին, քան դուք, որ մի քանի ժամ եք դրանով զբաղվել։ Եթե ես սկզբում ձեզ ցույց չտվեցի իմ վարպետությունները, ապա այդ նրա համար է, որ կարիք չկա հիմարի նման ամբողջ գիտեցածը միանգամից ցուցադրել, ես իմ լավագույն հնարքները միշտ պահում եմ հարմար առիթի և դեռևս ուրիշներն էլ ունեմ, որոնք պահել եմ թեթևամիտ երիտասարդներին ետ կանգնեցնելու համար։ Ըստ որում, պարոննե՛ր, ես հոժարակամ եկել եմ ձեզ սովորեցնելու այն գաղտնիքը, որն այնքան ձեզ անհանգստացրեց, խնդրելով, որ այն չարա-

չար չօգտագործեք ինձ վնասելու համար և ուրիշ անգամ ավելի զուսպ լինեք»։

Այնուհետև նա ցույց է տալիս իր գործիքը, և մենք մեծ զարմանքով տեսնում ենք, որ նա կազմված է մի ուժեղ և լավ հարմարեցրած մագնիսից, որը սեղանի տակ թաքնված մի երեխա աննկատ շարժում էր։

Մարդը հավաքում է գործիքը, իսկ մենք մեր շնորհակալությունն ու ներողությունը հայտնելով, ուզում ենք մի բան նվիրել նրան, բայց նա մերժում է։ «Ոչ, պատռոննե՛ր,— ասում է,— ես ձեզնից այնքան էլ գոհ չեմ, որպեսզի ձեր սրևէ նվերն ընդունեմ. դուք ինձ պարտական կմնաք հակառակ ձեր կամքին. այդ կլինի իմ միակ վրեժը։ Լավ իմացե՛ք, որ բոլոր դեպքերում կարելի է հանդիպել մեծահոգության։ Ես վարձատրվում եմ իմ ձեռնածությունների, բայց ոչ իմ դասերի համար»։

Դուրս գնալիս՝ նա հատկապես ինձ է դառնում ու բարձր ձայնով հանդիմանում։ «Ես,— ասում է նա,— սիրով ներում եմ այս երեխային. նա մեղանչեց անգիտակցաբար։ Բայց դուք, պարո՛ն, որ պետք է ծանոթ լինեիք նրա սխալին, ինչո՞ւ թույլ տվիք այդ անել։ Քանի որ դուք միասին եք ապրում, որպես տարիքով ավելի մեծ, պարտական եք նրա մասին հոգալ, նրան խորհուրդներ տալ. ձեր փորձառությունը մի հեղինակություն է, որը պետք է նրան առաջնորդի։ Երբ չափահաս դառնա, իր պատանեկան սխալների համար ինքն իրեն մեղադրելով հանդերձ, ձեզ էլ կմեղադրի, անշուշտ, որ դրանք չեք կանխել»[1]։

Նա հեռանում է, մեզ երկուսիս թողնելով մեծ շփոթության մեջ։ Ես ինձ մեղադրում եմ իմ համակերպության համար, երեխային խոստանում եմ մի ուրիշ անգամ զիջել նրա օգտին ու սխալների մասին նրան զգուշացնել՝ նախքան կատարելը,

---

[1] *Մի՞թե կարող է լինել մի այնպիսի հիմար ընթերցող, որ այս հանդիմանության մեջ չտեսնի մի ճառ՝ բառ առ բառ թելադրված գաստիարակի կողմից, իր նպատակին ծառայելու համար։ Մի՞թե ինձ այնքան հիմար են կարծում, որ մի ձեռնածուի խոսեցնել տամ այսպիսի լեզվով։ Ես, կարծում եմ, ցուցաբերել եմ գոնե բավական միջակ տաղանդ՝ խոսեցնելու մարդկանց նրանց դրության համեմատ։ Դեռ ապասեցե՛ք հաջորդ հատվածի վերչին։ Մի՞թե այսքանը բավական չէր պ. Ֆորմեյից բացի ուրիշ որևէ մեկի համար։*

քանի որ հասնում է այն ժամանակը, երբ մեր հարաբերությունները սիտք է փոխվեն, և ուսուցչի խստությունը պետք է հաջորդի ընկերոջ համբյակատարությանը. այս փոփոխությունը պետք է կատարվի աստիճանաբար, հարկավոր է ամեն ինչ նախատեսել և նախապատրաստել շատ շուտ։

Հաջորդ օրը մենք դարձյալ վերադառնում ենք տոնավաճառ, որպեսզի մեկ էլ տեսնենք այն խաղը, որի գաղտնիքն արդեն գիտենք։ Մենք խոր հարգանք ենք ցուցաբերում դեպի մեր Սոկրատ ձեռնածուին. հազիվ ենք համարձակվում նայել նրա դեմքին, իսկ նա մեզ մեծ հարգանքով է ընդունում ու մեզ տեղավորում է այնպիսի ակնածությամբ, որ ավելի է նեղմացնում մեզ։ Սովորականի նման նա իր ձեռնածությունները է անում, բայց երկար ժամանակ զբաղվում ու զվարճանում է բազով, հաճախ հպարտորեն մեզ նայելով։ Մենք ամեն ինչ գիտենք, բայց լռում ենք։ Թքե իմ սանը համարձակվեր մի խոսք ասել, ես նրա գլուխը կջարդեի։

Այս օրինակի ամբողջ մանրամասնությունն ավելի կարեվոր է, քան կարող են ենթադրել։ Ինչքա՜ն դաս միայն մի դասով։ Ինչքա՜ն սպանիչ հետևանքների է հանգում մեծամտության առաջին դրսևորումը։ Օրիտասարդ ուսուցիչնե՛ր, խնամքով հետևեցե՛ք այս առաջին շարժմանը։ Թքե դուք կարողանաք այդպիսով նրան ցույց տալ դրանից առաջացող ստորացումն ու ձախորդությունները [1], վստահ եղե՛ք, որ այդ երկար ժամանակ չի կրկնվի։ «Ինչպիսի՜ արվեստականություն», կասեք դուք։ Համաձայն եմ, և այդ ամենը նրա համար, որ մի կողմնացույց ունենանք, որը մեզ իբրև միջօրեական ծառայի։

Իմանալով, որ մոգնիսն ազդում է ուրիշ մարմինների միջով, մեր առաջին գործը կլինի մեր տեսածի նման մի գործիք պատրաստել՝ մեջը դատարկ մի սեղան, վրան՝ քիչ չրով լի շատ հարթ մի ավազան, քիչ ավելի խնամքով պատրաստված բադ և այլն։ Հաճախ ուշադրությամբ նայելով ավազանին,

---

[1] *Այդ ստորացումը, այդ ձախորդությունը, ուրեմն, իմ ձեռներեցածն է և ոչ թե ձեռնածուի։ Քանի որ պ. Ֆորմեյը ցանկանում էր իմ կենդանությանը սեփականացնել գիրքս ու այն հրատարակել՝ ուրիշ ոչինչ չանելով, բացի իմ անունը ջնջելուց և տեղը իրենը դնելուց, դեռևս նեղություն կրեր, չեմ ասում խմբագրելու, կարդալու այն։*

մենք, ի վերջո, նկատում ենք, որ հանգիստ վիճակում բադը համարյա միշտ թեքվում է նույն ուղղությամբ։ Մենք հետևում ենք այդ փորձին, ուսումնասիրում ենք ուղղությունը և տեսնում, որ նա հարավից դեպի հյուսիս է գնում։ Դրանից ավելին պետք չէ. գտնված է մեր կողմնացույցը կամ նրան համարժեք մի բան. մենք արդեն անցել ենք ֆիզիկային։

Երկրի վրա տարբեր կլիմաներ կան, և այդ կլիմաներն ունեն տարբեր ջերմաստիճաններ։ Օդանակներն այնքան ավելի զգալիորեն են փոփոխվում, ինչքան ավելի ենք մոտենում բևեռին։ Բոլոր մարմինները ցրտից կծկվում են ու ջերմությունից ընդլայնվում։ Այս երևույթը ավելի հեշտ է ստուգել հեղուկների մեջ և առավել զգալիորեն՝ ալկոհոլ պարունակող հեղուկների մեջ։ Դրանից էլ ստացվել է ջերմաչափը։ Քամին խփում է դեմքին, ուրեմն, օդը մի մարմին է, հոսանուտ մի մարմին. այն զգում ենք, թեև ոչ մի միջոց չունենք տեսնելու։ Բաժակը շուռ տվե՛ք ջրի մեջ, ջուրը չի լցվի, եթե թույլ չտաք, որ օդը դուրս գա այնտեղից. ուրեմն, օդն ընդունակ է դիմադրելու։ Բաժակն ավելի խոր ընկղմե՛ք ջրի մեջ, ջուրը որոշ չափով կբարձրանա, բայց չի կարողանա լցնել ամբողջ տարածությունը. ուրեմն, օդը որոշ չափով ընդունակ է սեղմվելու։ Ճնշված օդով լցված գնգակն ավելի լավ կցատկի, քան մի այլ նյութով լցվածը. ուրեմն, օդը առաձգական մարմին է։ Լոգարանում պառկած՝ ձեր ձեռքը բարձրացրե՛ք ջրից հորիզոնական ուղղությամբ, դուք այն սոսկալի ծանրացած կզգաք. ուրեմն, օդը ծանրություն ունեցող մարմին է։ Հավասարակշռության մեջ դնելով օդը մի ուրիշ հոսանուտ մարմնի հետ, կարելի է չափել նրա ծանրությունը. դրանից առաջացել են ծանրաչափը, սիֆոնը, հողմագավազանը, օդահան մեքենան։ Հավասարակշռության ու ջրաչափի բոլոր օրենքները հաստատվում են նման կոպիտ փորձերով։ Ես չեմ ցանկանում, որ միայն այս ամենի համար մտնենք ֆիզիկայի փորձնական կաբինետը։ Ինձ դուր չի գալիս գործիքների ու մեքենաների այդ ամբողջ սարքավորումը։ Գիտական մթնոլորտն ու միջավայրը սպանում են գիտությունը։ Կա՛մ այդ բոլոր մեքենաները վախեցնում են երեխային, կա՛մ նրանց տեսքը

մասամբ կլանում ու հեռացնում է այն ուշադրությունը, որը պետք է հատկացներ արդյունքին։

Իմ ցանկությունն է, որ մենք ինքներս պատրաստենք մեր բոլոր սարքերը, և չեմ ուզում փորձից առաջ գործիք սարքել, այլ ուզում եմ, որ իբր թե փորձը պատահարար տեսնելով՝ աստիճանաբար հնարենք անհրաժեշտ գործիքը՝ այն ստուգելու նպատակով։ Ինձ համար նախընտրելի է, որ մեր գործիքները այնքան էլ կատարյալ ու ճիշտ չլինեն, բայց ավելի ճշգրիտ գաղափար ունենանք այն մասին, թե ինչ պետք է լինեն դրանք ու դրանցից առաջ եկող գործողությունները։ Հավասարակշռության իմ առաջին դասի համար փոխանակ կշեռք բերելու, մի գավազան կդնեմ աթոռի հենակին, կհավասարակշռեմ, կչափեմ այդ հավասարակշռած գավազանի երկու մասերը, երկու կողմից ծանրություններ կկախեմ՝ երբեմն հավասար, երբեմն տարբեր կշռի, և գավազանը ինչքան որ պետք է առաջ կամ հետ շարժելով, վերջապես կգտնեմ, որ հավասարակշռությունը արդյունք է ծանրությունների քաշի ու կշեռքի լծակների երկարության փոխադարձ հարաբերություններին։ Այսպիսով իմ փոքրիկ ֆիզիկոսը ընդունակ կլինի կշեռքն ստուգել, թեև այն չի տեսել։

Անառարկելի է, որ ավելի ճշգրիտ ու ավելի հաստատուն ծանոթություններ կարելի է ստանալ այն բաների մասին, ինչ մենք ինքներս ենք սովորում այս ձևով, քան եթե դրանք սովորեինք ուրիշներից. բացի այն, որ մեր դատողությունը չենք վարժեցնում ստրկաբար ուրիշի հեղինակությանը ենթարկվելու, մենք կլինենք ավելի հնարագետ՝ հարաբերություններ գտնելու, մտքեր կապակցելու, գործիքներ հնարելու մեջ, քան այն ժամանակ, երբ այս ամենն ընդունենք պատրաստի վիճակում՝ ծուլության մատնելով մեր միտքը, այնպես, ինչպես այն մարդու մարմինը, որի հագուստները, կոշիկները միշտ հագցնում են սպասավորները, որը ոչինչ չի կարող անել առանց նրանց օգնության և, ի վերջո, զրկվում է իր անդամների ուժից և ընդունակությունից։ Բուալոն հպարտանում էր, որ Ռասինին սովորեցրել էր ճիպ գործ դնելով հանգավորել իր ողբերգությունները։ Գիտություններն ավելի պարզ ձևով

ուսումնասիրելու այնքան հրաշալի մեթոդների մեջ մենք խիստ կարիք ունենք, որ մեկն էլ մեզ ցույց տար այնպիսին, որով կարողանայինք տիրապետել այդ գիտություններին՝ ուժերի լարումով։

Դանդաղ ու տքնաջան ուսումնասիրությունների ամենից ավելի զգալի առավելությունն այն է, որ տեսական ուսմունքի ժամանակ կարելի կլինի պահպանել մարմինը իր աշխուժության ու անդամները իրենց ճկունության մեջ և անընդհատ ձեռքերը վարժեցնել աշխատանքի ու մարդուն օգտակար գործունեության։ Բոլոր այն գործիքները, որոնք հնարվել են մեզ առաջնորդելու համար մեր փորձերի մեջ ու ճշդորոշելու մեր զգայարանները, ուշադրությունը շեղում են վարժության նշանակությունից։ Անկյունաչափը մեզ ազատում է անկյունների մեծությունը գնահատելուց. աչքը, որ ճշտությամբ չափում էր տարածությունները, այդ գործը թողնում է շղթային, որն աչքի գործն է կատարում. կշեռքը մեզ զրկում է ծանրությունների քաշը ձեռքով իմանալու հնարավորությունից։ Ինչքան մեր գործիքները կատարելագործվում են, այնքան մեր մարմնի օրգանները կոպտանում և անճարակ են դառնում. ինչքան մեր շուրջը մեքենաներ ենք հավաքում, այնքան կորցնում ենք մեր ընդունակությունները։

Բայց երբ այդ մեքենաները պատրաստելիս մենք դիմում ենք այն հնարագիտությանը, որ կարող է փոխարինել մեքենաներին, երբ այդ անելիս մենք հանդես ենք բերում այն զգոնությունը, որն անհրաժեշտ է, որպեսզի մեր գործը կատարենք՝ առանց մեքենաների օգնության, մենք շահում ենք առանց ոչինչ կորցնելու, բնությանն ավելացնում ենք արվեստը, ավելի հնարագետ ու ավելի ճարպիկ ենք դառնում։ Երեխան, գրքերից կառչելու փոխարեն, եթե արհեստանոցում աշխատի, նրա ձեռքերը կգործեն հօգուտ իր մտքի՝ նա փիլիսոփա կդառնա, կարծելով, որ սոսկ բանվոր է։ Վերջապես, այս վարժությունը ուրիշ նպատակներով էլ կարելի է կիրառել, որոնց կանդրադառնամ հետագա տողերում, և կտեսնենք, թե ինչպես փիլիսոփայական զրոսանքներից կարելի է գնալ դեպի մարդու իսկական գործունեությունները։

Ես արդեն ասել եմ, որ զուտ տեսական գիտելիքները երե-

խաներին ձեռնտու չեն, նույնիսկ եթե նրանք մոտ են պատասխանելուն. բայց առանց ստիպելու նրանց վաղ հասակից խորանալու սիստեմատիկ ֆիզիկայի մեջ, պիտի այնպես անել, որ նրանց բոլոր փորձերը շաղկապված լինեն իրար հետ մի տեսակ դեդուկցիայով, որպեսզի այդ շղթայի օգնությամբ նրանք կարողանան այդ փորձերը կարգով դասավորել իրենց մտքի մեջ և հիշել կարիքի դեպքում, որովհետև շատ դժվար է իրողությունները, նույնիսկ առանձին դատողությունները երկար ժամանակ պահել հիշողության մեջ, երբ բացս կայում է դրանք վերարտադրելու առիթը։

Բնության օրենքների քննության ժամանակ միշտ էլ սկսե՛ք ամենասովորական ու ամենազգայուն երևույթներից ու վարժեցրե՛ք ձեր աշակերտին, որ այդ երևույթներն ընդունի ոչ թե որպես դատողություն, այլ որպես իրողություն։ Ես մի քար եմ վերցնում և ձևացնում, թե ուզում եմ դնել օդի մեջ, ձեռքս բաց եմ անում, քարն ընկնում է։ Ես նայում եմ Էմիլին, որ ուշադիր դիտում է, թե ինչ եմ անում, ու նրան հարցնում. «Ինչո՞ւ ընկավ քարը»։

Ո՞ր երեխան չի կարող պատասխանել։ Ոչ մի, ոչ իսկ Էմիլը, եթե ես նրան նախօրոք չեմ պատրաստել այնպես, որ չկարողանա պատասխանել։ Բոլորն էլ կասեն, թե քարն ընկավ, որովհետև ծանր էր։ Իսկ ի՞նչ է ծանրությունը։ Այն, որ ընկնում է։ Ուրեմն, քարն ընկնում է, որովհետև ընկնո՞ւմ է։ Այստեղ իմ փոքրիկ փիլիսոփան կանգ է առնում։ Ահա նրա առաջին սիստեմատիկ ֆիզիկայի դասը, որը տվյալ դեպքում նրան կօգնի թե չէ, համենայն դեպս կլինի ողջամտության մի դաս։

Քանի դեռ երեխայի խաղալիքները առաջադիմում է, մեզ ավելի կարևոր նկատառումներ կստիպեն ավելի խիստ ընտրություն կատարել նրա զբաղմունքների մեջ։ Հենց որ նա կկարողանա բավականաչափ ճանաչել ինքն իրեն՝ լմբռնելու համար, թե ինչումն է իր բարեկեցությունը, այն պահից, երբ կկարողանա ընդգրկել ըստ ամենայնի ընդարձակ հարաբերություններ՝ դատելու համար, թե որն է նրան հարմար և որը՝ անհարմար, ի վիճակի կլինի զգալ աշխատանքի և զվարճության տարբերությունը և այս վերջինը դիտել որ-

պես առաջինին հաջորդող հանգիստ։ Այդ ժամանակ իրոք օգտակար առարկաներ կարող են մուտք գործել նրա ուսմունքի մեջ ու նրան մղել այդ ուսմունքին ավելի կայուն կիրառում տալու, քան տալիս էր զվարճությունը։ Անհրաժեշտության օրենքը, անընդհատ վերածնվելով, վաղ հասակից մարդուն սովորեցնում է անել այն, ինչ իրեն հաճելի չէ, որպեսզի կարողանա կանխել այն չարիքը, որն ավելի անհաճո կլիներ նրան։ Այդպիսին է կանխատեսության սովորությունը, ու այդ կանխատեսության լավ կամ վատ կարգավորոմից է ծագում մարդկային ամբողջ իմաստությունը կամ ամբողջ թշվառությունը։

Ամեն մարդ ցանկանում է երջանիկ լինել. բայց դրան հասնելու համար նախ պետք է իմանալ, թե ինչ բան է երջանկությունը։ Բնական մարդու երջանկությունը նույնքան պարզ է, որքան և նրա կյանքը. դա կայանում է չտանջվելու մեջ. առողջությունը, ազատությունը, անհրաժեշտն ունենալը կազմում են այդ երջանկությունը։ Բարոյական մարդու երջանկությունն այլ բան է. բայց այստեղ խնդիրն այդ չէ։ Ես նորից եմ կրկնում, զուտ ֆիզիկական իրերն են միայն հետաքրքրում երեխաներին, մանավանդ նրանց, որոնց մեջ չենք արթնացրել մեծամտությունը. և որոնց նախապես չենք ապականել հնարային կարծիքի թույնով։

Երբ երեխաները նախատեսում են իրենց պահանջները՝ նախքան դրանք զգալը, դա ապացույց է այն բանի, որ նրանց իմացականությունը արդեն շատ է զարգացել, որ նրանք սկսում են հասկանալ ժամանակի գինը։ Արդեն անհրաժեշտ է, որ նրանց սովորեցնենք իրենց ժամանակն ավելի արդյունավետ օգտագործել, բայց այնպիսի արդյունավետությամբ, որ զգալի լինի նրանց տարիքի և մատչելի՝ նրանց գիտելիքների համար։ Այն ամենը, ինչ կապված է բարոյական կարգի ու հասարակության սովորույթի հետ, չպետք է իսկույն ներկայացվի նրանց, որովհետև նրանք ի վիճակի չեն այդ հասկանալու։ Անմտություն է նրանցից պահանջել, որ զբաղվեն այնպիսի բաներով, որոնց օգտակարության մասին տարտամ կերպով եք խոսում նրանց հետ, մինչդեռ չգիտեն, թե որն է այդ օգուտը, և հավաստիացնում եք, որ այդ օգուտը կստանան

իրենց չափահաս տարիքում, այնինչ նրանք այժմ ոչ մի շահագրգռություն չեն կարող ունենալ այդ կարծեցյալ և իրենց համար անըմբռնելի օգուտի նկատմամբ։

Ո՛ղ երեխան ոչինչ չանի թելադրանքով. նրա համար միայն այն է լավ, ինչ ինքն զգում է, թե լավ է։ Նրան միշտ իր մտքիրից առաջ մղելով, կարծում եք, թե հեռատեսություն եք անում, բայց այդ ձեզ չի հաջողվում։ Նրան զինելու համար մի քանի անպետք գործիքներով, որոնք գուցե նա երբեք չի գործածելու, դուք նրանից խլում եք մարդկային ամենահամապարփակ գործիքը՝ ողջամտությունը. դուք նրան սովորեցնում եք շարունակ օգտվել ուրիշի առաջնորդությունից, լոկ մի գործիք լինել ուրիշի ձեռքում։ Դուք ուզում եք, որ մանուկ հասակում նա հլու լինի. այդ ասել է՝ դուք ուզում եք, որ հասուն տարիքում լինի դյուրահավատ ու դյուրախաբ։ Դուք նրան անդադար ասում եք՝ «Այն ամենը, ինչ ձեզնից պահանջում եմ, ձեր օգտի համար է, սակայն դուք ի վիճակի չեք այդ հասկանալու։ Ի՞նձ ինչ, թե դուք կկատարեք կամ չեք կատարի իմ պահանջը, չէ՞ որ ձեզ համար եք միայն աշխատում»։ Բոլոր այս գեղեցիկ ճառերով, որ հիմա կարդում եք երեխայի գլխին՝ նրան խելոք դարձնելու համար, դուք նախապատրաստում եք հաջողությունն այն ճառերի, որ մի օր նրա գլխին կկարդա մի ցնորամիտ, մի փչող, մի դատարկախոս, մի նենգամիտ կամ մի որևէ խելագար՝ նրան իր ծուղակի մեջ գցելու կամ իր խենթությունը նրան ընդունել տալու համար։

Չափահաս մարդուն, իհարկե, անհրաժեշտ է գիտենալ այնպիսի բաներ, որոնց օգտակարությունը երեխան չի կարող հասկանալ, բայց պե՞տք է կամ կարելի՞ է արդյոք, որ երեխան գիտենա այն ամենը, ինչ չափահաս մարդուն անհրաժեշտ է իմանալ։ Ջանացե՛ք երեխային սովորեցնել այն, ինչ օգտակար է իր տարիքին, ու կտեսնեք, որ նրա ժամանակը լրիվ զբաղված կլինի։ Ինչո՞ւ եք ուզում, ի վնաս այն ուսմունքի, որը նրան անհրաժեշտ է այսօր, տալ ուսմունքն այն տարիքի, որին այնքան էլ վստահ չէ, թե կհասնի։ Բայց կարող եք առարկել ինձ, թե ժամանակ կլինի՞ արդյոք սովորելու ինչ որ անհրաժեշտ է, երբ գա այն գործադրելու ուիթը։ Ես այդ չգիտեմ, միայն գիտեմ, որ անհնար է սովորել ժամա-

նակից շուտ, որովհետև մեր իսկական ուսուցիչները փորձառությունն ու զգացողությունն են։ Մարդ երբեք այնպես լավ չի զգա, թե ինչն է մարդուն պետքական, քան այն հարաբերությունների մեջ, որտեղ ինքը գտնվում է։ Երեխան գիտի, որ ինքը ծնվել է մարդ դառնալու համար. այն բոլոր մտքերը, որ նա կարող է ունենալ հասունացած մարդու դրության մասին, նրա համար ուսման առիթներ են. բայց նա բոլորովին անտեղյակ պետք է լինի այն մտքերին, որոնք իր հասողությունից դուրս են։ Իմ ամբողջ գիրքը այսպիսի դաստիարակչական սկզբունքի հարատև փորձ է։

Հենց որ մեզ հաջողվի մեր աշակերտին տալ օգտակար բառի իմաստը, մենք մի մեծ առավելություն կունենանք նրան դաստիարակելու համար։ Այս բառը շատ է զբաղեցնում նրա միտքը, որովհետև դրա նշանակությունը նա հասկանում է միմիայն իր տարիքի համաձայն ու նրա մեջ տեսնում է ներկայի իր բարեկեցության երաշխիքը։ Ձեր երեխաները չեն ազդվում այդ բառից, որովհետև դուք ուշադիր չեք եղել նրանց հասկանալի ձևով բացատրելու այն, և քանի որ միշտ ուրիշներն են հայթայթում այն, ինչ նրանց օգտակար է, նրանք երբեք կարիք չեն զգում մտածել այդ մասին ու չգիտեն, թե ինչ բան է օգտակարությունը։

Ինչի՞ է պետք այս բանը։ Ահա այն եվրեական խոսքը, որ այսուհետև մեր կյանքի բոլոր գործողությունների որոշողը պիտի լինի նրա և իմ միջև. ահա այն հարցը, որ իմ կողմից անխուսափելիորեն պիտի հետևի նրա բոլոր հարցերին ու որպես արգելակ պիտի ծառայի նրա այն բազմաթիվ հիմար ու աղտկալի հարցերին, որոնցով երեխաներն անընդհատ և զուր տեղը հոգնեցնում են իրենց շրջապատողներին՝ ավելի շուտ նրանց վրա յուրովի իշխելու, քան թե մի օգուտ ստանալու համար։ Նա, ում, որպես ամենակարևոր դաս, սովորեցնում են ուրիշ ոչինչ չիմանալ բացի օգտակարից, հարց է տալիս Սոկրատի նման. նա ոչ մի հարց չի տալիս առանց ինքն իրեն պատճառաբանելու, գիտենալով, որ ուրիշները պիտի ուզենան իմանալ իր հարցի պատճառը, նախքան դրան պատասխանելը։

Տեսե՛ք, թե ինչպիսի հզոր միջոց եմ տալիս ձեզ՝ ձեր երե-

խայի վրա ազդելու համար։ Ոչ մի բանի պատճառի մասին գաղափար չունենալով, նա համարյա լուռ է դատապարտվում, երբ այդպես եք ցանկանում. իսկ դուք, ընդհակառակն, ձեր գիտելիքներով ու փորձառությամբ ինչպիսի՞ առավելություն ունեք նրան ապացուցելու օգտակարությունը այն ամենի, ինչ առաջադրում եք նրան։ Երբևէ մի՛ կասկածեք, որ այդ հարցը տալով դուք նրան առիթ կտաք, որպեսզի ինքն էլ իր հերթին ձեզ տա նույն հարցը, և պետք է նկատի ունենաք, որ հետագայում ինչ էլ նրան առաջադրեք, հետևելով ձեր օրինակին, նա պիտի հարցնի՝ «Իսկ ինչի՞ է պետք այս բանը»։

Այստեղ է դուցե ամենադժվարին որոգայթը, որից պետք է խուսափի դաստիարակը։ Եթե երեխայի հարցի առիթով դուք աշխատեք մի կերպ տակից դուրս գալ այնպիսի մի գաղտուղությամբ, որ նա չկարողանա ըմբռնել, տեսնելով, որ դուք դատում եք հենվելով ձեր և ոչ թե իր մտքերի վրա, նա կկարծի, թե ձեր ասածը նպատակահարմար է ձեր և ոչ թե իր տարիքի համար. այդ դեպքում այլևս ձեզ չի վստահի, և այդպիսով ամեն ինչ կորած կլինի։ Բայց արդյոք կա՞ այնպիսի ուսուցիչ, որ շփոթվի ու իր սխալներն ընդունի աշակերտի մոտ. բոլորն էլ օրենք են դարձրել չընդունել նույնիսկ իրենց թույլ տված սխալները։ Իսկ իմ սկզբունքն է՝ ընդունել նույնիսկ իմ չունեցած սխալները, եթե չկարողանամ իմ դատողություններով նրան համոզել. այսպիսով, իմ վերաբերմունքը, միշտ անբասիր մնալով նրա գիտակցության մեջ, երբեք կասկածելի չի թվա, ու ես շատ ավելի վստահություն կշահեմ սխալներ վերագրելով ինձ, քան նրանք, ովքեր թաքցնում են իրենցը։

Նախ և առաջ, թո՛ղ ձեզ քաջ հայտնի լինի, որ հազվադեպ պիտի դուք նրան առաջարկեք այն, ինչ պետք է սովորի։ Ինքն է, որ պիտի ցանկանա, որոնի, գտնի այն, իսկ դուք պարտավոր եք այդ բանը հասկանալի դարձնել նրան, ճարպկորեն նրա մեջ արթնացնել այդ ցանկությունը և այն բավարարելու միջոցներ ստեղծել։ Սրանից հետևում է, որ ձեր հարցերը պետք է սակավադեպ լինեն, բայց լավ ընտրված, և որովհետև նա ավելի շատ հարցեր կտա ձեզ, քան դուք՝ նրան, այդպիսով միշտ ավելի ապահովված կլինեք ու ավելի հաճախ առիթ

կունենաք նրան հարցնելու՝ «Ի՞նչ օգուտ այն բանն իմանալուց, որի մասին հարցնում եք ինձ»։

Բացի այդ, քանի որ այնքան էլ կարևոր չէ նրա այս կամ այն բանն իմանալը, բավական է, որ լավ յուրացնի սովորածն ու սովորածի կիրառումը, հենց որ այլևս ձեր ասածի մասին ուրիշ ավելի լավ լուսաբանություն չունեք նրան տալու, նախընտրեցե՛ք ոչինչ չասել։ Ասացե՛ք նրան առանց խղճահարության. «Ես չեմ կարող ձեզ բավարարել, սխալվել եմ, թողնենք այդ»։ Եթե ձեր դասն իսկապես անտեղի էր, ոչ մի վնաս չի լինի, եթե դրանից բոլորովին հրաժարվեք. եթե այդպես չէ, որոշ ժամանակ հետո, քիչ ավելի ուշադրություն հանդես բերելով, ուրիշ կգտնեք հասկացնելու նրան դրա օգտակարությունը։

Ես չեմ սիրում լոկ խոսքերով բացատրություններ տալ. պատանիները դրանց քիչ են ուշադրություն դարձնում ու չեն ըմբռնում։ Փաստեր, փաստե՛ր տվեք նրանց։ Ինչքան էլ կըրկնեմ, դարձյալ քիչ է, որ մենք խոսքին մեծ իշխանություն ենք տալիս, մեր շատախոս դաստիարակությամբ նրանցից շատախոսներ ենք պատրաստում։

Ենթադրենք, թե ես իմ սանի հետ ուսումնասիրում եմ արևի ընթացքը և կողմնորոշվելու եղանակը, ու հանկարծ նա ինձ ընդհատում է և հարցնում, թե ինչի՞ է պետք այս ամենը։ Ինչպիսի՞ գեղեցիկ ճառ ես կարտասանեմ պատասխանելով նրա հարցին, որքա՞ն բաներ նրան սովորեցնելու աոիթ կունենամ, մանավանդ, եթե մեր խոսակցությունը տեղի է ունենում ուրիշների ներկայությամբ [1]։ Ես կսկսեմ նրան պատմել ճամփորդությունների օգտակարության, առևտրի առավելությունների, տարբեր կլիմաների հատուկ արտադրանքների, զանազան ժողովուրդների բարքերի, օրացույցի գործածության, դյուղատնտեսության համար եղանակների նշանակության, նավագնացության արվեստի, ծովի վրա կողմնորոշվելու եղանակի, ճիշտ ճանապարհից չշեղվելու մասին, երբ չգիտես, թե որտեղ

[1] Ես հաճախ նկատել եմ, որ երեխաներին դասավանդելու ժամանակ ուսուցիչներն ավելի շուտ ուշադրություն են դարձնում, որ իրենց լսեն ներկա գտնվող մեծահասակները, քան իրենք՝ երեխաները։ Ես իմ ասածում համոզված եմ, որովհետև այդ ես գիտեմ սեփական փորձից։

ես գտնվում՝ քաղաքականությունը, բնական պատմությունը, աստղագիտությունը, նույնիսկ բարոյագիտությունն ու միջազգային իրավունքը կմտնեն իմ բացատրության մեջ, որպեսզի իմ աշակերտին լրիվ գաղափար տամ այդ գիտությունների մասին ու մեծ ցանկություն՝ դրանք ուսումնասիրելու։ Ամեն ինչ ասել-վերջացնելուց հետո ես հանդես կգամ մի իսկական իմաստակի դերում, որի մտքերից պատանին ոչինչ հասկացած չի լինի։ Նա մեծ ցանկություն կունենա առաջվա նման ինձ հարցնելու, թե ինչի՞ է պետք կողմնորոշվելը, սակայն չի համարձակվի, վախենալով, որ ինձ կարող է բարկացնել։ Ավելի լավ կհամարի ցույց տալ, թե իբր հասկացել է այն ամենը, ինչ նրան ստիպել էի լսել։ Ահա այսպես է իրագործվում օրինակելի գաստիարակությունը։

Բայց մեր Էմիլը, որ ավելի պարզ գաստիարակություն է ստացել, և որի մեջ մեծ չանքերով քանդրամտություն ենք զարգացնում, ոչինչ չի ուզենա լսել այդ ամենից։ Իրեն անհասկանալի առաջին խոսքից նա կծկվի, կվազվզի սենյակով մեկ ու ինձ կթողնի, որ մենակս ճառեմ։ Պետք է մի ավելի կոպիտ միջոց որոնել, իմ գիտական ապարատը անպետք է նրա համար։

Հաջորդ առավոտյան ես նրան առաջարկում եմ մի պտույտ կատարել նախաճաշից առաջ. նրա ուզածն էլ այդ էր. վազելու համար երեխաները միշտ պատրաստ են, իսկ Էմիլը ճարպիկ ոտքեր ունի։ Մենք մտնում ենք անտառ, անցնում մարգագետիններով, մոլորվում ենք, չգիտենք, թե որտեղ ենք. և երբ հարկ է լինում վերադառնալ, ճանապարհը չենք գտնում։ Ժամանակն անցնում է, շոգը վրա է հասնում, քաղցում ենք. մենք շտապում ենք, իզուր այս և այն կողմն ընկնում, մեր չորս կողմը անտառներ են, դաշտեր, քարհանքեր, կողմնորոշվելու ոչ մի միջոց։ Մեր քափառումներից քրտնած, հոգնած, սոված՝ էլ ավելի ենք մոլորվում։ Վերջապես նստում ենք հանգստանալու և խորհուրդ անելու համար։ Էմիլը, որը ննջադրում եմ, թե դաստիարակված է ուրիշ երեխաների նման, չի խորհրդակցում, այլ լաց է լինում. նա չգիտի, որ մենք Մոնմորանսիի մոտերքումն ենք, որ մի փոքր պուրակ է միայն մեզ նրանից բաժանում, բայց այդ պուրակը նրա

համար մի անտառ է, նրա կազմվածքի մարդը թաղվում է թփերի մեջ։

Մի քանի րոպե լուռթյունից հետո, նրան ասում եմ՝ մտահոգ տեսք ընդունելով. «Սիրելի Էմիլ, ի՞նչպես պիտի դուրս գալ այստեղից»։

ԷՄԻԼ (*բառճած ու ճորդ արցունք թափելով*)

Չգիտեմ։ Հոգնած եմ, քաղցած եմ, ծարավ եմ, ալևս չեմ կարող դիմանալ։

ԺԱՆ-ԺԱԿ

Կարծում եք, որ իմ վիճակն ավելի լա՞վ է. ես ինքս էլ լաց կլինեի, եթե կարելի լիներ արցունքով նախաճաշել։ Լաց լինելը ոչնչով չի օգնի. պետք է մեր տեղն իմանանք։ Նայեցեք ժամացույցին, ժամը քանի՞սն է։

ԷՄԻԼ

Կեսօր է, և ես ոչինչ չեմ կերել։

ԺԱՆ-ԺԱԿ

Ճիշտ է, կեսօր է, ես նույնպես ոչինչ չեմ կերել։

ԷՄԻԼ

Օ՜, երևի դուք շատ քաղցած կլինեք։

ԺԱՆ-ԺԱԿ

Դժբախտությունն այն է, որ իմ ճաշը չի գա այստեղ ինձ գտնելու։ Կեսօր է, ճիշտ այն ժամը, երբ երեկ Մոնմորանսիից դիտում էինք անտառի դիրքը։ Արդյոք չե՞նք կարող նույն ձևով անտառից որոշել Մոնմորանսիի դիրքը...

ԷՄԻԼ

Այո. բայց երեկ մենք տեսնում էինք անտառը, իսկ այստեղից քաղաքը չենք տեսնում։

ԺԱՆ-ԺԱԿ

Ա՛յ քեզ չարի՛ք... Եթե կարելի լիներ առանց այն տեսնելու որոշել նրա դիրքը...

ԷՄԻԼ

Օ՜, սիրելի բարեկամ։

ԺԱՆ-ԺԱԿ

Մենք ասում էինք, կարծեմ, որ ակտառը զտնվում է...

ԷՄԻԼ

Մոնմորանսիից դեպի հյուսիս։

ԺԱՆ-ԺԱԿ

Ուրեմն, Մոնմորանսին պետք է լինի...

ԷՄԻԼ

Անտառից դեպի հարավ։

ԺԱՆ-ԺԱԿ

Մենք կարող ենք հյուսիսը որոշել կեսօրին։

ԷՄԻԼ

Այո, ստվերի ուղղությամբ։

ԺԱՆ-ԺԱԿ

Իսկ հարավը՞։

ԷՄԻԼ

Ի՞նչպես անենք։

ԺԱՆ-ԺԱԿ

Հարավը հյուսիսի հակառակ կողմն է։

ԷՄԻԼ

Ճիշտ է. մեզ մնում է փնտրել ստվերի հակառակ կողմը։ Օ՜, ահավասիկ հարավը. անտարակույս, Մոնմորանսին այդ կողմն է. փնտրենք այդ ուղղությամբ։

ԺԱՆ-ԺԱԿ

Գուցե իրավացի եք. գնանք այս արահետով, անտառի միջով։

ԷՄԻԼ (ձեռքերն իրար խփելով և մի ուրախ ճիչ արձակելով)

Ա՜հ, ես տեսնում եմ Մոնմորանսին. ահա՛ նա, պարզ երևում է մեր առաջ։ Գնանք նախաճաշենք, գնանք ճաշենք, շոտ, աստղագիտությունը ճիշտ որ մի բանի օգտակար է։

Նկատեցե՛ք, որ եթե չի ասում այս վերջին նախադասությունը, համենայն դեպս, մտածում է. կարևորը դա չէ, բավական է, որ ես՛ չեմ ասողը։ Կարող եք վստահ լինել, որ նա կյանքում չի մոռանա այսօրվա դասը, այնինչ, եթե այդ բոլորը սենյակում կատարվեր, իմ ճառը կմոռացվեր հենց հաջորդ օրը։ Ինչքան հնարավոր է, պետք է գործով խոսել, և ասել միայն այն, ինչ չի կարելի անել։

Ես ընթերցողի մասին այնքան վատ կարծիքի չեմ, որպեսզի յուրաքանչյուր նյութի առթիվ մի օրինակ բերեմ. բայց հարցը ինչի մասին էլ որ լինի, պարտք եմ համարում հորդորել դաստիարակին, որ լավ կշռի իր փորձը՝ հաշվի առնելով երեխայի ընդունակությունը, որովհետև, կրկնում եմ, չարիքը այն չէ, որ նա ոչինչ չի ըմբռնում, այլ այն, որ կարծում է թե ըմբռնել է։

Ես հիշում եմ, որ կամենալով մի երեխայի մեջ սեր արթնացնել դեպի քիմիան, մետաղների տարանջատման բազմաթիվ փորձեր ցույց տալուց հետո, նրան բացատրեցի, թե ինչպես է պատրաստվում թանաքը։ Նրան ասացի, որ թանաքի

ևուքյունը առաջանում է խիստ տարրալուծված և արջասպից անջատված երկաթից, որը նստվածք է տալիս որևէ ալկալիական հեղուկի ազդեցությամբ։ Իմ հմուտ բացատրությունների հենց կեսին, փոքրիկ չարաճճին ինձ միանգամից կանգնեցրեց այն հարցով, որ ես նրան սովորեցրել էի. անելանելի դրության մեջ ընկա։

Մի քիչ մտածելուց հետո, որոշեցի իմ անելիքը. տան նկուղից մի շիշ գինի բերել տվի, ուր սու արժողությամբ մի շիշ գինի էլ՝ գինեվաճառից։ Մի փոքրիկ սրվակով վերցրի անլուծելի ալկալի, ապա սեղանին դնելով երկու բաժակ այդ տարբեր գինիներից [1], նրան ասացի հետևյալը.

«Բազմաթիվ մթերքներ խարդախում են՝ նրանց ավելի ընտիր տեսք տալու համար։ Այդ խարդախությունները խարում են թե՛ տեսողությունը և թե՛ համը, բայց նրանք վնասակար են, և խարդախված նյութը, թեև ավելի գեղեցիկ է տեսքով, բայց ավելի վատորակ է, քան առաջ։

Ընդհանրապես, ավելի շուտ խմիչքներն են խարդախում, հատկապես գինին, որովհետև այստեղ խարդախությունը ավելի դժվար է հայտնաբերել ու խարդախողին ավելի շատ շահ է բերում։

Թթու գինիների խարդախումը կատարվում է լիթարժով. լիթարժը կապարից ստացվող ինչ-որ նյութ է։ Կապարը, միանալով թթվուտներին, տալիս է խիստ քաղցրահամ մի աղ, որը մեղմում է գինու կծությունը, սակայն խմողի համար թույն է։ Ուրեմն, կասկածելի գինի խմելուց առաջ պետք է գիտենալ՝ լիթարժով խարդախվա՞ծ է թե ոչ։ Ահա թե ինչ պետք է անել այդ ստուգելու համար։

Գինին ոչ միայն դյուրավառ ալկոհոլ է պարունակում, ինչպես տեսանք օղի քաշելու ժամանակ, այլև թթվուտ, ինչպես այդ կարող եք տեսնել նրանից ստացված քացախից ու գինեմրուրից։

Թթվուտը միանում է մետաղյա նյութերին՝ լուծվելով և

---

[1] *Երեխային տրված յուրաքանչյուր բացատրությունից առաջ չափազանց կարևոր է ունենալ անհրաժեշտ նյութերը՝ նրա ուշադրությունը լրելու համար։*

կազմում մի բաղադրյալ աղ. այդպես է, օրինակ ժանգը, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ երկաթ, լուծված՝ օդի և ջրի մեջ եղած թթվուտներից, ինչպես նաև պղնձաժանգը, որը քացախով լուծված պղինձ է։

Բայց այդ միևնույն թթվուտը ավելի լավ է հարաբերվում ալկալիներին, քան թե մետաղներին, այդ պատճառով էլ, երբ առաջինները մտնում են այն բաղադրյալ աղերի մեջ, որոնց մասին խոսեցի քիչ առաջ, թթվուտը ստիպված բաժանվում է այն մետաղից, որին միացել էր, ալկալիին միանալու համար։

Այդ ժամանակ, մետաղը թթվուտից անջատվելով՝ նստում է հատակին, հեղուկին տալով պղտոր գույն։

Եթե, ուրեմն, այս երկու գինիներից մեկին լիթարժ է խառնված, ապա նրա թթվուտը լիթարժն իր մեջ է պահում լուծված վիճակում։ Եվ եթե նրա վրա լցնենք հեղուկ ալկալին, ապա վերջինս կստիպի թթվուտին անջատվել լիթարժից ու միանալ իրեն։ Կապարն այլևս լուծված չլինելով, նորից երևան կգա, կպղտորի հեղուկն ու ի վերջո կնստի հատակին։

Եթե հեղուկի մեջ կապար [1] կամ ուրիշ մետաղ չկա, ալկալին առանց հակազեցության [2] կմիանա թթվուտին, ամբողջ պարունակությունը կմնա լուծված դրության մեջ, ու ոչ մի նստվածք չի առաջանա»։

Ապա ալկալիական հեղուկից հաջորդաբար լցնում եմ երկու բաժակների մեջ, տնային գինին մնում է հատակ ու թափանցիկ, մյուսը մի րոպեում պղտորվում է, իսկ մի ժամ հետո պարզ տեսնում ենք, որ կապարը նստել է բաժակի հատակին։

«Ահա,— շարունակում եմ ես,— բնական ու մաքուր գինին,

---

[1] Այն գինիները, որ ծախվում են Փարիզի գինեվաճառների մոտ, թեև բոլորը խարդախված չեն լիթարժով, սակայն համարյա բոլորի մեջ էլ կապար կա, որովհետև գինեվաճառների պահեստներում կա այդ մետաղից, և գինին մի ամանից մյուսը փոխադրվելիս՝ մի որոշ բան լուծում է իր մեջ։ Տարօրինակ է, որ ոստիկանությունը հանդուրժում է այս բացարձակ ու վտանգավոր զեղծարարությունը։ Բայց չէ՞ որ հարուստ դասակարգի մարդիկ երբեք այդպիսի գինի չեն խմում ու չեն ենթարկվում թունավորման վտանգին։

[2] Բուսական թթվուտը չափազանց թույլ է։ Եթե նրա փոխարեն հանչային թթվուտ լիներ և նվազ տարածված, միացումը առանց եռացման չէր լինի։

որը կարելի է խմել, իսկ ահա կեղծված գինին, որը թունավորում է։ Այս երևույթը հայտնաբերվում է նույն այն գիտելիքներով, որոնց օգտակարության մասին հարցնում էիք ինձ։ Այն մարդը, որ գիտի, թե ինչպես է պատրաստվում թանաքը, գիտի նաև ճանաչել կեղծված գինիները»։

Ես շատ գոհ էի իմ օրինակից, բայց նկատեցի, որ երեխան դրանից բոլորովին չէր տպավորվել։ Որոշ ժամանակ պետք է անցներ, որպեսզի զգայի իմ արածի հիմարությունը, որովհետև, բացի այն, որ տասներկու տարեկան մի երեխա չէր կարող հետևել իմ բացատրությանը, այդ բացատրության օգտակարությունը վեր էր նրա հասկացողությունից, քանի որ երկու գինիներն էլ համտեսելով ու երկուսին էլ հավանելով, նա ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ «խարդախել» բառի իմաստը, որը կարծում էի, թե լավ էի բացատրել նրան։ Իսկ մյուս՝ «հակառողջական», «թույն» բառերը նույնիսկ ոչ մի իմաստ չունեին նրա համար. տվյալ դեպքում նա Ֆիլիպ բժշկի պատմարանի դերի մեջ էր. բոլոր երեխաներն էլ այդպիսին են։

Հետևանքների ու պատճառների հարաբերությունները, որոնց կապը մենք չենք նկատում, լավն ու վատը, որի մասին մենք գաղափար չունենք, այն կարիքները, որ մենք երբեք չենք զգացել, մեզ համար ոչինչ են, մենք նրանցով բոլորովին չենք հետաքրքրվում ու չենք զբաղվում։ Տասնհինգ տարեկան հասակում իմաստուն մարդու երջանկությունը տեսնում են այնպես, ինչպես երեսուն տարեկանում՝ արքայության փառքը։ Թեև լավ չըմբռնեն մեկն ու մյուսը, քիչ բան կանեն դրանց հասնելու համար ու եթե նույնիսկ ըմբռնեն, շատ քիչ բան կանեն առանց ցանկություն ունենալու և առանց զգալու դրանց նպատակահարմարությունը։ Հեշտ է երեխային համոզել, թե այն, ինչ ցանկանում ենք նրան սովորեցնել, օգտակար է, սակայն համոզելը ոչինչ չարժե, եթե չկարողանանք նրան հավանեցնել։ Հանգիստ դատողությունը իզուր է մեզ թելադրում հաստատել կամ բացասել. միայն շահագրգռվածությունն է մեզ գործի մղում. իսկ ի՞նչպես կարող են շահագրգռվել օգուտով, երբ դրա մասին դեռևս գաղափար չունեն։

Երբեք երեխային ցույց մի՛ տվեք այն, ինչ նա չի կարող

տեսնել, քանի դեռ մարդկությունը նրան համարյա օտար է. չկարողանալով նրան բարձրացնել անչափահաս մարդու վիճակից, իջեցրե՛ք մարդուն երեխայի վիճակին։ Մտածելով, թե մի ուրիշ հասակում ինչ բանը կարող է նրան օգտակար լինել, խոսեցե՛ք նրա հետ միայն այնպիսի բաների մասին, որոնց օգտակարությունը ինքը այժմվանից տեսնում է։ Բայց և այնպես, երբեք համեմատություններ չանեք ուրիշ երեխաների հետ. ո՛չ մի հակառակորդ, ո՛չ մի մրցակից, նույնիսկ մրցավազքի ընթացքում. հենց որ նա սկսի արդեն դատողություն անել, հարյուր անգամ ավելի լավ է, որ նա չսովորի այն, ինչ պիտի սովորեր նախանձից կամ փառասիրությունից դրդված։ Միայն ես կնշեմ տարեցտարի նրա ունեցած հաջողությունները, դրանք կհամեմատեմ հաջորդ տարվա ունենալիքների հետ ու կասեմ նրան. «Դուք մեծացել եք այսքան գծով, ահա այն փոսը, որի վրայով դուք ցատկում էիք, այն ծանրությունը, որ վերցնում էիք. ահա այն տարածությունը, ուր դուք քար էիք նետում, այն հեռավորությունը, որ դուք վազում էիք մեկ շնչով և այլն. այժմ տեսնենք, թե հետագայում ինչ պիտի անեք»։ Այդպիսով, ես նրան շահագրգռում եմ, առանց նախանձ առաջացնելու որևէ մեկի նկատմամբ։ Նա կկամենա ինքն իրեն գերազանցել և պետք է որ գերազանցի. ես ոչ մի անպատեհություն չեմ տեսնում, որ նա լինի իր սեփական մրցակիցը։

Ես ատում եմ գրքերը. նրանք սովորեցնում են խոսել միայն այն մասին, ինչ որ չգիտենք։ Ասում են, որ Հերմեսը սյուների վրա փորագրեց գիտության տարերքը՝ իր գյուտերը չրհեղեղից պաշտպանելու համար։ Եթե դրանք տպագրած լիներ մարդկանց ուղեղի մեջ, այնտեղ կպահպանվեին ընդմիշտ, ավանդաբար։ Լավ կառուցված ուղեղը հիշատակարան է, որտեղ ամենաապահով կերպով փոխադրվում են մարդկային գիտելիքները։

Մի՞թե հնարավորություն չկա իրար մոտ բերել բազմաթիվ գրքերի մեջ ցրված այնքան դասերը, գրանք համադրել մի ընդհանուր նյութի մեջ, որի տեսնելը հեշտ լիներ, հետևելը՝ հետաքրքիր և որը կարող էր խթան ծառայել նույնիսկ այդ տարիքում։ Եթե հնարավոր լինի ստեղծել մի այնպիսի դրություն, ուր մարդկանց բոլոր բնական կարիքները

Երևան գան երեխայի մտքի համար նկատելի ձևով և ուր այդ միևնույն կարիքները բավարարելու միջոցները աստիճանաբար զարգանան միևնույն դյուրությամբ, այդպիսի դեպքում այդ դրության կենդանի ու պարզ նկարագրությամբ պետք է առաջինը մարզել երեխայի երևակայությունը։

Ծանոթուն փիլիսոփա՛, ես արդեն տեսնում եմ ձեր երևակայության բոցկլտումը։ Իզուր մի՛ ոգևորվեք. այդ դրությունը գտնված, նկարագրված է, և, առանց ձեզ անիրավելու, շատ ավելի լավ, քան դուք կարող էիք նկարագրել, գոնե ավելի ճշտությամբ ու պարզությամբ։ Քանի որ մեզ անպայման զրքեր են պետք, կա մեկը, որ տալիս է բնական դաստիարակության ամենահաջող ձեռնարկը, այնպես, ինչպես ես եմ ուզում։ Դա կլինի առաջին գիրքը, որ պետք է կարդա իմ Էմիլը. հենց միայն այդ գիրքը երկար ժամանակ պիտի կազմի իր գրադարանը և միշտ այնտեղ կարևոր տեղ է գրավելու։ Դա պիտի լինի այն բնագիրը, որի համար բնական գիտության մասին մեր բոլոր զրույցները կծառայեն որպես մեկնարանություն։ Այն կլինի մի փորձառություն մեր դատողությունների զարգացման ընթացքում, ու քանի դեռ մեր ճաշակը չի այլանդակված, միշտ էլ հաճույքով կկարդանք այն։ Ո՞րն է, ուրեմն, այդ հրաշալի գիրքը։ Արիստոտե՞լն է, Պլինիո՞սը, Բյուֆո՞նը. ո՛չ։ Ռոբինզոն Կրուզոն է այն։

Ռոբինզոն Կրուզոն իր կղզում, մենակ, զրկված իր նմանների օգնությունից ու բոլոր տեսակի գործիքներից, կարողանում է, սակայն, հոգալ իր կարիքները, պահպանել իր գոյությունը և նույնիսկ մի տեսակ բարեկեցություն ձեռք բերել. ահա մի հետաքրքիր նյութ բոլոր տարիքների համար, որը կարելի է բազմաթիվ միջոցներով գրավիչ դարձնել երեխաներին։

Ահա թե ինչպես կօգտագործենք մենք ամայի կղզին, որը նախապես ինձ ծառայում էր համեմատության համար. ես ընդունում եմ, որ Կրուզոյի ապրելակերպը հասարակական մարդուն համապատասխան դրություն չի կարող լինել, և հավանական է, որ Էմիլի դրությունն էլ այդպիսին չի լինի. սակայն այդ դրության հիման վրա է, որ նա պիտի գնահատի բոլոր մյուսները։ Նախապաշարումներից վեր բարձրա-

նալու և մեր դատողությունները իրերի իսկական հարաբերությունների վրա կառուցելու ամենավստահ միջոցն է՝ մեզ դնել կղզիացած մի մարդու դրության մեջ ու ամեն ինչ դատել այնպես, ինչպես նա կդատեր, ելնելով իր սեփական օգուտից։

Այդ վեպը, բացառելով նրանից ամեն տեսակ ավելորդաբանություններ, սկսած կղզու մոտ Ռոբինզոնի նավաբեկությունից մինչև նրան այնտեղից դուրս բերող նավի ժամանումը, էմիլի համար կլինի և՛ զվարճություն, և՛ ուսանելու նյութ այն ժամանակաընթացքում, որի մասին խոսում ենք այստեղ։ Ես ցանկանում եմ, որ այդ դեպքերը նրան գլխապտույտ պատճառեն, որ նա անընդհատ զբաղվի իր ղղյակով, իր այծերով, իր մշակություններով, որ նա սովորի մանրամասնորեն, ոչ թե գրքերից, այլ իրականությունից, այն ամենը, ինչ պետք է իմանալ այսպիսի դեպքերում, որ մտածի, թե ինքն էլ մի Ռոբինզոն է, որ իրեն երևակայի մորթե հագուստ հագած, գլխին մի երկար գդակ, մեջքին երկար սուր, կերպարի բոլոր կոպիտ հանդերձանքով, մինչև հովանոցը, որի կարիքը չի ունենա։ Ես ուզում եմ, որ այս կամ այն բանը պակասելու դեպքում ինքը մտահոգվի անհրաժեշտ միջոցառումների մասին, որ նա ուսումնասիրի հերոսի գործելակերպը, որոնք, թե արդյոք ոչինչ չի՞ մոռացել, ավելի լավը չէ՞ր կարող անել, որ ուշադրությամբ նշի նրա սխալները ու երանելից օգտվի՝ նման դեպքում միևնույն սխալները չկրկնելու համար, որովհետև, կարող եք բոլորովին վստահ լինել, նա ծրագրում է գնալ, կազմակերպել այդպիսի մի տնտեսություն. այդ երանելի տարիքի համար դա իսկական օդային ամրոց է, որտեղ ուրիշ երջանկություն չկա, բացի անհրաժեշտից ու ազատությունից։

Գործունեության ինչպիսի առատ աղբյուր է այս խելահեղությունը մի ճարպիկ մարդու համար, որ այն ծնել է լոկ նրանից օգտվելու նպատակով։ Երեխան, որն շտապում է իր կղզու համար իրեր ամբարել, ավելի եռանդ կցուցաբերի սովորելու, քան ուսուցիչը՝ սովորեցնելու։ Կփափագի իմանալ այն ամենը, ինչ օգտակար է, և ոչ ուրիշ բան. դուք այստեղ հետև կարիք կունենաք ոչ թե առաջնորդելու նրան, այլ ետ

պահելու։ Բայց և այնպես, պետք է շտապենք նրան բնակեցնել այդ կղզում, քանի դեռ նա դրա մեջ է գտնում իր միակ երջանկությունը, որովհետև շուտով կմոտենա այն օրը, երբ նա, եթե ցանկանա էլ այնտեղ ապրել, այլևս չի ուզի մենակ ապրել, և Ուրբաթը ինքն էլ, որ առայժմ նրան չի հետաքրքրում, կգա ժամանակ, որ այլևս չի բավարարի։

Բնական արվեստները, որոնք կարող է մի մարդ մենակ գործադրել, տանում են դեպի արդյունաբերական արվեստները, որոնց համար անհրաժեշտ են բազմաթիվ ձեռքեր։ Առաջինները կարող են կատարվել մենակյացների, վայրենիների կողմից, բայց մյուսները ստեղծվում են միայն հասարակության մեջ և անհրաժեշտ են դարձնում հենց այդ հասարակության գոյությունը։ Քանի դեռ մարդիկ միայն ֆիզիկական կարիք են զգում, կարող են բավարարել իրենք իրենց. ավելի մեծ կարիքի հանդես գալու դեպքում, անհրաժեշտ են դառնում աշխատանքի բաժանումն ու բաշխումը, որովհետև, թեև մի մարդ, միայնակ աշխատելով, լոկ մի մարդու կյանքը կարող է ապահովել, սակայն հարյուր մարդ, միասին աշխատելով, կարող են երկու հարյուր մարդու ապրուստ վաստակել։ Ուրեմն, հենց որ մարդկանց մի մասը հանգստանում է, պետք է աշխատողների բազուկների օգնությունը փոխհատուցի չաշխատողների անգործությունը։

Ձեր ամենամեծ ուշադրության առարկան պետք է դարձնեք այն, որ երեխայի մտքում տեղ չգտնեն հասարակական հարաբերությունների մասին այնպիսի ծանոթություններ, որոնք նրան անըմբռնելի են. բայց երբ գիտելիքների հաջորդականությունը ստիպում է ձեզ նրան պարզաբանել մարդկանց փոխադարձ կախումը, այդ դեպքում, փոխանակ այն նրան ցույց տալու բարոյական կողմից, նախ և առաջ նրա ուշադրությունը դարձրեք դեպի արդյունաբերությունն ու մեքենայացված արհեստները, որոնք մարդկանց միմյանց օգտակար են դարձնում։ Նրան մի արհեստանոցից մյուսը տանելով, այնպես արե՛ք, որ նա մասնակցի բոլոր աշխատանքներին և այնտեղից դուրս չգա՝ առանց կատարելապես ծանոթանալու այնտեղ կատարվածի նպատակի հետ, գոնե այն ամենի, որ ինքը դիտել է։ Դրա համար դուք ինքներդ

աշխատեցե՛ք, ամեն տեղ նրան օրինակ եղե՛ք, նրան վարպետ դարձնելու համար ամեն տեղ աշակերտ դարձե՛ք և հավատացե՛ք, որ մի ժամվա աշխատանքը նրան ավելի շատ բան կսովորեցնի, քան մի օրվա բացատրությունը։

Ջանազան արհեստների հետ կապված մի հանրային գնահատություն կա, որը հակառակ համեմատական է նրանց իսկական օգտակարությանը։ Այդ գնահատության չափանիշը՝ ուղղակի նրանց անօգտակարությունն է, և այդ այդպես էլ պետք է լինի։ Ամենաօգտակար արհեստները նրանք են, որոնք ամենաքիչ շահութաբեր են, որովհետև բանվորների թիվը համեմատական է մարդկանց պահանջներին, իսկ բոլորին անհրաժեշտ աշխատանքը հարկադրաբար վարձատրվում է է աղքատի համար մատչելի գնով։ Ընդհակառակն, այն «կարևոր» մարդիկ, որոնք ոչ թե արհեստավոր են կոչվում, այլ՝ արվեստավոր, բացառապես դատարկաշրջիկների ու հարուստների համար են աշխատում ու իրենց սնոտիքի համար քմահաճ գներ են պահանջում. և որովհետև այդ աշխատանքների արժանիքը միայն հանրային կարծիքով է կազմվում, նրանց գինն էլ այդ արժանիքի մասն է կազմում, և դրանց գնահատում են ըստ իրենց արժողության։ Հարուստների տված գնահատանքը ոչ թե այդ իրերի պիտանիությունից է ելնում, այլ այն բանից, որ աղքատը չի կարող դրանք գնել։ Nolo habere bona, nisi guibus populus inviderit *.

Ի՞նչ կզառնան ձեր աշակերտները, եթե նրանք տոգորվեն այդ հիմար նախապաշարումով, եթե ինքներդ նրանց քաջալերեք, եթե ձեզ տեսնեն, օրինակ, որ ավելի հարգանքով եք մտնում ոսկերչի, քան թե փականագործի խանութը։ Ի՞նչպիսի կարծիք կունենան նրանք արհեստների իսկական արժանիքի ու իրերի իսկական արժեքի մասին, երբ տեսնեն ամենուրեք քմահաճ արժեքի ու իրոք օգտակար արժեքի միջև եղած հակասությունը և այն, որ ինչքան իրը թանկ է գնահատված, այնքան փոքր է նրա արժեքը։ Այն րոպեից, երբ թույլ կտաք որ այդպիսի մտքեր տեղ գտնեն նրանց գլխ-

---

* «Ես միայն այնպիսի հարստություն եմ ցանկանում, որին նախանձում է ժողովուրդը»— Ս. Բ.

խում, հրաժարվեցե՛ք դաստիարակությունը շարունակելուց. հակառակ ձեզ, նրանք կդաստիարակվեն բոլորի նման. դուք կորցրած կլինեք տասնչորս տարվա ձեր աշխատանքը։

Էմիլը, երբ խորհի կահավորել իր կղզին, տարբեր տեսակետներ կունենա։ Ռոբինզոնը երկաթագործի խանութին ավելի արժեք կտար, քան բոլոր մանր-մունր պերճանքի իրեր վաճառողին։ Առաջինը նրա համար շատ հարգելի մի մարդ կլիներ, իսկ մյուսը՝ ճղճիմ մի խաբեբա։

«Իմ տղան ծնվել է աշխարհում ապրելու համար։ Նա իմաստունների հետ չի ապրելու, այլ՝ հիմարների, ուրեմն, նա պետք է ճանաչի նրանց հիմարությունները, քանի որ նրանք այդ հիմարություններով են ցանկանում առաջնորդվել։ Իրերի իսկական ճանաչումը լավ բան է, բայց մարդկանց ու նրանց դատողության ճանաչումը ավելի լավ է, որովհետև մարդկային հասարակության մեջ մարդու ամենամեծ գործիքը մարդն է և նա է ամենախելոքը, ով ամենից լավ է օգտվում այդ գործիքից։ Ինչո՞ւ տալ երեխաներին մտացածին մի իրակարգի գաղափարը, որը չի համապատասխանելու այն իրակարգին, որ նրանք հաստատված պիտի գտնեն և որի համաձայն պետք է դասավորեն իրենց կյանքը։ Տվե՛ք նրանց, առաջին հերթին, իմաստուն լինելու դասեր, հետո նրանց կուսուցանենք դատել, թե ինչո՞ւմն են ուրիշները հիմար»։

Ահավասիկ այն խարուսիկ ասույթները, որոնցով հայրերը, սխալ հասկացված զգուշավորությամբ, աշխատում են իրենց զավակներին իրենց իսկ ներշնչած նախապաշարումների գերին դարձնել և իրենց էլ խաղալիք՝ խելագար ամբոխի ձեռքին, որին ցանկանում են իրենց կրքերի գործիքը դարձնել։ Մարդուն ճանաչել կարենալու համար ինչքա՜ն բան է հարկավոր ճանաչել նրանից առաջ։ Մարդը իմաստունի ուսումնասիրության վերջին առարկան է, դուք հավակնում եք նրան երեխայի ուսուցման առաջին նյութը դարձնել։ Նախքան մեր զգացումները սովորեցնելը՝ դրանք գնահատել սովորեցրեք նրան։ Մի՛թե հիմարությունը ճանաչած կլինենք, եթե պատողության տեղ ընդունենք այն։ Իմաստուն լինելու համար պետք է որոշել, թե ինչը իմաստուն չէ։ Ձեր երեխան ինչպե՞ս կարող է մարդկանց ճանաչել, եթե նա չգիտի ո՛չ

հասկանալ նրանց դատողությունը, ո՛չ էլ պարզել նրանց սխալը: Ձուր է գիտենալը, թե ինչ են մարդիկ մտածում, եթե չգիտենք, թե նրանց մտածածը ճի՞շտ է թե սխալ: Սովորեցի՛ր, ուրեմն, նրանց, նախ և առաջ, թե ինչ են իրերը ներկայացնում իրենցից, հետո կսովորեցնենք, թե ինչ են նրանք մեզ համար: Այդպիսով է, որ նա կկարողանա համեմատել մարդկային կարծիքը ճշմարտության հետ ու բարձրանալ հասարակից վեր, որովհետև մարդիկ նախապաշարումներն ընդունում են առանց դրանք ճանաչելու, իսկ ժողովրդին չես կարող ղեկավարել, եթե նմանվես նրան: Եվ եթե դուք սկսեք նրան ծանոթացնել հասարակական կարծիքի հետ, նախքան նրան սովորեցնելու, թե ինչպես այն դնահատել, վատահ եղի՛ք, ինչ էլ որ աննք, այդ կարծիքը կլինի նաև իր կարծիքը, և դուք չեք կարող այն արմատախիլ անել: Ծզրակացնում եմ, որ պատանուն ողջախոհ դարձնելու համար, պետք է ձևավորել նրա պատողությունը, փոխանակ ձեր դատողությունները նրան թելադրելու:

Դուք տեսնում եք, որ մինչև այժմ ես իմ աշակերտի հետ չեմ խոսել մարդկանց մասին. նրան շատ ողջամտություն է պետք ինձ հասկանալու համար. նրա հարաբերությունները իր նմանների հետ դեռևս բավականաչափ զարգացած չեն, որպեսզի իր սեփական փորձով կարողանա ուրիշներին դատել. նա որպես մարդկային էակ միայն իրեն է ճանաչում ու նույնիսկ շատ հեռու է ինքն իրեն ճանաչելուց, բայց եթե իր մասին քիչ է դատում, գոնե ճիշտ է դատում: Նա չգիտի ուրիշների զրաված տեղը, բայց զգում է իր տեղը և այնտեղ էլ մնում է: Սոցիալական օրենքների փոխարեն, որ նա չի կարող ճանաչել, մենք նրան կսշկանդում ենք անհրաժեշտության շղթայով: Նա դեռևս համարյա ֆիզիկական էություն է, շարունակենք նրան վերաբերվել որպես այդպիսինին:

Նա բնության բոլոր մարմիններն ու մարդկանց բոլոր աշխատանքները պիտի գնահատի նրանց՝ իր համար զգալի օգտակարությամբ, իր ապահովությամբ, իր պահպանությամբ ու բարեկեցությամբ: Այսպես, երկաթը նրա համար ավելի թանկարժեք կլինի, քան ոսկին, ապակին ավելի՝ քան

աղամանդը. այդպես էլ նա ավելի շատ կհարգի մի կոշկակարի, մի քարտաշի, քան թե մի լամպրեորի, մի կր Բլանի ու Եվրոպայի բոլոր գոհարավաճառներին. մի հրուշակագործ, հատկապես նրա համար, շատ ավելի կարևոր անձնավորություն է, և նա ամբողջ Գիտությունների ակադեմիան կփոխեր Լոմբարդյան փողոցի մի փոքրիկ հրուշակարանի հետ։ Ոսկերիչները, փորագրիչները, նախշողները, ասեղնագործները, նրա կարծիքով, ծույլ մարդիկ են, որոնք բոլորովին անօգուտ գործերով են զբաղվում. նույնիսկ ժամագործությանը մեծ նշանակություն չի տա։ Բախտավոր երեխան ժամանակը վայելում է առանց նրա գերին դառնալու։ Նրանից օգտվում է առանց արժեքն իմանալու։ Կրքերի հանդարտությունը, որի շնորհիվ ժամանակը նրա համար անցնում է միշտ անվրդով, նրան որպես գործիք կծառայի՝ կարիքի դեպքում ժամանակը չափելու համար [1]։ Ենթադրելով, թե նա ժամացույց ունի, ինչպես և նրան լացացնելով, ես կստանայի մի հասարակ էմիլ, որին ո՛չ կարող եմ օգնել, ո՛չ էլ լսելի լինել։ Իսկ ինչ վերաբերում է իսկական էմիլին, ուրիշներից այդքան տարբեր երեխան ոչ մի բանի օրինակ չի կարող հանդիսանալ։

Ոչ նվազ բնական ու է՛լ ավելի խելոք մի կարգ կա, որի շնորհիվ արհեստները պիտոյ են քստ նրանց իրար կապող անհրաժեշտության հարաբերությունների, առաջին գծի վրա դնելով ամենից անկախները, իսկ վերջինի վրա՝ այն արհեստները, որոնք կախում ունեն ավելի մեծաթիվ ուրիշ արհեստներից։ Այս կարգը, որ կարևոր նկատառումների է ծնունդ տալիս ընդհանուր հասարակության կարգի մասին, նման է նախորդին ու ենթակա է միևնույն հեղաշրջման մարդկային գնահատության մեջ։ Այդպես, հում նյութերի մշակումը արհեստների մեջ չի հարգվում և համարյա շահ չի բերում, և ինչքան նրանք անցնում են ձեռքից-ձեռք,

---

[1] Ժամանակը մեզ համար կորցնում է իր չափը, երբ մեր կրքերը ցանկանում են կարգավորել նրա ընթացքը՝ ըստ իրենց քմահաճույքի։ Իմաստունի ժամացույցը խառնվածքի հավասարությունն է և հոգու խաղաղությունը։ Նա միշտ ճշտապահ է և միշտ իմանում է իր ժամը։

այնքան աշխատանքն արժեքավորվում է ու հարգվում։ Ես չեմ քննում, թե որքան ճիշտ է, որ այն արդյունաբերությունը, որը նուրբ մասնագիտացման պրոցեսում այդ նյութերին տալիս է վերջնական ձևը, ավելի կարևոր է ու ավելի մեծ վարձատրության արժանի, քան նախնական մշակման պրոցեսում, որը դրանք մարդկանց համար պիտանի է դարձնում. բայց, իմ կարծիքով, ամեն դեպքում այն արհեստն է անվիճելիորեն ամենից ավելի գնահատման արժանի, որի գործադրությունը ամենից ընդհանրական ու ամենից անհրաժեշտ բնույթ ունի, և այն արհեստը, որին ավելի քիչ ուրիշ արհեստներ են հարկավոր, է՛լ ավելի գնահատանքի է արժանի, որովհետև ավելի ազատ է ու անկախության ավելի մոտ։ Ահա արհեստների և արդյունաբերության գնահատման իսկական կանոնները. մնացած բոլորը քմահաճ են ու կախում ունեն մարդկանց կարծիքներից։

Բոլոր արհեստներից ամենից առաջավորն ու ամենից արժանավորը գյուղատնտեսությունն է. ես դնում եմ դարբնոցը՝ երկրորդ ու ատաղձագործությունը՝ երրորդ տեղը, և այդպես հաջորդաբար։ Այն երեխան, որ գոհհիկ նախապաշարումներով չի տարված, այդպես էլ կմտածի։ Այդ մասին ինչքա՞ն կարևոր խորհրդածություններ կքաղի մեր էմիլը իր Ռոբինզոնից։ Ի՞նչ կմտածի նա, տեսնելով, որ արհեստները կատարելագործվում են միայն ստորաբաժանվելով և գործիքների անվերջ բազմապատկումով։ Նա ինքն իրեն կասի. «Բոլոր այս մարդիկ հիմար հնարագետներ են. կարծես վախենում են, որ նրանց բազուկներն ու մատները ոչ մի բանի չծառայեն, այնքան գործիքներ են հնարում՝ դրանք գործածելու կարիքից ազատվելու համար։ Միմիայն մի արհեստ գործ դնելու համար նրանք հազարավոր ուրիշ արհեստների ստրուկ են դառնում։ Ամեն մի բանվորի մի քաղաք է հարկավոր։ Ինչ վերաբերում է ինձ ու իմ ընկերոջը, մենք մեր հանճարն ի սպաս կդնենք մեր հնարագիտությանը, մենք այնպիսի գործիքներ կսարքենք, որ ամեն տեղ հետներս կարողանանք տանել։ Բոլոր նրանք, ովքեր այնքան պարծենում են իրենց տաղանդով Փարիզում, ոչնչի պետք չեն գա մեր կղզուս վրա և իրենց հերթին մեր աշակերտները կլինեն։

Ընթերցո՛ղ, մի՛ սպասեք, որ ես այստեղ ցույց տամ մեր սանի մարմնական վարժություններն ու ձեռքերի ճարպկությունը, բայց տեսե՛ք, թե ինչ ուղղություն եմ տալիս նրա մանկական հետաքրքրություններին. նկատեցե՛ք նրա դատողությունը, նրա հնարագետ միտքը, կանխատեսությունը. տեսե՛ք, թե ինչպես եմ դաստիարակելու նրա իմացականությունը: Նա կցանկանա իմանալ ամեն ինչ, հասկանալ պատճառը այն ամենի, ինչ կտեսնի ու կանի. գործիքից գործիք ես գնալով, միշտ կձգտի հասնել առաջին գործիքին. ոչինչ չի ընդունի ենթադրությամբ. կմերժի սովորել նախնական պիտեիքներ պահանջող ամեն բան, եթե ինքը ծանոթ չէ այդ պիտեիքներին. եթե տեսնի, թե ինչպես են պատրաստում զսպանակը, կկամենա իմանալ, թե ի՞նչպես են պողպատը հանել հանքից. եթե տեսնի, թե ինչպես են սարքում արկղը, կցանկանա իմանալ, թե ի՞նչպես են կտրել ծառը. եթե ինքն է աշխատողը, յուրաքանչյուր գործիքը գործածելիս ինքն իրեն հարց կտա. «Եթե չունենայի այս գործիքը, ի՞նչպես պիտի կարողանայի նմանը պատրաստել, կամ դրանից հրաժարվել»:

Բայց և այնպես, դժվար է խուսափել մի սխալից այն ըբաղմունքների մեջ, որոնցով ուսուցիչը մեծապես շահագրգռված է. այդ այն է, որ միշտ ենթադրում է, թե երեխան նույն ճաշակն ունի, ինչ որ ինքը. զգույշ եղե՛ք, որ երբ դուք տարված եք աշխատանքի հաճույքով, երեխան չձանձրանա՝ առանց համարձակվելու այդ մասին հայտնել ձեզ: Երեխան պետք է լիովին կլանված լինի գործով, բայց դուք պետք է ամբողջովին տարված լինեք երեխայով. ուսումնասիրեցե՛ք, հսկեցե՛ք նրան անդուլ, առանց զգացնելու, կանխազգացե՛ք նրա բոլոր զգացումներն ու հեռացրե՛ք այնպիսիները, որ չպետք է ունենա. վերջապես, նրան զբաղեցրե՛ք այնպես, որ ոչ միայն զգա, թե ինքն օգտակար է գործին, այլև դա հաճույք պատճառի նրան և աստիճանաբար հասկանա, թե ինչ է ծառայում իր արածը:

Արհեստների համագործակցությունը կայանում է արդյունաբերության փոխանակության մեջ, առևտրինը՝ իրերի փոխանակության մեջ, բանկերինը՝ թղթադրամների ու փողի փո-

խանակության մեջ։ Բոլոր այս մտքերը շաղկապված են իրար, իսկ տարրական ծանոթությունները արդեն տրված են. այս բոլորի հիմքը մենք դրել ենք վաղ հասակից, պարտիզպան Ռոբերի օգնությամբ։ Մեզ մնում է միայն ընդհանրացնել այդ նույն մտքերն ու տարածել ավելի շատ օրինակների վրա, երեխային հասկացնելու համար փոխանակության գործողությունը՝ ինքն իր մեջ վերցրած ու զգալի դարձրած՝ բնական պատմության մանրամասնություններով, որոնք վերաբերում են յուրաքանչյուր երկրի յուրահատուկ արտադրանքներին, արվեստի ու գիտության մանրամասնություններով, որ նավագնացությանն է վերաբերում, վերջապես, փոխադրության մեծագույն կամ փոքրագույն դժվարություններով՝ նայած ուղևորի հեռավորության, երկրների, ծովերի, գետերի դրության և այլն։

Ոչ մի հասարակություն չի կարող գոյություն ունենալ առանց փոխանակության, ոչ մի փոխանակություն՝ առանց մի ընդհանուր չափի և ոչ մի ընդհանուր չափ՝ առանց հավասարության։ Այդպիսով, ամեն մի հասարակություն, որպես առաջին օրենք, ունի մի որևէ պայմանական հավասարություն, լինի դա մարդկանց, թե իրերի միջև։

Մարդկանց միջև պայմանական հավասարությունը, որը բոլորովին տարբեր է բնության հավասարությունից, անհրաժեշտ է դարձնում զորական իրավունքը, այսինքն՝ կառավարության ու օրենքները։ Երեխայի քաղաքական գիտելիքները պետք է լինեն հստակ ու սահմանափակ. կառավարության մասին նա ընդհանրապես պետք է գիտենա այն, ինչ կապ ունի սեփականության իրավունքի հետ, որի մասին արդեն որոշ դաղափար ունի։

Իրերի միջև եղած պայմանական հավասարությունը ստեղծել է դրամը, քանի որ դրամը համեմատության մի միջոց է զանազան տեսակ իրերի արժեքը նշելու համար. այդ տեսակետից դրամը հասարակության իսկական կապն է. բայց ամեն ինչ կարող է որպես դրամ ծառայել. անցյալում անասունը դրամ էր, մինչև այսօր էլ բազմաթիվ ժողովուրդներ խեցիներ են գործածում որպես դրամ. Սպարտայում երկաթը

դրամ էր, Շվեդիայում կաշին էր գործածվում որպես դրամ, ոսկին ու արծաթը՝ մեզ մոտ։

Մետաղները, լինելով հեշտ տեղափոխելի, ընդհանրապես ընդունված են որպես փոխանակության միջոց. և մարդիկ այդ մետաղները վերածել են դրամի, որպեսզի յուրաքանչյուր փոխանակության ժամանակ ստիպված չլինեն չափել կամ կշռել, որովհետև դրամանիշը ցույց է տալիս, թե որ կշռին է համապատասխանում. միայն վճռապետն իրավունք ունի դրամ կտրելու, քանի որ միայն նա իրավունք ունի պահանջելու, որ իր վկայակոչումը ճանաչվի իբրև հեղինակություն մի ամբողջ ժողովրդի մեջ։

Այս գլուխի գործածությունը, ինչպես, ինչպես բացատրված է, հասկանալի է նախնիկ ամենաանխելք մարդուն։ Դժվար է իսկույն միմյանց հետ համեմատել տարբեր բնույթի իրերը, օրինակ՝ կտավը ցորենի հետ, բայց մի ընդհանուր չափ գտնելով, ինչպիսին դրամն է, գործարանատիրոջն ու գյուղացուն հեշտ է իրենց փոխանակելիք նյութերի արժեքը վերածել այդ ընդհանուր չափանիշին։ Եթե որոշ քանակությամբ կտավ արժե այսքան գումար, իսկ որոշ քանակությամբ ցորենն էլ արժե միևնույն գումարը, առևտրականը, փոխանակելով իր կտավը այդ ցորենի հետ, արդար փոխանակություն է կատարում։ Այսպիսով, դրամի շնորհիվ է, որ տարբեր ապրանքները համարժեք ու համեմատելի են դառնում։

Մի՛ գնաք սրանից ավելի հեռուն ու մի՛ մտնեք այս դրության բարոյական հետևանքների բացատրության մեջ։ Ամեն ինչում անհրաժեշտ է նախ լավ հայտնաբերել նրա օգտակարությունը և հետո խոսել նրա բացերի մասին։ Եթե դուք փորձեք երեխաներին բացատրել խզումը երևույթների և իրերի միջև, թե ինչպես են դրամից ծնվել հատարակական կարծիքի ամբողջ ցնորքները, թե ինչու դրամով հարուստ երկրները ամեն ինչից աղքատ կլինեն, դուք երեխաների հետ կվարվեք ոչ միայն որպես փիլիսոփաների, այլև որպես իմաստուն մարդկանց հետ ու կկարծեք, թե նրանց սովորեցնում եք այն, ինչ փիլիսոփաներից քչերն են լավ ըմբռնում։

Ինչքա՜ն առատ հետաքրքիր նյութեր կան, որոնց վրա կարելի է բևեռել աշակերտի հետաքրքրասիրությունը, առանց նրա՛նք հեռանալու նրան հասկանալի իրական և նյութական հարաբերություններից, ոչ էլ թույլ տալու, որ նրա մտքում ծագի այնպիսի գաղափար, որը նա չկարողանա ըմբռնել։ Ուսուցչի հմտությունը նրանումն է, որ իրեն թույլ չտա ծանրանալու ոչնչի հետ չկապվող մանրամասների վրա, այլ երեխային անդադար մոտեցնի այն մեծ հարաբերություններին, որ նա մի օր պետք է ճանաչի՝ ճիշտ հասկանալու համար քաղաքացիական հասարակության լավ ու վատ կարգերը։ Պետք է գիտենալ հարմարեցնել այն դրույցները, որոնցով նրան զվարճացնում ենք, մտքի այն ճարտարության հետ, որ տվել ենք նրան։ Այնպիսի մի հարց, որ ուրիշին բոլորովին չէր էլ հետաքրքրի, Էմիլին կդրաղեցնի ամբողջ վեց ամիս։

Մենք հրավիրված ենք ճաշելու մի մեծահարուստի տանը. այնտեղ ամեն ինչ մատնում է խրախճանքի պատրաստություն՝ շատ հրավիրյալներ, բազմաթիվ սպասավորներ, ուտելիքների ճոխ տեսակներ, շքեղ ու նրբաճաշակ սպասեղեն։ Հաճույքի ու տոնախմբության այս ամբողջ սարքավորումը կարող է գլխապտույտ պատճառել անսովոր մարդուն. ես նախազգում եմ, թե ինչ տպավորություն կթողնի այս ամենը իմ պատանի աշակերտի վրա։ Այն ժամանակ, երբ ճաշը չարունակվում է, կերակուրների տեսակները միմյանց են հաջորդում, սեղանի շուրջը աղմկոտ զրույցներ են գնում, ես մոտենում եմ նրան ու ականջին փսփսում. «Ի՞նչ եք կարծում, քանի՞ ձեռքից են անցել այս բոլորը, որ տեսնում եք սեղանի վրա, նախքան այստեղ հասնելը»։ Այս մի քանի խոսքով ինչքա՜ն շատ մտքեր եմ արթնացնում նրա ուղեղի մեջ։ Նույն րոպեին զառանցանքի բոլոր գոլորշիները ցնդում են։ Նա կմտորի, կխորհի, կհաշվի, կանհանգստանա։ Մինչդեռ փիլիսոփաները, գինուց արբեցած, գուցե և հարևանուհուց, ըմբրաջում են ու երեխայություններ անում, նա, իր անկյունը քաշված, ինքն իրեն փիլիսոփայում է. հարցեր է տալիս ինձ, չեմ պատասխանում, հետաձգում եմ մի ուրիշ անգամի. նա անհամբեր է դառնում, մոռանում է ուտելն ու խմելը, շտա-

պոմ է սեղանից վեր կենալ՝ ավելի ազատ ինձ հետ խոսելու համար։ Ինչպիսի՞ նյութ նրա հետաքրքրության համար, ինչպիսի՞ թեմա նրա ուսուցման համար։ Իր առողջ դատողությամբ, որը ոչ մի բան չի ապականել, ի՞նչ կմտածի նա արդյոք այս շռայլ պերճանքի մասին, երբ իմանա, որ աշխարհի բոլոր շրջանները բռնահարկի են ենթարկվել, գուցե քսան միլիոն ձեռք երկար աշխատել են, գուցե հազարավորների կյանք է վոհվել այն բանի համար, որպեսզի կեսօրին նրա առաջ դրվի, մեծ շքով, այն ամենը, որ երեկոյան նա պետք է թողնի զուպարանում։

Ուշադրությամբ հետևեցե՛ք, թե նա քաքուն ինչպիսի եզրակացություններ կհանգի իր սրտի խորքում այս բոլոր դիտողություններից։ Եթե դուք նրան ավելի վաստ եք հոգել, քան ես կարծում եմ, նա գուցե փորձի իր խորհրդածությունները շոտ տալ մի այլ ուղղությամբ և իրեն ենթադրել աշխարհի կարևոր անձնավորություններից մեկը, տեսնելով, թե որքան հոգս ու խնամք են թափում իր ճաշը ճոխացնելու նպատակով։ Եթե դուք նախազգում եք այս դատողությունը, հեշտությամբ կարող եք այն կանխել, կամ գոնե անհապաղ ջնջել նրա տպավորությունը։ Իրերը յուրացնելով դեռևս միմիայն նյութական վայելքի միջոցով, նա նրանց նպատակահարմարությունը կամ աննպատակահարմարությունը դատում է սոսկ զգացական հարաբերություններով։ Աշխատանքով պատրաստված, քաղցածությամբ, աղատ կյանքով, ուրախությամբ համեմված պարզ ու գյուղական ճաշի համեմատությունը իր այժմյան հրաշալի և ճոխ խնջույքի հետ, բավական է նրան զգացնելու, որ այս խնջույքի ամբողջ շքեղությունը նրան ոչ մի իրական օգուտ չի տալիս, որ ինքը նույնքան կուշտ էր գյուղացու տանը ճաշելուց հետո, որքան մեծահարուստի ապարանքում։

Երևակայենք, թե այսպիսի դեպքում մի դաստիարակ ինչ կարող է ասել նրան։ «Հիշեցե՛ք այս երկու ճաշերը և որոշեցե՛ք ինքներդ, թե ո՞րը ավելի հաճույք պատճառեց ձեզ. նրանցից ո՞րը ավելի ուրախ էր, ո՞րտեղ ավելի ախորժակով կերան, ավելի ուրախ խմեցին, ավելի սրտով ծիծաղեցին, ո՞րը ավելի երկար տևեց՝ առանց ձանձրույթի, առանց կարիք

ունենալու նոր սպասների՝ ոգևորությունը վառ պահելու համար։ Սակայն տեսե՛ք տարբերությունը. այս թխորակ հացը, որ ձեզ այնքան դուր է գալիս, պատրաստված է գյուղացու հավաքած ցորենից. նրա պղտոր, թթու, բայց զովացուցիչ ու առողջարար գինին իր այգու խաղողից է. սեղանի սփռոցը՝ իր կանեփից, որ նրա կինը, աղջիկները, սպասուհին են գործել ձմեռը. նրա սեղանի համադամները ոչ մի ուրիշ ձեռք չի պատրաստել, բացի իր ընտանիքի անդամներից. մոտակա չրաղացն ու հարևան շուկան տիեզերքի սահմաններ են նրա համար։ Արդարև, ինչ ավելի վայելք ստացած դուք այն մյուս սեղանի մոտ, հեռավոր երկրների հայթայթած նյութերով և օտար մարդկանց ձեռքերով պատրաստված ճաշից։ Եթե այդ բոլորը ձեզ ավելի լավ ճաշ չտվեց, ի՞նչ շահեցիք այդ առատությունից, ի՞նչ կար այնտեղ, որ հատուկ ձեզ համար պատրաստված լիներ։ Եթե դուք այդ տան տերը լինեիք,— կարող է նա ավելացնել,— այս բոլորը ձեզ համար է՛լ ավելի խորթ կլիներ, որովհետև ձեր բերկրանքն ուրիշների առաջ ցուցադրելու հոգսը վերջիվերջո ձեզնից կխլեր այդ բերկրանքը, և դուք ձեր նեղության գնով ուրիշների հաճույքը կապահովեիք»։

Այս ճառը գուցե շատ գեղեցիկ է, սակայն Էմիլի համար ոչ մի արժեք չունի, քանի որ իր հասկացողությունից վեր է, և քանի որ նրան երբեք չի կարելի թելադրել իր խորհրդածությունները։ **Խոսեցե՛ք, ուրեմն,** նրա հետ ավելի պարզ լեզվով։ Այս երկու փորձից հետո, մի առավոտ ասացե՛ք նրան. «Ո՞րտեղ եք ուզում, որ ճաշենք այսօր. սեղանի երեք քառորդ մասը ծածկող այս արծաթե լեռան ու թղթե ծաղիկների շո՞ւրջը, պճնված կանանց մո՞տ, որոնք ձեզ խամաճիկի տեղ են դնում և ուզում են, որ ասեք ձեր չիմացածը... Թե՞ այս սեղից երկու մղոն հեռու այն գյուղում, այն բարի մարդկանց մոտ, որոնք այնքան ուրախությամբ են ընդունում ու այնքան համեղ սերուցքով են հյուրասիրում մեզ»։ Էմիլի ընտրությունը պարզ է, որովհետև նա ո՛չ շատախոս է, ո՛չ սնապարծ. նա չի կարող տանել նեղությունն ու կաշկանդվածությունը, և մեր բոլոր նուրբ ճաշերը նրան դուր չեն գալիս. ընդհակառակն, նա միշտ պատրաստ է վազել դեպի գյուղ,

չափազանց սիրում է համեղ մրգերը, կանաչեղենը, կաթի սերն ու բարի մարդկանց[1]։ Ճանապարհին խորհրդածությունը ինքն իրեն կգա։ Ես տեսնում եմ, որ այն բազմաթիվ մարդիկ, որոնք աշխատում են այս ճոխ սեղանների համար, զուր ժամանակ են կորցնում կամ բոլորովին չեն մտածում մեր հաճույքի մասին։

Իմ օրինակները, որ գուցե լավ են մեկ անհատի համար, կարող է վատ լինեն հազարավորների համար։ Վերցնելով միայն նրանց ոգին, կարելի է դրանք փոփոխել ըստ կարիքի. ընտրությունը կախված է յուրաքանչյուր երեխայի բնական ընդունակությունների ուսումնասիրությունից, իսկ վերջինը՝ այն ուժերից, որ մենք կառեղծենք՝ այդ ընդունակությունների դրսևորման համար։ Չպետք է երևակայել, թե այն երեք կամ չորս տարվա ընթացքում, որ մենք պիտի ընդգրկենք այստեղ, կարող ենք ամենաարդիական պայմաններում ծնված երեխային բավականաչափ գաղափար տալ բոլոր արվեստների ու բոլոր բնական գիտությունների մասին, որպեսզի հետագայում նա կարողանա ինքնուրույն սովորել. բայց այսպես նրա առաջից անցկացնելով այն բոլոր առարկաները, որ պետք է ճանաչի, մենք նրանցով հնարավորություն ենք տալիս երեխային՝ զարգացնելու իր ճաշակը, տեղանդը, անելու առաջին քայլերը, որ կանի դեպի այն աուարկան, ուր տանում է իր բնական հակումը, և մեզ ցույց տալու, թե որ ճանապարհով պետք է առաջնորդել նրան՝ բնությանը օժանդակելու համար։

Այս սահմանափակ, բայց ճիշտ գիտելիքների շղթայի մի

---

[1] Գյուղի հանդեպ սերը, որ ես վերագրում եմ իմ ամանին, նրա դաստիարակության բնական արդյունքն է։ Բացի այդ, չլինելով ինքնահավան ու կեղծավոր, ինչպիսիք այնքան դուր են գալիս կանանց, նա վերջիններին քիչ է հետաքրքրում, հետևապես և նրանցից ավելի քիչ է հաճույք ստանում ու նրանց շրջանում ավելի քիչ է փչանում, դեռևս չզգալով նրանց հրապույրը։ Ես խուսափել եմ նրան սովորեցնել կանանց ձեռքը համբուրելը, նրանց շողոքորթելը, նույնիսկ այն բանը, որ նրանց պետք է ավելի հարգանք մատուցել, քան տղամարդկանց. իմ անխախտ սկզբունքն է, նրանից չպահանջել մի այնպիսի բան, որի պատճառը չի կարող հասկանալ. արդարև, երեխայի համար ոչ մի պատճառ չկա, որ նա կանանց հանդեպ տարբեր վերաբերմունք ունենա, քան տղամարդկանց հանդեպ։

ուրիշ առավելությունն էլ այն է, որ դրանք ցույց է տալիս իրենց կապակցության, իրենց հարաբերությունների մեջ, յուրաքանչյուրը դնում իր տեղը՝ նրա գնահատության մեջ, նրանից հետացնելով այն նախապաշարումները, որ ունի մարդկանց մեծ մասը ի նպաստ իրենց զարդացրած ընդունակությունների, ընդդեմ այնպիսիների, որոնց անտեսում են։ Նա, ով լավ է տեսնում ամբողջի դասավորությունը, կտեսնի այն տեղը, ուր պետք է լինի յուրաքանչյուր մասը. նա, ով լավ է տեսնում մասերից մեկը և խորապես ճանաչում է այն, կարող է մի գիտնական լինել. բայց մյուսը ողջամիտ, դատող մարդ է, և չպետք է մոռանալ, որ այն, ինչ մենք առաջադրում ենք ստանալ, ավելի շուտ դատողություն է, քան գիտություն։

Բոլոր դեպքերում իմ մեթոդն անկախ է բերածս օրինակներից. նա հիմնված է մարդու՝ իր տարիքի զանազան շրջաններում ունեցած ընդունակությունների չափի ու այդ ընդունակություններին համապատասխան զբաղմունքների ընտրության վրա։ Ես կարծում եմ, որ կարելի կլիներ հեշտությամբ մի ուրիշ մեթոդ գտնել ու դրանով, թերևս, ավելի լավ արդյունքի հասնել. սակայն եթե այդ մեթոդը սակավ հարմարնցված լինի տեսակին, տարիքին, սեռին, կասկածում եմ, որ նույն հաջողությունն ունենա։

Մտնելով այս երկրորդ ժամանակաշրջանը, մենք օգտվեցինք մեր ցանկությունների համեմատությամբ մեր ուժերի կերառատությունից, որպեսզի հեռանանք մեղնից. մենք սավառնեցինք երկնքում, չափեցինք երկիրը, իմացանք բնության օրենքները, մի խոսքով՝ շրջեցինք ամբողջ կղզին. այժմ վերադառնում ենք իրականությանը, անդադարորեն մոտենում ենք մեր բնակավայրին։ Այնտեղ մտնելով, անշափ երջանիկ ենք, որ մեզ սպառնացող թշնամին դեռևս չի տիրացել նրան, բայց պատրաստվում է գրավել։

Ի՞նչ է մնում մեզ անել՝ մեր ամբողջ շրջապատը դիտելուց հետո. այն, որ մեր օգտին փոխարկենք ինչ-որ կարող ենք յուրացնել, ու մեր հետաքրքրությունից օգտվենք՝ մեր բարեկեցությունը բարելավելու համար։ Մինչև այժմ մենք պատրաստել ենք ամեն տեսակի գործիքներ, առանց գիտե-

Նալու, թե որը մեզ պետք կգա։ Պիտանի չլինելով մեզ, գուցե նրանք ուրիշին օգտակար կլինեն, և, գուցե, մեր հերթին, մենք էլ ուրիշների ունեցածի կարիքն ունենանք։ Այդպիսով մենք կօգտվենք նման փոխանակություններից։ Բայց այդ անելու համար պետք է իմանալ փոխադարձ կարիքները, պետք է ամեն մեկն իմանա, թե ինչ ունեն ուրիշները իրեն համար պետքական, ու ինքը, փոխադարձաբար, ինչ կարող է տալ նրանց։ Ենթադրենք, թե տասը մարդ կա, որից յուրաքանչյուրն ունի տասը տեսակ կարիք։ Պետք է, որ յուրաքանչյուրն իր կարիքների համար ձեռնարկի տասը տեսակ աշխատանք. բայց նկատի ունենալով բնական ընդունակության ու տաղանդի տարբերությունը, մեկը մի աշխատանքում ավել հաջողություն կունենա, մյուսը՝ մի ուրիշում։ Բոլորը կոչված լինելով տարբեր բաներ անելու, միևնույն բանը կանեն, ու արդյունքը կլինի ոչ-բավարար։ Այս տասը մարդկանցից կազմենք մի ընկերություն, թո՛ղ յուրաքանչյուրն զբաղվի իր և մյուս իննի համար, այն գործով, որն իրեն ավելի հարմար է. յուրաքանչյուրը պիտի օգտվի մյուսների ընդունակություններից այնպես, ինչպես եթե ինքը մենակ ունենար այդ բոլոր ընդունակությունները. յուրաքանչյուրը պիտի կատարելագործի իր տաղանդը մշտական վարժություններով, և հետևանքը կլինի այն, որ բոլոր տասն էլ լիովին բավարարվելով, մի ավելցուկ էլ կունենան մյուսների համար։ Ահա մեր ամբողջ հաստատությունների ակներև սկզբունքը։ Իմ նյութից դուրս է այստեղ քննել նրա հետևանքները. այդ ես արել եմ մի ուրիշ գրքում [1]։

Այս տեսակետից, այն մարդը, որ իրեն կդիտի որպես մի առանձնացած էակ, ոչ ոքից կախում չունեցող և ինքն իրեն բավարարող, թշվառի մեկը միայն կարող է լինել. նրա գոյությունն անգամ հնարավոր չէր լինի, որովհետև ամբողջ աշխարհը գտնելով ծածկված քոնով ու իմով և, բացի իր էեիական մարմնից, ուրիշ ոչինչ չունենալով, ո՞րտեղից կարող էր ստանալ իրեն պետքականը։ Դուրս գալով բնական վիճակից, մենք մեր նմաններին էլ ենք ստիպում դուրս գալ

[1] *«Ճշտո անհավասարության մասին»։*

այնտեղից. ոչ ոք այնտեղ չի կարող մնալ հակառակ ուրիշների. և իրոք, այնտեղից դուրս գալ կլիներ այնտեղ մնալ յանկանալը՝ առանց ապրելու հնարավորության, որովհետև բնության առաջին օրենքը ինքնապահպանման մասին մտածելն է։

Այսպիսով, աստիճանաբար երեխայի մտքի մեջ առաջանում են հասարակական հարաբերությունների գաղափարները, նույնիսկ նախքան այդ հասարակության ակտիվ անդամ լինելը։ Էմիլը տեսնում է, որ իրեն անհրաժեշտ գործիքներն ունենալու համար պետք է ունենա նաև ուրիշների համար պետքական գործիքներ, որոնք փոխանակելով կարողանա ստանալ նրանց տրամադրության տակ գտնվող և իրեն անհրաժեշտ իրեր։ Նա հեշտությամբ նրան կղգացնեմ այս փոխանակությունների կարիքն ու դրանցից օգտվելու ձևը։

«Ձերդ գերազանցություն, չէ՞ որ ես պետք է ապրեմ», ասում էր մի խեղճ երգիծաբան այն մինիստրին, որը նրան մեղադրում էր այդ խայտառակ զբաղմունքի համար։ «Ես դրա անհրաժեշտությունը չեմ տեսնում», պատասխանեց սառնորեն բարձր պաշտոնատարը։ Այս պատասխանը, որը հրաշալի էր մի մինիստրի համար, բարբարոս և կեղծ կլիներ ուրիշ որևէ մեկի շուրթերին։ Պետք է որ ամեն մարդ ապրի։ Այս փաստը, որին յուրաքանչյուր ոք տալիս է առավել կամ նվազ նշանակություն, նայած թե ինչ աստիճանի մարդկայնություն ունի, ինձ թվում է, թե անվիճելի է այն մարդու համար, ով այդ փաստը կգործադրի իր վերաբերմամբ։ Քանի որ բնության մեզ տված հակակրություններից ամենազորավորն այն է, որ մենք զգում ենք մահվան հանդեպ, ուրեմն բնությունը ամեն ինչ թուլլատրում է մարդուն, եթե նա ուրիշ միջոց չունի ապրելու։ Այն սկզբունքները, որոնց հիման վրա առաքինի մարդը սովորում է արհամարհել իր կյանքն ու այն զոհել իր պարտականություններին, շատ հեռու են այս նախնական պարզությունից։ Որովհետև՞ այն ժողովուրդներին, որոնց մոտ կարելի է բարի լինել առանց հատուկ ջանքերի, և արդար՝ առանց առաքինության։ Եթե աշխարհում կա այնպիսի թշվառ պետություն, ուր մարդ չի կարող ապրել առանց վատություն անելու և ուր քաղաքացիները խարեբա են դառ-

նում կարիքից դրդված, այդ դեպքում ոչ թե չարագործին պետք է կախել, այլ նրան, ով դրան պատճառ է եղել։

Հենց որ Էմիլը ճանաչի, թե ինչ է կյանքը, իմ առաջին հոգսը կլինի նրան սովորեցնել ինչպես պահել այն։ Մինչև այժմ ես չեմ տարբերել դրությունները, աստիճաններըը, հարստությունները. հետագայում էլ չեմ տարբերի, որովհետև մարդը նույնն է բոլոր վիճակներում. հարուստը ավելի մեծ ստամոքս չունի, քան աղքատը, ու նրանից լավ չի մարսում. տերը իր ստրուկից ավելի երկար և ուժեղ բազուկներ չունի, ոչ էլ ազնվականը՝ ավելի բարձր հասակ, քան ժողովրդից դուրս եկած մարդը, և, վերջապես, բնական կարիքները ամեն տեղ միևնույնը լինելով, դրանց բավարարելու միջոցները ամեն տեղ հավասար պետք է լինեն։ Մարդուն տվե՛ք մարդու դաստիարակությունը և ոչ թե այն, ինչ նրանը չէ։ Չե՞ք տեսնում, որ աշխատելով նրան կազմավորել բացառապես մի դրության համար, դուք նրան անպետք եք դարձնում մի ուրիշի համար, և, եթե բախտն այդպես կամենա, դուք աշխատած կլինեք միայն նրան դժբախտացնելու համար։ Ի՞նչն է ավելի ծիծաղելի, քան այն, որ բարձր ազնվականը, չքավոր դառնալով, թշվառության մեջ պահի իր տոհմային նախապաշարումները։ Ի՞նչն է ավելի տգեղ, քան այն, որ աղքատացած հարուստը, հիշելով թշվառության հանդեպ զոյություն ունեցող արհամարհանքը, ինքն իրեն մարդկանց ամենահետինը կարծի։ Մեկը որպես ապրելու միակ միջոց ունի հասարակական խաբեբայության արհեստը, մյուսը՝ ստորաքարշ սպասավորինը, հետևյալ գեղեցիկ խոսքով՝ «Չէ՞ որ ինձ էլ ապրել է պետք»։

Դուք վստահում եք հասարակական ներկա իրավակարգին, առանց մտածելու, որ այդ իրավակարգը ենթակա է անխուսափելի հեղաշրջումների, և որ դուք չեք կարող ո՛չ նախատեսել, ո՛չ էլ կանխել ձեր երեխաներին սպասող հեղաշրջումը։ Մեծը փոքր է դառնում, հարուստը՝ աղքատ, արքան՝ հպատակ. բախտի հարվածները մի՞թե այնքան հազվադեպ են, որ դուք կարծում եք, թե կկարողանաք ազատվել նրանցից։ Մենք մոտենում ենք տագնապալի դրու-

թյան ու հեղափոխությունների դարաշրջանին[1]։ *Ո՞վ կարող է ձեզ ասել, թե ի՞նչ կլինենք այդ ժամանակ։ Այն ամենը, ի՞նչ մարդիկ են չինել, մարդիկ էլ կքանդեն, միայն բնության կազմած նկարագրերն են անջնջելի. բայց բնությունը ո՛չ իշխան է ստեղծում, ո՛չ հարուստ, ո՛չ էլ ազնվական։ Ուրեմն, ի՞նչ պիտի անի նվաստության մեջ այն սատրապը, որին դուք դաստիարակել եք մեծության համար։ Ի՞նչ պիտի անի թշվառության մեջ այն վաշխառուն, որ միայն ոսկով գիտե ապրել։ Ի՞նչ պիտի անի ամեն ինչից զրկված այն պերճասեր հիմարը, որ ոչ մի աշխատանքի ընդունակ չէ և գտնվում է իրեն խորթ միջավայրում։ Երջանիկ է նա, ով կարող է լքել իրենից հեռացող վիճակն ու մնալ մարդ, հակառակ նրան վիճակված բախտի։ Թո՛ղ ինչքան ուզում են գովեն այն պարտված թագավորին, որ, կատաղած, ուզում է թաղվել գահի բեկորների տակ. իսկ ես արհամարհում եմ նրան, տեսնում եմ, որ նա միայն իր թագով է ապրում, ու եթե թագավոր չէ, ոչնչություն է. բայց նա, ով գահը կորցնում է ու նրանից ձեռք է քաշում, գահից բարձր է կանգնած։ Թագավորական կարգից, որի գործը նույնքան կարող է կատարել և՛ վատը, և՛ չարը, և՛ հիմարը, նա բարձրանում է մարդկանց կարգը, որին այնքան քիչ մարդիկ են արժանի։ Այդպես նա հաղթահարում է ճակատագիրը, ճակատում է նրան, ամեն ինչով միայն իրեն է պարտական, ու երբ այլևս նրան ուրիշ բան չի մնում ցույց տալու, քան իրեն, տեսնում ենք, որ բնավ էլ ոչնչություն չէ, որ նա մի բան արժե։ Այո, ես հարյուր անգամ գերադասում եմ տեսնել Սիրակուզայի թագավորին Կորնթոսի պարոցի ուսուցչի պաշտոնում, Մակեդոնիայի արքային՝ գրագիր Հռոմում, քան մի դժբախտ Տարկենի, որ չգիտի, թե ինչ պիտի անի, եթե չիշխե, քան երեք թագավորությունների տիրոջ ժառանգին, որ խաղալիք է դառնում իր թշվառությունը*

---

[1] *Ես անհնար եմ համարում, որ Եվրոպայի մեծ ինքնակալությունները դեռևս երկար կյանք ունենան. բոլորը փայլեցին, ու ամեն մի պետություն, որ փայլում է, իր անկման շրջանումն է։ Իմ կարծիքը ես հիմնավորում եմ շատ ավելի լուրջ պատճառներով, քան այս ճշմարտությունը, սակայն նպատակահարմար չեմ գտնում հայտնել. ամեն մեկը շատ լավ տեսնում է դրանք։*

ծաղրողի ձեռքին, թափառում է արքունիքից արքունիք, ամեն տեղ աջակցություն խնդրելով, բայց միայն վիրավորանք գտնելով, որովհետև, բացի իշխանությունից, ուրիշ ոչ մի արհեստ չգիտի։

Մարդը և քաղաքացին, ով էլ որ լինի, հասարակության մեջ, բացի իրենից ուրիշ բան չունի մուծելու. բոլոր մյուս ունեցածները արդեն այնտեղ են՝ հակառակ իր կամքին. և եթե որևէ մեկը հարուստ է, կա՛մ ինքը չի օգտվում իր հարստությունից, կա՛մ հասարակությունն էլ է օգտվում դրանից։ Առաջին դեպքում նա գողանում է ուրիշներից այն, որից ինքն իրեն զրկում է, իսկ երկրորդ դեպքում՝ նրանց ոչինչ չի տալիս։ Այդպիսով, հասարակության համեմատ նրա պարտքը նույնությամբ մնում է, քանի որ վճարում է միայն իր ունեցվածքով։ «Բայց իմ հայրը, այն շահելով, ծառայել է հասարակությանը...»։ Թո՛ղ այդպես լինի. նա վճարել է իր պարտքը, բայց ոչ ձերը։ Դուք ուրիշներին ավելի եք պարտական, քան եթե աղքատ ծնված լինեիք, որովհետև ծնվել եք բախտավոր պայմաններում։ Արդարացի չէր լինի, որ այն, ինչ մի մարդ արել է հասարակության համար, մի ուրիշին ազատեր նրա հանդեպ ունեցած պարտականությունից. յուրաքանչյուր ոք, ամբողջապես ինքն իրեն պարտական լինելով, միայն իր համար կարող է վճարել. ոչ մի հայր չի կարող որդուն փոխանցել իր նմաններին անօգտակար լինելու իրավունքը. բայց և այնպես, նա այդ է անում, ըստ ձեր կարծիքի նրան փոխանցելով իր հարստությունները, որոնք աշխատանքի փաստն ու արժեքն են հանդիսանում։ Նա ով առանց աշխատելու մտնում է այն, ինչ ինքը չի վաստակել, գրպանում է. մի հասարակ, որին պետությունը վճարում է, որպեսզի ոչինչ չանի, իմ կարծիքով՝ բնավ չի տարբերվում այն ավազակից, որն ապրում է անցորդների հաշվին։ Հասարակությունից մեկուսացած մարդը, ոչ ոքի ոչինչ պարտական լինելով, իրավունք ունի ապրելու ինչպես ցանկանում է. բայց հասարակության մեջ, որտեղ անհրաժեշտորեն ապրում է ուրիշների հաշվին, նա պարտական է աշխատանքով վճարել իր պահպանման գինը. այստեղ ոչ մի բացառություն լինել չի կարող։ Ուրեմն, աշխատելը հասարակական մարդու համար

անհրաժեշտ պարտականություն է։ Հարուստ թե աղքատ, ուժեղ թե տկար, ամեն մի անգործ քաղաքացի խաբեբա է։

Մարդուն ապրելու հնարավորություն տվող բոլոր զբաղմունքների մեջ ամենից ավելի բնական վիճակին մոտեցնողը ձեռքի աշխատանքն է. բոլոր մասնագետների մեջ բախտից ու մարդկանցից ամենից ավելի անկախը արհեստավորն է։ Արհեստավորը միայն իր աշխատանքից կախում ունի. նա ազատ է, այնքան է ազատ, ինչքան գյուղացին է ստրուկ, որովհետև վերջինս մի արտ ունի, որի բերքն ուրիշին է պատկանում։ Թշնամին, թագավորը, մի հզոր հարևան, մի դատավարություն կարող են խլել նրանից այդ արտը։ Այդ արտով կարելի է նրան հաղար տեսակ նեղություն տալ. բայց հենց որ ուզեն նեղել արհեստավորին, նա իսկույն պատրաստում է իր կապոցը, վերցնում իր բազուկներն ու գնում։ Բայց և այնպես, գյուղատնտեսությունը մարդու առաջին արհեստն է, ամենից պատվավոր, ամենից օգտակար, հետևապես և ամենից ազնիվ արհեստը։ Ես Էմիլին չեմ ասում. «Սովորի՛ր գյուղատնտեսությունը». նա այդ գիտի։ Գյուղական բոլոր աշխատանքներին քաջ ծանոթ է նա, նրանցով է սկսել, նրանց էլ անդադար վերադառնում է։ Ես նրան ասում եմ. «Մշակի՛ր քո հայրերի ժառանգությունը։ Բայց եթե դու կորցնես այդ ժառանգությունը, կամ եթե այդպիսին չունես, այն ժամանակ ի՞նչ պետք է անես։ Մի արհեստ սովորի՛ր»։

«Իմ որդին արհեստ սովորի՞, իմ որդին արհեստավոր լինի՞։ Պարո՛ն, մտածու՞մ եք, թե ինչ եք ասում»։ Ես ձեզնից լավ եմ մտածել, տիկի՛ն, դուք ցանկանում եք նրան դարձնել միայն լորդ, մարքիզ, իշխան, մի օր էլ՝ գուցե ոչնչությունից էլ պակաս մի բան. իսկ ես ցանկանում եմ նրան օժտել այնպիսի մի կոչումով, որը չի կարող երբեք կորցնել և որը նրան պատիվ կբերի բոլոր ժամանակներում. ցանկանում եմ նրան բարձրացնել մարդու աստիճանին։ Ինչ էլ որ ասեք, որպես այդպիսին նա իրեն հավասարներ սակավ կունենա, քան այն դիրքում, ինչ դուք կտաք նրան։

Տառն սպանում է, իսկ ոգին՝ ապրեցնում։ Արհեստը պետք է սովորել ոչ թե արհեստ գիտենալու, այլ արհեստն արհա-

մարհող նախապաշարումները հաղթահարելու համար։ Դուք երբեք ստիպված չեք աշխատել ապրուստ հայթայթելու նպատակով։ Է՛հ, ինչ արած, ավելի վատ ձեզ համար։ Բայց միևնույնն է, մի՛ աշխատեք կարիքից ստիպված, աշխատեցե՛ք փառքի համար։ Իջե՛ք արհեստավորի վիճակին՝ ձեր վիճակից վեր բարձրանալու համար։ Բախտն ու իրերը ձեզ ենթարկելու համար ջանացե՛ք նախ նրանցից անկախ լինել։ Կարծիքի միջոցով իշխելու համար նախ իշխեցե՛ք այդ կարծիքին։

Հիշեցե՛ք, որ ձեզնից տաղանդ չէ, որ պահանջում եմ, այլ մի արհեստ, իսկական արհեստ, զուտ մեքենական մի արվեստ, որտեղ ձեռքերը գլխից ավելի են աշխատում, որը դեպի հարստություն չի տանում, բայց որով կարելի է ապրել առանց հարստության։ Այնպիսի մեկին, ում երբեք հացը պակասելու վտանգ չեմ, ես տեսել եմ հայրեր, որոնք կանխատեսություններն այնքան առաջ են տանում, որ երեխաներին կրթելու գործին միացնում են այնպիսի գիտելիքների յուրացումը, որ, կարիքի դեպքում, նրանց կօգներ իրենց ապրուստը ճարելու։ Այդ կանխատես հայրերը կարծում են, թե շատ բան են անում, բայց ոչինչ չեն անում, որովհետև այն միջոցները, որով նրանք կարծում են հարստացնել իրենց զավակներին, կախում ունեն նույն այն պատահականությունից, որից ցանկանում են պաշտպանել նրանց։ Այնպես որ, այդ բոլոր զեղեցիկ ընդունակություններով հանդերձ, եթե նա, ով դրանցով օժտված է, դրանք գործածելու համար նպաստավոր պայմաններ մեջ չի դտնվում, թշվառությունից կկործանվի՝ ոչ մի ընդունակություն չունեցողի նման։

Երբ հարց է ծագում խորամանկության և մեքենայությունների դիմելու, ավելի լավ է դրանք գործադրել առատության մեջ մնալու համար, քան թե թշվառության ծոցից դրևէ բան ետ խլելու՝ նախկին դրությանը վերադառնալու համար։ Եթե դուք մշակում եք այնպիսի արվեստներ, որոնց հաջողությունը կախված է արվեստագետի համբավից, եթե դուք այնպիսի աշխատանքների եք պատրաստվում, որոնք կարելի է ձեռք բերել լոկ հովանավորության շնորհիվ, ինչի՞ կծառայեն դրանք, երբ, իրավացիորեն զզվելով աշխարհից, դուք կարհամարհեք այն միջոցները, առանց որոնց չի կարելի

հաջողության հասնել։ Դուք ուսումնասիրել եք վեհապետների քաղաքականությունն ու շահերը, այդ շատ լավ է. բայց ինչի՞ կծառայեն այդ ծանոթությունները, եթե դուք չեք կարող հասնել մինիստրներին, պալատականուհիներին, կաբինետների պետերին, եթե դուք չգիտեք նրանց հաճոյանալու արվեստը, եթե նրանք ձեր մեջ չեն գտնում այն խարդախ մարդուն, որ իրենց պետք է։ Դուք ճարտարապետ կամ նկարիչ եք, լավ. բայց հարկավոր է, որ ճանաչեն ձեր տաղանդը։ Մի՞թե մտածում եք առանց նախապատրաստության նկարչական սալոնում նկար ցուցադրել։ Օ՛, այդպիսով գործը առաջ չի գնա։ Պետք է Ակադեմիայի անդամ լինել, նույնիսկ այնտեղ պաշտպան ունենալ՝ սպասի մի անկյունում մի անշուք տեղ ստանալու համար։ Թողե՛ք քանոնն ու վրձինը, մի կառք վերցրե՛ք ու սլացե՛ք տնից-տուն. այդպիսով են հռչակ ձեռք բերում։ Դուք պետք է գիտենաք, որ բոլոր այդ նշանավոր դռները շվեյցարներ ու դռնապաններ ունեն, որոնք շարժումներից են միայն հասկանում, և որոնց ականջները իրենց ձեռքերի մեջ են։ Ուզում եք սովորեցնե՞լ ձեր սովորածը, լինել աշխարհագրության, մաթեմատիկայի, լեզվի, երաժշտության կամ նկարչության ուսուցի՞չ, դրա համար էլ դպրոցականներ են պետք, իսկ այդպիսիներ ունենալու համար պետք է շոյել իմանալ։ Նկատի ունեցե՛ք, որ ավելի կարևոր է շռայլատան լինել, քան ընդունակ, ու եթե, բացի ձեր մասնագիտությունից, ոչինչ չգիտեք, միշտ էլ տգետ կլինեք։

Տեսնու՞մ եք, թե այս բոլոր փայլուն ընդունակություններն ինչքան խախուտ են, թե ինչքան ուրիշ գիտելիքներ են հարկավոր նրանցից օգտվելու համար։ Իսկ ի՞նչ պիտի լինի ձեր վիճակը այդ գարշելի ստորացման մեջ։ Զախորդությունները, առանց դաստիարակելու, ձեզ նվաստացնում են. դուք առավել քան երբևէ խաղալիք եք հասարակական կարծիքի ձեռքում, ի՞նչպես պիտի կարողանաք բարձրանալ նախապաշարումներից վեր, որոնք ձեր բախտի տնօրինողներն են։ Ի՞նչպես կարող եք արհամարհել այն ստորությունները ու մոլությունները, որոնց կարիքն է զգացվում ապրուստ ձեռք բերելու համար։ Դուք մինչև այժմ կախում ունեիք հարստություններից, հիմա կախում ունեք հարուստներից. դուք սոսկ

վատթարացրիք ձեր սուրկուբյունն ու դրան ավելացրիք թշվառությունը։ Եվ ահա դուք այժմ աղքատ եք՝ առանց ազատ լինելու. սա ամենավատ դրությունն է, որ կարող է մարդուն վիճակվել։

Բայց, ապրելու համար փոխանակ դիմելու այն բարձր գիտելիքներին, որոնք կոչված են ավելի շուտ հոգին սնելու, և ոչ թե մարմինը, եթե դուք դիմեք ձեր ձեռքերի օգնությանը, բոլոր դժվարությունները կչքանան, բոլոր խորամանկություններն անօգուտ կլինեն. ձեզ համար միջոցը միշտ պատրաստ կլինի, երբ կգա ժամանակը այն գործածելու. ուղղամտություն ու պատիվը այլևս իմանքին արգելք չեն լինի. դուք այլևս կարիք չեք ունենա լինել մեծերի առաջ ստոր ու խաբեբա, խորթախներին՝ քծնող ու սողացող, բոլորին զզվելի հաճոյակատար, փոխառու կամ գող, ինչ որ համարյա նույն բանն է, եթե ոչինչ չունեք. ուրիշների կարծիքը երբեք ձեզ վրա չի ազդի, ստիպված չեք լինի ոչ ոքի շողոմել, ոչ մի հիմարի շողոքորթել, ոչ մի շվեյցարի համոզել, ոչ մի կուրտիզանուհու վճարել և, որ ամենից վատն է, խնկարկել։ Ո՛չ սրիկաները մեծ գործարքներով զբաղվեն, այդ ձեր գործը չէ. դա չի խանգարի բնավ, որ դուք, ձեր համեստ կյանքում, լինեք պատվավոր և ուտելու հաց ունենաք։ Դուք կմտնեք ձեր սովորած մասնագիտության առաջին խանութին ու կասեք. «Վարպե՛տ, ես աշխատանքի կարիք ունեմ»։ «Ընկե՛ր, անցե՛ք այնտեղ, աշխատեցե՛ք»։ Ճաշի ժամից առաջ դուք արդեն շահած կլինեք ձեր ճաշը. եթե դուք չանասեր եք ու սակավապետ, ութ օր չանցած՝ կվաստակեք ձեր ապրուստը հաջորդ ութ օրվա համար, կապրեք ազատ, առողջ, համաձայնակ, աշխատունակ, արդար։ Ժամանակն էլ այսպիսով զուր անցած չի լինի։

Իմ որոշակի ցանկությունն է, որ Էմիլը որևէ արհեստ սովորի։ Գոնե մի պատվավոր արհեստ, կասեք դուք ինձ։ Ի՞նչ է նշանակում այդ բառը։ Հասարակությանը օգտակար ամեն մի արհեստ մի՛թե պատվավոր չէ։ Ես չեմ ցանկանում, որ նա լինի ո՛չ ասեղնագործ, ո՛չ ոսկերիչ, ո՛չ չնարակող, ինչպես Լոքի ազնվականը. չեմ ուզում, որ լինի ո՛չ երաժիշտ, ո՛չ

կատակերգու, ո՛չ էլ գրող[1]։ Այս և նման այլ պրոֆեսիաներից դուրս քո՛ղ նա վերցնի այն, ինչ կամենում է. ես ոչնչով նրան չեմ խանգարի։ Գերադասում եմ, որ կոշկակար լինի, քան թե բանաստեղծ. ավելի լավ է ճանապարհները սալարկի, քան թե հախճապակու վրա ծաղիկներ նախշի։ Բայց դուք կասեք, թե ոստիկանները, լրտեսները, դահիճները օգտակար մարդիկ են։ Պետությունից է կախված, որպեսզի նրանց օգտակարության կարիքը բնավ չլինի։ Բայց անցնենք առաջ. ես սխալվել եմ. բավական չէ մի օգտակար արհեստ ընտրել, պետք չէ նաև, որ այդ արհեստը կիրառող մարդիկ անհրաժեշտորեն օժտված լինեն այնպիսի հոգևկան ստոր հատկություններով, որոնք չեն հաշտվում մարդկային սկզբունքների հետ։ Ուրեմն, ինչպես վերև ասացինք, վերցնենք մի պատվավոր արհեստ, բայց միշտ հիշենք, որ առանց օգտակարության չկա պատվավորություն։

Մեր դարի մի հռչակավոր հեղինակ[2], որի գրքերը լի են մեծ-մեծ ծրագրերով ու սահմանափակ հայացքներով, երդվել էր, ինչպես իր ուխտի բոլոր քահանաները, սեփական կին չունենալ, բայց անբարոյականության մեջ իրեն համարելով մյուսներից ավելի բարեխիղճ, որոշեց գեղեցիկ աղախիններ ունենալ, որոնց հետ նա ըստ կարելվույն գործածում էր այն վիրավորանքը, որ հասցրել էր իր ցեղին այդ հանդուգն պարտավորությամբ։ Նա քաղաքացիական պարտականություն էր համարում նոր քաղաքացիներ տալ հայրենիքին և այդպիսով բազմացնում էր արհեստավորների դասակարգը։ Հենց որ այդ երեխաները մեծանում էին, նրանց սովորեցնում էր իրենց ճաշակով որևէ արհեստ, բացառությամբ անօգուտ, ընչին, նորաձևության հետ կապված, արհեստների, ինչպես օրինակ՝ կեղծամագործները, որոնք բնավ անհրաժեշտ չեն

---

[1] Դուք կասեք, թե ես այդպիսին եմ։ Ճիշտ է, խոստովանում եմ, որ ջավոջ սրտի ես գրող եմ, և իմ սխալները, որոնք, կարծում եմ, բավականաչափ քավել եմ, իրավունք չեն տա ուրիշներին՝ ընկնել այդ նույն սխալների մեջ։ Ես գրում եմ ոչ թե իմ մեղքերը քավելու համար, այլ արգելելու իմ ընթերցողներին ընդօրինակել դրանք։

[2] Աբբա Սեն-Պիեռ։

և մեկ օրից մյուսը անօգուտ կարող են լինել, քանի դեռ բնությունը չի մերժում մեզ մազեր տալ։

Ահա թե ինչ ուղղության պետք է հետևենք էմիլի համար արհեստ ընտրելիս. կամ ավելի ճիշտ՝ ոչ թե մենք, այլ ինքն է, որ պետք է կատարի այդ ընտրությունը, որովհետև այն սկզբունքները, որոնցով նա տոգորված է, նրա մեջ անխախտ պահելով արհամարհանքը դեպի անօգուտ բանները, նրան երբեք թույլ չեն տա իր ժամանակը վատնել անարժեք բաների վրա, և իրերի արժեքը նա կգնահատի միայն նրանց իրական օգուտով. նրան հարկավոր է այնպիսի մի արհեստ, որն օգտակար լինի Ռոբինզոնին՝ իր կղզու վրա։

Նրեխային ցուցադրելով քաղաքյան ու արվեստի արտադրանքները, զրգռելով նրա հետաքրքրությունը, հետևելով, թե նրան ո՞ւր է առաջնորդում այդ հետաքրքրությունը, կալ ելի է ուսումնասիրել նրա ճաշակը, հակումները, ձգտումներն ու տեսնել նրա հանճարի առաջին կայծերի փայլելը, եթե նա իսկապես ունի կանխորոշված մի հանճար։ Բայց կա ընդհանուր մի սխալ, որից պետք է խուսափել. դա պատահականության արդյունքը տաղանդի աշխուժությանը վերագրելն է և մարդու ու կապկի համար ընդհանուր հատկություն հանդիսացող նմանողության ոգին որպես այս կամ այն արվեստի նկատմամբ հակում համարելը, քանի որ այդ ոգին թե՛ մեկին և թե՛ մյուսին մեքենաբար մղում է կատարելու այն, ինչ տեսնում է, որ կատարում են ուրիշները, առանց իմանալու, թե դրանք ինչի կարող են ծառայել։ Աշխարհը լիքն է այնպիսի արհեստավորներով ու, մանավանդ, արվեստագետներով, որոնք չունեն իրենց կիրառած արվեստի բնական տաղանդը, որոնց դեպի այդ արվեստն են մղել փոքր տարիքից, ինչի ուրիշ նկատառումներով, լինի խաբվելով առերևույթ մի ձոնդից, որը կարող էր նույնպես նրանց մղել որևէ մի ուրիշ արվեստի, եթե նախապես տեսած լիներին դրա գործադրումը։ Մեկը թմրուկի ձայն է լսում ու իրեն երևակայում է զորավար, մի ուրիշը տեսնում է, թե ինչպես են կառուցում, և ուզում է ճարտարապետ դառնալ։ Յուրաքանչյուր ոք հրապուրվում է իր տեսած արհեստով, երբ գտնում է, որ այդ արհեստը հարգանք է վայելում։

Ես մի սպասավոր եմ ճանաչում, որ տեսնելով իր տիրոջ նկարելն ու գծելը, մտադրվեց լինել նկարիչ ու գծագրիչ։ Դա վճռելուց անմիջապես հետո վերցրեց մատիտը, որը ցած էր դնում վրձինը ձեռք առնելու համար միայն։ Առանց դասի և առանց կանոնի սկսեց նկարել ինչ որ ընկավ ձեռքի տակ։ Ամբողջ երեք տարի անցկացրեց թուղթ սևացնելով. բացի իր ծառայությունից, ոչ մի բան չկարողացավ նրան խլել այդ աշխատանքից, առանց մի րոպե վհատվելու այն միջակ հաջողություններից, որ վաստ պայմանները տալիս էին նրան։ Ես նրան տեսա ամբողջ վեց ամիս, ամռան կիզիչ շոգին, դեպի հարավ նայող մի փոքր նախասենյակում, որտեղից անցնելիս իսկ մարդ շնչահեղձ էր լինում, նստած կամ ավելի շուտ՝ ամբողջ օրը գամված իր աթոռին, մի գնդի առաջ, այդ գունդը նկարելիս, վերստին նկարելիս, սկսելով ու վերսկսելով անընդհատ, մի անընդունելի համառությամբ, մինչև իր ապագա գունդը այնպես ստացվեց, որ գոհ մնաց իր աշխատանքից։ Վերջապես, քաջալերվելով իր տիրոջից և առաջնորդվելով ինչ-որ արվեստագետի կողմից, նրան հաջողվեց թողնել սպասյակի զգեստն ու ապրել իր վրձինով։ Նա հատավ այդ աստիճանին ու նրանից առաջ չի գնաց։ Այդ պարկեշտ տղայի հաստատակամությունն ու հարատևությունը գովելի են։ Նա միշտ կգնահատվի իր փութաջանության, իր հավատարմության, իր բարքերի համար, բայց միշտ էլ կնկարի ցուցանակներ։ Ո՞վ կարող էր չխաբվել նրա եռանդից ու նրան ճշմարիտ տաղանդի տեղ չդնել։ Մեծ տարբերություն կա մի գործից հաճույք զգալու և դրանում ընդունակ լինելու միջև։ Կարծվածից ավելի նուրբ դիտողականություն է պետք, վստահ լինելու համար մի երեխայի ճշմարիտ ընդունակությանն ու իսկական ճաշակին, երեխա, որն ավելի շուտ իր ցանկություններն է ցույց տալիս, քան ընդունակությունները, և որին միշտ էլ դատում են հիմնվելով առաջինի վրա, չկարողանալով ուսումնասիրել երկրորդը։ Ցանկալի է, որ մի իմաստուն մարդ մեզ արվեստի մի ձեռնարկ տա՝ երեխաներին ուսումնասիրելու համար։ Շատ կարևոր է ճանաչել այդ արվեստը. ո՛չ հայրերը, ո՛չ էլ ուսուցիչները դեռևս նրա տարրական գիտելիքներին ծանոթ չեն։

Բայց գուցե մենք այստեղ չափազանց կարևորություն ենք տալիս որևէ արվեստի ընտրությանը։ Քանի որ խնդիրը ձևերի աշխատանքի մասին է, այդ ընտրությունը նշանակություն չունի էմիլի համար. նա արդեն ավելի քան կիսով չափ, կատարել է իր աշակերտությունը՝ այն վարժություններով, որոնցով մենք նրան զբաղեցրել ենք մինչև այսօր։ Ի՞նչ էք ուզում, որ նա անի. նա ամեն ինչի պատրաստ է՝ արդեն գիտի գործածել բահն ու փոցխը, գիտի օգտագործել խառատի հաստոցը, մուրճը, փայտի քերիչը, խարտոցը, բոլոր արհեստների գործիքներին նա արդեն ծանոթ է։ Մնում է միայն սովորել այդ գործիքներից մեկնումեկը ավելի արագ, ավելի հեշտ գործածելու ձևը՝ հասնելու համար այն լավ բանվորների եռանդին, որոնք դրանք գործածում են։ Էմիլը, այս տեսակետից, մի մեծ առավելություն ևս ունի. նրա մարմինը դյուրաշարժ է, անդամները ճկուն, որի շնորհիվ նա առանց նեղության ընդունում է բոլոր ձևերն ու առանց ջանքի կատարում է բոլոր տեսակի շարժումները։ Բացի այդ, նրա մարմնի գործարանները ճիշտ են գործում և լավ են մարզված. արհեստների ամբողջ մեքենականությունը նրան արդեն հայտնի է։ Վարպետի նման աշխատել կարենալու համար նրան միայն փորձառություն է հարկավոր, իսկ փորձառությունը ձեռք է բերվում միայն ժամանակի ընթացքում։ Մեր ընտրելիք ո՞ր արհեստին, ուրեմն, նա բավական ժամանակ կնվիրի՝ դրանում կատարելագործվելու համար։ Այժմ մեզ համար այդ է գլխավոր խնդիրը։

Մարդուն պետք է տալ իր սեռին հարմար արհեստ, իսկ պատանուն՝ այնպիսին, որ համապատասխան լինի իր տարիքին. այն բոլոր նստակյաց ու տնայնագործական արհեստները, որ մեղկացնում ու քնքշացնում են մարմինը, նրան ո՛չ հաճելի են և ո՛չ էլ հարմար։ Ոչ մի ժամանակ պատանին կամովին չի ցանկանա դերձակ լինել. մասնավոր արվեստ է պետք՝ կանացի այս արհեստով հրապուրելու համար այն սեռին, որի համար չի եղել այն [1]։ Ասեղն ու սուրը չեն կարող

---

[1] Նախկինում դերձակներ չեն եղել. տղամարդկանց հագուստները կանայք էին պատրաստում տներում։

գործածվել նույն ձևերով։ Եթե ես իշխանության պետը լինեի, կարելն ու ասեղով աշխատելը թույլ կտայի միայն կանանց ու կաղերին, որոնք ստիպված են կանանց աշխատանքներ կատարել։ Ենթադրելով, որ ներքինիներն իրոք անհրաժեշտ են, ես գտնում եմ, որ արևելքցիները հիմար են, քանի որ հատկապես ներքինիներ են պատրաստում. ինչո՞ւ չեն բավարարվում նրանցով, որ բնությունն է արել, այն բազմաթիվ ստոր արարածներով, որոնց սիրտը բնությունից խեղված է, նրանք եղած պահանջը կբավարարեին ավելիով։ Ամեն մի տկար, փափկակազմ, վախկոտ մարդ բնությունից դատապարտված է նստակեցության. նա ստեղծված է ապրելու կանանց հետ կամ նրանց նման։ Թո՛ղ նա զբաղվի կանանց հատուկ մի որևէ արհեստով, դա ավելի լավ է. և եթե անհրաժեշտ է ունենալ իսկական ներքինիներ, թո՛ղ այդ վիճակին հասցնեն այն մարդկանց, որոնք անպատվում են իրենց սեռը՝ ընտրելով իրենց անհարմար արհեստներ։ Նրանց ընտրությունը հայտնաբերում է բնության սխալը. այս կամ այն կերպ ուղղեցե՛ք այդ սխալը. դուք դրանով միայն լավություն արած կլինեք։

Ես իմ սանին արգելում եմ վատաուռղչ արհեստները, բայց ոչ դժվար, ոչ իսկ վտանգավոր արհեստները։ Դրանք միաժամանակ մարզում են և՛ ուժը, և՛ ճարպիկությունը. արհեստները միայն տղամարդկանց են հատուկ. կանայք բնավ հետաքրքրություն չեն նրանց. տղամարդիկ ի՞նչպես չեն ամաչում ոտնձգություն անել կանանց վերաբերող արհեստներին։

Իտալիայի խանութներում ոչ մի կին չեք տեսնի, ու նրանց համար, ովքեր սովորել են Ֆրանսիայի ու Անգլիայի փողոցներին, շատ տխուր է Իտալիայում փողոցների տեսարանը։ Տեսնելով նորաձևության առևտրականին, որ կանանց ծախսում է ժապավեն, գլխարկազարդ, ցանցիկ և այլ կանացի իրեր, ես ծիծաղելի եմ գտնում այդ նուրբ զարդարանքները կոշտ ձեռքերի մեջ, որոնք ստեղծվել են փուքս փչելու և մուրճով զնդանին խփելու համար։ Ինքս ինձ ասում էի, որ այս երկրում կանայք, որպես փոխհատուցում, պետք է բաց անեն ղեն ու զրահի փայլեցման և վաճառման խանութներ։ Է՛հ,

թո՛ղ ամեն մեկը կռի ու վաճառի իր սեւի գենքը։ Եվ հարկավոր է այն գործածել՝ ճանաչելու համար, թե որն է։

Երիտասա՛րդ, քո աշխատանքներին տո՛ւր տղամարդու ձեռքի դրոշմը, սովորի՛ր հուժկու բազուկով շարժել կացինն ու սղոցը, հարթել գերանը, բարձրանալ տանիքի վրա, դնել սուիքը և կատարել կառուցողի այլ աշխատանքներ. ապա կանչի՛ր քո քրոջը, որ գա օգնելու քո աշխատանքին, ինչպես ինքն է քեզ կանչում աշխատելու իր ասեղնագործության վրա։

Ես շատ բան եմ պահանջում համակրելի ժամանակակիցներից, զգում եմ այդ. բայց ինչ արած, երբեմն տարվում եմ հետեւությունների ուժով։ Եթե մի որեւէ մարդ ամաչում է հասնրության մեջ աշխատել՝ ուրացը ձեռքին, կաշվե գոգնոցը կապած, ես նրան դիտում եմ որպես մարդկային կարծիքի ստրուկ, որ կարմրում է մի լավ բան անելու համար, հենց որ ծիծաղում են ապնիվ մարդկանց վրա։ Բայց և այնպես, դիջենք հայրերի նախապաշարումներին, եթե դրանք չեն վնասում երեխաների դաստիարակությանը։ Կարիք չկա կիրառել բոլոր օգտակար մասնագիտությունները՝ նրանց բոլորին պատվելու համար. բավական է, որ դրանցից ոչ մեկը մեզ համար ստորին չհամարենք։ Երբ ապրում ենք ընտրության մեջ, և ոչինչ մեզ չի հարկադրում, կարելի է միևնույն կարգի մասնագիտություններից գերադասել այն, որ մեզ համար հաճելի ենք գտնում, հարմար և մեր հակումներին համապատասխան։ Մետաղների հետ աշխատանքը օգտակար է և նույնիսկ բոլորից օգտակարը. սակայն, եթե որեւէ հատուկ պատճառ ինձ չի ստիպի այդ անել, ես ձեր որդուն չէի դարձնի երկաթագործ, փականագործ, դարբին. բոլորովին էլ չեմ ցանկանում տեսնել նրան դարբնոցում՝ կիկլոպի տեսքով։ Ես նրանից չեմ պատրաստի ո՛չ որմնադիր, ո՛չ էլ կոշկակար։ Բոլոր արհեստներն էլ անհրաժեշտ են։ Բայց ընտրության թևքում պետք է նկատի ունենալ մաքրությունը. այդտեղ արդեն հասարակական կարծիքի հարց չի ծագում. այս իրավունքը մեր զգայարաններն են որոշում։ Վերջապես, ես չեմ սիրում այն տիպար արհեստները, որոնց բանվորները, առանց մասնագիտության ու գրեթե ավտոմատների պես, անվերջ

միևնույն աշխատանքն են կատարում. ջուլհակները, գուլպայագործները, քարտաշները մեքենաներ են, որոնք ուրիշ մեքենաներ են վարում, և որի համար կարիք չկա օգտագործել խելքի տեր մարդկանց։

Բոլոր նկատառումներով, այն արհեստը, որը պիտի նախընտրեի, որ իմ սանի ճաշակին լիներ, աստղագործությունն է։ Այդ արհեստը մաքուր և օգտակար է, կարելի է գործադրել տանը, մարմինը բավականին շարժման մեջ է պահում, բանվորից պահանջում է ընդունակություն ու մասնագիտություն, և աշխատանքի ձևավորման մեջ, որի որոշիչը օգտակարությունն է, ճաշակն ու վայելչությունը բացառված չեն։

Եթե պատահաբար տեսնում եք, որ ձեր աշակերտի ընդունակությունը որոշակի հակված է դեպի տեսական գիտությունները, ես դեմ չէի լինի, որ նրան սովորեցնեիք իր հակումներին համապատասխան մի արհեստ. թո՛ղ սովորի, օրինակ, պատրաստել մաթեմատիկայի վերաբերյալ գործիքներ, մանրադիտակներ, հեռադիտակներ և այլն։

Երբ Էմիլը կսկսի սովորել իր արհեստը, ես ևս կսովորեմ նրա հետ, համոզված լինելով, որ միասին սովորելով, նա ավելի լավ արդյունքի կհասնի։ Ուրեմն, մենք երկուսով աշակերտներ կլինենք՝ առանց պարոններ դիմավելու Հավակնության, իսկական աշակերտներ և ոչ ծիծաղելու համար. և արդարև, ինչո՞ւ չլինեինք իսկական աշակերտներ։ Պետրոս ցարը աստղագործ էր նավաշինարանում ու թմբկահար իր ղորքերի մեջ. կարծում եք, որ այս արքան իր ծննդով կամ արժանիքով ձեզնից պակա՞ս էր։ Հասկանալի է, որ այս խոսքերը միայն Էմիլին չէ, որ ուղղում եմ, այլ նաև ձեզ, ով էլ լինեք։

Դժբախտաբար, մենք մեր ամբողջ ժամանակը չենք կարող անցկացնել գործասեղանի առաջ։ Մենք միմիայն բանվոր-աշակերտ չենք, այլև մարդ-աշակերտ. այս վերջին աշակերտությունը ավելի տաժանակիր ու ավելի երկարատև է, քան մյուսը։ Ի՞նչ պետք է անել, ուրեմն։ Օրական մի ժամով աստղագործ-վարպետ վերցնե՞լ, ինչպես պարի ուսուցիչ են վերցնում։ Ոչ, այդ դեպքում մենք ոչ թե արհեստավոր-աշակերտներ կլինեինք, այլ ուսանողներ. մենք այնքան չենք

ձգտում ատաղձագործություն սովորելու, որքան հասնելու ատաղձագործի վիճակին։ Իմ կարծիքով, ուրեմն, մենք պետք է, շարայծը մեկ կամ երկու անգամ, գնանք, մեր օրը անցկացնենք վարպետի մոտ, առավոտյան վեր կենանք նրա ժամին, գործն սկսենք նրանից առաջ, ճաշենք նրա հետ մի սեղանի շուրջը, աշխատենք նրա ցուցումներով և, նրա ընտանիքի հետ ընթրելու պատվին արժանանալուց հետո, տուն վերադառնանք, եթե ցանկանում ենք պահել մեր կոշտ անկողինների մեջ։ Ահա թե ինչպես են սովորում միանգամից մի քանի արհեստ, և ինչպես են ձեռքի աշխատանքին վարժվում, առանց անտես առնելու մյուս՝ մարդ-աշակերտի վարժությունը։

Լավ աշխատելով հանգերձ, չենք պարզ։ Մեծամասնությունը չվերաբորբոքենք նրա դեմ պայքարելու մեր ջանքերով։ Հպարտանալ՝ նախապաշարումները հաղթահարած լինելու համար, նշանակում է դրանց ենթարկվել։ Ասում են, թե օսմանյան արքայական տան մի հին սովորության համաձայն, սուլթանը պարտավոր է ձեռքի աշխատանք կատարել. և ամեն մարդ գիտի, որ արքայական ձեռքի գործը միայն գլուխ-գործոց կարող է լինել։ Ուրեմն, նա ամենայն հանդիսավորությամբ բաժանում է այս գլուխ-գործոցները բարձր դռան սուրհանդակապետներին, իսկ աշխատանքը վարձատրվում է քսակ-քսակի որակի։ Այն, ինչ ես վատ եմ գտնում այստեղ, ենթադրյալ կեղեքումը չէ, ընդհակառակն, դա մի բարիք է։ Հարկադրելով պալատականներին՝ իր հետ բաժանել ժողովրդից քալանածը, վեհապետը, այդպիսով, ավելի քիչ է սոխկված լինում ժողովրդին կողոպտել ուղղակի կերպով։ Դա բռնակալության անհրաժեշտ մի մեղմացում է, առանց որի այդ ճիվաղային կառավարությունը չէր կարող գոյություն ունենալ։

Այդ սովորության իսկական վատ կողմն այն սխալ գաղափարն է, որ նա տալիս է այդ խեղճ մարդուն՝ իր արժանիքի վերաբերյալ։ Միդաս թագավորի նման, ինչի որ ձեռք է տալիս, ոսկու է վերածվում, բայց չի նկատում, որ դրա հետևանքով ինչպես են երկարում իր ականջները։ Էմիլի ականջները կարճ պահելու համար, պաշտպանենք նրա ձեռ-

քերը այդ հարուստ տաղանդից. նրա գործը պիտի արժեքավորվի ոչ թե բանվորով, այլ աշխատանքով։ Չպետք է թույլ տալ, որ նրա գործը գնահատեն ղուգահեռ անցկացնելով դրա և լավագույն վարպետի գործի միջև։ Թո՛ղ նրա աշխատանքը մրցանակի արժանանա ինքն իրենով՝ աշխատանքով, այլ ոչ թե նրա համար, որ դա նրա աշխատանքն է։ Լավ գործի մասին ասացե՛ք. «Ահա՛ մի լավ աշխատանք», բայց մի՛ ավելացրեք. «Ո՞ւմ աշխատանքն է»։ Եթե ինքը, հպարտ ու գոհունակ տեսքով, ասի. «Ես եմ կատարել այդ աշխատանքը», սառնությամբ պատասխանեցե՛ք. «Դուք կամ մեկ ուրիշը՝ այդ նշանակություն չունի. խնդիրն այն է, որ լավ աշխատանք է»։

Բարի մա՛յր, զգուշացի՛ր, մանավանդ, այն ստերից, որ պատրաստում են քեզ համար։ Եթե քո որդին շատ բան գիտի, չհավատաս նրա բոլոր գիտցածին. եթե նա չար թախտից Փարիզում է կրթվել ու հարուստ է, ապա կորած է։ Որքան ժամանակ այնտեղ ճարպիկ արվեստագետների միջև գտնվի, նա կունենա նրանց բոլոր շնորհները, բայց նրանցից հեռու՝ էլ չի ունենա։ Փարիզում հարուստը ամենագետ է, այնտեղ աղքատն է միայն տգետ։ Այդ մայրաքաղաքը լեցուն է սիրողներով, մանավանդ, կին սիրողներով, որոնք իրենց գործն անում են՝ ինչպես պ. Գիյոմը հնարում էր իր գույները։ Այս տեսակետից ես տղամարդկանց մեջ երեք բացառություն գիտեմ. գուցե և ավելի կլինի, բայց ոչ մի բացառություն չգիտեմ կանանց մեջ և կասկածում եմ, որ լինի։ Ընդհանրապես հռչակ են ստանում արվեստների մեջ այնպես, ինչպես դատավորական պատմուճանի մեջ. մարդիկ արվեստագետ ու արվեստի քննադատ են դառնում այնպես, ինչպես իրավաբան ու դատավոր։

Բավական է մի անգամ որոշվի, թե լավ է որևէ արհեստ իմանալը, շատ չանցած ձեր երեխաները այն կգիտենան՝ առանց սովորելու. նրանք վարպետի կոչում կստանան այնպես, ինչպես Յյուրիխի խորհրդականները։ Այս բոլոր պաշտոնական ձևականությունները էմիլի համար չեն. ոչ մի արտաքին երևույթ, այլ միշտ իրականություն։ Նրան չպետք է ասել, թե գիտի. թո՛ղ լուռ ու մունջ սովորի։ Թո՛ղ միշտ իր գլուխ-

գործոցը շինի, բայց երբեք իրեն վարպետ չհամարի։ Թո՛ղ չլինի վարպետ իր տիտղոսով, այլ՝ իր աշխատանքով։

Սթեն մինչև այսօր ինձ հասկացել են, դժվար չէ ըմբռնել, թե ինչպես մարմնամարզության ու ձեռքի աշխատանքի սովորության հետ ես իմ սանին աննկատելիորեն տալիս եմ խորհելու և խորհրդածելու ճաշակը, որպես հակակշիռ այն ծուլության, որ կարող է նրա մեջ առաջանալ դեպի մարդկային դատողությունն իր ունեցած անտարբերությունից ու կրքերի հանդարտությունից։ Նա պետք է աշխատի դյուղացու նման և մտածի փիլիսոփայի պես՝ վայրենու նման ծույլ չինելու համար։ Դաստիարակության մեծ գաղտնիքն այն է, որ մարմնի մարզանքը ծառայի մտքի հանգստին և, փոխադարձաբար, մտքի մարզանքը՝ մարմնավարժին։ Բայց չպետք է շտապել տալ այնպիսի հրահանգներ, որոնք ավելի հասունացած միտք են պահանջում։ Էմիլը երկար ժամանակ բանվոր չի լինի՝ առանց իր անձի վրա չկրելու պայմանների անհավասարությունը, որոնք սկզբում սոսկ նկատել էր։ Նրան սովորեցրած իմ սկզբունքների հիման վրա, որոնք ըմբռնել է, նա կփորձի, իր հերթին, ինձ հարցուփորձել։ Ամեն ինչ միայն ինձնից ստանալով, իրեն աղքատների դրության այնքան մոտ տեսնելով, կկամենա իմանալ, թե ինչո՞ւ եմ ես դրանից այնքան հեռու։ Դուցե ինձ, անսպասելիորեն, դժվար հարցեր կտա. «Դուք հարուստ եք, այդպես եք ինձ ասել, ես ինքս էլ եմ տեսնում։ Հարուստն էլ, որպես մարդ, պարտական է աշխատել հասարակության համար։ Բայց դուք ի՞նչ եք անում հասարակության համար»։ Ի՞նչ կպատասխաններ սրան մի ճարտարախոս դաստիարակ, չգիտեմ։ Դուցե այնքան հիմար [illegible] երևակայի պատմեր նրա վրա իր տաք [illegible]։ Գալով ինձ, աբհևստանոցը իմ գործը հեշտացնում է. «Ահա՛, սիրելի Էմի՛լ, մի սքանչելի հարց. ես խոստանում եմ իմ կողմից տալ դրա պատասխանը, երբ դուք էլ ձեր կողմից կտաք այնպիսի մի պատասխան, որից ինքներդ գոհ կմնաք։ Առայժմ ես կաշխատեմ ձեզ և աղքատներին վերադարձնել այն, ինչ ինձ մոտ ավելի է, և շաբաթական պատրաստել մի սեղան կամ մի նստարան, որպեսզի բոլորովին անպետք չինեմ հանրությանը»։

Ահավասիկ մենք վերադառնում ենք մեզ։ Մեր երեխան արդեն պատրաստ է երեխայությունից դուրս գալ, մտնել իր ես-ի մեջ։ Նա, ավելի քան երբևէ, զգում է իրերին կապվելու անհրաժեշտությունը։ Նրա մարմինն ու զգայարանները մարզելուց հետո, մենք անցանք նաև նրա միտքն ու դատողությունը մարզելուն։ Վերջապես, նրա անդամների գործողությունը համաձայնեցրինք իր հատկությունների գործողությանը. ստեղծեցինք մի մտածող ու գործող էակ. մեզ մնում է, մարդը լրացնելու համար, նրան դարձնել սիրող ու զգայուն, այսինքն՝ դատողությունը կատարելագործել զգացումով։ Բայց այս նոր իրադրության մեջ մտնելուց առաջ մի հայացք նետենք այն իրավիճակի վրա, որտեղից դուրս ենք եկել, ու տեսնենք, հնարավոր ճշտությամբ, թե մինչև ո՞ւր ենք հասել։

Մեր աշակերտը սկզբում ուներ միայն զգացողություններ, այժմ ունի մտքեր. նա միայն զգում էր, այժմ դատում է։ Հաջորդական կամ համատեղ բազմաթիվ զգացողությունների և դրանցից արված դատողության համեմատությունից ծնվում է մի տեսակ խառը կամ բարդ զգացողություն, որին ես միտք եմ անվանում։

Մտքերը կազմելու ձևն է, որ մարդկային խելքին տալիս է նկարագիր։ Այն խելքը, որ իր մտքերը կազմում է իրական հարաբերությունների հիման վրա, *առուր* խելք է. այն խելքը, որ բավարարվում է երևութական հարաբերություններով, *մակերեսային* խելք է. այն խելքը, որ հարաբերությունները տեսնում է այնպես, ինչպես որ են, *ուղիղ* դատող խելք է. այն խելքը, որ դրանք վատ է գնահատում՝ *սխալ* դատող խելք. այն խելքը, որ երևակայական հարաբերություններ է հնարում, որոնք ո՛չ իրական են, ո՛չ արտաքին երևույթ, *խենթ* է. այն, որ բոլորովին չի համեմատում, *ապուշ* է։ Մտքեր համեմատելու և հարաբերություններ գտնելու ավելի կամ նվազ ընդունակությունն է, որ մարդկանց մեջ ստեղծում է մեծ կամ փոքր խելքը և այլն։

Պարզ մտքերը սոսկ համեմատական զգացողություններ են։ Պարզ զգացողությունների մեջ կան դատողություններ, այնպես, ինչպես բարդ զգացողությունների մեջ. առաջին-

ները ես պարզ մտքեր եմ անվանում։ Զգացողության մեջ դատողությունը բացարձակ կրավորական է. նա հաստատում է, որ իսկապես զգում ենք այն, ինչ որ զգում ենք։ Ըմբռնման կամ մտքի մեջ դատողությունը գործուն է. նա մոտեցնում, համեմատում, որոշում է այն հարաբերությունները, որ զգացողությունը չի որոշում։ Ահա ամբողջ տարբերությունը. բայց այդ տարբերությունը մեծ է։ Բնությունը երբեք չի խաբում մեզ. միշտ մենք է, որ խաբում ենք մեզ։

Մի երեխայի առաջ պաղպաղակ ենք դնում. նա գդալը բերանն է տանում՝ առանց գիտենալու, թե ինչ բան է, ու բացականչում. «Օ՜, այրվեցի»։ Նա շատ ուժեղ զգացողություն կրեց և կրակի տաքությունից ավելի ուժեղ զգացողության հետ ծանոթ չլինելով, այրման տպավորություն ունեցավ։ Սակայն խաբվում է, սառնության զգացողությունը նրան խայթեց, բայց չայրեց. այս երկու զգացողությունները միատեսակ չեն, քանի որ թե՛ մեկը և թե՛ մյուսը զգացողները դրանք չեն շփոթում։ Ուրեմն զգացողությունը չէ, որ խաբում է երեխային, այլ նրա առաջացրած դատողությունը։

Նույնը լինում է նաև այն երեխայի հետ, որ առաջին անգամ տեսնում է մի հայելի կամ մի տեսողական գործիք, կամ մի խոր նկուղ է մտնում ձմռան կամ ամռան ամենախիստ ժամանակ, կամ գոլ ջրի մեջ է կոխում շատ տաք կամ շատ սառը ձեռքը, կամ խաչած երկու մատների արանքում մի գնդիկ է պտրտում և այլն։ Եթե նա ասում է միայն այն, ինչ նշմարում, ինչ զգում է, նրա դատողությունը զուտ կրավորական լինելով, անեղծելի է, որ նա սխալվի. բայց երբ առարկան [illegible] երևույթից, նրա դատողությունը [illegible] մակածությամբ այնպիսի [illegible] է հանգում, որ ինքը չի նշմարում. այդ դեպքում նա խաբվում է կամ կարող է խաբվել։ Սխալը ուղղելու կամ կանխելու համար նա փորձի կարիք ունի։

Գիշերվա ընթացքում ցույց տվեք ձեր աշակերտին ամպերը, որ անցնում են լուսնի ու նրա միջև. նա կկարծի, թե լուսինն է անցնում հակառակ ուղղությամբ, իսկ ամպերը կանգնած են։ Նա այդպես է կարծում հապճեպ մակածության

պատճառով, սովորած լինելով տեսնել, որ առավելապես փոքր իրերն են շարժվում, քան մեծերը, իսկ ամպերը նրան թվում են ավելի մեծ, քան լուսինը, որի հեռավորության մասին նա գաղափար չունի։ Երբ լողացող նավի վրայից, մի քիչ հեռվից, նայում է եզերքին, նա հակառակ սխալի մեջ է ընկնում և կարծում է, թե ցամաքն է վազում, որովհետև, չզգալով իր շարժման մեջ լինելը, նա նավակը, ծովը կամ գետն ու իր ամբողջ հորիզոնը դիտում է որպես մի անշարժ ամբողջություն, իսկ եզերքը, որ կարծում է, թե վազում է, նրան միայն այդ ամբողջության մի մասն է թվում։

Առաջին անգամ, երբ երեխան տեսնում է կիսով չափ ջրի մեջ սուզված մի գավազան, այդ գավազանը նրան կոտրած է երևում. զգացողությունը ճիշտ է. ճիշտ էլ կլիներ, եթե նույնիսկ չգիտենայինք այդ երևույթի պատճառը։ Եթե, ուրեմն, դուք նրան հարցնեք, թե ի՞նչ է տեսնում, նա կպատասխանի. «Մի կոտրված գավազան». նա ճիշտ է ասում, որովհետև բոլորովին վստահ է, որ կոտրված գավազան է տեսնում։ Բայց երբ դատողությունից խաբված, ավելի հեռուն գնա և, հայտնելուց հետո, որ կոտրված գավազան է տեսնում, պնդի, թե իր տեսածը իսկապես կոտրված գավազան է, այդ դեպքում նա սխալվում է։ Ի՞նչ է դրա պատճառը. այն, որ նա արդեն գործուն դատող է և այլևս զննողությամբ չի դատում, այլ՝ մակածությամբ, հաստատելով մի բան, որը չի զգում. այսինքն՝ մի զգայարանով ստացած դատողությունը չի հաստատված մի ուրիշով։

Քանի որ մեր բոլոր սխալները մեր դատողությունների հետևանք են, պարզ է, որ եթե մենք դատելու երբեք կարիք չունենայինք, սովորելու ևս ոչ մի կարիք չէր լինի մեզ համար, խաբվելու վիճակում երբեք չէինք գտնվի. մեր տպավորությամբ ավելի երջանիկ կլինեինք, քան մեր գիտությամբ։ Ո՞վ կարող է ժխտել, թե գիտունները գիտեն հազարավոր ճիշտ բաներ, որոնք տգետները երբեք չեն գիտենալու։ Գիտունները մի՞թե դրանով ավելի մոտ են ճշմարտությանը։ Միանգամայն հակառակը. առաջ գնալով, նրանք հեռանում են ճշմարտությունից, որովհետև դատելու մեծամտությունը ավելի առաջ է անցնում, քան գիտելիքները, և դրանով սովո-

րած յուրաքանչյուր ճշմարտության հետ հարյուր սխալ դատողություն են անում: Բացարձակապես իրականություն է, որ Եվրոպայի գիտական ընկերությունները ստի հանրային դպրոցներ են սոսկ, և վստահ կարելի է ասել, որ Գիտությունների ակադեմիան շատ ավելի մեծ սխալներ ունի, քան թե Հյուտոնների ցեղը:

Քանի որ ինչքան մարդիկ շատ գիտեն, այնքան ավելի են սխալվում, սխալից խուսափելու միակ միջոցը տգիտությունն է: Մի՛ դատեք երբեք, որպեսզի երբեք չսխալվեք: Սա ինչքան բնության, նույնքան և դատողության դասն է: Բացի անմիջական շատ փոքրաթիվ ու շատ զգայուն հարաբերություններից, որ իրերն ունեն մեզ հետ, մենք, բնականաբար, խոր անտարբերության ունենք դնդի բոլոր մնացածը: Վայրենին տեղից չի շարժվի, որպեսզի գնա տեսնելու ամենաֆեղեցիկ մեքենայի աշխատանքը, ոչ էլ էլեկտրականության հրաշքները: «Ի՞նձ ինչ», այս է տգետի ամենասովորական խոսքը, որը և շատ հարմար է իմաստունին:

Բայց, դժբախտաբար, այս խոսքն այլևս մեզ համար չէ: Ամեն ինչ մեզ համար կարևոր դարձավ այն րոպեից, երբ մենք կախում ունեցանք ամեն ինչից. մեր հետաքրքրասիրությունն ընդարձակվում է մեր կարիքների հետ: Ահա թե ինչու փիլիսոփան ավելի հետաքրքրասեր է, քան վայրենին: Վերջինը ոչ ոքի կարիքը չունի, մինչդեռ առաջինը ամբողջ աշխարհի կարիքն ունի, մանավանդ երկրպագուների:

Ինձ կասեն, թե բնությունից դուրս եմ գալիս. չեմ կարծում: Բնությունն իր միջոցներն ու կանոնները ընտրում է ոչ թե մարդկային կարծիքի, այլ կարիքի հիման վրա: Բայց կարիքները փոխվում են՝ ըստ մարդկանց դրության: Տարբերություն կա բնության պայմաններում ապրող բնական մարդու և հասարակության պայմաններում ապրող բնական մարդու միջև: Էմիլը այնպիսի վայրենի չէ, որ անապատներում քաշված ապրի: Նա մի վայրենի է, որին վիճակված է ապրել քաղաքներում: Պետք է, որ նա սովորի այնտեղ գտնել ինչ որ իրեն անհրաժեշտ է, օգտվել նրանց բնակիչներից, ապրել՝ եթե ոչ նրանց նման, գոնե նրանց հետ:

Քանի որ այնքան նոր հարաբերությունների մեջ, որոնցից

նա պիտի կախում ունենա, պետք է դատողություն անի հակառակ իր կամքին, ապա սովորեցնենք նրան լավ դատել։

Ճիշտ դատել սովորելու ամենալավ ձևն այն է, որ ամենից ավելի է ձգտում պարզեցնել մեր փորձերը, ու նույնիսկ կարողանալ դրանցից հրաժարվել՝ առանց ընկնելու սխալի մեջ։ Սրանից հետևում է, որ զգացողությունների հարաբերությունները երկարատև փոխադարձ ստուգման ենթարկելուց հետո, դեռ պետք է սովորել ստուգել յուրաքանչյուր զգացողության հարաբերությունները իրենով, առանց ուրիշ զգացողության օգնությանը դիմելու։ Այնժամ յուրաքանչյուր զգացողություն մեզ համար մի միտք կլինի ու այդ միտքը միշտ կհամապատասխանի ճշմարտությանը։ Այսպիսիք են այն փորձառությունները, որ ես ջանացի տալ մարդուն իր կյանքի երրորդ շրջանում։

Այս գործելակերպը պահանջում է այնպիսի համբերություն ու շրջահայեցություն, որին քիչ ուսուցիչներ են ընդունակ. առանց դրան երբեք աշակերտը չի կարող դատել սովորել։ Եթե, օրինակ, աշակերտին թվում է, թե ջրի մեջ երևացող գավազանը կոտրված է, նրա սխալը ցույց տալու համար դուք կշտապեք գավազանը ջրից հանել, գուցե այդպիսով դուք նրան իր սխալը հասկացնեք, բայց ի՞նչ կսովորեցնեք նրան. ոչինչ, բացի այն բանից, որ արդեն ինքը կիմանար։ Ոչ, չպետք է այդպես գործել։ Հարցը այն չէ, որ նրան սովորեցնենք ճշմարտությունը, այլ այն, որ նրան ցույց տանք ճշմարտությունը գտնելու հնարը։ Երեխային ավելի լավ սովորեցնելու համար չպետք է անմիջապես ցույց տալ իր սխալը։ Վերցնենք որպես օրինակ էմիլին և ինձ։

Սկզբում ենթադրված երկու հարցերից երկրորդին սովորական ձևով դաստիարակված ամեն մի երեխա դրական պատասխան կտա։ «Անտարակույս,— կասի նա,— կոտրված գավազան է դա»։ Ես շատ եմ կասկածում, որ էմիլը նույն պատասխանը տա ինձ։

Գիտուն լինելու կամ այդպիսին երևալու կարիքը չզգալով, նա երբեք չի շտապի դատել, այլ միայն փաստի վրա հիմնվելով կանի իր դատողությունը։ Բայց տվյալ դեպքում նա շատ հեռու է այդ փաստը գտնելուց, որովհետև շատ լավ

գիտի, թե այն երևույթները, որոնց վրա հիմնվում են մեր պատողությունները, ինչքան խաբուսիկ են, նույնիսկ ապագայի հեռանկարների տեսակետից։

Բացի այդ, գիտենալով, որ իմ ամենաչնչին հարցերն անգամ միշտ էլ մի որևէ նպատակ ունեն, որը նա սկզբում չի նկատում, սովորություն չունի պատասխանել թեթևամտորեն, ընդհակառակն, նա զգույշ լսում է ուշադրությունը և մեծ խնամքով քննում հարցերը՝ պատասխանելուց առաջ։ Ոչ մի ժամանակ ինձ չի պատասխանի, եթե այդ պատասխանը նախապես իրեն չի գոհացնում, իսկ նրան գոհացնել դժվար է։ Վերջապես, մենք երկուսս այնքան էլ նշանակություն չենք տալիս իրերի ճշմարտությունը գիտենալուն, որքան սխալի մեջ չընկնելուն։ Մենք ավելի շատ կամաչինք մի վատ պատճառ գտնելուց, քան թե բոլորովին չգտնելուց։ «Չգիտեմ»-ը մի պատասխան է, որը երկուսիս էլ հարմար է և որը մենք այնքան հաճախ ենք կրկնում, որ այլևս ո՛չ ինձ, ո՛չ նրա համար որևէ արժեք չունի։ Բայց ինչ էլ որ լինի՝ չհիշի այդ անզգաստությունը, թե դրանից խուսափի շնորհիվ մեզ այնքան հարմար «չգիտեմ»-ով, իմ պատասխանը կլինի միևնույնը՝ «Տեսնենք, քննենք»։

Այս գավաղանը, որ կիսով չափ ընկղմված է ջրի մեջ, կանգնած է ուղղահայաց դիրքով։ Որպեսզի տուգենք իրոք կոտրված է թե ոչ, մենք պետք է մի շարք միջոցներ կիրառենք, նախքան այն ջրից դուրս հանելը կամ նրան ձևոք տալը.

1) Նախ՝ կպտտվենք գավազանի շուրջն ու կտեսնենք, որ կոտրվածքն էլ պտույտ է գալիս մեզ հետ։ Ուրեմն, մեր աչքն է միայն նրան փոփոխում, իսկ հայացքները չեն կարող շարժել մատմիններըւ

2) Մենք նայում ենք գավազանի՝ ջրից դուրս գտնվող մասին ուղիղ վերևից. այլևս ծուռ չի թվում, մեր աչքին մոտ գտնվող ծայրը ճիշտ ու ճիշտ մեզնից ծածկում է մյուս ծայրը [1]։ Մի՞թե մեր աչքն ուղղեց գավազանը։

---

[1] Ես, նրանից հետո, մի ավելի ճիշտ փորձով դրա հակառակը գտա։ Բիկումը ազդում է բոլորաձև, ու գավազանը ավելի հաստ է երևում ջրի

3) Շարժում ենք ջրի մակերևույթը. տեսնում ենք, որ գավազանը մի քանի կտոր է լինում, զիգզագներ է անում ու հետևում ջրի տատանումներին։ Այն շարժումը, որ տալիս ենք այդ ջրին, կարո՞ղ է կոտրել, փափկացնել և լուծել գավազանը։

4) Կամաց-կամաց դատարկում ենք ջուրը և տեսնում, որ գավազանը ուղղվում է աստիճանաբար, քանի ջուրը պակասում է։

Մի՞թե այսքանը բավական չէ երևույթը պարզելու և բեկումը գտնելու համար։ Ուրեմն, ճիշտ չէ, որ տեսողությունը մեզ խաբում է, քանի որ մենք հենց նրա միջոցով ենք ուղղում այն սխալը, որ նրան ենք վերագրում։

Ենթադրենք, թե երեխան այնքան բթամիտ է, որ չի հասկանում այս փորձերի արդյունքը. այդ դեպքում պետք է տեսողությանն օգնության կանչենք շոշափելիքը. փոխանակ գավազանը ջրից դուրս հանելու, քաղե՛ք նրան իր ձիրքով, և թո՛ղ երեխան ձեռքով շոշափի գավազանը մի ծայրից մյուսը. նա ոչ մի անկյուն չի զգա. ուրեմն գավազանը կոտրված չէ։

Դուք ինձ կասեք, թե այստեղ միայն դատողություններ չկան, այլև պայմանական պատճառաբանություններ։ Ճիշտ է, բայց տեսե՛ք, հենց որ մտածողությունը հասնում է մինչև գաղափարները, ամեն մի դատողություն վեր է ածվում պատճառաբանության։ Ամեն մի զգացողության գիտակցումը մի առաջադրանք, մի դատողություն է։ Ուրեմն, հենց որ մի զգացողություն համեմատում ենք մի ուրիշի հետ, պատճառաբանում ենք։ Դատելու արվեստը և պատճառաբանելու արվեստը միևնույն բանն են։

Էմիլը լույսի բեկման օրենքը այս գավազանի շուրջը պիտի սովորի, այլապես բնավ պիտի չիմանա։ Նա միջատներ չի անդամահատի, արևի բծերը չի հաշվի, չի իմանա, թե ինչ բան է մանրադիտակն ու աստղադիտակը։ Ձեր գիտուն աշակերտները կծաղրեն նրա տգիտությունը։ Նրանք չեն սխալվի, որովհետև, նախքան նա կկիրառի այդ գործիքները,

---

մեզ գտնվող ծայրով, քան թե մյուսով. բայց սա ոչնչով չի նվազեցնում գաղտոզության ուժը, և հետևությունը պակաս ճշգրիտ չէ։

ես ցանկանում եմ, որ ինքը հնարի դրանք, և, անշուշտ, այդ այնքան էլ շուտ չի լինի։

Այս է ահա իմ ամբողջ մեթոդի ոգին երեխայի կյանքի ամբողջ ժամանակահատվածում։ Եթե երեխան երկու խաչաձևած մատների արանքում մի գնդիկ է խաղացնում և կարծում, թե գնդիկները երկու հատ են, ես չեմ թողնի, որ նա այդ բանն անի, մինչև նախապես չհամոզվի, որ գնդիկը մի հատ է։

Ինձ թվում է, որ այս պարզաբանումները բավական են՝ որոշակի նշելու համար այն առաջադիմությունը, որ արել է իմ սանի միտքը, և այն ճանապարհը, որով նա հասել է այդ առաջադիմությանը։ Բայց, դուցե, դուք սարսափել եք այն բանից, որ ես այդքան շատ բան ցույց տվի նրան։ Դուք վախենում եք, որ ես ծանրաբեռնեմ նրա ուղեղը բազմաթիվ գիտելիքներով։ Իրականում բոլորովին հակառակն է. ես նրան սովորեցնում եմ ավելի շուտ դրանք մոռանալ, քան թե իմանալ։ Ես նրան ցույց եմ տալիս գիտության ճանապարհը՝ իրականում հեշտ, բայց երկար, անսահման և դանդաղ անցանելի։ Ես նրան առաջին քայլերն եմ անել տալիս՝ նախամուտը ճանաչելու համար, բայց թույլ չեմ տա երբեք գնալ։

Ստիպված լինելով ինքնուրույն սովորել, նա օգտվում է ոչ, բայց ոչ ուրիշի դատողությունից, որովհետև, մարդկանց կարծիքին չզիջելու համար, պետք է չզիջել նաև ուրիշի հեզինակությանը. մեր սխալների մեծ մասը գալիս է առավելապես ուրիշից, քան մեզնից։ Այս տևական վարժությունից առաջ կգա կորովամտությունը, նման այն ուժին, որ ստանում է մարմինը աշխատանքի ու հոգնության շնորհիվ։ Մյուս առավելությունն էլ այն է, որ առաջադիմությունը ուժերին համեմատական կլինի։ Միտքն էլ, մարմնի նման, կարող է տանել այնքան բեռ, ինչքան կարող է։ Երբ իմացականությունը յուրացնում է իրերը՝ դրանք հիշողության մեջ պետեղելուց առաջ, այն ամենը, որ հետագայում կվերցնի դրանցից, իրեն է պատկանում. մինչդեռ, եթե հիշողությունը ծանրաբեռնենք առանց նրա գիտության, մենք նրանից ոչինչ չենք ստանա, որ իր սեփականը լինի։

Էմիլը քիչ գիտելիքներ ունի, բայց ունեցածներն իսկապես իրենն են. կիսատ-պռատ ոչինչ չգիտի։ Այն փոքրաթիվ գիտելիքների մեջ, որ գիտի, և շատ լավ, ամենից կարևորն այն բանի գիտակցությունն է, թե շատ գիտելիքներ կան, որ ինքը չգիտի և կարող է մի օր գիտենալ, շատ ավելի, քան ուրիշները, բայց որոնք կյանքումը չի գիտենալու երբեք, ինչպես նաև անհամար ուրիշ գիտելիքներ, որ ոչ մի մարդ երբեք չի իմանալու։ Էմիլը համապատասխան խելք ունի, ոչ թե գիտելիքներով, այլ ձեռք բերելու ընդունակությամբ. մի ուշիմ, ընդունակ խելք. պատրաստ ամեն ինչի և, ինչպես ասում է Մոնտեյնը, եթե ոչ զարգացած, գոնե զարգանալու հակամետ։ Բավական է, որ նա իմանա գոնել «ինչի՞ է պետք»-ը՝ իր բոլոր անելիքների համար և «ինչու՞»-ն՝ իր բոլոր հավատացածների համար։ Կրկնում եմ, իմ նպատակը չէ նրան գիտություն տալ, այլ սովորեցնել այն ստանալ, երբ պետք է, այն գնահատել իր ճշմարիտ արժեքով և ամեն բանից ավելի սիրել ճշմարտությունը։ Այս մեթոդով դանդաղ ենք առաջանում, բայց ոչ մի ավելորդ քայլ չենք անի ու ստիպված չենք լինի ետ գնալ։

Էմիլը միայն բնական ու զուտ ֆիզիկական գիտելիքների է տիրապետում։ Նույնիսկ պատմության անունը չգիտի, ոչ էլ այն, թե ինչ բան են մետաֆիզիկան ու մոռալը։ Նա գիտի մարդու էական հարաբերությունները իրերի հետ, բայց մարդու դեպի մարդն ունեցած զարդարական հարաբերությունների մասին ոչինչ չգիտի։ Նա քիչ է կարողանում ընդհանրացնել մտքերը և վերացական հետևություններ անել։ Նա տեսնում է որոշ մարմինների ընդհանուր հատկությունները՝ առանց այդ հատկությունների էության մասին դատողություններ անելու։ Նա հանդուրժում է. վերացական տարածությունը՝ երկրաչափական պատկերների օգնությամբ, գաղափար է կազմում վերացական մեծությունների մասին՝ հանրահաշվային նշանների օգնությամբ։ Նման պատկերներն ու նշանները են հանդիսանում այս վերացականությունների հենարանները, որոնց վրա էլ հենվում են նրա զգացողությունները։ Նա չի ցանկանում իրերը ճանաչել իրենց ընությամբ, այլ միայն նրան հետաքրքրող իրենց հարաբերություններով։

Իրեն անծանոթ ամեն մի առարկա նա գնահատում է միայն իր հետ ունեցած հարաբերությամբ, իսկ այդ գնահատականը ճիշտ է և ապահով։ Քմահաճությունը, պայմանականությունն այնտեղ ոչ մի դեր չեն խաղում։ Նա ավելի շատ կարևորություն է տալիս այն բանին, որը նրան ավելի է օգտակար, և գնահատման այս ձևից երբեք չշեղվելով, ոչ մի տուրք չի տա հասարակական կարծիքին։

Էմիլը աշխատասեր է, ժուժկալ, համբերող, հաստատամիտ, արիասիրտ։ Նրա հանդարտ եռանդությունը երբեք չի մեծացնում վտանգը. քիչ ցավեր կան, որոնց նկատմամբ նա զգայուն է, և գիտի համբերատարությամբ տանջվել, որովհետև նա սովոր չէ ճակատագրի դեմ գանգատվել։ Մահվան մասին գեռևս հաստատ գաղափար չունի, բայց վարժված լինելով առանց դիմադրության ենթարկվել անհրաժեշտության օրենքին, եթե պետք լինի, նա կմեռնի անտրտունջ ու առանց մահվան դեմ մաքառելու. այս է ահա այն ամենը, ինչ բնությունը թույլատրում է բոլորին խորշելի այդ պահին։ Ազատ ապրել ու քիչ կապված լինել մարդկային իրերին, մահվան գաղափարի հետ հաշտվելու լավագույն միջոցն է։

Էմիլը, մի խոսքով, օժտված է առաքինությամբ իր անձին վերաբերող բոլոր հարցերում։ Նաև հասարակական առաքինություններ ունենալու համար, կարիք ունի միայն ճանաչել առաքինություն պահանջող հարաբերությունները. նրան պակասում են սոսկ գիտելիքներ, որ նրա միտքն արդեն լիովին պատրաստ է ընդունելու։

Նա ինքն իրեն նկատի ունի՝ առանց ուրիշներին հաշվի առնելու, ու գոհ է, որ ուրիշները չեն մտածում իր մասին։ Ոչ ոքից ոչինչ չի պահանջում, ու վստահ է, որ ոչ ոքի ոչինչ պարտական չէ։ Նա մենակ է մարդկային հասարակության մեջ ու միայն իրեն է վստահում։ Ուրիշ որևէ մեկից ավելի իրավունք ունի ինքնավստահ լինելու, քանի որ իր տարիքին համապատասխան հասունացել է. նա սխալներ չի անում և կամ անում է այնպիսիք, որոնք մեզ համար անխուսափելի են։ Ջունի ոչ մի մոլություն, կամ ունի այնպիսիները, որոնցից ոչ ոք չի կարող խուսափել։ Նրա մարմինը առողջ է, անդամները՝ ճկուն, միտքը՝ ուղիղ և առանց նախապաշա-

լումների, սիրտն ազատ է ու առանց կրքերի։ Ինքնասիրությունը, բոլոր կրքերի մեջ առաջինն ու ամենից բնականը, հազիվ է բողբոջում նրա մեջ։ Առանց որևէ մեկի հանգիստը խռովելու, նա ապրեց գոհ, երջանիկ և ազատ, ինչքան որ բնությունը թույլ է տվել։ Մի երեխա, որ այսպես հասել է իր տասնհինգերորդ տարուն, կարծում եք, թե՞ իզո՞ր է անցկացրել նախորդ տարիները։

ԳԻՐՔ ՉՈՐՐՈՐԴ

Ինչքա՜ն արագ է անցնում մեր կյանքը այս երկրի վրա. կյանքի առաջին քառորդը ահավոր՝ նախքան կյանքից օգտվել սովորելը. վերջին քառորդն էլ կանցնի, երբ արդեն կգտրտրենք այն վայելելուց։ Սկզբում մենք չենք իմանում կյանքն ապրելու ձևը, հետո արդեն ի վիճակի չենք լինում ապրելու։ Կյանքի այս երկու անօգուտ շրջանների միջև մեզ մնացոդ ժամանակի երեք քառորդ մասն անց ենք կացնում քնելով, աշխատելով, վշտով, նեղություններով ու ամեն տեսակ ցավերով։ Կյանքը կարճ է ոչ թե այն պատճառով, որ կարճ է նրա տևողությունը, այլ որովհետև այդ կարճ տևողության միջոցին մենք համարյա ժամանակ չունենք այն վայելելու։ Մահվան րոպեն ինչքան էլ հեռու լինի ծննդյան րոպեից, կյանքը միշտ էլ կարճ կլինի, եթե այդ ժամանակամիջոցը լավ չի օգտագործված։

Մենք ծնվում ենք, այսպես ասած, երկու անգամ, մեկը՝ գոյություն ունենալու համար, մյուսը՝ ապրելու, մեկը՝ տեսակի համար, մյուսը՝ սեռի։ Նրանք, ովքեր կնոջը նայում են որպես մի անկատար մարդու, իհարկե սխալվում են, սակայն արտաքին համեմատության տեսակետից նրանք իրավացի են։ Մինչև արբունքի հասնելը երկու երեխաները միմյանցից քիչ են զանազանվում. նրանք ունեն նույն դեմքը, մարմնի նույն ձևը, նույն գույնը, նույն ձայնը. ամեն ինչ միատեսակ է. աղջիկներն էլ են երեխաներ, տղաներն էլ. մեկ ընդհանուր անունը բավական է իրար այդքան նման էակների համար։ Այն արուները, որոնց մեջ արհեստականորեն արգելակում են հետագա սեռային զարգացումը, այս համանմանությունը

պահում են իրենց ամբողջ կյանքի ընթացքում, նրանք միշտ էլ մեծ երեխաներ են, իսկ կանայք, չկորցնելով այդ նույն նմանությունը, թվում է թե շատ տեսակետներով ուրիշ բան չեն։

Բայց մարդն ընդհանրապես չի ծնված մանկության մեջ մնալու համար։ Նա այնտեղից դուրս է գալիս բնության կանխորոշած րոպեին. այդ ճգնաժամային րոպեն, թեև բավական կարճ է տևում, սակայն երկարատև ազդեցություն է թողնում։

Ինչպես ծովի մռնչյունը հեռավոր փոթորիկ է նախագուշակում, այնպես էլ փոթորկալի հեղաշրջումը հայտնվում է ծնվող կրքերի մրմունջով. մի խուլ խմորում ազդարարում է մոտալուտ վտանգը։ Բնավորության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, հաճախակի բռնկումները, մտային տևական հուզումները՝ այս բոլորը երեխային համարյա անզուսպ է դարձնում. նա այլևս չի լսում այն ձայնը, որը նրան հնազանդեցնում էր. նա տենդով բռնված մի առյուծ է, չի ճանաչում իր առաջնորդին, այլևս չի ցանկանում դաստիարակության ենթարկվել։

Աղավաղվող բնավորության բարոյական նշաններին ավելանում են դեմքի զգալի փոփոխությունները. դիմագծերը դարգանում և ինքնուրույն կերպարանք են ստանում. այտերից ցած բսնող ցանցառ և նուրբ մազմազը գորշանում ու կոպտանում է։ Ձայնը այլափոխվում է, կամ ավելի ճիշտ՝ նա կորցնում է այն. նա ո՛չ երեխա է, ո՛չ հասունացած մարդ ու չի կարող խոսել նրանցից ոչ մեկի շեշտով։ Նրա աչքերը, հոգուս այդ հայելիները, որոնք մինչև այդ ոչինչ չէին ասում, խմաստ և արտահայտություն են ստանում. մի նորարծարծ կրակ ոգևորում է դրանք. նրա ավելի աշխույժ հայացքը տակավին պահում է իր անբիծ անմեղությունը, բայց այլևս չունի նախկին տիմար արտահայտությունը. նա զգում է արդեն, որ այդ հայացքը շատ բան կարող է ասել. կամաց-կամաց սովորում է հայացքը խոնարհեցնել ու կարմրել. դառնում է զգայուն՝ նախքան իմանալը, թե ինչ է զգում. մտահոգվում է առանց որևէ պատճառի։ Այդ բոլորը դեռևս կարող է առաջանալ դանդաղորեն ու մեղ հանկարծակիի չբերել, բայց

Եթե նրա եռանդն անհամբերության նշաններ ցույց տա, ոգևորությունը մոլեգնության փոխվի, զայրանա և փափկի մի րոպեից մյուսը, եթե անտեղի արցունք թափի, եթե նրա համար վտանգավոր դարձող բաների մոտ զարկերակը արագ խփի ու դեմքը բոցավառվի, եթե մի կնոջ ձեռքի հպումն ղգալով սարսռա, եթե խոովքն ու երկչոտությունը համակեն նրան, Ողիսե՛ս, օ՛վ իմաստուն Ողիսևս, ղգուշացի՛ր. տիկերը, որ այնքան խնամքով փակել էիր, բացվել են, քամիներն արդեն սանձազերծվել են, ոչ մի րոպե չհեռանաս ղեկից, այլապես ամեն ինչ կորած է։

Այս է այն երկրորդ ծնունդը, որի մասին խոսել եմ. այստեղ է, որ մարդ իսկապես կյանք է մտնում և մարդկային ոչ մի բան նրան խորթ չէ։ Մինչև հիմա մեր հոգաբարությունը երեխայական խաղ էր. սրանից հետո է, որ նա իսկապես կարևորություն պիտի ստանա։ Այս ժամանակաշրջանը, ուր վերջանում են սովորական ուսուցումները, իրականում այն է, որտեղից պիտի սկսվի մերը. բայց որպեսզի լավ ներկայացնենք մեր նոր ծրագիրը, հենց սկզբից քննենք նրա հետ կապված իրերի դրությունը։

Մեր կրքերը մեր պահպանության գլխավոր միջոցներն են. ուրեմն, զուր ու ծիծաղելի աշխատանք է նրանց ոչնչացնել ցանկանալը. դա բնությունը վերստուգման ենթարկել է, աստծո գործը վերափոխել է։ Եթե աստված հրամայեր մարդուն ոչնչացնել այն կրքերը, որ նրան տվել է, նա այդ և՛ կցանկանար, և՛ չէր ցանկանա, որովհետև դրանով նա ինքն իրեն կհակասեր։ Երբեք աստված այդպիսի անմիտ կարգադրություն չի արել, ոչ մի այդպիսի բան չի գրված մարդու սրտում, և այն, ինչ աստված կամենում է, որ մարդն անի, երկրորդ մարդու միջոցով չի ասի նրան, այլ ինքը կասի, կգրի նրա սրտի մեջ։

Ինձ համար, այն մարդը, որ կամենում է արգելել կրքերի ծնվելը, նույնքան հիմար է, որքան նա, ով կկամենար նրանց ոչնչացնել։ Ես նրանք, ովքեր կարծում են, թե մինչև այժմ իմ նպատակը այդ է եղել, անտարակույս ինձ շատ վատ են հասկացել։

Բայց մի՞թե կարելի է հետևցնել սրանից, թե քանի որ

մարդն իր բնությամբ հակամետ է կրքեր ունենալու, ապա այն բոլոր կրքերը, որ զգում ենք մեր մեջ ու տեսնում ենք ուրիշների մոտ, բնական են։ Նրանց ակունքը բնական է, այդ ճիշտ է, բայց հազարավոր կողմնակի առուներ նրան մեծացրել են. այժմ նա մի խոշոր գետ է, որի ջուրը գնալով ավելանում է և որի մեջ հազիվ մի քանի կաթիլ կարելի է գտնել նախկին ջրերից։ Մեր բնական կրքերը շատ սահմանափակ են. նրանք մեր ազատության ազդակներն են, որոնք ձգտում են մեզ պահպանել։ Բոլոր այն կրքերը, որ մեզ վրա իշխում ու մեզ կործանում են, դրսից են գալիս, բնությունը չէ, որ դրանք տալիս է մեզ, մենք է, որ դրանք յուրացնում ենք ի վնաս բնության։

Մեր կրքերի ակունքը, մյուսների սկիզբն ու պատճառը, միակը, որ ծնվում է մարդու հետ ու նրանից չի բաժանվում, որքան ժամանակ ապրում է, դա սերն է դեպի իր անձը՝ նախնական, բնածին, մյուսները կանխող կիրքը, որի, որոշ իմաստով, սոսկ փոփոխություններն են մյուս կրքերը։ Այդ տեսակետից բոլորը, այսպես ասած, բնական են։ Բայց այս փոփոխություններից շատերը օտար պատճառներից են առաջացել, առանց որոնց երբեք գոյություն չէին ունենա. և այդ նույն փոփոխությունները մեզ համար ոչ թե օգտակար, այլ վնասակար են. նրանք փոխում են նախնական նպատակը և հակասում են իրենց նախասկիզբին. այդպես է, որ մարդը բնությունից դուրս է ընկնում և հակադրվում է ինքն իրեն։

Սերը դեպի իր անձը միշտ լավ ու միշտ համապատասխան է իրերի կարգին։ Մեզնից յուրաքանչյուրը, հատկապես ծանրաբեռնված լինելով իր սեփական անձի պահպանման գործով, իր առաջին և գլխավոր ուշադրությունը պիտի դարձնի անընդհատ այդ ինքնապահպանության վրա, իսկ ի՞նչպես կարող էր անել այդ, եթե ամենամեծ շահագրգռվածություն չզգար դեպի նա։

Պետք է, ուրեմն, մենք մեզ սիրենք՝ մեզ պահպանելու համար, պետք է մեզ սիրենք ամեն բանից ավելի. և որպես անմիջական հետևանք միևնույն զգացումի, մենք կսիրենք այն, ինչ մեզ պահպանում է։ Ամեն մի երեխա կապվում է իր դայակի հետ. Ռոմուլուսը ստիպված էր կապվել իր այն էգ

դայլի հետ, որը նրան կաթ էր տվել։ Սկզբում այդ կապը պուտ մեքենական է։ Ինչ որ նպաստում է մարդու բարեկեցությանը, նրան գրավում է դեպի իրեն, ինչ որ վնասում է, վանում է իրենից. դա մի կույր բնազդ է։ Այն, ինչ այս բնազդը վեր է ածում զգացման, կապը՝ սիրո, հակակրությունը՝ ատելության, մեզ վնասելու կամ օգտակար լինելու իրացհայտ նպատակն է։ Մենք անտարբեր ենք դեպի անզգա մարդիկ, որոնք հետևում են միայն ուրիշներից ստացած մղումին. բայց նրանք, որոնց ներքին տրամադրություններից և կամքից սպասում ենք բարիք կամ չարիք, նրանք, որոնց տեսնում ենք, թե ինչպես են ազատ գործում ի նպաստ կամ ի վնաս մեզ, իրենց ցույց տված տրամադրություններին համապատասխան զգացումներ են ներշնչում մեզ։ Մենք փրնտրում ենք այն, ինչ օգտակար է մեզ, բայց սիրում ենք նրան, ով ուզում է օգտակար լինել մեզ. ինչ որ մեզ վնասում է, նրանից խուսափում ենք, բայց նրան, ով ուզում է մեզ վնասել, ատում ենք։

Երեխայի առաջին զգացումը ինքն իրեն սիրելն է. իսկ երկրորդ զգացումը, որ առաջինից է բխում, իրեն մոտեցողներին սիրելն է, որովհետև իր այդ թույլ դրության մեջ նա մարդկանց ճանաչում է միայն իրեն տրված խնամքի ու օգնության միջոցով։ Նախ և առաջ՝ դեպի դայակն ու դաստիարակչուհին ունեցած կապը սովորություն է միայն։ Նա նրանց փնտրում է, որովհետև կարիք ունի ու նրանց հետ իրեն լավ է զգում. սա ավելի շուտ ճանաչողություն է, քան թե բարի կամեցողություն։ Երկար ժամանակ է պետք, որպեսզի երեխան հասկանա, թե նրանք ոչ միայն օգտակար են իրեն, այլև ուզում են օգտակար լինել. միայն այն ժամանակ նա կսկսի նրանց սիրել։

Ուրեմն, երեխան իր բնությամբ բարի կամեցող է դեպի ուրիշները, որովհետև տեսնում է, որ ով նրան մոտենում է, ցանկանում է օգնել, ու այդ գիտակցումից նրա մեջ ծնունդ է առնում իր նմանին նպաստավոր մի զգացում, բայց, երբ աստիճանաբար ընդարձակվում են նրա հարաբերությունները, կարիքները, ակտիվ կամ պասսիվ կախումը, այդ դեպքում զարթնում է ուրիշների հետ ունեցած հարաբերու-

թյունների զգացումը, որն էլ իր հերթին առաջացնում է պարտականությունների ու նախապատվությունների զգացումը։ Հետևանքը լինում է այն, որ երեխան դառնում է զգույշ, նախանձոտ, խաբեբա, ոխակալ։ Եթե նրան ստիպեն հնազանդության, ոչ մի օգտակարություն չտեսնելով հրամայված բանի մեջ, այն վերագրում է պարզ քմահաճույքի, նրան տանջելու մտադրության, նա ըմբոստանում է։ Իսկ եթե նրան են ենթարկվում, հենց որ ընդդիմության է հանդիպում, նա այնտեղ տեսնում է ըմբոստություն, դիմադրելու մտադրություն, իրեն չհնազանդելու համար խփում է աթոռին ու սեղանին։ Սեփական անձի սերը, որ միայն մեզ է վերաբերում, զոհացում է գտնում այն ժամանակ, երբ մեր իսկական կարիքները բավարարված են. բայց ինքնասիրությունը, որ բխում է ինքնահամեմատությունից, երբեք զոհ չէ ու չի կարող լինել, որովհետև այս զգացումը, մեզ ուրիշներից նախընտրելով, պահանջում է նաև, որ ուրիշներն էլ մեզ գերադասեն, մի բան, որն անհնարին է։ Ահա թե ինչպես են իր անձի սիրուց ծնվում քաղցր ու գորովալի կրքեր և ինքնասիրությունից՝ ատելավառ ու ցասկոտ կրքեր։ Այսպես, մարդն էապես բարի է լինում, երբ սահմանափակում է իր կարիքները և իրեն քիչ է համեմատում ուրիշների հետ. իսկ նրան լիովին չար են դարձնում չափազանցված կարիքը և ուրիշների կարծիքին մեծ նշանակություն տալը։ Այս սկզբունքների հիման վրա հեշտ է տեսնել, թե ինչպես երեխաների ու մարդկանց կրքերը կարելի է ուղղել դեպի բարին կամ դեպի չարը։ Ճիշտ է, չկարողանալով միշտ մենակ ապրել, դժվարությամբ կկարողանան միշտ բարի լինել. այս դժվարությունն էլ անխուսափելիորեն կավելանա նրանց հարաբերությունների ընդարձակման հետ, և հատկապես սրանում է, որ հասարակության վտանգները ավելի անհրաժեշտ են դարձնում արվեստն ու խնամատարությունը՝ կանխելու համար մարդկային սրտի ապականումը, որ առաջանում է նոր կարիքներից։

Մարդու համար նպատակահարմար ուսումնասիրությունը նրա հարաբերությունների ուսումնասիրությունն է։ Ինչքան ժամանակ նա ինքն իրեն միայն ֆիզիկական կողմից է ճա-

նաչում, այնքան պիտի ինքն իրեն ուսումնասիրի իրերի հետ ունեցած հարաբերություններով. այդ նրա մանկական զրաղմունքն է. երբ սկսում է դդալ իր բարոյական էությունը, պետք է ինքն իրեն ուսումնասիրի մարդկանց հետ իր հարաբերություններով. այդ նրա ամբողջ կյանքի փորձն է, սկսելով այնտեղից, որտեղ ահա մենք հասել ենք։

Հենց որ մարդը մի ընկերուհու կարիքն է զգում, նա այլևս մեկուսացած մարդ չէ. նրա սիրտը դադարում է մենակ լինելուց։ Նրա բոլոր հարաբերությունները իր տեսակի հետ ու նրա հոգու բոլոր համակրությունները ծնվում են այս զգացման հետ։ Նրա առաջին կիրքը, շատ չանցած, խմորում է մյուս կրքերը,

Բնազդի հակումը անորոշ է։ Մի սեռը ձգտում է մյուսին. այս է բնության շարժումը։ Ընտրությունը, նախապատվությունները, անձնական կապը՝ գիտելիքների, նախապաշարումների, սովորության հետևանք են. ժամանակ ու ծանրություններ են հարկավոր, որպեսզի կարողանանք սիրել. սիրում են դատողություն անելուց հետո միայն, նախապատվություն են տալիս համեմատելուց հետո միայն. այս դատողություններն արվում են աննկատելիորեն, բայց և այնպես նվազ իրական չեն։ Ճշմարիտ սերը, ինչ էլ որ ասեն, միշտ մարդկանց հարգանքի առարկա պիտի լինի, որովհետև, չնայած նրա չափազանցությունները մոլորեցնում են մեզ, չնայած զգացող սրտից չի վանում ստոր հատկություններն ու նույնիսկ արտադրում է այդպիսիք, բայց և այնպես միշտ էլ ենթադրում է դնահատելի հատկություններ, առանց որոնց սիրո զգացումը անհնարին կլիներ։ Այս ընտրությունը, որ հակադրվում է դատողությանը, հենց սիրուց է գալիս մեզ։ Ամուրը կույր են նույց տվել, որովհետև մեզնից ավելի լավ աչքեր ունի ու տեսնում է այնպիսի հարաբերություններ, որոնք մենք չենք նշմարում։ Այն մարդու համար, որ ոչ մի պաղատիար չունի ո՛չ արժանիքի, ո՛չ էլ գեղեցկության մասին, կանայք հավասարապես լավ կլինեն, և առաջին պատահածը միշտ կլինի ամենասիրելին։ Չնայած որ սերը բնությունից է գալիս, նա կանոնավորում ու զսպում է նրա հակումները. նրանով է, որ, բացառությամբ սիրված էակի, մի սեռը այլևս ոչինչ է մյուսի համար։

Երբ նախընտրություն են տալիս, փափագում են փոխարենն ստանալ. սերը պետք է փոխադարձ լինի։ Միրվելու համար պետք է սիրելի դառնալ, գերադասվելու համար պետք է մի ուրիշից, մի որևէ ուրիշից ավելի սիրելի լինել, գոնե սիրված էակի աչքին։ Դրանից են բխում առաջին ակնարկները իրենց նմանների վրա, առաջին համեմատությունը նրանց հետ, դրանից՝ մրցակցությունը, հակառակությունը, խանդը։ Մի սիրտ, որ այդքան լցված է որևէ զգացմունքով, սիրում է զեղել. սիրուհու կարիքից, քիչ ժամանակ անց, ծնվում է ընկերոջ կարիքը։ Այն մարդը, որ զգում է, թե ինչքան քաղցր է սիրվելը, կկամենար սիրվել բոլորից. և եթե բոլորն իմանային նախապատվություն տալը, դժգոհների թիվը մեծ չէր լինի։ Սիրո և բարեկամության հետ ծնվում են հակառակությունները, թշնամությունը, ատելությունը։ Բազմաթիվ և զանազան կրքերից դժվար չէ տեսնել, թե ինչպես հասարակական կարծիքը բարձրացվում է անսասան մի գահի վրա, և հիմնր մահկանացուները, ենթարկվելով նրա իշխանությանը, իրենց սեփական գոյությունը հիմնում են լոկ ուրիշների դատողության վրա։

Զարգացնելով այս մտքերը, դուք կտեսնեք, թե որտեղից է ստանում մեր ինքնասիրությունը այն ձևը, որ թվում է, թե բնականից ունի, և թե ինչպես անձի սերը, դադարելով լինել բացարձակ մի զգացում, վեր է ածվում հպարտության՝ մեծ հոգիների մեջ, սնապարծության՝ փոքր հոգիների մեջ ու բոլորի մեջ ևնվում է անընդհատ ի վնաս մերձավորի։ Այս կրքերի՝ տեսակը երեխաների արտի մեջ չունենալով իր սաղմերը, չի կարող ինքն իրեն ծնունդ առնել այնտեղ. մենք ինքներս ենք դրանք ներմուծում, ու մեր սխալով են միայն նրանք արմատավորվում։ Բայց այդպես չէ երիտասարդի սիրտը. ինչ էլ անենք, այդ կրքերը այնտեղ կծլեն՝ հակառակ մեր կամքի։ Ուրեմն, ժամանակ է, որ փոխենք մեթոդը։

Սկսենք մի քանի խորհրդածություններով այն տագնապալի դրության շուրջը, որ մեզ հետաքրքրում է։ Երեխայությունից չափահասություն անցումը բնությունից չի կանխորոշված այնչափով, որ դա տեղի ունենա առանց տատանումների՝ մարդկանց մեջ՝ ըստ խառնվածքի, իսկ ժողովուրդ-

ների մեջ՝ ըստ կլիմայի։ Բոլորին հայտնի է, թե ինչպիսի տարբերություններ են նկատվել այս կապակցությամբ տաք և ցուրտ կլիմաներ ունեցող երկրներում։ Ամեն ոք տեսնում է, որ բուռն խառնվածքները ավելի շուտ են կազմվում, քան մյուսները. սակայն չպետք է խաբվել դրա պատճառներից և հաճախ ֆիզիկականին վերագրել այն, որ միայն բարոյականին է վերաբերում. սա մեր դարի փիլիսոփայության ամենակրկնված սխալներից մեկն է։ Բնության ուսմունքը դալիս է դանդաղ և ուշացումով, այնինչ մարդկանցը՝ գրեթե միշտ վաղահաս է։ Առաջին դեպքում զգացմունքները զարթեցնում են երևակայությունը, երկրորդ դեպքում՝ երևակայությունն է զարթեցնում զգացմունքները. նա նրանց կտա միայն կանխահաս ոգևորություն, որը նյարդայնացնում, տկարացնում է նախ՝ անձնավորությունները և ի վերջո՝ ցեղը։ Կլիմաների ազդեցության ուսումնասիրությունից ավելի մի ընդհանուր ու ճիշտ դիտողություն կա, այդ այն է, որ արյունքն ու սեռային հզորությունը միշտ ավելի վաղ են հայտնվում զարգացած ու քաղաքակրթված ժողովուրդների, քան թե տգետ ու բարբարոս ժողովուրդների մոտ[1]։ Երեխաները մի

[1] «Քաղաքներում,— գրում է պ. դը Բյուֆոնը,— ու հարուստ մարդկանց մոտ երեխաները, սովորած լինելով առատ ու հյութեղ ճաշերի, ավելի շուտ են հասնում այդ դրության. գյուղում ու աղքատ ժողովրդի մոտ երեխաներն ավելի ուշահաս են, որովհետև վատ ու քիչ են սնվում. նրանց պետք է դեռևս երկու-երեք տարի» (Բնակ. պատմ.)։ Ընդունում եմ դիտողությունը, բայց ոչ բացատրությունը, որովհետև այն շրջաններում, որտեղ գյուղացին շատ լավ է սնվում ու շատ ուտում, ինչպես՝ Վալեում, և նույնիսկ Իտալիայի մի շարք լեռնային շրջաններում, ինչպես՝ Ֆրիուլում, երկու սեռերի արբունքի հասնելը նույնպես կատարվում է ավելի ուշ, քան քաղաքներում, որտեղ, հանուն սնամոտության, շատ հաճախ ուտելիքի ծայրահեղ խնայողություն են անում, և մեծամասնությունը վերվում է այնպես, ինչպես ասածն է ասում՝ քավշյա հագուստ, պատարկ սոսմոքոս։ Մարդ զարմանում է տեսնելով այս լեռներում չափահաս մարդկանց նման ուժեղ, բարձրահասակ տղաներ՝ դեռևս սուր ձայնով ու անմորուս կզակով և արդեն լավ կազմավորված մեծահասակ աղջիկներ, որոնք, սակայն, դեռևս իրենց սեռին հատուկ ոչ մի պարբերական նշան չունեն։ Այս տարբերությունը, իմ կարծիքով, առաջանում է նրանից, որ իրենց բարքերի ու երևակայության պարզության շնորհիվ ավելի երկար ժամանակ մնալով հանդարտ ու խաղաղ վիճակում, նրանց արյունը ավելի ուշ է եռում, և նրանց խառնվածքը ավելի ուշ է հասունանում։

եզակի ողջամտություն են ցուցաբերում՝ պարտ ու պատշաճի բոլոր կեղծիքների միջով որոշելու նրա քողարկած վատ բարքերը։ Մաքրված լեզուն, որ նրանց թելադրում են, պարկեշտության դասերը, որ նրանց տալիս են, խորհրդավորության վարագույրը, որը իբրև թե քաշում են նրանց աչքերի առջև, գրգռում են երեխաների հետաքրքրությունը։ Այն ձևով, ինչ ձևով վարվում են, պարզ է, որ ստացվում է հակառակ արդյունք՝ այն, ինչ իբր թե ուզում են թաքցնել երեխաներից, ծանոթացնում են նրանց, և սա բոլոր ուսուցումներից ավելի լավ է օգնում։

Ուսումնասիրեցե՛ք փորձը, և կտեսնեք, թե այդ անմիտ մեթոդը ինչքան է արագացնում բնության գործն ու փչացնում խառնվածքը։ Այստեղ է այն գլխավոր պատճառներից մեկը, որ այլասերում է ցեղերը քաղաքներում։ Երիտասարդները, վաղաժամ մաշվելով, մնում են փոքրակազմ, թույլ, վտիտ, ծերանում են՝ փոխանակ մեծանալու, այնպես, ինչպես այն խաղողի տունկը, որը, երբ նրան ստիպում են պտղավորվել գարնանը, թառամում ու մեռնում է աշնանից առաջ։

Պետք է ապրել կոպիտ ու պարզ ժողովուրդների մոտ՝ տեսնելու համար, թե մինչև որ տարիքը բարեպատեհ տգիտությունը կարող է երկարաձգել երեխաների անմեղությունը։ Հուզիչ ու միանգամայն ծիծաղաշարժ է տեսնել, թե ինչպես այդ ժողովուրդների երկու սեռի մարդիկ, ապահովագրելու համար իրենց սրտերը, ծաղիկ հասակում ու թարմ գեղեցկության մեջ շարունակում են մանկական միամիտ խաղերը, և՛ այդ համարձակությամբ իսկ ապացուցում իրենց հաճույքի անբծությունը։ Եվ երբ, վերջապես, այդ սիրելի երիտասարդությունը ամուսնանում է, երկու ամուսինները, փոխադարձաբար միմյանց տալով իրենց անձի երախայրիքը, դրանով իրար ավելի շատ են սիրում. բազմաթիվ առողջ և ուժեղ երեխաներ են լինում նրանց առաջին տարիների խելամտության պտուղը և գրավականը մի անդավաճան միության, որը ոչինչ չի աղավաղի։

Թե այն տարիքը, ուր մարդն իր սեռի գիտակցությունն է ստանում, տարբերվում է որքան դաստիարակության ազդե-

յութեամբ, նույնքան և բնության գործունեության, դրանից հետևում է, որ կարելի է արագացնել կամ ձգձգել այդ հասակը՝ նայած թե ինչպես են դաստիարակում երեխաներին. և եթե մարմինը շահում կամ կորցնում է իր տոկունությունը՝ նայած թե արագացնում կամ դանդաղեցնում են այդ պրոցեսը, դրանից հետևում է նաև, որ ինչքան դանդաղեցնում են այդ պրոցեսը, այնքան երիտասարդը ուժ ու եռանդ է ստանում։ Ես դեռ խոսում եմ սոսկ ֆիզիկական հետևանքների մասին, շուտով կտեսնենք, որ խնդիրը միայն դրանով չի սահմանափակվում։

Այս խորհրդածություններից ես եզրակացություն եմ անում այնքան արծարծված մի հարցի վերաբերյալ՝ թե պե՞տք է արդյոք վաղօրոք երեխաներին տեղեկություն տալ նրանց հետաքրքրության առարկաների մասին, թե խաբել թեթև ստերով։ Ես կարծում եմ, որ ո՛չ մեկը պետք է անել, ո՛չ մյուսը։ Նախ և առաջ, այդ հետաքրքրությունը նրանց մեջ չի վարթնի, եթե դուք առիթ չտաք։ Պետք է, ուրեմն, այնպես անել, որ այդ հարցերում հետաքրքրասեր չլինեն։ Երկրորդ, այն հարցերը, որ ստիպված չենք լուծել, մեզնից չեն էլ պահանջի խաբել նրան, ով տալիս է այդ հարցերը. ավելի լավ է նրան լռեցնել, քան թե պատասխանել ստելով։ Այս օրենքը բնավ չի զարմացնի երեխային, եթե ժամանակին նրան սովորեցրել եք դրան հպատակվել անկարևոր հարցերում։ Իսկ եթե որոշում եք պատասխանել, պատասխանեցե՛ք չափազանց պարզ, առանց խորհրդավորության, առանց շփոթվելու, առանց ժպտալու։ Նվազ վտանգավոր է երեխայի հետաքրքրությունը բավարարելը, քան թե այն զրգռելը։

Թո՛ղ ձեր պատասխանները լինեն միշտ լուրջ, կարճ, ճշգրիտ ու առանց տատանումի։ Կարիք չեմ զգում ավելացնելու, որ դրանք պետք է ճշմարտացի լինեն։ Չի կարելի երեխաներին սովորեցնել, թե վտանգավոր է ստել մարդկանց, չզգալով մարդկանց կողմից երեխաներին ստելու է՛լ ավելի մեծ վտանգը։ Երեխային ուսուցչի ասած որևէ սուտը, որը բացահայտվում է հետագայում, վերջնականապես կարող է կործանել դաստիարակության ամբողջ արդյունքը։

Որոշ խնդիրների բացարձակ անգիտությունը թերևս

գերադասելի լիներ երեխաների համար. բայց թո՛ղ վաղօրոք սովորեն այն, ինչ որ չի կարելի ընդմիշտ թաքցնել նրանցից։ Կա՛մ նրանց հետաքրքրասիրությունը ոչ մի կերպ չպետք է զարթնի, կա՛մ պետք է այն բավարարել նախքան այդ հետաքրքրասիրության վտանգավոր դառնալը։ Ձեր վերաբերմունքը այս խնդրում կախված է մեծ մասամբ աշակերտի անձնական դրությունից, նրան շրջապատող հասարակությունից, այն պայմաններից, որում նա կարող է գտնվել և այլն։ Այստեղ կարևորն այն է, որ ոչինչ չթողնվի դիպվածին, և եթե վստահ չեք, թե կարող եք նրան անգետ պահել սեռերի տարբերությանը մինչև տասնվեց տարեկան հասակը, գոնե այնպես արե՛ք, որ այդ մասին գիտենա մինչև տասը տարեկան լինելը։

Ծանկալի չէ երեխաների հետ խոսել չափից դուրս զտված լեզվով, ոչ էլ, իրերին իրենց իսկական անունը տալուց խուսափելու համար, արտահայտվել երկար դարձվածքներով՝ որը կարող է նկատվել նրանց կողմից։ Նման հարցերում լավ բարքերը միշտ էլ ավելի պարզություն ունեն։ Բայց մոլությունից ապականված երևակայությունները ականջը նուրբ են դարձնում և ստիպում անվերջ նրբացնել արտահայտչական ձևերը։ Կոպիտ արտահայտությունները հետևանք չեն ունենում. վավաշոտ մտքերն է, որ պետք է հեռացնել։

Թեև ամոթխածությունը բնական է մարդկային ցեղի համար, սակայն բնականից երեխաներն այդ չունեն։ Ամոթը ծնվում է միայն վատի հետ ծանոթացմամբ. և երեխաները, որ չունեն ու չպետք է ունենան վատի գաղափարը, ի՞նչպես կարող են ունենալ ամոթի զգացումը, որը նրա հետևանքն է։ Նրանց ամոթի ու պատվի դասեր տալ նշանակում է սովորեցնել, թե կան պատշաճ ու անպատշաճ բաներ, տալ մի գաղտնի ցանկություն՝ ճանաչելու այդ վերջիններըս։

Վաղ թե ուշ նրանք այդ կհասկանան, ու երևակայության մեջ ընկնող առաջին կայծը, անկասկած, կփութացնի զգացումների բոցավառումը։ Նա ով կարմրում է, արդեն մեղավոր է. ճշմարիտ անմեղությունը ոչնչից չի ամաչի։

Երեխաները չունեն չափահաս մարդկանց ցանկությու-

ները. բայց նրանց նման ենթակա լինելով այն արատավոր հակումներին, որ վիրավորում են զգացմունքները, միայն այդ հանգամանքից կարող են պատշաճության միևնույն դասերն ստանալ։ Հետևեցե՛ք բնության ոգուն, որ նույն տեղերում դնելով թաքուն հաճույքների ու նողկալի պահանջների գործարանները, մեզ ներշնչում է նույն հոգսերը տարբեր տարիքներում, մերթ մեկ, մերթ մյուս մտքով, մարդուն՝ համեստությամբ, երեխային՝ պատշաճությամբ։

Ես միայն մի լավ միջոց գիտեմ պահպանելու երեխաների անմեղությունը՝ բոլոր նրանց շրջապատողները պետք է հարգեն ու սիրեն այդ անմեղությունը։ Այլապես, այն ամբողջ զսպվածությունը, որ աշխատում եք պահել նրանց հետ ձեր հարաբերություններում, վաղ թե ուշ ապարդյուն կլինի, մի ժպիտ, աչքի մի նշան, ակամա մի շարժում նրանց կմատնի այն, ինչ ուզում եք ծածկել նրանցից. և այն իմանալու համար բավական է, որ նրանք տեսնեն, թե ուզում էիք թաքցնել։ Դարձվածքների ու արտահայտությունների նրբությունը, որ խոսակցության մեջ գործ են ածում կրթված մարդիկ՝ ենթադրելով այնպիսի ճշմարտություններ, որ երեխաները չպետք է գիտենան, բոլորովին անտեղի է. բայց եթե իսկապես հարգում եք նրանց պարզամտությունը, այդ դեպքում, նրանց հետ խոսելիս, հեշտությամբ կկիրառեք խոսելու այն ձևը, որ նրանց պատշաճում է։ Լեզվի մի որոշ պարզություն կա, որ պատշաճում ու հաճելի է անմեղությանը. այդ է ճշմարիտ խոսելաձևը, որը երեխային շեղում է վտանգավոր հետաքրքրասիրությունից։ Եթե նրա հետ ամեն բանի մասին խոսեք պարզորեն, նա այլևս չի կասկածի, թե դարձյալ ինչ-որ բան կա նրան ասելու։ Կոպիտ բառերին զուգակցելով նրան պատշաճող անհաճո մտքեր, դուք կմարեք երեխայի երևակայության առաջին բոցը. չպետք է նրան արգելեք արտասանել այդ խոսքերը և ունենալ այդ մտքերը, սակայն, պետք է այնպես անեք, որ նա, առանց այդ մասին մտածելու, խորշանք զգա դրանք հիշելիս։ Ինչքա՞ն հոգսերից է փրկում այս միամիտ ազատությունը նրանց, ովքեր միշտ անկեղծ ասում են, ինչ որ պետք ասել և միշտ ասում այնպես, ինչպես զգում են։

Ո՞րտեղից են լինում երեխաները: *Մի շփոթեցուցիչ հարց է սա, որ շատ բնականորեն հայտնվում է երեխաների մոտ և որի անխոհեմ կամ զգույշ պատասխանից են երբեմն կախված նրանց բարքերն ու առողջությունը ամբողջ կյանքում: Մոր երևակայած ամենակարճ միջոցը՝ օձիքն ազատելու այդ հարցից, առանց երեխային խաբելու, նրան լռեցնելն է: Այդ միջոցը լավ կլիներ, եթե վաղուց այդպես վարված լիներին նրա հետ աննշան խնդիրների առթիվ, որպեսզի երեխան չկասկածեր, թե ինչ-որ խորհրդավոր բան կա այդտեղ: Սակայն հազվադեպ է այդպես լինում: Մայրը նրան ասում է. «Դա ամուսնացած մարդկանց գաղտնիքն է», կամ՝ «Փոքր տղաները այդքան հետաքրքրասեր չպետք է լինեն»: Սա, իհարկե, շատ լավ միջոց է մոր համար՝ նեղ դրությունից ազատվելու, բայց նա լավ պետք է իմանա, որ փոքրիկ ս ղան, խայթված այդ արհամարհական ձևից, ոչ մի րոպե հանդիստ չի մնա, մինչև չիմանա ամուսնացած մարդկանց գաղտնիքը և շատ չանցած կիմանա այդ մասին:*

Թո՛ղ ինձ թույլ տրվի այստեղ հիշատակել մի բոլորովին տարբեր պատասխան՝ տրված նմանօրինակ մի հարցի. դա ինձ զարմացրեց նրանով, որ գալիս էր թե՛ իր խոսքերում և թե՛ իր վարվեցողության մեջ համեստ մի տիկնոջից, որը, սակայն, հարկ եղած դեպքում գիտի, հօգուտ իր զավակի և առաքինության, արհամարհել պարապմունքի կեղծ վախն ու զվարճախոսների դատարկաբանությունները: Շատ ժամանակ չէր անցել, որ երեխան մեզնից դուրս էր գցել մի փոքրիկ քարի կտոր, որը պատռել էր նրա միզանցքը. բայց ցավն անցել ու դեպքը մոռացվել էր: «Մայրիկ,— ասաց փոքրիկ չարաճճին,— ո՞րտեղից են լինում երեխաները»: «Տղա՛ս,— պատասխանեց մայրը առանց տատանվելու,— կանայք երեխաներին դուրս են գցում մեզի հետ այնպիսի ցավերով, որ երբեմն իրենց կյանքն են վտանգում»: Թո՛ղ հիմարները ծիծաղեն ու տխմարները գայթակղվեն. բայց թող իմաստունները մտածեն, թե արդյո՞ք իրենք կկարողանային գտնել մի ավելի հարմար պատասխան, որն ավելի լավ հասներ իր նպատակին:

Նախ՝ երեխային ծանոթ ու բնական կարիքի գաղափարը

նրան շեղում է խորհրդավոր մի գործողության մտքից։ Ցավի ու մահվան հարակից զաղափարները ծածկում են վերոհիշյալ գաղափարը տխրության մի շղարշով, որը մեղմում է երևակայությունն ու զսպում հետաքրքրությունը. ամեն ինչ միտքը փոխադրում է ծննդաբերության հետևանքների և ոչ թե նրա պատճառների վրա։ Մարդկային բնության տկարությունները, նողկալի երևույթները, ցավի մտապատկերները, ահա այն պարզաբանությունները, դեպի ուր տանում է այդ պատասխանը, եթե նրա առաջացրած խորշանքը երեխային թույլ տա հարցնել դրանց մասին։ Այսպիսի մտածված խոսակցության ժամանակ էլ ո՛րտեղից ցանկության անհանգստությունը կարող է ծնվելու ատիթ գտնել։ Բայց դուք տեսնում եք, որ այդ պատասխանով ճշմարտությունը չի աղավաղվում, և կարիք չի լինում երեխայի միտքը պղտորել, փոխանակ լուսավորելու։

Ձեր երեխաները կարդում են. նրանք ընթերցանությունից ստանում են այնպիսի գիտելիքներ, որ չէին ունենա, եթե չկարդային։ Պարապելիս երևակայությունը վառվում ու սրրվում է դասարանի լռության մեջ։ Ապրելով հասարակության մեջ, լսում են մի տարօրինակ բարբառ, տեսնում են օրինակներ, որոնք նրանց ապշեցնում են. նրանց այնքան են հավատացրել իրենց մարդ լինելու մասին, որ այն ամենում, ինչ կատարվում է իրենց ներկայությամբ, նրանք իսկույն կջանան իմանալ, թե ինչքանով դրանք իրենց հարմար են. շատ բնական է, որ ուրիշների գործերը նրանց որպես օրինակ ծառայեն, երբ ուրիշների դատողությունները որպես օրենք են ծառայում։ Նրանց տրամադրության տակ դրված սպասավորները, որոնք շահագրգռված են միշտ իրենց հաճելի լինել, նրանց առաջ քծնում են՝ խաթարելով նրանց բարքերը. կատակասեր դաստիարակչուհիները չորս տարեկան հասակի երեխաներին այնպիսի խոսքեր են ասում, որ ամենից անամոթ կանայք չեն համարձակվի ասել տասնհինգ տարեկաններին։ Այդ դաստիարակչուհիները շատ շուտ են մոռանում, թե ինչ են ասել, բայց երեխաները չեն մոռանում, թե ինչ են լսել։ Վկա խոսակցությունները սանձարձակ բարքեր են նախապատրաստում. լպիրշ սպասավորը երեխային անառակ է

գարձնում, և մեկի գաղտնիքը մյուսի գաղտնիքի համար որպես երաշխիք է ծառայում։

Իր տարիքի համաձայն դաստիարակված երեխան մենակ է լինում։ Սովորական կապերից դուրս ոչ մի կապ չի ճանաչում. քրոջը սիրում է ինչպես իր ժամացույցը, և բարեկամին՝ ինչպես իր շանը։ Ոչ մի սեռի, ոչ մի տեսակի մասին գաղափար չունի. Քե՛ տղամարդը և Քե՛ կինը նրա համար հավասարապես օտար են. սրանց արածն ու խոսածը ոչնչով չեն վերաբերում նրան. նա չի տեսնում, չի լսում և ոչ մի ուշադրություն չի դարձնում դրանց վրա, ո՛չ նրանց զրույցներով է հետաքրքրվում, ո՛չ էլ նրանց գործերով, այդ բոլորը նրա համար չեն։ Խորամանկ մի սխալ չէ, որ սովորեցնում ենք նրան այս մեթոդով, դա բնության անգիտակցությունն է։ Կգա ժամանակ, երբ նույն բնությունը կլուսավորի իր աշակերտին, և այդ ժամանակ միայն նրան ի վիճակի կդարձնի առանց վտանգի օգտվելու իր տված բոլոր դասերից։ Այս է սկզբունքը. իմ նյութից դուրս է մանրամասնել կանոնները, և այն միջոցառումները, որ ուրիշ թեմայի առթիվ առաջադրել եմ, որպես օրինակ կարող են ծառայել և տվյալ թեմային։

Ուզո՞ւմ եք կարգ ու կանոն մտցնել նոր ծնվող կրքերի մեջ, ավելի երկար ժամանակ տվեք նրանց զարթանալու, որպեսզի կարողանան աստիճանաբար ձևավորվել։ Այդ դեպքում նրանց տնօրինում է ոչ թե մարդը, այլ բնությունը ինքը. ձեր գործը կլինի սոսկ թողնել, որ բնությունը կատարի իր գործը։ Եթե ձեր աշակերտը մենակ լիներ, ձեզ անելու ոչինչ չէր մնա, բայց ամբողջ շրջապատը բոցավառում է նրա երևակայությունը։ Նախապաշարումների հեղեղը նրան քշում է. ետ պահելու համար հարկավոր է նրան մղել հակառակ ուղղությամբ։ Պետք է, որ զգացումը սանձահարի երևակայությունը, և դատողությունը լուսնի մարդկանց կարծիքը։ Բոլոր կրքերի աղբյուրը զգայնությունն է. երևակայությունն է նրանց հակումը որոշում։ Յուրաքանչյուր էակ, որ զգում է իր հարաբերությունները, չի կարող չվշտանալ, երբ այդ հարաբերությունները խաթարվում են և ինքը պատկերացնում է կամ կարծում է պատկերացնել իր բնությանն ավելի համապատասխան հարաբերություններ։ Երևակայության սխալներն

են, որ բոլոր սահմանափակ էակների կրքերը մոլության են վերածում, նույնիսկ հրեշտակների կրքերը, եթե նրանք էլ ունեն այդպիսիք. որովհետև պետք է որ նրանք գիտենան բոլոր էակների բնությունը, հասկանալու համար, թե ո՞ր հարաբերություններն են ավելի հարմար իրենց բնությանը։

Ահավասիկ, ուրեմն, կրքերի օգտագործման մեջ մարդկային ամբողջ իմաստության խտացումը. 1) Ջգալ մարդու իսկական հարաբերությունները՝ թե՛ որպես տեսակ և թե՛ որպես անհատ. 2) հոգեկան բոլոր զգացմունքները տնօրինել ըստ այդ հարաբերությունների։

Բայց մարդն ունի՞ արդյոք իշխանություն՝ տնօրինելու իր զգացմունքները՝ ըստ այս կամ այն հարաբերությունների։ Անկասկած, եթե նա ունի իրավունք երևակայությանն ուղղելու դեպի այս կամ այն իրը, կամ նրան տալ այս կամ այն սովորությունը։ Ասենք, այստեղ ավելի քիչ նշանակություն ունի, թե ինչ կարող է անել մարդը ինքն իր համար, քան այն, թե ինչ կարող ենք անել մենք մեր աշակերտի համար այն պայմանների ընտրությամբ, որոնց մեջ դնում ենք նրան։ Ցույց տալ այն միջոցները, որ նրան կպահեն բնության կարգի սահմաններում, կնշանակի միևնույն ժամանակ ասել, թե ինչպես դուրս գալ այնտեղից։

Այնքան, ինչքան նրա զգացողությունը սահմանափակվում է իր անձով, ոչ մի բարոյականություն չկա նրա գործերի մեջ. միայն այն ժամանակ, երբ այն սկսում է տարածվել իրենից դուրս, նրա մեջ նախ հայտնվում են զգացումները, ապա՝ չարի և բարու հասկացությունները, որոնք նրան դարձնում են իսկական մարդ ու իր ցեղի լրացուցիչ մի մասը։ Ուրեմն, այս առաջին կետի վրա է, որ պետք է բևեռել մեր դիտողությունները։

Այս խնդիրը նրանով է դժվար, որ պետք է դեն գցել մեր աչքի առաջ եղած օրինակներն ու փնտրել այնպիսիները, ուր հաջորդական զարգացումները կատարվում են բնության օրենքի համաձայն։

Մի ձևավորված, դաստիարակված, կրթված երեխա, որ միայն կարողության է սպասում գործադրելու համար ժամանակից շուտ իր ստացած հրահանգները, երբեք չի սխալվի, թե

Երբ է ստանալու այդ կարողությունը։ Սպասելու փոխարեն, նա փութացնում է այն, իր արյանը տալիս է մի կանխահաս հուզում. նա գիտի, թե ինչ պետք է լինի իր ցանկությունների ուղարկան՝ դրանք զգալուց շատ առաջ։ Բնությունը չէ, որ կրգռում է նրան, այլ ինքն է բռնանում բնության վրա, որը, նրան մարդ դարձնելուց հետո, այլևս ոչինչ չունի սովորեցնելու. նա մարդ էր դարձել մտքով, իսկական մարդ դառնալուց շատ առաջ։

Բնության իսկական առաջխաղացումը ավելի աստիճանական ու ավելի դանդաղ է։ Հետզհետե արյունը բորբոքվում է, մտքերը կազմվում են, խառնվածքը՝ կազմավորվում։ Գործարանը ղեկավարող խելոք վարպետը նախօրոք կատարելագործում է իր բոլոր գործիքները՝ նրանց աշխատեցնելուց առաջ, մի երկար անհանգստություն կանխում է առաջին ցանկությունները, մի երկար անգիտություն նախ նրանց սխալ ուղղություն է տալիս, մարդիկ ցանկանում են, առանց իմանալու, թե ինչ։ Արյունը եռում ու խլրտում է, հորդառատ կյանքը ուզում է պոռթկալ։ Հայացքը ոգևորվում է և հածում մյուս էակների վրա, սկսում են հետաքրքրվել իրենց շրջապատով, սկսում են զգալ, որ չեն ստեղծվել մենակ ապրելու համար, այդպես է սիրտը բացվում մարդկային գորովանքների առաջ և սիրելու ընդունակ դառնում։

Ենամքով դաստիարակված երիտասարդի առաջին զգացումը ոչ թե սերն է, այլ մտերմությունը։ Նրա արթնացող էրևակայության առաջին գործը լինում է նրան տեղեկացնել, որ նա ունի իր նմանները. ցեղը նրան գրավում է սեռից առաջ։ Ահա, ուրեմն, երկարաձգված անմեղության մի ուրիշ առաձգելություն ևս՝ օգտվել ծնվող զգացողությունից՝ մարդկայնության առաջին սերմերը պատանու սրտի մեջ ներելու համար. սա մի չափազանց թանկագին առավելություն է, որովհետև կյանքի միակ ժամանակաշրջանն է, երբ միևնույն միջոցները կարող են իսկական հաջողություն ունենալ։

Ես միշտ նկատել եմ, որ այն երիտասարդները, որոնք շատ վաղ են ապականվում և անձնատուր լինում կանանց ու անբարոյականության, անմարդկային են ու դաժան. խաո-

նվածքի մոլեգնությունը նրանց դարձնում է անհամբեր, սխակալ, կատաղի, նրանց երևակայությունը, տարված լինելով միայն մի բանով, մերժում է բոլոր մնացածները. նրանք ո՛չ գութ ունեն, ո՛չ ողորմածություն. իրենց ամենափոքր հաճույքի համար պատրաստ են զոհելու հայր, մայր ու ամբողջ տիեզերքը: Ընդհակառակն, այն երիտասարդը, որ դաստիարակված է երջանիկ պարզության մեջ, բնության առաջին շարժումներով մղվում է դեպի քնքուշ ու գորովալի հույզերը. նրա կարեկից սիրտը հուզվում է իր նմանների վշտով. նա անչափ հրճվում է ընկերոջը վերագտնելիս, գիտի չերմագին ողջագուրել, նրա աչքերը գորովանքի արցունքներ գիտեն թափել. անհաճո լինելու ամոթը և վիրավորած լինելու քավը խիստ զգալի են նրա մոտ: Եթե բոցավառվող արյան հրայրքից նա ոգևորվում է, հուզվում, բարկանում, մի րոպե հետո ուշանում ենք, զղջման հետևանքով, նրա սրտի ամբողջ բարության զեղումը. լաց է լինում, ողբում արած վիրավորանքի համար, կկամենար իր արյան գնով վերադարձնել այն, որ ինքն էր թափել. իր ամբողջ հուզմունքը խաղաղվում է, ամբողջ հպարտությունը նսեմանում իր սխալի գիտակցության առաջ: Եթե նրան են նախատել, իր բարկության ամենաուրաք պահին ներողության մի բառ նրան զինաթափ է անում. նույնպիսի բարեսրտությամբ է ներում ուրիշների սխալները, ինչպես ուղղում է իր սխալները: Պատանեկությունը ո՛չ վրեժխնդրության, ո՛չ էլ ատելության հատակն է. դա կարեկցության, անհիշաչարության, վեհանձնության հատակն է: Այո՛, ես պնդում եմ (ու չեմ վախենում, որ փորձառությունն ինձ կհերքի), որ մի երեխա, որը վատ ծնված չէ ու մինչև քսան տարեկանը պահել է իր անմեղությունը, այդ տարիքում ամենից վեհանձն, ամենից լավ, ամենից ավելի սիրող ու ամենից ավելի սիրված մարդն է: Ձեզ ոչ մի անգամ նման բան չեն ասել. հավատացած եմ, որ ձեր փիլիսոփաները՝ դաստիարակված կոլեջների նեխվածության մեջ, չեն ուզում հասկանալ այս բոլորը:

Մարդու տկարությունն է, որ նրան ընկերային է դարձնում. մեր ընդհանուր թշվառություններն են, որ մեր սրտերը ուռճացնում են դեպի մարդկությունը. մենք նրան ոչինչ պարտական

չէինք լինի, եթե մարդ չլիներինք։ Ամեն մի կապ անօգնականության նշան է. եթե մեզնից յուրաքանչյուրն ուրիշների ոչ մի կարիքը չզգար, երբեք չէր մտածի նրանց միանալ։ Այսպես, հենց մեր տկարությունից ծնվում է մեր խախուտ երջանկությունը։ Իսկական երջանիկ մարդը մենակյաց մարդ է, միայն աստվածն է, որ բացարձակ երջանկություն է վայելում. բայց մեզնից ո՞վ գաղափար ունի երջանկության մասին։ Եթե մի որևէ անկատար արարած ինքնաբավ լիներ, ի՞նչ ևք կարծում. կարո՞ղ էր նա երբևէ վայելք ունենալ։ Նա կլիներ մենակ, ինչու՞։ Ես չեմ կարծում, թե այն մարդը, որ ոչնչի կարիք չունի, կարող է մի բան սիրել. չեմ կարծում, թե նա, ով ոչինչ չի սիրում, կարող է երջանիկ լինել։

Սրանից հետևում է, որ մեզ մեր նմանների հետ կապում են ավելի շուտ նրանց ցավերն ու վշտերը, քան թե նրանց հաճույքները, որովհետև այդ ցավերի մեջ ավելի լավ ենք տեսնում մեր բնության նույնությունն ու մեր նկատմամբ նրանց սիրո երաշխիքները։ Եթե մեր ընդհանուր կարիքները մեզ միացնում են շահախնդրությունից թելադրված, ապա մեր ընդհանուր ինքնաբավությունները մեզ միացնում են համակրությունից դրդված։ Երջանիկ մարդու տեսքը ուրիշներին ավելի շուտ նախանձ է ներշնչում, քան թե սեր. նրան հոժարակամ կմեղադրեինք չունեցած իրավունքի շահագործման մեջ՝ իր համար բացառիկ երջանկության առեղծելու նպատակով։ Մեր ինքնասիրությունն է՛լ ավելի է վիրավորվում, երբ զգում ենք, թե այդ մարդը մեր օգնության ոչ մի կարիքը չունի։ Բայց ո՞վ չի խղճա այն դժբախտին, որի տանջվելը տեսնում է։ Ո՞վ չէր ուզենա նրան ազատել ցավերից, եթե դա միայն մի ցանկություն արժենար իրեն։ Երևակայությունը մեզ ավելի շուտ դժբախտի տեղն է դնում, քան թե՝ երջանիկի. մենք զգում ենք, որ այդ երկու դրություններից առաջինը մեզ ավելի մոտ է, քան մյուսը։ Գթությունը քաղցր է, որովհետև, մենք մեզ դնելով տառապողի տեղը, ուրախանում ենք՝ զգալով, որ մենք էլ նրա նման չենք տառապում։ Նախանձը դառն է նրանով, որ նախանձողը, տեսնելով երջանիկ մարդուն, փոխանակ իրեն երևակայելու նրա վիճակում, ցավ է զգում, որ

ինքն էլ չի գտնվում նույն վիճակում։ Թվում է, թե մեկը մեզ ազատում է այն ցավերից, որոնք իրեն տանջում են, մյուսը մեզնից վերցնում է այն բարիքները, որոնցից ինքն օգուտ է քաղում։

Ուզո՞ւմ եք որևէ երիտասարդի սրտի մեջ գրգռել ու զարգացնել ծնվող զգացումների առաջին շարժումները և նրա բնավորությունն ուղղել դեպի բարեգործությունն ու բարեսրտությունը, մի՛ թողեք, որ մարդկային երջանկության խաբուսիկ երևույթից նրա մեջ ծլեն գոռոզությունը, սնապարծությունը, նախանձը, երբե՛ք մի սկսեք նրան ցույց տալով պալատական շքեղ կյանքն ու պերճանքը, հանդեսների հրապույրը, մի՛ տանեք նրան ճոխ երեկույթների, փայլուն հավաքույթների, բարձր դասի արտաքին շքեղությունը նրան ցույց տվեք միայն այն ժամանակ, երբ նա ի վիճակի կլինի այդ դասակարգը դատել ըստ էության։ Նրան ցույց տալ աշխարհը, նախքան մարդկանց ճանաչելը, դա կլիներ ոչ թե նրան կազմավորել, այլ՝ այլասերել, ոչ թե կրթել, այլ՝ խաբել։

Մարդիկ ի բնե ո՛չ արքա են, ո՛չ իշխան, ո՛չ պալատական, ո՛չ հարուստ, բոլորն էլ մերկ ու խեղճ են ծնված, բոլորն էլ ենթակա են կյանքի թշվառություններին, ցավերին, չարիքներին, կարիքներին, բոլոր տեսակի դժբախտություններին։ Վերջապես բոլորն էլ դատապարտված են մահվան։ Ահա իսկական մարդկայինը. ահա թե ինչից է, որ չի կարող խուսափել ոչ մի մահկանացու։ Սկսեցե՛ք, ուրեմն, մարդկային բնությունից ուսումնասիրել այն, որ նրանից ամենից ավելի անբաժան է, որն ամենից ավելի մարդկային է։

Տասնվեց տարեկան պատանին գիտի, թե ինչ բան է տանջվելը, որովհետև ինքն էլ է տանջվել, բայց հազիվ թե գիտի, որ ուրիշներն էլ են տանջվում. տեսնել այն առանց զգալու, չի նշանակում գիտենալ, և, ինչպես հարյուր անգամ ասել եմ, երեխան, չկարողանալով պատկերացնել, թե ուրիշներն ինչ են զգում, գիտի միայն իր ցավերը, բայց երբ զգայարանների առաջին զարգացումը նրա մեջ վառում է երևակայության կրակը, նա սկսում է իրեն զգալ իր նմանների մեջ, հուզվել նրանց զանգատներով, տանջվել նրանց ցավերով։

Ահա այդ ժամանակ է, որ տառապող մարդկության տխուր պատկերը նրա սրտի մեջ պիտի ծնունդ տա գութի ամենաառաջին զգացման։

Եթե այդ պահը դժվարանում եք որոշել ձեր երեխաների մեջ, ո՞վ է մեղավոր։ Դուք այնքան վաղաժամ եք նրանց մեջ զարթեցնում թերխոշ զգացումներ, այնքան շուտ եք սովորեցնում այդ զգացումների լեզուն, որ շարունակ նույն ձևով խոսելով, նրանք ձեր տված դասերը ձեր դեմ են գործածում ու ձեզ միջոց չեն թողնում նկատելու, թե, դադարելով այլևս ստել, ե՞րբ են սկսում զգալ այն, ինչ որ ասում են։ Բայց նայեցե՛ք իմ Էմիլին. մինչև այն հասակը, ուր ես նրան առաջնորդել եմ, նա ո՛չ զգացել է, ո՛չ էլ ստել։ Նախքան զգալը, թե ինչ բան է սիրելը, նա ոչ ոքի չի ասել. «Ես ձեզ շատ եմ սիրում». ոչ ոք երբեք նրան չի ասել, թե ինչպես պետք է իրեն պահի հոր, մոր կամ հիվանդ դաստիարակի սենյակում. նրան երբեք չեն սովորեցրել խրթրթոյուն խաղալ առանց տխուր եղած լինելու։ Նա ոչ մի ժամանակ կեղծ չի արտասվել մեկի մահվան առթիվ, որովհետև չգիտի, թե ինչ է մահը։ Այս նույն անզգայությունը, որ կա նրա սրտում, կա և նրա արտաքին ձևերի մեջ։ Իրենից դուրս ամեն ինչի նկատմամբ անտարբեր է նա, ինչպես բոլոր երեխաները, և ոչ ոքով չի հետաքրքրվում. այն, ինչ նրան տարբերում է մյուսներից, նրա անկեծծությունն է. նա երբեք չի փորձի ցույց տալ, թե հետաքրքրքրվում է ուրիշներով։

Էմիլը, քիչ փաղաքար ունենալով զգայուն էակների մասին, շատ ուշ կիմանա, թե ինչ է տանջվելն ու մեռնելը։ Ողբն ու ճիչերը կսկսեն հուզել նրա զգացումները, հոսող արյան տեսքը նրան կստիպի շրջել հայացքը. վերջին շունչը փչող կենդանու ցնցումները անբացատրելի տագնապ կպատճառեն նրան, առանց գիտենալու, թե ո՞րտեղից են առաջանում իր մոտ այդ շարժումները։ Եթե նա ապուշ ու վայրենի մնացած լիներ, չէր ունենա այդ տագնապը. եթե ավելի զարգացած լիներ, կճանաչեր դրա աղբյուրը. նա արդեն բավականին շատ է մտքեր համեմատել, այնպես, որ չի կարող չզգալ, բայց ոչ բավականաչափ՝ ըմբռնելու համար, թե ինչ է զգում։

Այսպես է ծնվում գութը, առաջին հարաբերական զգացումը, որ մարդկային սրտի վրա ազդում է բնության հրամանով։ Զգայուն ու գթասիրտ լինելու համար երեխան պետք է իմանա, որ նրա նման էակներ կան, որոնք զգում են այն նույն ցավերը, որ ինքն է զգացել, տանջվում են, ինչպես ինքն է տանջվել, և ուրիշ վշտեր, որոնց մասին ինքը պետք է գաղափար ունենա, որովհետև ինքն էլ կարող է դրանք զգալ։ Արդարև, գութի զգացումը զարթնում է մեր մեջ այն դեպքում, երբ մենք մեզ դնում ենք տանջվող կենդանու տեղը, լրում ենք, այսպես ասած, մեր էությունը՝ նրանն ընդունելու համար։ Մենք տանջվում ենք այնչափով, որչափով դատում ենք, որ նա է տանջվում, ոչ թե մեր մեջ, այլ նրա մեջ ենք մենք տանջվում։ Այսպես, մարդն զգայուն է դառնում միայն այն դեպքում, երբ երևակայությունը աշխուժանում է և սկսում նրան դուրս բերել իրենից։

Մնվող այս զգայությունը գրգռելու և հրահրելու, այն առաջնորդելու և հսկելու համար իր բնական ընթացքի մեջ, ի՞նչ կմնա անել, եթե ոչ երիտասարդին մատուցել այնպիսի իրեր, որոնց վրա կարողանար ազդել իր սրտի ծավալուն ուժը, որոնք ընդլայնեին նրա զգացումները, տարածեին ուրիշ էակների վրա, որոնց միջոցով նա ամենուրեք իրեն վերադտներ իրենից դուրս. միաժամանակ պիտի խնամքով հեռացնել նրանից այն իրերը, որոնք նրան ճնշում են, սեղմում և լարում մարդկային նսի ղսպանակը, այսինքն, ուրիշ խոսքով՝ պիտի նրա մեջ բորբոքել բարեսրտությունը, մարդկայնությունը, կարեկցությունը, բարեգործությունը, բոլոր այն գրավիչ ու քաղցր հույզերը, որոնք բնականորեն հաճելի են մարդկանց, և թույլ չտալ, որ ծլեն նախանձը, տենչանքը, ատելությունը, այն բոլոր վանող ու դաժան կրքերը, որոնք զգայնությունը, այսպես ասած, ոչ միայն ջնջում են, այլև դարձնում բացասական և այդ կրքերը կրողի համար դառնում տանջանքի աղբյուր։

Ինձ թվում է, որ կարող եմ ամփոփել վերը բերված բոլոր խորհրդածությունները երկու կամ երեք ճշգրիտ, պարզ ու հեշտ ըմբռնելի ասույթներով։

Մարդիկ հակամետ չեն իրենց դնելու իրենցից երջանիկի տեղը, այլ՝ միայն նրա տեղը, ով իրենցից խեղճ է։

Եթե այս ասույթի առնչությամբ կան բացառություններ, ապա դրանք ավելի շուտ վերացական են, քան իրական։ Այսպես, մենք մեզ չենք դնում հարուստի կամ ազնվականի տեղը, որի հետ կապվում ենք. նույնիսկ անկեղծորեն կապվելով, նրանց երջանկության միայն մի մասն ենք յուրացնում։ Երբեմն նրանց սիրում ենք իրենց դժբախտության մեջ, բայց որքան նրանք բարգավաճում են, նրանց ճշմարիտ բարեկամ միայն նա կլինի, ով չի խաբվի երևույթներից, ով նրանց ավելի խղճում է, քան նախանձում, հակառակ նրանց բարեկեցության։

Մենք հմայվում ենք մի շարք դրույթների երջանկությամբ, ինչպես՝ գյուղական ու հովվական կյանքը։ Նախանձը չի թունավորում այս երջանիկ մարդկանց տեսնելու հրապույրը. մենք նրանցով հետաքրքրվում ենք անկեղծորեն։ Ինչո՞ւ համար. որովհետև մենք մեզ ազատ ենք համարում իջնելու այդ խաղաղ ու անմեղ կյանքի մակարդակին ու վայելելու միևնույն երջանկությունը. դա, վատագույն դեպքում, միայն հաճելի մտքեր կարող է առաջացնել, քանի որ բավական է քանկանանք վայելել այդ կյանքը, որպեսզի վայելենք այն։ Միշտ հաճելի է տեսնել սեփական միջոցները, դիտել սեփական ինչքը, նույնիսկ եթե չենք ուզում նրանցից օգտվել։

Սրանից հետևում է, որ որևէ երիտասարդի դեպի մարդկությունը տանելու համար, նրան փոխանակ ուրիշների փայլուն վիճակով հիացնելու, պետք է ցույց տալ այդ վիճակի տխուր կողմերը, պետք է նրան վախեցնել։ Այդպիսով, պարզ հետևողությամբ, նա իր համար ճամփա կբանա դեպի երջանկությունը, չգնալով ոչ ոքի հետքերով։

Մարդիկ կարեկցում են ուրիշների այն ցավերը միայն, որոնցից կարծում են, թե իրենք զերծ չեն։

«Non ignara mali, miseris sucurrere disco.» *(«Թշվառությունը լավ ճանաչելով, սովորում ենք օգնել թշվառներին»։ (Էնեական, I, 654։)*

Ես չգիտեմ ավելի գեղեցիկ, ավելի խորհրդաստ, ավելի հուզիչ բան, քան այս չափածո տողը։

Ինչո՞ւ են թագավորներն անխիղճ իրենց հպատակների հանդեպ. որովհետև նրանց երբեք մարդկանց շարքը չեն դասում։ Ինչո՞ւ են հարուստներն այնքան կարծրասիրտ աղքատների հանդեպ. որովհետև վստահ են, թե իրենք չեն աղքատանա։ Ինչո՞ւ է ազնվականությունն այդքան արհամարհում ժողովրդին. որովհետև ազնվականը երբեք շինական չի լինի։ Ինչո՞ւ են թուրքերն ընդհանրապես ավելի հյուրընկալ, ավելի մարդավարի, քան մենք. որովհետև նրանց բացարձակ կամայական կառավարության մեջ մասնավորների մեծությունն ու հարստությունը միշտ անկայուն ու խախուտ լինելով, նրանք անկումն ու թշվառությունը իրենց համար խորթ վիճակ չեն համարում[1]. յուրաքանչյուր ոք կարող է վաղը լինել այն մարդու նման, որին ինքն օգնում է այսօր։ Այս խորհրդածությունը, որին անընդհատ հանդիպում ենք արևելյան վեպերում, ընթերցողի մեջ տեղիք է տալիս գորովանքի ինչ-որ անըմբռնելի զգացումի, որը զերծ է մեր չոր ու ցամաք մորալի արվեստականությունից։

Մի՛ վարժեցրեք, ուրեմն, ձեր աշակերտին՝ փառքի բարձունքից նայել դժբախտների ցավերին ու թշվառների աշխատանքին և մի՛ հուսաք նրան գթասրտություն սովորեցնել, եթե նա դժբախտներին իրեն օտար է համարում։ Լա՛վ հասկացրեք նրան, որ այդ դժբախտների վիճակում կարող է ինքն էլ լինել, որ նա հեռու չէ բոլոր չարիքներից, որ ամեն ժամ հազար ու մի անսպասելի ու անխուսափելի դեպքեր կարող

[1] *Այսօր այս երևույթը կարծես թե փոխվել է մի քիչ. պետությունները ավելի կայուն ու մարդիկ էլ ավելի խստասիրտ են գտնվել*

ևն նրան գցել այդ չարիքների մեջ։ Սովորեցրե՛ք նրան չվըստահել ո՛չ իր տոհմիկությանը, ո՛չ առողջությանը, ո՛չ էլ հարստությանը, ցո՛ւյց տվեք նրան հարստության ամբողջ անկայունությունը, ցո՛ւյց տվեք այնպիսի, հաճախ պատահող, դեպքեր, երբ նրանից բարձր կանգնած մարդիկ գլորվում են այդ դժբախտներից էլ ցած, անկախ նրանից, թե ում սխալի հետևանքով՝ իրենց թե ուրիշի. հիմա խնդիրը դրա մասին չէ. չէ՞ որ նա տակավին չգիտի, թե ի՞նչ բան է սխալը։ Մի՛ խախտեք նրա գիտելիքների կարգը և լուսավորեցե՛ք նրան իրեն մատչելի ձևով. շատ մեծ գիտնական լինելու կարիք չկա զգալու համար, որ մարդկային ամբողջ գիտությունը չի կարող նրան պատասխանել՝ արդյոք մի ժամից հետո կենդանի կլինի՞ ինքը թե ոչ, թե արդյոք, մութը չկոխած, երիկամային ցավերը նրան չե՞ն ստիպի կրճտացնել ատամները, մի ամսից հետո հարո՞ստ է լինելու թե աղքատ, մի տարուց հետո արդյոք Ալժիրի թիատրաններում, փոկե մտրակի հարվածների տակ, չի՞ թիավարելու։ Մանավանդ, զգուշացե՛ք այս բոլորը նրան ասել սառը կերպով, կրոնագիտական դասի պես. թող ինքն զգա՛, տեսնի՛ մարդկային աղետները. ցնցեցե՛ք, սարսափեցրե՛ք նրա երևակայությունը այն վտանգներով, որոնցով յուրաքանչյուր մարդ շրջապատված է միշտ. թո՛ղ նա տեսնի իրեն շրջապատող այդ բոլոր վիհերն ու, լսելով ձեր նկարագրությունը, նրանց մեջ ընկնելու վախից ամուր փարվի ձեզ։ «Մենք այսպիսով նրան երկչոտ ու վատասիրտ կդարձնենք», կասեք դուք։ Հետագայում կտեսնենք այդ. բայց այժմ սկսենք նրան մարդկային դարձնելով. ահա թե որն է կարևորը։

ԵՐՐՈՐԴ ԱՍՈՒՑՔ

> *Այն գումը, որ մեզ ներշնչում է ուրիշի դժբախտությունը, չի չափվում այդ դժբախտության մեծությամբ, այլ՝ այդ դժբախտությունից տառապողների նկատմամբ մեր ունեցած զգացմունքով։*

Մի դժբախտի խղճում ենք այնքան, ինչքան կարծում ենք, թե նա արժանի է խղճալու։ Մեր ցավերի ֆիզիկական զգայումը ավելի սահմանափակ է, քան մենք կարծում ենք. բայց

դրանց շարունակությունը մեզ զգացնել տվող հիշողության, դրանք ապագայի վրա տարածող երևակայության միջոցով է, որ այդ ցավերը մեզ իսկապես խղճալի են դարձնում։ Այս է, իմ կարծիքով, մեկն այն պատճառներից, որ մենք ավելի սառնասիրտ ենք կենդանիների ցավերի հանդեպ, քան մարդկանց տառապանքների, թեև ընդհանուր զգացողությունը մեզ պետք է նույնացներ նրանց հետ։ Սալյապանի ձիուն չենք խղճում բնավ, երբ նա ախոռումն է, որովհետև չենք ենթադրում, որ իր խոտն ուտելիս նա մտածում է ստացած հարվածների ու հետագա հոգնությունների մասին։ Չենք խղճում նաև դաշտում արածող ոչխարին, թեև գիտենք, որ քիչ հետո մորթվելու է, որովհետև մտածում ենք, թե նա չի զգում իր ճակատագիրը։ Հետզհետե մենք քարսիրտ ենք դառնում նաև մարդկանց վիճակի հանդեպ. և հարուստները չեն խղճահարվում աղքատներին պատճառած զրկանքի համար, նրանց ենթադրելով այնքան տխմարացած, որ չեն զգա այդ զրկանքները։ Ընդհանրապես, մեզնից ամեն մեկի՝ դեպի իր նմանների երջանկությունը ցույց տված գնահատման չափանիշը ես գրտնում եմ նրանց կյանքի նկատմամբ ունեցած հետաքրքրության մեջ։ Բնական է, որ մենք քանի չենք գնահատում մեր արհամարհած մարդկանց երջանկությունը։ Չպետք է, ուրեմն, զարմանալ, թե ինչու քաղաքական մարդիկ ժողովրդի մասին այնքան քամահրանքով են խոսում, թե ինչու փիլիսոփաների մեծ մասը մարդուն այնքան չար է ներկայացնում։

Ժողովուրդն է կազմում մարդկային ցեղը. այն, որ ժողովուրդ չէ, այնպիսի ոչնչություն է, որ չարժե հաշվի առնել։ Մարդը նույնն է բոլոր դասակարգերում. եթե այս ճիշտ է, ամենաբազմամարդ դասակարգերն ամենից շատ են հարգանքի արժանի։ Մտածող մարդու առաջ բոլոր քաղաքացիական խտրությունները վերանում են. նա միևնույն հույզերն ու միևնույն զգացմունքներն է տեսնում և՛ ռամիկի, և՛ նշանավոր մարդու մեջ. նրանց մեջ զատորոշում է միայն լեզուն, ավելի կամ նվազ չափով հարդարված մի գունագեղություն, և եթե որևէ էական տարբերություն կա նրանց միջև, դա ամենից ավելի քողարկվածներին է վնաս։ Ժողովուրդն իրևն ցույց է տալիս այնպես, ինչպես որ կա, և սիրալիր չէ. բայց լավ է,

որ ազնվական մարդիկ ծպտվում են. եթե նրանք երևային իրենց իսկական կերպարանքով, սարսափ կազդեին։

Մեր իմաստուններն ասում են նաև, որ բոլոր պատկարգերի համար էլ երջանկության ու դժբախտության միևնույն բաժին գոյություն ունի։ Սա որքան վնասակար, նույնքան անհիմն մի առած է, որովհետև, եթե բոլոր մարդիկ հավասարապես երջանիկ լինեին, ի՞նչ կարիք կար անհանդրտանալ ուրիշի համար։ Թո՛ղ ամեն մարդ մնա այնպես, ինչպես որ կա։ Թո՛ղ ստրուկին չարչարեն, թո՛ղ տկարը տանջվի, թո՛ղ չքավորը ոչնչանա. նրանք ոչինչ չեն շահի իրենց դրության փոփոխումով։ Իմաստունները թվում են հարուստների դժբախտություններն ու ցույց տալիս հաճույքների ունայնությունը. ինչպիսի՜ կոպիտ սոփեստություն.. Հարուստի դժբախտությունը իր վիճակից չի բխում, այլ իրենից, որը չարաշահում է այդ վիճակը։ Եթե նա նույնիսկ աղքատից էլ ավելի դժբախտ լինի, դարձյալ խղճալի չէ, որովհետև նա ինքն է իր դժբախտության պատճառը, և իրենից է կախված երջանիկ լինելը։ Բայց թշվառի դժբախտությունը իլերի դրության, նրա վրա ծանրացող դաժան բախտի հետևանք է։ Ոչ մի միջոց չկա նրանից վերացնելու հոգնածության, ուժասպառության ու քաղցի ֆիզիկական զգացումը, ո՛չ խոհականությունը, ո՛չ իմաստությունը չեն օգնի նրան ազատվելու իր դրությունից։ Ի՞նչ շահեց էպիկտետը նախազգալով, որ իր տերը իր ազդրն էր ջարդելու, դրանով մի՞թե նա չջարդեց այն. ընդհակառակն, նրա ցավի վրա ավելացավ նախազգացման ցավը։ Հասարակ ժողովուրդը դիցուք չլիներ այնքան հիմար, որքան մենք նրան կարծում ենք, ի՞նչ կշահեր դրանով. մինչև այժմ արածից ուրիշ ի՞նչ կարող էր անել։ Ուսումնասիրեցե՛ք այդ հասարակ կարդի մարդկանց, դուք կտեսնեք, որ նրանք, մի ուրիշ լեզվով խոսելով, պակաս խելք ու պակաս ողջամտություն չունեն, քան դուք։ Հարգեցե՛ք, ուրեմն, մարդկային ցեղը. մտածեցե՛ք, որ նա կազմված է, գլխավորապես, հասարակ ժողովուրդների հավաքածուից, որ եթե բոլոր թագավորներն ու բոլոր փիլիսոփաները վերանային աշխարհի երեսից, ոչինչ չէր փոխվի, և գործերը ավելի վատ չէին գնա։ Մի խոսքով՝ ձեր աշակերտին սովորեցրե՛ք սիրել բոլոր

մարդկանց, նույնիսկ նրանց, ովքեր անարգում են Տառապյալ մարդկանց. այնպես արե՛ք, որ նա ոչ մի դասակարգի մեջ չմտնի, բայց բոլորի մեջ էլ լինի. նրա մոտ մարդկային ցեղի մասին խոսեցե՛ք գուրգուրանքով, նույնիսկ զգուշությամբ, բայց ոչ երբեք արհամարհանքով։ Մա՛րդ, մի՛ անպատվիր երբեք մարդուն։

Այս և նման այլ ճանապարհներով, բայց բոլորովին հակառակ՝ գծված ուղիներին, կարելի է թափանցել դեռահաս պատանու սիրտը՝ այնտեղ գրգռելու բնության առաջին շարժումները, այն զարգացնելու և իր նմանների վրա տարածելու համար։ Սրան պետք է ավելացնեմ, որ այս շարժումներին ինչքան կարելի է պիտի քիչ մասնակից դարձնել անձնական շահագրգռվածությունը. մանավանդ, ո՛չ մի սնապարծություն, ո՛չ մի նախանձախնդրություն, ո՛չ մի փառասիրություն, ո՛չ մեկն այն զգացմունքներից, որ ստիպում են մեզ համեմատել ուրիշների հետ, որովհետև այս համեմատությունները միշտ էլ ատելություն են առաջացնում նրանց հանդեպ, ովքեր ձգտում են մեզնից խլել գերազանցությունը, թեկուզ մեր սեփական գնահատումով։ Այդ դեպքում պետք է կա՛մ չտեսնել, կա՛մ բարկանալ, կա՛մ չար լինել, կա՛մ հիմար. աշխատենք խուսափել այդ երկընտրանքից։ «Այս վտանգավոր կրքերը վաղ թե ուշ կծնվեն,— պիտի ասեն ինձ,— հակառակ մեր կամքին»։ Ջնմ ժխտում. ամեն ինչ իր ժամանակն ու տեղն ունի. ես միայն ասում եմ, որ չպետք է նպաստել նրանց առաջացմանը։

Այս է այն մեթոդի ոգին, որով մենք առաջնորդվելու ենք։ Այստեղ օրինակներն ու մանրամասնություններն ավելորդ են, որովհետև ակնհայտ է, որ ակսվում է բնավորությունների երբեք անվերջ բաժանումը, և իմ տված յուրաքանչյուր օրինակը դուրս հարյուր հազարից մեկին հարմար չլինի։ Այս տարիքում է նույնպես, որ սկսվում է, ընդունակ ուսուցչի համար, դիտողի և փիլիսոփայի այն իսկական պաշտոնը, որ գիտի հետազոտել սրտերը, աշխատելով դրանք ձևավորել։ Մինչդեռ պատանին բնավ չի մտածում կեղծել և երբեք չի էլ իմանում կեղծել, ամեն անգամ նրան մի իր ներկայացնելիս, նրա կիրպարանքից, հայացքից, շարժումներից բացահայտվում է

դրանից ստացած տպավորությունը։ Նրա դեմքի վրա կարդացվում են հոգու բոլոր ապրումները. հետևողականորեն դիտելով դրանք, կկարողանանք կանխատեսել և ի վերջո կառավարել։

Ընդհանրապես նկատված է, որ արյունը, վերքերը, ճիչերը, հեծեծանքը, ցավագին օպերացիաները և այն բոլորը, որ առնչվում է տանջանքի առարկաների առաջացրած զգացողությունների հետ, ավելի շուտ և ավելի ընդհանուր կերպով են ազդում բոլոր մարդկանց վրա։ Ոչնչացման գաղափարը, ավելի բարդ լինելով, նույն ձևով չի ազդում. մահվան մտապատկերը ավելի ուշ և ավելի թույլ է ազդում, որովհետև ոչ ոք մահվան անձնական փորձը չունի. պետք է դիակներ տեսած լինել՝ զգալու համար մահացողների տագնապները։ Բայց երբ մի անգամ այդ պատկերը լավ է տպավորվում մեր մտքում, մեզ համար ավելի սոսկալի տեսարան չի լինի՝ թե՛ մեր զգայարանների վրա ազդած լիակատար ոչնչացման մտապատկերի պատճառով և թե՛ այն պատճառով, որ գիտենք այդ րոպեի անխուսափելիությունը բոլոր մարդկանց համար. մենք մեզ ավելի զորավոր կերպով ենք կապված զգում մի դրության, որից վստահ ենք, թե երբեք չենք կարող խուսափել։

Այս այլազան տպավորություններն ունեն իրենց փոփոխություններն ու աստիճանները, որոնք կախում ունեն յուրաքանչյուր անհատի յուրահատուկ բնավորությունից և նրա նախընթաց սովորություններից։ Բայց նրանք ընդհանրական են, և ոչ ոք նրանցից լիովին զերծ չէ։ Նրանց մեջ կան այնպիսիները, որոնք ուշահաս են և սակավ ընդհանրական, որոնք ավելի հատուկ են զգայուն հոգիներին. դրանք առաջանում են բարոյական տանջանքներից, ներքին ցավերից, վշտերից, լքումից, տխրությունից։ Կան մարդիկ, որոնք հուզվում են միայն լացի ու կոծի ազդեցության տակ։ Հուսահատությունից ճմլված սրտի երկար ու խուլ հեծեծանքները նրանցից երբեք հառաչանքներ չեն կորզում. ոչ մի անգամ ընկճված կերպարանքը, վտիտ ու դալկահար դեմքը, մարած աչքերը, որոնք այլևս կորցրել են լաց լինելու կարողությունը, նրանց չեն մղի արտասվելու. հոգեկան ցավերը ոչինչ են նրանց համար. դրանք դատված են, նրանց հոգին ոչինչ չի զգում,

նրանցից սպասեցեք միայն անողոք խստություն, քարսրտություն, դաժանություն։ Նրանք կարող են լինել անկողմնակալ ու արդար, բայց ոչ երբեք անհիշաչար, վեհանձն, գթասիրտ։ Ես ասում եմ, որ նրանք կարող են արդար լինել, եթե, սակայն, մի մարդ կարող է արդար լինել առանց բարեգութ լինելու։

Բայց մի՛ շտապեք երիտասարդներին դատել այս օրինաչափությունով, հատկապես նրանց, որոնք դաստիարակված լինելով այնպես, ինչպես պետքն է, ոչ մի գաղափար չունեն այն բարոյական վշտերի մասին, որ երբեք չեն կրել, որովհետև, մի անգամ ևս կրկնում եմ, նրանք կարող են գթալ միայն այն ցավերը, որոնց ծանոթ են. և այս երևութական անզգայությունը, որ անգիտությունից է գալիս, շուտով փոխվում է գութի, երբ սկսում են գիտակցել, թե մարդկային կյանքի մեջ իրենց անծանոթ հազարավոր ցավեր կան։ Ինչ վերաբերում է իմ Էմիլին, եթե նա մանուկ հասակում ունեցել է պարզություն ու ղգաստություն, վստահ եմ, որ երիտասարդ հասակում կունենա հոգի և ղգայնություն, քանզի ղգացումների ճշմարտացիությունը կապված է մտքերի ճշտության հետ։

Բայց ի՞նչ կարիք կա նրան հիշել այստեղ։ Ընթերցողներից շատերը անկասկած ինձ կմեղադրեն, թե ես մոռացել եմ իմ առաջին որոշումները և իմ սանին խոստացած կյանքի երջանկության մասին։ Դժբախտնե՛ր, մեռնողնե՛ր, ցավի ու թշվառության տեսարաննե՛ր. ի՞նչ երջանկություն, ի՞նչ հաճույք կյանք մտնող մի երիտասարդ սրտի համար։ Նրա թախծոտ ուսուցիչը, որ սանի համար այնքան հեշտալի դաստիարակություն էր պատրաստել, նրան միայն տանջանք ունի տալու։ Ահա թե ինչ պիտի ասեն. թո՛ղ ասեն. ես խոստացա նրան երջանիկ դարձնել, բայց ոչ թե երևութապես երջանիկ։ Մի՞թե ես եմ մեղավոր, եթե միշտ խաբվելով երևույթից, դուք այն որպես իրականություն եք ընդունում։

Վերցնենք երկու պատանիներ, որոնք առաջին դաստիարակությունից դուրս գալով, աշխարհ են մտնում երկու ուղղակի հակառակ դռներից։ Մեկն իսկույն բարձրանում է Օլիմպոսի գագաթն ու մերվում ամենափայլուն հասարակության

հետ. նրան տանում են պալատ, մեծամեծների, հարուստների, գեղեցիկ կանանց մոտ։ Ենթադրում եմ, որ ամեն տեղ նրան ընդունում են մեծ շուքով, և չեմ քննարկում, թե այդ ընդունելությունը ի՞նչպես է ազդում նրա դատողության վրա։ Ես ենթադրում եմ, որ դա անդրդվելի կմնա։ Նրա կյանքն անցնում է հաճույքների մեջ. ամեն օր զվարճության նոր առիթներ են ներկայանում նրան. նա այդ հաճույքներին անձնատուր է լինում հմայիչ շահագրգռվածությամբ։ Դուք նրան տեսնում եք ուշադիր, պատրաստակամ, հետաքրքիր. նրա առաջին հիացմունքը գրավում է ձեզ, դուք նրան համարում եք գոհ, բայց նայեցե՛ք նրա հոգու վիճակին. դուք կարծում եք, թե նա հրճվում է, իսկ ես կարծում եմ՝ տանջվում է։

Ի՞նչ է նա նկատում, նախ և առաջ, աչքերը բաց անելով. բազմաթիվ ենթադրական բարիքներ, որոնց նա ծանոթ չէր և որոնց մեծ մասը, միայն մի րոպե գտնվելով նրա հասողության տակ, կարծես հայտնվում են՝ դրանցից զրկված լինելու վիշտը լոկ զգացնել տալու համար նրան։ Եթե զբոսնում է մի պալատում, դուք նրա մտահոգ հետաքրքրությունից հասկանում եք, որ նա ցավում է, թե ինչո՞ւ իր հայրական տունն էլ այդպիսին չէ։ Նրա բոլոր հարցերից երևում է, որ նա ինքն իրեն անվերջ համեմատում է այդ տան տիրոջ հետ, և այն ամենը, ինչ նրա համար սպանիչ է այս զուգադրության մեջ, սրում է նրա սնապարծությունը, ընդվզեցնելով նրան։ Եթե հանդիպում է իրենից լավ հագնված մի երիտասարդի, լսում եք, թե ինչպես թաքուն տրտնջում է իր ծնողների ագահության համար, որ ինքը մի ուրիշից լավ է զուգված, նա ցավով է տեսնում, որ այդ մյուսը նրան գերազանցում է կա՛մ իր ծագումով, կա՛մ իր խելքով, և նրա ամբողջ ոսկեճամուկ շքեղությունը նսեմանում է պարզ կտավե հագուստի առաջ։ Եթե ինքն է մենակ փայլում հասարակության մեջ, ոտքի մատների վրա է բարձրանում, ավելի լավ տեսնվելու համար. ո՞վ չի ունենա գաղտնի ցանկություն խոնարհեցնելու մի դատարկամիտ երիտասարդի գոռոզ ու փուչ կերպարանքը։ Եվ իսկույն գոյանում է մի տեսակ համագործակցություն. ծանրաբարո մարդու անհանգստացնող հայացքը, մի սրախոսի հեգնական խոսքերը շուտով կհասնեն նրան և նույնիսկ առանձին

մի մարդու արհամարհանքը բոպեապես կթունավորի ուրիշների ծափողջույնների պատճառած հաճույքը։

Տանք նրան ամեն ինչ, չխնայենք նրանից հաճույք, արժանիք. թո՛ղ լինի նա գեղեցկակազմ, խելոք, սիրալիր. կանայք կհետապնդեն նրան. բայց եթե այդ տեղի ունենա նախքան ինքը կսիրի սրանց, կանայք նրան ավելի շուտ կդարձնեն խելագար, քան թե սիրահար. նա կլինի բախտավոր, բայց ո՛չ եռանդ կունենա, ո՛չ էլ հույզ՝ բախտը ճաշակելու։ Եվ քանի որ իր ցանկությունները, շարունակ արգելակվելով, ժամանակ չեն գտնում ծնվելու հենց հաճույքների ծոցում, նա դրանից լոկ նեղոտքյան ձանձրույթն է զգում. այն սեռը, որ իր սեռի երջանկության համար է ստեղծված, զզվանք է պատճառում ու նույնիսկ հափրացնում՝ նախքան նրան ճանաչելը. եթե շարունակում է նրան տեսնել, դա միայն մեծամտությունից է. իսկ եթե նրան կապվի իսկական ցանկությամբ, արդեն այլևս ինքը չի լինի միակ երիտասարդը, միակ փայլողը, միակ սիրելին, և իր սիրուհիների մեջ միշտ չի գտնի հավատարմության հրաշալիքներ։

Ես էլ ոչինչ չեմ ասի այդպիսի կյանքից անբաժան նեղությունների, դավաճանությունների, վատությունների ու ամեն տեսակ զզջումների մասին։ Աշխարհիկ կյանքի փորձը նողկալի է, այդ գիտենք, ես խոսում եմ միայն առաջին պատրանքի հետ կապված վշտերի մասին։

Ի՞նչ հակասություն նրա համար, ով մինչև այդ ամփոփված իր ընտանիքի ու բարեկամների գրկում, նրանց միակ ուշադրության առարկան դարձած՝ հանկարծ ընկնում է այնպիսի իրադրության մեջ, ուր իրեն քիչ են հաշվի առնում. ինքնախեղդ զգացում է ունենում օտար շրջապատում, մինչդեռ այնքան երկար ժամանակ ինքը եղել էր շրջապատի ուշադրության կենտրոնում։ Ինչքա՜ն անարգանք, ինչքա՜ն նվաստացում ստիպված է նա տանել անծանոթների մեջ, մինչև որ թոթափի յուրայինների մոտ ստացած ու աճեցրած նախապաշարումները իր անձի կարևորության մասին։ Երբ երեխա էր, բոլորը նրան զիջում էին, բոլորն շտապում էին ընդառաջել նրան. այժմ, երբ երիտասարդ է, ստիպված է ինքը բոլորին զիջել. իսկ եթե պատահի, որ մի պահ ինքն իրեն

մոռանա ու պահի նախկին ձևերը, ինչքա՜ն խիստ դասեր նրան կստիպեն ամփոփվելու ինքն իր մեջ։ Իր ցանկացած իրերը հեշտությամբ ստանալու սովորությունը նրան մղում է ավելի շատ ցանկանալ, և այդ պատճառ է լինում, որ հարատև դրկվածություն զգա։ Այն ամենը, որ դուր է գալիս, փորձությանն է ենթարկում նրան, ինչ որ ուրիշներն ունեն, ցանկանում է ունենալ. տենչում է ամեն ինչի, նախանձում է բոլորին, կամենում է իշխել ամեն տեղ. փառասիրությունը կրծում է նրան, անզուսպ ցանկությունների բոցը այրում է նրա մատաղ սիրտը. այդ ցանկությունների հետ այնտեղ ծնվում են նախանձն ու ատելությունը. բոլոր լափող կրքերը միանգամից թափ են ստանում, նա այդ հույզերը տանում-խառնում է աշխարհի փոթորկին և իր հետ ետ է բերում ամեն նրնկո. տուն է վերադառնում դժգոհ թե՛ իրենից և թե՛ ուրիշներից. քնում է՝ գլխում ունենալով հազարավոր սին ծրագրեր, խռոված հազարավոր ցնորքներից, և գոռոզությունը նույնիսկ հրաշում նրան ցույց է տալիս այն ցնորական բարիքները, որոնց ցանկությամբ տանջվում է և որոնք չի ստանալու իր ամբողջ կյանքում։ Ահա ձեր աշակերտը. տեսնենք, թե ինչպիսին է իմը։

Եթե նրա ուշադրությունը գրաված առաջին տեսարանը սխրություն է պատճառում, ապա առաջին ինքնամփոփումը հաճույքի զգացում է առաջացնում։ Տեսնելով, թե ինչքան սրատներից է զերծ ինքը, նա իրեն երջանիկ է զգում ավելի քան կարծում էր։ Նա բաժանում է իր նմանների վշտերը, բայց այդ բաժանումը կամավոր ու հաճելի է։ Նա միաժամանակ վայելում է և՛ գութը նրանց ցավերի հանդեպ, և՛ երջանկությունը, որ ինքն ազատ է այդ ցավերից. նա իր մեջ զգում է այն ուժը, որ մեզ տանում է մեզնից այն կողմ և թույլ է տալիս այլուր փոխադրելու մեր սեփական բարեկեցության համար ավելորդ եռանդը։ Ուրիշի ցավը ողբալու համար անկասկած պետք է այն ճանաչել, բայց չպետք է զգալ։ Երբ տանջվել ենք կամ վախենում ենք տանջվել, խրճճում ենք տանջվողներին։ Բայց տանջվելիս մենք միայն մեզ ենք խղճում։ Ուրեմն, եթե բոլորը ենթակա են կյանքի թշվառություններին, և ամեն ոք ուրիշներին նվիրում է միայն այն

զգացումը, որին առայժմ անձնապես կարիք չունի. ապա դրանից հետևում է, որ գիտաստուգությունը պիտի մի շատ քաղցր զգացում լինի, քանի որ մեր օգտին է խոսում. մինչդեռ, ընդհակառակն, խստասիրտ մարդը միշտ դժբախտ է, քանի որ նրա սրտի վիճակը նրան ոչ մի ավելորդ զգացում չի թողնում՝ ուրիշների ցավերին նվիրելու։

Երջանկության մասին մենք շատ անգամ ենք դատում հիմնվելով արտաքին երևույթների վրա. երջանկությունը ենթադրում ենք այնտեղ, որտեղ ամենից քիչ կա. փնտրում ենք այնտեղ, որտեղ չի կարող լինել. ուրախությունը երջանկության շատ երկդիմի նշանն է։ Ուրախ մարդը շատ անգամ մի դժբախտ է, որն աշխատում է խաբել ուրիշներին ու ինքն իրեն զվարճացնել։ Այդպիսի մարդիկ, որ այնքան զվարթ, դյուրահաղորդ, հանգիստ են հասարակության մեջ, համարյա բոլորը մռայլ ու բարկացկոտ են իրենց տանը, և իրենց սպասավորներն են կրում նրանց՝ դուրսը, իրենց շրջապատում շռայլած ուրախության ծանրությունը։ Ճշմարիտ գոհունակությունը ո՛չ ուրախ է, ո՛չ խայտացող. ով նախանձախնդիր է այդպիսի քաղցր զգացումի համար, այն վայելելիս մտածում է դրա մասին, ըմբռշխնում է այն, վախենում է, որ հանկարծ չցնդի։ Իսկական երջանիկ մարդը չի խոսում երբեք ու չի ծիծաղում. նա, այսպես ասած, երջանկությունը կսեղմի իր սրտին։ Աղմկալի խաղերը, փոթորկոտ ուրախությունը քողարկում են զգվանքն ու ձանձրույթը։ Բայց մելամաղձությունը հեշտանքի բարեկամն է, խանդաղատանքն ու արցունքներն ընկերանում են ամենաքաղցր վայելքներին, և ծայրահեղ ուրախությունն ինքը ավելի շուտ լաց է առաջացնում, քան ծիծաղ։

Եթե առաջին հայացքից զվարճությունների շատությունն ու բազմազանությունը թվում է թե նպաստում են երջանկությանը, եթե հավասարակշռված կյանքի միօրինակությունը սկզբում ձանձրալի է թվում, ապա ավելի ուշադիր մտածողով խնդրին, տեսնում ենք, ընդհակառակն, որ հոգու ամենաքաղցր ունակությունը վայելքների չափավորության մեջ է, որը քիչ է տեղիք տալիս ցանկության ու գարշանքի։ Ցանկությունների առաջացրած անհանգստությանը հաջորդում են

հետաքրքրասիրությունն ու փոփոխամտությունը. աղմկահույզ հաճույքների դատարկությունը ձանձրույթ է առաջացնում։ Ոչ ոք չի ձանձրանա իր կյանքից, եթե չի ճանաչում նրանից ավելի հաճույալին։ Աշխարհի բոլոր մարդկանց մեջ վայրենիներն են ամենից քիչ հետաքրքրասերներն ու ամենից քիչ ձանձրացողները. նրանք անտարբեր են դեպի ամեն ինչը, օգտվում են ոչ թե իրերից, այլ՝ իրենցից. կյանքներն անց են կացնում ոչինչ չանելով ու չեն ձանձրանում։

Աշխարհիկ մարդն ամբողջապես դիմակավորված է։ Համարյա երբեք ինքն իր մեջ չլինելով, նա միշտ օտար է այնտեղ ու իրեն շատ վատ է զգում, երբ ստիպված է ներամփոփվել։ Ինչ որ կա՝ դա ոչինչ է, ինչ որ թվում է՝ ամեն ինչ է նրա համար։

Այն երիտասարդի դեմքի վրա, որի մասին քիչ առաջ խոսեցի, ես չեմ կարող չպատկերացնել մի ինչ-որ լիրբ, անախորժ, կեղծ բան, որը տհաճություն է պատճառում, խրտնեցնում է պարզասիրտ մարդկանց. իսկ իմ սանի դեմքին՝ մի հետաքրքիր ու պարզ կերպարանք, որը արտահայտում է գոհունակություն, հոգու իսկական պայծառություն, որը ներշնչում է հարգանք, վստահություն, և որը, կարծես, սպասում է միայն բարեկամության զեղումին՝ փոխադարձաբար տալու համար իրենը նրանց, որոնք շփվում են իր հետ։ Ոմանց թվում է, թե մարդու կերպարանքը բնությունից արդեն նշված գծերի պարզ զարգացումն է։ Իմ կարծիքով, բացի այդ զարգացումից, մարդու դիմագծերը անզգալիորեն կազմվում ու կերպարանք են ստանում հոգու՝ հաճախակի ու սովորական որոշ դրսևորումների ազդեցության տակ։ Այդ դրսևորումները պատկերվում են դեմքի վրա, դա անկասկած է. և երբ նրանք վեր են ածվում ունակության, անպայման տևական հետք են թողնում։ Ահա թե ինչպես եմ ենթադրում, որ դիմագիծը խառնվածքի հայտարարն է, որ երբեմն կարելի է մեկի մասին դատել մյուսով, առանց խորհրդավոր բացատրություններ փնտրելու, որոնք այնպիսի ծանոթություններ են ենթադրում, որ մենք չունենք։

Երեխան երկու որոշակի դրսևորում ունի՝ ուրախություն և ցավ. նա ծիծաղում է կամ լաց լինում. միջինը նշանակություն

չունի նրա համար, անդադար այս շարժումների մեկից անցնում է մյուսին։ Այս անընդհատ փոփոխությունները չեն թողնում, որ նրա դեմքի վրա կազմվեն կայուն արտահայտություններ, և նա վերջնական դիմագիծ ստանա. բայց այն տարիքում, երբ ավելի զգայուն դառնալով, ավելի ուժգին կամ ավելի տևականորեն է արտահայտվում, ամենախոր տպավորությունները թողնում են այնպիսի հետքեր, որոնք դժվար է վերացնել, և հոգու սովորական վիճակն ստեղծում է դիմագծերի մի այնպիսի հորինվածք, որը ժամանակ պարձնում է անջնջելի։ Բայց և այնպես, հազվադեպ չէ տեսնել մարդկանց, որոնք իրենց դիմագիծը փոխում են տարբեր հասակներում։ Ես այդպիսիներին շատ եմ տեսել ու միշտ էլ նկատել եմ, որ նրանց մոտ, որոնց մոտիկից հետևել, ուսումնասիրել եմ, նույնպես փոխվել են սովորական կրքերը։ Այս միակ դիտողությունը, որ լիովին հաստատված է, ինձ վճռական է թվում, և անտեղի չէ դաստիարակչական մի ձեռնարկում, ուր պետք է սովորել արտաքին նշաններից դատել հոգու շարժումները։

Ես չգիտեմ, թե իմ երիտասարդը, չսովորելով պայմանական ձևերն ընդօրինակել ու չունեցած զգացումները կեղծել, մի՞թե նվազ սիրելի կլինի. այստեղ հարցը դրա մասին չէ. ես միայն գիտեմ, որ նա ավելի սիրող կլինի, և ես դժվարանում եմ հավատալ, թե մի մարդ, որ միայն ինքն իրեն է սիրում, կկարողանա այնքան լավ կեղծել՝ հաճելի լինելու համար այնքան, ինչքան նա, ով ուրիշների հանդեպ ունեցած համակրանքից իր համար երջանկություն մի նոր զգացմունք է քաղում։ Իսկ ինչ վերաբերում է իրեն՝ այդ զգացումին, կարծում եմ, որ այդ մասին բավական շատ եմ խոսել, որպեսզի խելացի ընթերցողը կարողանա կողմնորոշվել այս կետի վրա, և որպեսզի բացահայտ լինի, թե ես ինձ չեմ հակասել։

Ուրեմն, ես վերադառնում եմ իմ մեթոդին և ասում. «Երբ ճգնաժամային հասակը մոտենում է, պատանիներին ցույց տվե՛ք այնպիսի առնարաններ, որոնք նրանց զսպում են, և ոչ թե այնպիսիները, որոնք կրգռում են. նրանց ծնվող երևակայությանը տվե՛ք զբաղվելու այնպիսի բաներ, որ փոխա-

նակ բոցավառելու նրանց զգացումները, սանձեն այդ զգացումների եռանդը։ Հեռացրե՛ք նրանց մեծ քաղաքներից, որտեղ կանանց պճնանքն ու անհամեստությունը փոքացնում ու կանխում են բնության դասերը, որտեղ ամեն ինչ նրանց աչքի առաջ ցուցադրում է այնպիսի հաճույքներ, որ նրանք պետք է ճանաչեն միայն այն ժամանակ, երբ կկարողանան ընտրություն կատարել։ Վերադարձրե՛ք նրանց իրենց նախնական բնակարանները, որտեղ գյուղական պարզությունը թույլ չի տա, որ նրանց տարիքի հույզերն արագ զարգանան. իսկ եթե արվեստի համար ունեցած ճաշակը նրանց դեռևս կապում է քաղաքին, ջանացե՛ք, այդ ճաշակով իսկ, կանխել մի վտանգավոր պարապության առաջացումը նրանց մեջ։ Խնամքով ընտրեցե՛ք նրանց շրջապատը, զրաղմունքը, հաճույքները, ցո՛ւյց տվեք նրանց հուզիչ, բայց համեստ նկարներ, որոնք նրանց հուզեն առանց հրապուրելու և զարգացնեն նրանց զգայությունը, առանց զրգռելու զգայարանները։ Խորհեցե՛ք նաև, որ ամեն տեղ կարող են չափազանցություններ լինել, որ չչափավորված կրքերը միշտ սպասածից ավելի վնաս են պատճառում։ Հարցը այն չէ, որ ձեր աշակերտին պարձնեք մի հիվանդապահ, գթության եղբայր, նրա հայացքը լևեռեք ցավի ու տառապանքի մշտական տեսարանների վրա, նրան տանեք մի հաշմանդամից մյուսի մոտ, հիվանդանոցից՝ հիվանդանոց, գլխատման հրապարակից՝ բանտերը. պետք է նրան հուզել և ոչ թե կարծրացնել մարդկային թշվառությունների պատկերով։ Երբ երկար ժամանակ միևնույն տեսարաններին հանդիսատես ենք լինում, այլևս նրանցից չենք տպավորվում. սովորությունը վարժեցնում է ամեն ինչի. մի բան որ շատ ենք տեսնում, այլևս չենք պատկերացնում, այնինչ երևակայությունն է միայն, որ մեզ զգալ է տալիս ուրիշների ցավերը. այդպես է, որ շարունակ մահն ու տառապանքը տեսնելով, քահանաներն ու բժիշկները խստասիրտ են դառնում։ Թո՛ղ, ուրեմն, ձեր աշակերտը ճանաչի մարդու ճակատագիրն ու իր նմանների թշվառությունները, բայց չլինի նրանց հաճախակի վկան։ Լավ ընտրված մի տեսարան, մեկ անգամ, հարմար պահին, ցույց տրվելով, մի ամբողջ համար նրան կտա զուրկի և խորհրդածությունների նյութ։ Ոչ

այնքան նրա տեսածը, որքան տեսածի վրա հաճախ խորհելն է, որ որոշում է նրա դատողությունն այդ մասին, որևէ իրողության թողած տպավորությունը գալիս է ավելի շուտ նրա վերհիշումից, քան իրենից: Այդպիսով, խնամքով ընտրելով օրինակները, դասերը, պատկերները, դուք երկար ժամանակով կրթացնեք զգացողությունների սրությունը և բնությունը կխարեք՝ հետևելով նրա սեփական ուղղությանը:

Քանի ձեր աշակերտի միտքը աստիճանաբար հարստանա փիլիսոփայական գիտելիքներով, ընտրեցե՛ք դրանց հետ առնչվող գաղափարները. քանի նրա ցանկությունները բազմանան, ընտրեցե՛ք դրանք զսպող պատկերներ: Մի ծերունի զինվորական, հռչակված թե՛ իր վարքով ու բարքով և թե՛ արիությամբ, ինձ պատմել է, որ իր առաջին երիտասարդության ժամանակ հայրը, որ իւելացի մարդ էր, բայց չափազանց ջերմեռանդ, տեսնելով, որ տղան տարվել էր կանանցով, ամեն ջանք գործ դրեց նրան նետ պահելու համար. բայց ի վերջո տեսնելով, որ հակառակ բոլոր միջոցներին, տղան ձեռքից գնում է, որոշեց նրան տանել վեներախտավորների հիվանդանոց և, առանց նախազգուշացնելու, մտցրեց մի սրահ, ուր մի խումբ այդ դժբախտներից, ահռելի բուժման ենթարկվելով, քավում էին այն մեղքերը, որ իրենց այնտեղ էին առաջնորդել: Ի տես այս ահավոր պատկերի, որը ցնցում էր բոլոր զգայարանները, քիչ է մնում, որ երիտասարդի ուշքը գնա: «Գնա՛, թշվա՛ռ անառակ,— ասաց նրան հայրը խստորեն,— հետևի՛ր քո զզվելի հակումին. շատ չանցած դու երջանիկ կլինես ընդունվելով այստեղ ու կրելով ամենադաժան ցավեր, կատիպես հորդ՝ շնորհակալություն հայտնել աստծուն քո մահվան համար»:

Այս մի քանի խոսքերը, միացած այն ուժեղ տեսարանին, որն ազդել էր երիտասարդի վրա, անջնջելիորեն տպավորեցին նրան: Ստիպված լինելով իր երիտասարդությունը զորամասերում անցկացնել, նա ավելի լավ համարեց իր ընկերների հեգնանքին արժանանալ, քան թե ընդօրինակել նրանց անառակությունները: «Ես մարդ էի,— ասում էր ինձ,— ես թույլ կողմեր ունեցա, բայց մինչև չափահաս լինելս առանց սոսկումի չէի կարող տեսնել հասարակաց կանանց»: Ուսուցիչ-

նե՛ր, ինչքան կարելի է քիչ խոսեցեք, բայց սովորեցե՛ք ընտրել վայրը, ժամանակը, անձնավորությունները, հետո ձեր բոլոր դասերը տվե՛ք օրինակներով ու վստահ եղե՛ք արդյունքի մասին։

Այնքան էլ դժվար չէ մանկությունն օգտագործել. այնտեղ սպրգած չարիքն անդարմանելի չէ, և լավը կարող է ուշ հայտնվել։ Սակայն այդպես չէ այն տարիքի համար, երբ մարդ սկսում է իսկապես ապրել։ Այդ հատակը երբեք չի տևում այնքան, որքան պետք է նրա օգտագործման համար, և նրա կարևորությունը պահանջում է անդուլ ուշադրություն. ահա թե ինչու ես շեշտը դնում եմ այն երկարաձնելու արվեստի վրա։ Հաջող մշակելու լավագույն կանոններից մեկը ամեն ինչ ըստ հնարավորին երկարաձգելն է։ Առաջադիմությունը դարձրե՛ք դանդաղ ու հաստատ. մի՛ թույլ տվեք, որ պատանին մարդ դառնա այն պահին, երբ նրան ոչինչ չի մնում անելու այդպիսին լինելու համար։ Մինչդեռ մարմինն աճում է, մտքերը, որոնք կոչված են բալասան տալու արյանը և ուժ՝ նյարդերին, կազմվում ու ձևավորվում են։ Եթե դուք նրանց ստիպեք տարբեր ուղղությամբ ընթանալ, և այն, ինչ ահմանված է կատարելագործելու մի անձնավորություն, ծառայի մեկ ուրիշի կազմավորման, և՛ մեկը, և՛ մյուսը կմնան թույլ վիճակում, ու բնության գործը կլինի անկատար։ Մտքի գործողությունները, իրենց հերթին, կազդվեն այս աղավաղումից, և հոգին, որ նույնքան անզոր է, ինչքան մարմինը, կգործի տկար ու նվազ։ Ո՛չ արիությունը և ո՛չ էլ ընդունակությունը չեն կազմում խոշոր և ուժեղ անդամները, և ես գտնում եմ, որ հոգու ուժը չի զուգորդվում մարմնի ուժին, երբ մանավանդ երկու գոյացությունների հաղորդակցության օրգանները վատ են դասավորված։ Բայց ինչքան էլ լավ դասավորված լինեն, նրանք միշտ էլ թույլ կգործեն, եթե ծնունդ են առնում միայն մի հյուծված, աղքատ արյուն ունեցող օրգանիզմից՝ զրկված այն հյութից, որ ուժ ու կյանք է տալիս մեքենայի բոլոր մասերին։ Առհասարակ, ավելի շատ հոգեկան ուժ է նկատվում այն մարդկանց մեջ, որոնք երիտասարդ հասակից չեն այլասերվել վաղաժամորեն, քան նրանց մեջ, որոնց ապականությունը սկսվել է շատ շուտ.

այդ է, անկասկած, այն պատճառներից մեկը, որով բարոյականի տեր ժողովուրդներն ընդհանրապես քաջությամբ ու ոգացոմով գերազանցում են բարոյականից զուրկ ժողովուրդներին։ Այս վերջիններըը փայլում են միայն ինչ-որ նրբին հատկություններով, որոնց անվանում են հանճար, կորովամտություն, նրբամտություն. բայց իմաստության և դատողության այն վեհ ու ազնիվ հատկությունները, որ մարդկանց բարձրացնում ու պատվում են գեղեցիկ գործերով, առաքինությամբ, իսկապես, օգտակար միջոցառումներով, միայն առաջինների մոտ են գտնվում։

Ուսուցիչները գանգատվում են, որ այս տարիքին հատուկ եռանդը պատանիներին անհնազանդ է դարձնում. ընդունում եմ. բայց արդյո՞ք մեղավորը իրենք՝ ուսուցիչները չեն։ Մի անգամ, որ եռանդի ղեկավարությունը թողնում են զգացողություններին, չպետք է մոռանան, որ դրանից հետո այլևս հնարավոր չէ նրան ուրիշ ուղղություն տալ։ Մի իմաստակի երկար ու սառը քարոզները չեն կարող ջնջել իր աշակերտի մտքից այնտեղ կազմված հաճույքների պատկերը, սրտից վանել նրան կրծող ցանկությունները, մեղմացնել եռանդը մի խառնվածքի, որից գիտի նա օգտվել. և չի՞ ըմբոստանա արդյոք նա այն արգելքների դեմ, որոնք խանգարում են միակ նրջանկությանը, որի մասին ինքը գաղափար ունի։ Եվ այն իրոք օրենքի մեջ, որ նրան պարտադրում են՝ առանց կարողանալու նրան հասկանալի դարձնել, նա սոսկ կտեսնի այն ամարդու քմահաճույքն ու ատելությունը, որ ուզում է իրեն տանջել։ Բնավ տարօրինակ չէ, ուրեմն, որ նա, իր հերթին, ընդվզի ու ատի այդ մարդուն։

Ես ընդունում եմ, որ առանց անհաշտության կարելի է ավելի հեշտորեն տանելի լինել և առերևույթ հեղինակություն ձեռք բերել։ Սակայն չեմ հասկանում, թե ինչի՞ է պետք այն հեղինակությունը, որով ազդում են երեխայի վրա՝ միայն բորբոքելու և ոչ թե ճնշելու համար նրա կրքերը. սա նման է այն բանի, որ կատաղած ձին զսպելու համար ձիապանը նրան քշում է դեպի անդունդը։

Պատանու եռանդը ոչ թե արգելք է նրա դաստիարակությանը, այլ ընդհակառակն, դաստիարակությունը գլուխ կգա

ու կկատարելագործվի նրանով, և եռանդն է, որ ձեզ միջոց կտա ազդելու երևույթի սրտին, երբ նա այլևս ավելի թույլ չի լինի, քան դուք։ Երեխայի առաջին համակրությունները այն սանձերն են, որոնցով դուք ղեկավարում եք նրա բոլոր շարժումները՝ նա ազատ էր, այժմ հպատակվում է։ Քանի դեռ ոչինչ չէր սիրում, նա կախում ուներ միայն ինքն իրենից ու իր պահանջներից, հենց որ սկսեց սիրել, կախում կունենա իր համակրություններից։ Այդպես են կազմվում նրան մարդկային ցեղին միացնող կապերը։ Բայց նրա նորածին զգայնությունն ուղղելով դեպի մարդկային ցեղը, չկարծեք, թե հենց սկզբից նա կընդգրկի բոլոր մարդկանց, թե «մարդկային ցեղ» բառը նրա համար որևէ նշանակություն կունենա։ Ոչ, այդ զգայնությունը նախ և առաջ կտարածվի իր նմանների վրա, իսկ այդ նմանները նրա համար անծանոթներ չեն, այլ այնպիսիք, որոնց հետ նա կապեր ունի, որոնց՝ սովորությունն իրեն սիրելի ու պետքական է դարձրել, որոնք, իհարկե, տեսնում է, որ իր պես են մտածում ու զգում, որոնք ենթակա են այն նույն ցավերին, որ ինքն է կրել, զգում են այն նույն հաճույքները, որ ինքն է վայելել, մի խոսքով՝ նրանք, որոնց մոտ նկատած բնավորության նույնությունը իրեն մղում է առավել սերտորեն կապվելու նրանց հետ։ Իր բնությունը հազար ու մի ձևով մշակելուց, իր սեփական և ուրիշների մեջ նկատած զգացումների վրա լրջորեն խորհրդածելուց հետո է, որ նրան կհաջողվի իր անձնական գիտելիքներն ընդհանրացնել մարդկային հասարակության վերացական գաղափարի ազդեցության տակ և իր մասնակի համակրություններին միացնել այնպիսիները, որոնք կարող են նրան նույնացնել իր տեսակի հետ։

Սիրելու ընդունակություն ձեռք բերելուն զուգահեռ նա զգայուն է դառնում դեպի ուրիշների սերը և, դրանով իսկ, ուշադիր՝ դեպի այդ սիրո նշանները[1]։ Ահա թե ինչպիսի նոր

[1] Սերը կարող է փոխադարձ չլինել, բայց բարեկամությունը՝ երբեք։ Բարեկամությունը մի փոխանակություն է, մի պայմանագրություն, ինչպես մյուսները, բայց ամենից սուրբը։ Բարեկամ բառը, բացի իրենից, ուրիշ հոմանիշ չունի։ Այն մարդը, որ իր բարեկամի բարեկամը չէ, ան-

իշխանություն կտրվի ձեզ նրա վրա, ինչպիսի շղթաներով կկապկպեք նրա սիրտը, մինչդեռ ինքը չի նկատի այդ։ Ինչե՞ր չի զգա նա, երբ բացելով աչքերն ինքն իր վրա, տեսնի, թե ինչ եք արել նրա համար, երբ ինքն իրեն համեմատի իր տարիքի ուրիշ երիտասարդների հետ և ձեզ համեմատի ուրիշ դաստիարակների հետ։ Ասում եմ՝ երբ տեսնի. բայց զգուշացե՛ք նրան ասելու այդ. եթե ասեք, նա այլևս չի տեսնի։ Եթե դուք նրանից պահանջեք հնազանդություն՝ ձեր ցույց տված խնամքի փոխարեն, կկարծի, թե դուք նրան խաբել եք, կմտածի, թե այնպես ձևացնելով, որ իբր թե նրան ձրի եք ծառայում, դուք նրան պարտքի տակ եք դնում ու պարտավորեցնում մի պայմանագրով, որին ինքը երբեք համաձայն չի եղել։ Իզուր դուք կավելացնեք, թե ինչ որ նրանից պահանջում եք, միայն իրեն համար է. վերջիվերջո, դուք նրանից պահանջում եք, ու պահանջում եք՝ հենվելով ձեր արածի վրա, որն արել եք առանց նրա հավանության։ Երբ դժբախտի մեկը վերցնում է այն դրամը, որ ձևացնում էին, թե իբր տալիս են նրան, և ակամա պարտավորության տակ է ընկնում, դուք աղմուկ եք բարձրացնում այդ «անարդարության» դեմ. արդյո՞ք դուք ավելի անարդար չեք, երբ ձեր աշակերտից պահանջում եք այնպիսի իննամքի գինը, որ նա՝ երբեք չի ընդունել։

Ապերախտությունը ավելի հազվադեպ կլիներ, եթե շահադիտական բարեգործություններն ավելի քիչ լինեին։ Մարդիկ սիրում են այն, ինչ իրենց բարիք է բերում. սա մի շատ բնական զգացում է։ Ապերախտություն չկա մարդու սրտում, բայց կա շահասիրություն. ավելի քիչ ապերախտ պարտավորվողներ կան, քան շահադետ բարեգործներ։ Եթե դուք ինձ ճաճանչում եք ձեր բարիքը, ես կսակարկեմ գնի մասին, իսկ երբ ձևացնում եք, թե նվիրում եք, հետո ձեր ուզած գինը սահմանելու համար, դուք կեղծարարություն եք անում. ձրի լինելն է, որ այն անգին է դարձնում։ Սիրտը օրենքներ է ստանում միայն իրենից. երբ ուզում եք նրան կաշկանդել,

---

Կասկած չեննգամիտ է, որովհետև միայն փոխադարձելով կամ փոխարարձելով ձևացնելով բարեկամությունը, կարելի է այն ստանալ։

շղթայազերծում եք նրան. ազատ թողնելով է, որ կարելի է նրան շղթայել։

Երբ ձկնորսը կարթը գցում է ջուրը, ձուկը գալիս պտրտվում է դրա շուրջը՝ առանց կասկածելու. բայց երբ խայծի տակ ծածկված կարթից բռնվելով, զգում է, թե նրան քաշում են, աշխատում է փախչել։ Մի՞թե ձկնորսը բարեգործ է, ձուկը՝ ապերախտ։ Ո՞րը է տեսնված, որ բարերարից մոռացված բարերարչլը երբևէ մոռանա նրան։ Ընդհակառակն, շարունակ խոսում է նրա մասին հաճույքով ու մտածում գորովանքով, և եթե առիթ է ներկայանում որևէ ծառայությամբ ցույց տալու, թե չի մոռացել նրա բարեգործությունը, ինչպիսի՜ ներքին գոհունակությամբ է արտահայտում իր երախտագիտությունը, ինչպիսի՜ քաղցր հրճվանքով է ցույց տալիս այդ յանը, ինչպիսի՜ ոգևորությամբ է ասում. «Հերթը իմն է»։ Ահա բնության ճշմարիտ ձայնը. երբեք ճշմարիտ բարեգործությունը ապերախտություն չի ծնի։

Սթե, ուրեմն, երախտագիտությունը բնական զգացում է և եթե նրա աղդեցությունը դուք չեք ոչնչացնում ձեր սխալով, ասատ եղե՛ք, որ ձեր աշակերտը սկսում է տեսնել ձեր հոգատարության արժեքը և զգացվում է, բավական է, որ դուք ինքներդ չորոշեք նրա արժեքը. և ձեր հոգածությունը նրա սրտում ձեր հեղինակությունը այնպես կբարձրացնի, որ ոչինչ չի կարող ոչնչացնել այն։ Բայց, նախքան այդ բարենպաստ պայմանից լիովին օգտվելը, զգուշացե՛ք, որ ձեռքից բաց չթողնեք ձեր հեղինակությունը՝ ինքներդ ձեզ ներաշնահատելով նրա մոտ։ Ձեր արածներով պարծենալ նրա մոտ՝ նշանակում է անտանելի լինել. մոռանալ դրանք՝ նշանակում է հիշեցնել նրան։ Մինչև այն ժամանակ, երբ դուք նրա հետ կկարողանաք վարվել որպես չափահաս մարդու հետ, երբեք չպետք է ակնարկեք ձեր հանդեպ իր պարտքի մասին, այլ՝ սոսկ ինքն իր հանդեպ ունեցած պարտքի մասին։ Նրան հեզ ու հլու դարձնելու համար բոլորովին ազատ թողե՛ք նրան. խուսափեցե՛ք նրանից, որպեսզի փնտրի ձեզ. նրա հոգին բարձրացրե՛ք երախտագիտության ազնիվ զգացման, նրա հետ խոսելով միայն իր շահերից։ Սա երբեք չէի դանկանա, որ նրան ասեին, թե ինչ որ արվում է՝ նրա օգտի

համար է, մինչև նա ինքն ի վիճակի չլինի այդ ըմբռնելու. այդպիսի խոսքերը նրա մոտ այն տպավորությունը կստեղծեին, որպես թե դուք կախում ունեք նրանից, և ձեզ իր ծառայի տեղ կընդունի: Բայց այժմ, երբ սկսում է զգալ, թե ինչ է նշանակում սիրել, կզգա նաև, թե ինչպիսի քաղցր կապով մարդը կարող է կապվել սիրած բանի հետ և իր նկատմամբ ձեր ցույց տված ջերմ հոգատարության մեջ այլևս չի տեսնի ստրուկի ծառայություն, այլ բարեկամի խանդաղատանք: Ոչինչ այնպես չի ազդի մարդկային սրտի վրա, ինչպես լավ ճանաչված մտերիմ ձայները, որովհետև վստահ ենք, թե նա խոսում է միայն մեր օգտին: Կարելի է կարծել, որ բարեկամը խաբվում է, բայց երբեք՝ որ ուզում է խաբել: Երբեմն դիմադրում ենք նրա խորհուրդներին, բայց երբեք չենք արհամարհում դրանք:

Մենք, վերջապես, մտնում ենք բարոյական իրակարգի մեջ. մենք արել ենք մարդու երկրորդ քայլը: Եթե հարմար լիներ, ես այստեղ կփորձեի ցույց տալ, թե ինչպես սրտի առաջին շարժումներից բարձրանում են խղճի առաջին ձայները, և թե ինչպես սիրո և ատելության զգացումներից ծնվում են չարի ու բարու առաջին գաղափարները, ցույց կտայի, որ **արդարություն** ու **բարություն** բառերը միայն վերացական բառեր չեն, այլ բարոյական դրույթյուններ՝ հասկացությամբ կազմված, այլև բանականությամբ լուսավորված հոգու իսկական զգացմունքներ են, որոնք հանդիսանում են մեր նախնական զգացմունքների կարգավորված առաջադիմությունը, և թե միայն բանականությամբ, խղճից անկախ, ոչ մի բնական օրենք չի կարելի հաստատել, որ բնության ամբողջ իրավասությունը ցնորք է, եթե հիմնված չէ մարդկային սրտի որևէ բնական կարիքի վրա[1]: Բայց ես մտա-

[1] Այն կանոնն անգամ, թե ուրիշի հետ պետք է վարվենք այնպես, ինչպես ուզում ենք, որ վարվեն մեզ հետ, որպես իսկական հիմք ունի միայն խիղճն ու զգացումը. որովհետև ո՞ւր է ճշգրիտ արդապատճառը ինձ հետ վարվելու այնպես, որպես թե ես մի ուրիշը լինեի. մանավանդ, երբ ես բարոյապես վստահ եմ երբեք միևնույն վիճակում չգտնվելու. և ո՞վ կարող է ինձ վստահեցնել, որ հավատարմորեն հետևելով այս կանոնին, ուրիշներն էլ, փոխադարձաբար, կանեն նույնը իմ նկատմամբ: Քարը

Ծոմ եմ, քե իմ գործը չէ այստեղ մետաֆիզիկա կամ բարոյականոզիյուն ուսուցանել, ոչ էլ մի որևէ այլ դասախոսություն կարդալ, ես կբավականանամ ցույց տալով մեր կազմվածքին համապատասխան մեր զգացմունքների ու մեր գիտելիքների կարգն ու առաջադիմությունը։ Ուրիշները գուցե ապացուցեն այն, ինչ ես միայն նշում եմ այստեղ։

Քանի որ իմ Էմիլը մինչև հիմա միայն իրեն էր դիտել, ապա առաջին հայացքը, որ կգցի իր նմանների վրա, կստիպի նրան իրեն համեմատել նրանց հետ, և այս համեմատությունից ծագող առաջին զգացումը առաջին տեղը գրավելու իղձն է։ Ահա այն կետը, որտեղ անձի սերը փոխվում է ինքնասիրության, և սկսում են ծնունդ առնել նրա հետ կապված բոլոր կրքերը։ Բայց որպեսզի որոշենք, քե նրա բնավորության մեջ իշխող կրքերը արդյոք մարդկային ու մե՞ղմ կլինեն, քե դաժան ու վնասակար, քե արդյոք նրանք կլինեն յարիկամեցողության ու կարեկցության՞ կրքեր, քե նախանձի ու տենչանքի, պետք է իմանալ, քե մարդկանց միջև ո՞րը կլինի իր նախնական տեղը և ի՞նչ կարգի արգելքներ հարկադրված կլինի հաղթահարել՝ հասնելու համար այն տեղը, որ ցանկանում է գրավել։

Այս հետազոտության մեջ նրան առաջնորդելու համար, մարդկանց՝ իրենց ցեղին հատուկ սայթաքումներով ցույց տալուց հետո, այժմ պետք է նրանց ցույց տալ իրենց տարբերություններով։ Այստեղ երևան կգան բնական ու քաղա-

---

օգտվում է արդարի ուղղամտությունից ու իր սեփական անարդարացիությունից. նա գոհ կլինի, որ բոլորն այդպես լինեն, բացի իրենից։ Այս պայմանը, ինչ էլ որ ասեն, շատ նպաստավոր չէ բարի մարդկանց համար։ Բայց երբ սրտազեղության ուժով նույնանում եմ իմ նմանի հետ, ինձ զգում եմ, այսպես ասած, նրա մեջ, ապա ինքս չտանջվելու համար է, որ չեմ ցանկանում, որ նա տանջվի. ես նրանով շահագրգռված եմ ի սեր իմ եսի, և այս կանոնի պատճառը հենց իր՝ բնության մեջ է, որն ինձ թելադրում է իմ բարեկեցությունը փնտրել այնտեղ, որտեղ որ ես զգում եմ իմ գոյությունը։ Սրանից եզրակացնում եմ, որ ճիշտ չէ, քե բնության օրենքի կանոնները միայն դատողության վրա են հիմնված. նրանք ավելի հաստատուն և ավելի ապահով հիմք ունեն։ Մարդկանց սերը, առաջացած մեր եսի սիրուց, մարդկային արդարության հիմքն է։ Ամբողջ բարոյականության խոտացումը տրված է Ավետարանում որպես օրենք։

քացիական անհավասարության գնահատման հարցը և ամբողջ հասարակական կարգի պատկերը։

Պետք է հասարակությունն ուսումնասիրել մարդկանցով և մարդկանց՝ հասարակությամբ. նրանք, ովքեր կկամենան քաղաքականության ու բարոյականության մասին խոսել՝ մեկը մյուսից անջատելով, ո՛չ այս կհասկանան, ո՛չ այն։ Սկզբում քննության առնելով նախնական հարաբերությունները, կտեսնենք, թե նրանք ինչպիսի ազդեցություն են գործելու մարդկանց վրա, և թե ինչպիսի հույզեր են ծնվելու նրանցից. կտեսնենք, որ, փոխադարձաբար, հույզերի ազդմամբ է, որ այդ հարաբերությունները բազմանում ու ամրապնդում են։ Ավելի շուտ չափավոր սիրտն է, քան ուժեղ բազուկները, որ մարդկանց անկախ ու ազատ են դարձնում։ Ով քիչ ցանկություններ ունի, քիչ մարդկանցից կախում կունենա. բայց միշտ էլ շփոթելով մեր ունայն ցանկությունները մեր ֆիզիկական պահանջների հետ, նրանք, ովքեր այս վերջինների վրա են կառուցել մարդկային հասարակությունը, միշտ էլ հետևանքը պատճառի տեղ են ընդունել ու մոլորվել իրենց բոլոր դատողությունների մեջ։

Բնական վիճակում գոյություն ունի իրողության իսկական ու անխորտակելի հավասարություն, որովհետև անկարելի է, որ այս վիճակի մեջ մարդկանց միմյանցից ունեցած տարբերությունը բավականաչափ մեծ լինի՝ մեկը մյուսից կախման մեջ դնելու համար։ Քաղաքացիական իրադրության մեջ գոյություն ունի խարուսիկ ու դատարկ մի իրավահավասարություն, քանի որ սրան պաշտպանելու ամրմանված միջոցները հենց իրենք են այն քանդում, և քանի որ հանրային ուժը, սվելացած ուժեղագույնին՝ ճնշելու համար տկարին, խզում է այն մի տեսակ հավասարությունը, որ բնությունն էր դրել նրանց միջև[1]։ Այս առաջին հակասություններից են բխում այն բոլոր հակասությունները, որ նկատվում են քաղաքացիական իրադրության մեջ՝ երևույթի ու իրականության

---

[1] Բոլոր երկրների օրենքների համայնական ոգին մեջտ էլ նպաստավորում է ուժեղին տկարի և ունեորին չունեորի դեմ. այս անպատեհությունը անխուսափելի է և առանց բացառության։

միջև։ Միշտ էլ մեծամասնությունը զոհվում է փոքրամասնությանը, հասարակական օգուտը՝ մասնավորին. միշտ էլ արդարություն ու հնազանդություն սպիցիֆիկ բառերը պիտի ծառայեն որպես միջոց բռնությանն ու որպես զենք՝ անարդարությանը. սրանից հետևում է, որ առանձնաշնորհյալ դասերը, որոնք հավակնում են, թե իրենք օգտակար են մյուսներին, իրականում իրենք իրենց են օգտակար՝ ի վնաս մյուսների. սրանով պետք է դատել, թե ըստ արդարության և ըստ դատողության ինչպիսի ակնածանքի են արժանի նրանք։ Մնում է տեսնել, թե այն դիրքը, որ յուրացրել են նրանք, ո՞րչափով նպաստավոր է գրավողների երջանկությանը, իմանալու համար, թե մեղնից յուրաքանչյուրը ի՞նչպես պետք է դատի իր սեփական ճակատագրի մասին։ Այս է այժմ մեզ համար կարևոր ուսումնասիրությունը. բայց լավ ուսումնասիրելու համար պետք է նախապես ճանաչել մարդկային սիրտը։

Եթե հարցը մարդուն իր դիմակով երիտասարդներին ցույց տալը լիներ, կարիք չկար այդ անելու. երիտասարդներն իրենք միշտ էլ կտեսնեն նրան. բայց քանի որ դիմակն ինքը՝ մարդը չէ, ու դրա փայլը չպետք է որ նրանց շլացնի, մարդկանց նկարագրելիս նկարագրեցե՛ք այնպես, ինչպես որ են, ոչ թե որպեսզի նրանց ատեն, այլ որպեսզի նրանց խղճան ու չցանկանան նրանց նմանվել։ Այս է, իմ կարծիքով, ամենալավ զգացումը, որ մարդ կարող է ունենալ իր ցեղի նկատմամբ։

Այս տեսակետից, անհրաժեշտ է այստեղ վերցնել մեր՝ մինչև այժմ հետևած ճանապարհին հակառակ մի ուղի և երիտասարդին ավելի շուտ կրթել ուրիշի օրինակով, քան թե իր։ Եթե մարդիկ նրան խաբեն, նա նրանց կատի, բայց եթե նկատի, որ նրանք, իրեն խնայելով, փոխադարձաբար միմյանց են խաբում, կխղճա նրանց։ «Աշխարհի տեսարանը,— ասում էր Պյութագորոսը,— օլիմպիոսյան խաղերին է նման. ոմանք այնտեղ առևտուր են անում ու փող շահելու մասին են մտածում, ուրիշներն իրենց անձն են վտանգում ու փառք որոնում, մյուսները բավարարվում են խաղը դիտելով, և սրանք մյուսներից վատ չեն»։

Ես կկամենայի, որ երիտասարդի ընկերների մեջ այնպիսի

ընտրություն անեին, որ նա լավ կարծիքի լիներ նրանց մասին, ովքեր ապրում են իր հետ, նրան այնպես լավ սովորեցնեին վերնախավը ճանաչել, որ այնտեղ կատարված ամեն ինչի մասին վատ գաղափար կազմեր։ Թո՛ղ նա իմանա, զգա, որ մարդը բնականից բարի է, թո՛ղ մերձավորին դատի իրմով, բայց թո՛ղ տեսնի միաժամանակ, որ հասարակությունը ինչպես է այլանդակում ու այլասերում մարդկանց, թո՛ղ նրանց նախապաշարումների մեջ գտնի նրանց բոլոր կրքերի աղբյուրը, թո՛ղ հակված լինի գնահատելու յուրաքանչյուր առանձին անհատի, բայց թո՛ղ արհամարհի բազմությունը, թո՛ղ տեսնի, որ բոլոր մարդիկ համարյա նույն դիմակն են կրում, բայց թո՛ղ իմանա նաև, որ ծածկող դիմակներից ավելի գեղեցիկ դեմքեր կան նրանց տակ։

Այս մեթոդը, պետք է խոստովանել, ունի իր անպատեհությունները, և հեշտ չէ այն կիրառել կյանքում, որովհետև, եթե երիտասարդը շատ վաղ սկսի դիտող լինել, եթե դուք նրան վարժեցնեք շատ մոտիկից զննել ուրիշի գործերը, նրան կդարձնեք չարախոս ու հեգնող, վճռական ու արագ դատող. նա իր համար զզվելի հաճույք կդարձնի՝ ամեն ինչում մի չարագուշակ մեկնություն գտնել ու ոչինչ լավ չտեսնել, նույնիսկ որևէ լավ բանի մեջ։ Նա, առնվազն, կսովորի մոլության տեսարանին և դիտել վատերին՝ առանց նողկանքի, այնպես, ինչպես ուրիշները սովորում են տեսնել դժբախտներին՝ առանց դթության։ Շատ չանցած, ընդհանուր ապականությունը նրան կծառայի ոչ որպես դաս, այլ որպես չքմեղանք. նա կմտածի, թե մարդն այդպիսին է և ինքը չպետք է ցանկանա ուրիշ կերպ լինել։

Գուցե դուք ուզում եք նրան դաստիարակել սկզբունքով ու նրան ծանոթացնել մարդկային սրտի բնության հետ, այն արտաքին պատճառների գործողությանը, որը մեր հակումների վեր է ածում մոլությունների. նրան՝ այսպես հանկարծ փոխադրելով զգացական իրերից մտային իրերին, դուք գործ եք ածում մի մետաֆիզիկա, որը նա ի վիճակի չէ հասկանալու. դուք վերստին կընկնեք այն անհարմար դրության մեջ, որից մեծ զգուշությամբ խուսափել էիք մինչև այժմ, նրան տալով դասեր, որոնք նման են պարոցական դասերի, նրա մտքում

փոխարինելով իր սեփական փորձառությունն ու պատողության զարգացումը ուսուցչի փորձառությամբ ու հեղինակությամբ։

Այս երկու խոչընդոտները միանգամից վերացնելու և, առանց պատանու սեփական սիրտը խաթարելու, մարդկային սիրտը նրա ըմբռնողությանը մատչելի դարձնելու համար, ես կկամենայի մարդկանց նրան ցույց տալ հեռվից, ցույց տալ տարբեր ժամանակներում կամ տարբեր վայրերում և այն ձևով, որ նա կարողանա դիտել գործողությունը, առանց մասնակցելու դրան։ Ահա պատմությամբ զբաղվելու ժամանակը. դրանով է, որ նա պիտի կարդա սրտերի մեջ, առանց փիլիսոփայական դասերի, դրանով է, որ, որպես պարզ հանդիսատես, պիտի տեսնի մարդկանց, առանց որևէ ուղղակի շահագրգռության և առանց հույզերի, որպես նրանց դատավորը, այլ ոչ թե որպես նրանց համախոհը, ոչ էլ որպես նրանց մեղադրողը։

Մարդկանց ճանաչելու համար պետք է նրանց տեսնել գործելիս։ Կյանքում մենք լսում ենք նրանց խոսքերը, նրանք հանդես են գալիս իրենց ճառերով ու քաջցնոմ իրենց գործերը. բայց պատմության մեջ սրանք քողազերծ են արվում ու դատվում են փաստերով։ Իրենց ասածներն իսկ օգնում են նրանց գնահատելու, որովհետև, համեմատելով նրանց արածը ասածի հետ, անմիջապես կտեսնենք, թե ինչ են նրանք ու ինչ են ձգտում երևալ. ինչքան ավելի ծպտվեն, այնքան հեշտ է նրանց ճանաչելը։

Դժբախտաբար, այս ուսումնասիրությունն ունի վտանգավոր կողմեր ու բազմաթիվ անպատեհություններ։ Դժվար է կանգնել այնպիսի տեսակետի վրա, որով կարելի լիներ իր նմաններին դատել անաչառությամբ։ Պատմության ամենամեծ սխալներից մեկն այն է, որ նա առավելապես մարդկանց նկարագրում է իրենց վատ, քան թե լավ կողմերով. կարծես պատմությունը հետաքրքիր է միայն հեղափոխություններով, կործանումներով, իսկ եթե մի ժողովուրդ աճում ու զարգանում է մի խաղաղ կառավարության ներքո, այդ մասին ոչինչ չի ասում. այդ մասին նա սկսում է խոսել այն ժամանակ, երբ, այլևս ինքն իրեն չբավարարելով, այդ ժողովուրդը մասնա-

Այից է լինում իր հարևանների գործերին, կամ թողնում է, որ նրանք մասնակցեն իր գործերին. պատմությունը ժողովրդին նկարագրում է այն ժամանակ միայն, երբ նա արդեն իր անկումն է ապրում. մեր ամբողջ պատմությունը սկսվում է այնտեղից, որտեղ պետք է վերջանար։ Մենք ունենք ճշգրիտ պատմությունը կործանվող ժողովուրդների. մեզ պակասում է աճող, զարգացող ժողովուրդներինը. նրանք բավականին երջանիկ, բավականին իմաստուն են. այդ պատճառով էլ պատմությունը լռում է նրանց մասին. և իրոք, մենք տեսնում ենք, նույնիսկ մեր օրերին, որ ամենալավ կառավարությունները նրանք են, որոնց մասին ամենից քիչ են խոսում։ Ուրեմն, մենք միայն վատն ենք ճանաչում. լավը հազիվ թե հայտնվում է։ Միայն չարերն են հռչակվում, լավերը մոռացվում են կամ ծաղրուծանակի ենթարկվում. ահա թե ինչպես է պատմությունը, փիլիսոփայության նման, անվերջ զրպարտում մարդկային ցեղը։

Բացի այդ, բնական է, որ պատմության մեջ նկարագրված դեպքերը իրականում տեղի ունեցած անցքերի իսկական պատկերը չլինեն. նրանք փոփոխվում են պատմագրի գլխի մեջ, կաղապարվում են նրա շահերին համապատասխան, ստանում են նրա նախապաշարումների գույնը։ Ո՞ր պատմագիրը կկարողանա ընթերցողին դնել հենց տեսարանի կենտրոնում՝ տեսնելու համար եղելություններն այնպես, ինչպես կատարվել են։ Անգիտությունը կամ կողմնապահությունը կերպարանափոխում են ամեն ինչ։ Առանց նույնիսկ աղավաղելու պատմական մի անցք, ընդլայնելով կամ սեղմելով նրան վերաբերող հանգամանքները, որքա՜ն տարբեր ձևերով կարելի է բնութագրել այն։ Դրե՛ք միևնույն առարկան տարբեր դիրքերում, հազիվ թե միևնույնը երևա, սակայն ոչինչ չի փոխված, բացի նայողի հայացքից։ Հանուն ճշմարտության պատվի, մի՞թե բավական է որևէ ճշմարիտ իրողություն ինձ ներկայացնել այնպես, որ ես այն տեսնեմ բոլորովին այլ կերպ, քան եղել է։ Քանի՞ անգամ ավելի կամ պակաս մեծ մի ծառ, աջ կամ ձախ կողմը գտնված մի ժայռ, քամու բարձրացրած մի փոշեմրրիկ, աննկատելիորեն, վճռական դեր են խաղացել մի ճակատամարտի բախտի համար։

Մի՞թե դա կարգելի, որ պատմագիրը պարտության կամ հաղթանակի պատճառի մասին գրի այնպիսի վստահությամբ, կարծես ինքը ներկա է եղել։ Ի՞նչ արժեն ինձ համար դեպքերն իրենք, եթե պատճառն ինձ ծանոթ չէ, և ի՞նչ դաս կարող եմ ստանալ մի դեպքից, եթե չգիտեմ նրա իսկական պատճառը։ Պատմաբանը թեև տալիս է պատճառը, բայց դա հնարովի է. և քննադատությունն ինքը, որի մասին այնքան աղմուկ են բարձրացնում, ուրիշ բան չէ, եթե ոչ կշռադատման արվեստ, մի արվեստ՝ բազմաթիվ ստերի մեջ ընտրելու այն, որն ամենից ավելի է մոտ ճշմարտությանը։

Չե՞ք կարդացել «Կլեոպատրա» կամ «Կասանդրա» և կամ ուրիշ նման գրքեր։ Հեղինակն ընտրում է մի ծանոթ դեպք, ապա նրան միացնելով իր տեսակետները, զարդարելով հնարովի մանրամասնություններով, երևակայական անձնավորություններով, որոնք երբեք գոյություն չեն ունեցել, առասպել առասպելի վրա է դիզում՝ գիրքը հետաքրքիր դարձնելու համար։ Ես քիչ տարբերություն եմ տեսնում այս վեպերի ու ձեր պատմություններ միջև. միակ տարբերությունն այն է, որ վիպասանը ավելի է ուժ տալիս իր երևակայությանը, իսկ պատմագիրը ավելի շուտ ուրիշների երևակայությանն է ենթարկվում։ Սրան ես կարող եմ ավելացնել և այն, որ առաջինը առաջադրում է մի բարոյական նպատակ, լավ կամ վատ, իսկ մյուսը դրանով երբեք չի մտահոգվում։

Ինձ կասեն, թե պատմական հարազատությունը ավելի քիչ է հետաքրքրում, քան բարքերի ու բնավորությունների ճշտությունը. բավական է, որ մարդկային սիրտը լավ նկարագրված լինի, կարևոր չէ, որ դեպքերը ճիշտ ներկայացված լինեն, որովհետև. կավելացնեն, վերջիվերջո ի՞նչ նշանակություն ունեն երկու հազար տարի առաջ տեղի ունեցած դեպքերը։ Իրավացի են, եթե պատկերները լավ են ներկայացված, բնականորեն. բայց եթե դրանք մեծ մասամբ իրենց օրինակն ունեն պատմագրի երևակայության մեջ, արդյոք վերստին չէ՞նք ընկնում այն անհարմար դրության մեջ, որից ուզում էինք խուսափել, և գրողների հեղինակությանը հանձնել այն, ինչ ցանկանում ենք վերցնել ուսուցիչների հեղինակությունից։ Եթե իմ աշակերտը միայն մոտացածին պատկերներ է

տեսնելու, ավելի լավ է, որ նրանք նկարված լինեն իմ ձեռքով, քան թե մի ուրիշի. գոնե նա դրանք ավելի լավ կդիմորոնի։

Երիտասարդի համար ամենավատ պատմագիրը նա է, ով դատողություններ է անում։ Իրողություննե՛ր, իրողություննե՛ր, և թո՛ղ ինքը դատի, այդպես է, որ նա կսովորի ճանաչել մարդկանց։ Եթե շարունակ հեղինակի դատողությունն է, որ պիտի առաջնորդի նրան, նա միայն ուրիշի աչքով կտեսնի ամեն ինչ, իսկ եթե այդ աչքը չլինի, այլևս ոչինչ չի տեսնի։

Ես մի կողմ եմ թողնում ժամանակակից պատմությունը, ոչ միայն այն պատճառով, որ նա այլևս ինքնուրույն դիմաշիծ չունի, և մեր դարի մարդիկ բոլորն էլ իրար նման են, այլ որովհետև մեր պատմաբանները, ցանկանալով միմիայն փայլել, մտածում են սոսկ անչափ գունազարդված դիմանկարներ տալ, որոնք շատ անգամ ոչինչ չեն ներկայացնում[1]։ Ընդհանրապես, հներն ավելի քիչ նկարագրություններ են տալիս, ավելի քիչ միտք ու ավելի շատ զգացմունք են դնում իրենց դատողությունների մեջ. այնուհանդերձ, հարկավոր է մեծ ընտրություն անել նրանց միջև ու նախ վերցնել ոչ թե ամենից խոհականները, այլ ամենից պարզերը։ Ես չէի կամենա երիտասարդի ձեռքը տալ ո՛չ Պոլիբոս, ո՛չ Սալուստոս. Տակիտոսը ծերունիների գիրք է. երիտասարդներն ընդունակ չեն նրան ըմբռնելու. պետք է սովորել մարդու գործերի մեջ տեսնել նրա սրտի առաջին գծերը, նախքան նրա խորքերը թափանցել կարենալը. առածները կարդալուց առաջ, պետք է իրողությունները լավ կարդալ իմանալ։ Առածների փիլիսոփայությունը միայն փորձարկությանն է պիտանի։ Երիտասարդությունը ոչինչ չպետք է ընդհանրացնի. նրա ամբողջ ուսուցումը պետք է լինի մասնավոր կանոններով։

Թուկիդիդեսը, իմ կարծիքով, պատմարանի իսկական օրինակ է։ Նա դեպքերը հաղորդում է առանց դատողություններ

---

[1] *Տես՛ք Դավիլային, Գուիցիարդինին, Մորադային, Սոլիսին, Մաքիավելլին, Բրյանմն, Իրեն՝ դը Թուին։ Վերտոն համարյա միակն էր, որ գիտեր նկարագրել՝ առանց դիմանկարներ տալու։*

անելու, բայց ոչ մի պարագա բաց չի թողնում, որ մենք չկարողանայինք ինքներս դատել։ Ամեն ինչ, որ պատմում է, նա դնում է ընթերցողի աչքի առաջ. փոխանակ իրեն դնելու դեպքերի ու ընթերցողների միջև, նա մի կողմ է քաշվում. մեզ թվում է, թե չենք կարդում, այլ տեսնում ենք։ Դժբախտաբար, նա միշտ պատերազմների մասին է խոսում, ու իր պատմածների մեջ տեսնում ենք աշխարհի ամենաքիչ ուսանելի բանը, այսինքն՝ պատերազմներ իմանալը։ «Նահանջ բյուրոց»-ը և «Մեկնություն կեսարա»-ն հավասարյա միևնույն իմաստությունն ու միևնույն թերությունն ունեն։ Բարի Հերոդոտը, առանց պատկերների, առանց առակների, բայց սահուն, միամիտ, հետաքրքիր ու հաճելի մանրամասնություններով լեցուն, գուցե պատմագիրներից ամենալավը լիներ, եթե այդ միևնույն մանրամասնությունները չվերածվեին հաճախ երեխայական պարզության, որն ավելի ընդունակ է փչացնելու երիտասարդության ճաշակը, քան թե ձևավորելու. նրան կարդալու համար արդեն ընտրություն կատարելու կարիք կլինի։ Ես ոչինչ չեմ ասում Տիտոս-Լիվիոսի մասին, նրա հերթն էլ կգա. բայց նա քաղաքագետ է, հռետոր, ամեն ինչ, որը բնավ հարմար չէ այս հասակի համար։

Պատմությունն ընդհանրապես թերի է նրանով, որ արձանագրում է միայն զգալի ու ակնհայտնի դեպքերը, որոնք կարելի է որոշել անուններով, վայրերով, թվականներով. բայց այդ դեպքերի դանդաղ ու աստիճանաբար հասունացող պատճառները, որոնց չի կարելի նույնպես ճշտել, միշտ անհայտ են մնում։ Շատ անգամ մի շահված կամ կորցրած ճակատամարտի մեջ գտնում ենք սկզբնապատճառը որևէ հեղափոխության, որը, նույնիսկ այդ ճակատամարտից առաջ, արդեն անխուսափելի էր դարձել։ Պատերազմը միայն դրսևորում է բարոյական պատճառներով բնորոշված դեպքերը, պատճառներ, որոնք պատմաբանները հազվադեպ են տեսնում։

Փիլիսոփայական միտքը դեպի այս կողմն է ուղղել ներկա դարի գրողներից շատերի խորհրդածությունները. սակայն ես կասկածում եմ, որ ճշմարտությունը մի բան շահի նրանց աշխատանքից։ Տարված լինելով սիստեմամոլությամբ, ոչ

մեկը նրանցից չի ուզում տեսնել իրերն այնպես, ինչպես որ կան, այլ՝ այնպես, ինչպես հարմարվում են իրենց սիստեմին։

Այս բոլոր խորհրդածություններին ավելացրեք և այն, որ պատմությունը ավելի շատ գործողություններ է ցույց տալիս, քան մարդկանց, որովհետև վերջիններին նա վերցնում է միայն որոշակի րոպեներում, իրենց չքերթային զգեստներով, ցուցադրում է միայն հանրային մարդուն, որ հարդարվել է՝ հրապարակով երևալու համար. նա նրան բնավ չի հետևում տանը, աշխատասենյակում, ընտանիքում, բարեկամների շրջանակում. նրան նկարագրում է ներկայացման րոպեին. ավելի շուտ նրա հագուստն է պատկերում, քան թե անձը։

Մարդկային սիրտն ուսումնասիրել սկսելուց առաջ ես դերադասում եմ կարդալ անհատների կենսագրություն. որովհետև այդ դեպքում մարդը ինչքան էլ փորձի թաքնվել, պատմարանը ամեն տեղ կհետևի նրան. չի թողնի նրան հանդիստ ոչ մի րոպե, ոչ մի անկյուն՝ դիտողի խուզարկու հայացքից խուսափելու համար. և հենց այն ժամանակ, երբ մեկը կարծում է, թե լավ է թաքնված, մյուսը նրան ավելի լավ է ի ցույց դնում։ «Նրանք, ովքեր մարդու կյանքն են պատմում,— ասում է Մոնտեյնը,— ավելի լավ է զբաղվեն մտքերով, քան թե դեպքերով, ավելի շուտ՝ ներքին կյանքով, քան արտաքին աշխարհով. այդպիսիներն ինձ համար ավելի հարմար են. ահա թե ինչու, ամեն տեսակետով, Պլուտարքոսն է իմ սիրած պատմաբանը»։

Ճիշտ է, որ մարդկային հավաքականության կամ ժողովուրդների հանճարը խիստ տարբեր է մասնավոր մարդու բնավորությունից, և շատ անկատար կճանաչենք մարդկային սիրտը, եթե նրան չքննենք նաև բազմության մեջ. բայց ոչ-նվազ ճշմարիտ է նաև այն, որ մարդկանց դատելու համար պետք է սկսել ուսումնասիրելով մարդուն, և նա, ով կատարելապես կճանաչի յուրաքանչյուր անհատի հակումները, կարող է նախատեսել նրանց հավաքական հետևանքները ժողովրդական զանգվածի մեջ։

Այստեղ կրկին պետք է դիմել հներին, այն պատճառներով, որ ես արդեն հայտնել եմ, և, բացի դրանից, այն պատ-

ձառով, որ բոլոր սովորական ու հասարակ, բայց ճշգրիտ ու բնորոշ մանրամասնությունները ժամանակակից ոճից վատարված լինելով, մարդիկ նույնքան գունազարդված են, մեր հեղինակների կողմից, իրենց մասնավոր կյանքում, ինչքան աշխարհի բեմի վրա։ Պատշաճությունը, որ նույնքան խստապահանջ է գրքերի, որքան գործերի մեջ, թույլ է տալիս հրապարակով ասել միայն այն, ինչ թույլատրում է հրապարակով անել, և քանի որ մարդիկ ցույց են տրվում միայն ներկայանալի վիճակում, գրքերից նրանց ճանաչում ենք այնքան, ինչքան բեմերի վրա։ Կարող եք հարյուր անգամ փոխել, վերափոխել թագավորների կենսագրությունը. մենք այլևս Սվետոնիոսներ * չենք ունենա։

Պլուտարքոսի մոտ առատ են այդ նույն մանրամասնությունները, որոնց մեջ մենք այլևս չենք համարձակվի մտնել։ Նա մի չտեսնված շնորհք ունի մեծ մարդկանց նկարագրելու մանրուքների մեջ. նա այնքան հաջողակ է իր գծերի ընտրության մեջ, որ հաճախ մի բառ, մի ժպիտ, մի շարժում բավական է բնորոշելու նրա հերոսին։ Մի դուրալի խոսքով Հաննիբալը հանգստացնում է իր տարսափած բանակին, որը ծիծաղելով առաջ է շարժվում դեպի այն ճակատամարտը, որ իրեն էր հանձնելու Իտալիան. որպես ձիու՝ զավազանի վրա հեծած Ագեզիլասը ** ինձ սիրել է տալիս մեծ արքային հաղթողին. կեսարը, անցնելով մի փոքր գյուղի միջով ու զրուցելով բարեկամների հետ, նրանց մեջ հայտնաբերում է, առանց այդ մասին մտածելու, այն նենգամիտին, որն ասում էր, թե միայն Պոմպեոսին էր ուզում հավասարվել. Ալեքսանդրը մի դեղ է ընդունում՝ առանց որևէ բառ արտասանելու. դա նրա կյանքի ամենագեղեցիկ րոպեն է. Արիստիդեսը իր անունն է գրում մի խեցու վրա ու այդպիսով արդարացնում իր մականունը ***. Ֆիլոպեմենը, վերարկուն հանած,

---

* Հռոմեացի պատմիչ, հեղինակ «Տասներկու կայսրեր» կենսագրական հատորիկի (ապրել է մոտավորապես 69—141 թթ.)։— Ս. Ֆ.

** Թագավոր Սպարտայի (397—360 մ. թ. ա.), որը հաղթեց պարսիկներին։— Ս. Ֆ.

*** Կոչվում էր Արդար Արիստիդես՝ իր արդարասիրության համար։— Ս. Ֆ.

փայտ է ջարդում իր հյուրընկալի խոհանոցում։ Ահա նկարագրելու իսկական արվեստը։ Մարդու նկարագիրը չի երևում մեծ գծերի մեջ, ոչ էլ բնավորությունը՝ մեծ գործերում. մանրուքների մեջ է դրսևորվում բնավորությունը։ Հանրային գործերը կա՛մ շատ հասարակ են, կա՛մ շատ շպարված ու համարյա միայն սրանց վրա է, որ ժամանակակից արժանապատվությունը թույլ է տալիս մեր հեղինակներին կանգ առնել։

Անցյալ դարի ամենամեծ մարդկանցից մեկը անկասկած պ. դը Տուրենն էր։ Ոմանք քաջություն ունեցան նրա կենսագրությունը հետաքրքիր դարձնել փոքր մանրամասնություններով, որոնք նրան ընդհանուր ճանաչում ու սեր բերին. բայց ինչքա՜ն մանրամասնություններ սուիպված եղան չնչել, որոնք նրան է՛լ ավելի սիրել ու ճանաչել կտային։ Ես նրանցից միայն մեկը կհիշեմ, որը լավ տեղից եմ լսել, և որը Պլուտարքոսը աչքաթող չէր անի, իսկ Ռամսեյը չէր գրի, եթե պիտենար իսկ։

Ամառային մի շոգ օր, դերկոմս Տուրենը, սպիտակ պիջակով ու գդակը գլխին, իր նախասենյակի պատուհանից նայում էր դուրս. գալիս է նրա ծառաներից մեկն ու հագուստից խարվելով, կարծում է, թե խոհարարներից մեկն է, որի հետ ինքը մտերիմ հարաբերության մեջ էր։ Զգուշությամբ մոտենում է հետևից ու իր ծանր ձեռքով մի ուժեղ հարված հասցնում նրա հետույքին։ Հարվածն ստացողը իսկույն ետ է շրջվում։ Դողահար սպասավորը տեսնում է տիրոջ դեմքը։ Նա ծնկի է գալիս՝ բոլորովին շփոթված. «Տե՛ր իմ, կարծում էի, թե Ժորժն է...»։ «Դիցուք Ժորժը լիներ,— բացականչեց Տուրենը, հետույքը շփելով,— մի՞թե կարելի է այդքան ուժեղ խփել»։ Ահա թե ինչը դուք չեք համարձակվում դրել, քշվառնե՛ր։ Եղե՛ք, ուրեմն, ընդմիշտ անբնական, անզգա, թաթախեցե՛ք, պնդացրե՛ք ձեր երկաթե սիրտը ձեր գծուծ վայելչամոլության մեջ, հանուն արժանապատվության եղե՛ք արհամարհելի։ Բայց դո՛ւ, լա՛վ երիտասարդ, որ կարդում ես այս դեպքի մասին և այնքան զորովանքով զգում ես նրա բացահայտած հոգեկան ազնվությունը, նույնիսկ առաջին շարժման մեջ, կարդա՛ նաև այդ մեծ մարդու փոքրոդությունը։

ները, երբ խնդիրը նրա ծագման ու անվան մասին էր։ Հիշի՛ր, որ այդ նույն Տաւրենն էր, որ թվում էր, թե ամենուրեք իր եղբորորդուն էր թողնում առաջնությունը, որպեսզի տեսնեն, թե այդ երեխան մի գերիշխանական տան գլխավորն էր։ Համեմատի՛ր այս հակասությունները, սիրի՛ր բնականը, արհամարհի՛ր կարծիքը և ճանաչի՛ր մարդուն։

Շատ քիչ մարդիկ են ընդունակ ըմբռնելու, թե ինչ ապավորություն կարող են թողնել այսպիսի ընթերցումները երիտասարդի՝ բոլորովին թարմ մտքի վրա։ Նրանք, որ անհայտ լինելով գրքերի վրա, վարժված լինելով կարդալ առանց մտածելու, մենք այնքան քիչ ենք ազդվում մեր կարդացածից, որ արդեն մեր մեջ ունենալով այն կրքերն ու նախապաշարումները, որոնցով լիքն են մարդկանց պատմությունն ու կյանքը, մեղ համար բնական են դարձնում այն ամենը, ինչ անում են նրանք, որովհետև մենք քնությունից դուրս ենք եկել և ուրիշներին դատում ենք մեզնով։ Բայց պատկերացրե՛ք մի երիտասարդի՝ դաստիարակված իմ սկզբունքներով, պատկերացրե՛ք իմ Էմիլին, որին արված առանց տարվա հարատև խնամքի նպատակն էր եղել՝ նրան օժտել անկաշառ դատողությամբ ու առողջ զգացմունքներով, պատկերացրե՛ք նրան՝ վարագույրը բարձրանալուց հետո առաջին անգամ հայացքը գցելիս աշխարհի տեսարանի վրա, կամ, ավելի շուտ, բեմի հետևում կանգնած՝ դիտելով դերասաններին, իրենց հագուստները փոխելիս, և զննելով պալատներն ու ճախարակները, որոնց կոպիտ հեղինակությունը հրապուրում է հանդիսատեսների աչքերը։ Շատ չանցած, նրա առաջին զարմանքին կհաջորդեն ամոթն ու արհամարհանքը իր ցեղի հանդեպ. նա կզայրանա՝ տեսնելով, որ ամբողջ մարդկությունը, ինքն իրեն խաբելով, նվաստանում է այս մանկական խաղերի առաջ. նա կվշտահարվի՝ տեսնելով իր եղբայրներին միմյանց պատառոտելիս հանուն ցնորքների, և որոնք կատաղի գազանների են փոխվում՝ մարդ լինելուց չդոհանալով։

Անկասկած, աշակերտի բնական տրամադրությունների պայմաններում, եթե ուսուցիչը զգուշությամբ և ընտրովի կատարի իր ընթերցումները, նրան դնի այնպիսի ուղու վրա,

որ նա կարողանա այդ ընթերցումներից համապատասխան հետևություններ անել, այդ փորձը նրա համար կլինի գործնական փիլիսոփայության մի լավագույն դասընթաց, անտարակույս, ավելի լավ հասկացված, քան բոլոր դատարկ տեսությունները, որոնցով խճողում են պատանիների ուղեղը մեր դպրոցներում։ Պյուտոսի վիպական ծրագրերին հետևելուց հետո, թո՛ղ Ֆինեասը (ուսուցիչը) հարց տա աշակերտին, թե ի՞նչպիսի իրական բարիք կարող է բերել նրան աշխարհի տիրապետությունը, որից չկարողանար հենց այժմվանից օգտվել՝ առանց այնքան նեղություններ կրելու. մենք այնտեղ լոկ մի լավ ու անցողիկ խոսք ենք տեսնում, բայց էմիլը նյութ կգտնի մի շատ խելոք խորհրդածության համար, որ ինքը առաջինը կաներ և որը երբեք չի ջնջվի նրա մտքից, այնտեղ չտեսնելով ստացած տպավորությունն արգելակող ոչ մի հակառակ նախապաշարում։ Երբ հետո, կարդալով այդ անմիտի կենսագրությունը, տեսնի, որ նրա բոլոր մեծ ծրագրերը հանգեցին այն բանին, որ ինքն իրեն սպանել տվեց մի կնոջ ձեռքով, փոխանակ հիանալու այդ կարծեցյալ հերոսությամբ, ի՞նչ կարող է տեսնել այդքան մեծ մի զորավարի սխրագործություններում և այդքան մեծ մի քաղաքագետի հնարագիտություններում, եթե ոչ այն, որ այդ բոլորը նրա համար էր, որպեսզի գնա գտնի այն չարաբաստիկ կդմինդրը, որը անպատվաբեր մի մահով պիտի վերջ դներ նրա կյանքին ու ծրագրերին։

Բոլոր աշխարհակալները չեն սպանվել, բոլոր հափշտակիչները չեն ձախողվել իրենց գործերում. նրանց մեծամասնությունը երջանիկ կթվա հաստատակ կարծիքներով նախապաշարված մտքերին։ Բայց նա, ով առանց նշանակություն տալու պատահարներին, մարդկանց երջանկությունը իրենց սրտի վիճակով է դատում, նրանց թշվառությունը կտեսնի հենց իրենց հաջողություններուն մեջ. նա կտեսնի, թե ինչպես նրանց ցանկություններն ու մաշող մտահոգությունները ընդարձակվում ու ավելանում են իրենց բախտի հետ միաժամանակ. կտեսնի, թե ինչպես շնչասպառ են լինում առաջ գնալիս՝ առանց երբեք հասնելու իրենց նպատակին. նա նրանց կնմանեցնի այն անփորձ ճանապարհորդներին,

որոնք առաջին անգամ բարձրանալով Ալպյան լեռները, յուրաքանչյուր լեռը բարձրանալիս՝ կարծում են, թե այդ վերջինն է, բայց երբ հասնում են գագաթը, հուսահատությամբ տեսնում են, որ ավելի բարձր գագաթները դեռևս առջևն են։

Օգոստոս կայսրը, բոլոր իր համաքաղաքացիներին հպատակեցնելուց ու հակառակորդներին կործանելուց հետո, քառասուն տարի կառավարեց գոյություն ունեցող ամենամեծ կայսրությունը. բայց, չնայած այդ հզոր իշխանության, նա կլուխը պատերին էր խփում և ընդարձակ պալատը լցնում իր աղաղակներով, Վարուսից պահանջելով իր ոչնչացված լեգեոններբ։ Եթե նույնիսկ պարտության մատնած լիներ իր բոլոր թշնամիներին, ինչի՞ էին պետք այդ զուր հաղթանակները, քանի որ անընդհատ ամեն տեսակ ցավեր էին ծնվում իր շուրջը. բոլորը՝ նրա ամենասիրելի բարեկամները դավադրում էին իր կյանքին, իսկ ինքն ստիպված էր ողբալ իր մերձավորների ամոթը կամ մահը։ Այդ դժբախտ մարդը ցանկացավ աշխարհը կառավարել, բայց չկարողացավ իր տունը ղեկավարել։ Ի՞նչ հետևանք ստացվեց այդ անփութությունից։ Ամիկ հասակում մահացան նրա եղբորորդին, հոգեզավակը, փեսան. նրա թոռը իր անկողնու խշտիքը կերավ՝ իր թշվառ կյանքը մի քանի ժամ էլ երկարացնելու համար. աղջիկն ու թոռնուհին, իրենց անբարոյական կյանքով նրան խայտառակելով, մեռան, մեկը՝ թշվառությունից ու քաղցից, մի ամայի կղզում, մյուսը՝ բանտում, ցահճի ձեռքով։ Վերջապես ինքը, իր դժբախտ ընտանիքի վերջին մնացորդը, իր հարազատ կնոջ պատճառով, հարկադրվեց իրեն որպես հաջորդ թողնել մի հրեշի։ Այդպիսին է եղել կյանքը այս աշխարհակալի, որի փառքն ու երջանկությունը այնքան հռչակ են ստացել։ Ես չեմ պատկերացնում նրա հիացողներից թեկուզ մեկին, որ կամենար այդպիսի գնով հասնել նման փառքի ու երջանկության։

Ես որպես օրինակ փառասիրությունը վերցրի. բայց մարդկային կրքերի ամբողջ գործողությունը նմանօրինակ դասեր է տալիս նրան, ով ցանկանում է պատմությունն ուսումնասիրել՝ ինքն իրեն ճանաչելու և մեռնողների հաշվին իմաստնություն ձեռք բերելու համար։ Մոտենում է ժամանակը, երբ Անտոնիոսի կյանքը երիտասարդի համար ավելի հետաքրքրք-

բական դաս կլինի, քան թե Օգոստոս կայսրինը։ Այս նոր ուսման ընթացքում էմիլը երբեք իրեն չի ճանաչի այն բոլոր տարօրինակ իրողությունների մեջ, որ պիտի պատկերանան նրա աչքերին։ Բայց նա հենց սկզբից կկարողանա իրենից հեռացնել կրքերի ստեղծած պատրանքը՝ նրանց ծնվելուց առաջ. տեսնելով, թե ինչպես բոլոր ժամանակներում այդ կրքերը կուրացրել են մարդկանց, նա կանխավ կգիտենա, որ ինքն էլ կարող է նույն բախտին արժանանալ, եթե երբևէ անձնատուր լինի դրանց[1]։ Ես գիտեմ, որ այս դասերը նրան հարմար չեն, գուցե, կարիքի դեպքում, ուշացած ու անբավարար լինեն, բայց մի՛ մոռանաք, որ ես չէի ցանկանում այս դասերը քաղել ներկա ուսումնասիրությունից։ Ձեռնարկելով դրան, իմ նպատակն ուրիշ էր. և, անկասկած, եթե այդ նպատակը վատ է իրագործված, մեղքն ուսուցչինն է։

Հիշեցե՛ք մի բան. հենց որ ինքնասիրությունը զարգանում է, հարաբերական եսն սկսում է անդադար գործել, և երիտասարդը երբեք ուրիշներին չի դիտի առանց անդրադառնալու ինքն իրեն, առանց իրեն համեմատելու նրանց հետ։ Հարց է ծագում, ուրեմն, իմանալ, թե իր նմաններն ուսումնասիրելուց հետո որո՞նց շարքը կդասի նա իրեն։ Ես տեսնում եմ, այնպես, ինչպես պատմությունը սովորեցնում են երիտասարդներին, նրանց փոխադրում են, այսպես ասած, իրենց տեսած բոլոր դործող անձերի մեջ, աշխատում են նրանց վերածել մերթ Ցիցերոնի, մերթ Տրայանոսի, մերթ Ալեքսանդրի, նրանց վհատեցնում են, երբ նրանք ներփակվում են իրենց մեջ, յուրաքանչյուրին ստիպում են ցավ զգալ, որ եղածից ավելին չեն։ Այս մեթոդն ունի որոշ առավելություններ, չեմ ժխտում. բայց եթե պատահի, որ իմ էմիլը, մի անգամվա համար, նման զուտհետևանք անգիտցնելով՝ գերազանց լինել մի ուրիշը, իրենից բացի, լինի դա Սոկրատ կամ Կատոն, միևնույնն է, ոչինչ դուրս չի գա. այն մարդը, որն սկսում է ինքն իրենից օտարանալ, վերջիվերջո լիովին կմոռանա իրեն։

---

[1] Նախապաշարումն է, որ միշտ մեր սրտերում բորբոքում է մոլեգին կրքեր։ Նա, ով տեսնում է սոսկ այն, ինչ առկա է, և գնահատում այն, ինչ ճանաչում է, երբեք չի բորբոքվում։ Մեր սխալ դատողություններից են բխում մեր բոլոր ծայրահեղ ցանկությունները։

Փիլիսոփաները չեն, որ մարդկանց ավելի լավ են ճանաչում. նրանք մարդկանց դիտում են միայն փիլիսոփայական նախապաշարումների տեսանկյունից, և ես չգիտեմ ոչ մի գրություն, որում այնքան նախապաշարումներ լինեն, ինչքան փիլիսոփայության մեջ։ Վայրենին մեզ ավելի առողջ է դատում, քան փիլիսոփան։ Վերջինն զգում է իր պակասությունները, վրդովվում է մեր թերություններից և ասում ինքն իրեն. «Մենք բոլորս էլ չար ենք». վայրենին մեզ դիտում է առանց հուզվելու և ասում. «Դուք խելագարներ եք»։ Նա իրավացի է, որովհետև ոչ ոք վատություն չի անի վատության համար։ Իմ սանը այդ վայրենին է, այն տարբերությամբ, որ էմիլը, ավելի խոր մտածելով, ավելի շատ մտքեր համեմատելով, մեր սխալները մոտիկից տեսնելով, ավելի զգույշ է ինքն իր նկատմամբ և դատում է միայն այն, ինչ ինքն է ճանաչում։

Մեր կրքերն են, որ մեզ գրգռում են ուրիշների կրքերի դեմ. մեր շահն է, որ մեզ ստելություն է ներշնչում դեպի չարերը. եթե նրանք մեզ ոչ մի վնաս չտային, մենք նրանց ավելի կխղճայինք, քան թե կատեինք։ Վատերի մեզ արած չարիքը մեզ մոռացնել է տալիս այն չարիքը, որ նրանք իրենք իրենց են պատճառում։ Մենք ավելի հեշտությամբ կներեինք նրանց պակասությունները, եթե կարողանայինք իմանալ, թե ինչքան է նրանց սիրտը պատժում իրենց։ Մենք զգում ենք վիրավորանքը, բայց չենք տեսնում պատիժը. առավելություններն ակնհայտ են, ցավը՝ թաքնված։ Այն մարդը, որ կարծում է, թե վայելում է իր մոլությունների պտուղները, նվազ չի տանջվում, քան եթե ձախողության մատնվեր. նպատակը փոխվում է, բայց մտահոգությունը մնում է նույնը. իզուր են այդպիսի մարդիկ ցուցադրում իրենց բախտավորությունը և թաքցնում սիրտը. նրանց վարմունքը այն ցույց կտա ի հեճուկս իրենց, բայց այն տեսնելու համար չպետք է նման սիրտ ունենալ։

Այն կրքերը, որ մենք բաժանում ենք ուրիշների հետ, հրապուրում են մեզ, իսկ նրանք, որ դիպչում են մեր շահերին՝ ըմբոստացնում. և հենց կրքերից առաջացող անհետևողականությամբ մենք ուրիշների մոտ պարսավում ենք այն, ինչ ինքներս կկամենայինք ընդօրինակել։ Խորշանքն ու պատ-

բանքը անհուսափելի են դառնում, երբ ստիպված են ուրիշից կրել այն չարիքը, որ մենք ինքներս կգործեինք, եթե նրա տեղը լինեինք։

Ի՞նչ է պետք, ուրեմն, մարդկանց լավ զննելու համար։ Մեծ շահագրգռություն՝ նրանց ճանաչելու, մեծ անաչառություն՝ նրանց դատելու, բավական զգայուն սիրտ՝ ըմբռնելու համար բոլոր մարդկային կրքերը, և բավականաչափ զգոնություն՝ դրանց չենթարկվելու համար։ Եթե կյանքում կա այս ուսումնասիրության համար հարմարագույն մի րոպե, այդ այն է, որ ես ընտրել եմ Էմիլի համար. ավելի վաղ՝ մարդիկ նրա համար անծանոթներ կլինեին, ավելի ուշ՝ ինքը նրանց նմանը կլիներ։ Հանրային կարծիքը, որի ազդեցությունը նա սեսնում է, դեռևս իր վրա չի իշխում. կրքերը, որոնց հետևյանքն զգում է, դեռևս չեն հուզել իր սիրտը։ Նա մարդ է՝ շահագրգռվում է իր եղբայրակիցներով. արդարասեր է՝ դատում է իր հավասարներին։ Անկասկած, եթե նրանց լավ դատի, չի կամենա նրանցից ոչ մեկի տեղը լինել, որովհետև նրանց նեղություններ նպատակը, հիմնված լինելով իր ունեցած նախապաշարումների վրա, նրան թվում է մի ինչ-որ վերացական նպատակ։ Նրա բոլոր ցանկացածներն իր տրամադրության տակ են։ Լինելով ինքնաբավ և նախապաշարումներից զերծ, նա ոչ ոքից կախում չունի։ Նա ունի բազուկներ, առողջություն [1], չափավորություն, քիչ կարիքներ ու անհրաժեշտը՝ նրանց բավարարելու։ Մեծացած լինելով կատարյալ ազատության մեջ, նրա համար չարիքների մեծագույնը ստրկությունն է։ Նա խղճում է թշվառ թագավորներին՝ ստրուկներին այն ամենի, ինչ նրանց հպատակվում է. խղճում է կեղծ իմաստուններին՝ շղթայված իրենց ունայն համբավին. խղճում է հիմար հարուստներին՝ զոհ իրենց պերճանքին. խղճում է այն շքերթային հեշտասերներին, որոնք իրենց ամբողջ կյանքը հանձնում են ձանձրույթին՝ ցույց տալու համար, թե զվարճանում են։ Նա կխղճար իրեն

[1] Ես առողջությունն ու լավ կազմվածքը ամենայն համարձակությամբ դնում եմ դաստիարակության շնորհիվ նրա ձեռք բերած առավելությունների շարքը, կամ ավելի շուտ՝ բնության տված այն բարիքների թվին, որ դաստիարակությունը պահպանել է նրա մոտ։

չարիք հասցնող թշնամուն, որովհետև այդ չարության մեջ կտեսներ նրա թշվառությունը։ Ինքն իրեն կասեր. «Կարիք ղգալով ինձ վնասել, այդ մարդն իր բախտը կախման մեջ դրեց իմ բախտից»։

Մի քայլ ևս, և մենք կհասնենք նպատակին։ Ինքնասիրությունը օգտակար, բայց վտանգավոր գործիք է. հաճախ վիրավորում է այն ձեռքը, որ նրանից օգտվում է, և հազվադեպ է լավության անում առանց վատության էմիլը, նկատի ունենալով իր գրաված տեղը մարդկային հասարակության մեջ և տեսնելով, որ այնքան բարեհաջող է այն, փորձվում է ձեր բանականության գործի հաջողության պատիվը վերագրել իր բանականությանը և իր երջանկությունը՝ սեփական արժանիքին։ Նա ինքն իրեն կասի. «Ես իմաստուն եմ, իսկ մարդիկ՝ հիմար»։ Նրանց խղճալով հանդերձ՝ կարհամարհի. իրեն շնորհավորելով՝ ավելի կգնահատի. իրեն նրանցից ավելի երջանիկ զգալով՝ կկարծի, թե ինքն ավելի է արժանի այդպես լինելու։ Ահա այն սխալը, որից ամենից շատ պետք է վախենալ, որովհետև առավել դժվար կլինի այն ոչնչացնել։ Եթե նա մնար այդ վիճակում, շատ քիչ օգտվեր մեր հոգատարությունից, և եթե ընտրության կարիք լիներ, գուցե գերագասեի նախապաշարումների, քան թե մեծամտության պատրանքը։

*Մեծ մարդիկ չեն չարաշահում իրենց գերազանցությունը. տեսնում, զգում են այդ գերազանցությունը, բայց դրանով հանդերձ պակաս համեստ չեն։ Ինչքան շատ ունեն, այնքան ավելի են զգում այն, ինչ պակասում է իրենց։ Նրանք նվազ անապարծ են իրենց գերազանցությամբ, քան նվաստացած՝ իրենց խեղճության զգացումով. և, իրենց ունեցած բացարձակ առավելությունների մեջ, նրանք բավական խելամիտ են, որպեսզի չպոռոզանան այնպիսի մի ձիրքով, որ չունեն։ Բարի մարդը կարող է հպարտանալ իր առաքինությամբ, որովհետև այդ իրեն է պատկանում. բայց ինչո՞վ է հպարտ խելոք մարդը։ Ի՞նչ է արել Ռասինը՝ Պրադոն * չինելու, ի՞նչ՝ Բուալոն ** Կոտեն չինելու համար։*

---

* *Պրադոն Նիկոլա—Ռասինի ժամանակակից ֆրանսիացի ողբերգահռանաստեղծ ու նրա հակառակորդը (1632—1698 թթ.)։— Ս. Ֆ.*

** *Կոտեն Շառլ (արթա)—17-րդ դարի ֆրանսիացի քարոզիչ, աստ-*

Այստեղ արդեն խնդիրը բոլորովին այլ է։ Շարունակենք մնալ ընդհանուր օրինաչափության մեջ։ Ես իմ սանին չեմ ենթադրում ո՛չ արտակարգ մի տաղանդ, ո՛չ էլ սահմանափակ մի իմացականություն։ Ես նրան ընտրել եմ սովորական իմացականություններից, որպեսզի ցույց տամ, թե ինչ կարող է անել դաստիարակությունը մարդու համար։ Բոլոր բացառիկ պարագաները կանոնից դուրս են։ Երբ, ուրեմն, իմ հոգատարության հետևանքով, էմիլը լինելու, տեսնելու, դգալու իր ձևը գերադասում է ուրիշների ունեցածից, նա իրավացի է. բայց երբ կարծում է, թե դրա համար ինքը բնականից ավելի է օժտված ու ավելի է բախտավոր ծնված, քան նրանք, այդտեղ արդեն սխալվում է, հարկավոր է նրան տարհամոզել կամ ավելի շուտ՝ կանխել սխալը, հակառակ դեպքում, գուցե հետո շատ ուշ կլինի այն արմատախիլ անելու համար։

Բացի սնապարծությունից, չկա մոլություն, որ կարելի չլինի բուժել մի մարդու մոտ, եթե նա խելագար չէ։ Իսկ ունապարծությանը կուղղի փորձառությունը, եթե միայն որևէ բանով կարելի է այն ուղղել։ Բայց գոնե ծնվելու րոպեից կարելի է նրա աճմանը խանգարել։ Ուրեմն, իզուր ժամանակ մի կորցրեք բարձր խորհրդածություններով՝ պատանուն ապացուցելու համար, որ նա էլ ուրիշների նման մարդ է, ենթակա միևնույն տկարություններին։ Այն զգացնել տվեք նրան, այլապես չի իմանա երբեք։ Այստեղ կրկին ես շեղվում եմ իմ ուսեփական կանոններից, այսինքն՝ իմ սանին կամովին ենթարկում եմ այն բոլոր արկածներին, որոնք կարող են նրան ապացուցել, թե նա մեզնից ավելի իմաստուն չէ։ Ձեռնածուի դեպքը կարելի է կրկնել հազար ձևով. ես կթողնեմ շողոքորթներին՝ օգտվել նրա թուլությունից. եթե անմիտ մարդիկ նրան մղեն որևէ ծայրահեղության, ես չեմ միջամտի. թույլ կտամ, որ խաղանենգները նրան խաբեն խաղի մեջ[1]. դեռ

վածաբան, որի հայտնած մտքերը Բուալոն ծաղրուծանակի է ենթարկել։— Ս. Ք.

[1] Պետք է ասել, որ մեր սանը դժվար թե ընկնի այդ թակարդի մեջ, քանի որ շրջապատված է բազում զվարճալիքներով, կյանքում երբեք չի

կթողնեմ, որ շողոքորթեն, փետրատեն, կողոպտեն նրան, և Նրբ, լիովին թալանելուց հետո, սկսեն նրան ծաղրել, իր ներկայությամբ այդ մարդկանց շնորհակալություն կհայտնեմ՝ նրան տված դասի համար։ Միակ թակարդները, որոնց դեմ ես կպաշտպանեմ նրան ամենայն նախանձախնդրությամբ, դա կուրտիզանուհիների սարքածներն են։ Միայն մի ձևով կցուցաբերեի նրա նկատմամբ իմ հոգատարությունը՝ իր հետ բաժանելով այն վտանգներն ու անարգանքները, որ նա կկրեր իմ թողտվությամբ։ Ես բոլորը կտանեի լռությամբ, առանց դժգոհելու, առանց հանդիմանության, առանց նրան այդ մասին որևէ մի խոսք ասելու. և վստահ եղեք, որ այս դուստ խոհականությամբ նրա համար իմ կրած տանջանքները իր սրտի վրա ավելի կազդեն, քան իր սեփական տանջանքները։

Չեմ կարող այստեղ չնշել այն դաստիարակների կեղծ արժանապատվությունը, որոնք հիմարաբար իմաստուն երեվալու համար նվաստացնում են իրենց աշակերտներին, նրանց հետ միշտ վարվում են որպես երեխաների հետ և զատորոշվում են իրենց աշակերտներից այն բոլոր գործերի մեջ, որ նրանց անել են տալիս։ Ուրեմն, փոխանակ վարկաբեկելու նրանց երիտասարդական եռանդը, ոչինչ մի՛ խնայեք նրանց հոգին բարձրացնելու համար. ջանացե՛ք նրանց ձեզ հավասարներ դարձնել, և եթե դեռ չեն կարողա-

---

ձանձրացել և հազիվ թե իմանա ինչ է դրամը։ Այն երկու շարժառիթները, որոնցով ղեկավարում են երեխաներին՝ ինչպիսիք շահադիտությունն ու անափառությունն են, այդ միևնույն շարժառիթներն օգտագործում են ամբարոյական կանայք և դրամաշորթները՝ հետագայում նրան իրենց ճանկը գցելու համար, երբ դուք տեսնում եք, որ բորբոքում են նրանց ընչասիրությունը մրցանակներով, վարձատրություններով, երբ տեսնում եք, որ նրանք ծափահարում են տասը տարեկանին՝ դպրոցի հրապարակային հանդեսում, դուք կտեսնեք նաև, թե ինչպես քսան տարեկան նա կթողնի իր քսակը խաղատնում, իսկ առողջությունը՝ մի վատահամբավ տան մեջ։ Միշտ կարելի է գրազ գալ, որ իր դասարանի ամենից ընդունակը հետագայում կլինի ամենից խաղամոլն ու ամենից անառակը։ Այն միջոցառումները, որոնք չեն գործադրել մանկության ժամանակ, միևնույն ազդեցությունը չեն ունենա երիտասարդության։ Բայց պետք է հիշել, որ իմ անխախտ սկզբունքն է ամեն տեղ գործը վատթարացնին հասցնել։ Ես նախ կփորձեմ կանխել մոլությունը, հետո միայն կմտածեմ բուժելու մասին։

նում բարձրանալ ձեր մակարդակին, դո՛ւք իջեք նրանց աստիճանին՝ առանց ամոթի, առանց խղճահարության։ Մտածեցե՛ք, որ ձեր պատիվը այլևս ոչ թե ձեր, այլ ձեր աշակերտի մեջ է, մասնակցեցե՛ք նրա սխալներին՝ ուղղելու համար. ձեր վրա վերցրե՛ք նրա ամոթը՝ այն սրբելու համար, հետևեցե՛ք այն ազնիվ հոռմայեցու օրինակին, որը տեսնելով իր բանակի փախուստը և չկարողանալով նրան համախմբել, ինքն էլ սկսեց փախչել՝ նրանց գլուխն անցած, աղաղակելով՝ «Նրանք չեն փախչում, նրանք հետևում են իրենց զորավարին»։ Մի՞թե այդպիսով նա անպատվեց իրեն. բոլորովին ո՛չ. զոհաբերելով իր փառքը, նա ավելացրեց այն։ Պարտականության ուժը, առաքինության գեղեցկությունը, հակառակ մեզ, մեր հավանության են արժանանում ու տապալում մեր անմիտ նախապաշարումները։ Եթե մի ապտակ ընդունեի՝ Էմիլի մոտ իմ պարտականությունները կատարելու ընթացքում, փոխանակ վրեժխնդիր լինելու, ամեն տել ես դրա համար կպարծենայի, և չեմ կարծում, որ աշխարհում գտնվեր մի այնպիսի ստոր մարդ, որ դրա համար ինձ ավելի չհարգեր։

Աշակերտը չպետք է ենթադրի, թե ուսուցիչը իրենից ավելին չգիտի և իր պես հեշտորեն հրապուրվում է։ Այդ կարծիքը կասզի մի երեխայի, որը չկարողանալով ոչինչ տեսնել, ոչինչ համեմատել, բոլորին իր կամքին է ենթարկում ու վստահում է միայն նրանց, ովքեր հիրավի նրան ենթարկվում են։ Բայց Էմիլի հասակի ու նրա նման խոհեմ մի երիտասարդ այնքան էլ հիմար չէ, որ խաբվի։ Այն վստահությունը, որ պետք է ունենա դեպի իր դաստիարակը, մի ուրիշ տեսակ վստահություն է. *այն պետք է հենվի դատողության հեղինակության, խելքի գերազանցության վրա, այն առավելությունների վրա, որ երիտասարդը ի վիճակի է ճանաչելու և որոնց օգտակարությունն զգում է։* Մի երկար փորձառություն նրան համոզել է, որ նա սիրված է իր դաստիարակից. որ այդ դաստիարակը մի իմաստուն, լուսավորյալ մարդ է, որն իր երջանկությունն է ցանկանում և գիտի, թե ինչը կարող է նրան տալ այդ երջանկությունը։ Նա պետք է իմանա, որ իր սեփական շահը թելադրում է լսել նրա խորհուրդները։ Իսկ եթե ուսուցիչը խաբվի աշակերտի նման, նա իրավունք չի

ունենա նրանից ակնածություն պահանջել ու նրան դասա-
լանդել։ Առավել ևս, աշակերտը չպետք է ենթադրի, որ
ուսուցիչը դիտավորյալ նրան գցում է ծուղակի մեջ ու դարան
է սարքում նրա պարզամտությանը։ Ուրեմն, ի՞նչ պետք է
անել և՛ մեկ, և՛ մյուս անպատեհությունից ազատվելու հա-
մար։ Անել ամենից լավն ու ամենից բնականը՝ լինել նրա
պես պարզ ու ճշմարտացի. նախազգուշացնել նրան վտանգ-
ներից, ցույց տալ նրան այդ վտանգները հստակ, շոշափելի
կերպով, բայց առանց չափազանցության, առանց դժկամու-
թյան, առանց սոփեստության, մանավանդ, առանց ձեր կար-
ծիքները որպես հրամաններ տալու, մինչև որ նրանք անհրա-
ժեշտ չլինեն, և հրամայական այդ ձևը բացարձակապես ան-
խուսափելի չլինի։ Սրանից հետո էթե համաձև, որը շատ հա-
վանական է, այլևս ոչինչ չասեք. ազատ թողե՛ք նրան, հետե-
վեցե՛ք, ընդօրինակեցե՛ք նրան, և այդ՝ ուրախ, անկեղծ ձևով.
դուք ձեզ նույնպես ազատ թողե՛ք, զվարճացե՛ք այնքան,
որքան նա, եթե ձեզ հնարավոր է։ Այն դեպքում, երբ հետե-
վանքները շատ ուժեղ են, դուք կարող եք միշտ դադարեցնել
դրանք. և սակայն, չէ՞ որ երիտասարդը, տեսնելով ձեր կան-
խահոգությունն ու հաճոյակատարությունը՝ կարող է առաջի-
նի համար զարմանալ, իսկ երկրորդով զգացվել։ Նրա բոլոր
սխալները այն կապերն են, որ տալիս է ձեզ՝ կարիքի դեպ-
քում նրան զսպելու համար։ Աթե, ինչ որ այստեղ ուսուցչի
համար ամենամեծ արվեստ է հանդիսանում, այդ այն է, որ
նա գիտենա ստիպներ ստեղծել և հորդորներ տալ այնպիսի
ձևով, որ կարողանա նախօրոք իմանալ, թե երբ պիտի զիջի
երիտասարդը կամ երբ պիտի համառի, որպեսզի կարելի
լինի ամեն տեղ նրան շրջապատել փորձառության դասերով,
առանց շատ մեծ վտանգների ենթարկելու։

Զգուշացրե՛ք նրան սխալներից՝ նախքան դրանց մեջ
ընկնելը. իսկ եթե արդեն ընկել է, մի՛ հանդիմանեք, այլա-
պես դուք կբորբոքեք ու կրմբոստացնեք նրա ինքնասիրու-
թյունը։ Այն դասը, որ ընդվզեցնում է, օգտակար չի կարող
լինել։ Ես չգիտեմ ավելի անմիտ խոսք, քան այս՝ «Ես ձեզ
չէի՞ ասել»։ Ամենալավ միջոցը նրան հիշեցնելու մեր ասածը,
դա ցույց տալն է, որ մենք այդ մոռացել ենք։ Ընդհակա-

ռակն, երբ տեսնում եք, որ նա ամաչում է ձեզ չհավատալու համար, մեղմորեն վերացրե՛ք այդ նվաստացումը մի քանի լավ խոսքերով։ Նա ձեզ վստահաբար կսիրի, տեսնելով, որ դուք ձեզ մոռանում եք նրա պատճառով ու փոխանակ ինքներդ էլ հարվածելու նրան, մխիթարում եք։ Բայց եթե նրա վշտին դուք հանդիմանություններ ավելացնեք, ձեզ կատի և իր համար սկզբունք կընդունի այլևս չլսել ձեզ, որպեսզի ցույց տա, թե ձեր կարծիքների արժեքի մասին ձեզ պես չի մտածում։

Մխիթարելու ձեր ճարտարությունը նույնպես կարող է նրա համար այնքան ավելի օգտակար դաս լինել, որքան հավատում է դրա անկեղծությանը։ Ենթադրում եմ, որ նրան ասելով, թե ուրիշներն էլ են անում նույն սխալները, դուք նրան կհեռացնեք իր սխալից. դուք նրան կուղղեք՝ ձևացնելով միայն, որ ցավում եք. որովհետև նրա համար, ով կարծում է, թե ինքն ուրիշներից գերազանց է, շատ սպանիչ չքմեղանք է մխիթարվել նրանց օրինակով. այդ նշանակում է, որ ինքն ամենաշատը կարող է հավակնել, թե նրանք իրենից ավելի չարժեն։

Երբ սկսվում են սխալները, պետք է դիմել առակների օգնությանը։ Հանցավորին պախարակելով մի օտար դիմակի տակ, նրան կդաստիարակենք առանց վիրավորելու. նա այն ժամանակ կհասկանա, որ առակը ինչ-որ սուտ չէ, և կընդունի նրանից հետևող ճշմարտությունը։ Այն երեխան, որին երբեք չեն խաբել զովասանքներով, ոչինչ չի հասկանա այն առակից, որի մասին քիչ առաջ խոսեցի. բայց շողոքորթի կողմից խաբված անխելքը հրաշալի կըմբռնի, որ ագռավը հիմարի մեկն է եղել։ Այդպիսով, նա իրողությունից մի ճշմարտություն է քաղում, և փորձառությունը, որը շուտով կմոռանաք, առակի միջոցով դրոշմվում է նրա դատողության մեջ։ Չկա բարոյական որևէ ճանաչողություն, որը կարելի չլինի ձեռք բերել ուրիշի կամ սեփական փորձով։ Այն դեպքերում, երբ այս փորձը վտանգավոր է, փոխանակ այն անձամբ կատարելու, դասը պատմությունից են վերցնում։ Երբ փորձությունն անվտանգ է, լավ է որ երիտասարդը ենթարկվի դրան. հեքիաթում, առակի միջոցով, որպես առածներ կարելի է շարա-

ջրել այն մանավոր պարագաները, որոնք ծանոթ չեն նրան։

*Ջեմ ուզում ասել, սակայն, որ այդ առածները պետք է զարդացվեն, ոչ էլ բացատրվեն։ Ոչինչ այնքան զուր, այնքան թյուրըմբռնելի չէ, որքան այն բարոյականը, որով վերջանում է առակների մեծ մասը. որպես թե կարելի չիներ այդ բարոյականը զարգացնել հենց առակի մեջ՝ ընթերցողին զգալի ձևով։ Ինչու՞, այդ բարոյականը առակի վերջում դնելով, ընթերցողին զրկել այն ինքնուրույն կերպով հասկանալու հաճույքից։ Սովորեցնողի տաղանդն այն բանի մեջ է, որ սովորողը հաճույք ստանա նրա սովորեցրածից։ Հետևապես, այդ հաճույքն ստանալու համար չպետք է նրա միտքը այնքան պասսիվ մնա ձեղնից լսածների վերաբերմամբ, որ ոչ մի ճիգ չանի ձեզ հասկանալու։ Պետք է որ ուսուցչի ինքնասիրությունը նրա ինքնասիրությանն էլ մի տեղ թողնի. նա պետք է կարողանա ասել. «Հասկանում եմ, խորանում եմ, գործում եմ, սովորում եմ»։ Մի բան է ձանձրալի դարձնում իտալական կոմեդիայի Պանտալոնին *, այն, որ նա մեծ նշանակություն է տալիս հանդիսատեսներին բացատրելու այն տափակությունները, որոնք արդեն բոլորին ծանոթ են։ Ես չպիտի ցանկանայի, որ դաստիարակը մի Պանտալոն լիներ, ոչ էլ գրողը։ Պետք է միշտ հասկանալի լինել, բայց չպետք է միշտ ամեն բան ասել. նա, ով ամեն ինչ ասում է, ոչինչ չի ասում, որովհետև, վերջիվերջո, նրան չեն լսում։ Ի՞նչ է նշանակում այն քարյակը, որ լաֆոնտենը ավելացրել է փքվող գորտի առակի վերջում։ Վախեցել է, որ չե՞նք հասկանա առակի միտքը։ Մի՞թե այդ մեծ նկարիչը կարիք ուներ իր նկարած իրերի ներքև դնելու նրանց անունները։ Դրանով իր բարոյականը բնդհանրացնելու փոխարեն, մասնավորացնում է, մի տեսակ սահմանափակում հիշված օրինակներով ու թույլ չի տալիս, որ այն օգտագործեն ուրիշ օրինակների համար։ Ցանկալի է, որ նախքան այս աննման հեղինակի առակները երիտասարդի ձեռքը տալը, նրանցից կրճատեին այն բոլոր*

---

* *Իտալական կոմեդիայի կերպարներից մեկը։ Պանտալոնը բժիշկ է և հագնում է երկար շալվար, որը կոչվում է իր անունով (pantalon)։ Առհասարակ պանտալոն են անվանում հազացող, քթող, վավաշոտ և ագահ ծերունուն։— Ս. Ք.*

եզրակացությունները, որով նա բացատրում է այն ամենը, ինչ նա այնքան պարզ ու հաճելի կերպով պատմում է։ Եթե ձեր աշակերտը առակը չի հասկանում առանց բացատրության օգնության, վստահ եղեք, որ նա այնպես էլ չի հասկանա։

Լավ կլիներ, նաև, որ այդ առակներին տրվեր ավելի ուսուցողական և պատանու մտածողության ու զգացումներին ավելի համապատասխան մի հերթականություն։ Կարելի՞ է երևակայել սակավ տրամաբանական մի բան, քան ճշտությամբ հետևելը գրքի թվական կարգին՝ առանց նկատի ունենալու կարիքն ու առիթը։ Նախ՝ ճպուռը, ապա՝ ագռավը, հետո՝ գորտը, հետո՝ երկու ջորիները և այլն։ Իմ սրտի վրա ծանրացած է այդ երկու ջորիների առակը, որովհետև հիշում եմ մի երեխայի, որը պատրաստվում էր ֆինանսական ասպարեզի համար և որին հիմարացնում էին ապագա իր այդ պաշտոնի հեռանկարով. նա կարդում էր, սովորում, արտասանում, հարյուրավոր անգամ կրկնում այդ առակը, առանց դրանից ամենադույզն եզրակացություն անելու այն մասնապիտության դեմ, որին նա կոչված էր։ Ես ոչ միայն երբեք չեմ տեսել երեխաներ, որոնք իրենց սովորած առակներից որևէ հաստատ օգուտ քաղեն, այլև չեմ տեսել մի մարդ, որ նրանց օգնի այդ առակներից օգտվելու։ Այս ուսման շարժառիթը բարոյական դաստիարակություն է. բայց մոր և մանկան իսկական ու միակ նպատակն է երեխայով զբաղեցնել մի ամբողջ մարդկանց խումբ, երբ նա արտասանում է իր առակները. այդ պատճառով էլ երեխան, քանի մեծանա, մոռանում է դրանք բոլորը հենց այն ժամանակ, երբ խնդիրը ոչ թե առակներն արտասանելուն, այլ նրանցից օգտվելուն է վերաբերում։ Մի անգամ ևս կասեմ, որ չափահասներին է վերապահված բան սովորել առակներից, և ֆմիլի համար արդեն սկսելու ժամանակն է։

Ես հեռվից ցույց եմ տալիս (որովհետև ինքս էլ չեմ ցանկանում ամեն ինչ ասել) այն ուղիները, որոնք շեղվում են լավ ճանապարհից, որպեսզի սովորեն նրանցից խուսափել։ Կարծում եմ, հետևելով իմ նշած ուղուն՝ ձեր աշակերտը մարդկանց և իրեն կճանաչի հնարավորին չափ նվազ ղոհողությամբ, նրան կդնեք այնպիսի վիճակում, որ նա կարո-

ղանա բախտախաղերը դիտել՝ առանց նախանձելու բախտավորներին և ինքնագոհ լինի՝ առանց իրեն ուրիշներից ավելի իմաստուն կարծելու։ Դուք սկսեցիք նրան դերակատար դարձնելով՝ հետո հանդիսատես դարձնելու համար. պետք է վերջացնել, որովհետև պարտերից իրերը տեսնում են այնպես, ինչպես երևում են, իսկ բեմից՝ այնպես, ինչպես կան։ Ամբողջն ընդգրկելու համար պետք է դիտել հեռվից, մանրամասնությունները տեսնելու համար պետք է մոտ գնալ։ Բայց ի՞նչ հանգամանքով մի երիտասարդ պիտի միջամուխ լինի աշխարհի գործերին։ Ի՞նչ իրավունք ունի նա մասնակցելու այդ մութ գաղտնիքներին։ Հաճույքի խարդավանքներով են սահմանափակված նրա տարիքի շահագրգռությունները, նա դեռևս միայն ի՛ր տերն է. այդ նշանակում է, որ համարյա ոչնչի տերը չէ։ Մարդը ապրանքներից ամենախոտանն է, և սեփականության վերաբերյալ մեր էական իրավունքների մեջ անձի սեփականության իրավունքը միշտ ամենաիզորն է։

Երբ տեսնում եմ, որ ամենաեռուն հասակում երիտասարդներին սահմանափակում են զուտ տեսական ուսմունքներով և հետո, առանց ամենաիզոր փորձառության, միանդամից նետում հասարակության և գործարքների մեջ, ինձ թվում է, որ այդպիսով հակասում են թե՛ բնությանը և թե՛ պատողության, ու չեմ զարմանում, որ այնքան քիչ մարդիկ են ի վիճակի լինում իրենք իրենց ղեկավարելու։ Ինչպիսի՛ արտառողություն՝ մեզ սովորեցնել անօգուտ այդքան բաներ, բոլորովին անտես առնելով գործելու արվեստը։ Կարծելով, թե մեզ պատրաստում են հասարակության համար, մեզ այնպես են սովորեցնում, ասես մեղնից յուրաքանչյուրը կյանքը պետք է անցկացնի մեն-մենակ խորհրդածելով իր խցիկում, կամ անտարբեր մարդկանց հետ վերացական նյութերի մասին զրույցներ անցկացնելով։ Դուք կարծում եք, թե ձեր երեխաներին ապրել եք սովորեցնում՝ նրանց վարժեցնելով կոտրատվելու ձևերին ու կոկիկ արտահայտություններին, որոնք ոչ մի նշանակություն չունեն։ Ես էլ եմ էմիլին ապրել սովորեցրել, բայց նրան սովորեցրել եմ ապրել ինքնուրույն և, մանավանդ, իր հացը ճարել իմանալ։ Բայց այդ բավական չէ։ Հասարակության մեջ ապրելու համար պետք է մարդկանց

հետ վարվել իմանալ, պետք է ճանաչել այն միջոցները, որոնցով կարելի է ազդել նրանց վրա. պետք է հաշվի առնել քաղաքացիական հասարակության մեջ մասնավոր շահի ազդեցությունն ու հակազդեցությունը և դեպքերն այնքան ճիշտ նախատեսել, որպեսզի ըստ հնարավորին հազվադեպ սխալվենք մեր ձեռնարկությունների մեջ, կամ գոնե լավագույն միջոցներ ձեռք առած լինենք հաչողելու համար։ Օրենքները երիտասարդներին չեն թույլատրում սեփական գործերով զբաղվել և իրենց սեփական ինչքի հետ վարվել այնպես, ինչպես կամենում են։ Բայց ինչի՞ են ծառայում այդ նախազգուշությունները, եթե նրանք մինչև օրենքով սահմանված տարիքը ոչ մի փորձառություն ձեռք բերել չեն կարող։ Սպասելով նրանք ոչինչ չեն շահում, և քսանհինգ տարեկանում նույնքան անփորձ կլինեն, ինչքան տասնհինգ տարեկանում։ Անկասկած, պետք է արգելել, որ երիտասարդը, տգիտությունից կուրացած կամ կրքերից խաբված, ինքն իրեն վնասի. բայց յուրաքանչյուր հասակում թույլատրելի է լինել բարեգործ, ամեն տարիքում կարելի է հովանավորել, իմաստուն մի մարդու ղեկավարությամբ, այն դժբախտներին, որոնք նեցուկի կարիք ունեն։

Դայակներն ու մայրերը երեխաների հետ կապվում են նրանց տված խնամքի միջոցով. սոցիալական առաքինությունների վարժությունը խորունկ սեր է առաջացնում մարդկության նկատմամբ. բարիք անելով է, որ մարդը բարի է դառնում. դրանից ավելի ապահով միջոց ես չգիտեմ։ Զբաղեցրե՛ք ձեր աշակերտին նրա հնարավորության սահմաններում եղած բոլոր լավ գործերով։ Կարոտյալների շահը թող միշտ նրա աչքին մատ լինի. ոչ միայն փոքով, այլև հոգածությամբ օգնի նրանց. թո՛ղ ծառայի, պաշտպանի նրանց. թո՛ղ իր անձն ու ժամանակը նվիրաբերի նրանց. թո՛ղ նրանց հավատարմատարը դառնա. կյանքում երբեք դրանից ավելի աղնիվ գործ չի անի։ Ինչքա՜ն ճնշվածներ, որոնց երբեք չեն լսում, արդարություն կգտնեն, եթե նա այդ արդարությունը պահանջի այն համառ հաստատակամությամբ, որ առաքինության վարժությունն է տալիս, եթե նա խորտակի մեծամեծների ու հարուստների դռները, եթե գնա, հարկ լինելու

դեպքում, մինչև գահը հասցնի դժբախտների ձայնը, որոնց առաջ ամեն դուռ փակված է իրենց թշվառության պատճառով, և որոնք, պատժվելու վախից, նույնիսկ չեն համարձակվում բողոքել իրենց նկատմամբ եղած անիրավությունների դեմ։

Բայց մի՞թե էմիլին պետք է դարձնենք թափառաշրջիկ մի ասպետ, անիրավություններն ուղղող մի բախտախնդիր։ Մի՞թե պետք է գնա-խառնվի հասարակական գործերին, դառնա իմաստուն և օրենքների պաշտպան՝ մեծամեծների, ավագների, իշխանների մոտ, լինի հայցվոր դատավորների մոտ և իրավաբան՝ դատարաններում։ Այս բոլորի մասին ոչինչ չգիտեմ։ Խեղկատակ ու ծիծաղելի անունները իրերի էությունից ոչինչ չեն փոխում։ Նա կանի այն ամենը, ինչ լավ և օգտակար է համարում, ոչինչ ավելի։ Նա գիտի, որ ինչ իր տարիքին հարմար չէ, չի կարող լավ ու օգտակար լինել։ Նա գիտի, որ ինքը առաջին հերթին պարտավորություններ ունի իր անձի հանդեպ, որ երիտասարդները պետք է զգուշանան իրենք իրենցից, շրջահայաց լինեն իրենց վարվելակերպում, հարգալիր՝ դեպի տարեցները, զուսպ ու վերապահ՝ իր խոսքերում, համեստ՝ իրենց չվերաբերող գործերում, բայց համարձակ՝ բարիք անելու ու քաջասիրտ՝ ճշմարտություն ասելու մեջ։ Այդպես էին այն նշանավոր հոոմայեցիները, որոնք, մի պաշտան առանձնելուց առաջ, իրենց երիտասարդությունն անց էին կացնում՝ հետապնդելով ոճիրը, պաշտպանելով անմեղությունը, չունենալով ուրիշ որևէ շահ, արդարությանը ծառայելուց և առաքինի բարքերը պաշտպանելուց բացի։

Էմիլը չի սիրում ո՛չ աղմուկը, ո՛չ կռիվները, ոչ միայն մարդկանց [1], այլ, նույնիսկ, կենդանիների միջև։ Նա ոչ մի

---

[1] Բայց եթե ուզենան նրա հետ կռվել, ի՞նչպես պետք է վարվի։ Վստահ եմ, որ երբևէ չի կռվի և կարելի եղածին չափ կխուսափի դրանից։ Բայց, կառարկեն ինձ, ո՞վ կարող է խուսափել մի անբանի, հարբեցողի կամ սրիկայի ապտակից կամ վիրավորանքից, որ սպանելու հաճույքի համար սկսում է նրան անպատվել։ Այդ արդեն ուրիշ խնդիր է՝ չպետք է, որ քաղաքացիների պատիվը, ոչ էլ նրանց կյանքը մի վայրենու, հարբեցողի կամ սրիկայի ձեռքին խաղալիք լինի. չի կարելի խուսափել նման արկա-

անգամ շներին չի գրգռել՝ նրանց կռվեցնելու համար, ոչ մի անգամ շունը չի բաց թողել կատվի հետևից։ Այս խաղաղասեր ոգին հետևանք է նրա դաստիարակության, որի շնորհիվ նրա մեջ չեն առաջացել անձնասիրությունն ու մեծամտությունը. դա նրան սովորեցրել է համբույր շորոնել ուրիշի վրա տիրապետելու կամ ուրիշի դժբախտության մեջ։ Նա տանջվում է, երբ տեսնում է, որ ուրիշները տանջվում են. սա մի բնական զգացում է։ Մի երիտասարդ կարծրասիրտ է դառնում և որևէ զգայուն էակի տառապանքը տեսնելիս հրճվում է այն դեպքում, երբ սնապարծության մոմենտին կարծում է, թե շնորհիվ իր խելոքության կամ գերազանցության ինքը զերծ է այդ տանջանքներից։ Այն մարդը, որին կարողացել են փրկել այդ մտայնությունից, չի կարող ընկնել դրանից բխող նման սխալի մեջ։ Ուրեմն, Էմիլը խաղաղություն է սիրում։ Երջանկության պատկերը շոյում է նրան, և եթե նա կարողանում է սատարել դրա հաստատվելուն, դա ևս մի միջոց է մասնակից լինելու այդ երջանկությանը։ Ինձ թվում է, որ տեսնելով թշվառներին, նա նրանց հանդեպ չի ունենա այն ամուլ ու դաժան գթությունը, որ բավարարվում է միայն

ծից, ինչպես և տանիքից ընկնող կղմինդրից։ Ապտակն ու վիրավորանքը այնպիսի քաղաքացիական հետևանքներ ունեն, որ ոչ մի իմաստություն չի կարող կանխել և որոնց համար ոչ մի դատարան չի կարող վրիժառու լինել տուժածի օգտին։ Օրենքների անրավարարությունը, ուրեմն, նրան ազատ են թողնում. այս դեպքում ինքն է միակ դատավորը, միակ պատեհապաշարը հանցավորի և իր միջև. ինքն է միակ մեկնաբանողն ու դատախազը բնական օրենքի. ինքն է, որ պիտի գործադրի արդարությունը, և երկրի վրա ոչ մի խելամիտ կառավարություն չի կարող պատժել նրան դրա համար։ Ջնջե՛ք տասն, քե՛ զրկե՛ք մարդկանց այս ծայրահեղության կլինի. տասն են միայն այն պահը է իր ուժը ձեռք բերել, և որ ավելի զեղչում ինքն է միակ արդարահատույցը։ Առանց մեծամտության դեմ տեմնվելու այնքան զուր օրենքների, եթե ես իշխանություն ունենայի, վստահ եմ, որ իմ պետության մեջ ո՛չ ապտակ կլիներ, ո՛չ վիրավորանք, և դա այնպիսի մի պարզ միջոցով, որ դատարանները երբեք կարիք չէին զգա միջամտելու։ Համենայն դեպս, Էմիլը այսպիսի դեպքում գիտի, թե ինչպես պիտի իր դատը տեսնի և օրինակ հանդիսանա պարկեշտ մարդկանց ապահովության համար։ Ամենաքաջ մարդն էլ չի կարող խուսափել նախատինքից, բայց նա կարող է թույլ չտալ, որ երկար ժամանակ պարծենան իրեն նախատած լինելու համար։

խղճալով ցավերը, որոնք կարող էր բուժել։ Գործուն բարեգործությունը շուտով նրան կտա լուսավոր մտքեր, որոնք ավելի անզգա մի մարդու մեջ չէին ծագի կամ կծագեին ավելի ուշ։ Եթե նա տեսնում է, որ անհամաձայնություն է տիրում իր ընկերների միջև, աշխատում է նրանց հաշտեցնել. եթե վշտահարներ է տեսնում, հետաքրքրվում է նրանց վշտի պատճառով. եթե տեսնում է, որ երկու մարդ ատում են միմյանց, ցանկանում է իմանալ նրանց ատելության շարժառիթը. եթե տեսնում է մի հարստահարվածի, որը հեծում է զորավորի կամ հարուստի կեղեքումների տակ, աշխատում է իմանալ, թե ի՞նչ հնարանքներով են սքողվում այդ կեղեքումները. հետաքրքրվելով թշվառների վիճակով, նա որոնում է նրանց տառապանքները վերացնելու միջոցները։ Հետևապես, ի՞նչ պետք է անել նրա տարիքին համապատասխան ձևով օգտվելու համար այս տրամադրություններից։ Կանոնավորել նրա հոգածությունները և գիտելիքները և օգտագործել նրա եռանդը՝ դրանք ավելացնելու համար։

Ես չեմ դադարի կրկնելուց՝ երիտասարդներին ուսուցե՛ք գործերով և ոչ թե խոսքով, մի՛ թողեք, որ գրքերից սովորեն այն, ինչ փորձը կարող է սովորեցնել։ Տարօրինակ է այն ծրագիրը, որով ուզում են նրանց խոսել վարժեցնել՝ առանց ասելու որևէ նյութ ունենալու, և կարծում են, թե դպրոցական նստարանների վրա կարելի է նրանց զգալի դարձնել ցանկությունների լեզվի զորությունն ու համոզելու արվեստի ամբողջ ուժը՝ առանց շահագրգռված լինելու որևէ մեկին համոզելու։ Ճարտասանության բոլոր կանոնները շատախոսություն են թվում նրան, ով չի զգում իր համար նրա օգտակարությունը։ Դպրոցականի ինչի՞ն է պետք, թե ի՞նչ արեց Հաննիբալը՝ իր զորքերին համոզելու համար, որ Ալպերն անցնեն։ Այդ հրաշալի ճառերի փոխարեն, եթե նրան ասեք, թե ինչպես պետք է վարվի, որպեսզի իր ուսուցչը նրան արձակուրդ տա, այդ դեպքում վստահ եղեք, որ ավելի ուշադիր կլինի ձեր հրահանգներին։

Եթե ես կամենայի ճարտասանություն սովորեցնել մի երիտասարդի, որի բոլոր ցանկություններն արդեն զարգացել են, նրան անդադար ցույց կտայի այնպիսի առարկա-

ներ, որոնք կկարողանային շոյել իր ցանկությունները, ու նրա հետ կուսումնասիրեի, թե ինչ լեզու պետք է գործածի մարդկանց հետ, որպեսզի նրանց ստիպի օգնել իր ցանկություններին։ Բայց իմ էմիլը այնքան էլ հաջողակ չէ ճարտասանության մեջ. սահմանափակվելով համարյա միայն ֆիզիկական պահանջներով, նա ուրիշների կարիքը ավելի քիչ է զգում, քան թե ուրիշները՝ նրա, և իր համար նրանցից պահանջելու ոչինչ չունենալով, այնքան էլ շատ չի հետաքրքրվում նրանց համոզելու։ Սրանից հետևում է, որ ընդհանրապես նա պետք է ունենա պարզ ու անպաճուճ լեզու։ Սովորաբար նա խոսում է ինչպես որ պետքն է ու միմիայն՝ որպեսզի նրան հասկանան։ Նրա խոսքը բավականաչափ վճռական չէ, որովհետև չի սովորել ընդհանրացնել իր մտքերը. քիչ է պատկերավոր, որովհետև հազվադեպ է հուզվում։

Չեմ ուզում ասել, սակայն, որ նա բոլորովին սառնարյուն ու անտարբեր լինի. ո՛չ նրա տարիքը, ո՛չ նրա բարքերը, ո՛չ նրա ճաշակները թույլ չեն տա այդ բանը. պատանեկության եռուն շրջանում, արյան մեջ կուտակված ու խտացած կենդանարար ոգին նրա դեռատի սրտին տալիս է մի ջերմություն, որը փայլում է նրա աչքերի մեջ, զգացվում նրա խոսքերում ու երևում նրա գործերի մեջ։ Լեզվի մեջ շեշտ, երբեմն սաստկություն կա։ Այն աղնիվ զգացումը, որով ներշնչվում է, նրան կորով ու վեհություն է տալիս. տոգորված քաղցր սիրով դեպի մարդկությունը, խոսելիս արտահայտում է իր հոգու հույզերը. նրա վեհանձն անկեղծությունը ինչ-որ ավելի գրավիչ բան ունի, քան ուրիշների արվեստական ճարտարախոսությունը, կամ ավելի շուտ՝ ինքն է միակ իսկական ճարտասանը, քանի որ բավական է նրա գործը տեսնել, թե ինչ է զգում, որպեսզի այդ հաղորդվի իսկույն նրա ունկնդիրներին։

Ինչքան ավելի եմ մտածում, այնքան համոզվում եմ, որ այսպես գործի դնելով բարեգործությունը և մեր հաջողություններից ու ձախորդություններից անհրաժեշտ եզրակացություններ անելով դրանց պատճառների մասին, օգտակար քիչ գիտելիքներ կան, որ հնար չլինի մշակել երիտասարդի մտքի մեջ, և թե դպրոցում ստացած ամբողջ ճշմարիտ գիտության հետ նա ձեռք կբերի մի կարևոր գիտություն ևս,

այն է՝ այդ գիտելիքների կիրառումը գործնական կյանքում։ Չի կարող պատահել, որ իր նմանների հանդեպ այսպիսի հետաքրքրություն ունենալով, նա վաղօրոք չսովորի կշռադատել ու գնահատել նրանց գործերը, նրանց ճաշակները, նրանց հաճույքները և ընդհանրապես իմանալ ավելի ճիշտ արժեքն այն բանի, որը կարող է նպաստել կամ վնասել մարդկանց երջանկությանը, քան թե նրանք, ովքեր ոչ ոքով չեն հետաքրքրվում, երբեք ուրիշի համար ոչինչ չեն անում։ Այն մարդիկ, որոնք միայն իրենց գործերով են զբաղվում, չափազանց հուզվում են իրերը պարզ տեսնել կարողանալու համար։ Ամեն ինչ միայն իրենց վերաբերելով, բարու ու չարի գաղափարները միայն իրենց շահերին համաձայնեցնելով, նրանք իրենց գլուխը լցնում են հազարավոր դատուրկ նախապաշարումներով ու իրենց ամենաչնչին շահին դիպչող ամեն ինչի մեջ իսկույն տեսնում են ամբողջ տիեզերքի հեղաշրջումը։

Մեր ինքնասիրությունը տարածելով ուրիշ էակների վրա, այն վեր ենք ածում առաքինության, և չկա մարդկային մի սիրտ, որտեղ այդ առաքինությունը արմատ գցած չլինի։ Որքան քիչ մեր հոգածության առարկան անմիջականորեն կախում ունենա մեզնից, այնքան քիչ կլինի մասնավոր շահագրգռության մտավախությունը։ Ինչքան ընդհատնանք այդ շահագրգռությունը, այնքան ավելի արդարացի կլինի, և մարդկային ցեղի հանդեպ մեր սերը ուրիշ բան չէ, բայց եթե արդարության սեր։ Եթե, ուրեմն, ուզում ենք, որ էմիլը սիրի ճշմարտությունը, ճանաչի այն, գործերի մեջ նրան պետք է միշտ հեռու պահել ինքն իրենից։ Ինչքան նրա մտահոգությունները նվիրված լինեն ուրիշների երջանկությանը, այնքան լուսավոր ու իմաստուն կլինեն դրանք, և այնքան քիչ կխաբվի նա բարու և չարի վերաբերմամբ. բայց չպետք է երբեք թույլ տալ, որ նրա մեջ արմատավորվի կույր նախապատվությունը՝ հիմնված միմիայն կողմնակալության կամ անարդար կանխակալ կարծիքների վրա։ Նվ ինչո՞ւ պետք է նա մեկին վնասի, մյուսին օգնելու համար։ Ի՞նչ նշանակություն ունի, եթե ո՞ւմ կընկնի երջանկության մեծագույն բաժինը. բավական է, որ նա օգնի բոլորի ավելի մեծ երջան-

կությանը. այդ է իմաստունի առաջին շահագրգռությունը՝ մասնավոր շահից հետո, որովհետև յուրաքանչյուրը մասն է իր հասարակության և ոչ թե մի այլ անձնավորության։

Որպեսզի գթությունը չվերասեռվի թուլության, պետք է այն ընդհանրացնել ու տարածել ամբողջ մարդկային ցեղի վրա։ Այդ դեպքում գթությունը կիրառում ենք այնչափով, որչափով նա համապատասխանում է արդարությանը, որովհետև բոլոր առաքինությունների մեջ արդարությունն է, որ ամենից ավելի է օգնում մարդկանց ընդհանուր բարօրությանը։ Դատողությունը և սերը մեր անձի հանդեպ մեզ թելադրում են գութ ունենալ ավելի շատ մեր ցեղի նկատմամբ, քան թե մեր մերձավորի. չարերի նկատմամբ գթությունը ամենամեծ դաժանությունն է մարդկանց հանդեպ։

Ընդամին պետք է հիշել, որ բոլոր այս միջոցառումները, որոնց շնորհիվ ես իմ աշակերտին հեռու եմ պահում իր անձնական շահագրգռություններից, այնուհանդերձ, միշտ էլ ուղղակի հարաբերություն ունեն նրա հետ, քանի որ ոչ միայն դրանից մի ներքին վայելք է ստացվում, այլև նրան մղելով բարեգործության հօգուտ ուրիշների, ես աշխատում եմ նրա սեփական ուսուցման վրա։

Ես նախ ցույց տվի միջոցները, իսկ այժմ կպարզեմ հետևանքները։ Ինչպիսի՜ մեծ մտքեր եմ տեսնում, որոնք հետզհետե կազմվում են նրա գլխում։ Ինչպիսի՜ բարձր զգացումներ են նրա սրտում խեղդում փոքր կրքերի սաղմերը։ Դատողության ինչպիսի՜ հստակություն, տրամաբանության ինչպիսի՜ ճշտություն եմ տեսնում, որ երևան են գալիս նրա մեջ իր մշակված հակումներից, այն փորձից, որ մի մեծ հոգու ցանկությունները կենտրոնացնում է հնարավորությունների նեղ սահմաններում և այնպես է անում, որ ուրիշներից գերազանց մի մարդ, չկարողանալով մյուսներին բարձրացնել իր աստիճանին, ինքն է իջնում նրանց աստիճանին։ Արդարության ճշմարիտ սկզբունքները, գեղեցկության իսկական օրինակները, էակների բոլոր բարոյական հարաբերությունները, օրինականության բոլոր գաղափարները դրոշմվում են նրա գիտակցության մեջ. նա տեսնում է յուրաքանչյուր բանի տեղն ու իրեն նրանից հեռացնող պատճառը. տեսնում է, թե

ինչը կարող է բարիք բերել և ինչն է նրան խանգարում։ Առանց մարդկային կրքերը զգացած լինելու, նա ճանաչում է նրանց պատրանքներն ու գործողությունները։

Ես գնում եմ առաջ իրողությունների ուժով, բայց առանց իմ տեսակետները պարտադրելու ընթերցողների դատողությանը։ Վաղուց է, որ նրանք ինձ տեսնում են ցնորքների աշխարհում, իսկ ես՝ նրանց՝ շարունակ նախապաշարումների աշխարհում։ Թեև մեծ չափով ես հեռացել եմ հասարակ կարծիքներից, այնուամենայնիվ, նրանք միշտ առկա են իմ մրտքում, ես ուսումնասիրում եմ դրանք, խոկում՝ ոչ թե նրանց հետևելու կամ նրանցից խուսափելու, այլ դատողության կշեռքով կշռելու համար։ Ամեն անգամ, երբ վերջինս ստիպում է ինձ հեռանալ նրանցից, ես փորձով հաստատ համոզված եմ, որ ընթերցողներն ինձ չեն հետևի։ Ես գիտեմ, որ եթե համառեն հնարավոր համարել սոսկ այն, ինչ տեսնում են, նրանք իմ պատկերած երիտասարդին կընդունեն որպես երևակայական ու գերբնական մի էակ, որովհետև տարբերվում է նրանցից, որոնց հետ համեմատում են, առանց մտածելու, որ պետք է իրոք տարբերվի, քանի որ դաստիարակված լինելով բոլորովին ուրիշ ձևով, տոգորված բոլորովին հակառակ զգացմունքներով, բոլորովին այլ ուսում ստացած, շատ ավելի զարմանալի կլիներ, եթե նրանց նմանվեր, փոխանակ լինելու այնպիսին, ինչպիսին ես ենթադրում եմ։ Նա մարդու ստեղծած մարդը չէ, այլ բնության մարդը։ Հետևաբար տարակույս չկա, որ նա նրանց աչքին բոլորովին խորթ կթվա։

Չհնարավորելով այս գործին, ես բոլորովին էլ չէի պատկերացնում այնպիսի մի բան, որ ամեն ոք չկարողանար ինձ նման դիտել. որովհետև կա մի կետ, այսինքն՝ մարդու ծնունդը, որտեղից ենք մեկնում հավասարապես բոլորս, բայց ինչքան մենք առաջանում ենք, ես՝ բնավորությունը մշակելու, դուք՝ այն այլասերելու համար, այնքան մենք հեռանում ենք միմյանցից։ Իմ սանը վեց տարեկան հասակում քիչ էր տարբերվում ձեր սաներից, որոնց դեռ ժամանակ չէիք ունեցել այլանդակելու. այժմ նրանք ոչնչով իրար չեն նմանվում. և հասունացած մարդու տարիքը, որին նա մոտենում է, իմ

աշակերտին ցույց կտա բոլորովին տարբեր կերպարանքով, եթե իմ ամբողջ խնամքը իզուր չի անցել։ Ձեռք բերված գիտելիքները քանակով դուցե որոշ չափով նույնն են երկու կողմի համար էլ, բայց որակով բոլորովին տարբեր են։ Դուք կզարմանաք, որ նրանցից մեկն ունի այնպիսի վսեմ զգացումներ, որոնց ամենափոքր սերմն իսկ չի գտնվի մյուսների մոտ. բայց կնկատեք միևնույն ժամանակ, որ այս վերջիններն արդեն բոլորը փիլիսոփաներ և աստվածաբաններ են, այնինչ էմիլը դեռևս չգիտի, թե ինչ բան է փիլիսոփայությունը և նույնիսկ լսած չկա աստծու անունը։

Եթե, ուրեմն, ինձ ասեն՝ «Ձեր ենթադրածներից ոչ մեկը գոյություն չունի. երիտասարդները բոլորովին էլ այդպես չեն, նրանք այս կամ այն կիրքն ունեն, այս կամ այն բանն են անում», դա նշանակում է ժխտել, թե տանձենին ոչ մի անգամ բարձր ծառ չի եղել, քանի որ մեր այգիներում միայն գաճաճ տանձենիներ են տեսնում։

Ես խնդրում եմ այս դատավորներին, որոնք այնքան շտապում են պարսավելու, նկատի ունենալ, որ այն, ինչ իրենք ասում են, նույնչափ էլ ես գիտեմ, որ այդ մասին դուցե ես ավելի երկար եմ մտածել, և ոչ մի շահ չունենալով նրանց խաբելու մեջ, իրավունք ունեմ պահանջելու, որ գոնե նեղություն կրեն փնտրելու, թե որտեղ է իմ սխալը։ Քո՛ղ լավ ուսումնասիրեն մարդու կազմվածքը, քո՛ղ հետևեն սրտի զարգացման առաջին գործողություններին այս կամ այն պայմաններում, տեսնեն, թե մի անձնավորություն ինչքան կարող է զանազանվել մի ուրիշից՝ դաստիարակության շնորհիվ. ապա քո՛ղ համեմատեն իմ տված դաստիարակությունը իրենց արդյունքների հետ և ասեն, թե ինչումն է իմ գործողության սխալը. այն ժամանակ ես ոչինչ չեմ ունենա պատասխանելու։

Այն, ինչ ինձ ավելի վճռողական է դարձնում և, կարծում եմ, արդարացնում իմ այդպես լինելը, այն է, որ փոխանակ տարվելու սիստեմի ոգով, ես կարելի եղածին չափ ֆիշ տեղ եմ տալիս դատողությանն ու վստահում եմ միայն դիտողականությանը։ Երբեք չեմ հիմնվում երևակայության վրա, այլ միայն իմ տեսածի վրա։ Ճիշտ է, ես իմ փորձերը չեմ պար-

փակել մի քաղաքի պարիսպների, ոչ էլ մարլիանց միայն մի դասակարգի մեջ, բայց միմյանց համեմատելով այն բոլոր դասակարգերն ու ժողովուրդները, որոնց տեսել եմ նրանց ուսումնասիրությանը նվիրված իմ կյանքի ընթացքում, ես, որպես արհեստական, դուրս եմ գցել այն, ինչ որ պատկանում է մի ժողովրդի և ոչ թե բոլոր ժողովուրդներին, մի դասակարգի և ոչ թե բոլոր դասակարգերին, ու որպես մարդու բացարձակ սեփականություն եմ համարել միայն այն, ինչ ընդհանուր է ամեն հասակի, դասակարգի, ազգի համար։

Ըստ որում, եթե այս մեթոդի համաձայն, դուք որևէ երիտասարդի կյանքին հետևեք նրա մանկական տարիքից սկսած, մի երիտասարդի, որը ոչ մի հատուկ ձևավորման չի ենթարկվել և որը կարելի եղածին չափ քիչ կախում ունի ուրիշի հեղինակությունից ու կարծիքից, ի՞նչ եք կարծում, այդպիսին ավելի շատ ո՞ւմ կնմանվի՝ ի՞մ, թե ձեր աշակերտին։ Ահա այն հարցը, որ, իմ կարծիքով, պետք է լուծել, իմանալու համար, մոլորվե՞լ եմ, թե ոչ։

Մարդը հեշտությամբ չի սկսում մտածել, բայց հենց որ սկսեց մտածել, այլևս կանգ չի առնի։ Նա, ով մտածել է, միշտ էլ կմտածի, և եթե իմացականությունը մի անգամ սովորել է մտածել, այլևս չի կարող հանգիստ մնալ։ Կարելի է, ուրեմն, կարծել, որ ես դրա համար շատ կամ շատ քիչ բան եմ անում, որ մարդկային իմացականությունն ի բնե այդքան արագ չի բացվում, որ նրան վերագրելով հանդերձ ընկալելու այնպիսի ընդունակություններ, որ նա չունի, ես այն շատ երկար եմ պահում մտքերի այնպիսի շրջանակի մեջ, որից նա պետք է դուրս եկած լիներ։

Բայց առաջին հերթին նկատի ունեցե՛ք, որ բնության մարդը ձևավորելու համար կարիք չկա նրան վայրենի դարձնել և նետել անտառների խորքը. միայն չպետք է թողնել, որ նա, ընկնելով հասարակական ջրապտույտի մեջ, տարվի ո՛չ մարդկանց կրքերով, ո՛չ նրանց կարծիքներով, այլ տեսնի ի՛ր աչքերով, զգա ի՛ր սրտով, որ, բացի իր սեփական դատողությունից, ոչ մի ուրիշ հեղինակություն չկառավարի նրան։ Այսպիսի դրության մեջ պարզ է, որ այն բազմաթիվ իրերը, որոնց ազդեցությանն են ենթարկվում այն զգացմունքները,

որոնցով հաճախ համակվում է, իր իսկական կարիքները յավարարող տարբեր միջոցները նրան կթելադրեն բազմաթիվ մտքեր, որոնք այլապես երբեք չէր ունենա, կամ ավելի դանդաղ կունենար։ Զարգացումը, որ հատուկ է մտքին, արագանում է, բայց չի եղծանվում։ Միևնույն մարդը, որ անտառում ապուշ կմնար, քաղաքներում կլինի դատող ու խելացի, եթե այնտեղ մնա պարզ հանդիսատեսի դերում։ Ոչինչ մարդուն այնպես իմաստուն չի դարձնի, որքան այն հիմարությունները, որ տեսնում է նա առանց դրանց մասնակից լինելու. նույնիսկ մասնակից եղողն էլ է սովորում, բավական է, որ դրանցից չխաբվի և չյուրացնի այդ հիմարություններն անողների սխալը։

Նկատի ունեցեք նաև, որ մեր ընդունակությունները մեզ սահմանափակում են զգացական առարկաներով, ուստի և մենք ոչ մի կռվան չենք տալիս փիլիսոփայության վերացական մտքերին ու զուտ մտային գաղափարներին։ Որպեսզի հասնենք դրանց, կա՛մ պետք է հեռանանք այն մարմնից, որին այնքան ուժեղ կապված ենք, կա՛մ մի առարկայից մյուսը գնանք աստիճանական ու դանդաղ զարգացումով, կա՛մ, վերջապես, արագորեն ու համարյա մի ոստումով անցնենք անջրպետը հսկայի քայլով, որին ընդունակ չէ մանկությունը և որի համար նույնիսկ չափահաս մարդիկ կարիք ունեն մասնավորապես նրանց համար պատրաստված բազմաթիվ աստիճանների։ Առաջին վերացական միտքը առաջինն է այդ աստիճաններից. բայց ես դժվարանում եմ ասել, թե ինչպես կարելի է ստրկել այդպիսին։

Անըմբռնելի [illegible] է, որ աշխարհն [illegible] և [illegible] արարածների ամբողջ ախտաճմռը, ո՛չ մեր աչքին է տեսանելի, ո՛չ ձեռքով շոշափելի. նա խուսափում է մեր բոլոր զգայարաններից. գործը երևում է, բայց գործավորը թաքնված է։ Փոքր գործ չէ վերջապես գիտենալ, թե նա գոյություն ունի, ու երբ մենք հասնում ենք այդ գիտակցությանը, երբ մենք մեզ հարց ենք տալիս՝ «Ո՞վ է նա, ո՞ւր է», մեր միտքը շփոթվում է, մոլորվում, և էլ չգիտենք, թե ինչ մտածենք։

Լոքը կամենում է, որ սկսենք հոգիների ուսումնասիրու-

թյունից ու հետո միայն անցնենք մարմիններին։ Այդ մեթոդը ավելորդապաշտության, նախապաշարումների, սխալների մեթոդն է. դա չի համընկնում ո՛չ դատողությանը, ո՛չ էլ, նույնիսկ, բնության օրենքին. դա նշանակում է աչքերը փակել՝ տեսնել սովորելու համար։ Պետք է երկար ժամանակ ուսումնասիրել մարմինը՝ հոգու մասին ճշմարիտ գաղափար ունենալու և ենթադրելու համար, թե այդպիսին կա։ Հակառակ ձևը ծառայում է միայն մատերիալիզմը հաստատելուն։

Քանի որ մեր զգայարանները մեր ծանոթությունների առաջին միջոցներն են, ուրեմն մարմնական ու զգայական գոյերը միակն են, որոնց մասին մենք անմիջապես գաղափար ենք կազմում։ «Հոգի» բառը ոչ մի իմաստ չունի նրա համար, ով չի փիլիսոփայել։ Հոգին միայն մի մարմին է հասարակ ժողովրդի և երեխաների համար։ Չէ՞ որ նրանք երևակայում են, թե հոգիները ճչում են, խոսում, խփում, աղմկում։ Չի կարելի ժխտել, որ հոգիները, որոնք ձեռք ու լեզու ունեն, շատ են նման մարմիններին։ Ահա թե ինչու բոլոր ժողովուրդները, չբացառելով և հրեաներին, մարմնավոր աստվածներ են ստեղծել։ Մենք էլ մեր «Հոգի», «Երրորդություն», «Մարմնացյալ» տերմիններով մեծ մասամբ իսկական «անթրոպոմորֆիտներ»* ենք։ Ես ընդունում եմ, որ մեզ սովորեցնում են ասել, թե աստված ամեն տեղ է. բայց մենք հավատում ենք նաև, որ օդը ամեն տեղ է, գոնե մեր մթնոլորտում, և «Հոգի» բառը իր սկզբնական իմաստով նշանակում է «շունչ» ու «քամի»։ Մի անգամ որ մարդկանց սովորեցնում ենք արտասանել խոսքեր՝ առանց հասկանալու դրանց իմաստը, այնուհետև հեշտ է նրանց ասել տալ ինչ որ կամենանք։

Ուրիշ մարմինների վրա մեր ներգործության զգացումը սկզբում մեզ պետք է կարծել տված լինի, թե նրանք մեր վրա ներգործում են նույն ձևով, ինչ ձևով որ մենք ենք ներգործում նրանց վրա։ Այդպես է, որ մարդն սկսեց կենսավորել այն բոլոր գոյերը, որոնց ներգործությունն զգում էր։ Այդ գոյերի մեծամասնությունից թույլ զգալով իրեն,

---

* Մարդակերպող։— Ս. Ֆ.

չճանաչելով նրանց հզորության սահմանը, նա կարծեց, թե այդ հզորությունը անսահման է, և նրանցից աստվածներ շինեց, հենց որ նրանց մարմին տվեց։ Առաջին դարերում մարդիկ, սարսափած ամեն ինչից, բնության մեջ ոչինչ մահացած չտեսան։ Նյութի գաղափարը նույնքան դանդաղ առաջացավ նրանց մեջ, ինչքան հոգու գաղափարը, քանի որ առաջինը ինքն էլ մի բնազանցություն է։ Այդպիսով, մարդիկ տիեզերքը լցրին զգացող աստվածներով։ Աստղերը, քամիները, լեռները գետերը, ծառերը, քաղաքները, տներն իսկ, բոլորն ունեին իրենց հոգին, աստվածը, կյանքը։ Լաբանի հրեշ-արձանները, վայրենիների մանետուները *, նեգրերի ֆետիշները, բնության ու մարդկանց բոլոր ստեղծագործությունները եղան մահկանացուների առաջին աստվածությունները. բազմաստվածությունը նրանց առաջին կրոնն էր, իսկ կռապաշտությունը՝ առաջին պաշտամունքը։ Նրանք մի աստված ճանաչեցին միայն այն ժամանակ, երբ, հետզհետե ընդհանրացնելով իրենց մտքերը, ի վիճակի եղան բարձրանալու դեպի միակ պատճառը, էակների ամբողջական սիստեմը հավաքելու միակ գաղափարի տակ և որոշ իմաստ տալու «նյութ» բառին, որն ինքնին ամենամեծ վերացականությունն է։ Այսպիսով, որևէ երեխա, որ հավատում է աստծուն, անկասկած կռապաշտ է կամ, առնվազն, անթրոպոմորֆիտ, և երբ, մի անգամ, երևակայությունը տեսել է աստծուն, շատ հազվագեպ է, որ վերացականությունը նրան ըմբռնի։ Ահավասիկ այն սխալը, դեպի ուր տանում է Լոթի վարդապետությունը։

Համեմատե[illegible] [illegible] վերացական գաղափարին, [illegible] [illegible] ընդհանրներ։ Համար պետք է ենթադրել իրարամերժ հատկություններ, որոնք փոխադարձաբար միմյանց բացասում են, ինչպես՝ մտածումն ու տարածությունը, որոնցից մեկը էապես բաժանելի է, իսկ մյուսը բացառում է ամեն տեսակ բաժանելիություն։ Ընդ որում հասկանալի է, որ մտածումը, կամ եթե ուզում եք, զգայումը, մի նախնական հատկություն է,

* Ջանտվածներ— Ս. Բ.

գոյից անբաժանելի, որին և պատկանում է. նույնն է նաև տարածության համար՝ իր գոյի հարաբերությամբ։ Սրանից կարելի է եզրակացնել՝ այն էակները, որ կորցնում են այս հատկություններից որևէ մեկը, կորցնում են այն գոյը, որին պատկանում է այդ հատկությունը, որ, հետևապես, մահը ոչ այլ ինչ է, բայց եթե գոյի բաժանումը, որ այն էակները, որոնց մեջ այս երկու հատկությունները միացած են, կազմված են այն երկու գոյերից, որոնց պատկանում են այդ հատկությունները։

Այժմ նկատենք, թե ինչ տարբերություն կա գոյերի առկայության դաղափարի ու աստվածային բնության գաղափարի միջև, մեր մարմնի վրա մեր հոգու անիմանալի ներգործման գաղափարի ու բոլոր էակների վրա աստծու ներգործման գաղափարի միջև։ Ստեղծագործության, ոչնչացման, ամենուրեքության, հավիտենականության, ամենակարողության, աստվածային ստորոգելիքների բոլոր այս գաղափարները, որոնք այնքան քիչ մարդկանց է տրված տեսնելու այնպես շփոթ ու մութ, ինչպես որ կան, և որոնք բնավ էլ մութ չեն հասարակ ժողովրդի համար, քանի որ նրանցից ոչինչ չի հասկանա, ի՞նչպես կարող են ներկայանալ իրենց ամբողջ ուժով, այսինքն՝ իրենց ամբողջ խորհրդավորության մեջ, երիտասարդ մտքերին, որոնց դեռևս զբաղեցնում են զգայարանների առաջին գործողությունները և որոնք ըմբռնում են միայն այն, ինչ շոշափում են։ Իզուր են անհունության վիհերը բացված մեր շուրջը. երեխան նրանցից չի սարսափի, նրա թույլ աչքերը չեն կարող չափել նրանց խորությունը։ Երեխաների համար ամեն ինչ անսահման է. նրանք չգիտեն ոչ մի բանի սահման դնել. ոչ թե նրա համար, որ չափը նրանք խիստ երկար են պատկերացնում, այլ որովհետև նրանց ընբռնողությունն է կարճ։ Ես նույնիսկ նկատել եմ, որ նրանք անհունությունը ավելի շուտ դնում են այս, քան այն կողմը այն տարածություններից, որոնց ծանոթանալու են հետագայում։ Նրանք որևէ անհուն տարածություն ավելի շուտ իրենց ոտքերով կչափեն, քան աչքերով. դա նրանց համար կլինի այնքան մեծ, որքան տեսնում են, բայց ավելի մեծ, քան կարող են գնալ։ Եթե նրանց հետ խոսենք աստծու հզորության

մասին, նրան կպատկերացնեն համարյա նույնքան ուժեղ, ինչքան իրենց Հորը։ Նրանց գիտելիքը ամեն ինչում իրենց համար հնարավորությունների չափանիշը լինելով, այն ամենի մասին, ինչ լսում են, պակաս են գնահատում, քան իրենց իմացածը։ Այդպես են տգիտության ու մտային թուլության համար բնական եղող դատողությունները։ Այաքսը վախեցավ չափվել Աքիլլեսի հետ, բայց կռվի հրավիրեց Զևսին, որովհետև ճանաչում էր Աքիլլեսին, բայց չէր ճանաչում Զևսին։ Մի շվեյցարիացի գեղջուկ, որն իրեն կարծում էր ամենահարուստ մարդը, և որին աշխատում էին հասկացնել, թե ինչ բան է թագավորը, հպարտությամբ հարցնում էր, թե արդյո՞ք թագավորը կարող էր հարյուր կով ունենալ սարում։

Ես գտում եմ, թե ընթերցողներից շատերը պիտի զարմանան, տեսնելով, որ ես հետևում եմ իմ սանի կյանքի ամբողջ առաջին շրջանին՝ առանց նրան կրոնի մասին խոսելու։ Տասնհինգ տարեկան հասակում նա դեռևս չգիտեր, թե հոգի ունի, և գուցե տասնութ տարեկանին էլ դեռ ժամանակը չէ, որ այդ մասին իմանա. եթե ժամանակից շուտ սովորի, կարող է ենթարկվել բոլորովին չիմանալու վտանգին։

Եթե ուզենայի նկարագրել որևէ ձանձրալի անմտություն, ինկարագրեի երեխաներին քրիստոնեական ուսմունք դասավանդող մի իմաստակի. եթե ցանկանայի մի երեխայի հիմարացնել, նրան կստիպեի բացատրել, թե ինչ բան է քրիստոնեական վարդապետությունը։ Ինձ կառարկեն, թե քանի որ քրիստոնեական դոգմաների մեծ մասը խորհուրդներից (գաղտնիքներից) է կազմված, ապա սպասել, որ մարդկային միտքն ընդունակ լինի դրանք ըմբռնելու, չի՞ նշանակում սպասել, որ երեխան մարդ դառնա, այլ՝ սպասել, որ մարդն այլևս գոյություն չունենա։ Դրան նախ պատասխանում եմ, որ կան այնպիսի խորհուրդներ, որոնք մարդու համար ոչ միայն ըմբռնելի չեն, այլև անհավատալի են, և չեմ հասկանում, թե ինչ օգուտ կա դրանք երեխաներին սովորեցնելուց, բացի այն, որ նրանց վաղ հասակից ստելու ենք վարժեցնում։ Ապա ես կասեմ, որ այս խորհուրդներն ընդունելու համար պետք է գոնե գիտենալ, որ նրանք անհասկանալի են, իսկ երեխաները անընդունակ են

նույնիսկ այդ բանն ըմբռնելու։ Այն տարիքի համար, ուր ամեն ինչ խորհրդավորություն է, բառի իսկական իմաստով խորհուրդներ չկան։

«Փրկվելու համար պետք է հավատալ աստծուն»։ Այս վատ հասկացված վարդապետությունը արյունուռշտ անհանդուրժողության սկզբունքն է և բոլոր այն սին պատվիրանների պատճառը, որոնք մահացու հարված են հասցնում մարդկային դատողությանը, նրան վարժեցնելով դոհանալ խոսքերով։ Անտարակույս, ոչ մի րոպե չպետք է կորցնել արժանանալու համար հավիտենական փրկության, բայց եթե այն ձեռք բերելու համար բավական է սոսկ որոշ բառեր կրկնել, չգիտեմ, թե ի՞նչն է արգելում երկինքը լցնելու տարմահավերով ու կաչաղակներով, ինչպես և երեխաներով։

Հավատալու պարտավորությունը ինքնին դրա հնարավորություն է ենթադրում։ Այն փիլիսոփան, որը չի հավատում, սխալվում է, որովհետև վատ է օգտագործում իր մշակված բանականությունը և ի վիճակի է ըմբռնելու այն ճշմարտությունները, որոնք ժխտում է։ Բայց երեխան, որ գալանում է քրիստոնեական կրոնը, ի՞նչ է հավատում. այն, ինչ որ ըմբռրնում է։ Իսկ երեխան այնքան քիչ է ըմբռնում իրեն ասվածները, որ եթե դուք նրան հակառակն ասեք, նույնքան հեշտությամբ կընդունի այն։ Երեխաների ու շատ մարդկանց հավատքը աշխարհագրության հետ է կապված։ Այսպես, հարց է առաջանում, թե նրանք ո՞ր դեպքում կվարձատրվեն՝ Հռոմո՞ւմ թե Մեկկայում ծնված լինելու համար։ Մեկին կասեն, թե Մոհամետը աստծու մարգարեն է, և նա կկրկնի, որ Մոհամետը աստծու մարգարեն է. մի ուրիշին՝ Մոհամետը մի խարեբա է, նա կկրկնի, որ Մոհամետը խարեբա է։ Նրանցից յուրաքանչյուրը կհավատար մյուսի ասածը, եթե իրենց տեղերը փոխանակեին։ Մի՞թե կարելի է հիմնվել այնքան նման երկու հանգամանքների վրա՝ մեկին արքայություն, մյուսին դժոխք ուղարկելու համար։ Երբ մի երեխա ասում է, որ հավատում է աստծուն, իրականում աստծուն չէ, որ հավատում է, այլ Հակոբին կամ Հովհաննեսին, որոնք իրեն ասում են, թե մի բան կա, որ աստված է կոչվում, ու հավա-

տում է այնպես, ինչպես Սվրիպիդեսն է հավատում՝ «Ո՜վ Արամազդ, ես քո մասին այն գիտեմ, որ միայն քո անունն է ինձ ծանոթ»[1]։

Մենք հավատում ենք, որ բոլոր այն երեխաները, որոնք մեռնում են դատողության հասակին հասնելուց առաջ, չեն զրկվելու երկնային երջանկությունից. կաթոլիկները միևնույնն ընդունում են բոլոր այն երեխաների համար, որոնք մկրտվել են, չնայած որ այդ երեխաները դեռևս աստծու անունն իսկ չեն լսել։ Ուրեմն, կան պարագաներ, երբ կարելի է փրկվել առանց աստծուն հավատալու. այդ պարագաները լինում են և՛ երեխայության ժամանակ, և՛ հիմարության դեպքում, երբ մարդկային միտքը անընդունակ է ըմբռնելու աստվածությունը։ Ջեր և իմ միջև եղած ամբողջ տարբերությունը կայանում է նրանում, որ դուք ենթադրում եք, թե երեխաները այդ ընդունակությունն ունեն յոթ տարեկանում, իսկ իմ կարծիքով՝ նրանք դրանից զուրկ են նույնիսկ դեռևս տասնհինգ տարեկան հասակում։ Խնդիրն այն չէ, թե ես սխալվում եմ կամ ոչ. այստեղ հավատքի ինչ-որ հարց չենք քննում, այլ նկատի ունենք միայն բնական պատմության մի պարզ դիտողություն։

Միևնույն սկզբունքով, պարզ է, որ մի մարդ, որը խոր ծերության է հասել առանց աստծուն հավատալու, դրա համար չպետք է զրկվի երկնային կյանքում ընդունվելուց, եթե նրա կուրությունը կամավոր չի եղել. ես ասում եմ, որ մեծ մասամբ կամավոր չէ։ Սրան դուք համաձայն կլինեք այն խելագարների համար, որոնց մի հիվանդություն զրկել է իրենց մտավոր ընդունակություններից, բայց չի զրկել մարդկային հատկություններից, հետևապես և ստեղծողի բարիքներից օգտվելու իրավունքից։ Եվ ինչո՞ւ համաձայն չլինել նաև նրանց համար, ովքեր մանկությունից մեկուսացած լինելով հասարակությունից, բացարձակ վայրենու կյանք կանցկացնեն ու կզրկվեն այն բոլոր գիտելիքներից, որոնք ձեռք են բերվում միայն մարդկանց հետ հարաբերությամբ։

---

[1] Պլուտարքոս, *Սիրո մասին (ֆր. թարգմ.)*։

Հաստատված ճշմարտություն է, որ այդպիսի վայրենին չի կարող իր մտածողությունը բարձրացնել մինչև ճշմարիտ աստծու ճանաչողությունը։ Տրամաբանությունը մեզ ասում է, որ մարդը պատժելի է միայն իր կամավոր սխալների համար, և որ անհաղթելի տգիտությունը չի կարելի մեղք համարել։ Սրանից հետևում է, որ հավիտենական արդարադատության առաջ նա, ով կհավատար, եթե լուսավորված լիներ, ինչպես հարկն է, պետք է հավատացյալ համարվի, և որ պատժվելու արժանի անհավատներ են միայն նրանք, որոնց սիրտը փակված է ճշմարտության առաջ։

Պետք է զգուշանանք ճշմարտությունը հայտնել նրանց, ովքեր ի վիճակի չեն այն ըմբռնելու, որովհետև այդ կնշանակեր նրանց մոլորեցնել։ Գերադասելի է ոչ մի գաղափար չունենալ աստվածության մասին, քան թե ունենալ ստոր, մտացածին, վիրավորական, նրան անարժան գաղափարներ. ավելի վատ է նրան նախատելը, քան անգիտանալը։ «Ես կնախընտրեի,— ասում է բարի Պլուտարքոսը,— որ կարծեն, թե աշխարհում Պլուտարքոս չկա, քան թե ասեն, որ Պլուտարքոսը անարդար է, նախանձոտ, կասկածոտ ու այնքան բռնակալ, որ պահանջում է ավելին, քան կարելի է անել»։

Երեխաների մտքի մեջ նկարված աստծու անճոռնի պատկերների չարիքն այն է, որ այդ պատկերները այնտեղ մնում են ամբողջ կյանքի ընթացքում և նրանք, մեծահասակ դառնալուց հետո, երեխայության ժամանակի աստծուց տարբեր աստված չեն պատկերացնում։ Շվեյցարիայում ես տեսել եմ մի բարի ու կրոնասեր մայր, այնքա՛ն համոզված այս սկզբունքի մեջ, որ չէր ուզում երբեք իր երեխային վաղ հասակում խոսել կրոնի մասին, վախենալով, որ բավարարվելով այդ նախնական կոպիտ ծանոթությամբ, երեխան բանականության տարիքում կխուսափեր ավելի կատարյալ ծանոթություն ստանալուց։ Այդ երեխան աստծու մասին լսում էր մեծ ուշադրությամբ ու ակնածանքով, և հենց որ ինքը կամենում էր նրա մասին խոսել, իսկույն լռեցնում էին, որպես նրա համար շատ բարձր ու շատ բարդ մի հարց։ Այս վերապահությունը գրգռում էր նրա հետաքրքրասիրությունը, ու նրա ինքնասիրությունը աշխատում էր թափանցել այն խոր-

հըրդավորության մեջ, որը նրանից այնքան խնամքով թաքցընում էին։ Ինչքան քիչ էին խոսում աստծու մասին, ինչքան չէին հանդուրժում, որ նա խոսի նրա մասին, այնքան նա ավելի էր զբաղվում նրանով. այդ երեխան աստծուն տեսնում էր ամեն տեղ։ Նվ ինչ որ ինձ վախեցնում էր անզգուշությամբ նրան մատուցված այդ խորհրդավորության մեջ, այդ այն է, որ երիտասարդի երևակայությունը, չափից դուրս բորբոքվելով, կաղավաղի նրա ուղեղը, և, ի վերջո, փոխանակ հավատացյալի, նա կդառնա մի մոլեռանդ։

Բայց իմ Էմիլի համար ոչ մի այդպիսի վտանգ գոյություն չունի. նա, մշտապես հրաժարվելով ուշադրություն դարձնել այն ամենին, ինչ իր հասողությունից բարձր է, մեծ անտարբերությամբ է լսում այն բոլորը, ինչ չի ըմբռնում։ Այնքան շատ բան կա, որոնց մասին նա ասում է՝ «Այդ իմ ձեռնհասությունից դուրս է», որ նրա համար մեկ ավելին նշանակություն չունի. իսկ երբ սկսում է հետաքրքրվել այդ մեծ խնդիրներով, պատճառն այն չէ, որ նրան առաջարկում են, այլ այն, որ իր ծանոթությունների բնական զարգացումը նրա որոնումները տանում են այդ ուղղությամբ։

Մենք արդեն տեսանք, թե ինչ ճանապարհով է մարդկային մշակված միտքը մոտենում այդ գաղտնիքներին. ես հոժար եմ ընդունելու, որ նա, հենց հասարակության ծոցում, դրան կհասնի բնական կարգով, միայն ավելի առաջացած տարիքում։ Բայց քանի որ նույն հասարակության մեջ անխուսափելի պատճառներ կան, որոնք արագացնում են կրքերի զարգացումը, և եթե նույնպես չարագացնենք այդ կրքերը կարգավորող դիտելիքների զարգացման ընթացքը, այդ դեպքում է, որ հիրավի դուրս կգանք բնության սահմանած կարգից, և, հետևապես, կխանգարվի հավասարակշռությունը։ Եթե ի վիճակի չենք չափավորելու շատ արագ ընթացող զարգացումը, պետք է նույն արագությամբ առաջ մղենք նրա հետ կապված բոլոր հանգամանքները, այնպես որ կարգը բնավ չխանգարվի, ինչ որ միասին պետք է ընթանա, չդժանվի, որ մարդը, մնալով ամբողջական ու կայուն իր բովանդակ կյանքի ընթացքում, չտատանվի իր մերթ այս, մերթ այն ընդունակությունների միջև։

Ինչպիսի՜ դժվարություն է ծագում այստեղ, դժվարություն այնքան ավելի մեծ, ինչքան դա ոչ թե իրերի բնությունից է բխում, այլ այդ դժվարությունը լուծել չհամարձակվող մարդկանց երկչոտությունից։ Սկսենք գոնե այդ դժվարությունն առաջադրելու համարձակությունից։ Նրեխան պետք է դաստիարակվի իր հոր դավանած կրոնով. նրան միշտ էլ շատ լավ կարող են ապացուցել, որ, ինչպիսին էլ լինի, այդ կրոնն է միակ ճշմարիտը, որ բոլոր մնացած կրոններն այլանդակություն ու անհեթեթություն են։ Այս հարցում փաստերի ուժը կախված է բացարձակապես այն երկրից, որտեղ դրանք առաջադրվում են։ Մի թուրք, որին քրիստոնեությունն այնքան ծիծաղելի է թվում Կոստանդնուպոլսում, թո՛ղ տեսնի, թե ինչ կարծիք ունեն Փարիզում մահմեդականության մասին։ Հատկապես կրոնական խնդիրներում է, որ հանրային կարծիքը հաղթանակում է։ Բայց մենք, որ կամենում ենք թոթափել նրա լուծը ամեն ինչում, մենք, որ չենք ցանկանում ոչ մի զիջողություն անել վերին հեղինակությանը, չենք ուզում էմիլին սովորեցնել այնպիսի մի բան, որ ինքը չկարողանա սովորել որևէ երկրում. ո՞ր կրոնով պիտի կրթենք նրան, ո՞ր աղանդին պիտի անդամագրենք բնության մարդուն։ Պատասխանը, ինձ թվում է, շատ պարզ է՝ մենք նրան չենք մղի դեպի ո՛չ այս, ո՛չ այն կրոնը. բայց մենք նրան կդնենք այնպիսի վիճակում, որ նա ինքն ընտրի այն կրոնը, դեպի որ կտանի իր լավագույն ձևով օգտագործված դատողությունը։

Incedo per ignes,
Suppositos cineri doloso [1].

Ինչևէ. եռանդը և ուղղամտությունը մինչև այստեղ ինձ ծառայեցին որպես զգուշության միջոց։ Հույս ունեմ, որ այս երաշխիքները կարիքի դեպքում ինձ չեն լքելու երբեք։ Ընթերցողնե՛ր, կասկած չունենաք, որ ես երբևէ կարող եմ այնպիսի զգուշություններ ձեռք առնել, որոնք անարժան լինեն ճշմարտության մի բարեկամի համար. ես երբեք չեմ մոռանա իմ նշանաբանը. բայց հնարավոր է, որ սխալվեմ իմ

[1] «Գնում եմ այնպիսի մի կրակի վրայով,
Որ դաժան մոխրի տակ է ծածկված»։

դատողություններում։ Փոխանակ այստեղ ձեզ ասելու, թե ինչ եմ մտածում ես ինքս, ձեզ կասեմ, թե ինչ էր մտածում մի մարդ, որն ինձնից ավելի արժեր։ Ես երաշխավորում եմ այն դեպքերի ճշմարտացիությունը, որոնք պիտի հիշեմ քիչ հետո. այդ դեպքերը իրոք պատահել են այն թղթի հեղինակի հետ, որը պիտի արտատպեմ այստեղ. ձեզ կմնա տեսնել, թե կարելի՞ է արդյոք նրանցից օգտակար խորհրդածություններ քաղել մեզ հետաքրքրող նյութի մասին։ Ես ձեզ որպես կանոն չեմ առաջադրում մեկ ուրիշի կամ իմ զգացումը. առաջարկում եմ միայն ուսումնասիրել այն։

«Սրանից երեսուն տարի առաջ, Իտալիայում, հայրենիքից տարաքրված մի երիտասարդ ծայրահեղ թշվառության մեջ էր գտնվում։ Նա ծնված էր կալվինիստական ընտանիքում. ինչ-որ հիմարության հետևանքով ստիպված լինելով փախստական լինել մի օտար երկրում, առանց ապրելու միջոցների, կրոնը փոխեց՝ սոված չմնալու համար։ Այդ քաղաքում մի պատսպարան կար նորադարձների համար. նա ընդունվեց այնտեղ։ Նրան լուսաբանելով կրոնական վեճերի իմաստը, նրա մեջ մտցրին կասկածը, որ չուներ, նրան սովորեցրին չարիքը, որն անգիտանում էր. նա ծանոթացավ նոր աղանդներին, տեսավ ավելի նոր բարքեր. տեսավ ու քիչ էր մնացել, որ զոհ գնար դրանց։ Ուզեց փախչել, բայց նրան բանտարկեցին. գանգատվեց, նրան պատժեցին իր գանգատների համար. նա մատնվեց բռնակալների ձեռքը, որոնք նրա հետ վարվեցին որպես ոճրագործի, որովհետև չէր ցանկացել տեղի տալ ոճրին։ Նրանք, ովքեր ծանոթ են, թե բռնության ու անարդարության առաջին փորձությունը ինչքան է ղայրացնում մի անփորձ երիտասարդի սիրտը, կարող են պատկերացնել նրա դրությունը։ Կատաղության արցունքներ էին հոսում նրա աչքերից, զայրույթը նրան խեղդում էր. նա պաղատում էր աստծուն և մարդկանց, սիրտը բացում էր բոլորին, բայց ոչ ոք նրան չէր լսում։ Իր շուրջը միայն ստոր ծառաներ էր տեսնում, որոնք ենթարկվում էին իրեն անարգող անարժան արարածին, կամ միևնույն ոճրի մեղսակիցներ էին, որոնք ծաղրում էին նրա դիմադրությունը ու նրան համոզում հետևել իրենց։ Նա կորած կլիներ, եթե օդնության չգար

մի պարկեշտ կրոնավոր, որը պատսպարան էր եկել գործով և որի հետ կարողացավ զաղտնի տեսակցություն ունենալ։ Կրոնավորը ինքը խեղճ էր և ամեն մեկի օգնության կարիքն ուներ, բայց ճնշման տակ գտնվող երիտասարդը ավելի շատ կարիք ուներ նրա օգնությանը, և կրոնավորը չտատանվեց, օգնեց նրա փախուստի գործին՝ մի վտանգավոր թշնամի շահելու գնով։

«Խուսափելով խայտառակությունից, երիտասարդն ընկավ թշվառության մեջ և ապարդյուն պայքարում էր իր ճակատագրի դեմ. մի րոպե իրեն թվաց, թե հաղթանակում է։ Բախտավորության առաջին նշույլների հետ նա մոռացավ իր վշտերն ու պաշտպանին։ Բայց շատ շուտ պատժվեց այդ ապերախտության համար. իր բոլոր հույսերը չքացան. իր երիտասարդությունը իզուր էր նրան օգնում. իր ռոմանտիկ մտքերը փչացնում էին ամեն ինչ։ Ջուննենալով ո՛չ բավականաչափ տաղանդ, ո՛չ բավականաչափ ճարպկություն՝ իր համար հեշտ ուղի գտնելու, չկարողանալով լինել ո՛չ չափավոր, ո՛չ չար, նա այնքան բաների ձգտեց, որ ոչնչի չհասավ։ Վիրաստին ընկնելով իր նախկին տագնապալի դրության մեջ, առանց հացի, առանց պատսպարանի, կիսամոլամահ, նա հիշեց իր բարերարին։

«Վերադառնում է նրա մոտ, գտնում է նրան, լավ է ընդունվում նրանից. իր երևակը կրոնավորին հիշեցնում է արած բարի գործը. այդպիսի հիշողությունից միշտ հրճվում է հոգին։ Այդ մարդը ի բնե մարդկային էր, կարեկից. նա ուրիշի ցավերն զգում էր իր սեփական ցավերով, և բարեկեցությունը չէր խստացրել նրա սիրտը. վերջապես, իմաստության դասերն ու մի լուսավոր առաքինություն ամրապնդել էին նրա բարի ընավորությունը։ Նա հյուրընկալում է երիտասարդին, նրա համար պատսպարան է գտնում, իր ունեցածր, որ հազիվ իրեն էր բավարարում, բաժանում է նրա հետ։ Ավելին է անում. նրան ուսմունք է տալիս, մխիթարում, սովորեցնում է ձախորդությունը համբերությամբ տանելու դժվարին արվեստը։ Նախապաշարված մարդի՛կ, կսպասեի՞ք, որ մի կրոնավոր, այն էլ Իտալիայում, այսպիսի վերաբերմունք ունենար։

«Այս պարկեշտ կրոնավորը սավոյացի մի խեղճ երից էր, որ երիտասարդական մի արկածի հետևանքով բախտում էր ունեցել իր եպիսկոպոսի հետ ու լեռներն էր անցել՝ օտար երկրում ապրուստ ճարելու համար։ Նա ո՛չ անխելք էր, ո՛չ անգրագետ, և շնորհիվ իր համակրելի արտաքինի, պաշտպաններ գտավ, որոնք նրան տեղավորեցին մի մինիստրի մոտ՝ նրա որդուն դաստիարակելու համար։ Նա գերադասում էր աղքատությունը ուրիշից կախված լինելուց և չդիտեր իրեն ինչպես պահել մեծամեծների մոտ։ Երկար չմնաց այնտեղ և հեռանալով՝ երբեք չկորցրեց իր անձի արժանիքը. և որովհետև զգաստ կյանք էր վարում ու սիրված էր բոլորից, հույս ուներ, իր եպիսկոպոսի ներողամտությանն արժանանալով, լեռնային շրջանում փոքրիկ մի ծուխ ստանալ ու այնտեղ ապրել կյանքի մնացած օրերը։ Այդ էր նրա վերջին ցանկությունը։

«Մի բնական հակումով նա հետաքրքրվում էր երիտասարդ փախստականով, ուստի ուշադրությամբ ուսումնասիրեց նրան։ Տեսավ, որ դժբախտ ճակատագիրը արդեն խաթարել էր նրա սիրտը, որ նախատինքն ու արհամարհանքը ընկճել էին նրա արիությունը, և որ նրա հպարտությունը, փոխվելով դառն սրտմտության, մարդկանց անարդարության ու դաժանության մեջ տեսնում էր միայն նրանց բնավորության ախտավորություն ու առաքինության ցնորք։ Նա տեսել էր, որ կրոնը սոսկ որպես դիմակ է ծառայում անհատական շահին, իսկ սրբազան պաշտամունքը՝ կեղծիքի պաշտպան. տեսել էր, դատարկ վեճերի նրբության մեջ, որ արքայությունն ու դժոխքը բառախաղերի արժեք են ստացել. տեսել էր, որ աստվածության վեհ ու սկզբնական գաղափարն այլանդակվել էր մարդկանց քմահաճ երևակայությամբ, և նկատելով, որ աստծուն հավատալու համար պետք էր հրաժարվել նրանից ստացած դատողությունից, նա միևնույն արհամարհանքն ունեցավ և՛ մեր ծիծաղելի երազանքների, և՛ սրանց առարկայի հանդեպ։ Ոչինչ չգիտենալով եղածի մասին, առանց իրերի ծագման մասին գաղափար ունենալու, նա ավելի մխրճվեց իր ապուշ տգիտության մեջ, խոր արհամարհանք տածելով դեպի նրանք, ովքեր կարծում էին, թե նրանից ավելին գիտեն։

«Ամեն կրոնի մոռացում տանում է դեպի մարդկային պարտականությունների մոռացումը։ Այս խոտորումը արդեն կիսով չափ կատարվել էր անառակի սրտում։ Թեպետ նա ծնունդով վատ երեխա չէր, բայց թեթևամտությունը, քրշվառությունը, հետզհետե խեղդելով նրա բնավորությունը, արագորեն տանում էին նրան դեպի կործանում, նրանից պատրաստում ապականված բարքերով, անհավատ մի մարդ։

«Ջարիքը, որ համարյա անխուսափելի էր, դեռևս լրիվ կատարված չէր։ Երիտասարդը օժտված էր որոշ գիտելիքներով, և բավականին դաստիարակություն էր ստացել։ Նա այն երջանիկ հասակումն էր, երբ եռացող արյունը սկսում է ջերմացնել հոգին, առանց նրան ստրկացնելու զգայարանների մոլեգնությանը։ Նրա հոգին դեռևս պահել էր իր ամբողջ կորովը։ Բնածին ամոթխածությունն ու երկչոտ բնավորությունը լրացնում էին տագնապը և նրա համար երկարացնում այն ժամանակաշրջանը, որում դուք պահում եք ձեր աշակերտին այնքան հոգածությամբ։ Անասնական այլասերման և անհրապույր մոլության գարշելի օրինակը, փոխանակ բորբոքելու նրա երևակայությունը, ընդհակառակն, մեղմացրել էր այն։ Երկար ժամանակ զզվանքը, որպես առաքինություն, պահպանել էր նրա անմեղությունը, որն ի վերջո պիտի ընկճվեր ավելի քաղցր հրապույրներից։

«Կրոնավորը տեսավ վտանգն ու նրանից խուսափելու միջոցները։ Դժվարությունները նրան չվրտնեցրին. նա իր աշխատանքից հաճույք էր զգում. որոշեց ավարտին հասցնել այն ու առաքինությանը վերադարձնել այն զոհին, որին խլել էր խայտառակության ճիրաններից։ Իր ծրագիրն իրագործելու համար նա հեռվից սկսեց. նպատակի գեղեցկությունը ոգևորում էր նրա կորովն ու նրան թելադրում իր եռանդին արժանի միջոցներ։ Ինչպիսին էլ լիներ հաջողությունը, նա վստահ էր, որ ժամանակն իզուր չէր կորցնում։ Հաջողությունը միշտ ապահովված է, երբ մարդ ցանկանում է մի լավ բան անել։

«Նա սկսեց գրավել նորադարձի վստահությունը՝ առանց սակարկելու իր բարիքները, առանց նրան ձանձրացնելու, առանց նրա գլխին քարոզներ կարդալու, շարունակ իրեն

դնելով նրա տրամադրության տակ ու միշտ փոքրանալով՝ նրան հավասարվելու համար։ Կարծում եմ, որ հուզիչ է տեսնել, երբ մի լուրջ մարդ ստահակին ընկեր է դառնում, և առաքինությունը գործակցում է սանձարձակության հետ՝ ավելի վստահորեն հաղթանակելու համար։ Երբ մոլորվածը գալիս էր նրան իր հմայքով խոստովանություններն անելու ու սիրտը բաց անելու նրա առաջ, քահանան լսում էր նրան, հանգստացնում. առանց չարիքը վավերացնելու՝ նա հետաքրքրվում էր ամեն ինչով. ոչ մի անզգույշ խոսքով չէր ընդհատում նրա շատախոսությունն ու վշտացնում սիրտը, լսված լինելու հաճույքը ավելացնում էր նրա՝ ամեն ինչ ասելու հաճույքը։ Այդպես կատարվեց նրա ընդհանուր խոստովանությունը, չնայած նա ոչինչ խոստովանելու մտադրված չէր։

«Նրա զգացումներն ու բնավորությունը լավ ուսումնասիրելուց հետո, քահանան պարզ տեսավ, որ իր հասակի համեմատ տգետ չլինելով հանդերձ, երիտասարդը մոռացել էր այն ամենը, ինչ պետք է գիտենար. և այն նախատինքը, որին ենթարկել էր նրան ճակատագիրը, նրա մեջ խեղդում էր բարու և չարի վերաբերյալ զգացումները։ Անբանացման մի աստիճան կա, ուր կյանքն անջատվում է հոգուց, և ներքին ձայնը չի կարող լսելի դառնալ նրան, ով միայն սնվելու մասին է մտածում։ Դժբախտ երիտասարդին փրկելու համար այս բարոյական մահից, որին այնքան մոտեցել էր նա, քահանան սկսեց նրա մեջ զարթնեցնել ինքնասիրությունն ու հարգանքը դեպի սեփական անձը. նրան ցույց էր տալիս, թե ինչպիսի երջանիկ ապագա կունենար, եթե լավ օգտագործեր իր ընդունակությունները, նրա սրտի մեջ արծարծում էր մի վսեմ ոգևորություն՝ ուրիշների գեղեցիկ գործերի օրինակով, նրա մեջ հիացում առաջացնելով դեպի այն մարդիկ, ովքեր կատարում էին այդ գործերը, նմանօրինակ գործեր կատարելու ցանկություն էր զարթնեցնում։ Դատարկ ու թափառաշրջիկ կյանքից անզգայաբար ետ պահելու համար, նրան ընտրովի գրքերից հատվածներ էր արտագրել տալիս և այնպես ձևացնելով, որ ինքը իր կարիք ունի այդ հատվածներին, նրա մեջ զարգացնում էր երախտագիտության աղնիվ զգացումը։ Անուղղակի կերպով նրան դաստիարակում էր այդ գրքերով. այդպիսով,

նրան վերադարձնում էր արժանապատվության զգացմունքը և հավատքն այն մասին, թե ինքը այնքան էլ անպետք մարդ չէր։

«Մի չնչին դեպք ցույց է տալիս, թե ինչպիսի միջոց էր գործադրում այդ բարեգործ մարդը իր աշակերտի սիրտը անզգալիորեն ստորությունից վեր բարձրացնելու համար՝ առանց ցույց տալու, թե շահագրգռված է նրա դաստիարակությամբ։ Կրոնավորը մի այնպիսի հանրահայտ ուղղամտություն ու մարդկանց ճանաչելու այնպիսի վստահելի դատողություն ուներ, որ շատերը նախընտրում էին իրենց ողորմություններն անել նրա, քան թե քաղաքի հարուստ քահանաների միջոցով։ Մի օր, երբ նրան մի քիչ փող էին տվել աղքատներին բաժանելու համար, երիտասարդը, որպես այդպիսին, ստորացավ նրանից բաժին պահանջելու այդ դրամից։ «Ո՛չ,— ասաց քահանան,— մենք եղբայրներ ենք, դուք ինձ եք պատկանում, և ես իրավունք չունեմ այդ փողին ձեռք տալու իմ սեփական հարստքերի համար»։ Ապա իր սեփական փողից տվեց նրան ինչքան որ նա պահանջել էր։ Այսպիսի դասերը հազվադեպորեն են ապարդյուն անցնում այն երիտասարդների համար, որոնք բոլորովին ապականված չեն։

«Ես իզուր խոսեցի երրորդ դեմքով, այդ բոլորովին ավելորդ է, քանի որ դուք զգում եք, սիրելի համաքաղաքացիներ, որ այդ թշվառ փախստականը ես ինքս եմ. ես ինձ այժմ բավական հեռու եմ զգում իմ երիտասարդական անառակություններից, որով և կարող եմ դրանք խոստովանել, և այն ձևրքը, որ ինձ այդտեղից դուրս բերեց, ինձ պարտավորեցրել է, որ ի գին մի փոքր ամոթանքի, արժանին հատուցեմ նրա արած բարիքներին։

«Ինչ որ ամենից ավելի ուշադրություն էր գրավում իմ հարգելի ուսուցչի մեջ, նրա առանց կեղծիքի առաքինությունն էր, անընկճելի մարդկայնությունը, միշտ շիտակ ու լուրջ խոսքերը և իր խոսքերին համապատասխան վերաբերմունքը։ Ես չեմ տեսել երբեք, որ նա հետաքրքրվեր, թե իրենից օգնություն ստացողները արդյոք գնո՞ւմ էին ժամերգության, խոստովանվո՞ւմ էին հաճախ, ծոմ պահո՞ւմ էին սահմանված օրերին, պահեցողություն անո՞ւմ էին, կամ նրանցից պահան-

չեր նման ուրիշ պայմաններ, առանց որոնց, նույնիսկ եթե մեռնես քաղցից, ոչ մի օգնություն չես կարող հուսալ բարեպաշտ հավատացյալներից։

«Քաջալերված այս դիտողություններից, փոխանակ նրա աչքի առաջ ցուցադրելու նորադարձի իմ կեղծ ոգևորությունը, ես նրանից շատ էլ չէի ծածկում իմ մտածելակերպն ու չէի նկատում, որ նա դրանից գայթակղվեր։ Երբեմն ես կարող էի մտածել, որ դեպի իմ նոր ընդունած կրոնը ցուցաբերած անտարբերությունս նա գուցե բացատրում էր այն հանգամանքով, որ դեռևս տածում էի իմ առաջին դավանանքի հանդեպ. նա գիտեր, որ իմ արհամարհանքը մի կանխակալ կարծիքի հետևանք չէ։ Բայց ինքս ի՞նչ կարող էի մտածել, երբ լսում էի, որ նա երբեմն հաստատում էր Հռոմեական եկեղեցուն հակառակ վարդապետություններ և միշտ զնահատական էր տալիս նրա բոլոր ծեսերին։ Ես կարող էի կարծել, որ նա թաքնված բողոքական է, եթե չտեսնեի, որ նվազ հավատարիմ չէր այն նույն ծեսերին, որոնց, թվում էր թե, ինքը այնքան քիչ նշանակություն էր տալիս. բայց գիտենալով, որ առանց վկաների ներկայության նա նույնքան բարեխղճությամբ էր կատարում քահանայի իր բոլոր պարտականությունները, ինչքան հասարակության առաջ, ես չգիտեի ինչպես բացատրել այդ հակասությունները։ Հակառակ այն նախկին սխալին, որը պատճառ էր եղել իր շնորհազրկության և որից լիովին չէր ուղղվել, նրա կյանքը օրինակելի էր, բարքերը՝ անբասիր, խոսքերը՝ պարկեշտ ու խոհական։ Ապրելով նրա հետ կատարյալ մտերմության մեջ, օրեցօր ես նրան ավելի ու ավելի էի հարգում, և այդքան բարությունը լիովին նվաճած լինելով իմ սիրտը, զարմանալի հետաքրքրությամբ սպասում էի իմանալ, թե ինչ սկզբունքի վրա էր հիմնված մի այդքան բացառիկ կյանքի հետևողականությունը։

«Այդ բոլորն այնքան էլ շուտ չհասավ։ Իր աշակերտին բացվելուց առաջ, նա չանաց նրա հոգու մեջ ամեցնել ողջախոհության ու բարության իր ցանած սերմերը։ Այն, ինչ ամենից դժվար էր ոչնչացնել իմ մեջ, մի տեսակ գոռոզ մարդատյացությունն էր, մի որոշ թշնամություն աշխարհի հարուստների ու երջանիկների դեմ, կարծես նրանք իմ հաշ-

վին հարստացած լինեին և իրենց կարծեցյալ երջանկությունը իմ երջանկությունից գողացած։ Երիտասարդության հիմար մեծամտությունը, որ ծառանում է նվաստացման դեմ, ինձ անչափ հակում էր դեպի այդ զայրացկոտ բնավորությունը, և արժանապատվության այն զգացումը, որ իմ մենտորը աշխատում էր զարթեցնել իմ մեջ, ինձ տանելով դեպի հպարտություն՝ մարդկանց ավելի անարգ էր դարձնում իմ աչքին և սոսկ ավելացնում էր իմ արհամարհանքն ու ատելությունը նրանց նկատմամբ։

«Առանց ուղղակի պայքարելու այս մեծամտության դեմ՝ նա ջանաց, որ դա չվերածվի խստասրտության, և առանց ինձնից վերացնելու հարգանքը դեպի իմ անձը՝ այն դարձրեց նվազ արհամարհական իմ մերձավորի համար։ Անընդհատ ինձնից հեռացնելով պատրանքները և ցույց տալով նրանց տակ թաքնված իսկական չարիքները, նա ինձ սովորեցնում էր ողբալ իմ նմանների սխալները, կարեկցել նրանց թշվառությանը և ավելի շատ խղճալ նրանց, քան թե նախանձել։ Իր սեփական տկարությունների խոր գիտակցության շնորհիվ համակված լինելով մարդկային տկարությունների վշտով, նա ամեն տեղ տեսնում էր իրենց և ուրիշների մոլությունների զոհ դարձած մարդիկ. նա տեսնում էր հարուստների լծի տակ հեծող աղքատներին, և նախապաշարումների լծի տակ հեծող հարուստներին։ «Հավատացե՛ք ինձ,— ասում էր նա,— մեր պատրանքները, փոխանակ մեզնից ծածկելու մեր ցավերը, ավելացնում են դրանք, ինչո՞ր արժեք տալով անարժեք որևէ բանի և մեզ զգացնելով հազարավոր սնոտի զրկանքներ, որոնց չէինք զգա առանց այդ պատրանքների։ Հոգու խաղաղությունը կայանում է նրանում, որ գիտենանք արհամարհել այն ամենը, ինչ կարող է նրան վրդովել. նա, ով ամենից շատ է գնահատում կյանքը, ամենից քիչ գիտե օգտվել դրանից, և նա, ով ամենից շատ է երջանկության տենչում, միշտ էլ ամենաժրաիսւ մարդն է»։

«Ա՜հ, ի՜նչ տխուր պատկեր,— բացականչում էի ես դառնությամբ,— եթե ամեն բանից պետք է հրաժարվել, ինչո՞ւ ծնվեցինք, և եթե պետք է արհամարհել անգամ երջանկությունը, ո՞վ կարող է երջանիկ լինել»։ «Ես ինքս», պա-

տասխանեց մի օր քահանան այնպիսի շեշտով, որ ես վարժացա: «Դո՞ք, երջանի՞կ, այնքան քիչ բախտավորված, աղքատ, տարագրված, հալածված, դուք երջանի՞կ եք: Իսկ ի՞նչ եք արել երջանիկ լինելու համար»: «Տղաս,— պատասխանեց քահանան,— հոժարակամ ես քեզ կպատմեմ այդ մասին»:

«Որից հետո ասաց, թե լսած լինելով իմ խոստովանություններդ, այժմ ցանկանում էր ինքն էլ ինձ խոստովանել: «Ես ձեզ կպարզեմ,— ասաց ինձ զրկելով,— իմ սրտի բոլոր զգացումները: Դուք ինձ կտեսնեք, եթե ոչ այնպես, ինչպես կամ, գոնե այնպես, ինչպես ես ինձ տեսնում եմ: Երբ դուք լսեք իմ ամբողջ հավատո հանգանակը, երբ մի լավ ճանաչեք իմ հոգեվիճակը, կհասկանաք, թե ինչու եմ ես ինձ երջանիկ համարում, և թե, ինձ պես մտածելու դեպքում, ինչ պետք է անեք՝ երջանիկ լինելու համար: Բայց այս խոստովանությունները րոպեի գործ չեն, ժամանակ է պետք, որպեսզի կարողանամ ձեզ բացատրել այն ամենը, ինչ ես մտածում եմ մարդկանց ճակատագրի ու կյանքի ճշմարիտ արժեքի մասին. նշանակենք մի որևէ ժամ, մի հարմար ժամանակ՝ հանգիստ սրտով զրուցելու համար»:

«Ես չափազանց անհամբեր էի նրան լսելու: Ժամադրությունը նշանակվեց հաջորդ օրվա առավոտյան: Ամառ էր. մենք զարթնեցինք արևածագին: Նա ինձ տարավ քաղաքից դուրս, մի բարձր բլրի վրա, որի ստորոտից անցնում է Պոն՝ իր հոսանքով ոռոգելով շրջակայքի արգավանդ դաշտերը. հեռվից Ալպերի հսկա լեռնաշղթան պատկում էր այդ տեսարանը. ծագող արեգակի ճառագայթներն արդեն ոսկեզօծել էին հարթավայրերը և ձյուների վրա երկար ստվերներով գծագրում էին բլուրներն ու տները, լույսի բազմազան խաղերով ճոխացնում այս գեղեցիկ պատկերը, որպիսին երբևէ տեսած լինի մարդկային աչքը: Կարծես բնությունը մեր աչքերի առաջ ցուցադրում էր իր ամբողջ շքեղությունը՝ մեր զրույցին նյութ հայթայթելու համար: Այդտեղ է, որ, մի քանի րոպե տեսարանը լուռ դիտելուց հետո, Հաշտության պաշտոնյան ինձ պատմեց հետևյալը»:

«Որդյա՛կ իմ, ինձնից չսպասեք ո՛չ գիտական ճառեր, ո՛չ խոր դատողություններ։ Ես մի մեծ փիլիսոփա չեմ ու չեմ էլ ցանկանում այդպիսին լինել։ Բայց ես երբեմն ողջամիտ եմ ու միշտ էլ սիրում եմ ճշմարտությունը։ Չեմ կամենում վիճել ձեզ հետ, ոչ էլ փորձ անել ձեզ համոզելու. բավականանում եմ միայն անկեղծ սրտով ձեզ հայտնել իմ մտածածը։ Դիմեցե՛ք ձեր սրտին իմ խոսելու միջոցին. ձեզնից միայն այդ եմ պահանջում։ Եթե ես սխալվեմ, դրանում կեղծիք չի լինի. այդ բավական է, որպեսզի իմ սխալը ոճիր չհամարվի. եթե դուք էլ սխալվեիք, վնասը մեծ չէր լինի։ Կարծում եմ, մենք երկուսս էլ դատողություն ունենք, և մենք նույնքան շահագրգռված ենք լսել նրան. պատճառ չեմ տեսնում, որ դուք ևս չմտածեիք ինձ պես։

Ես ծնվել եմ աղքատ ու գյուղացի. կոչումս հողի մշակ լինելն էր, բայց իմ ծնողները գերադասեցին, որ ես սովորեմ իմ ապրուստը ճարել քահանայի աշխատանքով, և միջոցներ գտան ինձ ուսում տալու։ Անշուշտ, թե՛ ես և թե՛ իմ ծնողներն ուսմունքի մեջ չէինք տեսնում ոչ մի գեղեցիկ, ճշմարիտ, օգտակար բան, այլ մի միջոց սովորելու այն ամենը, ինչ պետք էր քահանա ձեռնադրվելու համար։ Ես սովորեցի այն, ինչ ուրիշները ցանկացան, ասում էի այն, ինչ ուրիշներն էին ցանկանում, որ ասեմ, արեցի նրանց կամեցածը և քահանա դարձա։ Բայց շուտով զգացի, որ հանձնառու լինելով հրաժարվել տղամարդ լինելուց, ես խոստացել էի ավելին, քան կարող էի կատարել։

Մեզ ասում են, թե խիղճը նախապաշարումների գործն է. բայց ես անձնական փորձով գիտեմ, որ խիղճը համառորեն հետևում է բնության հրամանին, մարդկանց բոլոր օրենքներին հակառակ։ Ինչուր են մեզ արգելում այս կամ այն բանն անել, մեր խիղճը մեզ շատ թույլ է տեղադրում այն բանի համար, որ լավ կարգավորված բնությունն է մեզ թույլատրում, առավել ևս՝ պատվիրում անել։ Ո՛վ բարի երիտասարդ, բնությունը դեռևս ոչինչ չի ասել ձեր զգայարաններին. երկար ապրեցե՛ք այդ երջանիկ վիճակում, ուր նրա

ձայնը անմեղության ձայնն է։ Հիշեցե՛ք, որ մենք նրան ավելի շատ ենք վիրավորում, երբ ուզում ենք այն կանխել, քան պայքարելով նրա դեմ. պետք է նախ սովորել նրան դիմագրել, որպեսզի իմանանք, թե երբ կարելի է տեղի տալ առանց մեղանչելու։

Դեռևս երիտասարդ հասակից ես հարգել եմ ամուսնության որպես բնության հաստատած ամենաառաջին ու ամենասուրբ կարգը։ Զրկված լինելով ամուսնական կյանքի իրավունքից, ես որոշեցի չպղծել այն, որովհետև, չնայած իմ կրոնական դաստիարակության և ուսմունքին, մշտական միօրինակ ու պարզ կյանք վարելով, իմ միտքը պահպանել էր իր նախնական ամբողջ հստակությունը. աշխարհիկ սկզբունքներն այն չէին մթագնել բնավ, և իմ չքավորությունն ինձ հեռու էր պահում այն փորձություններից, որոնք թելադրում են մոլության իմաստակությունները։

Հենց այդ որոշումն եղավ ինձ կորստյան մատնողը. ուրիշի անկողնի նկատմամբ ունեցած հարգանքս բացահայտեց իմ սխալները։ Պետք է քավեի խայտառակությունը. ձերբակալված, վտարված, ես ավելի շուտ իմ խղճահարության լուծն եղա, քան իմ անժուժկալության. և իմ շնորհազրկությանը զուգահեռ ինձ հայտարարված մեղադրանքը ինձ հասկացրեց, որ շատ անգամ պետք է սխալը ծանրացնել՝ պատժից խուսափելու համար։

Նման ոչ շատ փորձառություններ կընդարձակեն խորհող մտքի հորիզոնը։ Տխուր դիտողությունների հետևանքով տեսնելով, թե ինչպես են տապալվում այն գաղափարները, որ ես ունեի արդարության, պատվի ու մարդկային բոլոր պարտականությունների մասին, օրեցօր կորցնում էի իմ ստացած գաղափարներից մեկն ու մյուսը. մնացածները այլևս բավական չլինելով միացած մի մարմին կազմելու, որը կարողանար ինքն իրեն օգնել, ես զգացի, որ հետզհետե իմ մեջ խավարում էր սկզբունքների ճշմարտությունը, և վերջիվերջո ընկնելով այնպիսի վիճակի մեջ, որ չգիտեի ինչ մտածել, ես հասա այն նույն կետին, ուր դուք եք գտնվում այժմ, միայն այն տարբերությամբ, որ իմ թերահավատությունը, լինելով ավելի հասունացած տարիքի ուշացած պտուղը, ավելի մեծ

ճիգով էր ձեռք բերված, որով և ավելի դժվար էր այն ոչնչացնել։

Ես այսպիսի անորոշության ու տարակուսանքի տրամադրություններով էի համակված, ինչպիսիք Դեկարտն է պահանջում՝ ճշմարտությունը որոնելու համար։ Նման դրությունը երկար չի կարող տևել. նա անհանգստացնող է ու անտանելի. միայն մոլության շահը կամ հոգու ծուլությունն է մեզ պահում դրա մեջ։ Արդ, իմ սիրտը այնքան աղարտված չէր, որ ինձ հաճելի լիներ մնալ այդ դրության մեջ, և ոչինչ այնպես լավ չի պահպանի խորհելու սովորությունը, ինչպես իր բախտից ավելի ինքն իրենից գոհ լինելը։

Ես, ուրեմն, մտորում էի մարդկային կարծիքների ծովի վրա լողացող մահկանացուների տխուր բախտի մասին, առանց ղեկի, առանց կողմնացույցի, հանձնված իրենց փոթորկալի կրքերին, ունենալով միայն մի անփորձ նավապետ, որը ճանապարհը չի իմանում և չգիտի, թե ո՞րտեղից է գալիս և ո՞ւր է գնում։ Ինքս ինձ ասում էի. «Ես սիրում եմ ճշմարտությունը, փնտրում եմ այն, բայց չեմ կարողանում ճանաչել. թո՛ղ այն ցույց տան ինձ, և ես կկապվեմ նրան. ինչո՞ւ պետք է ճշմարտությունը խույս տա մի հոժար սրտից, որն ստեղծվել է նրան պաշտելու համար»։

Ջնայած ես հաճախ ամենամեծ վշտեր եմ կրել, բայց և այնպես, երբեք այդպիսի տևական անախորժ կյանքով չեմ ապրել, ինչպես վրդովմունքի ու անձկության այդ ժամանակաշրջանում, երբ, անընդհատ մի կասկածից մյուսը տարուբերվելով, իմ երկար խոհումներից ստանում էի միայն անորոշություն, խավար ու հակասություններ՝ իմ էության սկզբունապատճառի ու իմ՝ պարտականությունների կարգի մասին։

Չեմ հասկանում, թե ի՞նչպես կարելի է անհավատ լինել՝ սկզբունքով, անկեղծորեն։ Այդպիսի փիլիսոփաներ կա՛մ գոյություն չունեն, կա՛մ մարդկանցից ամենադժբախտներն են։ Այն կասկածը, որ մենք ունենում ենք այն բաների մասին, որ պետք է իմանանք, մարդկային մտքի համար չափազանց ծանր կացություն է, այդ վիճակում մարդ չի կարող երկար մնալ. նա ակամա մի որոշման կհանգի՝ այս կամ այն ձևով, և նախամեծար կհամարի խաբվել, քան թե ոչնչի չհավատալ։

Մի բան, որ ավելացնում էր իմ տագնապը, այդ այն էր, որ ծնված լինելով մի դավանանքի մեջ, որտեղ ամեն ինչ որոշում է եկեղեցին, որը ոչ մի կասկած չի թույլատրում ունենալ, մի կետի ժխտումը ինձ մերժել էր տալիս ամբողջ մնացածը, և այդքան անհեթեթ որոշումներին համակերպվելու անհնարինությունը ինձ հեռացնում էր նաև այն որոշումներից, որոնք այդպիսին չէին։ Ինձ ասելով՝ «Հավատացե՛ք ամեն ինչի», ստիպում էին չհավատալ ոչ մի բանի. ես չգիտեի ինչի վրա կանգ առնել։

Ուսումնասիրում էի փիլիսոփաներին, թերթում նրանց գրքերը, քննում նրանց զանազան կարծիքները. նրանց բոլորին գտնում էի հպարտ, հաստատական, վարդապետական, նույնիսկ իրենց կարծեցյալ անհավատության մեջ, ոչինչ չանգիտացող, ոչինչ չապացուցող, մխխանց ծաղրող. և բոլորի համար ընդհանուր այս վերջին կետը ինձ թվաց միակը, որի մեջ բոլորն էլ իրավացի են։ Հաղթականՙ երբ հարձակվում են, նրանք անզոր են դառնում պաշտպանվելիս։ Եթե կշռադատեք նրանց դատողությունները, կտեսնեք, որ դրանք ծառայում են միայն քանդելու. իսկ եթե հաշվեք ձայները, յուրաքանչյուրը նրանցից մնում է առանձին. նրանք համաձայնում են սոսկ վիճելու համար. նրանց ունկնդրելով չէ, որ պիտի կարողանայի գտնել իմ անորոշությունից դուրս գալու միջոցը։

Ես հասկացա, որ մարդկային մտքի անբավարարությունը առաջին պատճառն է զգացումների ղարմանալի բազմազանության, իսկ մեծամտությունըՙ երկրորդ պատճառը։ Մենք չունենք այդ հսկա մեքենայի չափանիշը, չենք կարող հաշվել նրա հարաբերությունները. նրա ո՛չ առաջին օրենքներն ենք ճանաչում, ո՛չ վերջնական նպատակը. մենք չենք էլ ճանաչում մեզ. չգիտենք ո՛չ մեր բնությունը, ո՛չ մեր ակտիվ ուժերը. հազիվ թե գիտենքՙ արդյոք մարդը պա՞րզ թե բարդ էակ է։ Անթափանցելի գաղտնիքներ մեզ շրջապատում են ամեն կողմից. նրանք զգացողության ոլորտից վեր են. նրանց թափանցելու համար մենք կարծում ենք, թե իմացականություն ունենք, այնինչ ունենք միայն երևակայություն։ Մեզնից յուրաքանչյուրը այս երևակայական աշխարհում իր հա-

մար մի ճամփա է բաց անում, որը կարծում է, թե լավ է. ոչ ոք չի կարող իմանալ, թե արդյո՞ք իր ճանապարհը տանում է դեպի նպատակը։ Այնուամենայնիվ, մենք ցանկանում ենք ամեն ինչի թափանցել, ամեն ինչ ճանաչել։ Մենք միայն չենք իմանում, որ պետք է անգիտանանք, ինչ որ չենք կարող կիտենալ։ Մենք գերադասում ենք որոշել այնպես, հավատալ մի բանի, որը չկա, քան թե խոստովանել, թե մենք միայն լռդունակ ենք տեսնելու այն, ինչ գոյութիւն ունի։ Լիննելով փոքրիկ մասը մի մեծ ամբողջութեան, որի սահմանները չենք կարող տեսնել, և որին իր արարիչը հանձնում է մեր հիմար վեճերին, մենք այնքան ենք անամիտ, որ ուզում ենք որոշել, թե ինչ է ինքնին այդ ամբողջութիւնը և ինչ ենք մենք՝ նրա հարաբերութեամբ։

Թե փիլիսոփաները ի վիճակի լինեին գտնելու ճշմարտութիւնը, նրանցից ո՞վ կշահագրգռվեր դրանով։ Նրանցից յուրաքանչյուրը գիտի, որ իր սիստեմը մյուսներից հիմնավոր չէ, բայց այն պաշտպանում է, որովհետև իրն է։ Ձկա մեկը, որ, ճանաչելով ճշմարիտն ու կեղծը, ուրիշի գտած ճշմարտութիւնից չնախընտրի այն սուտը, որ ինքն է գտել։ Ո՞րտեղ է այն փիլիսոփան, որ, իր փառքի համար, գիտակցաբար չխաբի մարդկային ցեղը։ Նրանց մեջ կա՞ մեկը, որ սրտի խորքում, բացի հռչակվելու ցանկութիւնից, ուրիշ ցանկութիւն ունենա։ Նրա միակ ձգտումն է՝ վեր բարձրանալ սովորականից ու նսեմացնել իր մրցակիցների համբավը։ Կարևորը՝ ուրիշներից տարբեր մտածելն է։ Հավատացյալների մոտ նա անհավատ է, անհավատների մոտ՝ հավատացյալ։

Այս խորհրդածութիւններից իմ ստացած առաջին արդյունքը եղավ այն, որ սովորեցի իմ որոնումները սահմանափակել ինձ անմիջականորեն հետաքրքրող խնդիրներով, իսկ մնացածի համար մնալ խոր տգիտութեան մեջ ու չմտահոգվել, նույնիսկ չկասկածել այնպիսի բաների մասին, որոնց իմանալն ինձ համար կարևոր չէր։

Ես հասկացա նաև, որ փոխանակ ազատելու ինձ տանջող անօգուտ կասկածներից, փիլիսոփաները միայն կավելացնեին դրանք՝ առանց որևէ մեկը լուծելու։ Ես վերցրի, ուրեմն, մի ուրիշ առաջնորդ և ինքս ինձ ասացի. «Դիմենք

մեր ներքին հստակատեսությանը, նա նվազ կմոլորեցնի ինձ, քան այդ փիլիսոփաները, կամ գոնե, եթե սխալվեմ, սխալս իմը կլինի, և ես նվազ կապականվեմ հետևելով իր սեփական ցնորքներին, քան թե անձնատուր լինելով նրանց ստերին:

Ընդամին, մտքումս վերանայելով այն զանազան կարծիքները, որոնք հաջորդաբար հրապուրել էին ինձ՝ սկսած իմ ծննդյան օրից, ես տեսա, որ, չնայած նրանցից ոչ մեկն այնքան պարզ չէր, որ կարողանար անմիջապես համոզել, այնուհանդերձ, նրանք ճշմարտանմանության տարբեր աստիճաններ ունեին և ներքին հավանության զգացումը դրանք ընդունում կամ մերժում էր առավել կամ նվազ չափով: Դրանից հետո, միմյանց հետ համեմատելով բոլոր այդ տարբեր մտքերը՝ առանց կանխակալ կարծիքների, ես գտա, որ առաջինն ու ամենից ընդհանրականը միաժամանակ ամենից պարզն ու ամենից բանականն էր, և որպեսզի նա ընդհանուր հավանության արժանանար, բավական էր այն առաջադրել վերջին հերթին: Երևակայեցեք ձեր բոլոր հին և նոր փիլիսոփաներին, որոնք նախորդ սպառել են իրենց բոլոր տարօրինակ սիստեմները՝ ուժի, բախտի, ճակատագրի, կարիքի, հյուլեի, կենդանի աշխարհի, ապրող նյութերի, բոլոր տեսակի մատերիալիզմի մասին, իսկ նրանցից հետո՝ հռչակավոր Կլարկին*, որ աշխարհը լուսավորեց՝ հայտնաբերելով, վերջապես, էակների էակին, բարիքների բաժանողին: Ինչպիսի՞ ընդհանուր հիացումով, ինչպիսի՞ միահամուռ ծափողջույններով ընդունվեց այս նոր սիստեմը՝ այնքան մեծ, այնքան փոփարար, այնքան վսեմ, այնքան ընդունակ բարձրացնելու հոգին, մի հիմք տալու առաքինության և, միաժամանակ, այնքան ուշագրավ, այնքան լուսավոր, այնքան պարզ ու, իմ կարծիքով, մարդկային մտքին ավելի քիչ անհասկանալի թան տվող, ի հակադրություն մյուս սիստեմների, որոնք լիքն են անհեթեթություններով: Ինքս ինձ ասում էի. «Անլուծելի կասկածներն ընդհանուր են բոլորին, որովհետև մարդու միտքը շատ է սահմանափակ դրանք լուծելու համար. ուստի և ոչ մի գերադասելի սիստեմով նրանք ոչինչ չեն կարող ապացուցել. բայց ինչպիսի՞ տարբերություն ուղղակի փաս-

* Անգլիացի նշանավոր աստվածաբան. վախճանվել է 1729 թ.— Ե. Բ.

տերի միջև։ Կարծում եմ, պետք է դերադասել այն փաստը, որը բացատրում է ամեն ինչ՝ առանց մյուսներից ավելի դժվարություններ պարունակելու իր մեջ։

Այսպես, իմ մեջ ունենալով ճշմարտության սերը՝ որպես միակ փիլիսոփայություն, իսկ որպես մեթոդ՝ հեշտ ու պարզ մի կանոն, որն ինձ ազատում է փաստարկումների զատարկ նրբություններից, ես այդ կանոնի հիման վրա ներսկտում եմ ուսումնասիրել ինձ հետաքրքրող գիտելիքները, համոզված որոշելով որպես բացահայտ ընդունել այն բոլորը, որոնց հետ իմ սրտի խորքում չէի կարող համաձայն չլինել, որպես ճշմարիտ ընդունել այն ամենը, ինչ, իմ կարծիքով, անհրաժեշտ կապ ունեն առաջինների հետ, իսկ բոլոր մնացածը թողնել անորոշության մեջ՝ առանց դրանք մերժելու կամ ընդունելու և առանց ինձ տանջելու դրանք լուսաբանելու համար, քանի որ գործնական կյանքի տեսակետից ոչ մի օգտակարություն չեն ներկայացնում։

Բայց ո՞վ եմ ես, ի՞նչ իրավունք ունեմ դատողություններ անելու, ի՞նչն է որոշում իմ դատողությունները։ Եթե նրանք իմ ստացած տպավորություններից առաջացած, բնադատված դատողություններ են, ես իզուր կճգնեմ այդ պրպտումների վրա. նրանք երբեք չեն կատարվի, կամ կկատարվեն իրենք իրենց, առանց իմ միջամտության։ Պետք է, ուրեմն, նախ իմ հայացքը դարձնեմ ինձ վրա՝ ճանաչելու համար այն գործիքը, որից ես օգտվելու եմ, և գիտենալու, թե մինչև որ աստիճան կարող եմ վստահել նրա օգտակարություններ։

Ես կամ և ունեմ զգայարաններ, որոնց միջոցով ստանում եմ իմ տպավորությունները։ Ահա այն առաջին ճշմարտությունը, որ գրավում է իմ ուշադրությունը և որին ես ստիպված եմ հավանություն տալ։ Արդյո՞ք ունեմ իմ գոյության հատուկ զգացումը, թե սոսկ իմ զգացողություններով եմ ճանաչում այն։ Ահա իմ առաջին տարակուսանքը, որն առայժմ ես հնարավորություն չունեմ լուծելու։ Եվ քանի որ անընդհատ զգացողություններ եմ ստանում, կա՛մ անմիջականորեն, կա՛մ հիշողությամբ, մի՞թե կարող եմ գիտենալ, որ ես-ի զգացումը այդ նույն զգացողություններից դուրս մի բան է և կարող է նրանցից անկախ լինել։

Իմ զգացողությունները տեղի են ունենում իմ մեջ, քանի որ նրանցով է, որ ես զգում եմ իմ գոյությունը. բայց նրանց պատճառն ինձ անծանոթ է, քանի որ ստանում եմ անկախ ինձնից, և ինքս չեմ կարող դրանք ո՛չ արտադրել, ո՛չ վերացնել: Ես պարզ հասկանում եմ, ուրեմն, որ իմ մեջ եղած զգացողությունն ու նրա պատճառը կամ առարկան, որ ինձնից դուրս է, միևնույն բանները չեն:

Ուրեմն, ոչ միայն ես կամ, այլ կան նաև ուրիշ գոյություններ, այսինքն՝ իմ զգացողությունների առարկաները, և եթե այդ առարկաները նույնիսկ մտքեր լինեին, այնուամենայնիվ իրականություն է, որ այդ մտքերը ես չեմ:

Այն, ինչ ես զգում եմ ինձնից դուրս և որն ազդում է իմ զգայարանների վրա, նյութ եմ անվանում, և նյութի այն բոլոր մասերը, որ պատկերացնում եմ միացած անհատականների մեջ, անվանում եմ մարմին: Այդպիսով, իդեալիստների ու մատերիալիստների բոլոր վեճերը ոչ մի նշանակություն չունեն ինձ համար. մարմինների երևույթի ու իրականության մասին նրանց ունեցած տարբերությունները խաբկանք են միայն:

Ահա արդեն ես նույնքան վստահ գիտեմ տիեզերքի, որքան իմ գոյության մասին: Դրանից հետո ես կմտածեմ իմ զգացողությունների պատճառների մասին, և իմ մեջ գտնելով դրանք համեմատելու ընդունակությունը, զգում եմ, որ ես օժտված եմ մի գործուն ուժով, որը նախապես չգիտեի, թե ունեի:

Նկատել՝ նշանակում է զգալ, համեմատելը՝ դատել. դատելն ու զգալը միևնույն բաները չեն: Զգացողությունների միջոցով իրերը ես ընկալում եմ անջատ, մեկուսացած, ինչպես բնության մեջ կան. համեմատելով ես նրանց շարժում, այսպես ասած՝ տեղափոխում եմ, դնում եմ մեկը մյուսի վրա՝ որոշելու համար նրանց տարբերությունը կամ նմանությունը և, ընդհանրապես, նրանց բոլոր հարաբերությունները: Իմ կարծիքով, գործուն կամ իմացական էակին բնորոշող հատկանիշն այն է, որ կարողանա իմաստավորել է բառը: Ձուր տեղն եմ ես ինտրում բացառապես զգացական էակի մեջ իմացական այն ուժը, որ մակադրում է առարկաները և ապա

վճռում. այդպիսի ուժ ես չեմ տեսնում նրա բնության մեջ։ Այդ կրավորական էակը յուրաքանչյուր իրն զգում է անջատ, նա նույնիսկ կզգա ամբողջական իր՝ կազմված երկու անջատ իրից։ Բայց չունենալով ոչ մի կարողություն դրանք մակադրելու, նա չի համեմատի, չի դատի երբեք։

Միաժամանակ երկու առարկա տեսնել՝ չի նշանակում տեսնել նրանց հարաբերությունները, ոչ էլ համեմատել նրանց տարբերությունները. բազմաթիվ իրեր տեսնել՝ մեկը մյուսից անջատ՝ չի նշանակում նրանց թվարկել։ Ես միևնույն րոպեին կարող եմ գաղափար ունենալ մի մեծ ու մի փոքր գավազանի մասին՝ առանց դրանք համեմատելու, առանց դատելու, թե մեկը մյուսից փոքր է, ինչպես որ կարող եմ միանգամից տեսնել իմ ամբողջ ձեռքը՝ առանց մատներս հաշվելու[1]։ Այս համեմատական գաղափարները՝ ավելի մեծ, ավելի փոքր, ինչպես նաև թվական գաղափարները՝ մեկ, երկու և այլն, անկասկած, զգացողություններ չեն, թեև իմ միտքը դրանք արտադրում է միայն իմ զգացողությունների միջոցով։

Մեզ ասում են, թե զգացական էակը զգացողությունները իրարից զատորոշում է իրենց տարբերություններով. սա կարիք ունի բացատրության։ Երբ զգացողությունները իրարից տարբերվում են, զգացական էակը դրանք զանազանում է իրենց տարբերությամբ. եթե միանման են, զանազանում է նրանով, որ զգում է մեկը մյուսից անջատ։ Այլապես, անհնար է մի միասնական զգացողության մեջ որոշել երկու համանման առարկաները. նա անխուսափելիորեն կշփոթեր մեկը մյուսի հետ և դրանք կընդուներ որպես միևնույն առարկան, մանավանդ այնպիսի մի սիստեմում, որը պնդում է, թե տարածություն արտահայտող զգացողությունները տարածական չեն։

Մի անգամ, որ ընկալում ենք այն երկու զգացողությունները, որ պետք է համեմատենք, նրանց տպավորությունն արդեն առկա է. յուրաքանչյուր առարկա զգացված է, երկուսը նույնպես զգացված են, բայց դա չի նշանակում, որ դրանով

1 Պարոն դը լա Կոնդամինը մեզ պատմում է մի ժողովրդի մասին, որը միայն գիտեր համրել մինչև երեքը։ Բայց և այնպես, այդ ժողովրդի մարդիկ ձեռքեր ունեին ու հաճախ նկատում էին իրենց մատները՝ առանց մինչև հինգը հաշվել իմանալու։

նրանց հարաբերությունն էլ է զգացված։ Եթե այդ հարաբերության դատելը սոսկ մի զգացողություն լիներ և բացառապես առարկայից թելադրվեր ինձ, իմ դատողությունները երբեք ինձ չէին խաբի, քանի որ չի կարող երբեք սխալ լինել, թե ես զգում եմ այն, ինչ զգում եմ։

Ինչո՞ւ, ուրեմն, ես սխալվում եմ այս երկու գավազանների հարաբերության հարցում, մանավանդ եթե նրանք զուգադրված չեն։ Ինչո՞ւ եմ, օրինակ, ասում, որ փոքր գավազանը մեծի մի երրորդ մասն է, մինչդեռ իրականում միայն քառորդն է։ Ինչո՞ւ պատկերը, որ զգացողություն է, չի համապատասխանում իր օրինակին, որ առարկան է։ Պատճառն այն է, որ դատելիս՝ ես ակտիվ եմ, համեմատող գործողությունը սխալվում է, և հարաբերությունները դատող իմ ըմբռնումը իր սխալները խառնում է այն զգացողությունների ճշմարտությանը, որոնք միայն իրերն են ցույց տալիս։

Ավելացրե՛ք սրան մի խորհրդածություն, որը, անկասկած, ձեզ կզարմացնի, եթե այդ մասին մտածեք. այդ այն է, որ եթե մենք բացարձակապես պասսիվ լինեինք մեր զգայություններն օգտագործելիս, նրանց միջև ոչ մի հաղորդակցություն չէր լինի, ու մեզ համար անկարելի կլիներ իմանալ, թե այն մարմինը, որ մենք շոշափում ենք, և այն առարկան, որ մենք տեսնում ենք, միևնույնն են։ Կա՛մ մենք երբեք ոչինչ չէինք զգա մեզնից դուրս, կա՛մ մեզ համար կլինեին հինգ զգալի գոյացություններ, որոնց իսկությունը ոչ մի կերպ չէինք կարողանա նկատել։

Ինչ անուն ուզում են տան իմ մտքի այդ ուժին, որ զուգադրում ու համեմատում է իմ զգացողությունները. քո՛ղ այն անվանեն ուշադրություն, խոկում, խորհրդածություն կամ մի որևէ ուրիշ բան. ճշմարտությունն այն է, որ նա իմ մեջ է և ոչ թե իրերի մեջ, որ միայն ես եմ այն արտադրում, թեև միայն այն դեպքում, երբ ես կրում եմ իրերի տպավորությունը։ Չնայած ինձնից չի կախված զգալը կամ չզգալը, այնուհանդերձ ինձնից է կախված առավել կամ նվազ չափով քննել այն, ինչ զգում եմ։

Ես, ուրեմն, պարզապես մի զգացական կամ պասսիվ էակ չեմ, այլ՝ ակտիվ ու իմացական մի էակ, և ինչ էլ որ ասի

փիլիսոփայությունը, ես համարձակվում եմ մտածելու պատիվը պահանջել ինձ համար: Ես միայն այն գիտեմ, որ ճշմարտությունը իրերի մեջն է և ոչ թե իմ մտածողության, որ նրանց դատում է, և որ ինչքան աննախապաշար եմ դատում, այնքան վստահ եմ, որ մոտենում եմ ճշմարտությանը. այսպես, իմ սկզբունքը՝ վստահել ավելի շատ զգացումին, քան բանականությանը, հաստատվում է հենց բանականությամբ:

Լինելով, ասպես ասած, ինքս ինձնից ապահովված, ես սկսում եմ դիտել իմ շուրջը ու մի տեսակ սարսուռով նկատում եմ, որ շպրտված, կորած եմ այս ընդարձակ տիեզերքում, ասես ընկղմված արարածների անսահման բազմության մեջ, առանց գիտենալու, թե ինչ են դրանք՝ ո՛չ իրենք իրենց միջև, ո՛չ էլ ինձ հետ ունեցած հարաբերությամբ: Ես դրանք ուսումնասիրում եմ, դիտում, և առաջին առարկան, որ ներկայանում է ինձ դրանք համեմատելու համար, ես ինքս եմ:

Այն ամենը, ինչ ընկալում եմ զգայարաններով, նյութ է. ես նյութի բոլոր էական հատկանիշները հետևցնում եմ այն զգայական հատկություններից, որոնցով այն ընկալում եմ և որոնք անբաժան են նրանից: Ես այն տեսնում եմ մերթ շարժման մեջ, մերթ անշարժ[1]. դրանից եզրակացնում եմ, որ ո՛չ շարժումը, ո՛չ էլ հանգիստը նրա էության մեջ չկան. բայց շարժումը, լինելով գործողություն, մի պատճառի հետևանք է, իսկ հանգիստը՝ նրա բացակայության հետևանք: Հետևապես, երբ ոչինչ չի ազդում նյութի վրա, նա չի շարժվում, և դրանով իսկ, որ նա անտարբեր է դեպի հանգիստն ու շարժումը, նրա բնական վիճակը անշարժ լինելն է:

Մարմինների մեջ երկու տեսակ շարժում եմ նկատում՝ հաղորդվող շարժում և ինքնածին կամ կամովին շարժում:

[1] *Այս անշարժությունը, այսպես ասած, հարաբերական է. բայց քանի որ մենք նյութը դիտում ենք առավել կամ պակաս շարժման մեջ, շատ պարզ ըմբռնում ենք երկու ծայրագույն վերջավորություններից մեկը, որ հանգիստն է, և այնքան լավ, որ մենք հակված ենք հանգիստը, որը միայն հարաբերական է, նույնիսկ որպես բացարձակ ընդունելու ճիշտ չէ, ուրեմն, որ շարժումն առկա է նյութի էության մեջ, եթե նրան կարելի է ըմբռնել հանգիստ վիճակում:*

Առաջինում շարժիչ պատճառը օտար է շարժվող մարմնին, իսկ երկրորդում՝ շարժումը իր մեջ է։ Սրանից չեմ եզրակացնում, որ ժամացույցի շարժումը, օրինակ, ինքնակամ է, որովհետև, եթե մի որևէ օտար ուժ չազդեր զսպանակի վրա, նա չէր ձգտի վերականգնվելու ու չէր ձգի շղթան։ Միևնույն դատողությամբ, ես կամովինությունն չեմ վերագրում նաև հոսանքներին, ոչ էլ, նույնիսկ, նրանց հոսանուտությանն պատճառող կրակին[1]։

Դուք ինձ կհարցնեք՝ մի՞թե կենդանիների շարժումը ինքնակամ է. ի պատասխան կասեմ, որ ոչինչ չգիտեմ, բայց համեմատությունից դուրս է դալիս, որ այդպիսին է։ Դուք ինձ կհարցնեք նաև, թե ինչի՞ց գիտեմ, որ կան ինքնակամ շարժումներ. կպատասխանեմ, որ գիտեմ, որովհետև ես եմ։ Ես ուզում եմ շարժել թևս ու շարժում եմ, առանց այդ շարժումը կատարելու համար իմ կամքից բացի ուրիշ անմիջական պատճառ ունենալու։ Իմ մեջ այդ զգացումը ոչնչացնելու նպատակով եղած ամեն մի դատողություն զուր կլիներ. դա ավելի ուժեղ է որևէ աներկրայությունից. այդ կնշանակեր ապացուցել, թե ես չկամ։

Եթե մարդկանց գործողությունների մեջ, ինչպես և երկրի վրա կատարված որևէ բանի մեջ, կամովին շարժումներ չլինեին, մենք ավելի կդժվարանայինք պատկերացնել ամեն մի շարժման նախապատճառը։ Ես ինքս այնքան եմ հավատացած, որ նյութի բնական վիճակը անշարժությունն է, և նա իրենից ոչ մի ուժ չունի շարժվելու, որ երբ տեսնում եմ, թե մի մարմին շարժվում է, ես իսկույն դատում եմ՝ կա՛մ այդ մի կենդանի էակ է, կա՛մ այդ շարժումը նրան հաղորդված է դրսից։ Իմ միտքը հրաժարվում է ընդունել, որ անօրգանական մարմինը կարող է ինքն իրեն շարժվել կամ որևէ շարժում առաջացնել։

Սակայն, այս տեսանելի տիեզերքը նյութ է, ցրված ու

---

[1] *Քիմիկոսները կիզանյութը, կամ կրակի տարրը, համարում են ցրված, անշարժ և կանգնած՝ խառնուրդների մեջ, որոնց մասն է կազմում, մինչև այն ժամանակ, երբ օտար մարմիններ նրան դուրս կբերեն, կմիացնեն, շարժման մեջ կդնեն ու կրակի կփոխեն։*

մեռած նյութ[1], որն իր ամբողջության մեջ չունի կենդանի մարմնի մասերի ո՛չ միությունը, ո՛չ կազմակերպվածությունը, ո՛չ համայնական զգացումը, քանի որ բացորոշ է, թե մենք ինքներս, լինելով մասեր, մեզ երբեք չենք զգում ամբողջի մեջ։ Այդ միևնույն տիեզերքը շարժման մեջ է և իր կարգավորված, միօրինակ, անխախտ օրենքների ենթարկված շարժումների մեջ չունի այն ազատությունը, որ երևում է մարդկանց ու կենդանիների կամավոր շարժման մեջ։ Աշխարհը, ուրեմն, ինքն իրեն շարժվող մի մեծ կենդանի չէ. հետևապես, այդ շարժումները առաջացնող՝ իրեն օտար մի պատճառ կա, որը ես չեմ տեսնում. բայց ներքին համոզումը այդ պատճառը ինձ այնքան է զգալի դարձնում, որ չեմ կարող արևի շարժվելը դիտել՝ առանց երևակայելու մի ուժ, որը նրան մղում է, կամ, եթե երկիրը պտույտ է գալիս, ինձ թվում է, որ նրան շարժման մեջ դնող մի ձեռք կա։

Եթե հարկավոր է ընդունել ընդհանուր օրենքներ, որոնց էական հարաբերությունները նյութի հետ ես չեմ նկատում, ի՞նչ կլինի դրանում իմ օգուտը։ Եթե այդ օրենքները իսկական էություններ, գոյություններ չեն, ապա պետք է ունենան մի այլ, ինձ անծանոթ, հիմք։ Փորձից ու դիտողությունից մեզ հայտնի են շարժման օրենքները. այդ օրենքները որոշում են հետևանքները՝ առանց պատճառները ցույց տալու. նրանք բավական չեն աշխարհի սիստեմն ու տիեզերքի ընթացքը բացատրելու համար։ Փակարտը նարդու զառերով երկինքն ու երկիրն էր կազմում. բայց նա չկարողացավ այդ զառերին տալ առաջին շարժումը, ոչ էլ գործի դնել նրա կենտրոնախույս ուժը՝ առանց թավալական շարժման օգնության։ Նյուտոնը գտավ ձգողական ուժի օրենքը, բայց լոկ ձգողական ուժը շատ շուտով տիեզերքը կվերածեր մի անշարժ զանգվածի. այդ օրենքին պետք եղավ միացնել մի կենտրոնախույս ուժ, որպեսզի երկնային մարմիններին շըր-

[1] Ես ամեն ջանք ի գործ դրի՝ պատկերացնելու մի կենդանի մասնիկ, բայց ապարդյուն։ Առանց զգայարանների զգացող նյութի միտքը ինձ անհասկանալի է ու հակասական։ Այդ միտքը ընդունելու կամ մերժելու համար պետք է նախ այն հասկանալ, և պիտի խոստովանեմ, որ ես այդ թախտը չունեմ։

չագծեր անել տան։ Թո՛ղ Դեկարտը մեզ ասի, թե ո՞րն է ֆիզիկական այն օրենքը, որ շարժման մեջ դրեց իր հողմապտույտները. թո՛ղ Նյուտոնը մեզ ցույց տա այն ձևքը, որ մոլորակները գցեց իրենց օրբիտների շուշափագծի վրա։

Շարժման սկզբնապատճառները նյութի մեջ չեն. նա շարժումն ընդունում ու հաղորդում է, բայց ինքը չի արտադրում։ Ինչքան ավելի եմ ուսումնասիրում բնության այն ուժերի գործողությունն ու հակազդեցությունը, որոնք ազդում են միմյանց վրա, այնքան համոզվում եմ, որ հետևանքից հետևանք գնալով, պետք է միշտ հասնել մի կամքի՝ որպես սկզբնապատճառի։ Ենթադրել անվերջ պատճառների մի առաջացում՝ նշանակում է ոչինչ չենթադրել։ Մի խոսքով՝ որևէ շարժում, որը չի առաջացած մի ուրիշից, կարող է առաջանալ միայն ինքնուրույն, կամավոր գործողությունից. անկենդան մարմինները միայն շարժումներով են գործում, և առանց կամքի չի լինի իսկական գործողություն։ Ահա իմ առաջին սկզբունքը։ Ես, ուրեմն, հավատում եմ, որ մի կամք շարժում է տիեզերքն ու կենդանացնում բնությունը։ Ահա իմ առաջին վարդապետությունը, կամ իմ առաջին հավատո հանգանակը։

Ի՞նչպես է կամքը ծնունդ տալիս ֆիզիկական ու մարմնական գործողության։ Ես այդ չգիտեմ, բայց զգում եմ, որ նա առաջացնում է այն։ Ես ցանկանում եմ գործել ու գործում եմ, կամենում եմ շարժման մեջ դնել մարմինս, ու մարմինս շարժվում է. բայց որ մի անկենդան ու անշարժ մարմին ինքն իրեն շարժվում է կամ շարժում է առաջացնում, այդ անհասկանալի է ու աննախադեպ։ Կամքը ինձ հայտնի է իր գործելով և ոչ թե իր բնությամբ։ Ես այդ կամքը ճանաչում եմ որպես շարժիչ ուժ. բայց ենթադրել նյութը որպես շարժում առաջացնող, դա պարզապես նշանակում է ենթադրել մի հետևանք՝ առանց պատճառի, նշանակում է բացարձակապես ոչինչ ենթադրել։

Ես ավելի լավ չեմ կարող ըմբռնել, թե ինչպես է կամքս շարժում իմ մարմինը, քան թե բացատրել իմ հոգու վրա զգացողություններիս թողած ազդեցությունը։ Ես նույնիսկ չգիտեմ, թե ինչո՞ւ ինձ թվում է, որ այս գաղտնիքներից մեկը

մյուսից ավելի հեշտ է բացատրել։ Գալով ինձ, պասիվ եմ թե ակտիվ, երկու գոյացությունների միացման հնարավորությունը բացարձակապես անըմբռնելի է թվում ինձ։ Շատ տարօրինակ է, որ ելնում են հենց այս անըմբռնելիությունից՝ իրար հետ շփոթելու համար այդ երկու գոյացությունները, ասես այնքան տարբեր բնույթի գործողություններ կարող են ավելի լավ բացատրվել միակ, քան թե երկու առարկայի մեջ։

Այն վարդապետությունը, որ ես առաջադրեցի, մութ է, լինդունում եմ, բայց, վերջապես, նա մի միտք է տալիս և ոչնչով չի հակասում դատողություններն ու դիտողություններ։ Մի՞թե նույնը կարելի է ասել մատերիալիզմի մասին։ Մի՞թե պարզ չէ, որ եթե շարժումը նյութի էության մաս կազմեր, նրանից անբաժան կլիներ, նրա մեջ միշտ նույն աստիճանի վրա կլիներ, միշտ նույնը՝ նրա ամեն մի մասում, անհաղորդելի, ո՛չ կարող էր ավելանալ, ո՛չ կարող էր պակասել, և նույնիսկ կարելի չէր լինի նյութին ըմբռնել անշարժ վիճակում։ Երբ ինձ ասում են, թե շարժումը բնորոշ չէ նյութին, բայց անհրաժեշտ է նրան, դրանով բառախաղ են անում միայն, և ավելի հեշտ կլիներ հերքել այն, եթե մի քիչ ավելի խելքի մոտ լիներ։ Կա՛մ նյութի շարժումը ինքնածին է, ուրեմն և էական է նրան, կա՛մ, եթե գալիս է մի օտար պատճառից, նա այնքանով է անհրաժեշտ նյութին, ինչքանով շարժիչ պատճառն ազդում է նրա վրա. այսպիսով մենք գտնվում ենք առաջին գժվարության առաջ։

Ընդհանուր ու վերացական մտքերն են մարդկանց ամենամեծ սխալների աղբյուրը. ոչ մի ժամանակ մետաֆիզիկայի ժարգոնը չի օգնել մի հատիկ ճշմարտություն բացահայտելու, մինչդեռ փիլիսոփայությունը լցրել է այնպիսի անհեթեթություններով, որոնցից մարդ ամաչում է, հենց որ մերկացվում են նրանք իրենց ճոռոմ բառերից։ Ասացե՛ք ինձ, բարեկա՛մ, երբ ձեզ հետ խոսում եմ բնության մեջ տարածված մի կույր ուժի մասին, արդյո՞ք ձեր միտքը հարստանում է որևէ ճշմարիտ գաղափարով։ Կարծում են, թե ինչ-որ բան ինն ասում հետևյալ անորոշ բառերով՝ «ռիեզերական ուժ, անհաժեշտ շարժում», մինչդեռ ոչինչ չեն ասում։ Շարժման

գործարքը ուրիշ բան չէ, եթե ոչ մի տեղից մի ուրիշ տեղ փոխադրման գաղափար. առանց որոշ ուղղության՝ չկա շարժում. ոչ մի ուրույն էակ չի կարող շարժվել միաժամանակ բոլոր ուղղություններով։ Ի՞նչ ուղղությամբ է, ուրեմն, անհրաժեշտորեն շարժվում նյութը։ Արդյո՞ք ամբողջ նյութը մարմնի մեջ միօրինակ է շարժվում, թե ամեն մի ատոմ իր սեփական շարժումն ունի։ Ըստ առաջին մտքի՝ ամբողջ սիեղերքը կազմում է մի հաստատուն ու անբաժանելի զանգված. երկրորդի համաձայն՝ նա կազմված է ցրված ու անհարակից հոսանյութից, այնպես որ երկու ատոմի միացումն անհնարին է։ Ի՞նչ ուղղությամբ պետք է, ուրեմն, ընթանա ամբողջական նյութի ընդհանուր այս շարժումը։ Արդյոք ուղի՞ղ գծով, պարուրաձև, դեպի վե՞ր, թե դեպի վար, ա՞ջ, թե ձախ։ Եթե նյութի յուրաքանչյուր մոլեկուլն ունի իր հատուկ ուղղությունը, որո՞նք են այդ բոլոր ուղղությունների ու բոլոր տարբերությունների պատճառները։ Եթե մատերիայի յուրաքանչյուր ատոմը կամ մոլեկուլը պտտվեր միայն իր կենտրոնի շուրջը, երբեք ոչինչ իր սեղից դուրս չէր գա, ու ոչ մի փոխանցիկ շարժում չէր լինի. դեռևս նույնիսկ կարիք կլիներ, որ այդ պարուրաձև շարժումն ունենար մի որոշ ուղղություն։ Նյութին շարժում վերագրել վերացականորեն՝ այդ նշանակում է ասել բառեր առանց նշանակության. և վերագրել նրան որոշակի շարժում՝ նշանակում է՝ այն առաջացնող մի ինչ-որ պատճառ ենթադրել։ Ինչքան բազմացնեմ մասնավոր ուժերը, այնքան ավելի բացատրելու նր պատճառներ կունենամ՝ առանց երբեք գտնելու նրանց ղեկավարող համայնական մի գործոն։ Չկարողանալով պատկերացնել ոչ մի կարգ տարրերի պատահական համագործակցության մեջ, ես նույնիսկ չեմ կարող երևակայել նրանց պայքարը, և տիեզերքի քաոսն ինձ համար ավելի անըմբռնելի է, քան նրա ներդաշնակությունը։ Ես հասկանում եմ, որ աշխարհի մեխանիզմը կարող է անըմբռնելի լինել մարդկային մտքին, բայց հենց որ մեկը կամենա այն բացատրել, նա պետք է այդ անի մարդկանց հասկանալի ձևով։

Եթե շարժվող նյութն ինձ մի կամք է ցույց տալիս, որոշակի օրենքներով շարժվող նյութը ցույց է տալիս մի իմա-

յականություն. սա իմ հավատքի երկրորդ կետն է։ Գործելը, համեմատելը, ընտրելը գործող ու մտածող էակի գործողություններ են. հետևապես, այդ էակը գոյություն ունի։ Ո՞րտեղ եք տեսնում նրա գոյությունը, կհարցնեք ինձ։ Ոչ միայն թավալվող երկնային մարմինների, մեզ լուսավորող աստղի մեջ, ոչ միայն իմ մեջ, այլ նաև մայող ոչխարի, թռչող թռչունի, ընկնող քարի, քամու տարած տերևի մեջ։

Ես դատում եմ աշխարհի կարգի մասին, չնայած չգիտեմ նրա նպատակը, որովհետև այդ կարգի մասին դատելու համար բավական է, որ ես համեմատեմ մասերն իրար հետ, ուսումնասիրեմ նրանց համագործակցությունը, հարաբերությունները, դիտեմ նրանց համերաշխությունը։ Չգիտեմ, թե ինչո՞ւ գոյություն ունի տիեզերքը, բայց շարունակ տեսնում եմ, թե ինչպես է նա վերափոխվել, նկատում եմ այն սերտ համագործակցությունը, որով նրան բաղկացնող գոյերը փոխադարձաբար օգնում են իրար։ Ես նման եմ այն մարդուն, որ առաջին անգամ մի բացված ժամացույց է տեսնում ու հիանում նրա շինվածքով, թեև չգիտի, թե ինչի է ծառայում մեքենան, ու զաղափար չունի թվացույցի մասին։ «Չգիտեմ,— կասի այդ մարդը,— թե ինչի է ծառայում ամբողջությունը, բայց տեսնում եմ, որ յուրաքանչյուր մաս պատրաստված է մյուսների համար. հիանում եմ բանվորով՝ իր կատարած գործի մանրամասնության մեջ և վստահ եմ, որ այս բոլոր անվակները համերաշխ աշխատում են միայն մի ընդհանուր նպատակի համար, որն ինձ անհնար է նկատել»։

Նախ համեմատենք մասնավոր նպատակները, միջոցներր, ամեն տեսակի կարգավորված հարաբերությունները, ապա լսենք ներքին զգացումին. ո՞ր առողջ միտքը կարող է հրաժարվել այն վկայակոչելուց, ո՞ր աննախապաշար աչքը չի տեսնի տիեզերքի զգալի կարգավորության մեջ գերագույն մի իմացականության ներկայությունն ու որքա՜ն սոփեստություն պետք է ունեցած լինել՝ ժխտելու համար գոյերի համերաշխությունը և յուրաքանչյուր մասնիկի հիանալի օժանդակությունը մյուսների պահպանության համար։ Ինչքան ուզում են թո՛ղ ինձ ասեն հնարանքների ու պատահականությունների մասին. ի՞նչ կշահեք ինձ լուության դատապարտելով,

եթե չեք կարող ինձ համոզել, և ի՞նչպես կարող եք ինձնից վերացնել այն ակամա զգացումը, որ միշտ էլ ձեզ կհերքի ինձնից անկախ։ Եթե կազմակերպված մարմինները հազար ու մի ձևով պատահականորեն զուգախառնվել են՝ կայուն ուժեր ստանալուց առաջ, եթե սկզբում ստամոքս է կազմվել՝ առանց բերանի, ոտք՝ առանց գլխի, ձեռք՝ առանց բազուկի, ամեն տեսակ անկատար գործարաններ, որոնք ոչնչացել են՝ չկարողանալով պահպանել իրենց գոյությունը, ինչո՞ւ այդ անկերպարան փորձերից ոչ մեկն այլևս մեր ուշադրությունը չի գրավում, ինչո՞ւ բնությունը վերջապես ընդունեց այնպիսի օրենքներ, որոնց նախապես չէր հպատակվում։ Ես համաձայն եմ, որ չեմք է երբեք զարմանամ, որ մի բան պատահում է, երբ այդ հնարավոր է, և քիչ պատահարի դժվարությունը հատուցված է ցայտքերի քանակով։ Սակայն, եթե ինձ ասեին, որ ըստ րախտի գցված տպագրական տառերն են տվել «Էնեականի»-ի պատրաստի շարվածքը, մի քայլ անգամ չէի անի՝ գնալ ստուգելու այդ սուտը։ «Դուք մոռանում եք,— կասեն ինձ,— ցայտքերի քանակը»։ Բայց ի՞նչքան այդպիսի արդյունք պետք է ենթադրեմ, որպեսզի հնարանքը ճշմարտանման լինի։ Ինչ վերաբերում է ինձ, ես միայն մեկ հատն եմ տեսնում և կարող եմ մեկի դեմ անվերջով գրազ գալ, որ նրա արդյունքը պատահականության հետևանք չէ։ Ավելացրե՛ք սրան, որ հնարանքներն ու պատահականությունները կտան նույն բնույթի արդյունքներ, ինչ որ բաղադրված տարրերը, որ կազմավորումն ու կյանքը չեն առաջանա երբեք ատոմների ցայտքից, և որ խառնուրդներ պատրաստող քիմիկոսն իր հալոցի մեջ նրանց զգալու և մտածելու կարողություն չի կարող տալ[1]։

---

[1] *Կարելի՞ էր մթթե առանց փաստի հավատալ, որ մարդկանց անհեթեթությունը մինչև այդտեղ կհասնի։ Ամադուս Լուզիտանուսը հավատացնում է, որ մի բաժակի մեջ տեսել է մի փոքրիկ մարդ, մի մատնաչափ մեծությամբ, որն ստեղծել էր Յուլիուս Կամելիուսը, որպես մի նոր Պրոմեթեոս, ալքիմիական գիտության օգնությամբ։ «De natura rerum»-ում Պարասելսը սովորեցնում է այս փոքրիկ մարդկանց արտադրելու ձևն ու պնդում, որ թզուկները, ֆավները, սատիրներն ու հավերժահարսերը քիմիայի միջոցով են առաջացել։ Իրոք, ես տեսնում եմ, որ ուրիշ ոչինչ չի մնում անել, հաստատելու համար բոլոր այս իրողությունների հնարավո-*

Ես կարդացի Նյուվենտիտին զարմանքով ու գրեթե գայթակղությամբ։ Ի՞նչպես է այդ մարդը համարձակվել բնության հրաշալիքների մասին գիրք երկասիրել, հրաշալիքներ, որոնք իրենց հեղինակի իմաստությունն են ցույց տալիս։ Նրա գիրքը կարող էր աշխարհի ծավալն ունենալ, բայց չէր սպառի իր նյութը, և հենց որ մանրամասնությունների մեջ են ուզում մտնել, մոռանում են ամենամեծ հրաշալիքը՝ ամբողջի ներդաշնակությունն ու համերաշխությունը։ Կենդանի ու կազմակերպված մարմինների սոսկ ծննդագործությունը մարդկային մտքի համար մի անդունդ է. այն անանցանելի պատվարը, որ բնությունն է դրել զանազան տեսակների միջև՝ կանխելու համար նրանց միախառնումը, ամենայն պարզությամբ ցույց է տալիս նրա մտադրությունները։ Բնությունը չի բավարարվել կարգ հաստատելով, նա նաև հռետալի միջոցներ է ձեռք առել, որպեսզի ոչինչ այն չկարողանա խանգարել։

Տիեզերքում չկա մի գոյ, որին որևէ կերպով կարելի լիներ համարել մնացյալ գոյերի ընդհանուր կենտրոնը, որի շուրջը նրանք բոլորը դասավորված են, փոխադարձաբար հանդիսանալով նպատակ և միջոց՝ մեկը մյուսի հարաբերությամբ։ Մարդկային միտքը շփոթվում ու մոլորվում է այս անվերջ հարաբերությունների մեջ, որոնցից ոչ մեկը չի շփոթվում ու չի կորչում քաոսության մեջ։ Ինչքա՜ն անմիտ ենթադրություններ են անում ոմանք՝ այս ամբողջ ներդաշնակությունը որպես պատահաբար շարժվող նյութի կույր մեխանիզմի հետևանք ցույց տալու համար։ Նրանք, ովքեր հանդիսանալով նպատակ և միջոց՝ մեկը մյուսի հարաբերությունների մեջ արտահայտվող նպատակասլաց միասնությունը, ինչքան ուզում են թո՛ղ քողարկեն վերացական հասկացողությունների, համակարգությունների, ընդհանուր սկզբունքների, խորհրդավոր ասացվածքների խառնաշփոթը. ինչ էլ անեն, ես չեմ կարող ըմբռնել այդքան կայուն ձևով կարգավորված գոյերի մի սիստեմ, առանց ենթադրելու այն կարգավորող իմացականության առկայությունը։ Ես չեմ կա-

րությունը, եթե ոչ ընդունել, որ օրգանական նյութը դիմանում է կրակի ուժին և նրա մոլեկուլները շարունակում են ապրել մետաղահալոցի մեջ։

րող հավատալ, որ պասսիվ ու մեռած նյութը կարողացել է ծնունդ տալ ապրող ու զգացող էակների, որ մի կույր պատահականություն կարողացել է մեջտեղ բերել իմացական գոյեր, որ չմտածող քանը ստեղծել է մտածող գոյեր:

Ես հավատում եմ, ուրեմն, որ աշխարհը կառավարվում է մի հզոր ու իմաստուն կամքով. այդ տեսնում, ավելի շուտ՝ զգում եմ, և կամենում եմ այն գիտենալ: Բայց այս միևնույն աշխարհը հավիտենակա՞ն է թե ստեղծովի: Գոյություն ունի արդյոք իրերի միա՞կ սկիզբը, թե երկուսը կամ ավելի, և ի՞նչ է նրանց բնությունը: Ես ոչինչ չգիտեմ, և իմ ինչի՞ն է պետք: Հենց որ այդ *ծանոթությունները կսկսեն ինձ համար հետաքրքրական դառնալ, ես կաշխատեմ դրանք ձեռք բերել. մինչև այդ, ես հրաժարվում եմ այնպիսի դատարկ հարցերից, որոնք կարող են վրդովել իմ ինքնասիրությունը, բայց և անօգուտ են իմ վարքագծին և վեր են իմ դատողությունից:*

Հիշեցե՛ք միշտ, որ ես չեմ ուսուցանում իմ զգացմունքը, այլ պարզապես ցույց եմ տալիս: Թո՛ղ նյութը լինի հավիտենական կամ ստեղծովի, թո՛ղ լինի մի պասսիվ սկիզբ կամ բնավ չլինի, համենայն դեպս, անվիճելի է, որ ամբողջը մի է ու սոսկ մեկ իմացականության մասին է վկայում, որովհետև ես ոչինչ չեմ տեսնում, որ կարգավորված չլինի նույն սիստեմի մեջ ու չծառայի նույն նպատակին, այսինքն՝ ամբողջը պահել հաստատված կարգի մեջ: Այդ էակը, որ կամենում ու կարողանում է; այդ ինքն իրենով գործուն էակը, վերջապես այդ էակը, ինչ էլ լինի նա, որը շարժում է տիեզերքն ու կարգավորում ամեն ինչ, ես աստված եմ անվանում: Ես այդ անվան հետ եմ կապում իմաստության, հզորության, կամքի գաղափարները, որոնց միավորել եմ բարության գաղափարը, որը նրանց անհրաժեշտ հետևանքն է. բայց ես դրանով ավելի լավ չեմ ճանաչում արարչին. նա խուսափում է հավասարապես թե՛ իմ զգայարաններից և թե՛ իմ դատողությունից. ինչքան ավելի եմ մտածում այդ մասին, այնքան ավելի եմ շփոթվում. ես ամենայն վստահությամբ գիտեմ, որ նա գոյություն ունի և գոյություն ունի ինքն իրմով. գիտեմ, որ իմ գոյությունը պայմանավորված է նրա գոյությամբ, և թե անպայման նույնն է պարագան այն ամեն իրերի հետ,

որ ես ճանաչում եմ: Ես տեսնում եմ աստծուն ամեն տեղ՝ իր գործերի մեջ. նրան զգում եմ իմ մեջ, իմ շուրջը, բայց հենց որ կամենում եմ նրան դիտել ինքն իր մեջ, հենց որ ուզում եմ փնտրել, թե ո՞րտեղ է, ո՞վ է, ի՞նչ նյութից է գոյացած, իսկույն ինձնից խուսափում է, ու իմ մշուշված միտքն այլևս ոչինչ չի տեսնում:

Համակված իմ անզորության գիտակցությամբ, ես երբեք չեմ փորձի դատողություններ անել աստծու բնության մասին, եթե նրա հետ իմ հարաբերությունների զգացումը չհարկադրի ինձ: Սրանք միշտ էլ հանդուգն դատողություններ են, իւրացի մարդը դրանց պետք է անձնատուր լինի դողալով, համոզված լինելով, որ ինքը չի ստեղծված դրանք խորացնելու. աստծու հանդեպ ամենանախատական բանը ոչ թե նրա մասին չմտածելն է, այլ վատ մտածելը:

Մի անգամ, որ գտնեմ նրա այն հատկությունները, որոնց շնորհիվ ընկալում եմ նրա գոյությունը, ես վերադառնում եմ դեպի ինձ ու փնտրում, թե ո՞րն է իմ տեղը նրա ղեկավարած իրականության մեջ, որը կարող եմ ուսումնասիրել: Ես ինձ անժխտելիորեն գտնում եմ առաջին շարքում՝ շնորհիվ իմ տեսակի. քանի որ իմ կամքով և այն գործադրելու համար իմ ձեռքի տակ եղած միջոցներով ես ավելի ուժ ունեմ ներգործելու ինձ շրջապատող բոլոր մարմինների վրա, կա՛մ ընդունելու, կա՛մ մերժելու նրանց ներգործությունը ըստ իմ կամքի, այնինչ նրանցից ոչ մեկը չունի այդ ուժը ինձ վրա ազդելու՝ հակառակ իմ կամքի, լոկ ֆիզիկական մղումով. և իմ իմացականությամբ ես միակն եմ, որ կարող եմ հակել բոլորին: Ո՞ր էակը, բացի մարդուց, կարող է այս աշխարհում զննել մնացած բոլորին, չափել, հաշվել, նախազգալ նրանց շարժումները, նրանց ազդեցությունները և զուգորդել, այսպես ասած, համայնական գոյության զգացումը իր անհատական գոյության զգացման հետ: Ի՞նչ կա այդքան ծիծաղելի այն մտածման մեջ, թե ամեն ինչ եղել է ինձ համար, եթե ես միակն եմ, որ գիտեմ ամեն ինչ վերագրել նրան:

Ճիշտ է, ուրեմն, որ մարդն իր բնակած երկրագնդի թագավորն է, որովհետև ոչ միայն զսպում է բոլոր կենդանիներին, ոչ միայն տարրերն օգտագործում է իր արդյունաբե-

րության մեջ, այլև ինքը միակն է երկրի վրա, որ կարողանում է նրանցից օգտվել, և, նույնիսկ, մտահայեցությամբ տիրապետում է աստղերին, որոնց չի կարող մերձենալ։ Թո՛ղ ինձ ցույց տան երկրի վրա մի ուրիշ կենդանի, որն իմանար օգտագործել կրակը, հիանար արեգակով։ Ես, որ կարող եմ զննել, ճանաչել գոյերն ու նրանց հարաբերությունները, կարող եմ զգալ, թե ինչ բան են կարգը, գեղեցկությունը, առաքինությունը, կարող եմ դիտել տիեզերքը, բարձրանալ մինչև այն ձեռքը, որ ղեկավարում է նրան, կարող եմ սիրել բարին, կատարել այն, ի՞նչպես կարող եմ ինձ համեմատել անասունների հետ։ Նվա՛ստ հոգի, տխրահռչակ փիլիսոփայությունն է, որ քեզ հավասարեցնում է նրանց. կամ ավելի շուտ՝ իզուր ես կամենում քեզ նվաստացնել. քո հանճարը բողոքում է քո դեմ, քո բարի սիրտը հերքում է քո վարդապետությունը, և քո ընդունակությունների չարաշահումն իսկ ի հեճուկս քեզ ապացուցում է նրանց գերազանցությունը։

Գալով ինձ, որ ոչ մի սիստեմ չունեմ պաշտպանելու, պարզ ու ճշմարիտ մի մարդ, որը չի տարվում ոչ մի կուսակցական մոլեռանդությամբ, որը չի ձգտում որևէ աղանդի պետը լինելու պատվին, գոհ այն տեղից, ուր աստված է ինձ դրել, ես, նրանից հետո, իմ տեսակից ավելի լավը չեմ տեսնում. և եթե ինձ պետք լիներ ընտրել իմ տեղը գոյերի համակարգության մեջ, մարդ լինելուց ավելի ի՞նչի կարող էի բաղձալ։

Այդ խորհրդածությունն ինձ ավելի շատ հուզում է, քան հպարտացնում. որովհետև այս դրությունը իմ ընտրության արդյունքը չէ և ոչ էլ արժանիքը մի էակի, որը դեռևս գոյություն չուներ։ Մի՞թե կարող եմ ինձ տեսնել այդպիսի դիրքում ու ինձ չգնահատել այն բանի համար, որ կատարում եմ այս պատվավոր պաշտոնը, և չօրհնել այն ձեռքը, որ ինձ վստահել է այն։ Ինքս ինձ վրա անդրադառնալու առաջին րոպեից սկսած իմ սրտի մեջ ծնվում է երախտագիտության ու օրհնության զգացումը հանդեպ իմ ցեղն ստեղծողի ու այդ զգացումից՝ իմ առաջին հարգանքը հանդեպ բարեխնամ արարչության։ Ես պաշտում եմ գերագույն զորությունը և զգացվում նրա բարերգությունների։ Հարկավոր չէ, որ ինձ ուսուցանեն այդ պաշտամունքը, բնությունն ինքն է այն ինձ

թելադրում։ Չէ՞ որ դեպի մեր անձն ունեցած սիրո բնական հետևանքն է մեզ թելադրում պատվել նրան, ով պաշտպանում է մեզ, ու սիրել նրան, ով մեր լավն է ցանկանում։

Բայց երբ, հետագայում ճանաչելու համար ինձ պատկանող տեղը իմ տեսակի մեջ, քննում եմ դրա տարբեր շարքերն ու սրանք լցնող մարդկանց, ի՞նչ է պատահում ինձ հետ, ի՞նչ տեսարան է պարզվում իմ առաջ։ Ո՞ւր է այն կարգը, որ ես տեսել էի։ Բնության պատկերն ինձ միայն ներդաշնակություն ու համաչափություն էր ներկայացնում. մարդկային ցեղի պատկերը սոսկ շփոթություն, անկարգություն է ցույց տալիս։ Ներդաշնակություն է իշխում տարրերի մեջ, իսկ մարդկանց մեջ՝ քաոս։ Անասունները երջանիկ են, նրանց թագավո՞րն է միայն թշվառ։ Ո՛վ իմաստություն, ո՞ւր են քո օրենքները։ Ո՛վ նախախնամություն, այդպե՞ս է, որ կառավարում ես աշխարհը։ Ո՛վ բարեխնամ էակ, ո՞ւր է քո ուժը։ Չարիքն է իշխում երկրի վրա։

Պիտի հավատա՞ք արդյոք, իմ լավ բարեկա՛մ, որ այս տխուր խորհրդածություններից և այս առերևույթ հակասություններից իմ մտքում կազմվեցին հոգու այն վսեմ գաղափարները, որոնք մինչ այդ չէին ծնվել իմ որոնումներից։ Խոկալով մարդու բնության վրա, ես այնտեղ կարծեցի գտնել երկու որոշակի սկզբունք՝ դրանցից մեկը նրան բարձրացնում էր հավիտենական ճշմարտությունների ուսումնասիրմանը, դեպի արդարության ու դեղեցիկ բարոյականի սերը, դեպի իմացական աշխարհի ոլորտները, որոնց հայեցողությունը համաստուներին հրճվանք է պատճառում. իսկ մյուսը նրան ստորարար սահմանափակում էր ինքն իր մեջ, հպատակեցնում իր զգայարանների իշխանությանը, կրքերին, որոնք նրանց պաշտոնյաներն են, և այդ կրքերով հակադրվում էր այն ամենին, ինչ նրան ներշնչում է առաջին սկզբունքի զգացումը։ Զգալով, որ տարուբերվում եմ այս երկու հակառակ շարժումների միջև, հանդիպում նրանց դիմադրությանը, ինքս ինձ ասում եմ. «Ո՛չ, մարդը միասնական չէ. ես ուզում եմ ու չեմ ուզում, ինձ զգում եմ միաժամանակ և՛ ստրուկ, և՛ ազատ, տեսնում եմ լավը, սիրում եմ այն, բայց վհատո եմ անում, ես ակտիվ եմ, երբ լսում եմ դատողությանը, պասսիվ՝ երբ

կրքերն են ինձ տիրապետում, և երբ պարտվում եմ, իմ ամենավատ տանջանքն այն է լինում, որ ղգում եմ, թե կարող էի դիմադրել։

Երիտասա՛րդ, շարունակեցե՛ք ինձ վստահությամբ լսել, ես միշտ անկեղծ կլինեմ։ Եթե խիղճը նախապաշարումների գործն է, անկասկած ես սխալվում եմ, և ոչ մի բարոյականություն չի ապացուցված. բայց եթե մարդիկ բնականից հակված են իրենք իրենց նախապատվություն տալու, և եթե, այնուամենայնիվ, արդարության առաջին զգացումը բնածին է մարդու մեջ, թող նա, ով մարդուն պարձնում է պարզ մի էակ, հեռացնի այս հակասությունները, և ես, այդ դեպքում, միայն մի դոյանություն կճանաչեմ։

Դուք նկատեցիք, որ գոյանություն բառով ես ընդհանրապես հասկանում եմ այն գոյը, որն օժտված է մի քանի նախնական հատկություններով, բացառելով բոլոր մասնավոր կամ երկրորդական փոփոխությունները։ Եթե, ուրեմն, այն բոլոր նախնական հատկությունները, որ մեզ ծանոթ են, կարող են միավորվել միևնույն գոյի մեջ, պետք է ընդունել միայն մի դոյանություն. բայց եթե կան այնպիսիները, որոնք փոխադարձաբար միմյանց բացառում են, ապա նույնքան տարբեր գոյանություններ կան, որքան կարելի է նման բացառումներ անել։ Դուք կմտածեք այս մասին. իսկ ես, ինչ էլ ասի Լոքը, բավական է, որ ճանաչեմ նյութը որպես տարածական ու բաժանելի մի բան, որպեսզի վստահ լինեմ, որ նա չի կարող մտածել. և երբ մի որևէ փիլիսոփա ինձ ասի, թե ծառերն ղգում են, ժայռերը մտածում [1], իզուր կփորձի ինձ շփոթու-

---

1 Ինձ թվում է, սրբի փիլիսոփայությունը ոչ թե ասել է, որ ժայռերը մտածում են, այլ, ընդհակառակն, գտել է, որ մարդկի բոլորովին չեն մտածում։ Փիլիսոփայությունը բնության մեջ լոկ զգայուն գոյեր է տեսնում, և ամբողջ տարբերությունը, որ նա գտնում է մարդու և քարի միջև, այն է, որ մարդը մի զգացական գոյ է, որն զգայություններ ունի, իսկ քարը մի զգացական գոյ է, որն այդպիսիք չունի։ Իսկ եթե ճիշտ է, որ յուրաքանչյուր նյութ զգում է, ո՞րտեղ է, որ պիտի գտնեմ զգայական միասնությունը կամ անհատական եսը, նյութի յուրաքանչյուր մասնիկի՞, թե հարակցական մարմինների մեջ։ Պե՞տք է, որ այդ միասնությունը դնեմ հզվասարապես թե՛ հոսանյութերի և թե՛ հաստատուն մարմինների, և՛ խառն մարմինների, և՛ պարզ տարրերի մեջ։ Ասում են, թե անհատներ միայն բնու-

թյան մասնել իր ճարպիկ փաստարկումներով. ես նրա մեջ կտեսնեմ միայն մի ոչ-ուղղամիտ սոփեստի, որը գերադասում է քարերին զգացում տալ, քան թե մարդուն՝ հոգի։

Ննջադրենք մի խուլի, որը ժխտում է ձայների գոյությունը, որովհետև դրանք երբեք չեն հասել նրա լսելիքին։ Ես նրա աչքի առաջ կդնեմ մի լարային գործիք ու կհնչեցնեմ մի ուրիշ՝ գաղտնի պահված գործիքով. խուլը կտեսնի լարի թրթռալը. ես նրան կասեմ. «Ձայնն է, որ թրթռացնում է»։ «Ոչ,— կպատասխանի նա,— լարի թրթռացման պատճառը ինքն իր մեջ է. այդ մի հատկություն է, որ բոլոր մարմիններն ունեն»։ «Ձույլ տվեք ուրևմն ինձ,— ասում եմ ես,— այդ թրթռումները ուրիշ մարմինների մեջ, կամ գոնե այս լարի թրթռացման պատճառը»։ «Ես այդ չեմ կարող,— պատասխանում է խուլը,— բայց քանի որ ես չեմ կարող ընկալել, թե ինչպես է թրթռում այս լարը, ինչու՞ եք ուզում, որ այդ երևույթը բացատրեմ ձեր ձայնի գոյությամբ, որի մասին ոչ մի գաղափար չունեմ։ Այդ նշանակում է՝ մի մութ գործ բացատրել մի ավելի մութ պատճառով։ Կա՛մ ձայները ինձ զգալի դարձրեք, կա՛մ ես կասեմ, որ նրանք գոյություն չունեն»։

Բյան մեջ կան։ Բայց որո՞նք են այդ անհատները։ Այս քարը մի անհա՞տ է, թե անհատների մի հարակցությունը։ Արդյոք առանձին մի զգայուն գո՞յ է նա, թե նրանից պարունակում է այնքան, որքան ավազահատիկներ ունի իր մեջ։ Եթե յուրաքանչյուր նախնական ատոմ մի զգայուն գոյ է, ի՞նչպես ըմբռնել այն սերտ հաղորդակցությունը, որի շնորհիվ մեկն զգում է մյուսի մեջ, այնպես որ նրանց երկու եսերը ձուլվում են մեկի մեջ։ Զգոզականությունը կարող է լինել բնության մի օրենքը, որի գաղտնիքը մեզ հայտնի չէ. բայց մենք գոնե ընկալում ենք, որ ձգոզականությունը, գործելով ըստ զանգվածների, ոչնչով չի հակասում տարածությանն ու բաժանելիությանը։ Կարո՞ղ եք միևնույն ձևով հասկանալ նաև զգացմունքը։ Զգայուն մասերը տարածված են, բայց զգացական գոյը անբաժանելի ու մեկ է. նա չի բաժանվում, կա՛մ ամբողջ է, կա՛մ ոչինչ. զգացական գոյը, ուշեմն, մի մարմին չէ։ Ձգիտեմ, թե ինչպես են այն հասկանում մեր մատերիալիստները, բայց ինձ թվում է, որ այն միևնույն դժվարությունները, որ նրանց ստիպեցին մերժել մտածողությունը, պետք է մերժել տային նաև զգացմունքը, և չեմ հասկանում, թե ինչո՞ւ առաջին քայլն անելուց հետո մյուսն էլ չպիտի անեն. ի՞նչ ավելի բան պիտի արժեր այդ եզրանց համար. և քանի որ վստահ են, թե չեն մտածում, ի՞նչպես են համարձակվում պնդել, թե զգում են։

Ինչքան խորհում եմ մարդկային մտածողության ու մտքի բնության վրա, այնքան գտնում եմ, որ մատերիալիստների դատողությունը նման է այս խուլի դատողությանը։ Նրանք, իրոք, խուլ են ներքին ձայնին, որը նրանց աղաղակում է այնպես, որ դժվար է անգիտանալ. «Մեքենան չի մտածում երբեք. չկա ոչ շարժում, ոչ պատկեր, որը խորհրդածություն առաջացնի. ինչ-որ մի բան կա քո մեջ, որն ուզում է խորտակել այն կապերը, որ նրան ճնշում են. տարածությունը քո չափին չէ. տիեզերքը բավականաչափ ընդարձակ չէ քեզ պարփակելու համար. քո զգացմունքները, քո ցանկությունները, քո անհանգստությունը, անգամ քո մեծամտությունը մի ուրիշ սկիզբ ունեն, քան այն անցուկ մարմինը, որի մեջ դու քեզ շղթայված ես զգում»։

Ոչ մի նյութական զոյ ինքն իրենից ակտիվ չէ. իսկ ես ակտիվ եմ։ Իզուր են ինձ հետ վիճում այս մասին. ես այդ զգում եմ և այդ զգացումը, որ ինձ հետ խոսում է, ավելի ուժեղ է, քան նրա դեմ պայքարող դատողությունը։ Ես ունեմ մի մարմին, որի վրա մյուս մարմիններն ազդում են, և ինքն էլ ազդում է մյուսների վրա. այս փոխադարձ գործողությանը չի կարելի կասկածել. բայց իմ կամքը անկախ է իմ զգայություններից. համաձայնում եմ կամ դիմադրում, պարտվում եմ կամ հաղթում. և երբ անում եմ այն, ինչ ուզում էի անել, կամ պարզապես ցիջոմ եմ կրքերիս, ես այդ կատարելապես զգում եմ ինքս իմ մեջ։ Ես կամենալու ուժ միշտ ունեմ, բայց ոչ՝ կատարելու կարողություն։ Երբ ես անձնատուր եմ լինում փորձություններին, գործում եմ արտաքին իրերի ազդեցությամբ։ Երբ ինքս ինձ հանդիմանում եմ այս թուլության համար, իմ կամքին եմ միայն լսում. ես ստրուկ եմ իմ մոլություններով և ազատ՝ իմ խղճահարություններով. իմ ազատության զգացումը ջնջվում է իմ մեջ միայն այն ժամանակ, երբ ես ապականվում եմ և երբ, վերջապես, արգելում եմ, որ հոգու ձայնը բարձրանա մարմնի օրենքի դեմ։

Ես կամքը ճանաչում եմ միայն իմ կամքի զգացումով, և իմացությունն էլ ավելի լավ չեմ ճանաչում։ Երբ ինձ հարցնում են, թե ո՞րն է այն պատճառը, որը որոշում է իմ կամքը, իմ հերթին ես հարցնում եմ, թե ո՞րն է այն պատճառը, որը

որոշում է իմ դատողությունը. որովհետև պարզ է, որ այս երկու պատճառները միևնույնն են. և եթե հասկանում ենք, որ մարդը ակտիվ է իր դատողություններում, որ նրա ըմբռնողությունը ուրիշ բան չէ, եթե ոչ համեմատելու և պատելու կարողություն, կտեսնենք, որ նրա ազատությունը նմանօրինակ կամ նրանից բխած մի իշխանություն է. ճիշտ դատելով՝ նա կարողանում է լավ ընտրել. իսկ եթե սխալ է դատում, ապա վատ է ընտրում։ Ո՞րն է, ուրեմն, այն պատճառը, որ որոշում է նրա կամքը։ Դա նրա դատողությունն է։ Իսկ ի՞նչն է որոշում նրա դատողությունը։ Դա նրա իմացական հատկությունն է, դատելու կարողությունը. որոշիչ պատճառը ինքն իր մեջ է։ Սրանից այն կողմ այլևս ոչինչ չեմ ըմբռնում։

Անկասկած, ես ազատ չեմ չցանկանալու իմ սեփական լավը, ազատ չեմ ցանկանալու իմ վատը. բայց իմ ազատությունը կայանում է հենց նրանում, որ ես կարող եմ ցանկանալ միայն այն, ինչ նպաստավոր է ինձ, կամ կարծում եմ, թե նպաստավոր է, առանց ինձնից դուրս որևէ բանի միջամտության։ Ե՞տք է արդյոք դրանից եզրակացնել, որ ես իմ տերը չեմ, որովհետև ես ազատ չեմ ինձնից բացի լինել մի ուրիշը։

Ամեն գործողության սկիզբը ազատ էակի կամքի մեջ է. չի կարելի նրանից այն կողմ անցնել։ Ոչ թե ազատությունը բառը, այլ անհրաժեշտությունը բառն է, որ ոչինչ չի նշանակում։ Ենթադրել մի գործողություն, մի հետևանք, որը չի բխում ակտիվ մի սկզբից, նշանակում է բոլորապես ենթադրել հետևանքներ՝ առանց պատճառի, նշանակում է ընկնել կախարդական շրջանակի մեջ։ Կա՛մ չկա բնավ սկզբնական մղում, կա՛մ ամեն սկզբնական մղում ոչ մի նախընթաց պատճառ չունի, և չկա իսկական կամք՝ առանց ազատության։ Մարդը, ուրեմն, ազատ է իր գործողությունների մեջ և, որպես այդպիսին, կենսավորված աննյութական մի գոյությամբ. սա իմ հավատի երրորդ կետն է։ Այս առաջին երեքից ձեզ հեշտ է եզրակացնել բոլոր մնացածները, որոնք քվելու կարիքը չեմ տեսնում։

Սթև մարդն ակտիվ է և ազատ, նա գործում է ինքն իրեն. այն ամենը, ինչ անում է ազատորեն, չի-մտնում նախախնա-

մության կարգավորած սիստեմի մեջ և չի կարող նաև վերացվել։ Նախախնամությունը երբեք չի ցանկացել, որ մարդը վատություն անի՝ չարաշահելով այն ազատությունը, որ ինքն է նրան շնորհել. բայց չի արգելում նրան անելու այդ վատությունը՝ լինի այն պատճառով, որ այդքան տկար մի արարածի կողմից կատարված այդ վատ արարքը նրա աչքին ոչնչություն է թվում, լինի այն պատճառով, որ չի կարող նրան արգելել՝ առանց խափանելու նրա ազատությունը և առանց մի ավելի մեծ չարիք պատճառելու, որը կլիներ նրա բնավորության խաթարումը։ Նախախնամությունը մարդուն ստեղծել է ազատ, ոչ թե վատություն, այլ լավություն անելու համար։ Նա մարդուն տվել է կարողություն՝ այդ բնատուությունը կատարելու, օգտագործելով այն բոլոր հատկությունները, որոնցով նրան օժտել է. բայց այնքան է սահմանափակել նրա ուժերը, որ նրան տրված ազատության չարաշահումը չի կարող խանգարել ընդհանուր կարգը։ Իր գործած չարիքով մարդն իրեն է վնասում՝ առանց ոչինչ փոխելու աշխարհի սիստեմից, առանց արգելք լինելու մարդկային ցեղի պահպանմանը։ Տրտնջալ, թե ասված նրան չի արգելում վատություն անել, այդ նշանակում է տրտնջալ, որ նա մարդկային ցեղն օժտել է մի սքանչելի բնությամբ, որ նրա գործողություններին տվել է դրանք ազնվացնող բարոյականություն, որ նրան շնորհել է առաքինի լինելու իրավունք։ Գերագույն հաճույքը մեր սեփական գոհունակության մեջ է, և այդ գոհունակությանն արժանի լինելու համար է, որ մենք ենք աշխարհ և օժտվել ազատությամբ, որ փորձվում ենք կրքերով և զսպվում խղճով։ Սրանից ավելի ի՞նչ կարող էր անել հզոր մեզ նույն ինքն աստվածային զորությունը։ Կարո՞ղ էր հակասություն դնել մեր բնության մեջ և լավն արած լինելու մրցանակը տալ նրան, ով վատն անելու կարողություն չի ունեցել։ Ինչպես թե, մի՞թե հարկավոր է մարդուն սահմանափակել բնազդով ու նրան անասուն դարձնել, որպեսզի նա չար չլինի։ Ո՛չ, աստվա՜ծ իմ, ես երբեք քեզ չեմ մեղադրի մարդուն քո պատկերի համեմատ ստեղծելու համար, որպեսզի քեզ նման լինեմ ազատ, բարի ու երջանիկ։

Մեր կարողությունների չարաշահումն է մեզ դարձնում

պժբախտ ու չար: Մեր ցավերի, մտահոգությունների, վշտերի պատճառը մենք ինքներս ենք: Բարոյական ցավը անվիճելիորեն մեր գործն է, իսկ ֆիզիկական ցավը ոչինչ կլիներ առանց մեր մոլությունների, որոնք մեզ զգալի են դարձրել այդ ցավը: Մի՞թե մեր պահպանության համար չէ, որ բնությունը մեզ զգալ է տալիս մեր կարիքները: Մարմնի ցավը մի՞թե ազդանշան չէ, որ մեքենան խանգարվում է, և մի կոչ՝ նրան օգնելու: Մահը... Վատ մարդիկ չէ՞ որ թունավորում են ինչպես իրենց, նույնպես և մեր կյանքը: Ո՛վ կկամենար հավիտյան ապրել: Մահը դարմանում է այն ցավերը, որ դուք ինքներդ ձեր ձեզ պատճառում. բնությունը կամեցել է, որ դուք մինչև վերջ չտանջվեք: Նախնական պարզության մեջ ապրող մարդը որքա՜ն քիչ է ենթակա ցավերի. նա ապրում է համարյա առանց հիվանդությունների, ինչպես և առանց կրքերի ու չի կանխատեսում, ոչ էլ զգում է մահը. իսկ երբ զգում է, ապա իր տառապանքները նրան ցանկալի են դարձնում այն, և դրանից հետո մահը այլևս չարիք չէ նրա համար: Եթե մենք բավարարվեինք մեզնով, ոչ մի ժամանակ մեր բախտից չէինք գանգատվի. բայց մի երևակայական երջանկություն ստեղծելու համար մենք մեզ հազարավոր իրական չարիք ենք պատճառում: Նա, ով չի կարող փոքր տանջանքին դիմանալ, մեծ տանջանքների կենթարկվի: Երբ մարդիկ փչացնում են իրենց մարմինը՝ անկանոն կյանքի հետևանքով, ցանկանում են այն վերականգնել դեղերով. զգացած ցավին ավելացնում են այն ցավը, որից վախենում են. մահվան կանխատեսությունը սարսափելի է դարձնում այն ու փութացնում. ինչքան ուզում են նրանից խուսափել, այնքան ավելի են զգում այն և մեռնում են՝ ամբողջ կյանքում վախենալով, տրտնջալով բնության դեմ այն ցավերի համար, որ հենց իրենք են իրենց պատճառել՝ բնության դեմ գնալով:

Ո՛վ մարդ, էլ մի՛ փնտրիր չարիքի հեղինակին, այդ հեղինակը դու ինքդ ես: Բացի այն ցավից, որ դու ինքդ ես պատճառում կամ որից ինքդ ես տանջվում, ուրիշ ցավ գոյություն չունի. և՛ մեկը, և՛ մյուսը քեզնից են առաջանում: Ընդհանուր չարիքը սոսկ անկարգության մեջ կարող է լինել. և ես աշխարհի սիստեմի մեջ մի կարգ եմ տեսնում, որը երբեք չի

խախտում: Մասնավոր չարիքը սոսկ տանչվող էակի զգացման մեջ է. այդ զգացումը մարդը չի ստացել բնությունից, այլ ինքն է տվել իրեն: Յավը քիչ ազդեցություն ունի նրա վրա, ով, քիչ խորհելով, ո՛չ հիշողություն ունի, ո՛չ նախատեսություն: Վերացրե՛ք մեր չարաղետ առաջադիմությունները, վերացրե՛ք մեր սխալներն ու արատները, վերացրե՛ք մարդու կատարած գործը, և ամեն ինչ լավ կլինի:

Այնտեղ, որտեղ ամեն ինչ լավ է, անարդար ոչինչ չկա: Արդարությունն անքաժան է բարությունից. ընդսմին բարությունը անհրաժեշտ հետևանքն է մի անսահման զորության և իր անձի սիրույն, մի բան, որն էական է ամեն մի զգացող էակի համար: Նա, ով ամենակարող է, տարածում է, այսպես ասած, իր գոյությունը էակների գոյության հետ: Արտադրելն ու պահպանելը ամենակարողի մշտնջենական գործողություններն են. նա չի ներգործում չեզածի վրա. ատելված մեռելների աստվածը չէ. նա չէր կարող լինել քանդող ու չար՝ առանց ինքն իրեն վնասելու: Նա, ով ամենակարող է, միայն լավին[1] է տենչում: Ուրեմն, արարիչը, որ գերազանցապես բարի է, որովհետև գերազանցապես հզոր է, պետք է և լինի գերազանցապես արդար. այլապես ինքն իրեն հակասած կլիներ, որովհետև այն արտադրող կարգի սերը կոչվում է **բարություն**, *իսկ այն պահպանող կարգի սերը կոչվում է* **արդարություն:**

Ասում են, որ աստված ոչինչ պարտական չէ իր արարածներին: Իսկ ես կարծում եմ, որ նա նրանց պարտական է այն ամենը, ինչ խոստացել է՝ նրանց կյանք տալու ժամանակ: Ընդսմին, բարիքի գաղափարը ներշնչելով և դրա անհրաժեշտությունն զգացնելով նրանց, նա, այսպես ասած, մի բարիք է խոստանում: Ինչքան ավելի եմ խորանում իմ մեջ, ինչքան խորհուրդ եմ հարցնում ինձնից, այնքան իմ հոգու մեջ կարդում եմ այս խոսքերը՝ «Ծղի՛ր արդար և երջանիկ

---

1 *Երբ նախնիները գերագույն աստծուն անվանում էին* optimus maximus *(ամենաբարի մեծություն), շատ ճիշտ էին ասում, բայց եթե ասեին՝* maximus optimus *(մեծագույն բարություն) ավելի ճիշտ ասած կլինեին, քանի որ աստծու բարությունը գալիս է նրա հզորությունից, նա բարի է, որովհետև մեծ է:*

կլինենք։ Սակայն, իրականում, երբ քննում ենք իրերի ներկա դրությունը, բոլորովին այլ բան ենք տեսնում. վատը բարգավաճում է, իսկ արդարը մնում է ճնշված։ Տեսե՛ք նաև, թե ինչպիսի զայրույթ է բորբոքվում մեր մեջ, երբ այդ ակնկալությունը մեզ խարում է։ Ախիղճը ծառանում է ու բողոքում իր հեղինակի դեմ, նրա երեսին գոչելով՝ «Դու ինձ խաբեցի՛ր»։

Ես քեզ խաբեցի՞, հանդո՛ւգն մարդ, այդ ո՞վ է քեզ ասել։ Ընկնացե՞լ է քո հոգին։ Դարարե՞լ ես գոյություն ունենալ։ Օ՜, Բրուտո՛ս, օ՜, տղա՛ս, կյանքիդ վերջին րոպեներին մի արատավորիր հոգիդ, քո հույսն ու փառքը, քո մարմնի հետ, մի՛ թողիր Ֆիլիպյան դաշտում։ Ինչո՞ւ ես ասում՝ «Առաքինությունը ոչնչություն է», երբ պիտի վարձատրվի քոնը։ Դու մտածում ես, թե պիտի մեռնես. ո՛չ, դու պիտի ապրես, և ա՛յն ժամանակ է, որ պիտի կատարեմ ինչ որ խոստացել եմ քեզ։

Եթե լսենք անհամբեր մահկանացուների տրտունջներին, ստիված, որպես թե, պարտավոր է կանխօրոք վարձատրել նրանց իրենց արժանիքների համար, կամ թե նա պետք է կանխիկ վճարի իրենց առաքինության համար։ Օ՜, լինենք նախ բարի, և ապա երջանիկ կլինենք։ Հաղթանակից առաջ չպետք է վարձատրություն պահանջել, ոչ էլ աշխատանքից առաջ՝ աշխատավարձ։ «Մրցադաշտում չէ,— ասում էր Պլուտարքոսը,— որ պսակում են մեր օրթոպեդ խաղերի հաղթողներին, այլ վազքից հետո»։

Եթե հոգին անկյալ է, մարմնից հետո նա կարող է շարունակել ապրել. իսկ եթե շարունակում է ապրել, նախախնամությունը իրոք կա։ Եթե հոգու անկյալականության մասին չունենայի այլ ապացույց, բացի չարի հաղթանակից և արդարի ճնշվելուց այս աշխարհում, այդ միայն բավական էր, որպեսզի չկասկածեմ դրա մասին։ Տիեզերական ներդաշնակության մեջ այսքան ակնբախ մի հավասարություն ինձ կդրդեր լուծելու այդ խնդիրը։ Ես ինձ կասեի՝ «Ամեն ինչ մեզ համար չի վերջանում կյանքի հետ. մահվան հետ ամեն ինչ կարգավորվում է»։ Ես, ճիշտն ասած, կդժվարանայի ինձ հարց տալ, թե ո՞ւր է մնում մարդը, երբ ոչնչանում է այն ամենը, ինչ կապված է նրա զգացողության հետ։ Այս հարցը

ինձ համար կորցրեց իր դժվարությունը այն րոպեից, երբ ես ճանաչեցի երկու գոյանյութ։ Շատ պարզ է, որ իմ մարմնավոր կյանքի ընթացքում ամեն ինչ նկատելով միայն իմ զգայարաններով, այն, որ նրանց չի ենթարկվում, խուսափում է ինձնից։ Երբ հոգու և մարմնի միությունը խախտվում է, ես հասկանում եմ, որ մեկը կարող չէ լուծվել, իսկ մյուսը՝ պահպանվել։ Ինչո՞ւ պետք է մեկի ոչնչացումը առաջացնի նաև մյուսի ոչնչացումը։ Ընդհակառակն, լինելով միմյանցից բոլորովին տարբեր բնույթի, իրենց միացումով նրանք բնադատված դրության մեջ են, և երբ այդ միությունը վերջանում է, և՛ մեկը, և՛ մյուսը վերադառնում են իրենց բնական վիճակին. ակտիվ ու կենդանի գոյանյութը վերստանում է այն ամբողջ ուժը, որ գործ էր ածում պասսիվ ու մեռած գոյանյութը շարժելու համար։ Ավա՜ղ, իմ մոլություններն ինձ լիովին զգալ են տալիս, որ մարդն իր կյանքում կիսով չափ է ապրում, և հոգու կյանքը սկսվում է միայն մարմնի մահից հետո։

Բայց ի՞նչպիսին է այդ կյանքը. մի՞թե հոգին անմահ է իր բնույթամբ։ Չգիտեմ։ Իմ սահմանափակ ըմբռնողությունը ոչ մի անսահման բան չի ընկալում. այն, ինչը անսահման են կոչում, խուսափում է իմ գիտակցությունից։ Ի՞նչը կարող եմ ժխտել, ի՞նչը՝ հաստատել, ի՞նչպես կարող եմ դատողություններ անել մի բանի մասին, որն ի վիճակի չեմ ըմբռնելու։ Կարծում եմ, որ հոգին մարմնից հետո բավականաչափ ապրում է՝ կարգը պահպանելու համար, բայց ո՞վ կարող է ասել, որ այդ հերիք է՝ ընդմիշտ տևելու համար։ Համենայն դեպս, ես գիտեմ, թե ինչպես մարմինը մաշվում, ոչնչանում է մասերի բաժանմամբ. բայց ես չեմ կարող ըմբռնել նույնպիսի մի ոչնչացում հոգու համար և քանի որ չեմ պատկերացնում, թե ինչպես կարող է նա մահանալ, ես ենթադրում եմ, որ չի մահանում։ Մխիթարված այս ենթադրությամբ և ոչինչ անտրամաբանական չգտնելով դրա մեջ, ես չեմ վախենում դրան հավատալ։

— Ես զգում եմ իմ հոգին, այն գիտակցում եմ զգացումով ու մտածողությամբ. գիտեմ, որ նա կա՝ առանց իմանալու նրա էությունը. ես չեմ կարող դատողություններ անել այն-

պիսի զաղափարների մասին, որոնցից ղուրկ եմ։ Բայց լավ գիտես, որ եսի ինքնությունը միայն հաշողությամբ է շարունակվում, և հիրավի նույնը լինելու համար պետք է հիշեմ, թե եղել եմ։ Ընդամին, մահվանից հետո չեմ կարող հիշել, թե ինչ եմ եղել իմ կենդանության օրոք՝ առանց հիշելու նաև, թե ինչ եմ զգացել, հետևապես և ինչ եմ արել. ու չեմ կասկածում երբեք, որ այդ հիշողությունը մի օր բարիներին երջանկություն ու չարերին տանջանք կպատճառի։ Այս աշխարհում հազարավոր վառ կրքեր կլանում են ներքին ղգացմունքը և մոլորեցնում խղճմտանքը։ Նվաստացումները, շնորհազրկումները, որ հանդիպում են առաբինության կիրառման ճանապարհին, չեն թողնում, որ լրիվ վայելենք դրա հմայքը։ Բայց երբ ազատվելով մարմնի և զգայությունների ծնած պատրանքներից՝ մենք մտահայեցությամբ կվայելենք գերագույն էակին և հավիտենական այն ճշմարտությունները, որոնց աղբյուրն է հանդիսանում նա, երբ տիեզերական համակարգության գեղեցկությունը ապշության կմատնի մեր հոգեկան ամբողջ կարողությունները, և մենք միմիայն զբաղված կլինենք համեմատելով մեր արածի հետ այն, ինչ պետք է անեինք, այդ դեպքում է, որ խղճի ձայնը կվերստանա իր ուժն ու իշխանությունը, այդ դեպքում է, որ ինքնաբավականությունից ծնունդ առնող անխառն բերկրանքը, ինքնանվաստացման զառն վիշտը, անսպառ զգացմունքների միջոցով, կորոշեն յուրաքանչյուրի իր համար պատրաստած ճակատագիրը։ Սիրելի բարեկա՛մս, ինձ մի՛ հարցնեք բնավ, թե արդյո՞ք երջանկության ու տառապանքի ուրիշ աղբյուրներ կլինեն, ես այդ չգիտեմ. բավական է և այն, որ ես պատկերացնում եմ, որ ես ուզի միխիթարվեմ այս կյանքով և մի ուրիշ կյանքի հույս ունենամ։ Ես չեմ ասի երբեք, որ բարիները պիտի վարձատրվեն. բնության համաձայն լինելուց ավելի ի՞նչ լավ բան կարող է ակնկալել գերազանց մարդը։ Բայց ես ասում եմ, որ նրանք երջանիկ կլինեն, որովհետև բարիների արարիչը, ամենայն արդարության ստեղծողը, նրանց ստեղծելով զգայուն, չի ստեղծել, սակայն, տանջվելու համար. ու նրանք, չչարաշահելով երկրի վրա իրենց ազատությունը, չեն գործել այնպիսի սխալ, որով շեղվեին իրենց նախատեսմանված ճակատագրից.

բայց և այնպես, նրանք տանջվել են այս կյանքում. հետևապես պիտի վարձատրվեն մի այլ կյանքում։ Այս զգացումը մարդու արժանիքից ավելի հիմնված է բարության այն գաղափարի վրա, որը, իմ կարծիքով, անբաժան է աստվածային էությունից։ Ես ենթադրում եմ սոսկ համայնական կարգի պիտված օրենքները և անդրդվելի աստծուն [1]։

Ինձ մի հարցնեք նաև, թե արդյոք չարերի տանջանքները մշտնջենական կլինեն, և նրանց գոյության հեղինակի բարության հետևանքը չէ՞ այն, որ այդպիսիք դատապարտված են մշտապես տառապելու. այդ էլ չգիտեմ. զուր տեղը չեմ հետաքրքրվում անօգուտ հարցերի լուսաբանությամբ։ Իմ ինչի՞ն է պետք, թե ինչ կլինեն չարերը։ Նրանց վիճակով քիչ եմ շահագրգռված։ Համենայն դեպս, բնավ չեմ կարծում, որ նրանք անվերջ տանջանքների են ենթարկվելու։ Թեև գերագույն արդարությունը ուզում է վրեժխնդիր լինել, նա չի սպասի, այլ կլինի ա՛յս աշխարհում։ Դուք և ձեր սխալները, ո՛վ ազգեր, հանդիսանում եք նրա պաշտոնյաները։ Նա կօգտագործի այդ չարիքները, որ դուք ինքներդ եք ձեզ պատճառում, պատժելու համար դրանց պատճառ հանդիսացող հանցանքները։ Ձեր անհագուրդ սրտերում, որոնց կրծում են նախանձը, ընչաքաղցությունն ու փառամոլությունը, ձեր խռովասիրական հաջողությունների մեջ է, որ վրիժառու կրքերը պատժում են ձեր հանցանքները։ Ի՞նչ կարիք կա գնալ դժոխքը փնտրել անդենականում, երբ դա գտնվում է հենց այս աշխարհում՝ չարերի սրտում։

Այնտեղ, որտեղ վերջանում են մեր անցավոր կարիքները, որտեղ դադարում են մեր անխորհուրդ ցանկությունները, պետք է վերջանան նաև մեր կրքերն ու հանցանքները։ Նրանք որքա՞ն անբիծ հոգիներ են ապականում, որոնք, ոչ մի բանի կարիքը չզգալով, ինչո՞ւ պիտի չար լինեին։ Այն դեպքում, երբ, ազատվելով մեր կոպիտ զգայություններից, նրանք իրենց միակ երջանկությունը գտնում են գոյերի հավերժության

---

1 «Ոչ մեզնով, ոչ մեզ համար, ո՛վ տեր,
Այլ քո անվան, քո իսկ համբավի համար,
Ո՛վ աստված, վերապրեցրու մեզ»։
(Սաղմ. 115)

մեջ, այլևս ուրիշ ոչինչ չեն կարող ցանկանալ, բացի բարուց, և նա, ով դադարում է չար լինելուց, կարո՞ղ է երբևէ դժբախտ լինել։ Ահա թե ինչին եմ հավակված հավատալու՝ առանց որևէ դժվարության։ Ո՛վ դու ողորմած և բարի էակ. ինչպիսիք էլ լինեն քո պատվիրանները, ես պաշտում եմ դրանք. եթե դու հավիտենական պատժի ենթարկես չարերին, ես իմ տկար բանականությունը կոչնչացնեմ քո արդարության առաջ։ Բայց եթե այդ դժբախտների խղճահարությունները պիտի չքանան ժամանակի ընթացքում, եթե նրանց ցավերը պիտի վերջ գտնեն, և եթե միևնույն խաղաղությունը մեզ բոլորիս հավասարապես սպասում է մի օր, ես քեզ օրհնում եմ դրա համար։ Չէ՞ որ չարն էլ իմ եղբայրն է։ Քանի՞-քանի՞ անգամներ ես փորձվել եմ նմանվել նրան։ Փրկվելով իր թշվառությունից, թո՞ղ նա թոթափի նաև նրան ընկերացող ժանտությունը, թո՞ղ երջանիկ լինի ինձ պես. դրա համար ես ոչ թե կնախանձեմ, այլ է՛լ ավելի երջանիկ կզգամ ինձ։

Այսպիսով, աստծուն դիտելով իր գործերի մեջ և ուսումնասիրելով նրան իր ստորոգելիքներով, որոնք ինձ հարկավոր էր ճանաչել, ես կարողացա աստիճանաբար ընդլայնել ու զարգացնել սկզբում անկատար ու սահմանափակ այն գաղափարը, որ ունեի այդ անսահման էության մասին։ Սակայն, եթե այդ գաղափարը ավելի ազնիվ ու ավելի մեծ դարձավ, այնուամենայնիվ, նվազ համեմատական է մարդկային բանականության ինչքան էլ մտքով մոտենում եմ հավիտենական լույսին, այնքան նրա փայլը ինձ շլացնում, հուզում է, ու ես ստիպված եմ հրաժարվել բոլոր այն երկրային գիտելիքներից, որոնք ինձ օգնում էին նրան պատկերացնելու։ Աստվածը այլևս մարմնային ու զգայուն էակ չէ. այն գերազույն իմացականությունը, որը ղեկավարում է աշխարհը, այլևս ինքը՝ աշխարհը չէ. ես իզուր եմ բարձրացնում ու տանջում իմ միտքը՝ ըմբռնելու նրա անըմբռնելի էությունը։ Երբ մտածում եմ, որ նա է տալիս կյանք և աշխուժություն կենդանի մարմինները կառավարող, ապրող ու գործող գոյանյութին, երբ ինձ ասում էն, թե հոգին անմյութ է, և թե աստված մի ոգի է, ես վրդովվում եմ աստվածային էության այդ աղավաղման դեմ. որպես թե աստված ու իմ հոգին միևնույն

բնությունից լիներին. որպես թե աստված միակ բացարձակ էությունը չլիներ, միակ իսկապես գործողը, զգացողը, մտածողը, ինքնուրույն կամեցողը, և որից մենք ստանում ենք միտքը, զգացումը, եռանդը, կամքը, ազատությունը, լինելությունը: Մենք ազատ ենք, որովհետև նա այդպես է կամենում, ու նրա անբացատրելի էությունը մեր հոգու համար այն է, ինչ որ է մեր հոգին մեր մարմնի համար: Նա՞ է արդյոք ստեղծել նյութը, մարմինները, հոգիները, աշխարհը, այդ ես չգիտեմ: Ստեղծագործության գաղափարը ինձ շփոթեցնում է և իմ հասողությունից վեր է. ես դրան հավատում եմ այնքանով, որքանով ըմբռնում եմ. բայց ես գիտեմ, որ նա ստեղծել է տիեզերքն ու այն ամենը, ինչ գոյություն ունի, որ նա արել է ամեն ինչ, կարգավորել ամեն բան: Աստված հավիտենական է, անկասկած. բայց իմ միտքը մի՞թե կարող է ընդգրկել հավիտենականության գաղափարը: Ինչո՞ւ պետք է բավարարվեմ գաղափարազուրկ խոսքերով: Ես ըմբռնում եմ միայն, որ նա իրերից առաջ է և կլինի, ինչքան ժամանակ որ իրերը գոյություն կունենան և նույնիսկ ավելի հետո, եթե մի օր ամեն ինչ պետք է վերջանա: Թե մի գոյ, որին ես չեմ ըմբռնում, ստեղծում է ուրիշ գոյեր, դա միայն մութ է ու անհասկանալի. բայց որ գոյն ու անէությունը փոխադարձաբար վեր են ածվում մեկը մյուսին, սա արդեն բացահայտ անհեթեթություն է:

Աստված իմացական է, բայց ի՞նչպես: Մարդն իմացական է, երբ տրամաբանում է. իսկ գերագույն իմացականությունը կարիք չունի տրամաբանելու. նրա համար չկան ո՛չ նախադրյալներ, ո՛չ հետևանքներ, նույնիսկ՝ առաջադրություն. նա ուղղակի հայեցողական է, նա հավասարապես տեսնում է՝ ինչ որ կա, և՛ ինչ որ կարող է լինել. բոլոր ճշմարտությունները նրա համար սոսկ մի գաղափար են, ինչպես բոլոր վայրերը՝ մի կետ, բոլոր ժամանակները՝ մի րոպե: Մարդկային կարողությունը գործում է միջոցներով, երկնային կարողությունը՝ ինքն իրմով: Աստված կարողանում է, որովհետև կամենում է: Իր կամքից էլ ծնունդ է առնում իր ուժը: Ոչինչ այնպես բացահայտ չէ, քան այն, թե աստված բարի է. բայց մարդու բարությունը սերն է իր նմանների

նկատմամբ, իսկ աստծու բարությունը՝ համակարգության մեջ է, որովհետև համակարգությամբ է, որ նա պահպանում է այն, ինչ առկա է, յուրաքանչյուր մասը կապում է ամբողջին։ Աստված արդար է, ես դրանում համոզված եմ. այդ նրա բարության հետևանքն է. մարդկանց անարդարությունը իրենց գործն է և ոչ թե աստծու. բարոյական անկարգությունը, որը փիլիսոփաների աչքին նախախնամության ժխտումն է, ինձ համար հենց նրա գոյությունն է հաստատում։ Մարդու արդարությունը. կայանում է նրանում, որ յուրաքանչյուրին վերադարձնի այն, ինչ պատկանում է նրան, իսկ աստծու արդարությունը՝ որ յուրաքանչյուրից հաշիվ պահանջի նրան տրվածի համար։

Ես այս հատկությունները հայտնաբերեցի աստիճանաբար՝ առանց նրանց մասին բացարձակ գաղափար ունենալու, շնորհիվ պարտադիր հետևությունների և իմ դատողության լավ օգտագործման. բայց ես դրանք հաստատում եմ առանց հասկանալու, որ ըստինքյան նշանակում է ոչինչ չհաստատել։ Ես իզուր եմ ասում, թե աստված այսպիսին է, թե ես այդ զգում, ինքս ինձ ապացուցում եմ. այնպես էլ չեմ կարող ավելի լավ ըմբռնել, թե ինչու աստված այսպիսին է։

Վերջապես, ինչքան աշխատում եմ մտահայեցությամբ ընկալել նրա անհուն էությունը, այնքան ավելի քիչ եմ ըմբռնում նրան. բայց նա գոյություն ունի. այդ ինձ բավական է. ինչքան քիչ եմ նրան ըմբռնում, այնքան ավելի եմ պաշտում։ Ես նվաստանում եմ ու նրան ասում. «Ո՜վ էակների էակ, ես կամ, որովհետև դու կաս, անդադար քո մասին խոկալով, ես բարձրանում եմ դեպի իմ ակունքը։ Իմ դատողությունից օգտվելու ամենամեծ արժանիքն է՝ անէանալ քո առաջ. զգալ, որ քո մեծությունը ընկճում է ինձ՝, դա իմ մտքի հափշտակությունն է, իմ տկարության հմայքը։

Այսպես, այն բանից հետո, երբ զգայական իրերի և այն ներքին զգացման տպավորության տակ, որն ինձ մղում է պատճառները դատել իմ բնական իմաստությամբ, ես հետևցնում եմ ինձ համար կարևոր ճշմարտություններ. մնում է, որ ես այդ ճշմարտություններից քաղեմ իմ հետագա վարքագծի համար հարկավոր սկզբունքներն ու այն կանոնները,

որոնք ինձ որպես ուղեցույց կծառայեն՝ կատարելու իմ դերը երկրի վրա, համաձայն նրա դիտավորության, ով ինձ տեղավորել է այնտեղ։ Շարունակելով միշտ հետևել իմ մեթոդին, ես երբեք այս կանոնները չեմ վերցնում բարձր փիլիսոփայության սկզբունքներից, այլ դրանք գտնում եմ իմ սրտի խորքում, գրված բնության կողմից՝ անջնջելի տառերով։ Բավական է, որ խորհրդակցեմ ինքս ինձ հետ իմ անելիքի մասին, ապա այն ամենը, ինչ զգում եմ, որ լավ է, լավ է, այն ամենը, ինչ զգում եմ, որ վատ է, վատ է. խղճի հարցերը լավագույն ձևով լուծողը ինքը խղճմտանքն է, և միայն այն դեպքում, երբ սակարկության ենք նստում նրա հետ, մենք դիմում ենք նրբին դատողություններին։ Հոգատարությունների մեջ ամենաառաջինը մարդու՝ իր նկատմամբ հոգատարություն է, բայց քանի՞-քանի՞ անգամ մի արտաքին ձայն մեզ ասում է, որ մենք վատ ենք անում, երբ մեր լավը ապահովում ենք ի վնաս ուրիշների։ Երբեմն կարծում ենք, թե հետևում ենք բնության թելադրանքին, այնինչ դիմադրում ենք նրան. լսելով այն, ինչ նա ասում է մեր զգայարաններին, մենք արհամարհում ենք այն, ինչ ասում է մեր սրտին. ակտիվ էակը հնազանդվում է, իսկ պասիվը հրամայում։ Խիղճը հոգու ձայնն է, կրքերը՝ մարմնի։ Մի՞թե զարմանալի է, որ հաճախ այս երկու լեզուները միմյանց բացատրում են. այդ դեպքում նրանցից որի՞ն պիտի լսել։ Շատ անգամ դատողությունը մեզ խաբում է, մենք լիակատար իրավունք ունենք նրան մերժելու. բայց խիղճը մեզ երբեք չի խաբի. նա մարդու ճշմարիտ ուղեցույցն է. նա հոգու համար այն է, ինչ որ բնազդը՝ մարմնի համար[1].

---

[1] *Արդի փիլիսոփայությունը, որ ընդունում է միայն այն, ինչ բացատրում է, չի ուզում ընդունել այն դժվարիմաց հատկությունը, որ կոչվում է բնազդ, և որը թվում է, թե առաջնորդում է կենդանիներին, առանց որևէ արտաքին ծանոթության, դեպի մի ինչ-որ նպատակ։ Բնազդը, ըստ մեր ամենահմաստուն փիլիսոփաներից մեկի կարծիքի, մտածողության մասնավոր մի սովորություն է սոսկ, որը, սակայն, ձեռք է բերվում մտածելով։ Այնպես, ինչպես բացատրում է նա այս զարգացումը, պետք է եզրակացնել, որ երեխաներն ավելի են խորհում, քան չափահասները. սա մի տարօրինակ կարծիք է, որը չարժե քննության առնել։ Առանց այստեղ վիճելու այդ մասին, ես հարց եմ տալիս՝ ի՞նչ անուն տալ այն եռանդին, որով իմ շունը հետապնդում է խլուրդներին, որոնց չի ուտում, ի՞նչ անուն տալ այն համ-*

ով նրան հետևում է, հպատակվում է բնությանն ու երբեք չի վախենա մոլորվելուց: Այս կետը կարևոր է,— շարունակեց իմ բարերարը, տեսնելով, որ ես ուզում էի նրան ընդհատել.— Թույլ տվեք, որ մի քիչ ավելի կանգ առնեմ այդ հարցի լուսաբանման վրա:

Մեր գործողությունների ամբողջ բարոյականությունը դրանց մասին մեր ունեցած անփական դատողության մեջ է: Եթե ճիշտ է, որ լավը լավ է, նա այդպես էլ պետք է լինի մեր սրտի խորքում, ինչպես և մեր գործերում, և արդարության առաջին պարգևատրումն այն է, որ զգում ենք, թե արդարություն ենք գործադրում: Եթե բարոյապես լավը համապատասխանում է մեր բնությանը, միայն բարի լինելու դեպքում մարդը կարող է լինել մտքով առողջ և մարմնով ուժեղ: Եթե այդպիսին չէ, եթե մարդը բնականից չար է, նա չի կարող դադարել այդպիսին լինելուց առանց ինքնախաթարման, և բարությունը նրա մեջ անբնական մի արատ կլինի միայն: Ստեղծված՝ իր նմաններին վնասելու համար, ինչպես գայլը՝ իր զոհին պատառոտելու համար, մարդկային մարդը նույնքան այլասերված

բերությանը, որով նա նրանց բնի մոտ դարան մտած՝ սպասում է, երբեմն ամբողջ ժամերով, այն ճարպկությանը, որով նա նրանց բռնում է, բնից դուրս բերում և ապա սպանում ու թողնում այնտեղ. բայց պարզ է, որ ոչ ոք շանը չի սովորեցրել այդ ու չի ցույց տվել, թե այդտեղ խլուրդներ կան: Ինձ համար անբացատրելի է նաև, թե ինչու, երբ առաջին անգամ ես սպասեցի իմ շանը, նա կանգնեց վրա պատկեց գետնին, թաթերը ծալած, աղերսական ձևով, իմ գումը շարժելու համար, մի դիրք, որի մեջ հրկար չէր մնա, եթե, չգիջելով իր աղաչանքին, ես նրան խփեի այդ դրության մեջ: Ի՞նչ, մի՞թե իմ շունը, դեռևս այնքան փոքր, հազիվ ծնված, արդեն տիրացել էր բարոյական գաղափարների, մի՞թե գիտեր, թե ինչ բան է ներողամտությունն ու մեծահոգությունը. ստացած ի՞նչպիսի տեղեկությունների հիման վրա նա հույս ուներ ինձ հանդարտեցնել, ապավինելով իմ չափավորությանը: Աշխարհի բոլոր շները, միևնույն պայմաններում, մոտավորապես նույն ձևով կվարվեին. և այն, ինչ ասացի այստեղ, ամեն ոք կարող է ստուգել: Այն փիլիսոփաները, որոնք այնքան արհամարհանքով մերժում են բնազդի առկայությունը, թո՛ղ բարի լինեն բացատրելու այս իրողությունը զգացողությունների և դրանցից ստացվող ճանաչողությունների մի գործողությամբ. թո՛ղ այն բացատրեն ամեն մի խելոք մարդու բավարարող կերպով. այդ դեպքում ես այլևս ոչինչ չէի ունենա ասելու և երբեք չէի խոսի բնազդի մասին:

մի դազան կլիներ, ինչքան ողորմելի գայլը. և միայն առաքինությունն է, որ մեր մեջ խղճահարություն կարթնացներ։

Եկե՛ք դննենք մեր նևրքին աշխարհը, հրիտասարդ բարեկամս, մի կողմ թողած անհատական ամեն մի շահախնդրություն, և տեսնենք, թե մեր հակումները մեզ ուր են տանում։ Ո՞ր տեսարանն է մեզ ավելի շոյում՝ ուրիշի տառապանքների՞, թե երջանկության տեսարանը։ Ի՞նչն ենք մենք ավելի հաճույքով կատարում և այն կատարելուց հետո գոհունակություն զգում՝ բարի՞, թե չար գործը։ Թատերական ներկայացումներում ի՞նչն է ձեզ ամենից ավելի հետաքրքրում։ Գործված ոճիրնե՞րն են ձգտեցնել ձեզ դուր գալիս, դրանց պատժված հեղինակների վրա՞ եք արտասվում։ Բացի մեր շահից, ասում են նրանք, ոչինչ մեզ չի շահագրգռում. և ընդհակառակն, բարեկամության, մարդասիրության քաղցրությունը ամոքում է մեր վշտերը. նույնիսկ մեր հաճույքների մեջ մենք շատ միայնակ, շատ թշվառ կլինեինք, եթե չլիներ գեթ մեկը, որի հետ կարողանայինք դրանք բաժանել։ Եթե մարդիկ իրենց սրտում ոչ մի բարոյական զգացմունք չունեն, ո՞րտեղից է, ուրեմն, նրանց ոգևորությունը հերոսական գործերի հանդեպ, նրանց հիացքանչ սերը մեծ հոգիների նկատմամբ։ Առաքինության այս խանդավառությունը ի՞նչ կապ կարող է ունենալ մեր անհատական շահերի հետ։ Ինչո՞ւ ցանկանայի լինել իր փորոտիքը հոշոտող կատուն, քան թե հաղթական կեսար։ Վերացրե՛ք մեր սրտերից զեղեցկության այդ սերը, այդպիսով դուք կվերացնեք կյանքի ամբողջ հմայքը։ Այն մարդը, որի ստոր կրքերը՝ նրա անձուկ հոգու մեջ խեղդել են այդ սքանչելի զգացմունքները, որը շարունակ ինքն իր մեջ ամփոփվելով՝ հասել է այն բանին, որ մխմխալն ինքն իրեն է սիրում, այդ մարդը այլևս չի ոգևորվի, նրա ստոած սիրտը այլևս հրճվանքից չի բաբախի, գորովանքի քաղցր զգացմունքից երբեք չեն արտասվի նրա աչքերը, էլ ոչ մի բան նրան հաճույք չի պատճառի. այդ թշվառը այլևս չի զգա, չի ապրի։ Նա արդեն մեռած է։

Բայց, ինչքան էլ մեծ լինի չարերի թիվը երկրի վրա, քիչ են այնպիսի դիակնացած հոգիները, որոնք անզգայացած լինեն, բացի իրենց շահից, այն ամեն ինչի հանդեպ, որ արդար

է ու բարի։ Անարդարությունը մարդկանց հաճելի է այնքանով, որքանով նրանից օգտվում են. մնացյալ բոլոր դեպքերում ցանկանում են, որ անմեղը պաշտպանվի։ Երբ փողոցում կամ ճանապարհին տեսնում ենք բռնության կամ անարդարության որևէ դեպք, իսկույն ևեթ մեր սիրտը լցվում է բարկության ու ցասման զգացմունքով, որը մեզ դրդում է պաշտպան կանգնել ճնշվողին. բայց ավելի հզոր մի պարտականություն մեզ զսպում է, և օրենքները մեզ զրկում են անմեղությունը պաշտպանելու իրավունքից։ Ընդհակառակն, ինչքա՜ն սեր ու հիացմունք է նեղնչում մեզ գթության և վեհանձնության ամեն մի արարք։ Ո՞վ չի ասի ինքն իրեն. «Ինչքա՜ն կուզեի ես էլ այդպես անել»։ Անշուշտ, մեզ համար քիչ նշանակություն ունի, թե երկու հազար տարի առաջ մի մարդ չար է եղել կամ բարի, բայց և այնպես, մենք նույնքան հետաքրքրվում ենք հին պատմության անցուդարձերով, որպես թե դրանք կատարված լինեին մեր օրերին։ Ի՞նչ կարող են անել ինձ Կատիլինայի ոճիրները. մի՞թե վախենում եմ ես, որ նրա զոհը լինեմ։ Ուրեմն, ինչո՞ւ եմ նրանից այնպես սարսափում, ասես իմ ժամանակակիցը լիներ։ Մենք չարերին չենք ատում միայն նրա համար, որ մեզ վնասում են, այլև նրա համար, որ չար են։ Մենք ոչ միայն մեզ, այլև ուրիշների համար երջանկություն ենք ցանկանում, և ուրիշի երջանկությունը, երբ չի վնասում մեր երջանկությանը, ավելացնում է այն։ Վերջապես, մենք, հակառակ մեր կամքին, խղճում ենք դժբախտներին. երբ տեսնում ենք նրանց վիշտը, մենք էլ ենք տանջվում։ Ամենաայլասերված մարդն իսկ լիովին չի զրկված այդ հակումից, և հաճախ այդ հակումը նրան հակասության մեջ է դնում ինքն իր հետ, որովհետև զորեղ անգամ, որ կողոպտում է անցորդներին, ծածկում է խեղճերի մերկությունը, ամենադաժան մարդասպանն էլ պահում է վայր ընկնող ուշագնացին։

Խոսում են խղճի ձայնի մասին, որը ծածուկ պատժում է թաքուն ոճիրները և հաճախ դրանք հայտնաբերում։ Ավա՜ղ, մեզնից ո՞վ երբևիցե չի լսել այդ անախորժ ձայնը։ Մարդիկ խոսում են փորձառությամբ. և նրանք կցանկանային խեղդել այդ բռնակալ զգացումը, որը մեզ շատ է տանջում։ Եթե հպա-

տակվենք բնությանը, կտեսնենք, թե ինչպիսի մեղմությամբ է նա իշխում, և ինչպիսի հաճույք ենք զգում, նրան լսելուց հետո, երբ կարող ենք ինքներս մեր մասին լավագույն վկայությունը տալ։ Չար մարդը վախենում ու փախչում է ինքն իրենից, ուրախանում է ինքն իրենից ազատվելով, իր անհանգիստ աչքերը շուռ է ածում չորս կողմը և իրեն զվարճացնող մի բան է փնտրում. առանց դառն երգիծանքի, առանց խոցող ծաղրի՝ նա միշտ էլ տխուր կլիներ. հեգնող ծիծաղը նրա միակ հաճույքն է։ Ընդհակառակն, արդարի հաճույքը ներքին է. նրա ծիծաղը ոչ թե չարախնդության, այլ ուրախության ծիծաղ է, որի աղբյուրը իր մեջ է. նա մենակ նույնքան ուրախ է, ինչքան մարդկանց մեջ. նա իր բավականությունը չի ստանում իր հետ շփվողներից, այլ ինքն է այն նրանց պատճառում։

Մի հայացք նետեցե՛ք աշխարհի բոլոր ազգերի վրա. աչքի անցկացրեք բոլոր պատմությունները. բազում հակամարդկային ու արտառոց պաշտամունքների մեջ, բարքերի ու խառնըվածքների այնքան հսկայական տարբերությունների մեջ, դուք ամենուրեք կգտնեք արդարության ու պարկեշտության միևնույն գաղափարները, բարոյական միևնույն սկզբունքները, բարու ու չարի միևնույն ըմբռնումները։ Նախկին հեթանոսությունը ծնեց զարշելի աստվածներ, որոնց մենք կպատժեինք երկրի վրա որպես սրիկաների, և որոնք որպես գերագույն երջանկության տեսարան ներկայացնում էին միայն կատարվող ոճիրներ և հագեցվող կրքեր։ Բայց սրբազան իշխանությամբ օժտված մոլությունը իղուր էր իջնում հավիտենական կայանից. բնազդական բարոյականը նրան նետ էր մղում մարդկային սրտից։ Արամազդի անառակությունները փառաբանելով հանդերձ, մարդիկ հիանում էին Քսենոկրատի ժուժկալությամբ. պարկեշտ Լուկրեցիան պաշտում էր լպիրշ Վենուսին. անվեհեր Հռոմայեցին զոհ էր մատուցում Վախի աստվածուհուն. նա ոգեկոչում էր այն աստծուն, որը հաշմանդամ էր արել իր հորը, և անտրտունջ մեռնում էր իր աստծու ձեռքով։ Ամենաքամահրելի աստվածներին ծառայել են ամենամեծ մարդիկ։ Բնության սրբազան ձայնը, որ աստվածների ձայնից ավելի ուժեղ է, իշխում էր

երկրի վրա, և թվում էր, թե նա երկինքը թողել էր ոճրին ու հանցագործներին։

Հոգիների խորքում, ուրեմն, գոյություն ունի արդարության ու առաքինության բնածին մի սկզբունք, որի շնորհիվ, հակառակ մեր սեփական համոզումների, մենք դատում ենք թե՛ մեր և թե՛ ուրիշների գործերը որպես բարի կամ չար. այդ սկզբունքն էլ հենց ես անվանում եմ խիղճ։

Բայց տեսնում եմ, թե այդ բառի դեմ ինչպես են ամեն կողմից բարձրանում կեղծ իմաստունների բողոքները. «Մանկական վրիպումներ, դաստիարակության նախապաշարմունքներ,— ձչում են բոլորը միաբերան։ — Մարդկային մտքում ոչինչ չկա, որ ձևք բերված չլինի փորձառությամբ, և մենք ամեն ինչի մասին դատում ենք մեր ստացած մտքերով։ Նրանք ավելին են անում. համարձակվում են ժխտել բոլոր ժողովուրդների միջև առկա բացահայտ ու համայնական դաշինքը, և մարդկանց դատողության ցայտուն միաձևականության որպես հակափաստ, նրանք խավարի մեջ փնտրում են որևէ մշուշապատ ու միայն իրենց ծանոթ մի օրինակ, կարծես բնության՝ բոլոր հակումները ոչնչացած լինեին մի ժողովրդի այլասերումով և թե՝ երբ հրեշներ կան, ցեղը այլևս ոչնչություն է։ Բայց ինչո՞ւ է չարչարվում ակնապիտակ Մոնտեյնը, աշխարհի որևէ անկյունում երևան բերելու համար արդարության գաղափարներին հակասող ինչ-որ սովորություն։ Ինչո՞ւ է նա ամենախորհրդածելի ճանապարհորդներին տալիս այն հանձնարարությունը, որը մերժում է տալ ամենահուշակավոր գրողներին։ Մի քանի անորոշ ու տարօրինակ սովորություններ, հիմնված մեզ անծանոթ տեղական պատճառների վրա, մի՞թե կարող են չնչին բոլոր ժողովուրդների համագործակցությունից բխող. ընդհանուր հետևությունը, ժողովուրդներ, որոնք միմյանց հակադրվում են բոլոր հարցերում, բայց համաձայն են այս միակ կետում։ Ո՛վ Մոնտեյն, դու որ պարծենում ես քո անկեղծությամբ ու ճշմարտացիությամբ, եղի՛ր անկեղծ ու ճշմարտախոս, եթե մի փիլիսոփա կարող է երբևէ այդպիսին լինել, և ասա ինձ, թե արդյոք կա՞ աշխարհում մի երկիր, որտեղ ոճիր համարվի պահել իր հավատքը, լինել ներողամիտ, բարեգործ, վե-

հանձն, որտեղ բարի մարդը արհամարհվի, իսկ չարանենգը հարգվի։

Ամեն ոք, ասում են, սատարում է հասարակության բարիքին՝ հօգուտ իրեն։ Բայց այդ ի՞նչպես է, որ արդարը նույնն է անում՝ ի վնաս իրեն։ Ի՞նչ է նշանակում դեպի մահը գնալ իր շահի համար։ Անկասկած, ամեն ոք իր բարիքի համար է աշխատում, բայց, եթե չկա մի բարոյական բարիք, որը պետք է հաշվի առնել, ապա միայն չարերի գործողությունները կարող են բացատրվել անձնական շահով. և նույնիսկ կարելի է հավատալ, որ ոչ ոք չի փորձի ավելի հեռուն գնալ։ Մի շատ գարշելի փիլիսոփայություն կլիներ այն փիլիսոփայությունը, որը մեզ արգելք կլիներ առաքինի գործեր կատարելու, որը մեզ կստիպեր, արդարանալու համար, ստոր մտադրություններ ու արատավոր պատճառներ վերագրել այդ գործերին և նվաստացնել Սոկրատին, վատաբանել Ռեգուլուսին։ Եթե նման վարդապետություններ երբևիցե արմատավորվեին մեր մեջ, բնության, ինչպես նաև բանականության ձայնը անդուլ կպատճառաներ այդ վարդապետությունների դեմ և թույլ չէր տա, որ նրանց կողմնակիցներից որևէ մեկը իր բարեմտությունը որպես չքմեղանք բերեր այդ հարցում։

Ես այստեղ նպատակ չունեմ մտնել մետաֆիզիկական վեճերի մեջ, որոնք վեր են թե՛ իմ և թե՛ ձեր հասկողությունից, և որոնք, իրականում, ոչնչի չեն հանգեցնի։ Ես ձեզ արդեն ասել եմ, որ ձեզ հետ չեմ ուզում փիլիսոփայել, այլ ձեզ օգնել խորհրդակցելու ձեր սրտի հետ։ Եթե աշխարհի բոլոր փիլիսոփաները էլ ապացուցեին, թե ես սխալվում եմ, ինձ բավական է, որ դուք զգայիք, թե ես իրավացի եմ. դրանից ավելին ինձ հարկավոր չէ։

Դրա համար պետք է միայն, որ դուք գիտենաք տարբերել մեր յուրացրած գաղափարները մեր բնական զգացմունքներից, որովհետև մենք անհրաժեշտորեն զգում ենք նախքան ճանաչելը. և քանի որ մենք չենք սովորում կամենալ մեր լավն ու խուսափել մեր վատից, այլ այս կամքն ստանում ենք բնությունից, այդպես էլ սերը դեպի բարին և ատելությունը դեպի չարը մեզ համար նույնքան բնական են, ինչքան մեր անձի սերը։ Դիտակցության գործողությունները դատողու-

թյուններ չեն, այլ զգացմունքներ. չնայած մեր բոլոր մտքերը դրսից են գալիս, այն զգացմունքները, որ գնահատում են այդ մտքերը, մեր մեջ են, ու նրանց միջոցով է միայն, որ ճանաչում ենք այն համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը, որ գոյություն ունի մեր ու այն իրերի միջև, որոնք պետք է փնտրենք կամ որոնցից պետք է խուսափենք։

Գոյություն ունենալ ինքներս մեզ համար՝ դա զգալ է. մեր զգացողությունը անհերքելիորեն ավելի հին է մեր իմացականությունից, և մենք, անկասկած, մտքերից առաջ զգացմունքներ ենք ունեցել[1]։ Ինչ էլ որ լինի մեր գոյության պատճառը, նա հոգատար է եղել մեր պահպանմանը, մեզ տալով մեր բնությանը հարմար զգացմունքներ. համենայն դեպս, չի կարելի ժխտել, որ գոնե այս վերջինները բնածին են։ Անհատի համար այդ զգացմունքներն են՝ անձի սերը, ցավի վախը, մահվան սարսափը, բարեկեցության ցանկությունը։ Բայց եթե, ինչ որ կասկածից վեր է, մարդը ընկերասեր է իր բնությամբ, կամ գոնե ծնված է սոցիալական լինելու, այդպիսին կարող է լինել միայն ուրիշ բնածին զգացմունքներով, որոնք առնչվում են իր տեսակի հետ, որովհետև, եթե նկատի ունենանք լոկ ֆիզիկական կարիքը, սա անպայման կցրի մարդկանց, փոխանակ նրանց ի մի հավաքելու։ Դեպի իր անձը և իր նմանները կրկնակի հարաբերությունից կազմված բարոյական սիստեմից է, որ ծնվում է խղճի թելադրանքը։ Բարին ճանաչել՝ չի նշանակում սիրել այն. մարդն ի բնե ծանոթ չէ բարուն, բայց հենց որ դատողությունը ճանաչել է տալիս այն, իր խիղճը թելադրում է սիրել նրան. ահա այդ զգացումն է բնածին։

---

[1] *Որոշ տեսակետից մտքերն զգացմունքներ են, իսկ զգացմունքները՝ մտքեր։ Երկու անուններն էլ պատշաճում են ամեն մի բմբռնման, որ մեզ զբաղեցնում է թե՛ իր առարկայով և թե՛ մեզնով, որ կրում ենք այդ առարկայի տպավորությունը, և այդ տպավորության տեսակն է միայն որոշում նրա անունը։ Այն դեպքում, երբ նախապես հետաքրքրվելով առարկայով, մենք մեր մասին մտածում ենք սոսկ ռեֆլեքսով, դա մի միտք է. ընդհակառակն, երբ ստացված տպավորությունը գրավում է մեր առաջին ուշադրությունը, և առարկայի մասին մտածում ենք միայն ռեֆլեքսով, դա մի զգացմունք է։*

Ես չեմ կարծում, ուրեմն, բարեկա՛մս, որ անհնար լինի մեր բնության հետևանքներով բացատրել խղճի անմիջական պատճառը՝ բանականությունից անկախ։ Եվ նույնիսկ դրա անհնարինության դեպքում այդ բացատրության կարիքը չէր լինի, քանի որ նրանք, ովքեր ժխտում են ամբողջ մարդկային ցեղի կողմից ընդունված ու ճանաչված այս պատճառը, չեն ապացուցում, թե այն գոյություն չունի, այլ բավարարվում են սոսկ այն հավաստելով. իսկ երբ մենք հաստատում ենք, որ այն գոյություն ունի, ժխտողների չափ հիմնավորված ենք և, բացի այդ, ունենք նաև ներքին վկայությունն ու խղճի ձայնը, որն անառարկելի է։ Եթե դատողության առաջին ցոլքերը մեզ շլացնում են և առաջին հերթին իրերը խառնում մեր հայացքի դեմ, պետք է սպասենք, որ մեր տկար աչքերը վերաբացվեն և կրկին զորանան. շուտով այդ միևնույն իրերը մենք դարձյալ կտեսնենք դատողության լույսի տակ այնպես, ինչպես մեզ սկզբում ցույց էր տալիս բնությունը. կամ ավելի շուտ՝ պետք է լիննենք ավելի պարզ ու նվազ անամիտ, սահմանափակվենք այն առաջին զգացմունքներով, որ մենք ստանում ենք մեր մեջ, քանի որ ուսումը մեզ, եթե չի մոլորեցրել, միշտ էլ կտանի ետ՝ դեպի այդ զգացմունքները։

Խի՛ղճ, խի՛ղճ, աստվածային բնազդ, անմահ ու երկնային ձայն, վստահելի առաջնորդ՝ տգետ ու սահմանափակ, բայց իմաստուն ու ազատ մի էակի, բարու ու չարի անսխալական դատավոր, որ մարդուն նմանեցնում ես աստծուն. դու ես նրա բնությունը դարձնում գերազանց և գործերը՝ բարոյական։ Առանց քեզ ես իմ մեջ ոչինչ չեմ զգում, որ ինձ բարձրացներ անասուններից վեր, բացի այն տխուր առանձնաշնորհությունից՝ մոլորվելու սխալից սխալ մի անկարգ հասկացողության ու անսկզբունք դատողության օգնությամբ։

Փառք տիրոջ, մենք ահա ազատված ենք փիլիսոփայության այդ ահռելի ապարատից. մենք կարող ենք մարդ լինել՝ առանց գիտնական լինելու. ստիպված չլինելով մեր կյանքն սպառել մորալի ուսումնասիրությամբ, մարդկային կարծիքների այս անսահման լաբիրինթոսի մեջ, նվազագույն զոհողությամբ, մենք ավելի ապահով մի առաջնորդ ունենք։ Բայց բավական չէ այդ առաջնորդի առկայությունը, պետք է ճա-

նայել ու հետևել նրան։ Եթե նա դիմում է բոլոր սրտերին, ինչո՞ւ այդքան քչերն են նրան լսում։ Է՛հ, որովհետև նա մեզ հետ խոսում է բնության լեզվով, իսկ մեր շուրջն ամեն ինչ մեզ մոռանալ է տալիս այդ լեզուն։ Ինքնիշխողը երկչոտ է, նա սիրում է առանձնություն ու խաղաղություն, աշխարհիկ կյանքն ու աղմուկը նրան սարսափեցնում են. այն նախապաշարումները, որոնցից բխեցնում են այն, իր ամենադաժան թշնամիներն են. նա կամ փախչում է նրանցից, կամ լռում է նրանց առաջ. նրանց աղմուկը խեղդում է իր ձայնը ու չի թողնում լսելի լինել. մոլեռանդությունը համարձակվում է կեղծել նրան և ոճրի մղել նրա անունից։ Վերջապես, շարունակ դիմադրության հանդիպելով, նա վհատվում է, այլևս չի խոսում մեզ հետ, չի պատասխանում մեզ, և, նրա նկատմամբ այնքան երկարատև արհամարհանքից հետո, նույնքան դժվար կլիներ նրան ետ կանչելը, որքան դժվար էր եղել վտարելը։

Ինչքա՜ն եմ հոգնել ես իմ որոնումների մեջ՝ ներսումս զգացած սառնությունից։ Ինչքա՜ն անգամներ տխրությունն ու ձանձրույթը, իրենց թույնը թափելով իմ առաջին խոկումների վրա, սրանք ինձ համար անտանելի են դարձրել։ Ճշմարտի սերը միայն մի թույլ ու գաղջ եռանդ էր գտնում իմ ցամաքած սրտում։ Ինքս ինձ ասում էի. «Ինչո՞ւ տանջվել փընտրելու համար մի բան, որը գոյություն չունի։ Բարոյական լավը ցնորք է. միայն զգայությունների տված հաճույքներն են լավ»։ Օ՜, երբ մի անգամ մարդ կորցնում է հոգեկան հաճույքների ճաշակը, ինչքա՜ն դժվար կլինի վերագտնել այն։ Է՛լ ավելի դժվար է այն ձեռք բերել, երբ բնավ չի ունեցել։ Եթե աշխարհում գոյություն ունենար քիչ թե շատ դժբախտ մի մարդ, որն իր ամբողջ կյանքում կատարած չլիներ ոչ մի այնպիսի գործ, որի հիշատակումը կարողանար ինքնաբավականություն և ապրելու հաճույք զգալ, այդ մարդն անկարող կլիներ երբևէ ինքն իրեն ճանաչել. և, չիմանալով, թե ինչ ձևով պետք է բարի լինի, նա հարկադրված չար կմնար և հավիտենապես դժբախտ կլիներ։ Բայց մի՞թե կարծում եք, թե ամբողջ աշխարհում կարող է գտնվել այնքան այլասերված մի մարդ, որի սիրտը երբևէ ենթարկված չլինի բարիք գործելու փորձությանը։ Այդ փորձությունը այնքան քաղցր ու

այնքան բնական է, որ անհնար է ամեն անգամ նրան դիմադրել. և լոկ մի անգամ նրա պատճառած հաճույքի հիշատակը բավական է անդադար այն վերհիշելու համար: Դժբախտաբար, սկզբում դժվար է բավարարել այդ փորձությանը. հազար ու մի պատճառներ կան՝ ընդդիմանալու մեր սրտի պահանջներին. սխալ հասկացված զգուշավորությունը նրան սեղմում է մարդկային եսի սահմաններում. շատ մեծ ջանք ու կորով է հարկավոր այդ սահմաններն անցնելու համար: Բարիք անելու հաճույքը՝ բարիք արած լինելու վարձատրությունն է. այդ վարձատրությունը ձեռք են բերում միայն նրան արժանի լինելուց հետո: Ոչինչ այնպես սիրելի չէ, որքան առաքինությունը: բայց պետք է այն վայելած լինել՝ հասկանալու համար, որ նա իրոք այդպիսին է: Որբ կամենում ենք այն ընկալել, առակի Պրոտեոսի նման նա նախ ընդունում է բազմաթիվ զարհուրելի ձևեր և, ի վերջո, իր իսկական տեսքով երևում է միայն նրանց, ովքեր երբեք ձեռքից բաց չեն թողնում այն:

Անընդհատ դիմադրությանը հանդիպելով մի կողմից՝ իմ բնական զգացմունքների, որոնք խոսում էին հանուն համապատասխան օգուտի, մյուս կողմից՝ իմ բանականության, որ ամեն ինչ ինձ էր վերապահում, ես ամբողջ կյանքս կատարելության այդ անվերջ երկընտրանքի մեջ՝ գործելով վատը, սիրելով բարին, միշտ հակասելով ինքս ինձ, եթե նոր իմացություններ չլուսավորեին իմ սիրտը, եթե ճշմարտությունը, որ հաստատեց իմ կարծիքները, չապահովեր նաև իմ վարքագիծը և ներդաշնակություն չհաստատեր իմ մեջ: Իզուր ենք ցանկանում առաքինություն հաստատել սոսկ բանականությամբ: Իսկ ի՞նչպիսի ամուր հիմք կարող ենք տալ նրան: Առաքինությունը, ասում են, կարգի սերն է: Բայց այդ սերը մի՞թե ես կարող եմ կամ պարտավոր եմ գերադասել իմ բարեկեցության սիրուց: Ո՛ր ինձ տան բավարար ու հստակ մի պատճառաբանություն այն գերադասելու համար: Իրականում իմ առարկողների կարծեցյալ սկզբունքը մի պարզ բառախաղ է, որովհետև ես էլ կարող եմ ասել, որ մոլությունը կարգի սերն է՝ տարբեր առումով վերցրած: Այնտեղ, որտեղ կա զգացմունք և միտք, միշտ էլ գոյություն ունի մի բարոյա-

կան կարգ։ Տարբերությունն այն է, որ բարին իրեն հարմարեցնում է ամբողջին, իսկ չարը ամբողջը հարմարեցնում իրեն։ Վերջինը իրեն դարձնում է ամեն ինչի կենտրոնը, մյուսը չափում է իր շառավիղն ու մնում շրջագծի մեջ։ Այս դեպքում նա տեղ է գրավում համաձայն ընդհանուր կենտրոնի, որ աստվածն է, ու համաձայն բոլոր համակենտրոն շրջագծերի, որոնք արարածներն են։ Առանց աստծու առկայության, միայն չարը կլիներ խելամիտ, իսկ բարին՝ անմիտ։

Ձավա՛կս, երանի մի օր զգայիք, թե ինչպիսի բեռից ենք ազատվում, երբ, համոզվելով մարդկային կարծիքների ունայնությանը և ճաշակելով կրքերի դառնությունը, վերջապես մեզ կգտնենք բոլորովին մոտ իմաստության ուղուն, որ այս կյանքի աշխատանքների վարձատրությունն է և աղբյուրը այն երջանկության, որի համար ամեն հույս կորցրել էինք։ Բնական օրենքի բոլոր պարտավորությունները, որ մարդկային անարդարությունը համարյա ջնջել էր իմ սրտից, նորից պատկերանում են այնտեղ հանուն հավիտենական այն արդարության, որ ինձ վրա դրել է այդ պարտավորությունները և տեսնում է, թե ինչպես եմ կատարում դրանք։ Ես այլևս իմ մեջ զգում եմ միայն այն մեծ էակի գործն ու գործիքը, որը բարին է ցանկանում, բարին է կատարում և պիտի կատարի իմ բարին՝ շնորհիվ իմ և իր կամքի համագործակցության, ինչպես և իմ ազատության լավագույն օգտագործման. ես համակերպվում եմ այն կարգին, որ նա է հաստատել, վստահ լինելով, որ մի օր ինքս էլ կօգտվեմ այդ կարգից ու այնտեղ կգտնեմ իմ երջանկությունը. և իրոք, կա՞ միթե ավելի քաղցր երջանկություն, քան լինել մի այնպիսի կարգի մեջ, որտեղ ամեն ինչ լավ է։ Տանջվելով ցավից, ես այն տանում եմ համբերությամբ, մտածելով, որ դա անցողիկ է ու գալիս է մի մարմնից, որը բնավ ինձ չի պատկանում։ Թեև ես մի լավ գործ եմ անում առանց վկայի, գիտեմ, որ այն հայտնի է լինում. և այս աշխարհում իմ ունեցած վարքագիծը կգրանցեմ մյուս աշխարհի համար։ Որևէ անարդարության ենթարկվելիս ես ինձ ասում եմ. «Այն արդար էակը, որ ղեկավարում է ամեն ինչ, անպայման ինձ կհատուցի դրա համար. իմ մարմնի կարիքները, իմ կյանքի թշվառություն-

ները մահվան գաղափարը ինձ համար ավելի տանելի են դարձնում։ Այդպիսով, երբ կարիք լինի ամեն ինչ թողնել, ես ավելի քիչ կապեր կունենամ խզելու»։

Ինչո՞ւ է իմ հոգին հպատակվել իմ զգայություններին ու շղթայվել այս մարմնին, որ նրան ստրկացնում է ու նեղում։ Ոչինչ չգիտեմ. աստծու հրամաններն ինձ համար անմեկնելի են։ Բայց կարող եմ, առանց հավակնության, համեստ ենթադրություններ անել։ Ինքս ինձ ասում եմ. «Եթե մարդու միտքը ազատ և անաղարտ մնար, ի՞նչ կլիներ նրա արժանիքը՝ սիրելով ու հետևելով հաստատված կարգին, որը խանգարելու ոչ մի շահագրգռություն չէր ունենա։ Ճիշտ է, նա երջանիկ կլիներ, սակայն նրա երջանկությանը կպակասեր ամենավսեմ աստիճանը, առաքինության փառքն ու իր անձի բարի վկայությունը. նա կլիներ միայն հրեշտակների նման, մինչ առաքինի մարդը, անտարակույս, նրանցից ավելին կլինի։ Հոգին մահկանացու մարմնին միացած լինելով որքան ուժեղ, նույնքան անիմանալի կապերով, այդ մարմնի պահպանման հոգսը նրան դրդում է ամեն ինչ դրան վերապահել և տալիս է նրան ընդհանուր կարգին հակառակ մի շահագրգռություն, թեև ընդունակ է տեսնել ու սիրել այդ կարգը. այս դեպքում է, որ իր աղատության լավագույն օգտագործումը կհանդիսանա միաժամանակ և՛ արժանիք, և՛ վարձատրություն, և նա իր համար կպատրաստի անայլայլ մի երջանկություն, պայքարելով իր երկրային կրքերի դեմ ու պահելով իր սկզբնական կամքը։

Քանի որ, նույնիսկ, նվաստացման այն վիճակում, որի մեջ գտնվում ենք այս կյանքի ընթացքում, մեր բոլոր սկզբնական հակումները օրինական են, եթե մեր բոլոր արատները բխում են մեզնից, ինչո՞ւ ենք դժգոհում, որ նրանք գերել են մեզ. ինչո՞ւ ենք մեղադրում իրերի ստեղծողին այն չարիքների համար, որ մենք ենք մեզ պատճառում, և այն թշնամիների համար, որոնց մենք ինքներս ենք զինում մեր դեմ։ Ա՜հ մի՛ փչացնենք մարդուն. նա միշտ բարի կլինի՝ առանց դժվարության, և միշտ երջանիկ՝ առանց խղճահարության։ Այն մեղավորները, որոնք ուզում են հավատացնել, թե հարկադրված են եղել ոճիր գործելու, նույնքան ստախոս են, ինչ-

քան չար. մի՞թե չեն տեսնում, որ այն տկարությունը, որից դանդաղում են, իրենց սեփական գործն է, որ առաջին ալլասերումը իրենց կամքից է գալիս, որ շարունակ կամենալով տեղի տալ իրենց փորձություններին, նրանք, ի վերջո, տեղի են տալիս հակառակ իրենց կամքին ու դրանք դարձնում անդիմադրելի: Անշուշտ, այլևս իրենցից չի կախված չար և թույլ լինել, բայց նրանցից էր կախված չդառնալ այդպիսին: Օ՜, ինչպիսի՜ հեշտությամբ մենք կմնայինք մեր և մեր կրքերի տերը, նույնիսկ այս կյանքի ընթացքում, եթե նախքան մեր սովորությունները ձեռք բերելը, երբ մեր միտքը տակավին նոր է սկսում բացվել, մենք կարողանայինք նրան զրաղեցնել այն իրերով, որոնց պետք է ճանաչի, դնահատելու համար նրանց, որոնց չի ճանաչում. եթե մենք անկեղծորեն ցանկանայինք լուսավորվել ոչ թե ուրիշների աչքին փայլելու համար, այլ լինելու իմաստուն ու բարի՝ համաձայն մեր բնության, լինելու երջանիկ՝ կատարելով մեր պարտականությունները: Այս ուսմունքը մեզ թվում է ծանր ու ձանձրալի, որովհետև մենք նրա մասին մտածում ենք միայն այն ժամանակ, երբ արդեն այլասերված ենք մոլությունից և արդեն անձնատուր ենք եղել մեր կրքերին: Մենք ուրախ ենք մեր դատողություններն ու մեր գնահատանքը՝ նախքան բարին ու չարը ճանաչելը և ապա, ամեն ինչում նվնվալով այդ սխալ չափանիշից, ոչ մի բանի իր իսկական արժեքը չենք տալիս:

Որոշ հատակում, ափսոս, որ դեռևս ազատ է, բայց հրատապ, անհանգիստ, ծարավի երջանկության, որը չի ճանաչում, սկսած է այն փնտրել մի զարմանալի անվստահությամբ և, խաբվելով զգայություններից, ի վերջո կանգ է առնում նրա փուչ պատկերի վրա, կարծելով այն գտնել այնտեղ, որտեղ չկա: Այս պատրանքների՞ ինձ համար շատ երկար տևեցին: Ավա՜ղ, ես դրանք շատ ուշ ճանաչեցի ու չկարողացա բոլորովին ոչնչացնել. նրանք կտևեն այնքան ժամանակ, ինչքան նրանց ծնող մահկանացու մարմինը: Գոնե նրանք զուր տեղն են ինձ հրապուրում, որովհետև այլևս ինձ չեն կարող մոլորեցնել. ես ճանաչում եմ նրանց իսկությունը. հսկում ու արհամարհում եմ այդ պատրանքները, դրանք համարելով ոչ թե իմ երջանկության պատճառը, այլ դրա խո-

չընդոտոր։ Ես ցանկանում եմ այն պահը, երբ ազատվելով մարմնի կապանքներից՝ կդառնամ ես ինքս՝ առանց հակասության, անբաժանելի, երջանիկ լինելու համար չունենալով ուրիշ կարիք՝ բացի ինձնից. մինչև այդ ես երջանիկ եմ՝ սկսած այս կյանքից, քանի որ քիչ եմ հաշվի առնում նրա բոլոր չարիքները, նրան համարում եմ համարյա օտար իմ հույսեր, և այն ամբողջ իսկապես լավը, որ կարող եմ ստանալ, կախված է ինձնից։

Նախորոք բարձրանալու համար, ինչքան կարելի է, դեպի երջանկության, ուժի և ազատության այդ վիճակը, ինձ վարժեցնում եմ վսեմ մտահայեցություններին։ Ես խոկում եմ արեգների համակարգության մասին, ոչ թե դատարկ սիսեմներով այն բացատրելու, այլ անդադար դրանով հիանալու համար, նրա մեջ զգացվող իմաստուն հեղինակին փառավորելու համար։ Ես զրուցում եմ նրա հետ, իմ ամբողջ կարողություններով լցվում նրա աստվածային էությամբ. ես խանդաղատանքով եմ համակվում նրա բարերարություններից և օրհնում նրան իր պարգևների համար, բայց չեմ խնդրում։ Ի՞նչ կարող էի խնդրել. որ ինձ համար փոխե՞ր իրերի ընթացքը, որ իմ օգտին հրաշքնե՞ր գործեր։ Ես, որ ամենից ավելի պետք է սիրեմ նրա իմաստությամբ հաստատված ու նրա նախախնամությամբ պահվող կարգը, կարո՞ղ եմ ցանկանալ, որ այդ կարգը խանգարվի ինձ համար։ Ո՛չ, այս հանդուգն ցանկությունը ավելի շուտ արժանի է պատժի, քան թե լսելի լինելու։ Ես նրանից չեմ էլ խնդրի լավություն անելու կարողությունը. ինչո՞ւ նրանից խնդրել այն, ինչ արդեն ինձ տվել է։ Չէ՞ որ նա ինձ տվել է գիտակցություն՝ սիրելու բարին, զգայություն՝ այն ճանաչելու, ազատություն՝ այն ընտրելու։ Եթե ես չարիք եմ անում, ոչ մի ներման արժանի չեմ։ այդ անում եմ, որովհետև այդպես եմ կամենում. նրանից պահանջել, որ փոխի իմ կամքը, դա նշանակում է պահանջել այն, ինչ ինքն է պահանջում ինձնից. նշանակում է ցանկանալ, որ նա կատարի իմ գործը, իսկ ես ստանամ վարձքը. իմ վիճակից գոհ չլինել՝ նշանակում է այլևս չկամենալ մարդ լինել, ցանկանալ եղածից տարբեր մի բան, ցանկանալ անկարգություն ու չարիք։ Արդարության ու ճշմար-

տուիչյան աղբյուր, ողորմած ու բարի աստվա՛ծ, դնպի քեզ իմ ունեցած վստահութիւն մեջ սրտիս գերագույն ցանկութիւնն այն է, որ քո՛ կամքը լինի։ Քո կամքին միացնելով իմը, ես անում եմ այն, ինչ դու ես անում, ես հավանում եմ քո բարութիւնը. հավատում եմ, թե նախօրոք բաժանում եմ այն գերագույն երջանկութիւնը, որ նրա վարձատրութիւնն է։

Այն իրավացի անվստահութիւն մեջ, որ տածում եմ ինքս ինձ, միակ բանը, որ խնդրում եմ նրանից, կամ ավելի շուտ՝ սպասում եմ նրա արդարադատութիւնից, այդ այն է, որ ուղղի իմ սխալը, եթե մոլորվեմ, և եթե այդ սխալը ինձ համար վտանգավոր է։ Ուղղամտութիւնն ինձ ստիպում է ասել, որ ես ինձ անսխալական չեմ համարում. իմ կարծիքները, որոնք ինձ ամենից ճշմարիտ են թվում, գուցե կույնքան սուտեր են. քանդի ո՞ր մարդը չի կառչում իր կարծիքներին, և ոչ բոլոր մարդիկ են համաձայն ամեն ինչում։ Թեև ինձ մոլորեցնող պատրանքի աղբյուրը ես ինքս եմ, բայց միայն գերագույն էակն է, որ կարող է ինձ բուժել դրանից։ Ես արեցի ինչ որ կարող էի՝ ճշմարտութիւնը հասնելու համար։ Բայց նրա ակունքը շատ է բարձր. երբ իմ ուժերը չեն բավարարում ավելի հեռուն գնալու, ես ինչո՞վ եմ մեղավոր. Քո՛ղ ճշմարտութիւնը ինքն ինձ մոտ գա»։

.

Բարի Բահանան *խոսել էր խիստ ոգևորված. նա հուզված էր, ինչպես և ես։ Ինձ թվում էր, թե լսում էի աստվածային Օրֆեին՝ առաջին օրհներգերը երգելիս և աստվածների պաշտամունքը մարդկանց սովորեցնելիս։ Այնուամենայնիվ, ես մի շարք առարկութիւններ ունեի անելու. բայց ոչ մեկը չարի, որովհետև նրանք սակավ հիմնավորված էին, քան շփոթեցնող, իսկ համոզվածութիւնը նրա կողմն էր։ Քանի նա խոսում էր իր խղճին անսալով, իմը կարծես ինձ հաստատում էր նրա ասածները։*

«Այն զգացմունքները, որ դուք արտահայտեցիք,— ասացի նրան,— ինձ նոր են թվում ավելի շուտ նրանով, որ, ըստ ձեր խոստովանութեան, դուք անգիտանում եք, քան նրանով, որ ասում եք, թե հավատում եք։ Ես դրանց մեջ մոտավորապես

տեսնում եմ դեիզմը կամ բնական կրոնը, որ քրիստոնյաները կարծես շփոթում են անաստվածության կամ անկրոնության հետ, որը բոլորովին հակառակ վարդապետություն է։ Բայց, իմ հավատքի ներկա վիճակում, ձեր կարծիքներն ընդունելու համար ես պետք է ավելի շուտ բարձրանամ, քան թե իջնեմ. և ես գտնում եմ, որ դժվար է մնալ ճշտիվ այն կետում, որ-ս ևդուք եք, քանի որ այնքան իմաստուն չեմ, որքան դուք։ Գոնե նույնքան անկեղծ լինելու համար, ուզում եմ ինքս ինձ հետ խորհրդակցել։ Ներքին զգացմունքն է, որ ինձ պիտի առաջնորդի ձեր օրինակով. դուք ինքներդ ինձ սովորեցրիք, որ երկար ժամանակ լուսյան դատապարտելուց հետո հնա-րավոր չէ այդ զգացմունքը այնքան շուտ կյանքի կոչել։ Ես ձեր խոսքերը տանում եմ իմ սրտում. պետք է որ խոկամ նրանց վրա։ Եթե, լավ խորհրդածելուց հետո, ես նույնքան հա-մոզված լինեմ, որքան դուք եք, հանձին ձեզ կունենամ իմ վերջին առաքյալը և կդառնամ ցմահ ձեր նորահավատը։ Բայց և այնպես, շարունակեցե՛ք ինձ ուսուցանել. դուք ինձ ասա-ցիք միայն կեսն այն ամենի, ինչ ես պետք է գիտենամ։ Պատ-մեցե՛ք ինձ հայտնության, սուրբ գրքերի, այն մութ կրոն-ների մասին, որոնց մեջ ես թափառում եմ մանկությունից սկսած՝ առանց կարենալու ո՛չ ըմբռնել դրանք, ո՛չ հավատալ, չիմանալով ինչ անել՝ ընդունե՞լ թե մերժել»։

«Այո, զավա՛կս,— ասաց քահանան՝ ինձ գրկելով,— ես կվերջացնեմ իմ միտքը. չեմ ուզում ձեզ կիսով չափ բաց արած լինել իմ սիրտը. բայց անհրաժեշտ էր, որ դուք արտահայ-տեիք ձեր փափագը, որպեսզի ոչ մի վերապահություն չունե-նամ ձեր հանդեպ։ Ես մինչև այժմ ոչ մի բան չասացի, որը հավատացած չլինեմ, թե կարող է ձեզ օգտակար լինել և որին ես ինքս խորապես համոզված չլինեմ։ Քննությունը, որ մնում է ինձ բռնել, բոլորովին այլ է. ես այնտեղ միայն շփոթու-թյուն, խորհրդավորություն, մթություն եմ տեսնում, միայն անորոշություն ու անվստահություն եմ գտնում։ Ես երկյու-ղով եմ որոշում կայացնում ու ձեզ ավելի շուտ իմ կասկած-ներն եմ հայտնում, քան իմ կարծիքը։ Եթե ձեր զգացմունք-ներն ավելի կայուն լինեին, ես կվարանեի ձեզ հայտնել իմը. բայց, ձեր դրության մեջ, դուք կշահեք ինձ նման մտածե-

լով[1]։ Համենայն դեպս, իմ խոսքերին տվե՛ք սոսկ բանականության հեղինակություն. ես չգիտեմ՝ չե՞մ սխալվում արդյոք։ Երբ վիճում են, դժվար է, երբեմն, հաստատական շեշտ չվերցնել, բայց հիշեցե՛ք, որ այստեղ իմ արած բոլոր հաստատումները հենց կասկածելու պատճառներ են։ Ճշմարտությունը դուք ինքներդ փնտրեցե՛ք. իսկ ես՝ ձեզ միայն ուղղմարտություն եմ խոստանում։

Դուք իմ հայտարարության մեջ միայն բնական կրոն եք տեսնում. քատ գարմանալի է, որ մեկ ուրիշի կարիքը լինի։ Ինչի՞ց կարող էի իմանալ այդ անհրաժեշտությունը։ Ինչո՞վ եմ մեղավոր, եթե աստծուն ծառայում եմ համաձայն այն լույսին, որ նա է տալիս իմ մտքին, և համաձայն այն զգացմունքներին, որ ներշնչում է սրտիս։ Բարոյական ինչպիսի՞ մաքրություն, մարդու համար օգտակար և նրան ստեղծողի համար պատվաբեր ինչպիսի՞ ուսմունք կարող եմ վերցնել մի պոզիտիվ վարդապետությունից, որպիսին չկարողանամ ստանալ իմ ընդունակությունների լավ օգտագործմամբ։ Ցույց տվե՛ք ինձ, թե ինչ կարելի է ավելացնել բնական օրենքի թելադրած պարտականություններին՝ աստծու փառքի, հասարակության օգտի ու իմ սեփական բարօրության համար, և ինչ առաքինություն կարող է ձեզ տալ մի նոր պաշտամունք, որ ես չստանայի իմից։ Աստծու ամենամեծ մտքերը մեզ հասնում են միայն մեր բանականության միջոցով։ Տեսե՛ք բնության պատկերը, լսեցե՛ք ներքին ձայնը։ Չէ՞ որ աստված ամեն ինչ պարզել է մեր աչքերի, մեր գիտակցության, մեր դատողության առաջ։ Դրանից ավելի ի՞նչ կարող են ասել մեզ մարդիկ։ Նրանց հայտնությունները միայն նվաստացնում են աստծուն՝ նրան վերագրելով մարդկային կրքեր։ Փոխանակ պարզաբանելու մեծ էակի մասին եղած գաղափարները, ես տեսնում եմ, որ մանավոր ուսմունքները դրանք ավելի խառնաշփոթ են դարձնում. փոխանակ ազնվացնելու, նվաստացնում են, նրան շրջապատող անիմանալի խորհրդավորություններին ավելացնում են արտառոց հակասություններ,

---

[1] Ահա, իմ կարծիքով, ինչ որ բարի քահանան կարող էր ներկայումս ասել հասարակությանը։

մարդուն դարձնում են մեծամիտ, աննեղող, դաժան, փոխանակ երկրի վրա խաղաղություն հաստատելու, երկաթ ու կրակ են թափում։ Ինքս ինձ հարցնում եմ, թե վասն ինչի՞ այս բոլորը, բայց պատասխան չեմ կարող գտնել։ Ես այնտեղ տեսնում եմ սոսկ մարդկանց ոճիրներն ու մարդկային ցեղի թշվառությունները։

Ինձ ասում են, թե մի հայտնություն էր պետք՝ մարդկանց սովորեցնելու համար, թե աստված ինչ ձևով է ուզում, որ իրեն սպասարկեն. որպես փաստ ցույց են տալիս մարդկանց հաստատած տարօրինակ պաշտամունքների այլազանությունը և չեն նկատում, որ այդ այլազանությունն ինքը առաջ է գալիս քմահաճ հայտնություններից։ Հենց որ ժողովուրդները մտածել են խոսեցնել աստծուն, ամեն մեկը նրան խոսեցրել է իր ձևով ու նրան ասել է տվել իր ցանկացածը։ Եթե մարդիկ լսեին միայն այն, ինչ որ աստված է ասում մարդու սրտին, երկրի վրա միայն մի կրոն կլիներ։

Հարկավոր էր միատեսակ կրոն ունենալ. համաձայն եմ. բայց մի՞թե այդ այնքան կարևոր էր, որպեսզի աստվածային ուժի ամբողջ ապարատի կարիքը լիներ այդ կրոնը հիմնելու համար։ Չպետք է երբեք շփոթել կրոնական ծիսակատարությունը կրոնի հետ։ Այն կրոնը, որ աստված է պահանջում, սրտից բխող պաշտամունքն է, իսկ եթե դա անկեղծ է, միշտ էլ միատեսակ է։ Բավականին հիմար մեծամտություն է՝ երևակայել, թե աստված շատ մեծ նշանակություն է տալիս քահանայի հագուստի ձևին, նրա արտասանած խոսքերի դասավորությանը, խորանի առջև նրա արած շարժումներին, նրա բոլոր ծնրադրություններին։ Է՛հ, բարեկա՛մս, մնա՛ք կատարյալ բարձրության վրա, դու միշտ էլ երկրին բավական մոտ կլինես։ Աստված ցանկանում է պաշտված լինել մտքերում և ճշմարտապես. այս պարտականությունը բոլոր կրոններին, բոլոր երկրներին, բոլոր մարդկանց է վերաբերում։ Իսկ ինչ վերաբերում է արտաքին ծեսերին, եթե դրանք միատեսակ պետք է լինեն միայն հանուն բարեկարգության, դա զուտ ոստիկանության գործ է. դրա համար հայտնության կարիք չկա։

Սրանք չեն եղել իմ սկզբնական խորհրդածությունները։

Տարված՝ դաստիարակության նախապաշարումներով ու այն վտանգավոր ինքնասիրությամբ, որը միշտ ձգտում է մարդուն տանել իր շրջանակից վեր, չկարողանալով իմ տկար հասկացողությունները բարձրացնել մինչև մեծ էակը, ես աշխատում էի նրան իջեցնել իմ մակարդակին։ Ես մոտեցնում էի այն անհունապես հեռավոր հարաբերությունները, որ նա դրել է իր և իմ բնությունների միջև։ Ես կամենում էի ունենալ ավելի անմիջական հարաբերություններ, ավելի առանձնահատուկ հրահանգներ և, չզհանալով աստծուն պատկերացնել նման մարդուն, ինքս էլ իմ նմանների մեջ առանձնաշնորհյալ լինելու համար, ուզում էի ունենալ գերբնական իմացություններ, մի բացառիկ կրոնք. ցանկանում էի, որ աստված ինձ ասեր այն, ինչ ուրիշներին չէր ասել, կամ այն, ինչ ուրիշները պիտի հասկանային ոչ ինձ պես։

Դիտելով այն կետը, ուր ես հասել էի, որպես ընդհանուր մեկնակետ բոլոր հավատացյալների համար՝ մի ավելի լուսավորված կրոնի հասնելու, բնական կրոնի վարդապետությունների մեջ գտնում էի սոսկ ամեն մի կրոնի տարրերը։ Ես նկատում էի երկրի վրա տիրող աղանդների այս այլազանությունը, աղանդներ, որոնք փոխադարձաբար միմյանց են մեղադրում ստի ու սխալի մեջ, և ինքս ինձ հարցնում էի. «Ո՞րն է լավը»։ Յուրաքանչյուրն ինձ պատասխանում էր. «Ի՛մը»։ Ամեն մեկն ասում էր. «Միայն ես և իմ կողմնակիցներն ենք ճիշտ մտածում, բոլոր մյուսները սխալվում են»։ «Իսկ ինչի՞ց գիտեք, թե ձեր աղանդն է լավը»։ «Վասնզի աստված այդպես ասաց»։ «Իսկ ձեզ ո՞վ ասաց, թե աստված այդպես է ասել»։ «Իմ քահանան, որ լավ գիտի նրան։ Իմ քահանան ասում է այդպես հավատալ, և ես հավատում եմ. նա ինձ վստահեցնում է, որ բոլոր նրանք, ովքեր տարբեր բան են ասում, ստում են, և ես նրանց չեմ լսում»։

Ինչպե՞ս, մտածում էի ես, ուրեմն ճշմարտությունը մեկ չէ՞. այն, ինչ ճշմարտություն է ինձ համար, կարող է սխա՞լ լինել ձեզ համար։ Եթե ճիշտ ուղիով ընթացողի մեթոդն ու մոլորվածի մեթոդը միևնույնն են, ի՞նչ ավելի արժանիք կամ պակասություն ունի մեկը մյուսից։ Նրանց ընտրությունը

պատահականության հետևանք է. այդ ընտրությունը իրենց վերագրելը անարդարություն է, նշանակում է վարձատրել կամ պատժել այս կամ այն երկրում ծնված լինելու համար։ Ասել, թե աստված մեզ այսպես է դատում, նշանակում է անարգել նրա արդարությունը։

Այսպիսով, կա՛մ բոլոր կրոնները լավ են ու հաճելի աստծու համար, կա՛մ, եթե կա մի կրոն, որ աստված հատկապես հանձնարարում է մարդկանց և նրանց պատժում է այն չընդունելու դեպքում, նա այդ կրոնին տվել է որոշակի ու բացահայտ նշաններ, որպեսզի տարբերվի ու ճանաչվի որպես միակ ճշմարիտ կրոն. այդ նշանները բոլոր ժամանակներում ու բոլոր վայրերում հավասարապես զգալի են բոլոր մարդկանց՝ մեծ թե փոքր, գիտուն թե տգետ, եվրոպացի, հնդիկ, աֆրիկացի, վայրենի։ Եթե երկրի վրա լիներ մի կրոն, որից դուրս միայն հավիտենական վիշտ գոյություն ունենար, և աշխարհի որևէ մի վայրում գտնվեր թեկուզ մեկ ողջամիտ մահկանացու, որը չհամոզվեր նրա ստույգ լինելուն, այդ կրոնի աստվածը ամենից անարդար ու ամենից անողոք բռնակալը կլիներ։

Ուրեմն, պետք է անկեղծությամբ փնտրենք ճշմարտությունը, ոչինչ չհանձնենք ծագման իրավունքին և հայրերի ու քահանաների հեղինակությանը, խղճի ու դատողության քննարկմանը ենթարկենք այն ամենը, ինչ մեզ սովորեցրել են մեր մանկությունից սկսած։ Իղուր ինձ կաղաղակեն՝ «Սանձ դիր դատողությանը». այդպես կարող է ասել նա, ով ինձ խաբում է. ես պետք է պատճառներ ունենամ սանձելու իմ դատողությունը։

Աստծու վերաբերյալ այն ամբողջ գիտությունը, որ ես կարող եմ ձեռք բերել տիեզերքի ուսումնասիրությամբ և իմ ունակությունների լավ օգտագործմամբ, սահմանափակվում է նրանով, որ վերևում ձեզ բացատրեցի։ Նրանից ավելին իմանալու համար պետք է դիմել արտակարգ միջոցների։ Այդ միջոցները չեն կարող մարդկային հեղինակությունը լինել, որովհետև, բոլոր մարդիկ լինելով նույն տեսակից՝ ինչպես ես, այն ամենը, ինչ մարդը ճանաչում է բնականորեն, ես էլ կարող եմ ճանաչել, և մի ուրիշ մարդ կարող է այն-

պես խաբվել, ինչպես ես եմ խաբվում. երբ ես հավատում եմ նրա ասածին, այդ ոչ թե նրա համար է, որ նա ասում է, այլ որովհետև ապացուցում է։ Մարդկանց վկայությունը, ուրեմն, հիմնականում իմ իսկ բանականության վկայությունն է և ոչինչ չի ավելացնում այն բնական միջոցների վրա, որ աստված է ինձ տվել ճշմարտությունը ճանաչելու համար։

Ճշմարտության առաքյա՛լ, ի՞նչ ունեք ուրեմն ինձ ասելու, որի դատավորը չկարողանամ լինել։ «Աստված ինքն է խոսել. լսեցե՛ք նրա հայտնությունը»։ Դա ուրիշ բան է։ Աստվա՛ծ խոսեց. ահա, արդարև, մի մեծ խոսք։ Իսկ ո՞ւմ ասաց նա։ «Նա ասաց մարդկանց»։ Բայց ինչու՞ համար ես ոչինչ չեմ լսել։ «Նա ուրիշ մարդկանց է հանձնարարել, որ իր խոսքերը ձեզ հաղորդեն»։ Հասկանում եմ. մարդիկ են, որ ինձ պիտի ասեն, թե ինչ է ասել աստված։ Ես կնախընտրեի լսել ուղղակի իրեն՝ աստծուն։ Դա նրան ավելի դժվար չէր լինի, իսկ ես կխուսափեի հրապուրանքից։ «Նա ձեզ դրանից պաշտպանում է, հայտնելով իր ներկայացուցիչների առաքելությունը»։ Ի՞նչպես է լինում այդ։ «Հրաշքներով»։ Բայց ո՞ւր են այդ հրաշքները։ «Գրքերի մեջ»։ Իսկ ո՞վ է կազմել այդ գրքերը։ «Մարդիկ»։ Եվ ո՞վ է տևսել այդ հրաշքները։ «Մարդիկ, որ դրանք հաստատում են»։ Ինչպե՜ս. շարունակ մարդկային վկայություննե՞ր. միշտ մարդիկ են, որ ինձ հաղորդում են այն, ինչ նրանց ուրիշ մարդիկ են հաղորդել։ Ինչքա՜ն մարդ իմ ու աստծու միջև։ Համենայն դեպս, տեսնենք, քննենք, համեմատենք, ճշտենք։ Ա՜հ, եթե աստված կամենար ինձ ազատել այս ամբողջ աշխատանքից, մի՞թե նրան նվազ անկեղծությամբ կծառայեի։

Նկատեցե՛ք, բարեկամս, թե ինչպիսի՜ սարսափելի վեճի մեջ եմ մտնում. ի՞նչ հսկա մտապաշարի կարիք ունեմ՝ վերադառնալու համար ամենահեռավոր նախապատմության խորքերը, քննելու, կշռադատելու, բաղդատելու մարգարեությունները, հայտնությունները, իրողությունները, աշխարհի բոլոր երկրներում առաջադրված հավատքի բոլոր հիշատակարանները՝ որոշելու համար նրանց ժամանակները, վայրերը, հեղինակները, շարժառիթները։ Քննադատական ինչպիսի՜ ճշգրտություն է ինձ հարկավոր՝ տարբերելու համար իսկական փաստերը ենթադրական փաստերից, համեմատելու

համար առարկություններըՙ պատասխանների, թարգմանությունները՝ բնագրերի հետ, դատելու համար վկաների անկողմնակալության, ողջամտության, իմացությունների մասին, գիտենալու, թե արդյո՞ք ոչինչ չի ջնջված կամ ավելացված, ոչինչ չի փոխադրված, փոփոխված, կեղծված, երևան հանելու համար հակասությունների մնացուկները, դատելու համար, թե ինչ կշիռ պետք է տալ այն լուծյանը, որ պահպանում են ոսոխները իրենց դեմ վկայաբերված փաստերի մասին, թե արդյո՞ք այդ փաստերը ծանոթ են եղել նրանց, թե բավականաչափ հաշվի առե՞լ են դրանք, որպեսզի պատասխանի արժանի համարեին, թե արդյո՞ք գրքերը այնքան ընդհանրացած էին, որպեսզի մեր գրքերը հասնեին նրանց, թե արդյո՞ք մենք քիչ թե շատ ուղղամտություն ունեցել ենքՙ թույլ տալու, որ մեր մեջ ազատ տարածվեն նրանցըՙ առանց հապավելու նույնիսկ ամենաուժեղ առարկությունները։

Բոլոր այս հիշատակարանները որպես անվիճելի ճանաչելուց հետո պետք է անցնել նրանց հեղինակների առաքելության ապացույցներին. պետք է լավ իմանալ դիպվածների օրենքները, պատահական հավանականությունները՝ դատելու համար, թե ինչպիսի նախագուշակություն չի կարող իրագործվել առանց հրաշքի, գիտենալ նախատիպ լեզուների ոգին՝ որոշելու համար, թե այս լեզուների մեջ ի՞նչն է նախագուշակություն և ինչը՝ սոսկ մի ճարտասանական ձև, ի՞նչպիսի իրողություններն են բնական, ինչպիսիք՝ ոչ, կարողանալ ասելու համար, թե մինչև ո՞ր աստիճան մի ճարպիկ մարդ կարող է շլացնել պարզամիտների տեսողությունը, զարմացնել նույնիսկ լուսավորյալ մարդկանց, փնտրել, թե ի՞նչպիսին պետք է լինի, ի՞նչպիսի վավերականություն պետք է ունենա հրաշքը ոչ միայն որպեսզի հավատալի լինի, այլև դրանում կասկածողին պատժի արժանի դարձնի, համեմատել ճշմարիտ ու կեղծ հրաշքների փաստերը և գտնել դրանք որոշելու ապահով կանոնները, ասել, վերջապես, թե ինչո՞ւ աստված, իր խոսքը հաստատելու համար, ընտրում է այնպիսի միջոցներ, որոնք նույնքան մեծ պահանջ ունեն փաստարկման, ասես նա ձեռ է առնում նրանց պարզամտությունը

և դիտավորյալ զանց է առնում համոզելու իսկական միջոցները։

Ենթադրենք, թե երկնային վեհափառությունը որոշի այնքան խոնարհվել, որ իր սուրբ ցանկությունների համար որպես միջոց օգտագործի մարդուն. մի՞թե ճիշտ ու բանական կլինի պահանջել, որ ամբողջ մարդկությունը ենթարկվի այդ ներկայացուցչի ձայնին, այն դեպքում, երբ նրան դեռ չի ծանոթացրել որպես այդպիսին։ Մի՞թե արդար կլինի նրա համար որպես հավատարմաթուղթ ընդունել լոկ այն մի քանի մասնավոր նշանները, որոնք տեղի են ունենում սահմանափակ թվով, մութ անձնավորությունների ներկայությամբ և որոնց մասին մարդկանց մնացյալ մասը միայն լսելով պետք է իմանա։ Աշխարհի բոլոր երկրներում, եթե որպես ճշմարիտ ընդունվեին այն բոլոր հրաշքները, որ հասարակ ժողովուրդն ու պարզամիտները ասում են, թե իբր տեսել են, յուրաքանչյուր աղանդ լավ կլիներ. ավելի շատ հրաշքներ տեղի կունենային, քան բնական դեպքեր, և հրաշքների ամենամեծն այն կլիներ, որ այնտեղ, ուր հալածանքի ենթարկվող մոլեռանդներ կան, որ մի հրաշք չկատարվեր։ Բնությանն անսասան կարգն է, որ լավագույն կերպով ցույց է տալիս իրեն ղեկավարող իմաստուն ձեռքը. եթե շատ բացառություններ սասահեին, չգիտեմ, թե ինչ կմտածեի այդ մասին. իսկ ես այնքան եմ հավատում աստծուն, որ դժվարանում եմ ընդունել նրան այնքան քիչ արժանի բոլոր այդ հրաշքները։

Ենթադրենք, մի որևէ մարդ գալիս ասում է ձեզ. «Մահկանացունե՛ր, ես ձեզ հաղորդում եմ ամենաարձրյալի կամքը. իմ ձայնից ճանաչեցե՛ք նրան, ով ուղարկել է ինձ. ես հրամայում եմ արևին՝ փոխել իր ընթացքը, աստղերին՝ կազմել մի նոր համակարգություն, լեռներին՝ հարթվել, ալիքներին՝ բարձրանալ, երկրին՝ ուրիշ կերպարանք ստանալ»։ Տեսնելով այս հրաշքները, ո՞վ իսկույն չի ճանաչի բնության տիրոջը։ Բնությունը երբեք չի հպատակվի խաբեբաներին, որոնց հրաշքները կատարվում են քառուղիներում, անապատներում, սենյակներում. և այդ վայրերում է, որ նրանք հեշտորեն խաբում են փոքրաթիվ հանդիսատեսներին, որոնք պատրաստ են ամեն ինչի հավատալու։ Ո՞վ կհամարձակվի ինձ

ասել, թե ո՞րքան ականատես վկաներ են պետք, որպեսզի մի հրաշք արժանահավատ լինի։ Եթե ձեր հրաշքները, որոնց նպատակն է ապացուցել ձեր վարդապետությունը, իրենք ևս ապացուցվելու կարիք ունեն, ինչի՞ են պետք նրանք։ Ավելի լավ է բնավ տեղի չունենան։

Մնում է, վերջապես, խնդրո առարկա վարդապետության մեջ քննել ամենակարևոր կետը. որովհետև, քանի որ նրանք, ովքեր ասում են, թե աստված այս աշխարհում հրաշքներ է անում, ենթադրելով միևնույն ժամանակ, որ սատանան երբեմն դրանք ընդօրինակում է, նույնիսկ ամենալավ փաստված հրաշքներով մենք ավելի առաջ չենք գնա, և քանի որ փարավոնի մոգերը, նույնիսկ Մովսեսի ներկայությամբ, համարձակվում էին կատարել այն նույն նշանները, ինչ նա անում էր աստծու հատուկ հրամանով, ինչո՞ւ նրա բացակայության, նույն իրավունքով, չկիտի իրենց վերագրեին նույնիսիկ իշխանությունն։ Այսպես ուրեմն, վարդապետությունը հրաշքով ապացուցելուց հետո, պետք է հրաշքը ապացուցել վարդապետությամբ՝ սադայելի գործը որպես աստծու գործը չընդունելու համար։ Ի՞նչ եք մտածում այս փոխաշրջության (diallèle) *մասին։*

Այս վարդապետությունը, որ աստծուց է բխում, պետք է կրի աստվածությանն սուրբ բնույթը. նա ոչ միայն պետք է լուսաբանի այն շփոթ դաղափարները, որ դատողությունն է տալիս մեր մտքին նրա մասին, այլև պետք է մեզ առաջադրի մի կրոն, մի բարոյականություն և պատշաճ կանոններ այն հատկությունների վերաբերյալ, որոնց շնորհիվ միայն ըմբռնում ենք նրա էությունը։ Ընդամին, եթե նա մեզ սովորեցներ ոսկ անհեթեթ ու անտրամաբանական բաներ, եթե նա մեզ միմիայն հակակրություն ներշնչեր մեր նմանների ու սարսափ՝ մեր անձի հանդեպ՝ եթե նա մեզ պատկերեր միայն զայրացկոտ, խանդոտ, վրիժառու, կողմնապահ, մարդատյաց մի աստված, պատերազմի ու կռիվների մի աստված, ամեն լոպե պատրաստ՝ քանդելու և չանթահարելու, միշտ չարչարանքի, ցավի մասին խոսող, պարծեցող՝ թե կպատժի նույնիսկ անմեղներին, իմ սիրտը երբեք չէր ձգտի դեպի այդ զարհուրելի աստվածը, և ես չէի հեռանա բնական կրոնից՝ նրան

ընդունելու համար, քանի որ, ինչպես տեսնում եք, անհրաժեշտ կլիներ ընտրություն անել։ Ձեր աստվածը մերը չէ, կասեի ես այդ աղանդավորներին։ Այն աստվածը, որն իր համար միայն մի ժողովուրդ է ընտրում և իրենից վանում է մնացած մարդկությունը, այդպիսին մարդկանց ընդհանրական հայրը չէ. նա, ով հավիտենական տանջանքների է մատնում իր արարածների մեծագույն մասը, չէ այն ներող ու բարի աստվածը, որ իմ բանականությունը ինձ ցույց է տվել։

Վարդապետությունների վերաբերմամբ իմ բանականությունն ինձ ասում է, որ նրանք պետք է լինեն հստակ, լուսավոր, հավաստի։ Եթե բնական կրոնը չի բավարարում, պատճառն այն է, որ նա մութ տեղեր է թողնում այն մեծ ճշմարտությունների մեջ, որ մեզ սովորեցնում է. աստվածային հայտնությանն է վերապահված մեզ սովորեցնել այդ ճշմարտությունները մարդկային մտքի համար զգալի ձևով, դարձնել հասկանալի, որպեսզի հավատանք դրանց։ Հավատը ապահովվում ու ամրապնդվում է ըմբռնողության շնորհիվ. բոլոր կրոններից լավագույնը անսպայման ամենապարզն է. նա, ով ինձ քարոզած կրոնը ծանրաբեռնում է խորհրդավորություններով և հակասություններով, դրանով իսկ ինձ սովորեցնում է զգուշանալ այդ կրոնից։ Այն աստվածը, որ ես պաշտում եմ, խավարի աստվածը չէ, նա ինձ չի օժտել դատողությամբ, որպեսզի արգելի նրա օգտագործումը. ինձ ստիպել, որ զսպեմ դատողությունս, նշանակում է վիրավորել նրա հեղինակին։ Ճշմարտության պաշտոնյան երբեք չի ճնշի իմ դատողությունը, այլ կլուսավորի այն։

Մենք մի կողմ դրինք ամեն մարդկային հեղինակություն. առանց նրան ես չգիտեմ, թե ինչպես մի մարդ կարող է համոզել մի ուրիշ մարդու՝ նրան քարոզելով ոչ-բանական մի վարդապետություն։ Մի պահ այդ երկու մարդկանց դնենք դեմառդեմ ու տեսնենք, թե ինչ կարող են միմյանց ասել երկու կողմերին էլ հատուկ բուռն լեզվով։

ՆԵՐՇՆՋՎԱՆԸ

Բանականությունը ձեզ սովորեցնում է, որ ամբողջը ավելի մեծ է, քան իր մասը, բայց ես աստծու կողմից ձեզ ասում եմ, որ մասն է ավելի մեծ, քան ամբողջը։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Ո՞վ եք դուք, որ համարձակվում եք ասել, թե աստված հակասում է ինքն իրեն. ո՞ւմ պետք է ամենից ավելի հավատամ՝ նրան, ով դատողությամբ հավիտենական ճշմարտություններ է սովորեցնում ինձ, թե՞ ձեզ, որ նրա անունից անհեթեթություններ եք հայտնում։

ՆԵՐՇՆՋՎԱՆԸ

Ի՛նձ, որովհետև իմ ուսմունքն ավելի դրական է. և ես անվիճելիորեն կապացուցեմ, որ նա է ինձ ուղարկել։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Ինչպե՞ս, դուք պիտի ապացուցեք, թե աստված է ձեզ ուղարկել՝ իր դեմ վկայելու համա՞ր։ Ի՞նչպիսի փաստերով կարող եք դուք ինձ համոզել, որ անկասկած աստված ինձ հետ խոսում է ձե՛ր բերանով և ոչ թե այն ըմբռնողության միջոցով, որ ինքն է տվել ինձ։

ՆԵՐՇՆՋՎԱՆԸ

Ըմբռնողությո՛ւնը, որ ձեզ տվե՛լ է։ Ճղճիմ ու դատարկամիտ մա՛րդ, դուք առաջին ամբարիշտը չեք, որ մոլորվում է մեղքերով այլասերված իր դատողությունից։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Մա՛րդ աստծո, դուք էլ առաջին խաբեբան չեք, որն ամբարտավանությունը որպես իր առաքելության փաստ է ներկայացնում։

ՆԵՐՇՆՉՎԱԾԸ

Ինչպե՞ս, փիլիսոփանե՞րն էլ հայհոյել գիտեն։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Երբեմն, երբ սրբերն են նրանց օրինակ տալիս։

ՆԵՐՇՆՉՎԱԾԸ

Օ՜, ես իրավունք ունեմ հայհոյելու, քանի որ խոսում եմ աստծու անունից։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Լավ կլիներ ցույց տայիք ձեր փաստաթղթերը՝ նախքան ձեր արտոնություններից օգտվելը։

ՆԵՐՇՆՉՎԱԾԸ

Իմ փաստաթղթերը վավերական են, երկիրն ու երկինքը իմ վկաներն են։ Ենդրում եմ, հետևեցե՛ք իմ դատողություններին։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Ձեր դատողություննե՞րը. ինչպե՞ս չէ։ Հայտնելով, որ իմ դատողությունն ինձ խաբում է, դուք ժխտում եք այն, ինչ նա ինձ կասի ձեր մասին։ Ով ուզում է մերժել բանականությունը, պետք է համոզի առանց նրանից օգտվելու։ Ենթադրենք, որ դատողությամբ դուք ինձ համոզեցիք. ինչի՞ց իմանամ, թե մեղքից ապականված իմ բանականությունը չէ, որ ինձ ստիպում է հավանություն տալ ձեր ասածներին։ Բացի այդ, ի՞նչ փաստ, ի՞նչ ապացույց կարող եք երբևէ բերել ավելի ակներև, քան այն աքսիոման, որը ոչնչացնելու է կոչված նրան։ Նույնքան հավատալի է, որ մի լավ սիլոգիզմ խաբեություն է, ինչպես այն, թե մասը ավելի մեծ է ամբողջից։

ՆԵՐՇՆՋՎԱՍԸ

Ի՞նչ տարբերություն։ Իմ փաստերն անհերքելի են, նրանք գերբնական բնույթ ունեն։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Գերբնակա՞ն։ Ի՞նչ է նշանակում այդ բառը, չեմ հասկանում։

ՆԵՐՇՆՋՎԱՍԸ

Բնության համակարգության մեջ փոփոխություններ, մարգարեություններ, հրաշքներ, ամեն տեսակ հրաշալիքներ։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Հրաշալիքնե՞ր, հրաշքնե՞ր, ես այդպիսի բան երբեք չեմ տեսել։

ՆԵՐՇՆՋՎԱՍԸ

Ուրիշները տեսել են քո փոխարեն։ Բազմաթիվ վկաներ... Ժողովուրդների վկայությունը...

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Ժողովուրդների վկայությունը մի՞թե գերբնական բնույթ ունի։

ՆԵՐՇՆՋՎԱՍԸ

Ոչ. բայց եթե միահամուռ է, այդ դեպքում անժխտելի է։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Ոչ մի բան այնպես անժխտելի չէ, ինչպես բանականության սկզբունքները, և չի կարելի անհեթեթություն թույլ տալ՝ մարդկանց վկայության վրա հենվելով։ Նորից եմ ասում. տեսննենք այդ գերբնական փաստերը, վաղնզի մարդկային ցեղի վկայությունը այդպիսին չէ։

ՆԵՐՇՆՋՎԱԾԸ

Ո՛վ խստասիրտ մարդ, քարեշնորհությունը ձեզ երբեք չի հուզում։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Այդ իմ մեղքը չէ. ըստ ձեզ՝ պետք է արդեն շնորհ ստացած լինել՝ շնորհ խնդրել իմանալու համար։ Դե ուրեմն, սկսե՛ք խոսել ինձ հետ, շնորհաբաշխի փոխարեն։

ՆԵՐՇՆՋՎԱԾԸ

Ա՛հ, ես էլ հենց այդ եմ անում, բայց դուք ինձ չեք լսում։ Ի՞նչ կասեք մարգարեությունների մասին։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Նախ և առաջ կասեմ, որ ես մարգարեությունների մասին ոչինչ չեմ լսել, ինչպես երբեք չեմ տեսել հրաշքներ։ Բացի այդ, ոչ մի մարգարեություն ինձ համար հեղինակություն չի կարող լինել։

ՆԵՐՇՆՋՎԱԾԸ

Սադայելի հետևո՛րդ, և ինչո՞ւ մարգարեությունները հեղինակություն չեն ձեզ համար։

ՏՐԱՄԱԲԱՆՈՂԸ

Որովհետև, այդպիսին լինելու համար երեք բան է անհրաժեշտ, որոնց համաձայնությունն անհնար է. նախ՝ ես պետք է լսած լինեմ մարգարեությունը, ապա՝ տեսնեմ եղելությունը և, վերջապես, ինձ պետք է ապացուցեն, որ այդ եղելությունը մի զուգադիպություն չէ մարգարեության հետ, որովհետև, ինչքան էլ այդ մարգարեությունը ավելի ճշգրիտ, ավելի պարզ, ավելի լուսավոր լինի, քան երկրաչափական մի աքսիոմա, քանի որ դիպվածական մի կանխագուշակության հստակությունը անհնարին չի դարձնում նրա իրագործումը, սա, եթե իրոք կատարվի, ծայրահեղ դեպքում, ոչինչ չի ապացուցում ի նպաստ մարգարեացողի։

Տեսե՛ք, ուրեմն, թե ինչի են հանգեցնում ձեր ենթադրյալ

գերբնական ապացույցները, ձեր հրաշքները, ձեր մարգարեությունները։ Հավատալ այդ բոլորին հիմնվելով ուրիշների վկայության վրա և մարդկանց հեղինակությանը ենթարկել իմ բանականությանն հետ խոսող աստծու հեղինակությունը։ Եթե իմ ըմբռնած հավիտենական ճշմարտությունները սասանվեին, ինձ համար այլևս ոչինչ ստույգ չէր մնա, և ես ոչ միայն վստահ չէի լինի, թե դուք ինձ հետ խոսում եք աստծու անունից, այլև, նույնիսկ, կկասկածեի նրա գոյության մասին։

Ահա թե ինչպիսի դժվարություններ կան, տղա՛ս, և սրանք բոլորը չեն։ Միմյանց վանող ու միմյանց ժխտող այդքան տարբեր կրոնների մեջ միայն մեկն է լավ, եթե ընդունենք, թե իսկապես մի լավը կա։ Դրան ճանաչելու համար բավական չէ ուսումնասիրել մեկը, այլ բոլորը, և ինչպիսի խնդրում էլ լինի, ոչինչ չպետք է դատապարտել՝ առանց լսելու[1]. պետք է համեմատել առարկությունները փաստերի հետ, պետք է գիտենալ, թե յուրաքանչյուրն ինչ է փաստարկում մյուսների դեմ, ինչ է պատասխանում նրանց։ Ինչքան ավելի մի որևէ զգացմունք մեզ փաստված է թվում, այնքան ավելի պետք է փնտրենք, թե ինչի՞ վրա են հիմնվում ուրիշները՝ նրա ճշտությունը բացասելու համար։ Շատ պարզամիտ պետք է լինել՝ հավատալու համար, թե բավական է լսել իր կողմի վարդապետներին՝ հակառակ կողմի դատողությունների մասին գաղափար կազմելու համար։ Ո՞րտեղ են այն աստվածաբանները, որոնք պարծենում են իրենց ուղղամտությամբ, ո՞րտեղ են նրանք, ովքեր իրենց հակառակորդների դատողությունները հերքելու համար չեն սկսում նախապես դրանք տկարացնելով։ Ամեն ոք փայլում է իր կուսակցության մեջ. բայց նա, ով յուրայինների մեջ իրեն բոլորովին հպարտ է զգում իր փաստերով, նույն այդ փաստերով մի շատ հիմար

[1] Պլուտարքոսը գրում է, թե ստոյիկյանները, մի շարք տարօրինակ պարադոքսներից բացի, պնդում էին, թե մի երկկողմանի դատի ժամանակ կարիք չկա լսելու երկու կողմերն էլ, որովհետև, ասում էին նրանք, կա՛մ այն է, որ առաջինը ապացուցում է իր ասածը, կա՛մ չի ապացուցում. եթե ապացուցում է, հարցը փակված է, հակառակ կողմը պետք է դատա-

անձնավորություն կլիներ ուրիշ խմբավորման մեջ։ Ուզում եք ուսանել գրքերով. ինչպիսի՞ հմտություն է պետք ձեռք բերել, ինչքա՞ն լեզուներ է պետք սովորել, ինչքա՞ն գրադարաններ է պետք պրպտել, ինչքա՞ն շատ գրքեր է պետք կարդալ Ո՞վ ինձ պիտի առաջնորդի ընտրություն անելու։ Շատ դժվար է մի երկրում գտնել հակառակ կողմի լավագույն գրքերը, է՛լ ավելի դժվար է գտնել բոլոր կողմերի լավագույն գրքերը. եթե գտնվեին իսկ, անմիջապես կմերժվեին։ Բացակայողը միշտ մեղավոր է, և համարձակորեն արված վատ փաստարկումները հեշտությամբ կջնջեն արհամարհանքով բերված լավ փաստարկությունները։ Թո՛ղ որ, շատ անգամ, գրքերից ավելի խաբող բան չկա, և հաճախ նրանք նվազ հարազատությամբ են արտահայտում իրենց հեղինակների զգացմունքները։ Երբ դուք ուզեցաք դատել կաթոլիկ հավատքի մասին Բոսյուեի գրքով, մեր մեջ ապրելով, տեսաք, որ սխալված եք, որ այն վարդապետությունը, որով հակադրվում են բողոքականներին, այն չէ, ինչ ուսուցանում են ժողովրդին, որ Բոսյուեի գիրքը բոլորովին նման չէ քարոզի պատվիրաններին։ Որևէ կրոնի մասին ճիշտ կարծիք կազմելու համար չպետք է այն ուսումնասիրել նրա աղանդավորների գրքերով, այլ պետք է գնալ սովորել իրենց մոտ. այդ բոլորովին տարբեր բան է։ Յուրաքանչյուր կրոն ունի իր ավանդությունները, իր հասկացությունը, սովորությունները, նախապաշարումները, որոնք նրա հավատի ոգին են կազմում և որոնց պետք է ճանաչել՝ նրա մասին պատկերացում ունենալու համար։

Ինչքա՞ն մեծ ժողովուրդներ կան, որ ոչ մի գիրք չեն հրատարակում ու չեն կարդում մեր գրքերը։ Ի՞նչպես կարող են նրանք դատել մեր կարծիքների մասին, և փոխադարձաբար։ Մենք նրանց ծաղրում ենք, նրանք մեզ արհամարհում են. և եթե մեր ճանապարհորդները նրանց վրա ծիծաղում են, բա-

---

պարտվի. եթե չի ապացուցում, ուրեմն մեղավոր է, պետք է հայցը մերժել։ Ես գտնում եմ, որ նրանց մեթոդը, ովքեր ընդունում են տարամերժ հայտնությունը, շատ է նման այդ ստոյիկյանների մեթոդին։ Երբ բազմաթիվ կողմերից յուրաքանչյուրը պնդում է, թե միայն ինքն է իրավացի, արդարությունը երևան բերելու համար պետք է լսենք բոլոր կողմերը, հակառակ դեպքում անարդար կլիներ։

վական է, որ նրանք մեզ մոտ գան՝ փոխադարձելու համար։ Ո՞ր երկում չկան խելոք, ուղղամիտ, պարկեշտ, ճշմարտության բարեկամ մարդիկ, որոնք այն դավանելու համար, բավական է, որ ճանաչեն ճշմարտությունը։ Բայց և այնպես, ամեն ոք ճշմարտությունն իր հավատքի մեջ է տեսնում և ուրիշ ազգերի դավանանքները գտնում է անհեթեթ. ուրեմն, այդ օտար դավանանքները այնքան էլ արտառոց չեն, ինչքան մեզ թվում են, կամ այն իրավացիությունը, որ մենք գրտնում ենք մեր հավատալիքների մեջ, ոչինչ չի ապացուցում։

Եվրոպայում մենք ունենք երեք գլխավոր կրոն. մեկն ընդունում է միայն մի հայտնություն, մյուսը՝ երկու, երրորդը՝ երեք։ Սրանցից յուրաքանչյուրն ատում, անիծում է մյուս երկուսին, նրանց ամբաստանում է կուրության, պնդաճակատության, կամակորության, ստախոսության մեջ։ Ո՞ր անկողմնակալ մարդը կհամարձակվեր ընտրություն կատարել այդ երեքի միջև՝ առանց նախապես լավ կշռադատելու նրանց փաստերը, լավ լսելու նրանց պատճառաբանությունները։ Այդ երեք կրոններից այն, որ միայն մի հայտնություն է ընդունում, ամենից հինն է ու թվում է, թե ամենից համոզիչն է. այն, որ երեքն է ընդունում, ամենից արդիականն է ու ամենից հետևողականն է երևում. այն, որ երկուսն է ընդունում և ժխտում է երրորդը, կարող է ամենալավը լինել, բայց, անկասկած, բոլոր նախապաշարումները նրա դեմ են. անհետևողականությունը բացահայտ է։

Երեք հայտնությունների վերաբերյալ սուրբ գրքերը գրված են այնպիսի լեզուներով, որ անհասկանալի են այդ հայտնություններին հետևող ժողովուրդներին։ Հրեաները այլևս երրայերեն չգիտեն, քրիստոնյաները ո՛չ երրայերեն գիտեն, ո՛չ հունարեն, և՛ թուրքերը, և՛ պարսիկներն արաբերեն չեն հասկանում. նույնիսկ իրենք՝ այժմյան արաբները, այլևս չեն խոսում Մոհամետի լեզուն։ Ահա ձեզ մի շատ պարզ միջոց մարդկանց ուսուցանելու՝ նրանց հետ խոսել շարունակ մի լեզվով, որ բոլորովին չեն հասկանում։ Ինձ կասեն, թե այդ գրքերը թարգմանվում են. լա՛վ պատասխան է։ Ո՞վ կարող է ինձ երաշխավորել, թե այդ գրքերը թարգմանվում են բնա-

գրին հարազատ, թե նույնիսկ հնարավոր է, որ այդպես էլ լինեն. և եթե աստված այդքան ցանկանում է մարդկանց հետ խոսել, ի՞նչ կարիք ունի թարգմանի։

Ես չեմ կարող երբեք ըմբռնել, որ այն ամենը, ինչ մարդ պարտավոր է իմանալ, ամփոփված է գրքերի մեջ. կամ թե այն մարդը, որ ընդունակ չէ հասկանալու ո՛չ այդ գրքերը, ո՛չ էլ դրանք հասկացող մարդկանց, պետք է պատժվի ակամա տգիտության պատճառով։ Շարունակ գրքե՛ր. ի՞նչ մոլություն։ Քանի որ Եվրոպան լիքն է գրքերով, եվրոպացիները դրանք համարում են անհրաժեշտություն, առանց մտածելու, թե աշխարհի երեք քառորդ մասում գրքեր բոլորովին չկան։ Չէ՞ որ բոլոր գրքերը մարդկանց կողմից են գրված։ Էլ ի՞նչպես, ուրեմն, մարդը կարող է դրանց կարիքն ունենալ՝ իր պարտականությունները ճանաչելու համար, և այդ պարտականությունները ճանաչելու ի՞նչ միջոցներ ուներ այս գրքերը լինելուց առաջ։ Կա՛մ նա իր պարտականությունները կսովորի ինքն իրեն, կա՛մ դրանք գիտենալու կարիքը չունի։

Մեր կաթոլիկները մեծ աղմուկ են բարձրացնում եկեղեցու հեղինակության վերաբերյալ։ Բայց ի՞նչ օգուտ դրանից, եթե նրանց պետք է ապացույցների այնպիսի մի մեծ ապարատ՝ այդ հեղինակությունը հաստատելու համար, ինչպես մյուս աղանդներին՝ իրենց վարդապետությունն ուղղակի հաստատելու համար։ Եկեղեցին որոշում է, որ եկեղեցին իրավունք ունի որոշելու։ Հիրավի, սա լավ ապացուցված հեղինակություն է։ Դո՛ւրս եկեք այդտեղից, դուք ներկայվում եք մեր ամբողջ վեճերի հորձանքի մեջ։

Ճանաչու՞մ եք շատ այնպիսի քրիստոնյաների, որոնք նեղություն քաշած լինեն լրջորեն ուսումնասիրելու այն, ինչ հրեականությունը վկայակոչում է իրենց դեմ։ Եթե ոմանք մի բան իմացել են դրանից, դա եղել է քրիստոնյաների գրքերից։ Խոսք չկա, լա՛վ միջոց է հակառակորդի պատճառաբանությունները իմանալու։ Բայց ի՞նչպես անել։ Եթե մեկը համարձակվեր մեզ մոտ հրատարակել այնպիսի գրքեր, որոնց մեջ բացարձակորեն ի նպաստ հրեականության խոսվեր, մենք կպատժեինք նրա հեղինակին, հրատարակչին, գրավաճառին։ Այս վարչական միջոցառումը հարմար և ապահով է՝ մշտա-

պես իրավունք ունենալու համար։ Հեշտ է հերքել այն մարդկանց, որոնք չեն համարձակվում խոսել [1]։

Մեզնից նրանք, ովքեր կարողանում են զրուցել հրեաների հետ, ավելի շատ բան չեն կարողանում իմանալ։ Խեղճերը չեն վստահում մեր գաղտնապահությանը. այն ճնշումը, որին ենթարկվում են, նրանց վախկոտ է դարձրել. նրանք գիտեն, թե քրիստոնեական դեմասրությանը անարդարությունն ու դաժանությունը շատ թանկ չեն նստում. նրանք ոչինչ չեն համարձակվում ասել առանց մեզնից լուտանքներ ստանալու։ Ընչաքաղցությունը մոլեգնում է մեր մեջ, իսկ նրանք այնքան են հարուստ, որ չեն կարող չսխալվել։ Ամենից գիտունները, ամենից լուսավորվածները միշտ ամենից շրջահայացներն են։ Դուք հավատափոխ կարող եք անել մի որևէ քշվառականի, որը ծախվում է իր աղանդը զրպարտելու համար. դուք կարող եք խոսեցնել մի որևէ ստոր հնավաճառի, որը տեղի կտա ձեզ շողոքորթելու համար. դուք կարող եք հաղթանակել՝ շնորհիվ նրանց տգիտության կամ վատության, մինչդեռ նրանց վարդապետները լուռթյամբ կծիծաղեն ձեր անխելքության վրա։ Բայց կարծու՞մ եք, որ այնտեղ, որտեղ նրանք իրենց ապահով են զգում, այդքան հեշտ կարելի է գնել նրանց։ Սորբոնում, արևի պես պարզ է, որ Մեսիայի կանխագուշակությունները Հիսուս-Քրիստոսին են վերաբերում։ Ամստերդամի րաբբիների համար նույնքան պարզ է, որ դրանք վերջինի հետ ոչ մի կապ չունեն։ Ես երբեք հոսմոզված չեմ լինի, որ լավ եմ ըմբռնում հրեաների փաստարկները, քանի նրանք չունեն ազատ պետություն, դպրոցներ, համալսարաններ, որտեղ կարողանան անվտանգ խոսել ու վիճա-

---

[1] Հազարավոր օրինակներից ահա՛ մեկը, որ կարիք չունի մեկնաբանության։ Տասնվեցերորդ դարում, կաթոլիկ աստվածաբանները խարույկի հանձնելով հրեաների բոլոր գրքերը՝ առանց բացառության, մեծանուն գիտնական Ռյոշլենի կարծիքը հարցրին այս խնդրի մասին. նա սոսկալի ջնջամանք հրավիրեց իր վրա այն պատճառով, որ կարծիք հայտնեց, թե այդ գրքերից կարելի էր պահել այնպիսիները, որոնք ոչինչ չէին պարունակում քրիստոնեության դեմ ու կրոնի հետ առնչություն չունեցող խնդիրներ էին շոշափում։

բանել։ Միայն այդ դեպքում մեզ հնարավոր կլիներ իմանալ, թե ինչ ունեն ասելու։

Կոստանդնուպոլսում թուրքերն ասում են իրենց փաստարկները, բայց մենք չենք համարձակվում ասել մերը. այդտեղ է մեր սողալու հերթը։ Մի՞թե մեղավոր են թուրքերը, եթե մեզնից պահանջում են Մոհամեդի նկատմամբ, որին մենք չենք ճանաչում, այն նույն հարգանքը, որ մենք պահանջում ենք հրեաներից Հիսուսի հանդեպ, որին էլ սրանք չեն ճանաչում, իսկ մենք մի՞թե իրավացի ենք. ի՞նչպիսի արդար սկզբունքի վրա պետք է լուծենք այս հարցը։

Մարդկային ցեղի երկու երրորդը ո՛չ հրեաներ են, ո՛չ մահմեդականներ, ո՛չ քրիստոնյաներ. ինչքա՜ն միլիոնավոր մարդիկ կան, որ չեն լսել ո՛չ Մովսեսի, ո՛չ Հիսուսի, ո՛չ Մոհամեդի մասին։ Ասում են, թե այդպես չէ, թե մեր միսիոներները ամեն տեղ գնում են։ Շատ են շտապում այդ ասել։ Արդարև, մի՞թե նրանք գնում են դեռ բոլորովին անծանոթ Աֆրիկայի խորքերը, որտեղ մինչև օրս ոչ մի եվրոպացի ոտք չի դրել։ Գնո՞ւմ են Թուրքեստան՝ ձիով հետևելու շրջիկ հորդաներին, որոնց երբեք օտարներ չեն մոտենում, որոնք ոչինչ չեն լսել Հռոմի պապի մասին ու հազիվ թե Դալայ Լամայի մասին մի բան գիտեն։ Գնո՞ւմ են Ամերիկայի ընդարձակ երկրամասերը, որտեղ ամբողջ ժողովուրդներ դեռևս չգիտեն, թե մի ուրիշ աշխարհամասի ժողովուրդներ ոտք են դրել իրենց երկիրը։ Գնո՞ւմ են Ճապոնիա, որտեղից նրանց ընդմիշտ արտաքսել են իրենց մեքենայությունների համար, և ուր նրանց նախորդները նոր սերնդի կողմից ճանաչվում են որպես նենգ ինտրիգաններ, որոնք կեղծ եռանդով եկել էին սուսուփուս տիրանալու նրանց կայսրությանը։ Գնո՞ւմ են Ասիայի իշխանների հարեմները՝ Ավետարանը քարոզելու հազարավոր խեղճ ստրուկներին։ Աշխարհի այս մասի կանայք ի՞նչ մեղք են գործել, որ ոչ մի միսիոներ չի գնում հավատք քարոզելու նրանց։ Մի՞թե նրանք բոլորը դժոխք պետք է գնան, որովհետև խուցերում արգելափակված են եղել։

Եթե հավատայինք, որ Ավետարանի խոսքը կտարածվի մի օր ամբողջ աշխարհով մեկ, ի՞նչ կլիներ մեր շահը դրանից։

Որևէ միսիոների առաջին անգամ մի երկիր ժամանելու նախօրեին, անկասկած, այնտեղ մի մարդ մեռած կլինի առանց նրան լսելու։ Կարո՞ղ եք ասել, թե ինչ պետք է անել այդպիսի մարդու հետ։ Ամբողջ տիեզերքում, թեկուզ մի մարդ Հիսուսի մասին ոչ մի քարոզ լսած չլիներ, դարձյալ առարկությունը նույնքան ուժեղ կլիներ այդ միակ մարդու, որքան և մարդկանց մի քառորդի համար։

Երբ Ավետարանի պաշտոնյաները գնացել են քարոզել հեռավոր ժողովուրդներին, սրանց ասե՛լ են այնպիսի բաներ, որ տրամաբանորեն ընդունելի լինեին և կարիք չունենային ամենաճշգրիտ ստուգման։ Նրանք կառարկեին. «Դուք ինձ հայտնում եք մի աստծու մասին, որը ծնվել ու մեռել է երկու հազար տարի առաջ, աշխարհի մյուս ծայրում, ինչ-որ փոքրիկ քաղաքում, և ասում եք, թե ովքեր չեն հավատալու այս դավանանքին, նզովված կլինեն։ Սրանք այնպիսի տարօրինակ բաներ են, որոնց դժվար է հավատալ՝ հենվելով սոսկ մի անծանոթ մարդու հեղինակության վրա։ Ինչո՞ւ ձեր աստվածը թողեց, որ ինձնից այդքան հեռու տեղի ունենան այն դեպքերը, որոնց կամենում էր ստիպել ինձ ծանոթանալ։ Մի՞թե ոճիր է անգիտանալ, թե ինչ է լինում մեր հակոտնյաներում։ Կարո՞ղ էի ես գուշակել, որ ուրիշ կիսագնդում մի եբրայական ազգ և մի երուսաղեմ քաղաք գոյություն են ունեցել։ Դա միևնույնն է, թե ինձ պարտավորեցնեն իմանալ, թե ինչ է կատարվում լուսնի վրա։ Դուք ասում եք, թե եկել եք ինձ դա ուսուցանելու. իսկ ինչո՞ւ չեկաք սովորեցնելու իմ հորը, կամ ինչո՞ւ եք անիծում այդ խեղճ ծերուկին՝ այդ մասին հրեք ոչինչ չգիտենալու համար։ Մի՞թե նա պետք է հավիտյան պատժված լինի ձեր ծուլության պատճառով, նա, որ այդքան բարեգործ էր ու միայն ճշմարտություն էր փնտրում։ Եղե՛ք ուղղամիտ, ապա ձեզ դրեք իմ տեղը և ասացե՛ք. մի՞թե ես պարտական եմ, միայն ձեր վկայության վրա հիմնվելով, հավատալ այն բոլոր անհավատալի բաներին, որ դուք եք ասում, և այնքան անարդարություններ հաշտեցնել այն արդար աստծու հետ, որի մասին դուք եք հայտնում։ Թողե՛ք ինձ, խնդրում եմ, որ գնամ տեսնեմ այդ հեռավոր երկիրը, որտեղ մեզ մոտ չլսված այնքան հրաշքներ են կա-

տարվում, գնամ ծանոթանալու, թե ինչո՞ւ Երուսաղեմի բնակիչները աստծու հետ վարվեցին որպես մի ավազակի։ Ասում եք, թե այդ մարդիկ նրան որպես աստված չեն ճանաչել։ Իսկ ե՞ս ինչ պետք է անեմ, քանի որ նրա մասին միայն ձեզնից եմ լսել։ Դուք ավելացնում եք, թե նրանք պատժվեցին, ցիրուցան արվեցին, ճնշվեցին, ստրկացվեցին, թե նրանցից ոչ մեկն այլևս չի մոտենում այդ քաղաքին։ Անկասկած, նրանք լիովին արժանի էին այդ պատժին, բայց այսօրվա բնակիչներն ի՞նչ են մտածում իրենց նախորդների աստվածասպանության մասին։ Նրանք այդ բանը ժխտում են, նրանք էլ չեն ճանաչում աստվածը որպես աստված։ Ավելի լավ չէ՞ր լինի, ուրեմն, թողնել մյուսների երեխաներին։

Ինչպե՞ս, այդ միևնույն քաղաքում, որտեղ աստվածն է մեռել, ո՛չ հին, ո՛չ նոր բնակիչները նրան չճանաչեցին, և դուք ուզում եք, որ ես նրան ճանաչե՞մ, ես, որ ծնվել եմ երկու հազար տարի հետո, երկու հազար մղոն հեռու այնտեղից։ Ջե՞ք կարծում, որ նախքան ես կհավատամ այն գրքին, որ դուք սուրբ եք անվանում, և որից ես ոչինչ չեմ հասկանում, պետք է իմանամ (ոչ թե ձեզնից, այլ ուրիշներից), թե ե՞րբ է գրվել այդ գիրքը, ովքե՞ր են գրել, ի՞նչպես է պահպանվել, ի՞նչպես է ձեզ հասել, ի՞նչպես են պատճառաբանում երկրում նրանք, ովքեր դեն են շպրտում այդ գիրքը, թեև ձեզ չափ գիտեն այն ամենը, ինչ սովորեցնում եք ինձ։ Դուք էլ զգում եք, որ ինձ անհրաժեշտ է գնալ Եվրոպա, Ասիա, Պաղեստին, որպեսզի ամեն ինչ ես ինքս ուսումնասիրեմ. հմար կլինեի, եթե ձեզ լսեի նախքան այդ»։

՝ Ոչ միայն այս ճառը ինձ տրամաբանական է թվում, այլև պնդում եմ, որ ամեն մի խելոք մարդ, նման պայմաններում, պետք է այդպես խոսի ու հեռու վանի այն միխոնների, որ, առանց փաստերը ճշտելու, շտապում է նրան քարոզել ու մկրտել։ Ընդմին պնդում եմ, որ չկա մի այնպիսի հայտնություն, որի դեմ միևնույն կամ այլ համազոր փաստարկները նույնքան և ավելի ուժի մեջ չլինեին, ինչքան քրիստոնեության դեմ։ Սրանից հետևում է, որ եթե միայն մի ճշմարիտ կրոն գոյություն ունի, որ ամեն մարդ պարտավոր է ընդունել՝ նզովքի սպառնալիքի տակ, ապա

պետք է ամբողջ կյանքն անցկացնել բոլոր կրոններն ուսումնասիրելով, խորացնելով, համեմատելով, և շրջել այն բոլոր երկրները, որտեղ հաստատվել են այդ կրոնները։ Ոչ ոք ազատ չէ մարդու նախնական պարտականությունից, ոչ ոք իրավունք չունի վստահելու ուրիշի դատողությանը։ Իր աշխատանքով ապրող արհեստավորը, կարդալ չիմացող երկրագործը, փափկասուն և ամաչկոտ աղջիկը, անկողնուց հազիվ վեր կացող հաշմանդամը, բոլորը, առանց բացառության, պարտավոր են ուսումնասիրել, խորհել, վիճել, համփորդել, շրջել աշխարհը. այլևս ոչ մի նստակյաց, կայուն ժողովուրդ չի լինելու. ամբողջ աշխարհը պիտի ծածկվի ուխտագնացներով, որոնք բազում ու հոգնեցուցիչ ճանապարհորդություններով պիտի գնան անձամբ ճշտելու, համեմատելու, քննելու տարբեր տեսակի հավատալիքները։ Այդ դեպքում, մնա՛ք բարով արհեստներ, արվեստներ, մարդկային գիտություններ ու բոլոր քաղաքացիական զբաղմունքներ. մարդիկ ստիպված կլինեն միայն կրոնքի ուսումնասիրությամբ զբաղվելու. այն մարդը, որ օժտված կլինի ամենազորավոր առողջությամբ, որ լավագույն ձևով օգտագործել է իր ժամանակը, գործածել՝ իր բանականությունը, ապրել՝ ամենից երկար, մեծ դժվարությամբ իր ծերության հասակում կիմանա, թե բանն ինչումն է. և նրա համար մեծ հաջողություն կլինի, եթե մեռնելուց առաջ գիտենա, թե որ կրոնը պետք է ընդգրկած լիներ։

Եթե ուզում եք մեղմել այս մեծորը ու մարդկանց հեղինակությանը տալ նվազագույն ազդեցությունը, նույն րոպեին դուք նրան կտաք ամեն ինչ. և եթե մի քրիստոնյայի զավակը, առանց խոր ու անաչառ քննության, հետևում է հոր կրոնքին, ապա ի՞նչ վատ բան արած կլինի մահմեդականի տղան՝ հետևելով իր հոր դավանանքին։ Ես կոչ եմ անում բոլոր մոլեռանդներին՝ այս հարցին պատասխանել մի խելոք մարդու բավարարող ձևով։

Այս փաստարկների ճնշման տակ, ոմանք գերադասում են աստծուն դարձնել անարդար և անմեղներին պատժել իրենց հայրերի մեղքերի համար, քան թե հրաժարվել իրենց բարբարոս վարդապետությունից։ Ուրիշները բավարարվում են յարեհաճորեն մի հրեշտակ ուղարկելով՝ ուսուցանելու նրան,

ով, անհաղթելի տգիտությամբ մեջ, բարոյական լավ կյանքով է ապրել։ Ի՞նչ հրաշալի գյուտ է այս հրեշտակ աստվածը։ Ջրավարարվելով մեզ ստրկացնել իրենց հնարանքներին, նրանք նույնիսկ աստծուն ստիպում են օգտվել դրանցից։

Տեսե՛ք, տղաս, թե ինչպիսի անհեթեթության է տանում գոռոզամտությունն ու կրոնական աններողամտությունը, երբ մեզնից յուրաքանչյուրը կամենում է պնդել իր տեսակետը, կարծելով, թե ամբողջ մարդկության մեջ ինքն է միակ իրավացին։ Վկա է խաղաղության այն աստվածը, որին պաշտում եմ և ձեզ ծանոթացնում, որ իմ բոլոր հետազոտությունները անկեղծ էին. բայց տեսնելով, որ նրանք եղել են ու միշտ էլ կլինեն ապարդյուն, որ ես սուզվում եմ մի անեզր օվկիանոսի մեջ, ետ դարձա իմ ճամփից ու հավատս սահմանափակեցի իմ նախնական ծանոթություններով։ Ես երբեք չեմ հավատացել, թե աստված երբևիցե ինձ կպարտավորեցներ, դժոխքի պատժով, այդքան գիտնական լինել։ Ուրեմն, ես փակեցի բոլոր գրքերը։ Միայն մեկն է բաց բոլորի աչքերի առաջ՝ դա բնության գիրքն է։ Այդ մեծ ու փառահեղ գրքում է, որ ես սովորում եմ ծառայել ու պաշտել նրա աստվածային հեղինակին։ Ոչ ոքի ներելի չէ չկարդալ այդ գիրքը, որովհետև նա խոսում է բոլոր մարդկանց հետ նրանց մտքին հասկանալի լեզվով։ Եթե ես ծնված լինեի մի ամայի կղզում, եթե, բացի ինձնից, ուրիշ մարդ չտեսնեի, եթե չնավ չգիտենայի, թե հնում ինչ է կատարվել աշխարհի մի անկյունում, գործադրելով, մշակելով իմ բանականությունը, լավագույն կերպով օգտագործելով աստծու ինձ տված անմիջական ընդունակությունները, ես մենակ կսովորեմ ճանաչել, սիրել նրան, սիրել նրա գործերը, ցանկանալ այն բարին, որ ինքն է ցանկանում և, նրան հաճելի լինելու համար, կատարել իմ բոլոր երկրային պարտականությունները։ Դրանից ավելի էլ ի՞նչ կարող են ինձ սովորեցնել մարդկանց ամբողջ գիտելիքները։

Ինչ վերաբերում է աստվածային հայտնությանը, եթե ես ավելի լավ տրամաբանող կամ ավելի լավ դաստիարակված լինեի, գուցե զգայի նրա ճշմարտացիությունը, նրա օգտակարությունը այն մարդկանց համար, որ երջանկություն են

ունեցել նրան ճանաչելու. բայց, եթե տեսնում եմ ի նպաստ նրան այնպիսի փաստեր, որ չեմ կարող հերքել, ապա միևնույն ժամանակ տեսնում եմ նրա դեմ այնպիսի առարկություններ, որ չեմ կարող լուծել։ Այնքան թեր և դեմ ուժեղ փաստարկություններ կան, որ չկարողանալով մի որոշման հանգել՝ ես նրան ո՛չ ընդունում եմ, ո՛չ էլ մերժում. մերժում եմ միայն նրան ճանաչելու պարտավորությունը, որովհետև այդ կարծեցյալ պարտավորությունը չի համատեղվում աստվածային արդարության հետ, և դրանով փոխանակ փրկության առաջ կանգնած խոչընդոտները վերացնելու, կբազմապատկեին դրանք, մարդկանց մեծամասնության համար կդարձնեին անհաղթելի։ Բացի դրանից, այս կետում ես մնում եմ մի հարգալի տարակուսանքի մեջ։ Ես ինձ անսխալականը կարծելու չափ հավակնոտ չեմ. ուրիշները կարողացել են վճռել այն, որ ինձ համար անվճռելի է. ես դատում եմ ի՛նձ համար և ոչ թե նրանց համար. նրանց ո՛չ մեղադրում եմ, ո՛չ էլ ընդօրինակում։ Նրանց դատողությունը կարող է իմ դատողությունից լավ լինել. բայց մեղավորը ես չեմ, եթե ինքս էլ նրանց պես չեմ դատում։

Ես նաև խոստովանում եմ, որ Սուրբ գրքի վեհությունը ղարմացնում է ինձ, Ավետարանի սրբությունը հուզում է իմ սիրտը, և ես ցավում եմ, որ նրա դեմ մի քանի առարկություններ ունեմ։ Տեսե՛ք փիլիսոփաների այնքան շռնդալից գրքերը. ինչքա՜ն փոքր են նրանք սրա մոտ։ Կարո՞ղ է պատահել, որ այդքան հոյակապ ու այդքան պարզ մի գիրք մարդկանց գործը լինի։ Կարո՞ղ է պատահել, որ նա, ում մասին է պատմում այդ գիրքը, ինքն էլ մարդ եղած չլինի։ Մի՞թե դա մի էնտուզիաստի կամ մի աղանդավորի լեզուն է։ Ինչպիսի՜ քաղցրություն, բարքերի ինչպիսի՜ մաքրություն, պատվիրանների ինչպիսի՜ հուզիչ շնորհալիություն, սկըզբունքների ինչպիսի՜ վսեմություն, խոսքերի ինչպիսի՜ խորհրդավորություն, ինչպիսի՜ արթնամտություն, պատասխանների ինչպիսի՜ նրբություն ու ճշտություն, կրքերի ինչպիսի՜ զսպվածություն։ Ո՞րտեղ է այն մարդը, այն իմաստունը, որ կարող է գործել, տանջվել ու մեռնել՝ առանց տկարանալու ու առանց ցուցամոլության։ Երբ Պլատոնը նկարագրում է իր

երևակայական արդարին [1], ոճրի ամբողջ խայտառակությամբ ծածկված և արժանի՝ առաքինության բոլոր մրցանակներին, նա կետ առ կետ Հիսուսին է նկարագրում. նմանությունն այնքան ակնբախ է, որ եկեղեցու բոլոր հայրերը այդ զգացել են, և հնարավոր չէ սխալվել։ Ինչքա՞ն նախապաշարումներից և ինչքա՞ն մտավոր կուրությունից զերծ պետք է լինի մարդ, որպեսզի համարձակվի Սոֆրոնիսկի որդուն Մարիամի որդու հետ համեմատել։ Ինչպիսի՞ հեռավորություն նրանց երկուսի միջև։ Սոկրատը, մահը դիմավորելով անվրդով, առանց նվաստանալու, մինչև վերջ հեշտությամբ պահեց իր անհատականությունը և եթե մահվան դիմաց իր անհողդողդ կեցվածքով չպատվեր իր կյանքը, կարելի էր կասկածել, որ նա, իր ամբողջ իմաստությամբ հանդերձ, մի սոփեստ էր սոսկ, ուրիշ ոչինչ։ Ասում են, թե նա է հնարել բարոյականությունը. ուրիշները, նրանից առաջ, այդ արդեն կիրառել էին. նա ուրիշ բան չարեց, բայց եթե ասել այն, ինչ ուրիշներն արել էին, նրանց օրինակները վերածեց ուսմունքի։ Արիստիդեսը արդար էր եղել՝ նախքան Սոկրատի ասելը, թե ինչ բան է արդարությունը։ Լեոնիդասը մեռել էր իր հայրենիքի համար՝ նախքան Սոկրատի կողմից հայրենիքի սերը պարտականություն հայտարարվելը։ Սպարտան ժուժկալ էր՝ նախքան Սոկրատը փառաբանեց ժուժկալությունը։ Նախքան նա տվեց առաքինության սահմանումը, Հունաստանը հարուստ էր առաքինի մարդկանցով։ Բայց ո՞րտեղից էր Հիսուսը, յուրայինների մոտ, վերցրել այն վսեմ ու մաքուր բարոյականությունը, որի դասերն ու օրինակը միայն ինքն է տվել։ Ամենակատաղի մոլեռանդության ծոցից լսվեց ամենաարարձր իմաստությունը, և ամենահերոսական առաքինությունների պարզությունը պատվով պսակեց բոլոր ժողովուրդներից ամենաստորին։ Սոկրատի մահը, որ վրա հասավ, երբ նա հանգիստ փիլիսոփայում էր իր բարեկամների հետ, ցանկալի ամենաքաղցր մահն է. Հիսուսի մահը, որ տեղի ունեցավ մի ամբողջ ժողովրդի հայհոյանքների, ծաղրուծանակի և անեծքների տարափի տակ, ամենասոսկալին է։ Սոկրատը, երբ վերցնում է իրեն ներկայացված

[1] «Պետության մասին», գ. 1։

թույնի բաժակը, օրհնում է այն տվողին, որը լաց է լինում. Հիսուսը, ահռելի տանջանքների մեջ, աղոթում է մոլեգնած դահիճների համար: Այո, եթե Սոկրատն ապրեց ու մեռավ մի իմաստունի նման, Հիսուսն ապրեց ու մեռավ որպես աստված: Գուցե ասեն, թե Ավետարանի պատմությունը քմահաճ մի հերյուրվածք է: Բարեկա՛մս, այդպես չեն հերյուրում, և Սոկրատի վերաբերյալ իրողությունները, որոնց ճշտությանը ոչ ոք չի տարակուսում, ավելի քիչ են հաստատված, քան Հիսուսինը: Իրականում, մենք ետ ենք մղում դժվարությունը՝ առանց այն ոչնչացնելու. շատ ավելի անըմբռնելի է այն, որ մի քանի մարդիկ միասնաբար կազմած լինեն այդ գիրքը, քան այն, որ միայն մի մարդ է տվել նրա նյութը: Երբեք հրեա հեղինակները չէին գտնի ո՛չ այդ ոճը, ո՛չ այդ բարոյականությունը, և Ավետարանը ճշմարտության այնպիսի մեծ, այնպիսի ուշագրավ, այնքան բացարձակորեն աննման դծեր ունի, որ այն հորինողը ավելի զարմանալի կլիներ, քան թե ինքը՝ հերոսը: Դրա հետ միասին, այդ միևնույն Ավետարանը լիքն է անհավատալի, բանականության հետ չհաշտվող իրողություններով, որոնք ոչ մի գիտակից մարդ չի կարող ո՛չ ըմբռնել, ո՛չ ընդունել: Ի՞նչ անել այս բոլոր հակասությունների մեջ: Լինել միշտ համեստ ու շրջահայաց, տղա՛ս, լռությամբ հարգել այն, որը չենք կարող ո՛չ մերժել, ո՛չ հասկանալ, և խոնարհվել այն մեծ էակի առաջ, որը միայն գիտի ճշմարտությունը:

Ահավասիկ այն ակամա տարակուսանքը, որն ինձ համակել է. բայց այդ տարակուսանքը ինձ համար դժնդակ չէ, որովհետև դա չի տարածվում այն կետերի վրա, որոնք գործնական կարևորություն ունեն, և ես հաստատապես որոշել եմ իմ բոլոր պարտականությունների սկզբունքները: Ես աստծուն ծառայում եմ պարզ սրտով. ցանկանում եմ միայն իմանալ այն, ինչ վերաբերում է իմ վարքագծին: Գալով այն վարդապետություններին, որոնք ո՛չ գործերի, ո՛չ էլ բարոյականության վրա են աղդում, և որոնք այնքան մարդկանց են տանջում, դրանք երբեք հաշվի չեմ առնում: Ես բոլոր մասնավոր կրոններն ընդունում եմ որպես փրկարար հաստատություններ, որոնք յուրաքանչյուր երկրում սահմանում են

հրապարակային պաշտամունքով աստծուն մեծարելու միա-
տեսակ մի ձև. դրանք բոլորը կարող են պայմանավորված
լինել կլիմայով, կառավարման բնույթով, ժողովրդի ոգով
կամ մեկ ուրիշ՝ տեղական բնույթի պատճառով, որը, ըստ
ժամանակի և տեղի, մի կրոնը մյուսից նախամեծար է դարձ-
նում։ Բոլորն էլ լավ եմ գտնում, բավական է, որ դրանցով
պատշաճ կերպով ծառայում են աստծուն։ Գլխավորը՝ սրտի
կրոնն է։ Աստված երբեք չի հրաժարվի այդ պատվից, եթե
նա անկեղծ է, ինչ ձևով էլ դա նրան մատուցվի։ Կոչված
լինելով իմ դավանած եկեղեցուն ծառայելու՝ ես ամենայն
հնարավոր ճշտությամբ կատարում եմ ինձ վրա դրված պար-
տականությունները. իմ խիղճը ինձ կտանջեր, եթե գիտակ-
ցաբար դրանցից որևէ մեկում թերանայի։ Երկար ագելյից
հետո, դուք այդ գիտեք, ես պ. դը Մելարեդի միջնորդու-
թյամբ, իրավունք ստացա վերսկսելու իմ աշխատանքը, որ-
պեսզի կարողանամ ապրել։ Անցյալում ես պատարագը կա-
տարում էի թեթևամտությամբ, ինչպես վարվում են, վերջի-
կերջո, ամենալուրջ, բայց հաճախակի կատարված գործերի
հետ. սակայն իմ նոր սկզբունքներից հետո ես պատարագը
կատարում եմ ավելի մեծ հարգանքով. ես համակվում եմ
գերագույն էակի վեհության, ներկայության և մարդկային
ոգու անբավարարության զգացումներով, այն մարդկային
ոգու, որն այնքան քիչ է ըմբռնում իրեն ստեղծողի հետ
առնչվող ամեն ինչ։ Մորհելով, որ ես սահմանված կարգով
նրան մատուցում եմ ժողովրդի ցանկությունները, խնամքով
հետևում եմ բոլոր ծեսերին. ես ուշադրությամբ եմ արտա-
սանում աղոթքները, աշխատում եմ ոչ մի խոսք, ոչ մի արա-
րողություն բաց չթողնել, երբ հասնում եմ նվիրագործման
րոպեին, ես ամփոփվում եմ իմ մեջ՝ այն կատարելու համար
եկեղեցու պահանջած ամբողջ կանոններով և համաձայն
արարողության վեհության. ես ջանում եմ անէացնել իմ դա-
տողությունը գերագույն իմացականության առաջ, ինքս ինձ
ասում եմ. «Ո՞վ ես դու, որ կարողանաս չափել անսահման
զորությունը»։ Ես հարգանքով եմ արտասանում սրբազան
խոսքերն ու նրանց ազդեցությունն ընդունում եմ ինձնից
կախված ամբողջ հավատքով։ Ինչ էլ լինի այդ անիմա-

նալի խորհուրդը, ես երկյուղ չունեմ, որ դատաստանի օրը պատժվեմ նրան երբևիցե իմ սրտում պղծած լինելու համար։ Արժանացած լինելով սրբազան պաշտոնի, թեև գտնվում եմ վերջին շարքերում, ես չեմ անի ու չեմ ասի ոչ մի այնպիսի բան, որն ինձ զրկեր դրա վսեմ պարտականությունները կատարելու իրավունքից։ Ես մարդկանց միշտ առաքինության կկոչեմ, նրանց կհորդորեմ բարիք անել և, ինչքան կարող եմ, շարունակ ինքս նրանց օրինակ կհանդիսանամ։ Ինձնից կախված չի լինի կրոնը նրանց սիրելի դարձնել, ինձնից կախված չի լինի ամրապնդել նրանց հավատքը իրոք օգտակար վարդապետությունների մեջ, որոնց ամեն մարդ պարտավոր է հավատալ, բայց աստված ոչ անի, որ ես նրանց քարոզեմ աններողամտության դաժան վարդապետությունը, նրանց թելադրեմ ատել իրենց մերձավորներին, ասել ուրիշ մարդկանց՝ «Դուք նզովված կլինեք», կամ՝ «Արտաքո եկեղեցվո չիք փրկություն»[1]։ Թեև ես ավելի բարձր աստիճան ունենայի, այս վերապահումը նոր գլխացավանք կբերեր. բայց ես այնքան փոքր մարդ եմ, որ վախենալու քիչ պատճառ ունեմ և իմ աստիճանից ավելի ցածր ընկնել չեմ կարող։ Ինչ էլ պատահի, ես չեմ հայհոյի երկնային արդարությանը ու չեմ ասի սուրբ հոգուն։

Ես երկար ժամանակ փառասիրություն եմ ունեցել ծխական քահանա լինել. տակավին ունեմ այդ փառասիրությունը՝ առանց հույսի։ Իմ լա՛վ բարեկամ, ես դրանից ավելի վեհացիկ բան չգիտեմ։ Լավ ծխական քահանան բարուքյան միջնորդն է, ինչպես լավ դատավորը՝ արդարության միջնորդը։ Քահանան երբեք վատություն չպիտի անի. եթե միշտ չի կարող ինքը լավություն անել, համենայն դեպս, իր կոչմանը հավատարիմ կգտնվի՝ այն հայցելով և շատ անգամ հաս-

[1] Իր երկրի կրոնին հետևելու և այն սիրելու պարտականությունը պետք է տարածվի մինչև բարոյականի հակառակ դավանանքների վրա, ինչպես աններողամտությունը։ Այս նողկալի դավանանքն է, որ մարդկանց դինում է մեկը մյուսի դեմ ու նրանց բոլորին մարդկային ցեղի թշնամի դարձնում։ Քաղաքացիական հանդուրժողության և աստվածաբանական հանդուրժողության միջև տարբերությունը ոչինչ է։ Այս երկու հանդուրժողություններն անբաժանելի են և չի կարելի մեկն ընդունել առանց մյուսի։ Հրեշտակներն անգամ խաղաղությամբ չէին ապրի մարդկանց հետ, նրանց դիտելով որպես աստծու թշնամիներ։

է իր նպատակին, եթե գիտի ինքն իրեն հարգել տալ։ Ա՜հ, եթե մեր լեռներում բարի մարդկանցից բաղկացած մի ծուխ ունենայի, ես երջանիկ կլինեի, որովհետև ինձ թվում է, թե կկարողանայի իմ ծխականներին երջանկացնել։ Ես նրանց հարուստ չէի դարձնի, բայց թշվառությունը կբաժանեի նրանց հետ. նրանցից կվերացնեի արատներն ու անարգանքները, որոնք ավելի անտանելի են, քան չքավորությունը։ Ես կանեի այնպես, որ նրանք սիրեն համերաշխությունն ու հավասարությունը, որոնք հաճախ վանում են թշվառությունն ու միշտ տանելի են դարձնում այն։ Երբ նրանք տեսնեն, որ ես իրենցից ավելի լավ դրության մեջ չեմ, բայց և այնպես գոհ եմ իմ կյանքից, կսովորեն մխիթարվել իրենց վիճակով և ապրել ինձ նման բավարարված։ Իմ պատվիրանների մեջ ես կելնեմ ավելի շուտ Ավետարանի, քան եկեղեցու ոգուց, որովհետև նրա մեջ վարդապետությունը պարզ է ու բարոյականը՝ վսեմ, և այնտեղ ավելի շատ ողորմածության գործեր, քան կրոնական ծխակատարություններ կգտնենք։ Նախքան նրանց սովորեցնելը, թե ինչ պետք է անել, կջանամ միշտ ինքս անել այն, որպեսզի տեսնեն, թե ինչ որ նրանց ասում եմ, նույնը և մտածում եմ։ Եթե իմ հարևանների կամ ծխականների մեջ բողոքականներ լինեն, ես նրանց չեմ ջոկի իմ իսկական ծխականներից քրիստոնեական ողորմածության հարցում. ես նրանց բոլորին հավասարապես կթելադրեմ սիրել միմյանց, լինել եղբոր նման, հարգել բոլոր կրոնները և յուրաքանչյուրը խաղաղ ապրել իր դավանանքի մեջ։ Ես կարծում եմ, որ թելադրելով մեկին հեռանալ այն դավանանքից, որի մեջ նա ծնվել է, ես նրան կմղեմ վատ բան անելու. հետևապես ինքս էլ վատ բան արած կլինեմ։ Սպասելով ավելի մեծ լուսավորության, պահպանենք հանրային կարգը, բոլոր երկրներում հարգենք օրենքները, չխանգարենք այդ օրենքների կողմից ճահմանված պաշտամունքին, քաղաքացիներին չդրդենք անհնազանդության, վասնզի չգիտենք՝ արդյո՞ք նրանց համար լավ կլինի թողնել իրենց համոզմունքները՝ ուրիշներն ընդունելու համար. այնինչ ստույգ գիտենք, որ լավ չէ օրենքներին չհնազանդվելը։

Երիտասարդ բարեկա՛մս, ես ձեզ բանավոր շարադրեցի

իմ հավատո հանգանակը, այնպես՝ ինչպես իմ սրտում կարդում է աստված. դուք առաջին անձն եք, որին այդ անում եմ. գուցե և միակը կլինեք, որն այդ լսած կլինի ինձնից։ Այնքան ժամանակ, որ մարդկանց մեջ մնում է մի բարի հավատք, չպետք է երբեք խոովել հանգիստ հոգիները, ոչ էլ վրդովել պարզամիտների հավատքը այնպիսի կնճռոտ հարցերով, որոնք նրանք չեն կարող լուծել, և որոնք նրանց անհանգստացնում են՝ առանց լուսավորելու։ Բայց մի անգամ որ ամեն ինչ խախտվում է, պետք է պահպանել ծառի բունը, զոհելով ճյուղերը։ Հուզված, տատանվող, համարյա հանգած խղճերը, որոնք գտնվում են նույն այն վիճակում, որի մեջ է գտնվում ձերը, կարիք ունեն ամրապնդվելու և զարթնելու, նրանց հավերժական ճշմարտությունների հիմքի վրա վերահաստատելու համար պետք է վերջնականապես հեռացնել այն խարխուլ հենարանները, որոնցից դեռևս նրանք ուզում են կառչել։

Դուք այն տագնապալի տարիքումն եք, երբ միտքն սկսում է ստույգ հասկանալ ամեն ինչ, երբ սիրտն ստանում է իր ձևն ու նկարագիրը, երբ մարդիկ իրենց ամբողջ կյանքի համար որոշում են լավն ու բարին։ Ավելի ուշ գոյանյութը կարծրանում է, ու նոր հետքերն այլևս չեն դրոշմվում։ Սիրտասա՛րդ, ձեր դեռևս ճկուն հոգու մեջ ընդունեցեք ճշմարտության կնիքը։ Եթե ինքս ինձ վրա ավելի վստահություն ունենայի, ձեզ հետ կխոսեի վարդապետական ու վճռական տոնով. բայց ես մարդ եմ, տգետ, սխալական. ի՞նչ կարող էի անել։ Ես իմ սիրտը ձեզ բաց արի առանց վերապահության. ինչ որ ինձ համար ստույգ է, ես այդ ձեզ պարզեցի որպես այդպիսին. իմ կասկածները հայտնեցի որպես կասկածներ, իմ կարծիքները՝ որպես կարծիքներ. ձեզ ասացի իմ կասկածելու և հավատալու պատճառները։ Այժմ ձեզ է մնում դատել. դուք դրա համար ժամանակ ուզեցիք. այդ մի խելոք նախազգուշություն է և դրականապես է խոսում ձեր մասին։ Պատրաստեցե՛ք ձեր գիտակցությունը նախ այնպես, որ նա ի վիճակի լինի լուսավորվելու։ Եղե՛ք անկեղծ ինքներդ ձեզ հետ։ Իմ հայտնած զգացմունքներից յուրացրե՛ք այն, ինչ դուք համոզիչ եք գտել, և մնացածը դե՛ն նետեք։ Մոլությունները դեռևս

ձեզ այնքան չեն ապականել, որպեսզի վատ ընտրություն կատարելու սխալը գործեք։ Ես ձեզ կառաջարկեի խորհրդակցել միասին. բայց հենց որ մարդիկ սկսում են վիճել, իսկույն սաքանում են։ Նանրամտությունը, կամակորությունը խառնըվում են գործին, և ողջամտությունը կորչում է։ Բարեկա՛մս, մի՛ վիճեք երբեք, որովհետև վիճաբանությամբ չենք կարող լուսաբանել ո՛չ մեզ, ո՛չ ուրիշներին։ Ես ինքս երկար սարիներ խորհելուց հետո միայն տվել եմ իմ որոշումը և մնում եմ հաստատ դրա վրա։ Իմ խիղճը հանգիստ է, իմ սիրտը՝ զոհ։ Եթե ուզեի վերանայել իմ զգացմունքները, ես այդ չէի կարող անել մի ավելի անարատ սիրով դեպի ճշմարտությունը, և իմ միտքը, որն արդեն կորցրել է իր աշխուժությունը, սակավ ի վիճակի կլիներ այն ճանաչելու։ Ես կմնամ այնպես՝ ինչպես կամ, վախենալով, որ չլինի անզգալիորեն մտահայեցողության հակումը ունայն մի կիրք դառնալով՝ թուլացնի իմ պարտականությունների կատարումը, և ես վերստին ընկնեմ իմ նախկին երկբայության մեջ, առանց նորից ուժ գտնելու դրանից դուրս գալու համար։ Իմ կյանքի կեսից ավելին անցել է, ես հազիվ ժամանակ ունեմ մնացորդից օգտվելու և առաքինություններով ուղղելու իմ սխալները։ Եթե ես սխալվեմ, դա կլինի իմ կամքից անկախ։ Նա, ով կարդում է իմ սիրտը, շատ լավ հասկանում է, որ ես չեմ ւիրում իմ կուրությունը։ Անկարող լինելով դրանից փրկվել իմ սեփական լուսավորությամբ, միակ միջոցը, որ մնում է ինձ դրա համար, քարի կյանքն է. և քանի որ քարերից անգամ աստված կարողացավ Աբրահամի համար երեխաներ ստեղծել, ամեն մարդ իրավունք ունի լուսավորվելու հույս ունենալ, եթե, իհարկե, դրան արժանի է։

Եթե իմ խորհրդածությունները ձեզ համոզեն մտածելու ինձ նման, եթե յուրացնեք իմ զգացմունքները, և եթե մենք ունենանք նույն հավատո հանգանակը, ահա իմ խորհուրդը ձեզ. ձեր կյանքն այլևս մի՛ ենթարկեք թշվառության և հուսահատության փորձություններին, նրան այլևս խայտառակությամբ մի՛ քարշ տվեք՝ օտարների քմահաճույքին խաղալիք դարձած, և դադարեցե՛ք ողորմության գարշելի հացն ուտել։ Վերադարձե՛ք ձեր հայրենիքը, կրկին ընդունեցե՛ք ձեր հայ-

յների հավատքը, անկեղծ սրտով հետևեցե՛ք նրան ու այլևս մի՛ հեռանաք դրանից. նա շատ պարզ է ու շատ սուրբ. ես համոզված եմ, որ աշխարհում գոյություն ունեցող բոլոր կրոնների մեջ նա ամենից բարոյականն է և ամենից ավելի բավարարում է բանականությանը։ Ինչ վերաբերում է ճանապարհածախսին, այդ մասին չմտածեք, կճարենք։ Չվախենա՛ք նաև նվաստացուցիչ վերադարձի ամոթից. պետք է կարմրել սխալը կատարելիս, այլ ոչ թե այն ուղղելիս։ Դուք դեռևս գտնվում եք այն տարիքում, երբ ամեն ինչ ներվում է, բայց չի կարելի մեղանչել անպատիժ։ Երբ դուք ցանկանաք լսել ձեր խղճի ձայնին, հազարավոր սին արգելքներ այդ ձայնից կչքանան։ Դուք կզգաք, որ այն անորոշության մեջ, ուր մենք գտնվում ենք, աննկարելի մեծամտություն է դավանել մի այլ կրոնք, քան այն, որի մեջ ծնվել ենք, և կեղծարարություն՝ անկեղծորեն չկիրառել այն դավանանքը, որին հավատում ենք։ Եթե մոլորվենք, գերագույն դատավորի դատարանում մենք կկորցնենք արդարանալու մի մեծ փաստ։ Ավելի շուտ նա մեզ կների այն սխալի համար, որ մենք ժառանգել ենք ուրիշներից, բայց ոչ այն սխալի, որ մենք ընտրել ենք մեր հոժար կամքով։

Որդի՛ս, թո՛ղ ձեր հոգին միշտ տրամադրված լինի մի աստծու գոյությունն ընդունելու, և դուք երբեք չեք կասկածի նրա գոյությանը։ Բացի այդ, ինչպիսի որոշում էլ ընդունեք, մտածեցե՛ք, որ կրոնի ճշմարիտ պարտականություններն անկախ են մարդկանց կողմից մտեղծված հիմնարկներից, որ արդար սիրտը երկնային էության իսկական տաճարն է, որ ամեն մի երկրում և ամեն մի աղանդում օրենքի բովանդակությունն է՝ սիրել աստծուն ամեն ինչից ավելի և մերձավորին՝ սեփական անձին հավասար, որ ոչ մի կրոն ոչ ոքի չի ազատում բարոյական պարտավորություններից, որ սրանցից ավելի լրոք կարևոր պարտավորություններ չկան, որ ներքին պաշտամունքը այդ պարտավորություններից առաջինն է, և թե առանց հավատքի ոչ մի ճշմարիտ առաքինություն չկա։

Խուսափեցե՛ք նրանցից, ովքեր, բնությունը բացատրելու պատրվակով, մարդկանց սրտերում տաղտկալի ուսմունքներ են սերմանում, և որոնց առերևույթ կասկածանքը հարյուր ան-

գամ ավելի հաստատական ու ավելի դոգմատիկ է, քան թե նրանց հակառակորդների վճռական տոնը։ Այն մեծամիտ պատճառաբանությամբ, որ, իբր թե, միայն իրենք են լուսավորված, իրավացի, ողջամիտ, նրանք մեզ պարտադրում են իրենց կտրուկ որոշումները և հավակնում են որպես իրերի իսկական սկզբունքներ մեզ ներկայացնել իրենց երևակայության մեջ կառուցած անըմբռնելի սիստեմները։ Բացի այդ, ատապալելով, քանդելով, տրորելով այն ամենը, ինչ մարդիկ հարգում են, ճնշվածներից խլում են նրանց թշվառության վերջին սփոփանքը, իշխողներից ու հարուստներից վերացնում նրանց կրքերի միակ արգելակը, սրտերից պոկում են հանցանքի խղճահարությունը, առաքինության հույսն ու դեռ պարծենում են, թե մարդկային ցեղի բարեգործներ են։ Նրանք ատում են, թե ճշմարտությունը երբեք չի վնասում մարդկանց։ Ես էլ եմ այդպես հավատում, և, իմ կարծիքով, հենց դա մի զորավոր փաստ է, որ նրանց ուսուցածը ճշմարտություն չէ [1]։

---

[1] Երկու կողմերը միմյանց վրա փոխադարձաբար այնպիսի սոփեստություններով են հարձակվում, որ մի վիքխարի ու հանդուգն գործ կլիներ այդ բոլորի մասին անդրադառնալը. կարծում եմ, որ բավական է նրանցից մի քանիսը հիշատակել ամեն անգամ, երբ առիթը ներկայանա։ Փիլիսոփայական կուսակցության շատ սիրած սովորություններից մեկն է, իբր թե, լավ փիլիսոփաներից բաղկացած մի ժողովուրդ հակադրել վատ քրիստոնյաներից բաղկացած մի այլ ժողովրդի, առանց ավելի հեշտ է ճշմարիտ փիլիսոփաների մի ժողովուրդ պատրաստել, քան թե ճշմարիտ քրիստոնյաների մի ժողովուրդ։ Ջեֆեռսի, թե արդյո՞ք անհատների մեջ մեկն ավելի հեշտ է գտնել, քան մյուսը, բայց լավ գիտեմ, որ երբ հարցը գալիս է ժողովուրդներին, պետք է ենթադրել, թե ոմանք կկարողանան առանց կրոնի փիլիսոփայությունը, ինչպես մերոնք՝ առանց փիլիսոփայության կրոնը. և ինձ թվում է, թե այս իրողությունը շատ է փոխում հարցը։

Բեյլը շատ լավ ապացուցել է, որ մոլեռանդությունն ավելի վտանգավոր է, քան անաստվածությունը, այդ անհերքելի է. բայց ինչ որ նա չի ասել, և ինչ որ ոչ սակավ ճշմարիտ է, այդ այն է, որ մոլեռանդությունը, թեև արյունռուշտ ու դաժան, բայց և այնպես մեծ և ուժեղ մի կիրք է, որը վեհացնում է մարդու սիրտը, զինում նրան արհամարհանքով դեպի մահը, մարդուն տալիս է մի հրաշալի կորով, մնում է միայն նրան լավ ղեկավարել՝ նրանից ամենավսեմ առաքինություններ ստանալու համար. մինչդեռ անհավատությունը, և ընդհանրապես դատող ու փիլիսոփայող միտքը, թաթարում է կյանքը, մեղկացնում, նվաստացնում է հոգիները,

Բարի երիտասա՛րդ, եղե՛ք անկեղծ ու ճշմարտացի՝ առանց մեծամտության. հարկ եղած դեպքում, իմացե՛ք և տգետ լինել. դուք չեք խաբի ո՛չ ձեզ, ո՛չ ուրիշներին։ Եթե երբևիցե ձեր մշակված ընդունակությունները ձեզ ի վիճակի դարձնեն խոսելու մարդկանց հետ, խոսեցե՛ք միայն ձեր խղճին անսալով, առանց հաշվի առնելու՝ կծափահարե՞ն ձեզ թե ոչ։ Գիտելիքների չարաչար օգտագործումը թերահավատություն է առաջացնում։ Ամեն ուսումնական մարդ արհամարհում է հասարակ զգացումը. ամեն մեկն ուղում է իր սեփական զգացումն ունենալ։ Գոռոզ փիլիսոփայությունը տանում է դեպի ուժեղ միտքը, ինչպես կույր ջերմեռանդությունը տանում է դեպի մոլեռանդություն։ Զգուշացե՛ք այդ ծայրահեղություններից. միշտ հավատարիմ մնացե՛ք ճըշմարտության ուղուն, կամ այն բանին, որը ձեր սրտի պարզության մեջ որպես այդպիսին կերևա, Թող ո՛չ անափառու-

---

բոլոր ցանկությունները կենտրոնացնում է ստոր մասնավոր շահի, մարդկային գծուծ եսի մեջ ու կամաց-կամաց քանդում է ամեն մի հասարակության իսկական հիմքերը, որովհետև մասնավոր շահերի ընդհանրությունը այնքան չնչին է, որ չի կարող հակակշռել նրանց միջև գոյություն ունեցող հակադրությունը։

Եթե անաստվածությունը մարդկանց արյունը քաշել չի տալիս, դա ավելի շուտ բարու մասին ունեցած անտարբերությունից է, քան թե խաղաղասիրությունից. ինչ էլ որ պատահի աշխարհում, կեղծ խաղաղության համար սակավ նշանակություն ունի, բավական է, որ ինքը հանգիստ մնա իր աշխատասենյակում։ Նրա սկզբունքները սպանել չեն տալիս մարդկանց, բայց արգելակում են նրանց ծնունդը, ոչնչացնելով նրանց բազմացմանը սատարող բարքերը, նրանց անջատելով իրենց ցեղից, նրանց ամբողջ համակրությունները վերածելով մի քաղարկված եսասիրության, որը նույնքան վնասակար է հետաքրքրությանը, ինչքան և առաքինությանը։ Փիլիսոփայական անտարբերությունը նման է պետական հանդարտության՝ բռնակալության պայմաններում. դա մահվան հանդարտություն է, դա ավելի կործանարար է, քան ինքը՝ պատերազմը։

Այսպիսով, մոլեռանդությունը թեև իր անմիջական ազդեցությամբ ավելի վնասակար է, քան այն, որ այսօր կոչվում է փիլիսոփայական միտք, իր հետևանքներով շատ ավելի նվազ վտանգավոր է։ Մյուս կողմից, հնշտ է գեղեցիկ առածներ շարադրել գրքերում, բայց դեռ հարց է, թե նրանք ո՞րքանով են համապատասխանում ընդունված վարդապետությանը, թե արդյո՞ք անհրաժեշտորեն բխում են նրանից. այդ է, որ մինչև այսօր չի պարզաբանված։ Մնում է դեռևս իմանալ, թե փիլիսոփայությունը, եթե

թյունը, ո՛չ էլ հոգեկան տկարությունը ձեզ շեղել չտան այդ ճշմարտությունից։ Համարձակ վկայախոսե՛ք աստծու մասին փիլիսոփաների մոտ. համարձակություն ունեցե՛ք մարդկայնություն քարոզել անհանդուրժողներին։ Գուցե դուք մենակ կլինեք ձեր կուսակցության մեջ, բայց ձեր մեջ կունենաք մի այնպիսի հավաստիք, որը ձեզ կազատի մարդկանց հավաստիքի կարիքից։ Թո՛ղ նրանք սիրեն կամ ատեն ձեզ, թո՛ղ կարդան կամ արհամարհեն ձեր գրածները, փուչիք չէ։ Ասացե՛ք ինչ որ ճշմարի՛տ է, արե՛ք այն, ինչ որ լավ է. մարդու համար կարևորը՝ երկրի վրա իր պարտականությունները կատարելն է. ինքնամոռացությամբ է, որ մարդ կարող է ինքն իր համար աշխատելու։ Չավա՛կս, մասնավոր շահը մեզ խաբում է. միայն արդարության հույսն է, որ երբեք չի խաբում»։

Ես արտագրեցի այս գրությունը, ոչ թե որպես զգացմունքների կանոն, որին պետք է հետևել կրոնական հարցում, այլ ինձ անկաշկանդ և իշխող, պիտի կարողանա՞ր արդյոք լավ կառավարել մեր փառասիրությունները, շահախնդրությունը, ցանկությունները, մարդկային փոքրիկ կրքերը, և պիտի գործադրե՞ր այդ այնքան քաղցր մարդկայնությունը, որի գովքն է մեզ հյուսում գրիչը Ֆեռքին։

Սկզբունքով, փիլիսոփայությունը չի կարող անել ոչ մի լավ բան, որ կրոնը չկարողանար ավելի լավն անել, իսկ կրոնն անում է շատ լավ բաներ, որ փիլիսոփայությունն ի վիճակի չէ անելու։

Գործնականում, խնդիրն այլ է. բայց և այնպես, հարկավոր է հարցը քննել։ Ճիշտ է, որ մի մարդ, եթե հավատում է որևէ կրոնի, կետ առ կետ չի հետևում դրան. մարդկանց մեծ մասը ոչ մի կրոն չունի, կամ երբեք չի հետևում իր ունեցածին. այդ էլ ճիշտ է. բայց, վերջապես, մի քանիսն ունեն, նրան հետևում են, գոնե մասամբ, և անվիճելի է, որ կրոնական նկատառումները հաճախ նրանց արգելում են վատություն անել և մղում դեպի առաքինությունը, դեպի գովելի ձեռնարկները, որոնք տեղի չէին ունենա առանց այդ նկատառումների։

Եթե մի քահանա ուրանա իրեն հանձնված ավանդը, դրանից ի՞նչ կարելի է եզրակացնել, եթե ոչ այն, որ մի հիմար էր նրան վստահել այդ ավանդը։ Եթե Պասկալը լիներ ուրացողը, այդ կնշանակեր, որ նա մի կեղծավոր է և ուրիշ ոչինչ։ Բայց մի քահանա՞... Այն մարդիկ, որ կրոնի առևտուր են անում, մի՞թե իրենք կրոն ունեն։ Այն բոլոր ոճիրները, որ կատարվում են կրոնավորների շրջանակում, ինչպես և այլուր, չեն ապացուցում, թե կրոնն անօգուտ է, այլ այն, որ շատ քիչ մարդիկ են հավատացյալ։

Մեր արդի կառավարություններն անվիճելիորեն քրիստոնեության

որպես օրինակ այն բանի, թե ինչպես կարելի է տրամաբանել իր աշակերտի հետ՝ չհեռանալու համար այն մեթոդից, որը ես չանացի հաստատել։ Քանի դեռ տուրք չենք տալիս մարդկանց հեղինակությանը, ոչ էլ այն երկրի նախապաշարումներին, որտեղ ծնվել ենք, սոսկ բանականության ընձեռած ծանոթություններով չենք կարող, բնության հաստատած կարգի մեջ, ավելի հեռու գնալ բնական կրոնից. և այս կրոնով էլ ես կսահմանափակվեմ իմ էմիլի հետ։ Եթե նա մի ուրիշ կրոնի պետք է հետևի, այդ դեպքում իրավունք չունեմ նրա ուղեցույցը լինելու. նա ինքը մենակ պետք է ընտրություն կատարի։

Մենք բնության հետ համերաշխ ենք աշխատում, և մինչդեռ նա ձևավորում է ֆիզիկական մարդուն, մենք ջանում ենք ձևավորել բարոյական մարդուն. բայց մենք համաչափ չենք առաջադիմում։ Մարմինն արդեն պնդակազմ և ուժեղ է, երբ

են պարտական իրենց ամենազորավոր հեղինակությամբ և ավելի հազվադեպ հեղափոխություններով. քրիստոնեությունը նրանց նվազ արյունարբու է դարձրել. այս բանը գործնականապես հաստատվում է, երբ նրանց համեմատում ենք հին ժամանակների կառավարությունների հետ։ Ամենից լավ ճանաչված կրոնը, հրաժարվելով մոլեռանդությունից, ավելի մեղմեց քրիստոնեական բարքերը։ Այս փոփոխությունը գրականության հետևանքը չէ, որովհետև ամենուրեք, ուր գրականությունը փայլել է, մարդկությունը դրանով ավելի հարգված չի եղել. աթենացիների, եգիպտացիների, Հռոմի կայսրերի, չինացիների դաժանությունները հաստատում են այդ։ Որքա՜ն գթության գործեր են կատարվել Ավետարանի շնորհիվ. ինչքա՜ն սխալներ, մեղքեր է վերացնում, դարմանում խոստովանությունը կաթոլիկների մոտ։ Մեզ մոտ, երբ մոտենում է հաղորդվելու ժամանակը, ինչքա՜ն հաշտություններ, ինչքա՜ն ողորմություններ են տեսի ունենում։ Եբրայեցիների հոբելյանական տոնը ինչքա՜ն հափշտակիչների նվազ ագահ էր դարձնում և ինչքա՜ն թշվառություններ էր կանխում։ Օրհնավոր եղբայրությունը միացնում էր ամբողջ ազգը. ոչ մի մուրացիկ չէր երևում նրանց մոտ։ Այդպիսին չի երևում նույնպես թուրքերի մոտ, որտեղ անթիվ բարեսիրական հաստատություններ կան. նրանք, կրոնական սկզբունքից ելնելով, հյուրընկալություն են ցույց տալիս նույնիսկ իրենց դավանանքի հակառակորդներին։

«Մահմեդականներն ասում են,— գրում է Շարդենը,— թե համընդհանուր հարությանը հաջորդող քննությունից հետո բոլոր մարմինները պիտի անցնեն Ջուլ-Սեռեթ կոչվող կամուրջով, որը գցված է հավիտենական կրակի վրայով, և որը կարելի է անվանել, ասում են նրանք, երրորդ ու վերջին

հոգին դեռևս թույլ է ու տկար. և ինչ էլ որ անի մարդկային արվեստը, խառնվածքը միշտ էլ նախորդում է բանականությանը: Մեկը ետ պահելու և մյուսը առաջ մղելու դործին նվիրեցինք մենք մինչև հիմա մեր միջոցներն ու ջանքը, որպեսզի մարդը միշտ լինի հավասարակշռված՝ ինչքան այդ հնարավոր է: Զարգացնելով ինչ որ բնական էր նրա մեջ, մենք զսպեցինք ծնվող զգայությունը, մենք այն կանոնավորեցինք՝ մշակելով բանականությունը: Մտային առարկաները չափավորում էին զգայական առարկաների տպավորությունը: Վերադառնալով դեպի իրերի ծագումը, մենք նրան ազատեցինք զգացողությունների տիրապետությունից. ավելի հեշտ էր բնության ուսումնասիրությունից հասնել մինչև նրա ստեղծողի որոնումը:

Երբ հասնենք դրան, ազդեցության ինչպիսի նոր՝ հնարավորություններ կունենանք մեր աշակերտի վրա, ինչպիսի՝ նոր

քննություն և իսկական վերջին դատաստան, որովհետև այդտեղ է, որ պիտի լինի բարիների բաժանումը չարերից... և այլն:

«Պարսիկները,— շարունակում է Շարդենը,— չափազանց նախապաշարված են այս կամուրջով. եթե նրանցից մեկը մի որևէ վիրավորանք է կրում և ոչ մի կերպ ու ոչ մի ժամանակ չի կարողանում փոխադարձել, մխիթարվում է՝ ասելով. «Լա՛վ, թո՛ղ այդպես լինի. աստված է վկա, որ ես ինձ կրկնակի պիտի վճարես վերջին օրը. դու երբեք չպիտի կարողանաս անցնել Պուլ-Սեռհո կամուրջը՝ առանց ինձ նախապես բավարարելու. ես պիտի կառչեմ քո հագուստի փեշերից ու պիտի ընկնեմ քո ոտների առանքը: Ես ակնածավոր ու տարբեր պրոֆեսիաների պատկանող շատ մարդիկ տեսա, որոնք վախենալով, որ այդ ահավոր կամուրջից անցնելիս իրենց դեմ հարայհրոց կբարձրանա, իրենց թշնամիներից նախօրոք ներում էին խնդրում. այդ բանն ինձ հետ էլ է պատահել հարյուրավոր անգամներ. որոշ բարձրատոհմ մարդկանց ձանձրացուցիչ թախանձանքներին տեղի տալով, ես ձեռնարկել էի իմ կամքին հակառակ գործարքներ. որոշ ժամանակ անց, այդ մարդկանցից յուրաքանչյուրը, մտածելով, որ իմ սրտենեղությունն անցած կլինի, ինձ դիմելով՝ ասում էր. «Խնդրում եմ ներել բեկոն անչիզրա», այսինքն՝ այս գործը դարձրեք ինձ համար օրինավոր կամ արդարացի: Նրանցից ոմանք նույնիսկ ինձ վերներս առաջարկեցին և ծառայություններ մատուցին, որպեսզի նրանց ներեմ՝ հայտարարելով, թե իմ հոժար կամքով եմ արել, ինչ որ արել եմ. սրա պատճառը այն հավատքն էր, որ չեն կարող անցնել դժոխքի կամուրջը՝ առանց ճնշվածին լրիվ բավարարելու:

Ի՜նչպես հավատալ, որ այդ կամուրջի գաղափարը, որն այնքան անիրա-

միջոցներ՝ նրա սրտի հետ խոսելու։ Միայն այն ժամանակ նա իսկապես կցանկանա բարի լինել, բարություն անել՝ մարդկանցից թաքուն, առանց օրինական հարկադրանքի, լինել արդարադատ ստեղծու և իր միջև եղած հարաբերություններում, կատարել իր պարտականությունը, նույնիսկ ի վնաս իր կյանքի, իր սրտում կրել առաքինությունը ոչ միայն ի սեր տիրող կարգի, որից ամեն ոք գերադասում է իր նման սերը, այլև ի սեր իր կյանքի հեղինակի, սեր, որը ձուլվում է նույն ալդ՝ իր նման սիրո հետ, վերջապես, վայելելու համար այն հարատև երջանկությունը, որ մի բարի խղճի հանգստությունն ու գերագույն էակի մտահայեցությունը խոստանում են մյուս կյանքում, այս կյանքը լավագույն կերպով օգտագործելուց հետո։ Դրանից դուրս ես միայն անարդարություն, կեղծիք ու ստորություն եմ տեսնում մարդկանց մեջ. մասնավոր շահը, որ մրցության մեջ անպայման հաղթում է ամեն ինչի, յուրաքանչյուր մարդու սովորեցնում է արատը դիմակավորել առաքինությամբ։ Ջո՛ղ բոլոր մյուս մարդիկ ինձ լավություն անեն՝ ի վնաս իրենց. ջո՛ղ բոլորն ինձնով միայն ւլրաղվեն. ջո՛ղ ամբողջ մարդկությունը ոչնչանա ցավի ու թշվառության մեջ, միայն թե ես ոչ մի րոպե ցավ ու քաղց չզգամ. այս է ասում ամեն մի դատող անհավատի ներքին ձայնը։ Այո, ես մինչև վերջ պիտի պնդեմ, որ ստախոս է կամ անմիտ այն մարդը, որ սրտի խորքում ասում է՝ «Աստված չկա», բայց այլ կերպ է խոսում։

Ընթերցո՛ղ, ինչ էլ որ անեմ, զուր է. զգում եմ, որ դուք և ես երբեք իմ էմիլին չենք տեսնի միևնույն գծերով. դուք

վություններ է դարմանում, այդպիսիք չի կանխում երբեք։ Թե պարսիկներից վերացնենք այդ դաղափարը, նրանց համոզելով, թե գոյություն չունի ո՛չ Գուլ-Սհոհո, ո՛չ նման մի այլ բան, ուր, մահից հետո, լուծվեր հաբատահարվածների վրեժը իրենց բռնակալներից, մի՞թե պարզ չէ, որ այդ դեպքում վերջիններս ավելի հանգիստ կլինեին ու կատափեին իրենց գոհերին բավարարելու տաղտուկից։ Սխալ է, ուրեմն, այն կարծիքը, թե այդպիսի վարդապետությունը վնասակար չէ. դա, ուրեմն, ճշմարիտ չէր լինի։

Փիլիսոփա՛, քո բարոյական օրենքները շատ գեղեցիկ են. բայց բարեհաճի՛ր պրանք գործնականապես ցույց տալ ինձ. մի րոպե վերջ տուր քամի մաղելուն ու պարզ ասա՛, թե ի՞նչ կղնես Գուլ-Սհոհոյի տեղը։

նրան շարունակ կպատկերացնեք նման ձեր երիտասարդներ-
րին՝ միշտ քեզնե, անզուսպ, փոփոխամիտ, զվարճամոլ,
մի խրախճանքից մյուսը, մի զվարճությունից մյուսը քա-
փառող, որևէ բանի վրա կենտրոնանալու անընդունակ։ Դուք
կծիծաղեք, որ ես ուզում եմ մի կրակոտ, աշխույժ, դյուրա-
րորբոք, անզուսպ երիտասարդից իր կյանքի ամենաեռուն
շրջանում, պատրաստել մի մտահայեցողի, մի փիլիսոփայի,
մի իսկական աստվածաբանի։ Դուք կասեք. «Այս երազողը
անդադար իր քնորքն է հետապնդում՝ ըստ իր հղացման մի
աշակերտ տալով մեզ. նա նրան ոչ միայն ձևավորում, այլև
ստեղծում է, իր ուղեղից է դուրս բերում. և միշտ կարծելով,
թե բնությանն է հետևում, ամեն րոպե հեռանում է նրանից»։
Իսկ ես, համեմատելով իմ սանը ձեր սանների հետ, հազիվ
թե նրանց միջև ընդհանուր գծեր եմ տեսնում։ Դաստիարակ-
ված լինելով բոլորովին տարբեր կերպ, հրաշք կլինի, եթե
որևէ բանով նա նրանց նմանվի։ Որովհետև նա իր մանկու-
թյունն անց է կացրել այն կատարյալ ազատության մեջ, որ
ձեր սաներն ստանում են, երբ երիտասարդ են դառնում. նա
սկսում է իր երիտասարդության ժամանակ վարժվել այն
կարգ ու կանոնին, որին դուք ենթարկում եք ձեր սաներին
իրենց երեխայության տարիներին. այդ կարգ ու կանոնը
նրանց համար մի պատուհաս է դառնում, նրանք զզվանքով
են ընդունում այն, նրա մեջ տեսնում են միայն ուսուցիչների
տևական բռնակալությունը, կարծում են, թե մանկությունից
դուրս գալու համար պետք է թոթափեն ամեն մի լուծ [1], և այն
ժամանակ նրանք այդ երկարատև ճնշման հատուցումն ստա-
նում են այնպես, ինչպես բանտարկյալը, որ, ազատվելով
շղթաներից, ձգում, շարժում և ճկում է իր անդամները։ Էմի-
լը, ընդհակառակն, հպարտանում է, որ մարդ է դառնում ու
հպատակվում է ծնվող բանականության ուժին։ Նրա մար-
մինը, որ արդեն կազմավորված է, այլևս կարիք չի զգում
նման շարժումներ անելու. նրա ֆիզիկական զարգացումն

[1] Ոչ ոք երեխաներին այնքան չի արհամարհում, ինչքան երեխայու-
թյունից դուրս եկողները, ինչպես որ չկա այնպիսի երկիր, որտեղ դասա-
կարգերը այնքան արվեստական ձևով չպահպանվեն, որքան այն երկըր-
ները, որտեղ անհավասարությունը մեծ չէ, և որտեղ ամեն մարդ մշտապես
վախենում է իրենից ստորինի հետ շփոթվելուց։

սկսում է ինքն իրեն կանգնել, մինչդեռ մյուսը, որն արդեն կիսով չափ զարգացած է, իր հերթին ձգտում է թռիչք առնել։ Այսպիսով, բանականության հասակը ոմանց համար սանձարձակության հասակն է, մյուսի համար՝ դատողության հասակը։

Ուզո՞ւմ եք իմանալ, թե այս տեսակետից, բնության հաստատած կարգում, ձեր կրթած երիտասարդներից և իմից որո՞նք են ավելի լավ, տեսե՛ք տարբերություններ նրանց մեջ, ովքեր առավել կամ պակաս չափով հեռացել են բնությունից. ուշադրություն դարձրե՛ք գյուղական երիտասարդության վրա ու տեսեք՝ արդյո՞ք նրանք նույնքան ժիր են, որքան ձեր երիտասարդները։ «Երեխայության ընթացքում— ասում է պարոն լը Բոն,— վայրենիները միշտ աշխույժ են ու անընդհատ զբաղվում են զանազան խաղերով, որոնք նրանց մարմինը շարժման մեջ են պահում. բայց հենց որ հասնում են պատանեկան հասակին, նրանք դառնում են հանդարտ ու հրազով. դրանից հետո միմիայն լուրջ ու պատահական խաղեր են նրանց զբաղեցնում»։ Էմիլը, մեծացած լինելով պատանի գյուղացիների ու վայրենիների ազատ կյանքով, նրանց նման, մեծանալիս, կփոխվի ու զուսպ կդառնա։ Ամբողջ տարբերությունը նրանում է, որ նա, փոխանակ իր գործունեությունը նվիրելու սոսկ խաղալուն և ուտելուն, սովորեց մտածել իր աշխատանքի ու խաղերի մեջ։ Այսպես, այդ ճանապարհով հասնելով նշված նպատակին, նա լիովին պատրաստ է մտնելու այն ուղին, ուր առաջնորդել եմ նրան. խորհրդածելու այն նյութերը, որ ես ներկայացնում եմ նրան, զգացում եմ նրա հետաքրքրությունը, որովհետև դրանք ինքնին գեղեցիկ են, նրա համար նորություններ են, և նա ի վիճակի է դրանք հասկանալու։ Ընդհակառակն, հոգնած, ձանձրացած ձեր անհամ դասերից, ձեր երկարապատում բարոյախոսություններից, ձեր անվերջանալի քրիստոնեական կրոնի ոսմունքից, ի՞նչպես եք ուզում, որ ձեր երիտասարդները չմերժեին յուրացնել այնպիսի մտքեր, որ դուք անհրապույր ձևով եք մատուցում նրանց, այն ծանր պատվիրանները, որոնցով անդադար ճնշել եք նրանց, խորհրդածությունները իրենց գոյության հեղինակի մասին, որին դարձրել

նք թշնամի այն ամենի, ինչ նրանց հաճույք է պատճառում։ Այս լոլորի հանդեպ նրանք միմիայն հակակրանք, զզվանք, ձանձրույթ են զգում. բռնադատությունը նրանց ետ է պահում այդ ամենից, ի՞նչ միջոցով կարելի է, երբ արդեն սկսում են իրենք իրենց տնօրինել, նրանց հետաքրքրել դրանցով։ Նրանց հաճելի նորություններ են պետք. այն, ինչ որ ասում էին երեխաներին, այլևս չի գոհացնում նրանց։ Նույնն է նաև իմ սանի համար. երբ նա մարդ դառնա, ես նրա հետ կխոսեմ ինչպես չափահաս մարդու հետ ու նրան կասեմ միայն նոր բաներ. հենց այն պատճառով, որ այդ նորությունները ձանձրացնում են ուրիշներին, նա պետք է իր ճաշակին գտնի դրանք։

Ահա թե ինչպես եմ ես նրան կրկնակի ժամանակ շահել տալիս, հօգուտ բանականության դանդաղեցնելով բնության զարգացումը։ Բայց իրո՞ք ուշացրել եմ այդ զարգացումը։ Ոչ, ես միայն չեմ թողել, որ երևակայությունը այն արագացնի. տարբեր տեսակի դասերով ես հավասարակշռել եմ այն վաղաժամ դասերը, որ երիտասարդն ստանում է ուրիշ կողմից։ Մինչդեռ գոյություն ունեցող մեր հաստատությունների հեղեղը նրան տանում է, ուրիշ հաստատությունների միջոցով նրան ձգել հակառակ ուղղությամբ՝ չի նշանակում զրկել իր տեղից, այլ պահել իր տեղում։

Բնության իսկական ժամանակը վերջապես գալիս է. պե՛տք է որ նա գա։ Քանի որ մարդու մահն անխուսափելի է, հարկավոր է, որ նա իրեն վերարտադրի, որպեսզի ցեղը շարունակվի; և աշխարհի կարգը պահպանվի։ Երբ, այն նշաններից, որոնց մասին նախօրոք խոսել եմ, դուք կռահեք ճշգնաժամային րոպեի մոտենալը, իսկույն թողե՛ք նրա հետ ձեր նախկին խոսելակերպը։ Նա դեռևս ձեր աշակերտն է, բայց այլևս ձեր սանը չէ։ Նա ձեր բարեկամն է, նա արդեն տղամարդ է, այսուհետև նրա հետ վարվեցե՛ք որպես այդպիսինի։

Ինչպե՞ս, մի՞թե պետք է հրաժարվեմ իմ հեղինակությունից այնպիսի մի ժամանակ, երբ, ավելի քան երբևէ, այն անհրաժեշտ է ինձ։ Մի՞թե պետք է չափահասին թողնել իր բախտին այն միջոցին, երբ դեռևս հազիվ կարողանում է ինքն իրեն առաջնորդել և այնքան մեծ շեղումներ է կատա-

րում։ Մի՞թե պետք է հրաժարվեմ իմ իրավունքներից, որոնք այժմ, առավել քան երբևէ, ես պետք է օգտագործեմ հօգուտ նրա։ Ձեր իրավունքնե՞րը։ Ո՞վ է ձեզ ասում նրանցից հրաժարվել. հենց հիմա է, որ ամենից ավելի դրանք սկսում են անհրաժեշտ լինել նրա համար։ Մինչև այժմ դուք նրանից մի բան ստանում էիք միայն բռնի ուժով կամ խորամանկությամբ. հեղինակությունը, պարտականության օրենքը նրան անծանոթ էին, պետք էր նրան ստիպել կամ խաբել՝ հպատակեցնելու համար։ Բայց տեսեք, թե ինչքան նոր շղթաներով եք կապոտել նրա սիրտը։ Բանականությունը, բարեկամությունը, երախտագիտությունը, հազարավոր զգացմունքներ նրա հետ խոսում են այնպիսի մի շեշտով, որ չի կարող անտարբեր մնալ։ Մոլությունը դեռ նրան անտարբեր չի դարձրել դրանց ձայնին. նա դեռևս զգայուն է միայն բնական կրքերի հանդեպ։ Սրանցից գլխավորը, որ իր եսի սերն է, նրան ձեզ է հանձնում, և սովորությունը՝ առավել ևս։ Եթե մի լոպեի խելացնորությունը նրան հեռացնում է ձեզնից, զըղջումը իսկույն ետ է բերում. նրան ձեզ հետ կապող զգացմունքն է միակ տևականը, բոլոր մյուսներն անցնում են ու իրար փոխադարձաբար չնչում։ Մի՛ թողնեք, որ նա այլասերվի, և միշտ էլ հլու կլինի. կըմբոստանա միայն այն ժամանակ, երբ արդեն այլասերված է։

Պետք է խոստովանեմ, որ եթե դուք, բացեիբաց դիմադրելով նրա նոր ծնվող ցանկություններին, հիմարաբար որպես հանցագործություն ընդունեք այն նոր կարիքները, որոնք սկսում են զգալի դառնալ նրան, նա երկար չի լսի ձեզ. և սակայն, հենց որ հեռանաք իմ մեթոդից, ես ձեզ այլևս ոչինչ չեմ կարող երաշխավորել։ Ջմոռանաք երբեք, որ դուք բնության պաշտոնյան եք և երբեք նրա քշնամին չպետք է լինեք։

Ի՞նչ որոշում ընդունել ուրեմն։ Այսպիսի դեպքերում երկընտրանքի առջև ենք գտնվում՝ կա՛մ օգնել նրա հակումներին, կա՛մ պայքարել դրանց դեմ. լինել կա՛մ նրա բրոնակալը, կա՛մ կամակատարը. երկուսն էլ այնքան վտանգավոր հետևանքների են հանգեցնում, որ ընտրություն անելուց առաջ պետք է երկար մտածել։

Այս դժվարությունը հարթելու առաջին միջոցը՝ նրան անհապաղ ամուսնացնելն է. այդ է, անկասկած, ամենաապահով ու ամենաբնական ճանապարհը։ Ես տարակուսում եմ, սակայն, որ դա լինի լավագույնն ու ամենաօգտակարը։ Քիչ հետո կասեմ, թե ինչու. մինչև այդ՝ ես համաձայն եմ, որ երիտասարդներին պետք է ամուսնացնել արբունքի հասակում։ Սակայն այդ հասակը նրանց համար գալիս է ժամանակից առաջ. մենք ենք այն դարձրել կանխահաս. պետք է ձգձգել մինչև հասունացումը։

Թե միայն կարիք լիներ լսել հակումներին ու հետևել դրսևորվող նշաններին, հարցը հեշտ կլուծվեր. բայց այնքա՜ն հակասություններ կան բնության պահանջների ու մեր սոցիալական օրենքների միջև, որ նրանց համաձայնեցնելու համար պետք է անվերջ խոտորումներ կատարել՝ ու խուսանավել. մեծ չանք պետք է գործ դնել, որպեսզի սոցիալական մարդը բոլորովին արհեստական չդառնա։

Վերը հիշված պատճառների հիման վրա ես կարծում եմ, որ իմ առաջադրած ու նման այլ միջոցներով կարելի է, գոնե մինչև քսանամյա հասակը, երկարաձգել ցանկությունների անգիտությունն ու զգայությունների անաղարտությունը. սա այնքան է ճշմարիտ, որ գերմանական ցեղերի մոտ երիտասարդը, իր կուսությունը այդ տարիքից առաջ կորցնելու դեպքում, վարկաբեկվում էր, և շատ հեղինակներ, իրավամբ, այս ժողովուրդների՝ երիտասարդության ժամանակ ունեցած ժուժկալությանն են վերագրում նրանց ամուր կազմվածքն ու նրանց երեխաների շատությունը։

Կարելի է նույնիսկ շատ ավելի երկարել այս ժամանակաշրջանը. ոչ շատ դարեր առաջ դա սովորական երևույթ էր նույնիսկ Ֆրանսիայի համար։ Մեզ հայտնի օրինակներից, ի միջի այլոց, հիշենք Մոնտեյնի հորը, որը, լինելով որքան բարեխիղճ ու ճշմարտախոս, նույնքան էլ ուժեղ ու բարեկազմ մի մարդ, երդվում էր, թե կույս էր ամուսնացել երեսուներեք տարեկան հասակում, երկար ժամանակ իտալական պատերազմին մասնակցելուց հետո. և որդու գրածներից կարելի է տեսնել, թե որքան եռանդոտ և ուրախ էր մնացել նրա հայրը վաթսուն տարեկանին։ Անկասկած, հակառակ

կարծիքը ավելի շուտ բխում է մեր բարքերից ու նախապաշարումներից, քան թե մարդկանց ճանաչողությունից։

Ես կարող եմ, ուրեմն, մի կողմ թողնել մեր երիտասարդության օրինակը, որը ոչինչ չի ապացուցում նրա համար, ով այդ երիտասարդության նման չի դաստիարակվել։ Ընդունելով, որ բնությունը այդ կապակցությամբ ոչ մի այնպիսի որոշակի ժամկետ չունի, որը կարելի չլինի մոտեցնել կամ հեռացնել, կարծում եմ, որ կարող եմ, առանց նրա օրենքից դուրս գալու, ենթադրել, թե Էմիլը, իմ հոգատարության շնորհիվ, մինչև այժմ մնացել է իր նախնական անմեղության մեջ. և ես տեսնում եմ, որ այդ երջանիկ ժամանակաշրջանը մոտ է ավարտին։ Շարունակաբար աճող վտանգներով շրջապատված, նա խույս կտա ինձնից, ինչ էլ որ անեմ, առաջին պատեհ առիթին, և այդ առիթը չի ուշանա գալու. Էմիլը կհետևի դժայրաննների կույր բնազդին. մեկի դեմ կարելի է հաղար ոլոազ գալ, որ նա կկորչի։ Ես այնքան եմ խորհել մարդկանց բարքերի վրա, որ չեմ կարող չտեսնել, թե ինչպիսի անհաղթելի աղեղցություն կթողնի այս առաջին րոպեն նրա մնացյալ կյանքի վրա։ Թեև ես կեղծեմ ու ամեն ինչ չտեսնելու տամ, նա կօգտվի իմ թուլությունից. կարծելով, թե ես խաբվում եմ, նա կարհամարհի ինձ, և ես կդառնամ նրա կրոստյան գործակիցը։ Թեև փորձեմ նրան ետ կանգնեցնել, արդեն ուշ կլինի, նա այլևս ինձ չի լսի, ես նրա համար կլինեմ ձանձրացուցիչ, նողկալի, անտանելի. նա չի ուշանա ազատվել ինձնից։ Ինձ մնում է միայն մի տրամաբանական ելք՝ նրան ինքն իր հանդեպ հաշվետու դարձնել սեփական արարքների համար, պաշտպանել գոնե սխալների անակնկալ հետևանքներից ու պարզորոշ ցույց տալ շրջապատող վտանգները։ Մինչև այժմ ես նրան զսպում էի շնորհիվ իր անգիտության. սրանից հետո հարկավոր է զսպել իր գիտելիքներով։

Այս նոր հրահանգները կարևոր են, և վատ չի լինի մի հետադարձ ակնարկ նետել հարցերի վրա։ Արդեն ժամանակն է, որ ես նրան, այսպես ասած, իմ հաշվետվությունն անեմ, ցույց տամ, թե ինչպես ենք օգտագործել իր և իմ ժամանակը, հայտնեմ, թե ով է ինքը և ով եմ ես, թե ինչ եմ արել ես, ինչ է արել ինքը, թե ինչով ենք պարտական իրար,

ցույց տամ իր բոլոր բարոյական հարաբերությունները, այն ամեն պարտավորությունները, որ ինքն ստանձնել է, և այն բոլորը, որ ուրիշներն են ստանձնել իր հանդեպ, թե ինչ աստիճանի է հասել իր ընդունակությունների զարգացման ասպարեզում, դեռևս ինչքան ճանապարհ ունի անցնելու, թե ինչպիսի դժվարություններ կհանդիպեն իր ճանապարհին, թե ինչ միջոցներով կարող է հաղթահարել այդ դժվարությունները, թե ինչում կարող եմ ես տակավին օգտակար լինել նրան, թե ինչ բանում ինքը, սրանից հետո, կարող է իրեն օգնել, վերջապես, ցույց կտամ այն ճգնաժամային կետը, որտեղ գտնվում է, նոր վտանգները, որ նրան շրջապատում են, և այն ամեն լուրջ պատճառները, որոնք կստիպեն նրան ավելի ուշադիր հետևել իրեն, նախքան իր մեջ հառնող ցանկություններին լսելը։

Ի նկատի ունեցե՛ք, որ չափահասին առաջնորդելու համար պետք է կիրառել երեխային առաջնորդելու համար գործադրված միջոցներին տրամագծորեն հակառակ միջոցներ։ Ջտատանվեք բնավ նրան ուսուցանելու այն վտանգավոր գաղտնիքները, որ մեծ խնամքով նրանից թաքցրել եք այնքան երկար ժամանակ։ Քանի որ, անհրաժեշտորեն, նա ի վերջո պետք է իմանա դրանք, նախընտրելի է, որ իմանա ոչ թե սրանից կամ նրանից, ոչ թե ինքն իրենից, այլ միայն ձեզնից, և քանի որ նա այսուհետև ստիպված կլինի պայքարել, հարկավոր է, անակնկալի չգալու համար, որ ճանաչի իր թշնամուն։

Այն երիտասարդները, որոնք գիտակ են դարձել այդ հարցերում, առանց իմանալու, թե ինչպես, երբեք անպատիժ կերպով ձեռք չեն բերել այդ գիտակցությունը։ Այդ անխորհուրդ հրահանգավորումը, որի նպատակը չի կարող պարկեշտ լինել, առնվազն պղծում է այն ստացողների երևակայությունն ու նրանց դնում հրահանգավորողների մոլությունների ազդեցության տակ։ Դեռ ավելին. սպասավորները այսպես է, որ սողոսկում են երեխայի մտքի մեջ, գրավում նրա վստահությունը, դաստիարակին նրա աչքին պատկերում են որպես մի տխուր ու անպիտան անձնավորության, և նրանց գաղտնի զրույցների սիրած նյութերից մեկը դաստիարակին բամբա-

սելն է։ Երբ աշակերտը հասնում է այդ աստիճանին, ուսուցչին մնում է հեռանալ. նա այլևս ոչինչ լավ բան չունի անելու։

Բայց ինչո՞ւ է երեխան իր համար մասնավոր խորհրդատուներ ընտրում։ Անկասկած, իր դաստիարակների բռնակալության պատճառով։ Ինչո՞ւ պիտի թաքնվեր նրանցից, եթե ստիպված չլիներ։ Ինչո՞ւ պիտի դժգոհեր նրանցից, եթե դրժգոհելու որևէ պատճառ չունենար։ Բնականաբար, սպասավորները նրա առաջին խորհրդատուներն են. այն փութկոտությունից, որով երեխան գալիս է նրանց հայտնելու իր մտքում եղածը, պարզ երևում է, որ նա կարծում է, թե մինչև այդ բանը նրանց հայտնելը միայն կիսով չափ է մտածել։ Վստահ եղե՛ք, որ երեխան միշտ ձեզ ամեն ինչ կասի, եթե չվախենա ձեր խրատներից ու հանդիմանություններից, և որ ոչ ոք չի համարձակվի նրան որևէ գաղտնիք վստահել, եթե հաստատ իմանա, թե նա ձեզնից ոչինչ չի թաքցնի։

Ես նրա համար եմ հույս դնում իմ մեթոդի վրա, որ հնարավորի ճշտությամբ, նրա թողած ազդեցություններին, իմ աշակերտի կյանքում չեմ տեսնում այնպիսի դրություն, որից մի հաճելի հիշատակ չպահեմ։ Նույնիսկ այն պահին, երբ նա տարվում է իր խառնվածքի մոլեգնություններով, երբ, ընդվզելով իրեն զսպող ձեռքի դեմ, սկսում է վիճել ու ինձնից հեռանալ, նրա հուզմունքի, զայրույթի մեջ դեռևս վերագտնում եմ նրա առաջին պարզությունը. նրա սիրտը, իր մարմնի նման մաքուր, չի ճանաչում ո՛չ մոլությունը, ո՛չ այն թաքցնելու հնարքը. ո՛չ հանդիմանությունները, ո՛չ արհամարհանքը նրան վատոգի չեն դարձրել. երբեք ստոր վախը նրան չի սովորեցրել կեղծել։ Լինելով անմեղ, նա բոլորովին զուրկ է զգոնությունից, միամիտ է՝ առանց խղճահարության, դեռ չգիտի, թե ինչի է ծառայում խաբելը։ Նրա հոգում չի կատարվում ոչ մի շարժում, որը չարտահայտվի բերանով կամ աչքերով, և, շատ հաճախ, նրա զգացածները ես ավելի շուտ եմ իմանում, քան ինքը։

Որքան ժամանակ նա շարունակի այսպես ազատորեն ինձ բաց անել իր հոգին ու համույքով ասել իր զգացածը, ես վախենալու ոչինչ չունեմ. վտանգը դեռևս հեռու է. բայց երբ դառնում է ավելի երկչոտ, ավելի վերապահ, երբ նրա զրույց-

ների մեջ նկատում եմ ամոթի առաջին տագնապը, նշանակում է արդեն բնազդը զարգանում է, վատի գաղափարն սկսում է միանալ դրան, էլ ոչ մի րոպե չպետք է կորցնել. և եթե ես չշտապեմ նրան իրազեկ դարձնել, շուտով նա ինքը իրազեկ կլինի՝ հակառակ իմ կամքին։

Որոշ ընթերցողներ, ընդունելով մեկտեղ իմ մտքերը, կմտածեն, թե այստեղ խնդիրը իմ երիտասարդի հետ պատահական մի խոսակցության մասին է, և որ ամեն ինչ դրանով էլ վերջանում է։ Օ՛, այդպես չէ, որ կառավարում են մարդկային սիրտը։ Նշանակություն չունի, թե ինչ է ասվում, կարևորը՝ ասելու պատեհ ժամանակն ընտրելն է։ Սերմանելուց առաջ պետք է հողը հերկել։ Առաքինության սերմը դժվար է ծլարձակում. երկար աշխատանք պետք է տանել, որպեսզի նա արմատակալի։ Քարոզներն ամենից ավելի անօգուտ է դարձնում և այն, որ դրանք կարդացվում են անխտիր բոլորին՝ առանց տարբերության ու առանց ընտրության։ Ի՞նչպես կարելի է մտածել, թե միևնույն քարոզը նպատակահարմար է այնքան տարբեր տրամադրված, մտածողությամբ, բնավորությամբ, տարիքով, սեռով, դրությամբ, կարծիքով այնքան տարբեր ունկնդիրների։ Նրանց մեջ գուցե չեք գտնի երկու հոգի, որոնց ձեռնտու լինի այն, ինչ բոլորին են ասում, և մեր բոլոր զգացմունքներն այնքան անկայուն են, որ յուրաքանչյուր մարդու կյանքում թերևս չլինի երկու պահ, որում նույն խոսքերը նրա վրա նույնանման տպավորություն գործեն։ Դատեցե՛ք, ուրեմն, թե արդյոք խոհեմության ծանրակշիռ դասեր լսելու համար հարմա՞ր է այն ժամը, երբ բուռն զգայությունները խանգարում են գիտակցությունը և բռնադատում կամքը։ Հետևապես, մի՛ փորձեք երբեք երիտասարդների հետ խոսել դատողությունից. նույնիսկ բանականության տարիքում, եթե նրանց չեք նախապատրաստել այն ըմբռնելուն։ Ապարդյուն ճառերի համար ավելի շուտ ուսուցիչներն են պատասխանատու, քան աշակերտները։ Իմաստակն ու ուսուցիչը համարյա միևնույն բաներն են ասում, բայց նրանցից առաջինը դրանք ասում է ամեն առիթով, իսկ երկրորդը՝ այն դեպքում, երբ վստահ է, որ արդյունք կտանի։

Այնպես, ինչպես լուսնոտը, քնի մեջ քայլում է անդունդի եզրով, որի մեջ կընկներ, եթե հանկարծ քնից զարթներ, այդպես էլ իմ էմիլը անգիտության քնի մեջ խուսափում է վտանգներից, որոնք չի նշմարում. եթե նրան հանկարծ արթնացնեմ, նա կորած է։ Աշխատենք նախ նրան հեռացնել անդունդից, հետո միայն կարթնացնենք՝ ավելի հեռվից ցույց տալու համար վիհը։

Ընթերցանությունը, մենակությունը, անգործությունը, մեղկ ու նստակյաց կյանքը, կանանց ու պատանիների ընկերությունը, ահա նրա հասակի համար վտանգավոր ուղիները, որ նա պետք է անցնի և որոնք նրան միշտ պահում էն վտանգի եզրին։ Ուստի, տարբեր տեսակի զգացական խրթրով եմ ես զբաղեցնում նրա զգայարանները. տալիս եմ նրա մտքերին մի այլ ուղղություն, որպեսզի շեղեմ այն ուղուց, որով սկսել էին ընթանալ. մարմինը ենթարկելով ֆիզիկական ծանր աշխատանքների, չեմ թողնում, որ նա անձնատուր լինի երևակայությանը, երբ բազուկները շատ են աշխատում, երևակայությունը հանգստանում է. երբ մարմինը շատ է հոգնած, սիրտը չի տաքանում։ Ամենաանմիջական ու ամենահեշտ նախազգուշությունը նրան տեղական վտանգից փրկելն է։ Ամենից առաջ նրան կտանեմ քաղաքից դուրս, հեռու այն բաներից, որ կարող են նրան փորձության ենթարկել։ Բայց դա բավական չէ. ոչ մի անապատի, ոչ մի վայրենի մենաստանի մեջ նա չի խուսափի իրեն հետապնդող մտապատկերներից։ Բավական չէ հեռացնել վտանգավոր իրերը, պետք է հեռացնել նաև նրանց հիշատակը. եթե ես ի վիճակի չլինեմ նրան հեռացնելու ամեն ինչից, եթե նրան չզբաղեցնեմ ինքն իրենով, ավելի լավ է նրան թողնեմ այնտեղ, որտեղ է։

Էմիլը մի արհեստ գիտի, բայց այդ արհեստը մեր ապրելու միջոցը չէ. նա սիրում ու հասկանում է գյուղատնտեսությունը. բայց գյուղատնտեսությունը մեզ չի բավարարում. նրա գիտեցած զբաղմունքները մի տեսակ սովորամոլություն են դառնում. այդ զբաղմունքներին նվիրվելով՝ ասես նա ոչինչ չի անում, բոլորովին ուրիշ բանի մասին է մտածում. գլուխն ու թևերը անջատ են գործում։ Նրան անհրաժեշտ է տալ մի

նոր զբաղմունք, որը նրան հետաքրքրի իր նորությամբ, պահի լարված դրության մեջ, հաճույք պատճառի, կլանի նրա ամբողջ ուշադրությունը, կրթի, մարզի նրան. վերջապես մի զբաղմունք, որը նրան ոգևորի և որին նվիրվի ամբողջ էությամբ: Իմ կարծիքով, միակ գործը, որ լրացնում է բոլոր այդ պայմանները, որսորդությունն է: Եթե որսորդությունը մի անմեղ հաճույք է և նպատակահարմար՝ մարդու համար, այժմվանից պետք է այն նկատի ունենալ: Էմիլը բոլոր տրվյալներն ունի լավ որսորդ լինելու. նա ամրակազմ է, ճարպիկ, համբերատար և չհոգնող: Անկասկած, նա հաճույք կստանա այդ զբաղմունքից, դրան կնվիրվի իր տարիքին հատուկ ամբողջ եռանդով. դրանով կմոռանա, գոնե որոշ ժամանակ, թուլամորթության հետևանքով իր մեջ երևան եկող վտանգավոր հակումները: Որսորդությունը զորացնում է որքան մարմինը, նույնքան և սիրտը. վարժեցնում է անտարբերությամբ տեսնել արյունը, լինել կարծրասիրտ: Դիանային համարում են որպես սիրո թշնամի. այս այլաբանությունը շատ ճիշտ է. սիրո թուլություններն առաջանում են միայն քաղցր հանգստի պայմաններում, ուժեղ մարմնական մարզանքը խեղդում է քնքուշ զգացմունքները: Անտառներում, կյուղական վայրերում սիրահարն ու որսորդը այնքան միմյանց հակադիր տպավորություններ են կրում, որ միևնույն առարկաների վերաբերմամբ բոլորովին տարբեր մտապատկերներ կունենան: Հովատեղ ոտքերները, պուրակները, առաջինի համար քաղցր այգ վայրերը, մյուսի համար որսի հարմար վայրեր են. այնտեղ, ուր մեկը սրնգի ձայն, սոխակի երգ, թռչունների դայլայլ է լսում, մյուսը որսորդական գալափոզի ձայնն ու շների հաչոցն է պատկերացնում. մեկը հավերժահարսեր ու դիցուհիներ է երևակայում, մյուսը՝ շնապահներ, երեներ, ձիեր: Եթե որևէ գյուղական վայրում դուք պրոնում եք այսպիսի երկու տեսակ մարդկանց հետ, նրանց խոսակցության տարբերությունից դուք շուտով կհասկանաք, որ երկիրը նրանց համար նույնանման կերպարանք չունի, որ նրանց մտապատկերները նույնքան տարբեր են, ինչքան նրանց հաճույքների ընտրությունը:

Ես հասկանում եմ, թե ինչպես են այս ճաշակները միա-

վորվում, և ինչպես են մարդիկ ի վերջո ամեն ինչի համար ժամանակ գտնում։ Բայց արիստասարդական ցանկություններր այդպես չեն բաժանվում. տվե՛ք նրան իր սիրած միակ ըրազմունքը, և մնացածն իսկույն կմոռացվի։ Ցանկությունների պանաղանությունը առաջանում է ճանաչողությունների բազմազանությունից. և ճանաչված առաջին հաճույքներն են երկար ժամանակ փնտրվում։ Ես չեմ ուզում, որ էմիլի ամբողջ կյանքը անասուններ սպանելով անցնի. նույնիսկ հավակնություն չունեմ ամեն դեպքում արդարացնելու այս վայրենի մոլությունը. բավական է, որ դա ծառայի կանխելու ավելի վտանգավոր մի մոլություն, և էմիլը սառնասրտությամբ կլսի ինձ՝ այդ մոլության մասին խոսելիս, և ես ժամանակ կունենամ այն նկարագրելու՝ առանց նրան գրգռելու։

Մարդկային կյանքում պահեր կան, որոնք երբեք չեն մոռացվում։ Այդպես է էմիլի համար այն ուսուցման ժամանակաշրջանը, որի մասին խոսում եմ. դա պետք է աղդի նրա կյանքի մնացած օրերի վրա։ Աշխատենք, ուրեմն, նրա հիշողության մեջ այն դրոշմել այնպես, որ երբեք չջնջվի։ Մեր ժամանակի սխալներից մեկն այն է, որ դաստղությունը գործ ին ածում շատ անպատուշաճ կերպով, ասես մարդիկ միայն միտք լինեին։ Անտեսելով խորհրդանշանների լեզուն, որը դիմում է երևակայությանը, մենք կորցրինք ամենագործուն լեզուն։ Խոսքի ազդեցությունը միշտ էլ տկար է. սրտին հասնելու լավագույն ճանապարհը աչքն է, քան ականջը։ Ցանկանալով ամեն հեղինակություն տալ դաստղությանը, մենք մեր պատվիրանները սահմանափակեցինք խոսքերով և ոչինչ չտվինք գործողություններին։ Մենակ բանականությունը երբեք ուկտիվ չէ. նա երբեմն զսպում է, շատ քիչ անգամ գրգռում է և ոչ մի անգամ մեծ բան չի արել։ Անվերջ դատողություն անելը թույլ հոգու տեր մարդկանց մոլությունն է։ Ուժեղ հոգիները բոլորովին ուրիշ լեզվով են խոսում. այդ լեզվով է, որ նրանք համոզում են ու գործի կոչում։

Ես դիտել եմ, որ ներկա ժամանակներում մարդիկ միմյանց վրա աղդում են միայն բռնությամբ ու շահախնդրությամբ. մինչդեռ նախնիները ավելի շուտ գործում էին համոզելով, հոգեկան ներգործությամբ, որովհետև չէին հրաժարվում

խորհրդանշանների լեզվից։ Բոլոր պայմանավորումները կատարվում էին ամենայն հանդիսավորությամբ՝ դրանք ավելի անկապտելի դարձնելու համար. նախքան ուժի տիրապետությունը՝ աստվածներն էին մարդկանց դատավորները. նրանց առջև է, որ մարդիկ կնքում էին իրենց պայմանագրերը, գաշնագրությունները, անում իրենց խոստումները. երկրի մակերեսը արխիվների մատյանն էր։ Ծայրերը, ծառերը, քարակույտերը, սրբագործված՝ այդ ակտերով ու բարքարոսների համար նվիրական դարձած, բոլորի աչքի առաջ բաց այդ կրքի թերթերն էին։ Սրդումի հորերը, ապրողի և տեսանողի հորերը, Մամբրեի հին կաղնին, վկայի լրլրակը՝ ահա թե որոնք էին պայմանագրերի արբության կոպիտ, բայց փառահեղ հուշարձանները. ոչ ոք չէր համարձակվում սրբապիղծ ձեռքով վնասել այդ հուշարձաններին. մարդկանց հավատը ավելի հուսալիորեն երաշխավորված էր այս համր վկաներով, քան թե այսօրվա օրենքների ունայն խստությամբ։

Կառավարման մեջ արքայական ուժի մեծաշուք կարգն ու սարքը մեծ տպավորություն էր թողնում ժողովուրդների վրա։ Վեհության արտաքին նշանները, մի գահ, արքայական մի մականի, ծիրանի մի պատմուճան, մի թագ, մի պսակակալ նրանց համար նվիրականություններ էին։ Հարգանքի այս նշաններն ստիպում էին նրանց պատկառել այն մարդուց, որը դրանցով զուգված ներկայանում էր իրենց. առանց զինվորների, առանց սպառնալիքների, հենց որ նա խոսում էր, բոլորը հնազանդվում էին։ Այժմ, երբ որոշել են վերացնել այդ նշանները [1], ի՞նչ է լինում այդ արհամարհանքի հետևանքը։ Այն, որ արքայական վեհափառությունը չնչվում է բոլոր սրտերից, թագավորները միայն զինվորական ուժով են իշ-

[1] *Կաթոլիկ կղերը, մեծ ճարտարությամբ, պահպանել է այդ նշանները. նրա օրինակով՝ նաև մի քանի հանրապետություններ, օրինակ՝ Վենետիկի հանրապետությունը։ Այդ է պատճառը, որ վենետիկյան կառավարությունը, հակառակ պետության կրած անկման, իր վաղեմի մեծության շուքով շարունակում է վայելել ժողովրդի ամբողջ համակրանքն ու պաշտամունքը. խուլրակիր պապից հետո, գուցե, չկա ոչ մի թագավոր, ոչ մի իշխանապետ, ոչ մի մարդ աշխարհում՝ այնքան հարգված, որքան Վենետիկի դոժը. չնայած որ զուրկ է հեղինակությունից, իշխանությունից, բայց արբագործված է իր շուքով և եղյուրանև դքսական փեղույրով ծածկած*

խում, հպատակների հարգանքը սոսկ պատժի, վախի արդյունք է։ Թագավորներն այլևս ազատված են իրենց պսակակալը կրելու նեղությունից, ինչպես ազնվականները՝ իրենց պատվանշանները. սակայն, հարյուր հազար կազմ ու պատրաստ բազուկներ են հարկավոր՝ նրանց հրամանները կատարել տալու համար։ Թեև այս ձևը գուցե նրանց ավելի գեղեցիկ է թվում, բայց դժվար չէ հասկանալ, որ այս փոփոխությունը վերջիվերջո նրանց համար նպաստավոր չի լինի։

Այն, ինչ մեր նախնիներն արել են պերճախոսությամբ, հրաշալի է. սակայն այդ պերճախոսությունը միայն լավ մշակված ու կոկված գեղեցիկ ճառերի մեջ չէր, բնդհակառակն, որքան քիչ էր ճառում հռետորը, այնքան ազդեցիկ էր լինում պերճախոսությունը։ Ոչ թե բառերով, այլ նշաններով արտահայտված մտքերն էին ավելի տպավորիչ։ Ավելի շուտ ցույց էին տալիս դրանք, քան ասում։ Աչքի առաջ դրված իրը ցնցում է երևակայությունը, գրգռում հետաքրքրությունը, միտքը պահում է ասվելիքը լսելու սպասման մեջ, և հաճախ ինքը՝ այդ իրն է ասում ամեն ինչ։ Թրասիբուլոսն ու Տարքինը խաշխոշների գլուխները կտրելով, Ալեքսանդրը կնիքը իր մատերիմի բերանին դրոշմելով, Դիոգենեսը Զենոնի առջևից քայլելով, մի՞թե ավելի պերճախոս չէին, քան կլինեին, լթե երկար ճառեր արտասանեին։ Խոսքերի ի՞նչպիսի հնարել կարող էր ավելի լավ արտահայտել միևնույն մտքերը։ Դարեհը, երբ իր բանակով մխրճվել էր Սկյութիայի խորքերը, այդ երկրի թագավորից ստանում է մի թռչուն, մի գորտ, մի մուկ և հինգ նետ։ Դեսպանը հանձնում է դրանք և վերադառնում՝ առանց ոչինչ ասելու։ Մեր օրերին այդ մարդուն հիմարի տեղ կդնեին։ Սակայն Դարեհը հասկացավ այս ահարկու ճառի իմաստը և փութաց, ինչքան կարող էր, շտապ վերադառնալ իր երկիրը։ Փոխարինեցե՛ք այս նշանները մի

կանացի վարսերով։ Բյուսանտորի* այդ արտակարգ ծիսակատարությունը, որ այնքան ծիծաղ է պատճառում Թեոֆամիտներին, Վենետիկի բնակչությանը արյուն թափել կտար՝ իր բռնակալ կառավարությունը պաշտպանելու համար։

* Տոնահանդեսային մի տեսակ նավ՝ Վենետիկի դոժերին հատկացված։— Ս. Ի.

նամակով. ինչքան էլ սպառնալից լինի այդ նամակը, նվազ սարսափ կազդի և կլինի մի մեծախոսիկություն, որի վրա Դարեհը սոսկ կծիծաղեր։

Որքա՜ն ուշադրություն էին դարձնում հռոմայեցիները նշանների լեզվին։ Այլազան հագուստներ՝ ըստ հասակների, պայմանների. կրկնոցներ, խոզանակիկներ, եզրածիրանիներ, կնիքներ, ծիրանեզարդ պատմուճաններ, թիկնաթոռներ, ամբիոններ, սակրավորներ, գավազանախրձեր, տապարներ, ոսկուց, խոտերից, տերևներից պսակներ, օվացիաներ, հաղթահանդեսներ՝ այս բոլորը նրանց մոտ սարքավորում էր, ներկայացնում, ծիսակատարություն, և կատարելապես տպավորվում էր քաղաքացիների սրտերում։ Պետության համար նշանակություն ուներ, որ ժողովուրդը հավաքվեր այս և ոչ այն վայրում, տեսներ կամ չտեսներ Կապիտոլը, դառնար կամ չդառնար սենատի կողմը, խորհրդի նստեր այսինչ կամ այնինչ օրը։ Ամբաստանյալները փոխում էին հագուստները, կանդիդատները նույնպես փոխում էին. ռազմիկները չէին պարծենում իրենց քաջագործություններով, բավականանում էին ցույց տալով իրենց վերքերը։ Ծնթադրում եմ, որ Կեսարի մահը առիթ կծառայեր մեր հռետորներից մեկին, ժողովուրդը հուզելու նպատակով, դիմելու արվեստի բոլոր սովորական միջոցներին՝ նրա վերքերի, նրա արյան, նրա դիակի սրտահույզ նկարագրությունն անելու համար. բայց Անտոնիոսը, չնայած հայտնի հռետոր էր, գրանցից ոչ մեկը չի ասում. նա ի ցույց է դնում Կեսարի դիակը։ Ինչպիսի՜ ճարտասանություն։

Բայց այս շեղումը ինձ անդգալիորեն հեռացրեց իմ նյութից, ինչպես պատահում է շատերի հետ. բայց որովհետև իմ շեղումները շատ հաճախակի են, չեն կարող երկար ու հանդուրժելի լինել. ուստի վերադառնում եմ իմ նյութին։

Խուսափեցե՛ք երիտասարդության հետ չոր ու ցամաք դատողություններ անելուց։ Եթե ուզում եք, որ ձեր դատողությունը հեշտ ընկալվի, նյութականացրե՛ք այն։ Մտքի լեզուն անցկացրե՛ք սրտի միջով, որպեսզի լսելի լինի։ Կրկնում եմ, սառը փաստարկումները կարող են որոշել մեր կարծիքները, բայց ո՛չ մեր գործերը. նրանք մեզ կհավատացնեն,

առանց գործի մղելու. ցույց կտան, թե ինչ պետք է մտածել, բայց ոչ թե ինչ պետք է անել: Եթե սա ճշմարիտ է բոլոր մարդկանց համար, շատ ավելին է երիտասարդների վերաբերմամբ, որոնք դեռևս պարփակված են իրենց զգայությունների մեջ և մտածում են այնքան, որքան երևակայում են:

Ուրեմն, նույնիսկ այն նախապատրաստություններից հետո, որոնց մասին խոսեցի, ես կզգուշանամ հանկարծ զնալ Էմիլի սենյակը՝ նրան մի երկար ճառ ասելու այն նյութի մասին, որը կամենում եմ նրան սովորեցնել: Նախ կսկսեմ զրգռել նրա երևակայությունը. կընտրեմ հարմարագույն ժամանակը, տեղը, առարկաները՝ ուզածս տպավորությունն ստեղծելու համար. այսպես ասած, ամբողջ բնությունը վկայության կկանչեմ մեր զրույցին. իմ խոսքերի ճշմարտացիության որպես փաստ՝ կվկայակոչեմ հավիտենական էակին, որն ստեղծել է բնությունը. ես նրան որպես դաստավոր կվերցնեմ Էմիլի և իմ միջև. ես կնշեմ այն տեղը, որտեղ մենք գտնվում ենք, ժայռերը, անտառները, լեռները, որոնք մեզ շրջապատում են, որպես հուշարձանները նրա և իմ հանձնառությունների. իմ աչքերի, շեշտի, շարժուձևի մեջ կդնեմ այն ոգևորությունն ու եռանդը, որ ցանկանում եմ ներշնչել նրան: Դրանից հետո ես կխոսեմ ու նա կլսի ինձ. ես խանդաղատանքով կվարվեմ նրա հետ, որից նա կհուզվի: Լիովին գիտակցելով իմ պարտականությունների սրբությունը, է՛լ ավելի հարգանք կներշնչեմ նրան իր պարտականությունների նկատմամբ. դաստղության ուժը կկենդանացնեմ պատկերներով և կերպարներով. ես չեմ լինի երկարաբան ու տաղտկալի՝ սառը բարոյախոսություններով, բայց զգացմունքներով զեղուն իմ դատողությունը կլինի լուրջ ու վճռական. այնուամենայնիվ, իմ սիրտը երբեք չի սպառի իր ասելիքը: Այն ժամանակ միայն, նրան ցույց տալով ինչ որ արել եմ նրա համար, այնպես կձևացնեմ, թե դրանք իբր ինձ համար են արված. նրա հանդեպ իմ քնքուշ գորովանքի մեջ նա կտեսնի իմ ամբողջ հոգածության շարժառիթը: Ինչպիսի՜ զարմանք, ինչպիսի՜ հուզմունք կպատճառեմ նրան՝ հանկարծ փոխելով իմ խոսակցության լեզուն. փոխանակ ճնշելու նրա հոգին՝ միշտ իր օգուտի

մասին խոսելով, սրանից հետո միայն իմ օգուտի մասին կխոսեմ նրա հետ և, այդպիսով, նրան ավելի շատ կհուզեմ. նրա երիտասարդ սիրտը կբռնացավառեմ բարեկամության, վեհանձնության, երախտագիտության բոլոր զգացմունքներով, որոնց ես արդեն ծնունդ եմ տվել և որոնք այնքան քաղցր է աճեցնել։ Ես նրան կսեղմեմ իմ կրծքին, թրջելով գուրգուրանքի արցունքներով, ու նրան կասեմ. «Դու իմն ես, իմ որդին, իմ ձեռակերտը, քո երջանկության հետ եմ կապում իմ երջանկությունը. եթե դու չարդարացնես իմ հույսերը, գողացած կլինես իմ կյանքի քսան տարիները և ինձ կդժբախտացնես իմ ծերության օրերում»։ Ահա այսպես կարելի է հուզել մի երիտասարդի սիրտը և այնտեղ անջնջելիորեն քանդակել այն, ինչ ասում են նրան։

Մինչև այժմ ես չտանջի տալ օրինակներ, թե ինչ ձևով դաստիարակը պետք է դաստիարակի իր աշակերտին՝ դրժվարին պայմաններում։ Ես փորձեցի նույնն անել ներկա դեպքում, բայց, բազմաթիվ փորձերից հետո, հրաժարվում եմ, համոզվելով, որ ֆրանսերեն լեզուն այնքան է պերճ դարձել, որ չի կարելի որևէ գրքում նրանով պարզ արտահայտել նախնական հրահանգներ որոշ հարցերի մասին։

Ասում են, թե ֆրանսերենը ամենից մաքուր լեզուն է. իսկ ես կարծում եմ, որ նա ամենից լպիրշն է, որովհետև, ինձ թվում է, թե մի լեզվի մաքրությունը չի կայանում նրանում, որ խնամքով խուսափի անպարկեշտ դարձվածքներից, այլ նրանում, որ չունենա այդպիսիք։ Չէ՞ որ դրանցից խուսափելու համար պետք է այդ մասին մտածել. չկա ոչ մի լեզու, որով այնքան դժվար լինի մաքուր խոսել ամեն ինչի մասին, քան ֆրանսերենը։ Ընթերցողը, որն ավելի հնարամիտ է՝ ամոթալի մտքերը գտնելու, քան թե հեղինակը՝ նրանցից խուսափելու մեջ, զայթակղվում և խրտնում է ամեն ինչից։ Մի՞թե կարող է պիղծ ականջներից անցնող որևէ բան չապականվել։ Ընդհակառակն, լավ բարքերով օժտված մի ժողովուրդ ամեն բանի համար ունի իր հարմար բացատրությունները. և այդ բացատրությունները միշտ էլ պարկեշտ են, որովհետև միշտ էլ գործ են ածվում պարկեշտորեն։ Ավետարանի լեզվից ավելի համեստ լեզու չի կարելի երևակայել,

որովհետև այնտեղ ամեն ինչ ասված է պարզամտորեն։ Այդ միևնույն մտքերը անհամեստ դարձնելու համար բավական է դրանք թարգմանել ֆրանսերեն։ Այն ամենը, ինչ ես ասելու եմ իմ էմիլին, նրա ականջին կհնչեն միայն պարկեշտ ու մաքուր. բայց որպեսզի այդ այդպես լինի նաև ընթերցանության դեպքում, հարկավոր է ունենալ մի նույնպիսի անապակ սիրտ, որպիսին է նրանը։

Ես նույնիսկ մտածում եմ, որ խոսքի իսկական մաքրության ու մոլության կեղծ նրբանկատության մասին խորհրդածությունները որոշ օգտակարություն կարող էին ունենալ այն բարոյախոսական գրույցներում, դեպի ուր առաջնորդում է մեզ այս նյութը. որովհետև, սովորելով պարկեշտության լեզուն, էմիլը պետք է սովորի նաև պատշաճության լեզուն և պետք է իմանա, թե ինչու են այս երկու լեզուները իրարից այնքան տարբերվում։ Ամեն դեպքում, ես պնդում եմ, որ փոխանակ երիտասարդների ականջները անժամանակ լցնելու պատրաստ քարոզներով, որոնց վրա նրանք կծիծաղեն այն տարիքում, երբ դրանք նրանց համար տեղին կլինեն, եթե ապասենք, եթե նախապատրաստենք նրանց հասկանալի լինելու համար պահը և այն ժամանակ, նրանց պարզելով բնության օրենքները իրենց ամբողջ ճշմարտությամբ, ցույց տանք այդ նույն օրենքների սանկցիան ֆիզիկական ու բարոյական այն չարիքների մեջ, որ իրենց վրա են հրավիրում այդ օրենքները խախտողները, նրանց խոսելով սերնդագործության անըմբռնելի գաղտնիքի մասին, եթե բնության ստեղծողի կողմից այդ գործողությանը տրված գրավչության գաղափարին միացնենք բացառիկ նվիրվածության գաղափարը, որն այն դարձնում է բերկրալի, գաղափարը՝ հավատարմության, ամոթխածության պարտքի, որ պատում են այդ գործողությունը և կրկնապատկում նրա հմայքը՝ կատարելով նրա նպատակը, նրանց պատկերելով ամուսնությունը ոչ միայն որպես ամենաքաղցրը բոլոր միություններից, այլև ամենասնխախտն ու ամենանվիրականը բոլոր դաշինքներից, հայտնենք այն պատճառները, որոնք այդ այնքան սուրբ կապը հարգելի են դարձնում բոլոր մարդկանց համար և ստելությամբ ու անեծքով են ծածկում նրան, ով համարձակվում է

պղծել այդ կապի մաքրությունը, եթե նրանց գծենք ճշգրիտ ու տպավորիչ պատկերը անառակ կյանքի գարշելի հետևանքների, դրա տխմար անբանացման, անզգալի այն զառիթափի, որով առաջին անկարգությունը կտանի դեպի բոլոր մյուսները և, ի վերջո, դեպի կործանում է առաջնորդում նրան, ով անձնատուր է լինում անառակության, եթե, ասում եմ, նրանց բացահայտ ցույց տանք, թե ժուժկալ կենցաղից են կախված առողջությունը, ուժը, կորովը, առաքինությունները, նույնիսկ սերն ու մարդկային բոլոր իրական բարիքները, այնժամ, պնդում եմ, մենք նրանց համար ցանկալի ու սիրելի կդարձնենք այդ կենցաղը, այնժամ նրանք հոժարակամ ու հլու կհետևեն այդպիսի կյանքի պահպանմանը ստատարող՝ մեր կողմից առաջադրված միջոցառումներին, որովհետև այդ կյանքը, քանի պահպանում են, թանկ կլինի նրանց համար, բայց կորցնելուց հետո կարհամարհեն։

Ճիշտ չէ բնավ այն կարծիքը, թե չարիքի հակումը անզլսպելի է, և թե անհնարին է այն հաղթահարել նախքան նրան ենթարկվելու սովորություն ձեռք բերելը։ Ավրելիոս Վիկտորն ասում է, թե սիրո մոլեգնությամբ բռնկված շատ մարդիկ կամովին իրենց կյանքի գնով էին վճարում Կլեոպատրայի հետ մի գիշերվա վայելքի համար. այդպիսի զոհաբերությունն անհնարին չէ կրքով արբեցածի համար։ Բայց պատկերացնենք ամենամոլեգին մի մարդու՝ անկարող իշխելու իր զգայություններին, որը հանկարծ տեսնում է տանջանքի այն գործիքը, որի վրա վստահ է, թե քիչ հետո ինքը մեռնելու է՝ չարչարանքների մեջ. այդ րոպեից սկսած ոչ միայն այդ մարդը վեր կլիներ ամեն փորձություններից, այլև նրա համար հեշտ կլիներ դիմադրել դրանց. շուտով այդ փորձություններին ընկերացող սարսափելի տեսարանը նրան մոռացնել կտար դրանք, որոնք շարունակ ետ մղվելով՝ ի վերջո կդադարեին նրան հետապնդել։ Կամքի տկարությունն է միայն, որ պատճառ է դառնում մեր անզորության. մարդ միշտ բավական ուժեղ է անելու այն, ինչ զորավոր կերպով ցանկանում է. Volenti nihil difficile*. Եթե մոլությունն ատեինք այնպես, ինչպես սիրում ենք կյանքը, մենք հաճոյալի հանցագործու-

* «Ցանկացողի համար ոչինչ դժվար չէ»— Ս. Բ.

Իյունեերից կխուսափեինք այնպես հեշտորեն, ինչպես մի սքանչելի ճաշի մեջ դրված մահացու թույնից։

Մի՞թե կարելի է չնկատել, որ եթե այս կետի շուրջ մի նլիտասարդի տրված բոլոր դասերը զուր են անցնում, պատճառն այն է, որ նրանք չեն համապատասխանում նրա տարիքին. ամեն տարիքի համար պետք է գտնել դատողության այնպիսի մի ձև, որն այն սիրելի դարձնի։ Խոսեցե՛ք նրա հետ լրջորեն, եթե այդպես է պետք, բայց այնպիսի հրապուրիչ ձևով, որ նա ստիպված լինի ձեզ լսել։ Ջոր կերպով մի՛ դիմադրեք նրա ցանկություններին. մի՛ ճնշեք նրա երևակայությունը, այլ առաջնորդեցե՛ք, որպեսզի հրեշներ չծնի։ Խոսեցե՛ք նրա հետ սիրո, կանանց, հաճույքների մասին. այնպես արե՛ք, որ ձեր զրույցների մեջ գտնի իր մատաղ սիրտը շոյող հմայքը. ոչինչ մի՛ խնայեք նրա խորհրդատուն լինելու համար. միայն այդպիսով դուք կլինեք նրա իսկական ուսուցիչը։ Այդ դեպքում մի՛ վախենաք, թե ձեր զրույցները կձանձրացնեն նրան. ընդհակառակն, նա ձեզ խոսել կտա ավելի, քան դուք կցանկանայիք։

Ես ոչ մի րոպե չեմ կասկածում, որ եթե կարողանամ վերոհիշյալ կանոնները գործադրել անհրաժեշտ նախազգուշություններով, և էմիլի հետ խոսել համապատասխան այն հանդամանքներին, որոնց նրան հասցրել է տարիների առաջընթացը, նա ինքնուրույն կերպով կգնա դեպի այն նպատակակետը, ուր ուզում եմ նրան առաջնորդել, կշտապի մտնել իմ պաշտպանության տակ, և սարսափած իրեն շրջապատող վտանգներից, ինձ կասի՝ իր տարիքին հատուկ ամբողջ ջերմությամբ. «Ո՜վ իմ ուսուցիչ, իմ պաշտպան, իմ բարեկամ, մի՛ վայր դնեք ձեր հեղինակությունը այնպիսի մի րոպեի, երբ ես ամենից ավելի նրա կարիքն ունեմ. այդ հեղինակությունը դուք մինչև այսօր ունեիք իմ տկարության շնորհիվ, այժմ կունենաք իմ կամքով, և դա ինձ համար ավելի նվիրական կլինի։ Պաշտպանեցե՛ք ինձ իմ բոլոր թշնամիներից, մասնավորապես նրանցից, որոնք իմ մեջ են ու ինձ դավաճանում են. հսկեցե՛ք ձեր ձեռակերտի վրա, որպեսզի նա միշտ արժանի լինի ձեզ։ Ես կամենում եմ հպատակվել ձեր օրենքներին, ես միշտ այդ եմ ցանկանում, այդ

իմ մշտական կամքն է. եթե երբևիցե ձեզ չլսեմ, դա կլինի հակառակ իմ կամքի. փրկեցե՛ք ինձ իմ սեփական բռնակալ կրքերից, մի՛ թողեք, որ ես նրանց ստրուկը դառնամ, ստիպեցե՛ք ինձ լինել իմ անձի տերը, հնազանդվել ոչ թե իմ զգայություններին, այլ՝ իմ դատողությանը»։

Եթե ձեզ հաջողվի ձեր աշակերտին հասցնել այս կետին (չհաջողվելու դեպքում՝ դուք եք մեղավոր), զգուշացե՛ք խնայել դրանից օգտվել, որպեսզի, եթե ձեր իշխանությունը շատ խիստ գտնի, իրեն իրավունք չտա նրանից փախչելու՝ ձեզ մեղադրելով իրեն խարած լինելու մեջ։ Այդ միջոցին է, որ վերապահությունն ու լրջությունը տեղին կլինեն. և քանի որ առաջին անգամ այդպիսի վերաբերմունքի կհանդիպի ձեզ մոտ, նա խորապես կազդվի դրանից ։

Ուրեմն, դուք նրան կասեք. «Երիտասա՛րդ, դուք թեթևամտորեն ստանձնում եք ծանր պարտավորություններ. պետք է դրանք ճանաչել՝ ձևակերպելու իրավունք ունենալուց առաջ. դուք չգիտեք, թե ինչպիսի սաստկությամբ զգայությունները ձեզ նմաններին, հաճույքի հրապույրի ներքո, քշում են դեպի մոլությունների անդունդը։ Ինձ քաջ հայտնի է, որ դուք գծուծ հոգի չունեք. դուք երբեք չեք դժժի ձեր խոստոմը, բայց քանի՛-քանի՛ անգամ, գուցե, դուք կզղջաք այն տված լինելու համար, քանի՛-քանի՛ անգամ դուք կանիծեք նրան, ով ձեզ սիրում է, երբ սպառնացող չարիքներից ձեզ փրկելու համար նա ստիպված կլինի վիրավորել ձեր սիրտը։ Այնպես, ինչպես Ոդիսևսը, հուզված՝ սիրենաների երգից, իր նավավարներին հրամայում էր իրեն ազատել շղթաներից, դուք էլ, տարված հաճույքի հրապույրով, կցանկանաք քանդել ձեզ կաշկանդող կապերը, ինձ կձանձրացնեք ձեր զանգատներով, կմեղադրեք բռնակալության մեջ, այնինչ ես, ավելի քան երբևէ, իմ գուրգուրանքով կշրջապատեմ ձեզ. մտածելով սոսկ ձեր երջանկության մասին, ես ձեր ատելությունը կհրավիրեմ ինձ վրա։ Ո՜վ իմ սիրելի Էմիլ, ես երբեք չեմ կարող տանել քեզ համար զզվելի լինելու միտքը. քո երջանկությունն իսկ շատ թանկ կլինի այդ գնով։ Բարի երիտասա՛րդ, չե՞ք տեսնում, որ ինքներդ ձեզ ստիպելով ինձ հպատակվել, դուք ստիպում եք ինձ ձեզ առաջնորդել, մոռանալ ինձ՝ նվիրվելու հա-

մար ձեզ, չլսել ո՛չ ձեր տրտունջները, ո՛չ ձեր բողոքները, ընդդիմանալ ձեր և իմ ցանկություններին։ Դուք ինձ վրա դնում եք մի լուծ, որն ավելի ծանր է, քան ձերը։ Այդ լուծն ուտանձնելուց առաջ, երկուսով պետք է չափենք մեր ուժերը. համբերեցե՛ք, ժամանակ տվե՛ք ինձ մտածելու. իմացե՛ք, որ ինչքան դժվար ենք խոստանում, այնքան ավելի հավատարիմ ենք մնում մեր խոստումին»։

Նույնպես, դուք ինքներդ իմացե՛ք, որ ինչքան դժվարահաճություն ցուցաբերեք պարտավորությունների վերաբերմամբ, այնքան ավելի կհեշտացնեք նրանց կատարումը։ Անհրաժեշտ է, որ երիտասարդն ազատ, թե ինքը շատ է խոստանում, իսկ դուք՝ է՛լ ավելի շատ։ Երբ ժամանակը գա, և նա, այսպես ասած, ստորագրած լինի պայմանագրությունը, փոխեցե՛ք ձեր լեզուն, ձեր իշխանությունը մեղմացրե՛ք այնչափով, որչափով խստություն էիք ազդարարել։ Ասացե՛ք նրան. «Երիտասարդ բարեկա՛մ, դուք փորձ չունեք, բայց ես այնպես եմ արել, որ դատողությունից զուրկ չմնաք։ Դուք ի վիճակի եք ամենուրեք տեսնելու իմ վարմունքի դրդապատճառները. դրա համար միայն պետք է սպասել, որ դուք սառնարյուն լինեք։ Նախ սկսեցե՛ք հպատակվել և ապա ինձնից հաշիվ պահանջեցե՛ք, թե ինչի են պետք իմ կարգադրությունները։ Ես երբեք չեմ վախենա ձեզ որպես դատավոր ընդունել ձեր և իմ միջև։ Դուք խոստանում եք լինել հնազանդ, իսկ ես խոստանում եմ այդ հնազանդությունը ծառայեցնել ձեզ մարդկանց մեջ ամենաերջանիկը դարձնելու գործին։ Իմ խոստումի որպես երաշխիք ունեմ այն կյանքը, որ դուք վայելում եք մինչև հիմա։ Եթե կարողանաք գտնել ձեր հասակակիցների մեջ մեկ ուրիշին, որ ձերի չափ հաճելի կյանք ապրած լինի, ես այլևս ոչինչ չեմ խոստանա ձեզ»։

Իմ հեղինակությունը հաստատելուց հետո ստացիկ գործս կլինի խուսափել նրանից օգտվելու անհրաժեշտությունից։ Ոչինչ չեմ խնայի՝ գնալով նրա վստահությունն է՛լ ավելի դրավելու, նրա սրտի խորհրդակիցն ու նրա հաճույքների իրավարարը դառնալու համար։ Փոխանակ արգելակելու, կուսումնասիրեմ նրա տարիքի յուրահատուկ հակումները՝ դրանց տիրելու համար. կխորանամ նրա հայացքների

մեջ՝ դրանք ղեկավարելու համար. նրա ներկան չեմ զոհի ապագա երջանկությանը։ Չեմ ցանկանում, որ նա երջանիկ լինի մի անգամ, այլ՝ ընդմիշտ, եթե հնարավոր է։

Նրանք, ովքեր ցանկանում են խելացիորեն առաչնորդել երիտասարդությանը՝ նրան ղերծ պահելու համար զգայությունների լարած թակարդներից, նրան խրտնեցնում են սիրուց և այդ հասակում դրա մասին մտածելը պատրաստ են ոճիր համարելու, կարծես սերը միայն ձերերի համար ստեղծված լիներ։ Բոլոր այս խաբուսիկ դասերը, որ սիրտը հերքում է, երբեք համոզիչ չեն։ Երիտասարդը, առաջնորդվելով մի ավելի ապահով բնազդից, գաղտնի ծիծաղում է այն խղճուկ կանոնների վրա, որոնց իբր թե հավանություն է տալիս, և հարմար րոպեին է սպասում՝ դրանք ապարդյուն դարձնելու համար։ Այս ամենը հակասում է բնությանը։ Հետևելով հակառակ ուղղության, ես ավելի վստահորեն կհասնեմ նույն նպատակին։ Ես չեմ վախենա նրա մեջ շոյելու այն քաղցր զգացմունքը, որին նա ծարավի է. այդ զգացմունքը նրան կնկարագրեմ որպես կյանքի գերագույն երջանկությունը, ինչպիսին է իրոք. և այդպես պատկերելով՝ կցանկանամ, որ նա այն լիուլի վայելի. կզգացնեմ նրան, որ սրտերի միությունը ինչպիսի՜ հմայք է ավելացնում զգայությունների թովչանքին, և այդպիսով նրա մեջ զզվանք կառաջացնեմ դեպի անառակությունն ու նրանից կպատրաստեմ զգաստ սիրահար։

Մինչև ո՛ր աստիճան սահմանափակ մտքի տեր պետք է լինել՝ մի երիտասարդի նորածին ցանկությունների մեջ բանականության դասերին սոսկ խոչընդոտ տեսնելու։ Ես, ընդհակառակն, նրանց մեջ տեսնում եմ իսկական միջոցը՝ նրան հպատակեցնելու այդ նույն դասերին։ Կրքերի վրա միայն կրքերով կարելի է ազդել. հենց այդ ազդեցությամբ էլ պետք է պայքարել կրքերի բռնակալության դեմ. և ոչ ուրիշ տեղից, այլ միայն բնությունից պետք է միշտ վերցնել այդ բռնակալությունը զսպելու միջոցները։

Էմիլն ստեղծված չէ շարունակ մենակ ապրելու. լինելով հատարակության մեկ անդամը, նա պարտավոր է, որպես այդպիսին, կատարել իր պարտականությունները։ Աշխարհ եկած լինելով մարդկանց հետ ապրելու, նա պարտավոր է ճանաչել

նրանց։ Նա մարդկանց ճանաչում է ընդհանրապես, մնում է, որ նրանց ճանաչի անհատապես։ Նա գիտի, թե ինչ են անում նրանք աշխարհում, մնում է գիտենա, թե ինչպես են ապրում այնտեղ։ Ժամանակն է նրան ցույց տալու այս մեծ բեմի արտաքինը, որի բոլոր գաղտնի խորշերը նրան արդեն ծանոթ են։ Այդպիսով, նա մի երիտասարդ հիմարի նման չի հիանա նրանով, այլ ճիշտ և արդարացի դատողությամբ կճանաչի այն։ Իր կրքերը կարող են, անկասկած, նրան չափազանցությունների մղել. բայց չէ՞ որ դրանից չեն կարող խուսափել նրանք, ովքեր անձնատուր են լինում այդ կրքերին. իսկ իմ էմիլը դեռևս չի խոթվի ուրիշների կրքերից։ Նա նրանց, նկատելու դեպքում, կնայի իմաստունի աչքով՝ առանց տարվելու նրանց օրինակով, ոչ էլ կհրապուրվի նրանց նախապաշարումներով։

Ինչպես որ գիտություններն ուսումնասիրելու համար կա հատուկ տարիք, այնպես էլ կա մի տարիք՝ աշխարհիկ կյանքից օգտվելը լավ իմանալու համար։ Նա, ով այդ սովորում է շատ վաղ տարիքում, ամբողջ կյանքում նրանից կօգտվի առանց ընտրության, անխորհուրդ կերպով և, չնայած բավարար չափով, բայց և այնպես առանց երբեք լավ հասկանալու, թե ինչ է անում։ Բայց ով սովորում է դրանից օգտվելու կերպն ու տեսնում դրա շարժառիթները, այդ անում է առավել դատողությամբ, հետևապես և առավել ճշտությամբ ու շնորհքով։ Տվե՛ք ինձ մի տասներկու տարեկան տղա, որը ոչինչ չգիտենա. տասնհինգ տարեկանում ես նրան ձեղ կվերադարձնեմ նույնքան գիտակից, ինչքան նա, ում դուք կրթել եք փոքր հասակից, այն տարբերությամբ, որ ձեր աշակերտի սովորածը միայն իր հիշողության մեջ կլինի, այնինչ իմ աշակերտինը՝ իր դատողության մեջ։ Նույնպես, քսան տարեկան մի երիտասարդի մտցրե՛ք հասարակության մեջ. լավ առաջնորդվելու դեպքում, մի տարուց հետո, նա կլինի շատ ավելի դուրեկան ու շատ ավելի խելամտորեն քաղաքավարի, քան այն երիտասարդը, որն այդտեղ մեծացած կլինի մանկությունից. որովհետև առաջինը, որն ընդունակ է զգալու այն բոլոր վարմունքների պատճառները, որոնք կապված են տարիքի, դրության, սեռի հետ, կարող է դրանք վերածել սկզբունքների ու

կիրառել չնախատեսված պարագաներում. մինչդեռ մյուսը, որպես կանոն ունենալով միայն իր սովորամոլությունը, նեղ դրության մեջ է ընկնում, հենց որ դրանից դուրս են բերում նրան։

Ֆրանսիացի դեռատի օրիորդները, մինչև ամուսնանալը, դաստիարակվում են վանքերում։ Մի՞թե նկատվում է, որ նրանք դժվարանում են իրենց համար այնքան նոր այս կյանքի ձևերն ընդունել, մի՞թե կարելի է Փարիզի կանանց մեղադրել, քե նրանք անշնորհք են, ձախավեր ու չգիտեն բարձր հասարակության մեջ իրենց պահելու կերպը, որովհետև մանկությունից այնտեղ չեն ապրել։ Այս նախապաշարումը գալիս է հենց իրենց՝ բարձր հասարակության մարդկանցից, որոնք ոչինչ չգիտեն ավելի կարևոր, քան այս մանր գիտությունը, և սխալվում են երևակայելով, թե շատ փոքր հասակից պետք է սովորել այդ կյանքին։

Ճիշտ է, շատ էլ չպետք է սպասել։ Նա, ով երիտասարդությունը անց է կացրել բարձր հասարակությունից հեռու, իր հետագա կյանքի ընթացքում, այնտեղ ապրելիս, կունենա շշմած, ճնշված մարդու տեսք, անտեղի խոսակցություն, ծանր ու անշնորհք վարվելակերպ, որից չի կարող ազատվել՝ այդ հասարակության մեջ ապրելով հանդերձ, իսկ երբ փորձում է ուղղել այդ թերությունները, է՛լ ավելի ծիծաղելի է դառնում։ Ուսուցմանն ամեն մի տեսակը իր հատուկ ժամանակն ունի, որ պետք է ճանաչել, ու իր վտանգները, որոնցից պետք է խուսափել։ Հենց տվյալ ուսուցման շուրջն են ամենից ավելի հավաքվում վտանգները. բայց ես իմ աշակերտին չեմ ենթարկում նման ուսուցման անպատեհություններին՝ առանց կանխազգուշական միջոցներ ձեռք առնելու։

Երբ իմ մեթոդը իրագործում է միևնույն ծրագրի բոլոր նպատակները, երբ մի անպատեհությունից խուսափելով մի ուրիշն է կանխում, ես գտնում եմ, որ իմ մեթոդը լավն է, ես ճշմարիտ ուղու վրա եմ։ Այդ եմ տեսնում ես այն միջոցառման մեջ, որ ինձ թելադրում է այս դեպքում իմ մեթոդը։ Եթե կամենում եմ իմաստ ու չոր վերաբերվել իմ սանի հետ, կկորցնեմ նրա վստահությունը, ու շուտով նա կփախչի ինձնից։ Եթե ցանկանամ լինել հաճոյակատար, զիջող, կամ աչք

փակել նրա թերությունների վրա, էլ նրան ինչի՞ է պետք իմ հսկողությունը։ Իմ գործն է միայն թույլատրել նրա անկարգությունը և նրա խիղճը հանգստացնել ի հաշիվ իմ խղճի։ Եթե նրան մտցնեմ հասարակության մեջ լոկ դաստիարակելու նպատակով, նա կսովորի ավելին, քան ես եմ ցանկանում։ Եթե նրան մինչև վերջ հետու պահեմ հասարակությունից, ի՞նչ կսովորի ինձնից։ Գուցե ամեն ինչ, բացի մարդուն ու քաղաքացուն ամենապիտանի բանից, այն է՝ իր նմանների հետ ապրելու արվեստը։ Եթե իմ հոգատարությունը հետամտում է չափազանց հեռավոր օգուտ, նրա համար դա համարյա հավասար է ոչնչի. նրան անպիտան է անհրաժեշտ եթե բավականանամ նրան համար ճաճույքի առիթներ ստեղծելով, ի՞նչ լավություն արած կլինեմ. նա կմեղկանա ու ոչինչ չի սովորի։

Սրանցից և ոչ մեկը պետք չէ։ Միայն իմ միջոցառումն է, որ կօգնի ամեն ինչի։ «Քո սիրտը,— կասեմ երիտասարդին,— կարիք ունի մի ընկերուհու. գնանք հարմար մեկին որոնենք քեզ համար. հնարավոր է հեշտությամբ չգտնենք. իսկապես արժանավորը միշտ էլ հազվագյուտ է, բայց չտապենք ու չվհատվենք։ Անկասկած, մեկը կլինի, և, ի վերջո, մենք նրան կգտնենք, կամ գոնե այնպիսի մեկին, որը մոտենում է նրան»։ Իր ղրաշմունքները գզվող այսպիսի ծրագրով ես նրան կմտցնեմ հասարակության մեջ։ Ավելին. ասելու ի՞նչ կարիք կա, քանի որ, ինչպես տեսնում եք, ամեն ինչ անում եմ։

Կարծում եք, եթե նկարագրեմ նրան այն սիրուհուն, որ իր համար եմ ընտրել, նա կլցի՞ ինձ, կկարողանա՞մ նրան ցանկալի ու հ[redacted] հատկությունները, որ նա պ[redacted] ես ցանկանամ կամ միջոց ունենամ նրան ներկայացնելու։ Ես մտերմանցից ամենաանձարակը կլինեմ, եթե նախօրոք նրա մեջ չվառեմ սիրո կիրքը այն էակի նկատմամբ, որին գոնե չի ճանաչում։ Կարևոր չէ, թե նա, ում կնկարագրեմ, մատչածին է. բավական է, որ նա ղզվանք առաջանցի իմ սանի մեջ տեսած այնպիսիները, որոնք կարող են նրան փորձության ենթարկել. բավական է, որ նա ամեն դեպքում կարողանա համեմատություններ անել, որից հետո նախապատվությունը

տա իր տնտեսապատկերին, քան այն իրական արարածներին, որոնք կարող են գրգռել նրա զգացումները։ Եվ իրոք, ի՞նչ բան է ինքը՝ իսկական սերը, եթե ոչ մի ցնորք, ստուբյուն, պատրանք։ Մարդիկ ավելի շատ սիրում են իրենց մտապատկերը, քան դրա առարկային։ Եթե նրանք տեսնեին իրենց սիրածին այնպես, ինչպես նա իսկապես կա, աշխարհի վրա այլևս սեր գոյություն չէր ունենա։ Երբ այլևս մեկին չեն սիրում, այդ սիրած անձը մնում է նույնը, բայց այժմ նրան այլ կերպ են տեսնում. հմայքի վարագույրն ընկնում է, և սերը չդանում. հետևապես, նրան տալով սիրո երևակայական առարկան, ես կդատնամ բոլոր համեմատությունների տնօրինողն ու հեշտությամբ կկանխեմ իրական առարկաների խաբկանքը։

Սակայն, սրանով չեմ ուզում ասել, թե պետք է երիտասարդին խաբել՝ նրան նկարագրելով կատարելության մի սիպար, որը չի կարող գոյություն ունենալ. բայց ես նրա սիրուհու այնպիսի թերություններ կչոկեմ, որոնք ընդունելի, հաճելի կլինեն, և որոնք նրան կօգնեն ուղղելու իր սեփական թերությունները։ Ոչ էլ ուզում եմ, որ նրան ստեն այն կեղծ հավատիացումով, թե գոյություն ունի իրեն նկարագրված առարկան. բայց երբ հավանի պատկերին, նա չի ուշանա ըղձալ դրա նախատիպը։ Ըղձանքից դեպի ենթադրություն ճանապարհը հեշտ է. խնդիրն այն է, որ մի քանի հնարամիտ նկարագրություններով ավելի ընդգծված ձևով այդ երևակայական պատկերին տան հշմարտացիության մի ավելի որոշակի տեսք։ Ես կկամենայի նույնիսկ նրան մի անուն տալ. կասեի ծիծաղելով՝ «Սոֆի անվանենք ձեր ապագա սիրուհուն. Սոֆին բարեզուշակ անուն է. եթե նա, ում դուք կընտրեք, այդպես չի կոչվում, համենայն դեպս, արժանի կլինի այդ անունը կրելու. մենք կարող ենք դրանով նախօրոք պատվել նրան»։ Բոլոր այս մանրամասնություններից հետո, եթե առանց հաստատելու, առանց ժխտելու խուսս տանք պատճառաբանությունների հարկադրանքից, նրա կասկածները կփոխվեն համոզումի, նա կկարծի, թե մենք նրան վերապահված կնոջը խորհրդավորությամբ ենք պատում, և թե նրան կտեսնի մի օր, երբ ժամանակը գա։ Մի

անդամ, որ նա այլտեղ հասնի, և եթե լավ ենք ընտրել այն դիմադծերը, որ նրան պետք է ցույց տանք, մեացածը հեշտ է. կարելի է նրան դուրս բերել հասարակության մեջ՝ համարյա առանց վտանգի. պաշտպանեցե՛ք նրան միայն իր ղգայություններից, նրա աչքը ապահով միջամտում է դեպքում։

Բայց, մարմնավորի թե ոչ այն օրինակը, որ ինձ կհաջողվի էմիլին սիրելի դարձնել, դա, եթե լավն է, ոչ նվազ կկապի նրան դրա նմանների հետ ու նույնքան կհեռացնի այն բոլորից, որ դրան չեն նմանվում, այնպես, ինչպես եթե իրական մի անձնավորության հանդեպ զգեվեր։ Ինչպիսի՜ առավելություն՝ նրա սիրտը պաշտպանելու այն վտանգներից, որոնց ինքը ենթարկվելու է, զսպելու նրա զգայությունները իր երեվակայությունով, հատկապես նրան խելքու դաստիարակության բաշխիչ այն կանանց ձեռքից, որոնք այնքան քանկ գին են վերցնում դրա համար և, ֆրիտասարդին կենցաղավարություն սովորեցնելու պատրվակի տակ, նրան զրկում են պարկեշտության ամեն մի զգայումից։ Սոֆին այնքա՜ն համեստ է։ Իմ սանը արդյոք ի՞նչպես կընդունի մյուսների առաջարկությունները։ Սոֆին այնքա՜ն պարզ է։ Իմ սանը ի՞նչպես կարող է սիրել նրանց ձևերը։ Նրա երևակայածի ու տեսածի միջև այնքան մեծ է հեռավորությունը, որ վերջին երբեք նրան վտանգավոր չի կարող լինել։

Բայց նրանք, ովքեր խոսում են երեխաներին կառավարելու մասին, հետևում են նույն նախապաշարումներին ու նույն կանոններին, որովհետև վատ են դիտում ու է՛լ ավելի վատ են խորհում։ Երիտասարդության մոլորությունը ո՛չ խառնվածքից, ո՛չ էլ զգայություններից է սկսվում, այլ հասարակական նորմերից։ Թե այստեղ հարցը այն տղաների մասին լիներ, որոնք դաստիարակվում են կոլեջներում, և այն աղջիկների՝ որոնք դաստիարակվում են վանքերում, ես կասեի, թե դա հիշտ է նույնիսկ նրանց նկատմամբ, որովհետև առաջին դասերը, որ ստանում են թե՛ առաջինները և թե՛ վերջինները, և միակն են, որ պտղավորվում են, մոլության դասերն են. ոչ թե բնությունը, այլ օրինակն է, որ այլասերում է նրանց։ Բայց թողնենք դպրոցների ու վանքերի կիշերօթիկներին իրենց վատ բարքերի հետ. նրանց համար ոչ

մի զարմանք չկա։ Ես խոսում եմ միայն ընտանեկան դաստիարակության մասին։ Վերցրե՛ք մի երիտասարդի, որը խելոք դաստիարակություն է ստացել գավառում, իր հոր մոտ, ու զննեցե՛ք նրան, երբ գալիս է Փարիզ, կամ երբ մտնում է հասարակության մեջ. դուք կտեսնեք, որ նա լավ է մտածում պարկեշտ բանների մասին. նրա կամքը նույնքան առողջ է, ինչքան դատողությունը. նա արհամարհում է մոլությունն ու զզվում է անառակությունից, մի պոռնիկի անունն իսկ նրա աչքերի մեջ վառում է անմեղության զայրույթը։ Ես համոզված եմ, որ նա երբեք չէր համարձակվի մենակ մտնել այդ թշվառ անառակուհիների տխուր բնակարանները, եթե նույնիսկ իմանար, թե ինչ են ծառայում դրանք, և ինքը դրա կարիքն զգար։

Վեց ամիս հետո դիտեցե՛ք այդ միևնույն երիտասարդին. դուք նրան չեք ճանաչի. իր ազատ խոսելակերպը, բարձր տոնով հայտարարված սկզբունքները, անփույթ ձևերը նրան մի ուրիշ մարդու տեղ ընդունել կտային, եթե իր նախկին պարզունակության մասին իր իսկ հաճոյախոսությունները, ամոթը՝ որ նա զգում է, երբ այդ մասին նրան հիշեցնում են, ցույց չտային, թե նա մնացել է նույնը ու կարմրում է դրանից։ Օ՜, ինչպե՜ս է նա փոխվել կարճ ժամանակում։ Ո՞րտեղից է առաջացել այդ այնքան մեծ ու հանկարծական փոփոխությունը։ Խառնվածքի զարգացումո՞վ։ Մի՞թե նրա խառնվածքը միևնույն զարգացումը չէր ունենա հայրական տանը. բայց, անկասկած, ո՛չ այդ տոնը կստանար, ո՛չ այդ սկզբունքները։ Զգայությունների պատճառած առաջին հաճույքների՞ց։ Ոլորովին հակառակը։ Երբ մարդ սկսում է անձնատուր լինել դրանց, նա այդ անում է երկչոտությամբ, մտավախությամբ, թաքուն, աղմուկից հեռու։ Առաջին հեշտանքները միշտ էլ խորհրդավոր են. ամոթխածությունը համեմում ու սքողում է դրանք. առաջին սիրուհին լսիրշ չի դարձնում նրան, այլ՝ երկչոտ։ Տարված իր համար բոլորովին նոր զրույթյամբ, երիտասարդը այն վայելելու համար ամփոփվում է ինքն իր մեջ ու դողում է այն կորցնելու մտավախությունից։ Իսկ երբ շատախոսում է այդ մասին, նշանակում է՝ ո՛չ հեշ-

տասեր է, ո՛չ քնքուշ. քանի որ պարծենում է, նա չի կարող վայելած լինել։

Մտածելու այլ ձևեր են միայն, որ առաջացրել են այս տարբերությունները։ Նրա սիրտը դեռևս նույնն է, բայց կարծիքները փոխվել են. և սրանք են, որ ի վերջո կայլասերեն նրա զգացմունքները, որոնք ավելի դանդաղ են այլասերվում, և այդ ժամանակ է միայն, որ նա իսկապես կսպականվի։ Հավիվ հասարակության մեջ մտած, այնտեղ կտեսնա երկրորդ՝ առաջինին բոլորովին հակառակ դաստիարակություն, ըստ որում կսովորի արհամարհել այն, ինչ գնահատում էր, և գնահատել այն, ինչ արհամարհում էր. նրան կսովորեցնեն իր ծնողների և ուսուցիչների դասերը դիտել որպես իմաստակային մի ժարգոն, իսկ այն պարտականությունները, որոնց մասին խրատներ է լսել նրանցից՝ որպես մի տղայական բարոյախոսություն, որ պետք է արհամարհել չափահաս տարիքում։ Նա կարծում է, թե պատիվը իրենից պահանջում է փոխել իր վարմունքը։ Նա դառնում է համարձակ՝ առանց ցանկությունների և ինքնահավան՝ կեղծ ամոթից։ Սաղրում է լավ բարքերը՝ նախքան վատերը ճաշակած լինելու և պարծենում է շվայտությամբ՝ առանց շվայտ լինել կարենալու։ Ես երբեք չեմ մոռանա շվեյցարական պահակագնդի մի սպայի խոստովանությունը, որը ձանձրացել էր ընկերների աղմկոտ զվարճություններից, բայց չէր համարձակվում դրանցից հրաժարվել, խրտնելով նրանց ծաղրանքից. «Ես վարժվում եմ դրան,— ասում էր նա,— այնպես, ինչպես ծխել պիտի սովորի, հակառակ զզվանք զգալուս. համը կգա սովորության հետ. չպետք է միշտ երեխա լինել»։

Ուսումնական հաստատության մեջ մտնող երիտասարդին ոչ այնքան զգայությունից, որքան սնապարծությունից պետք է պահպանել, նա տեղի է տալիս ավելի շուտ ուրիշների, քան իր հակումներին. ինքնասիրությունն ավելի շատ ցոփակյացներ է պատրաստում, քան սերը։

Այսպիսով, ինձ թվում է, թե ամբողջ աշխարհում չկա մեկը, որ իմ սանից ավելի լավ զինված լինի պայքարելու այն ամենի դեմ, որ կարող է սպառնալ նրա վարքին, զգացմունքներին, սկզբունքներին, և ի վիճակի լինի ավելի լավ կուրծք

տալ հնդեղին։ Որովհետև չկա մի թովչանք, որից չկարողանա նա պաշտպանվել։ Թեև իր ցանկությունները նրան տանեն դեպի սեռայինը, այդտեղ չի գտնի այն, ինչ փնտրում է, և իր անհանգիստ սիրտը նրան ետ կպահի։ Թեև զգայությունները հուզեն ու ճնշեն նրան, ոչ մի տեղ չի կարողանա դրանք բավարարել։ Շնացման ու անառակության սարսափը նրան հավասարապես հեռացնում է թե՛ հանրային աղջիկներից և թե՛ ամուսնացած կանանցից, և, պետք է ասել, դրանցից մեկի կամ մյուսի հետ ունեցած կապից են սկզբնավորվում երիտասարդական անկարգությունները։ Ամուսնանալու տարիքի մի աղջիկ կարող է պշրասեր լինել, բայց ոչ լկիրշ. նա չի գնա փաթաթվելու մի երիտասարդի վզով, որը կարող է իր հետ ամուսնանալ, եթե նրան պարկեշտ թվա. բացի այդ, իր վրա մի հսկող կունենա։ Իսկ Էմիլը՝ ինքն էլ առանց հսկողության չի մնա. երկուսով գոնե որպես պահապան կունենան վախն ու ամոթը, որոնք անբաժան են առաջին ցանկություններից. նրանք միանգամից չեն անցնի մտերմության վերջին աստիճանին և ժամանակ չեն ունենա նրան հասնելու աստիճանաբար՝ առանց խոչընդոտների։ Ուրիշ կերպ վարվելու համար պետք է արդեն իր ընկերներից դաս առած լինի, նրանցից սովորած լինի ծաղրել աղջկա զգաստությունը, լինել լիրբ նրանց նման։ Բայց աշխարհում ո՞վ է Էմիլից ավազ ընդօրինակող։ Նա, ով լիովին զերծ է նախապաշարումներից և տուրք չի տալիս ուրիշների նախապաշարումներին, քիչ է ազդվում ծաղրախոսությունից։ Ես քանի տարի աշխատել եմ նրան զինել ծանակողների դեմ... սրանք երբեք չեն կարող նրան իրենց ղոհը դարձնել, որովհետև նրա համար ծիծաղելին հիմարների դատողությունն է միայն, և ոչինչ մարդուն այնքան անխոցելի չի դարձնում ծաղրի նկատմամբ, որքան հասարակական կարծիքից բարձր կանգնելը։ Կատակների փոխարեն նրան դատողություններ են հարկավոր, և քանի դեռ նա այդպիսին է, երկյուղ չունեմ, որ երիտասարդ խելառներ նրան կխելեն ինձնից. իմ կողմն են գիտակցությունն ու ճշմարտությունը։ Թեև պատահի, որ նախապաշարումը խառնվի գործին, մեր քանի տարվա կապը իզուր չի անցնի. նա երբեք չի հավատա, որ ես իրեն ձանձրացրել եմ դատարկ դասերով.

Նրա անխարդախ և դյուրին սրտի մեջ հավատարիմ ու ճշմարիտ բարեկամի ձայնը կկարողանա խլացնել քան հրապուրողների աղաղակները։ Քանի որ այստեղ հարց է ծագում ապացուցել նրան, որ իրեն խաբում են և ձևացնելով, թե նրան վերաբերվում են որպես մարդու, իրականում երեխայի տեղ են գնում, ես նրան միշտ ցույց կտամ պարզ, բայց լուրջ ու հստակ վերաբերմունք, որպեսզի ղգա, թե ես եմ, որ նրան նայում եմ որպես մարդու։ Կասեմ նրան. «Տեսնում եք, որ այն, ինչ ձեզ ասում եմ, բխում է միայն ձեր շահից, որը նաև իմն է. ուրիշը չեմ էլ կարող ունենալ։ Բայց ինչո՞ւ են այս էլիտասարդները ուզում ձեզ համոզել, եթե ոչ ձեզ հրապուրելու համար։ Նրանք բնավ չեն սիրում ձեզ. դուք նրանց ոչնչով չեք շահագրգռում. նրանք ձեր նկատմամբ թաքուն ոխ ունեն, որովհետև տեսնում են, որ դուք նրանցից ավելի մեծ արժանիքներ ունեք. նրանք ցանկանում են ձեզ իջեցնել իրենց խղճուկ մակարդակին և եթե ձեզ մեղադրում են, որ դուք թույլ եք տալիս ձեզ կառավարել, ապա դա նրա համար է, որ իրենք ղեկավարեն ձեզ։ Կարծո՞ւմ եք, թե մի բան կշահեք նման փոփոխությունից։ Մի՞թե նրանք այնքան բարձր իմաստությամբ են օժտված, և մի՞թե նրանց միօրյա կապը իմ մտերմությունից ավելի դորավոր է։ Որպեսզի նրանց ծաղրը որևէ կշիռ ունենար, պետք է նրանց հեղինակություն էլ նույնքան կշիռ ունենար։ Ի՞նչքան փորձառություն ունեն նրանք՝ իրենց ոկզբունքները մերից բարձր դասելու համար։ Նրանք ոչինչ չեն արել, բացի ուրիշ հիմարների նմանվելուց և այժմ էլ ցանկանում են իրենք ընդօրինակվել։ Իրենց հայրերի կարծեցյալ նախապաշարմունքներից ձեր բաժանելու համար նրանք ապրիմում են իրենց ընկերների նախապաշարումներին։ Ինձ անհասկանալի է, թե ի՞նչ են շահում դրանից, բայց տեսնում եմ, որ անկասկած երկու մեծ առավելություն են կորցնում՝ հայրական գորովը, որի խորհուրդները քաղցր են ու անկեղծ, և հայրական փորձառությունը, որի շնորհիվ դատում են այն, ինչ որ ճանաչում են. որովհետև հայրերը երեխա եղել են, բայց երեխաները հայր չեն եղել։

«Բայց գոնե հավատո՞ւմ եք, թե նրանք անկեղծ են իրենց խելառ սկզբունքներով։ Բնավ երբեք, սիրելի էմի՛լ, նրանք

խաբվում են՝ ձեզ խաբելու համար. նրանք երբեք համաձայն չեն նույնիսկ իրենք իրենց հետ. նրանց սիրտը անընդհատ ժխտում է իրենց, և հաճախ բերանը նրանց հակառակն է պնդում։ Եվ նա, ով ծաղրի է ենթարկում ամեն մի պարկեշտ բան, հուսահատ դրության մեջ կընկներ, եթե իր կինն էլ իր նման մտածեր։ Մի ուրիշը վարք ու բարքի նկատմամբ այդ անտարբերությունը կտարածի մինչև դեռևս իր չունեցած կնոջ վարք ու բարքի վրա, կամ, որ խայտառակիչ գաղթնակետն է, մինչև իր սեփական կնոջ վրա, բայց գնացե՛ք ավելի առաջ, խոսեցե՛ք նրա հետ իր մոր մասին և տեսե՛ք՝ կընդունի՞ արդյոք, որ ինքը մի անբարոյական կնոջ տղան է, վատահամբավ մի կնոջ որդին, որ խաբեությամբ յուրացրել է մի ընտանիքի անունը՝ նրա օրինավոր ժառանգորդի իրավունքները հափշտակելու համար. վերջապես, արդյո՞ք նա առնասարտությամբ կլսի, երբ իրեն ապօրինի ղավակ անվանենն։ Նրանցից ո՞վ կցանկանա, որ իր աղջկան անպատվեն այնպես, ինչպես իրենք են անպատվում ուրիշների աղջիկներին։ Նրանց մեջ չեք գտնի ոչ մեկին, որ նույնիսկ ձեր կյանքին չսպառնար, եթե դուք նրա հետ, գործնականում, ընդունեիք այն բոլոր սկզբունքները, որոնց նա աշխատում է ձեզ մասնակից դարձնել։ Այդպիսով է, որ նրանք դրսևորում են իրենց անհետևողականությունը, և մենք պատմ[illegible] ձեզ իմ դատողությունները, նկրնել եմ՝ [illegible] նրանցը, եթե ունեն, ու համեմատե՛ք [illegible] նրանց նման, կամենայի օգտագործել արհամարհանքն ու ծաղրը, կտեսնեիք, թե ինչպես խույս կտային ծաղրելի լինելուց, գուցե նույնքան և ավելի, քան ես։ Բայց ես չեմ վախենում լույջ քննությունից։ Ծաղրողների հաղթանակը կարճատև կլինի. ճշմարտությունը կմնա, ու նրանց տխմար ծիծաղը կչքանա։

Դուք չեք պատկերացնում, թե ինչպես, քսան տարեկան հասակում, էմիլը կարող է հյու լինել։ Ինչքա՞ն տարբեր ենք մտածում մենք։ Ես ինքս չեմ կարող ըմբռնել, թե ինչպես է նա հյու եղել տասը տարեկան հասակում. որովհետև ի՞նչ ազդեցություն ունեի ես այդ ժամանակ նրա վրա։ Տասնհինգ տարի պետք եղավ, որպեսզի կարողանամ այդ ազդեցությունը

ձեռք բերել։ Այդ ժամանակաընթացքում ես նրան չէի դաստիարակում, այլ պատրաստում էի դաստիարակվելու։ Այժմ նա հնազանդ է, որովհետև բավականաչափ դաստիարակված է. նա ճանաչում է բարեկամության ձայնը, դիտի հպատակվել բանականությանը։ Ճիշտ է, ես նրան թողել եմ մի երևութական անկախություն, բայց երբեք նա այնպես լավ չի ենթարկվել ինձ, որովհետև ենթարկվում է իր հոժար կամքով։ Քանի դեռ ես նրա կամքի տերը չէի կարող լինել, իշխում էի նրա անձին. նրանից ոչ մի քայլ չէի հեռանում։ Այժմ, երբեմն նրան թողնում եմ ինքն իրեն, որովհետև շարունակում եմ նրան ղեկավարել։ Նրանից հեռանալիս՝ համբուրում եմ ու վստահ ձայնով ասում. «Էմի՛լ, քեզ հանձնում եմ իմ բարեկամին, նրա ջգաստ սրտին. քեզ համար նա պատասխանատու կլինի իմ առաջ»։

Անհնար է միանգամից փշացնել առողջ զգացումները՝ եթե նրանք նախապես խաթարված չեն եղել, և ջնջել բանականության առաջին լույսերից անմիջականորեն առաջացած սկզբունքները։ Եթե իմ բացակայության միջոցին որևէ փոփոխություն կատարվի, այդ երբեք տևական չի լինի, ու նա չի կարող ինձնից այնպես թաքնվել, որ հնարավորություն չունենամ նկատել վտանգը՝ վնասելուց առաջ, և չկարողանամ ժամանակին այն կանխել։ Քանի որ այլասերումը միանգամից չի կատարվում, հնարավոր էլ չէ անմիջապես այն ծածկել. և եթե կա մի մարդ, որ անընդունակ է կեղծելու արվեստում, դա Էմիլն է. նա իր ամբողջ կյանքում ոչ մի առիթ չի ունեցել կեղծելու։

Ինձ թվում է, որ այս նման ուրիշ միջոցառումների շնորհիվ նա այնպես է ապահովված խորթ օբյեկտներից ու գռեհիկ սկզբունքներից, որ գերադասում եմ նրան տեսնել Փարիզի ամենավատ հասարակության մեջ, քան թե մենակ իր սենյակում կամ մի պարկում, անձնատուր իր տարիքի ամբողջ անհանգստությանը։ Ինչ ուզում եք արեք, երիտասարդին սպառնացող թշնամիներից ամենավտանգավորը և միակը՝ որից չի կարող նա խուսափել, դա ինքն է. այդ թշնամին, սակայն, մեր սխալով է միայն վտանգավոր, որովհետև, ինչպես արդեն հազար անգամ ասել եմ, երևա-

կայությունն է միայն արթնացնում զգայությունները։ Նրանց կարիքը իրականում ֆիզիկական կարիք չէ. ճիշտ չէ, թե դա իսկական կարիք է։ Եթե երբևիցե ցանկահարույց առարկաներ չկպչեին մեր աչքերին, եթե անպարկեշտ զաղափարներ չկազմվեին մեր մտքի մեջ, զուցե այդ կարծեցյալ կարիքը երբեք չզգայինք, մնայինք ժուժկալ՝ առանց փորձությունների, առանց ճիգերի և առանց արժանիքի։ Հայտնի չէ, թե որոշ վիճակներ և որոշ տեսարաններ ինչպիսի թաքուն խմորումներ են առաջացնում երիտասարդների արյան մեջ, մինչդեռ նրանք չեն գիտակցում, թե ինչն է պատճառը այդ առաջին խռովքի, որը հեշտ չէ հանգստացնել, և որը չի ուշանա վերածնվել։ Գալով ինձ, ինչքան ավելի եմ մտածում այս կարևոր ճգնաժամի ու նրա մոտավոր կամ հեռավոր պատճառների մասին, այնքան ավելի եմ համոզվում, որ մի մենակյաց, կրթվելով անապատում՝ առանց դրքի, առանց ուսումի ու առանց կնոջ, այնտեղ կմեռներ կույս՝ որ տարիքում ուզում է լինի։

Բայց այստեղ խոսքը այդպիսի վայրենու մասին չէ։ Երբ մարդը կրթվում է իր նմանների շրջանում և հասարակության համար, անկարելի է, ու նույնիսկ տեղին էլ չէ, նրան ընդմիշտ պահել այդ փրկարար տգիտության մեջ. և իմաստության համար ամենից վատը՝ կիսով չափ գիտակից լինելն է։ Մեր վրա ազդած առարկաների հիշատակը, այն զաղափարները, որ մենք յուրացրել ենք, մեզ հետևում են մեր առանձնության մեջ, ոչ ոչնամ, հակառակ մեր կամքին, մտապատկերներով՝ ավելի դյութիչ, քան իրենք՝ առարկաները. մենակությունը դարձնելով նույնքան վնասակար նրան, ով իր հետ այնտեղ տանում է այդ մտապատկերները, որքան օգտակար նրան, ով այնտեղ միշտ մենակ է մնում։

Հսկեցե՛ք, ուրեմն, երիտասարդին խնամքով, մնաց ամեն ինչից նա ինքը կպաշտպանի իրենն. բայց դուք եք, որ նրան պիտի պաշտպանեք իրենից։ Նրան մենակ մի՛ թողեք ո՛չ ցերեկը, ո՛չ գիշերը. դոնե պահեցե՛ք նրա սենյակում, թո՛ղ նա անկողին մտնի այն դեպքում միայն, երբ քունը լրիվ տանում է, և անկողնուց վեր կենա զարթնելուն պես։ Զգուշացե՛ք բնաղդից այն րոպեից, երբ այլևս չեք կարող չափ

դնել դրան, որովհետև քնազդը լավ է՝ քանի դեռ մենակ է գործում, բայց հենց որ խառնվեց մարդկանց հաստատություններին, դառնում է կասկածելի. չպետք է այն ոչնչացնել, այլ ուղղություն տալ նրան. դուցե դա ավելի հեշտ է, քան ոչնչացնելը։ Շատ վտանգավոր կլիներ, եթե նա ձեր աշակերտին սովորեցներ խարել իր զգայություններն ու դրանք բավարարելու առիթները փոխարինել մի այլ միջոցով. մի անգամ, որ ճանաչեց այս վտանգավոր միջոցը, նա կորած է։ Դրանից հետո նրա մարմինն ու սիրտը միշտ չղաջդրված վիճակում կլինեն. նա մինչև դեքեզման կտանի այդ. սովորության տխուր հետևանքները, ամենավտանգավորն այն սովորություններից, որոնց երբևէ հպատակվում է երիտասարդը։ Անկասկած, դեռևս ավելի լավ կլիներ... «Եթե բուն խառնվածքի բորբոքումները կարելի չլինի հաղթահարել, սիրելի՛ իմ էմիլ, ես քեզ կխղճամ, բայց ոչ մի րոպե չեմ տատանվի, երբեք չեմ հանդուրժի, որ բնությունը շեղվի իր նպատակից։ Եթե անհրաժեշտ է, որ մի բռնակալ քեզ վրա իշխի, նախընտրում եմ քեզ հանձնել նրան, ում ձեռքից կարող եմ քեզ փրկել. համենայն դեպս, քեզ ավելի հեշտորեն կազատեմ կանանցից, քան քեզնից»։

Մինչև քսան տարեկանը մարմինն աճում է, և նա կարիք ունի իր ամբողջ դոյանյութին. ժուժկալությունը, այդ ժամանակ, բնության պահանջն է. մարդ չի կարող նրանից շեղվել՝ առանց իր կազմվածքին վնասելու։ Քսան տարեկանից հետո ժուժկալությունը բարոյական պարտականություն է. նա կարևոր է, որպեսզի սովորենք իշխել ինքներս մեզ վրա, լինել տերը մեր ցանկություններին։ Բայց բարոյական պարտավորություններն ունեն իրենց փոփոխությունները, բացառությունները, կանոնները։ Երբ մարդկային տկարությունը երկընտրանքն անխուսափելի է դարձնում, պետք է ընտրել երկու չարյաց փոքրագույնը. ավելի լավ է սխալ գործել, քան թե մոլությամբ վարակվել։

Հիշեցե՛ք, որ ես այստեղ խոսում եմ ոչ թե իմ, այլ ձեր աշակերտի մասին։ Նրա կրքերը, որոնք դուք ծողեցիք, որ խմորվեն, տիրում են ձեզ. ուրեմն, զիջեցե՛ք նրանց բացահայտորեն՝ առանց նրանից ծածկելու իր հաղթանակը։ Եթե

կարողանաք նրան ցույց տալ այդ հաղթանակի իսկական պատկերը, նա ավելի ամոթահար կլինի, քան հպարտ, և դուք կշահեք նրան առաջնորդելու իրավունքը մոլորության ընթացքում, գոնե նրան անկման վիհից ետ պահելու համար։ Էականն այն է, որ աշակերտը չանի որևէ բան՝ առանց ուսուցչի գիտության ու կամքի, նույնիսկ վատ բան. հարյուր անգամ գերադասելի է, որ դաստիարակը հավանություն տա որևէ սխալի ու խաբվի, քան թե աշակերտը նրան խաբի, ու սխալը կատարվի առանց նրա գիտության։ Ով կարծում է, թե պետք է աչք փակի որևէ բանի դեմ, շուտով ստիպված կլինի չտեսնել ամեն ինչ. առաջին թույլ տված սխալը, որ հանդուրժում ենք, իր հետևից կբերի մեկ ուրիշը, և այս շղթան կվերչանա միայն ամեն տեսակ կարգի փուլ գալով ու ամեն մի օրենքի նկատմամբ արհամարհանքով։

Մի ուրիշ սխալ, որի դեմ ես արդեն պայքարել եմ, բայց որը ոչ մի անգամ սահմանափակ ուղեղներից դուրս չի գա, դա վարդապետական հեղինակության ցուցադրումն է ու աշակերտի աչքին կատարյալ մարդ երևալու ձգտումը։ Այս մեթոդը անիմաստ է։ Ի՞նչպես չեն տեսնում այդ մարդիկ, որ կամենալով ամրապնդել իրենց հեղինակությունը, քանդում են այն. ինչ խոսք, որ լսելի լինելու համար պետք է իրենք իրենց դնեն նրանց տեղը, ում ուղղում են խոսքը, որ պետք է նախ մարդ լինել՝ մարդկային սրտի հետ խոսել կարենալու համար։ Բոլոր այդ կատարյալ մարդիկ ո՛չ հուզում են, ո՛չ էլ համոզում. նրանք միշտ յուղովի ասում են, թե հեշտ է հաղթահարել այնպիսի կրքերը, որ իրենք չեն զգում։ Ցույց տվե՛ք ձեր թույլ կողմերը ձեր աշակերտին, եթե ցանկանում եք բուժել նրա թույլ կողմերը. թո՛ղ նա ձեր մեջ տեսնի այն միևնույն դժվարությունները, որ ինքն է զգում. թո՛ղ սովորի ինքն իրեն հաղթահարել՝ ձեր օրինակով և ուրիշների նման։ «Այս ծերունիները, իրենց կորցրած երիտասարդության համար սրտնեղած, ցանկանում են երիտասարդների հետ վարվել այնպես, ինչպես ծերունիների հետ, իրենց բոլոր ցանկությունները մարած լինելով, մեր ցանկությունները հանցագործություն են համարում»։

Մոնտեյնը ասում է, որ նա մի օր հարցրել էր կոմս դը

Լանժևյին, թե Գերմանիայում իր բանակցությունների ժամանակ քանի՞ անգամ էր հարբել՝ թագավորին ծառա լելու համար։ Ես շատ սիրով կհարցնեի մի որևէ երիտասարդի դասախարակին, թե քանի՞ անգամ է վատահամբավ տուն մտել՝ իր աշակերտին օգտակար լինելու համար։ Քանի անգա՞մ։ Ես սխալվում եմ։ Եթե առաջին անգամից անառակը միանգամընդմիշտ չի կորցնի այնտեղ վերադառնալու իր ախորժակը, եթե այնտեղից չի վերադառնա զղջման ու ամոթի զգացումով, եթե ձեր գրկում արցունքի հեղեղ չի թափի, իսկույն հեռացե՛ք նրանից. կա՛մ նա մի հրեշ է, կա՛մ դուք մի հիմար եք. նրան ոչնչով չեք կարող օգնել։ Բայց թողնենք այս ծայրահեղ միջոցները, որոնք նույնքան տխուր են, ինչքան վտանգավոր և ոչ մի կապ չունեն մեր դաստիարակության հետ։

Ինչքա՜ն նախազգուշություններ է պետք ձեռք առնել մի լավ ընտանիքի երիտասարդի համար՝ նախքան նրան դարի գայթակղիչ բարքերին ենթարկել։ Այդ նախազգուշական միջոցները դժվար են, ծանր, բայց և անհրաժեշտ. այդ գործում ցույց տրված անփութությունն է, որ խորտակում է ամբողջ երիտասարդությանը. առաջին տարիների անկարգ կյանքն է, որ այլասերում է մարդկանց, ու դրա պատճառով է, որ մարդիկ այն են, ինչ որ են այսօր։ Մտոր ու գծուծ՝ նույնիսկ իրենց մոլություններում, նրանք փոքրոգի են, որովհետև նրանց հյուծված մարմինները շատ շուտ են ապականվել։ Հազիվ կարողանում են շարժվել։ Նրանց նենգ մտածումները ապաշնորհ մտքի արդյունք են. նրանք ոչ մի վսեմ ու ազնիվ բան զգալ չեն կարող, ո՛չ պարզություն ունեն, ո՛չ կորով. լինելով ամեն ինչում գծուծ և ստոր կերպով չար, նրանք դատարկամիտ, խաբեբա, կեղծավոր են։ Նույնիսկ բավական քաջություն չունեն նշանավոր սրիկաներ լինելու։ Այսպիսիք են այն քամահրելի մարդիկ, որոնք պատկանում են երիտասարդության շվայտամոլների թվին. եթե նրանցից թեկուզ մեկը լիներ չափավոր ու ժուժկալ և կարողանար, մյուսների մեջ, անաղարտ պահել իր սիրտը, արյունը, բարքերը շրջապատի վարակից, երեսուն տարեկանին նա կջախջախեր բոլոր այդ միջատներին և կլիներ նրանց տերը՝ ավելի նվազ ճիգով, քան կգործադրեր՝ ինքն իր տերը մնալու համար։

Եթե ծագումը կամ բախտը մի քիչ օգնեին Էմիլին, նա ցանկության դեպքում, կլիներ այդ մարդը. բայց նա նրանց այնքան կարհամարհեր, որ չէր ուզենա երբեք օգտվել այդ հանգամանքից։ Այժմ տեսնենք նրան այդ մարդկանց շրջանակում, բարձր հասարակության մեջ մտնելիս՝ ոչ թե այնտեղ գերիշխելու, այլ այդ հասարակությունը ճանաչելու և իրեն արժանի մի ընկերուհի գտնելու համար։

Ինչպիսի դրության մեջ էլ ծնված լինի, ինչպիսի հասարակության մեջ էլ մտնելիս լինի, Էմիլի նախաքայլը կլինի հասարակ ու առանց աղմուկի։ Աստված չանի, որ նա այդ հասարակության մեջ փայլելու ժպրախտությունն ունենա. նա զուրկ է այն հատկություններից, որոնք առաջին հայացքից ուշադրություն են գրավում, ոչ էլ ուզում է այդպիսիք ունենալ։ Շատ քիչ արժեք է տալիս մարդկանց դատողություններին՝ նրանց նախապաշարումներից ազդվելու համար. բոլորովին չի շահագրգռված, որ իրեն գնահատեն նախքան ճանաչելը։ Նրա ներկայանալու ձևը ո՛չ համեստ է, ո՛չ գոռոզ, այլ բնական ու անկեղծ։ Նա ո՛չ նեղվել գիտի, ո՛չ կեղծել, և որևէ միջավայրում իրեն կպահի այնպես, ինչպես կպահեր մենակության մեջ։ Սրա համար կարելի՞ է համարել, որ նա կոպիտ է ու արհամարհող, որ անուշադիր է դեպի ուրիշները։ Ընդհակառակն, եթե, առանձնության մեջ, ուրիշ մարդկանց հաշվի է առնում, ինչո՞ւ, միանգամ ամբողջով, հաշվի պիտի չառներ նրանց։ Իր վարվելակերպով նա ցույց չի տալիս, թե իրենից վեր է դասում նրանց, զուտ իր սրտի խորքում որևէ առավելություն չի գտնում նրանց մոտ. բայց և այնպես, նրանց հանդեպ փաստորեն ոչ մի անտարբերություն չի ցուցաբերում. եթե նա քաղաքավարության ֆորմուլաներ չունի, համենայն դեպս մարդկային վերաբերմունք ունի։ Նա չի կարող տեսնել ուրիշների տառապանքը. սեթևեթանքներ չի անում իր տեղն ուրիշին առաջարկելիս, բայց հոժարակամ այն կզիջի նրան բարեսրտությունից դրդված, եթե նկատի, որ նրան մոռացության են տվել ու այդ մոռացումը նրան վիշտ է պատճառում. որովհետև իմ երիտասարդի համար ավելի հեշտ է կամովին ոտքի վրա մնալ, քան տեսնել մի ուրիշին, որը հարկադրված է մնալ այդ վիճակում։

Թեև, ընդհանրապես, էմիլը մարդկանց մասին համարում չունի, բայց չի էլ արհամարհի, որովհետև խղճում է նրանց ու կարեկցում։ Չկարողանալով նրանց ճաշակել տալ իսկական բարիքները, թողնում է, որ բավարարվեն կարծեցյալ բարիքներով, որովհետև վախենում է, որ զուր տեղը զրկելով դրանցից, կարող է նրանց ավելի դժբախտ դարձնել, քան առաջ էին։ Նա, ուրեմն, ո՛չ վիճասեր է, ո՛չ հակաճառող, ո՛չ էլ հաճոյակատար ու շողոքորթ. նա իր կարծիքն է հայտնում՝ առանց ուրիշի կարծիքը քննադատելու, որովհետև ազատությունը սիրում է ամեն բանից վեր, և անկեղծությունը նրա համար ամենաազնվական իրավունքներից մեկն է։

Նա քիչ է խոսում, որովհետև չի ցանկանում երբեք, որ իրենով զբաղվեն. այդ պատճառով էլ ասում է միայն օգտակար բաներ. այլապես ի՞նչը կարող էր նրան ստիպել խոսելու։ Էմիլը այնքան է զարգացած, որ իրեն թույլ չի տա շաղակրատել. շատախոսությունը, անկասկած, առաջանում է կա՛մ հավակնոտությունից, որի մասին քիչ հետո կխոսեմ, կա՛մ չնչին բաներին կարևորություն տալուց, հիմարաբար կարծելով, թե ուրիշները դրանց նույնքան արժեք են տալիս, որքան մենք։ Այն մարդը ,որ բավական բան գիտի ու այդ բաներին տալիս է իրենց իսկական արժեքը, երբեք շատ չի խոսի, որովհետև ինքն էլ գիտի գնահատել իրեն տրված ուշադրությունը և իր խոսքերի հարուցած հետաքրքրությունը։ Առհասարակ, այն մարդիկ, որ քիչ գիտեն, շատ են խոսում, և նրանք, ովքեր շատ գիտեն, քիչ են խոսում։ Պարզ է, որ տգետը իր գիտցածին շատ է նշանակություն տալիս և այն ասում է բոլորին։ Բայց զարգացած մարդը հեշտորեն չի բաց անի իր գիտելիքների շտեմարանը. նա այնքան շատ բան կունենա ասելու և է՛լ ավելի շատ բան կտեսնի իրենից հետո ասելու, որ կնախընտրի լռել։

Փոխանակ հակադրվելու ուրիշների վարքագծին, էմիլը նրանց հարմարվում է բավական մեծ հոժարությամբ. ոչ թե սովորույթներին ծանոթ երևալու կամ իրեն կիրթ մարդու հովեր տալու համար, այլ, ընդհակառակն, նկատվելու, ուշադրություն գրավելու երկյուղից. և նա երբեք այնպես հան-

կիստ չի զգում իրեն, որքան այն ժամանակ, երբ նրա վրա ուշադրություն չեն դարձնում։

Չնայած, որ մտել է հասարակության մեջ, էմիլը բացարձակապես անտեղյակ է նրա սովորույթներին. դրանով հանդերձ, նա ո՛չ անհամարձակ է, ո՛չ վախկոտ. նեթ մարդկանցից խուսափում է, դա ոչ թե նեղվելուց է, այլ որովհետև լավ սեսնելու համար պետք է աննկատելի մնալ. նա երբեք չի անհանգստանում, թե ինչ են մոռածում իր մասին, և ծաղրանքը ոչնչով չի վախեցնում նրան։ Այդ է պատճառը, որ, միշտ անվրդով ու սառնարյուն լինելով, երբեք չի ազդվում չարամիտ ամոթանքից։ Անկախ նրանից, թե տեսնո՞ւմ են իրեն կամ ոչ, այն, ինչ անում է, միշտ հնարավորին չափ լավ է անում. և լինելով շարունակ ինքնամփոփ՝ ուրիշներին լավ դիտելու համար, նա հասկանում է նրանց վարմունքի շարժառիթը այնպիսի հեշտությամբ, որ չեն կարող ունենալ հասարակական կարծիքի ստրուկները։ Կարելի է ասել, որ նա յուրացնում է հասարակության սովորույթները հենց նրա համար, որ քիչ է կարևորություն տալիս դրանց։

Սակայն մի՛ խաբվեք նրա զսպվածությունից ու այն մի՛ համեմատեք ձեր թեթևաբարո երիտասարդների զսպվածության հետ։ Նա հաստատակամ է, բայց ոչ ինքնահաճ. նրա շարժուձևերը համարձակ են, բայց ոչ արհամարհական. լրբենի տեսքը միայն ստրուկներին է հատուկ. անկախ բնավորությունը զերծ է ամբիծ ինքնագոհությունից։ Ես երբեք չեմ տեսել այնպիսի մարդու, որն իր հոգում հպարտություն ունենալով, այն ըրևևորի իր պահվածքի մեջ. այդ կեղծիքը ավելի շուտ հատուկ է անարդ ու անպիտան հոգիներին, որոնք միայն դրանով են կարողանում իրենց ցույց տալ։ Ես ինչ-որ գրքում կարդացել եմ, որ օտարականի մեկը մի օր ներկայանալով հռչակավոր Մարսելի ընդունելությանը՝ վերջինս նրան հարցրել է, թե ո՞ր երկրից է. «Ես անգլիացի եմ», պատասխանել է օտարականը։ «Դուք անգլիացի՞,— բացականչել է պարոնը,— դուք այն կղզո՞ւց եք, որի քաղաքացիները մասնակցում են հասարակական գործերին ու վեհապետական ուժի մի մասնիկն են»։ Ո՛չ, պարոն, այդ գլխահակ տեսքը, այդ վեհերոտ հայացքը,

այդ անհաստատ շարժուձևը մատնում են մի մեծ իշխանի տիտղոսավոր ստրուկի»։

Ես չգիտեմ, թե արդյո՞ք այս դատողությունը ցույց է տալիս մի մարդու բնավորության ու նրա արտաքինի միջև գոյություն ունեցող իսկական հարաբերության խոր ճանաչումը։ Բայց ես, որ պատիվ չունեմ պարի ուսուցիչ լինելու, բոլորովին հակառակը կմտածեի։ Ես կասեի. «Այդ անգլիացին քծնող չէ. ես երբեք չեմ լսել, որ քծնողը լինի գլխիկոր և ունենա անհաստատ շարժուձևեր. մի պարողի մոտ անհամարձակ երևացող մարդը կարող է այդպիսին չլինել համայնքների պալատում»։ Անկասկած, այս պարոն Մարսելը իր հայրենակիցներին հռոմայեցիների տեղ է ընդունում։

Երբ սիրում ենք, ցանկանում ենք սիրվել։ Էմիլը սիրում է մարդկանց, հետևապես ցանկանում է նրանց դուր գալ։ Առավել ևս նա կցանկանա հաճելի լինել կանանց։ Իր տարիքը, բարքերը, հեռանկարը՝ այդ բոլորը օգնում են նրա այդ ցանկության զարգացմանը։ Ես ասացի՝ նրա բարքերը, որովհետև դրանք մեծ դեր են խաղում այդ բանում. այն մարդիկ, որ տոգորված են նման ցանկությամբ, կանանց իսկական պաշտողներն են։ Այդպիսինները չունեն մյուսների այն մի տեսակ հաճոյակատարության ծաղրական ժարգոնը, բայց ունեն ավելի անկեղծ, ավելի քնքուշ սիրահոժարություն, որը սրտից է բխում։ Ես մի կնոջ մոտ, հարյուր-հազարավոր փշացածների մեջ կարող եմ չոկել լավ վարք ու բարքի տեր և իր բնությանն իշխող մարդուն։ Դատեցե՛ք, թե ինչ պետք է լինի էմիլը իր բոլորովին թարմ խառնվածքով, և այդ իտալրվածքի թելադրանքներին գիմագրելու այնքան պատճառներով։ Կանանց մոտ, ես կարծում եմ, նա երբեմն երկչոտ ու չփոթված կլինի. բայց, անկասկած, այս շփոթվածությունը կանանց դուր կգա, և նրանցից նվազ խորամանկները ավելի հաճախ կփորձեն դրանից օգտվել ու ավելի զարգացնել այն։ Համենայն դեպս, նրա սիրահոժարությունն զգալիորեն կփոխվի, դրությունների համեմատ։ Նա կլինի ավելի չափավոր ու ավելի հարգալիր ամուսնացած կանանց նկատմամբ, ավելի աշխույժ ու ավելի քնքուշ՝ դեպի հարսնացու աղջիկները։ Նրա աչքից երբեք չի վրիպի իր որոնումների

սուարկան, և նա միշտ իր ուշադրությունը կկենտրոնացնի այդ ուղղությամբ։

Ոչ ոք երբեք էմիլի չափ ճշտությամբ չի պահպանի հարպանքի կանոնները, որոնք հիմնված են բնության կարգի և, նույնիսկ, հասարակության սահմանած լավ կարգի վրա. սակայն նա միշտ, համեմատած մյուսների, նախապատվություն կտա առաջինների և ավելի կհարգի իրենից տարեց որևէ անհատի, քան թե հասակակից մի աստիճանավորի։ Իր հաճախած ընկերությունների մեջ ինքը լինելով ամենաերիտասարդը, միշտ ամենահամեստներից կլինի՝ ոչ թե խոնարհ երևալու սնապարծությամբ, այլ բնական մի զգացումով ու գիտակցաբար։ Նա երբեք չի ունենա այն շալակրատի ամբարտավան կենցաղավարությունը, որ, հասարակությանը զարմացնելու համար, խելոքներից ավելի բարձր է խոսում ու տարեցների խոսքն է ընդհատում, և իր նկատմամբ իրավունք չէր տա ասելու այն, ինչ ասել է Լուի XV-ին ծերունի մի ազնվական, որին թագավորը հարցրել էր, թե ո՞ր ժամանակաշրջանն էր գերադասում՝ ի՞ր, թե ներկա. «Տե՛ր արքա, ես երիտասարդությունս անցկացրի ծերերին հարգելով, իսկ ծերությանս պետք է հարգեմ մանուկներին»։

Ունենալով նուրբ ու զգայուն հոգի, բայց ոչ մի բան չգնահատելով՝ հիմնված մարդկանց կարծիքի վրա, չնայած սիրում է ուրիշներին հաճելի լինել, բայց քիչ նշանակություն կտա նրանց մեծաքանքին։ Սրանից հետևում է, որ նա ավելի շուտ սիրելի է, քան քաղաքավարի, որ նա երբեք ցուցամոլ չի դառնա ու մի քաղցր խոսքից ավելի կազդվի, քան հազար գովասանքից։ Նույն պատճառներով, նա անուշադիր չի լինի ո՛չ դեպի իր վարվելակերպը, ո՛չ էլ դեպի իր հագուստները. կարող է նույնիսկ իր արդուզարդի մեջ որոշ խնամք դնի՝ ոչ թե ճաշակով մարդ երևալու, այլ ավելի դուրեկան արտաքին ունենալու համար. նա երբեք չի մտնի ոսկեզօծ շրջանակի մեջ, ոչ էլ, որևէ ժամանակ, պերճանքի ցուցանակը կարատավորի նրա արդուզարդի պատշաճությունը։

Նկատելի է, որ այս ամենը ինձնից բնավ չի պահանջում խրատների շռայլում և ինքնին ուրիշ բան չէ, բայց եթե նրա

առաջին դաստիարակության արդյունք։ Բարձր դասի սովորությունները մեզ ներկայացնում են որպես մի խորհրդավորություն. կարծես, այն հասակում, երբ սկսում են յուրացնել այդ սովորությունները, դա չի լինում բնական կարգով, և որևիցե ազնիվ սրտի մեջ չի կարելի գտնել նրա առաջին օրենքները։ Իսկական քաղաքավարությունը՝ մարդկանց նկատմամբ բարիկամեցողություն ցույց տալն է։ Այդ բանը հեշտությամբ է զգևորվում, եթե առկա է մարդու մեջ. հենց դա չունեցողների համար է, որ ստիպված ենք հատուկ արհեստական ձևեր մշակել։

«Ընդունված քաղաքավարության ամենացավալի հետևանքն այն է, որ նա սովորեցնում է այն առաքինություններից հրաժարվելու հնարքը, որոնց ընդօրինակում է։ Եթե մեզ կրթեն մարդկայնության ու բարեգործության զգացմունքներով, մենք քաղաքավարի կլինենք, կամ այլևս նրա կարիքը չենք ունենա։

«Եթե մենք չունենք այնպիսի քաղաքավարություն, որը հայտնվում է շնորհալի ու վայելուչ ձևերով, ապա կունենանք այնպիսին, որը կհայտնաբերի ազնիվ մարդուն ու քաղաքացուն։

«Դուր գալու համար փոխանակ նենգելու, բավական է բարի լինել։ Փոխանակ կեղծելու՝ ուրիշների թուլությունները շոյելու համար, բավական է ներողամիտ լինել։

«Մեր այսպիսի վերաբերմունքից այդ մարդիկ ո՛չ կգոռոզանան, ո՛չ էլ կայլասերվեն. ընդհակառակն, նրանք կլինեն երախտագետ ու ավելի ազնիվ»[1]։

Ինձ թվում է, որ եթե Մ. Դյուկլոյի պահանջած քաղաքավարությունը կարող է որևէ դաստիարակություն տալ, ապա դա այն դաստիարակությունն է, որի ծրագիրը ես գծել եմ ինչպես հիմա։

Այսուհանդերձ, ես համոզված եմ, որ ղեկավարվելով այսքան տարբեր սկզբունքներով, էմիլը չի լինի այնպես, ինչպես ուրիշները, և տա՛ աստված, որ այդպիսին չլինի։ Բայց այն ամեն ինչում, որ նա կտարբերվի մյուսներից, չի լինի ո՛չ տաղտկալի, ո՛չ ծիծաղելի. տարբերությունը զգալի կլինի՝

[1] Մ. Դյուկլո, «Դիտողություններ մեր դարի բարքերի մասին»։

առանց անդուր լինելու։ Էմիլը կլինի, այսպես ասած, մի հաճելի օտարական։ Սկզբում նրան կներեն իր տարօրինակությունների համար ու կասեն. «Կվերակառուցվի»։ Հետագայում՝ բոլորն էլ կընտելանան նրա վարվելակերպին ու տեսնելով, որ չի փոխվում, նրան կներեն՝ ասելով. «Այդպես է ծնվել»։

Նրան չեն վատաբանի որպես մի սիրելի մարդու, բայց կսիրեն՝ առանց իմանալու, թե ինչու. ոչ ոք նրա խելքը չի գովի, բայց հոժարակամ նրան իրավարար կընդունեն խելոք մարդկանց միջև. նա կունենա հստակ ու չափավոր խելք, շիտակ ըմբռնում, առողջ դատողություն։ Ոչ մի ժամանակ չընկնելով նորելուկ գաղափարների հնոտիից, չի կարող պարծենալ իր խելքով։ Ես նրան հասկացրել եմ, որ մարդկանց համար առողջ և իրոք օգտակար գաղափարներն են առաջին անգամ ճանաչվել, որ միշտ դրանք են եղել հասարակության միակ ճշմարիտ կապերը. իսկ վերացական մտքերը միշտ էլ աչքի են ընկել մարդկային ցեղի համար վատառողջ ու վնասակար գաղափարներով։ Մարդկանց հիացմունքին արժանանալու այդ ձևը նրան բոլորովին չի հուզում։ Նա գիտի, թե որտեղ պետք է գտնի իր կյանքի երջանկությունը և ինչով կարող է նպաստել ուրիշների երջանկությանը։ Իր գիտելիքների շրջանակը օգտակարի սահմաններից այն կողմ չի անցնի։ Նրա ճանապարհը նեղ է և լավ գծված. երբեք չշեղվելով այնտեղից դուրս գալ, նա [illegible] հետ, ովքեր գնում են այդ նույն ճանապարհով, չի ցանկանում ո՛չ մոլորվել, ո՛չ փաղչել [illegible] մշտամիտ մարդ է և ուրիշ ոչինչ չի կամենում լինել. ինչքան ուզում են, թո՛ղ նրան անվանարկեն դրա համար, այդ տիտղոսը նա միշտ էլ իր համար պատվաբեր կգտնի։

Թեև հաճելի լինելու ցանկությունը նրան բոլորովին անտարբեր չի թողնում դեպի ուրիշի կարծիքը, բայց այդ կարծիքից նա կվերցնի միայն այն, ինչ անմիջականորեն է առնչվում իր անձի հետ, առանց մտահոգվելու կամայական գնահատումներից, որոնք հիմնվում են նորույթի կամ նախապաշարման վրա։ Նա հպարտ կլինի նրանով, որ կամենում է լավ անել այն, ինչ անում է, նույնիսկ ավելի լավ, քան մեկ ուրիշը. վազքի մրցման մեջ կցանկանա ամենաարագաշարժը

լինել, ըմբշամարտում՝ ամենաուժեղը, աշխատանքում՝ ամենահաջողակը, խաղերում՝ ամենաճարպիկը. բայց սակավ հետամուտ կլինի այնպիսի առավելություններին, որոնք ինքնին պարզ չեն, և պարզելու համար ուրիշների դատողության կարիքն ունեն, օրինակ՝ ուրիշից ավելի խելք ունենալը, ավելի լավ խոսելը, ավելի գիտուն լինելը և այլն. է՛լ ավելի քիչ՝ այն առավելություններին, որոնք բոլորովին էլ կախված չեն անձից, ինչպես՝ ավելի բարձր ծագումը, ավելի հարուստ համարվելը, ավելի մեծ վարկ, ավելի շատ հարգանք վայելելն ու ուրիշ բոլորը ավելի մեծ շուքով ցուցադրելու անհրաժեշտության առնչվելը։

Սիթեչով մարդկանց որպես իր նմաններին՝ նա հետևապես հսիրի նրանց, ովքեր ամենից ավելի են նմանվում իրեն, որովհետև կզգա, որ ինքը բարի է. այս նմանությունը հետևցրնելով բարոյական հարցերում, ինչպես և լավ խառնվածքի հետ կապված ամեն ինչում ճաշակների նույնությունից, նա մեծապես բավարարված կլինի, եթե իրեն հավանություն տան։ Նա իրավանում չի մտածի. «Ես ուրախանում եմ, որովհետև ինձ հավանում են», այլ՝ «Ես ուրախանում եմ, որովհետև հավանում են իմ լավ գործը. ես ուրախանում եմ նրա համար, որ մարդիկ ինձ պատվելով, իրենց են պատվում. ինչքան ժամանակ նրանք այդպես առողջ դատեն, լավ է արժանանալ նրանց գնահատանքին»։

Մարդկանց ուսումնասիրելով հասարակության մեջ իրենց ունեցած բարքերով, այնպես, ինչպես նախկինում ուսումնասիրում էր պատմության մեջ՝ նրանց հույզերով ու կրքերով, հաճախ ստիպվում էր խորհելու այն ամենի վրա, որ շոյում կամ վիրավորում է մարդկային սիրտը։ Ապա նա կսկսի փիլիսոփայել ճաշակի սկզբունքների մասին, և սա կլինի այդ ժամանակամիջոցում նրան հարմար ուսումը։

Ինչքան հեռու գնանք ճաշակի սահմանումները որոնելու հարցում, այնքան կմոլորվենք. ճաշակն այլ բան չէ, բայց եթե դատելու հատկություն՝ թե ինչն է հաճելի կամ անհաճո ավելի մեծ թվով մարդկանց։ Հեռացե՛ք այդ դրույթից, և դուք այլևս չեք իմանա, թե ինչ բան է ճաշակը։ Սրանից չի հետևում, թե ճաշակավոր մարդիկ ավելի շատ են, քան անճա-

շակները, որովհետև, ինչքան էլ մեծամասնությունը առողջ է դատում յուրաքանչյուր իրի մասին, բայց և այնպես, քիչ մարդիկ կան, որ ամեն ինչի մասին մեծամասնության նման են դատում. ու թեև ամենաընդհանրական ճաշակների զուգադիպությունից լավ ճաշակ է կազմվում, սակայն, ճաշակավոր քիչ մարդիկ կան, այնպես, ինչպես քիչ է գեղեցիկ անձանց թիվը, չնայած որ ամենահասարակ գծերի միացումից գեղեցկություն է կազմվում։

Պետք է նշել, որ այստեղ հարցը այն մասին չէ, թե սիրում ենք մի բան, որովհետև մեզ օգտակար է, կամատում ենք, որովհետև մեզ վնասակար է։ Ճաշակը հոշոտում է միայն անկարևոր կամ, ամենաշատը, հաճելի շահագրգռություն առաջացնող բաներ, և ոչ թե այնպիսի, որոնք առնչվում են մեր կարիքների հետ։ Դրանց մասին դատելու համար ճաշակ պետք չէ. սոսկ ցանկությունը բավական է։ Ահա թե ինչն է այնքան դժվարին, ու ինձ թվում է, այնքան քմահաճ գործունեում ճաշակի հաստակ սահմանումը. որովհետև այն սահմանող բնազդից բացի, այդ սահմանումների այլ պատճառ չենք տեսնում։ Դեռևս պետք է զանազանել նրա օրենքները բարոյական բնույթի, ինչպես նաև ֆիզիկական բնույթի հարցերում։ Այս վերջիններում ճաշակի [illegible] բայց պետք է նկատի ունենալ, որ բարոյական [illegible] այն ամենին, ինչ առնչվում է [illegible][1]. այսպես են բացատրում այն զեղծումները, որ ֆիզիկական են թվում, բայց իրականում երբեք էլ այդպիսին չեն։ Ավելացնեմ, որ ճաշակը ենթարկվում է տեղական կանոններին, որոնք նրան կախման մեջ են դնում կլիմայից, բարքերից, կառավարությունից, ուսման վերաբերյալ հանգամանքներից։ Բացի այդ, կան և ուրիշ կանոններ, որոնք կապված են տարիքի, սեռի, բնավորության հետ, և հենց այդ տեսակետից էլ չպետք է վիճել ճաշակի մասին։

Ճաշակը բնական է բոլոր մարդկանց համար, սակայն նրանք բոլորն էլ նույն ճաշակը չունեն. նա բոլորի մեջ

[1] Այս կետը ապացուցված է «Փորձ՝ լեզուների ծագման մասին» իմ ուսումնասիրության մեջ, որ կգտնեք իմ գրվածքների ժողովածուում։

միևնույն աստիճանի վրա չի զարգանում ու բոլորի մեջ ենթակա է փոփոխության՝ տարբեր պատճառներով։ Ճաշակի չափը կախված է ստացված զգացողությունից. նրա մշակումն ու ձևավորումը կախված են այն շրջապատից, որտեղ ապրել ենք։ Նախ՝ պետք է ապրել հասարակական բազմաթիվ միջավայրերում, որպեսզի շատ համեմատություններ արվեն։ Երկրորդ՝ անհրաժեշտ է լինել այնպիսի շրջապատում, որտեղ կարելի է զվարճանալ և պարապ ժամանակ անցկացնել. որովհետև գործարար շրջաններում իշխող կանոնը ոչ թե հաճույքն է, այլ շահը։ Երրորդ՝ հասարակական այնպիսի շրջանակներ են պետք, որտեղ անհամեմատությունը շատ մեծ չլինի, հասարակական կարծիքի բռնակալությունը լինի չափավոր, որտեղ ավելի շատ բերկրանք տիրի, քան մեծամտություն. այլապես, նորույթը կխեղդի ճաշակը, և մարդիկ կփնտրեն ոչ թե այն, ինչ դուր է գալիս, այլ այն, ինչ տարբերվում է։

Այս վերջին դեպքում այլևս ճիշտ չի լինի ասել, թե լավ ճաշակը մեծամասնության ճաշակն է։ Ինչո՞ւ։ Որովհետև նպատակը փոխվում է։ Այսպիսով մեծամասնությունը այլևս իր սեփական պատողությունը չունի, այլ դատում է սոսկ հետևվելով նրանց, որոնց իրենից ավելի լուսավորված է կարծում. նա հաստատում է ոչ թե այն, ինչ լավ է, այլ այն, ինչ նրանք են հաստատել։ Բոլոր դեպքերում այնպես արե՛ք, որ յուրաքանչյուր անհատ ունենա իր սեփական զգացումը. և այն, որ ինքնին ամենից հաճելին է, միշտ էլ կշահի ձայների մեծամասնություն։

Ամեն ինչ, որ դեղեցիկ է մարդկանց աշխատանքում, նմանեցնելով է ստեղծագործող բուսական օրինակները բնության մեջ են։ Ինչքան հեռանում ենք վարպետից, այնքան մեր պատկերները այլանդակվում են։ Այդպիսի դեպքերում մեր սխրած իրերից ենք վերցնում մեր օրինակները, իսկ երևակայական գեղեցիկը, ենթակա լինելով քմայքի և հեղինակության աղդեցությանը, այլևս ուրիշ բան չէ, քան այն, ինչ դուր է գալիս մեզ առաջնորդողներին։

Վերջինները արվեստագետները, մեծամեծները, հարուստներն են, իսկ նրանք առաջնորդվում են իրենց շահերով ու փառասիրությամբ։ Հարուստները՝ ցուցադրելու

համար իրենց հարստությունները, մյուսները՝ նրանցից օգ-
արվելու համար իրար հետ մրցում են, որպեսզի գտնեն
ծախսելու նոր միջոցներ։ Այսպիսով, ծայրահեղ պերճանքը
հաստատում է իր տիրապետությունը և ստիպում սիրել ինչ
որ դժվար է ձեռք բերել ու թանկ է. այդպիսով, երևութապես
գեղեցիկը ոչ միայն չի նմանվում բնությանը, այլ, ընդհա-
կառակն, նրան հակասելով է, որ գտնում է այդպիսին։ Ահա
թե ինչպես վատ ճաշակն ու շքեղությունը անբաժան են։
Ամեն տեղ, ուր ճաշակը մեծածախս է, կեղծ է։

Հատկապես երկու սեռերի հարաբերության մեջ է, որ
ճաշակը, լավ կամ վատ, ստանում է իր ձևը. նրա մշակումը
այս ընկերության նպատակի անհրաժեշտ հետևանքն է։ Բայց
երբ վայելելու հեշտությունը թուլացնում է համեղությանը
ցանկությունը, ճաշակը այլասերվում է. այդտեղ է, իմ կար-
ծիքով, նաև այն ամենազորավոր պատճառներից մեկը, թե
ինչու՛ լավ ճաշակը կախված է լավ բարքերից։

Դիտեցե՛ք կանանց ճաշակը ֆիզիկական հարցերում,
որոնք կապված են զգացողություններից առաջացած տպա-
վորությունների հետ, ինչպես նաև տղամարդկանց ճաշակը
բարոյական հարցերում, որոնք ավելի շուտ կապված են դի-
տողության հետ։ Երբ կանայք կլինեն այնպես, ինչպես
պետք է լինեն, նրանք կսահմանափակվեն իրենց ձեռնհա-
սության մեջ մտնող բաներով և միայն դրանց կդատեն։ Բայց
այն օրից, երբ նրանք դրականության դատավորներ դարձան,
այն օրից, երբ նրանք սկսեցին գրքերի մասին դատել ու այդ
անել ամբողջ եռանդով, այդ օրից նրանք այլևս անընդունակ
դարձան որևէ դատողության։ Այն հեղինակները, որ իրենց
գործերի մասին խորհուրդ են հարցնում գիտուն կանանցից,
միշտ վստահ կարող են լինել, որ վատ խորհուրդներ կստա-
նան. այն պճնամոլները, որոնք կանանց խորհուրդ են հարց-
նում իրենց հագուստ-կապուտի մասին, միշտ էլ վատ են
հագնված։ Ես շուտով առիթ կունենամ խոսելու այս սեռի
իսկական տաղանդների, դրանք մշակելու ձևի ու այն խնդիր-
ների մասին, որոնց վերաբերյալ նրանց վճիռները պետք է
հաշվի առնել։

Ահավասիկ այն տարրական նկատառումները, որոնք ես

որպես սկզբունք կընդունեմ, երբ էմիլի հետ կսկսեմ տրամաբանել այնպիսի խնդրի մասին, որ նրան բոլորովին կարևոր չէ տվյալ հանգամանքներում և այն որոնման մեջ, որը նրան զբաղեցնում է։ Իսկ ո՞ւմ պետք է այդ խնդիրը անկարևոր լինի։ Այն բանի դիտակցումը, թե ինչը կարող է դուրեկան կամ անդուրեկան լինել, հարկավոր է ոչ միայն նրան, ով ուրիշների կարիքն ունի, այլ նաև նրան, ով փափագում է ուրիշներին օգտակար լինել. նույնիսկ անհրաժեշտ է նրանց հաճոյանալ՝ ծառայելու համար. դրելու արվեստն էլ պարապ մի զբաղմունք է, երբ այն գործ են ածում ճշմարտությունը լսելի դարձնելու համար։

Եթե իմ աշակերտի ճաշակը մշակելու համար ինձ հարկ լիներ ընտրություն կատարել մի կողմից՝ այն երկրների միջև, որտեղ այդ մշակույթը դեռևս պիտի ծնվի, և մյուս կողմից՝ այն երկրների, որտեղ այդ մշակույթը արդեն այլանդակվել է, ես կնախընտրեի իմ սանի շրջագայությունն սկսել վերջիններից և ավարտել առաջիններով։ Այս ընտրության պատճառն այն է, որ ճաշակը խաթարվում է ծայրահեղ փափկակենցաղությունից, որը մարդուն զգայուն է դարձնում այնպիսի իրերի նկատմամբ, որ մարդկանց մեծամասնությունը չի նշմարում. այդ փափկակենցաղությունը տանում է դեպի վիճելու ոգին. որովհետև ինչքան երբացնում ենք իրերը, այնքան սրանք բազմանում են, այդ նրբությունը տակտը դարձնում է է՛լ ավելի դժվարին և սակավ միաձև։ Այդպիսով կստացվեն այնքան ճաշակներ, որքան մարդիկ կան։ Նախասիրության մասին վիճաբանությունների մեջ են ծավալվում փիլիսոփայական [illegible] և այդպիսով են մարդիկ ծռածծել սովորում։ Նուրբ դիտողություններ կարող են անել միայն լայն շփումներ ունեցող մարդիկ, քանի որ այդպիսի դիտողություններն աղդում են բոլոր մյուսներից ավելի ուշ, և բազմամարդ շրջանակներին ոչ-սովոր անձինք այնտեղ իրենց ուշադրությունը վատնում են ընդհանուր երևույթների վրա։ Ներկայումս աշխարհում գուցե չկա մի քաղաքակրթված վայր, որտեղ ընդհանուր ճաշակը ավելի վատ լինի, քան Փարիզում։ Սակայն այդ մայրաքաղաքում է, որ զարթնում է նուրբ ճաշակը։ Եվրոպայում քիչ են լույս

տեսնում այնպիսի արժեքավոր գրքեր, որոնց հեղինակը Փարիզում կրթված չլինի։ Այն մարդիկ, որոնք մտածում են, թե կարելի է բավարարվել այնտեղ հորինված գրքերը կարդալով, սխալվում են. շատ ավելին կարելի է սովորել հեղինակների զրույցներից, քան թե նրանց գրքերն ընթերցելով. նույնիսկ հեղինակներից չէ, որ կարելի է ավելի շատ բան սովորել։ Հասարակական ոգին է, որ զարգացնում է մտածող գլուխը, որ միտքը տանում է այնքան հեռու, ինչքան նա կարող է գնալ։ Թե դուք հանճարի որևէ կայծ ունեք, գնացե՛ք, մի տարի ապրեցեք Փարիզում. շուտով կդառնաք այն, ինչ կարող եք լինել, կամ երբեք ոչինչ չեք լինի։

Մտածել կարելի է սովորել այնտեղ, որտեղ իշխում է վատ ճաշակը. բայց չպետք է մտածել նրանց նման, ովքեր վատ ճաշակ ունեն. և դժվար թե այդ չպատահի, եթե որևէ մեկը շատ երկար ժամանակով մնում է այդպիսիների շրջանում։ Նրանց մեջտեղով հարկավոր է թարեւալել դատողության գործիքը, որը, սակայն, պիտի զգույշ լինել նրանց նման չգործածելու համար։ Ես Էմիլի դատողությունը չեմ մշակի այն այլափոխելու աստիճան, և երբ նա բավականաչափ ներքազացություն կունենա՝ ընկալելու և համեմատելու մարդկանց այլազան ճաշակները, այն ժամանակ կաշխատեմ, որ նա իր ճաշակը կենտրոնացնի ավելի պարզ բանների վրա։

Ես դեռևս շատ վաղ կձեռնարկեի նրան մաքուր և առողջ ճաշակ ներշնչելու գործին։ Ճշմարիտ բոհուրդի մեջ այնպես կանեմ, որ ծերացածում նրա հետ օգտակար զրույցներ կազմակերպել իրեն հաճելի նյութերի շուրջ, աշխատելով դրանք դարձնել և՛ ըմբռնելի, և՛ դաստիարակիչ։ Դա առիթ կստեղծի ընթերցանության ու հաճելի գրքերի համար, սովորեցնելու՝ վերլուծել զրույցը, նրա մեջ հետաքրքրություն արթնացնելու ճարտասանության և աստվածի բոլոր գեղեցկությունների նկատմամբ։ Չարժե լեզուներ սովորել լոկ սովորած լինելու համար, իսկ նրանց գործածությունը այնքան կարևոր չէ, ինչքան թվում է. բայց լեզուների ուսումնասիրությունը տանում է դեպի ընդհանուր քերականության ուսումնասիրությունը։ Լատիներեն պետք է սովորել՝ ֆրանսերենը լավ գիտենալու համար. պետք է ուսումնասիրել ու համե-

մատել թե՛ մեկը և թե՛ մյուսը՝ խոսելու արվեստի կանոններն իմանալու համար։

Բայի այդ, կա ճաշակի որոշ պարզություն, որը դիմում է սրտին, և որը միայն կարելի է գտնել նախնիների գրվածքներում։ Հնատորության, բանաստեղծության, գրականության բոլոր տեսակների մեջ էմիլը պիտի վերստին գտնի այդ բոլորը, ինչպես պատմության մեջ, գործերով հարուստ, դատողություններով չափավոր։ Մեր հեղինակները, ընդհակառակն, քիչ բան են ասում ու շատ [illegible]։ Անընդհատ նրանց դատողություն[illegible]
կազմել [illegible]
վոմ [illegible]
նիկ [illegible]։ Մեր [illegible]
այնինչ հների վրա կարդում էին

Sta, viator; heroem calcas *.

Եթե այս դամբանադիրը գտնեին մի հնադարյան հուշարձանի վրա, ես սկզբում կենթադրեի, թե դա ժամանակակից է, որովհետև մեզ մոտ հերոսները շատ սովորական են, իսկ նախնիներից՝ շատ հազվագյուտ։ Փոխանակ ասելու, թե այսինչ մարդը հերոս է, նրանք կասեին, թե նա ինչ է արել հերոս լինելու համար։ Այդ դամբանագրի հետ համեմատեցեք Թուլամորթ Սարդանապալի հետևյալ դամբանագիրը.

Ես կռվեցի Տարսոնն ու Անխիալոսը մի օրում, և այժմ մեռած եմ։

Ձեր կարծիքով այս երկուսից ո՞րն է ավելի շատ բան ասում. մեր արձանագրական [illegible] ես, իր վերամարձումով, միայն Թուլունե[illegible]
ցույց [illegible]
որ [illegible]
ռազմիկների հիշատակը, *որոնք [illegible]
ժամանակ դավաճանությամբ սպանվել էին, ասում է. «Եք-րանք մեռան անբասիր թե՛ պատերազմում և թե՛ բարեկամության մեջ»։ Ահա ամենը. բայց նկատեցեք, թե այս կարճ ու պարզ ներբողը որքան բովանդակալից է։ Վա՛յ նրան, ով չի հմայվում այս խոսքերով։

* «Կանգնի՛ր, անցո՛րդ. ոտքերովդ հերոսին ես տրորում»։—Ա. Բ.

Թերմոպիլեի մարմարներից մեկի վրա այս խոսքերն են արձանագրված.

Անցո՛րդ, դնա ասա՛ Սպարտային, որ մենք մեռանք այստեղ՝ հնազանդվելով նրա սրբազան օրենքներին։

Իսկույն երևում է, որ Արձանագրությունների ակադեմիան չէ, որ շարադրել է այս նախադասությունը։

Ես խոթված կլինեմ, եթե իմ աշակերտը, որն այնքան քիչ նշանակություն է տալիս խոսքերին, իր առաջին ուշադրությունը չդարձնի այս տարբերությունների վրա և նրանցից չազդվի իր ընթերցումների ընտրությունը կատարելիս։ Ոգևորված Դեմոսթենի առնական պերճախոսությամբ, նա կասի՝ «Սա մի հռետոր է». բայց Ցիցերոնի գրվածքները կարդալով, կասի՝ «Սա մի իրավաբան է»։

Ընդհանրապես էմիլը շատ ավելի հաճույք կստանա նախնիների, քան մեր գրքերից, այն միակ պատճառով, որ հները, որպես առաջիններ, բնությանն ավելի մոտ են, ու նրանց հանճարն ավելի ինքնուրույն է։ Ինչ էլ ասած լինեն լա Մաստն ու Տեռասոն աբբան, մարդկային ցեղի մեջ չկա բանականության ոչ մի իսկական առաջադիմություն, որովհետև, ինչ որ շահում ենք մի կողմից, կորցնում ենք մյուսից, որովհետև բոլոր մտքերն էլ նույն ակնհատակն ունեն, և այն ժամանակը, որ վատնում ենք [illegible], թե ինչ են մտածել ուրիշները, կորած ժամանակ լինելով մեզ համար՝ ինքնուրույն ձևով մտածել սովորելու տեսակետից, մենք ավելի շատ գիտելիքներ ենք ձեռք բերում ու ավելի քիչ մտքի ուժ։ Մեր մտքերը մեր բազուկների նման են, որոնք սովոր են ամեն ինչ անել գործիքների օգնությամբ և ոչինչ ինքնուրույն չեն կարող անել։ Ֆոնտենելն ասում էր, թե հների ու նորերի մասին այս ամբողջ բանավեճը հանդում էր այն բանին, որ իմանան՝ հին ժամանակներո՞ւմ էին ծառերն ավելի մեծ, թե այսօր։ Եթե երկրագործությունը փոխված լիներ, այսպիսի խնդիր հարուցելը անպատեհ չէր լինի։

Այսպես, էմիլին ետ տանելով մինչև գրականության վճիտ ակունքները, ես նրան ցույց կտամ նաև կոյանոցները ժամանակակից գրաքաղների չրափոսերում. թերթեր, քարգ-

մանուքյուններ, բառարաններ՝ նա մի հայացք կգցի այս բոլորի վրա, ապա կհեռանա այլևս երբեք չվերադառնալու որոշումով։ Որպես զվարճության առիթ, ես նրան կտանեմ լսելու ակադեմիանների շաղակրատությունները. նրա ուշադրությանը կհանձնեմ այն բանը, որ նրանց անդամներից յուրաքանչյուրը առանձին ավելի արժեք, քան թե ամբողջի հետ. դրանից ինքը եզրակացություն կանի բոլոր այդ գեղեցիկ հիմնարկությունների օգտակարության մասին։

Ես նրան կտանեմ դիտելու ներկայացումներ՝ ուսումնասիրելու համար ոչ թե բարքերը, այլ ճաշակը, որովհետև հատկապես այստեղ է, որ ճաշակը ծնունդ կառնի նրանց, ովքեր խորհել գիտեն։ «Մի կողմ թողե՛ք պատվիրաններն ու բարոյախոսությունը,— կասեմ նրան.— այստեղ չէ, որ պիտի սովորեք դրանք։ Թատրոնը չի ստեղծվել ճշմարտության համար. նա եղել է մարդկանց շողոքորթելու, զվարճացնելու համար. չկա մի այլ այնպիսի դպրոց, որտեղ կարելի լինի այդքան լավ սովորել հաճելի լինելու, մարդկային սիրտը գրավելու արվեստը։ Թատրոնի ուսումնասիրությանը կհետևի բանաստեղծության ուսումնասիրությունը. դրանք երկուսն էլ միևնույն նպատակին են ձգտում։ Եթե էմիլը ճաշակի գեթ մի կայծ ունենա դեպի բանաստեղծությունը, ինչպիսի՜ հաճույքով կսկսի մշակել բանաստեղծների լեզուները՝ հունարենը, լատիներենը, իտալերենը։ Այդ ուսումնասիրությունները նրա համար կլինեն ոչ-պարտադիր զվարճություններ ու ոչ-պակաս օգտակար. դրանք նրա համար կլինեն դյուրին այնպիսի մի հասակում ու այնպիսի պարագաներում, երբ սիրտը այնքա՜ն հաճույքով է հետաքրքրվում նրան հուզող ամեն կարգի գեղեցկություններով։ Երևակայեցե՛ք մի կողմից էմիլին, իսկ մյուս կողմից՝ կոլեջական մի խեղկատակի՝ «Էնեական»-ի 4-րդ դիրքը, կամ Տիպուլ, կամ Պլատոնի «Բանկետ»-ը կարդալիս. ինչպիսի՜ տարբերություն։ Ինչպե՞ս է հուզում մեկին այն, որի նկատմամբ մյուսը համարյա անզգա է։ Ո՜վ բարի երիտասարդ, կա՛նգ առ, դադարեցրո՛ւ ընթերցանությունդ. տեսնում եմ, որ շատ ես հուզված. ես, անշուշտ, ցանկանում եմ, որ սիրո լեզուն քեզ հաճելի լինի, բայց ոչ թե մոլորեցնի։ Եղի՛ր զգույշ մարդ,

բայց եղի՛ր միաժամանակ խելոք մարդ։ Եթե երկուսից միայն մեկն ես, նշանակում է՝ ոչինչ ես։ Այսուհանդերձ, թո՛ղ իմ անձը հաջողակ լինի կամ չլինի մեռյալ լեզուների, բելետրիստիկայի, բանաստեղծության մեջ՝ դա ինձ համար կարևոր չէ։ Թեկուզ ոչինչ չիմանա այս բոլորից, նա նվազ արժեք չի ունենա, և նրա դաստիարակության գործում նման շատախոսություններն ավելորդ են։

Իմ գլխավոր նպատակն է՝ նրան սովորեցնել զգալ ու սիրել գեղեցկությունը իր բոլոր տեսակներով, այնտեղ բևեռել նրա համակրությունները ու ճաշակները, թույլ չտալ, որ նրա բնական ձգտումները այլասերվեն, և նա երբեք իր հարաբերության մեջ որևէ երջանիկ լինելու այն միջոցները, որոնք իրեն ավելի մոտ կլինեն։ Ես մի ուրիշ տեղ ասել եմ, որ ճաշակը մանր բաների մեջ ինքն իրեն ճանաչելու արվեստն է, և սա շատ ճիշտ է. բայց քանի որ փոքր բաների միահյուսումից է կախված կյանքի հաճույքը, այդպիսի միջոցառումները բոլորովին ավելորդ են դառնում. նրանց շնորհիվ է, որ մենք սովորում ենք կյանքը հագեցնել մեր տրամադրության տակ գտնվող բարիքներով, մեզ համար իրենց լիակատար իրավացիությամբ։ Ես այստեղ բոլորովին նկատի չունեմ բարոյական բարիքները, որոնք հոգու լավ տրամադրության հետ են կապված, այլ միայն այն, որ զգայասիրության է, իրական հեշտասիրության, տալիս նկատի ունենալու հասարակական կոչվածի նկատմամբ պահանջները։

Թո՛ղ ներվի ինձ, իմ միտքը ավելի լավ զարգացնելու համար, մի րոպե թողնել Էմիլին, որի մասին և առողջ զգացումներն այլևս ոչ ոքի, որևէ կանոն, չեն կարող ծառայել, ու ինքս իմ մեջ որոնել ընթերցողի սովորություններին ավելի մատչելի ու ավելի շոշափելի մի օրինակ։

Կան դրություններ, որոնք, թվում է, թե փոխում են բնությունն ու լավ կամ վատ վերաձուլում դրանցում գտնվող մարդկանց։ Վախկոտը դառնում է քաջ՝ մտնելով նավաստի զորագունդը։ Միայն զինվորականության մեջ չէ, որ մարդն ստանում է հավաքական ոգի, միշտ չէ, որ նա բարերար ազդեցություն է թողնում։ Ես շատ անգամ եմ սոսկումով մտածել, որ եթե դժբախտություն ունենայի իմ մտադրած

պաշտոնը այսօր կատարել որոշակի մի երկրում, վաղը զրեթե անխուսափելիորեն կդառնայի բռնակալ, հարստահարիչ, ժողովրդի կործանիչ, վնասակար՝ իշխանավորին, իմ դրությամբ՝ թշնամի այն ամենին, ինչ մարդկային է, արդարացի, թշնամի ամեն տեսակ առաքինության։

Ճիշտ այդպես էլ եթե ես հարուստ լինեի, կանեի այն ամենը, ինչ պետք է հարստանալու համար, այսինքն՝ կլինեի ամբարտավան և ստոր, ղզայոն ու փափկասիրտ՝ միմիայն իմ նվաստամբ, անողոք ու կարծրասիրտ՝ բոլորի հանդեպ, արհամարհոտ հանդիսանայի խուժանի թշվառության հանդեպ (ես ուրիշ տեսակ [illegible] պատկանեի)։ Վերջապես, հարստությունս կծառայեցնեի իմ հաճույքներին, որոնք կլինեին միակ զբաղմունքս. և այդ բոլորով հանդերձ ես կլինեի այնպիսին, ինչպես բոլոր մյուսները։

Բայց, կարծում եմ, ես նրանցից մեծապես կտարբերվեի մի բանով՝ կլինեի ավելի շուտ զգայասեր ու հեշտասեր, քան թե դաժան ու անափառ, և ավելի շատ անձնատուր կլինեի մեղկության, քան ցուցամոլության պերճանքին։ Ես նույնիսկ մի տեսակ ամոթ կզգայի չափից դուրս ցուցադրելու իմ հարստությունը և ինձ կթվար, թե իմ դեմ ցցված է միշտ իմ շքիղությունից ճնշված ինչ-որ նախանձոտ մարդ, որն իր հարևանի ականջին շշնջում է. «Ահա՛ խաբեբայի մեկը, որն անչափ վախենում է, որ կճանաչեն իր ինչպիսի մարդ լինելը»։

Աշխարհի վրա սփռված այնքան առատ բարիքների մեջ ես կփնտրեի նրանց, որ ինձ ամենից ավելի դուր են գալիս և որոնց ամենից հեշտ կարող եմ յուրացնել։ Այդ նպատակով, իմ հարստությունը տուժելին հերթին փոստատարծեի գնելու պարապ ժամանակ և ազատություն, որին կավելացնեի առողջությունը, եթե նա վաճառվող ապրանք լիներ. բայց քանի որ այն կարելի է ձեռք բերել միայն ժուժկալությամբ, և կյանքում առանց առողջության չկա ճշմարիտ հաճույք, ես կզսպավորեի իմ զգայասիրությունը։

Ինչքան հնարավոր է, ես չէի հեռանա բնությունից՝ մեղմելու համար այն զգայությունները, որ նա տվել է ինձ, վստահ, որ ինչքան բնականություն լինի իմ վայելքների

մեջ, այնքան իրական կլինեն նրանք։ Այն իրերի ընտրության մեջ, որ ես պետք է ընդօրինակեմ, միշտ նկատի կունենայի ընդհանրությունը, իմ ցանկությունների մեջ կգերադասեի նրան, իմ ճաշակներում նրան կունենայի որպես խորհրդատու, ճաշերից կջոկեի այնպիսիները, որ նա է պատրաստում լավագույն կերպով, և որոնք ավելի քիչ ձեռքերից անցնելով են հասնում մեր սեղանների վրա։ Ես կխուսափեի խարեբաների կեղծարարություններից, ինքս ընդառաջելով հաճույքներին։ Իմ տխմար ու կոպիտ շատակերությամբ չէի հրըռատացնի ինչ-որ ճաշարանատիրոջ. նրան չէր հաջողվի ինձ ոսկու գնով թույնը վաճառել ձկան փոխարեն*։ Իմ սեղանը ծածկված չէր լինի հրաշալի աղբոտիքով ու հեուսներից ստացված լեշերով. ես սեփական ջանքերով կպաշտպանեի իմ դպրոցասիրությունը, քանի որ նման դեպքերում այդ ջանքն ինքնին մի հաճույք է, որն ավելացնում է այն բավարարությունը, որ ակնկալում ենք նրանից։ Չեմ ցանկանայի ճաշակել աշխարհի որևէ ծայրում պատրաստված մի կերակուր, Ապիցիուսի** նման կնախընտրեի ինքս գնալ այնտեղ, քան բերել տալ, որովհետև ամենահամեղ կերակուրներին խակ պակասում է մի համեմ, որը հնարավոր չէ բերել նրանց հետ, և ոչ մի խոհարար չի կարող այդ ճաշերին տալ այն կլիմայի համն ու բույրը, որի տակ արտադրվել են նրանք։

Նույն պատճառով, ես չէի նմանվի նրանց, ովքեր իրենց այնտեղ են միայն լավ զգում, որտեղ իրենք չկան, տարվա եղանակները միշտ հակադրում են միմյանց, իսկ կլիմաները՝ եղանակներին։ Ովքեր ամառը ձմեռ են փնտրում և ձմռանը՝ ամառ, Իտալիայում մրսում են, իսկ Հյուսիսում շոգում, չեն էլ ենթադրում, որ այդպիսի փախուստի դեպքում նրանք հենց այնպիսի եղանակի են հանդիպում, որի դեմ ալշտպանվել

* Ֆրանսերենում poison = թույն, իսկ poisson = ձուկ։ Հեղինակը բառախաղ է արել։— Ս. Ֆ.

** Ապիցիուս անունով երեք հռոմայեցիներ են հայտնի, որոնք ապրել են տարբեր ժամանակներում. երեքն էլ հայտնի են իրենց շատակերությամբ։ Աթենեն պատմում է, թե նրանցից մեկը հատկապես ճամփորդեց Աֆրիկայում, լսած լինելով, թե այնտեղի չրային մորեխներն ավելի մեծ են, քան նրանք, որ ինքն ուտում է Մենտուրնումի։ Հավանական է, որ այդ մորեխները խեցդեփներ էին։ — Ս. Ֆ.

չեն կարողանում։ Իսկ ես կմնայի իմ տեղում, կամ բողոքովին հակառակը կանեի, կձգտեի մի եղանակից ստանալ այն ամեն հաճելին, որ նա ունի, և մի կլիմայից՝ այն, ինչ նրան յուրահատուկ է։ Ես կունենայի բազմազան հաճույքներ ու սովորություններ, որոնք միմյանց չէին նմանվի և որոնց շարունակ բնությունը կտար ինձ. ամառը կգնայի Նեապոլ, իսկ ձմեռը՝ Պետերբուրգ, մերթ շնչելով քաղցր զեփյուռը, կիսաընկողմանած Տարանտայի հովասուն քարանձավներում, մերթ հայելիազարդ մի պալատի շողշողուն լույսերի մեջ՝ հևասպառ ու հոգնաբեկ վայելելով պարահանդեսի հաճույքները։

Ես կկամենայի, իմ սեղանի սպասեղենի, իմ բնակարանի կահավորման մեջ, շատ պարզ զարդարանքներով ընդօրինակել տարվա եղանակների այլազանությունը և յուրաքանչյուրից հաջորդաբար հաճույք ստանալ։ Բնությանը կարգը խանգարելով՝ ոչ թե ճաշակ ցուցաբերած կլինենք, այլ տաժանք, եթե նրան հարկադրենք, որ մեզ իր արտադրանքները տա ակամա, ցավելով ու անհիծելով. դրանք ո՛չ որակ կունենան, ո՛չ համ և չեն կարող կերակրել ստամոքսը, ոչ էլ բավարարել քիմքը։ Ոչինչ այնպես անհամ չէ, ինչպես վաղահաս բերքը. Փարիզի հարուստները, ահագին ծախքով, իրենց փոերի ու ջերմոցների միջոցով կարողանում են ամբողջ տարին սեղանի վրա ունենալ միայն վատ բանջարեղեններ ու վատ պտուղներ. եթե ես խոր ձմռանը, ստանամանիքին կեռաս ունենայի, կամ հոտավետ սեխ, ի՞նչ հաճույք կարող էի ստանալ, քանի որ իմ քիմքը կարիք չէր ունենա ո՛չ թրջվելու, ո՛չ հովանալու։ Ամռան տապին ինձ ի՞նչ հաճույք կարող են տալ վառարանում եփված դժվարամարս շագանակները, երբ կան հաղարջը, ելակը կամ ծարավը հագեցնող պտուղները, որ առանց մեծ աշխատանքի ինձ կտա հողը։ Ձմռանը մեր բուխարին զարդարել արհեստականորեն աճեցրած բուսականությամբ, դժգույն ու անբույր ծաղիկներով, այդ նշանակում է՝ ավելի շուտ գարունը զրկել իր զարդերից, քան թե ձմեռը պճնազարդել. այդ նշանակում է զրկվել անտառ գնալու, առաջին մանուշակը քաղելու, առաջին բողբոջը տեսնելու հաճույքից և այն բավականությունից, որ կստանանք ուրախությամբ մի պոռթկումի մեջ գոչելով՝

«Մահկանացունե՛ր, դուք լքված չեք, բնությունը դեռ կենդանի՛ է»։

Որքան փոքրաթիվ լինեն իմ ծառաները, այնքան ավելի լավ կլինի իմ սպասարկությունը. այս մասին թեև ես մի անգամ ասել եմ, բայց լավ է նորից կրկնել։ Քաղքենին ավելի կբավարարվի իր մի ծառայով, քան թե դուքսը՝ իրեն շրջապատող տասը պարոններով։ Շատ անգամ եմ մտածել, որ սեղանի վրա բաժակը կողքիս ունենալով, ես կխմեմ, երբ որ ցանկանամ, մինչդեռ, եթե ինձ հարկ լիներ օգտվել սպասավորի ծառայությունից, ստիպված կլինեի երկար սպասել՝ ծարավս հագեցնելու համար։ Այն ամենը, ինչ կատարվում է ուրիշի միջոցով, վատ է արվում։ Տնային կարիքները գնելու համար սպասավորին չեմ ուղարկի, այլ ինքս կգնամ, որպեսզի ինձ չխաբեն, ավելի լավ ընտրեմ ու ավելի էժան գնեմ, այդպիսով ես և՛ հաճելի մարդանք արած կլինեմ, և՛ կտեսնեմ, թե ինչ է կատարվում դրսում. սա մի զբոսանք է, ինչպես նաև, երբեմն, ուսանելու միջոց. վերջապես, կգնամ՝ գնացած լինելու համար. դա էլ մի բան է։ Զանձրույթն սկըսվում է խիստ նստակյաց կյանքից. որքան շատ ենք մեն գալիս, այնքան քիչ ենք ձանձրանում։ Վատ միջնորդներ են դռնապանն ու սպասավորները. ես չէի ցանկանա շարունակ այդ մարդկանց ունենալ իմ և դրսի աշխարհի միջև, ոչ էլ ջրջագայել, ինձ ուղեկից ունենալով կաուքի աղմուկը, ասես վախենալով, որ հետևիցս չհասնեն։ Այն մարդը, որ ոտքով է մեն գալիս, ուշածդ ժամանակ ձիեր կունենա իր տրամադրության տակ. եթե նրանք հոգնած են կամ հիվանդ, ամենից առաջ ինքն է իմանում, և երբեք երկյուղ չի ունենա, որ ստիպված կլինի այդ պատճառով տանը մնալ, երբ իր կառապանը ուզենա առիթից օգուտ քաղել. ճանապարհին հազար ու մի արգելք ու դժվարություն համբերությունից չեն հանի նրան, ոչ էլ կհարկադրեն տեղում անշարժանալ այն դեպքում, երբ ինքը թուլել է ցանկանում։ Վերջապես, եթե ոչ ոք մեզ այնպես լավ չի ծառայում, ինչպես ինքներս, ապա, թեկուզ Ալեքսանդրից էլ հզոր ու Կրեսոսից էլ հարուստ լինենք, ուրիշի ծառայությանը պետք է դիմենք միայն այն դեպքում, երբ ինքներս այն չենք կարողանում կատարել։

Ես չէի կամենա պալատի մեջ բնակվել, որովհետև այդ պալատում ես միայն մի սենյակ կզբաղեցնեի. ընդհանուր սենյակները ոչ ոքի չեն պատկանում, իսկ իմ մարդկանց սենյակներն ինձ համար նույնքան օտար կլինեն, ինչքան իմ հարևանի սենյակը: Արևելյան ժողովուրդները թեև խիստ հեշտասեր են, բայց և այնպես, նրանց բնակարանն ու կահավորումը շատ պարզ են: Նրանք կյանքը ընդունում են որպես մի ուղևորություն, իսկ տունը՝ որպես մի օթևան: Այս դատողությունը մեզ՝ մյուս հարուստներիս համար այնքան էլ նշանակություն չունի, քանի որ մենք այնպես ենք դասավորում մեր գործը, ասես մշտնջենապես ապրելու ենք: Բայց ես մի ուրիշ ապրելակերպ գիտեմ, որը միևնույն արդյունքը կտա: Ինձ կթվար, որ հաստատվելով մի բնակարանում՝ շրջապատված այդքան ծայրահեղ շքեղությամբ, ես կհեռանամ մնացյալ աշխարհից ու կբանտարկվեմ, այսպես ասած, իմ պալատի մեջ: Աշխարհն ավելի մի բավականին գեղեցիկ պալատ է, չէ՞ որ ամեն ինչ պատկանում է հարուստին, եթե նա ցանկանա: Ubi bene, ibi patria *. սա է հարուստի նշանաբանը, նրա հայրենի ծուխը այնտեղ է, որտեղ դրամը ամենակարող է. նրա երկիրը ամեն տեղ է, ուր մուտք կգործի իր դրամարկղը, այնպես, ինչպես Ֆիլիպ Թագավորը իրեն էր համարում այն բոլոր ամրությունները, որտեղ կարող էր մտնել արծաթով բեռնված ջորին [1]: Ի՞նչ կարիք կա, ուրեմն, իրեն շրջափակել պատերով ու դարբասներով, ասես այնտեղից երբեք դուրս չգալու համար: Եթե համաձարակը, կամ պատերազմը, կամ հեղափոխությունը ինձ վռնդի մի տեղից, կգնամ մի այլ տեղ, ուր իմ բնակարանը ինձնից առաջ հասած կլինի: Ի՞նչ կարիք կա, որ ինքս ինձ համար բնակարան կառուցեմ, երբ ամբողջ աշխարհում ինձ համար կառուցում են: Քանի որ այնքան շտապում եմ կյանքն ապրել, ինչո՞ւ պետք է ապագայի համար հաճույքներ որոնեմ, երբ կարող եմ դրանք գտնել ուղածս պահին: Մենք չենք կարող մեզ համար

---

* «Որտեղ լավ է, այնտեղ է հայրենիքը»— Ս. Բ.

[1] Ճոխ հագնված մի օտարական, Աթենքում, իրեն տրված այն հարցին, թե ո՞րտեղից է, պատասխանել է. «Ես հարուստ եմ: Իմ կարծիքով, սա շատ լավ պատասխան է:

հաճելի վիճակ ստեղծել, անվերջ հակադրվելով ինքներս մեզ։ Ահա թե ինչու էմպիդոկլեսը մեղադրում էր ապրիգենտացիներին այն բանում, որ նրանք հաճույքները կուտակում էին այնպես, ասես մի օր էին ապրելու, և կառուցում այնպես, ասես երբեք չէին մեռնելու։

Իմ ինչի՞ն է պետք ընդարձակ բնակարանը, եթե այնքան քիչ մարդ ունեմ այնտեղ բնակեցնելու և այնքան քիչ բան՝ այն լցնելու։ Իմ կահ-կարասին իմ ճաշակների նման պարզ կլիներ. ո՛չ նկարասրահ կունենայի, ո՛չ գրադարան, մանավանդ, եթե սիրեի ընթերցանությունը և որևէ բան հասկանայի նկարներից։ Այն ժամանակ ես կգիտենայի, որ այդպիսի հավաքածոները երբեք լրիվ չեն լինի, և որ այն, ինչ պակասում է, շատ ավելի մեծ ցավ կպատճառի, քան բոլորովին չունենալը։ Այս դեպքում առատությունը դժբախտություն է. հավաքածոներ կազմողը չի կարող այդ զգացած չինել, և նա, ով դա գիտի, պետք է խուսափի հրաժարվի դրանից։ Ոչ ոք կարիք չունի ուրիշներին ցույց տալ մի կաբինետ, երբ գիտի այն օգտագործել իր համար։

Թղթախաղը հարուստի զվարճություն չէ. դա անգործ մարդու զբաղմունք է. իսկ իմ հաճույքներն ինձ այնքան կզբաղեցնեն, որ ժամանակը իզուր վատնելու տեղ չի մնա։ Լինելով մենակ ու աղքատ, ես երբեք չեմ խաղում, բացի, երբեմն, շախմատից, և այդ էլ շատ է։ Իսկ եթե հարուստ լինեի, է՛լ ավելի քիչ կխաղայի, որպեսզի ո՛չ ուրիշները, ո՛չ էլ ես դժգոհելու առիթ չունենանք։ Խաղը հարուստների համար կորցնելով իր հիմնական շարժառիթը, թերևս միայն մրտքով տկարների մոտ կարող է կրքի վերածվել։ Հարուստը խաղում շահածից ավելի քիչ է ազդվում, քան կորցրածից, և քանի որ չափավոր խաղերն այնպես են, որ, վերջիվերջո, նվազում է նրանց օգուտը, և նրանք ավելի շատ չնաս կրևեն, քան թե շահ, լավ դատելով կհամոզվենք, որ չպետք է տարվենք այնպիսի հաճույքով, որը մեզ համար հղի է բազմատեսակ վտանգներով։ Նա, ով իր սնափառությանը հագուրդ է տալիս բախտի շնորհներով, կարող է սրանք գտնել շատ ավելի ախորժելի բաներում, իսկ այդ շնորհները նույնքան շատ են հայտնվում ամենափոքր խաղի, ինչքան ամե-

նամեծի մեջ։ Խաղի ճաշակը, որ ազահության ու ձանձրույթի արդյունք է, միմիայն դատարկ մտքի ու սրտի մեջ կարող է ծնվել, և ինձ թվում է, թե ես բավականաչափ զգացում ու գիտակցություն կունենամ այդպիսի մի լրացուցիչ բերկրանքից հրաժարվելու համար։ Հազվադեպ ենք տեսնում, որ մտածողները մեծ հաճույք ստանան բախտախաղից, որն ընդհատում է մտածելու սովորությունը, կամ այն փոխադրում է ուրիշ՝ ապարդյուն հնարանքների վրա։ Հետևապես, մեկն այն բարիքներից, գուցե և միակը, որ առաջացնում է գիտություններով զբաղվելու կիրքը, այդ զբաղմունքի մոլությունը մասամբ մեղմացնելն է. այդպիսի մարդը ավելի շուտ կմտախոհտորի ճգնել խաղի օգտակարությունն ապացուցել, քան նրանով զբաղվել։ Իսկ ես կպայքարեմ այդ զբաղմունքի դեմ հենց խաղացողների շրջանում, ու ինձ համար ավելի հաճելի կլինի նրանց ծաղրել, երբ տարվում են, քան թե նրանց փողը շահել։

Ես նույնը կլինեմ թե՛ իմ մասնավոր կյանքում և թե՛ հասարակության մեջ։ Կցանկանամ իմ հարատության ամենուրեք բարեկեցություն ստեղծել և երբեք անհավասարության զգացում չարթնացնել։ Պերճանքի ցուցադրությունը անարատշաճ է շատ ու շատ տեսակետից։ Իմ հնարավոր ամբողջ ազատությունը մարդկանց մեջ պահելու համար ես կհագնվեմ այնպես, որ ժողովրդի բոլոր խավերում խորթ չլինեմ, և ոչ ոք ինձ ուշադրություն չդարձնի, որ, առանց սեթևեթության, առանց իմ անձի վրա որևէ փոփոխության, մի հասարակ մարդ լինեմ մերձքաղաքային գիմնեատան մեջ ու լավ ընկերակից՝ Պալե-Ռոյալում։ Այսպիսով, ավելի լավ դասավորելով իմ կյանքը, միշտ իմ տրամադրության տակ կունենամ մարդկային բոլոր խավերի հաճույքները։ Ասում են, թե կան կանայք, որոնք ատեղնագործված քևնոցներով մարդկանց երեսին փակում են դուռը և ընդունում միայն ժանյակավոր մարդկանց. ինձ մնում է, ուրեմն, ուրիշ տեղ անցկացնել իմ օրը. բայց եթե այդ կանայք երիտասարդ ու գեղեցիկ են, ես կարող եմ երբեմն ժանյակ վերցնել, գոնե գիշերը նրանց մոտ անցկացնելու համար։

Ընկերների հետ իմ միակ կապը հիմնված կլինի փոխադարձ սիրո, ճաշակների միասնության, բնավորությունների

համաձայնության վրա. այդ զգացմունքներն ինձ թելադրողը կլինի մարդը և ոչ թե պերճանքը. չեմ հանդուրժի երբեք, որ շահադիտական որևէ հետին միտք թունավորի այդ զգացմունքների հմայքը։ Եթե իմ նյութական ճոխությունը ինձ թեկուզ մի փոքր մարդկայնություն թողած լինի, ես անչափ կընդարձակեմ իմ ծառայությունների ու բարեգործությունների շրջանակը։ Բայց ես կցանկանամ իմ շուրջն ունենալ ընկերներ և ոչ թե քծնողներ, բարեկամներ և ոչ թե հովանավորյալներ. ես չեմ լինի իմ հյուրերի ղեկավարը, այլ՝ նրանց հյուրընկալը։ Անկախությունն ու հավասարությունը իմ հարաբերություններին կտան բարիկամեցողության լիակատար պարզություն, և այնտեղ, ուր պարտավորությունն ու շահախնդրությունը մուտք չեն գործում, հաճույքն ու բարեկամությունն են միայն իշխում։

Մարդ չի կարող գնել ո՛չ իր բարեկամին, ո՛չ իր սիրուհուն։ Հեշտ է փողով կանայք ձեռք բերել, սակայն այդ ձևով ոչ մեկի սիրեկանը չես լինի։ Սերը ոչ միայն երբեք ծախու ապրանք չի լինի, այլ, ընդհակառակն, դրամը նրան կսպանի անպայման։ Նա, ով վճարում է, թեկուզ ամենասիրելի մարդը լինի, հենց այն միակ պատճառով, որ գնում է, չի կարող սիրվել երկար ժամանակ։ Շատ չանցած, նա մի ուրիշի համար կվճարի, կամ, ավելի շուտ, այդ մյուսից կվճարվեն նրա փողով. այս կրկնակի կապի մեջ, որը կազմված է շահով, անառակությամբ, առանց սիրո, առանց պատվի, առանց իրական հաճույքի, փառատենչ, անհավատարիմ ու թշվառական կինը, որի հետ վճարվող սրիկան այնպես է վարվում, ինչպես այդ կինը՝ վճարող հիմարի հետ, այդպիսով պարտահատույց կլինի և՛ մեկի, և՛ մյուսի հանդեպ։ Քաղցր է առատաձնորհ լինել սիրածի հանդեպ, եթե այդ բանը առուծախի բնույթ չունենա։ Ես միայն մի միջոց գիտեմ սիրուհու հանդեպ այդ հակումը զոհացնելու՝ առանց սերը թունավորելու. տալ նրան ամեն ինչ ու ապա ապրել նրա հաշվին։ Մնում է գիտենալ, թե կա՞ այնպիսի մի կին, որի հետ այս միջոցն անհեթեթության չի հանգեցնի։

Նա, ով ասել էր՝ «Ես լախտային տիրացել եմ, բայց նա ինձ չի տիրացել», անմտություն էր ասել։ Այն տիրացումը, որ

փոխադարձ չէ, ոչինչ է. դա, ամենաշատը, սեռի տիրապետման է, բայց ոչ անձի։ Ընդ որում, այնտեղ, որտեղ սերը զուրկ է բարոյականից, այնքան էլ կարիք չկա մնացյալի մասին անհանգստանալու։ Շատ հեշտ է այն գտնել։ Մի ջորեպան, այդ տեսակետից, ավելի մոտ է երջանկության, քան մելի-նատերը։

Ա՜հ, եթե կարելի լիներ հնարավոր չափով պարզաբանել ցոփության անպատեհությունները, նա, ով կտիրապետեր իր ցանկացածին, ինչքա՜ն իրեն խորված կզտներ իր հաշիվների մեջ։ Ինչի՞ համար է անմեղությունն ապականելու այս բարբարոս տենչը, ինչո՞ւ զոհել մի երիտասարդի, որին, ընդհակառակն, հարկավոր է պաշտպանել և որին, այս առաջին քայլից իսկ, անխուսափելիորեն քարշ են տալիս թշվառության վիհը, որտեղից դուրս չի գա մինչև մահը։ Սա ուրիշ բան չէ, բայց եթե վայրենություն, մեծամտություն, հիմարություն, սխալ։ Այս հաճույքն ինքնին բնական չէ, նա բխում է կարծիքից, և ամենավատթար կարծիքից, քանի որ կապված է ինքնանվաստացման հետ։ Նա, ով զգում է, որ ինքը մարդկանցից հետինն է, վախենում է ուրիշ որևէ մեկի հետ համեմատվելուց և ձգտում է առաջնության, որպեսզի նվազ ատելի լինի։ Տեսնեք, թե բարեհամբույր ու համակրության արժանի՞ են արդյոք այն երիտասարդները, որոնք մեծագույն անհագության են ցուցաբերում ցանկահարույց մտապատկերների նկատմամբ, այնինչ ավելի արդարացի կլիներ նրանց դժվարահաճությունը։ Ո՛չ, նա, ով օժտված է համապատասխան արտաքինով, արժանիքով և զգացմունքներով, նվազ երկյուղ կունենա իր սիրուհու փորձառությունից։ Նա իրավացի վստահությամբ կասի նրան. «Ի՜նչ փույթ, որ դու ծանոթ ես հաճույքներին. իմ սիրտը քեզ խոստանում է այնպիսիները, որ դու երբեք չես ճանաչել»։

Սակայն, շվայտ կյանքից հյուծված ծեր կնամոլը, չունենալով ո՛չ հաճույքն, ո՛չ ակնածանք, ո՛չ շրջահայեցողություն, զուրկ լինելով ամեն տեսակ պարկեշտությունից, անկարող, անարժան դուր գալու այն կնոջը, որը գիտի գնահատել համակրելի մարդկանց արժեքը, կարծում է, թե կարող է այդ բոլորը փոխել մի ամեղ երիտասարդուհու մոտ՝ օգտվե-

լով նրա անփորձությունից ու նրա մեջ արթնացնելով զգայությունների առաջին հուզմունքը։ Նրա վերջին հույսն է՝ դուր գալ մի նորույթով. անվիճելիորեն դա է այդ քմայքի թաքուն շարժառիթը. բայց նա խաբվում է. այն զվարճքը, որ նա կառաջացնի, այնքան բնական է, որքան չեն այն ցանկությունները, որ կամենում է գրգռել։ Այսպիսով նա խաբվում է իր խելագար սպասման մեջ. իսկ նույն ինքը բնությունը հոգատարությամբ պահպանում է իր իրավունքները. այն աղջիկը, որ իրեն վաճառում է, արդեն հանձնված եղել է, և քանի որ հանձնվել է ըստ իր ընտրության, նա արդեն արած էլ կլինի այն համեմատությունը, որից ծերուկ խենթը վախենում է։ Այդպիսով, ուրեմն, ինքը գնած կլինի մի երևութական հաճույք, որն իրեն քիչ խորշանք չի պատճառի։

Իսկ ես, որքան էլ ինձ փոխի հարստությունը, մի կետում կմնամ բացարձակապես անփոփոխ։ Թեև ես այլևս ո՛չ լավ վարք ունենամ, ո՛չ առաքինություն, գոնե ինձ մնացած կլինի մի փոքր ճաշակ, մի փոքր զգացում, մի փոքր քնքշություն, և դա ինձ թույլ չի տա իմ հարստությունը միամտորեն վատնել՝ պատրանքների հետևից ընկնելու համար, իմ քսակն ու կյանքն սպառել՝ որպեսզի երեխաներ ինձ դավաճանեն ու ծաղրեն։ Թեև երիտասարդ լինիի, երիտասարդական հաճույքներ կորոնեի, և, ցանկանալով դրանք ունենալ իրենց լրիվ հեշտանքով, ես այդ կանեի ոչ որպես հարուստ մարդ։ Թեև մնայի այնպես, ինչպես որ կամ, դա այլ բան կլիներ. ես խոհեմություն կունենայի սահմանափակվելու իմ տարիքին։ Համապատասխան հաճույքներով. կպահեի այն տենչանքները, որոնք ի վիճակի եմ վայելել, ու կխեղդեի այնպիսինները, որոնք այլևս տանջանք կլինեին ինձ համար։ Ես իմ ալեխառն մորուքը չէի հանձնի երիտասարդուհիների հեգնական արհամարհանքին. ինձ անհանդուրժելի կլիներ այն միտքը, որ իմ գարշելի գգվանքները սրտխառնուք կպատճառեն նրանց, և որ առիթ կտամ նրանց իմ հաշվին ամենածիծաղելի պատմություններ հորինել, իմ՝ ծերուկ կապկիս ամոթալի բերկրանքները նկարագրել, դրանց հանդեպ իրենց ցույց տված հանդուրժողականության վրեժը լուծելու համար։ Թեև որոշ սովորություններ, իմ թույլ դիմա-

դրության պատճառով, վաղեմի ցանկություններս վերածեին պահանջների, գուցե ես նրանց կքավարարեի, բայց ամաչելով, ինքս ինձնից կարմրելով՝ ես ինձնից կվանեի պահանջի կիրքը, կքավարարվեի այնքանով, ինչ հնարավոր է, առանց ավելին ցանկանալու. դրանից հետո իմ տկարությունն այլևս ինձ մշտական զբաղմունք չէի դարձնի և առավել ևս կաշխատեի, որ ինձնից բացի ոչ ոք չիմանար այդ։ Մարդկային կյանքն ունի ուրիշ հաճույքներ, երբ այն մյուսները նրան պատկառում են. զուր տեղը վազելով մեզնից խույս տվող հաճույքների հետևից, մենք զրկվում ենք նրանցից, որոնք տակավին մնում են մեզ։ Մեր ճաշակները պետք է փոխվեն տարիների համեմատ, և չպետք է տարիքները տեղափոխել, այլապես, ինչպես չպետք է տեղափոխել տարվա եղանակները. բոլոր ժամանակներում հարկավոր է պահպանել ինքնուրույնը և չպաշտպարել բնության դեմ. այդ ավելորդ ջանքերը մաշում են կյանքը և մեզ խանգարում նրանից օգտվել։

Հասարակ ժողովուրդը երբեք չի ձանձրանում. նրա կյանքը եռուն է. եթե նրա զվարճությունները բազմազան չեն, ապա հազվադեպ են, հոգնության բազմաթիվ օրերից հետո նա հրճվանքով է ճաշակում տոնական մի քանի օրերի քաղցրությունը։ Երկարատև աշխատանքի ու կարճատև հանգստի հաջորդականությունը կհամեմե նրա վիճակին յուրահատուկ հաճույքներ։ Հարուստների մեծագույն պատուհասը ձանձրույթն է. նյութական մեծ միջոցների գնով կուտակված այնքան հաճույքների մեջ և շրջապատված այնքան մարդկանցով, որոնք միմյանց հետ մրցում են նրանց դուր գալու համար, նրանք հյուծվում, մեռնում են ձանձրույթից. իրենց ամբողջ կյանքն անց են կացնում անընդհատ նրանից խույս տալով ու հետապնդելով և ի վերջո ընկճվում նրա անտանելի ծանրության տակ։ Հատկապես կանայք, որոնք այլևս չգիտեն որևէ բանով ո՛չ զբաղվել, ո՛չ զվարճանալ, ձանձրույթից այնպիսի չղագարության են մատնվում, որ դա նրանց համար պատնում է սոսկալի մի չարիք, որը, երբեմն, խլում է նրանց բանականությունն ու, ի վերջո, կյանքը։ Ես գեղեցիկ փարիզուհու բախտից ավելի սարսափելի բախտ չգիտեմ, բացի

նրա հետ կապված այն դեռահաս հաճոյամոլի վիճակից, որ ինքն էլ փոխակերպվելով անզգաշ կնոջ, այդպիսով կրկնակի հեռանում է իր վիճակից, և բախտավոր մարդ լինելու անափառությունը նրան ստիպում է տանելու այն ամենաախուր օրերի տևական տաղտուկը, որ մարդ արարածը երբևիցե կրած կլինի։

Պատշաճությունները, նորույթները, պերճանքից և վայելուչ կերպերից առաջացած սովորույթները կյանքի ընթացքը պարփակում են ամենատանախորժ միօրինակությանմեջ։ Այն հաճույքը, որ ուզում են ցուցադրել ուրիշներին, կորցված հաճույք է բոլորի համար. դա չի լինի ո՛չ նրանցը, ո՛չ իրենը [1]։ Միծաղելի լինելու զգացումը, որից հատարակական կարծիքը վախենում է միշտ, չի հեռանում այդպիսի կնոջից և չարչարում է ու պատժում նրան։ Մարդիկ ծիծաղելի են միայն իրենց որոշակի սահմանված ձևերով. նա, ով կարողանում է փոփոխել իր դրույթյուններն ու հաճույքները, այսօր չնչում է երեկվա տպավորությունը. նա մարդկանց մտքում հավասարվում է ոչնչի. բայց նա վայելում է կյանքը, որովհետև կարողանում է լիովին օգտվել ամեն մի ժամից և ամեն մի բանից։ Իմ միակ անհոգդողդ գործակակերպը դա կլիներ. յուրաքանչյուր կացության մեջ նկատի չունենալ ոչ մեկ ուրիշ կացություն և յուրաքանչյուր օր վերցնել ինքն իր մեջ, առանձին, անկախ նախորդ և հաջորդ օրերից։ Լինելով ժողովրդի հետ ժողովուրդ, ես գյուղում կդառնայի գյուղացի և հողագործության մասին խոսելիս՝ գեղչուկի ծաղրին չէի ենթարկվի։ Ես չէի գնա ինձ համար քաղաքային կյանք ստեղծել գյուղում ու գավառական մի անկյունում Տյուիլրիի պալատը կառուցել իմ տան դիմաց, այլ ստվերախիտ, սիրուն մի բլրակի լանջին

[1] Երկու աշխարհիկ կանայք, որպեսզի այն տպավորությունը թողնեն, թե շատ են զվարճանում, սովորություն էին արել քնել միայն առավոտյան ժամը հինգին։ Ձմռան սաստիկ ցրտին այդ կանանց սպասավորները գիշերը անց էին կացնում փողոցում՝ նրանց սպասելով, չիմանալով ինչպես պաշտպանվել սառչելուց։ Մի գիշեր, կամ ավելի ճիշտ՝ մի առավոտ, մտնելով այն բնակարանը, որտեղ այդ երկու այնքան զվարճասեր կանայք իրենց ժամերն էին անցկացնում՝ առանց դրանք հաշվելու, նրանց գտնում են բոլորովին մենակ, ամեն մեկը քնած իր բազկաթոռի մեջ։

փոքրիկ մի գեղչկական տուն կունենայի, կանաչ փեղկերով մի սպիտակ տնակ, և չնայած, որ տարվա բոլոր եղանակներին ծղոտե ծածկը լավագույնն է, ես կնախընտրեի ոչ քե գորշ հարձաքարը, այլ հիանալի կղմինդրը, որովհետև դա ավելի մաքուր և զվարթ տեսք ունի, քան ծղոտը, և քանի որ իմ երկրում տանիքները միայն կղմինդրով են ծածկում, ինձ մի քիչ կհիշեցնի իմ երիտասարդության երջանիկ ժամանակները։ Ես բակի փոխարեն կունենայի մի հավանոց, ախոռի տեղ՝ մի դոմ իր կովերով, կաթնեղեն ունենալու համար, որ այնքան սիրում եմ։ Կունենայի մի բանջարանոց՝ պարտեզի փոխարեն, և որպես պարկ՝ պտղատու մի այգի, նման այն այգուն, որի մասին կխոսեմ հետագա տողերում։ Իմ պարտիզպանը ո՛չ կհաշվեր, ո՛չ էլ կքաղեր մրգերը, որոնք թողնված կլինեին անցորդների տրամադրությանը, և իմ ժլատ առատաձեռնությունը աչքից չէր թաքցնի իմ այգին որմնահեց շքեղ ծառերով, որոնց հազիվ քե կարողանային ձեռք տալ։ Իսկ այս փոքրիկ շռայլությունը քանկ չէր նստի ինձ, որովհետև իմ առանձնարանը ես կընտրեի հեռավոր մի գավառում, որտեղ փողը քիչ է, բայց մթերքը՝ շատ, որտեղ կիշխեն առատությունն ու աղքատությունը։

Այնտեղ ես կկազմեի ոչ-բազմամարդ, բայց ընտրովի մի ընկերություն այնպիսի բարեկամներից, որոնք սիրում են ու գիտեն զվարճանալ, և այնպիսի կանանցից, որոնք կկարողանան հեռանալ իրենց բազկաթոռներից ու մասնակցել դաշտային խաղերին, ձեռագործի ու թղթախաղի փոխարեն՝ երբեմն վերընել ձկնորսի կարթը, թռչնորսության գործիքը, խոտհարքի փոցխն ու այգեկութի կողովը։ Անյտեղ քաղաքի բոլոր սովորությունները կմոռացվեին, և լինելով գյուղում իսկական գյուղացի, մենք անձնատուր կլինեինք բազում այլազան զվարճությունների, ու ամեն երեկո մեր առաջ կծառանար սոսկ հետևյալ օրվա համար նորերն ընտրելու հարցը։ Մարմնամարզությունը և աշխույժ կյանքը մեզ կտային նոր ստամոքս ու նոր ճաշակներ։ Մեր բոլոր ճաշերը խնջույքների կվերածվեին, որտեղ հաճույքի առիթ կլիներ ավելի շատ առատությունը, քան թե նրբաճաշակությունը։ Զվարթությունը, գյուղական աշխատանքը, խոլական խաղերը աշխարհի

առաջին խոհարարներն են. նուրբ ճաշերը շատ են ծիծաղելի արևածագից սկսած հևասպառ աշխատող մարդկանց համար. սպասարկությունը ո՛չ կարգ ու կանոն կունենար, ո՛չ շքեղություն. ճաշասրահը կլիներ այգում, նավակի վրա, մի ծառի տակ, երեմն հեռավոր մի աղբյուրի մոտ, կանաչ ու թարմ խոտի վրա, լաստենու և կաղնու սաղարթների ներքև. ուրախ սեղանակիցների երկար մի թափոր երգելով կբերեր խնջույքի պարագաները, մարզագետինը կլիներ սեղան և աթոռ, աղբյուրի շուրջը՝ բուֆետ, իսկ մրգեղենը՝ ծառերից կախված. ճաշերը կմատուցվեին առանց հերթականության, ախորժակը ավելորդ կդարձներ ձևականությունները. յուրաքանչյուրը բացեիբաց ինքն իրեն նախամեծար համարելով ամեն մեկ ուրիշից, բնական կգտներ, որ ուրիշն էլ իրեն նախապատիվ համարեր նրանից. այս սրտագին ու չափավոր մտերմությունից կծնվեր, առանց կոպտության, առանց կեղծիքի, առանց պարտադրության, մի ղվարթ բախտում, որը հարյուր անգամ ավելի համայիլ կլիներ, քան քաղաքավարությունը, և ավելի շատ կմպաստեր սրտերը միմյանց կապելու։ Այնտեղ չէր լինի անախորժ ներկայությունը ոչ մի սպասավորի, որը գաղտագողի ակնանջ դներ մեր զրույցներին, ցածր ձայնով քննադատեր մեր շարժուձևերը, անհագ հայացքով հաշվեր մեր պատառները, հաճույք զգար՝ մեզ խմիչք մատուցելն ուշացնելով, տրտնջար մեր ճաշի ձգձգվելուց։ Մենք ինքներս կլինեինք մեր ծառաները, ապա մեր տերերը լինելու համար. բոլորը կպատասարկեին յուրաքանչյուրին. ժամանակը կանցներ աննկատելիորեն. ճաշը կվերածվեր հանգստի ժամի և կտևեր այնքան, ինչքան օրվա տոթը։ Եթե մեր մոտից անցներ իր գործիքներն ուսին դրած՝ աշխատանքի գնացող մի գյուղացի, ես նրա սիրտը կուրախացնեի մի քանի լավ խոսքերով, մի քանի բաժակ ընտիր գինիով, որի շնորհիվ նա ավելի զվարթ տրամադրությամբ կտաներ իր թշվառությունը. իսկ ես, իմ հերթին, սրտիս խորքում փոքր-ինչ ինձ հուզված զգալով, գաղտնորեն ինքս ինձ կասեի. «Ես տակավին մարդ եմ»։

Եթե որևէ դաշտային տուն համախմբեր տեղի բնակչությանը, ես առաջիններից կլինեի իմ խմբով այնտեղ շտապո-

պլր. եթե մոտերքում հարսանիք տեղի ունենար, երկնքից առավել օրհնված, քան քաղաքի ամուսնությունները, գիտենալով, որ ես սիրում եմ ուրախ կյանքը, ինձ կհրավիրեին այնտեղ։ Այդ բարի մարդկանց կտանեի իրենց նման պարզ նվերներ, որոնք օգտակար կլինեին հանդեսին. իսկ ես, փոխադարձաբար, այնտեղ կգտնեի անգին, իմ աստիճանի մարդկանց շատ քիչ հայտնի վայելքներ՝ անկեղծություն ու իսկական հաճույք։ Ես ուրախ-զվարթ կմասնակցեի նրանց ընթրիքին, նստած երկար սեղանի ծայրին, կձայնակցեի գյուղական մի հին երգեցողության և նրանց հարդանդում կպարեի ավելի մեծ հաճույքով, քան թե Օպերայի պարահանդեսում։

Այս բոլորը հրաշալի է, կասեն ինձ, բայց որսորդությո՞ւնը. մի՞թե կարելի է գյուղում լինել ու որսորդությամբ չզբաղվել։ Հասկանում եմ. ցանկանում էի միայն մի ագարակ ունենալ, բայց սխալվել եմ։ Ես ինձ հարուստ եմ կարծում. ուրեմն ինձ հարկավոր են բացառիկ, ավերիչ հաճույքներ. խնդիրը փոխվում է։ Ինձ անհրաժեշտ են հողեր, անտառներ, պահպաններ, հաստիքներ, իշխանական պատիվներ, մանավանդ՝ իսկական և օրհնված ջուր։

Շատ լավ։ Բայց այդ կալվածքը կունենա իրենց իրավունքներին նախանձախնդիր և ուրիշների իրավունքները հավրշաակելու ձգտող հարևաններ. մեր պահակները կվիճեն. գուցե և տերերն էլ. և ահա կառաջանան կռիվներ,ատելություններ, առնվազն՝ դատավարություններ. այս բոլորն արդեն ահամ բաներ են։ Իմ ճորտերին դուր չի գա, որ իմ նապաստակները փչացնեն նրանց ցորենի արտերը, կամ վարազները՝ բակլայի ցանքերը. նրանք, չհամարձակվելով սպանել իրենց աշխատանքը փչացնող թշնամուն, գոնե կուզենան նրան վտարել իրենց դաշտերից. ամբողջ օրը արտերը վարելով զբաղվելուց հետո, նրանք ստիպված կլինեն գիշերը պահակ կանգնել, հետևները վերցնելով զանազան գործիքներ՝ թմբուկ, շեփոր և այլն, որոնց աղմուկը կխանգարի իմ քունը։ Ով ակամա կմտածեմ այդ մարդկանց թշվառության մասին ու չեմ կարող ինքս ինձ չմեղադրել՝ որպես դրա պատճառ եղողի։ Եթե ես պատիվ ունենայի իշխան լինելու, այդ ամենից

ամենևին չէի ազդվի. բայց լինելով նոր դիրքի հաստած ու նոր հարստացած մարդ, իմ սիրտը դեռևս մի փոքր պահած կլինի իր պարզունակությունը։

Սա դեռ բոլորը չէ. երեների առատությունը կգրգռի ոչ-սորդների ախորժակը, և, շատ չանցած, ես ստիպված կլինեմ պատժել գաղտորսներին. դրա համար կարիք կունենամ բանտերի, բանտապահների, պահակների, թխարանների. այս ամենը բավական դաժան եմ գտնում։ Այդ դժբախտ մարդկանց կանայք հավաքվելով իմ դռան առաջ՝ իրենց աղաղակներով կանհանգստացնեն ինձ. պետք կլինի կա՛մ նրանց վռնդել, կամ խոշտանգել։ Մյուս կողմից, ուրիշ խեղճ մարդիկ, որոնք մեղավոր չեն, բայց որոնց արտերը փչացրել են իմ երևները, կգան ինձ բողոքելու. առաջինները կպատժվեն երեներն սպանած լինելու, մյուսները կկործանվեն՝ նրանց խնայած լինելու համար. ի՞նչ տխուր երկվություն։ Ամեն կողմ միայն թշվառություն կտեսնեմ, ամեն տեղից սոսկ հեծեծանք կլսեմ. այս ամենը, իմ կարծիքով, խիստ կփչացներ համարյա մեր ոտքերի տակ, մեծ թվով կաքավներ ու նապաստակներ հանգիստ որսալու հաճույքը։

Ուզո՞ւմ եք, որ ձեր հաճույքները զերծ լինեն պատուհասներից, վերացրե՛ք նրանցից ամեն տեսակ տարամերժություն. ինչքան նրանք մատչելի լինեն ընդհանուրին, այնքան անխարդախ կլինի նրանց վայելքը։ Հետևաբար, ես չեմ ասի այն, ինչ ասացի, այլ՝ առանց ճաշակներս փոխելու, կընտրեմ ըստ իս, ամենաէժան հաճույքը. բնակություն կհաստատեմ այնպիսի գյուղական վայրում, ուր որսորդությունը ազատ լինի բոլորի համար, որտեղ կարողանամ զվարճանալ՝ առանց գլխացավանքներ ունենալու։ Որսը ավելի սակավ կլինի, բայց ճարպկությունն ավելի շատ, նրան որոնելու համար, և գտնելու դեպքում՝ բերկրանքն ավելի մեծ։ Հիշում եմ, թե սրտի ինչպիսի՜ թրթիռով էր իմ հայրը նայում առաջին կաքավի թռիչքին, ինչպե՜ս էր հրճվում, երբ գտնում էր այն նապաստակին, որին փնտրել էր ամբողջ օրը։ Այո, հիշում եմ նրան՝ մենակ իր շան հետ, հրացանն ուսին, որսորդության պարագաներով, իր համեստ որսով, երեկոյան տուն վերադառնալիս, հոգնած, մացառներից պատառոտված, բայց շատ

ավելի գոհ, քան ձեր ննջարանային որսորդները, որոնք ընտիր ձիեր հեծած, քսան լցված հրացանների ուղեկցությամբ, ուրիշ ոչինչ չեն անում, բայց եթե այս ու այն ուղղությամբ կրակել և սպանել անարվեստ, անփառունակ ու համարյա անվարժ ձևով։ Ուրեմն, ոչ-նվազ հաճելի է և զերծ ամեն անպատեհությունից, երբ չոմպես ո՛չ հող՝ պահպանելու, ո՛չ գաղտնորսներ՝ պատժելու, ո՛չ թշվառներ՝ տանջելու. ահա ուրեմն նախասիրության մի ղորեղ պատճառ։ Ինչ էլ լինի, չես կարող անվերջ տանջել մարդկանց՝ առանց որոշ անախորժությունների ենթարկվելու. ժողովրդի շարունակական դժգոհությունները, վաղ թե ուշ, երեի միսը անպայման դառը կդարձնեն։

Կա ևս մի դժբախտություն. տարամերժ հաճույքներն իրենք իրենց են ոչնչացնում։ Իսկական հաճույքները նրանք են, որոնք բաժանում ենք ժողովրդի հետ. իսկ երբ ուզում ենք դրանք միմիայն մեզ վերապահել, այլևս նրանց տերը չենք լինում։ Իմ այգու շուրջը բարցրացրած պատերն այն վեր են ածում մի տխուր արգելափակոցի, և կատարվի այնպես, որ ես, այդպիսով, ահագին ծախս արած վլինեմ՝ դրոսնելու հաճույքից ինքս ինձ զրկելու համար և ստիպված կլինեմ այն փնտրել հեռու վայրերում։ Սեփականության դեր վարակում է ամեն ինչ, որին դիպչում է։ Հարուստը ցանկանում է ամեն տեղ տիրել, բայց իրեն լավ է զգում միայն այնտեղ, որտեղ ինքը չի տիրում. նա միշտ ստիպված է փախուստ տալ ինքն իրենից։ Իսկ ես՝ հարստության մեջ կվարվեմ այնպես, ինչպես աղքատության մեջ։ Այժմ, ավելի հարուստ լինելով ուրիշների ունեցվածքով, ինչքան երբեք չէի լինի իմով, ես կսեփականացնեմ այն ամենը, ինչ իմ շրջապատում ինձ ձեռնտու է. ինձնից ավելի վճռական զավթիչ չի լինի. ես կհափշտակեմ նույնիսկ իշխաններից, կօգտվեմ անխտիր բոլոր այն պարապ հողերից, որոնք ինձ դուր կգան. նրանց անուններ կդնեմ. մեկն ինձ պարկ կդարձնեմ, մյուսը՝ տեռաս և ահա դրանց տերը դառնալով՝ կզբոսնեմ անպատիժ. հաճախ կվերադառնամ այնտեղ՝ սեփականության իրավունքս պահպանելու համար, և ոչ ոք ինձ չի համոզի, թե այն հողի տերը, որը սեփականացնում եմ, ավելի է օգ-

արվում նրա եկամտից, քան ես՝ իր հողամասից։ Եթե գան ինձ նեղելու՝ առումներ բաց անելով ցանկապատեր գցելով, դրա համար բնավ չեմ մտահոգվի. շրջակայքում այնքան հողամասեր կան, որ կգնամ մի այլ տեղ հաստատելու իմ պարկը, և դեռևս երկար ժամանակ կարող եմ հարևաններիս կողոպտել, մինչև բոլորովին անապատանի մնամ։

Ահա իսկական ճաշակի մի փորձ՝ հաճելի ժամանցների ընտրության մեջ. ահա թե ինչպիսի ոգի պետք է տիրի վայելքում. մնացածը սոսկ պատրանք է, ցնորք, հիմար ոմանյանամուխություն։ Ով հևոանում է այս կանոններից, ինչքան էլ հարուստ լինի, իր ոսկիներն իզուր կմսխի և երբեք չի ճանաչի կյանքի արժեքը։

Ինձ, անտարակույս, կառարկեն, թե այդպիսի հաճույքներր բոլորին մատչելի են, և թե դրանք վայելելու համար կարիք չկա անպայման հարուստ լինել։ Ես էլ ճիշտ այդ կետին էի ուզում հասնել։ Մարդ հաճույք կարող է ունենալ, երբ ցանկանում է. միայն հասարակական կարծիքն է, որ ամեն ինչ դժվարացնում է և երջանկությունը վանում մեզնից. հարյուր անգամ ավելի հեշտ է իսկապես երջանիկ լինել, քան երևալ այդպիսին։ Ճաշակի տեր և իրոք հեշտասեր մարդը կարիք չունի հարստության. բավական է, որ նա լինի ազատ ու ինքնիշխան։ Այն մարդը, որ առողջ է և ունի ինչ որ իրեն անհրաժեշտ է, եթե ուշադրություն չդարձնի ուրիշների կարծիքին, բավականաչափ հարուստ է. նա Հորացիոսի auera mediocritas-ն * է։ Հարուստնե՛ր, ձեր ճոխությունն օգտագործելու ուրիշ ճանապարհներ որոնեցե՛ք, որովհետև դա ոչ մի ժամանակ հաճույք չի կարող ապահովել։ Էմիլը այս ամենը ինձնից լավ չի կարող իմանալ. բայց ունենալով ավելի անբիծ ու ավելի առողջ սիրտ, է՛լ ավելի լավ կզգա դրանք, և իր բոլոր դիտումները սոսկ դրանց հաստատումը կլինի։

Այսպես անցկացնելով ժամանակը, մենք շարունակ կփնտրենք Սոֆիին ու չենք գտնի։ Կարևորն էլ այն է, որ այդ-

* «Ոսկե միջակություն»— Ս. Բ.

քան հեշտ չինի նրան գտնելը. մենք նրան փնտրեցինք այնտեղ, որտեղ վստահ էի, թե չենք գտնի[1]։

Ի վերջո գործն շտապ է. ժամանակն է նրան լրջորեն փնտրելու, հակառակ դեպքում, էմիլը ուրիշին կընտրի՝ նրան որպես Սոֆի ընդունելով, և իր սխալին կանդրադառնա ուշացած։ Մնա՛ս բարով, ուրեմն, Փարիզ, քաղաք հռչակավոր, քաղաք աղմուկի, ծխի ու տիղմի, որտեղ կանայք այլևս չեն հավատում պատվին և մարդիկ՝ առաքինությանը։ Մնա՛ս բարով, Փարիզ, մենք փնտրում ենք սերը, երջանկությունը, անմեղությունը. դրա համար, որքան հնարավոր է, պետք է հեռու լինել քեզնից։

---

[1] Mulierem fortem quis inveniet? Procul, et de ultimis finibus pretium egus. *(«Ո՞վ կարող է առաքինի կին գտնել։ Նրա արժեքը մարգարտից էլ բարձր է»— Ս. Թ.*

Ռուսո՝ նրա «Էմիլը»

Տրանսիական հանճարեղ գրող, փիլիսոփա, մանկավարժ և քաղաքական մտածող Ժան-Ժակ Ռուսոն ծնվել է 1712 թվականին Ժնևում, ազքատ ժամագործի ընտանիքում։ Ծնվելուց մի քանի օր հետո զրկվելով մորից, նա իր կյանքի առաջին տասը տարին անց է կացնում հոր և հորաքրոջ խնամքի տակ, որոնց սիրառատ վերաբերմունքը, ինչպես և շատ վաղ հասակից սկսած ուսանդուն ընթերցանությունը այդ բնականից քուլտակազմ մանուկին պատվաստում են զգայուն, քնքուշ, բարեսիրտ և արդարամիտ բնավորություն։

Տասը տարեկան հասակից Ժան-Ժակը զրկվում է նաև հոր խնամքից և ապրում իր քեռու մոտ։ Վերջինս նրան ուղարկում է գյուղ՝ տղաների պանսիոնում սովորելու։ Սակայն երկու տարի հետո Ժան-Ժակը հեռանում է պանսիոնից։ Նրան վհճակված էր շատ վաղ հասակից ապրել սեփական աշխատանքով։ 13 տարեկան հասակում նա աշխատում է նոտարի գրասենյակում, այնուհետև փոխադրվում փորագրիչի արհեստանոցը՝ որպես աշակերտ։ Թեպետ այս արհեստը հրապուրում է նրան, բայց դաժան տիրոջ հայհոյանքներն ու ծնծը ոչնչացնում են նրա մեջ այն սովորելու ցանկությունը. և 16 տարեկան Ժան-Ժակը փախչում է նրանից։

Սկսվում է Ժան-Ժակի քափառաշրջիկ կյանքը՝ լի անպտուղ երազանքներով, կարճատև հաճույքներով և երկարատև զրկանքներով, հուսահատություններով և մոլորություններով։ Ժան-Ժակը շրջագայում է Շվեյցարիայի քաղաքներն ու գյուղերը, աշխատում է որպես տնային սպասավոր, որոշ ժամանակ սովորում է աքրայի մոտ, հետո հոգևոր սեմինարիայում, ապա, հեռանալով այստեղից, մտնում է երաժշտական դպրոց, այս էլ թողնելով՝ աշխատում որպես տնային դաստիարակ։ Ամենուր փորձելով իր ուժերը, նա ամեն տեղ անավարտ է թողնում իր սկսած գործը։

Սակայն այս քափառաշրջիկ կյանքը Ժան-Ժակ Ռուսոյին հնարավորություն է տալիս մոտիկից ծանոթանալ ժողովրդի իրավազուրկ վիճակին, անձամբ տեսնել և զգալ ֆեոդալական հասարակարգում քագավորող սոցիալական անհավասարություններն ու անարդարությունները։ Այդ հանգամանքը, միացած անձնական զրկանքների հետ, ներմտնում է նրա մեջ քունոտ առելություն դեպի աշխարհի զորեղները՝ ազնվականությունն ու հոգևոր

դասը, և խորին համակրանք դեպի անողոքաբար շահագործվող աշխատավոր մարդը, դեպի գյուղացին ու արհեստավորը:

Իր կյանքի այս ժամանակաշրջանում Ռուսոն ավելի քան տասը տարի ապրում է բարոնուհի դը Վարանսի մոտ և, ազատ լինելով կենսական հոգսերից, մեծ եռանդով զբաղվում ինքնակրթությամբ: Պետք է ասել, որ մանուկ հասակից չափազանց ընթերցասեր Ռուսոն իր լայն ու բազմակողմանի մտավոր պատրաստությունը ձեռք է բերել համարյա բացառապես ինքնակրթության միջոցով:

1741 թվականին Ռուսոն տեղափոխվում է Փարիզ, իսկ երկու տարի հետո նշանակվում Վենետիկի Ֆրանսիական հյուպատոսության քարտուղար: Վենետիկում նա հնարավորություն է ստանում մոտիկից ուսումնասիրել թե՛ Վենետիկյան ռեսպուբլիկայի և թե՛ Ֆրանսիայի քաղաքական կարգերը և քաղաքական կյանքի բարքերը: Սակայն գժտվելով հյուպատոսի հետ, նա 1744 թվականին հեռանում է աշխատանքից և վերադառնում Փարիզ:

Փարիզում Ռուսոն շփվում է այն ժամանակվա ամենալուսավոր մարդկանց և լավագույն մտածողների՝ Կոնդիլյակի, Դիդրոյի, Դալամբերի, Մորլիի, Վոլտերի, Բյուֆոնի և ուրիշների հետ:

1749 թվականին Ռուսոն գրում է իր «Դատողություն գիտությունների և արվեստների մասին» հայտնի հրապարակախոսական աշխատությունը, որտեղ նա պատասխանում է Դիժոնի ակադեմիայի առաջադրած հարցին՝ «Գիտությունների և արվեստների զարգացումը օժանդակել է բարքերի անկմա՞նը, թե բարելավմանը»:

Այս աշխատության մեջ Ռուսոն նպատակ է դնում, ինչպես ինքն է ասում, հրապարակ հանել իր ժամանակի «հասարակական կարգերի ամբողջ հակասությունները... պետական հիմնարկների ամբողջ չարաշահումները» և ցույց տալ, որ «մարդն իր բնությամբ բարի է ու միայն սոցիալական հաստատություններն են այլասերել նրան»:

Քննադատելով իր ժամանակի հասարակական կարգերը, Ռուսոն ձգտում է ապացուցել, թե քաղաքակրթությունը, գիտություններն ու արվեստները ոչ թե ծառայում են հասարակության առաջընթաց զարգացմանը, այլ ստրկացնում են մարդուն, ստեղծում նրա մեջ անբնական պահանջմունքներ՝ շռայլություն, ցուփություն, շքեղ կյանքի ծարավ, և դարձնում նրան իր իսկ արատավոր պահանջմունքների ստրուկը, զրկում են մարդուն այն վսեմ ազատություններից և երջանկություններից, որ նա վայելում էր նախնադարյան հասարակության մեջ: Մարդկանց բորոր արատները՝ հանցագործությունները, անօրինականությունները ու կամայականությունները, խաբեբայությունները ու էգոիզմը և այլն նա դիտում է որպես քաղաքակրթության, գիտության և արվեստների զարգացման արդյունք:

Այս ծայրահեղ և սխալ հետևություններով հանդերձ, Ռուսոն, քննադատելով քաղաքակրթությունը, առաջին հերթին քննադատում է նրա կրողներին՝ ազնվականությանը, քննադատում է այն քաղաքակրթությունը, որի բուն տեր ազնվականությունը թաքցնում է սին ու դատարկ մաքերն ու զգացմունքները, իր այլասերված բարքերը: Ուրեմն, Ռուսոն քան էության

քննադատում է ֆեոդալական հասարակարգի կեղծ քաղաքակրթությունն ու կուլտուրան։

Ժխտելով գիտությունների և արվեստների դերը հասարակության զարգացման գործում, Ռուսոն նկատի ուներ ամենից առաջ այն, որ դրանք չեն ծառայում հասարակ ժողովրդին, այլ խորթ են նրան։ Այսպիսով, հենց իր առաջին աշխատության մեջ Ռուսոն հանդես է գալիս որպես երրորդ դասի պլերեյական տարրերի՝ գյուղացիության և արհեստավորների շահերի ու ազատության պաշտպան, որպես ֆեոդալական կարգերի, դեսպոտիզմի և արտոլյուտիզմի ոխերիմ թշնամի։

«Դատողություն գիտությունների և արվեստների մասին» աշխատությունը, որն արժանացավ Դիժոնի ակադեմիայի մրցանակին, մեծ ազդեցություն գործեց Ֆրանսիայի հասարակական մտքի վրա և անմիջապես որոշեց Ռուսոյի տեղը այն պայքարում, որ 18-րդ դարի 50-ական թվականների առաջավոր մտավորականությունը, հանձինս լուսավորիչների, մղում էր ֆեոդալական կարգերի դեմ։

Հինգ տարի հետո Ռուսոյի առաջին «Դատողությանը» հաջորդեց երկրորդը՝ «Դատողություն հասարակական անհավասարության մասին», որտեղ նա նույնպես քննադատում է կուլտուրան և քաղաքակրթությունը, ձգտում ապացուցել, թե ժամանակակից քաղաքակրթությունն է փչացնում բնականից բարի մարդուն։ Ի տարբերություն ֆրանսիական մյուս լուսավորիչների, Ռուսոն այս աշխատության մեջ փորձում է գտնել քաղաքակրթության բարոյալքող ազդեցության և առհասարակ սոցիալական չարիքների սկզբնապատճառը։ Այդ սկզբնապատճառը նա համարում է մասնավոր սեփականությունը։ Նա պնդում է, որ մասնավոր սեփականությունից է ծնվել սոցիալական անհավասարությունը, դրանից են առաջացել մի կողմից աղքատներ, որոնք ապրում են սեփական վաստակով, իսկ մյուս կողմից հարուստներ, որոնք ապրում են ուրիշների հաշվին։ Առաջիններն բնական զուրկ են լուսավորությունից, բայց բարոյապես ազնիվ են ու անկեղծ, իսկ երկրորդները, լինելով կեղծ քաղաքակրթության կրողներ, զուրկ են բարոյական առաքինություններից։ Այսպիսով, բացահայտելով հասարակական կյանքում եղած անտագոնիզմը, Ռուսոն հանդում է տնտեսական անհավասարության և սոցիալական արտոնությունների ժխտմանը, իսկ այստեղից էլ՝ ազատության, հավասարության և եղբայրության սկզբունքներին։

18-րդ դարի 60-ական թվականները Ռուսոյի համար հանդիսացան ստեղծագործական գործունեության բացառիկ բուռն շրջան։ 1761 թվականի սկզբին Հոլանդիայում լույս տեսավ նրա «Յուլիա կամ Նոր Էլոիզա» գեղարվեստական վեպը, որն արագորեն թարգմանվեց և տարածվեց Եվրոպայի բոլոր երկրներում։ Իր վեպում Ռուսոն երկու սիրահարների ողբերգական սիրո ֆոնի վրա քննադատում է ֆեոդալիզմի հասարակական հարաբերությունները, ֆեոդալական քաղաքակրթությունն ու բարոյականությունը և պաշտպանում ազատ, ոչ մի դասային սահմանազատում չճանաչող սիրո գաղափարը։ Ֆրանսիական սենտիմենտալ գրականության առա-

չին լավագույն գործերից մեկն էր այդ վեպը, որտեղ հեղինակը իր անգերազանցելի վարպետությամբ և հոգեբանական նուրբ վերլուծումների միջոցով պատկերում է հերոսների ներքնաշխարհը, նրանց զգացմունքներն ու ապրումները։ «Նոր Էլոիզան» իր հակասական դիրքավորումներով հանդերձ, մի բան, որ խիստ բնորոշ է Ռուսոյի բոլոր աշխատություններին և առհասարակ նրա ամբողջ աշխարհայացքին, զգալիորեն մոտենում է գեղարվեստական ռեալիզմին։

4) 1762 թվականին Ռուսոն հրատարակեց իր հռչակավոր «Հասարակական պայմանագրի» մասին, որում զարգացրեց իր առաջին և երկրորդ «Դիսկուրսներում» մեջ արտահայտված գաղափարները, ուշադրությունը հիմնական ուշադրությունը դարձնելով պետության հարցը, մանավանդ իր պատկերած իդեալական հասարակարգի՝ դեմոկրատական հանրապետության հարցը։

Քննադատելով աբսոլյուտիզմը, Ռուսոն ցույց է տալիս, որ թագավորի քմահաճույքով գործող միահեծան պետությունը խորացնում է հասարակական անհավասարությունը և պաշտպան կանգնում այդ անհավասարությանը։ Ուրեմն, ժողովրդի և թագավորների շահերն ու ձգտումները անհամատեղելի են։

Այն հարցին, թե ինչպես է ծագել պետությունը, Ռուսոն տալիս է իդեալիստական պատասխան։ Անտեսելով արտադրական հարաբերությունների դերը, նա գտնում է, թե, իբր, պետությունը ծագել է դաշինքի, պայմանագրի հիման վրա, որ կամովին կերպով կնքվել է ժողովրդի և կառավարողների միջև, սակայն իշխանավորները ժամանակի ընթացքում չարաշահել են ժողովրդից ստացած իրավունքները և ստրկացրել նրան։ Այստեղից էլ, չնայած սխալ մեկնակետին, Ռուսոն հանգեց այն ուսմունքին, թե, ուրեմն, ժողովուրդը կարող է և իրավունք ունի ապստամբել պետության դեմ, ուսմունքին ճանապարհով տապալել նրան, հետ վերցնել նրան տված իրավունքները և ստեղծել դեմոկրատական կարգեր։ Մասսայական ժողովրդական ուսմունքին՝ ուղղված միապետական կարգերի դեմ, Ռուսոն դիտում էր որպես միանգամայն օրինական և արդարացի ակտ։ Հրորդ դասի ամենադեմոկրատական մասի, հասարակության ներքնախավերի շահերի և իղձերի արտահայտիչ Ռուսոն անսահման սիրով էր լցված դեպի հասարակ ժողովուրդը և մեծ հավատով՝ դեպի նրա ուսմունքին ուժն ու կարողությունը, դեպի ժողովրդի իմաստությունը։

Փիլիսոփայության հարցերում Ռուսոն ետ էր մնում իր ժամանակի ֆրանսիական էնցիկլոպեդիստների ձախ թևից (Հոլբախ, Գրիմմ, Դիդրո)։ Վրանք մատերիալիստներ և աթեիստներ էին, մինչդեռ Ռուսոն կանգնած էր իդեալիզմի դիրքերի վրա։ Ի տարբերություն մատերիալիստների, որոնք ժխտում էին բնածին գաղափարները և մարդուն դիտում որպես հասարակական միջավայրի արդյունք, Ռուսոն պնդում էր, թե մարդու խիղճը, նրա բարոյական զգացմունքները, մասնավորապես իր անձը սիրելու, բարեկեցության, արդարացիության, կարեկցության և այլ զգացմունքները բնածին են, թե մարդը բնականից բարի է։

Ինչպես Ռուսոն անողոքաբար քննադատում էր կաթոլիկական եկեղեցին

ու նրա դոգմանները, բայց նա չհասավ աթեիզմին, այլ հանգելով դեիզմին՝ կանգ առավ նրա նախադռանը։

Թե՛ փիլիսոփայության, թե՛ կրոնի և թե՛ սոցիալական կյանքի հարցերում Ռուսոն խիստ հակասական է։ Նշենք թեկուզ միայն այն, որ ուսուցիչն գաղափարների այդ կրքոտ պրոպագանդիստը միաժամանակ հանդես էր գալիս որպես նահապետականության պաշտպան։ Իր պատկերած իդեալական հասարակարգում նա, դարձյալ հակասելով ինքն իրեն, պահպանում է մասնավոր սեփականությունը, որը, իր իսկ կարծիքով, հանդիսացել է հասարակական անհավասարության և բոլոր սոցիալական չարիքների սկզբնապատճառը։

Ռուսոյի երազած հասարակական-քաղաքական սիստեմը՝ հիմնված մասնավոր սեփականության վրա, ըստ էության իրենից ներկայացնում է բուրժուա-դեմոկրատական ռեսպուբլիկա։

Սակայն իր բազմաթիվ սխալ և հակասական դիրքավորումներով հանդերձ, Ռուսոն իր ժամանակի ֆրանսիական մատերիալիստների և մյուս լուսավորիչների համեմատությամբ, ավելի խորը թափանցեց սոցիալական կյանքի հարցերի մեջ, ավելի լավ ըմբռնեց սոցիալական հակասությունները, պետության էությունը, մասսաների դերը ֆեոդալական հասարակարգի վերացման և նոր դեմոկրատական կարգերի ստեղծման գործում։

Հատկապես այդ պատճառով էլ «Հասարակական պայմնագիր» գաղափարները մեծ դեր խաղացին ֆրանսիական մեծ ռեվոլյուցիայի նախապատրաստման գործում և հսկայական ազդեցություն ունեցան Կոնվենտի գործունեության վրա։ Այդ գաղափարները ցնծորինցիների համար դարձան ֆեոդալիզմի և արսոլյուտիզմի դեմ մղվող պայքարի ծրագիր, իսկ Ռուսոն՝ նրանց գաղափարական նախորդը և ուսուցիչը։

Ռուսոյի պաշտպանած մասնավոր սեփականությունը մեր սեփականատիրությունն է՝ հնարավորին չափ հավասարապես բաշխված սեփականությունը՝ առանց ծայրահեղ հարուստների և ծայրահեղ աղքատների, սեփականություն, որի հիմքում ընկած է անձնական աշխատանքը։ Սեփականության հավասարեցման մասին Ռուսոյի գաղափարները մեծ ազդեցություն գործեցին ոչ միայն ցնծորինցիների վրա, որոնք ձգտում էին օրենսդրական ճանապարհով ամրապնդել աշխատանքային սեփականությունը և թույլ չտալ, որ այն կուլ գնա խոշոր կապիտալին, այլև հետագայում մեծ ուտոպիստ սոցիալիստների վրա՝ սոցիալիստական գաղափարների տարածման գործում։

(«Հասարակական դաշինքից» ընդամենը մի քանի շաբաթ հետո լույս տեսավ Ռուսոյի «Էմիլ կամ դաստիարակության մասին» տրակտատ-վեպը։ Այս հանճարեղ աշխատության մեջ Ռուսոն ոչ միայն շարադրում է իր մանկավարժական գաղափարները, այլև բազմահոդվածի քննադատության ենթարկում ֆեոդալական հասարակարգի բարոյականությունն ու բարքերը, դպրոցի արատահայտությունները հասարակական կյանքում, մանավանդ դաստիարակության բնագավառում, դեիզմի դիրքերից մեկնաբանում քաղաքական հավատը։)

Գլխավորապես այս հանգամանքով է բացատրվում այն, որ «Էմիլը», ավելի, քան Ռուսոյի որևէ այլ աշխատություն, լուրջ սպառնալիք ներշնչեց 18-րդ դարում Եվրոպայի բոլոր ռեակցիոն ուժերին, որոնք անողոք հալածանք սկսեցին նրա հեղինակի դեմ։ «Էմիլի» հեղինակին ձերբակալելու հրաման արձակեցին թե՛ Ֆրանսիայի և թե՛ Շվեյցարիայի իշխանությունները։ «Էմիլը» հրապարակորեն խարույկին հանձնվեց Փարիզում, ապա Ժնևում։ Այն դատապարտվեց նաև հոլանդական կառավարության կողմից։ Ռուսոն ստիպված եղավ Փարիզից փախչել Ժնև, Ժնևից՝ Բերն, ապա՝ Անգլիա։ Այս ամենի հետևանքով նա ստացավ հալածանքի մոլագարության հոգեկան հիվանդություն։

(Կյանքի վերջին տասնամյակում Ռուսոն գրեց իր հայտնի «Խոստովանություն» մեծածավալ մեմուարային աշխատությունը և փաստորեն դրա շարունակությունը հանդիսացող «Դիալոգ՝ Ռուսոն դատում է Ժան-Ժակին» ու «Մեռնակյաց երազողի զբոսանքները» գործերը։)

«Խոստովանության» մեջ Ռուսոն նկարագրում է ոչ միայն իր կյանքի ամենաթելադրանքները, այլև իր հասարակական, քաղաքական և փիլիսոփայական հայացքները, Ֆրանսիայի և Շվեյցարիայի սոցիալական ու կուլտուրական կյանքը, հասարակական տարբեր խավերի կենցաղն ու բարքերը։ Մանավանդ անգերազանցելի ուղղամտությամբ և անկեղծությամբ հեղինակը նկարագրում է իր ներքնաշխարհը, իր վերապրումները, տրամադրությունները, խոհերն ու զգացմունքները, մի հանգամանք, որն այդ երկը արժեքավոր է դարձնում նաև հոգեբանության տեսակետից։ «Խոստովանության» հեղինակը ընթերցողին ապշեցնում է այնպիսի էջմարտացի, համարյա անողոք ինքնամերկացմամբ, որպիսին անկարելի է հանդիպել որևէ այլ գրողի մոտ։

Ժան-Ժակ Ռուսոն մեռավ 1778 թվականի հուլիսի 3-ին։ Նրան թաղեցին Էրմենովիլում, փոքրիկ լճի մեջ գտնվող «Բարգիներ կղզում»։ Բայց 1794 թվականին ֆրանսիական ժողովուրդը մասնաչյան մեծ սգերթի արարողությամբ նրա աճյունը տեղափոխեց Փարիզի պանթեոնը, որի ճակատին գրած էր՝ «Մեծ մարդկանց—շնորհակալ հայրենիք»։

***

(Այժմ համառոտակի կանգ առնենք «Էմիլ կամ դաստիարակության մասին» տրակտատ-վեպում արտահայտված մանկավարժական գաղափարների վրա։)

(Ռուսոյի մանկավարժական հայացքների հիմքում ընկած են բնական դաստիարակության և ազատ դաստիարակության սկզբունքները։)

(Մարդը, ըստ Ռուսոյի, իր դաստիարակությունն ստանում է բնությունից, իրերից և մարդկանցից։ Նրա դաստիարակությունը կարող է արդյունավետ լինել, եթե այս երեք գործոնները ձգտեն միևնույն նպատակին, չհակասեն իրար, այլ համագործակցեն իրար հետ։) Եվ քանի որ, նշում է Ռուսոն, բնությունից ստացած դաստիարակությունը մեզնից չի կախված, իրերից ստացած դաստիարակությունը մասամբ է կախված մեզնից և

միայն մարդկանցից ստացած դաստիարակությունն է կախված մեզնից, ուրեմն, «Բնության դաստիարակության վրա, որի հանդեպ մենք անզոր ենք, պետք է ուղղենք մյուս երկուսը» (12)[1]։ Բնական դաստիարակության տակ Ռուսոն հասկանում է այնպիսի դաստիարակություն, որը համապատասխանում է երեխայի բնական զարգացման ընթացքին՝ նրա բնական ընդունակություններին ու նախադրյալներին, նրա հակումներին ու պահանջմունքներին, նրա առանձնահատկություններին։

Բնական դաստիարակության սկզբունքից էլ Ռուսոն բխեցնում է ազատ դաստիարակության սկզբունքը։ Հիրավի, եթե պետք է հետևել երեխայի բնական զարգացման ընթացքին, նրա բնական ընդունակությունների և հակումների ներքին զարգացմանը, կնշանակի դաստիարակության մեջ երեխան պետք է լինի ազատ վիճակում։ «Երեխան, ասում է Ռուսոն, ծնվելու րոպեից արդեն ոչ թե դաստիարակի, այլ բնության աշակերտն է. դաստիարակը սոսկ ուսումնասիրում է նրան այս առաջին ուսուցչի ձեռքի ազատ և հետևում, որպեսզի ապարդյուն չանցնի բնության հոգածությունը» (56)։

Բնական և ազատ դաստիարակության սկզբունքները 18-րդ դարում, երբ հրապարակ եկավ «Էմիլը», ունեին առաջադիմական նշանակություն, ուղղված էին այն ժամանակվա սոցիալական-քաղաքական կարգերի և ֆեոդալական հասարակարգի պաշտոնական դաստիարակության սիստեմի դեմ, որը, ինչպես արտահայտվում էր Ռուսոն, «լոկ ստրկացում է, ճնշում և բռնակալություն», որի միջոցով մարդուն պատրաստում են ֆեոդալական հասարակարգին ծառայելու համար։ Մանավանդ այդ դասակարգային սկզբունքները առավել որոշակիությամբ ուղղված էին դասային արտոնությունների դեմ։ «Քանի որ բնական կարգերում բոլոր մարդիկ հավասար են, ապա նրանց համայնական կոչումը մարդկային վիճակն է» (18),— ասում է Ռուսոն։ Ահա այդ «մարդկային վիճակին», բոլոր մարդկանց հավասարության գաղափարին էլ նա ի սպաս է դնում իր բնական և ազատ դաստիարակության սկզբունքները։ Այս է ապացուցում նաև Ռուսոյի այն միտքը, թե ժամանակակից դաստիարակությունը կարող էր բնդունելի հանգչվել միայն այն դեպքում, եթե «յուրաքանչյուր անձ կապված լիներ իր բախտին այնպես, որ այլևս երբեք չկարողանար այն փոխել», այսինքն՝ եթե ֆեոդալական հասարակարգը իր դասային արտոնություններով լիներ հավիտենական։ Աբսոլյուտիզմի և քաղաքական ստրկության ոխերիմ թշնամի Ռուսոն գրում էր. «Քանի որ հասուն տարիքից սկսվում է քաղաքացիական ստրկությունը, ինչո՞ւ դրան էլ նախորդի անհատական ստրկությունը։ Թույլ տանք, որ կյանքի մի պահը ազատ լինի այն լծից, որ բնությունը չի դրել մեզ վրա ու թողնենք երեխային օգտվելու բնական ազատությունից, որը նրան գոնե միաժամանակ հեռու կպահի այն մոլորություններից, որ նա յուրացնում է ստրկության մեջ» (104)։

---

1 Ամեն անգամ փակագծերում նշած թիվը ցույց է տալիս էմիլի այս հրատարակության համապատասխան էջը։

(Այսպիսով, Ռուսոյի Քե՛ բնական և Քե՛ ազատ դաստիարակության սկզբունքները, որոնցից էլ նա բխեցնում է իր բոլոր հիմնական՝ Քե՛ արժեքավոր և Քե՛ սխալ ու անընդունելի մանկավարժական գաղափարները, ներառորեն կապված էին նրա սոցիալական դավանանքին և ունեին պարզորոշ արտահայտված քաղաքական ուղղվածություն։)

(Առաջնորդվելով այդ սկզբունքներով՝ Ռուսոն պահանջում է երեխային, մինչև նրա 15—16 տարեկան հասակը, մեկուսացնել հասարակական կյանքից, պահել նրան գյուղում, բնության ծոցում։) Այսպես է վարվում նա և իր Էմիլի հետ, ստեղծելով նրա համար մի տեսակ արհեստական միջավայր։ Այս պահանջը պայմանավորված էր այն բացառիկ նշանակությամբ, որ բնության սիրահար Ռուսոն տալիս էր բնության բարերար ազդեցությանը երեխաների վրա, մի բան, որ հետագայում նրանից փոխ առան բազմաթիվ մանկավարժներ, իսկ ոմանք էլ աշխատեցին այդ իրականացնել դաստիարակության պրակտիկայում։ Մյուս կողմից, մեկուսացնելով իր սանին հասարակական կյանքից, Ռուսոն ուզում էր նրան հեռու պահել ազնվականության բարքերից, կեղծ քաղաքակրթությունից, «սպասավորների խաժամուժից, որոնք իրենց տերերից հետո ամենազզվելի մարդիկն են, հեռու քաղաքների սև բարքերից» (117)։ (Նա մեկուսացնում է իր սանին հասարակությունից,) որովհետև գտնում է, որ ֆեոդալական հասարակարգը իր քաղաքական կարգությամբ, այլասերված բարքերով և մոլություններով «մարդու մեջ կապանն է բնությունը», այլ կերպ ասած, (որովհետև նա ժխտում էր ֆեոդալական հասարակարգը։)

(Սակայն դրա հետ մեկտեղ չի կարելի չնշել, որ իր Էմիլին մեկուսացնելով հասարակական կյանքից, Ռուսոն նրան դնում է հասարակության նկատմամբ պասսիվ դրության մեջ։) Որպես լուսավորիչ նա գիտակցում էր միջավայրի ազդեցությունը մարդու վրա, բայց հենց լուսավորիչների փիլիսոփայական դիրքորոշումն էլ նրան հնարավորություն չտվեց հասկանալու, որ մարդը միջավայրի պասսիվ արդյունքը չէ, այլ ակտիվորեն ներգործում է սոցիալական միջավայրի վրա, որ միջավայրն էլ փոխվում է մարդկանց կողմից։ «Հասարակական դաշինքի» հեղինակը մասսաներին պայքարի էր կոչում ֆեոդալիզմի դեմ, մինչդեռ իր սանին հեռու էր պահում այդ պայքարից։ Նա Էմիլին դաստիարակում է ապագա դեմոկրատական հասարակարգի համար, իր մանկավարժական հայացքների մեջ անտեսելով այն հարցը, թե ինչպես պետք է ստեղծվի այդ նոր հասարակարգը։

Հաղիվ թե հարկ կա բացատրելու, որ, մանավանդ մեզ համար, միանդամայն խորթ է և պիտանելի երեխային հասարակական կյանքից և ընկերական շրջապատից մեկուսացնելու վերաբերյալ Ռուսոյի տեսակետը։

(Բնական դաստիարակության սկզբունքից բխում էր նաև, որ երեխային դաստիարակելու համար պետք է լավ ճանաչել նրան՝ նրա բնական ընդունակությունները, հակումները, հետաքրքրությունները, ճաշակը, նրա տարիքային առանձնահատկությունները։ «Ոչ ոք չի ճանաչում մանկությանը. նրա մասին եղած բոլոր գաղափարները մեզ ավելի ու ավելի են մոլորեց-

նում... Սկսե՛ք, ուրեմն, լավ ուսումնասիրել ձեր սաներին (6),— ավարտեցիորեն ասում է Ռուսոն։

Նա վճռականապես ժխտեց միջնադարյան մանկավարժության մեջ տարածված այն տեսակետը, թե իբր երեխան ափոթր հասակավոր է, ուրեմն և ի վիճակի է սովորել ամեն և այնպես, ինչ և ինչպես կարող են սովորել հասունացած մարդիկ։ Ռուսոն նշում է, որ երեխաներն ունեն իրենց առանձնահատկությունները, որ նրանք տեսնում, զգում և մտածում են յուրովի, իսկ դա նշանակում է, որ նրանց չի կարելի առաջադրել այնպիսի պահանջներ, ինչպիսին առաջադրվում է հասունացած մարդկանց, չի կարելի նրանց հետ վարվել այնպես, ինչպես հասունացած մարդկանց հետ։

Ելնելով այս դրույթից, Ռուսոն մանկավարժության մեջ հանդես եկավ որպես մանկության իրավունքների ջերմ պաշտպան, մանկության երջանկության պահպանող, ջատագով և քարոզիչ։ «Սիրեցեք մանկությունը, նպաստեցեք նրա խաղերին, հաճույքներին, նրա բարեհամբույր բնազդներին» (85)։ Թող երեխան երջանիկ լինի և վայելի իր մանկության տարիքի քաղցրությունը։ Այս է Ռուսոյի պաշտպանած կարևորագույն և շատ արժեքավոր մանկավարժական գաղափարներից մեկը։ Նրա «Էմիլը» ամբողջապես համակված է անսահման սիրով դեպի երեխան, դեպի մանկությունը։

Ռուսոն հակադրվեց նաև միջնադարյան մանկավարժության կողմից պաշտպանված այն քնողոգիական տեսակետին, որի համաձայն երեխան բնականից արատավոր է, հակված դեպի չարը և, ուրեմն, դաստիարակությունը կոչված է ոչնչացնելու նրա նախնական բնությունը ու փոխարինելու այն նորով։ Բայց ժխտելով այդ տեսակետը, նա ընկավ հակառակ ծայրահեղության մեջ։ Նա իդեալականացրեց երեխայի բնությունը։ Սակ հենց այդ էր այն գլխավոր հիմքերից մեկը, որի վրա կարող էր կառուցվել նրա ուսմունքը բնական և ազատ դաստիարակության մասին։ Ռուսոյի մոտ երեխան, որը իբր բնականից բարի է, հանդես է գալիս որպես դաստիարակության ելակետ, դաստիարակության ամբողջ պրոցեսը որոշվում է նրա բնությամբ, նրա առանձնահատկություններով, հակումներով, ընդունակություններով, հետաքրքրություններով ու ցանկություններով։ Մենք անհրաժեշտ ենք համարում դաստիարակության մեջ հաշվի առնել երեխաների առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց հակումներն ու հետաքրքրությունները, բայց բոլորովին չենք ընդունում Ռուսոյի պեդոցենտրիզմը։

Ընդունելով, որ երեխաներն ունեն իրենց առանձնահատկությունները, Ռուսոն փորձեց այդ առանձնահատկությունների հիման վրա ստորաբաժանել նրանց ըստ տարիքային շրջանների։ Նրա կարծիքով առաջին տարիքային շրջանն ընդգրկում է ծնված օրից մինչև 2 տարեկան հասակը, երկրորդը՝ 2—12, երրորդը՝ 12—15, չորրորդը՝ 15 տարեկանից մինչև հասունություն։ Դրա համաձայն էլ «Էմիլը» բաժանված է հինգ գրքի, որոնցից յուրաքանչյուրում խոսվում է համապատասխան տարիքի երեխաների դաստիարակության մասին։ Հինգերորդ գրքում լուսաբանված են կնոջ և նրա դաստիարակության վերաբերյալ հարցերը։

Երեխաների այսպիսի տարիքային տորրաբաժանումը մտացածին է և վնասակար հերքված։ Սխալ է համարել այն, որ ամեն մի տարիքային շրջանի համար Ռուսոն նախատեսում է դաստիարակչական հատուկ խնդիր. առաջին շրջանի համար՝ ֆիզիկական դաստիարակությունը, երկրորդի՝ զգայարանների զարգացումը, երրորդի՝ մտավոր և աշխատանքային դաստիարակությունը, չորրորդի՝ բարոյական դաստիարակությունը։ Դաստիարակության այդ խնդիրները չի կարելի սահմանազատել տարիքային շրջաններով և յուրաքանչյուր շրջանի համար նախատեսել դրանցից միայն որևէ մեկը։ Այդ չի հաշղովել և Ռուսոյին, որը միևնույն դաստիարակչական խնդրին անդրադառնում է տարբեր տարիքային շրջանների դաստիարակության բնութագրման կապակցությամբ։

Բնական Ռուսոն դաստիարակության խնդիրները սահմանազատում էր ըստ երեխաների տարիքային շրջանների, բայց նա, որին շատ հարազատ էր դիալեկտիկական մտածողությունը, բավականաչափ պարզ պատկերացնում էր այդ խնդիրների փոխադարձ կապն ու փոխադարձ պայմանավորվածությունը։

Ռուսոյի պատկերած իդեալական մարդը, որի պատրաստմանը պետք է ծառայի դաստիարակությունը, միակողմանի զարգացած մարդ չէ, ոչ էլ մանավանդ նեղ մասնագետ, այլ համաչափորեն զարգացած անձնավորություն՝ ֆիզիկական ուժով և դիմացկուն, կատարելապես զարգացած զգայարաններով, բնական սահմանափակ գիտելիքներով, բայց օժտված ինքնուրույն դատողությամբ և ինքնուրույնաբար գիտելիքներ հայթայթելու կարողությամբ, զինված աշխատանքային հմտություններով և պատրաստված աշխատանքային գործունեության, վերջապես օժտված բարձր բարոյական առաքինություններով, իհարկե, այնպիսի բարոյական առաքինություններով, որոնք համապատասխանում էին իդեալիստ և դեիստ Ռուսոյի աշխարհայացքին։

Ֆիզիկական դաստիարակության մասին Ռուսոյի խորհուրդներն ու ցուցումները, որոնք բոլորն էլ բխում են բնական և ազատ դաստիարակության սկզբունքներից, նպատակ ունեն ապահովել երեխայի օրգանիզմի և ֆիզիկական հատկությունների բնական զարգացումը, ամենևավազ հասակից կոփել նրան, դարձնել նրան ուժեղ ու ամրակազմ, տոկուն ու դիմացկուն։

Ռուսոն անհիմն կերպով ըմբռնատանում է բժշկության դեմ, մի հանգամանք, որ պայմանավորված է իր ժամանակի գիտության ու քաղաքակրթության նկատմամբ նրա ժխտողական վերաբերմունքով, ինչպես և դարձյալ բնական դաստիարակության սկզբունքով, մինչդեռ երեխայի ֆիզիկական դաստիարակության վերաբերյալ նրա տված խորհուրդների ճնշող մեծամասնությունը (երեխային չթարուրելու և նեղ հագուստ չհագցնելու մասին, այն մասին, թե ինչով և ինչպես պետք է կերակրել նրան, ինչով պետք է կերակրվի դայակը, ինչպես հեշտացնել երեխայի ատամ հանելը և այլն) վերաբերում են հատկապես բժշկական գիտություններին և դրանց սերտաճկունով էլ կարող են գնահատվել։

Մանկավարժության պատմության մեջ Ռուսոն առաջինը հանդամանո-

րեն կուսաբանեց երեխաների զգայարանների զարգացման հարցը, այդ զգայարաններից յուրաքանչյուրի դերը իմացության գործում և դրանց զարգացման միջոցները։ Այդ մասին Ռուսոյի տեսակետներն ու դատողությունները արժանի են լիակատար ուշադրության։

Երկուսից մինչև տասներկու տարեկան երեխաների մտավոր դաստիարակության հարցում Ռուսոն իր համար ելակետ ընդունեց այն միտքը, թե երբ ամանկությունը բանականության քունն է», այսինքն՝ թե երեխաները մինչև 12 տարեկան հասակը կարող են միայն սերտել բառեր և անուններ, բայց զուրկ են գիտություն սովորելու ընդունակությունից ու կարողությունից։ Իրեն հատուկ ծայրահեղությամբ Ռուսոն անգամ հայտարարում է, թե այդ հասակի երեխաների համար գրքերը «ամենամեծ դժբախտության գործիքներն են», քանի որ նրանք երեխաներին միայն պատուհան են (157)։ Նրա էմիլի մտավոր կրթությունը այդ շրջանում հանգում է միայն բնության երևույթները դիտելուն, նրա համար անխուսափելի դիրք է ծառայում միայն բնությունը։

Այս կերպ մոտենալով հարցին, Ռուսոն գտնում է, որ սկզբնական դաստիարակությունը պետք է լինի զուտ բացասական՝ պետք է կանխել ոչ թե առաքինությունն ու ճշմարտությունը ուսուցանելու մեջ, այլ սերտը մոլության, իսկ միտքը՝ մոլորության դեմ պաշտպանելու մեջ (113), կամ, այլ կերպ ասած, երեխայի դաստիարակության այդ շրջանում պետք է աշխատել ոչ թե ժամանակ շահել, այլ ժամանակ կորցնել», այն, ինչ երեխան կարող է սովորել հաջորդ տարիքային շրջանում, պետք է թույլ տալ, որ սովորի այդ շրջանում։

«Էմիլի» այսօրվա ընթերցողը հեշտությամբ կհասկանա Ռուսոյի այս սխալը՝ կրթական աշխատանքի համաշխարհային պրակտիկան անհերքելիորեն ապացուցել է, որ անհրաժեշտ է երեխաներին վաղ հասակից սեր պատվաստել դեպի ուսումն ու գիտությունը, նրա զարգացման առաջին իսկ հնարավորություններն օգտագործել նրա մտապատկերները հարստացնելու և նրան մտածելի գիտելիքներ հաղորդելու համար և ոչ թե արհեստականորեն հետաձգել նրա մտավոր զարգացումը։

Երեխաների մտավոր կրթությանը Ռուսոն հատկացնում է խիստ կարճատև ժամանակաշրջան (12—15 տարիները)։ Ռուսոն միանգամայն ճշգրտորեն նշում է, թե անհրաժեշտ է ընտրություն կատարել գիտելիքների մեջ՝ որոշելու համար, թե ինչ պետք է սովորեցնել երեխաներին, երբ քննադատում է իր ժամանակի կրթության թերանգակությունը, ասելով, թե դրանց մի մասը կեղծ է, մյուսը՝ անօգուտ, երրորդն էլ ծառայում է սնապարծությունը բավարարելուն։ Սակայն նրա էական սխալներից մեկն այն է, որ երեխաների համար նախատեսում է գիտելիքների խիստ սահմանափակ պաշար։

Բայց չի կարելի չգնահատել այն, որ ուսուցման բովանդակության մեջ նա վճռական տեղը տալիս է բնական գիտություններին, անհրաժեշտ համարում երեխաներին սովորեցնել միայն օգտակար գիտելիքներ, այնպիսի գիտելիքներ, որոնք կապված են կյանքի հետ, ծառայում են մարդու բարե-

կեցությանը։ Ծրագրեր էր ավելացնում ոչ թե 12—15 տարեկան երեխաների կրթության մեջ նա բացառում է կրոնը, ապա պարզ կդառնա, որ այս հարցում Ռուսոն իր բոլոր սխալներով և հակասություններով հանդերձ պաշտպանում էր ռեալական կրթության սկզբունքը և պայքարում վերացական, կյանքից ու ժողովրդի կարիքներից կտրված սխոլաստիկական կրթության դեմ։

Սխոլաստիկական ուսուցման դեմ էին ուղղված նաև Ռուսոյի պաշտպանած մեթոդական սկզբունքները։

Իմացաբանության հարցերում կանգնած լինելով սենսուալիզմի դիրքերի վրա, Ռուսոն գիտելիքների ծագելուը համարում էր մարդու զգայարանները, որոնց անվանում էր «իմացության գործիքներ»։ Երեխան էլ, ըստ Ռուսոյի, իր գիտելիքները պետք է ձեռք բերի փորձի միջոցով՝ շփվելով առարկաների և երևույթների հետ և ընկալելով դրանց իր զգայարաններով։ «Ոչ մի բիրք պետք չէ՝ բացի աշխարհից, ոչ մի ուսուցում՝ բացի եղելություններից» (249)։ Ռուսոն, այսպիսով, գերագնահատում է երեխայի անձնական փորձը և թերագնահատում հասարակության պատմական փորձը՝ ընդհանրացված զանազան գիտությունների մեջ։ Հույսը դնելով երեխայի անձնական փորձի վրա, նա երեխային զրկում է սիստեմատիկ ուսուցումից։ Ավելին, ուսուցման մեջ անտեսելով ոչ անմիջական ընկալման դերը (գրքերի և ուսուցչի կենդանի խոսքի միջոցով), նա երեխային դիտում է ոչ թե որպես սովորող, այլ որպես հետազոտող։ Այստեղից էլ Ռուսոյի մոտ թերագնահատվում է ուսուցչի դերը երեխաներին գիտելիքներ հաղորդելու գործում. ուսուցիչը ոչ թե նրանց պատրաստի գիտելիքներ է հաղորդում, այլ հանդես է գալիս որպես սոսկ սովորողի օգնական, ուղեկից։

Նույն սենսուալիզմից Ռուսոն հանգեց նաև զննականության սկզբունքի պաշտպանությանը։ Զննականությանը նա տալիս էր նաև հոգեբանական հիմնավորում, քանի որ գտնում էր, թե երեխայի մտածողությունը կոնկրետ է և նրան անմատչելի են վերացական դատողությունները։ Այս հարցում ևս Ռուսոն իր մի շարք սխալ դրույթներով հանդերձ զգալիորեն առաջ անցավ նախորդ մանկավարժներից մանավանդ այն իմաստով, որ զննականությունը նա սերտորեն կապակցում է երեխայի ակտիվ գործունեության հետ, ներքուստ և աշխատանքային գործունեությունը։ Նրա գլխավոր սխալն այն է, որ զննականությունը դիտում է որպես ուսուցման այնպիսի համապարփակ սկզբունք, որը կարող է փոխարինել և՛ գրքերին, և՛ ուսուցչին։

Միջնադարյան դպրոցը լիովին արհամարհում էր երեխայի հետաքրքրությունն ու պահանջմունքները և ուսուցումը տանում հարկադրանքի ուժով։ Սրա դեմ էր պայքարում Ռուսոն, երբ պահանջում էր, որ ուսուցումը լինի ոչ միայն մատչելի, համապատասխանի երեխաների ուժերին, այլև հետաքրքիր։ Սակայն այստեղ էլ դրսևորվում է նրա ազատ դաստիարակության սկզբունքի ամենախոցելի կողմերից մեկը։ Պեդոցենտրիզմի պաշտպան Ռուսոյի մոտ երեխան սովորում է միայն իր ցանկություններին և հետաքրքրությանը բավարարություն տալու, իր սեփական բավականության համար՝ մի կողմ թողնելով գիտելիքները սովորելու անհրաժեշտության

գիտակցումը և ուսման դժվարությունները հաղթահարելու կարևորությունը։

Բայց և միաժամանակ Ռուսոյի էմիլը ոչ մի ընդհանուր բան չունի միջնադարյան դպրոցի թուխպակաբար սերտող աշակերտի հետ։ Ինքնագիտելով իր սանին, Ռուսոն ասում է, թե «էմիլը ոչինչ չպետք է անգիր անի, ոչ իսկ առարկաները» (149)։ Թեպետ նա քիչ բան գիտի, բայց իմացածը «կիսատ-պռատ չէ», ինչ որ գիտի՝ հիմնավոր գիտի։ Պատահական չէ, որ Ռուսոն իր սանին այնքան հաճախ առաջադրում է «ինչո՞ւ» և «ինչի՞ է պետք» հարցերը՝ կանխելու համար ամեն տեսակ սերտողություն։ Ուսուցման մեջ գիտակցականությունն ապահովելու պահանջը կարմիր թելի պես անցնում է Ռուսոյի տրակտատ-վեպի բազմաթիվ էջերով։

Սրան սերտորեն առնչվում է նաև երեխայի ինքնուրույնությունը պահպանելու պահանջը, քանի որ ուսուցումը չի կարող գիտակցական լինել, եթե նա չի խրախուսում սովորողի ինքնուրույնությունը։ «Եթե չարունակ ձեր գլխով պետք է զեկավարվեն նրա (սովորողի—Հ. Ք.) ձեռքերը, էլ ինչո՞ւ է պետք նրա գլուխը» (160)։ «Եթե նա ամեն ինչում պետք է ենթարկվի ստվորեցնող մի հեղինակության, ամեն ինչ անի ուրիշի թելադրանքով, էլ ինչ կարիք կա, որ նա մտածի» (162—163)։ Այսպիսով, Ռուսոն վճռականապես ժխտում է միջնադարյան մանկավարժությանը հատուկ կույր հեղինակության վրա հիմնված ուսուցումը և անհրաժեշտ համարում զարգացնել երեխայի ինքնուրույնությունը, նրա ինքնուրույն դատողությունը, ուրիշների կարծիքների նկատմամբ քննադատական կարողությունը, հնարամտությունը, դարձնել նրան ողջամիտ։

Ուրեմն ուսուցման մեթոդական հիմունքների մասին Ռուսոյի արտահայտած գաղափարները ևս, որոնք ուղղված լինելով միջնադարյան մանկավարժության և սխոլաստիկական դպրոցի դեմ, իր ժամանակի համար առաջադիմական էին, կարող են քննադատաբար օգտագործվել նաև այսօր։

Մանավանդ (չափազանց առաջադիմական էին Ռուսոյի հայացքները աշխատանքային դաստիարակության մասին։ Այս հարցում առավել ցայտուն է դրսևորվում նրա մանկավարժության դեմոկրատական ուղղությունն ու ոգին։

Աշխատանքային դաստիարակության հարցում նրա հիմնական ելակետը սոցիալական հավասարության գաղափարի պաշտպանությունն էր, ամեն տեսակ դասային արտոնությունների ժխտումը։ Բոլոր մարդիկ էլ, պնդում էր Ռուսոն, ունեն միևնույն բնական կարիքները, ուրեմն և դրանց բավարարելու միջոցները ամեն տեղ հավասար պետք է լինեն» (299)։ Այդ միջոցը նա համարում է աշխատանքը։ «Ով, ով առանց աշխատելու մրսխում է այն, ինչ ինքը չի վաստակել, գողանում է։ Ուրեմն աշխատելը հասարակական մարդու անհրաժեշտ պարտականությունն է։ Հարուստ, թե աղքատ, ուժեղ, թե տկար, ամեն մի անգործ քաղաքացի խաբեբա է» (301—302)։

Աշխատանքային դաստիարակությունը Ռուսոն անհրաժեշտ է համարում ամեններից առաջ մարդու նյութական ապահովության համար, այն բանի համար, որ ամեն մարդ ապրի ֆիզիկական աշխատանքով և ոչ թե ուրիշների հաշ-

վին։ Աշխատանքին Ռուսոն տալիս է նաև մեծ դաստիարակչական նշանակություն, դիտում այն որպես մարդու համաչափ զարգացման միջոց՝ ֆիզիկական, մտավոր և բարոյական զարգացման միջոց։ Աշխատանքի միջոցով, ըստ Ռուսոյի, երեխան ձեռք է բերում գիտելիքներ, մանավանդ ծանոթանում հասարակական հարաբերություններին և պարզում այս կամ այն աշխատության հասարակական նշանակությունը։ Աշխատանքը երեխայի մեջ պատվաստում է նաև ատելություն դեպի ծուխակերությունը։ Աշխատանքը Ռուսոն համարում է փառքի գործ, մարդկային արժանապատվության գլխավոր ցուցանիշ, մարդու ազատության և անկախության հիմք։ Մանավանդ, ուշագրավ է, որ Ռուսոյին խորթ է ֆիզիկական և մտավոր աշխատանքի հակադրությունը։ Նրա էմիլը «աշխատում է գյուղացու նման և մտածում փիլիսոփայի պես»։

Ճիշտ է, Ռուսոն ուզում է երեխաներին նախապատրաստել սուկ արհեստների և գյուղատնտեսական աշխատանքների համար, բայց նա հետաքրքիր մտքեր է արտահայտում այն մասին, թե ինչպիսի արհեստներ պետք է սովորեն երեխաները և ինչ սկզբունքներով պետք է առաջնորդվել նրանց համար արհեստներ ընտրելու գործում։ Այստեղ մանավանդ ուշագրավ է արհեստների հասարակականորեն օգտակար լինելու չափանիշը, ըստ որի երեխաները պետք է սովորեն այնպիսի արհեստներ, որոնք արտադրում են ոչ թե ցոփության և պերճանքի առարկաներ, այլ պիտանի և օգտակար իրեր։ Ռուսոյի համար մյուս հիմնական չափանիշը արհեստների կրթական և դաստիարակչական նշանակությունն է։ Նրա կարծիքով երեխաների համար պետք է ընտրել այնպիսի արհեստներ, որոնք սուկ ֆիզիկական ուժ չեն պահանջում, այլև ստիպում են երեխաներին խորհել, մտածել, զարգացնել իրենց ընդունակություններն ու ճաշակը, ձեռք բերել համապատասխան մասնագիտական պատրաստություն, մի խոսքով ձեռքի աշխատանքը օգնում է մտքի զարգացմանը։

Ռուսոն չհասավ և այն ժամանակ չէր էլ կարող հասնել պոլիտեխնիկական ուսուցման գաղափարին։ Նա երեխաների աշխատանքային դաստիարակությունը սահմանափակեց արհեստներով և գյուղատնտեսական աշխատանքներով։ Բայց նա նաև պաշտպան չկանգնեց նեղ արհեստավորական մասնագիտությանը։ Նրա էմիլը պատրաստ է անելու «ամեն ինչ», ծանոթ է «բոլոր արհեստների գործիքներին», նրան հայտնի է արհեստների «մեքենականությունը» (մեխանիկական կողմը) և միայն այդպիսի պատրաստության հիման վրա է նա խորապես մասնագիտանում որևէ օգտակար արհեստի գծով։ Իսկ դա նշանակում է, որ Ռուսոն զգալիորեն մոտենում է պոլիտեխնիկական կրթության գաղափարին։

Ռուսոյի մանկավարժական հայացքների մեջ վճռական տեղ են գրավում բարոյական դաստիարակության հարցերը։ Հասկանալի պատճառով մենք խիստ համառոտակի կանգ կառնենք դրանցից միայն ամենաէականների վրա։

Բարոյական դաստիարակության նպատակը Ռուսոն համարում է մարդասիրությունը՝ սիրել մարդկային ցեղը և բոլոր մարդկանց։

Այդ մարդասիրությունը, որը պետք է պատվաստել պատանիներին և երիտասարդներին, իր մեջ ընդգրկում է՝ ճանաչել մարդուն, հետաքրքրվել նրա վիճակով ու կարիքներով, նրա վշտի պատճառներով, լինել բարեգործ, օգնել թշվառներին և հարստահարվողներին, զբաղվել ուրիշների երջանկությամբ, ազատ լինել նախապաշարմունքից, ատելությունից, վրեժխնդրությունից, լինել վեհանձն ու անհիշաչար, զուսպ և համեստ, բայց և համարձակ՝ բարիք անելու մեջ և քաջասիրտ՝ ճշմարտությունն ասելու մեջ, խաղաղասեր, երկմարտասեր ու արդարացի, երբեք չձգտել իշխելու ուրիշների, բռնանալու նրանց ազատության վրա։ Այս բարոյական առաքինությունների ոգով էլ Ռուսոն դաստիարակում է իր Էմիլին։

Ռուսոյի քարոզած մարդասիրությունը՝ խարսխված իդեալիզմի և դևիզմի վրա, հիմնականում պասիվ մարդասիրություն է։ Բայց երբեմն նրա մարդասիրությունն առանում է ակտիվ դեմոկրատիզմի բնույթ։ Ճիշտ է, նա քարոզում է սիրել «նույնիսկ նրանց, ովքեր անարգում են հասարակ մարդկանց», բայց դրա հետ նշում է նաև, որ մարդկային ցեղը «կազմված է գլխավորապես հասարակ ժողովուրդների հավաքածուից», և որ «չարի նկատմամբ գթությունը ամենամեծ դժբախտությունն է մարդկանց հանդեպ» (405)։ Ուրեմն իր մարդասիրության քարոզի մեջ Ռուսոն շեշտը դնում է հասարակ ժողովրդի և հարստահարվածների վրա։

Բարոյական դաստիարակության ինչպիսի՞ ընդհանուր մեթոդներ ու միջոցներ է պաշտպանում Ռուսոն։

Նա դեմ է բարոյախոսության, բարոյական քարոզների, հրամայելու, հնազանդեցնելու, մանավանդ պատժի միջոցներին։ Բարոյական դաստիարակության մեջ ևս, ինչպես ավելի պակաս չափով, քան ուսուցման մեջ, նա մեծ տեղ է տալիս սանի անձնական փորձին։ Բարոյական դաստիարակության համար նա, ըստ Ռուսոյի, պետք է շփվի մարդկանց հետ և սոցիալական հարաբերությունների մթնոլորտում ձեռք բերի բարոյական փորձ, մարդասիրություն։

Նախ նա պետք է տեսնի «տառապող մարդկության տխուր պատկերը», որովհետև «բշվառությունը լավ ճանաչելով, սովորում ենք օգնել բշվառներին» (352)։ Սակայն կարիք չկա պատանու հայացքը երկար ժամանակ բևեռել այդպիսի տեսարանների վրա, որովհետև այդ դեպքում նա կընտելանա դրանց և կկարծրանա նրա սիրտը։

«Ձեր բոլոր դասերը տվեք օրինակներով և վստահ եղեք արդյունքին» (366),— ասում է Ռուսոն, նկատի ունենալով օրինակի մեծ դերը բարոյական վարքագծի ձևավորման գործում։

Բարոյական օրինակի հարցին է առնչվում նաև նրա այն տեսակետը, թե երեխային պետք է հեռու պահել բարձր դասի շրջյ կյանքից, պերճանքից, ճոխ երեկույթներից և այլն։ Այդ բոլորը, նշում է Ռուսոն, կարելի է ցույց տալ միայն հասուն տարիքում, երբ մարդը ի վիճակի կլինի «այդ դասակարգը դատել ըստ էության»։

Սակայն մարդասիրություն պատվաստելու համար պատանուն և երիտասարդին ևս չպետք է հիացնել ուրիշների փայլուն վիճակով, այլ պետք

է ցույց տալ այդ վիճակի բացասական կողմերը, մանավանդ նրանց մեջ չպետք է բորբոքել շահագրգռվածություն, նախանձախնդրություն և փառասիրություն, որովհետև դրանք մեզ ստիպում են համեմատվել ուրիշների հետ, իսկ այդ համեմատությունից առելություն է առաջանում բոլոր նրանց հանդեպ, ովքեր ձգտում են մեզնից խլել գերազանցությունը։ Չէ որ, ըստ Ռուսոյի բարոյագիտության, մարդը իր բնականից խղճում է դժբախտին, մինչդեռ երջանիկը նրա մեջ նախանձ է առաջացնում, իսկ նախանձը անհամատեղելի է մարդասիրության։

Քանի որ անձնական փորձը մեծ կարևորություն ունի բարոյական դաստիարակության գործում, քանի որ չգիտե կյանքի օրինակներից կարող են միայն փչացնել պատանուն, ուրեմն, ըստ Ռուսոյի, պատանին ինքն էլ պետք է ապրի համեստ կյանքով և ոչ թե փառքի բարձունքից նայի դժբախտների ցավերին։ Այլապես նա հարուստների պես քարսիրտ կդառնա։

Անձնական փորձի դերը առավել ցայտուն կերպով դրսևորվում է Ռուսոյի, այսպես կոչված, բնական հետևանքների տեսության մեջ։ Ըստ այդ տեսության, մինչև 16 տարեկան երեխաները կդաստիարակվեն և հեռու կմնան բացասական արարքներից, եթե թողնենք, որ նրանք ենթարկվեն իրենց արարքների բնական հետևանքների ազդեցությանը։ Եթե երեխան փչացնում է իրեն անհրաժեշտ առարկաները, մի փոխարինեք դրանց նորով, թող նա զգա զրկանքի ծանրությունը, կամ եթե դանդաղ է հագնվում զբոսանքի գնալու համար՝ թող զրկվի զբոսանքից, կամ կոտրել է իր սենյակի լուսամուտի ապակին՝ թող մրսի, քնկուզ և հիվանդանա։

Այդ տեսությունը խիստ հակասական է և իր ամբողջության մեջ անընդունելի։ Որպեսզի երեխան թույլ չտա այս կամ այն արարքը, նա պետք է կարողանա կանխատեսել դրա հետևանքները, մի բան, որ Ռուսոյի կարծիքով ևս վեր է նրա ուժերից։ Բնական հետևանքների ազդեցության օգնությամբ կարելի է երեխային պատվաստել զգուշություն, ներգործել նրա ֆիզիկական վիճակի և բարեկեցության վրա, բայց այդ կերպ անկարելի է կողմնորոշել նրան իր ամբողջ գործունեության մեջ, գինել նրան գործունեության մոտիվներով ու բարոյական սկզբունքներով։ Այդ տեսությունը վտանգավոր է և երեխայի կյանքի համար, որովհետև նրա գործողությունների վնասակար հետևանքները կարող են ավելի շուտ վրա հասնել, քան դրանցից բխող դրական փորձը։ Այս տեսությամբ դաստիարակը անի նկատմամբ ստանում է կրավորական դեր։ Վերջապես, թեպետ Ռուսոյի կարծիքով այդ տեսությունը ավելորդ է դարձնում պատիժը, բայց ըստ էության շատ դեպքերում դա երեխայի համար ավելի խիստ պատիժ է։

Ինչ վերաբերում է հասունացած պատանուն, ապա ըստ Ռուսոյի, նա, ի տարբերություն դեռահասի, կարող է և պետք է ձեռք բերի բարոյական գիտելիքներ ու սկզբունքներ և այն էլ ոչ միայն իր փորձից, այլև ուրիշների փորձից՝ ճանաչելով մարդկանց և ծանոթանալով նրանց գործերին։ Իսկ մարդկանց գործունեությունը ավելի լավ երևում է հեռվից, ավելի ճիշտ կերպով արտացոլված է պատմության մեջ, ինչպես և նրանց կենսագրության իրողություններում։

Այստեղից էլ Ռուսոն, որը 12—15 տարեկան երեխաների կրթության բովանդակությունից հանում էր պատմությունը, այժմ պատմությունը մեծ տեղ է տալիս պատանիների բարոյական գաստիարակության գործում։

Ընդգծելով պատմական փորձի կարևորությունը, Ռուսոն, բնականաբար, պատանիների և երիտասարդների բարոյական դաստիարակության գործում չէր կարող հետևել իր բնական հետևանքների ուսմունքին։ Նրա էմիլը այս հասակում բարոյական չար արարքներ չի գործում (քանի որ արդեն գործ ունի ոչ թե իրերի, այլ մարդկանց հետ) և հետո զգուշանում նման արարքներից՝ դրանց բնական հետևանքների ազդեցության տակ։ Ռուսոն անգամ ասում է. «Զգուշացրեք աշակերտին սխալներից՝ նախքան դրանց մեջ ընկնելը»։ Մանավանդ, նրա արդարացի կարծիքով, կարիք չկա անձնական փորձի օգնությանը դիմելու այն ժամանակ, երբ այդ փորձը վտանգավոր է, կարող է ծանր հետևանքներ ունենալ և ծանր վերապրումներ պատճառել։

Բարոյական դաստիարակության լավագույն միջոցներից մեկը Ռուսոն համարում է բարոյական վարժությունը։ Նա արդարացիորեն նշում է, որ առաքինի գործերը սեր են առաջացնում դեպի մարդկությունը, «բարիք անելով է, որ մարդ բարի է դառնում»։ Ուրեմն աշակերտը չպետք է սոսկ դիտող թշվառներին, այլև պետք է օգնի կարոտյալներին, հիվանդներին, կարիքավորներին, իր անձը, միջոցները և ժամանակը տրամադրի նրանց, պաշտպանի նրանց, զանա նրանց հավատարմատարը։

«Էմիլիի» մեջ չափազանց արժեքավոր, հաճախ էլ փայլուն մտքեր կան նաև այն մասին, թե ինչպես պետք է դաստիարակը վերաբերվի իր սանին, ինչպիսի փոխհարաբերություններ պետք է իշխեն նրանց միջև և ինչքան մեծ նշանակություն ունի դաստիարակի վերաբերմունքը նրա սանի բարոյական ձևավորման գործում։

Անվիճելի է, որ բարոյական դաստիարակության մասին Ռուսոյի հայացքները, իրենց սխալներով և հակասություններով հանդերձ, ներծծված են գեմոկրատիզմով և հումանիզմով։

Վերջին հաշվով Ռուսոյի դեմոկրատիզմն ու հումանիզմն էլ ապահովեցին այն բացառիկ տեղը, որ նրա «Էմիլը» գրավում է համաշխարհային մանկավարժական կլասիկ գրականության մեջ։

Գրած. ՀՐ. ՔԱՐԱՄՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի առաջաբանը	5
Գիրք առաջին	9
Գիրք երկրորդ	81
Գիրք երրորդ	244
Գիրք չորրորդ	327
Ռուսոն և նրա «Էմիլը»	595

Խմբագիրը՝ Վ. ՄՆԱՑԱԿԱՆՑԱՆ
Հրատ. խմբագիրը՝ Գ. ՄԱՔՆՎՈՍՑԱՆ
Տեխ. խմբագիրը՝ Ս. ԱՍԼԱՄԱԶՑԱՆ
Վերջ սրբագրիչ՝ Ա. ՄԱՔՆՎՈՍՑԱՆ

Պատվեր 388 *Տիրաժ 6000*

Հանձնված է արտադրության 13/I 1960 թ.։
Մատրաքված է ապագրության 28/VII 1960 թ.։
Թուղթ՝ 84×108 1/32։ Տպագրական 38,25 մամ., հրատ. 29,1 մամ., պայմանական 31,4 մամ.։
Գինը՝ 7 ռ. 85 կ., կազմը՝ 1 ռ. 50 կ.։
Նոր գինը՝ 79 կոպ., կազմը՝ 15 կոպ.։

Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության № 6 տպարան, Երևան, Լենինի պողոտա № 51։